





ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՎԵՑ ՀԱՏՈՐՈՎ

I

ՀԱՍՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

199-09
Ա-13
ԱԿԱԴ. ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆ

ԾԱՌԻ ԿԱՍԽ Է 1981 թ.

ՀԱՅՈՑ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐԺ ԱՌԱՋԻՆ

(ՍԿՋՐԻՑ ՄԻՆՁԵՎ X ԴԱՐ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Վ Ա Ն

1944

Տպագրվում է ՀՍՍՐ Գիտությունների Ազգային
Նախագահության որոշմամբ

ՀՀԽՍՀ Գիտությունների Գերատեսչական Կոմիտեի

ապագանիշո 4. Օրակի

ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ В 6-и ТОМАХ
Т. I


Академик М. Х. Абагян

ИСТОРИЯ ДРЕВНЕАРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ

Книга первая

Издание АН Арм. ССР, Ереван, 1944 г.
(На армянском языке)





ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ներկա աշխատութիւնը հայոց հին գրականութեան առաջին ամբողջական գիտական ընդարձակ ուսումնութիւնն է։ Այս մասին անցյալում գրված գրքերը (Հ. Գեթրեյան, Առ. Պալաստեյան, Գ. Զարբեանեայան, Ա. Զամինյան) եղել են՝ կամ զուտ փաստագրական ոչ լրիվ շարադրանքներ, առանց գրական հուշարձանների հաստատկական-գաղափարական բովանդակութեան և գեղարվեստական ժառանգաւորութիւնների քնն թե շատ մանրամասն վերլուծման ու վնասաւորութեան, և կամ համառոտ պատգիւրք— ձեւնարկներ (պարձաւ ոչ լրիվ) միջնակարգ պարոցների աշակերտութեան համար։

Անագիւնիկոս Արեղյանի այս գիրքը բազմաձեւ ու գիտնականի տարիներ համար աշխատանքի արդիւնք է, ուր առաջին տեղում մեր գրականութեան մեջ գրվում և իրենց գիտական լուծումն են ստանում բազմաթիվ կարևոր շարադրանքներ, որոնց վրա հեղինակը աքնել է տասնյակ տարիներ, մի առ մի հետազոտելով ամեն մի առանձին խնդիր։ Իր այս հոյակապ գործում Մ. Արեղյանը բացահայտում է հայոց հին գրականութեան բուն էութիւնը, նրա ոգին և ընդհանուր ուղղութիւնը, դիտելով այն իբրև օտարերկրյա (պարսկական, արաբական և այլն) բանապետութիւնների դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքար ու անդուլ մաքառումների և քաղաքական պայքարի մի գրականութիւն։

Ներկա աշխատութեան մեջ լուսաբանված են ոչ միայն զուտ գրական փաստերն ու երևութները, այլև վերջիններիս հետ անմիջորեն առնչվող և մեր ժողովրդի կուլտուրայի ուսումնութեան համար խիստ կարևոր նշանակութիւն ունեցող մի շարք խնդիրներ (Սեդիկ Կոլբաքու գործի և Յաւաթաթաթաթի առնչութեան, քաղկեդոնականութեան նկատմամբ հայոց եկեղեցու ունեցած դիրքի, Տիմոթեոս Կուղի Հակոբաւորութեան ժամանակի և այլն)։ Աշխատութիւնը նոր լինելով՝ պարունակում է հեղինակի անցյալում գրած մենագրական բնույթի մի քանի գործերի և բանասիրական հետազոտութիւնների կարծիքներն ու եզրակացութիւնները։ Այստեղ գործը սկսում էն անմիջական գիտնականի մեծ էրաւդիցիան, բանասիրական հմտութիւնը, ուսումնասիրութեան նյութի խոր իմացութիւնը։

Ակադեմիկոս Մ. Արեղյանի աշխատանքն անդրադարձնում է հեղինակի մաքի զարգացման էտապները հայոց հին դրականության ու մոզովբեզական բանասիրության մի շարք կարևորագույն խնդիրների նկատմամբ, էտապներ, որոնք ոչ միշտ են ներգաղնակել իրար:

Նույն եռանդով ու ոճով գրվում էր նաև աշխատության երկրորդ հատորը, որը, հեղինակի մահվան պատճառով, ցավոք, ֆուգ անավարտ: Ակադեմիկոս Մ. Արեղյանին հանձնվեց շարագրել երկրորդ հատորի Ա. մասը միայն (չուրջ 20 մասույ), որ և լույս կտեսնի 1945 թ.:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

վանդակութիւնն ունեն, ինչ որ ժողովրդական էկապիտալիզմի արթնները: Գրավոր հմայեցներն ընդհանրապես արձակ են հորինված, մինչդեռ ժողովրդական ազդեցները՝ թուղթիկ ազատ ոտանավորներով են: Դրանք մեծ մասամբ արածախոսական կամ վիպական ձևով են կամ թե ակավում են մի վիպական փոքրիկ նախաբանով¹, կրում են հնության դրոշմ և ըստ էության դալիս են խորին հնությունից: Դրանք նորոգված լեզվով, կերպարանափոխված, խավովորված գերապրուկներ են, թեպետ և կլինեն, անշուշտ, և այնպիսիները, որոնք ուշ դարերում այլադիներից անցած լինեն հայերին, ինքնավորումը քրիստոնեական է. հաճախ հին անուններին փոխանակել են քրիստոնեական արքերի անուններ: Բացի այդ՝ դրանք երբեմն անհասկանալիության աստիճանի աղետաված են:

Հմայական աղոթքները, լինեն գրավոր թե բերանացի, ունեն ընդհանրապես երգմեցուցական բնավորութիւն, ուղղված են իբրև խնդիրք բարի ոգիներին, սովորաբար չար ոգիների դեմ, որոնք իբր փնտրում են մարդկանց և ամեն տեսակ հիվանդութիւններ բերում: Իբրև այդպիսիներ առանձնապես երևան են դալիս գիշերվա չարուհիք, չարքերը, նորածիններ առանձնապես երևան են դալիս գիշերվա չարուհիք, չարքերը, նորածինները, ու ծննդկաններին փնտրող ուրբ (ալքերը). չար աշքը և այլն, նույնպես և կենդանակերպ ոգիները և հենց իրական փնտրանքները՝ գայլ, օձ, կարիճ, դրանց հետ միասին գործն ու մրջյունը: Վերջին չարքը հարմանական չար կենդանիներ են համարվել հին պարսկական կրօնով և հիվանդութիւններ բերել: Նույնը իդիլ է և հայերի մեջ. նրանք, իբրև չար ոգիներ, ըստ անհավատքի, առաջ են բերել զորոնուկ, մրջյուն, օձիկ կոչված հիվանդութիւնները: Նրանց դեմ էլ ուղղված են եղել հմայական աղոթքներ: Գործում էին, թե զգուկապիս, կարիճի և այլ աղոթքներն՝ ասեղուց հետո՝ իրական գայլը, կարիճը և այլն տեղներում կապված կլնան անշարժ:

Բերենք մի քանի այդպիսիները, ամենից տուժ մի զորոնուկի աղոթք, որ իսկապես մի հին աղոթք է. աղոթքը՝ դիմելով զնորին, այսինքն նորած լուսնին, որ հին ժամանակ պաշտվել է հայերի մեջ իբրև բարի ոգի, խնդրում է նրան ազատել իրեն այդ հիվանդութիւնից.

Նոր, նոր, թագա թագավոր,
Ես ալևոր, դու թագավոր,
Ըն աշխարհից Բնչ խաբար ես բերել:
Նոր, նոր, տես զիս.
Գորոնուկն էկե կ'ուտա զիս,
Կեր զորոնուկին՝ չ'ուտա զիս:

Բազմաթիվ զգուկապի աղոթքներին մեկն է հետևյալը.

Որդի Գալուստին
Հովիվ էր Գրիստոստին,
Նստեր օխար ճամփին,

¹ Այդպիսի աղոթքներն կարելի է տեսնել՝ Ե. Ղալուստի, Հմայական քաղաքի քաղաքում. Փիֆլա, 1898, էջ 3—18:

በገጽ ፩፡፩ ላይ ያለውን ማረጋገጫ ይገልጻል፡

Որ արարածի մէջ սեռերի¹,

Ու կ'որոշաւ թիւն զբեւոյն.

14.

Եւ ձայն ամեն զինչ զանեղրայր քայր՝
 Հաւքայն արար պատասխանի, թէ՛
 — Եւ ցեղ չի նստիմ
 Ի յանհուր, ի յանջուր եւ յանեղեմն դաշտին.
 Ի՞նչ ցեղ չի լամ զերդ ալրի,
 Եւ չ'ողբամ զերդ զգերի,
 Եւ ձայն ամեմ զերդ անեղրայր քայր.
 Երբ չի ծնունիւն իմ յղիքն,
 Զյղենան իմ երընճնիքն,
 Եւ չի արձակեցան իմ զողորմելիքն,
 Նա հրամայեաց տէրն, թէ՛
 — Մի նստել
 Ի յանհուր, ի յանջուր եւ յանեղեմն դաշտիդ.
 Եւ մի լայր զերդ ալրի,
 Եւ մի ողբայր զերդ զգերի,
 Եւ ձայն ամեմ զերդ անեղրայր քայր,
 Քո յղիքն ծնանեցան,
 Եւ քո երընճնիքն յղեցան,
 Եւ արձակեցան քո զողորմելիքն:—
 Արձակեցաւ երկինք,
 Եւ արձակեցաւ երկիր.
 Եւ արձակեցաւ ձեռացն աստուծոյ...¹

Սկզբնական «աղոթքները», հարկավ, այսպես երկայն չեն եղել, այլ
 միայն կարճ ու կրկնված խոսքեր են եղել, ինչպես հետեյայն է.

Ձար աչքը չար փշին,
 Ձար աչքը չար փշին,
 Ձար աչքը չար փշին,

Կամ հետեյալը մի հմայակից.

Ձար ակն ի չար փուշն,
 Ձար փուշն ի լարեկ կրակն,
 Բարեկ կրակն ի քարն,
 Քարն ի յանյառակ ծոցն...

Բերենք մի ծննդկանի «աղոթք» նա.

Եւանք դարով, շրջանք ձորով.
 Մեր տերն էկավ, հազար բարով,
 Ասինք՝ «Տեր, հար կ'երթան»
 — Կերթամ դուռն հիվանդին,
 Եւնեմ երդիկ աղոցկանին,
 Զնշիլ քաշեմ բոլոր պատին,
 Զվախենա սիրտն ի փորին:

¹ Ղ. Ալիշան, Հին հաւատք. Վենետիկ, 1888, էջ 383.

Հմայական ազոթքներէ հետ կազմած են զանազան օգիններէ, չարքերէ, քաջքերէ և ուրիշներէ մասին անհավատական զրույցները, որոնք կոչվում են «բան», «բանա», Այդ զրույցներն ևս մեծ մասամբ նախնական ժամանակներից են գալիս: Պատմողներն ու լսողները հավատում են դրանց բանականացման իրապես կատարված լինելուն: Հաճախ այդպիսի զրույցներն ասվում են ականատեսի կամ գործողութիւն մասնակցի անունից, թե ինչպես իրենց ծանոթ այս կամ այն ինչ մարդն իսկապես տեսել է չարունք, քաջք, ալք, և իր գլխին ինչ են արել նրանք: Հիշվում են գործողութիւն տեղն ու ժամանակը և այլն: Այդպիսի հանդիպումների հետևանքն ըստ անհավատացի լինում է հաճախ հիվանդութիւն, որ և կոչվում է «բան-դեպք»¹, Հմայակներէ մեջ էլ պատմվում են անցյալում չարքերին տեսնելու և նրանց հետ խոսելու դեպքեր: Բերենք մեկը.

Սուրբ Սիսիանոս գայր ի լեւնէ ի վայր,

Եւ տեսաւ պեղծ մի չար.

Եւ ունէր աչք հրեղէն,

Եւ ի ձեռին երկաթի կարոց,

Եւ հանդիպեցաւ ի տեղի տւտղոյ:

Ասէ Սուրբ Սիսիանոս.

— Ո՛րք երթաս, նգոված պեղծ:

Պատասխանի ետ նմա և ասէ.

— Իրթամ զմանկունս կանանցն թառածեցուցանեմ,

Ջկտթն պակասեցուցանեմ,

Ձաշան իռվարեցուցանեմ,

Ջլղեղն ծծեմ և համր առնեմ,

Եւ տոնեմ զտղայն անժամանակ յորովայնի, և այլն:

Դա նորածիններին ու ծննդկաններին ֆուստոյ արյունարբու ալքն է:

Այսպիսի զրույցներն ու հմայական ազոթքները, հարկավ, նոր և դարձապես ձևով են, բայց դրանց սկիզբն ևս թաղված է նախնական դարաշրջանի մեջ: Ինչքան էլ նոր լինեն այդ «ազոթքներն» ու զրույցները, դրանցով այժմ մոտավոր գաղափար ենք կազմում անցած դեպքածի մասին, քանի որ այդ նոր համարվածներն անցյալից են գալիս և դրանցից շատերը հների փոփոխված մնացորդներ են: Կան այնպիսի «ազոթքներ», որոնք շատ նման են ասորեստանյան երգեցողացական հիմներին, իսկ զրույցներից մի քանիսը գտնվում են նաև հնդկական վեդաների մեջ:

¹ Մի օրինակ է Գ. Սրվանձաւանցի «Մահաւա», Կ. Պոլս, 1876, էջ 76 և հաւ. Առանձնադէպ 8. Նա զատաբայանցի «Հայ ժողովրդական հեքիաթներ», յաջերբորդ դիրք, Թիֆլիս, 1891, էջ 24 և հաւ. «Ոգիններ, Մ. Արեգանի ժողովածուից»:

Մեր հին թարգմանիչներն ոտոր տասովածներին ու դիցապոեզներին տնուններին տեղ դնում են համապատասխան հայկականները, կամ, ընդհակառակը, ինչպես՝ Զևս — Արամազդ, Ախրոդիտե — Աստղիկ, Հերակլես — Վահագն, ալսպես և Օրիոն — Հայկ, Այս ցույց է տալիս, որ հսկա դիցապոեզ Հայկն իր էական գծերով նման է եղել Օրիոնին, Աստվածայնչի մեջ Օրիոն համաստեղությունը թարգմանված է Հայկ անունով։ Այժմ ևս մի քանի կողմերում, ինչպես և մի ժողովրդական երգի մեջ, գտնում ենք Խէկ — Հայկ անունը՝ նույն համաստեղություն համար։ Օրիոնը, հունական առասպելական տեսությամբ, մի քաջ և անխնայ որսորդ է, ծովի աստված Պոսիդոնի որդին, մի վիթխարի հասակով հսկա, բացառիկ ուժի և գեղեցիկության տեր, Սոսի — Արաբուսի սիրականը։ Նա համարձակվում է մերձել Արտեմիսի սերը և կամ սկավառակ ձգելիս մրցություն և հրավիրում նրան։ Դրա համար այդ գիցուհին պատժում է նրան, կենդանի աղավաղվում է մի կտրիճի, որից և մեռնում է հսկան։ Բայց հետո անմխիթար մնալով նրա կորստի համար, դիցուհին նրան փոխադրել է տալիս երկինք, ուր նա կազմում է ամենափայլուն համաստեղություններից մեկը։ Հայկը՝ նույնպես մի գեղեցիկ երիտասարդ է, զոհապատշաճ և անձնեայ, քաջազանգույր, խաչատակն և հաստաբազուկն, թի մեջ հսկայիցն քաջ և երեսյիս։ Ապա՝ Հայկին իբրև որսորդ է ներկայացնում և Բելի նրան ուղղված խոսքը Սեբեոսի մեջ, Վհագն ի տան իմում խաղաղությանը, ունելով ի զործս զմոնեկս ի տան իմոյ զորսականս։ Հայկն և Օրիոնը, ուրեմն, նման նկարագիր ունեն, բայց Հայկի առասպելը, այսինքն առասպելի զործողությունը տարբեր է Օրիոնի մասին պատմվածից։

Հայկը չկամենալով ենթարկվել բռնակալ Բելին՝ իր զավակներով հեռանում է հյուսիս։ Բելը հսկաների բազմությամբ գալիս, հարձակվում է նրա վրա, որպեսպի նրան էլ ստրկացնի։ Բայց Հայկն իր սակավաթիվ մարդկանցով հնչում է նրա դեմ, կոպի մեջ նետահար անում նրան, ցրվում նրա ամբոխը և ազատում իր երկիրը, որ իր անունով կոչվում է Վհագն։

2. Զրալցի աստղաբանական ծագումը։— Այս առասպելն իր էական գծերով մի այնպիսի պատմվածք է, որ շատ տարածված է։ Դրա նմանները կան շատ ազգերի, ինչպես և մեր գրականության մեջ, թե իբրև պատմական զրույցներ և թե իբրև առասպելներ։ Դրա նման են, օրինակ՝ հրեական Դավթի ու Դոդիթի կտիվը, մեր Սասունցի Դավթի ու Սարամիքի կտիվը, այլև հսկա Սամի ու Քերթուլյի կտիվը Շուշուամոյի մեջ, և Շվեյցարական Տելի զրույցը։ Տելին էլ որսորդ և քաջամարդ աղեղնավոր է, նա էլ Շվեյցարիա մանող բռնակալին սպանում է իր նետով և ազատում իր երկիրը։ Այս զրույցը պատմվում է նաև աստվածների, օրինակ, սկանդինավական Օդինն աստված համար։ Նա, աստվածների, հավանորեն և մարդկանց հայր, հանդես է գալիս ոչ միայն իբրև մի պարավար, որ իր պորթի զուգն անցած կավում է թշնամի զորքի դեմ, այլև իբրև մի կատաղի որսորդ, որ նույնպես նետառեղ է բռնեցնում և կոչվում է խալարի բռնակալների դեմ։ Նրա գերեզմանը շատ տեղ ցույց էին տալիս Գերմանիայում, ինչպես մեզնեում՝ Բելի գերեզմանը։ Այս շատ տարածված զրույցը, ըստ առասպելա-

1 Հայկի առասպելի վերջին ծագումը երևում է համակագես և այս կտորից։ Երևի

բանների, ընտելթյան մի առասպել է, որ իր հիմքն ունի այն աշխարհայեցողության մեջ, որ նախնական մարդիկ ունեին ընտելթյան երևույթների, լույսի ու թամբարի վրա։ Նա լույսի կոթիքն է ընդդեմ դիդերոտի և միևնույն թամբարի, որ մանուկ ազգերն ըմբռնել են իրեն մի աստվածային աղեղնավորի կոթիվ, մի քարի ասածու, մարդկանց հոր կոթիքն ընդդեմ մարդկանց թշնամի չոր ոգու։ Եվ այնուհետև բանաստեղծել շարունակելով և կատարելագույն մարդկային կերպարանք տալով, մարդկային հարաբերությունների անդրապատկերումով, դարձրել են այդ կոթիքը քաջամիդ աղեղնավորի կախի՝ բռնակալի դեմ, որ հորձակվում ու սարկացնել է ուղուձ ուրիշներին։ Բայց աղեղնավորն սպանում է նրան, Հայկի առաջադեմ էլ նույն քաջամիդ աղեղնավորի կոթիքն է բռնակալի դեմ, դրա մեջ ևս կենտրոնը կազմում է քաջ նետածգությունը, դրանց խուժող թշնամուն նետով սպանելը և իր երկիրն օտար բռնավորից ազատելը։

3. Պատմականորեն հայոց մալոնի Հայկի առասպելը, որ ծագած է ընդհանուր առասպելաբանական աշխարհայեցողությունից, կապվել է հայոց նախնական պատմության հետ, և հին առասպելական աղեղնավորը դարձել է հայոց նախնին, կամ հայոց պաշտելի նախնին նույնացել է աստվածային աղեղնավորի հետ։ Եվ իսկապես, այդ առասպելը մեզ առնում է ամենից առաջ այն նախապատմական դարը, երբ հայերը դրսից եկել են ուրարտացից երկրեր։ Թե ինչ մարտերով և ինչ զորավորներին առաջնորդությամբ են մտել հայերն Ուրարտու երկիրը և ինչպես տիրել նրան, մենք այդ չգիտենք։ Բայց այդ շրջանում տնայայտի կատարվել են սխրագործություններ, որոնք նյութ են դարձել երգերի ու զրույցների, որոնց մեջ գովվել են տոհմապետ զորավարները, Հայկի առասպելի մեջ պահված է դրա հիշողությունը։ Եվ այս զարմանալի է։ Ավանդական բանաստեղծությունը երբ մի անգամ հաստատուն բյուրեղացած կերպարանք է ստանում, երկար դարեր այլևս չի մոռնում, մանավանդ, երբ կապվում է մի տեղի տնվան հետ, ինչպես եղել է Հայկի ու Բելի առասպելի վերաբերմամբ։ Առասպելի մեջ հիշված տեղանունները՝ Հաբը, Հայկառն, Հայոց ձոր, և ուրիշները գտնվում են Վանա լճի շուրջը, ուր և սկզբում տեղավորվել է հայությունը։ Հայկը նահապետական հասարակություն մի հայր է, որի տոհմի մեջ հաղվում են մոտ երեք հարյուր աղամուրդ, նա չուզելով ենթարկվել Բելին, գալիս է Վերաբադայն երկիրը, ոչ թե Վերաբադ, այլ Վերաբադ՝ գտնաբեր Կորդուաց աշխարհի մեջ (Վանա ծովից դեպի հարավ-արևելք)։

«Ձու արարեալ զնայ յերկիրն Արարողայ... հանդերձ որդւովք իւրովք և դստերովք և արդւոց որդւովք, արամբք զօրաւորովք, թուով իբրև երեքհաւրիւր, և այլովք ընդծնօք և եկօք յարեցելովք ի նա և բոլոր աղիւիւս Եր-

դարեւ... ուր քաջամարտիցն տնկաւ Բելն ահուհեաց Հայկ Գեղեզման, որ այժմ տնիք Գեղեզմանկը։ Բայց զգիտեն Բելայ պահուհեալ իմն գեղովք... հրամայէ Հայկ սանել ի Հաբը և Թաղն ի բարձրաւանդակ տեղա... ի տեղն կանանց և արդւոց իւրոց (ՅԵՐ. Ա, 11)։ Էկն գեղեզմանները ասորաբար բարձրավանդակ տեղերում են շինված, և շատ հին ու շուր ազգերի մեջ, ինչպես և Հոյասառնում, ցույց են տալիս, սովորաբար բարձր տեղերում մի տեղ հսկայի... սովորի կամ սպանվողի գեղեզման կալմամբ, որ պաշտամունքի առարկա է։

թեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յաւաւըստն ցրակընցն դադարեալ բնակէին, զորս հնազանդ իւր արարեալ Հայկ՝ շինէ անդ տուն բնակութեան կալուածոց եւ տայ ի Ժառանգութիւն Կազմեալ որդւոյ Արամանեկայ, ընէ ինքն խաղայ... ալլով աղբիւն ընդ արեմուտս հիւսիսայ, զոյ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, և անուանէ զանուն լեռնադաշտին Հարք, այս ինքն թէ հարք են ասունն բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ, Շինէ և գիւղ մի, և անուանէ յիւր անուն Հայկաշէն: Եւ բնակիչներ զանում է նաեւ Տարոնում, Սիմ լեռան մօտերը, զի հարաւոյ կողմանէ դաշտիս ալսորիկ, ու երկայնաւորութիւն միով լեւոմք, բնակեալ յառաջագոյն արք սակաւք, ինքնակամ հնազանդեալ դիւցազնին (Յոր. Ա. 10), Երանք, այդ հին նախահայ բնակիչները, որոնք հիշողութիւն են ուրարտացիների, Հայկի ցեղից չեն, այլ տարբեր ցեղից, Երանք, ըստ Յորենացու մշակած առասպելի, սեմական են, մինչդեռ Հայկն իր մարդկանցով հաբթայան ցեղից է: Հայկի սերունդը նրա Արմենակ որդու առաջնորդութեամբ Հարքի կողմից տարածվում է դեպի հյուսիս-արեւելք և բնակվում Այրարատում, Այստեղ նույնպես զանվում են հին բնակիչներ, զի յալով տեղիս գտանէին բնակեալք ի մարդկանէ յերկրիս մերում ցան և ցիր սակաւք յառաջ քան զգալուստ բնկին մերոյ նախնւոյն Հայկայ (Յոր. Ա. 12), Ասլո հետազոյում հայերն անցնում են Շիրակ և վերջապես Գեղարքունիք ու Սյունիք, Կնչանակն՝ Հայկի և իր սերնդի մօտին եղած զրույցների մէջ շատ զարգ կերպով պակաս է հայ ցեղի Հայաստան մտնելու և հետզհետեւ այնտեղ տեղավորվելու հիշողութիւնը: Միայն ըստ արդի ընդհանրապես ընդունված պատմական ավայկների՝ հայերն արեւմուտքից են անցնում արեւելք, մինչդեռ ըստ Հայկի առասպելի՝ նրանք հարավից են գալիս դեպի հյուսիս, Եթե դա մի հիշողութիւն չէ այն մօտին, թե հարավով դեպի արեւելք շարժված հայ ցեղի մի էլուրը հետագայում դեպի հյուսիս է տարածվել, ապա դա պարզապէս ստեղծածն է քրիստոնյա մտածնադրի, որ հայերի ծագումը, ուստի և Հայկի առասպելը, կապել է աշտուրակաշինութեան հետ:

Ինչպէս էլ Յորենացու ձեռով գրական մշակութիւն է կրած Հայկի առասպելը, բայց և այնպէս զրա մեջ դեռ երևում է նաեւ Յախնիքների պաշտամբի հետքը: Բնակւում է, որ այն դարերում, երբ իշխում էր հոգեւ հազմաւոր ու նախնիների պաշտամունքը, հայ ցեղին առաջնորդող նահապետներից մեկը դասնար հայ ազգի նախնին Ալպիս էլ հենց կոչվել է Հայկը (սինկին Հայկայ) և հայ ազգի ծագումն ու անունը բացատրել են նրա անունով: «Այդպէս մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ՝ Հայք» (Յոր. Ա. 11): Թե ինչ չեղմարտական կապ կա Հայկ և Կալ բաւերի մէջ, այդ զարգ չէ: Բայց ժողովրդական ստուգաբանութեամբ Հայկ անունը, որ նշանակում է հակա, աւելութեան մէջ է գրված հայն անվան հետ, և Հայկը դարձել է հայ ազգի նախնին, որից ժողովուրդն ստացել է իր անունը: Եւ նույնպիսի ստուգաբանութեամբ Հարք գավառի անունը կապված է եղել նախնիների հետ, — շարք, այս ինքն թէ հարք են ասունն բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ: Այդ նախնին, ըստ այն դարերի հասկացութեան, մի պաշտելի էակ է, աստվածային ծագում ունեցող մի դիցազն, ինչպէս և

կուշում է Հայկն առասպելի մեջ, Այգալիսի նախնիները պաշտամունքը, ինչպես վերևում տեսանք, նախնական հավատալիքով սերտ հարաբերու-
թյան մեջ էր գրվում որևէ աստվածի հետ: Այդ պատճառով և Հայկ անունը
կապված է Վի համաստեղների հետ:

Մյուս կողմից՝ այդ առասպելը—հայերի կամ թե նախահայերի իրենց
հարավային զբաղիները, հատկապես ասորեստանցիները, դուրս և բարելա-
ցիները հետ ունեցած հարաբերությունը—կրել է մի ուրիշ պատ-
մական ազդեցություն: Հին թշնամի դեռ, ղեմոնի, իսկարի ոգու տեղ ան-
ցել է, թշնամական հարաբերություն պատճառով, Բելը, որ Հայաստանի
հարավային զբաղիները, սեմական ազդերի՝ ասորեստանցիների, բարելացի-
ների, քաղաքացիների և ուրիշների արեգական աստվածն է, երկնքի և լույս
սի տեր, աշխարհի և մարդկանց արարիչ, որ աստղերին իրենց ճանապարհը
ցույց է տվել: Բել կուշումը, որ նշանակում է տեր, արվում է և ուրիշ աստ-
վածների ու աստվածների, ինչպես և թագավորների: Այսպես և ըստ հների
պատմության՝ Ասորեստանի թագավորներից մեկը կոչվել է Բել: Որի որ-
դին է համարվում նրանու: Բայց Բելն օկզրնապես արեգականային աստվա-
ծություն է: Եվ եթե նկատի ունենանք, որ մեր հակն Հայկն ևս իրեն
նախնի մի համաստեղություն է, ապա պարզ կլինի, որ հին առասպելն իր
այս կերպարանքի տակ դեռևս պահում է իր առասպելական դիցաբանական
բնավորությունը, որով արեգակի կամ աստղերի աստված Բելի դեմ, որից
ծագում են աստվածներն ու մարդիկ, կոչվում է մի աստղային դիցազն
Հայկ, հայերի նախնին: Հայկի կոչվել Բելի դեմ ցույց է տալիս, որ այդ
առասպելը զորացրել է հայերի մեջ արամեացիների սահմաններում Դրա
մեջ պահված է ասորական քաղաքակրթության, կուշտուրայի և կրոնի՝
հայերի վրա ունեցած ազդեցություն հիշողությունը, և մի հիշատակ այն
թշնամական հարաբերություն: Որ հայերն ունեցել են իրենց զբաղի, հա-
րավային ազդերի հետ, որոնց աստվածն էր Բել: Բայց կարող է այդ գրույ-
ցի մեջ մնացած լինել նաև ասորեստանցից դեմ Հայաստանի նախահայ
բնակիչների՝ ուրարտացիների մղած պատերազմների հիշատակը, որ հետո
հայերը ժառանգել են իրենց հետ համաձուլված ուրարտացիներից¹:

Հայկի առասպելի դրական մշակումը Մ. Խորենացու ձեռով՝ տեսնել
Խորենացու մեջ:

ԱՌԱՄՈՒԵԼՆԵՐ ԱՐԱՍԻ ՄԱՍԻՆ

Այս գրույցներն ևս, ըստ Մ. Խորենացու, ծագում են գուտնականից²,
բայց պատմված են շատ համարատ և ավելի ևս զրական մշակությունը,
ուստի դժվար է ստուգությունը որոշել զրանց ավանդական բանահյուսու-
կան տարբերը: Դրանց մեջ երևում է հայերի հարաբերություն իրենց

¹ Հայկի ու Բելի մասին գրույցներ 19-րդ դարում տես Մ. Դյու Նոյ-ն, Գրք
Բրք, էջ 118 և հա., Նեբուչեն Մաբդենեն, Տեղագրությունը և Փոքր և թ Մեծ Հայս,
Վենետիկ, 1864, էջ 278 և հա. Մ. Աբդյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ
264 և հա. Մ. Աբդյան, Եվրոպացիներ, Որհան, 1941, էջ 80 և հա.

² Մ. Աբդյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 581—580.

սահմանակիցները հետ՝ Մարաստանի, Ասորեստանի և Կապադովկիայի կողմերով:

Արամի կռիվն Ասորեստանի դեմ թերևս մի ավանդական հիշողութուն է ուրարտական հզոր Արամ թագավորի, Մովսանասար Բ.-ի (860—826 մեր թ. ա.) հակաասկորդի, և նրա սագմական զործողութւոյնների ընդդէմ սասորեստանցիների Պասականի հետ միասին այդ զրույցն ունի միամտանակ նաև առասպելական բնավորութուն: Ասորեստանի կողմերում Հայաց երկրի ավերիչն է Քառայամ անուն, յաղգէ սկիայիցն... Ամա ևակատու պատերազմի ի դիմի հարեալ Արամ... Եւ զայս Բարդամ... աստուածացուցեալ պաշտեցին Ասորեք: (Յուր. Ա. 14): Արեւմն Արամի հակաասկորդն է Բարդամ աստվածը, որին պաշտել են նաև հայերը:

Նույնպես սովորական մարզիկ չեն Արամի թշնամիները Կապադովկիական Կեսաբիայի (Մաժաքի) կողմերում: Այստեղ նա պատերազմում է Տիտանյանների հետ, և առանձնապես՝ նրա դեմ է դուրս գալիս Պայապիս Քաղեայ Տիտանեան, որին հաղթելով՝ Արամը քուլմ է Քի կղզի ինչ Ասիական ծովուն: Այս հակայի անվան մեջ տեսնում են Պապայոս խիմայրագնեսա—պապայոս խիմայրածին (քիմայրածին), որ հայերեն լինում է Քաղի զարմ, Քաղեայ: Հունական առասպելաբանութւոյն Տիտանները կամ Տիտանյաններն ապստամբում են Կրոնոսի, Ջևահի հոր դեմ. բայց Ջևաը կայծակներով գինյված՝ նրանց պահովիծում է Տարտարոս՝ նրանց պարտութւոյն վրեժը կամենում են աւելի նրանց մոտիկ ազգականները, Գիգանտները, վիթխարի հասակով հսկաներ, որոնց իրենց ուժին ու հրեշտավոր հասակին վստահացած, վերելակում են երկինք և փորձում են Ջևահի վայրէրթանել: Բայց սա նրանց մի քանիսին անհուճկ է գլորում, ուրիշներին բանտարկում հրաբխային լեաների տակ: Գիգանտների գլխավորն է Տիփոն (Տիֆոն, Տիֆոս, Typhaeus, որ է իսկապես ծուխ արձակող, ծխող, և իբրև հասարակ անուն նշանակում է պառտանողմ, կայծակնացայտ ու որոտալիր ամպերով): Նա հրաբխային լեաների ու կորստաբեր փոթորիկների սիմբոլն էր. սենեք հարյուր գլուխ և իր հարյուր բերանից բոց էր արձակում: Ջևաը նրան դնում է հրաբխային հստա սարի ծանրութւոյն տակ կամ, բաց ուրիշների՝ Միլերկրական ծովի Խնարիմ կամ Էնարիա հրաբխային կղզու տակ, որտեղից նա շարունակում է բոց արձակել, Տիփոնի գովակն է Գիմայրա, որ նշանակում է ճաղ, մի հրեշ, որի հրախից կրակ է դուրս հոսում: Նա սիմբոլ է Լիկիայի մի հրաբխային լեան:

Արդ՝ հայկական Արամի կռիվը Տիտանյանների և Պայապիս Քաղեայ Տիտանյանի դեմ Մաժաքի (Կեսաբիայի) կողմերում, բաց Մաքեդոնի, Նուշնն է, ինչ որ Ջևահի կռիվը Տիտանյանների և Տիփոնի դեմ: Այդ առասպելը հայերը յուրացրել են այն ժամանակ, երբ դեռ Կապադովկիայում էին ապրում: Իլիականի մեջ արիւմնների (որ է՝ հայերի) բնակութւոյն վայրը գրվում է այնտեղ, եւր Տիփոնի բնակատեղն է: Իսկ այդ համարում են Արգայոս հրաբխային լեւը Կեսաբիայից (Մաժաքից) հարավ: Կնշանակի՝ Ջևահի և Տիտանների կամ Ջևահի և Գիգանտների կռիվ առասպելը, որ մեկ-

¹ Jos. Markwart, Die Entstehung u. Wiederherstellung d. arm. Nation, էջ 66—68.

Նուս՛ էն իբրև հրաբխային երևււթի առասպելական զատկերացում, պատմը-
ված է եղել նաև Արգաշոս լեռան վրա: Այդ կողմերում տարող արիմներն
այդ առասպելը կապել են իրենց նախնու Արիմ տնվան հետ, իբրև Արիմի
կախի Տիտանների կամ Գիգանտների դեմ Հետապալում Արիմ անունը դար-
ձել է Արամ, թերևս ուրարտացոց վերելում հիշված Արամ թագավորի տն-
վան հիշողությամբ կամ, հավանորեն, ազդեցությամբ Ասովածաշնչի մեջ
հիշված Արամն անվան, որ է՝ արամեացոց—Ասորիքի և Միջագետքի բնա-
կիչները—նախնին: Բայց Տիտանների դեմ նրա կռվի վայրը զեռ հիշվում
է նույն Մաթաքի մոտ տեղում, և նա հաղթում է Տիփոնի դարձ Պապաշոս
Պողիայ Տիտանին, նրան բնախառնական արկանելով ի կղզի ինչ Ասիական
ծովուն, որ է Միջերկրական ծովը, ինչպես հունական առասպելի մեջ Ջանը
Տիփոնին դնում է նույն ծովի մի կղզու տակ:

Այսպես ուրեմն, Արամի այս առասպելի մեջ պահված է մի հիշողու-
թյուն Կապադովկայի կողմերում հայերի բնակված լինելուն: Բնության
առասպելն այստեղ ևս դարձած է հայոց նախնու մի կռիվ: Այդ նախնին,
Արիմ—Արամ, հանդիսանում է Հայկի մի երկրորդ տիպարը, իբրև Հայոց
երկրի (հետն առած և Փոքր Հայք) սահմանների պաշտպան ընդդեմ օտար-
ների: Միաժամանակ նրանից է ծագում հայ ազգի երկրորդ անունը, «Յարոյ
տնուն և դալխարհս մեր տնուանեն ամենայն ազգք, որպէս Յայնք՝ Արմէն,
իսկ Պարսիկք և Ասորիք՝ Արմէնի(կ)ք» (Քոր. Ա. 12)¹,

ՏՈՒՐՔ ԱՆԳԵՂՅԱ

1. Տուրք և Անգղի աստվածներ:—Նախնական ժամանակներն է տա-
նում մեզ և այս հսկայի առասպելը, որի մասին շատ քիչ բան գիտենք², Նրո
անունը, որ Մովսես Խորենացուց է միայն հայտնի, ձեռագիրների մեջ կա
թե՛ Տուրք և թե՛ Տորք ձևերով: Բերենք Մ. Խորենացու այն կտորը, որի մեջ
հիշվում է Տուրքը: «Ժսկ զայր խոժոռագեղ և քարձր և կոպտարանձն և տա-
փակաքիթ, խորակն և դժնահայեաց, ի զաւակէ Պաքաժոյ, ի Հայկայ
թուռնէ, Տուրք անուն կոչեցեալ, որ վասն առաւել ժահագիրմութեանն ձա-
յնէին Անգղեայ³, վիթխարի հասակաւ և ուժով, հաստատէ կուսակալ տըն-

¹ Այս անունը Մարգարեք ծագած է համարում Արիմ անունից իտպական զին ին
(իտալ-իներ, Մաչի-իներ) վերջագումբայմբ իբրև Ար(ի)միներ, միջի ի ձայնագորի զուր քնկ-
նելով: Դա խաղաղու առնապարտության մեջ երևում է Արմենի ձևով. զարթկնելը դարձ-
բել են Արմիտ, հայտեր՝ Արմենիտ, Արմենիտ:—Արիմն է ձայն հզոյ են, անշուշտ,
հայաթյան մեջ ժամոգ առանձին ցեղերի անուններ, որանք ընդհանրացել են մեկը հայերի
մեջ, մյուսը («Արմենն ձևով») օտարների մեջ: Մի անգամ որ Արիմ զարեւել է նախի
դիցազն, քաղկանդար և նրա տանը կարող էր կոչվել «Եւան ժամոգիվ Արմենի,
Արմեն, սեւ. ար. սԱրմենի, ինչպես և Խորենացին նույն անվան սԱրմն ձևից նույն
ժամոգիվ կազմած ունի սԱրմենն: Դաւը ձայն նշանակութամբ. սԱրք Արամենն,
սԱրամենն աղն (Բ. ԶԶ. Գ. 20):

² Մ. Արեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 232—233:

³ Գեոք է նկատի անենալ, որ Մ. Խորենացին սիրով կոչել է անուն ժյուս Նախա-
քարների անունների քաղաքության վրա ևս և այդ քաղաքությանները, ինչպես երևում
է, հա ինքն է առկա սեւ գԱրմենիայ զինեմ՝ այն Արմենիտ, այլ տընուի տնիս, սըք

միջ. և յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տունն (Բ. 8): Բայց զԱնգեղ տունն ասէ նոյն պատմաբանը [Մար Արամ] ի Պատմաբանութենէ ի Հայկաթ Թոռնէ լինելը (Ա. 23):

Անգեղա բառը նշանակում է ազնիւ, բայց այդ վիպական «Անգեղեայ» տունն իր կազմութեամբ չի կարող նշանակել ազնիւ: Դա կազմված է «եռ»=«եռն» մասնիկով: Ինչպէս՝ արեւելեան—արեւելայ, արեւմտեան—արեւմտայ, աստիճան—աստիճայ (սեւ. աստիճանէի), Մամիկոնեան—Մամիկոնայ (սեւական)՝ Մամիկոնէի, Մամիկոնէից): Ըստ այսմ՝ «Անգեղեայ» նաւն է, ինչ որ Անգեղեանն: Արդ, սեւականի կամ անականի այս «եռ» եռնն մասնիկը նշանակում է ձագում: Անգեղեայ կոչումն, ուրեմն, ցույց է տալիս, որ Տուրքը համարվել է Անգեղի սերունդ, իբրեւ Անգեղյան Տուրք: Անգեղ կոչվել է հայկական աստվածներէ մեկը: Աստվածաշնչի մէջ սեմական ներգալ աստուծու անունը հայերենում Թարգմանված է Անգեղ: Սերբոսի Պատմութեան մէջ կարդում ենք. «Եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արեւմտից, այս իւրն է Անգեղ տուն. վասն զի կոչեցաւ Բագարատ և Անգեղ. զոր ի ժամանակին յայնմ միկ ազգ բարբարոսացն աստուած կոչեցին»¹, Ուրեմն Անգեղ աստվածը կոչվի է և Բագարատ, որ փոխառութիւն է հին պարսկերէնից և նշանակում է՝ «աստուածատուր»², կամ լոյս տուր (Հմմտ. Մ. Խոր. Բ. 36. «Ստանաբուկ... Տուրք Սանտայ»):

Մյուս կողմից՝ Տուրք կամ Տուրք անվան մեջ տեսնում են Միտանի և Խեա ցեղերի Տարկու, Տարքու կամ Տուրքու աստուծու անունը, որ եղել է պաղարեութեան ու բուսականութեան աստված: Նրա պաշտամունքը մի ժամանակ տարածված է եղել Փոքր Ասիայում և այլուր: Կարծում են, թէ նա պաշտված է եղել և հարավային Հայաստանում: Եայտնիքն Հայաստանի հարավային մասում, Եփրատից մինչև Վանա ծովը: Այնտեղ, ուր «ընկնում է նաև Անգեղ գաղտոր հին Նայիրի աշխարհում»: Եթէ աստվծի այս յատկանիւնն ենթադրութեամբ, այն ժամանակ պետք է ընդունել, որ այդ

արեւելա ասորի նորո հրէիւն: Գրեթէ և զՅուսիսոգ զինի ունիւ, որ զարժանի Թագաւորն զարարասէր զբազմիւնն: Անեւ և զՍղանգուհիոգ ի վեջայ զեհորանոց. և զԼուսնիսոգ բազմիւնս... Եւ Եթէ աս ցոփ ինչ ոչ ունիցիս, և զՅիւսիսիսոգ՝ ամբարանոցս զԼուսնի. և ձիւնակիւս (Բ. 7): Այլաբան յանուն ցաղցրութեան բարեւոց նորո անուանեցաւ: Աղաւնը զի աղու ձուլէին զձու (Բ. 8): Այս բացատրութեանի կարգին է պատկանում նաւն զինի մեջ է Անգեղեայ բառի մեկնութեամբ՝ «որ վասն աստուծոյ ժառանգութեանն ձայնէին Անգեղեայ... և յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տունն»:

¹ Անգեղ տուն, Անգեղ տունն զաստ է Տուրքոգ Հայքի կամ Մեծ Եփրատի զմասնից մեկը, որի մեջ է Անգեղ բերդը (Փ. Բագարու, Դ. 24): Բայց Անգեղ տունն միտմտեան և նախաբանական ասմի անունն է: Աղաթանգաղսի մեջ հայոց զայլաբար նախաբաններն, զիւսակայնիքն մեջ ասալինն է ինչպէս Անգեղ տունն, զգիտ ինչպէս Անգեղ տունն:

² Սերբոսի եպիսկոպոսի Պատմութիւն, Երեւն. 1839, էջ 7:

³ H. Hübschmann, Armenische Grammatik. Leipzig, 1897, էջ 31:

⁴ Ն. Աբաւնց, Տուրք աստված Հին Հայոց, Հուշարձան, զբնական ժողովածոյ, Վիեննա, 1811, էջ 289 և հաւ ճճճ: Անգեղայ հայ հին աստեղագրութեան և նոր բանասերութեան մեջ, ճիշդեկողորմ Գրեթէն և Արդիոսի Ինստիտուտին Մ 5, Երեւն, 1931, էջ 4 և հաւն: Այստեղ ճճճ Անգեղեայ բացատրված է իբրեւ Անգեղի, Անգեղ բերդի Տուրք:

անուրբ ժողովրդական ստուգարանությամբ նույնացել է հայերին առաքել քառի հետ, ըմբռնվել է իբրև «տուրք դից», և այն շրջաններում, ուր հայերին հետ խառն գործածվելիս է եղել պարակերներ, դա ասվել է նաև Բագդատա—Բագարատ, որ է գլխից—տուրքը: Ապա՝ ինչպես դիցաբանության մեջ հաճախ պատահում է, որ սկզբնապես ուրույն աստվածներն ու հերոսները կամ նույնանում են միմյանց հետ, կամ մեկը մյուսի սերունդ է դառնում:— Երևան և այդ երևութի տեղի է ունեցել և այս դեպքում: Տուրք աստվածը, պաշտամունքի տեղի նույնության պատճառով, հարաբերության մեջ դրվելով Անգեղ աստուծու հետ, կամ նույնացել է նրա հետ («կոչեցաք Բագարատ և Անգեղ»), կամ դարձել է Անգեղի սերունդ — «Տուրք Անգեղեայն»։ Առասպելի հետագա զարգացման ընթացքում, սակայն, «Անգեղեայն» անվան իսկական նշանակությունը մթնել է, այդ ըմբռնվել է իբրև «գեղեայն» անվան իսկական նշանակությունը մթնել է, այդ ըմբռնվել է իբրև «տեղեյն» և առաջ է եկել. — Թերևս, գրական հանապարհով ու խորհնացու ձևով, — այդ հսկայի տեղեյնության նկարագիրը: Այդ մասնակ և մոռացվել է այդ հսկայի ծագումն Անգեղից, ու նրան կապել են հսկա Հայկի հետ:

2. Առասպելները:— Ծ. Խորենացին Անգեղյա Տուրքի մասին պատմածները հիշում է իբրև երգ և առասպել. նա արհամարհելով այն՝ բառացի ոչինչ չի բերում, այլ տհաճությամբ տալիս է երգի ըզրանգակությունը, համարելով այն սուտ, փծուն բան, որովհետև դրա մեջ երևում է չափազանց երևակայություն:

«Բայց եթե կամեն՝ ասեմ և ես յազազո նորա անյաջ և փցուն, սրղէս և Պարեկէջ վասն Բաստմայ Ծագնի հարիւր և ըստ փզոց ոյժ տանն ունել: Քանզի կարէ իմն անյորմար Թուէին և նմա երդ բանից վասն ուժեղութեան և սրտեայ լինելոյն. սրջ ոչ Սոմանի և ոչ Հեթանկեայ և ոչ Սագնիկն յարմարին այս զորոյց: Քանզի երգէին նմա բուռն հարկանի զարմացաք վիմաց ձեռոց, ուր ոչ զարդ զնշմարիւն, և ճեղքել ըստ կամաց մեծ և փոքր, և ցերել հզնգամբքն և կազմել սրղէս սախառն, և գրել նշանդևս հզնգամբք իւրովջ սըձուխ և այլս այսպիսիս:»

Եւ, յեղբ ծովուն Պանոսի դիպելու հաւաց թշնամեաց՝ դիմէ ի վերայ. և ի խաղան նոցա ի խորն իբրև — սպարէզ — ութ, և սա ոչ ժամանակ նոցա՝ ասես, տանն, վէճա բլրառնէս, և ձգէ զկնի. և ի ստառիկ պոռտամանէ ջուրցն ընկզմին հաւց ոչ սակաւ, և ամբարձուսն արեցն, որ ի պոռտամանէ ջուրցն, վարէ զմեացեղն հաւան ըսգում մղոն: Ի՞նչ, կարէ է առաջելոյ, այլ և սաստիկաց աստուղի: Բայց ցեղ զի՞ է. քանզի էր արդարև ստառիկ հզոր և այսպիսեաց զբուռաց արածին (Պար. Բ. 8):

Տուրքը, առասպելի առաջին մասի մեջ, հանդիսանում է մի վիթխարի քարակալ — քանդակագործ: Առասպելի երկրորդ մասի մեջ պատմվածը, թշնամիների նավերի ետևից ժայռեր ձգելը, նման է Հոմերոսի «Ոդիսականի» Կիկլոպ Պոլիփեմի արարքին: Այս նմանությունը, որ վաղուց ցույց է տրված, զարմանալի չէ: Հաճախ ամբողջ ժողովրդական երգեր, վիպական մեծ ճերթվածներ, որոնք երբեք դրված չեն եղել, մի ազգից մյուսին, մի լեզվից մյուսին են անցնում՝ ասացողների բերանին գրեթե բառացի ոտանա՝ վորով թարգմանվելով: «Ոդիսական» ինքը բազմազան ազգերի առասպելների մի ժողովածու է՝ արվեստով մշակված: Ուստի անհրաժեշտ չէ, որ հայերի մեջ ևս պատմվեր մի այդպիսի վրույց: Եր Պոլիփեմի մասին պատմվածի հետ ընդհանուր նմանություն ունենալով հանդերձ՝ շատ էլ տարբերություններ ունի իր վիպական մանրամասնությունների մեջ: Տուրքն

իր բնավորութիւնը պահուած է և իր տալէ տարաքի մեջ, նա, ալդ հսկա քարակոփը, որ կտրողանում է բռնեւրով ճեղքել որակաքորը և եղունգներով քերել, տախտակ դարձնել ալի ու վրան փորագրութիւններ տնել, նա իր արվեստին հաստել սարերային ուժն է գործադրում, թշնամիների ետեից բլրածն ժայեր է առնում, ձգում:

Նման պիտի մարմնով և ուժեղ հսկաներ շատ ազգերի վեպերի մեջ երևան են դալիս, Հիշենք միայն մեր Սասունցի Դավթին, որի եղունգը երբ դիպում է ջրոյում է քարին, քարից կրակ է դուրս դալիս: Իսկ նրա որդի Մհերը «մէկ մեծ աւագին քար էրի, կցից քաղաքի քամակ, գիտու մէջ. գետ էլաւ էրկու ճող, մէկ ճող էն եանէն կիյա, մէկ էս. էլ քաղաք չի աւրի: Բըջոյ քալաքն էլ վար էն քարին շինից. իսկի աւիրել չկայ էն բերդին»: Նման ուժի և շնորհի տեր, միաժամանակ և քանդակագործ է նաև Պարսից Ռոստոմը: Այդ լեռնաձառն կամ, ըստ Խորենացու, հարյուր քսան փղի ուժ ունեցող Ռոստոմի առաջ նուաճուած ոչ միայն գետինը, այլև քորը դիմա-նալ չէ կարողանում:

«Եթե նա վեր ելներ մի քարի վրա ու կանգներ,
Ծանրութիւնից երկու օտքը քարի մեջը կխրվեր»:
«Հսկա Ռոստոմ, որ հենց ժայռին ձեռ էր ձգում և բռնում,
Որակաքորը անդամ տեղից պոկում կովի օրերում,
Եվ աւագին կորովովը սարը տեղից էր շարժում,
Ծանր, ամուր քորը մոմ էր նա համարում իր բոսում»:

Եվ տալ նույն Ռոստոմը ներկայանում է. պարսից ժողովրդի ավանդութեամբ, իրեն տարալի Պարսկաստանի ժայռերի վրա եղած հին քանդակների, որոնց հայտնի են Նախի Ռուստոմ անունով:

ԱՐԱ ԳԵՂԵՅԻԿ ԵՎ ՇԱՄԻՐԱՍ

1. Առաջիկ Դեպիսիսի զիցուհիս իմ եղ Գամիւրամ:— Հին Արեւելքում եղել է մի շատ սիրոված առավանդի, որ հազարավոր տարիներ շարունակ յաճախեց մեծ նշանակութիւն է ունեցել Արեւելքի կրանկան կյանքի համար: Նա իր հիմնական զարգացումը եղել է պըղղաբերութեան ու սիրո, այլև ջրի գիցուհի և դանազան ժողովուրդների մեջ զանազան առնանկարով ու կերպարաններով պայման է շատ կոշտըրում: Նա Առաքնաւանում կոշտ է Միլիտան, Իշտար, Բաբելոնում Իշտար, Փիւնիկիում Աստարթ, Աշտար, Դեպիսիս, Ասորիքում Դեպիսիս, Առաքնաւան, Աստարթ, հույների մեջ՝ Ափրոդիտ, պարսիկների մեջ՝ Անահիտ, հայերի մեջ՝ Անահիտ: Այս սիրո գիցուհու պայտածուցը ցօփ և առնուհի է եղել քաղմութիւն տը և կին սպառազմներով ու ետեւորդներով:

Այս սիրո ու հեղաւթիւնի գիցուհին Հայաստանում պայման է և Առաջիկ առնուհի: Նա առաքնական Դեպիսիս առավանդին է, որ առաքնական ազգացութեամբ մտել է հայերի մեջ: Նրա Առաջիկ առնուհի լինց թարգմանութիւն է առաքնական զնաւակաւան բռնի, որ նշանակում է առաքնի, այնպէս՝ Արաքսի մարտիկը, որ այս առնուհի գիցուհու սիրտին էր: Ինչպէս և հայերենում լինց առաքնիկ ըստը նշանակում է նաև Արաքսի, որ մեր ժողովրդի մեջ այժմ կոչւում է Լուս-Առաք: Անահիտ և Առաջիկ զիցնաղան եղել են միեւնոյն

1 Զիւրդ ու սիր, Ռոստոմ և Սահար, Թարգմ. Գլուխդարանի, էջ 112—116:

2 Մ. Արեւելք, Հայ ժողովրդական առաքնիկները, էջ 510—512:

Հրաշալի գեղեցիկ գիրքացն է Գիլգամեշը՝ որին սիրում է Իշտարը։ Գիլգամեշին ինքն իրեն առաջարկում է գեղեցիկ երիտասարդին, մեծ պարգևներ և իշխանութուն խոստանալով նրան, որ իր կամքը կատարեն Բայց Գիլգամեշը մերժում է նրա բոլոր առաջարկությունները, ասելով թե նա կորստի է մոտենել իր բոլոր սիրականներին։ Այն ժամանակ Իշտարը զոյրանում է ուղղում է ապանել Գիլգամեշին։ — Իրոք նա սպռնում է իր մի ուրիշ տարփածունին, Թամմուզին, որի մահը ողբում է նա և Սանդարամետ է իջնում անմահության ջուր ձեռք բերելու և նրան հաղութուն տալու։

Այս առասպելի պաշտամունքն ևս կար իր արարողություններով Տիրուսում նույնիսկ Թամմուզի հաղության տոնն էին կատարում։ Նույն առասպելն ու տոնը կար նաև հունական Սփրոդիտի և Ադոնիսի համար։ Այդ տոնը շատ մեծ հանդեսով կատարում էին Բիբլոսում (նավահանգիստ Միլեթի քաղաքի մոտ)։ Տրիպոլիսի և Բեյրութի միջև)։ Երբեք առաջին օրը սգում էին երիտասարդ սիրականի մահը, կատարում էին Թամմուզի ողբը, որին մասնակցում էին գիցյուհու հերոգույններն իբրև ողբասաց կանաչը, երկրորդ օրն ուրախության հանդես էին անում նրա հաղության համար։

Արդ՝ այս առասպելի հայկական պատմեմն ունենց իբրև Արտ Գեղեցիկի և Շամիրամի վեպ, որ գեղեցիկ մշակած բերել է Մ. Խորենացին (Ա. 15) ոչ իբրև աստվածուհու և գիցյուհի առասպել։ Արտն Հայաստանի իշխան է, իսկ Շամիրամը՝ Ասորեստանի թագուհին։ Բայց ինչպես ասյուսիքում այն և կաթոսն Շամիրամն ունեն է, ինչ որ իր մայրը, սեմականների սիրտ աստվածուհին, մարտիկ և տարփածուն գիցյուհին Իշտար, Գերկեսու, նույնպես և մեր Շամիրամի և Արայի զրույցը նույնն է, ինչ որ Իշտարի և Թամմուզի առասպելը։ Մեր Արտն նույնպես գեղեցիկ է, ինչպես Թամմուզ, Ադոնիս և մյուսները։ Ինչպես Իշտարն իր տարփածունին, նույնպես և Շամիրամն Արային իշխանութուն և պարգևներ է խոստանում իր կամքը կատարելու համար։ Բայց Արտն հավանություն չի տալիս։ Իշտարը զայրանում, մահացնում է տարփածուն։ Կայպես և Շամիրամ տիկին զի սաստիկ ցասման լեռն գալիս, կռվում է Արայի դեմ, և Արտն սպանվում է։ Այնուհետև մեծ մայր Իշտարը սաստիկ ցավում է և Սանդարամետ է իջնում իր տարփածունին հաղութուն տալու համար։ Նույնը և հայկական առասպելի մեջ, միայն մեր հեթանոս հայերի հավատալիքով պատմված, և այս շատ բնական է։ Հայտնի է, որ ըստ հեթանոս հայերի հավատքի՝ եղել են Արաբից կամ Աւարից կոչված ռաբներ, որ պատերազմի մեջ ընկած վիրավոր լալերին կամ գիցյուհիներին լիզում և ողբացնում էին։ Այդպիսիների գիակաները գնում էին բարձր տեղերում, աշտարակներին տաններում, որպեսզի Ասիկներն իջնեն և ողբացնեն։ Արդ՝ մարտի զաշտում իբրև լալ ընկնում է Արտն, և Շամիրամը նրա գին գնել է ալյուս աղարանների տանիքում և տալով։ Հրամայեցի աստուածոցն իմոց լեզուլ զվէրս նորա, և կենդանացիս։ Մ. Խորենացու Պատմության մեջ առասպելի վերջը փոխված է, բայց Արտն կենդանանում, հաղութուն է առնում ըստ ժողովրդական հավատքի։

¹ Lehrbuch der Religionsgeschichte, herausg. von P. D. Chantepie de la Saussaye. Leipzig, 1897. I, էջ 193, 316. Երևան, 1908, էջ 308 և հա.

² Մ. Աբեղյան—Հայ ժողովրդական առասպելները, էջ 585 և հա. Մուրգե և

Ըստ Մ. Խորենացու՝ Արայի և Շամիրամի զրույցը կապված է Այրա-
րաայան դաշտի հետ։ Մինչև վերջերս՝ Մոզկեվանքի սարը (Ղապնը յարըզ)
կոչվում էր Արայի լեռ, իսկ Կոստան սարը (Փյոթան դադ), որ Կոստայ-ձ ան-
վան մի երկրորդ ձևն է, ասվում էր Շամիրամա լեռ։ Ըստ Թոմա Արժրու-
նու՝ Արան կենդանանում է Վան քաղաքին մոտ Էլեզուռյա գյուղում։ Այս
գյուղը 20-րդ դարի սկիզբներում դեռ կար՝ Լեզզ անունով, և այդտեղի բարձր
դահաթի հետ, ըստ Սուրբայանի և Սրբանձտյանցի, դեռ կապված էր Արայի
կենդանանալու զրույցը։ Արա Գեղեցիկ և Շամիրամի զրույցի մեջ պահ-
ված է Աստղիկ—Գերկեռայի և իր տարփածուի առասպելը¹։

ՎԱՀԱԳՆ ՎԻՇԱՊԱԲԱՂ

1. Առոտայլ՝ Սիրը։—Եթաջն Վահագնն եղել է հին հայերի սիրելի աստ-
վածներից մեկը, հավասար Արմազդին և Անահաին, որոնց հետ և մի երրոր-
դություն է կապվել նա։ Նրանից էին հայ թագավորները քաջություն
խնդրում։ Շատ հռչակավոր և մեծ ուխտատեղ է եղել Վահագնի Վահկանյան
կոչված մեհյանը Տարոնի Աշտիշատում, ուր նրա հետ պաշտվում էին և
Անահիտ ու Աստղիկ դիցուհիները։ Այսպիսի մի ժողովրդական առաժեռու
մասին երգերը, առասպելներն ու զրույցները բնականաբար շատ են եղել
և երկար ապրել են նույնիսկ քրիստոնեության ժամանակ։ Վահագնի մասին
մի երգված առասպել է հետևյալը.

Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր և զկամորիկն եղեգնիկ.
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր.
Ի բոցոյն վազէր խարտեւ² պատանկիկ.
Նա հուր հեր ունէր,
(Ապա թէ) բոց ունէր մօրուս,
Նւ աշխուժն էին արեգակունք։

Մ. Խորենացին այս կտորը բերելուց հետո՝ ավելացնում է. «Ջայս եր-
գելով ոմանց փանդամբ, լուսաք մերովք իսկ ակնջօք։ Յետ որոյ և ընդ
վիշապաց ասէին յերգին կուռել նմա և յաղթել. և կարի իմն նմանազոյնս
զՆերակլիտայ նահատակութիւնն նմա երգէին» (Ա. 31)։

Պատմագիրը, բացի վիշապների դեմ կովից, ոչ մի ակնարկ չի անում
Վահագնի ուրիշ նահատակությունների, այսինքն քաջագործությունների
բովանդակության մասին։ Անտիքա Շիրակացին (7-րդ դար) հիշում է, թե
հայաց նախնին Վահագն մի ցուրտ ձմեռ զոգացել է ասորեստանցոց նախնի
Բարշամի հաբլը, որից և առաջացել է Հարդգողի (Դարմանադողի) ճանա-
պարհը։—մի առասպել, որ միւսն է մինչև մեր օրերը։ Հին հույների մեջ

Արայի հարսւթյունը, էջ 536 և հան. Էլեզքի և Արամեաի զրույցները,

¹ Յես՝ Մ. Արեղյան, Էլեզուրներ, էջ 71 և հան.

կաթին Ծրի ծագումը կապված է Հերակլեսի մանկության հետ. մի ուրիշ առասպելով՝ դա այն ճանապարհն է, որով անցել է Հերակլը Գերիոնեսի արջառը հափշտակած:

Հելլենիստական ժամանակներում հունական ազդեցությամբ տեղական աստվածները ոչ միայն հայերի, այլև ուրիշների մեջ նույնազգում էին հունականների հետ և հունական անուններով կոչվում. մեր Վահագն հավասար է դասվել Հերակլին: Դա պատահական չի եղել, այլ կատարվել է մի ներքին նմանություն պատճառով: Այդ դեպքը միակը չի պատմության մեջ: Համանման մտածությունը նաև գերմանական ամպրոպային աստված Թորը կամ Դոնարը հռոմեական ազդեցությամբ նույնացել է Հերակլեսի (Հերակլեսի) հետ: Եվ իսկպես՝ Հերակլի աստվադները շատ բազմազան տարրերից են կազմված, դրանցից շատերը կան զանազան ազգերի մեջ: Ըստ որոշ առասպելաբանների՝ հնդկական Տրիստ, Ինդրա, իրանական հերասպտա, գերմանական Թոր աստվածները և Հերակլեսը, իբրև կայծակի կամ ամպրոպի հերոսներ կամ աստվածներ, իրենց մի քանի արարքներով և հատկություններով հավասարվում են միմյանց:

2. Վառացի ամպրոպային աստված:—Առասպելաբանության մասին քիչ ու շատ ծանոթություն ունեցող ամեն ոք իսկույն կնկատի, որ արեգակնմանման աշխրով, հրամազ ու թոթափուռ պատանյակ աստվածը երկընթի և երկրի, ծիրանի ծովի և մի բույսի—եղեգնի որդին, բնության մի երևույթի աննշավորում է: Այդ նկարագիրը բավական հարմարվում է արեգակին: Ուստի և ոմանք հնումն Վահագնին նույնացրել են արեգակի հետ իբրև Ապոլոն, ուրիշները՝ Նուրումա երգի նկարագրին արեգակին են վերագրել և բացատրել, թե դա աստվադնություն է արեգակի ծագումը: Բայց այդ ընդունելի չէ: Վահագն ամպրոպային աստված է: Այդ պարզվում է համեմատական ուսումնասիրությամբ:

Վահագնի պաշտամունքն իրանացիներից է անդել հայերին. նրա անվան նույն լինելն իրանական հաղթության աստված Վերեթրազնայի անվան հետ՝ վաղուց ապացուցված է: Արդ՝ Վերեթրազնան, ինչպես բացասարում են, սկզբնապես ամպրոպային աստվածություն է եղել: Թեպետև պարսից Վերեթրազնայի համար հիշատակված չկա վիշապների դեմ կռիվը, որ հատուկ է բոլոր ամպրոպային աստվածներին, բայց և այնպես նա ճշտվ պահպանել է հին Վրարահան—Վրարա սպանող, վիշապասպան աստվածների բոլոր առասպելական ֆիզիկական գծերը: Վերեթրազնա անունը հնդկական ամպրոպային աստված Ինդրայի մակերև է՝ Վրարահան, թույլ ձևով ձայնավորներից առաջ՝ Վրարազհա, որ նշանակում է Վրարասպան, Վիշապասպան: Վերեթրազնա աստվածուհի անունն այն հին շրջանում են ընդունել հայերը, երբ դեռ կենդանի է եղել այդ անվան նշանակությունը, որ

¹ Վահագնի մասին ժամբամանություններ անհել Մ. Արեգյանի հայ ժողովրդական առասպելները, Վարդապետ, 1899, էջ 96—175. Այս ուսումնասիրության մեջ Վահագն բացատրված է իբրև ամպրոպային աստվածություն: Այստեղ և աղբյուրները հայ և այլ գրականությանն ենք:—Վիշապի և անձրևաբեր առասպել մասին՝ նաև Մ. Արեգյանի Վիշապները կոչված կաթնաներ իբրև Աստված—Գերգետա գիշերուհու արձաններ, Երևան, 1941: Այստեղ նաև աղբյուրներ:

հայերեն թարգմանել են Վիշապառազ, իսկ Վերթմազնա անունը, փոխված ձևով՝ Վտիազո, դարձել է աստծու հատուկ անունը։ Արդ՝ քանի որ մեր Վահագնի անունն ու պաշտամունքն իրանացիներից է անցել հայերին, շատ պարզ է, որ այդ անցումն եղած է իրանական Վերթմազնայի նախնական ամպրոպային հատկութիւններով հանդերձ, որոնք և երևում են մեր Վահագնի երգի մեջ։

Շատ տարածված հավատալիքներից մեկն է, թե ամպրոպի ժամանակ երկինքը երկնում է և, ամպը մերկով հղի, հողմահույճի հեծեծանքներով ու պտուտահողմի բախուռնի տակ, ծննդյան ցավերով բռնվում է մի կամ երկու լուսեղեն էակ ծնելու համար։ Այն ըմբռնումը, թե ամպրոպային աստվածը երկնքից ու երկրից է ծնվում, բոլորովին բնական է։ Որովհետև փոթորիկն երկնքից է առաջ դալիս, ուստի և Երկի՜մօ՜ իբրև ամպրոպային աստծու հայրն է ըմբռնվում, բայց փոթորիկն առաջանում է և հետո հողի զոհունակ՝ երկրի վրա, ուր երկինքը թվում է թե զրկախառնվում է երկրի հետ։ ուստի և Երկիր՜ ամպրոպային աստծու մայրն է։ Այսպես՝ Իրիւ-Վե-դայում մեծագոր ամպրոպային աստծու՝ Ինդրայի ծնունդն իբրև մի ամպրոպային ողբերկայթ է ըմբռնվում, որի ժամանակ դողում են երկինքն ու երկիրը, որոնք և Ինդրայի հայրն ու մայրն են։ Այսպես և, եթե մեր Վահագնի ծննդյան ժամանակ երկնում են երկին ու երկիր, Վահագնը զբա-նով ներկայանում է իբրև ամպրոպային աստված։

Երկնի ու երկրի որդի Վահագն՝ է միանգամայն և ծովածին, ծիրանի ծովի որդին։ Այդ ծիրանի ծավը ոչ թե երկրավոր, երկրի վրա տեղափոխված մի ծով է, այլ երկնային ծովը։ Երկինքը, ամպերով ծածկված երկինքը, ծովի նմանեցնելը մի սովորական բան է հին ու նոր բանաստեղծների մեջ, և երկինքը, որտեղից անձրևն է դալիս, ջրեղեն երևակայելը նատուկ է նախնական ազգերին։ Նույն ըմբռնումն ունի երկնքի մասին և մինչև վերջերս մեր ժողովուրդը, որ իր աղթքի մեջ կոչում էր «Երկինքը ծով ծիրանին»¹։ Այսպես և ժողովրդական հավատալիք է, որ որսառն է, երբ «ալեկոծն քամին» այդ երկնային ծովի է գալի։ Պարսկներին մեջ ևս ամպրոպային աստված Տիստերիայի կույվը ջրերը խափանող Ապոռոզ դևի դեմ՝ լինում է երկնային ծովի մոտ, որից և անձրևում է այդ աստվածը։ Իսկ Իրիւ-Վեդայի մեջ ամպրոպային աստված Ինդրան՝ անձրևելու համար՝ պատառում է երկնային ջրերն ազգելու ամպերի կամարը, որ կանգնեցնում է Ինդրայի հակառակադ Վիշապը, Վրտրան, որ միևնույն ամպն է կամ ամպի անձնավորումը։ Օրինակ՝ «Ջրուժթյամբ բարդավանած է Ինդրան, որ Մարուտներին բարեկամ ունի. Վրտրային անդամալույծ արավ և այդ ժամանակ դուրս թափեց ծովի ջուրը»։ Այս ամպրոպի անձնավորում աստվածը, որ կոչվածով զինված՝ հոսեցնում է երկնային ջրերը, համարվում է ծնունդ երկնային ջրերի։ Հնդկների մեջ նա կրում է Ապտիտ, ջրածին, ջրերի որդի անունը։ Այս մակդերն տյնքտն առանձնապես վերաբերում է Ինդրային, որ նա նույնիսկ ապտիտների ապտիտ է կոչվում։ Միայն Ինդրան չէ ջրերի որդին, այլև նրա երկվորյակ եղբայրը՝ Ագնին, որին նույն-

¹ Դ ա ռ ե գ ի ն Հ ա վ և Բ յ և Փ շ ա ն ճ ն ե ռ, Թիֆլիս, 1893, էջ 77.

պես վիշապի դեմ կռիվներ են վերադարձւում. նա կոչվում է, իբրև կայծակի կրակի աստված, Ապամ նապտա ջրերի գտնակ, Ապտիա—ջրածին, ջրերի որդի կոչվում է նույնպես վիշապի դեմ կռիւղ Տրիտա աստվածը, որ Խնդրայի հատկութուններն ունի, Այապես և մեր Վահագնը, իբրև վիշապի դեմ կռիւղ ամպրոպային աստված, ծնունդ է երկնային ջրերի ծովի:

Երկնքի և երկրի որդի ծովածին Վահագնը երգի մեջ համարվում է սերմած և մի բուսից—կալմբիկի հղիվիկից: Այապես և երկնքի ու երկրի և ջրերի որդի Աշնին, իբրև կայծակի կրակի աստվածութուն, ծնվում է միանգամայն և բուսաբերից, Ռիգ-Վեդայի մեջ, օրինակ, երգվում է կայծակ Աշնիի համար. «Բուսաբեր կանոնավոր երեսօրդին՝ Աշնիին իրենց մեջ են տանել իբրև սաղմ. այս Աշնիին ծնեցին մայրական ջրերը, նամանապես ծնում են նրան ծառերն ու խոտերը հովես հղանալով: Զանազան հին ազգերի առասպելների մեջ երկնային կրակը բուսաբեր հետ կապված է մասնավոր, այսինքն՝ ինչպես երկրի վրա կրակը փայտից է առաջանում, հավատում էին, թե երկնքում էլ կայծակը բուսաբերից է ծնվում, Ուստի և կայծակը պատկերացնում են համախ իբրև զանազան բուսեր, և կայծակի մարմնացումն են համարված շատ բուսեր, ինչպես, օրինակ, փշենին կամ փուշը, որ հայերի մեջ ևս, իբրև կրակի մարմնացում, գորավոր «կեղծ», այսինքն պաշտպանութան միջոց է համարվում շատ ոգիների դեմ և մեր հայրական կամ «կապի» աղբյուրին մեջ կրակին հավասար է դասվում:

Ամպրոպի երևույթն ըմբռնվում է իբրև մի բացօթյա, հրդեհ երկնային, կտրմիր բոցեղեն ծովի մեջ և ըստ հին հավատալիքների՝ զորեղ ամպրոպների ժամանակ՝ երկնային բուսաբեր ծառախառն-միջախառն բույսավածան միջոցին երկնային կրակի՝ «կայծակի տառաշնալը փառակերպվում էր մի աստվածութան ծննդոտն», և հետևապես կայծակի տնծնավորում աստծու, որ երկնքի ու երկրի և երկնային ծովի ու բուսերի ծնունդ լինելով՝ ծնվում էր ամպրոպի բոցերի միջից, Այապես և մեր Վահագն աստվածը:

Նա հուր հեր ունէր, բոց ունէր մօրուս,

Նա աշկուռն էին արեգակուռն:

Այս տոգերի մեջ նկարագրված է ծնվող աստծու կերպարանքը, որ նույնպես բալորովին համապատասխան է ուրիշ ազգերի ամպրոպային աստվածների, ինչպես՝ Խնդրայի, գերմանական Թուր կերպարանքին: Նույնպես Վահագնը մի երեխա չէ, այլ խորայն պատանյակ: Խնդրան ևս պատկերացվում է իբրև խորայն պատանի: Խորայն և արեգակնայն են նաև Խնդրայի ձիերը, որոնք նույնպես ամպրոպն են պատկերացնում, Խնքն Խնդրան ևս արեգակնայն է, երեսն արեգակի նման: Հագնվում է արեգակի գեղեցկութամբ, անձամբ հրեղեն է: Ուժ թեպես պատանյակ, բայց մորուք ունի, ինչպես և մեր, պատանյակ Վահագնը: Պատանյակ խորայն, հրեղեն, օսկեհեր, թե հուր հեր, զեղնամորուս, բոց մորուս, թե կտրմորմորուս (ինչպիսին է Թուր), արեգակնայն, թե հրայն (Թուր),—այդ աստված է հենց կայծակի երևույթից, նրա ալրոզ, հրեղեն ու բոցեղեն, կամ բոցի ու հրի օսկեգույն, կտրմիր ու փայլուն հատկութուններից:

Այսպէս ուրեմն, տեսնում ենք, որ Վահագնի անունը, նրա երգի մէջ նրա ծննդյան և կերպարանքի բոլոր հատկութիւններն ամբողջապէս մի ամպրոպային տառու՝ Խնդրայինն են, Բայց այդ դեռ ամենը չէ: Խնդրան ծնվելուն պես բոցերի միջից վազում է ամպրոպային վիշապի՝ Ահիի (օձի) կամ Վրարայի (ամպի անձնավորումի, որ հաճախ ներկայանում է իբրև զիշապ) դեմ կռվելու, և կռվելով հաղթում ու սպանում է նրան: Նույնն անում է և մեր Վահագնը. և ի բոցոյն վազէր իւրաքանչիւր արտաձայնիկէ, Խորենացին երգի շարունակութեան միայն համառոտ բովանդակութիւնն է մէջ բերել, ասելով, «Յետ որոյ (ծննդյան նկարագիրն անելուց հետո) և քնդ վիշապաց տէին յերգին կռուիլ նմա և յաղթէր»:

Բնական երևույթի մանձնավորում Վահագնի կռիվը ոչ թե երկրի վրա օձերի դեմ է եղել, այլ ըմբռնվել է իբրև կռիվ վիշապ դիմոնի դեմ, իբրև ամպրոպային կռիվէ, ինչպես Խնդրայի կռիվն է.— մի հայացք, որ մինչև վերջերս էլ կենդանի է եղել մեր ժողովրդի մէջ: Վիշապը մեր հին և մեր ժամանակի ժողովրդական հավատալիքներով՝ փոթորկի, պտուղաբերողի, թափառի և փոթորկայից ամպի անձնավորումն է, հենց ինքը փոթորկիւր, «թռնարցեալ ամպով», կայծակներով ու որոտմունքով, — մի չար ոգի, որի նախաժողովն է օձը, որ և սովորաբար չափազանց մեծ օձի կերպարանքով է ներկայանում, բայց իբրև ամպային էակ հաճախ փոխում է իր կերպարանքը և զանազան կերպարանքներ է ընդունում: Եղնիկ Կոզրացու գրելով, օրինակ, նա երևում է մերթ իբրև օձ, մերթ իբրև ժառը, երբեմն ջրի կամ աւղա, կամ իբրև որսին հետապնդող ձիավոր, Փոթորիկը, ասում է Անանիա Շիրակացին (7-րդ դար) «ի բաջադանս և յասապելս վիշապ հանիլ ասեն»: Իսկ Վանական վարդապետը (18-րդ դար) փոթորկի երևույթի համար պարզապէս գրում է. «Ասեն, թէ զվիշապն ի վեր յօղմ քաղչեն: Դա մի հին հավատալիք է եղել, ըստ որի վիշապը, փոթորկի անձնավորումը, փոթորկի ժամանակ վեր են քաշել: Նույնը դանում ենք և Եղնիկի մոտ, որ գրում է. «Եւ եթէ քառնայցի ի վեր տալարսի վիշապն, ոչ եթէ հզամբ ինչ անուշանելով»:

Ինչպես ասվեց, Խնդրայի մականունն է Վերեթրադնա, որ պարսկական Վերեթրադնա աստուծուց անցել է հայերին, և հնչափոխութեամբ դարձել հասուկ անուն Վահագն: Հնուց, հարկավ, դեռ կենդանի է եղել այդ մականվան նշանակութիւնը, բայց հայերեն թարգմանել են ոչ թե Վիշապասպան, այլ «վիշապաժապ», որ նշանակում է՝ վիշապ հանող, վիշապ վեր քաղող, վիշապ վեր քաղողը, Վահագն աստվածը: Պարսից Վերեթրադնան իբրև ամպրոպային աստված ներկայանում է բազմազան կերպարանքներով — իբրև գեղեցիկ, փայլուն պատանյակ, իբրև ցուլ և ալյն: Նույնպես Տիշտրիան, իրանական ամպրոպային աստվածը, երևում է գեղեցիկ պատանյակի, արջառի — ասպիտակ ոսկեղջյուր եզան և ձիա կերպարանքով: Խնդրան ևս հաճախ երե-

¹ Lehrbuch der Religionsgeschichte von P. D. Chantepie de la Saussaye, Tübingen, 1905, II, էջ 186.

վում է իբրև ցույլ, մուլի կոիվը վիշապի հետ կա և գերմանական առասպելաբանության մեջ, Նույնը եղել է և հայկական առասպելներով, մզնիկը, ինչպես տեսանք, գրում է. «Եթե այնպիսի վիշապը վեր բարձրացվի՝ այդ կլինի ոչ թե կարծեցյալ եզմեղով»... Կնշանակի՝ վիշապ վերացնողը, «Վիշապաքաղը» մտածվել է մեզանում ևս իբրև եզ, ցուլ:

Ինչի համար է այդ ամպրապայիմ կելիվը, կամ «վիշապ հանելը» — Վիշապը, պտուտահողմի կամ ամպրապի չար անձնավորումը, իր ընկեր չար ոգիների հետ, իբրև հողմ «թանձրացնել» ամպով՝ բարձրանում է. արեգակի լույսի հրեւը կտրում, կամ փոթորկի մեջ հարձակվում է արեգակի վրա, որ իբրև գեղեցիկ աղջիկ է անձնավորվում, ամպրապային ամենազոր աստուծու զույրը կամ կինը. ուղում է կուլ տալ կամ ասեանգել նրան, և հափշտակում է նրան: Կամ, ուրիշ առասպելներով, այդ չար ոգին երկնային անձրևաբեր ամպերի ջրերի կամ երկնային ծովի առաջը կտրում է, նստում է երկնային ջրերի վրա և փակած պահում ջրերը, վայր հոսելն արգելում է՝ նրանց առաջ ցամաք ամպերի լեռներ ու բուրգեր կանգնեցնելով: Բայց այդ միջոցին ահա ծնվում է փոթորկի կամ ամպրապի աստվածը, որ միևնույն օդերևութի բալի անձնավորումն է, մի գեղեցիկ պտուտակ հրեղեն մազերով, ինչպես հնդկների մեջ Ինդրան, երեսին և Աղնին: Նա կաշտակներով ու որսամուկնով, Մարտաների (հողմերի անձնավորում աստվածներ) հետ միասին վրա է վազում, կռվում է վիշապի և նրա չար ոգիների դեմ, արձակում է իր հրեղեն նետերը, խորտակում նրա բուրգերը կամ լեռները, սպանում է վիշապին, կամ փախցնում, կամ բռնում շղթայում, կամ վեր հանում բարձրացնում է նրան ու ցած գցում, փչում է այլն, և ազատում է գերված արեգակն ու լուսավորում երկիրը և վայր է հասցնում ծովի ջրերը: «Այս հզոր Ինդրան դուրս քեց ջրերի այեծուք հուսնքը, վիշապասպան մոտ վարեց ծովը, տեսանելի դարձրեց արեգակը, գտավ լոբնուր, մի գիշերվա մեջ կատարեց նա օրերի ցորձը: Ինդրայի հետուկ ընական արարքն այն է, որ նա հաղթահարում է երեւոյի դժոխն», ինչպիսի հանդիսանում է Վրտան. նա «անձրևի աստված» է և տալիս է անձրև ու արեգակ: Մ. Խորենացին այդ մասին սկնարկ չի անում, բայց քանի որ Ինդրայի համապատասխան հայկական աստվածն է Վահագն, — ինչպես Ինդրան՝ երկնքի ու երկրի որդի, ծովածին, հրամաղ, բոցամորուս, արեգակնայա, խաբարաշ մի պտուտակ, որ կռվում է վիշապների դեմ, քանի որ մեր այդ աստուծու անունն անգամ նույնն է, ինչ որ Ինդրայի մակդիրը՝ «Վերեթրագնա», — պետք է կարծել, որ նույնպես անձրև բերելու համար է Վահագնի կոիվը վիշապների դեմ:

Այդ հավաստվում է մեր ժողովրդական հավատալիքներով, նույն առասպելի գերազորելներով Վիշապը, — կարծում են, — երբ շատ մեծանում է, յուսնգավոր է դառնում. նա փոթորկի ժամանակ չար ոգիների հետ բարձրանում է վեր՝ կամ երկինքն ու ամպերը կտպերը, որ անձրև չգա, կամ կուլ տալու արեգակը, որ իբրև աշխարհ լուսավորող գեղեցիկ աղջիկ է պատկերանում: Բայց Գաբրիել հրեշտակը, ուրիշ հրեշտակների հետ, կռվում են վիշապի դեմ, սպանում նրան, կամ վեր հանելով՝ բարձրից ցած են գցում նրան ու փչում, և այդ ժամանակ արեգակը ցույց է տալիս իր

հրեանք, կամ անձրև է գալիս, կամ թե, ինչպես ասում են, կազի միջոցին այդ վիշապը ջուր է փչում երկրի վրա: Կալից աստիճանում է փոթորկի շառաւյռներ, որոտը: Փայտակը Գարբիեի թրի փայլքն է, կայծակը՝ նրա հրեղեն նետը:

Այս միենույն չար վիշապի պատկերն է, երկրի վրա անդափակված, որ մեր «Սոսնա Մոսկովի» մեջ հանգես է գալիս իրեն լեռներում ապրող մի ջրաղբել հրեշ: Նա նստում է ազբյուրի վրա, խափանում է ջաղաքի ջուրը և ջուրը բաց թողնելու համար պահանջում է աղջիկների զոհաբերություն, մինչև որ Մովսիսն Սանասարը, կայծակի թուր ունեցող այդ կայծակի հետքեր, ապանում է նրան և ջուրն աղատում:

Ինչն է կազմում այս հետաքրքիր ֆիզիկական առասպելի հիմքը հասարակական կյանքից:—Երկրի ուժեղները, ամենահին դարերից, ջրագուրկ անդերում բանություն տրեւել են ջրերին և առանց զոհաբերության չեն թողել, որ ուրիշներն ոգտվեն զրանցից: Ահա այն նախադրյալը, որի անդրապատկերումն է առասպելական աշխարհի երկնային աղբյուրի կամ ծովի ջուրն արգելող օղերնությունների վիշապը: Մրաշտի ժամանակ երևակայել են, թե երկնքում չար վիշապը կտրում է երկնային ջրերի, անձրևի առաջը, մինչև որ մարդկանց բարեկամ ամպրոպային բարի աստվածը հաղթում է այդ չար դեմոնին և մարդկանց ուղարկում է անձրև:

Վահագնի երգը, որ բովանդակում է այս հին առասպելական ըմբռնումն ամպրոպի աստվածության մասին, հայոց հնագույն ժողովրդական երգերից մեկն է:

Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ա Ն Վ Ե Պ

Վ Ի Պ Ա Ս Ա Ն Ի

1. Ավանդակսն վեպ, Վիպասառք, Երգ վիպասառք, Երգ առասպել-
յաց:—Առասպելից տարբեր ծագում ունի ավանդական վեպը (էպոսը): Մինչ առասպելներն ունեն ավելի դիցաբանական բնավորություն, շատ քիչ պատմական ազդեցություն են կրած և հաճախ փոխառություն են ուրիշ-
ներից:—Վեպն, ընդհանրապես, իր ծագումով, ընդհանուր առմամբ, բնիկ աղբյուրն ինքնուրույն ստեղծագործություն է¹, Վեպը պատմական բանաստեղծություն է: Նրա նշանը պատմությունն է, այս բառն ընդարձակ մըա-
քով առած, լինի իսկական, թե կեղծ պատմություն: Եվ մեր Վեպը բուռն հնաձե հենց այդ ընդարձակ նշանակությունն էլ ունեցել է²:

¹ Էդուար Արենդի հին բանավորների, արեաւելաւորների և Միջերկրական ծովի վաղ ֆեոլդալիզմի ստեղծված մի երեսույթ է (Մ. Գաբկի):

² Մ. Խորենացին, որ մեր առաջին հին վեպի միակ աղբյուրն է, այդ բառը գործածել է միայն զբաղող պատմական հիշատակաբանների համար: Նրա զբոսի մեջ Վեպն նշանակում է պատմություն, Վեպագրքն՝ պատմագրք, պատմիչ, Վեպագրքն՝ պատմագիր Վեպագրքն բառն էլ նշանակում է պատմություն ասոք Այժմ Վեպն կամ բովանդակական Վեպն նշանակում է էպոս, բայց Վեպիչ՝ պատմիչ: 10-րդ դարից սկսած Վեպն բուռն դարձանքով է նաև ստանում բառի նշանակությունը: Այդ զբաղող բառն ևս, որ

Մ. Խորենացին մեր առաջին հին վեպն անվանում է «Վիպասանք»,
«Երգը վիպասանաց»։ Սակայն նա գործածում է նաև «Առասպել» կամ «Երգը
առասպելաց»¹։ Առասպել չի կոչված միայն Մեծն Տիգրանի պատմությունը։
Թե մեր հին վեպը հենց այդպես «Վիպասանք» է, «Երգը վիպասանաց» և
«Առասպել» էլ կոչվել է, այդ երևում է նաև Փավստոս Բուզանդի «Հայոց
Պատմությունից», որի մեջ (Երրորդ գլուխ Գլ. ԺԴ.) նա հիշում է, որ հայ
նախարարներն ու շինականները սիրում էին Հայոց հեթանոսական հին
երգերը, «զհիւրեանց երգո տառապիլաց զվիպասանութեամն»։ Բուզանդի այս
կատրից իմացվում է, որ Հայոց հին հեթանոսական երգերը կոչվում էին
«Երգը առասպելաց», «Երգը վիպասանութեան»։

2. Առասպելախառն վեպը և երապեցումները։—Որ մեր առաջին ավան-
դական վեպն այսպես կրկին կոչումներ ունի, դրա պատճառն այն է, որ
առասպելները նրա մեջ մեծ տեղ են ունեցել։ Նվ իսկապես, այդ վեպի հի-
մունքն է միայն պատմական։ Այլապես էլ չէր կտրուկ լինել բերանացի
ավանդված պատմության համար այն հին դարերում, երբ մանուկ միտքը
տարբերություն չէր դնում իրականի ու երևակայականի միջև, քրոջ և այդ
վեպի մեջ հարակցվել են առասպելական գրույցներ, այլև իսկական պատ-
մական եղևություններն էլ մասամբ օտացել են առասպելական գույն։ Նվ
այսպիսով առաջ է եկել առասպելախառն վեպ։ Բայց քանի որ վիպասան-
ները և նրանց ունենդիրներն իսկական պատմություն էին համարում նաև
առասպելները, ապա նրանց համար Վիպասանություն իր ամբողջությամբ
մի պատմվածք է եղել անցյալում կատարված եղևությունների։ Դա նրանց
իշխողների պատմական հիշատակարանն է եղել։ Առասպելականն ու հրա-
շալին նույնիսկ ցանկալի էր Փետրալների համար, որովհետև դրանով ամ-
րանում էր նրանց գիրքը²։ Բայց և այնպես, ավանդական վեպի մեջ էա-
կանն ու կարևորն առասպելը չէ, այլ պատմությունը։ Մի անգամ որ մեր
«Վիպասանքն» առասպելախառն պատմվածք է, դրա ուսումնասիրության
ժամանակ օգտեն դեպքում, երբ հնարավոր է, պետք է վեպի ցուցմունք-
ները դուրսդրել պատմության ֆակտների հետ (Մ. Գորկի) և պատմականն
անջատել առասպելականից։

այժմ նշանակում է ընդհանրապես բերանացի պատմված պոետիկություն, Խորենացու զրքի
մեջ համարել է «վեպ» բառին և նշանակում է թե՛ բերանացի է թե՛ գրավոր պատմվածք,
պատմություն բնականորակն, համախ գրավոր պատմություն։ Խորենացին այս բառը բեր-
անացի գրույցին իմաստով գործածելիս՝ ամբողջորդ բանդի, հին, ժողովրդի, նախնա-
կան բառերով, կամ շյուանպոթենի հաստի, արգի ի հոբե սանելով յիշատակը, «գրույցն
պատասխան զբերանություններից ամբողջությամբ էլ ավանդական գրույցը գրավոր գրույ-
ցից»։ Տե՛ս՝ Մ. Աբեղյան, Հայ մագդոկական առասպելները, էջ 20—22։

¹ Զբոմ է առասպելաբանեն։—Զայս տեղի առասպելաբանելով վիպասանքն յերգերն
յերևանա տանն, մեռապելիալ երգենն, «Հառ առասպելին», «Հայս կամելով երգել յառա-
պելսն», «Նայս երգիչն յառապելին տանն»։ Զբոմ է յառապելսն տանն։

² Երբ վաղ էր դար հաճախ սերտ կապված է առասպելի հետ, այդ կապով էր նաև
արգեստական կերպով՝ առավելագույն չափով բարձրացնելու համար վեպի հերոսներին—
թագավորներին ու ազնվականներին (Մ. Գորկի)։

[illegible]

1 Այս հայացքը վերաանանկերից ունի և էին դառնադրենքին, որանց զբաղը շատ բանում էր արբերված ավանդական վերքից, որովհետև հրաշք է և համար ենք դառնադրենքին ընդհանրապես, առաջին ու դառնադրենքին Այսպես, որհիմա, Պարենական Հայոց Գաղմաթյան մեջ գտնում ենք ցերեկոցաթյան ու ժամանակակցաթյան այդ էին վերադառնալուց, իսկ Ա. զգրքի Դ. գլխի մեջ հայտնում է, թե Նիհադը Բևիլ որդին չէ, բայց համար այդպես ստացան, որ շատ Նիհադին չհասնանք լինելուց դառնան են համարվել այսպես կարգին պահելին մոտաուրս: Եվ էնքան իսկ Պարենականի ուրիշ տեղ (Ա. 37) դրամ է ՎԹի-նում գտնել այսպես ըստ զախվեան է՝ Հայի, Աբամ, Տիգրան: Զանգի ըստ էմ զախվաց ապագաքանին. իսկ միջոցին՝ որդին հեղ սանց թաղերի կոչվո:

սրտնք իրենք չեն, այլ Գարոյիկոյան ցեղի ուրիշ թագաւորներնր, Լույսիօղ Մերափինոյան հարստութեան թագաւորների զորքերն առնել են Մենն Գարոյոսի զեղէն: Ասել չի ուզել, որ ամենից շուտ միանում են համահուն պատմական անձերի մասին եղած տմեկութեան: Ինքը: Մի քանի Արտաշէսների երգերն ու զրույցները մեր վեպի մէջ կազմել են մեր վիպական Արտաշէսը¹:

3. Վիպատեմքի պատմական դարաշրջումն ու ծագումը և ունեցողիք հասարակութեանը. ազնվական և շինական:—Առաջին ավանդական վեպի համար իրրն Նյութ ծառայել են Հայաստանի պատմական դեպքերը մեր թվականութունից առաջ 2-րդ դարի սկզբներէից ի վեր: Այդ ժամանակնեւրում սկսվում է մի նոր պատմական շրջան, տոհմային հասարակութունից անցում է տեղի ունենում դեպի ֆեոդալականը: Ավելի ևս զորեղ կերպով և արտաք առան է դալիս տոհմերի միացում, և հայերն ավելի ևս զիտակցում են իրենց իրրն մի ուրույն ազգութուն, իրրն մի համակեցու ցեղային ամբողջութուն, և ուժ են զգում հանդես գալու իրրն անկախ տերութուն: Վիպական շրջանն սկսվում է հենց այս սոցիալական ու քաղաքական փոփոխութամբ:

Անտիոքոս Մեծի պարտութունը հռոմայեցիներից Մաքսիսիայի մոտ (190 թվին մեր թ. ա.) անմիջապէս ազդանիշ է լինում, որ հայ իշխանները, որոնք մի քանի անգամ ապստամբել էին Սելևկյան տիրապետութեան դեմ, նորից ձգտեն անկախութուն ձեռք բերելու: Կատարվում է քաղաքական մեծ հեղաշրջում: Հայերը երկար դարեր պարսիկներին ու մակեդոնացիներին ենթարկվելուց հետո՝ անկախանում են: Բնիկ իշխանների ձեռով Հայաստանում հիմնվում են երկու թագավորութուններ, որոնցից Արտաշէս Ա-ի հիմնածը, Արտաշատինը, կարողանում է շուտով ընդարձակել իր երկրի սահմանները և իր մեջ ընդունել ամբողջ Մեծ Հայաստանը:

Դարեր շարունակ խաղաղ կյանք վարելուց հետո՝ հայ ժողովուրդը տնտեսապէս ու քաղաքականապէս ուժեղացած, այժմ ապրում է մի իսկական վիպական-հերոսական շրջան: Արտաշիսյան հարստութեան սկզբից և Արտաշատ քաղաքի հիմնարկութունից (180 թ. մ. թ. ա.) մինչև Արշակունիների իշխանութեան հաստատումը Հայաստանում (66 թ. մ. թ.) և հետո, Հայաստանում կատարվում են մեծամեծ զորքեր, Հիմնվում են թագավորութեաններ ու քաղաքներ, փոխվում են հարստութեաններ, իրար հետ բախվում են մեծ տերութեաններ, և Հայաստանը դառնում է երկարատեւ պատերազմների վայր: Այս պատմական մեծ իրողութեաններն ահա խորին ազդեցութուն են թողնում ժամանակակիցների վրա և առաջ են բերում բազմաթիվ պատմական երգեր, զրույցներ և ավանդութեաններ: Պատմական նշանավոր անձերն ու դեպքերը—Արտաշէս Ա-ն իր հիմնած թագավորութեամբ, Մեծն Տիգրանն իր անձով ու բախտով, սրտ ուղի Արտաշատը, թուն Արտաշէսը, այս երեքի հարաբերութեանը Մարերի հետ, և ապա Արշակունի Տրդատ Ա-ն իր նախորդներով ու հաջորդներով—Նյութ են դառնում պատմական երգերի ու զրույցների և երգվում երգիչներից:

Այդ նախնական բանաստեղծութեանը սկզբում, հարկավ, չի հղել ամ-

¹ Մ. Ա. և զ. ա. Ն. Հայ ժողովրդական առողջելիքը, էջ 211—216.

բողջական վիպ, մի ընդարձակ պատմութեալ։ Այլ դա եղել է տարրական ձևով, պարզ ու միամիտ մի բանաստեղծութիւն, փոքր ճերթվածներ ու զրույցներ հերոսներէ ու նրանց քաջագործութիւններէ մասին։ զատմական երգեր, որոնց մեջ տօմած են եղել ազնվական տոհմերի ծագումը, ճշգրտութիւն հիմնարկութիւնը, պատմած են եղել երկրի համար կարևորութիւն ունեցող գեպքեր՝ պատերազմներ, իշխող հարստութիւններէ սկիզբը և նմանները։ Այս ամէնը եղել է ավանդական վիպի տարերքը տղնվական ընտելութեամբ, որովհետև դա ազնվական դասի արտադրութիւնն է եղել և մեծ մասամբ նրա պատկերով ստեղծված, և նրա կյանքն ու իդեալներն է պատկերացրել իր մեջ։

Ժամանակի ընթացքում այս սկզբնապէս անշուտ պատմական երգերն ու ավանդութիւնները, հարելով իրար և նախորդ գրքերից ժառանգած երգերի և ոտուպելներէ հետ, առաջ են բերել մի մեծ վիպական ամբողջութիւն մի ցանի ճյուղերով, կազմել է Վիպասանք կամ Վիպասանութիւն՝, կամ Վերջը տասնպէսցա, Վերջը վիպասանաց (այլև Վերջը Թուխլանաց), որ շատ վաղ մշակել են արվեստավոր երգիչները—վիպասանները։ Դա մեր առաջին ավանդական վիպն է կամ առաջին հին վիպը, որ ծագել ու զարգացել է մեր վաղ ֆեոդալիզմի օոցիւղական պայմաններում, դրանց հետեւանքով և դրանց համապատասխան, իբրև արտահայտութիւն իշխող դասի վերին խովի շահերի։ Բայց չպիտի կարծել, թէ մեր այդ վիպը, ինչպես և մյուսները, սահմանված են եղել միայն ազնվականութեան համար։ Իշխողները միշտ էլ աշխատել են իրենց իդեալները պատկաստել ոչ միայն ազնվականներին, այլև ուսմիկներին մեջ։ Ինչպես Ծ-րդ դարի հեղինակ Փալատոս Բուզանդից իմաստով ենք, մեր շինականութիւնն էլ սիրով լսելիս է եղել Հայոց Վիպասանութիւնը։

Տես՝ Առաջին հովնված՝ Վիպասանքի պատմական հիմքը։

4. Արտաշատյամ և Արմավիրյամ վիպական ցիկլը և Գաղթամ երգիչները։— Թէ Հայաստանի հր կողմերում է ծագել, զարգացել և տարածված եղել հայոց առաջին հին վիպը, այդ մասին վկայված անդեկութիւններ չունենք։ Բայց այլ ազգերի վիպերի ծագման և զարգացման մեջ եղած մեծ նմանութիւնը թույլատրում է մեզ որոշել այն, որի քաղաքութեան համար չունենք բավարար փաստեր։ Պատմական երգն ու զրույցը ծագում են ընդհանրապես այն տեղերում, կամ այն տեղերի մոտերը, ուր կոտորվել են վիպի նյութը դարձող պատմական նշանավոր եղելութիւնները, և ավելի ևս այն տեղերում, ուր իրապես աղբւլ ու գործել են վիպի պատմական հերոսները, ուր և հետաքրքրվել են նրանց բախտով։ Արդ՝ Վիպասանքի մեջ մտնող ամենահին պատմական ավանդութիւնները վերաբերում են Արմավիրին ու Երվանդաշատին և Արաշատին։ Հետևաբար պիտք է ընդունել, որ այս քաղաքներում կամ դրանց կողմերում են սկիզբն առել վիպական երգերն ու զրույցները։ Առանձնապես Արտաշատ քաղաքի շուրջը պատմվել ու երգվել են ավանդութիւններ, որոնք կապված են եղել Արտաշատի իշխողների, Արտաշես Ա-ի, Մեծն Տիգրանի և իր զարմերի, ինչպես և ուրիշ-

ների անվան հետ Դրանք կազմել են երգ ու զրույցների Արտաշատյան ցիկլը¹։

Վեպի մեջ հիշված Երվանդ, Երվանդատոս ու Երվանդակերտ, Երվանդավան և Արմավիր անուններն ու նրանց մասին պատմածներն ավելի վաղ ժամանակից են գալիս, քան Արտաշատն ու Արտաշեսյան հարստութունը Մեր թ. ա. 4-րդ դարում Հայաստանի մի զանի սատրապները կրել են Երվանդ անունը, և նույնիսկ վերջին կոռավորելը Սելևկյան իշխանության օրով, Արտաշեսի ու Ջորենի թագավորելուց առաջ, կոչվել է Որոնտոս, որ է Երվանդ։ Ստրաբոնը գրում է. «Արմենիային տիրել էին նախ պարսիկները և մակեդոնացիները, հետո՝ Ասորիքի և Մեդիայի իշխողները, և վերջո՝ կառավարիչ էր այստեղ Որոնտոսը, որը յոթ պարսիկներից էր, իսկ ապա բաժանեցին երկու մասի հռոմեացիների դեմ պատերազմող Անտիոքոս Մեծի զորավորները» Արտաշեսը և Ջորենը², Վեպն, ուրեմն, պահել է անունն Արտաշես Ա-ի նախորդի, Երվանդի, որ բնականորեն եղել է, ինչպես է և Վիպասանքի մեջ, Արտաշեսի հակառակորդը, երբ նա ապստամբել է Սելևկյան տիրապետութունից։ Վեպի մեջ այս Երվանդի անվան հետ, սակայն, կապված են հիշողություններ նաև նախորդ Երվանդների և ուրիշների արարքներից Հայաստանում նախքան 2-րդ դարը մեր թ. ա., այլև հետո կատարված դեպքերից։

Ինչպես կտեսնենք, մեր առջին վիպասանության մեջ կարևոր տեղ են բռնում մարերը, ըստ առասպելին՝ վիշապազները, որոնք բնակվել են Արտաշատի ժողովրդի սկսած, Մասիսից դեպի արևելք մինչև Գողթն։ Նրանց դավառում հենց Արտաշես Ա. թագավորը շինել է իր մայրաքաղաքը, իբրև Հայաստանի արևելյան և արևմտյան յասերը միացնող միակ հարմար տեղը։ Բնականաբար առաջ է եկել ընդդեմ մարերի մի մաքառում, որ և մտել է վեպի մեջ։ Այս էլ ցույց է առիս, որ վեպը պիտի ծագեր ու զարգանար և ապրեր հենց այն կողմերում, կամ այն կողմերի մոտիկ տեղերում, ուր բնակվել են մարերը կամ մարացիները։ Սրա համար ունենք մի պատմական վկայութուն։ Վեպը, ըստ Խորենացու, պահված է եղել Մարքի սահմանակից Գողթն գավառում. «Զոր պահեցին աթորժելով, որպէս լսեմ, մարդիկ կողմանն գինեւէտ գաւառին Գողթան» (Ա. 30). «Եւ վիպասանացն, որ պատմին ի Գողթան» (Բ. 49), «Երգելցն Գողթան» (Բ. 61), Որ Գողթան գավառում երկար ժամանակ հարստակել է հին Վիպասանքն իբրև երգ ու պոետ-ըլիածը, այդ բացատրվում է նրանով, որ այդ կողմերում, ինչպես հայտնի է, դեռ երկար Մնում էր հեթանոսութունը, այսինքն նախաքրիստոնեական կրոնը։ Կորյունը Մարտոցի համար գրում է, թե՛ «Դիմալ իյանէր յանկարգ և յանդարման տեղիս Գողթան», և ապա թե՛ «Գերեալ դամենիսեան ի հայրենեացն աւանդելոց և ի սատանայական զիւսպաշտ սպասաւորութենէն՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր . . . Գիւղացն և Կաթողական լինելով՝ անկանէին ի կողմնս Մարացւոյ Բնական է, որ եկեղեցու տեսակետով այդ «անկարգ և անդարման» տեղերի մարդիկը պահելին իրենց հայրենական ավանդությունները, «Գերեալ» մտնէին . . . ի հնութիւն հեթանոս-

¹ Թարգմ. սկզբ. Հով. Մանանդյանի։

սութեանց սովորութեանց, սիրելին պիւրեանց Երզն աստապելաց զՎիպա-
ստնութեանն, ինչպես գրում է Բուզանգը, Եթե Գողթնի բնակիչները նույն-
իսկ մարական ծագում ունեցած էլ չլինէին, նրանք կարող էին առնել ու
յուրացնել և երկար պահել իրենց հարեան մարերի աստապելներն ու վիպերը,
Այսպես և մեր նոր վեպը՝ «Սասնա Մոծոր» մեր օրերում պատմվել է ավելի
Մոկաց և ուրիշ կողմերում, ինչպես և հին Հունաստանում Աքայացից վեպը
պահել ու զարգացրել են Հոնիացիները, Թե Գողթնի սահմաններից դուրս
ուրիշ-որ կողմերում է տարածված ու պահված եղել Վիպասանքը, մենք այդ
չգիտենք:

Մարերի մասին եղած հին ավանգությունները, ինչպես և Արմավի-
րյան ցիկլի երգ ու զրույցները, որոնք սկզբնապես ասանձին-ասանձին խմ-
բեր են կազմած եղել, երգիչները, վիպասանները միացրել են Արտաշա-
տյան ցիկլի հետ և կազմել մի վեպ: Այդ կապված է եղել քաղաքական իշ-
խանության միացման հետ: Այդ վաղ դարերում արդեն Արտաշատի տերու-
թյունը ձգտել և հաջողել է առաջ բերել Հայաստանի զանազան մասերի
միացում, և Արտաշատը դարձել է ընդհանուր կենտրոն: Դրա համապատաս-
խուն՝ Արտաշատի յուրջը խմբված պատմական երգերն ու զրույցներն իրենց
մեջ ընդունելով և ուրիշ ավանգություններ, ձգտել են համազգայինն դառ-
նալու: Այսպիսով առաջ է եկել մի ընդհանուր վիպասանություն Հայաս-
տանի իշխողների մասին: Հայոց հին Վիպասանքն, ուրեմն, կազմվել ու
զարգացել է Հայաստանի կենտրոնական իշխանության հետեանքով: Երկրի
իշխանության միացումն առաջ է բերել և վիպական նյութերի միացում:
Այդ անհրաժեշտ է եղել Արտաշատի Թագավորների համար, նրանց պետք էր
իրենց իսկական կամ կարծեցյալ նախնիքների մասին մի վեպ, մի պատ-
մություն, որի մեջ փառավորվեին նրանք, որ և լինել միանգամայն իրենց
զասակարգային շահերի և զապափարների արտահայտությունը: Սկզբնա-
ստանները կատարող են դարձել նրանց վիպական պահանջին, հին երգերից
ու զրույցներից և աստապելներից կազմելով մի վիպական պատմություն
մի քանի ճյուղերով:

5. Վիպասան և վեպն ավանդելու եղանակները:—Վիպական բանաս-
տեղծությունը մշակվել է պրոֆեսիոնալ արվեստավորների ձեռով, որոնք
կոչվել են՝ երգիչ, վիպասան և գուստն: Նրանք երգել են նվագելով մի գոր-
ծիքի վրա, որ կոչվում է գեփանդիոն: Որոշ թվով ձեռագիրների մեջ այս
գործիքի անունն աղճատվելով՝ դարձել է ճամբրիոն, և այս ձևով դա հայտնի
է դարձել 19-րդ դարում մեր բանասիրության և բանաստեղծության մեջ:
Մ. Խորենացին այս գործիքը հիշատակում է Տիգրանի վեպի և Վուհաշի
աստապելի մասին գրելիս (Ա. 24, 31), այլև Տարբան-Տարաֆի գրույցը
պատանուց հետո՝ նա ավելացնում է. «Բայց առաել յաճախագոյն հինքն
Արամազնայց ի նուազս փանդոսն և յերզս ցցոց և պորուց զայսոսիկ
ասին յիշատակաւք» (Ա. 6):

Որ Խորենացին հաճախ բերգիչ, բերգիչ, «երգ» բառերն է գործածում
(Ա. 24, 30, 31, Բ. 48, 49, 50, 54, 61), դրանից եզրակացրել են, թե իբր
եղել է ամբողջություն կազմող մի մեծ «Երգ»։ Այս տեսակետին հետևելով՝
նույնիսկ «ասել» բառին տվել են «երգիչ» նշանակությունը և «վիպասան»

բաւր ըսցատրել իբրև Վեպ երգողն: Բայց այդ սխալ է, Վիպասանն նշանակում է վեպ ասող, պատմող: Մյուս կողմից պետք է գիտել, որ Վիպասանքն բաւր ոչ միայն զպատմողին համար է զորոշածվում, ինչպես՝ Վիպասանքն շերտելն իւրեանց ասնն (Բ. 50), այլև զպատմվածքին համար: Արտաշիսի վերջնոյ դործք՝ բաղում ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն, որ պատմին ի Գողթան (Բ. 49): Վիպասանքն բաւր բառի թէ զպատմողին և թէ զպատմվածքին այսպիսի երկու նշանակութիւն ունենալը տարբրեալ բան չէ հայոց լեզվի մէջ, որինով՝ հենց նույն կազմութիւնն ունեցող բոլոր պատմանքն բաւր նշանակում է թէ զգովքն և թէ զպատմութիւնն իբրև համարող զգովասանքն բառին, այսպես և Վիպասանութիւնն համարող է Վիպասանքն բառին՝ երկրորդ իմաստով առած: Ենթեք Վիպասանացն կապակցութեան մէջ Վիպասանքն բառն առաջին (պատմողի) թէ երկրորդ (պատմվածքի) իմաստով առնված լինի, նշանակութիւնը նույն է մնում. բայց հակառակն է, որ երկրորդ, այսինքն պատմվածքի իմաստով լինի, քանի որ այս երկրորդ իմաստով առնված ժամանակն է համարող Վիպասանութիւնն բառին. իսկ երրորդ Վիպասանացն, ինչպես տեսանք, Փալստոսի մէջ կոչվում են երգչք Վիպասանութեան:

Այսպես, հայոց Վիպասանքը (կամ Վիպասանութիւնը), ինչպես բառի կազմութիւնը ցոյց է տալիս, և ինչպես Բ. գրքի 49 գլխի մէջ պարզապէս վկայում է ձորենացին, պատմվել է: Բայց քանի որ համախ հիշվում են և երգչք Վիպասանացն (Վիպասանութիւն) և թէ Վիպասանները (վեպ տաղները) երգում են, ինչպես և Վիպասանների համար երգիչքն բառն է զորոշածվում, — ապա պարզ է և այն, որ Վիպասանքը (Վիպասանութիւնը) ոչ միայն պատմվել է, այլև մասամբ երգվել: Այսպես և մեր արդի ժողովրդական վեպը մանրամասնորեն պատմվում է, բայց և տեղ-տեղ երգվում է: Վեպը պատմելու և մեջն մեջ երգելու նույն ձևը եղել է ուրիշ ազգերի մէջ ևս:

6. Թուկիւի, Թուկիւիաց երգն: — Ենթեք Վիպասանացն ձորենացու մէջ մի տեղ (Ա. 30) կոչված են Թուկիւացն երգչք: Այս տեղանիւնը զանազան մեկնութիւններ են տվել, որ կարեւոր չենք համարում այստեղ հիշատակել: Թուկիւացն և Վիպասանաց երգերը ձորենացու մէջ բերված բովանդակութեամբ նույնաժամ են, որով և ապահովապէս կարելի է ասել, որ նույն Վիպասանաց երգերին մի ուրիշ կոչումն է միայն Թուկիւաց երգերն: Թուկիւքն բաւր (որի սեռականն է Թուկիւացն) կազմված է ոչ թէ Թուկիւ (երևալ) բայից, այլ Թուկիւ բայից, բայց վերջինս ոչ թէ համարել (համարել, համարել) իմաստով առած, այլ գտնել, պատմել կամ Էի Թիւ ասելն: Էի Թիւ ասելը, դա Էի Թիւ ուսածն, այսինքն բերան արած՝ տրտասանելն է, առանց որեւէ եղանակի, սովորական կարգաւոր կամ պատմելու ձևով, որքան կարելի է, պարզ և մեկին: Արդ՝ երբ Թիւն արմատը և նրանից կազմված Թուկիւն նշանակում է ասելը, պատմելը, Թուկիւքն բառն իր կազմութեամբ կարող է կրկին նշանակութիւն ունենալ, նախ՝ Եթուդներն, այսինքն Թիւ տաղներն, տաղ-պատմողներ, ապա՝ Թուկիւքն, այսինքն՝ Թիւ տաղը, տաղ-պատմածը, ինչ որ ասվում, պատմվում է, քանի որ

նույն անունիցիկ մասնիկը թէ ներդրածականի և թե կրավորականի իմաստ ունի: Իմ տպագես, «Թուեցիք» բառն իր երկու իմաստով ևս համարել է «վիպասան» բառին: Երբ, ինչպես տեսանք, նույնպես նշանակում է թե պատմությունն անողները, ասող-պատմողներ, և թե արած պատմությունը պատմածը, 'ասած-պատմածը: Միևնույն երգերի «վիպասանաց երգը» և «թուեցիաց երգը» կոչումները, երկուսն էլ մտածության միևնույն հղանա-կով են կազմված, միայն տարբեր արժանանքից, այսինքն՝ երկու կոչումն էլ վեպն ասելու հղանակից են առնված: Այդ ցույց է տալիս, որ մեր Վի-պասանը «թի է ասվել»: Մինչև մեր օրերն էլ, մեր նոր ժողովրդական վեպի, «Սասնա Մամրի» պատմողները, թի թի ուսած, այսինքն բերան արած, բարձրաձայն արտասանելով ասում, պատմում էին լոկ, միատեսակ ուժով, միայն մեկ մեջ երգելով: Մեր հին վիպասաններն էլ տարբեր հղա-նակով չպետք է ասած լինեն իրենց վեպերը¹:

Մ Ե Մ Ն Տ Ի Գ Ր Ա Ն

1. Մեծ Տիգրանի վեպը և պատմական երգեր մրա մտքի:— Վիպա-սանքի այս առաջին էությունը պատմականորեն վերաբերում է առաջին դա-րում (մ. թ. ա.) ասորդ Մեծն Տիգրանին: Նրա ժամանակը, որ իրոք դի-ցադանական էր հայ ազգի համար, ճշման և հինգ ամբ... անխուս՝ յաջ-դուքնան, երբ ճաշատային սուսակասպասք թէ ոգի իմն իցէ: Տիգրան, իր խորին ազգավորությունն է թողել ժողովրդի երևակայության վրա, և վիպասանները, ինչպես հայտնում է Մ. Խորենացին (Ա. 24), փանդի նվա-զակցությամբ երգել են Արտաշիսյան թագավորական ցեղի ամենից փառա-վորին, արքայից արքային, անվանելով նրան «երուսուղետն Տիգրան» կամ «Մեծն Տիգրան»: Կազմվել է մի վեպ, որ 5-րդ դարում երկու անգամ զրա-կան մշակություն է կրի, առաջին անգամ իբրև ներքոյան մի տարգա-ստարի բան: Երթորի ձեռով (տես՝ «Մ. Խորենացի» զլեի մեջ՝ § 8), երկրորդ անգամ Մովսես Խորենացու ձեռով: Վերջին մշակությունը և հայտնի է մեզ: Շատ մանրամասնություններ ծագում են, հարկավ, այդ ճերթողներից, բայց մնացել են և սովանդական գծերը:

Այս վեպը մի գեղեցիկ ժողովրդական պատմածք է եղել, որի մեջ, ինչպես Մ. Խորենացու մշակածից երևում է, մեկ հիմնական նպատակ է ու-նեցել ֆեոդալին ծառայող վիպասանը, այն է՝ փառաբանել իր աշխարհակալ թագավորին: Ամբողջ հիմնված է մի խնդրի վրա, որ կազմում է դոքսո-ղության միության կենտրոնը: Դա է երկու հարևան ազգերի թագավորների՝ Հայոց Տիգրանի և Մարաց Աթաշի կալերի միությունը, այդ երկուսի հակադրությունը, Աթաշի կալի դավադրությունը Տիգրանի դեմ և նրանց բախումը:

Սկզբում բացատրվում է ընդհանուր դրությունը, որից ծագում է գո-ծողությունը: Մեծն Տիգրանը բնիկ թագավոր է. նա հզոր է, իմաստուն,

¹ Տես՝ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական աստղաբանությունը, էջ 40—70. «Սեպ» վի-պասան, երգը վիպասանաց, ի թեև ասել թուեցի, թուեցիաց երգը:

անվանի և հաղթող շխտարհակալ, մեր ըստը թագավորներից խոհեմ ու ջանք, իր ժամանակակիցների համար նախանձեղի, նա տիրել է շատ ազգերի, շատերին հարկառու դարձրել: Ունի մեծ հարստություն, բյուրավոր զորքեր, լավ դինված: Մարաց թագավոր Աժդահակը վախենալով նրանից՝ գաշտեցուցում է նրա հետ: Ապա խորամանկ միջոցների դիմելով՝ նա կնաւթյան է աւանում Հայոց թագավորի քրոջը՝ Տիգրանուհուն: և ցանկանում է սրա միջոցով դավաճանութեամբ սպանել տալ Տիգրանին: Բայց Տիգրանուհին, իրեն ենթարկելով վատագի, եղբայրսիրութեան առաքնութեան է ցույց տալիս և եղբորն իմաց է տալիս գաղտնագրութեանը: Տիգրանը պատերազմով գործ է գալիս Աժդահակի վրա, հաջալով միաժամանակ իր քրոջ ապստամբյան համար: Նա հաղթում, սպանում է Աժդահակին, և նրա ընտանիքը, բազմաթիվ գերիներով, բերում, բնակեցնում է Հայաստանում, Մասիսից դեպի Երևան, Սրասի գետի երկու կողմերում մինչև Դոդրոնի սահմանները:

Ժամանակակիցների համար հետաքրքիր այս պատմութեանը զարգացում է ոչ միայն Տիգրանի աշխատանքներով, առաքնի ու ներքինի և նրա շրջապատողների նկարագրով,—որ մեծ մասամբ, անշուշտ, Խորենացու գրչից են,—այլև ավանդական վեպերի մեջ սովորական մոտիվներով: Այսպիսիներէք է Աժդահակի երազն իր մանրամասնութեամբ: Այս պատմութեան է երազի պատճառով Աժդահակի խորհրդակցութեանն իր իշխանների հետ, որ նույնպես վիպական դիժ է, որոշումը կին առնելու Տիգրանուհուն, խնամախոսութեան, Աժդահակի ջանքը Տիգրանուհուն գործիք գործնելու, զորամուղով, Տիգրանուհու ազատելն Աժդահակի ձեռից, մարտի նկարագիր, գնդութիւն և այլն:

Վեպը շատ պարզ կերպով հորինված է ֆեոդալական բարձր խավի մեջ: Գարծող անձերն ազնվականութեան համար հարագառ մարդիկ են, միայն թագավորներ ու թագուհիներ: Նրանց իդեալն է հպարտութեան ու աշխարհակալութեանը հարևանի հաշիվն: Վեպումը բնականորոք իր ազգի թագավորին ներկայացնում է ըստ ազնվականութեան գաղափարի, իդեալական հերոսական պատկերով: Ինչպե՞ս հասկնա, քաջարի, պայծառ ու բացառիկ է ներկայացված Տիգրանը, նույնքան մույլ է Աժդահակի դեմքը: Նա վախեցող է, անհանդիստ, շարունակ զգուշացող, խորամանկ ու խորհուրդ, զոգործ և գաղափար,— մի հին Սասունցի Դավիթ և Մարմարիք, Պարուկութեանը կրում է, հաւկապ, չաբը և օտաբը: Ճնշվում, գերվում են մարերը, վիշապները: Ու փոստվորվում է Տիգրանը:

2. Պատմական:— Ամեն ինչ որ իբրև պատմական կա աշխատական վեպի մեջ՝ վերաբերում է Մեծն Տիգրանին, բայց Մ. Խորենացին սխալմամբ վերագրել է Պարսից Կիրոս թագավորի ժամանակակից Տիգրան թագավորին¹: Պատմական Մեծն Տիգրանին են վիպական Տիգրանին՝ աշխարհակալութեանը, և՛ մեծ հարստութեանը, և՛ զորքի բազմութեանը, և՛ Տիգրանակերտ քաղաքը շինելը, և Թուրքիայի ֆիզիկական ու հոգեկան հաղթութեանները, և՛ նրա «Մեծն» մականունը, և վերջապես այն, որ նա մեր տառջին,

¹ Տե՛ս՝ Մ. Արեգյան, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց Պատմության մեջ, էջ 272—273, «Տիգրանի առասպելը»:

շին թագավորներին է, բռնիկ և հալածող թագավորը: Մեծն Տիգրանի վեպի կազմվելու և նրա մասին եղած երգերի կենդանի ժամանակն եղել է անշուշտ այդ թագավորի ժամանակին քիչ ուշ, այսինքն՝ մեր թվականության չին հայոց բնիկ թագավորների տեղը ըսնում են օտար թագավորներ, նվազ թվական չէ, երկիրը վրդովմունքի մեջ է ընկնում այդ մարտերի, լուսնային, վրացի թագավորների օրով, մինչև պարթևական Արշակունի օտար ցեղն իշխում է հայերի վրա: Այդ օտար թագավորների խառնաշփոթ և խռովահույս տիրապետության ժամանակ տեղիք ունեւր հայ ֆեոդալների վրդասանը կարողով հիշելու առաջին բնիկ թագավորներին և մանավանդ Քաղաթյան և շինության բերդը՝ Տիգրանին, իր բռնիկ և հալածող թագավորին:

Վրդական Տիգրանի և վրդական Մարց թագավորի հարաբերությունը նույնպես մի ավանդական հիշողություն է պատմական Մեծն Տիգրանի և նրա անմիջական հաջորդների հարաբերության մարերի հետ: Մեծն Տիգրան թագավորն առնում, ավելում է Մեծ Մարաստանի մայրաքաղաքը՝ Նիքատան, և նրա թագավորին ստիպում է ճանաչել իր իշխանությունը: Փոքր Մարաստանի թագավորը դաշնակից է հայերին և հիշվում է Տիգրանի պատերազմների մեջ. նա կնության է առնում Տիգրանի դուստրը: Վեպի մեջ Տիգրանուհին, որ օգնությանը նշանակում է Տիգրանի դուստրը, Տիգրանի քույրն է: Մենք չգիտենք, թե այդ վեպան ինչպես է վարվում, երբ Մեծն Տիգրանի ժողովրդի թեքվում է, բայց շատ շուտով, Տիգրանի անմիջական հաջորդների՝ Արտավազդի և Արտաշեսի ժամանակ Փոքր Մարաստանը թշնամանում է հայերի հետ: Տիգրանի թու Արտաշեսը նույնիսկ պատերազմ է առնում օտարների հետ և հաղթում է նրանց: Այս ամենը կատարվում է մի քանի տասնյակ տարիներում և հեշտությանը կարող էր պատմվել մի Հայոց թագավորի՝ Տիգրանի և մի Մարց թագավորի վրա, և պատմվել է:

Մեծն Տիգրանի այդ վրդական պատմությունը, ըստ ինչպան հավանության է հանել այն տեղից, ուր կա Պարենացու Պատմության մեջ, և դեռ իր ինքնական տեղում: Երբեք ա. զավտար Մեծն Տիգրանի, ըստ Պարենացու: Միջին Տիգրանի վրա է եղել նրա վրա էլ պեք է պատմել այսուհետ: Եվ այսպիսով, Պարենացու պատմությունը, որ յաղագս Մեծն Տիգրանայ, որ... էր հավան, անուանի է յաղթող ընդ այլ մարտակողոս, ասում է իր ինքնական պատմական տրեքը, և միանգամայն այդ պատմությունը դառնում է Պարենացու Հայոց Պատմության կարեւր մասերից մեկը: Նրանք մեծ նշանակություն ունեն է Մեծն Տիգրանի պատմությունը: Ցավոք, Պարենացուի տեղովն է իր ժամանակաշրջանի մեջ:

3. Ամգահակի տառապելը:— Տիգրանի վեպը բուն պատմական հիշողությունների հետ ունի նաև առասպելական, հատկապես ամպրոպի վիշապի առասպելի ընամպրություն, որ ինչքան էլ Մեծն Տիգրանի պատմության աղբյուրության առկա կվհեմերական մասնությանը պատմական դույն է աստեղի, բայց դեռ երևում է պարզապես որոշ առասպելական դժբերով: Պատմվածքի մեջ երկուսություն կա, գործող տնձերը հանգես են գտլիս և՛ իրեն մարդ, և՛ իրեն վիշապ:

«Ամգահակ» տնունը առասպելական Ամի Դահակ—Վիշապ Դահակն է:

որի դեմ կռոււմ է պարսկներէ մեջ Զրուդէնը—Թրայիտառնան։ Սրան համապատասխան է հնդկներէ մեջ Տրիտա տասմաժը, որ Ինդրայի համակություններն ունի և նուէնպէս կռոււմ է Վիշապի դեմ։ Աժդահակն քառի վիշապ նշանակութիւնը ծանոթ է նաեւ Մ. Խորենացուն։ Աժդահակի կինը՝ Անուշ՝ վեպի մեջ (Ա. 31) հիշվում է պարզապէս իբրեւ ժայռ վիշապաց։ Տիգրանը մարերի հետ գերում է նրան և իր որդիների հետ բնակեցնում է Վանդորբութեան սպառուածի փլածին մեծի լեռինն (Ա. 30)։ Մասիսի վրա, որ վիշապների կամ վիշապագների բնակարան է համարվել հնումն և մինչև մեր օրերը։ Մասիսի (առանձնապէս Փոքր Մասիսի) վիշապների մասին մեր օրերում է պատկան քաներն էին պատմում, կամ, ըստ Խորենացու, «անյայտ իրը վիշապաց, որք են յԱգառնի վեր ի Մասիս»։ Այդ Անուշի դավանները, ինչպես և ընդհանրապէս Հայաստանի տայ ՎՄարք շրջանի բնակիչները, կոչվել են Վիշապագունքն կամ զգամք Աժդահակոյն։ Նրանք Վիշապանքի շարունակութեան մեջ էլ հանդես են գալիս։ Վիշապաց մորն երևան գալը մեր առասպելի մեջ մի պատահական բան պիտի չէ համարել։ Վիշապի կանայք ամպրոպային կապի մեջ դերվում են ամպրոպային աստուծուց, երբ սա հաղթում է վիշապին։ Ինդրայի կապի մեջ Անիի (վիշապի) դեմ՝ նուէնիսկ վերջինիս մայրն է դուրս գալիս։ Ամպրոպային առասպելի մեջ ամպրոպի աստուծո ջրովը կամ կնոջը հաղթանակում է վիշապը և արդիւնում իր բուրգում։ Բայց աստվածը հաղթելով վիշապին՝ ազատում է ջրովը կամ կնոջը։ Մեր առասպելի մեջ Տիգրանուհին նույն դերն է կատարում։ Աժդահակը, ամպրոպային վիշապը, հափշտակում է Տիգրանից (—սկզբնապէս ամպրոպային աստուծուց) նրա ջրովը և պահում իր մոտ։ Բայց Տիգրանը հարձակում է իր թշնամի վիշապի վրա, սպանում է նրան, աղաւտում ջրովը և գերում է վիշապի կնոջը, Վիշապաց մորն, և բնակեցնում նրան իր սերնդով Մասիսի վրա։

Տիգրանի տեղ սկզբնապէս ամպրոպային աստվածը, Վիշապագող Վահագն եղած պիտի լինի վիշապ Աժդահակի դեմ կռուողը։ Այս ենթադրութեանը հավանական է դառնում այնու, որ Աժդահակի դեմ կռուող Տիգրանը Վահագնի հայրն է։ Առասպելաբանութեան մի ընդհանուր հատկութեամբ, մասնավորապէս երբ առասպելն սկսում է կորցնել իր դիցաբանական կերպարանքը և պատմական գուշն ստանալ, հաճախ մի աստվածութեան կամ դիցադն բաժանվում է երկուի. ստեղծվում է աստուծո կամ դիցազնի համար հայր կամ որդի, որի վրա պատմվում է, երբեմն փոխված ձևով, միևնույն հին առասպելը։ Հայկական դրուցիցի այսպէս երկուսի բաժանվելն անհրաժեշտ պիտի լինի այն ժամանակ, երբ արդեն մարերն ու վիշապներն սկսել էին շփոթվել պատմողների գիտակցութեան մեջ, երբ առասպել և պատմական վեպ խառնվում էին։ Վիշապների ազգի տեղ անցնում էր Մարերի ազգը, հին առասպելական օձերի կամ վիշապների թագավոր Աժդահակին փոխանակում էր Մարաց թագավորը, ինչպէս և նրա սերունդը համարվում էին վիշապագն Աժդահակի զարմ։

4. Վիշապը կամ Աժդահակն իբրև տոտեմ։ — Որ Վիշապն և ժայռը շփոթվել են իրար հետ, դրա մի պատճառն այն է, որ ժայռը նշանա-

կուս է օձ, վիշապ, Արդարեւ, մեր մատենադրութեան մեջ «մար» (= օձ, վիշապ) բառը չկա զորեւթոված: Բայց ոչ ամեն պարսկերէն բառեր, որ մեր ժողովրդի մեջ եղել են և կան այժմ, մտել են մեր հին մատենագիրներէ մեջ: Պարսկերէն լեզուէ դեռ Պահնեհներէ ժամանակ ծանոթ է եղել հայերին, ուստի «մար» բառի «օձ» նշանակութիւնն ամենահին ժամանակներէ կտրող էր ծանոթ լինել մեր ժողովրդին: Ինչպես և այժմ ծանոթ է: Մի անգամ որ վիշապաններէ դիտակցութիւն մեջ «մար» նշանակում է վիշապ, այն ժամանակ հետ հասկանալի է, թե ինչպես մարը և վիշապը, վիշապագունք և զարմք Աժդահակայն—զարմք Վիշապ Դահակայն, շոթթփել են իրար հետ: Մասնականը որ առասպելական վիշապները կապւած են Մասիսի հետ, իսկ մարերը ընտելվելիս են եղել Մասիսի ստորոտներում և այդ լեռնից դեպի արևելք: Արաքսի երկու կողմերում: Նրանք, որ մինչև Ծ-ը դարն արդեն հայացած են եղել, համարվել են վիշապագունք, իբրև Վիշապ Դահակի զարմեր: Դա նախնական շատ ցեղերի համատարիքներից մեկն է, որով իրենց ծագած են համարում կենդանական գերբնական էականներից,— սրանց թվում և օձերից, վիշապներից,— և նրանց անունով կոչում իրենց: Ուրիշ խառնով՝ վիշապը կամ վիշապ Դահակը համարվել է Մասիսից դեպի արևելք ընտելված մարական ծագում ունեցող տոհմի տոտեմը, իրենց պաշտած կենդանի նախնին, որի անունով և նրանք կոչվել են նաև վիշապազն կամ Աժդահակի զարմ:

Հետաքրքիր է, որ այդ կոչումը մնացել է մինչև այժմ: Խորենացին հայտնում է, թե «Թուռլեաց» արքերը, որ է՝ Վիշապասնքը, «պահնցին ախոր-ժելով... մարդիկ կողման դինեւէտ գաւառին Գողթան» (Ա. 30). «Յայտնի են ընդ ի վիպաստանցն, որ պատմին ի Գողթան» (Բ. 49). Մի անգամ որ Գողթնի բնակիչները յուրացրել և ախորժելով պահել են մարերի մասին հին երգն ու առասպելը, վիշապազների առասպելը, դարմանալի չի լինիլ, որ նրանք յուրացրած և պահած լինեն նաև Աժի Դահակին, վիշապ Դահակի զարմ կոչումը: Հին առասպելական Դոնալի անունը, ինչպես հայտնի է, դարձած է Ջոնալի, սրանից է ծագում Ջոլ, Գողթն գավառի բնակիչների արդի Ջոլ կոչումն, ուրեմն, ոչ այլ ինչ է, եթե ոչ հին զարմք Աժի—Դահակայն կոչման մնացորդը, որ հին դարերից պահվում է մինչև մեր օրերը: Դա տոտեմիստական այլաբանացութեան մի գերադրուկ է: Հայերի մեջ այդ նախնական համոզումը շատ զորեղ է եղել, ինչպես այդ երևում է օձերի պաշտամունքի արդի մնացորդներից:

Յ. ԿԵՃԻՑ Թիգրանի ԽՂԱՄԻՑ-ԱՐԱՍԵՆԻ վեպերի կապակցութեամբ.— Թե այս երկու վեպերն ամենաթուրք ունեցել են միմյանց հետ, այսինքն թե այդ երկուսը մի ընդհանուր վեպի մասեր են եղել, թե չէ, այդ որոշ կերպով չգիտեմ Մ. Խորենացու: Սակայն երևում է, որ զրանք միացած են եղել, կենտրոն ունենալով մարեր, որ է՝ վիշապազների հետ հայերի հաղթանակութեան թե ըստ պատմականին և թե ըստ առասպելականին: Հայաստանի մարերը, որ է՝ վիշապազները, ըստ վեպի, ինչպես ահանք, սերունդն են Մարաք թագավոր Աժդահակի կամ վիշապ Դահակի, որին հաղթում է Տիգրանը և որի դուրմեր գերում է նա և բնակեցնում Մոսիսի ստորոտներում: Վեպի մեջ, ուրեմն, պատմվում է, թե Մասիսից մինչև Գողթն բնակվող մարերը գերել են բերված Մեծն Տիգրանի ձեռով: Այնուհետև նույն մարերը, կամ վիշապները, վիշապազները, երևան են գալիս և Արաքսի վեպի մեջ: Այս բնական հաջորդութեամբ Տիգրանի վեպի անմիջական շարունակութեան

է զսահման Սահմարուկի որդի Արտաշեսի վեպը, սկսած Դուխիսի վիշապ նըվանդից, որ թաղաժարելուց հետո՝ երկրորդական գտնը տալիս է Մարտաց որբ-չը, կամ վելուպ Արգո-վանին: Այսպիսով համահանան է զսահման, որ այդ վեպերը թմ անշտտ և թի կից և՛ պատմըվելին և կամ համարըվելին միեւնոսն ընդհանուր վեպի մասեր: Այդ երեսւմ է և Խարենտ-ցու իրեն Պատմութեան ըզմանդակութիւնից:

Մեր Պատմագիրը, ինչպես տեսանք, վերական Մեծն Տիգրանին փոխանակ ցնելու Պատմութի մամանակ՝ դրել է Մարաց Ամզանակ (Ատախտոն) թաղաժարի մամանակից: Մյուս կողմից՝ մենք տեսնում ենք, որ պատմական Մեծն Տիգրանի (ըստ Խարենտցու՝ Ար-յակուն Միլլին Տիգրանի) որդի Արտաժարի պատմութիւնից հետո (Բ. 33) նա մեջ է ցն-րել Արշամի, Արշուրի, Անանունի և այլ սասարական պատմութիւնները (Բ. 34—36), որոնց, ինչպես հայտնի է, հայաց պատմութիւնը չեն վերաբերում: Արդ, եթե նա այդ սասարական պատմութիւնները չըրեր, և Մեծն Տիգրանի վեպը պատմեր իր՝ տեղում, Պատմութի մա-մանակիցն Տիգրանի վրտ, այսինքն իր Արշակունի Միլլին Տիգրանի վրտ, ախ մամանակ Մեծն Տիգրանի վեպի անմիջական շարունակութիւնը կլիներ Արտաշեսի վեպը՝ սկսած Սա-հմարուկից: Այս ցույց է տալիս, որ այդ երկու վեպերը հենց այդպես միութիւն են կազ-մած եղել: Եւ այսինքն՝ Տիգրանի վեպից հետո պատմած է եղել Արտաշեսի վեպը, և այդ եր-կուսը եղել են մի ընդհանուր ամբողջական մեծ վեպի ասանկին մասեր: Դրանք իրարուց բաժանովի, հետացել են միայն պատմագրի մեռով:

ԱՄԱՆԱՏՐՈՒԿ, ԵՐԱՆՈՒՊ, ԱՐՏԱՇԵՍ ԵՎ ԱՐՏԱՎԱԶԴ

1. Առաջագիցնը Սամատրուկի և Նըվմնգի մտոխն:— Վերադասանքի երկ-րորդ էջուդն սկսվում է Սահմարուկի գրուցով, որ, ըստ երևույթին, Տիգ-րանի վեպի շարունակութիւնն է: Սահմարուկի մանկութիւնն մասին պատ-մըվում է այս ասանակովը, որ ասեղծված է նրա տնված ժողովրդական ասու-ղատանութիւնով: Նրա մայրը մեծուր նանապարտարդիւով Հայկատանում՝ Կոր-զուաց լեռներում, պատահում է ըքի, Վերուեաց գամենեանեան մորիկն, մինչ ոչ գիտել ընկեր վընկեր՝ ընդ որ վարեցաւ, Իսկ դոյեկին նորա Սանտաւ, քիս Բիւրատայ Բաղրատունայ, կնոջ Խոսրենայ Արծրունայ, տուել զմա-նուկն, քանդի տղայ էր, եղ ի մէջ տոհմն իւրոց, մնալով ի ներքոյ ձեռնն զերիս տիւս և զերիս գիշերս: Զորմ է առաջադուրանեն, եթէ կենդանի իմն նորահրաջ սպիտակ յաստուածոցն առաքեալ՝ պահէր զմանուկն... Արդ՝ կո-չեցաւ Սահմարուկ, ի դոյեկնն զանունակոչութիւնն տոհմ, որպէս թէ առւը Սանտաւ (Խոր. Բ. 36): Օտար Սահմարուկ անունը, որ պարսկե-րեն է, բացատրված է, ուրեմն, հայերեն լեզվով: Այդ վեպն անցնում է Սահմարուկի շինարարութիւնը:

Սահմարուկի օրով կար Նըվմնգ իշխանը: Նրա ծագման մասին պատ-մըվել է այս գրույցը: Վերն ոմն յազգէ Արշակունեաց, անձամբ հարստի և խոշորադուրի, վարար, զոր ոչ ոք զիմադրուեաց տունու կնուսթեան, ծնանի երկու յանկունս յանկարգ խանակութենէ, որպէս Պատիփայէ զՄինոտով-րոս: Եւ ի պարզանալ մանկանցն՝ կոչեն անուանս Նրուանդ և Նրուագ (Խոր. Բ. 37): Մինոտավրոսը, Կրետի հրեւը, ծնվում է հայր ցուլից և փակ-վում է լաբիրինթոսի մեջ, ուր նրան կերակրում են ժարդկանց մսով: Թե-սեվս զիցազնը մտնում է լաբիրինթոս և սպանում նրան: Խորենացու ասած համիմատութիւնից իմանում ենք, որ Նըվմնգի և Նըվագի մայրը ցուլից է ծնում իր երկվորակներին: Այսպիսի ծնունդը շատ տարածված մի առա-պել է: Խաղաղական գրույցով Պաղուայի բռնակալ նցցելինոյի և իր եղբայր

Այրերկոյի ծնունդը նույնպիսի է, Նբանց մայրը ցուրի կերպարանք առած զևրից ծնում է այդ երկվորյակներին, որոնցից առաջինն ավելի կոտաղի և նշանավոր է, ինչպես և մեր զրույցի մեջ Սրվանդը, Սցցելինոն ամեն շաբաթ խոսում է իր հայր զևի հետ և նրանից վայրագ խորհուրդներ ստանում։ Նրա երեսին, իբրև դիվական ծագման հետք, մնում են օտարոտի աչքերը։ Այդպիսի ծնունդների կան և այլ ազգերի զրույցների մեջ, Իրանց, այս միասերիաների բանաձևն է՝ «Յուլը ծնեց վիշապ, վիշապը՝ ցուլ»։ Այսպես և սերբական վեպի մեջ Մարկոն, մի քանի երգերով, ծնվում է կոնջից և օձից, Հայկական Սրվանդի զրույցի մեջ գտնում ենք ոչ միայն այդ անբնական ծնունդը, այլև օտարոտի աչքերը։ «Բայց ասին զՅրուանդս՝ ըստ հմայից զԾնեայ գոլ ավան հայեցուածով, վասն որոյ ընդ այգանալ աշուրըլլացն սովորութիւն ունել օպտաւորացն արքունի՝ վէմս որձաքարեսայս ունել ընդդէմ Սրուանդաի, և ի հայեցուածոցն զԾնութենէ ասին լոյսթիւ որձաքար վիժացն, Բայց այս կեմ եղիցի օռւա և առասպել, և կամ դիւանականս ինչ առ իւր ունել զօրութիւնս, զի այսպէս հայեցուածոցն անուամբ ֆառասցէ զորս կամի՜ (Յոր. Բ. 42)։

Այս չար աչքի առասպելը շատ տարածված է հին ու նոր ազգերի մեջ, Հայ ժողովրդի մեջ ցայսօր ևս հավատում են, որ եթե չար աչքը «քարին էլ առ, կարաքի՜»։ Մեր վիպասանքի տեսակետից ավելի կարևորութիւն ունի այդ միասերիաների բանաձևը, թե «ցուլը ծնեց վիշապ»։ Այլիշումը, առանց աղբյուրը հիշելու, գրում է, թե «Յրուանդ անուն օձ կամ վիշապ նշանակէ»։ Այս նա վահրամ վարդապետից բերում է ի միջի այլոց հետևյալը. «Իսկ ընդէ՛ր որ աղա ասեն՝ տեսեալ ոմանց քաջաց և վիշապաց տաճարս ի լեբինս բարձունս և բնակութիւնս, ուր և զԱղեքսանդր կապեալ ունին ի Հոսմ, և զԱրտուազդ Հայոց Թագաւոր ի Մասիս, և զՅրուանդ ի զետս և ի մաայլս»։ Այսպիսով՝ Սրվանդն իր ծնունդով հանդիսանում է իբրև մի վիշապ, որին և, ինչպես վիշապ Արաամիազգին, քաջքերը կապած պահում են։

Սրվանդի այս առասպելի մեջ ևս երեւում է տոտեմիստական աշխարհայեցութիւն, որով մարդկանց ծագումը կապվում է զանազան կենդանիների հետ։ Բայց միաժամանակ այսպիսի հրաշալի ծնունդն ինչպես ֆետիշայական վեպերի մեջ ընդհանրապես, այսպես և այս դեպքում, ծառայում է նույն ընդհանուր ձգտումին, որ ունի վեպը, այն է՝ դիւանորբի իր հերոսին։ Դա, այդ գերբնական ծնունդը, նպատակ է ունեցել ցույց տալ հերոսի իրավունքն իշխելու։ Սրվանդը, կես Արշակունին, որ իրավունք չունէր թագավորելու, իր այդ գերբնական ծագումով ու հայացքով արժանի պիտի լինէր իշխելու։ Դա ապօրինի գահակալութիւնն օրինավոր դարձնելու մի եղանակ է եղել։ Թագավորին մեծացնելու նույն ձգտումը պետք է տեսնել նաև Սամատրուկի անվանակոչութան առասպելի մեջ։ Արդարև, այս դեպքում չկա ապօրինի գահակալութիւն, բայց այդ նշանակութիւնն չունի։ Հնումը ըստ իշխաններն իրենց կյանքն ու ծագումը կապում էին որևէ հրաշալի

¹ Ա ի 2 = 2, Հին հաւաք, Վեհաթի, 1898, էջ 133։

դեպքի կամ նշանավոր անձի հետ: Հայ Արշակունիներն էլ իրենց անվանում էին «դիցաթագան»:

2. Երվամիդի վեպը:—Երվանդ իշխանը Սասանաբունդի հանձնարարությամբ կատարած զորքերով երևելի է դառնում և նախարարների մեջ առաջինը: Իր խոնարհությամբ և առասպաձեռնությամբ նա պրավում է ամենքին: Սասանաբունդն սպանվում է որսի ժամանակ. շփոթություն է ընկնում երկրի վերջ Նախարարները թագավորեցնում են Երվանդին: Նա ժառանգը չէ ու զորս է բարձրանում ապրիլի կերպով: Այստեղից ծագում է զործողությունը՝ վեպի ծագման ժամանակի տեսակետից՝ ժամանակակիցների համար հետաքրքիր մի թեմայով, իշխող հարստության—գինաստության համար մի կարևոր հարցով: Պետք է Երվանդը մնար թագավոր, թե չէ:—Ո՛չ, պատասխանում է վեպը, որ իր մեջ պատկերացնում է իշխող տան շահերն ու ձգտումները: Երվանդն իսկական ժառանգը չէ, ազնվականները պարտավոր են հավատարիմ մնալ քնիկ հարստությանը: Այս է ֆեոդալական գաղափարախոսության կենտրոնը, որ ավելի զարգացրած է մեր երկրորդ հին վեպի՝ «Պարսից Պատերազմի» մեջ: Եվ ահա նախարարական տներից մեկը, թագադիր Բագրատունիները, չեն ընդունում Երվանդին: Նրանց տոհմից ոչ ոք չի լինում թագադիր, ուստի և նրա թագավորությունն օրինավոր չի համարվում: Դրությունը բարդանում է. սկսվում է պայքար երկու կողմի մեջ:

Այդ պատճառով հենց սկզբից Երվանդի բոլոր հոգսը լինում է ապահովել իր թագը, նա, այդ իր ծնունդով վիշապը, բնականաբար, Մարտցոց տեր Արզամիս, որ նույն է՝ վիշապ կամ վիշապազն Արզավանին, օրոք ծննդոցն Աժդահակայ, զարձնում է զգահն երկրորդական, զոր հանեալ էր ի նոցանէ (այսինքն Մարտցոց տեր Մուրացաններից) Տիգրանայ, Նա թագավորելուն պես՝ հին թագավորների սովորությամբ, կասկածելով Սասանաբունդի որդիներից, կոտորում է նրանց ամենքին: Բայց ազատվում է մի երեխա Արտաշես անունով, որին փախցնում է իր ստնտուն: Երվանդը հետապնդում է բռնելու այդ երեխային, բայց նրա գայակը, Սմբատ Բագրատունին, պահպանում է մտնուկին և արկածալից թափառումներից հետո տանում է նրան Պարսկաստան: Պարսից թագավորը սիրով ու պատվով ընդունում է նրանց, ինչպես հաճախ վարվել են հարևան իշխողներն իրենց շահի համար: Արտաշեսը մեծանում է այնտեղ:

Երվանդն ամեն հնարքների դիմելով, չողորթություն ու թաղցր խոսքի, ոչ մի կերպ չի կարողանում ոչ Սմբատին համոզել, որ իր կողմն անցնի, ոչ Պարսից թագավորին: Պարզեցնում ու խոստովանում չեն օգնում: Ուստի նա հողեկան հանդստություն չունի, գիշերը քուն չունի, ցերեկը կասկածոտ ու մտահոգ է: Վախենում է զադարնի դավադրություններից: Նախարարներին իր կողմը զրամբելու համար՝ նա առատ պարգևներ է տալիս նրանց: Ամեն տեսակ շնորհարարություններ անում: Իր ազահովությամբ համար՝ կռատունը հեռացնում է մայրաքաղաքից. Բագրատունում նոր կոստուռն է շինում և իր եղբայր Երվանդին քրմապետ կարգում: Ապա շինում է Երվանդաշատը, արձանիքն էլ հեռացնում է Արմավիր մայրաքաղաքից. նոր քաղաքի մեջ ամեն պուշուքություն ձեռք է առնում իր կյանքի տաղահովությամբ համար: Բարեկամանում է հոսմայեցիներին, նրանց զիջելով Միջագետքը և հարկ

տալով: Վարցիներին ոգնութեան է կանչում: Բայց ոչ մի բան չի ոգնում, ոչ նրա այս արարքները, ոչ էլ նրա գերբնական ծագումը և աշխարհի ուժը: Նրա սիրելիներն անգամ նրա անից քառաթյուններ են անում, և որքան նա աւաատ պարզանքներ է տալիս, այնքան ավելի ասելի է դառնում: Բնական գիտելիքն ամենեքեան, եթէ ոչ ռուսականութեան տալ, այլ աս երկիրդի վասնէ: Եւ այնչափ սիրելի գոյնստիկ առնէր, որոց շատն ատյար, քան թէ թշնամի գոյնս՝ որոց ոչն առյալ պերճագոյնս» (Խոր. Բ. 45):

Հենց որ ընդիկ թագաժառանգը պարսից ոգնութեամբ և Սմբատի առաջնորդութեամբ երևում է Հայաստանի սահմանների վրա, բոլորն ափցնում են նրա կողմը: Հաստատեցիք չեն գալիս ոգնութեան, վրաց գործը փախչում է: Հաղորդեցին չեն ունենում և բարձր քաջք տալարցիքն, այսինքն աստուծոցից: Ընդդէմ դրան ի բաց եղեալ, նրուանդայ պայմանեալ՝ սպանանել զԱրապաշտ: Ստանուի որդին, Գիսպէր, մեջ մտնելով՝ անձնագոհութեամբ փրկում է Արտաշեսին: Երվանդին Գիսպէր է հակադրուած և տեղից փախչել և ամբարշտ իր շինած քաղաքներէն: Բայց այստեղ իր ամբարշտ մարդիկն անձնատուր են լինում, և Երվանդն սպանվում է մի գիւղից: Այնուհետև Արտաշես իր հոր թագով թագադրվում է Սմբատից և որինավոր ժառանգը դառնում է օրինավոր թագապար: Նա պարզանքներ է տալիս բարեկամներին, իր համար սպանվածների ժառանգներին ազնվական դարձնում: Սմբատի ձեռով սպանել է տալիս Երվանդին և ընծաներ ուղարկում Պարսից թագավորին, իր բարեբարին: Բայց Արտաշիս յիշեալ, թէ խոռոչում Արշակունւոյ է Երուանդ, հրամայէ զգի նորա թագել մահաբանօք» (Խոր. Բ. 46):

Այս պատմվածքը մի ամբողջական շղթա վեպ է, որի գեղեցկութեամբ ծագում է և՛ Վիպաւանդից, և՛ Մ. Խորենացուց: Գործողութեան ընթացում է բազմաթիւ յիշողական մանրամասնութեաններով և միջոցաւերով, որոնք միմյանց հետ միանում են մի ընդհանուր սյուժետով, ուստի և բնականորեն հաջորդում են միմյանց: Ամբողջի մեջ երևում է, թէ ինչպես նախարարները, եթե ուղարկում մի ժամանակ թուլանում են, սիրով կապված են Գիսպէրին թագավորական տան հետ: Այնքան է ընկնում այս նկատմամբ Սմբատը, որ անձնաբացութեամբ ամեն նեղութեան կրում է, օտարութեան մեջ ապրում, միայն իր տիրոջ, իր թագավորի որդուն հովասարմութեամբ ծառայելու համար: Նա գեղեցիկ է, բարձրահասակ, քաջ է, լավ կալույթ, արագաշարժ. զգուշ և հաջողակ: Նա մի բանի համար է միայն մտածում և աշխատում—պահպանել թագաժառանգին և բարձրացնել նրան հայրական գահի վրա, կովիլ նրա համար և մինչև վերջը ծառայել նրան:

Վիպաւանդը նրվանդին էլ օժտել է բազմակողմանի հորուստ քննավորութեամբ և արագային լավ կողմերով, և այսպէս է վեպի գեղեցկութեանը: Նա հաղթանակում է, սրտաւ, խոնարհ, առատածան, շինարար, խելոք կռուական, աշխարհի համար հոգաբար: Նա նույնիսկ վեհանձն ու պատվովոր է այն առախմանի, որ իր թշնամի Սմբատի դուստրներին գերելով՝ պահէ յամբողջին յԱնի ոչ վտտթարապէս: Բայց այս թագապարը, որ պետք է ժողովրդականութեան վալիկը, մի պակասութեան ունի. նա ժառանգը չէ, և արքայական տան վերաբերմամբ մի եղեանով է դահ բարձրացել: Եվ այդ շարունակ հաւածում է նրան, և վերջը նա պատվով է գրա համար: Այս-

տեղ է նրա արագիկական վիճակը։ Այստեղ է և վեպի ֆեոդալական դադարախառնությունը։

3. Արտաշեսի ամուսնալքումը և կենցաղական գծերը։— Այս կադմուս է մի ասանձին ճշուշտ։ Ինչպես Վոստոկ Մոսկովի մեջ Դավթի ու Մարգարիտի կովից ու Դավթի հազթուխումից հետո՝ զայիս է Դավթի ամուսնալքումը, նույնպես և Վիդասանքի մեջ՝ Արտաշեսի հաջորդությունից հետո պատմվում է նրա ամուսնալքումը։

Արտաշեսն զբաղված է Արտաշատ քաղաքը շինելով և զարդարելով (Բ. 43)։ Այդ ժամանակ ալանները մտնում են Հայոց աշխարհն ավարելու։ Արտաշես թագավորը՝ զորքով քաջությամբ ելնում է նրանց դեմ։ Բռնում են ալանների արքայորդուն։ ալանները քշվում են Կուր գետի մյուս ափը։ Ալանների թագավորը խաղաղություն է խնդրում, խառնալուով տալ Արտաշեսին, ինչ որ նա ուզի։ Բայց Արտաշեսը չի համաձայնում արձակել թագավորի որդուն։ Այն ժամանակ ալանների արքայազուստը, եղբորն աղաթելու համար, զայիս է գետափը մի մեծ դարավանդի վրա և թաքցմանների միջոցով ձայնում է դեպի Արտաշեսի բանակը։

Դեզ ասեմ, այր քաջ Արտաշես,

Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց.

Եկ հաւանեաց բանից աշագեղոյ դասերս Ալանաց՝

Տալ զպատանիդ.

Ձի վասն միոյ ընուս ոչ է օրէն դիւցազանց՝

Զայլոց դիւցազանց գորմից բռնեալ զկենդանութիւն,

Կամ ծառայեցուցանելով ի սարկոց կարգի պահել,

Եւ թշնամութիւն յաւիտեանական

Ի մէջ երկրօրէնց ազգաց քաջաց հասառառել։

Արտաշեսը տեսնելով Սաթրնիկին գեղեցիկ ու խելաք՝ հաժանում է նրան, ցանկանում է նրան կնության առնել, և իր միտքը հայանում է Սմբատին։ Սա մարդ է ուղարկում ալանների մօտ հաշտվելու և օրիորդին ուղեկուս։ Այն ժամանակ ալանների թագավորն ասում է.

Եւ ուստի՞ տաք է բաջն Արտաշես

Հաղարս ի հաղարաց և բիւրս ի բիւրուց

Ընդ քաջազաւոյ կոյս օրիորդին Ալանաց։

Աղջկա հայրն, ուրեմն, իր գուժարի համար մեծ գլխադին է պահանջում։ Բայց Արտաշեսը ձին հեծած՝ սրաթև անցնում է գետով, պարանը ձգում է օրիորդի մեջքը և բերում նրան իր բանակը։

Հեծաւ արի արքայն Արտաշես ի սեան գեղեցիկ,

Եւ հոնեալ զոսկէօղ շիկափով պարանն,

Եւ անցեալ որպէս զաբժուի որոթեւ ընդ գետն,

Եւ ձգեալ զոսկէօղ շիկափով պարանն,

Ընկէց ի մէջ օրիորդին Ալանաց։

Եւ շատ ցաւեցոյց զմէջէ փոփակ օրիորդին,
Արագ հասաւցանելով ի բռնակն իւր:

Պատմական հիշողությունն է ալանների պատերազմը, իսկ պատերազմաների մեջ զենքի բռնկելը շատ սովորական,—մնացածը լուկ կենցաղական գծեր են, որոնք ամենայն վեպերի մեջ էլ կարող են մտնել և մտնում են: Դրանցից մեկն է ռուկեօդ, շիկափոկ պարանիշ գործածութիւնը: Պարտնը մարտիկ ցեղերի մեջ շատ հնուց միշտ նուաշիկ է կենդանի որս—գազաններն և մարդիկ բռնելու համար: Դեռ Հերոդոտը հիշում է պարսն իբրև իրոնացաց զենք: Ինչպէս Հովսեփոսի Պատմութիւնից երևում է, մեր թ. 1-ին դարում հայերի հետ կովովո ալանները պարսն իբրև զենք գործ են անել Հայոց Թագավոր պարթև Տրդատի դէմ: Մի անգամ որ պարսնը կարևոր զենքերից մեկն է եղել հին ժամանակաշրջանում, բնականաբար դա կարող էր և հայոց Վերածնունդի մեջ մտնել, ինչպէս և Շահնամայի մեջ սիրելի զենք է պարսնը: Նույնիսկ մինչև այժմ էլ մեր մասնա Մսերի մեջ ևս տեսնում ենք պարսնը, որ մեր դարու զենք չէ հաւկա՛վ: Եւ շատ հին ժամանակից է գալիս: Ոստանայ իշխանը հեռա լէթալ, զՄհեր կռուից: Մհեր ձիով ինկա՛վ կռուէ: Դա հնութիւն մնացորդ է: Արտաշէս թագավորը պարսնով բռնում, փախցնում է իր հարսնացու: Եւ ինչպէ՛ս անհաշիւ են գործիքի բանի կերպով կրնա ձեռք բերելու համար՝ այդ համարածոթ է: Դա հեռավոր հնութիւն վաղքենի կենցաղական գծերից մեկն է, որի հետքերը մինչև վերջերս դեռ երևում են ոչ միայն մեր հարսանական և ուրիշ երգերի մեջ, եւ յայնչիսկ մեր կենցաղի մեջ: Աղջիկ առնանքիւս սովորութիւնը մինչև վերջերս դեռ չէր վերացած մեղանում: Ուստի և շատ բնական է մեր արդի երգիչի մեջ կարողա՛յ տղայի կողմից աղջկան տա՛ծ. «Ջիրիկա էնեմ վրադ կիզամ էլլորով (=արշափելով)»: Այսպէս և դեռ լսում ենք.

Փեսան կուգա սուրով զարով,
Մարդը շատ է՝ կռոնե զոռով:

Կամ հարս տանելու ժամանակ երգում են.

Աղբոր շիշեն կուտեցին,
Գրջ վալեն պատտեցին:

Հարսի հափշտակութիւնը կամ առնանքումը պատմվում է շատ անգների վեպերի մեջ՝ սկսած Համբարումի մինչև առաջ վեպը և քրդական երգերը: Ռուսաց Վլադիմիրն իր զիցազն Դուսային ուղարկելով հարս բերելու, տալիս է նրան զինվորներ ու շատ ոսկի և ասում է. «Դեռ ասի քե՛ս չիթովացրի աշխարհը և բարի խոսքերով աղջիկ ուզիր. բայց թե որ խաթրով չտան, կանգնիր գորով առա՛: Ոսկին գլխագինի (վորձանք, բաշլըզ) համար է, իսկ զորքը՝ աղջիկը կովով առնելու համար: Հնազույն ժամանակների աղջիկ ուզելու այս երկու եղանակներից գլխագինը մի փոքր տվելի ուշ է երևան եկել, բայց երկու եղանակն էլ երկար ժամանակ շարունակ միասին գոյու-

թյուն են ունեցել, և զարծ են զրգել մերթ մեկ եզանակը, մերթ մյուսը, երբեմն երկուսն էլ միաժամանակ:

Արտաշեսը Վիրապաւանքի մեջ այն է անում, ինչ որ մինչև վերջերս երբեմն անում էին լեռնցիները, երբ իրենց ուզած աղջկան չէին ուզում առնալ: Աղջկա ծնողները, կամ երբ իրենց հարսնացուի համար մեծ գլխագին էին ուզում ծնողները: Նրանք երբեմն ընդիմադրով փախցնում էին աղջկան: Արտաշեսն աղջկանը փախցնելուց հետո՝ նրա հորը տալիս է մեծ վարձանք, «մորթ կորսիլ, լաքա շատ և ոսկի քաղում»: Այս ևս մի սովորական կենցաղական գիծ է, որ մինչև վերջերս հարստեան էր հայերի մեջ: Աղջիկը փախցնելուց հետո գլխագին էին տալիս նրա ծնողներին և հաջովում, ապա հարսանիք անում: Եվ իրավ, Խորենացին անմիջապես անցնում է հարսանիքին, բերելով հարսանիքի նկարագրից մի փոքրիկ կտոր միայն:

Տեղ սկսի տեղայր ի փեսայութեանն Արտաշիոյ,
Տեղայր մարդարիտ ի հորսնութեանն Սաթրնկանն:

Խորենացին այս հատվածը մեկնում է այսպես. «Թանգի սովորութիւն իսկ էր թագաւորացն մերոց, փեսայութեամբ ի զուրս տառաւրին հասանել՝ դահեկանս ճաշողէլ... սպէս և թագահեացն յառաջատին՝ մարդարիտ: Այս է ճշմարտութիւն բանիցս (Բ. 50): Հայոց թագավորների ու թագուհիների այդ սովորութիւնը, հայտնի է, մինչև վերջերս պահում էին մեր «թագավորներն» ու «թագուհիները», ինչպես կոչվում են հարսն ու փեսան հարսանիքի ժամանակ: Շատ տեղ, երբ նորապատկները եկեղեցուց դուրս էին գալիս, մանր զբոսներ էին ցրվում: Գոյգեղում, հարկավ, փող ցրվելը շատ չէր պատահում, բայց փողի փոխանակ չամիչ, մրգեղեն կամ ցորեն և այլն շատ առաջ սովորական էր: Հարսանիքի ժամանակ փող ցրվելու նույն սովորութիւնը գտնում ենք և Շահնամայի մեջ:

4. «Գրգուրիւն ընդ Սմբատայ գորմիցն Արտաշիսի և ընդ միմեանս:— Այս ճյուղի պատմութեան սկսվում է Սմբատի գովքով և թագավորների դեմ ապստամբութիւններով: Սմբատը գործով գնում է նախ աշանների երկիրը՝ Սաթրնիկի եղորոն ունելու ապստամբների դեմ և այստեղից գերինք է բերում, բնակեցնում Արտազոււմ, Հետո նա գնում է Գեղմանց լեռան և Մովսէսեայի կողմերը, Գարսից թագավորին չենթարկվողներին հնազանդեցնում է, ինչպես և գաղում է Հայոց թագավորից ապստամբած կասպերին, ու շատ գերինք բերում: Շվասն որոյ արժանի ըստ վաստակոցն պարգևէ նաւ Արտաշէս զմասն արքունի, որ ի շէնս Գողթան, և զՍևդատու աղունան, և առ աշոցիւք՝ և զուարն ածնայն նմա թողու: Սմբատն, ուրեմն, փառափրկում է և վարձատրվում իր հավատարիմ ծառայութիւնների համար: Հետևանքը լինում է այն, որ արքայորդին, «քաջ, անձնահաւ և հղաբոյն Արտավազդը, նախանձում է Սմբատին և ուզում է սպանել նրան: Սմբատը թողնելով գործի իշխանութիւնը՝ քաշվում է Տմորիք, և Արտավազդը դառնում է ընդհանուր զորավար:

Այժմ էլ սրան եղբայրներն են նախանձում թի գրգուրիւնէ կոնանց իւրեանց: Այդ ժամանակ զհարգէ Արտաշէս զՎրոյր՝ հազարապետ, զայլ

խմատուհան և բանաստեղծ, և հաւատայ ի նա զամենայն գործն ամեն արքունի, և զՄոսկով կարգէ քրմապետ ի յԱնի գիցն Արամազդեայ: Նա զորքի իշխանութիւնը չորսի է բաժանում, արևելյանը թողնում է Արաւ-վազդին, արևմտյանը տալիս է Տիրանին, հյուսիսայինը՝ Զարեհին, իսկ հարավայինը հավատում է Սմբատին: Ապա պատմվում է նախ Վրաց արքայի, հետո Դոմեոսիանոսի դեմ պատերազմները, որոնց մեջ մեծ հաջողութիւն է ունենում զարձալ Սմբատը: Նվ վերջապես, թե՛ Սմբատը մատուցելու է անում Արտավազդի ու Տիրանի մասին՝ իր պայտէ Սմբատի համար քեն պահած լինելով նրանց դեմ՝ և սպանվում է նրանց ձեռքով:

Այս ճշուշին է պատկանում նաև Տիրանի ձիերի մասին պատմվածքը (Բ. 62), ինչպես և նրա փեսա Տրդատ Բագրատունու զորայքը (Բ. 63):

Պարզ երևում է, որ վիպասանը նպատակ է ունեցել այս ճշուշով մի կողմից՝ փոռալով Սմբատին, մյուս կողմից՝ պատկերացնել թագավորա-կան ընտանիքի անդամների մեջ տեղի ունեցող նախաձեռն ու զրգուղթիւնն ի ձեռն կտանայ, ինչ որ արևելյան հին իշխողների մեջ հաճախ արյունահեղ վախճան է ունեցել:

6. Վերադառնալով պատմութեանը:— Հին առասպելական հավատալիքները հեղտութեամբ չեն մուսկոյնում: Մինչև մեր օրերը հարաւանել են նաև վիշապ-նեւրի մասին առասպելները: Դրանք առասպելական էակներ են օձի կերպա-րանքով և հաճախ նույնացվում են հենց օձերի հետ: Հայաստանի լեռներից շատերի համար ցարդ առասպելաբանում է ժողովուրդը, թե վիշապներ են կենում նրանց մեջ: Նրանք բնակվում են քարայրերում, ուր և ունեն իրենց ապարանքները կամ տաճարները, ունեն իրենց թագավորներն ու թագու-հիները, զորքն ու զորավարը, և իրար դեմ կռիվներ են մղում բոլորովին նման մարդկային կյանքին ու թագավորութեան: Այդ վիշապներն իբր իս-կապես մարդիկ են, միայն բռնեղեն շաղկով, որ ուշած ժամանակ հասնում են և մարդկային կերպարանք ստանում: Նրանք մարդկանց հետ հարաբե-րութեան ունեն և նրանց կանանց հետ սեր էլ են տնում: Ի թիւս այլ լեռ-ների այդպիսի վիշապներով բնակված է համարվում և Մասիսը, որ կոչվել է նաև «Սեռա լեռան», «Մուսիս տշխարհ»: Հին ժամանակից ցայսօր Մոսիսի վիշապների մասին, ինչպես Տիգրանի վեպի մեջ տեսանք, պետպես բանքը, բայց այս իրքը են պատմում: Այդ վիշապներն, ըստ Վիպասանքի, Աժդահակի և նրա կնոջ՝ Վիշապաց մայրը Անուշի սերունդներն են, որոնք հանդես են դալիս և Արտաշեսի վեպի մեջ: Նրանց գլխավորը և հայրն է Արգաշանը:

Մի օր վիշապ Արգաշանը Հայոց Արտաշես թագավորին և նրա որդի-ներին իր մոտ ճաշի է հրավիրում: Արտաշեսը գնում է վիշապաց տաճարում ի պատիվ իր տրված ճաշին: Արգաշանն ուզում է ճաշի ժամանակ խորհու-վանակ լինել կամ դալիլ թագավորին: Սա զայրացած վերադառնալով Ար-տաշես իր Մոսկով որդուն ուղարկում է զորքով կովկաս վիշապների դեմ և նրանց կոտորելու: Բայց երկու տարուց հետո հանգիստ է թողնում նրանց:

Արտաշեսի քաջ որդին Արտավազդը: Արտաշատ քաղաքը շինացած լինե-լով, այնտեղ իրեն համար ապարանքի տեղ չի գտնում: Նա գնում է վիշապ-ների մեջ մտնում, խուլ է նրանցից նրանց կալվածները, որոսիս հյուս-տիսային կողմում նրանց բոլոր գյուղերը, ապարանքներով ու ինքնորով միա-

սին, բոլորն իրեն է սեփականում, Շինում է լի մէջ Մարտը զՄարտկերս
Շարուրի դաշտում, և այնտեղ բնակվում։ Արաավազդի մայրը, Սաթինիկ
տիկինը արգիւնք է ունենում վիշապաղների հետ կամ տենչանք ու սեր առ
Արգավան վիշապը։ Վիշապները չեն ուզում տանել Արաավազդի արտաք-
ները և կովում են Արաավազդի գետ։ Բայց նրանց իշխանությունը քայ-
քայվում է, որովհետև Արաավազդը հաղթում է նրանց, կոտորում է ամեն-
քին, Արգավանի բոլոր ծնունդն ա իրեն՝ Արգավանին սպանում է։ շին-
վածներն ալրում է և իր ձեռը ձգում նրանց բոլոր գլուխքին ու իշխանու-

Թրանք

Այս առասպելը մի քանի մանրամասնություններով, որ չի բերել Մ-
Խորենացին, դեռ պատմվում է հայերի մեջ իբրև հեքաթ՝ գին կամ վիշապի
մասին։ Նույնը կատարյալ նմանությամբ կա նաև ուրիշ ժողովուրդներին
մեջ, ինչպես՝ արվալների, վալախների, սերբերի՝

Այս ընդհանուր տարածված առասպելը, դառնալով Վիպասանքի մի
մաս, բնականաբար հարմարվել է սրա նյութին, որ է հայերի և մարերի,
բայտ առասպելին՝ վիշապների կոխը։ Արգավանն ուզում է դավել Արաաշե-
սին, և հետևանքը լինում է ամբողջ ընդ նստա, և քայքայումն իշխանութենէն,
և սպանումն նոցա և հրկիզութիւն շինուածացն։ Նրեում է, որ այստեղ
պատկերացված է եղել իշխանների դավադրությունն ու ապստամբությունը-
խաղաղորի գետ և զրա հետեանքով նրանց բնաջնջումն։ Ֆեոդալական դա-
դապարտությունն է, ուրեմն, նաև այստեղ իշխողը՝ Մյուս կղզից՝ դրա
հետ միացած է եղել և ընտանեկան խաղաղությանը՝ ամբողջ Սաթինկան
ընդ Վիշապաղունսն։

Տենչայ Սաթինիկ տիկին տենչանա,

Ջարախուր խաւարտ և դաից խաւարճի

Ի բարձրցն Արգաւանայ (Ա. 50)։

Սաթինիկ տիկինը տենչում է Արգամի բարձերից ունենալ հմայքի
բժժանքի ըույսերը՝ արտախուր խավարտ և խավարճի փունջ [տից—աղակ]
բայտ հմայական հավատալիքի, որով մեկին սիրահարեցնելու համար նրա
բարձերի կամ զգեստի մեջ կարում էին բժժանքները և հետո առնում։

Թե այս առասպելը, որ լի է հեքաթի բնավորություն ունի, կարող
էր հին ժամանակ հայերի մեջ Վիպասանքի և Նույնիսկ երգի նյութ լինել՝
այդ մասին կատկածել կարելի չէ։ քանի որ նույն առասպելը Ջեռնաղո-
րիտյում վիպական երգ է, բացի այդ՝ նույնը, այլև մի քանի ուրիշ հին
առասպելներ, երևան է գալիս և մեր «Ստեփան Մոսիսի» մեջ։

Վիշապների դեմ կովի այս առասպելին միացել է վիշապների և մի
ուրիշ առասպելը,—Արաավազդի փակվելը Ազատ Մասիսի մեջ։

6. Արաաշեսի մտեմ և ամեմ Արաավազդի։—Այս վերջին ճյուղի
թեման է հոր և որդու հարաբերությունը և հոր անեծքի զորությունը, որին
ցորդ հավատում է ումիկը։ Դրա համար նաև պատմվում է Արաաշեսի
շինարարությունը (Խոր. Բ. 56, 59), որով նա սիրելի է դառնում աշխար-

¹ Տեն՝ Մ. Արեգյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 885—879։

հին, և ապա նրա հիվանդանալը, ժամն ու փաստավոր թաղումը (Խոր. Ք. 60):
Հոր այս փառքին նախանձել է Արամավազը, դժվարացել է և ասել է, գի-
մելով հորը.

Մինչդուռ գնացեր,
 Եւ գերկիրս ամենայն ընդ քեզ տարար,
 Եւ աւերակարս ձեռքս ազաւորեմ:

Այդ պատճառով հեղին անխնայ է նրան ասելով.

Եթէ դու յորս հեծցես
 յԱղասն ի վեր ի Մասիս,
 Զքեզ կալցին ք-ջգ. տալցին
 յԱղասն ի վեր ի Մասիս.
 Անդ կայցես, և դոյս մի տեսցես:

Ի՞նչ անե՞ք Լեւոնարդին է: Նա զանգերից բռնվելով՝ որսի ժամանակ՝
չթափվում է Մատիսի ալբերից մեկի մեջ, Այստեղ վերջանում է վեպի պատ-
մբանությունը:

Վերադառնալիս, ինչպես «Սոսնա Մեկեր» Մեկերի համար, սենյակ է իր վերջարան և Արապազդի մասին, Քրուսկին զաման է և պատահալիք, եթէ արդեն եւ կայ յայրի միւս, կապեալ երկաթի շղթայիւք, և երկու շունք հասարակ կրնայ զշղթայիւ շանայ ելանել և առնել վեճեան աշխարհի. այլ ի ձայնէ կոհնակաւորութեան դարձեալ զօրանան, ասեն, կապանքի, Վասն որոյ և առ Մերով իսկ ժամանակաւ,—ապիւստնաւ է Մ. Խորենացին,— բողոքէ ի դարձեալ՝ զհետ երթալով առաջնային՝ յառաջ միաշարաբար շղթայիւ կամ շրեթս բռնեն զսալն, զի զօրսցին, ասեն, շղթայն Արապազդայս,—Այս ապա— զսեթյունը երկար դարեր պահպնէ է հայերի մեջ:

Լեւոն մեջ փակվելու այս վիպական պատմվածքը տարածված է շատ
ազգերի մեջ: Նույնը կո է մեր նոր վեպի մեջ Մհերի մյուս պատմվածի:

7. Արտավազդի բնավորությամբ երկուսն էլ ունենում էին իրենց հատկությունները:—Արտավազդի մասնավորապես, բացի քաղաքացուց, հիշում են նաև ուրիշները, Ըստ Նիկիթի, Արտավազդին կապած պատմում են վիշապները. «Ճեռ ոչ ոքս երբեք» սրպեյն մարդկան տարածել են վիշապաց, կամ առնիցեն. և ոչ մասնաբեկ [—ապարանք] իբրև մարդկան են նուցա ի բնակութիւն, և ոչ գոք ի թագաւորագցեաց և ի դիւցազանց ունին կապելալ առ իւրեանս կենդանի... Այլ որպէս զԱղեքսանդր իւրեան դեք, թէ կենդանի կայցէ... Նոյնպէս և մուրաւթիւնն դիւցա իւրեանց գդիւցապաշտաւ Հայոց, եթէ զոմն Արտաւազդ անուն արքայնալ իցէ դիւցա, որ ցայտմ կենդանի կայ, և նա ելանիւց է և ունելոց զաշխարհաւ, և ի սնտոի յայս կապելալ կան անհատաբեկ, որպէս և Հրեայք՝ որ ի գուր ակնկալութիւն կապելալ կան, եթէ Դաւիթ դաւոց է՝ շինել զԵրուսաղէմ և մարդիկ զՆրեայս, և անդ թագաւորսն նմա նոցայս:

¹ Տես՝ Դ. Բ. Է. Գ. Դ. Զ., Հայկ. ժողովրդագրական առաջադիմություններ, էջ 356—379, ուր էլ գրքի չափերի մասին մանր-մանրանկարներ:

Կապոված Արտավազդը: Եղնիկի պատմածի համեմատ, ներկայանում է իրրև թաղավորագրի կամ գիրք-գն, և հայերը նրան ապաստում են, որ հին և ախրի աշխարհին: Այս զրույցով նա բարի բնավորութուն ունի, ուստի և նրան կապովները չար են՝ վիրապներ: Մենք տեսնուք՝ Վիպասանքի մեջ՝ Արտավազդը նույնպէս թագավորի որդի է, որ կովելով վիրապների դեմ, ներկայանում է իրրև գիրք-գն: Դա կապոված Արտավազդի զրույցի սկզբնական ձևն է: Պատմականորեն դա Մենն Տիգրանի որդի Արտավազդն է, մարերի (=վիրապագների) թշնամին, որին Անանիոսը՝ մարերի հետ դաշնակցած՝ խորհուրդով բանում, շղթայում ու տանում է Եդիպատ: Երևի իր ժամանակին ապասել են, որ նա գերութունից ազատվի և դա վերստին տիրի Հայոց աշխարհին: Բայց այս ակնկալութունը չի կատարվել:

Այնուհետև կապոված Արտավազդի այս պատմական զրույցը շփոթվել է Հրոդենի ձեռով շղթայված Աստուանի տեսարկին հետ, որ շատ հին ժամանակներում իրանացիներից փոխադրված է եղել հրաբխային Մասիս լեռան վրա, և Աստուան անվան տեղ անցել է Արտավազդ անունը: Զրույցի այս զարգացման հետևանքով՝ Մասիսի մեջ կապոված Վիրապ Աստուանի, այդ չար ոգու տեսարկն ազդել է Արտավազդի պատմական զրույցի վրա: Ուստի Արտավազդը Վիրապանքի մեջ եթե մի կողմից՝ հանդիսանում է իրրև վիրապների—մարերի դեմ կռիւլ քաջ աղքատի, որին, ըստ Եղնիկի, կապում են վիրապները, մյուս կողմից՝ նա ունի չար ու նախանձատ բնավորութուն, և նրան կապում են քաջները, որոնք բարի ոգիներ են: Վիրապաններն Արտավազդի բնավորության այս երկուութունը բացատրել են այնու, թե Աստուանի զարմի կանայքը կախարչել են նրան: Եւ դա չար երգիչն յառաջելին ասեն այդպէս. եթէ Վիրապագունք զողացան զմահուն Արտաւազդ, և դե փոխանակ եղին (Քոր. Բ. 61): Ուրեմն նույնիսկ Վիրապանքի մեջ Արտաւաք թագավորի որդի Արտավազդը եթե մի կողմից՝ վիրապների դեմ կռիւլ գիրք-գն է, մյուս կողմից՝ համարվել է իրոք մի դև: Այդ մի շատ տարածված ու հին հավատ է, որ միևնույն վերջերս դէս կենդանի մնում էր մեր ժողովրդի մեջ: Զարունքը կամ գեները, ըստ մեր անտեղծվածքի, փոխում են իրենց երեխաները մարդկանց երեխաների հետ. մարդկանց երեխաները զոդանում են և տեղն իրենցը դնում: Եւ եթե մահուկ Արտավազդին գողացողները վիրապագներ են՝ զողացածի տեղն ևս վիրապագն կամ վիրապ. պիտի դնեն ըստ հավատին: Արտավազդն, ուրեմն, ներկայանում է իրոք իրրև վիրապ, և եթե գլխւ է ասված նրա համար, այդ գլխւ քառն ևս պետք է հասկանալ ընդհանուր իմաստով՝ իրրև չար ոգի: Պետք չէ մոռանալ և այն, որ գլխւ, ազնավոր և վիրապ-ափղանա սիրա կապոված են իրար հետ և հաճախ փոխանակում են միմյանց:

ՎԻՊԱՍԱՆՔԻ ՅԻԿԼԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՐԳԵՐ ՈՒ ԶՐՈՒՑՆԵՐ

1. Վարդգես Մամուկի վնդը:—Վաղորդապատը 2—Երգ դարերում մի առժամանակ իրրև մրցակից է հանդիսանում Արտաշատի դիմաց, և այնուհետև դարձյալ բարձրանում է Արտաշատն ու հետո Դվինն Արտաշատի մոտ: Արտաշատն ունեւր անցյալ, հիմնադիր ունենալով Հայոց հին թագավորներից

որդինքնի՝ Տիրանի ու Տիրարանի մասին պատմածները, այլև Տրդատ Բագ-
րատունու զրույցը (Խոր. Բ. 62, 63, 64)։

Եւ այն ցիկլին պատկանել է նաև Գրիգոր Մագիստրոսի իր նամակ-
ներից մեկի մէջ՝ բերած հատվածը— «ի գահհիկս աւանդեալս, որ «Պարթև
Արաաշէսն» ասել է վախճանվելու։

Ո՞ր առարկան զննելու էինք,
Եւ գտաւա՞նք նախասարգի,
Զվազելն եղանց,
Եւ զվազելն եղջերուաց.
Մեք փող հարաւաք,
Եւ թմբկի հարկանէաք,
Որպէս օրէն է թագաւորաց։

«Պարթև» ըստ Մագիստրոսի նախն է, ինչ որ ամբողջունիս։ Այդ
կոչումը Արաաշէսի համար հավանորեն Մագիստրոսի իրեն ավելացրածն է,
իսկ նրա բերած հատվածը մեր հին Վիպասանքի մի մնացորդ է, որ հարա-
տեւել է մինչև 11-րդ դարը։ Յովոք, Մագիստրոսն ավանդաւթյունն ամբողջ
չի բերում։ Այս հատվածը պատմականորեն համար է ժողովրդին սիրելի
Արաաշէս Գ.-ին (18—34 թ.), որ հայտնի է իր օրսի և խնջույքների սիրով։

ՎԻՊԱՍԱՆՔԻ ԱՐՎԵՍՏՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԿԵՐԱՐԱՆԵՐԸ

1. Մ. Խորենացու քննադատությունը։ Բերանացի կրգեր և կրգարանք
քննադատի։—Քն ինչպիսի ուրվեստով և հորինվածքով է դարգասած եղել մեր
հին Վիպասանքը, այդ մասին քիչ բան կարող ենք իմանալ այժմ։ Գրա մի-
ակ աղբյուրը Մովսես Խորենացի պատմագիրն է, որ այդ երգերից մի քանի
հատվածներ է միայն բառացի մեջ բերել։ Նա պատմում է մեծ մասամբ
բովանդակութունը, այն էլ հաճախ խառնած ուրիշ աղբյուրներից զաղած
նյութերի, կամ թե իր ենթադրությունների ու մեկնությունների հետ։
Փավստոս Բուզանդը, զրիստոնեաւոր նախելով, բացորձակ արհամարհում է
Վիպասանությունը, որովհետև դա հեթանոսական բնավորություն ունեւր.
գրա մեջ մարդկանց հետ խառն դործող անձեր են եղել ուղիներ և աստվածներ։

Մ. Խորենացին, որ արվեստի նկատմամբ ավելի քննադատաբար է վերա-
բերվում, ասանձին զննադատով չի խոսում հայ նախնիքների բանաստեղծու-
կան շնորհքի մասին։ Նա իր գրքի հենց սկզբներում (Ա. 3) ասում է. «Ինչ
թուի, որպէս այժմ՝ և առ հինսն Հայաստանեայցս լեալ անսիրելութիւն
իմաստութեան և երգարանաց բանասերաց»¹։ Նրա գաղաւաթ ոչ թե բերա-
նացի երգեր չլինելու կամ չսիրելու մասին է, — այդպիսի երգեր շատ է հի-
շում նա, — այլ իմաստալից երգեր։ Հիշենք միայն, թե ինչպէս Խորենացին
պարսից տոհմագինները ըստ, փծուն, անճոռնի, անյարմար և անոն բանը,

¹ Ի. Գ. ասանց, Գրիգոր Մագիստրոսի Քղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, Թուղթ
19, էջ 87.

² «Երգարանք բանասեր» բառերի բացատրությունն ասենք՝ Մ. Ար. Կ. Կ. Կ., Հայ
ժողովրդական տաղերները, էջ 88 և հաճ.

անմիտ և անհանճար բանից յարմարանքն, այլև երկու անգամ բանբանութիւնն և մի անգամ բանմասութիւնն է անվանում (Ա. գրքի Հովելլութե), այլև բարբաբանքն (Բ. 70): Արդ, իրաւացեալն հայերի առասպելները հունական կրթությունն ստացած Խորենացու համար, իրենց ձևով և թե ավելի անիմաստ չլինեին, ավելի իմաստուն էլ չէին լինի, քան պարսից առասպելները: Նա Տորքի մասին առասպելը նույն անվաններով էլ հենց բնագործում է, ինչ որ պարսից առասպելները. Բագրատունիների ծագման մասին գրույցը (չիմար, քաջ րաւնք անոնն, իսկ Արծրունիների մասին առասպելը բարբաբանքն (Բ. 7) է կոչում: Այս ամենը նկատի աւնենալով՝ հասկանալի է, որ նա չի գտնում հայերի մեջ երգեր, որոնք պարսից առասպելների պես բանահոսի, փիռն, անհանճար (անիմաստ), անմիտ, անբան, և անհնչ չլինեին, այլ բանավոր, տախնճն իմաստավոր, մտաքի, բոհովն, պարսկ և ողորկն, մի խոսքով՝ ինչպես հունաց առասպելները, այն էլ գրված, ինչպես պարզ երևում է բերգարանն բառից:

Այսպես ուրեմն, հունական առասպելների հետ համեմատած՝ հայոց ավանդական երգերը, Վիպասանքն ու առասպելները Մ. Խորենացու աչքին՝ իրենց արվեստով շատ ցած են, շատ մոտիկ պարսկական առասպելներին: Նրա այս քննադատութիւնը պետք է իրականութեան մոտ համարել: Բայց և այնպէս մեր հին վեպը, հարկով, բոլորովին բանարկեստ չի եղել:

2. Վիպասանքի մշակումը եղել է մի ամբողջութիւն, բայց ոչ այն իմաստով, թե դու, իբրև մի զրական մշակութեան կրած երկ, ունեցել է իր ընդհանուր թեման, որով միացած լինեին երկի բոլոր մասերը սկզբից մինչև վերջը: Վիպական մեծ նյութը նրա մեջ մի հեղինակի ձեռքով չի մշակված և միացած եղել. միացումը կատարված է եղել հետզհետե ժամանակի ընթացքում, առանց մի ընդհանուր ծրագրի: Ուստի մեր այդ հին վեպը չի կազմել մի ամբողջական գեղարվեստական երկ, որի մեջ մարդիկն ու մարդկանց արարքները միմյանց հետ սերտ կապված լինեին մի ընդհանուր խնդրով ու գործողութեամբ: Արդարև, իբրև մի ընդհանուր այնպիսի թել երևան է զայն հայերի հարաբերութեանը մարերի հետ, ըստ առասպելականին՝ վիշապազների հետ, բայց և այնպէս այդ ամբողջի մեջ բազմաթիվ և բազմադան նյութերը հարած են եղել միմյանց ոչ ներքին, այլ արտաքին մի լույս կապակցութեամբ:

Ինչպէս Վեպաս Մոսորի մեջ, այնպէս և Վիպասանքի մեջ պատմվել են դասադան միջադեպեր նույն հերոսի, կամ իրար հաջորդող հերոսների կյանքից, կադմելով հաճախ առանձին վիպական ճյուղեր: Այդ ճյուղերից յարաբանչաւորն արդեն ունեցել է իր թեման, որով կազմել են մի-մի առանձին միութիւն: Դրանց մեջ վիպասանները, ինչպէս տեսանք վերևում, կարողացել են ժամանակակիցների համար կարևոր և հետաքրքիր այս կամ այն գաղափարի ու խնդրի շուրջ պարզացնել գործողութիւնը ոչ միայն պատմական և առասպելական գեղականներով, այլև կենցաղային գծերով:

3. Վիպասանքի գաղափարական հերոսները:— Թեպետ և բնագրերը չունենք, բայց և այնպէս վեպի բովանդակութեանից բովանդակ պայծառ հասկացութիւնն ենք ստանում վեպի մեջ արժեքների, իդեալների, աշխի և կերպարների մասին: Այդ արդեն տեսել ենք Մեծն Տիգրանի և

Ներվանդի, Արտաշեսի, Արամավազդի վեպերի մեջ՝ Այստեղ առանձն և հետևյալը՝ Բաժանատեղ ծները հետաքրքիր պատմվածքների մեջ ստեղծել են իրական-նույնը լինող ազնվացրած պատկերներ, որ, հարկավ, Պատմագիրն էլ իր կողմից ճարտասանորեն ավելի մշակել, գեղեցկացրել է։ Նրանք ձգտել են պատմական մանրանքներ իրենց սիրած կերպարանքը տալու։ Վեպի մեջ ամենից առաջ այդքան են ընկնում թագավորների ու զորավարի գաղափարական տիպերն, ի դեմս Տիգրանի, Արտաշեսի և Ներվանդի ու Սմբատի։ Թե այդ նկարագիրները զլխավորապես հերոշներին են, այդ պարզվում է նրանով, որ դրանք, հակառակ խորհրդացու, վերաբերում են իրապես պատմական Մեծն Տիգրանին։ Այստեղ առանում ենք, թե ինչպես վիպասանները, — ինչպես և ինքը խորհրդացին հետևելով իր ազդեցություններին, — գտել են իրենց թագավորներին և ստեղծել են կատարելատիպեր, որպիսիք կցանկանային, որ լինեին իրենց թագավորներն ու զորավարները։

Հակառակ քրիստոնեական ճգնավորական ոգուն, որով մարմինը ոչինչ էր համարվում, մեր առասպելներն և վիպասանքն մեջ, նույնիսկ հին քրիստոնյա Պատմագրի բերած բովանդակությամբ, տեսնում ենք, որ ամենից առաջ առանձին ուշադրություն է դարձրած դիցազների ֆիզիկական առաքինություններին, նրանց մարմինն և անգամ զարգարաններին։ Հերոսներն ընդհանրապես օժտված են արտաքին գեղեցկությամբ և ուժով, հաջողակ և արագ շարժումներով։ Տիգրանն իր մարմնով մի հաջանչելի գեղեցիկ է, լեռարտեղև ազդեցիկ ծայրի։ հերոսը, երեսուց գունեան և մեղուական, անձնեայ և թիկնաւէտ, ասոգորարձ և գեղեցկահոտ, քաջահասակ, ամենևին բոլոր անգամովք համահալա և ի գեղեցկութիւն աւարտեալ հասակի, առոյգ ամենայնիւ ըստ իրեարա պատշաճեալ և ուժով ոչ զոք ունելով իւր գոյք։ Մի խոսքով, նա հասակաւ և ընտելեամբ կատարյալ դիցազն է։ որ հինգ զակաւ օրինակ իմն որպէս զյուր հերձեալ զերկաթի ամուր հանգեմնէ։ Աժդոհակի երազի մեջ Տիգրանին ծնող կիներն է ձերանազգեստ, երկնազոյն ունելով զիւրեմա տեա, աչիդ, բարձրահասակ և կարմրայտ։ Տիգրանուհին է գեղեցիկին և կանայտ։ Բարոսպէտ գեղեցիկնէ։ Տիգրանին ըրջապատող-ներն ևս գեղեցիկ են, և արք ու կանայք պճնաված իրենց պատմական գույն-զգույն զգեստներով, արծաթի, ոսկի զարդարանքներով ու պատմական տկներով, Երովք ազդեցազոյնն իրեն զգեցաւորս երևէին սքանչելիք, և գեղատրքն ... առհասարակ դիցազնացեալքն¹։

Մարմին այս արժեքը երևան է գալիս ավելի կամ փակաս չափով նաև ուրիշ հերոսների վրա։ Ներվանդն է արտեայ և անդամով յաղթ։ Նրա մայրն ևս Եանձամբ հարստի և խոշորագեղ է։ Սմբատն Եայր քաջ է, և ու-

¹ Դա ինչպես պատմական Մեծն Տիգրանի իրեն և իր պատմականների նկարագիրն է, որի հիշատակը անգամ է վեպի մեջ։ Աբրահամից՝ ունայն շքով և պերճա-թեամբ արձանէր աւ ժողովրդեան որ ապա իւր Թագաւորս մեծագործի։ մեծաբեալ, մեծաւ հոյն լաստաւ, աչ երբեք երևէր ի հրապարակի, եթէ ոչ մեծաշուք աղաւաւ, զգեցեալ պատմական նկարէն, գաւազան, ի սպիտակէ և ի կարմրոյ (Դիւն Դաւ. 28, 29), և վերաբ-կա ի ձերանայ խորշխոյշան։ զյուրն պակեալ քարձը տառեղազորք խուրճաւ Գարթամ-ցած իշխաններն ևս անշուշտ հետեւում էին իրենց թագաւորի օրինակին։

նէր հասակ անգամոց՝ համեմատ քաջութեանն ... զեղեցկութեան արեօք վայելացեալ ... ի վերայ շոյտ անձին և մարմնոյ՝ զգոյշ յամենայնի, և առկութիւն յաջողութեանց ունէր ի մարտս առաւել քան զամենայն ոք։ Եթէ առաջեկներին դիմենք, տայտեղ էլ Հայկը ներկայանում է որպէս մի հաղթանակով մարմնով վիթխարի հսկա, բայց ոչ անհեղեղ, ինչպէս ուրիշները։ Եւ զգեցողական և անձնեայ, քաջադանգուար, խառնակ և հաստաբաղուն, կորովածիզ և հաստադեղն և արագաշարժ մեծ դիւցազն (սեփեզ ի դիւցազնացոյց)։ Նրա մարդկին ևս զկորովիք էին յաղեղն և ի սուսերն։ Արան զեղեցիկ էլ է, արայկա որ այս մակդիրն անբաժան է նրա անունին, բայց միտնդամայն քաջամարտիկ է նա։ Անդեղյա Տուրքը արայա է, վիթխարի հասակով և ուժով, պոպոկատի նման պինդ մարմնով։ Նրա ուղեղութեանը, ինչպէս տեսնենք, «անզեղեայ» բառի սխալ բացատրութեան հետեւնեւով է ծագած։ Անանկտն ուժի և զեղեցկութեան նույն գողափորն ենք գտնում նաև խառնաշաղ պատանյակ Քաջն Վահագնի մեջ իր հրեղեն մագերով և արեգակնափայլ աչքերով։

Հերոսները մարմնի զեղեցկութեան և ուժի հետ ունեն նաև հոգեկան ուժ ու զեղեցկութուն։ Նրանք արի ու քաջ են, հաղթող, իմաստուն, զգաստ ու պերճախոս, թաղավորները նաև արդարադատ ու շինարար։ Արութեան ու քաջութեան, իմաստութեան ու զգաստութեան և պերճախոսութեան, թագավորի համբար նաև արդարադատութեան,— ահա առաքինութեան այնպիսի մի ըմբանում, որ շատ մոտենում է հին հունական վիպական ըմբռնումին։

Պատմագիրը կամ իր դրամը աղբյուրը, որ սենցեւ է Տիգրանի համար (անս ՎՄ. Խաքնայի, պարագրաֆ 8), տեղւոյս քերթադարձ զարգացրել է այս հատկութեանները, հետեւելով հունական հետաքրքրութեանը։ Բայց ընդհանրով հանդէս այդ պէտք է կրկնել, որ Տիգրանի պատմութեանը զինքնա չէ, այլ ասելով է մագդաղական երգերից։ Ինչպէս էլ աստիճան դրողը, բարգաւաւուն ի բանոյ զերթոյն, այդ պատմութեանը Վիտայից հանաններով մշակել է։— Ինչպէս է իրեք,— նրա արած պատմութեանը երեւոյթական ու պատմաժողովարան չէ։ Այսպէս և ինչպէս էլ նա, կամ Խաքնային, Տիգրանի մարմնի զեղեցկութեանը, զարմութեան ու արագութեանը և հոգեկան հատկութեանները զգին արեւոյն, ինչպէս պատմելով էր շեքերդյանի սահմանը, կուրելի չէ առել, թէ այդ զգիւթի գծերը շեքաժողովարան լինեն, և այ թէ մեծ մասամբ բուն աղբյուրից՝ մագդաղական երգից առնված։ Շեքերդյան է բուն արագութեան և զէլ ու զարեւացի, առնված է Վիտայից դրոյ մեջ (էջ 613) ամենից առաջ, և այ թէ կատարածական մի բան։ Այսպէս և հետ ներքաղանի համար իրեն օրինակ դրված Վիտայի ներքաղանի մեջ (էջ 617 և հա. մ. մա. մը.) հեղինակը զգում է Վիտայի մարգարէի մարմնի զեղեցկութեանը, զարմութեանը և արագութեանը և այն, բայց նա այդ ամենին իրենից չի առնվում, այլ Առաքնաւորից է առնում, կամ Վիտայի կյանցի այս կամ այն զիպոլեցից հանում։ Բայց արցուն զմտայն է այդ ամենը. ալ մի մակդիր, ալ մի կենդանի նկարագիր. իսկ, ընդհանրապէս, Տիգրանի և մյուս հայկական վիպական հերոսների զգիւթը արցուն կենդանի է, վառ ու զուճավոր, և մակդիրները կարուստ։ Այս մեծ սարքերութեան առաջացել է ոչ միայն հեղինակները շեքերի տարբերութեանից, այլ ավելի այն անգամայնից, որ Տիգրանի ներքաղանի հիմքը, զգիւթն ու աղբյուրը եղել է Վիպականը. մագդաղականի մեջ արցուն պատարագում է ներքաղանի հեղինակին իր մակդիրների ու նկարագիրների մի մասը։

Այդ հատկութեանների վիպականութեանը հաստատվում է մեր դիցաբանութեամբ, որ մեզ հայտնի է ուրիշ աղբյուրներից, Կարենի չէ ենթադրել,

Թե այս վերջինների քրիստոնյա հեղինակներն այդ համակությունները վերագրած լինեն առավաններին, քանի որ նրանք առավանների այդ համակությունները մեջ են բերում այն ժամանակ, երբ առավանների դատ ու անտար լինելն են սւգում ցւայց տալ: Ազգութանգեղոսի մեջ Վանազն առեռու մակղիրն է՝ քաջն, Քաջն Վանազն, որից քաջություն էին հայցում: Արությունն է ամենամեծ աստուծու: առավանների հայր և երկնքի ու երկրի ստեղծող Արամազդի հասկանիշը: Եւրին մակղիրն էլ նրա անվան կից է՝ «Արին Արամազդ»: Նրա արությունն իր գործունեության նպատակ ունի հասարակաց բարորությունը, երկրի շինությունը: Արի Արամազդն իր արությամբ «լիություն ու պարարտությունն է շնորհում աշխարհին: Այսպես և վեպի մեջ երգվել է. Թե Տիգրանն իր արությամբ հարստացրել է երկիրը: «Արանց կայեալ զլուխ և արութիւն ցուցեալ՝ զազղա մեր բարձրացոյց... Մթերս ոսկւոյ և արծաթոյ և զարանց պատառականաց և զգետուց և պէս պէս գունից և անխուսձոց... բազմացոյց»¹: Վեպի մեջ ևս արության հետեւումն այն է լինում, որ աշխարհը շին է թուում: Բազմապատկան և շինաւթեան բերող՝ իւզով և մեղու գնասակա ամենեկուն պարարեալ, ասում է երգիչը, զբանով արտահայտելով նաև իր խաղաղասեր ու շինարար ոգին: Նույն շինարարությունը տեսնում ենք նաև Նովմադի, Արտաշեսի ու Սանաարուկի, ալլի Հայկի ու Շամիրամի համար, որոնք քաղաքներ կամ շտապակներն ու ավաններ են հիմնում, անառոններ անկում, ինչպես Նուայն անում են և մեր նոր վեպի մեջ: Արտաշեսը երկիրը բազմամարդացնում է եկեամուսա բազում անկումով ազգա և ընտելեցուցանելով ի լսիկն և ի հովիտս և ի դառառ: Նա հող է տանում երկրագործության և արվեստների համար: «Ախ ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ոչ լինային և ոչ դաշտային, յազազս շինութեան երկրիս:— Անա ամենամեծն գովեստը, որ տրվում է մի թագավորի:

Արության ու քաջության հետ հավասար շնչավում է և զգաստու-

¹ Ստաֆի մեր, եռնազն և որի է նկարագրվում Մեծն Տիգրանը. մի մարդ, որ մոտ 45 տարեկան հասակում թագավորում է, քան և հինգ տարի շաքունակ քաջության և աշխարհակալության գործերով զբաղվում. մոտ յոթանասուն երկու տարեկան հասակում (60—65 թ. մ. թ. ա.) ձեռք կռում, անցնում է բզմանային աշխարհի Հայոց կաշի գերբառաւոր ի զէն վտան հայրենի աշխարհին: զբում է բզմանգակ աշխարհն ի շինաւթեանութիւն, կոթում գոտեղազման միայն ընդ զբայն: Բամանում է այդ գործը վաշտերի ու գնդերի և կրթում է հարձ ժամանակում, որովհետև հարձ է հարձ հասումս օրինիս, որպեսզի կարողանա զարմանը համայնքի լեզեններին դեմ կռվել: Անա բարութիւն ցայց ուսուց թագավորը:

² Այդ էլ, երեկ, մի պատմական հիշգրություն է Մեծն Տիգրանի նկատ Նովմադան Ասորիցի համար ասում է պատմությունը: «Ազի ժո Ասորաց աշխարհն դամ շարեցառան (Ապոլիան. 17), Թէպէս ընդ ասոր իշխանու՝ վայելեցին խաղաղութիւն, հանգիստ և աւարտ բարենշանու: Եթե ասոր աշխարհն տաղես բարգաւառում էր նրա սրով, որովհետև ամեն ինչ հայ երկիրը: Նովմադան ազգերի ավերակ չեցած և փութթամացած՝ անշուշտ անգործ էր վայելում Հայաստանը, որի շինության համար՝ հեղինակը մեծապէս Տիգրանը հրահրում և հայեներ էր գողթեցնում: Եվ որքան զեղեցիկ ու բուն վիզակն անով է արտահայտված այդ շինությունն ու լիությունը: Եւրով և մեղու գնումնայն հասակ պարարեալ, որ անշուշտ ժողովրդական երգի խոսքերն են: Թագ ու մեղքը մինչև այժմ մեր ժողովրդի մեջ վիզակն անհրաժեշտ է:

թյաւնն ու խոհեմությունը, Ինչքան էլ հանսորական արվեստով էր պահանջվում նոյնքան, բայց այդ գիծն ևս վիպական պետք է համարել: Միեւնի Սնանկոս դիրքունէին, ինչպես Ն-րդ գարի քրիստոնյա մտտենագրից իմանում ենք, համարվել է ժամյր ամենայն զգաստութեանց, բորերար ամենայն մարդկային բնութեան, երով կեայ և զկենդանութիւն կրէ երկիրս Հայոց, որ է փառք ազգիս մերոյ և կեցսւցիչ: Նրանից խնամակալությունն են խնդրել աշխարհի համար: Ուստի բնական է, որ մեր վեպի մեջ Տիգրանը ներկայանար պարկեշտն ի կերակուրս և յըմպելիս և ի խաթառնութիւնս օրինաւոր: զորմէ ասէին ի հինսն Քրդ որք փանդամքն երգէին՝ լինել սմա և ի ցտնկութիւնս մարմնոյ չափաւոր, մեծիմաստ և պերճաբան և յամենայն որ ինչ մարդկութեան՝ պիտանիս: Անշուշտ, Խորենացու հարտառանկան մշակումը կա այստեղ. բայց թե այս զովքը հիմնված է վեպի վրա, այդ երեւում է նրանից, որ Խորենացին դրա համար իրեւ աղբյուր հիշում է երգիչներին: Այս զովքին պիտի ավելացնել և ախ, որ արդարադատ և հավասար աչքով է նայում նա ամենքին. «Ո՛յ ընդ լաւագոյնսն կանգայր, և ո՛չ զնուաւորսն արժամաքնէր, այլ ամենեցուն հասարակաց հարելն պիտամօղն ի վերայ տարածանել զզգեստս: Ահա գուշաններ և Մ. Խորենացու գաղափարականացումը, և ցանկիւ թաղովորը՝ Վիպական Տիգրանը ոչ լավագոյններին, այսինքն բարձր դասի ազնվականներին է նախանձում և ոչ նվաւորներին, ցածր դասի խեղճ ամիկներին՝ արժամարհում, այլ ամենքին խնամում է: Այս հատվածը միակն է, որի մեջ հիշվում են բնութասիրելը, ինչպես կոչվել են մեզումս քառապետը՝ զասի մարդիկը, Ձեռագիրների մի խմբի մեջ այդ բնութաստանն բառի փոխանակ է զբարարական: Հիշվում են և ուրիշ երկուսը հասարակ դասից՝ Արտաշեսի ստրկաւոր որդի Գիսակը և Նովանդի բնութանի Տուրը: Այս երկուսն էլ, սակայն, ոչ թե իրենց դասակարգն են ներկայացնում, այլ հավասարութեամբ ծառայում են բնիկ Արտաշեսին: Գիսակը մարտի մեջ իրեն զսեւելով՝ մահից ազատում է Արտաշեսին. իսկ Տուրը Նովանդի տնից զստեթյուն է առնում Սմբատին, որի համար և սպանվում է ինքը: Արտաշեսն այդ երկուսի զորմերին էլ ազնվական է դարձնում, բոնեւոր ազգ, կոչում է Գիսակայան և Տուրանի: Այդ էլ Ֆեոդալական ժամանակի բարաւոյաությունն է:

4. ՈՅՈՒ ՆՈՒՄԱՆՎԱՐՔ: — Վիպասանքի մեջ պատմվածքը շատ կենդանի է, արժամախոսութեանն երով հարուստ: Նկարագիրները շատ գունազեղ են, առանձնապես Տիգրանի զովեսար պեր է, վառ գոյններով ու մակդիրներով լի: Ժողովրդական երգի մեջ արդեն մասամբ պատրաստ եղել են այդ մակդիրները. ինչպես, օրինակ, հայկազն բազմաբնութաւոր, որ ոչ թե կյուրոսի ժամանակակից Տիգրանին է վերաբերում, այլ միայն պատմական Մեծն Տիգրանին: Բայց և այնպէս՝ ինչքան էլ ըզմանդակութեամբ, զուգե, սակավ բացառութեամբ, Վիպասանքից է ծագում, նկարագիրները ոչ բոլորը երգից են: Պատմագիրն, անշուշտ, իր սիրած նարտասանական ոճով էլ ծաղկեցրել է ամենը: Այնպես որ դրանցով ճիշտ հասկացութեան չենք կորուրդ կազմել Վիպասանքի ոճի մասին. դրա համար պետք է առանձնապես նկատի ունենալ այն փոքրիկ հատվածները, որ բառացի մեջ են բերված առասպելներից ու Վիպասանքից, Դրանցից մեկն է Վահագնի երգը, որ

խորին հնաւթյանից է գալիս եւ, թեպետ ուշ ժամանակում գրի առնված, ոչ միայն իր բովանդակութեամբ, այլև նաև վերում է նախնական բանաստեղծութեան գրողը: Երգիչը Վերջապագոյի ծնունդը նկարագրում է դանդաղ, ասանց շտապելու: Նա նյութը զարգացնել չգիտեւ. զարգացման անգը բռնում են պարզապես կրկնութիւնները, որ՝ ասանց ձանձրալի լինելու վտիճի՝ անում է նաւ: Բայց արդեն երեսւմ է որոշ արվեստ: Բանաստեղծը պիտե գեղեցիկ մակդիրների գործածութիւնը, ինչպե՜ս՝ ծոցն ծիրանի, որ մինչև մեր օրերն էլ գտնում ենք հնաւթյանից եկող մի ժողովրդական աղութի մեջ՝ «երկինքն ծով ծիրանի»: Կարմրիկ եղեգնիկ, խաբսեալ պատանեկիկ, հուր հեր, բոց մորուս: Սպա՜ բանաստեղծը գիտե մի ուրիշ եղանակ եւ. նա, ինչպես հասուն կ'մեր ժողովրդական երգին, բանեցնում է նվազական-փաղաքշական բառեր, օրինակ՝ կարմրիկ, եղեգնիկ, պատանեկիկ, աչկունք (= աչկիներ), Նա գործ է տեսնում հանգիստութիւն, որ նույնպես հասուն է ժողովրդական երգին, օրինակ՝ «երկնք երկնք, երկնք երկնք, ծովն ծիրանի, հուր հեր, աչկունք-տրեգունութիւն: Եվ վերջապես այստեղ կրկնութիւնների մեջ գտնւում ենք դուգահեռականութիւն ասածը, օրինակ՝

Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծոցն ծիրանի:

Այդպես նաև նաեւայր.

Նա հուր հեր ունէր,
Բոց ունէր մորուս:

Այս միեւնոյն արվեստը երևում է և Արտաշեսի վեպից ըստ երևույթին բառացի բերված հասկածների մեջ: Օրինակ՝ մակդիրներ, որոնց գործածութիւնը բոլոր սկզբնական բանաստեղծութիւնների եղանակներից մեկն է— «այր քոջ» (Արտաշես), քոջ ազգին (Աւանոց), քոջազգի դասերս (Աւանոց), ազգաց քոջոց, քոջն Արտաշէս, քոջազգազգի կոյս օրիորդ, քոք աղքաթս, Սեւան գեղեցիկ, ոսկեօղ շիկափոկ պարան, արծուի սրտքն, փափուկ օրիորդ. տեղ ոսկի: Զուգահեռականութիւնները՝

Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն:

Կամ հետեւյալները՝

«Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիւի,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սթիւնկանն»:

«Եթէ դու յորս հեծցիս
յԱզատն ի վեր ի Մասիս,
Զքեզ կալցին քոջք, տարցին՝
յԱզատն ի վեր ի Մասիս»:

Բացի այդ՝ վիպասանը գիտե Սաթենիկին փախցնելու պատմվածքի մեջ իրաքին տալ բովանդակութեան պահանջած ձևը — կարող է արագութիւն ու լարվածութիւն, որ առաջանում է խոսքերը զերբայով կազմելուց:

Թիպեա և բառացի համարման հասկանալիներէ ընագործ նշառութեան համար ևս ապահով չենք, բայց և այնպէս հնարավոր է լինում որոշել մեր հին վեպի մեջ գործածման չափը: Կատարյալ երաժշտականութեան չափն ալք երգերը, բայց ունեն որոշ թիվ՝ Այդանդ գտնուեմ ենք արձակին շատ մոտիկ՝ ազատ ոտանավորի մի ձևը, պարզոտանյալ խառն ոտանավորը, որ հառուկ է մեր մի շարք հին հոգեւոր երգերին և մի քանի ժողովրդական վիպական երգերին, ինչպէս և Վեպան Մաքրին, վերջինիս թե երգման և թե պատմման մասերի մեջ: Տողերի մեջ վանկերի թվի նախութեան անհրաժեշտ չէ: Բայց Վահագնի երգի սեղ տառնաձևային գոհում ենք տողերի սրտ շափակցութեան, ինչպէս լինում է բարդառնյալ խառն ոտանավորների մեջ: Առաջին երկու աղբիւր, որոնք իրար զուգահեռական են, կըսվում են Ծ-րդ և Ծ-րդ տողերի հետ, որոնք նախնային իրար զուգահեռական են: Իսկ Ծ-րդ ու Ժ-րդ տողերը, որոնք մի ժողովրդական են կոչվում, կըսվում են Դ-րդ և Ժ-րդ տողերի հետ, որոնք նախնային մի ժողովրդական են կոչվում: Վերջիններս տողի ապա թէ՛ բառերը երգին չեն, որով իրար հանդիպում են համակշիռ կերպով՝ հետևյալ երկու աղբիւր.

Շնա հուր հեր ունէր,
Բոց ունէր մօրուսն:

Եվ վերջապէս՝ վերջին տողն ինքն իր մեջ իր հանգական հանգիւսութեամբ կազմում է մի տառնաձև միութեան.

— Շնա աչկումք էին արեգակումք:

Մյուս կտորները, հարկավ, այսպիսի հորինվածք չունեն ու լոկ պարզապէս խառն ոտանավորներ են տողերի ազատ դասավորութեամբ:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Շ Ր Զ Ա Ն

ԵԿԵՂԵՑԱՒԱՐԱՔԱՎԱՆ ՄԱՔԱՌՄԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՔԱՌՈՒՄ ՊԵՐՍՈՆԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՆԱԿԱՆ ԶԳՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

1. Ազնվականություն և եկեղեցականություն. — Հայոց գրականութեանը Զ-րդ դարի վերջերից մտնում է իր գործացման երկրորդ շրջանը: Ստեղծվում է նոր վիպական բանահյուսութեան իրրեւ արտահայտութեան Զ-րդ և Ժ-րդ դարերի պատմական իրականութեան: Զ-րդ դարի սկիզբներին արդեն առաջ է գալիս հայերեն գիրն ու գրավոր գործութեանը, և այս ոչ թե ազնվական, այլ եկեղեցական դասի ձեռով: Ազնվականներն ալք ժամանակ առհասարակ իրենց բարքերով դեռ շատ կապիտ էին, հետամուտ միայն անձնական շահամոլական խնդիրների, ուսման ոչ մի նշանակութեան չավուր: Նրանք ապրում էին առանց զգալու պի ու պրականութեան կարիքը, և եթե երբեք գրավոր պայմանի կամ կալածադրի պատճ ունեին, ալք կատարել էին առիթ ալլազգի գրերով ու լեզուներով: Նրանց բավա-

1 Տես՝ Մ. Ա. և Ղ. Ե. Ե. Հայոց լեզվի առաջադասութեան, Երևան, 1983, էջ 386—387:

բարում էր իրենց ավանդական բանահյուսությունը, բերանացի վեպերն ու պատմական երգերը և իրենց ուրախութիւնն ու կոծի բանաստեղծութիւնը: Դա նաև շինականութեան հոգեւոր սնունդն էր: Փ. Բուզանզը (Ք. 13) գրում է, թե քիսաւանդանէ բաղմութիւն մարդկան ժողովրդաց նախարարացն և կառ վինականութեանն: Եղեգեթեալ մոյէին . . . ի հնութիւն հեթանոսութեանց, քովորութեանց, բարբարոս խաթաղած միտս ունելով: Եւ գիւրեանց կրգս առասպելաց, զվիպասանութեանն սիրեցեալք ի փոյթ կրթութեանցն, և նմին հաւատացեալք, և ի նոյն հանապազորդեալք:»

Ազնվականութեան այդ ավանդական բանահյուսութիւնը պիտի կազմեր հիմունք մեր զբաւոյր բանաստեղծութեան, որի մեջ պիտի ցոյլար հայ ազգի հատուկ հանձարը, եթե միայն մեր գրականութիւնը զբերի գոյատեգ հետո շարունակիւր իր սեփական ճանապարհով ընթանալ: Բայց մեր ազնվականութիւնը, գրի միջոցով չմշակեց իր բանաստեղծութեան տեսակները: Նրա բանահյուսութիւնը տեղի տվաւ եկեղեցական գրականութեան առաջ: Եվ այսպէս էլ չէր կարող լինել, զաւանթաւութիւն էր: Եթե նուէրիսկ հին մեծ մշակութիւն ունեցող ազգերի մեջ, ինչպէս էին հույներն ու հռոմէացիք: Նրանց հարուստ գրականութեանը ոչ միայն ետ մղվեց թրիստոնեական գրականութեան առաջ, այլև մինչև անգամ հետզհետեւ մոռացութեան տըրվեց, ապա հայոց նախնական բանահյուսութիւնը չէր կարող գիմանալ նոր հոսանքի շարքի:

Թրիստոնեութիւնը հայերի մեջ մտել էր այն երկարատև խաղաղութեան միջոցին, որ Յ-րդ դարի վերջերում հաստատվել էր պարսկեաների ու հռոմայեցիներին միջև: Դրա հետևանքով հայերն սկսել էին ավելի սերտ հարաբերութիւններ հաղովելու հուստուրապես իրենցից ավելի բարձր թրիստոնեա հարևանների — հույների հետ: Բայց այդ կապը սկզբում դեռ ավելի քաղաքական էր, քան կուլտուրական: Երկարամյա պատերազմները 340-ական թվականներից սկսած՝ ազգելք էին եղել թրիստոնեական ուսմանը տարածվելու հայ ժողովրդի մեջ: Հայերը պաշտոնապես և տնտեսով միայն թրիստոնե էին դարձած, բայց շատ կտրմերում իշխում էր դեռ թաւնը կառաքանութիւնը: Ապա՝ հոգևորականներն իրենք էլ դեռ ընդհանրապես հափազանց աղետ էին և քիչ էին մասհոգված Հայաստանում թրիստոնեութիւնն իրապես հաստատելու գործով: Բայց և այնպէս այդ նոր հարուստ դարը, եկեղեցականութիւնը, համեմատաբար ավելի զարգացած էր և իր անձնական փառասիրական ձգտումներից հետո՝ հետզհետեւ ավելի էր հոգում եկեղեցու համար: Ուստի ավելի նա կարիք զգաց դրի ու գրականութեան, քան թե ազնվականութեանը: Եր չկարողացաւ նուէրիսկ ազգային անկախութիւնը պահպանել, Հայերեն լեզվով գրականութիւնն ամենից առաջ եկեղեցուն էր հարկավոր թարգմանական և հունական ոտնձգութիւնների դեմ աջողութիւնը պայքարելու համար:

2. Միտքայ Մաշտոց և Խոյեքեմ գրքի գլուխն ու գրեկամութեամբ օրհարը: — Առաջին մարդը, որ հոգացել է հայերեն գրի ու գրականութեան կամ, ինչպէս այն ժամանակ ասում էին, դպրութեան մասին, է Միտքայ Մաշտոցը: Նա հիմք է դրել հայ գրականութեան և հայերեն լեզվով դպրոցի ժամանակի տնտեսական, դատակարարային և քաղաքական պայմաններն

էին առաջ բերել զքի ու զբաժանութեան անհրաժեշտութիւնը: Մաշտոցն, իհարկեւ, իր ժամանակի ծնունդ էր և բնականաբար նա մենակ չի եղել իր գործունեութեան մեջ: Նրա հետ եղել են և ուրիշները, բայց նա առաջինն է եղել այդ լուսավորական գործի մեջ, և ժամանակակիցներն էլ առաջին պատիվը նրան են տալիս: Բարեբախտաբար մենք առեւտրային տեղեկութիւնները ունենք այս մեծ գործի մասին: Մաշտոցի կենսագրութիւնը գրել է նրա աշակերտ և գործակից Կորյուն վարդապետը 443 և 451 թվականներին միջեւ:

Կորյունը Մաշտոցի կյանքի ընթացքը բաժանում է երկու շրջանի — աշխարհական և կրօնավորական: Աշխարհական Մաշտոցի մասին նա քիչ բան է պատմում, բայց այդ քիչով էլ պարզվում է նրա դեմքը: Մաշտոցը Տարոն գավառի Հասցեկաց գյուղից էր, Վարդան անունով մի մարդու որդին: Մանկական հասակում նա կրթված էր հելլենական դպրութեամբ:

Ինչպես հայտնի է, Մաշտոցի օրով 387 թ. Հայաստանը բաժանվում է Լերկա մասի, արևմտյանը հռոմէականների կամ, ինչպես հայերը գրում են, հույների գերիշխանութեան տակ, արևելյանը՝ պարսկաների: Հռոմէացիները շուտով վերջացնում են իրենց ենթակա մասի հայկական իշխանութիւնը և երկիրը կառավարում են առանձին կուսակալների ձեռով. իսկ արևելյան մասում դեռ մնում էր հայոց թագավորութիւնը՝ արքայից արքայի գերիշխանութեան ներքո: Մաշտոցը թողնում է Տարոնը և անցնում է Մեծ Հայաստանի Արշակունի թագավորների մայրաքաղաքը՝ Վաղարշապատ: Նա, անշուշտ իր պաշտօնատեղեւայն համար, կարգվում է պաշտոնյա արքունի ղեկմանում՝ Վրինկ սպասուսը արքայատուր հրամանացն առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց՝ Ասաւանայ ուրումն:

Որ Կորյունը թագավորի տնուն չէ տալիս, այլ միայն ժամանակ հազարապետի անուն է հիշատակում, զբանից հետեցնում են¹, թե Վաղարշան այդ միջոցին լուսեր իր սեփական թագավորը, այլ պարսից Վերին իշխանութեան ներքո էր կառավարվում էր արքայից արքայի անունով բնիկ հազարապետի ձեռով: Այդ տեղեկանքն էլ Մաշտոցը գտնում է արքայի ավան հրամանների քաղաքագործ Վաղարշապետի տարջանական դիմանում, իսկ այդ արքան չէր կարող լինել արքայից արքան, օրի վերին իշխանութեան տակ էր Հայաստանը, այլ միայն հայոց թագավորը, որ նստում էր Վաղարշապատում: Հազարապետը հայոց Արշակունի թագավորների օրով երկրի բարձրագույն առաջին պաշտան էր², նրա ձեռով էին թագավորները կառավարում երկրի ներքին քաղաքական գործերը: Մաշտոցը ղեկմանում աշխատել է հազարապետի ձեռի տակ, գուցե և այդ պատ-

¹ Կորյունը, Վաղարշ Մաշտոցի ցեղիցը Անադոլիայի այլ քրիստոնեական թագավորների, առաջադրելով և նախաձեռնելով, ի ձեռն գրեցի գրք Մ. Արեւշապետի նկատմ. 1861. ՅՈՒ ԱՂ Զ. Ե. Ե. Ե. Անադոլոսի: ՅՈՒ Նախ Անադոլոսի գրքից: Մաշտոցի նկատմ. 1861. ՅՈՒ ԱՂ 47—51 և ՅՈՒ ԱՂ 41—51. Մ. Արեւշապետի նպատեւ Վաղարշ Մաշտոց և հայ գրի ու գրականութեան ակնարկը:

² Dr. Jos. Marouart, Ober das armenische Alphabet in Verbindung mit der Biographie des hl. Meschotz. Տղապար. Վաղարշի անագրաֆայ, Վրինկ, 1911, ՅՈՒ 2, 11, 1918, ՅՈՒ 1, 4, 11, 12 (գեղմաներենի հետ զույգ նախ հայերեն թագավորութեանը): Մարկուարտի այս աշխատութիւնը հիշում եմ նաև միայն Վաղարշապատ անունով:

³ Արշակ թագավորի մասին պատմելիս Փ. Ռյաչանցը (Ք. զոյ. Ք-րդ դարի) գրում է. «Եւ ի կրքն գործակալութեանն, հազարապետութեանն, աշխարհապետն խնամակալութեանն, աշխարհապետն աշխարհապետն ղեկնանութեանն, շինականութեանն ուղղն Գնահեացն: Ներքորդ տեղից բնում և արքայապետութիւնը — Մամիկոնյան տոհմը:

հասով Զորայնքը հաղաբարեպետի տնունն է ավեր Ղազար Փարպեցիին գրում է Մայրաքի համար. «Ջիկնուսքեալ էլ զուսն Հայաց արքային Զառազայ, կարգեալ յերամ մասննապէս արքունի դպրոցն»։ Սեւն պատմագիրը պատմում է, թե Պարսից Շահաւն արքան այս Զառազով Թագավորին կանչելով իր մաս՝ գահընկեց է տնում և նրա փախուսի թագավորեցնում է նրա եղբայր Վստաշապուհին։

Մաշտոցը ծառայելով արքունի դիվանում՝ տեղակ և հմուտ է դասնում և աշխարհական կարգերինն, այսինքն է՝ ինչ որ երկրի ներքին կառավարութեանը, հաղաբարեպետութեանն է վերաբերում։ Միաժամանակ նա և զինվորական էր, «ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զորականացն»։ — զրում է Կորյունը։

Գիտե՞ր արդյոք Մաշտոցը, բացի հաշտարենից, նաև տառերեն ու պարսկերեն։ Այս մասին չի հիշատակում Կորյունը։ Ղ. Փարպեցիին գրում է, թե Մաշտոցը արքունի դպիր է կարգվում, «վասն զի տառի և յոյն գրով վճարէին յայնժամ զգործ թագաւորացն Հայոց՝ արքունի դպիրքն, զվճարոցն և զհրովարտակացն»։ Հայաստանի՝ թաժանումից հետո հունարենի գործածութեանն Արեւելյան Հայաստանում պակասած էր. պաշտոնական հարաբերութեանը հերազույն իշխանութեան հետ պարսկերեն լեզվով էին վարույս։ Բացի պարսկերենից՝ իրանում ընդունված էր նաև տառերենն՝ արձանագրութեանը և համար։ Մաշտոցը չէր կորսել Վազարշապատում թագավորի դիվանում ծարրաւղար լինել և այդ լեզուները յիմանալ, իսկ եթե չգիտեիր՝ չսովորեր։

Այստեղ, Վազարշապատում նա ավելի ևս ընդարձակում է իր ուսումը՝ պարսկերով կրոնական գրքերի ընթերցանութեամբ։ Եվ այդպես «ամեն պատրաստութեամբ զարդարելով իրեն՝ ծառայում էր իշխաններին»։ — զրում է Կորյունը։ Թե նա թնչպիսի ծագում է ունեցել, երբ է ծնվել, երբ է ծառայության մտել արքունի դիվանը և ջանք տարի է մնացել իր պաշտոնի մեջ, այդ մասին տեղեկութիւն չի տալիս կենսագիրը։ Նա ծառայութեանը թողնում է 394 թ. և դառնում է կրոնավոր, «մերկանալով իրաւանկիր ցանկութեանները»։ — զրում է Կորյունը։ Այս անկարկից, ինչպես և այն հանգամանքից, որ նա շատ երիտասարդ հասակում արժանացել է արքունի ծարրաւղար դատնալու և եղել է զինվորական, այն էլ ոչ սոսկական զինվոր, պետք է կարծել, որ նա ծագումով ազնվական է եղել և ոչ ժողովրդի «տառերին խովերից», ինչպես ասանց որևէ հիմք գրեցին վերջերս։

Սկզբում նա մասնում է միայնակեցական կարգի մեջ։ Քրիստոնյաների մեջ Արեւելքում — Սղիւղատոսում, Ասորիքում, Պաղեստինում և այլն, Յորդանոսից արդեն հետզհետե ավելի զարգանում էր կրոնավորական կյանքը, առանձնապես մենակեցութեանը։ Մարդիկ, որոնց թվում և շատ նշանավորները, մենտնում էին անապատներում ու լեռներում, կամ մարգկանց բնակութեանից զուրս առնանքին տեղերում, և հզունում էին, այսինքն իրենց ենթարկում էին զանազան նեղութեանների, մերև ազդելով կրոնական վարժարի ընթերցանութեանից՝ այդ ընդհանրացած ողով տարվում է և Մաշտոցը «ոչ սակավ ժամանակներ»։ — զրում է Կորյունը և մանրամասն նկարագրում է նրա ճգնաթիւնը։ Բայց նա մենակ չի մնում. ճգնաթիւնն ամենակ նա պահում էր աշակերտներ։ Հետագայում ևս նա իր աշակերտ-

Ներքի հետ իրեն մեկ-մեկ նվիրում էր ճգնաթյան, նրանց հետ գնում, մահում էր ըստարարել: Բայց այդ ժամանակ ևս, երբ նրան կանչում էին արև է դործի համար, նա խսկույն հզնաբանից իջնում, օգնում էր կանչող-ներին՝ ինչով որ կարող էր: Նա իր ճգնաթյամբ մեծ հաշկ է վայելում: Վժռաթական և հաճոյ լինէր Աստուծոյ և մարդկանց, — գրում է Կորյունը: Թե սրտեղ է եղել նրա ճգնաթյան վայրը. այդ մասին լուռ է կենսագիրը: Բայց պատմութեի ընթացքից երևում է, որ Մաշտոցի մենաբանը գտնվել է Գողթնի սահմաններին մոտիկ մի բարձր տեղում: Ավանդությամբ դա եղել է Գողթնին կից Սրնջ-կ գավառում, այնտեղ. ուր կար. գուցե և այժմ կա, Մեքրուզմանք կամ Մեսրոպուանիս, Մարավանիս գյուղը:

Մաշտոցի նման անձը չէր կարող մինչև վերջն առանձնացած ճգնավոր մնալ. Թեկուղ մի ժամի աշակերտների հետ: Նա աշխարհի մարդ էր, ծառայած մարդ, աշխարհական ու ղինվորական կարգերին հմուտ. ինչքան էլ «մերկանում է իրենից իշխանակիր զանկությունները», չի կարծում աշխարհից և անգործության չի մատնում իրեն: Ի՞նչ էր նրա գործունեությունն իր կյանքի այս երկրորդ շրջանի սկզբում:

Արդարև, հայերը մի դար առաջ զաշտոնապետ քրիստոնյա էին դարձել, բայց, ինչպես առկից վերևում, միայն անունով էին քրիստոնյա. առանձն քրիստոնեության անունը, — գրում է Փ. Բուզանդը (Փ. 13): Ուստի Մաշտոցն իր հզնաբանից ելնելով՝ սկսում է պարագիւլ բռնաբերել զործով, այսինքն քրիստոնեություն է ըստգում: Նա իր աշակերտների հետ գնում, իջնում է Գողթն գավառը: Որովհետև արդեն հաշակված էր նրա անունը, նա լավ ընդունելություն է գտնում տեղի իշխանից և նրա օգնությամբ տեղացիներին քրիստոնյա է դարձնում: Եթեքն ամենքին հայրենական ավանդություններից և սատանայական դիվաղաշտ ծառայություններից, — գրում է Կորյունը: Բայց Մաշտոցն այնքան միամիտ չէր, որ կարձեղ, Թե գողթնցիք իսկապես քրիստոնյա դարձան, ինչպես ինքը կցանկանար: Անշուշտ նրանք էլ միայն քրիստոնեության անուն առանձն: Հեթանոսությունն իր առաջնությունով ու վեպերով Մաշտոցից հետո պես երկար դարեր ապրեց Գողթնում: Եվ Գողթնը մենակ չէր: Երբ գողթնցիք քրիստոնյա դարձան, այնտեղից ղդները գնադան կերպարանքներով փախան ընկան Մարաց կողմերը, — գրում է Կորյունը: Այդ նշանակում է, որ քրմերը հալածվելով, իրենց կուռքերն առել, փախել, ապաստանել են Մաշտոց կողմերում, որ է՝ Մասիսից բանած Արաքսի երկու կողմում մինչև Նախիջևան և Ջուղա, մինչև Գողթն գավառի սահմանները:

Այդ ժամանակ Մաշտոցը մոտծում է Հայոց բոլոր աշխարհի ժողովրդի մոտին և դրա համար հողավով՝ կրկնում է. «Տրտմություն է ինձ համար և առաջակա են իմ սրտի ցավներն իմ եղբայրների և ազգայինների համար»: Նա այդ հոգսերով պաշարված՝ մոտծմունքի ծփունքի մեջ ընկած մնում է, Թե ինչ էլք զանի ժողովրդին իր ախուր դրությունից հանելու, ամբողջ Հայաստանում քրիստոնեությունը հաստատելու համար: Ելքը հայերեն լեզվով ուսումնառելու գրականությունն էր: Պրիստոնեությունն ասորիներից և հույներից էր մտել Հայաստան. եկեղեցու պաշտոնյաներն իրենք մասամբ պես ասորիներ և հույներ էին, որանք մուտք էին գործել Հայաստան իրեն

քարոզիչներ և պահում էին իրենց լեզուն՝ Ուստի սկզբից հենց Հայաստանում եկեղեցական լեզուն ասորերեն ու հունարեն էր։ Եկեղեցու պաշտամունքը կատարվում էր այդ օտար լեզուներով, և բնականաբար ժամասացությունն և ընթերցվածներն անիմաստ հնչյուններ էին ժողովրդականների համարը։ Գրիստոնեոսությունից փոքր ի շատե քան հասկանում էին նրանք միայն, — գրում է Բուզանզը (Գ. 13), — ովքեր մի քիչ գիտեին հելլեն կամ ասորի դարձումը։ Մնացածներն այդ կրոնից բնավ բան չէին հասկանում և շարունակում էին մնալ հեթանոսության մեջ, նույն հին հավատալիքներով, սոսազներնով ու սովորություններով։ Եթե որք արտաքին ջանք դրսևութիւն արուեստին էին (այսինքն՝ ասորերեն կամ հունարեն չգիտեին), այլ խառնադանձ բազմութիւն մարդկան ժողովրդոց նախարարացն և կամ շինականութեան, եթէ պայդ և պցերեկ նստեալ վարդապետացն և ըստ նմանութեան ամպոցն իրեն գյուղականեղ ինչ անձրեաց սասակութեան զվարդապետութիւնն ի վերայ հոսէին, ոչ ոք ի նոցանէն և ոչ մի ոչ, և ոչ մի բան, և ոչ կէտ բանի, և ոչ դոյզն յիշատակ ինչ, և ոչ նշմարանա ինչ դր լսէինն, և ոչ կարէին ինչ սանել ի մտին։

Արդարև, քրիստոնեություն սկզբից հենց, ըստ Ապոստոլի, Հայաստանում հիմնված են եղել եկեղեցական դարձումներ, բայց ուսումն եղել է հունարեն և ասորերեն լեզուներով։ Այդ մասին հոգ են տարել և հետագայում։ Այսպես՝ Փ. Բուզանզը (Գ. 4) պատմում է, որ Արշակ Թագավորի օրով Մենն Ներսեսը Հայաստանի բոլոր գավառներում և զանազան տեղերում հիմնել էր դարձումներ հունարեն և ասորերեն լեզուներով։ Բայց այդ օտար լեզուներով շատ բան չէին սովորել։ Այս հանգամանքներն ևս ահա արգելք էին լինում, որ ժողովուրդը քրիստոնեության դարձից հարյուր և ավելի տարիներ հետո բաղրավին անտեղյակ էր ճիշտ Աստվածաշնչի նույնիսկ վիպական պատմվածքներին ու զբոյցներին, որ հեղու կարող էր յուսբացնել։ Պետք էր եկեղեցու և դարձից լեզուն դարձնել հայերեն, իսկ դրա համար հարկավոր էր գիր ու գրականություն հայերեն լեզվով։ Հարկավոր էր այդ առաջ բերել և տարածել։ Բայց այդ վեր էր ուժերից մի մարդու, որի ձեռին չկային իշխանություն և նշանակալի միջոցներ։

Եվ ահա Մաշտոցը հենց այնտեղ Գողթնում երկար ժամանակ այդ խնդրով զբաղվելուց հետո՝ գլխիս է վաղարշապատ Սահակ կաթողիկոսի մաս, որին և պատրաստակամ ու հավան է գտնում այդ բանի համար։ Հայերեն նշանագրեր գտնելու համար ժողովում են պաշխարհահող խորհուրդն երանելի միաբանելոց — միաբանյալների, այսինքն՝ վանականների, կրոնավորների խորհուրդը։ Խորհրդակցություն նպատակի մասին իմաց են տալիս Վառձապուհ թագավորին։ Սա հայանում է, թե Դանիել անունով մի ասորի եպիսկոպոս լայնակործ ուրեմն նշանագիրս արվարետաց հայերեն լեզուին — հանկարծ (պատահաբար) հայերեն լեզվի արվարետներ — նշանագրեր է գտել։ Եվ իբրև պատմեցաւ նոցա յարքայէ վասն գտելոյն ի Դանիէլէ, յաժարեցին զարքայ՝ փոյթ առնել վասն պիտոյցն այնոցիկն։

Թագավորը բերել է տալիս այդ նշանագրերը, և Սահակն ու Մաշտոցն առնելով պայանարձաքիւսան, այսինքն Դանիէլէ պատահաբար գտած նշանագրերը, Թագավորից խնդրում են մատուցահատ մանուկներ, որ նշանա-

գրեցը սովորեցնեն նրանց, Սկիզբն է դրվում հայ դպրութեան: Մտառացը դառնում է վարդապետ, այսինքն ուսուցիչ, և մոտ երկու տարի մանուկներին սովորեցնում է դրանցով: Բայց վերջը հասկանում են, որ չեն բուսական նշանագրերը՝ աղջիկները գիւղերում, գլխաւոր հայերէն լեզւոյն, մասնաւորապէս չեն սովորեցնում իսկ յայտնի դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցանաւ—այդ նշանագրերը բովանդակն չեն հայերէն լեզվի սիգնալները—կապերն ամբողջութեամբ արտահայտելու համար, մասնաւորապէս որ նշանագրերն էլ իսկապէս ուրիշ դպրութեաններէ թաղված և հարութեան տուած հանդիպելի, այսինքն՝ այդ նշանագրերը բովանդակն չեն եղել հայերէնի համար, մասնաւորապէս այն պատճառով, որ ուրիշ դպրութեաններէ են եղել, այն էլ մոտացութեան տրված (թաղեալք) և նորից երևան եկած (շարուցեալք): Ուրեմն այդ Քրիստոսեան նշանագրերը.— ինչպէս անվանում է Մ. Խորենացին,— հատկապէս հայերէնի համար չեն հորինված եղել: Դանիել եպիսկոպոսը պատահաբար (չանկարծ ուրեմն), որ կարող է հասկացվել նաև պատահաբար մի ակնթիւ Եւրոպայի զոմէն Եւրոպայի իրենց հայերէն լեզվի ակնարկներէ: Կրօնականի՝ որն է մեկն ուղեցել է, գուցէ և փորձել է գրանք գործածել հայերէնի համար. քանի որ Դանիել եպիսկոպոսը դրանք գտել է իբրև հայերէնի նշանագրեր:

Այսպէս ուրեմն՝ տեսնում են, որ այդ նշանագրերը բովանդակն չեն հայերէնի համար: Նորից բաժանական ինչ—մի քանի ժամանակ նույն հոգսն են անում մի ելք, այսինքն նշանագրեր գտնելու համար: Այս Մտառացը թագավորի հրամանով և Սահակի համաձայնութեամբ առնում է մի խումբ մանուկներ (սկսած մի մանկուց) և գնում է ասորաց երկու քաղաքներ, Ամիդ և Եզեսիս, երևի, հուսալով թէ այնտեղի մարդկանցից մի խորհուրդ կտանի: Նա ներկայանում է այդ քաղաքների եպիսկոպոսներին, բայց, ինչպէս երևում է, այդտեղ էլ ոչ մի առանձին օգնութեան չի գտնում այդ բանի համար, բացի սիրելիք ընդունելութեանից և հոգաբարձութեանից: Նա հետը աւարած բազմաթիւներին, անշուշտ, ապագա թարգմանիչներ պատրաստելու նպատակով, բաժանում է երկու խմբի. մի խումբը Եզեսիսում կարգում է ասորական դպրութեան սովորելու, իսկ մյուս խումբը հունական դպրութեան կարգելով՝ այնտեղից ուղարկում է Սամոսատ քաղաքը: Ինչը շարունակում է աշխատել նշանագրերի խնդրի վրա:

Վերջապէս պատկերվում է նրա մեծ ջանքը: Նա հնարում է հայկական նշանագրերը: Հայրապետ չափուն ծնեալ ծնունդաւ Ուրուգ և Մեմնիլի՝ սուրբ աթոռի իւրով, Ուրուգիսիս եպիսկոպոս լեզուիմա,— նա իր սուրբ ոգով հայրաբար ծնեց (= հորինեց, գրեց) մեր և Մեմնիլի ծնունդներ— հայերէն լեզվի նշանագրերը,— գրում է Կորնուս իր ճոռս թղթով և անմիջապէս շարունակում է. «Սեւ անդ վաղվադակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ, յորինէր

¹ Քրիստոսեան բառի համար տես՝ Կ. Ե. Ե. Վարդ Մտառացի, Երևան, 1941, էջ 108, ծան. 58:

² Դանիելյան գրերի մասին եղած գնահատականները տես՝ Մ. Արքայանի Մեմնիլի Մտառացի և հայ գրի ու դրականութեան սկիզբը, ՎՍՍՀՄ-ական դրականութեան և Մ. Ա. Երևան, 1962, էջ 46 և հա. համար 5:

ախորատիւք-կապաք, — և թոյնեղ շուտով նշանակեց (գրեց, գծագրեց),
անվանեց և կարգավորեց (գասավորեց), հորինեց սիդորաներով-կապե-
րով, — այսինքն՝ դասագիրքը հորինեց վանկերով հեգելու, վանկեր կապելու,
գիրկապ կարդալու համար: Այնուհետեւ Մաշտոցն իր օգնականներէ հետ
նդեսիայից գնում է Սամոսատ քաղաքը, ուր նույնպէս լավ ընդունելու-
թյուն է գտնում:

Տե՛ս Երկրորդ հատկութիւն՝ Մաշտոցի գործը նդեսիայում և Սամոսատում:
Սամոսատում հայերենի նշանագրերը Հռոմէոսն անուսով մի հուշն
գրագրի ձեռով վերջնապէս հարգարելուց և հարմարեցնելուց հետո՝ Մաշ-
տոցն անմիջապէս փորձում է դրանք, նա իր երկու աշակերտներէ հետ,
մեկը Հովհանն Եկեղեցացի, մյուսը Հովսեփ Պաղտարի, ձեռնարկում է Աստ-
վածաշնչի թարգմանութեանը՝ սկսելով Սողոմոնի առակներից, որ, ինչպէս
Կորյունը գրում է, սկզբում հենց հանձնաւորում է ծանոթ լինել իմաս-
տութեան՝ տեսելով, ղեռնաչել գիժաստութիւն և գիրատ, իմանալ դրանս
հանճարոյ: Ահա առաջին բառերը, որ գրված են հայերեն լեզվով, հայերենի
այբբենով: Այդ թարգմանութեանը գրվել է նույն հաշն գրագրի ձեռով,
միաժամանակ և մանուկներին սովորեցրել են հայերեն գրել և նրանց պատ-
րաստել են հայերենի համար գրագիրներ:

Վերջապէս մենք ինչ պատրաստ և աջող էր: Նշանագրերը լիովին բա-
ղակաւ էին հայերենի համար. թարգմանութեամբ փորձվել էր այդ Դրանք
հարմար էին և՛ գեղագրական, և՛ քաղաքական տեսակետով. միաժամանակ և
մանուկներին սովորեցրել էին այդ տառերով գրելու ժամանակն էր վերա-
դառնալու:

Մաշտոցը Սամոսատ քաղաքի եպիսկոպոսից թղթեր է աւանում և քու-
լը իրայինների հետ, որոնք էին իր օգնականները, աշակերտները և
գրագրութեան սովորած բանուկները, զայն է նդեսիա և Ամիգ, Այդ քա-
ղաքների եպիսկոպոսներից էլ թղթեր առնելով՝ այդ տեղերից էլ քոյլը
իրայիններով աջօգնութեամբ և հոգելից ուրախութեամբ զայն համում է
Հայաստան աշխարհը, Այրարատյան գավառի կողմերը, նոր Քաղաքի (Վա-
գարշապատի) սահմանների մոտերը:

Մենք չգիտենք, թե Մաշտոցը երբ գնաց Միջագետք և երբ վերադար-
ձով: Կորյունը Դանիելյան գրքերը Հայաստան բերելու, ինչպէս և Մաշտոցի՝
նդեսիա գնալու և վերադառնալու թվականները հայտնել է Վասմշապուհ
թագավորի տարիներով, — ինչպէս վերջում էին այդ գրքերում, — հայկա-
կան գործութեան սկիզբն երկրորդ անգամ էլ հիշում է նա պարսից Վասմ
թագավորի տարիներով, հիշում է երրորդ անգամ էլ, թե հայոց դպրութեան
սկիզբը եղել է Մաշտոցի մահից 35 տարի առաջ, Բայց թվերից մեկը կամ
մյուսը օգնատու է, ուստի և չեն բռնում իրար: Ընդունում են 403/404,
404/405 թվականները:

Երբ Վաղարշապատում լսում են Մաշտոցի վերադարձի մասին, Վասմ-
շապուհ թագավորը, Սահակ կաթողիկոսը և նախարարների բազմութեանը
քաղաքից դուրս գալով՝ գիժավորում են նրան Ռահ գետի ափին և ցնծու-
թեան երգերով եւ դառնալով քաղաք՝ օրեր են անց կացնում տոնական
ուրախութեամբ: Դա մի ազգային առն էր: Մինչ այդ՝ հայերեն լեզվով մի

բաւ անգամ յկար մաալանների մեջ գրված, նույնիսկ օտար լեզուներէ առեւերով, հիմա Մաշտոցը բերում էր աշխարհումը հորինած հայերեն նշանագրեր և հայերեն թարգմանված ու գրված Աստվածաշնչի մի գիրքը (գուցե և մի քանի գրքեր), նրա հետ գալիս էին և այն երիտասարդները, որոնց ուղարկել էր թագավորը, որոնք և պատրաստված էին թարգմանություններ անելու: Գրից ու գրականությունից զուրկ ժողովրդի համար վերջնական բացօթի էր գիտության աղբյուրը: Բացվել էր Մաշտոցի, Սահակի-և նրանց աշակերտների համար գործունեության ընդարձակ առաւելիք: Այժմ նրանք կարող էին ճիշտապես համարվել շալաստանի մասին հոգալ: Դրա համար նրանք երեք ըստ միտածամտնակ էին կատարում. թարգմանել, գրել և ուսուցանել: Թարգմանություններն և արտագրությամբ բաղմամբ Գրքերն անհրաժեշտ էին աշակերտներին հայերեն լեզվով սովորեցնելու համար:

Մաշտոցը և՛ թարգմանիչ էր, և՛ ռուսագրող: Յասսահան իսկ վարդապետութեան զեղեցիկ՝ երանելին հասնէր, — վարդապետության. այսինքն ուսուցչության. զեղեցիկ աստիճանին հասավ երանելին, գրում է հորյունը: Սամսատից վերադառնալուց հետո մինչ փութանակի թարգմանություններ էին անում, Մաշտոցը միտածամտնակ և իր ուսուցչությունն և ճառախոսությունն էր շարունակում: Նա իր ճառախոսական գործունեությունը վերսկսում է Մարաց կաղմերում, ուր, ինչպես տեսանք, փախել էին քրմերը Գողթնից, և որոնց բնակիչները զմեք մատչելի էին իրենց բարձր և խեղճեկամուսին և խոշորագույն լեզվի պատմաբան: Բայց Մաշտոցն այժմ ավելի զորեղ միջոց ուներ. նա շնորհիվ հայերեն գրի ու զրուրության կրթում, սովորեցնում է նրանց շատ տարիների ծնունդներին և նույնիսկ աղարդախոս հետադարձներն էր դարձնում:

Այդ միջոցին առաջ է գնում Աստվածաշնչի թարգմանությունն ու գրելը: Եւ հարմարություն է ստեղծվում ուսուցման գործն ընդարձակ շափերով կատարելու: Ուսումն կենտրոն դառնում է բնականաբար թագավորների և քահանայապետների նստավայրը, Վաղարշապատ մայրաքաղաքը: Շատ աշակերտներ են ժողովում այնտեղ. շատերն էլ հենց իրենք են գալիս ճարտագույն վարդապետության, հայերեն լեզվով ուսման համար, իր բացառիկ աղբյուրն գիտութեանն Աստուծոյ: Նրանց սովորեցնում ու կրթում են և ուսուցիչներ են պատրաստում անգետ մարդկանց համար: Երբ այդ աշակերտները կատարեալագործվում են, նրանց խոսք-խոսք ուղարկում են Հայաստանի զանազան կողմերը հայերեն գիր ու գրականություն սովորեցնելու: Այդ խմբերից մեկի մեջ եղել է և Մաշտոցի կենսագիր հորյունը: Բացի աղապիսիներից՝ նրանք, Մաշտոցն ու Սահակը, Վաղարշապատում սովորեցնում են արքունիքի մարդկանց և ազնվականներին: Սահակն ուրիշների թվի մեջ՝ ուսուցանում է ավելի Մամիկոնյան տոհմի մարդկանց, որոնց առաջինն էր Վարդանը, իր՝ Սահակի թոռը, ապագա հերոսը Վարդանանց պատերազմի:

Ապա կաթողիկոսը մնում է Ալբանիայում՝ հեղինականներին, այսինքն գործակալաներում կենտրոնացած մարդկանց սովորեցնելու¹, իսկ

¹ Այս մասին տես Գ. Բ. Բ. Վաղարշ Մաշտոցի, Երևան, 1961 թ., էջ 113, ծան. 93:

Մաշտոցն իր հեռանդուն բնավորությամբ կարող չէր Թաւ մի տեղում Նաթույլավոթյուն ստանալով՝ իր բազմաթիվ օգնականների հետ գնում է հեթանոսների մեջ քարոզելու Նախ անցնում է Գողթն, իր ոռոջվա դասակերպում Շաբաթ իշխանի և սրա որդի Գիտի օգնությամբ քարոզում է աղիսաբանն այդ դավադրում, Եւ կարգէր յամենայն գիւղս գաւառին՝ դասս սրբոց վանականացաւ:

Այնտեղից նա հիշում է հաճմանակից Սյունիք, ուր գործում է նախ Վաղինակ, ապա Վասակ իշխանների օգնությամբ, ժողովում է մանուկներ ուսում ապաւ համար, օտվորեցնում ու կրթում է այդ ազգաւնամիտ, վայրենագուշն, ճիւղաղաբարո կողմերէն աղաներին, բախաւ, որ հենց այն վայրենիներից եղիսկողոսս են կորչում Սյունիքի եկեղեցու համար, — գրում է Կորյունը: Այդ երկիրն էլ նա լցնում է վաճառականների խմբերով: Այսպես նա շրջում է շատ կողմեր: Ամեն տեղ, ուր նա գնում է, սովորեցնում է հայերեն գաղություն և իր աշակերտներից մեկին վերականգնու թողնում՝ գործը շարունակելու համար:

Նա հոգում է ոչ միայն հայկական գաղության համար, այլև վրացիների, հետագայում նաև աղվանների, որոնք կապված էին հայերի հետ: Նա իր ոռոջին շրջագայության ժամանակ հենց՝ իր աշակերտներից մի քանի լավագույններին հետն առած գնում է Վրաստան, ալիսաբար հորինում վրացերեն լեզվի համար, Թարգմանություններ տնել ալիս: Այստեղ էլ նրանց թագավորն ու եղիսկողոսս օգնում են Մաշտոցին: Նրանք մանուկներ են ժողովում զանազան գավառներից և նրանց ուսում են տալիս: Դրանցից էլ հետագայում կորզվում են եղիսկողոսներ: Այսպես շատ կողմեր շրջելով՝ ամեն տեղ նույն լուսավորական գործն է կատարում իր աշակերտների հետ և իր աշակերտներից վերահացու թողնելով՝ վերագաւառում է Վազարապաւում:

Երբ Արևելյան Հայաստանի բոլոր կողմերում սովորեցնում է և կրկին անգամ շրջում է իր կարգած տեղերը՝ աշակերտներին պարսկերէն, նորոգելու, հաստատելու, բախուհետեւ մասնում է, — գրում է Կորյունը, — հայոց կես ազգի համար, որ հոռաքիների թագավորի իշխանության տակ էր: Այնտեղ էլ պետք էր աւարածել հայկական գաղությունը: Եվ Մաշտոցն անցնում է Արևմտյան Հայաստան: Այստեղ էլ աշխարհի եղիսկողոսները, իշխանները և երկրի կուսակալը, Անտառլիս սպարապետը, Պապով ընդունում են նրան. բայց զարոցներ բանալու գործը հեշտությամբ պաւի չի գալիս: Արևելյան Հայաստանում կար հայոց թագավոր, որ ամեն կերպ օգնում էր այդ ազգային գործին. իսկ Արևմտյան Հայաստանում երկրի ալիսազգի կապավորիչը թույլ չի ալիս հունարեն լեզվի փոխանակ հայերեն սովորեցնել:

Մաշտոցը ստեղծած է լինում հետև աւարած աշակերտների բազմությունը թողնել Մեծիտինն ցաղաքում և սակավաթիվ աշակերտներով գնալ Կոստանդնուպոլիս այդ գործը հարգաբերու համար: Այստեղ էլ նրան ընդունում են պատվով և պետական ծախքով համաժամանակ տալում են, մինչև որ նա կարողանում է թողաւ Բ. կայսրին համոզել և նրանից հրաման ստանալ, որ հայերեն սովորեցնեն: Անտառլիս կուսակալը երբ ստանում է Մաշտոցի ձեռով ընդված կայսերական հրամանը, իսկույն շտապում է կատարել այն: Կայսրի իշխանության տակ եղած հայկական գավառներից ժողովում

մն բազմաթիվ մանուկներ, նրանց աղքատ եւ կարգուս դանդաղ հարմարավոր տեղերում, ուր և սովորեցնում են նրանց հայկական դպրութեանը, Գաղտնական գործն Արեւմտյան Հայաստանում ևս աղքատութեամբ կատարելուց հետո՝ Մաշաոցն իր շաւկերտներից երկուսին վերակացու է թողնում այնտեղ նույնն առաջ տանելու համար, իսկ ինքը շատ աշակերտներով վերահասնում Վաղարշապատ, ներկայանում է կաթողիկոսին և Վառշապուհի որդի Արապեա թագավորին ու բոլոր բանակին:

Այնուհետեւ էլ Մաշաոցը հանգիստ չի փնտռում և Աղվանք, ուր նույն յուսավորական գործը կատարում է տեղի թագավորի և եպիսկոպոսի ոգնութեամբ: Ժողովում են մանուկների բազմութեան, զանազան հարմարավոր տեղերում դպրոցներ են կարգում և սովորեցնում Մաշաոցի հորինած աղվաներին ալփաբետով: Նրանց նրեմիա եպիսկոպոսն էլ թարգմանում է Ասաված կարգելու: Այստեղ էլ հետո իր շաւկերտներից մի քանիսին վերակացու կարգելով՝ անցնում է Գարդմանա ձորը, այստեղից էլ Տաշիրը, Վրաստան: Ամեն տեղ էլ նույն գործը կատարելով՝ վերահասնում է Վաղարշապատ՝ իր սովորական տեղը:

Այստեղ այժմ առանձին ուշագրութեան են դարձնում հայ զբաղմունքութեանը ճիշտացնելու ևն այնպէս զամենայն ժամանակ իւրեանց՝ յընթերցուած գրոց ծախէին հարճն դատի և զգէշեր, և նովմը ծաղկեալք և շահաւետեալք՝ օրինակ բարեաց ուսուցիչներ աւելնեալսից լինէին:

Մաշաոցն Արեւմտյան Հայաստանում բարգաւաճ շնորհագիր մատենան գհորցն եկեղեցւոյ առացեալ՝ ծովացուցանէր զվարդապետութեան խորութիւն, և լցեալ զգոյր ամենայն բարութեամբ: Այժմ էլ նա սկսում է ճշտաբան խաղաղութիւն, դիւրապատմութիւն, շնորհագիրս, բազմագիրս... յօրինել: Այդ ճառերը ֆուստ են Վառարապատում ճաշը անուսով: Բացի գրանից՝ Մաշաոցը գրել և բոլոր գավառներն ուղարկել է շատ խրատական և սովորեցնող թղթեր, բարգաւաճ թուղթս խրատագիրս և զգացուցիչ ընդ ամենայն դաւանա առաքելք:

«Եվ այսպէս Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի բոլոր կողմերում, իր մարդչ կայանքի ընթացքում, ամառ ու ձմեռ, գիշեր և ցերեկ անվեներ և առանց բնավ հաղադելուս սովորեցրեց այդ մեծ առաքելչը, 45 տարի շաբունակ աշխատեց այդ յուսավորական գործի համար, իսկ հայկական գաղութայն համար՝ 35 տարի: Նրա հետ աշխատում էր և Սահակ կաթողիկոսը:

Նրկումն էլ հասնում են խորին ծերութեան: Սահակը վախճանվում է Բագրևանդի Բլրոցաց գյուղում 439 թ. նախաշաբաթ ամսի 30-ին (սեպտեմբերի 7-ին) և մեծ հանգիսով տաղվում, թաղվում է Տարսնի Աշտիշատ գյուղում: Մինչև վերջներս էլ դեռ կար նրա գերեզմանը:

Մաշաոցը վախճանվում է 440 թ. մահկան ամսի 13-ին (փետրվարի 17-ին) Վաղարշապատում, ջրմապատված իր սիրելի աշակերտներով: Նրան էլ մեծ հանգիսով և ժողովրդի բազմութեամբ տանում, թաղում են Օշական գյուղում: Նրա գերեզմանը ֆուստ է մինչև այժմ Օշականի եկեղեցու սեղանի առկի խորանում և եղել է ժողովրդի համար մի սրբապաշտ թաղման զերեզման անուսով:

3. Կուլտուրական պայքար և եկեղեցա-ժողովրդական մտաւարժան գրա-
 կանութիւնը: — Ի՞նչ է այս կուլտուրական մեծ շարժման հիմքն ու պատ-
 մական նշանակութիւնը:— Ըստ Կորյունի՝ Մաշտոցը մտածել է սկզբում
 քրիստոնեական դարձի գործ կատարելու մասին. այդ է եղել նրա լուսա-
 վորական գործունեութեան սկզբնական շրջանը: Ըստինքսն այդ
 էլ իր ժամանակի համար մեծ առաջնորդիմական գործ էր: Այդ դարերում
 շատ նշանավոր անձեր, և ոչ միայն մեր երկրում, նվիրվում էին այդ
 գործին, որով բարձրացվում էր ժողովուրդների զարգացման մակարդակը,
 այն է՝ թանձր կուսակցութեանը փոխանակում էր զարգացման ավելի
 բարձր աստիճանի կրօն: Հայաստանում քրիստոնեութեան քաղաքացիական
 ավելի ևս կարևորութեան ունեւորում, որովհետև զբաղվել հայերը հաղորդակից
 էին դառնում բիզանդական և ասորական քրիստոնեական կուլտուրային:
 Բայց Մաշտոցի սկսած ու զլուխ բերած մեծ գործը լոկ քրիստոնեութեան
 քարոզելու համար չի եղել. կային նաև ազգային քաղաքական և դասակար-
 գային պատճառներ, որոնց մասին լսւում է Կորյունը՝ ժամանակի քաղաքա-
 կան-եկեղեցական դժվարին պայմանների հետևանքով: Քրիստոնեութեան
 քարոզչութեան նաև պարսիկների դեմ մղուած մասնաւոր մի ազգային գործ էր:
 Հայաստան երկրի բաժանումով երկու հարեան հզոր տերութիւնների
 միջև 387 թ.⁴ վերջ էր տրվել այն երկարամյա ավերիչ պատերազմներին,
 որոնք 3-րդ և 4-րդ դարերում, Սասանյան հարստութեան սկզբից ի վեր,
 տեղի էին ունենում Հայաստանում մերթ հռոմայեցիների ու պարսիկների
 միջև, մերթ հայերի ու արարիկների: Երկիրը խաղաղել ու կազդուրվել էր
 անտեսապահ, բայց միամտամեակ և ազգային ինքնաւարտութեան, անկա-
 խութեան ու միութեան տեսակետով, թուլացել և նույնիսկ անկման դաւը
 հասել: Շուտով արևմտյան կողմում հռոմայեցիները վերացրին հայկական
 ինքնաւարտ իշխանութիւնը: Արևելյան Հայաստանում դեռ կար Արշակու-
 նի թագավորութիւնը, բայց չտիրացանք մեծ կախման մեջ Պարսկաստանի
 Սասանյան արքաներից: Այս դրութեամբ այլևս անհնարին էր քաղաքական
 անկախութեան համար պատերազմ մղել հարեան մեծ պետութիւնների
 դեմ: Մնում էր միայն կուլտուրական պայքարը ներքին անկախութեան
 համար, մասնավոր ու չէր վերջացել Խրանի ու Հոռմի իդիոլոգիական
 պայքարը Հայաստանում: Պետք էր այդ գրութեան առաջն տանել: Իսկ
 առաջն տանելու միջոցն էր քրիստոնեութիւնը և եկեղեցին հայերեն լեզվով:
 Անո ազգային-քաղաքական, միաժամանակ և դասակարգային հիմքն այդ
 մեծ կուլտուրական գործին: Դա հետևանք էր Հայաստանի բաժանման երկու
 հարեան մեծ տերութիւնների միջև և սրանց պայքարի՝ Հայաստանի վրա
 ազդել իդիոլոգիական:

Հայաստանում ցտոր լեզուներով բացված դպրոցներում, արդարև, շատ
 բան չէին կարող սովորել, բայց կային տնային երիտասարդներ, որոնք
 ուսումնառնելու համար դիմում էին Հայաստանից դուրս, բուն ասորական
 և հուստական դպրոցները: Այս մասին շատ որոշ վկայութեան ունենք Ղա-
 զար Փարպեցուց, որ գրում է, թե Մաշտոցը չարաժամ արտաէր... տեսա-
 նելով զմեծ ջանն և դուռաւելուպէս ծախս մանկանցն Հայաստան տղաբնիս,
 որք ընդուն թողնուց և հեռաւնաց ճանապարհօք և բազմաժամանակեայ

դեպքերում մի մաշէին դաւաճեալ իւրեանց ի դպրոցս ասորի գաղութեան: Նուայնը լինում էր և Արևմտյան Հայաստանում, որտեղից դնում էին հռչակական դպրոցները:

Ջրխատոնեութունը մոտ հարյուր տարեւում ընթացքում այսպես կամ այնպես ազդել էր հայերի վրա, և առաջացել էր մի նոր հասարակական խավ, նոր սեռնդի մաշդիկ, որոնք Հայաստանում կամ դրսում ասորական կամ հունական ուսում էին ստացել, հոսել ազգային ինքնագիտակցութան և ըմբռնում էին ժողովրդի ու հայոց եկեղեցու համար հայերեն գրականութան կարիքը: Պատմութիւնը մեզ թողել է աղալիսի մարդկանց իրեն ներկայացուցի՝ երեքի անունը միայն, մեկը՝ Մաշտոցը, որ, ինչպես երևում է, թեպետև չառնէր եկեղեցական աստիճան, բայց իրեն և՛ «ավետարանիչ», և՛ կրթնավոր, պատկանում էր եկեղեցական դասին. մյուսը՝ Սահակ կաթողիկոսը, իր հոր ու աղապերի ժառանգական անունով. երրորդը՝ Արշակունի Վասմապուհ թագավորը, նրանք երեքը միասին, ինչպես Մաշտոցի կենսագրութիւնից տեսանք, պարագլուխ են հանդիսանում այդ մտավոր շարժման, հոգում են հայերեն գաղության համար:

Ինչն էր դասակարգային շահերի տեսակետով կազմում նրանց միմյանց հետ, երկու իշխող դասերի այդ ներկայացուցիչներին, որոնք նախորդ դրում էր հրեան իրար դեմ էին ելնում:

Սահակը, Մենն Ներսէսի որդին, հունական լավ կրթութիւն ստացած և հռոմեական կողմնորոշման մի մարդ, մեծ կալվածների տեր, բնականաբար հոգում էր իր աթոռի հաստատութեան, հայ եկեղեցու և իր տնտեսական շահերի մասին: Նա գիտեր, որ քրիստոնեութիւնը վատնւելով զրադաշտական կրօնը՝ դարձել էին այն իրենց իշխանութեան հիմնաքարը, աշխատում էին ընդհանուր պետական կրօն դարձնել այն, Հռոմեական ազդեցութիւնը թուլացնելու համար նրանք Շապուհ Բ. թագավորի (310—379) օրերից սկսած, 340 թվականից առկեն ընդհանուր հալածանք էին հանել քրիստոնեութեան դեմ, և այդ վտանգը շարունակում էր մնալ և հետագայում: Նրանք նույնիսկ վորձեր էին արել և անում էին իրենց կրօնը մտցնելու և հայ ժողովրդի մեջ նրկյուղը մեծ էր ուրեմն, որ Արևելյան Հայաստանի հայ ազնվականութիւնն ու շինականութիւնը կարող էին ետ կանգնել քրիստոնեութիւնից, որից բան չէին հասկանում: Թեպետ Վասմ Դ. և Հազկերտ Ա. թագավորների օրով հայ եկեղեցին համեմատաբար խաղաղութեան մեջ էր, բայց նրա դեմ կռիվը չէր դադարել, այլ միայն ուրիշ կերպարանք էր ստացել:

Արևելյան Հայաստանն ուներ Արշակունի թագավորներ, բայց գտնւելում էր պարսից գերիշխանութեան տակ, Պարսկաստանում իրեն քրիստոնեական պաշտօնական լեզու ընդունված էր ասորերենը: Արքայից արքաները, հռոմեական ազդեցութիւնը թուլացնելու նպատակով, Հայաստանում ուժ էին տալիս ասորերեն լեզվին և առաջ էին քաշում ասորի եկեղեցականներին: Նրանք հովանավորում էին ասորական եկեղեցուն: Արևելյան Հայաստանում եկեղեցու լեզուն ասորերեն էր: Սելևկյայի ասորական կաթողիկոսը՝ արքայից արքայի թեմակոթիւմը՝ ձգտում էր դուրս դառնալու:

բոլոր արևելյան քրիստոնեութան. նա իր տիրադատի մեջ մտցրել էր արգեն նաև Հայաստան, Վրաստան և Աղվանք, Հայաստանի Սահակ կաթողիկոսը չէր կտրույ այս ամենի նկատմամբ անտարբեր մնալ:

Այսպես ուրեմն, կար մի ուժեղ պայքար մի կողմից՝ հայ եկեղեցու և պարսիկ իշխանության ու մոզուլթյան միջև, մյուս կողմից՝ հայոց և ասորոց եկեղեցիների, Հենց այս պայքարի մեջ աջոգություն ունենալու համար՝ պետք էր Հայաստանում ծավալել քրիստոնեությունը և հաստատ հիմքերի վրա գնել այն՝ ընդդեմ զրադաշտական կրոնի նվաճողական հարձակումների. հակառակ դեպքում Հայաստանում կիշիներ մոզուլթյանը և վերջ կտրվեր կաթողիկոսությանն ու եկեղեցուն: Քրիստոնեությունն ուժեղացնելու ելքն այն էր, որ եկեղեցու մեջ պետք էր մտցնել ամենքին հասկանալի հայերենը, իսկ դրա համար հարկավոր էր հայերեն գիր ու քրիստոնեական դպրոցներ: Մյուս կողմից՝ պետք էր պայքարել ասորական ոտնձգությունների դեմ: Պետք էր հայ եկեղեցուց ու դպրոցից մերժել ասորերենը և ստեղծել ինքնուրույն ազգային եկեղեցի, Գրա համար էլ հարկավոր էր հայկական գիր ու դպրոցություն:

Ընդհանուր գիծադրությունն ու թիկունք ստեղծելու համար նույնը պետք էր առաջ բերել նաև Վրաստանում ու Աղվանքում, որոնց եկեղեցիները կապված էին հայերի հետ և, նույն սալառանալքի առկա էին: Այս պատճառով Մաշտոցը հազում է նաև վրացական ու աղվանական դպրոցության համար: Կար և մի ուրիշ ախուր հանգամանք: Երկիրը ինչպես լեռնաշխարհն էր բաժանված էր երկու մասի, նույնպես և պաշտամական լեզվով: Արևմտյան Հայաստանում, որ հռոմեական կայսրության մի մասն էր դարձած, պաշտոնական լեզուն էր հունարենը, Հայ եկեղեցու մեջ այնտեղ ընդունված էր հունարենը: Այդպիսով հայոց եկեղեցին կարգնում էր իր միությունը և թուլանում էր: Այդ ձեռնառու չէր հայ բարձր հոգևորականությունը: Պետք էր ուրեմն մտածել նաև Արևմտյան Հայաստանի մասին, ուր հայերը ձգտում էին պահելու իրենց ազգեցությանը և հայոց եկեղեցին կախման մեջ դնելու: Կապաղավկիայի եպիսկոպոսից, Այդտեղ էլ հունական ազդեցությունը ջլատելու համար՝ պետք էր ուժեղացնել հայերենը հայ գրի ու դպրոցության միջոցով և դպրոցի ու եկեղեցու ժամաստեղության մեջ մտցնելով հայերենը:

Վերջապես՝ ջաղաճական բաժանման հետևանքով հայ եկեղեցին արեւելքում կտրված էր մնում հարաբերությունից հունական եկեղեցու հետ, աստապարակ հունական ուսումից, որին սկզբից ի վեր սիրով հետևում էին: Խնձը Սահակ կաթողիկոսը, նրա հայրը՝ Ներսես կաթողիկոսը և շատ ուրիշները հունական կրթություն էին ստացել: Այդ կտրվածությունը մասնազուլթյուն էր պատճառում հունասեր մարդկանց: Պետք էր ուրեմն հայերեն թարգմանությունների միջոցով մոտավոր հոգսրդակցությունը շարունակել հույների հետ:

Վրաստանում թագավորի մասին շատ տեղեկություններ չունենք: Արշակունի արքայական սուլժի այդ նախավերջին ժառանգը տեսել էր երկու դրացի հոգր տերությունների ձեռով Հայաստանի բաժանումը և այն, որ Արևմտյան Հայաստանում այլևս գոյություն չունեին առանձին հայկա-

կան թագավոր: Նա իր եղբորը, Խոսրով թագավորին վիճակված բախտով դիտեք, որ Արեւելյան Հայաստանի Արշակունի գահն էլ անվանական և շատ խախտւած էր: Չկար այլևս համեմակւան բարեկամութիւնը, որի վրա հենված՝ ժամանակով, Յորդ և Ճորջ գարեբուստ պաշտպանվում էին պարսիկներին և Հայաստանի քաղաքական անկախութիւնն համար պատերազմ էին տալիս նրանց դեմ: Այլու հնարավոր չէր ուղղման—քաղաքական կռիվը: Անա այն մեծ փոփոխութիւնը, որ ստիպում էր փոխել քաղաքականութիւնը: Մնում էր ուրեմն միայն ներքին հենարանը, ներքին ուժերը դորացնել և նրանց վրա հենվելով՝ կուսուրդական պայքար մղել պարսկական ձգտումներին դեմ: Այդ ներքին հենարանն էր ամենից առաջ հայոց եկեղեցին, որի միջոցով մի ընդհանուր միութիւն իրենցիկական կապ կարող էին ունենալ բաժան—բաժան մասն ֆեոդալները: Ուստի և նա ամեն կերպ նպաստում է Մաշտոցի կառարած գործին: Նրա միջոցով են ձեռք բերվում «Դանիելյան նշանագրերը»: Նա է փոքրահասակ մանուկներ ժողովել տալիս այդ նշանագրերով սովորեցնելու, և երբ նրանցից շատերը տեղեկանում են, հրամայում է ամեն տեղ այդ նշանագրերով կրթել: Բայց երբ դրանք հայերենի համար անբավարար են դուրս գալիս, դարձյալ նա է հրամայում Մաշտոցին, որ մի խումբ մանուկներ ունի գնա ասորոց կողմերը: Նա մյուսներից պակաս չի ուղարկանում, երբ Մաշտոցը ամրագրութիւն վերականգնում է: Եվ վերջումս՝ Մաշտոցն իր ուսուցչական գործունեութիւնը վերականգնում համար՝ դարձյալ նրանից է հրաման առնում:

Մի անգամ որ թագավորի հրամանով էր լինում ամեն ինչ, քննականաբար նա էլ հայթայթում էր այդ գործի համար անհրաժեշտ նյութական միջոցները, որ փոքր չէին կարող լինել: Գորյունն այդ մասին բան չի գրում: Բայց նա պատմում է, որ Աղվանքում զանազան կողմերից ժողոված մանուկներին պահելու ծախքը թագավորն է հոգում, տերութիւնն հաշիվ են պահում և Արեւմտյան Հայաստանում ուսման համար հրամարմար տեղեւում ժողոված մանուկներին: Անշուշտ նույնը եղել է և Արեւելյան Հայաստանում: Երջունի ծախքով են կառարմած Մաշտոցի բազմաթիւ ուղևորութիւնները աշակերտների մեծ խմբերով, և արջունի ծախքով են պահված Հայաստանի զանազան կողմերում բացված դպրոցները: Գարող էր և կաթողիկոսարանը մասնակից լինել այդ ծախքերին, որովհետև նրա եկամուտներն էլ փոքր չէին: Նույնը պետք է ընդունել նաև տեղական իշխանների համար, որոնց մի քանիսի առանձնները տալիս է Գորյունը: Եվ այն ժամանակաշրջանում դժվար չէր ընդհանրապես մեծ ծախքեր անել քաղաքական տեսակետով մեծ անհրաժեշտութիւն դարձած այդ կուսուրդական գործի համար: Երկրի անտեսական վիճակն այդ թույլ էր տալիս:

Այսպես ուրեմն, և՛ հողեր, և՛ աշխարհիկ իշխանութիւնները միասին հողում են հայերեն դպրութիւնն համար՝ յաւաքանչյուրն իր շահերի սեփականութիւնը: Եվ նրանք իրավունք ունենին Շուշուով պարսկական քաղաքականութիւնը բռնադնում է: Ինչքան էլ Սահակ կաթողիկոսը ջանում է Հայաստանի թագավորական գահը պաշտպանել, այդ չի արդիւնում նրան: Պարսկական ինքնիշխանի միջոցով վերջին Արշակունի թագավորը, Վառամ շապուհի որդի Արտաշէսը, ընկնում է դահիթ: Մյուս կողմից դրանում է և

ասորական ազդեցութիւնը, և Սահակ կաթողիկոսն ինքն էլ իր կյանքի վերջին տասնամյակում գրկւում է կաթողիկոսական իշխանությունից, և նրա աթոռը գրավում են ասորի եպիսկոպոսները Միաբանական և մոզու-թիւնը Ծ-րդ դարի կեսից սկսած՝ փորձում է տիրանալ և Հայաստանում։

Մաշտոցի ու Սահակի գործունեութեամբ, սակայն, մշակված էր սեփա-կան ազգային գաղափարախոսութիւնը, կար արդեն ինքնագիտակցութեան եկած և լավ պատրաստված ու հոգեպէս զինված մի սերունդ, որ չէր կա-րող հեղափոխութեամբ զինաթափ լինել Սկսվում է մի զորեղ կուսակցական պայքար, մեկ-մեկ նաև ազդեցուն կախի (Վարդանանց պատերազմը և Վա-հանանց զինյալ մաքառումը) Սահակի ու Մաշտոցի աշակերտներին և արանց աշակերտներին ընդդէմ պարսկական և ասորական, հետագայում նաև հու-նական ոտնձգութիւնների, նրանք կորոզւում են պաշտպանել քրիստո-նեութիւնը մոզութիւնից և հայոց եկեղեցին՝ ասորիներին ու հույներին, Բաղաճական տնկաւթութիւնը կորցնելուց քիչ առաջ սկսված այս պայքա-րի պորձը հետագայում ավելի ևս ընդարձակվում է, և կարողանում են զբաղւել պաշտպանել հայկական առանձնահատկութիւնները, կազմվում է ազգային ինքնագիտելի եկեղեցի, որ դարեր շարունակ կատարում է իր ժա-նանակի համար լուսավորական ջեր իր կուսութեական գործունեութիւնը ու հիմնարկներով։

Այսպէս, այս համագամանքներով ահա, մեր գրականութիւնը Ծ-րդ դարից ի վեր թնկաւթում է իր զարգացման երկրորդ էտապը։ Ստեղծվում է եկեղեցա-բաղաճական գրավոր գաղութիւն, որ իր ձևով ու բովանդակու-թեամբ խիստ սարբեր է Արտաշես Ա-ի և Մեծն Տիգրանի օրով սկսված ավանդական բանահոյակութիւնից, բայց իր էական առաջնորդող գաղա-փարով, ընդհանուր միտումով, հանդիսանում է իբրև շարունակութիւն Ծ-րդ և 4-րդ դարերի պատմական իրականութեամբ ծաղկած Պարսից պա-տերազմի նոր ավանդական վիպի, Եթե այս վերջինիս զիւրովոր մտերմ էր զինքով մաքառում, կոխով պարսիկների դեմ հայկական ազգային տնկա-ւթութեան համար, այս նոր գրականութիւնը, գրավոր գաղութիւնն, ինքը մի զինք էր կուսութեական պայքարի ու մաքառման համար ընդդէմ պար-սիկներին, ապա հույներին և արաբներին։ Նույն նպատակին ծառայում էին իսկապէս նաև թե՛ քրիստոնեական-կրօնական ոգու և գաղափարախոսու-թեան ծավալումը կյանքի մեջ և թե՛ մաքուր կրօնական գրվածքները, քա-նի որ արանք էլ վերջին հաշիւով մաքառելու միջոցներ էին ընդդէմ հեթա-նոսութեան—պարսիկների և արաբների, իսկ դավանաբանական երկերն՝ ընդդէմ հույներին։

4. Վառճապ ու դարձանք։— Այս մաքառման գրականութեան տնկա-ւթեան էին վանքերը, վանական-եկեղեցական գաղութները, Մաշտոցը, բացի քրիստոնեութիւն և հայկական գաղութիւն տարածելուց՝ շատ տեղերում հաստատում է վանքեր, ինչպէս Գողթնում, Սյունիքում, Եւք դարձեալ բա-ղում և անհամար զոնդա վանականաց և ի շէնս և յանշէնս... Բնակեցու-ցեալ հաստատէր, — գրում է Կորյունը։ Այդ վանքերն առաջին հերթին, հարկավ, արտահայտութիւն էին կրօնավորական բարեպաշտական կյանքի, որին նվիրվում էին 3-րդ դարերում նույնիսկ շատ ուժեղ մտքի ու

կամքի տեր մարդիկ, ինչպես էր ինքը Մաշտոցը, Բաբսեղ Մեծը կամ Բաբսեղ Կեսարացին (Մեծ Կաթողիկոսներից մեկը), որ դառնում է Կեսարիայի մեարդալիս և 4-րդ դարում կանոնավորում է այդ կրոնավորական կյանքը, նա մեծանկեցությունից գերադասում է վանականությունը, կրոնավորների խմբական կյանքը եղբայրանոցներում, նա հաստատում է վանական կանոններ, որոնցով պարտադիր է դարձնում վանականներին համար թե ֆիզիկական և թե մտավոր աշխատանքը:

Նրա կանոնադրությունն ընդունվում է և հայոց եկեղեցուց. հայոց կաթողիկոս Մեծն Ներսեսը, Սահակ կաթողիկոսի հայրը, 4-րդ դարում Հայաստանում մայրում է նույն վանական կարգերը, ինչ որ տեսել էր Կապադովկիայում, իսկ որովհետև վանականները պիտի մտավոր աշխատանքով ևս զբաղվեին, վանքերը դառնում են նաև դպրոցներ, հոբելավ, կրոնական կրթություն համար, Գրադիստությունն անհրաժեշտ էր վանականի համար, և քանի որ չկար հայերեն գիր ու գրություն, Մեծն Ներսեսի հիմնած վանքերում սովորում էին տարերեն և հունարեն: Արդ՝ Մաշտոցի հաստատած վանքերում այդ օտար լեզուների տեղ անցնում է հայերենը, և վանականները հայ դպրություն, հայերեն թարգմանություններով էին ծանոթանում ճորտառնական ուսմանը: Այսպիսով՝ վանքերն ազգայնացնում և դառնում են հայկեցիկ դպրոցներ, ուր պատրաստվում էին հայերեն լեզվով գրագետներ և ռաբրոդիներ և ճգրիչներ, այսինքն՝ բարագրոդներ: Միաժամանակ է ժամանակի գիտությունն ու գրականությունը, որ մեծ մասամբ կրոնական էր, կենտրոնանում էր վանքերում: Այնտեղ և թարգմանություններ էին անում, ոպա և ինքնուրույն գրքեր հեղինակում: Հայկական վանքերն իրենց այս դերը մերթ ամիս, մերթ պակաս չափով, երբեմն ժամանակի հետ ընթանալով, երբեմն հետադիմելով, կատարել են, կատարել է ասել, մինչև առ ի 19-րդ դարի վերջերը:

5. Եկեղեցա-գրական լեզու: — Մաշտոցի ու Սահակի և Նրանց աշակերտների ջանքերով ստեղծվում է եկեղեցական հայերեն լեզուն, որ ընդունվում է երկու կողմերի հայերից և՛ Արևելքում, և՛ Արևմուտքում: Դրա հետևանքով ևս պահվում է միությունը հայերի մեջ միշտ և ամենուրեք: Նույնիսկ ուշ դարերում հաճեական եկեղեցուն տնցած հայերի հատվածները չեն իրիում գիպել հայոց եկեղեցական լեզվին և լատիններենով փոխարինել այն: Այդ լեզուն դառնում է, ուրեմն, ազգային միություն մի մեծ դարձն:

Բայց այդ դերը լեզուն կատարում է ոչ միայն եկեղեցու միջոցով, Եկեղեցական լեզուն էր նաև գրական լեզու, որով գրել են թարգմանական և ինքնուրույն երկեր: Հետագայում ևս հայ դպրությունը զարգանում է նույն լեզվով, և առաջ է գալիս համեմատաբար հարուստ հին հայկական գրականությունը, որ դանազան իշխանությունների ենթակա, քաղաքականապես անջատ և հաճախ սեփական պետություն չունեցող հայ ժողովրդի համար դառնում է ընդհանուր հոգևոր կյանքի, համագլխային միություն պահպանելու և նույնիսկ պայքի ազգային անկախություն հրահրելու ուժնամեծ պատմական գործոնը:

Այդ հին գրական լեզուն, որ սովորաբար կոչում ենք գրոցար, բնականաբար ունեցել է իր զարգացումը, իր փոփոխությունները դարերի ըն-

Թացքում, կամ իր պատմությանը, բայց հիմնականում միացել է այն ձևով ու կառուցվածքով, որով երևան է եկել Մուշեղի ու Սահակի և նրանց դարձակից աշակերտների ձեռքով Մ. Գրքի թարգմանության ժամանակ։ Այն դարում անպայման եղել են հայերեն լեզվի բարբառներ, բայց ենթադրվում է, թե դրանք իրարուց այնքան հեռու չեն եղել, ինչպես մեր ժամանակի հայերենի բարբառները։ Կային, հարկավ, տարբեր էթնիկական ծագում ունեցող ժողովուրդներ իրենց հասակ բարբառներով, ինչպես Մուսի կողմերինը, որոնք, ինչպես գրում է Կորյունը, «այլ և վասն խնցրեկագոյն լեզուին դժուարամտաց էին»։ Թարգմանությունները կատարվել են քնակաճարաբ այն բարբառով, որով խոսում էին քաղաքական և կրոնական կենտրոնում, Վաղարշապատ մայրաքաղաքում, ուր նստում էր և՛ թագավորը, և՛ կաթողիկոսը, և՛ աշայոց բռնակը, ուր և ձեռնարկել են այդ դրժինը։ Այստեղ էլ առաջին մեծ դպրոցը հիմնեցին և շատ աշակերտներ ուղղվեցին ուսումն ասուս, «և ինքեանք իսկ, — գրում է Կորյունը, — ի կողմանց և ի գաւառաց շախատան աշխարհին յարգեալը և զդիտելը հասանէին ի լոցեալ ողբիւրն գիտութեան Աստուծոյ Գանգի յԱյրարատեան գաւառին՝ ի կայս թագաւորացն և քահանայապետացն, ըղիցցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ։ Այրարատյան դավաթի ոստանիկ բարբառը, որ Արատալտի և Վաղարշապատի, 600 տարվա հայ քաղաքական իշխանության կենտրոնների բարբառն էր, անպայման վաղուց գերակշռություն էր ստացած եղել մյուսների վրա և դարձած ընդհանուր խոսակցական լեզու։ Դրանով են հորինված ազնվականության ավանդական բանահյուսության երկերը, որոնք սխառվորում էին այդ քաղաքներում նստող իշխաններին, և քնականորեն այդ լեզուն էլ դարձել է նաև դրական լեզու։

Այդ անգիր բանահյուսական լեզուն մշակված, կոկիված ու հարստացած է եղել միապետներից և ընդունակ՝ աջողությամբ արտահայտելու ուրիշ ազգերի ոչ միայն այն դրականությունը, որ բանահյուսությունից է ծագում, այլև առաջին թարգմանիչների գրչի տակ ճշգրտելով ու ձևված դառնալով՝ կարողացել է նույնպիսի աջողությամբ ընդունել եկեղեցական դրականությունը։ Դրան շատ նպաստել է այն, որ մեր այդ հին լեզուն իր խոսքի կազմությամբ — բառերի շարադասությամբ և նախդիրների բազմազան պորժածությամբ — շատ մոտիկ է հունարենին և հնաբաղորություն ունի այն լեզվով գրվածները հեշտությամբ շուտ տալու հայերենի, պրեթի միշտ բառերի գիմաց գնելով համապատասխան բառերը, ինչպես և թե այժմ մենք ուսուրենից դուրսը թարգմանենք։ Կարող ենք ընդհանրապես ազատ կերպով այդպես վարվել։ Այդպես հունարենից պրեթի բառացի թարգմանված է Մ. Գրքը։

Հին գրական լեզվի հիմք կազմող ստանդիկ բարբառի սերունդն է, սահման հավանադրությամբ, որդի Արարատյան հարևան բարբառը — հին Երևանի, Փանգոյի, Վաղարշապատի, Օշականի, Փարպի, Աշտարակի, Կողբ և այլ գյուղերի բարբառը, որ և հիմք է դրվել

¹ Այդ հին լեզվի բայեր էական կազմերը բացառված են սրտ հեղինակի հետևյալ աշխատությունից՝ «Գրաբարի քերականություն», հարկեց պրեթի, գլխաւ. Մ. Արեղյան, Երևան, 1927 թ., զերմաշկված, հրատ. Հիմնական համալսարանի, Երևան, 1927 թ.

մեր նոր գործունե լեզվի համար և իր հիշյալներն ու բոլորի տնայարարական գործունեությունը լայն շրջանում է գրառարկել, զանազան տեղերի վրա բարձր, ինչպես, օրինակ, աշխատողների, և այլ հարմար, խառնել, հրապարակել, հարմար և այլ, ինչպես, օրինակ, բարձր, և այլ, Զեյնալովի կամ շատ թույլ հիշատակում մի հարմար և այլ, թե իր ծառայողի բարձր և հարմար լեզուն, թե Մալաթի, որ ծառայող մի հարմար էր, իր հարմար և հարմար լեզուն, ինչպես, օրինակ, լեզուն, Այդ աշխատողի է, ինչպես էլ Մալաթի լեզուն լեզուն, նա լեզու հարմար այդ աշխատողի

ՅԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առաջին թարգմանիչներ և թարգմանություններ: — Սահակը, Մալաթիքը և նրանց ավագ աշակերտները եղել են և առաջին թարգմանիչները: Այդ աշակերտներն են՝ Հովսեփ Վալոյք Զորեցի կաթողիկոսը կամ կաթողիկոսական տեղապահը, — այս երկու տեղում էլ կոչում են նրան, — Լևոնդ, Վարդանանց պատերազմի ժամանակ մեծ դեր խաղացող Լևոնդ երեցը, որ նախորդի և ուրիշների հետ նահատակվել է Պարսկաստանում, այսինքն՝ ապանվել է քրիստոնեության համար. ապա՝ Հովհանն Եկեղեցյացի, Հովսեփ Պաղնացի, Եղիշիկ Կողբացի, Կորյուն, Մուշեղ, Արքայապետ Զենալուցի կամ Արքայապետ Զենալուցի և ուրիշները:

Թե Բնի թարգմանություններ են արել առաջին թարգմանիչները, և թե որ թարգմանիչն ինչ է թարգմանել, այդ մասին Կորյունը սակավ տեղեկություններ է տալիս: Բայց և այնպես գիտենք, որ այդ շրջանում թարգմանական մեծ դործ է կատարված: Այստեղ կոչենք այն, որ հիշատակում է Կորյունը:

Առաջին գործը բնականաբար՝ է՛ր Աստվածայնի թարգմանությունը, ինչպես վերևում ասվեց, Մաշտոցը Սամսատ քաղաքում արդեն իր երկու աշակերտների հետ ձեռնարկել է գրան՝ սկսելով Սողոմոնի Առաքելներից, թե նա այստեղ Աստվածայնի ուրիշ գրքեր էլ թարգմանել է թե ոչ, այդ մասին չի հաղորդում Կորյունը: Երբ նա վերադառնում է, այն ժամանակ շատերը երանելի հայերը, այսինքն Մաշտոցն ու Սահակը, — ասում է Կորյունը, — ձեռնարկում են թարգմանության աշխատանքը, և այս շրջանում հավատարմությունից ձեռնվել հայտարարեալ, հայերենախոս են դառնում: Մովսեսի գրքերը, մարգարեությունները, Պողոսի և ընդ որ աստվածայնի թղթերը, Ավետարանը: Այս աշխատանքը հիշելուց հետո՝ Մաշտոցի վարձարդեն ավետարանում է, թե թարգմանության միջոցով երկիրն առաջամայն վաղվադարձի ամենայն իրացնելուց խելամուռ լինելը, ոչ միայն ժամանակաւ պայտեցելուց, այլ և յառաջագոյն յաւերտելիցն, և ապա եկեղեցին, սկզբանն և կատարածի, և ամենայն աստուածատուր տառնալիքն, — շատ շուտով, իսկույն իմացան ըստ եղանակի բաները, ոչ միայն ժամանակով կատարվածները, այլ և առաջագոյն հավատեցնողությունը և հետո եկանքները, սկզբը և վերջը, և ըստ աստվածայնի ավանդությունները: Ուրեմն ամբողջ Աստվածայնը, նույնիսկ Վեպարություն Բովհանուն գիրքը, զանի որ Վեպարածն, վերջը, վերաբերում է աշխարհի կատարածին, վերջին, որի մասին խոսվում է այդ գրքի մեջ: Թե ոչ լեզվից են թարգմանել Աստվածայնը, այդ մասին չի հիշում Կորյունը:

Առավածաշնչի այս թարգմանության հետ զուգընթաց թարգմանել են եկեղեցու մեջ ընդունված օգոթքները: Դրանք անհրաժեշտ էին գործնական պետքի, ժամերգության համար, Դրանք, բացի ռոգոթքներից ու սաղմոսներից, էին նաև որոշ թվով նոր երգեր, որոնք ընդունված էին ընդհանուր եկեղեցու մեջ, Դրանց մի մասը հայերենի նշանագրերից առաջ էլ թերևս ասորերենից կամ հունարենից թարգմանված են եղել բերանացի, քանի որ ժամերգությանը բերանացի էր կատարվում: Դրանց վրա աշխատել է Սահակը. «Երանելույն Սահակայ զեկեղեցականն զրոց զամարուքումն կանխու ի յունական բարբառայն ի հայերէն գործուցեալ: և բարգում ևս զեւայրապետաց արքաց զմշտարիտ զիմաստութիւնն—երանելի Սահակը,—գրում է Գրչուհւնը,—առաջուց հունական լեզվից հայերեն էր դարձրել եկեղեցական դրճերի ամբողջութիւնը, և շատ էլ սուրբ հայրապետների համար իմաստութիւնը: «Եկեղեցական գրքերը», գրանք, ինչպես ընդունում են, եկեղեցու ժամերգության և խիստկատարութիւնների ժամանակ գործածված գրքերն են—ժամագիրք, պատարագամատուց, տոնական, որոնց հիմնական մասերը հին են: Իսկ «սուրբ հայրապետանքի մշտարիտ իմաստութիւնն» ասելով հակառակի են աստվածաբանական-գաղափարական գրվածքները:

Առավածաշնչի և եկեղեցական գրքերի թարգմանութեանն անհրաժեշտ էին: Առավածաշնչի վրա ուսում էին տալիս, իսկապես աստվածաշունչ էին սովորեցնում: Դա և՛ ընթերցանութիւն, և՛ կրօնի զիրքն էր:

Թարգմանութեան գործով, ինչպես երևում է, պարտապէս է ավելի Սահակ կաթողիկոսը, որ մանկութիւնից լավ կրթութիւն էր ստացել հռչակների մեջ, քան հեղինակու էր: Նա էլ մի ժամանակ անձնատուր էր եղել ձգնաժողովական կյանքի, և բազմաթիվ աշակերտների հետ շրջում էր քարոզելու: Կաթողիկոս դառնալով՝ քնակաւարար նվիրվում է եկեղեցու գործերին: Մաշտոցը շրջում էր գովառները, իսկ կաթողիկոսն իր պաշտոնի պատճառով ֆեոն էր ավելի վարդապետում, ուստի և ավելի համարուսթիւն ուներ գրավոր աշխատանքով պարապելու: Գրչուհւնը պատմում է, թե երբ Մաշտոցը երկրորդ անգամ վրաստանին այցելելուց հետո՝ վերադառնում է վարդապետ՝ այն ժամանակ երկու երանելիներն էլ ուշադրութիւն գործերին իրենց ազգի զարութիւնն ավելի հարգելու և դուրացնելու, և անմիջապէս ավելացնում է, թե «Մեծն Սահակը լիսեց թարգմանել ու գրել ըստ իր առաջիկա սովորութեան: Ապա թարգմանութեան համար հարկ է լինում նույնիսկ հասուկ թարգմանիչներ, ուղարկել ժամանակի եկեղեցական-գործական կենտրոնները: Նրանք իրենց աշակերտներից երկուսին, Հովսեփին և Յովնիկին, որ Այրարատյան գաղափար Գողթ գյուղից էր, ուղարկում են Նոյեմբ, որպէսզի տարակամ սուրբ հայրերի ավանգարդութեամբ հայերեն թարգմանեն: Այդ գործը կատարելուց հետո՝ նրանք թարգմանութիւններն ուղարկում են Սահակին ու Մաշտոցին և իրենք գնում են Կոստանդնուպոլիս, շուրջ և ուսանելով և համաձայնով՝ կարգվում են հելլենական լեզվից թարգմանիչներ: Այս աշխատեղ գնում են և Ղեկնապետն ու Գրչուհւնը: Սա Մաշտոցի վարձագրերն է:

Այդ երկուստեղիցները Նոյեմբում ու Կոստանդնուպոլիսում ծանոթա-

Նույն ևն եկեղեցական գրականությանը և ժամովոր հոսանքներին այն ժամանակ, երբ բորբոքված էր դավաճաբանական մեծ վեճը. շատ բան թաքմանում են և վերադարձին հետները բերում են ձեռագիրներն նույն թաքմանական գործը Հայաստանում շարունակելու համար: «Այնտեղ միասին հոգևոր ախպրաբայի խնդիրը վերջացնելուց հետո:—գրում է Կորյունը,—վերադառնում են՝ բերելով իրենց հետ Ս. Գրքի հաստատուն օրինակներ և շատ շնորհագիր հայրերի ավանդություններ և Նիկիայի ու Նիքեոսի ժողովների կանոնները: Ըստ այսմ նրանք վերադառնում են Նիքեոսի ժողովից, ուրիշ 431 թվից հետո: Մաշտոցն ինքն էլ Արևմուտքում, հունական կողմ կողմերում եղած ժամանակ քաղաքում շնորհագիր մատենան գրաքննելեղեց ստացեալը, անշուշտ հունական:

Այնուհետև, առում է Կորյունը, Սահակը հանգրձնեց նպակաւ՝ գլուխադրոյն, գլխակարծագրեալ, գլխութանակի թարգմանութիւնս հաստատելը ճշմարիտ օրինակօք բերելովք, և շատ ևս մեկնութիւն քրոց թարգմանեալ, — առաջիկա հանկարծակեղութեա (պատահաբար գտած) գլխութանակի թարգմանութիւնները նպակի հետ միասին հաստատեց բերված ստույգ օրինակներով, և շատ էլ Ս. Գրքի մեկնություն թարգմանեցին: Կնշանակի՝ Աստվածաշնչի թարգմանութիւնը սկզբում կատարված է եղել շատք կերպով, պատահաբար գտած օրինակից, և հետո այդ առաջիկա թարգմանութիւնը հունարենի ստույգ օրինակների հետ համեմատելով՝ ուղղել և հաստատել են: Թե որ լեզվից է եղել առաջիկա թարգմանութիւնը, այդ մասին այստեղ էլ չի հիշում Կորյունը: Ընդունում են, թե դա թարգմանված է եղել ասորերենից: Ս. Գրքի հայերեն ձեռագիրները ուսումնասիրութիւնից էլ երևում է, որ առաջին թարգմանութիւնն իսկապես կատարվել է ասորերենից: Մ. Խորենացին էլ ասում է, թե Սահակն այդ թարգմանել է ասորերենից այդ լիակալ յունիս (Գ. 54):

2. Ս. Գրքի աղիցաւթումը:—Այն, ինչ որ օտար լեզուներով հնարավոր չէր անել, շատ հեշտութեամբ գլուխ է գալիս հասկանալի հայերեն վեզվով և Մաշտոցի ու Սահակի պատրաստած բազմաթիւ աշակերտների ձեռով, որոնց ուղարկել էին Հայաստանի զանազան կողմերը ուսուցանելու, հայերեն գրել-կարգել, իսկապես Ս. Գրքը աղիցաւթնելու հայերեն լեզվով: Թարգմանութեան շնորհիվ մարդիկ արագ ձանձրանում էին այդ գրքի բազմազան բովանդակութեանը, որի նմանը չկար հայ ավանդական բանահյուսութեան մեջ, «Երկիր որ համբաւուցն անգամ օտար էր կողմանցն այնոցիկ, յորում ամենայն աստուածագործ սքանչելագործութիւնքն ցործեցան, առժամայն վաղվադակի ամենայն իրացն եղելոց խելամուտ լինէր», — մի երկիր, որ անունն անգամ չէր լսել այն կողմերի, ուր բոլոր աստվածային սքանչելի գործերը կատարվեցին, շատ շուտով, իսկույն իմացով բոլոր նշած բաները. ոչ միայն ժամանակով կատարվածները, այլև աշխարհաբարսից առաջ եղածը, գրանից հետո եղած բաները, աշխարհի սկիզբն ու վերջն ըստ Աստվածաշնչի:

Մի երեսուն-քառասուն տարվա ընթացքում թարգմանական գրականութեան միջոցով պատրաստվում են սերունդներ, որոնք ունենին քրիստոնեական մասին գոնե տարրական հասկացողություն և սերտ կապված էին

Ս. Գրքին և ախպետ առգործած նրանով, որ նրանից բաժանվելն ալլեա ահնաբերին պիտի լիներ: Սրանով արդեն մեծ հեղաշրջում էր մտնում հայ կյանքի և մտածութեան մեջ: Մարդիկ կապվում էին մի նոր աշխարհայեցութեան և ավանդութեան հետ, որ օտար էր, բայց բազմաթիվ ոգևորված անձերի բերանով մի անգամից Հայաստանի բոլոր կողմերում քաղաքներում՝ սկսում էր թափանցել նաև ժողովրդի մեջ: Կապալադուրթյանը վերջապետ սկսում էր տեղի տալ քրիստոնեութեան առաջ, դրան որոշ հասարակական խավերի մեջ: Թողնում էին, ուրեմն, հին հայրենական հավատալիքներն ու նրանց հետ կապված ավանդութեանները, հետևաբար և հին բանաստեղծութիւններ, և նրանց տեղ ընդունում էին նոր հավատքն իր. ավանդութիւններով, իր կարգերով, սովորութիւններով ու գրականութեամբ: Դրա համար կենդանի օրինակ էին դառնում և բազմաթիվ վանականների. խմբերը, որոնք իրենց մենակեցութեամբ կտրվում էին աշխարհական կյանքից ու աշխարհից, ուրեմն և հին հայրենականից, իսկ այդ նշանակում էր, Կորյունի խոսքով ասած, «Դիբել զամենեսեան ի հայրենեացն առանդելոցն», «ի բաց այնչափ անշտանել ի հայրենեաց իւրեանց և այնչափապէս ցուցանել, մինչև ասել իսկ թէ՝ Մուսղայ զժողովուրդ իմ և զտուն հօր իմոյ: Իրաւան կյանքն, ուրեմն, քրիստոնեական կրօնով առգործած մարդկանց համար մի տեսակ շարունակութիւն էր դառնում Ս. Գրքի պատմութեան և ոչ ազգային անցյալի:

Դրանից եկած օտարը, հարկով, ախպետ շուա ամեն տեղ և ամենքին մտացնել չէր կարող տալ հայրենի ավանդութեանները, որոնց մի մասը մինչև վերջերս էլ դեռ մնում էր իրեն ժողովրդական հավատք՝ անհամատեղութեան միջոցով: Այն միայն ժողովրդի, այլև նույնիսկ շատ վանականների համար, հարկով, դեռ ըմբռնելի չէին քրիստոնեական սկզբունքները, բայց և ախպետ՝ Ս. Գրքի, առանձնապէս Հին Կտակարանի ազդեցութիւնը, ինչպէս երևում է մեր մատենագիրներից, շեշտված է մեր հին սովորութիւնների ու բարքերի մեջ սկսած ճշգրտորէն: Սաղմոսներն ու մարգարեական օրհնութիւնները հետզհետեւ անցնում են հին բնիկ երգերի տեղ. նախաբարները ճշգրտաբար օտարմանը են երգում: Նույնիսկ լեռնական կիսավայրերի եզրագնաբարոյ, որ լեռնաբարոյ ստառնեցիների համար հազարդում են 10-րդ դարում, թե «դիտեն զաղմուսն զինքն քաղաքանիցն վարդապետացն Հայոց, զոր հանապազ ի բերան ունին» (Թոմա Արծրունի): Աստվածաշնչի առաջին թարգմանութիւնն, ուրեմն, հենց օկդրից մուտք է գործել նույնիսկ այդ լեռնական ժողովրդի մեջ: Ի՞նչ այս հասկանալի է. քրիստոնեութեան ընդունումը, ինչպէս և ինքը Մաշտոցը, հատուկ ուղադրութեան էին դարձնում այնպիսի լեռնային խուլ կողմերի վրա, ուր քրիստոնեութեանը մուտք չէր գործում. ամէնարդ և անդարման, օղապանամիտ, վայրենազոյն հիւսաղաբարոյն կողմերում էր քարոզում Մաշտոցը:

Հին Կտակարանի երգերից ավելի նրա պարզ պոէզիաներն ու պատմական ճշմարտութիւններն էին հասկանալի, այլև շատ հաճելի պիտի լինեին դեռ մանկական հայ մտքերին: Նրանք գլուրդութեամբ յաւերցնելով այն՝ նույնիսկ միամտութեամբ կապում էին իրենց երկրի այս կամ այն տեղի հետ և վերածնունդով դարձնում բանաստեղծութեան նյութ: Այսպէս, օրինակ,

Աստվածայնի այս խոսքը՝ «Նաեաւ տաղանն ի լերինս Արարատայս ներշնչում էր տեղական հետաքրքրություն հեղի ջրհեղեղի և Նոյան տապանի զրույցները, մանավանդ որ հայերին դրացի ասորիների և ուրիշների մեջ, Ս. Գրքից, ժնկախ, եղել են հին զրույցներ ջրհեղեղի մասին, որից ազտավող նավը իբր դուրս է եկել ու կանգնել Հայաստանի Կորդուալ աշխարհումս Այս ասորական զրույցներն ամենավաղ ժամանակից հավանորեն ծանոթ են եղել և հայերին և Աստվածաշնչի ազդեցությամբ ավելի կենդանացել են, Եւրոպայում արդեն ստեղծված է մի նոր զրույց, Նոյան տապանի հետ կապված, որ մանրամասն պատմում է Փ. Բուզանդը (Գ. 10), Մերիկի եպիսկոպոս Հակոբը, որ իբր Լուսավորչի ազգական էր, դալիս է գի լերինս Հայոց, ի լեռանն Մարարադայ, ի ռահման Այրարատեան Թեոքրոսեանն, ի դաւառն Կորդուալ... տեսանել զփրկական տաղանն Նոյեան շինուածոյն, զի յայս լերին հանգնաւ նա ի ջրհեղեղէնս, եվ նա հրաշալի կերպով իբր ձեռք է բերում տապանի մի կտոր, Այս զրույցը հետադարձ կորզուաց Արարադ լեռից փոխադրված է Մասիսի վրա, որ և եվրոպացիները կոչում են Արարատ, Այնտեղ՝ Ակոսի գլուղի մոտ շինվել է և Ս. Հակոբու վանքը, և կա Ս. Հակոբու «հրաշագործ» աղբյուրը, և նմաններ:

Սիփան ուրի համար էլ են պատմել նման բան. «Բնակիչները մեկ բան կ'երգին այս լեռան վրա իբրեւ հին երգ և կ'ասեն՝ Նոյն տաղանն հեա ի Սիփան, ասաց.

«Սիփան, աւ դիւ, աւ դիւ»:

Սիփանն ասաց.

«Նա ի Մասիս, գնա ի Մասիս,

Որ մեծ է քան դիւ,

Որ բարձր է քան դիւ»:

Այս առաջինը պատմում են նաև Փոքր Մասիսի վրա, որ կոչվում է Սիս տեղանով, Թուրքում ենք սերի զրույցներ Նախիվանի Նոյն տաղանի և այլ տեղերի վրա, սուրճ կապած են նախ հեա Արդիսի զրույցներ շատ են եղել և միջին ու հար գաղութում, Գրեթե անհնար է երկրորդադ մոգերից մեկի գերեզմանը Մուկոց գավառում էին ցայց ասլիս և այլն:

Բացի սրտնից՝ Նոյի, Սեմի և սրա որդի Տարբանի մասին, ըստ Խոբենացու, ամենավաղ ժամանակներից արդեն հիշատակություններ են եղել հայ ժողովրդական երգերի մեջ, և այդ տնուները ժողովրդական ստուգաբանությամբ կապված են եղել Հայաստանի Սիմ ասորի, Տարոն և Յրոնց տնուների հետ: Նույնն ավելի եւս ուշ ժամանակներում երևան է գալիս Այրիկ Տարոնի վեպի մեջ, Նույն Սիմ լեռան բնակիչները շատ հին ժամանակներից իրենց Ստանուռն տնունը կապել են Ս. Գրքի Սարասորի հետ, որ իր եղբոր հետ փախչում է Հայաստան և բնակվում այդ լեռան վրա, մի զրույց, որ գործել է Ստան Մաերի առաջին հյուրի հիմքը: Այդ Արարատի կամ իր եղբոր հետ են կապել Արմառուիներն և ուրիշներն իրենց ծագումը, իսկ Բագրատունիները՝ հրեական Դավիթ թագավորի հետ:

Եվ վերջապես, մեր գրականության սկզբում արդեն տեսնում ենք, որ

¹ Սիփան և այլն — Գրք. Բք. էջ 86.

² Մ. Արեգյան — հայ ժողովրդական առաջնություններ, էջ 274 և հետ.

հայ ազգի ծագումը կապում են Աստվածաշնչի տնունների հետ. Հայաստանն անվանում են Թորգոմայ տունը: Կորյունն և ուրիշները հայ ազգը կոչում են Աստվածաշնչի ազգը, նկատի ունենալով Աստվածաշնչի հետևյալ խոսքը. «Պատուէր տուք յինչն Այրարատեան թագաւորութեանցն և Աստվածեան զնդին» (Երեմիա, ԾԱ. 27): Աստվածաշնչի «Արարատ տնունը մեկնաբանները նույնացրել են Հայաստանի հետ և նրա հետ հիշված Աստվածաշնչի տնունը էլ մեկնել են իրեն հայկական գուռը:

Մ. Գրքի ազգեցությունը մեծ է եղել ոչ միայն հայկական ժողովրդական բանահյուսության վրա, այլ նույնպէս, և ավելի ևս գրավոր գործերում: Բնականաբար, թե իր բովանդակությամբ և թե ձևով, Մի կողմ թողնելով այդ գրքի ազգեցությունը կրօնական գրվածքների բովանդակությամբ և գաղափարախոսությամբ նկատմամբ, պետք է շեշտել, որ նրա լեզուն օրինակելի է դարձել բոլոր գրողների համար և հարատև իշխել է բոլոր դարերում: Աստվածաշնչի լեզուն սկզբից հենց մեր հին գրականության համար դարձել է կլասիկական իր քերականությամբ, իր բառերով ու դարձվածներով, պատկերավոր ասացվածքներով ու բանաստեղծական երկերի համար, մանավանդ այն հետագա շրջաններում, երբ գրաբան լեզուն այլևս կենդանի խոսակցական չէ եղել: Ելլալ արվեստական կերպով սովորովի:

3. Ուրիշ քաղաքացիություններ: — Եթե աշխարհականի համար բավական էր Մ. Գրքը, եկեղեցականի համար, որ ուսուցիչ էր, այդ քիչ էր: Նա պետք է իր ժամանակի կրօնական ուսման բարձրության վրա կանգնե՞ր՝ ծանոթ լինելով ասորական և հունական եկեղեցիների կրօնական հարկավոր երկերին, ընդհանուր եկեղեցու մեջ մշակված գիտությունն ու գրականութանը: Եվ Սահակի ու Մաշտոցի գործունեությունը կարևոր կողմերից մեկն է, որ նրանք հոգում են նաև այդ մասին՝ անձամբ տնելով և տնել տալով դասական թարգմանություններ, Կորյունի վկայությամբ, ինչպես ասում է, թարգմանել են «չառ ևս մեկնութիւն զորոց» և «բազում ևս զհայրապետաց որոց զճարտար գիտաստութիւնն», այսինքն դավանաբանական գրվածքներ: Եվ այս հասկանալի է: Ընդունելով Եփեսոսի և Նախորդ ժողովների վճիռները՝ պետք է ծանոթ լինելին նաև եկեղեցու հայրերի դավանաբանական երկերին:

Մի կարևոր հանգամանք ևս պետք է նկատի ունենալ: Նրանց միջոցով ստեղծվում է թարգմանական գործը շարունակելու ավանդություն, որով և Եւրոպ գործում արդեն առաջանում է հայկական թարգմանական ճոխ գրականությունը: Իր այս ուղղությունը հայկական հին գրականությունը շարունակում է այսօր, հին հայերենով և հետագա դարերում, երբեմն ուժեղ, երբեմն թուլացած կամ ժամանակավոր կերպով դադար առած, կարելի է ասել, մինչև 19-րդ դարը, մինչև նույնիսկ այդ դարի կեսերը: Դրանով ընդարձակվում է հայ գրադասների ու գրողների մասով հորիզոնը, նրանք սահմանափակված չեն մնում հայերենականի մեջ, այլ շարունակ հաղորդակից են դառնում արևմտյան քրիստոնյա աշխարհին, երկար ժամանակ նաև ասորականին, ձեռք են բերում նոր հասկացություններ և նոր աշխարհայե-

ցումթուռնա Այդ նպատակով է քնակաճարար հայ կուստուրայի դարգացմանն և ազգային ինքնագիտակցութիւնն առաջ բերելուն:

Այժմ դժգոյս է ճիշտ որոշել, թե երբ և որքան թարգմանութիւններ են արել մեր գրականութիւնն առաջին դարերում: Դրանց մեծ մասի ժամանակն ու թարգմանիչներն անհայտ են: Շատ բան կորած է, կլինեն երկեր էլ, որ դեռ երևան չեն եկել: Բայց ինչ որ մինչև այժմ մնում է և հայտնի է, դա էլ ցույց է տալիս, որ հին թարգմանական գրականութիւնը շատ հարուստ և բազմակողմանի է եղել:

Դանի որ գրականութիւնն առաջ էր բերված որոշ եկեղեցական նպատակի համար, բնականաբար մեր հին թարգմանական գրականութիւնն մեջ չպիտի որոնենք հին հունական կլասիկ գրականութիւնն գրվածքներ և էլ բիզանդական տշխարհիկ գրականութիւնն շատ երկեր: Թարգմանված են շատ կրոնա-եկեղեցական գրվածքներ: Կարելի է առել, որ ժամանակի եկեղեցական գրական տեսակներից և Կոստանդնուպոլսի դպրոցում գործածած ձեռնարկներից ոչ մի նշանավոր երկ չեն թողել, որ չթարգմանեն Ճորգ, Յորգ և հայերոյ դարերում:

Ինչ էր ներկայացնում բնականաբար եկեղեցական գրականութիւնը Ճորգ դարի սկիզբներում: ... Դա ծնված էր եկեղեցու գործնական կարիքների համար. ուստի մի կողմ թողած եկեղեցու պաշտամունքի ժամանակ անհրաժեշտ նոր աղօթքներն ու նոր երգերը, որ երգում էին սաղմոսներից հետո, սկզբնական գրութիւններն են թուղթն ու կանոնը: Նոր Կոստանդնուպոլսի մեջ արդեն կան առաքյալների անունով թղթեր. նրանցից հետո՝ այսպես կոչված առաքելական հայերը, որ են՝ քրիստոնեութիւնն ակաճավոր ներկայացուցիչներն 1-ին դարի վերջերում և 2-րդ դարի սկիզբներում, թողած ունեն նույնպիսի թղթեր: Այսպիսով հենց սկզբից Քրիստոսը, այսինքն նաժանկան, դառնում է եկեղեցական գրականութիւնն մի կարևոր տեսակը, որով եկեղեցու հայերը բարոյական խրատներ ու բացատրութիւններ էին տալիս ժամանակակիցներին հետաքրքրող զանազան եկեղեցու-կրոնական խնդիրների մասին և հարաբերութիւնն պահպանում միմյանց ու համայնքների հետ: Հետո Հնումն շատ ծանոթ են եղել Անտիոքի եպիսկոպոս Իգնատիոս Աստվածազգայացի խաթուռական թղթերը, ինչպես և Զմիռնիայի եպիսկոպոս Պողիկարպոսին: Մնում են նրանց թղթերի հին հայերեն թարգմանութիւնները: Եկեղեցու հայերը թղթերի մեջ նաև կառնում էին տալիս քրիստոնեական պաշտամունքի, ճեսերի ու պաշտոնյաների և առհասարակ վարչական խնդիրների մասին: Կանոններ էին հրատարակում նաև եկեղեցական ժողովները, ինչպես սեռանք, թարգմանիչները հայերենից վերագտնալիս՝ հետները բերում են Նիկիո և Նիսեսի ժողովների կանոնները, որոնք և, երևի նրանց ձեռով, թարգմանված են հայերեն: Ունենք հնուց թարգմանված և այլ կտոններ¹:

Միևնույն զործնական նպատակն է ունեցել և Քորոզը, որ եկեղեցու

¹ Կանոնագիրք Հայոց, Թիֆլիս, 1918, էջ 203 և հաջ. Եւսեբիական: Գ. Բարսեղյան — Մոսկուայի թարգմանութեանց տիեզերք, Վենետիկ 1889, էջ 489 և հաջ. Կանոնագիրք:

պաշտամունքի ժամանակ կարեւոր տեղ է բռնել: Դա կապված է եղել Ս. Գրքի ընթերցվածների հետ և սկզբում եղել է պարզ ու հասկանալի լեզվով խրատ ըստ կարգացած հասցիների: Բայց հետագայում, շնորհիվ ճարտասան եպիսկոպոսների, դարձացել է հետադարձան արվեստով և դարձել նման Դա նույնպես դարձնական նպատակ է ունեցել, այն է՝ ունեւրն-դիրներին բացատրել քրիստոնեութան հիմունքները՝ քարոզելով պահգ. ապաշխարութիւն, ազդեց ու մեծակեցութեան, բարեգործութիւն և այլն: Ունենէ հին թարգմանութիւն բազմաթիւ ճառեր ղանաղան հեղինակների: Հայանի են Բարսեղ Կեսարացու, Կյուրեղ Երուսաղեմացու, Հովհան Ոսկե-բերանի և սերիւնների ճառերը:

Քրիստոնեական գրականութիւնը երկար չի մնացել այս սկզբնական լոկ գործնական նպատակի մեջ սահմանափակված: 2-րդ դարի կեսերից սկսում է դարգանալ գնաստիկյան գրականութիւնը, և եկեղեցին ստիպվում է գնաստիկյան ազանդի գեթ ժաջաւելու համար առաջ բերել հակադաս-տիկյան գրականութիւն, որ դրազվում էր արդեն տեսական խնդիրներով: Միտժամանակ հարկավոր է լինում քրիստոնեութիւնը պաշտպանել հեթո-նաական հարձակումների դեմ, հերքել նրա մասին տարածված անհեթեթ յուրերը: Այսպիսով առաջանում են գաղափարապաշտպանութիւնը և եկեղեցւոյն պաշտպանութիւնը, որոշված գնաստիկյան և սերիւ ազանդադրների, ինչպէս և հերետիկների ու հեթանոսների դեմ: Վերջապէս՝ փոխադարձութիւն սովորած ջատագործները հանգստ են գալիս նույնիսկ հույն փոխադարձների դեմ: Երբ քրիստոնեութիւնը 4-րդ դարում վայելում է կայսրների հովտ-նադրութիւնը, ջատագործներն արդէն նպատակ են գնում ոչնչացնել հե-թանոսութիւնը, և ջատագործութիւնը պաշտպանադարձանից փոխվում է հարձակողականի և ստանում է այլ սահմաններից՝ հանդիմանութիւն, հզոր, հակաճառութիւն: Ընտվորութիւն: Այստեղ հայերեն թարգմանու-թիւններից հիշենք միայն նշանավոր փոխադարձ և ճարտասան Արիստարքոս Աթենացու հիտագովութիւնը:

Այս բոլոր գրականութիւն մեջ հեազհետե պարզվում են եկեղեցու սկզբունքները, որ առաջին դարերում գեթ տնորոշ էին: Գրանց ազբայւրը Ս. Գրքէն էր, իսկ արանից ոգավելու եղանակը՝ այլաբանական բացատրու-թիւնը կամ մեկմարտութիւնը: Հույն փոխադարձները մեր թվականութիւն-նից առաջ արդէն սկսել էին այդ եղանակը գործողել իրենց հին կրոնա-կան առասպելների վրա և այն պարզ պատմվածքների մեջ տեսնել խորին մաջեր: Նրանց միտժամանակ առասպելներից վերացնում էին կրոնական տեսակետով կողիտ, գաթակեղեցուցիչ մասերը, որոնց այլևս չէին հավատում բարձր բարոյական գիտակցութեան հասած մարդիկ: Այսպիսով նրանք հին առասպելներն ու բանաստեղծութեան գլուխ-գործոց երկերը փրկում էին անխուսափելի կորստից: Պրիստոնեութիւններից առաջ արդէն Փիլոն Երբայ-ցին (ին. մոտ 30 թ. մ. թ. ա., մոտ 45 թ. մ. թ.) նույն-այլաբա-նական բացատրութիւնը գործողել էր Հին հուսկարանի վրա: Նույնպէս շարունակում են վարվել և քրիստոնյաները, Ս. Գրքի պարզ խոջերի տակ վերացական գաղափարներ որոնելով, նրանց մեջ կանխասութիւններն գտնելով, կամ հենց լոկ, — դժվարութիւններից խուսափելու համար, որ-

պետքի համառոտացանքի կրօնական զգացման ջանքեր չվերադարձնեն,— այդ զբոսի բովանդակութեանը ժամանակակից հասկացութեան ու հայացքների համեմատ գործնական նպատակով։ Այլաբանական մեկնութեան հետ միաստանակ դորեմարում էին նաև մթին, դժվար հասկանալի կտորների բառական բացատրութեանը։ Հետագայում, սակայն, շատ սիրելի է դասնում այլաբանական մեկնությունը, և այդ անհրաժեշտ է համարվում հաճախ նույնիսկ անհնարան նրբամտութեանը ցույց տալու համար։ Այսպիսով առաջ են գալիս և կուտակվում մեկնությունները։ Մեր գրականության սկզբում հենց Սեփակ կաթողիկոսն ու Նզդիկ Կոչարացին թարգմանել են Ս. Գրքի շատ մեկնություններ, նվազագույնի հերկերի թարգմանություններով էլ շատ հարուստ է մեր հին գրականութեանը, Թարգմանված և սիրված են եղել հենց Փիլոն Երբայցու բազմաթիվ աշխատությունները, որոնց մի քանիսի հոսանքներն ընտելանքներ կորած են։

Այդ մեկնություններով, ինչպես վերևում ասվեց, պարզվում են եկեղեցու սկզբունքները, առաջ է գալիս քրիստոնեական աստվածաբանութեանը, որովհետև է դավանանքը, որ հաստատվում է առաջին երեք տիեզերական ժողովուրդով։ Բայց վեճերն ու կախիկներն այդ մասին չեն գազարում, ուստի և զարգանում է մի հարուստ գրականութեան տեսական-դավանաբանական ընտելութեամբ՝ ժամանակի փոխադարձությունն իմացող կարող անձերի։ Եկեղեցու հայերի ձևով, Դա շատը հարց է կտալ տարիստակա՞ն, հայրաբանական գրականությունը էլ, որից նույնպես ունենե՞լ շատ թարգմանություններ։

Այս գրական տեսակների վրա պետք է ավելացնել փոխադարձական, փոխադարձական և քրիստոնեական գրվածքները, այլև պատմությունը, առանձնապես նվաճող Կեսարացու «Պրոնիկոնը» և Եկեղեցական պատմությունը, որոնք երկուսն էլ հնուց թարգմանված են հայերեն։ Երկրորդը, ըստ Մովսես Խորենացու վկայության, թարգմանել է ավել Մշակացը, և պարզվում է, որ այդ գիրքը թարգմանված է 410—420 թվականների մեջ¹։

Պատմական գրվածքների կարգին են պատկանում նաև վկայաբանությունները, որոնք քրիստոնեական հավատի համար չարչարվածների և սպանվածների նահատակության պատմություններ են, ինչպես և Կրիստոնեությունը ու վարժապետությունը — Եսրեթի կենսագրությունները։ Դրանք սահմանված են եղել բոլոր հավատացյալների ընթերցանության համար և կարգացվում էին նույնիսկ եկեղեցու։ Այսպիսի երկերի հիմնական մասն է միայն պատմական։ Սրբի կյանքի իրական եղելություններից տանվում էր միայն այն, ինչ որ համապատասխան էր վարժապետի նպատակին, մնացածը քննադատական ստեղծագործություն էր։ Նպատակն էր տարածել և հետաքրքրություն առաջացնելով յուրացնել սույն եկեղեցու գաղափարները։ Հեղինակներն աշխատում էին ընթերցողների մեջ բարեպաշտություն գործեցնել, ձգտում էին իրենց գրվածքների իդեալականաց-

¹ Շողակեթ, Ս. էջիմանի Հայագիտական Ժողովուրդ, Վաղարշապատ, 1918, էջ 154 և 155. Հայ մատենադարանի հնագույն թվականները, Գուգու Տեղ-Մկրտչյանի։

րած հերոսներով կենդանի օրինակներ առաջ բերելու՝ ըստ քրիստոնեական աշխարհայեցութեան առաքելն էր կյանքի, ճշմարտութեան անձնուրացութեան և աշխարհուրացութեան: Գորգ զորում թողնէ Ռիզանդիայում կազմել էր այս տեսակի պատմվածքի համար մի ընդհանուր շարունակ ըստ բովանդակութեան և ըստ ձևի և հերոսների մի ընդհանուր տիպաւ: Ունկնդիրներէ կամ ընթերցողներէ վրա ազդելու համար՝ պիտի ընթերցեն իցում էին չափազանցութեամբներով, հերոսների ներդրումով: Այս տեսակի շատ սիրված է եղել և հայերի մեջ. ունենէ շատ թարգմանութեաններ, որոնց մի մասը հին է, մյուս մասն ավելի ուշ դարերի է: Կան և այնպիսիները, որոնք երկու տեսակն են թարգմանված, և երկու թարգմանութեաններն էլ ֆուտ են: Հին թարգմանութեանն է, օրինակ, Շառլոթ Պալպոսի Անապատականի, որով սկսվում է հին ժողովածուն, ապա երկրորդ տեղը բռնում է շատ հայտնի Շառլոթ Երանելոյն Անտոնի Եղիպատոյ միայնակցի, թուրք Աթանասի, որ է Աթանաս Մեծն Աղեքսանդրացի: Սրա երկերից ֆուտ են ուրիշ բազմաթիվ թարգմանութեաններ ևս զանազան բովանդակութեամբ: Մենք հետո էլ կվերադառնանք այս սրբախոսական տեսակին:

Անս վերում բերված գրական տեսակներով հարուստ եկեղեցական գրականութեանը կար Երգ գրի ձգըրում մեր առաջին թարգմանիչների առաջ, որոնք և աշխատում են այն թարգմանելով փոխադրել իրենց հայրենիքը: Նրանց և նրանց հաջորդների թարգմանութեանների մեջ, ինչպես տեսանք, դանում ենք՝ խղիթ, կանոններ, հատեր, շատագուցութեաններ, մեկնութեաններ, աղոթքներ ու հոգևոր երգեր, վկայաբանութեաններ, զավանդատեական ու պատմական գրվածքներ, ինչպես և հարուստ տեղական, փոխառյալական, քերականական և այլ բովանդակությամբ աշխատութեաններ զանազան հեղինակների: Կան թարգմանութեաններ, որոնց բնագիրը կորած է. ուստի և այգպիսիների հայերեններն ստանում են առանձին տրեք:

4. Տարբեր գրական հոտմեքներ կամ դպրոցներ ըստ լեզվի:— Մինչև այժմ դեռ հնարավոր չի եղել ոչ միայն թարգմանական, այլև ընդհանրապես հայ գրական կյանքի ընթացքը ճշտութեամբ որոշել: Բայց և այնպես առհասարակ վաղուց ի վեր ընդունում են, որ հնումն եղել են առանձին

¹ Շառլոթ Երանելոյն հարուստ և զարգացածութեան նպին ըստ կրկին թարգմանութեան նախնայ, հատար առաջին և հատար երկրորդ, Վենետիկ, 1888:

² Հովհան Ոսկեբերան, Բարեկց Կեսարացի, Կյուրեղ Սրբառարկեացի, Եղեքեհոս Կեսարացի, Փիլիս Սրբայեցի, Աթանոս Մեծ, Արեհոս Կեսարացի, Իզնոսեոս Առաքածաղոյաց, Պողոս Եղեքեհոս Զմիռնեայի եղեքեհոս Սրանց վրա ավանդենք նաև՝ Գրիգոր Նյուսացի, Գրիգոր Սեանիկեացի, Բեռնիոս Եղեքեհոս, Եղեքեհոս, Կյուրեղ Աղեքեհոսացի, Հովհաննես Դաւթանկացի, Գրիգոր Նազիանզացի, Յուսէփոս Կուր, Սերբիոսեոս Անտիոքա, Սեբեռեոս Գարգուս, Դեմիտր Արեպոպի, Զեքուհոս, Աղոյեքեհոս, Գրիգոր Առաքածաղոս, Եղեքեհոս Կիւրացի, Եղեքեհոս Պառապի, Նանոս, Գրիգոր, Արեպոսեոս, Գրիգոր, Թեոֆիլ, Եղեքեհոս Թարգման, Սկիւրոս Սեպուսեպիոս և ուրիշները: Յեւ հաւ. Գար. Զարեհանայեցի Մատենադարան Հայկական թարգմանութեանց նախնայ (զար Դ-ԺԳ), Վենետիկ, 1889:

գրական հոսանքներ կամ դպրոցներ, որոնք իրարուց տարբերվում են իրենց մտածողութան եղանակով և ոճով:

Օտարաբանության նկատմամբ պետք է զանազանել հետևյալ խմբերը: Մի շարք գրական հիշատակաբաններ, լինեն ինքնուրույն թե ասորերենից կամ հունարենից թարգմանված, աչքի են ընկնում բուրրովին մաքուր հայկաբանությամբ, երբեմն շատ կանոնավոր պարզ ու հստակ ոճով, երբեմն էլ դարդարուն ու պերճ լեզվով, կամ անկանոն և լի ավելորդաբանություններով: Ուրիշ խումբ թարգմանություններ, ինչպես Նվսերեսոսի «Եկեղեցական պատմությունը», գրված են ընդհանրապես հարթ և պարզ հայկաբանությամբ, բայց հաճախ նյութապես թարգմանում են ասորերենը օտարաբանով հայ լեզվի ոգուց¹: Կան և այնպիսի երկեր, ինքնուրույն թե թարգմանական, որոնք ընդհանրապես «ընտիր» հայերենով են, բայց ունեն սակավաթիվ աղբյուրություններ հունարենից: Նվ վերջապես՝ կան բազմաթիվ երկեր ևս, — ճարտասանական, փխրոփայական, քերականական ու դավանաբանական բովանդակությամբ, — որոնց բնորոշ հատկությունն է խիստ հունաբանությունը: Դրանց հեղինակները կամ թարգմանիչներ իրենց մտածողության եղանակով, ոճով ու լեզվով շատ հեռու են հայերենի էական հատկություններից, նրանք բառացի թարգմանում են հունաբանների լայն լեզվի շարահյուսությամբ և նորանոր բառեր բաղադրելով հունարենի նմանությամբ:

Ոչ միայն առանձին երկերի, այլև այս գրական դպրոցների ժամանակն ևս ճիշտ որոշված չէ: Ընդհանրապես ընդունում են, որ առաջին երկու խմբերի գրվածքները (որ ուրիշները բաժանում են երեք կամ չորս դասի) ավելի հին են, վերաբերում են գրականության սկզբնական, ինչպես կոչում են, «Ոսկեդարյան» շրջանին, այսինքն Ծ-րդ դարին, այն էլ, ըստ ոմանց, այս դարի մոտավորապես առաջին կեսին, երբ գործել են առաջին թարգմանիչները կամ առաջին աշակերտները: Իսկ երրորդ և չորրորդ խմբերի երկերը վերագրում են «հունասերների» կամ «հունաբանների» դպրոցին, որ կարծում են, թե Ծ-րդ և ավելի ևս 7-րդ դարերում է գրագրացել:

Այս տեսակետն ընդունելի չէ ընդհանրապես իր ամբողջ ծավալով, Կարելի չէ՝ առանց արտաքին ցուցմունքի, լեզվով միայն, հունարան ոճի վրա միայն հիմնվելով, կոնկրետ հետևություններ անել, որոշել գրվածքների, ուրեմն և պրակտիկ դպրոցների ժամանակաբանությունը: Ուրիշ խոսքով՝ բացարձակ հավանելի չէ այն «սովորական» ընդունված թեորիան, ըստ որի՝ հունարենի աղբյուրություն կրած, ինչպես և հունաբան գրվածքներն իբր «անարժան» են «Ոսկեդարին», Ծ-րդ դարին. այսինքն՝ Ծ-րդ դարում իբր միայն մաքուր հայկաբանություն պիտի լինի, իսկ ինչ որ այդպես չէ, այն Ծ-րդ դարից պիտի լինի, ըստ ոմանց՝ նույնիսկ Ծ-րդ դարի երկրորդ կեսերից ի վեր: Այսպես դատողները մոռանում են, որ ուրիշ լեզուներից թարգմանություն անողները, ինչպես և ուրիշ լեզվի ու գրականության

¹ Ն ո Ր Մ Յ Բ ի Վ Պ Ո Ս Տ Յ ի — Կարեն վարդապետ և Նարեկ թարգմանիչներ, Տփլիս, 1900, էջ 18:

է հառակման, Հեռագրեան այս հունարարութիւնը, հունական գիրութեան սերը, ավելի դարձանում է Ծ-րդ դարի երկրորդ կեսից, երբ առաջ են դաշխս մարդիկ շէր գիրառութեամբ հայովս և առաւելեալ յունիւնս, ինչպէս եղել է Դյուս կաթողիկոսը:

Հունական գիրութեան սերն անցնում է բնականաբար և հունական լեզվին. մարդիկ հափշտակվում են՝ նկատելով սրա մշակված լինելը համամասութեամբ հայերենի հետ. որ շուներ այն մեծ առավելութիւնները վերացական զարգացմանը արտահայտելու համար, ինչ որ հունարենը: Առաջին հերթին առաջաժամն մտածում են ստեղծել հունարենի ձևով ճիշտ գիրական տեղադրումներ: Այս առարկայի վրա Բայց հունական լեզվի առաջ խոնարհումը Ծ-րդ դարի կեսերից տեսնում է դեպի չափազանցութիւն: Արիստոտելի (աճաք Արիստոտելի Յաղագո ասան ստորոգութեանց) և Վեդագո մեկնութեան), Պորփիրի (հերածութիւնս) և ուրիշ մեծ ուսուցիչների թարգմանութիւնների լեզուն այնքան բառացի հունարան է, այնքան ճշգրտաբնէ հայերեն բառերով, որ դրանք դժուար է հասկանալ առանց հունարեն բնագրի: Եւ միայն ամեն մի բառը, այլև նույնիսկ բառը բառերի առանձին մասերն ստրկական ճշտութեամբ են թարգմանված:

Այսպիսի ճշգրտութեան թարգմանութեան պատճառը սկզբում առնչում եղել է մտածման նաև թարգմանիչների անվարժութիւնը և՛ հունարենին, և՛ հայերենին, — ինչպէս նույնը տեսնում ենք և մեր օրերում այլ լեզուներից թարգմանողների վերաբերմամբ, — բայց այդ եղել է նաև գիտակցութեամբ, որով նպատակով ի. Պոլսի գրողները հենքի գրվածքները հառականալի դարձնելու համար՝ դրանց մեկնութիւններն էին առնում՝ հաճախ ձևականորեն, բայց առ բայով որովհետև մեկնութիւններն ևս թարգմանվում էին հայերեն, պետք է, ուրեմն, թուրքիմացութիւններից զերծ մնալու համար, մեծ հեղինակների մեկնելի երկերը բառացի թարգմանվեին հայերեն, ապահով սկզբնաղբի լեզվի բոլոր դժվարութիւնները, որոնք բացատրութիւնների առարկա են եղել: Այս է պատճառը, որ այսպիսի կարևոր երկերի թարգմանութեան լեզուն ավելի հունարան է. քան դրանց՝ համեմատաբար պակաս կարևոր մեկնութիւնների թարգմանութիւններին, որոնք համեմատաբար պարզ և հաշկանալի են: Դժվարաբանական երկերն էլ ստրկորեն բառացի են թարգմանված՝ վերաբանութիւնների ժամանակ թուրքիմացութեան տեղիք չստալու համար:

Այսպէս խիստ հունարան լեզվով թարգմանված են բացի դժվարաբանական և փոխառական երկերից նաև ուրիշ գրքեր, ինչպէս՝ Վերադարձից գրքը, որ ճարտասանական կանոնների ու վարժութիւնների համար հարկնված մի աշխատութիւն է, և Դիոնիսիոս Թրակացու (Զ-րդ դարում մեր թ. ա.) քերականութիւնը, որ միայն ստուգաբանութիւն է, որ և մեծ ժողովրդականութիւն է վայելել և նույնպէս շատ մեկնվել է: Հայերի մեջ այս քերականութիւնը երկար դարերի ընթացքում դարձել է առարկա զանազան մեկնութիւնների, որոնք և կազմել են հայոց հին գրականութեան մեկ ճյուղը¹:

¹ Дионисий Фракийский и Армянские толкователи, издал и исследовал Н. Адонц,

Թե երբ են թարգմանվել Դիոնիսիոս Թրակացու քերականությունը, ինչպես և առհասարակ փխրոտփայական ու հարտասանական երկերը, այդ մասին կարծիքները տարբերվում են¹։

Յ. Հովնաթան քարզմամբքյուսմմբի խմբերը։— Վաղուց նկատված է, որ հունարան զգրոցի որոշ հիշատակարաններ իրենց լեզվով շատ նման են միմյանց, այնպես որ ըստ երևույթին աշխարհները մի խումբ են կազմում, այսպես, որինակ, Փիլոն երբայեցու թարգմանությունները լեզվով մոտիկ են Դիոնիս Թրակացու քերականությունը։ Այս վերջինիս համար կարծել են, թե դա զուցցե ամենավաղ² արտագրությունն է հունարան զգրոցի, և նույնիսկ հնարավոր է համարվել, որ առաջին քերականները հենց³ հղած լինին այդ զգրոցի հիմնադիրները⁴։ Քիչ հետո սրորդ է հղել լեզվական համեմատությամբ, իսկապես հունարան կազմություն ունեցող բառերի դործածության հիման վրա, հունարան թարգմանությունները վերածելու խմբերի և որոշելու սրանց ժամանակաբանությունը հաջորդական կարգով։ Ըստ այսմ⁵ «Հունարան զգրոցի իմաստասիրական, հարտասանական ու քերականական երկերը բաժանվում են երեք տարբեր խմբերի, որոնք դասնազան ժամանակադրվանների աշխատություններ են և ծագել են հաջորդաբար, մոտ երկու հարյուր տարվա ընթացքում, սկսած վեցերորդ դարի սկիզբներից կամ հինգերորդ դարի վերջներից, ուրեմն գլխավորապես վեցերորդ և յոթներորդ դարերում⁶։ «Թրակացու քերականության, Փիլոնի և Պիտոյից Գրքի թարգմանությունները կազմում են հունարան թարգմանությունների հնագույն շերտը⁷։ զրանք հեղածում են հունարան թարգմանությունների հատուկ մի խումբ և թարգմանված են Տիմոթեոս Կուզի Հակածառությունից առաջ⁸։ «Փիլոնը և Պիտոյից Գրքը թարգմանված են Թրակացու քերականությունից հետո⁹։ Ըստ այսմ, քանի որ «Դիոնիսիոս Թրակացու քերականությունը թարգմանված է Փիլոնից և Պիտոյից Գրքից առաջ¹⁰, ուրեմն և դա հնադույն հունարան թարգմանությունն է։ Ավելացնենք նաև այն, որ «Երեսնորսի Օոյցք առաքելական քարոզութեանն և Ընդ-

Πιτροπα, 1913, Արևեստ Դիոնիսիոս Թրակացի և հայ Մեկնութիւնք նորին Դուքի փխրոտփայի, Անաստաս Դեկնի, Մովսէսի Պերդդի, Սահականոսի Միւնեցւոյ, Համաժայ Արեւելցւոյ և Գրիգորի Մաղիսարսի, ի լոյս էած և ի քնին աւել Ն. Ազունց։

¹ Դովթիթ Անհագթի անունով հայանի փխրոտփայական երկերի մասին տեսնել հետեւյալների մեջ։

ա) Պենսութիւնք զրոց Դուքի Անագթի, կամ Թարգմանութիւնք Արիստոտելի, զրեց Զր. Գ. Գոնիբեր, Վիեննա 1893, էջ 37 և այլուր։

բ) Հ. Մասնադյան — Դովթիթ Անհագթի խնդիրը նոր լուսաբանությամբ, Արատարան ամսագիր, 1904, փետրվար, հունիս, հուլիս. այլև տասնմեկն արտատպություն։

գ) Սույն հեղինակի՝ հունարան զգրոցը, էջ 1 և հան. և այլուր։

դ) Ն. Ազունց — Արևեստ Դիոնիսիոս Թրակացի, էջ CLXXXIII.

է) Ն. Ազունց — Արևեստ Դիոնիսիոս Թրակացի, էջ IV։

զ) հունարան զգրոցը և նրա զարգացման շրջանները, քննարկու առաջադրություն, զրեց Հովթր Մանանդյան, զորոփ. Հայաստանի Պետական Համալսարանի, Վիեննա, 1928, էջ 228։

4 Անգ, էջ 103 և հան.

5 Անգ, էջ 116 և հան. 124։

դէմ հերձուածոց երկերը թարգմանված են հունարան թարգմանությունների առաջին շրջանում¹, դրանց թարգմանությունները ժամանակակից են ֓իլոնի թարգմանություններին², ճիմթեոս Կուզի Հակաճառությունը, Արիստոտելի Յաղագս Մեկնութեան և Ստորոգութեանց թարգմանությունները Յամբլիքոսի մեկնությունների հետ միասին՝ խմբակից են ու ժամանակակից և կազմում են հունարան թարգմանությունների երկրորդ շերտը³, Դրանք, ուրեմն, թարգմանված են 562—564 թվականներին, քանի որ այս տեսության հեղինակն այդ թվականներին է դնում ճիմթեոս Կուզի Հակաճառության թարգմանումը, Դրանից հետո, ուրեմն, Յ-րդ դարի վերջերում և 7-րդ դարում ընկնում են երրորդ խմբի թարգմանությունները. Գրավիթ-Ոլիմպիոդորոսի խմբի իմաստասիրական մեկնությունները թարգմանված պիտի լինեն հունարան երկրորդ շերտի թարգմանություններից հետո⁴:

Ինչքան էլ այս տեսության հեղինակը շուտաւարժածն համարի հունարան դպրոցի հաջորդական ընթացքը, բայց դա, լոկ բառերի վրա հիմնված լինելով, դեռ չի կարող վերջնական ճանաչվել, Բայց և այնպէս՝ հունարան դպրոցի զարգացման լուսաբանման նկատմամբ, մի քոյլ տուջ է դա, թեպետև շատ ընդհանուր կերպով: Հունարան թարգմանություններն այդ տեսությամբ ծաղած են համարվում ռսիսած վեցերորդ դարի սկիզբներից կամ հինգերորդ դարի վերջերից, կամ թե հունարան զարգացում սկսած հինգերորդ դարի վերջերից⁵: Այս տեսակետը ժամանակի նկատմամբ ճիշտ չէ, ուստի և ընդունելի չէ: Այդ թարգմանությունների սկիզբը եղել է ոչ թե 5-րդ դարի վերջերին, այլ այդ դարի երրորդ քառորդին, կեսերից ի վեր:

7. Հումաքամ դպրոցի սկզբնավորւթյամբ ժամանակը պարզվում է ճիմթեոս Կուզի Հակաճառութիւն զրքի թարգմանման տարեթվով, որ ընկնում է 480—484 թվականների մեջ: Այդ թարգմանությունը խիստ հունարան լեզվով է: Դրանով հեղաշրջվում է 19-րդ դարի վերջերից ընդհանրացած տեսությունը, որով հունարան դպրոցի սկիզբն, առանց որևէ հաստատուն հիմունքի, դրվում էր Յ-րդ դարում կամ 5-րդի վերջերից: Քանի որ Դիոնիս Թրակացու քերականության, Փիլոնի դործերի, Պիտոլից գրքի և Իրենիոսի Յոյց առաքելական քարոզութեան՝ երկի թարգմանություններն, ըստ հունարան լեզվի, կազմում են մի խումբ և կառարված են, ինչպէս կարծում են, Հակաճառության թարգմանությունից առաջ, ապա ուրեմն դրանք թարգմանված են ոչ թե Յ-րդ դարում կամ 5-րդ դարի վերջերին, այլ 480—484 թվականներից մոտ երկու-երեք տասնամյակ առաջ: Հետևաբար հունարան դպրոցի սկիզբն ընկնում է 5-րդ դարի երրորդ քառորդին՝ 450—475 թվականներին: Այդ հիմնավորվում է և հետևյալով:

¹ Անդ, էջ 228 և հետո:

² Անդ, էջ 231:

³ Անդ, էջ 184 և հետո:

⁴ Անդ, էջ 148 և հետո:

⁵ Անդ, էջ 206:

Հունարան թարգմանությունները սկզբնավորության ժամանակը Ծ-րդ դարի վերջերից դնում են այս հիմունքով. «էւայոց մատենագրության մեջ, ինչպես հայտնի է, հունարան դպրոցի ավանավոր ներկայացուցիչները, մեծ մասամբ, անվանվում են փիլիսոփա կամ իմաստասեր, ճարտասան և քերթող, Արդ՝ Ծ-րդ դարի վերջերից սկսած հայոց մատենագրության մեջ հիշատակված կան մի շարք հայ մատենագիրներ, որոնք կրում են վերահիշյալ մականունները, Հնապույնը սրանցից՝ Ղազար Փարպեցու Թղթի մեջ հիշված Մովսես փիլիսոփան է, որն ապրած լինի Ծ-րդ դարի վերջերում։ Որ այս Մովսեսը հունարան դպրոցի հեղինակ է, այդ կտրելի է ենթադրել նրա գրվածքների մասին Փարպեցու ծանոթ վկայությանից, նաև նրա փիլիսոփոս մականվան հունական վերջավորությունից»։ Պետք է ավելացնել, որ Փարպեցին այդ Մովսես փիլիսոփոսի համար գրում է, որ նա եղիսկոպոս է եղել, ուրեմն մեծ ստորիք է հասել, որ պլուտոստորիչն և զադիստեալած գրեման նորա՝ առ անգիտութեան փաթաղ-իկէս [= աղ-ճատ, աղավաղված] կոչէին։ Որ նա մեռնելիս գրավոր անեծք է ասել և այդ անեծքը հայտնի է եղել և ժողովրդի Վահան Մամիկոնյանին, նրա այս նկարագրից ցույց է տալիս, որ այդ Մովսեսը նշանավոր մարդ և անվանի գրական գործիչ է եղել, Որ նա հայտնի է եղել իբրև փիլիսոփա և նրա մեղանունը հունարենի ձևով փիլիսոփոս է եղել և ոչ աստերևների ձևով փիլիսոփոս, որանից երևում է, որ իրոք նա հունաբան դպրոցի հեղինակ է եղել, այն էլ իմաստասիրական երկերի թարգմանիչ, թե չէ՝ նրան լրջությամբ այդ մականունով չէր կոչել Փարպեցին՝ «երանելի փիլիսոփոսն Մովսէսն, Հիմա՝ Ղ. Փարպեցու Թղթի գրության ժամանակը եղել է Ծ-րդ դարի վերջերում կամ Ծ-րդի սկիզբներում, իսկ այդ Թուղթը գրելու ժամանակ փիլիսոփոս Մովսես եղիսկոպոսն արդեն վաճառված է եղել, Հետևաբար, եթե այդ փիլիսոփան ապրած լիներ Ծ-րդ դարի վերջերում, նրա գրական գործունեության ետևն ժամանակը չի կարող նրա ծերության ժամանակ, Ծ-րդ դարի վերջերում եղած լինել, այլ բավական տարիներ առաջ, Ըստ այսմ հունաբան դպրոցի սկիզբը, փիլիսոփայական երկերի թարգմանության ժամանակը, դարձյալ Ծ-րդ դարի վերջերից ետ պիտի տանել մի քանի տասնյակ տարիներով, մոտավորապես մինչև Ծ-րդ դարի երրորդ քառորդը։

Տես՝ Դավանաբանական պայքարի գրականություն, § 2. Տիմոթեոս Կուզի «Հակաճառությունը, այլև Հինգերորդ հովելված՝ «Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» թարգմանվելու ժամանակը»։

8. Հուլիանի դպրոցի լեզվակամ ժողովուրդը։—Այս դպրոցի թարգմանիչները երբեմն ոչ միայն ստրկական հետևողություն են անում հունարենի շարահյուսության, բուռն դեմ բառ դնելով, և հունարենի խոսքառությունը գործածելով, այլև նոր հուլիական ու խոսքաբան ձևեր են ստեղծում, ինչպես՝ մարդոյր (սեռական), կոփեմ բայի համար՝ կկոփեցի, կկոփեցիք, կկոփեցան և շատ նմանները, Նույնպես և իգական գերանուններ՝ ակ, գե, Յե իրենց առանձին հուլիական ձևերով, Բացի այդ՝ Ի (1) նախորդ

Այս բռնաբեր բայքը քննել հայկական ձևի կազմութուններն են և կան ոչ-հունարան զղբացի զգրվածքների մեջ, Սթն հասակ սրահու. Թերևս արվեն, շատ ուրիշ բռնաբ էլ երևան կգան: Հիշված գրգեղից «Յանախաղապան»-ը: Թերևս հետագա դարերում մշակված լինի, Ղազար Փարպեան. համար էլ դուցե կարելի լինի ասել, Թն հա, ծ-ըզ դարի վերջում կամ ժ-ըրի օկիգրաներում գրան լինելով, կարող էր ազդել հունարան զղբացի: Բայց ոչ մի հիմք չկա հույնը ենթադրելու ոչ Ս. Գրգի, ոչ էլ Սեղիկի կամ Գրգույնի վերաբերմամբ:

Բայց և այնպես հունարան զղբացի ազդեցությունը, որ զլիազուրկ է՝ ընդհանրակից է այդ փոքր բռնաբի կամ աղմուկների կիրառությունը, և դրանց օտարել են ուրիշ լեզու-ները նախորդյալի կամ նախկինների ձևակերպությունը: Վերջերս մեր հար-հան լեզվի մեջ էլ աղառ կերպով բազմաթիվ ենք և բազմաթիվ ենք նորանոր բռնաբ, ինչ-պես՝ ներգաղթ, արտագաղթ, ներգրում, միջնագոյն, ներառյալ, ենթախումբ, վերամշակել, վերհիշել, արամախոյվել, արկկուսում և այլն:

Սի վերջապես պետք է նկատի առնենալ մի ուրիշ հատկություն, որ ունեն նաև ուրիշ լեզուները, բայց հայերենում այդ ազդի զդուր է հունարան թարգմանիչներից ի վեր: Այն է՝ հայերենը փոխանակ օտար բռնաբը դործածելու՝ փոխ է առնում օտար բռնաբի նշանակությունը և իր միջոցներով կազմում է համապատասխան նշանակությունը նոր բռնաբ: Այդպես, օրինակ, հունարան թարգմանիչները կազմել են «գեղեցիկ»-ն բռնաբ, «գեղեր» բայի արմատից, համապատասխան հունարանի գրամմատիկոս բռնաբ, որ ծա-ղում է գրաթոս բայի ընդից, որ նշանակում է «գեղել»: Նույնպես ֆիլոսոֆիոս թարգ-մանել են ի մասնատեղից թյուր, այսինքն առանձին բառ են կազմել բառ հու-նարան բռնաբ կազմության հայերեն արմատներով: Թարգմաթիվ այսպիսի բռնաբ էլ հու-նարան զղբացից Թուս են իբրև օգործական բռնաբ:

ՄԻ ՔԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Հնամենտի մեկնուարիմֆ Գրիգորի Աստուածաբանի հիմց ճառից:— Հինգերորդ դարի հեղինակ Նոննոսին վերաբերված այս մեկնությունների թարգմանության լեզուն ևս հունարան է: Բայց ոչ այնքան շարահյուսաւ-թյամբ, որ հեղա հասկանալի է: Որքան հունարանի հետևողությունը կազմած բռնաբով: Գործածված կան և հունարան բռնաբ, Բովանդակությունը մեծ մասամբ վերաբերում է հունական առասպելներին, բայց զա գրված է ոչ թե հատկապես իբրև առասպելաբանություն, այլ իբրև բացատրություն Գրիգոր Աստուածաբանի ճառերի մեջ գործածված առասպելների և զանա-զան գրույցների: Այսպիսով՝ եթե դա մի կողմից ծառայել է կրոնա-եկեղեց-յական նպատակի համար, մյուս կողմից բովանկան շատ ծանոթություններ է առել հին հունական առասպելների ու գրույցների մասին, ուստի և եղել է այս նկատմամբ գիտելիքների աղբյուր մեր հին հեղինակների համար: Իբրև նմուշ այստեղ դնում ենք հետևյալները:

Յազագա եղբերուստեոց Ուլիսի և Ախիլլեի:— ՋԱրածիս ասեն սքոսյ և աղեկուսարութեան վերաբերուլ զու: Ասի արզ աստուածն այս և զեղինսն քալ Եփեսոն, մինչ կոչիլ աստուածուհին Արածիս եղբերուստեոց: Այլ Ուլիսն և Աքիլլե՝ սքոսգը էին և քոսը. իսկ Աքիլլե՝ քոսը, արածի, ետեզ Արածի՝ ժեղի, և քալի անմարթ էր գոս-աստուածուհին մերկ աստուհն, աստուածը զհուսանն ի նոցան: Բարեկցեալ զքո Արածի՝ հասարկեցայ զհուսն Աքիլլեին, սքը գոսալ զնա՝ սպանին. իբրև ասի Աքիլլե՝ աս ի քանց

¹ Տես՝ Մ. Արեղյան — Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 126—191՝ «Նախադասում» բայեր, էջ 211—225՝ «Առաջադիմություն» բազմաթիվություններ:

² Քաղերը (Nonnos), Die Schollen zu [on]i Reden des Gregor von Nazianz, herausg. von A. Manandian. Այս ժառանգ Ա. Անիսյանի հոգով, Երևանում Ամսթերդամ, 1904, էջ 129—146 և 163—173, Այլն է. Մանանդյան — Հունարան զղբացի, էջ 256 և հանդ.

դիպառել, Այլ Ուրբան ասի ի պառաժման աստուածոցն ու մարթով արջառայն, դար կզնն
Ի, բե՛կ՝ քաղաքը քնկերացոց աս ի հէրքընկալութիւն աստուածոցն. քանդի յախճաժ
էր ճննեալն ի լսու. Այլ Ուրբանն հզօ արդանանդ դազոնաց, ալլի աւփփով Արեւծեղեայ, զման
արդ. բարեկամայն աստուածաւորէ՛լ յարոյց կաթիկն ընդհէ՛լ նորա, սալար ընկնալիս կազու-
սան՝ մեռաւ, զման որոյ ի յերկինն նկարեալ, երկ ու հարիւրն Զ. էջ 171.

Յագրագրու հարցումն ինչո՞րն եւ յաղագրս Պատմութեանդ...—*Պատմութեան այս ասի,*
թէ քաղաքս զեւր յառաւանդոցն եւ շնորհեաց ժաբգիւն, եւ Եթէ ի միւս զԵրեւն քաղաքեաց
դժբաժանաց, եւ ի բարկաւթիւն շաքմեաց քնու զԵրեւն, Ձաւ կամեցեալ պատահանելի եղ արեւելի
սուսել զԻւրաք Կորս, եւ ի դիւերի դարձեալ օղջնաւոր, եւ միւս անգամ բաժնելի սկսանէր
սուսել ի գողիւն, մինչեւ եկեալ չնորկանայն՝ նեւալ իսկոսեաց քաղաքսին, ԼԳ. Է՞ 77:

2. Քննարկելիք: — Բիզանդիայում հորինված են և Վիցոբայադս կոչված երկերը, որոնց մեջ պատմվում է վիցոբայա տարաշահգործությունը՝ ընադիտական բացատրություններով ու տեղեկություններով բույսերի ու կենդանիների մասին: Ամենահայտնին է Բարսեղ Կեսարացու «Վիցոբայա», որի հին թարգմանությունն աւեննք: Դա եղել է ընադիտական ծանոթությունների տղբուր մեր հին մատենադիրների համար:

Հին ժամանակ հայերեն թարգմանված է այս նպատակով և մի քանա-
գիտական գիրք, որ կոչվում է Վարդապետ (Ֆրադուդ) և ծագած է հա-
մարվում մեր թ. 2—3-րդ դարում¹։ Դրա նյութը ժողով-
ված է հին գրողներից, և հաճախ ֆոնետատիկ տեղեկություններ են գլխա-
վարադրել կենդանիների բարոյաբան, աշխարհ ընթացի, բնավորութան մա-
սին, լինին իրական, թե երևակայական։ Ամեն գրողից վերջում դրված է
նաև բարոյաբանական մեկնություն, որով առաջի բնավորություն է ստա-
նում զբաղը։ Այս գիրքը, ինչպես երևում է, ծանոթ է եղել հին հայ գրող-
ներից դասական շրջանում։ Դա սիրված է եղել. ուստի և ձեռագիրների մեջ, որ
15—16-րդ դարից են, մտած են կենդանիների մասին նոր զբաղյալներ։ Կան
և այնպիսիները, որ երևան են գալիս կրկին և ավելի անգամ մշակված
ձևերով, հաճախ միջին հայերեն լեզվով։ Բերենք այստեղ նաև այլններ²։
Ուշողությունը պահված է ձեռագրին։

Այսպէս տախիձու.— Բարեւոյթունն առէ զտախիձէ, որ առէ՝ թաղաւոր է ի վերայ
ամենայն անասնոց, իմաստուն, հզօւր և կորովամբոյ։ Երեք ընծաթիւն է առիւծուն։ Այս է,
յարժամ յորտ եղանկ և եեմի, յանկարծակի տանու զհաս արարչոց և երկուշեւոր փոխիլի։ և
աղա իմուն զգուն և զհեան ազովիլ խաղաղէ, զի մի եկեալ ասանիցան զհաս, և երթիտլ ամ-
բանա յարջի։ Եւ երկուս քաջք։ յարժամ ննջի։ աթիւնս լինին այնք՝ ի բաց ի ի ճուն։ Եւ եր-
ջօրոց ընծաթիւն. յարժամ ծնանի մասամ արեւն զկարիւն մեանայ, նախ և մնա զաւուր
արիւն, և յաւուքն երբեքսիկ զաւուրն և փշէ ի վերայ մեանիլն կորելւոցն և զսաս մինչև
յարաւոցնէ զմեանայ կորելւոցն։ Անալիւն յաղազս մեղաւորացն, որ խաղաղան և հաւատարմ-
ղին մեղաց խառաղովունիքմար։ յաւաճ մասիք. զի մի եկեալէ որտեղի աստան և գոմանիցէ
և աղանախիցէ։ Եւ մինն այլ զի մի եկեալս գոմանիցէ ընծի գոմաղաղի և հարուստիւն, այլ
աթիւնս կալ հողոյ տկամք և պատրաստ յարեւորդն ի սասանաւ։ Իսկ մեք մեղաւորքս մեանայ
յաղազս նախաւուրն մեղաց և մեր զոր մեաք ի հողս. աղա յաւուր երբորս յարեալ Փրի-
տաւ ի մեանոց կոծու հուր և զմեզ յարուց ընդ իւր, և աղբեցուցէ արեւմտն իւրաքն ի
սասանաւն և դիւ։

¹ Н. Марр, Сборник притч Вардана, часть I, С. Петербург, 1890, № 297 и 5-й т. В. П., *Փարսիկէի լեզուի վարդապետ, Սան Բ, Բնագիրք, Ս. Պետերբուրգ 1894, հ. 5-րդ, часть III, С. Петербург, 1894, Приложения. Վերջումն է, Բարսեղյան, 1890-1895.*

¹ Итого: *Республика Беларусь*, 133, 144 к. см., 145 к. см., 153 к. см.

Վառան քաջնայ առ կոյնի փնթիկա.— Ե թաշուն մի, որ կոչի փունիկա: Եկա երեսուն տմի զառնա 'ի ծառան Լիբանանու, և ընտ գերկոսին թնան իւր խնկոց, և երթա ապա տանէ քաժին յԱրեգ ցաղաքի յամանան փառնուա կամ ի պարմափի, այսինքն տրեղ կամ ի ցաղոց, և ցաւթն իբրև իմանայ, մասնէ ընտ գմաքիւն արթափայտաւ, և ելանէ [թաշունն] ի ցաղաքէն ի քաղիկն, իւրով լուցանէ զհրակն և անձամբ զանձն իւր տարէ: Եւ վաղիւն մասնէ ցաւթն և որունէ զքաղիկն և դասնէ որդն 'ի մեխիկն, և երկրորդ աւաւրն թնա զարմն, և զառնի ձող թաշուն և յերբորդ աւաւր երամարէ իբրև զառաջինն ի ցամէն, և թաշն երթա, բնակէ ի իկն տեղին:

Իսկ եթէ թաշունն իշխանութիւն ունի —պառնանիլ զանձն, անմիաց, բնդէ՞ր ամբառանէ՞ց զքառնէն աւաւրն, որ աւեր. իշխանութիւն ունի՞մ զնիլ զնա ի իշխանութիւն ունի՞մ քառնայ: Փրնիկիւս սրինակ զփրկչին բերէ. ցանդի նա երկնից եկն և երես գերկոսին թնան լի խնկոց, անուշահամութեամբ և երկնաւոր պարգևոց լցոյց զմեզ:

Սրա փոխանակն է հետեյայլը.

Դարձեալ տան վասն հաւան, որ կոչի արմու. ի Փրնիկիցոց արշաւորին է. զառա մայրիկն Լիբանանու՝ մասա ի խանկո անուշա և արբառանէ զթնա իւր և աւան ի խնկոցն և ի փայտիցն և շինէ իւրն ըստ, և ի սկստնային մինչև ի վերջն լինին տմր. Ե. [=200] և իբրև կատարէ, մասնէ ի ներքո և ուրախանա. և ցտէ զիւր անձն և եւր վառէ յիւր անձնէն. և անկտանի ի տուն և տարէ զառնն հանգերմ իւրմօղի զաւաւր. Գ. [=2] և—յաւաւր երբորդէ զառնի տեղ արդն մի ի նեխեալ միկն. և զառնեալ աւր ըստ աւրէ՝ լինի զպառն իբրև զառաջինն:

3. Աշխարհիկ քովմոնղակությամբ քարգմտնություններ ըրգանգաւկան զբաւանություննից՝ սակավութի՞վ են, կամ գուցե եղել են, բայց չեն մնացել և կամ դեռ երևան չեն եկել: Հայաստանից կարևոր է հիշել Սուտ-Վալիսթեմնի «Պատմութիւն վարուց ի զինեմնդրի»¹: Դա Ալեքսանդր Մակեդոնացու մասին, մեծ մասամբ զրբերից քաղած, մասամբ և ժողովրդապետ անասպետների ու զրույցների մի պատմվածք է, հին Հունաստանի հասկացությամբ գրված: Մակեդոնացի մեծ աշխարհակալն արևմտաքից դիպի արևելք արշալիկով՝ պատահում է ամեն տեսակ, հաճախ ֆանտաստիկ երևույթների ու հրեշների: Այս գիրքը սիրված է եղել հնումն և շատ լեզուներով թարգմանված: Միզնում ևս սիրված ընթերցանության գիրք է և գերհրատեր թարգմանիչներից մեկը Ծ-րդ դարում այդ թարգմանել է բնդհանրապես ընտիր հայերենով, սակավագեղ հունարան լեզվով: Թարգմանությունը հետազայում ենթարկված է փոփոխության և նույնիսկ վերածաղկության ու հավելվածների:

4. Սրբախոսակամ և վիպարամակամ գրվածքները կարևոր տեղ են բռնում թարգմանական գրականության մեջ: Դրանց մեջ կենդանի օրինակներ էին տրվում քրիստոնեական առաքինի կյանքի, քրիստոնեական կրօնի համար անհղղղող հավատարմության և նահապակիչուս «Սրբոց վարքերի» կամ «Հարանց վարքերի», վճռաբանությունների թարգմանիչները մեծ մասամբ դեռ պարզված չեն: Դրանցից հիշենք միայն Մարութայի՝ «Պատմութիւն արեւելեան վկայից», և «Ճառ ի վկայսն արևելից», որոնց մեջ պատմված է Շապուհ Բ-ի (310—379) օրով Պարսկաստանում տեղի ունեցած

¹ Պատմութիւն Ալեքսանդրի Մակեդոնացւոյ, Վենետիկ 1843:

Թագավոր Տոշեան, Ուսումնասիրութիւնք Սոսի Կալիսթեսեոյ Վարուց Արեւմտեցի, Վիեննա 1898: Այսպէս նաեւ բազմաթիւ աղբյուրներէ մասին:

հալածանքի ժամանակ (340—379) նահատակների մասին: Թարգմանա-թյունը հաստատել է Աբրահամ Զենակեցին, որ և Խոստովանող է կոչվում: Նա Ավարայրի ճակատամարտից հետո՝ Ղևոնդյան քահանաների հետ տարվել է Պարսկաստան և տքսորվել է Ասորեստան, ուր և հալածություն արել է Թարգմանությունը: Նա վերադարձել է Հայաստան 462 թ.: Նրա մասին գրել են Սղիշեն և Ղազար Փարպեցիքն¹:

Հետագայում այսպիսի երկերից հազմվել են՝ «Լաթք քրքոց» կամ «Լաթք հաթաթ» և «Ճառք Առիթ»², «Յայսմաւուրք»³ կազմած ժողովածուները, որոնք պարունակում են սրբերի կյանքը և նահատակների վկայությունները: Վերջիններք, բաժանված յուրաքանչյուր տասի օրերի վրա, ամբողջ տարին, ըստ տվուր պատշաճի, կարգացվում էին եկեղեցիներում երեկոյան ժամերգությունից հետո՝ «ի յիշատակ սրբացն» և ի յօգուտ վարուց ջերմհատնդ լսողացն»: Դրանց մեջ կան, հարկավ, և հայազգի սրբերի ու հայ նահատակների մասին ինքնուրույն գրվածքներ: Կանգ առնենք իրրև օրինակ առանձնապես հետևյալ սրբի վարքի վրա:

5. Ալեքսիանոսի վարքը:—Շատ սիրված և, կարելի է ասել, նույնիսկ ժողովրդականացած մի հետաքրքիր պատմվածք է այս սրբի վարքը, «Պատմութիւն յաղագս որդոյն թագաւորին Հոռմոյեցւոց, որոյ անուն կոչի այր աստուծոյ»: Ունենք այդ վարքի համար երկու թարգմանություն⁴, նրկորոք Թարգմանությունն ավելի ընդարձակ է, մանրամասն պատմված, բայց էտպես նույն բովանդակությունն ունի, ինչ որ առաջինը: Նրկորոքի մեջ Ալեքսիանոսի հայրը թագավոր չէ, այլ Նիքիմիանոս անունով մի մեծ իշխան Հռոմեւմ Արկադիոս և Ուորիոս թագավորների ժամանակ, իսկ նրա կնոջ անունն է «Ալլալիս» ըստ Յունաց և Աքիլա ըստ Հռոմայեցւոց և ըստ մերս՝ Աննայ: Ալեքսիանոսի վարքն այս կարգի երկերի գեղեցիկ ու տիպիկ օրինակներից մեկն է, որի մեջ ցայտուն երևան են գալիս վարքագրությանների էական հատկությունները: Ինչպես հին ֆեոդալական հերոսների համար մեծ արժեք ունեւ ֆեոդալիզմի տեսակետով նշանավոր ծաղումը, այսպես էլ սրբերի վարքերի մեջ սովորաբար նախ փառաբանվում են նրանց ծնողները: Ալեքսիանոսի վարքի առաջին թարգմանության մեջ նրա ծնողների մասին կարճ ասվում է, թե նրանք այսպիսի բնույթի ղաղթառասիրութիւն, և զօտարս և զպանդուխտս ժողովէին ընդ յարկոց իւրեանց, և կերակրէին, և զգեցաւ ցանկէին: Նրկորոք թարգմանության մեջ ծնողների պատկերը և առհասարակ տեղը պատմվածքն ավելի ընդարձակ է ու մանրամասն նկարագրում և վարքերին հատուկ մանրամասնական ղաղղարուն ունի, զովարանությամբ: Նրա հայրն արդեն մի իղեալալիսն արիւ է քրիստոնյա մեծանուն քարեպաշտ մարդու, ինչպիսին եկեղեցին կուգեր որ լինեին աշխարհի մեծամեծները: Նա ծառայում է եկեղեցու շահերին, շինում է եկեղեցիներ, անկեղծոց, հիվան-

¹ Նիզիէ քննական ուսումնասիրութիւն, Վիեննա 1909, էջ 187—191. «Աբրահամ Խոստովանող և իւր Թարգմանութիւնը»:

² Հռոմէոյի հոմոսոս, Բուզանդիա, 1623.

³ Յայսմաւուրք (Գ. աղագր.), Նոստանդուպոլիս, 1834.

⁴ Վարք Կաթոնց և քաղաքավարութիւնց Նիզիէ բոս կրկին Թարգմանութեան Նախնաց, Հոտար Առաջին, Վիեննա, 1865, էջ 128 և հետ:

դանոց և իր հալվով պահում ևս տոգորված է եկեղեցու քարոզով: Թե աշխարհն ունայն է:

Երանելին Ալեքսիս որդի էր մեծի իշխանի և փառաւոր պատրիկ... Եւ ինքն Եփիմիանոս ունէր գաւառ քաղաք և մեծացեալ յոյժ, ունէր ծառայ երեք հազար ոսկեկազմ երիւթորօք և դիպակազգեստս հանգրիմիւք: Եւ էր յոյժ երկրաւոր յաստօժոյ, որով ունէր եկեղեցիք իւր շինեալ, և ի նոցա շինեալ էր վերնատուն: և յորում նստեալ լինէր Եփիմիանոս՝ ունի մարդկին աղքատք. քանզի սովոր էին և գիտէին, զի յորժամ պարապոյ լինէր յաւաքս տանի որդոց և ուրումնայնաց՝ յետ շնորհացն զայր էր վերնատունս եկեղեցեացն և առ պատուհանին նստելով դիտէր զաղքատսն, զի մի ոք Թափաւ ելցէ ի տրիցն նորա, և մտանէին աղքատք առ նա, և նա տալը ամենեցուն ձեռօք իւրովք ի գոյրց իւրոց, Եւ էր շինեալ նորա անկելանոց աղքատաց և հիւանդանոց, և հոգայր զնոսա ոռնկոք իւր, զոր կտրգեալ էր նոցա առատապէս ի ձեռն հոգաբարձաց իւրոց և ինքն էր վերակացու նոցա, և խանդադատէր ի վերայ նուազելոց ի նոցանէ: Եւ ի պալատին իւր ունէր շինեալ իւր եկեղեցի յանուն սուրբ աստուածածնին. և ի դռնն եկեղեցեայն շինեաց իւր առաքանատուն, և յամենայն օր ի տապանատունն իւր մտեալ տեսանէր զառապանատեղն իւր և ասէր ինքեան. «Ո՛վ անձն, այս է օթեան քո և այս բնակութիւն քո, մի խաբիր և մի ունայնանար ի սնոսի փառս յայտ: Եւ ապա խօսէր ընդ մարդ: Այսպիսի ունէր սովորութիւնս:

Նրա կինն էլ իր ամուսնու տիպարն է: Նա ամուլ է, զամակ չունի: Այս էլ օրրոց վարքերի մի գիծ է. սուրբը տետք է ամուրդի լինի և աղքատներին համար՝ աստուածու շնորհած մի պտուղ: Եւ և կինն նորա... բարեպաշտ և աստուածասէր և ողորմական և զօրովական էր յոյժ: Եւ էր ամուլ և ոչ ունէր զաւակ, և խանդաղատէր ի վերայ զաւակաց և երանէր զծնողս նոցա: Եւ զի որ ինքն ոչ ունէր, նուազէր տրամութեամբ, և յօր և հանապաղ լայր և ողբայր ընդդէմ աստուծոյ, մինչ վշտանալ Եփիմիանոսի ի վերայ նեղութեան քաղցր ամուսնին իւրոյ, և ոչ կարէր զաղաւթեցունել զնա ի լալոյ անտի. վասն որոյ յանդիմանէր զնա առաջի Թաղաւորին Ռուրիկոսի և Թաղաւորայնի և առաջի քահանայից մեծաց: Եւ յոյժամ բարեպաշտունին Աղայիս, յորժամ առանձին ինքեանք միայն էին, ասէր ցեփիմիանոս. «Տէ՛ր իմ, ընդէ՛ր մեծարանեալ ես ի վերայ իմ և արգելուս զիս ի լալոյ. և զիարդ ոչ լացից զանդաւակութիւնս իմ, զի տեսանեմ զզաղանս և զանասունս և զթույնս զի ծնունդ ունին և զաւակօք իւրեանց ցնծացեալ՝ միութեամբ ի տուրն աստուծոյ. և նոյն ինքն է օրհնութիւնս աստուծոյ առ նախահարսն և առ ծնողն աստուածամօրն: Եւ զիս տեսանեմ զրկեալ յայնմանէ, վասն այսորիկ յամ և ողբամ, ընդդէմ աստուծոյ կոծիմ, զի թէ ողորմեցի գերելոյս և առնարժանիս և ասցէ ինձ զաւակ, բարի և աստուածատէր լիցի. ապա թէ ոչ՝ մի տացէ, ոչ խնդրեմ զայնպիսին: Եւ զօր, տէ՛ր իմ, մեծաբանեալ ես ի վերայ իմ իրրեւ անդէպ ինչ խնդրողի, և ոչ աստ Թոյլ համարձակ ողբալ զթաղաւորութիւնս ընդդէմ աստուծոյ ողորմած տեսն իմոյ և բարբառ: Զայսպիսի բան և որ նման սոցին ասաց տան իւրում տեսնէին. քանզի յոյժ ամօթխածութեամբ զարդարեալ էր երանունին Աղայիս: Եւ իրրեւ լուաւ զայսոսիկ ի քաղցր ամուսնոյ իւրոյ աստուածատէրն Եփիմիանոս, արդարա-

ցուցիալ զսասեցեալսն ի նմանէ՝ լցաւ և ինքն տրտմութեամբ, և արտասուօք պաղատէր Եւս տէրք։

Այնուհետև նրանք, ինչպես մինչև վերջերս ամուլ հայ կանայք անուժ էին, ուխտ են գնում վանքերը՝ աստուծոց զավակ խնդրելով, առատ նվերներ են տալիս վանքերին։ Վերջուպես նրանք մի որդի են ունենում. մեծ ուրախութիւն են տնում գրեթէ ամբողջ քաղաքով, և հանգեսով մկրտում, անուշը գնում Ալեքսիանոս—այր աստուծոյ, հրոնական ուսում, նույնիսկ փիլիսոփայութիւն և հետաորութիւն են սովորեցնում նրան. տղան ինքն էլ յատ ուսումնասիր էր ևս օր ըստ օրէ վտուր ի սէրն աստուծոյ։ Մնողները ուզածն էլ այդ էր. նրանք ուրախ էին, շքանշի էր Ալեքսիանոս գորդարեալ ամենայն առաքինութեամբ, և ոչինչ փոյթ էր նմա մեծութիւն և երեսիլի փառքն ծնողացն, այլ հեզ էր և խոնարհ և հանգարտ և իմաստուշ յոյժ և խոհեմ և լի հոգեով սրբով, և էր հնազանդ և հլու ծնողացն։ Ահա ընդհանրապես սրբերի ներքին քարեմտնութիւնները մոնկակոս հասակում Բայց նա օտոված է և մարմնական կողմից, ինչպես հաճախ պատմութիւն է վարքադրութիւնների մեջ սրբերի մասին. «Եւ էր վտայելու հասակաւ և դեղեցիկ պատկերաւ արեգակնակերպ տեսողաւ, և ունէր ձայն դորաւոր և քաղցր իբրև գջնարիւ։ Ամենքն սիրելի է Ալեքսիանոսը, մեծ ապագա են մարգարեանում նրա համար. երանի են տալիս նրա հորը, որ տնայիսի զավակ ունի. նա էլ ուրախացած՝ այդ մասին պատմում է կնոջը։ Իսկ Ալեքսիանոսն ինքը վախենում է, որ մի գուցե իր ստացած բոլոր պատիճները մոլորեցնեն իրեն և աստուծուն աղաչում է՝ փրկել զնա ի խոտորեցուցիչ փառաց և ի մեծութենէ անտիւ, որպեսզի միայն աստուծուն ծառայի։

Երբ տասնութ տարեկան է դառնում, նրան, հակառակ իր կամքի, տառնացնում են Հոսմ քաղաքի թագավորացիներից մեկի գասեր հետ։ Հարստնքի ժամանակ, երբ բազմութիւնը հավաքված է ուրախութիւն անելու, նա քաջվում է մի դատ սենյակ։ Հայրը գնում, ասում է. «Որդեակ, բնդէ՛ր եկիր այսր։ Ոչ ապաքէն բաղմութիւն քաղաքիս թագաւորաւն հանդերձ վտանք ժողովեալ են այսօր։ Արի, որդեակ, տու կին ըս և խօսեաց ընդ նմա և ուրախացիր։» Ձեռից բռնում, տանում է կնոջ մօտ։ Ալեքսիանոսը երբ կնոջը տեսնում է, տառւմ է նրան. «Եւաղադութիւն ընդ ընդ, հարսն Պրիստոսի երկնաւոր փեսային։» Գինը պատասխանում է. «Որդոմութիւնն աստուծոյ հասցէ ընդ ի թիկունս, ընտրեալ յաստուծոյ երկնաւոր թագաւորին։» Հարստնքի ուրախութիւնը վերջանում է. նրանց մտնում են առաքատու։ Ալեքսիանոսն աղոթք է անում. «Եւ եղև ձայն իմանալի յերկնից յոգևոջ նորա որ ասէր. «Ել ի տանէ քումմէ և եկ դկնի իմ աղքատութեան ճանապարհաւ։» Ալեքսիանոսն արդեն գիտե, թե ինչ անի. նա ժառանիւ հանում, տալիս է կնոջը, որ պահի. և հայտնում նրան, թե գտնւմ է եկեղեցի աղքատիւ, և հակառակ զնա՛ կամքին պարս է գալիս գնում եկեղեցի, աղաթում, դարձյալ քաջալերիչ ձայն է լսում երկնքից. Գնում է ծովափ, նալ է նստում, հեռանում է Հոսմից։ Երբ քամք է գալիս գալիս, վաճառում է իր ունեցածը, տալիս է աղքատներին, ինչպես վարվում են սովորաբար սրբերը, և ինքն աղքատի հագուստով գնում է Ուռհա քաղաք և եկեղեցու դռներ

կամավոր աղքատ ժուրապետի գլխում։ Նա ուխտում է. «Կենդանի է տէր, դի ոչ մտից յեկեղեցիս, մինչև գիտացից, եթէ եթող ինձ տէր աստուած զմեզս իմա։ Նա այնտեղ աղոթում, արտասուք է թափում և գիշերն էլ եկեղեցու գավթում մի տեղ մնում։ Զնչին շափով հաց ուտում և շուր խմում, և այնպես ճկնում էր նա։

Երբ Ալեքսիանոսը հարսանքի գիշերը հեռանում է, կինը երկար սպասելուց հետո՝ սկսում է լալ։ Իմանալով Ալեքսիանոսի փախուստը՝ ամեն տեղ որոնել են տալիս նրան չորս հազար ծառաների ձեռով։ Մայրը ողբում է արգան։ Որոնողները հասնում են Ուսևա (Նդեսիա) քաղաքը. նրանք եկեղեցու դռանը ողորմություն են առլիս Ալեքսիանոսին, բայց չեն ճանաչում նրան։ Իսկ ինքն Ալեքսիանոսը շատ զահ է, որ արժանացել է իր ծառաներից ողորմություն առնելու։

Բերենք շարունակությունը հին թարգմանությունից։

Երբ ծառաները վերադառնում են հայտնելով, թե Ալեքսիանոսին չեն գտել, այն ժամանակ հայրը փառք է առլիս աստուծուն, ասելով, թէ՛ «Տէր հա, տէր էսա, և եղիցի անուն տեռն ուրհնեալ, Բայց մայրը լալիս է դառնապես, և մտեալ ի սուն մի, տարածեաց մոխիր և նստաւ ի վերայ, և երաց պառաւհան ընդդէմ ճանապարհին ե տաէ. «Կենդանի է տէր, դի ոչ ելից աստի մինչև տեսից զորդին իմա։ Կինն էլ մանում է տան մի անկյունը, մի ժաթը աեղ և ասում. «Ո՛ր ելից աստի, մինչև գտից ողորմութիւն ի տեսանէ և տեաից պերեսա տեաւն իմոյ և զուպակցիս։ Եւ յայս գործ մտեալ՝ ուխտեցինս։— Մտալ հիշում է Դեղձուն Մամի սուգը Մհերի մեանելուց հետո, թե ինչպես նա փակվում է մի սենյակի մեջ՝ այս զոհունների ետև, մինչև Մհերի նորամանուկի մեծնալը։

Ալեքսիանոսը ասանուհինս առաի մնում է Ուսևայում եկեղեցու դռանը, անդադար աղոթելով։ Նա իրեն մեղավոր համարելով՝ չի մտնում եկեղեցին, մինչև որ քահանան տեսի մեջ հրաման է օտարում Սուրբ Կույս Մարիամից, որ ասում է նրան, «Ե՛ւ, ասա առ դուքս եկեղեցւոյց զայրն աստուծոյ և ևս զնա յեկեղեցիդ. գի լսելի եղին աղօթք նորա առաջի տեսան և իբրև զհոս անոյշ բուրեաց առաջի աստուծոյ ճկնութիւն նորա։ Գահանան չի կարողանում գտնել սրբին։ Տեսիլը կրկնվում է, և վերջապես այդ ճկնավորին մոցնում են եկեղեցին ներս։ Դիչ հետո այդ կամավոր աղքատը մոտձում է, որ մտդիկ քահանայի տեսի պատճառով պիտի ժողովեն իր մոտ, և ինքն այլևս աղատ չի մնալու՝ անխափան աղոթելու համար, ուստի նա իսկույն հեռանում է Ուսևայից, գնում է Ժովիգըր՝ նավով Տորսոն գնալու։ Հոգիւն նավը հասնում է Հոսմի նա գնում է իր հայրակառն պալատի դռան իբրև աղքատ, հայրն ընդունում է նրան և թույլ է տալիս նրան իր դռանն աղրել և նույնիսկ ծառաներից մեկին համաձայնարում է հագալ նրա մոտին։ Տասնուհինգ տարի էլ մնում է նա այնտեղ մի խավար տեղում՝ իր հոր դռանը։ Ոչ ոք չի հանաչում նրան։ Ծառաները ծաղրում են նրան, փեսում են նրա միջուկը, բայց նա համբերությամբ տանում է այդ՝ համարելով ստատնայապեան որդպաթի։ Տասնուհինգ տարին ար լրանում է, նա զգալամար և քարտէզ է ուզում իրեն պահող ծառայից և մի բան գրում, Այդ ժամանակ կիրակի օրը պատարագի ժամանակ երկնքից ձայն է լսվում, թե «Յես երից ուսուրց ըն-

կալայց զսուրբն աստուծոյ աս իս, քանզի յայժ ևճնեցաւ վասն անուան իմոյ. բայց դուք երթայք առ նա և ընկալի՛ք օրհնութիւն ի նմանէ, և օրհնեացէ՛ զքաղաքս ձերս: Պատրիարքը երեք օր պահէ պահել է կարգադրում, ապա նույն երկնային ձայնից իմանում են, որ սուրբը Ուրմիթանոսի (նփի-միանոսի) ամենն է: Հալց ու փորձ անելուց և որոնելուց հետո՝ իմանում են, թե ով է ուղի հասնող: Եւ աստուծոյ սրբին վախճանված են դանուան, Եկեղեցուց դուրս են պատրիարքը, իշխաններն ու բազմութիւնը ստորոս-ներով ու վառած ցահերով, ներս են մտնում և տեսնում են, որ սուրբը եռնէր ի ձեռնին իւր հրովարտակա: Պատրիարքը ձեռքը մեկնում է, որ սրբի ձեռից առնի թաղթը, բայց չի կարողանում: Այն ժամանակ ժամ է սրբին. հա-ցես ինձ զհրովարտակա: Ղի կարգացից բազմութեան քաղաքիս Համայն: Այդ որ ասում է, սրբի ձեռքը բացվում է և թուղթը տալիս է պատրիարքին: Սարկավազը մի բարձր տեղից կարգում է բազմութեան առաջ, Ալեքսի-անսը գրութիւն մեջ մանրամասն հայտնել էր իր ով լինելը և իր կյանքը: Ի՞նչու բազմութիւնը լաց է լինում: Հայրն էլ երեսի վրա ընկած՝ լալիս է դառնապես և ասում. «ԶԹի՛ն զօրհնեցիր, որդեակ իմ, դու էիր յայս անձին իմոյ և լոյս աշաց իմոց, և տեղի մեծութեան իմոյ ի քեզ հաստատեալ էր. ընդէ՛ր ոչ խաղաղատէր սիրտ քո յեւ և ի մուտս իմ, և ընդէ՛ր ոչ ասէիք ինձ զքե՛նէն, և զի՞ժդ ընդունէիր զնախառնիս ի ծառայից ճոցս: Մայրն էլ երբ իր բանաւում լսում է լուրը, բաց է անում դուռը, որ փակել էր որդու հարսանքի առաջատից զնալուց ի վեր, դուրս է գալիս և ասում ամբոթին. «Ճանապարհ արարէք ինձ, զի անցեալ տեսից զփափագելի հրազն իմ, որ լուցեալ էր և արդ խաղաղեալ պատնի: Թողէ՛ք, զի տեսից զաստղ պայ-ծառացեալ և արդ շիջեալ դառնի: Աղաչեմ զձեզ, մարք, որոց ծնեալ իցէ մահկոնս, և հանք, որոց իցեն որդիք, դաւարին աղիք իմ ի վերայ որդեծնութեան զթոյն և ի վերայ վարդոյդ որ թարշամեցաւ ի բուրաս-տանին և ոչ զոյ գորութիւն հստոյ. տեսէ՛ք դիս և ողորմեցէ՛ք ինձս: Եվ սրբի երեսի վրա ընկած ժամ է. «Որդեակ իմ, անուցի զքեզ ի վերայ ծնագաց իմոց, և կաթմա՛ր դիեցուցի զքեզ քաղցրաբուս ստեամբ. ընդէ՛ր ոչ սղորմէիր ինձ յորժամ էի արգիւեալ ի բանդ վասն քո: Դչ տեսանէիր զառապելութիւն իմ, քաղցրիկ որդեակ իմ, և զնեղութիւն անձին իմոյ. չես տալց իմոց, սիւն հաստատութեան տառապեալ հոր քո և զերեցելոյ մօր քո, զի ոչ երբէք դադարէր լեզու իմ համապագ յիշել զքեզ և յազոց հանելս:»

Նույն քնարական զեղումն է անում և սրբի կենը: Նա երբ իր տրդի-լարանում լսում է, իսկույն դուրս ընկնում է դիտկի ոտներն և ասում է. «Նա տառապեալս յերեկ մաի յառազատս և այսօր դառնիմ այլի մնացեալ, ահա եղէ ես իբրև դառարակ որ մեռաւ ամուսին նորա, և նորա զնացեալ յանձոյթ տեղի և ոչ նստեալ ի վերայ դաւար հստոց. նոյնպէս և ես զնա-ցից ի քաղաքեղա և զգեցայց սեաւ զամենայն առաւր կենաց իմոց ի մա-հուանդ ճումս:»

Ալեքսիանոսի դին պատում են պատկան հանդերձներով, գնում են տախտի վրա, որ էր ոսկի և թանկագին քարեր, և սկսում են աղոթք անել:

«Եւ ամենայն նեղեալք և ախտաժէտք որք մերձենային ի նշխարս սրբոյն՝ բոլորէին յամենայն ախարի, և կարգ և կարգ և նկարագրայց ողորմեց բոլորէին: Գերեզման են փարուս, բոլոր բաղմութեան ձեռք չեն կարողանում երանելիի նշխարքը դնել իր հանգստարանն: Այն ժամանակ հրամայուս են գտնէ շապ տալ, որպէս զի սմբոլը դրանով լինի. եւ այսպէս սաղմոսներով ու որհնութեամբ թողում են: Եւ Բաղում քժկութիւնք լինէին ի հոգոյ հանգստի սրբոյն: Գերեզմանի վրա եկեղեցի են շինում և նրա մահվան օրը, փետրվարի 5-ին, տոն կատարում:

Ահա մի վիպական կենդանի պատմութեք, որ մեծ հետաքրքրութեամբ կարդացել կամ լսել են կրօնական ողով տարված ընթերցողները և ունկընդիւրները: Նրանց վրա գրեթէ ազդեցութեան է թողել գործող անձերի հոգեկան վիճակը, առանձնապէս գլխավոր հերոսի կամքի հաստատութեանը ճշմարկան կյանքի համար, թե ինչպէս նա նորոգեալ տարիքում, անգամ առաջատար զինները, փախչում է ֆիզիկական ցանկութեանից ու հեշտանքից և ապա թե ինչպէս համբերութեամբ, ամսավոր կերպով, տանում է ամեն տառապանք նուշխիսկ իր հոր դռները:

6. «Հարացց վարքիքի մեջ եղած պատմութեքները, ոչ միայն Ալեքսիանոսի, այլև ուրիշների, ինչպէս օրինակ, «Վարք երանելոյն Աբրալ Մարկոսի և կատարուեալն նորին և խօսք առ Սերապիոնն», շատ կարգացված են մեզնում և հեշտութեամբ հասել են իրենց նպատակին՝ կենդանի օրինակներ ներկայացնելով քրիստոնյա հասարակութեան համար՝ նրա մեջ անզգալի կերպով պատկաստել եկեղեցու քարոզած գաղափարները: Ընդհանրաց տնայապատկանների կյանքից առած հրաշապատուեալները, ինչպէս են գեների փորձութեանները դեմ մաքառելը, հրեշտակների երևալը, տեսիլները, նուշխիսկ անշալիք, անհոգ անտգապատում աղբիւն ու ճանապարհ գնալը, Եկախորդների դրախտը մտնելը հակառակ գեների, և շատ նմաններն իրենց զգալացունց տեսարաններով, գրգռել են հավատացողների երեւակայութեանը և դարձել մարմնի ունչացման և աշխարհութեամբ համար ամենից ուժեղ միջոցը:

Հետեանց վարքերի մեջ հավաքած նյութերը երբեմն փոքր ի շատ եղարձակ, բանաստեղծական ոճով հորինված պատմութեք են. դրանց մեջ կան և գեղեցիկ մանրագրույցներ, ծերերի խօսքեր ու խրատներ: Բոլորի նպատակն է, հարկավ, կրօնական կրթութեանը ըստ եկեղեցու հասկացութեան, ինչպէս են՝ զգում և արտասուք, առանձնական հանգարտութեան, կատարյալ առաքինութեան, անընչութեան, համբերութեան, ուղիղ դատաստան, օտարասեր լինել, հնազանդութեան, խոնարհութեան և այլն: Մեծ տարի մեջ նույն հանգարտական կյանքն ու իրենք է երևան գալիս հոգեպես չեն և գրույցներ, որոնց մեջ պատմութեք և կրօնավորների անմոռելիութեան մտան, և կամ թե ինչպէս կրօնավորը չէի հանգարտում, Եպատերազմում էր պոռնիկական չար դևի դեմ, Եւ էր պատերազմ նորա իբրեւ զհոգի վառելու, — ասվում է մի գրույցի մեջ, — և այրէր զսիրտ նորա ի գիշերի և ի տուրնջեանն:

¹ Վարք սրբոց հարանց, հատ. Ա, էջ 188 և հաճ.

² Անդ, էջ 650:

Անա մի գրուայց, արից տեսնում ենք, թե ինչպես կրոնավորն ինքն իրեն տանջում է, որպեսզի լա և արդարանա:

Եղբայր մԷ կրօնաւոր եղև և քնակէր ի լեռան Նիաբիս, և էր ռենեակ նորա մերձ ալլաւ եղբոր. չնէր, զի ողբայր նա զմեզա իւր օր ըստ օրէ, իսկ յարժամ ոչ գային աբառասակ, տէր ըսնէին իւր. «Ընդէ՛ր ոչ լաա գեղ, եղկելի և վառթաւ. և եթէ ոչ կամես լալ դու, ես աբաբէի, զի լացցես»: Եւ աւելն խորագան շուռանայ կարկամ յաժ, և յարուցեալ տանայր զխարագանն զայն և հարկանէր ուժգին զինքն, մինչև ի ցաւոց հարժանն վշտահայր և լայր: Ջարմանայր ընդ այն մեղաւոր եղբայրն և աղաչէր զառաւան յայտնել նա, եթէ բարւոյն տանէ նա, զի տանչէր զանձն իւր: Եւ ի միում զիշերի ետես նա ի տեսնանն, որպէս զի կայր եղբայրն այն ի գաւնզա ժորախորոց կարգեալ, և պսակ պայծառ կայր ի գլուխ նորա, և ասէ մԷ ցաւ. «Տեսանիմա դու զարուոց զայս նահատակ: Երեկ զանէն իւր և հարկանէ վասն սիրոյն Բրիտաստի, թէ հրպէս ընդ գունդս վկայիցն դասեալ էս»:

Բերենք մի մանրագրուայց ես, թե ինչպիսի բաները մեղք են համարում և ինչպես ապացիւարում են:

Եւ մինչդեռ երանելի ձերն հասէր ի խցին իւրում, մօղուկ մի ի սրահն նստաւ իսկ երանելի ձերն չգիտաց դասն և ճմլեաց չմօղուկն: Եւ իբրև ետես զաղբիւն մօղիկն, ինքն զինքն սկսաւ բարեւել և ասէ. «Մննատ զանձին վրէժ ինչպեցիցէ: Եւ սկսաւ խօսել ընդ միտս իւր և ասէ. «Զինչ ինչ արեանա այս ապացիւարութիւնն: Եւ չոգաւ առ միայնակեացն Յօգնէփ և խոտապանեցաւ զիրան, իսկ երանելի ձերն Յօգնէփ ասէ. «Ե՛ւ ը, եղբայր, այդ արեան գրայցք են, չկարենմ ինչ քիչ ասել: Յայնժամ ձերայն մեղեացեալ յիւրմէ գահադերձս իւր և երթեալ յանապատ և հասեալ անդ տփառ վիցի: Եւ տնդեացն այն տայնպէս էին զոտոգէ և պիտակցի, զի ոտկոր էին զխօզս վայրենիս ուսել: և այնպէս արաբիս զմարմին նորա, որպէս զէշ զազանաց կրծիւն յսկիերաց: Եւ յետ անցանելոյ վիցի ամօրն, դարձաւ ձերն անդրէն ի խրճիթս իւր, և ոչ ոք ճանաչէր, եթէ տէր Մակար իցել:

ԱՌԱՋԻՆ ՇԵՂԻՆԱԿՆԵՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՎԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆՈՒՄ

Մեր առաջին թարգմանիչներից սկիզբն է առնում նաև հայկական ինքնուրույն գրողութիւնը Ե-րդ դարում, որ իր մեծ գրական շարժման, իր բնիկներն արդյունքների հարուստ ու բազմակողմանի բովանդակութիւն համար կոչվել է հայ գաղութիւն Միակեղաւ: Այս դարի գրվածքներն իրենց լեզվով, ունով ու արվեստով սովորաբար նմանողութիւն օրինակներ են մնացել հետագայի գրողների համար:

Որովհետև գիրն ու գրվածքիւնը ծագել էր բովանդակութիւն տալու առաջին հերթին եկեղեցու կարիքներին, ուստի մեր ինքնուրույն գրականութիւնն իր սկզբնական շրջանում ունի պիտավորապես եկեղեցա-կրօնական բնույթ: Գրականութիւնը գտնվում էր եկեղեցականների ձեռին և ծաղկում էր վանքերում կամ առանձին հոգևորականների գրչով: Այնպես կանաններն ամսական էին մնում գրական աշխատանքին, և եթե մի երկու գրողներ այդ պահից երևան են եկել, նրանք էլ առգորված են նույն կրօնական ոգով, քանի որ նույն գրքերի վրա են սովորել, նույնպես հմուտ են եկեղեցական

¹ Վարդ արքայ հարանց, հատ. Ա, էջ 860.

² Անդ, էջ 90.

ուսման և տարված են դրանով, ինչպես ընդհանրապես միջնադարում։ Այս ժամանակ և այդ դրականությունն արտահայտություն է գլխավորապես եկեղեցական դասի, որ ունեւ իր գրեթե հատուկ ձևերը, իր սեփական նպատակն ու ձգտումները և իր գրական տեսակները։

Լինելով ծնունդ ոչ մեր բնիկ ավանդական բանահյուսություն զարգացման՝ գրականությունը սկզբում չունի կատարյալ ինքնատիպ կերպարանք։ Դա ձևով մասամբ հետեւողություն է ընդհանուր քրիստոնեական գրականության, մեկ-մեկ նաև քաղաքական (կոմպիլատիվ) բնավորությամբ, Հայ գրողները յուրաքանչեւ են բոլոր գրական տեսակները, որ կային քրիստոնեական գրականության մեջ, Այսպիսով՝ նրանք մոտավոր հաղորդակցություն մեջ էին մնում ասորիներին և առանձնապես բիզանդացիներին հետ և գրականություն միջոցով հնարավորություն ունեին արևմտյան մտավոր հասանքներն ընդունելու։

Ինչքան էլ մեր առաջին գրողները հետևում են ուրիշներին, բայց և այնպես նրանց երկերն ընդհանրապես մշակված են ազգային բովանդակությամբ, կապված են իրենց միջավայրի և դարաշրջանի իրական պայմանների հետ և բխում են ժամանակի պահանջից։ Գրականությունն ստեղծվում էր այն շրջանում, երբ հայկական պետություն չկար, բայց դեռ մնում էին հայ ֆեոդալները, եկեղեցին ինքը մեծ հոգատերերից մեկն էր։ Հոգևորականություն իր շահերով սերտ կապված չէր աշխարհի իշխողների հետ և հաճախ հակամարտիկ էր նրանց դեմ։ Նրա գոյությունը կախված էր հայությունից, քանի որ եկեղեցին միայն ինքնուրույն հայոց եկեղեցի էր, և նրա շահերը կապված էին առանցքային հայ ժողովրդի հետ։ Ուստի և մեր գրավոր գրականությունն օտար գրականությունների ազդեցությունը կրելով հանգրձմ՝ իր ներքին էությունով բուն ազգային է։ Դա, ինչպես տեսել ենք, եկեղեցու-քաղաքական մաքսիմալ գրականություն է։ Որի միջուկը կազմում է իդեոլոգիական պայքար ու մտքում աշխարհի իշխողների դեմ՝ ազգային ինքնուրույնությունն ու անկախությունը պահելու համար։

Այդ գաղափարախոսությունը մշակել էր եկեղեցին, բայց դա և ֆեոդալներին էր։ Ուստի և եկեղեցական գրողն այդ կողմով հանդիսանում էր ոչ միայն հոգևորական դասի, այլև մյուս իշխող դասի—ֆեոդալների արտահայտիչը, առանձնապես երբ այդ երկուսի շահերը զուգակցում էին իրար։ Ֆեոդալական հասարակարգի աշխատող դասը, գյուղացությունն իր շահերով, հասկանալի պատճառով համաքան չի գտնի, կամ քիչ է երևում եկեղեցականի հորինած երկերի մեջ։

Գրավոր գրականությունը, սակայն, ամբողջ հայ գրականությունը չէր կար և ավանդական բանահյուսությունը։ Գիրն ու գրականությունը, ինչպես անասնք, մեղմում ծնվեց ազգային եկեղեցական նպատակի համար, որոնցից առաջինն ու գլխավորն էր քրիստոնեական գրականության միջոցով աշխարհի ընդդեմ հեթանոսություն, ընդդեմ պարսիկների, նվաճող հետևյալ ժողովրդական երդն ու վեպը հեթանոսական էին, ուստի սրանք բնականորեն ետ մղվեցին եկեղեցականությունից, քանի որ քրիստոնեություն իր աշխարհայեցությամբ եկած էր ոչ թե հեթանոսականը դարգացնելու համար, այլ նրա փոխանակ մի նոր հոգևոր կյանք ստեղծելու և իր ճգնա-

վերական օգուվ նուշնիսկ աշխարհն ու երկրավոր կյանքն ուրանալու հա-
նուն մի երկնավոր հանդերձալ կյանքի Բայց որքան էլ եկեղեցականու-
թյունն աշխատեք դրա համար, դարձյալ հին աշխարհիկ բանաստեղծություն-
նը չէք կարող բոլորովին մոռացութեան տակել: Աշխարհականը, աշխարհական
թե համարի,— որոնք այն դարերում մտավորապես շատ չէին տարբերվում
միմյանցից և միշտ էլ սիրով լսել և պատմել են արևելյան առասպելները,—
երկար ժամանակ դեռ պահում է իր սեփական ավանդական բանաստեղծու-
թյունը, առանձնապես ավանդական վեպերը: Այդ էր գլխավորապես բա-
վարարութիւնն առիտ նրա ճաշակին:

Այսպիսով, մեր գրականութեան մեջ Ծ-րդ դարի սկզբից հենց՝ երկու-
ություն է մտնում: Մի կողմում գրավոր գործութեանն է, հակառակ
դեպքի տրամադր, այն բնավորութեամբ, որ ունի եկեղեցական գրականութե-
անն ընդհանրապես քրիստոնյա ազգերի մեջ, Դա առանձին սիրով մշակ-
վել է՝ արտադրելով մեծ թվով երկեր, ուստի և հայտնի է իր համեմատա-
կան հարստութեամբ. բայց Հայաստանի համախափի ավերմունքների պատ-
ճառով դրանից շատ բան կորստի է մատնվել: Մյուս կողմում աշխարհիկ
անգիր բանաստեղծութեանն է, մեծ մասամբ գրողացու ստեղծագործու-
թյուն, շարունակութեան հին բանահյուսութեան, որ ինքնուրույն է և ցո-
լացնում է իր մեջ բուն ժողովրդի կյանքը, ավելի արևելյան ու հեթանոսա-
կան բնավորութեամբ, բայց ժողովրդի ընդհանրութեան հետ հետզհետե
քրիստոնեութեամբ համակված, երկար դարեր առհասարակ ենթակա արհա-
մարանքի և անգամ թշնամական վերաբերմունքի հոգևորականների կող-
մից, ապրել է միայն բերանացի ավանդութեամբ, դրա համար էլ դրանից
շատ քիչ բան է մնացած և հասած աղավաղին: Մեր այս երկու բանահյու-
սությունները, ավանդականն ու գրավորը, միասին առտանայալ են մեր
հին գրականութեան ամբողջական պրոցեսը Ծ-րդ դարից ի վեր: Այդ երկուսն
իրենց առանձին ճանապարհով են առաջ գնացել, բայց իրարուց տարբեր
լինելով հանդերձ՝ միմյանցից բոլորովին անկախ չեն: Եթե եկեղեցին վեր-
ջիվերջ իր հոգին մտցնում է ժողովրդի մեջ, ավանդական աշխարհիկ բա-
նաստեղծութեանն էլ մերթ ընդ մերթ իրեն զգալի է դարձնում և երևում
է գալիս պատմագրութեան և այլ տեսակների մեջ, Բացի այդ՝ ինչ որ ա-
վանդական բանահյուսութեանից ունենք մեր գրականութեան երկրորդ
շրջանում (մինչև 11-րդ դարը), դա իր բովանդակութեամբ ու միասնակ-
սակով բացահայտութեամբ, անանջատ կերպով մտնում է ճամբարման գրակա-
նութեան մեջ, թերևս մասամբ այն պատճառով, որ գրա գրողներն էլ եղե-
ղեցական են եղել:

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ

Կառնձնք:— Մեր գրականութեան երկու մեծ հայրեր՝ Սահակն ու
Մաշտոցը և նրանց երկու աշակերտները՝ Սեդիկն ու Նորյունը՝ հանդիսա-
նում են մեր առաջին հեղինակները: Բացի այս աշակերտներից՝ ուրիշներն
ևս կարող են հեղինակած լինել, բայց ժամանակն ուրիշների անունով աշ-
խատութեան չի հասցրել մեզ: Այդ չորսից երեան են եկել ընդհանուր
եկեղեցական գրականութեան հինգ տեսակներ — կանոն, թուղթ, ճոռ,

չատուգովության կամ հակաճառութուն և պատմութիւն կամ վարքա-
գրութիւն:

Սահակ Պարթևը, այս մեծ թարգմանիչը, որի համար մի քանի կարե-
ւոր կենսագրական տեղեկութիւններ բերվեցին վերևում, իրրև կաթողիկոս,
իր ժամանակի մեծ մասը ընտանաբար նվիրել է եկեղեցու վարչական գոր-
ծերին և սրանց հակողութիւնը, Եկեղեցու բարեկարգութիւնն է եղել նրա
հագացողութեան առարկան: Այդ են վկայում և նրա առեւտով հայտնի 55
գլուխ (վեց հատված) կաՌՈՈՈՅը¹, որոնց մեջ որոշվում են եկեղեցու պաշ-
տոնյաների պարտականութիւնները, նրանց իրավասութիւնն սահմանները,
նրանց և ժողովրդի հարաբերութիւնը, նրանց հաստէթիւնը և ալլն: Այլ է
ընկնում, որ առանձնապէս հողացված է եկեղեցական դասի նյութական
շահերի, բազմաթիւ և բազմատեսակ եկամուտների համար:

Հին գրականութիւն այս ճյուղը, հարկով, սոսկ գործնական ընդթ
ունի և բոլորովին հեռու է գեղարվեստական ձևից: Ստեղծի այս կանոն-
ները, սովորքն, հորինված են երեմի մասամբ ոչ իրրև ստու պատմիւններ
և արգելքներ, ալլ բացատրական, խրատական եղանակով ու ճառարեն և
նույնիսկ պատմական ակնարկներով: Ինչպես, օրինակ, հողեքականների
հաստէթիւնը ժաղում են ձրիակեր քրմերից, սրոնք տուում են. «Այ ունիւք
առեւտը գործակաճութեան հնարից ինչ առ ի պատրաստել նոքօք զայրէն
առնկաց» և մեզ և որդւոք միւրօք (Ձ, հատված, էջ 51 և հտ.): Բայց և այնպէս՝
այդ կանոնները հետաքրքիր են ոչ իրենց ձևով, ալլ բովանդակութիւնով:
Դրանց մեջ պայծառ առտահայտվում են ժամանակի ներքին կյանքի մի
քանի կողմերը, խոտելի սովորւթիւնները և նմանները: Բերենք իրրև օրինակ
հետևյալ կանոնը, որով արգելվում է մանկահասակներին տոււնացնել և
կատարելահասակներին, առանց իրենց կամքը հարցնելու, պատկել. «Պա-
տուէր արարէք նոցա (— ժողովրդականներին), զի սղայոց (— երեխաներին)
կանայայ մի խոտացին և մի կատարելոցն առանց զիրեքտ տեսանելոյ, մի-
մեանց հաճութեամբ. և զուք քաճանայք, սղայոց ամեննին իսկ պատկ մի
օրհնէք, մինչև ի կատարուում հասակի. իսկ կատարելոց, որոց զմիմեանս ոչ
իցէ տեսնու ի հաճոյ իւրեանց. պատկ մի իշխեսցիք զնեք՝ առանց քննու-
թեան և ցնոսին ինքեանս հարցանելոյ. զուցէ ըոնադատութեամբ ձնողաց
յակամայ հաւանեալ իցեն. և զայնպիսի հարսանիս մի իշխէք յունձն առնուլ,
զի մինչև ցայօր յայդպիսի անկարգութենէ բաղում ինասք զնացին յաշ-
խարհիս՝ հոգեք և մարմնաւորք»:

Դրականութիւն հիմնադիր կաթողիկոսը հենց առաջին կանոնի մեջ
պատմիւրում է իրեն շուստեմասէր և քիչ հետո՝ պատմիւրում է քրեպիս-
կոպոս չկարգել ճմանաւանդ զուստեմատեացս, զի որ կամակոր յուսմանէ՝
անկանի ի չարիս... վասն որոյ ամբնդեալ աղտի պտեիլ յարդարում
զպարոցս ի վտու և յալլ արժամաւոր տեղիս, զի լուսաւորեալք լուսով պա-

¹ Յանդիքը Հայոց, հետաքրքիր համեմատութեամբ իմք. Արեն Դանյան, Քիֆլիս
1918, էջ 18—20. Ենանք սրբայն Սահայ Լայոց կաթողիկոսի, զլ. Մնա— Ինչպէս երե-
վում է, այս կաթողութիւնը թերէ և կահունի սկզբում տուում է՝ սր վերջոյն հա-
ւացու ի ճեշք, իսկ վերեւում բուն չկառաւած:

² Անդ, ԻՁ, էջ 28 և հտ.

Ընդդիմականների երկրորդ խմբի մեջ դնում է նա Զրադաշտական կրոնի վարդապետներին. «Եւ Պարսից քէշին գտիչք առ ի տարակուսելոյ՝ թէ ուստի չարիքն լինիցին, ընդ նոյն արահետս վրիպելալք ի ճշմարտութենէն՝ զնոյն բաշխալանս ալլովք պատմութեամբք կարկատեցին, որպէս թէ ի միոյն ի հօրէ երկու որդիք ծնան. մին բարի և բարեաց արարիչ, և մին չար և չարեաց գործոն»։ Այսպէս երևում է բավական տեղեկութայուններ այդ կրոնի հավատալիքներից և առասպելներից։ Պարսից կրօնը շատ հնուէն ազդել էր հայկական գիցարանական և ժողովրդական հավատալիքների վրա, բայց Աղնիկի օրով, ինչպէս տեսանք, այդ քեշն ավելի քաղաքական ազդեցութայամբ սպառնում էր քրիստոնեութայունը Հայաստանում, Հայ մտավորականները, որոնց համար է հորինված Աղնիկի Հոկահառութայունը, դժվար թէ ենթակա լինեին այդ կրոնի իդեոլոգիային և առասպելներին։ Աղնիկի գիրքը նրանց ձեռին իբրև մի պատրաստ զենք պիտի ծառայեր ալոդութայամբ մաքառելու ընդդեմ մոզական օսմանքութայունների և նրանց կրոնի դուալիզմի։

Աղնիկը պարսից կրոնի համար հավանորեն օգտվել է և՛ բերանացի ավանդութայուններից, և՛ մի գրավոր աղբյուրից, որ դեռ չի բացահայտված։ Ուստի նրա Հակոտառութայունը մի թանկագին ազգային է Զրադաշտական կրոնի համար։

Ընդդիմականների ուսմունքի մեջ երրորդ տեղում դնում է նա քրիստոնե-

¹ Աղնիկից են՝ Արեստիգոս Աթենացի, Ջառադաշտիւն. Մեթաֆիզիկացի, Վեոն տնայնիւսութեան. Ուլիպոն Նիլոքցի, Էմիդէմ հերմաստից. Տեո՝ Բադամվէպ, Վենեֆէ, 1889, հոգաւ Լով. Թորոյանի Էկնդէն Ամօրեայ, Վիննա 1901, էջ 10Ե. գերմաներէն թարգմանութայն ներածութայնը. Էկնդէն Ամօրեայ, 1893, 1894, 1896, Գր. Գալեմբաքեան, Էնդագոն աղբիւրք Աղնիկայ Զորքուայ, Ալլե տունէին զրքով. Լ. Տալեան, Էմօտենագրական մանր ստատիստիկութիւնք, Վիննա, 1893.

նեական աղանդները. «Ե՛ նոյն խաբափ անկեալ և աղանդոցն, դոր թշնամին իբրև զորոմն ի մէջ ցորենոյ, սերմանեաց, զի կէսքն երիս արմատս դնէին՝ բարւոյ և արդարոյ և չարի. և այլք երկուս՝ բարւոյ և չարի. և ոմանք եւթնո՛ւ. նա փակապես մանրամասնորեն ժխտում է Մարկիոնի աղանդը, նրա հետ մեկ-մեկ դնելով և ուրիշներին. «Մարկիոնն և Մանի և Մծդնեայք» (էջ 199), «Մարկիոնի և Մանեայ և ալոցն նոյնպիսեաց» (էջ 202), «Մարկիոնի և Մանեայ» (էջ 203, այլև էջ 81, 82):

Մարկիոնը (մ. Ն. 140-ական թվականներին) իր աղանդով առանձին տեղ է բռնում զնոստրիկականութեան մէջ, նա համարվել է քրիստոնեական, եկեղեցու ամենանշանավոր և վստահալոր հակաապոկրիֆներից մեկը. շատ եկեղեցական հայեր գրել են նրա դեմ, նրա կողմած եկեղեցիները, որոնք կապմաներսկոված էին քրիստոնեական եկեղեցու օրինակով, Արևմտա-քից, Հոմից, գուրս էին քշվել, բայց երկար ժամանակ իրենց գոյութիւնը պահել էին Արեւելքում: Այդ «գնոստիկյանների վերջին ֆաղորդները սերտ հարաբերութեան մեջ են մտնում Մանիքեցիների հետ», որոնց աղանդի հիմնադիրն է հղել Մանի պարսիկը, Մարկիոնյան աղանդը նշնիկի օրով դեռ դուրեղ է հղել Արեւելքում և, անշուշտ, ազդեցութեան է ունեցել նաև հայերի վրա, քանի որ նշնիկն իր Հակաճառութեան նյութ դարձնում է և այդ: Գնոստիկյան վարդապետութեան մեջ առաջ էր եկել զուգակրիստական ուսուցում՝ չարի և բարու ծագման մասին: Մարկիոնը զարգացնելով այդ՝ դնում է, ըստ նշնիկի, երեք էութեան (առաջ, սկզբունք, ա) բարին—մի օտար, գերազույն և անտեսանելի էութեան, ք) արդարը—մի գերազույն, բայց տեսանելի էութեան, և գ) չարը—հոռւին երկրում իբրև մի իզական սկզբունք: Ուրեմն երեք արմատ՝ բարու, արդարի և չարի, Այդ ուսուցում էլ հակառակ էր եկեղեցու դաժնած սկզբունքին, և նշնիկն այդ էլ հերքում է մանրամասն: Այդ առթիւ նրա տված տեղեկութեաններն էլ մասամբ ծառայում են Մարկիոնի աղանդի մասին իւրև ուսումնասիրութեան աղբյուր:

7. Մեկ եռութիւն.— Ընդդիմ տարրազոյնութեան:— Նշնիկի առաջնական դրոշմներէից մեկն է մերժել նաև տարապաշտութիւնը և տեղը դնել մի աներևոյթ դորութեան — մեկ էութեան պաշտամունքը: Աշխարհա—ստում է նա,— կազմված է չորս տարրներից (ստորին բնութիւնք)—հուր, օդ, ջուր, հող (Բ. 8 և հտ.), կամ սի չորից հիւթոցն յօգեալ են՝ յերկրէ և ի ջրոյ, յօդոյ և ի հրոյ... ամենայն մարմնաւորք... Զի այնպէս կազմեաց Աստուած զայնար՝ նախ զջուր հիւթսն մեկնեալս արարեալ, ապա նոքօք յօդեաց դամենայն» (էջ 153 և հտ.):

Աշխարհի տարրները շարժվում և փոփոխվում են: Շարժվում են և՛ արեգակը, և լուսինը, և՛ ընդ տարրածները, ամեն մեկն ըստ իր բնութեան: «Որ շարժին և փոփոխին՝ չէ էական, այլ կամ լիալ յումեքէ և յիմեքէ, և կամ հաստեալ ի չգոյէ» (էջ 9): Զորս տարրներն, ուրեմն, էական չեն: Բայց դրանք իրար խառնվելով, իրենց շարժվելով ու փոփոխվելով՝ ցույց են

¹ Նշված է 8 և 9—Մի և այլ տեղ. Ընդհանուր եկեղեցական դոգմութեան, հասարակական, էթիկական, 1908, էջ 78 և հտ.:

² Հմտ. Յեղիշտ. «Ե՛ չորից հիւթոց արար դարձած» յերկրէ և յերկրէ և ի ջրոյ և յօդոյ զէական ամենեցուն յօրինեաց» (ԹԳ. 174):

տալիս, թե թէ՛ ոմն, որ փոփոխէ զնոսան, թե որ էն և շարժէ զամենայն, ինքն ոչ շարժի և ոչ փոփոխի. քանզի էական է և անշարժակա՛ն էա (էջ 9)։ Ասողի միտք ունեցողները՝ շարժուններն ու փոփոխելիները չաղիտի պաշտեն,— ասուած է նզնիկը,— այլ շարժիչն ու փոփոխիչը, որ է էականը, էությունը, գոյը։ Ապա՛ որ էությունը մշտնջենական է և պատշաճաւ ամենեցուն յիշելոյ, այգ ընդունում են և ընդդիմակաները,— ասում է նա, Վի է պատճառ ամենեցուն, և նոյն էական և մշտնջենաւար (էջ 10)։ Մնացած ամեն բան՝ արեգակ ու լուսին և աստղեր և չորս տարրերն էական ու մշտնջենա՛վոր չեն։ Դրանք բոլորը, թէ՛ ջուր, թէ՛ հող, թէ՛ երկիր, թէ՛ օդ թէ՛ իցեն և թէ՛ չիցեն՝ գայն ոչ գիտեն, և զսպասաւորութիւնն՝ յոր կարգեցուն՝ անդադար մաստցանեն, վարելով այնը՝ որ կազմեացն զնոսան։ Դրանք շարժվում և փոփոխվում են և շարունակ, բացի բանավորներից ու մասավորներից, անդիտակցաբար կատարում են իրենց սպասավորությունը։ Այդ ամենը, ուրեմն, որ էական, անփոփոխ և անշարժ ու մշտնջենա՛վոր չեն՝ պաշտելի չեն, այլ պաշտելի է զրանց ճշարգիչ և յորինիչն, շարժիչն և փոփոխիչն։

Այսպես՝ նզնիկը, հին աստվածաբանների արգամենտացիայով՝ աշխարհի — բնության գոյությամբ ու փոփոխմամբ ապացուցում է աներևույթ շարժիչ ու հորինիչ մի էության, մեկ աստուծու գոյությունը, և մերժում է ասարթաշատությունը։

Մերժելով ասարթաշատությունն ու բազմաստվածությունը, նա իբրև նշակեալ ընդունում է միայն մեկ սկիզբ, մեկ էություն և հետևողա՛մանորեն այդ մոնիստական հայացքն անց է կացնում մինչև վերջը. Այդ էությունը, որ և հոգի է կոչվում (էջ 86), գոյություն ունի բնությանից աստջ և աշխարհի ու ամեն բանի արարիչն է։ Հետևաբար նզնիկը հետևող է իդեալիստական փիլիսոփայության, ինչպես առհասարակ թրիստոնիստական ուսմունքը։

8. Մեկ բարի եւթյան. — Վիք իմ չար, օր բնութեամբ չար իցեա՛ւ — Հիմնական խնդիրը, որ հարցանքն թրիստոնյաներն և ընդդիմականները դնում էին ընդդէմ մեկ էության, այս էր։ Եթե մեկ աստուծո՛ւ կամ մեկ էություն կա և նա բարի է, շարեւայ արարիչ է և ոչ չարաց իրաց, ուստի՛ է խաւար, ուստի՛ են չարիքն։ Եվ նզնիկը թվում է մի շարժ չար, վատ բաներ։ Ընդդիմականները երկու էություն դնելով՝ բացատրում էին հենց չարի ծագումը,

¹ Յեղիամ. Վն ժոխի... զի կեանց է և լոյս անփոփոխելի, որ ոչ անցանէ. . . որդէն էն և է՛ և կայ յաւիտեան (Բ. 18 և հո.)։ Վնփոփոխելի է աստուած, և փոփոխալի ունին արարածք, որդէն ազախ յերիտառարգութիւն, և երիտառարգն ի ծնութիւն, և ծնուն յապականութիւն, և որդէն զարուն յամուսն, և ամուսն յաշուն, և աշուն ի ձմեռն, որ խափազանէ զամենայն կենդանեաց յարգութեան և զանկաց և զբուսաց։ Եւ արեգակն փոփոխալի ունի ըստ ժամանակաց ըստ ամեմանայն աստուծոյ զերկայութիւնն աւարց և զպակասութիւնն... և այդպէս կայ ի սղտաւարութիւն ըստ հրամանի արարչին յարարածու նմանադէս և լուսին զիւրն ունի սղտաւարութիւն զժամանակացն զփոփոխալի ի ժաշիկն և ի լուսն, զի նախա ծանիցազ զժաշիկն երկրաւարաց և զնարագալի յարութեան։ Այլն ասակց արդատաբան ի զիշերի նաւագնաց, և ըստ այլ եւ շարժմանց աւ ի պէս ժամանաւարաց. որ ոչ ըստ հեթանոսական բարբալժանցն, որ բախաւ և Թեոփոս ասեալ (ԻԲ. 166)։

աբ և Եղնիկը հերքում է, փոխանակ ղնելով իր առնակետը, որ և հկեղեցունն է։ Այն է՝ մեկ էութունը, մեկ ազատածը բարի է. նա չար բան չի ստեղծել։

Բարի ու չար բան չկա,—ասում է նա։ Աշխարհս կազմված է չորս տարբերից —Հուր, օդ, ջուր, հող, որոնք և՛ բարի, և՛ չար են։ Դրանք առանձինն՝ ապականիչք են միմեանց, և խառնելով ընդ ընկերին՝ օգտակարք և շահաւորք (էջ 9)։ Քրազում անգամ զոր բարին կարծիցեն, միայն առանձինն՝ առանց ընկերին խառնութեան՝ ֆրտասակար լինիս (էջ 8)։ Թե այդպես է, այդ բոլորն առհասարակ վկայեալ, բամենցուն յայտնի է, այսինքն՝ ճշմարիտ իրականութուն է։ Հետեալոր թի բարեաց տարչէն չար ինչ չիք լեալ և չիք ինչ չար որ բնութեամբ չար իրէն։ (էջ 8)։

Ինչպես կարելի է տեսնել, բնության առարկաների չար ու բարի լինելը չափվում է մարդկանց համար օգտակար կամ ֆրտակար լինելով։ Չար կարծվածի գաղտններն էլ,—ասում է նա,—մեկ-մեկ օգտակար են լինում։ Ձիւնը չար քան զօճ կայցէ, և ի նմանէ թերեակէ։ Եւ սպանող դեղորոգ... չն հասցեալ և անդէն բուժէ։ Եթէ բնութեամբ չար ինչ էր օճ, կամ չարի իրէք աբարած, ապա չգտանէր ինչ ամենին ի նմա օգտակար, և ոչ զգոնանայր հրէք ի գաղտնութենէ անտի իւրմէն (էջ 45)։ Բոլոր գաղաններ ժեշ մի օգտակար բան կա, կամ մորթը, կամ հրազուն և այլն։ Նույնպես և բույսերը որոշ դեպքերում օգտակար են, որոշ դեպքերում ֆրտակար։ (Դ. էջ 46—49)։ Բնության մեջ, ուրեմն, ըստինքյան չար ու բարի չկա, բայց չարիք լինում է։ Չարիքի պատճառ մարդիկ են,—ասում է նա։ Նրանք են բարարիչք չարեաց։ Դի ինքեանք են պատճառք առնելոյ և չառնելոյ, որովհետեւ չարիքն ուրիշ բան չէ։ Բայց եթէ անձերի բարգասիք, այսինքն՝ գործողութուն (էջ 21. է), և մարդն իր կամով է չար գործում (էջ 26. Թ). Չարիքը կամածին է և ոչ բնութեամբ։ Բայց բացարձակ չար գործողութուն էլ չկա. այստեղ էլ չարիքի հասկացութունը հարաբերական է։ Միևնույն գործողութունը կարող է և չար համարվել և չամարվել. նայելով պարագային։ Առն և կնոջ սեռական մերձավորութունը, օրինակ, բարիք է, եթէ մարդ՝ այլը կին որ օրինօք ամուսնացեալ՝ մերձեցայցէ որդեմնության համար. ապա եթէ ուրեք թողեալ զիւր կին, գայլոյ ամուսնութիւն թշնամանիցէ, գործ չարութեան գործէն։ Նույնպես և սպանության վերաբերմամբ։ Յնորժամ զբմբռնեալն ի շնութեան ոք սպանանիցէ, պատուելա ի վերայ ածեալ վասն յանդգնութեան, չառնէ չար ինչ։ Ապա եթէ զանմեղն ոք... սպանանիցէ, կամ վասն ինչս գերեմանելոյ, կամ վասն առողջութեան հատանելոյ, չարութիւն գործէ. և գործն նոյն է երկոցունց, բայց օրինակն ոչ նոյնպիսի։ Այսպես և չատ ուրիշ դեպքերում։ Գործողութունն ըստինքյան չար չէ, այլ թիքն չարք յայնժամ լինին. յորժամ ալեաքն օրմեօ ոչ վճարեացին (էջ 27. Ժ). Գործողության չար ու բարի լինելն, ուրեմն, որոշվում է գործողության օրինականությամբ. օրինականը բարի է, օրենքի հակառակը չար է։ Դրա համար և չարագործները պատժվում են օրենքով։ Եթէ չարիքը բնական լինեք, չարագործին պետք էր արգահատել և ոչ թե պատժել։ Մարդոյ բնութիւն բարեաց ցանկացող է և ոչ չարեաց, այնպես որ նույնիսկ

չարագործը երբեք հասնէ չի առնում չարագործութեան անունը (էջ 42—44)¹,

9. Պալատը զուարթացողով տշխարհայացքի դիմ:—Որովհետեւ կարելի չէ ընդունել, թե բարի արարիչը չար բան ստեղծած լինի, ուստի հեթանոս հույները, մոգերն ու հերձվածողները շար իմն հետքիւն հակառակ բարւոյ դնեն (էջ 8)։ Ասում են՝ կա Քինչ չար գործութիւն, որ զայն ամենայն անհարթութիւնն առայցէ դործել, և ինքն իսկ արարիչ իցէ նոցա (Դ. էջ 15)։ Ինչպես վերևում էլ ասվեց, հույն փիլիսոփաները կարծում էին, թե շէր ինչ ընդ նմա, որում երկու անուն էր՝ որ է Եւրոպ, ուստի զամենայն արարածն արար, և զատոյց ամենաբունասան իմաստութեամբ և զարդարեաց վայելութեամբ։ և յայնմ նիւթոյ պարս և կարծել զշարիսն։ Բայց երբ ինչ մարտաւոն էր ի նմանէ, և չէր պատշաճ արարչութեան, զայն և թողու։ Այս յայնմ մարոյ են չարիք մարդկան (Դ. 16. տես էջ 167)։ Ըստ այսմ ուրեմն՝ երկու ոկիղը, երկու անարար են ընդունում։ Դա հակառակ էր Եդնիկի մոնիստական հայացքին և այն տեսութեանը, թե աշխարհն ոչնչից և արարված։ Ուստի նա մանրամասնորեն ժխտում է հյուդի—նյութի ինքնակայ գոյութիւնը և հասնում այս ընդհանուր եզրակացութեանը. «Եթայտ է, թէ երկուց անարարաց ի միասին չէ մարթ լինել»։

Նա հյուդի գոյութեանը հերքելու համար բանեցնում է մի շարք արգումենտացիաներ—փաստարկումներ։ Ինչու՞նք հետևյալները, Պարզ տարր էր հյուդը,—հարցնում է նա,—թե բաղադրված (բարդ)։ Եթե պարզ ու մենակերպ տարր էր հյուդը, ապա կարելի չէ ասել, թե հյուդից է ստեղծվել աշխարհը, որովհետև աշխարհն բարդ ու պես-պես տարրներից է կազմված։ Իսկ բաղադրյալը, բարդը, չի կարող մեկ պարզ տարրից կազմվել, քանի որ բաղադրյալները պարզ տարրներից են բաղադրվում։ Իսկ եթե ասեն, թե հյուդը պարզ տարրներից էր բաղադրված, ապա ուրեմն կար ժամանակ, երբ հյուդը գոյութեան չի ունեցել, որովհետև նա առաջ է եկել պարզ տարրների բաղադրվելուց. ուստի հյուդը ստեղծված է լինում և ոչ տնայար։ Որովհետև եթե հյուդը բաղադրյալ էր, իսկ բաղադրյալները պարզներից է կազմվում, ապա ուրեմն կար ժամանակ, երբ հյուդը չկար, քանի դեռ պարզները չէին միացել միմյանց հետ։ Եվ եթե կար ժամանակ, երբ հյուդը չկար, ապա ուրեմն ոչ մի ժամանակ էլ նա անարար չէր։ Մյուս կողմից՝ եթե աստված անարար էր, անարար էին և պարզ տարրները, որոնցից բաղադրվել է հյուդը, հետևաբար երկուսը միայն չէին անարար, այլ հինգը։ Դրանք են՝ մեկն աստված, մյուսները՝ չորս տարրները (էջ 23 և հտ.)։

Մի ուրիշ օրինակ—Եթե հյուդը, որից աստված աշխարհն ստեղծել է,

¹ Յանտապտում. Շի արարածնց կամք հաղորդելու իցեն ընդ նորո բարի կամացն ի ձեան որինաց (Ս. 40)։ Օրենքով պատմվելու մասին տես և Ընտան, այլև հետևյալը. «Առանձինն բնութեամբ՝ չաբն չար ոչ է, և ոչ բարին՝ բարի, այլ ի միտ ունի բարի և չար լինել. դի սիրովն Աստուծոյ սիրել զբարին և ստել զչարն՝ բարի է, և ստել զբարին և սիրել զչարն՝ չար է. նախանձել ընդ բարին և լինել բարի՝ բարի է, և ընդ չարն՝ չար է. և նախանձն նայն է, Թարւոյն ցանկալ՝ բարի է, և չարին՝ չար. և ցանկութիւն նայն է, ... Զի ամենատեսաւն բարեբարի զբարին սերմանալ ի մարդկի և յիշխանական կամն թողալ՝ ոք կամիցին վարել ի բարի կամ ի չար» (Ս. 82)։ Շի ամենայն արարածն ի բարեբարին բարի ստեղծան և ի կամակալ մասցն հեղն չարաց (Ի. 228)։

ասում ե՞ք՝ «անկերպարան և անզարդ և անարդ էր», և ասոված զրանից ստեղծել է աշխարհը «ի պէտպէս կերպարանս և ի զարդս և ի յարդս,— ապա ուրեմն կերպարանաց և զարդուց և արդուց արարիչ է Աստուած, և ոչ ընդթեմանց [=տարրերի]»¹ Իսկ եթէ արարչի այն գործ է՝ զընդթեմանս առնել, և ոչ միայն արդս և զարդս և կերպարանս, յայտ է եթէ աւելորդ է կարծել՝ թէ ի նիւթոյ ինչ իմեքէ յընթերակացէ՝ արար Աստուած զաշխարհս, այլ յոյննչէ և ի չգոյնէ (էջ 19)։ Որովհետեւ մարդիկ էլ ստեղծում են ձև ու կերպարանք, որ չգո են, այն է՝ եղած նյութերից արվեստով ստեղծում են բաներ, որ չկան ընդթյան մեջ, ինչպես տանտերեր, քաղաքներ, Մարդիկ միայն չգո ձև ու կերպարանք են ստեղծում, իսկ ասոված արարիչ է, ուստի նա թե՛ դրանց ստեղծող է և թե՛ կարող է ստեղծել տարրերը (էջ 20)։

Եզնիկը միևնույն եղանակով ամենայն մանրամասնություններով հերքում է և Զրադաշտական կրօնի հովատալիքները, իսկապես այդ կրոնի առասպելները, և հակասություններ ու անհեթեթություններ ցույց տալով՝ ծիծաղելի է զարձնում զրանք իրեն անմտությամբ լի բաշղաղանքներ և կարկատուն բաներ։ Նույնն անում է նա և Մարկիոնի, աղանդի նկատմամբ, միայն այս դեպքում նա դիմում է և Ս. Գրքին։

10. Պայմար ընդդիմ էայլապիմ ժողովրդապիմ հավատալիքներին։—Քրիստոնեության հաստատման համար անհրաժեշտ էր ժողովրդի միջից արմատախիլ անել նաև հեթանոսական կրոնական հավատալիքները։ Եզնիկը կարիք չի տեսնում արածնապես հերքելու հայկական բազմաստվածությունը։ Այդ հերքումը նա կատարում է ընդհանրապես, երբ խոսում է ընդդիմականաց ուսմունքների դեմ։ Աստվածների մասին նա այն տեսակետն ունի, ինչ որ առհասարակ քրիստոնյա վարդապետները, այն է, թե՛ աստվածները եղել են մարդիկ, «և զմարդկան ուրուականս ի պաշտոն առեալ՝ զիս անուանէին» (էջ 70)։

Բացի աստվածներից՝ եղել է և բազմաթիվ բարի ու չար դեմոնների հավատքը, որ շատ երկար հալաւտեւել է և մեծ մասամբ հասել է մինչև մեր օրերը։ Եզնիկը սուր կերպով դիտում է՝ այդ և իր ոչնչացնող խոսքն է ասում «նոսրապաշտական ոգիների մասին, ինչպես են՝ մարմնավոր դե, պայ, համբարու, յուշկապարիկ, պարիկ, ծովալցուլ, աւելզ, նհանգ, շահապետ վայրաց, վիրապ, Սրտնցից առանձնապես վիրապները շատ մեծ տեղ են բռնել հայկական հավատալիքների մեջ՝ և՛ հնուց, և՛ նորումս¹։ Դրանք,— ասում է Եզնիկը,— ուշ եթէ անձինք ինչ են, այլ անուանք զբանջատանաց, և բաշղաղանք մոլորելոց մտաց ի դիւազ»։ «Եւսուանք տուանց անձանց են, և ամենայն՝ առասպելք են, և պառաւաց դրդիւնք» (էջ 69 և հտ.)։ Մակայն ինչքան էլ նա ուժեղ բանավարժությամբ հերքում է այդպիսի ոգիների գոյությունը և մանավանդ նրանց կերպարանների փոխվելը, կամ դանազան կերպարաններ ընդունելը, բայց և այնպես նա բոլոր հին քրիստոնյաների հետ հավատում է, թե «հերշտակք և դեք [անմարմին դեներ]... կարող են զօղս պնդել և պարզել, և ազգի ազգի կերպարանս երենցուցանել» (էջ 72), և թե

¹ Այդ հավատալիքներն է մի ամփոփում, մասամբ՝ Թեոֆիլ, «Ազգագրական Հանդէս», գիրք ԻՁ, 1916, «Ազգագրական Նյութեր Եզնիկի Եղէ Աղանդացի գրքի մէջ»։

ստանանք է, որ «կարծեցուցանէ թէ նհանգք ինչ իցեն զետաց, և շահապետք վայրաց. և յետ կարծեցուցանելոյ՝ ինքն կերպորոշմանի կամ ի վիշտադի կերպորոշման կամ ի նհանգի իմն և ի շահապետի, զի այնու զմարդն յիւրմէ արարչէն թիւրեցէն» (էջ 74)։ Այդ բոլորը «դիւան կերպարանք են», — տալիս է նա, — «կեղծիք զիւսց են և ոչ ճշմարտութիւն ինչ իրաց» (էջ 75)։

Երազի մասին էլ նա մի հասկացութիւն ունի, թե կա երազ, որ՝ ինչ որ ցերեկն տեսւում է մարդ, ցնած մամանակ էլ զրոնով զբաղվում է նրա միտքը, բայց կա երազ, որով, — ասում է, — չնորհիմ, հայանում է մարդուն ապագայում լինելիքը. կամ թե հակասականը, այսինքն ստատան, զանազան կերպորոշմանով երեւում է մարդուն՝ նրան զարհուրեցնելու. եւսմար, չհասկացրէր է հին գրածայի մասին մարդկական համայնքը, աստանախորտութիւնը, որին նույնպէս համատես է Սիւնիկը, թե շար ոգին շարգում տեղում է կանց կերպը. եղեալ՝ դար խաբէ յերազի. և է՝ երբեք՝ յարանց կերպը զարեւել՝ դիւանայ յանցանքն» (էջ 136)։ Նա համատես է նույնպէս, թե զերբ կարող են մանկ մարդու մէջ և ի վիճակութիւն պատեանել նրան. Բայց կան ցովիք, որանց աստիճանում են «ի չնչնելոյ խառնուածոցն»։ Պատկեր մարդին ի չորից ասորից խառնելու է, ի խառնուածութենէ, ի ցումաութենէ, ի ցրտութենէ և ի շեքմութենէ. և թէ մի ինչ պակասիցէ կամ յաւելիցէ, ցուս գործէ ի մարմինն» (էջ 57)։ Ուրեմն ոչ մանկ ի վիճակութիւն դեբիթի է. կան որ բնական պատեաններէն ևս ծագում. «Բնաթի բովիչից յամառին, թէ՛ բնու չից դե, որ ի մարդ մասնիցէ. այլ ցումք են այն, և մեք զարմանալիքն կարենից բովիչելու, Կան սմանց էլ, — ասում է նա, — որ զիւնէ, և թէ բնու իսկ աստանայ ոչ փորձէ զմարդ» (էջ 136)։ Բայց Սիւնիկը հետեւում է ավետարանին, ըստ որի զերբ կարող են փորձել մարդուն և մանկ մարդու մէջ, հարմարելու ու ձգտելու էլ, — ասում է նա, — սմանց կարծում են, թե զերբ է լինում. բայց այդ աստիճանում է «ի մեղիութենէ և թուլութենէ մարմնայ, Բնաթի գտելով յարմարելն և ձգտելն՝ հմուտ բովիչից ի միջերկոյ մարդաց ասեն, զոր և փորձն իսկ յայտ ասեն։ Այսպէս և փնջելը հրեշտակից չի լինում, այլ ցրտից, կամ տվում այլ իրից բնական ազդեցութեան, նույնպէս և հագց հանելը» (էջ 138 և հա.)։ Այսպէս ուրեմն, Սիւնիկն այսպիսի մարդկական նախադասութեանքը բնական պատեաններէն է համարում, և թե միայն այդ չի հակադրում Ս. Գրքին. Նա խոսում է նաեւ կախարհներէ ու կախարհութիւններէ, որանց ըստ համոզման է և դեռ համոզում է մեր մարդկայնը (էջ 60—63)։ Այն աստիճանին պայմանաւոր դեմ, ինչպէս են՝ «արեգակն և յուսն և աստղը և հուր և ջուր և երկիր, որ ի մարդ և ի հեթանոսաց պայտին» (էջ 10), մի սնանկութեան, որ հարմարել է մինչև մեր օրերը։

11. Ընդդիմ մտկոտորքի հալստիքի։— Աստղապայտութիւն հետ կապված է եղել և «երամանքի» կամ «նախապայտի» հալստեղը, «Քաւաքայն» աստեղանշմարը... զօննդաց պատճառս և զմահուանց՝ յաստեղաց իրերն ի կենդանեաց դնենու Որդէս թէ յորժամ ծնան իցինն, անդէն և մահուանքն իւրաքանչիւր ուրուք անվրէպ սահմանիցին. և ըստ այն ոչ յաւելիչ ումեք մեռանել հնար իցէ, և ոչ յամենալ» (էջ 107)։ «Դարձեալ բախտաւորութեանց և չուառութեանց՝ զաստեղսն դնեն պատճառս. որդէս թէ աստեղաւորնք ինչ իցեն, և ըստ դիպելոյ պատեանաւորաց աստեղացն յաստեղաւորանն՝ նոյնպիսիք և ծնունդքն լինիցին» (էջ 108)։ «Որ ինչ ի նախապայտից գրեալ է հրամանացն, այնմ չէ հնար վրիպել. այլ որ փառաւորն գրեցու՝ փառաւոր է, և որ չուառն՝ չուառ. և ուր հրամանքն իցեն և յամեմէ հրամանքն, ըստ այնմ է մեռանին. և վրիպել չէ հնար ի սահմանելոյ հրամանէն» (112)։

¹ Ուստիստատում. «ի չորից նիւթաց արար զարարեան... և անդէ զմարմինն կապեաց» ի ցումաութէ. ի խառնուած. ի շեքմութէ և ի ցրտութէ (ՁԻ. 174)։

«Եղծին հեղինակը մասնամասն հերքելով այս հավատալիքը, որ մինչև որս դեռ մնում է մեր հետաքննող անտիապաշտ խավերի մեջ, սաստիկ հեզմանք ու ծաղրի է ենթարկում այն, ելնելով աստեղասերի անսահմաններից՝ առյուծ, եզն, խոյ, կարիճ (էջ 107—112)».

12. Տիեզերագրեակամ հայացքը և մեկնաբանեակամ միտադրը:— Եղնիկն ի միջի ալլոց խոսում է նաև տիեզերագրական մի քանի խնդիրների, երկնալիճ լուսավորների և օդերևույթների մասին: Նա օդերևույթները մերթ քաջատրում է բնական պայմաններով, ինչպես՝ արշավույսի շոգազուհումը, լուսնի և նույնիսկ ճրագի շուրջի առաջ եկած բակը (էջ 129. ի՞նչ), այլև ցողի առաջացումը (էջ 132. ի՞նչ), հաճախ, սակայն, պարզապես հետևում է Ս. Գրքին, ինչպես՝ հղանակի փոփոխման և անձրևի վերաբերմամբ (էջ 148): Նա իր տեսությունը կազմում է սովորաբար Ս. Գրքի խոսքերի մեկնաբանությամբ, ընդդեմ «աղտաքին իմաստունների»: Այստեղ մասնավորապես չենք դրի այդ մասին: Տիեզերքը նրա համար չունի, հարկավ, այն տնտես ընդարձակությունը, ինչ որ այժմ մեզ համար, Դա մի մեծ տուն է, երկինքն առաստաղը, երկիրը հատակը: Երկինքն էլ երկուն է. «Երկինք վերինք և որ ինչ յերկինս, և երկինք երևելիք որ ի ջուրք» (էջ 6): Ենա և զերեւելի հաստատութիւնս, որ ի ջուրք մեկնեցաւ, երկին թարգմանեցին եւթանասունքն. ուստի յայտ է՝ թէ վերին երկինն և ներքին՝ երկու երկինք են, ոչ երեք կամ բազումք» (էջ 181): Արտաքին իմաստուններն ասում են, թե ամեն օր «երկինք շրջին... մերթ ի շրջին ծածկեն զլուսաւորսն և մերթ յայտնեն» (էջ 129): Եղնիկն այդ հերքում է պնդելով, թե արեգակը, լուսինն ու աստղերը «նոցա գնան և երկինք կան անշարժ հանդակալը: Որպէս և աստուածաբանը իսկ Գիրք հաստատութիւն կոչեն զերկինս, եւ որ ինչ՝ հաստատուն է, չէ շարժուն: Ուրիշները, սակայն, նույն Ս. Գրքի վրա հիմնելով երկնային ասում են, թե լուսավորների համար զրկած է. «Եդ զնոսս ի հաստատութեան երկնից. ուստի յայտ է թէ քետեալք են և ոչ գնալունք»: Եղնիկն այդ էլ Ս. Գրքով բացատրում է, և ուրիշ օրինակներով ցույց է տալիս, թե «երկինք հանդակալ են և լուսաւորքն գնալունք»: Եւ ոչ միայն եւթն աստղքն գնալունք են և այլքն առանց գնացից, այլ ամենեքեան գնալունք՝ կէսքն յամբազնեցք, և կէսքն արագագնացք. և ոչ յերկինս բեւեռեալ են» (էջ 148 և հտ.):

Նրան ծանոթ են ժամանակի դիտական տեսությունները լուսնի, արեգակի և մոլորակների շարժման մասին, բայց նա չի ընդունում դրանք: Նա մերժում է, օրինակ, այն, որ լուսավորներն արևմուտքից արևելք են գնում, թե երկինքը երկրի շուրջը կա բոլոր կողմերից: Եւ երկինք, ասեն, որչափ ի վեր են՝ զոյնչափ ի խոնարհ են, և զոյնչափ յամենայն կողմանց շուրջ զերկրաւ, և զերկիրս շուրջ ջուր պատէ, և զլուսն և զերկիր՝ օդ. և զօգն և զլուսն և զերկիր՝ հուր» (էջ 140): Նա չի ընդունում և այն տեսությունը, թե «երկիրն ի միջոցի կայ... օդս՝ որ է ի մէջ գնդին երկնից՝ փակեալ կայ, և ունի զաշխարհս ի հասարակածի, ոչ ի վեր տայ վերանալ և ոչ ի խոնարհ հակել» (էջ 132 և հտ.): Մերժում է նաև այն տեսությունը, թե «լուսնի չիք իւր լոյս առանձինն, այլ յարեգակնէ դայ ի նա լոյսն», նույնպես և այն, որ ասում են, թե լուսինը «ի ներքոյ է քան զարեգակն և քան զամենայն

աստեղծ, և քանզի ի ներքոյ է, յորժամ կշիռ դէպ արեգական պատահիցէ՝ յայնժամ խաւարի արեգակնն (էջ 140). կամ այն, որ ասում են, թէ տէր եւրեք մասնէ արեգակն. և զի ոչ մասնէ՝ անտի յայտ է, զի ցայդ ի նորա լուսոյն ի լուսնի ամասն լոյս ծագէ, և նմանները (էջ 148—151).

Այսպէս ուրեմ, ինչքան էլ Եղեկիկին ծանոթ են իր ժամանակի այս տեսութիւնները, բայց նա մերժում է դրանք, Շատ պարզ երևում է, որ նա աստվածաբանութեան արեգակնային գաղափարն ուսում է ստացել, ուստի և նրա դատողութիւնները տիեզերքի մասին ելնում են իր գաղափարից:

13. Հնգի և մարմիծ:— Կանգ առնենք միջնադարյան գրականութեան համար կարևոր այս խնդիրների մասին: Կան երեք տարածներ, որոնք մտաւոր և քանութիւն են, ստեղծված են, ստեղծված են, բայց անմահ են. Աստված նրանց պարգևեաց անախանձ զանազանութիւն: Նրանք են հրեշտակները, դեմոնները և մարդկանց հոգիները: Հրեշտակներն ու դեմոններն անմարմին են (էջ 68). իսկ (ստատանա) անմարմին է, որպէս շուշնջ մարդոյն անմարմին (էջ 124). Նրանք, հրեշտակներն ու դեմոնները, թող յաւելուած ծնընդեմք առնեն, և սչ պակասութիւն մահուամբ. այլ որպէս հաստատեցան, նոյնպէս և նոյն թուով կան, առանց յաւելուածոյ և նուազութեան:

Իսկ մարդիկ, քանզի յերկուց բնութեանց են՝ ի մարմնաւորաց և յանմարմնոր. յիրաւի տերին ծննդեամբ, և զան յառնում ամուսնութեամբ. և մեծանին մարմնով, և ոչ ոգով, վասն պատուիրանազանցութեանն (էջ 71). Մարմնովորը մարդու մարմինն է, անմարմինը՝ հոգին, որ և շուշնջ է անվանվում. շուշնջ մարդոյն անմարմին (էջ 124). Ինչ է այս երկուսի, հոգու և մարմնի, տարբերութիւնը: Որ ինչ երեկ՝ մարմնաւոր է, և որ ինչ ոչ երեկ՝ անմարմին (էջ 67). Այս ստիպումով նա լինի հետո ավելի պարզում է և մարմնավորը, որ միևնույն է՝ նյութականը, շատ ճիշտ որոշում է գրելով. «Եւ միանգամայն իսկ ասացեալ, թէ որ ինչ ի զգայնացս շուշնջի կամ զնրի կամ ազգի՝ այն մարմնաւոր է, և որ զգայնաց ոչ ազգի՝ անմարմին. նուրբ է տարբերում, այլ զի ակամբ զնրի՝ մարմնաւոր է. նուրբ է տարբերում, այլ զի ցրտութեամբն ազգի մարմնոյ՝ մարմնաւոր է. նոյնպէս և ջրոյ, որ քան զծանոցանն նրաքոյն է, և քան զթեթևան ծանրաքոյն (էջ 68). Ուրիշ տեղ այսպէս է տարբերում, «որ մարմնաւոր է՝ ի չորից հիւթից յողեալ է, որպէս մարմինը մարդկան և բնաւ անասնոց. և որ ինչ անմարմին է՝ նա պարզ բնութիւն է, որպէս հրեշտակաց և դիւսց և ոգաց մարդկան (էջ 64).

Ինչպէս բոլոր արարածները, նախնային և մարդու հոգին ստեղծված է ոչնչից: Նա թոր յոչնչէն կարող եղև զշուշնջ մարդոյն առնել, և պահել միշտ կենդանի և անմահ, նոյն և զմարմինն՝ զոր յերկրէ ստեղծ՝ կարող էր պահել կենդանի (էջ 51), «Եւ որ զհրեշտակս և զհոգիս մարդկան յոչնչէն տարեալ՝ կենդանիս և անմահս պահել, նոյն և զմարմինս կարող էր կենդանի

¹ Հոգի, ոգի բռն էլ ակադեմիկոս, ինչպէս և հետո, շուշնջ է նշանակում. այս գիտեմ և Եղեկիկ (էջ 64). Դա ծագում է մարդկային հոգու համեմատ հոգեպաշտից: S. M. Abeghjan, Der armenische Volksglaube. Leipzig, 1889, էջ 8 և 60. 14.

պահել՝ թէ չէր առաջնոյ մարդոյն զԱստուծոյ հրամանն զընկեցեալս (էջ 53)։
Կնշտնակի՝ Եզնիկն Աղամի հանցադործութեան հետեանքն է համարուս մարդուս մահման ճակատագիրը։

Նա դեմ է ելնուս այն փիլիսոփաներին, որք զշուշն [—հոգին] անտարար, անմահ և աստուածեղէն յԱստուծոյ բնութենէ անտի ասեմն (էջ 146)։ որոնք աստուածու զգմիտան և զշուշն տեսնում են բոլոր արարածներին մեջ, և՛ շնչավորների, և՛ անշուշնների։ Նա ասում է։ Թե ամպարշտութիւնն է զԱստուծոյ զիւրոյ չեութեանն կենդանութիւն՝ հոգեւորաց և շնչաւորաց և անշնչից առ հասարակ համարել և տարբերութիւնն չդնել հրեշտակների ու զների և մարդկանց, որոնք բանավոր և մտավոր են, և ուրիշ շնչավորների միջև, որոնց շնչական կենդանութիւնն ի չորից հիւթոց խառնալ և յողեալ, որք յորժամ քակտիցին, և կենդանութիւնն ի նոյն չորեան հիւթս լուծանիս (էջ 146)։ Բոլոր արարածների մեջ աստուածու շուշնը դնելով, միաժամանակ և բտանջանա և պատիտ շնչոցն յանցուցեցեալ զնեղով, նրանք Աստուծու էութիւնը մասերի են բաժանում և շատ շնչեր են կոտորում, «և զարձեալ զիւրոյ զկէս բնութիւնն միւս կէսն տանջիցէ, և կէսն ի փառս և կէսն յանարգանս, և մի թերին յանոյս և միւս թերին ի դժոխս» (էջ 146 և հտ.)։ Դա հետին հայհոյութիւնն է, — ասում է նա։ Աստուած էլ հոգի է, թայց կա զանազանութիւն. Եզնիկ Աստուած հոգի, այլ կայ ընտարութիւն ի միջի. ասէ՛ Աստուած հոգի կենդանի է, որ է կենտարաւ (էջ 85)։ Մինչդեռ մարդու հոգին կենտարար չէ. այլ միայն կենդանութիւնն է։

Եզնիկն ընդունում է, որ ամեն բանի մեջ կենդանութիւնն կա. սերմանք և տունկը արկեալը յերկիր՝ բուստին. և յէզս մարդկան և յանասնոց անկեալ սերմանք՝ գառն ի ծնունդս և յաճումնս։ Այլ խնդիր այն է, թէ այն կենդանութիւնն ոչ Աստուծոյ էութեանն կենդանութիւնն է, այլ արարած կենդանութիւնն այլազգ թանաւորան և ի մտաւորս, և այլազգ յանասունսն և յամենայն շնչաւորան. և այլազգ ի բնականան, որպէս ի սերմանս և որ յէզս մարդկան և անասնոց անկանին։ Դրանցից՝ մարդկանց կենդանութիւնն թառաւել և պատուականադոյն է. յորում և բնական կենդանութիւնն է ըստ մարմնոյն, և բանաւորն սքանչելի ըստ շնչոյն¹։ Զի մարմինն և նոցա ի չորից հիւթոցն կայ. և ոգին ոչ ի չորիցն հիւթոց յողեցոց, այլ ի պտրգակեմ և ի սուղակեմ քնուրբնէ. եւ այլոց անասնոց ոչ նոյնպիսի. այլ ի բնական և յազգեցական բնութենէ [—բնազգից]։ և սերմանց ոչ նոյնպիսի, այլ ի բնական և յանշնչական խաղացից։ Նոյնպէս և ոչ ի լուսաւորան շնչաւորութիւնն ինչ բանաւոր է, այլ բնական և խաղացական շարժմունքս (էջ 147)։

Այսպես՝ Եզնիկը խիստ հետևողական է իր տեսութեան մեջ. անարար միայն աստուածային մեծ էութեանն է, որ արարիչ է կենդանաւոր, անցածը, այլ և մարդուս հոգին, արարած է։ Բայց այդ պետք էր հաստատել և Ս. Գրքով։ Թեպետ և այդ հայտնի է, «այլ և զմիոյ միոյ իսկ ի նոցանէ

¹ Յաճախագոյն. Էզնիկ, միւս և բան մի հոգի ասի և ոչ երբեք հոգից այլ հոգի ասի կենդանութիւնս, և միւս ասի իմաստութիւնս և բան ասի իմաստութիւնս՝ միոյ հոգւայն (Ա. 3)։

դարձրած մարթի ի Գրոց ցուցանելն, ասում է նա, և շարունակում է. «Նախ զհրեշտակացն, որպէս ասէ Դաւիթ, թէ արար զհրեշտակս իւր հոգինս: Աւրեմն հրեշտակները ստեղծված հոգիներ են, Իսկ մարգու. հոգին Այս նկատմամբ տոնքտոն պարզ չէ մեկնաբանի գործը, քանի որ Ս. Գրքի մեջ կան անորոշ, երբեմն և հակասական տրամադառություններ: Մեկնաբանի գործը, սակայն, հենց այն է, որ այդ անորոշությունները պարզի և հակասությունները վերացնի, Դրա համար նա հետևում է մի սկզբունքի, թե Ս. Գրքի մեջ հասկանական բան չկա, բոլորը մեկ Հոգուց, աշխնքն աստուծոց են թիւադրված, միայն պետք է հասկանալ. որովհետև զգու միոյ մարգարէի թողեալ իրէ՛ միւսովս լնու Հոգին (էջ 136): Դարձեալ՝ «ոչ եթէ հակասակ ինչ միւսնանց են Գիրք: այլ զոր միոյն թողեալ է միւսն առնու նովին Հոգւով: Որպէս տեսանմաք իսկ՝ զի որ ինչ Մովսէսի չէ ասացեալ, այլ մարգարէք լլին նովին Հոգւով: Մովսէս ասէ. ետեղծ Աստուած դմարդն հոգ յերկրէ, և փչեաց ի նա շունչ կենդանի: և փչելն դեռ ևս ի միջի կայ կարծեալ» թէ իցէ՛ արարած շունչն թէ չիցէ: Արդ զայ Զաքարիա մարգարէ նովին Հոգւով վարեալ և ցուցանէ դարձարած շնչոյն: Ասէ. որ հաստատէ զհոգի մարդոյն ի նմա, և նսայիտս ասէ, թէ զամենայն շունչ [=հոգի] ևս արարեա (էջ 134): Այսպէս ուրեմն, մտքդուս հոգին արարած է և ըստ Ս. Գրքի, դա սկզբնավորն է:

Ե՛րբ է լինում մարդկանց հոգիների սկիզբը, Այս էլ պարզում է նգնիկը՝ զրելով այսպէս. «Թէպէտ և կանխաւ դիտէ Աստուած՝ թէ ոմն կուտարիշտ լինելոց է, ոմն կտաւորդ, և ոմն սպանող, ոչ արգելու զնկարիւր սողմիցն նոցա, և զփշուռն հոգւոցն նոցա, զի նորա բարեբարութիւնն երևեսցի, և նոքա յիւրաքանչիւր անձնիշխանութեանն պարտաւորեսցին» (էջ 62): Կնշանակի՝ յուրաքանչյուր մարդու քիչուռն հոգւոյն լինում է արգանդում սաղմի նկարվելիս:

14. Մտքալեկնարում արարեալս (անթրոպոցենտրիզմ)։— Աստուծաւ արարչության կենարանը կազմում է մարդը, որին նա իր պատկերով ու նմանությամբ է ստեղծել և տվելի է սիրում (էջ 66): Բոլոր արարածները— գազանները, անասուններն ու թռչունները, երկիր, ջուր, հուր և օդ, բույսերը, և առհասարակ բոլոր տիեզերքը (նախնիակ հրեշտակներն ու սատանան իր դեերի հետ)—մարդու համար են ստեղծված: Բոլորի ժառանգը մարդն է: Աստված նախ ժառանգությունն է արարել, հետո՝ ժառանգին. «Նախ զստուն, և ապա զստակալն. նախ զստացունձն, և ապա զստացողն. նախ զծառայան, և ապա զտէրն: Մարդն իշխան է բոլորի (էջ 162): «Զահ և զերկիւղ մարդոյն՝ արկեալ է արարչին ի վերայ գազանացն և սողնոցն և անասնոցն և թռչնոց, վասն առաւել զնա պատուելոյն. զորոյ և զարարածն նորանշան իմն ընծայեցուցանէ, թէ սակոծ որպէս ձեռօք և փչեաց շունչ կենդանի որպէս թէ բերանով. և այնու, զի առաւել պատուական ցուցանիցէ զնա, յայտ առնէ» (էջ 109): Նա արարել է մարդու հա-

¹ Թաւախապտում. զի ողորմութենէ անախ յառաջագոյն ի լինէ մանուկ յարեւուտեալք ըստ կերպարանին մարդ. և առաւել առնու աղայն ի մեւնց և ի մեւնց արարութեան՝ առմանն մարմնայ և մտաց յարգման յինչ, և յետ մեղքեան նախախառնութեամբն տառաւոյ, որպէս ինքն զիսէ կողմն հոգւոյ և մարմնոյ ի մեղքին, և զայ ի հասարակութենէ մարմնայ և մտաց (Ժն. 188):

մար զգկէսսն ի պէտս, և զգկէսսն ի պարզ, և զգկէսսն զարհուրեցուցիչս՝ վասն
գոտարապարտ հպարտութիւն մարդոյն ցածուցանելոյն (էջ 102)՝.

15. ԱՅԺԱՅԻՅԻՍՏՈՒՅԻՆԸ: Ձարբի սկիզբը: Միջմագարայում քրիստոնեա-
կեան աշխարհայեցութիւնը և մարգուս եպիսկոպոս վիմակը:— Եզնիկը հակա-
ռակ է ֆրոնտիզմին, ճակատագրի հակադրին, նախասահմանութիւնը, մար-
դուս կանխորոշած վիճակին: Աստված, ըստ նրա, կանխագետ է, առաջուց
դիտէ, թե ինչ պիտի լինի ամեն մարդու բախտը, վիճակը, բայց մարդուն
ազատ է թողնում ընտրութիւն անելու: Մարդս անձնիշխան է, ազատ կամք
ունի: Անձնիշխանութիւն է ամենամեծ պատիժը ու շնորհը, որ տրված է
մարդուն. որովհետեւ աստված եղէ կամէր թէ որպէս պանասունս ի հարկէ
վարիցին (էջ 54): Բոլոր արարածներն անում են այն միտան, ինչի հա-
մար կարգված են. իսկ մարդս չառեալ զանձնիշխանութիւնն հւստ կամի՝ ծա-
ռայանայ, որ մեծ շնորհն պարգեհալ է նա յԱստուծոյ. քանզի այլն ամե-
նայն ի հարկէ ծառայէ աստուածական հրամանին (էջ 29): Աստուած չի
ուզում ըրնդ հարկաւ վարել զբանասորսն (էջ 113): Եթե այդպես չլիներ,
մարդս կդառնար ինչպես մի գործիք, զոր թէպէտ ի չար վարէր և թէպէտ
ի բարի, ոչ պարտաւանք ինչ էին նա և ոչ գովութիւնք... նա և ոչ զլաւ ինչ
դիտէր այնուհետեւ մարդն... Այլ Աստուած այնպէս պատուել զմարդն կոմե-
ցաւ, զի առ լառութեանցն խելամուտ լինելոյ՝ զանձնիշխանութիւնն պար-
գեհեաց նա, որով կարող իցէ առնել զինչ և կամեացի, և զանձնիշխանու-
թիւնն նորա ի լաւն խրատէ դարձուցանել (էջ 30):

Եզնիկը (ինչպես և Յաճախապատումը) հաճախ դառնում է անձնիշ-
խանութեան խնդրին: Նրա կարծիքով անձնիշխանութիւնը բնածին է մար-
դուս մեջ. մի անգամ որ այդ շնորհը պարգեհված է առաջին մարդուն,
նրանից ժառանգաբար անցնում է նրա սերունդներին. «Այնքան անձնիշխա-
նութիւն և պատուութիւն առաջնոյ մարդոյն... և ի նմանէն զնոյն իւրոց
պայապատացն ժառանգել (էջ 29): Ի՞նչ է հասկանում նա անձնիշխանու-
թիւնն ասելով: Նա կողմնակից չէ կատարյալ ազատութեան, կամքի բա-
ցարձակ անկախութեան որեւէ պայմանից: Յուրաքանչյուր մարդու, անհատի
տառ՝ դրված են քարայկով ռիթմիկ, և մարդը կախում ունի դրանցից,
Դրանք աստվածն այլին հրամաններն են, որ պիտի ճանաչի մարդը և իր
արարքները դրանց համեմատ կատարի: Աստված կանխագետ է, բայց չի
կանխորոշած մարդու վիճակը, նա միայն սյոժարեցուցանէ զմարդն անսալ

¹ Երանապատում, Երանոց և զուսուսք յերկինս յառաջարկութիւն և ի փոփո-
խումն առաջ և ժամանակաց, ի սնունդ մարդկան և ամենայն կենդանեաց և բուսոց և
անկոյ, նաև զհար և զշուր, զմարդ և զհողմ յարդարեաց ի պէտս ազգի ազգի բուսոց և անկոյ,
որ ի պէտս մարմնական աբարն ի բարձրիւք պարգիւք և սերմամբք, և որ ի ջուրս են
զուգակց և ձկնայ, ազգ գազանաց պէտզէն բնութեամբ և զանազան կերպարանոց ի ծովու
և ի ցամաքի, մեծամեծ և փոքունք, քաղցրունք և դժուար, շահեկանք և անշահ, նմանապէս
ի առնկոյ և ի բոյսս որ ի պէտս երեխն մարդկան, և ոչ արարչին արարան: Այլի և արեւթ
և զլիւն և երկաթ, և պտուտական քարերն և անարգ ի պէտս մարդկան... Կաստատե-
ցան Եւ ի ջրից Դեթոն զերեւելիս երոյց, խնու և ցամաք, ցուրտ և ջերմ յԱստուծոյ
կազմեցան: Եւ ի նայն Երկթոյ արեւու զմարդն, և շնչաց ի նա և ողոր կենդանի և անմահ,
մտաւոր և բանաստի: Եւ խառնեաց զհագեւն ընդ մարմնաւորն... զի լիցի անուշ արար-
չին արարածոց (Գ. 87 հա.):

հրամանաց նորա, բայց զկամակար իշխանութիւնն ոչ հանէ ի նմանէ, որով կարողնէ անսալ և չանսալ հրամանացն. այլ խրատէ և յօժարեցուցանէ զմարդն, զի լաւութեանցն ցտնկացող լիցի. քան թէ իշխանութիւն նորա ի լաւն խրատէ դարձուցանել (էջ 30)։ Ինչպե՛ս հայրը որդուն խրատում է մի բան անելու կամ չանելու, բայց որդին իր ազատ ընտրությամբ է գործում։

Արդո՞ք երջանիկ է մարդս իր այս վիճակով։ Մտադու այս անձնիշխանությունից, ահա, ծագում է չարը, չարիքը։ «Անշինչիքան եղև մարդն՝ առնել զբարի և մտի ի չար. իբր ոչ եթէ չար ինչ առաջի կայր՝ յոր մտիցի, այլ այն և եթ առաջի կայր՝ կամ անսալ Աստուծոյ, կամ չանսալ, և զնոյն և եթ պատճառ չարին իմանալ, Քանզի լեալ մարդն առաջին՝ առնոյր պատուէր յԱստուծոյ, և չհնազանդեալ տառուածական հրամանին՝ մտաբերէր ի չարիս, և ամտի լիմեր սկիզբն չարեաց» (էջ 31)։ «Անաստութիւնն և եթ՝ որ արտաքոյ Աստուծոյ կամոցն դործիցի՝ պատճառ չարեաց իմանալի է» (էջ 32)։ Ուրեմն, ինչպե՛ս վերևում ասանք, գործողությունը չար է, երբ այդ կատարվում է օրհնքի, որ միննույն է, աստուծո պատվիրանների հակառակ։ Եւ մարդս շատ անգամ այդպե՛ս է վարվում։

Բայց այդ առաջ է դալիս այլուքը վարդապետութենէ դրդեալն. և պետք է ընմին դալլ ոք վարդապետ ծածուկ հաշուել, զորիչ և ոչ բռնապատիլ, որ զմարդն ի լաւութեանցն մերկանալ կամեցաւ (էջ 32)։ Այդ դրդիչը աստուծան է։ Ստուաման ինքն էլ ի բնե չար չի ստեղծվել, ինչպե՛ս կարծում են թէ Աստուծո իսկ զնա չար արար» (էջ 104)։ Նա յԱստուծոյ քարոքը եղև, և անձամբ յանձնէ դարձոյց զկամս ի չար» (էջ 37)։ Նա եղէ է բնութեամբ չար, այլ կամօք» (էջ 128)։ Նա էլ անձնիշխան է և իր կամքով չի չարութիւնն կործանեցաւ» (էջ 126)։ Եւրն կամօք եղև բռնաբարկու. թողեալ զԱստուծոյ հպատակութիւն՝ սկսաւ անստատել, և հակառակ կալ Աստուծոյ հրամանացն ասուցանել մարդկան, և իբրե՛ս զապտամբ յետ ձեացեալ թիւրեցաւ յԱստուծոյ» (էջ 38)։

Աստուծան նախաճում է մարդուն և դրդում է նրան չանսալ աստուծուն, և երբ նա չի անսում՝ դրանից առաջանում է չարիքը. «Սկիզբն չարեաց զնախանձն ասեմք, և զնախանձն յառաւել զմարդն պատուելոյ, և զչարիսն յամենագոյնըսբնեմ։ Զի Աստուած այնպէս առաւել զմարդն պատուեաց, և նորա անստատեալ՝ զընկէջ զպատուիրանն։ Ուստի զամենայն ինչ որ լինի չար՝ ոչ բնութեամբ չար գիտեմք, այլ զի առանց կամօցն Աստուծոյ գործին իրք ինչ՝ լինին չար» (էջ 35 և հտ.)։ «Զար է հակառակ կալ Աստուծոյ հրամանին» (էջ 36)։ Որ աստուծան դրդում է մարդուն չանսալ աստուծուն՝ դրա պատճառը նրա նախաճն է. իսկ որ աստուծան նախաճում է մարդուն, դրա պատճառն այն է, որ աստված մարդուն ավելի է պատվել։ «Ապա եթէ զպատճառն ևս կամիցին խնդրել, զնախանձն՝ որ առ մարդն եղև՝ իմացին զպատճառն։ Եւ եթէ զնախանձուէն ևս ճշդիւք քննիցեն՝ թէ ուստի եղև, ասացուք՝ եթէ յառաւելութենէ զմարդն պատուելոյ. քանզի միայն մարդ ըստ պատկերի և ըստ նմանութեան Աստուծոյ եղև» (էջ 32)։

Այսպիսով, ամեն չարիքի սկզբնապատճառը մարդու առավելությունն է բոլոր արարածների մեջ և ամեն չար բանի գրգիռը, բայց ոչ բռնապա-

տիչը (որովհետև մարդս անձնիշխան է) սատանան և իր դևերն են: Սատանան սուտ է, չար, թշնամի, փորձիչ, բանասերկու, չարիքի արձանյակ, մարդասպան: Էի կոտորաշուքի բռն և զիւթուքի և հմայիւք և քաղէութեամբ վերապետեցան էլ զմարդիկ (էջ 128): Եւ... զմարդիկ ի կոտորաշուքի և յօտարեցուցանէին և... ի պէսպէս աղանդս սիրիստփայից և հերձուածողաց... ի բաշխա բախտից և... ճակատագրաց և... կոպելոց հրամանաց... ընդ սատանայ պշտեցան էլ թէ նոքա ինչ իցնն պատճառք բախտաւորութեան և չուտուութեան... ամենայն աստուածք հեթանոսաց դէք են (էջ 104 և հտ.):

Որ աղպես է,— հարցնում են,— ինչ՞եւ աստված չի ոչնչացրել ապրատամբ սատանային և նուէնիսկ ստեղծել է նրան:— Այդ աղպես եղել է, սատանան ստեղծվել է դարձյալ միայն մարդու համար. «Վասն անձնիշխանութեան մարդոյն երևելոյ արար դնա» (էջ 39), որպեսզի մարդը պատերազմեալ յաղթիցէ սատանայի (էջ 40): Աստուած թողել է զսատանայ իբրև ի հրահանգս կոտորացոյ յաշխարհի և ի բերովք պատուիրանոց վառէ զհեղեղիկ զմարդիկ՝ առ ի պատկելոյ զյաղթողն (էջ 41): Բանգի ոչ եթէ վայրապար ինչ կամէր Աստուած զայնպիսի պարզես տալ, որ յաւիտեան կան անեղծութիւնն է. զի վայրապար իսկ էր այնպիսոյ տալ՝ որ ոչ ունէր իշխանութիւն երկոցունց, անսալոյ այնմ՝ զոր Աստուածն կամէր, և չունալոյ այնմ՝ զոր նայն չախորժէր: Բայց իրաւամբք այն է, յորժամ արժանի ըստ որոց գործեացն ոք ինչ առնուցու (էջ 31): Այսպես ուրեմն, մարդս հաղթելով սատանայի փորձութիւններին՝ իր արժանի վարձատրութիւնը կստանա հալիտեանկանութեան մեջ: Դրանով կերևա Աստուծու բարութիւնը:

Բայց մարդ կարող է չդիմանալ դևերի փորձութիւններին և պարտվել սատանայի զեմ պատերազմի մեջ: Դրան էլ ճար կա: Աստված թողել է սատանային, որպեսզի յորժամ զսատանայ ամպարապառել տեսանիցն և չբարձեալ ի միջոյ, և վասն իւրեանց մեղացն իմանայցն՝ թէ զայ հնար թողութեան ապաշխարութեամբ. զի Աստուծոյ բարեբարութիւնն ցուցանիցի, և մարդիկ զշնորհն նորա գիտացեն. զի եթէ այն այնպէս չէր լիալ, և ոչ բարեբարութեանն նորա ոք խելամուտ լինէր (էջ 39): Եթե այնպես չլինէր, «անձանթ ևս լինէր առ յապալ մարդկան՝ Աստուծոյ բարեբարութիւնն» (էջ 40): Սատանայի փորձութիւններին չդիմացող և չարիք զործող մարդն էլ, ուրեմն, ապաշխարելով կարժանտանա աստուծու շնորհքին, և զրանով նուէնպես կերևա աստուծու բարեբարութիւնը:

Այսպես ուրեմն, թպեա մարդս աշխարհաբարձման կենտրոնն է, բայց վերջին հաշիւով ամենը ստեղծվել է և լինում է միայն արարչի բարեբարութիւնը, բարութիւնը ցույց տալու նպատակով, զի առաւելութիւն բարեբարութեան նորա յայտնի լիցի մարդկան, զբանգի բարեբար էութիւն է Աստուած, ոչ կամեցաւ զազնուականութիւնն իւր ծածկել (էջ 39): Դրա համար և նա ստեղծել է աշխարհը, և ամեն ինչ արարել է իր բարութեամբ. «անսախանձ եւ զկենդանութիւնն, առ ի յայտնելոյ զիւրոյ զբարեբարութեանն հանդէս» (էջ 7):

Իսկ մարդուս ինչ ոգուտ դրանից, բայց եթե այն, որ հավատացող

մաքացու, հովասացալի համար դրանով, տաղալիս արարչությամբ հենց սկսվում է մի դառն, եղբերակամ վիճակ, մաքդկանց կլամֆի օգրեքցությունն ըստ միջնադարյան կրոնական աղիարհւոյացքի, Աստվածհուղում է, որ մաքդս բարի տնի, Մարգո տննիչիւն է, սատանան նրան շարունակ գնալի յարն է դրդում: Պետք է հաղթել սատանային: Բայց սատանան ոչ մի բանից չի վախենում. նա միայն աստուծու տնունը լսելուց ըստնում է (էջ 104), և միայն պահողով և աղօթքով է ելնում. «Այս ասղ ոչ ելանէ՝ եթէ ոչ պահով և աղօթիւք», ասել է Հիսուս (էջ 124): Արդարեւ, կտն և հրեշտակները, որոնք արբանյակներ են մաքդկանց օգնելու համար, և իւրաքանչիւր մարդոյ հրեշտակ առանձինն պահապան կայցէ: Բայց այդ էլ մեկնութեանն էր, — ասում է Սգնիկը, — բացատրում են, թե հրեշտակ կոչվում են մաքդկանց աղօթքները. «որպէս թէ աղօթք նոցա՝ որ հանապազ մտանեն աստղի Աստուծոյ՝ կոչին հրեշտակք» (էջ 76): Հետեւաբար մարդը, սատանային հաղթելու համար, էլ ուրիշ միջոց չունի, բայց եթե այն, որ պետք է շարունակ պահողով և աղօթքով ասպնջութի: Մեղանշած մարդն էլ պիտի նույն կերպ ասպնջութի, որպէսզի թողություն ստանա և փրկվի, և աստուծու բարությունը երևա: Պետք է, ուրեմն, մարմինը ճնշել, ճշնել, կրօնավոր վանական դառնալ:

Ահա վիքնադարյան քրիստոնեակամ աշխարհայեցությունը, որի տեսութեան է հանդիսանում մեղնում ինչիկ Կողբացին: Հայաստանում 5-րդ դարում, հարկով, դեռ միայն որոշ դասի մարդկանց մեջ կար տալ, Գրա կատարել զարգացումը կյանքի մեջ երևան է գալիս Գրիգոր Նարեկացու ժամանակ և արտաբերվում է սրա «Ողբերգութեան մատենի» մեջ:

16. Խրատի:— Սգնիկի անունով մեղնում են և բավական թվով «ճարտար», որ տպագրված են «Նդծ աղանդոց» գրքի վերջում (էջ 209—219): Դրանք ամենամեծ մասով ուղղված են կրօնավորներին և վանքերի առաջնորդներին: Բովանդակությունը կրօնական է, մաքուր կրօնավորական կյանքի հորդոր, պայքար ընդդէմ մարմնասիրության, «օրինակ՝ «Գրօնաւոր մարմնասէր՝ խղի նման է, ի ծովացեալ մեղանու: կամ հետևյալը. «Որ աստ զմարմինն պարարէ՝ ի յաւիտենական հանգիստն ոչ մտանէ: Դատում է կարոտյալներին օգնել, լալ, արտասովել. խոսում է ընդդէմ կեղծ կրօնավորներին, «Ջմիս անասնոյ ոչ ուտեն, և զեղբայրն անյաղարար օւտեն. գինի ոչ ըմպեն, և զոգին արեամբ յաղաթեն. դամոսնացեալսն ատեն, և պիղծ խորհրդով հանապազ պոռնկին. զգնատ գյուրն զգնեալն, և ազանութեամբ տյրին. յայնպիսեացն արժան է փախչել, և ոչ հաղորդութիւն ունել:»

Գնա և ընդհանուր կենցաղական բովանդակությամբ բարոյական խրատներ ևս, իսկապէս կարճ ու հակերճ իմաստալից աստղվածներ, ինչպես են՝

Որ զարուս ի հանգստեան կայ, և մեռն ի սովոյ և ի սատանանեաց աստակի:

Մի բարկանաւոր աշակերտի մեղուցելոյ, զի հիւանդ ոչ թէ յիւր կուտաց հիւանդանոց:

Անխտակոցն հրամայեաց զհանգիստն, և ոչ որդեապարար մարմնասիրացն:

Նեղեւ զմարմինդ գիտութեամբ զրոց վկայութեամբ:

Զինավորութիւն և զհանգիստ տառնա:

Այս կեանքս պատերազմ է:

Մի քանի այսպիսի իմաստալից ասացվածներ կան և ճեղճի մեջ, ինչպէս՝ «Եւ պատերազմաց սկիզբն յազահուծենէ մարդկան եղև, ուստի յավերջ տակաւնութիւնք սահմանաց են և գիւղից և օտար քաղաքաց, ընչից և ստացումք» (էջ 57): Այս իմաստով հազար տարի հետո երգում է մեր մի բանաստեղծը:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՄԱԳԻՐՆԵՐ

ԿՈՐՅՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ

1. Հայ պատմագրութեամբ:— Հայոց հին գրականութեան կարևոր ճյուղերից մեկն է պատմագրութիւնը, որ սկսվում է գրականութեան առաջին շրջանում և շարունակվում մինչև 18-րդ դարի վերջը: Պատմագիրների երկերն իրենց մեջ ունեն շատ պատմական նյութ և թանկագին աղբյուրներ են հայոց, և ոչ միայն հայոց, պատմութեան հետազոտութեան համար: Դրանց ուսումնասիրութեանը շատ կարևոր է նաև մեր գրականութեան պատմութեան տեսակետով: Գրականութեան պատմական պրոցեսը կապված է պատմութեան հետ, լինի սա քաղաքական թե՛ եկեղեցական. ուստի առանց պատմութեան պարզաբանման հնարավոր չէ գրականութեան զարգացման ընթացքը որոշել: Պատմագիրներն ուսումնասիրութեանը հենց՝ մասամբ տալիս է մեզ հայոց պատմական կյանքի պատկերը, որքան հարկավոր է գրականութեան պատմութեան համար:

Հայ պատմագրութեան ուսումնասիրութեանը պահանջվում է նաև գրական տեսակետով. նրա մեջ կան իսկական գրական երկեր, որոնք հորինված են գեղեցիկ ձևով, հարուստ են գեղարվեստական տարրերով, պատկերավոր արտահայտութիւններով: Կան այնպիսիները, որոնց մեջ թե՛ն լեզուն են գրական և ոչ-գրական տարրերը, բայց կան ամբողջ հատվածներ, որոնք գրական արժեք ունեն: Այսպես են մանավանդ այն կտորները, որոնք ծագում են կամ ազգված են ժողովրդական վիպական բանահյուսութեանից, կամ լի են հեղինակի քնարական գեղումներով, կամ որոնց հեղինակները ձգտում են գեղեցիկ հորինել, ճարտասանական ձևերով ու բանաստեղծական պատկերներով: Եվ վերջապէս՝ պետք է նկատի ունենալ այն նա, որ հայ պատմագիրներից շատերը մեծ ազդեցութեան են ունեցել հայ ժողովրդի կուլտուրայի և հենց հայ գրականութեան հետագա զարգացման համար. ուստի կարելի չէ վերջինս լավ ըմբռնել առանց նախկին պատմագիրների ուսումնասիրութեան:

2. Կենսագրական տեղեկութիւններ Կորյունի մասին:— Հայ պատմագրութեան մեջ ժամանակով առաջին տեղը բռնում է Կորյունի Վարդ Մաշ-թոցի: Եղբայրացիները, որ է Մեսրոպ Մաշտոցի կենսագրութեանը՝ Կո-

1 Պատմութիւն վարուց և մահաւան առն երանելոյ շրջոյն Մաշթոցի վարդապետի մերոյ Թարգմանչի, ի Կորիւն վարդապետէ յաշկերտէ Կորիւն: Կորյուն, Վարդ Մաշտոցի. քննգիրը Լեւոնդարեան աս ընթերցվածներով, Թարգմանութեամբ, առաջաբանով և ծանոթութեաններով, ի ձեռն գր-ժ. Կեղ. Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941 թ.

բյուճնը Մաշտոցի տաղկերտն է։ Նա իր ուսուցչի մահից հետո մտածում է գրել հայոց գրի ծագման մասին և դրա հորինողի կենսագրութունը։ Այդ գործը դեռ չսկսած՝ նա, ինչպես իր գրքի առաջաբանից իմանում ենք, այդ անհյուս համար հրաման է ստանում Մաշտոցի աշակերտ Հովսեփից, որ կաթողիկոսական տեղապահն էր, այլև այդ մասին փառաբանութուն՝ Մաշտոցի աւրիշ աշակերտներից։ Ինչպես երևում է, նրանցից շատերը միաժամանակ մտածել են գրով անմահացնել իրենց «վարդապետին», այսինքն ուսուցչի կատարած մեծ գործի պատմութունը և իրենց ուսուցչին։ Եվ Կորյունը գրում է մի գովաբանական կենսագրութուն, որի մեջ չի մոռանում և ուրիշներին, որոնք աշխատել են հայերեն դպրության համար։ Նրա գրքովածը հայկական տառերով հորինված տոաջին ինքնուրույն պատմական երկն է, որ իրավամբ նվիրված է հենց այդ տառերի գյուտին և դրանց սկզբնահորը։

Կորյունի այդ երկի գրության ճիշտ տարեթիվը մեզ հայտնի չէ։ Դա հորինված է 443—451 թվականների մեջ, Կաթողիկոսական տեղապահ Հովսեփը, որ հրամայել է Կորյունին գրել Մաշտոցի կենսագրութունը, Ավարայրի ճակատամարտից (451 թ.) քիչ հետո բռնվել, տարվել է Պարակաստան և այնտեղ նահատակվել, այսինքն քրիստոնեության համար սպանվել։ Դարձյալ՝ եթե 451 թվականից հետո գրված լիներ, դժվար թե Կորյունն այնքան մեծ դժվաստներ տար Վասակ Սյունի իշխանին, որ Վարդանանց պատերազմի ժամանակ անցել էր պարսիկների կողմը։ Նա չէր անվանիլ նրան «ճաշն Սիսականն Վասակ», այլ խորհրդական և համհարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն աստուծոյս (Հատվ. ԺԴ)։ Մյուս կողմից՝ այդ երկը գրված է Մաշտոցի մահից ոչ անմիջապես հետո, քանի որ Մահակի համար ասում է. «Այի ամի գոամորելովք ի նոյն ամսեան»՝ զնոյն յիշատակն տօնախմբենս (Հատավ. ԻԴ)։ Մի երեք-չորս տարի պետք է այդ հիշատակը կատարված լիներ Մահակի մահից (439 թ.) հետո, որպեսզի այդպես գրել կարելի լիներ, ուրեմն 439+4=443 թ.։ Այդպես՝ նա գրում է, թե Մաշտոցի մահից երեք տարի հետո, ուրեմն 440+3=443 թ., Վահան Ամասունին տաճար է կոնգրել ավել Մաշտոցի դերեղմանի վրա։ Հետևաբար, եթե Կորյունն առաջ էլ սկսած լիներ իր աշխատութունը, նա այդ վերջացրել է ոչ վաղ քան 443 թվականը։

Այս է Կորյունի երկի գրության ստույգ ժամանակը։ Հարկ է հիշել, որ 19-րդ դարի վերջերից ի վեր եղան բանասերներ, որոնք մի ընդհանուր մարմավորվ բռնված՝ սկսեցին մեր մատենագիրների ժամանակն իշխանել դեռ դպրի մեզ, հաճախ առանց ուրե՛ հիմքի, լոկ խոսքով։ Այդպիսիներից գրից զերծ չի մնացել և Կորյունի այդ երկը՝ «ողհատված բնագիրը չհասկանալուց»։

Կորյունի մասին մի քանի ուրիշ կենսագրական տեղեկութուններ էլ ունենք՝ դարձյալ հենց իր գրքույկից։ Նա, ինչպես ինքը գրում է առաջաբանի մեջ, բախտ է ունեցել լինելու Մաշտոցի մասնավոր աշակերտը, իր աշակերտակիցների մեջ հղել է կրտսերագույնը։ Գրքի վերջաբանի մեջ (Հատվ. ԻԸ) նա հայանում է, թե ինքն ականատես է հղել իր պատմածին, ընթերցակա է հղել Մաշտոցի ու Մահակի գործերին, այլև հղել է «աբա-

նեակն, այսինքն փոքրավոր զործակերթ, Անվանում է Մաշտոցին իր հայրն, հասկանալի է՝ հոգևոր հայր, Գրեւ է ոչ միայն իր իմացածները, այլև նշանավոր գիտակ անձերից քաղելով:

Նա պատմվածքի ընթացքում էլ երկու անգամ հիշում է իրեն: Երբ Հայաստանի զանազան կողմերից Վաղարշապատում հավաքած աշակերտներն ուսման մեջ կատարյալ են դառնում, այն ժամանակ նրանց խումբը ուղարկում են զավառները սովորեցնելու: Կորյունն իրեն էլ մեկն է ասում այդ ուղարկվածներից՝ այսպես գրելով. «Մկառն . . . գումարելի ի կողմանս, ի դաւասոս . . . դատաւցելոցս ի կատարումն գիտութեան [գգաւս], բաւականս և առ ի զայսն զեկուցանելոյն (Հատվ. ԺԲ):

Մի ուրիշ տեղ (Հատվ. ԺԹ)՝ նա պատմում է, թե մի քանի «եղբայրներ» Հայաստանից գնում են Կոստանդնուպոլիս: Նրանցից առաջինն էր Ղևոնդիս, երկրորդն ինքը Կորյունը (և երկրորդն՝ Կորիւնս), որոնք մոտենում, հարում են Եզնիկին, իբրև ընտանեգոյն սննդակցի, — մատուցեալ յարէին յնշնիկն, իբրև առ ընտանեգոյն սննդակիցս: «Եղբայր» բառից երևում է, որ Կորյունը կրօնավոր է եղել: Նրանք Կոստանդնուպոլսում հոգևոր պիտույքի խնդիրը կատարելուց, այսինքն թարգմանություններ տեսնելուց հետո՝ վերադառնում են՝ հետները բերելով ձեռագիրներ, որոնց թվում և Եփեսոսի ժողովի կոնոնները: Այդ ժողովը տեղի է ունեցել 431 թ.: Ուրեմն Կորյունն իր ընկերների հետ վերադարձել է ոչ վաղ քան 431 թ.:

Յզնիկը, ինչպես ինքը Կորյունը գրում է, Այրարատյան գավառի Կողբ գյուղից էր, նա հայտնի Յզնիկ Կողբացին է: Որ նա եղել է Կորյունի ընտանեգոյն սննդակիցը, պետք է ընդունել, որ Կորյունը մանկության ժամանակ սնված, մեծացած է եղել Յզնիկի հետ: Այսպես և Ղազար Փարպեցին իրեն անվանում է Վահան Մամիկոնյանի «սննդակից», որովհետև վերջինիս մայրը նրան իր որդու հետ «սնուցել» է, այսինքն մեծացրել, կրթել է: Էլ ուրիշ կենսագրական տեղեկություններ չունենք մեր այս հեղինակի մասին: Հետագայում նրան միայն գովում են անվանելով՝ «այրն ցանկալի Կորիւն», «այրն հոգևոր Կորիւն», «երանելի տարն Կորիւն», «երանելին Կորիւն», «սքանչելի տարն Կորիւն» և նույնիսկ «սուերն Կորիւն»: Այս գովեստները ցույց են տալիս, որ նա բարի համբավ է թողել իր մասին:

Կորյունն իբրև «վարդապետ»՝ անշուշտ պարապել է ուսուցչությամբ ու քարոզչությամբ, ինչպես իր ուսուցիչ Մաշտոցը. նա պարապել է նաև թարգմանություններ անելով: Գուցե նա գրքեր էլ է գրել, բայց ոչ մի ուրիշ երկ հայտնի չէ նրա անունով, քացի Մաշտոցի «Վարձի և մահվան պատմությունից»: Ձեռագիրների մեջ կա հետևյալը. «Ապաշխարող կարգել և արձակել ի մեծի հինգաբաթին»՝ երանելոյն Կիւրդի Երուսաղեմացոյ գրեալ... և Արձան և Կորիւն թարգմանիչք բերին ի Հայսն: Այս երկի թարգմանությունը վերագրում են Կորյունին: Գործածված բառերի ու դարձվածների վրա հիմնվելով՝ նրանք են համարում և ուրիշ թարգմանություններ, բայց այդ երկբայելի է, մասամբ և բոլորովին մերժելի:

1 Կորյունն իբրեւ եղևակաւոս է եղել Վրդապետութեամբ Մի կարծիք, որ առաջ է եկել ընտրել տղամարդ հետաւնեւով և զգաւոր իր մարդկութեամբ յաւաստեալեղեաց:— Տես վերեւում հիշված հրատարակութեան էջ 118, ծան. 108:

2 Տես՝ Ն ու ա յ ը թ ի լ զ ա մ գ ա յ ի, Կորիւն վարդապետ և Կորիւն թարգմանութիւնք:

3. Գրութեան և իր ժամանակի պարագաները:—Այս տիպի որեւէ գրութեան զանաւորութիւն՝ ամենից տառջ պետք է նկատել ունենալ հեղինակի ծրարորդը, այսինքն՝ թե թոյլ է ուղեցել գրել, և գրելու ժամանակը, գործը, Արդ, Կորյունը հենց սկզբից հայտնում է, թե ինքը մտածել է գրել հայկական գրի ժամին՝ թե երբ և ինչ ժամանակ բախովից և քննարկի մարտն ձեռով արվեց այդ աստվածային նոր շնորհքը, այլև այդ մարդու լուսավոր վարդապետութեան (ուսման) և հրեշտակոնման առաքելի կրօնավորութեան մասին: Մի տնգամ որ այս է հեղել նրա ծրարորդը և որ նա հայոց պատմութեան չի գրել, բնական է, որ այժմ մենք նրանից ուրիշ բաներ պահանջել չենք կարող: Նա շատ լավ գործողըն է այն, ինչ որ ծրարել է:

Միծաղելի է, երբ 19-րդ դարի վերջում Եվրոպայում նստող մեկը ծաղրում է մեր այս հեղինակին, գրելով, թե Կորյունը բառաւել քան զկար լուր կը համարի պատմել զվարս Մաշտոցի և կը փութայ խնդրել ի սատարութիւն զազոթա աւառաւանդացն, որպէս թէ քանի մի էլ քան գրելն ստուգելու մարդկային կարողութենէ վեր ըլլար և աստուածեղէն շնորհաց օգնականութեան կարօն: Հնումն այդպէս մտածում և վարվում էին և ուրիշները, ինչպէս, օրինակ, Ղազար Փարպեցին: Դա ժամանակի կրօնական սգուարածայտութեաններէն մեկն էր: Մյուս կողմից՝ դա նաև մի համեստութեան խօսք է Մաշտոցի ավագ և մեծ դիրք ունեցող աշակերտի, կաթողիկոսական տեղակալ Հովսեփի նկատմամբ: Բայց որ նա իրեն դիմող ընկերների աղօթքն էլ խնդրում է՝ ասելով զգի կամակարարագոյն և անզգայնութեան զանաւորութեան խօսք չէ, կամ լոկ մի արասհայտութեան այն ժամանակի կրօնական ոգու, ըստ որի ամեն քան կատարվում էր աստվածային շնորհքով: Կա և մի ուրիշ կողմ: Պետք է իմանալ, որ Կորյունն իր ընկերների հետ սովորել և ուղեւորել է Կ. Պոլսում այն ժամանակ, երբ հռչակում էին աստվածաբանական մեծ վեճերը և տեղի էր ունենում Եփեսոսի ժողովը նեստորականութեան դեմ: Նա իր ընկերների հետ՝ Հայաստան բերել է այդ և Նիկիոյ ժողովների կոնսենսը: Նա ինքը պատմում է, որ Սահակն ու Մաշտոցն էլ մտքաւել են Հայաստան թափանցած աղանդների դեմ, ինչպէս քարաբարեալուս կոչված աղանդի, այլև Նեստորի ուսուցիչ Թեոդորոս Մոպսուեստացու ուսման դեմ: Այսպիսի դրութեան ժամանակ նա՝ իրրն մի բարեպաշտ մարդ՝ աստվածային շնորհքին պիտի դիմեր՝ «վարդապետական ծովի համարտարած արիքների վրայով ուղիղ մտվելու» համար, այսինքն զտվանաբանական սայթաքում չանելու:

Առաջին կարճ ու անհրաժեշտ տառջարանից հետո՝ Մաշտոցի վարքագիրը գրում է մի երկրորդ ձիգ ու երկայն նախաբան էլ (Հատվ. Բ)՝ պո-

գիրք Մակարայեցուց, Եւթագ Աղեքսանդրացի, Ազարանգահու և Փառաւո Քիւզնգի, Տփլիս, 1900, էջ 6 և հաւ:

Մ կ բ ո ի չ Ա լ գ և բ հ ա ն, Նոր Բազմեք Հայկական լեզուի, 1938, առաջաբանի մէջ, մատչաների ցուցակում Բ ու գ [ա ն գ] անվան տակ, որի թարգմանչին է Կորյունը: Այլև Գ ա ռ ա գ ա չ հ ա ն, Քննական Հայ. Գոմարէի: Տփլիս, Գ. 381:

1 Ն ո բ ո յ ր Բ ի լ գ ա ն գ ա ճ ք ի, Կոր. վարդ., էջ 7:

տասնամեկու համար այս հարցին, թե արդյո՞ք թույլատրելի՞ է «կատարելաբար» մարդկանց վարքը գրել, թե՛ ոչ,— «Իցէ՛» համարձակութիւն գրող նշանակել զվարս արանց կատարելոց։ Աստվածաշնչից չափազանց շատ ցիտատներ բերելով՝ նա, ցույց է տալիս, որ այդ ոչ միայն թույլատրելի է, այլև հարկավոր է՝ ուրիշներին իբրև օրինակ ծառայելու համար։ Եվ վերջը եզրակացնում է, թե ինքն ևս կարող է համարձակվել գրի առնելու «բարձր մարդու», այսինքն Մաշտոցի վարքը։ Երկրորդ անգամ մեր այս հեղինակն Աստվածաշնչից շատ ցիտատներ է բերում այն ժամանակ, երբ պատմում է, թե սկսում են «թարգմանել» գրել և ուսուցանել։ Նա իր բերած օրինակներով ցույց է տալիս, որ մեր երանելի հայրերն այդ անելու համարձակություն, խուլտվություն են առել ոչ միայն մարգարեներին, այլև նույնիսկ Հիսուսին (Հատվ. ԺԱ), եվ վերջապես՝ Երրորդ անգամ նա վկայություններ է բերում Սուրբ Գրքից, երբ վերջում նորից խոսում է Մաշտոցի կրոնավորական, միայնակեցական կյանքի և քառօրյության մասին։ Նա այդ անում է իր ուսուցչին՝ մեծացնելու համար և ցույց տալու, որ նա մեծ հետևող է եղել ոչ միայն առաքյալներին և ուրիշներին, այլև նույնիսկ Հիսուսին (Հատվ. ԻԲ)։ Ինչի՞ համար էր այդ ամենը։

Քննադատել, թե հիշված երկրորդ առաջարանը շատ երկայն է և թե դա իբր ավելորդ է, կամ եղել է «գործառնայի երկյուղածությամբ», և թե դուր են Աստվածաշնչից բերված բազմաթիվ ցիտատները, այդ նշանակում է չհասկանալ Կորյունին և նրա ժամանակը։ Նա, ինչպես և Մաշտոցի մյուս աշակերտները, որոնք մտածում էին իրենց ուսուցչի վարքը գրելու մասին, շատ լավ գիտեին, որ թույլատրված է այդ անել։ Նրանք, որ վաղուց թարգմանություններով էին զբաղված, շատ լավ և այն գիտեին, որ թույլատրված է Ս. Գիրքը թարգմանել և գրել հայերեն։ Նրանք ծանոթ էին և Մաշտոցի կրոնավորական կյանքին, գիտեին այն ցիտատները, որ Կորյունը բերել է։ Այդ ամենը նրանց համար չէր, ոչ էլ մեզ համար է, մեր ժամանակի մարդկանց։ Այլ այդ ուղղված է Մաշտոցի և նրա աշակերտների հակաակոբզներին։

Մաշտոցն իր «գնավորական և առաքելական» մեծ հեղինակությամբ կարող էր հակաակոբզներին զուլել և զսլել է. «Եւրով իսկ առետարանական և ողջապատում գնացիւք»՝ առաջի թագուորաց և իշխանաց և ամենայն հեթանոսաց և Թերմոզիթեկաց ի Խեղեղեղեղեղեղ գամնափրկչին Յիսուսի անուն կրեաց յանձին» (Հատվ. ԻԱ)։ Բայց այդ հակաակոբզներն արդեն գլուխ էին բարձրացրել, և նրանց կռիվն ընդդէմ Սահակի և Մաշտոցի ջանքերով առաջ եկած նոր սերնդի՝ շատ զգալի էր եղել 440-ական թվականներին,— և այդպես նույնիսկ մինչև 5-րդ դարի վերջերս։

Այս սկսականով մոտենալով խնդրին՝ Կորյունի երկրորդ առաջարանը և նրա մեջբերած բազմաթիվ ցիտատները մեզ համար էլ կարևորություն են ստանում այն ժամանակի ոգին ու գրությունը պատկերացնելու համար, ժամանակն էր այդ պահանջելու։ Այդ բոլորովին նոր գործը, Մաշտոցի կենսագրությունը, ըստ ինքյան էլ կարող էր բամբասանքի դուռ բանալ ոչ միայն հակաակոբզներին, այլև ընդհանրապես ազետների համար, քանի որ ամեն նորություն անընդունելի է անհասկացողների համար, ժառ փնաց Մաշտոցի

կենսագրութեանը հայերի մէջ 440-ական թվականներին Այդ ժամանակներում չկար այլևս Հայոց թագավորութեանը Գարսիական իշխանութեան հովանավորութեամբ չափազանց զորացած էր ասորի հոգեւորականութեան ազդեցութեանը Հայաստանում: 430-ական թվականներին աթորից զրկված էր Սահակ կաթողիկոսը և նույնիսկ ասորի կաթողիկոսներ էին իշխում: Սահակի ու Մաշտոցի և նրանց աշակերտների թարգմանչական գործունեութեանն ուղղված էր հենց այդ առարկան ազդեցութեան, ասորերին լեզվի դեմ: Այս պարագաներում հասկանալի է, թե ինչու Կորյունն այնքան երկայն և Ս. Գրեքից ցիտատներով լի առաջարկ է գրում՝ ցույց տալու, որ թուլւաւորելի է զրել Մաշտոցի վարքը, և կամ ավելի ուշադրութեամբ է դարձնում Մաշտոցի միտանակեցութեան և առաքելական գործունեութեանը, որ ճանաչված էր նաև ասորաց եպիսկոպոսներից, ինչպես նաև րիզանդացոց կողմից, որ և ուրանալ չէին կտրող հակառակորդները: Այսպես ուրեմն, որ նա Մաշտոցին իբրև կրօնավորի բարձրացնում է, այդ իրաւյն իրականութեանից և աշակերտական ակնածութեանից չի բխում: Նա գրաւով Զանգեղ է լռեցնել հակառակորդներին:

Այս վերջիններին չգայրացնելու համար՝ նա չի շոշափում ժամանակի քաղաքական, եկեղեցական գործերը: Նա մի խոսք անգամ չի ասում այն մասին, որ հայոց եկեղեցում լեզուն եղել է ասորերեն, և զարդաներում աւորում էին ասորերեն, և որ շնորհիվ Սահակի ու Մաշտոցի՝ այդ ասորերենին փոխարինում է հայերենը: Ահաասարակ զգուշութեամբ ասորիք անունն էլ նա չի գործածում, քոցի նրկու զեղբքց: Միկն այն է, թե ասորի Դանիել եպիսկոպոսի մաս զանվիլ են հայերեն լեզվի համար տվաւթաներ, — կարծես Հայաստանի ասորի հոգեւորականներին ցույց տալու համար, թե Մաշտոցից առաջ մի ասորի եպիսկոպոս է մտածել հայերեն լեզուութեան մասին: Մյուս զեպքն էլ այն է, թե Նզեսիայի և Ամիդի ասորի եպիսկոպոսները մեծ պատվով ընդունում են Մաշտոցին ու նրա մարգկանց և հղում նրանց համար: և թե՛ նրանց ուրախանում են հայերեն նշանադրերի և զարութեան համար: Այս էլ կարծես տեսնու համար, որ եթե ասորաց հաշկավոր եպիսկոպոսները, Խաբուլան և Ակակիոսը, այդ վերաբերմունքն են ցույց տվել հայ զարութեան նկատմամբ, Հայաստանի ասորի հոգեւորականներն էլ պիտի նույնպես վարվեն: Եվ վերջապես, ժամանակի պարագաներով է բացատրվում և այն, թե ինչու Կորյունը՝ 440-ական թվականներին, ուրեմն Առավանջն չի հայերեն թարգմանութեանից անվանել երեսունինգ ասորի կետ, այդ զրեքից բերած ցիտատներով աղտոցուցում է, որ Մաշտոցն ու Ահակն իրավունք են ունեցել Ս. Գրեքը թարգմանելու և թե նրանք այդ տրել են՝ հայերենով ի տեսնաւարբաւ հրամանացն բարձրութեան, — այլև առաջ ունենալով տիրոջ (աստուծու) տված բարձր հրամանները: — Կորյունն ստիպված է եղել այդ անելու:

Թե այս տեսակետը ճիշտ է, այդ երևում է նույնիսկ Կորյունի հետևյալ խոսքերից, որոնց վրա ուշադրութեան չեն դարձրել: Նա իր զրեքի վերջաբանի մէջ (Հատվ. ԻԸ) հայտնում է, թե Մաշտոցի կենսագրութեանը համապատ է զրել, զլաւաւորաւորն թողեալ՝... զհամառոտ կարգեցաւ, — շատը թողնելով՝ այս համառոտը զրեցինք, Եվ իսկույն նա իր վարմունքը

պատճառաբանում է այսպես. «Քանզի չէաք իսկ հանդուրժողք՝ զամենայն արարեալսն կատկուս նշանակելի գիրաքանչիւրնա (Սուտ Կորյուն՝ «ժանգի և ոչ իսկ հանդուրժէաք բաւել կարել զամենայն արարեալս սրբոցն զրով նշանակելի գիրաքանչիւրն»), այլ ի գիրազոյնս և ի հնշաւորոյնս — յառաքելութեան անգր զանձինս պատասպարեցաք: Ի՞նչ է ասում Կորյունն այս խոսքով— «Հանդուրժելն բառը նշանակում է «դիմանալ»: Բերենք երկու օրինակ դրա համար. Լազար Փարպեցին պատմում է, թե Սյունիքի հզոր իշխան Վասակը Թշնամանալով իր փեսա Վարազդադանի հետ՝ ուղւում էր նրան սպանել, Այդ իմանում է Վարազդադանը, — «և զի ոչ կարէր հանդուրժել սաստիկ բռնութեան աներոյն... փախուցեալ յերկիրն Պարսիցն, — և որովհետև չէր կարող գիմանալ իր աների սաստիկ բռնութեանը՝ ուստի փախով Պարսից երկիրը, Բերենք մի ուրիշ բոլորովին համապատասխան կազմութեամբ օրինակ. Մովսէս Խորենացին (Բ. 35) պատմում է, թե Արգաթ Թագավորի կին Հեղինեն, որ քրիստոնյա էր, «ոչ հանդուրժեաց ընակել ի մէջ կռապաշտիցն. այլ չորաւ յերուսաղեմ», — չգիմացավ կռապաշտներէ մեջ ընակելուն, [ուստի նրանց մեջ չընակվեց], այլ գնաց Երուսաղեմ. Այսպես և Կորյունը վերևում բերված խոսքի մեջ ասում է. «Որովհետև իսկապէս չէինք գիմանալ նրանց յուրաքանչյուրի բոլոր արածները գրելուն, [ուստի գրեցինք ոչ բոլորը], այլ ապավինեցինք այս ավելի հեշտ ու դյուրերինն — ասեցելանին» [յառաջի թարգմանութեամբ՝ «մեզ պատասպարեցինք» = պատասպարվեցինք այս ավելի հեշտ ու դյուրերինով — ասեցելականով], Հիմա հարց. Ինչու Հեղինեն չգիմացավ կռապաշտներէ մեջ ընակվելուն: — Անշուշտ նրա համար, որ նրանց մեջ ընակվելը որևէ նեղութիւն էր պատճառում նրան: Այսպէս և երբ Կորյունն ասում է, թե «չէինք գիմանալ նրանց [Սահակի և Մաշտոցի] բոլոր արածները գրելուն», անշուշտ նրա համար, որ այդ բոլորը գրելը նրան որևէ նեղութիւն կ'պատճառեր: Կնչնապիկ՝ Կորյունն զգուշացել է, չասել, թե վախեցել է Սահակի ու Մաշտոցի բոլոր արածները գրելու իմ ոչ միայն այդ, նա պաշտպանվելու համար զիմել է «ասեցելականին», այսինքն Մաշտոցի «ասեցելական» գործունեութեանը, քրիստոնեութեանը քարոզելուն: Այդ շատ պարզ երևում է նաև նրա գործածած «պատասպարվելն բառից, որ նշանակում է՝ Եղովթիմել, Եղովտալմանել, Եղովտալմանել մի բանից մի բանով, Կորյունը, ուրեմն, պատասպարվել է իր բերած բազմաթիվ ցիտատների ետևում:

Մի անգամ ևս նա թողնում է շատ բան, ինչպէս ինքն ասում է, որբերի «բազմաթուղտ արգասիքները» — վաստակները, ընականորաւ նպատակ է դնում իր գրած «կարեւորագույն հանգամանքները» («զկարեւորագոյնս պատմելոյ զհանգամանս») մանրամասն, մանրակրկիտ պատմել:

4. Արժեք: — Կորյունն, անշուշտ, պատրաստված չի եղել պատմութեան կամ կենսագրութեան գրելու նրա ուղւումը լուկ կրոնական է եղել: Մի մարդ, որ պարապել է գնահաղան կրոնական գրքերի թարգմանութեամբ, ունի լավ ծանոթութեան Ս. Գրքի, որից դենը չի անցնում իր հայացքով, բայց չնայելով դրան, չնայելով նրա լուսմներին՝ կարելի է ասել, թե նրա այդ փոքր գրքուկը, ինչպէս գրում են, «իբրև պատմական գրվածք չունի մեծ արժեք»: Ընդհանրապէս, դա հայ պատմական կյանքի նոր դարաշրջանի

սկզբնավորութեանը ծանոթանալու նկատմամբ՝ ունեցել է և ունի շատ մեծ կարևորութիւն։ Դեռ հայոց գրականութեան սկզբնավորութեան միակ ժամանակակից և վավերական հիշատակարանն է։ Բավական է միայն տեսել, որ եթէ չլինէր այդ գրքույկը, մենք չափազանց քիչ բան, այն էլ կ'սկսեինք, կ'իմանայինք այնպիսի նշանավոր եղբւրթեան մասին, ինչպիսին է հայ գրի ու գրականութեան սկզբնավորութեանը, որ մենք արդեն տեսել ենք ըստ Կորյունի, Հետագոյ գրողներն այդ մասին Կորյունից են օգտւում։

Նա բավարար չափով տեղեկութիւններ է տալիս իր առաջադրած Խնդրի վերաբերմամբ և սովորաբար շատ որոշ կերպով։ Նրա գրածով մենք պատկերացնում ենք մի խելոք կերպով ծրագրված ու կատարված, գործունէութեան, իսկ զլրամօր գործիչը, Մաշտոցը, հանգես է գալիս իբրև տնասպան եռանդի տեր, շնորհալի և ազդեցիկ աղամարդ, որ մոռնում և հոգում է մերող հայութեան, այլև հարեան ժողովուրդների համար, որ շարունակ շրջում է և իր տեսչական տցելութիւններով հաստատուն հիմքերի վրա գնում իր սկսած գործը։

Անշուշտ, ոչ միայն Կորյունը, այլև մօեն մի հին հեղինակ չի կարող բավարարել հետագայի հարցաւոր մարդկանց պահանջներին, որոնք հաճախ ձագի են կամ Կորյունի գրածը չհասկանալուց, կամ ուրէ յայտնի մտացութիւններից։ Այսպես են հետևալները. Մաշտոցը քանի նշանադիր է հորինել, երեսունվեց, թի տասնուչորս, թի յոթն։ Արդոյդ հայերը քրիստոնէութեանից առաջ չէին ունեցել գրի գործածութիւն։ Արդոյդ «Դանիէլյան աբփաբեաը» չի եղել «հայոց հին ալբուրենը», որ «մոռացվել էր» տեղի աւելով այլոց գրութեանց, այսինքն այլոց գրերին, և ապա կրկին հայտնվել։ Ի՞նչ են եղել «Դանիէլյան» նշանադիրքը, և Մաշտոցն ինչպիսիք է լրացրել գրանքը։— Կարծես Կորյունը պարտավոր էր գուշակել, թե դարեր հետո ինչքա՞ն կհարցնեն, և զրանց պատասխանը պիտի տար տառջուց։

Կորյունն առանձին ուշադրութիւն է դարձրել նաև ժամանակաշարութեանը. նա հիշել է ուրիշ աղբյուրներից ստուգվող ճիշտ թվականներ, հորակով, թագավորների տարիներով, ցանի որ այն ժամանակ չկար թվականութեան կիրառութիւն։ Նրա հիշած, երբեմն երկրորդ և երրորդ անգամ մի ուրիշ ձևով կրկնած թվականները վերաբերում են հայերեն նշանագրերին, Մաշտոցի կրօնավորութեանը և Սահակի ու Մաշտոցի մահվանը։ Այստեղ էլ, ուրուհի, նա հետևում է իր տառջուցած ծրագրին։ Լավ կլինէր, որ նա հայտնած լինէր Մաշտոցի գործունէութեան մի ցանի ուրիշ թվականներ ևս, եթէ միայն գիտէր։ Նրա հիշած թվականներից մի երկուսը, ցավոք, սղծատված են։ Պետք է տեսել, որ նրա աշխատութիւնն ընդհանրապես, մոնտավանդ վերջին մասում, շատ ազդեցւոր է աւտագրողների ձեռով։ Դրան հաճախ ուշադրութիւն չեն դարձրել այդ գրքույկից օգտվողները։

Վերջիններիս համար մի գովարտութեան համագամք էլ հղել է նաև Կորյունի գրութեան ոմը, որ միակերպ չէ. մերթ կարճ ու հակիրճ է, մերթ երկարաբան ու խրթին։ Նա հորինում է շատ ճոռած պատկերավորութեամբ, ավելորդ դարդերով ու պաճաւտնքներով խոնարհ, ինչպես ինքն սասում է, «ժողկեցրած»։ Նրա գրած հաճախ մասին է նաև անկատուն լեզվի կամ բարդ պարբերութիւնների պատճառով։ Երբեմն պակասում են անբաժնեղա բա-

ներ, կամ շատ կան ամբողջ նախադասութիւններ, փոխարինող յուրահա-
տուէկ նորահնար բարդ բառեր, այլև բառերի կիրառութիւնն ոչ մեզ ծա-
նոթ սովորական նշանակութեամբ, Վրասն ալիւսցրիք և բնագրի մասամբ
աղանատմած լինելը, և ապազ կլինի, թե ինչև այդ փոքրիկ գիրքը շատերի
համար դժվար հասկանալի է եղել:

Հեռո մատչելի չի եղել այդ գրվածքը նաև միջին դարերում. ուստի
սուղ է եկել մի նոր խմբագրութիւնն, Կորյունի գրքից քաղվածորեն կազմը-
ված, հետը միացրած նաև Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութիւնից» տե-
ղեկութիւններ, նույնիսկ փոխանակ Կորյունի հաղորդումներին, Դա հայա-
նի է Առաւ Կորյուն «անունով, Գրա վերնագիրն է՝ «Եի յիշատակի պատմու-
թեան Վարուց երանելոյ սուրբ վարդապետին Մհարոբայ, զոր տառցեալ է
նսրին աշակերտի Կորեանն. գտնվել է «Եի սառուար և հնագիր (ԺԲ դարու.)
ձեռքընտրի»: Շատ պարզ է, որ այդ խմբագրութիւնը եղել է՝ Մոշտոցի
ստեղծ օրը եկեղեցիներում կարդալու համար:

Ա Գ Ա Յ Ա Ն Գ Ե Ղ Ո Ս

1. Բովմեղանութիւնը: — Առաջին երկն է սա. որ կրում է «Պատմու-
թիւն Հայոց» վերնագիրը¹. Կարճատա ըզվանգալութիւնը հետեւյալն է:
Սասանյան Արտաշրի ձեռով իշխանութիւնից ձգվում և սպանվում է պար-
թեական տոհմի Արտաշան Թադավորը Պարսկաստանում: Հայոց թագավորը,
Արշակունի Խաւրովը, տասը տարի պատերազմում է Արտաշրի դեմ. սա
պարթե Անակի ձեռով դավաճանութեամբ սպանել է տալիս Խաւրովին: Կո-
տորում են Անակի սերունդը. ազատվում է միայն մի երեխա, Գրիգորը,
որին փախցնում են Կեսարիա: Նա այնտեղ մեծանում է իբրև քրիստոնյա:
Արտաշիրը տիրում է Հայաստանին. կոտորել է տալիս Խաւրովի սերունդը:
Սրա որդիներից ազատվում է միայն մանկիկ Տրդատը, որին փախցնում են
Հոռոմայեցոց կողմը: Տրդատն այնտեղ մեծանալով՝ դառնում է մի ուժեղ աշր,
մեծ քաջագործութիւններ է անում և վերջը հռոմայեցիների ոգնութեամբ
գալիս պատերազմում է պարսիկների դեմ և տիրում իր հայրենիքին: Այդ
ժամանակ Գրիգորը գալիս, ծառայութեան է մտնում Տրդատի մոտ. սա
խմանալով, որ նա քրիստոնյա է՝ ստիպում է նրան թողնել քրիստոնեու-
թիւնը. հետո նրան չարչարել և Արտաշատի Խոր Վիրապն է ձգել տալիս:
Ապա պատմվում է Հռիփսիմյան կույսերի նահատակութիւնը, Տրդատի խե-
լագործելը և Գրիգորին Խոր Վիրապից հանելը, որպեսզի Տրդատին բժշկի:
Երկրորդ մասի վերնագիրն է՝ «Վարդապետութիւն սրբոյն Գրիգորի». սա
ընդարձակ քարոզ է: Սրբորդ մասն է՝ «Դարձ փրկութեան աշխարհիս Հա-
յաստան»: Այստեղ պատմվում է Գրիգորի տեսիլը, ապա կույսերի համար
վկայարաններ շինելը, Գրիգորի ձեռնադրվելը Կեսարիայում, այնքի քրիս-

¹ Ապաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Միքայելան և Սո-
հանյանն, Յփշի 1900. հրատարակված է քաղմութիւն ձեռագրերից ըզգառութեամբ
էջ ԿԳ, Մատենագրութիւն, աղագրութիւններ: Թարգմանութիւններ և ուսումնասիրու-
թիւններ, «Պատմութեան Հայոց» հրատարակութեան:

սոցիալական զարգացման, մեղադրանքների կործանումը և այլն: Գրքագրի և Տրդատի մահվան մասին հիշատակություն չկա:

2. Հեղինակն ու գրութային ժամանակը: — Թէ հմէ է եղել այս մեծ երկի հեղինակը, այդ չի պարզվում: Պատմությունն ունի մի ընդարձակ ճեպագրություն: Ազաթանգեղեայ պատմական, մթին, ավելորդաբան կրկնություններով ու ճոռոճ լեզվով հորինված: Դրա մեջ խոսվում է նաև հեղինակի մասին: «Հրամանն հասեալ առ իս ոմն Աղաթանգեղոս, որ ի քաղաքէ ի մեծն Հոովմայ, և վարժեալ հայրենի արուեստիւ, Հոռմայերէն և Ունաւորէն ուսեալ դպրութիւն, և ոչ կարի ինչ անտեղեակ լեալ ձեռնարկութեան նշանագրաց, և ի վերայ տասցիկ հասեալ ի դուռն Արշակունայ, յամս քաջի և առաքինայ, ուժեղ և պատերազմողն Տրդատայ, որ քան դամհնայն նախնիսն քաջ եղեալ . . . հրամայեաց մեզ վիպասանել . . . Արդ՝ հասեալ առ իս հրաման ի մեծ արքայէն Տրդատայ՝ կորզել ինձ ի ձեռնարկութեան նշանագիր ժամանակադրացն՝ պատմել նախ զհայրենեացն գործս քաջութեան քաջին Խոսրովու . . . և կամ վասն հորամոյն քաջութեանն Տրդատայ: Վերջարանի մեջ ևս կարգում ենք. Վիսկ մեք որպէս ընկալուք զհրամանս քայոյ թագաւորութեանդ. քաջք արունց Տրդատ, գրել դոյս ամենայն՝ որպէս օրէն է ժամանակագիր մտանից՝ ըստ այնմ ձեռք դրոշմեցաք, ըստ օրինակի յունական ճարտարութեանն արկեալ ի շար գամենայն: Ապա հեղինակն Առաջարանի մեջ հայտնում է, թե ինքն բաղանապաս է եղել իր պատմածներին:

Այս հատվածներից իմացվում է, որ հեղինակը կոչվում է Ազաթանգեղոս: Նա եղել է Հոռմ քաղաքից, վարժված հոռմայերեն և Ունաւորեն գրութայն. եղել է Հայաստանի Արշակունի Տրդատ թագավորի պալատում և այս թագավորի հրամանով գրել է նրա հայր Խոսրովի և իրեն՝ Տրդատի պատմությունը: Ըստ այսմ, ուրեմն, դա պետք է լիներ ժամանակակցի և եղելություններին մոտիկ ծանոթ հեղինակի գործ: Եւ այդպես էլ ընդունել էին այդ Պատմությունը 5-րդ դարից ի վեր: Մովսես Խորենացին (Բ. 67) անվանում է նրան քաջոյ քարտուղարն Տրդատայ Ազաթանգեղոս, Ղազար Փարպեցին՝ «այլն երանելի Ազաթանգեղոս», «երանելին Աղաթանգեղոս», «Ջայս ամենայն . . . յիւրում անսխալ կարգադրութեան պատմեաց մեզ երանելի այլն Աստուծոյ սուրբն Ազաթանգեղոս»:

Պատմություն մեջ հեղինակը հիշում է, թե Ս. Գրքորը չարչարանքի ժամանակ, երբ գլխովայր կախված էր, մի շատ երկար տղոթք է տնում: Ապա՝ տվում է, թե այդ տղոթքին տեսնակալ դպիրքն նշանագրացն . . . և մատուցին դայն առաջի թագաւորին (Հատ. 98. էջ 60): Նույնպես և Հովհաննէ կույսի աղոթքի մասին պատմելիս՝ ասում է՝ «դիպեցան անդ նշանագրքը, որ գրեցին զամենայն բանս, և ընթերցան առաջի թագաւորին (Հատ. 176. էջ 97): Ըստ այսմ, ուրեմն, այդ Պատմության մեջ դրված երկար տղոթքներն անգամ պետք է համարվեն պաշտոնական աղբյուրներից հանված, և ոչ մի կասկած չպիտի լիներ այդ գրվածքի ստույգագրութեամբ լինելու մասին:

Սակայն բանասեր քննադատները 10-րդ դարից ի վեր այլևս համատեղ չեն ընդունում այդ գրքի առաջաբանի մեջ հայտնածն Ազաթանգեղոս հե-

ղինակի մասին՝ Գրվածքը աչ թե 4-րդ դարու և ժամանակակիցի գործ է, այլ 5-րդ դարի։ Այդ երևում է հենց գրքի բովանդակութունից, Տրդատի մասին պատմված են աշխարհի ժողովրդական առասպելներ, ինչպես, որինակ՝ նրա խոզ դառնալը, որ չէր կարող մեջ բերել Տրդատի հրամանով գորղը։ Ս. Գրիգորի «Տեսելի» մեջ աղոտ ակնարկվում են 5-րդ դարի կրոնական հալածանքներն ու հավատաբացութունները, որ չէին կարող լինել 4-րդ դարի զրկածքի մեջ։ Այս և մի քանի ուրիշ հիմունքներից եզրակացնում են, որ այդ Պատմության հեղինակը 5-րդ դարի գրող է։

Ազաթանգեղոսի մեջ կան բազմաթիվ բառացի հատվածներ Գորյունի «Վարք Մայթոցի» գրքից, Դրանից որոշ բանասերներ հետևեցել են, թե Գորյուն և Ազաթանգեղոս միևնույն անձնավորությունն են՝, հասն բանասերներ էլ, որոնք Ազաթանգեղոսի Պատմությունը համարել են թարգմտություն Նունարենից և թարգմանիչը՝ Գորյունին¹։ Այս տեսակետներն այլևս ընդունելի չեն։ Մի ժամանակ կտրծում էին, թե Գորյունն է Ազաթանգեղոսի գրքից օգտվել, բայց այժմ հավաստի է, որ օգտվողը Գորյունը չէ, այլ Ազաթանգեղոսի խմբագրողը։ Գորյունի զրկածքի մեջ այդպիսի հատվածներն իրենց բնական տեղումն են, իմաստային կապակցությամբ, իսկական պատմությանը հարմար, մինչդեռ Ազաթանգեղոսի մեջ գրանք զրկած են հաճախ անհարմար տեղերում և ընդհանրապես անկապ են հանդիպում նախորդ մասերի նկատմամբ և հակասող ուրիշ տեղ ասածներին։ Բացի այդ՝ Գորյունի և Ազաթանգեղոսի գրության ոճերը հիմնովին տարբեր են։ Եթե կան էլ սակավաթիվ նույն բառերի կիրառություն, կամ երկու-երեք նույն բառերի կապակցություններ, դրանք մեծ մասամբ ընդհանուր տեղիներ են, առավելապես կրոնական լեզվի մեջ, կամ թե բանաստեղծ Գորյունից տասն հատվածների հետ՝ սակավաթիվ այդպիսի բառերից և արտահայտություններից էլ օգտվել է Ազաթանգեղոսի մեջ։

Հեղինակի մասին մի ուրիշ տեսակետ էլ է մեջ բերված՝ Հավանորեն 7-րդ դարում Ողնիկ տնունով մի քահանայի թարգմանած՝ հայ կաթողիկոսների և թագավորների ցուցակի մեջ տված է. «Կարգը գործոցն Դրիգորի՝ նորոգեալ արամբ միով երանելեալ Տարաւնացւոյ, որում անուն Մասրովս ճանաչէր»։ Ակադ. Ն. Մառը «Կարգը գործոց» հասկանալով իբրև «գործերի պատմություն», հայտնում է, թե 5-րդ դարից առաջ եղել է Ս. Գրիգորի մասին ավանդություն և թե «հայկական ավանդությամբ Մեսրոպին է վերագրվում հունական միաբնակներ Ս. Գրիգորի մասին եղած լեգենդային մշակումը (շնորհաբան)»։ «Այսպիսով... Ս. Գրիգորը Լուսավորչի գործերի առաջին ընդարձակած խմբագրությունը պատկանում է, տկնայտ է, հեղինակներ մատենադիւններին, հատկապես, ըստ ավանդության, Մեսրոպին և նրա աշխատակիցներին շրջանին Սահակի գլխավորությամբ»։—Վե-

¹ Նորոգի թիւ գաւառի, Գորյուն վարդապետ և նորին թարգմանութիւնը, Տփղիս 1900, էջ 5 և հետ։ Այստեղ հիշված են՝ Միքայէլ 2-մշակ, Պատմութիւն Հայոց, 17, 84. Ա. էջ 10. Յովհ. Գաթաճեան, Տեղեկութեան Պատմութիւն, 1849. Ա. էջ 94։

² Անպ. էջ 17.

³ Н. Марр, Крещение армян, грузин, абхазов и владов св. Григорием, арабская версия, С. Петерб. 1905, էջ 174—182.

րևում բերված ցիտատի «կարգը գործոց բառերը, սակայն, կարող են վերաբերել ոչ թե Գրիգորի գործերի «լեզենդային», «լեզենդար պատմութիւնը», այլ ավելի շուտ նրա կատարած գործերին, քրիստոնեական քարոզչութիւնը, որ իսկապես «նորոգել է Մաշտոցը, Բայց որ ծրգ դարու ամբողջ հեղեղացական-գրական շարժումը մեծ մասամբ հունասերների գործունեութիւնն աղոյունք էր և որ Մաշտոցն ու Սահակն իրենց աշակերտներով հունասերների պարագլուխներն էին, այդ հայտնի է: Պարզ է և այն, որ «Ազաթան-գեղայ» Պատմութիւնը հունասերների գործն է, Մաշտոցի կամ Սահակի աշակերտներից մեկի, թերեւ հենց Մաշտոցի և ավելի ևս Սահակի կարգադրութիւնը առաջ եկած:

3. Ազաթանգեղոսի անդրադրմբը: — Այժմ արդեն բավական պարզված են մեր տալ պատմական երկի աղբյուրները: Ինչքան էլ Առաջաբանի մեջ այնպես է ձևացրած, թե Ազաթանգեղոսը սկզբնական հեղինակն է, բայց և այնպես այնտեղ կա հետևյալը. «Ընթերցեալ զԹորգոմայ ազգիս, զՀայաստան այնտեղիս զաստուածապարզն աւետետոյն աւետարանին քարոզելոյ բանին կենաց, թէ հրպէս, կամ զիսորդ ընկալան, և որպիսի արամբ, կամ հ ո ռ ու տեւեալ... (Հատ. 15. էջ 12 և հտ.)»: Կնշանակի՝ եղել է մի դրբվածք Հայաստանում ավետարանը քարոզելու մասին, որ և ծառայել է իբրև աղբյուր անհայտ հեղինակի համար: Անմիջապես բերված է այդ գրվածքի բովանդակութիւնը, որից երևում է, որ զրա մեջ պատմված է հղել ավետարանը քարոզողի մասին, թե նա հվ հրաեղից է, նրա վարքը, քարոզչութիւնը, Պրիստոսի խոստովանող կամ վկա լինելը, նրա տղթքներով բժշկութիւնը, մեհյանների կործանումը, հեկեղեցիներ շինելը և քրիստոնեութիւնն դարձել: Դա արդեն Ս. Գրիգորի վարքն է: Որոշ թվով ձեռագիրների մեջ Պատմութիւն սկզբում վերնագրին այսպես է. «Ազաթանգեղայ Պատմութիւն, վարք և պատմութիւն սբբոյն Գրիգորի» (էջ 15): Դա զար փարպեցին էլ ասում է, թե Ազաթանգեղոսի Պատմութիւնը նահատակ Գրիգորիսի անունով չգրիտն անուանեալ կոչեն Գրիգորիսի: Դա եղել է Ս. Գրիգորի մի վարք, հովանորեն Ժ-րդ դարու մի գործ, մի համոտտ պատմութիւն Ս. Գրիգորի, պատմական աբժեց ունեցող մի երկ, որից ոգավել է հեղինակն իբ գործը խմբագրելիս:

Այդ գիրքը կոչվել է Ազաթանգեղայ Պատմութիւն: Հունարեն «ազաթանգեղոս» բառը (կազմված է՝ ազաթոս և անգելոս բառերից) իբրև հոմանիշ նույն լեզվի «եւանգելոս» բառի (կազմված է՝ եւ և անգելոս բառերից) նշանակում է՝ լավ, ուրախ լուր տվող, ուրախ լուր բերող (ազաթոս, եւ — լավ. անգելոս — լուրեր, լրատու), հայերեն՝ ավետող, ավետարներ, ավետարանիչ, ավետիք տվող՝, Հետեւեալ «Ազաթանգեղայ Պատմութիւն» նշանակում է՝ ավետարների, ավետարանչի, ավետարան քարոզողի Պատմութիւն: Արդ՝ այդ «Ազաթանգեղոսը» — ավետարանիչը, աւետետոյն աւետարանին՝ քարոզիչը եղել է Ս. Գրիգորը, ուրեմն «Ազաթանգեղայ Պատ-

¹ Griechisch-deutsches Schul-Wörterbuch von G. E. Benseler, Leipzig, 1886 «Եւանգելոս» բառը բացատրված է՝ Gutes verkündend, frohe Kunde bringend=ուրախ լուր բերող, ավետող, գրաբար նաե՛ւ աւետարանող, աւետարանիչ:

մութիւնն է Ս. Գրիգորի պատմութիւնը, «Աղանթանգեղոս» (= ավետարանիչ) եղել է մի ժամանակ Ս. Գրիգորի մականունը, որ և հետո փոխանակվել է «Լուսավորչի» բառով, ինչպես հիմա ասինք «Լուսավորչի պատմութիւն», հնապանասնք «Ս. Գրիգորի պատմութիւն», նույնպես երբեմն հասկացել են «Ազաթանգեղոս» պատմութիւնը, Բայց «Ազաթանգեղոս» բառը սխալ հասկանալով, կամ դիտմամբ, աւելած է իբրև հատուկ անուն (Ազաթանգեղոս հասակ անուն կա էլ), և դարձրած է Տրդատի քարտուղար, զրբի հեղինակը, որպեսդի այդ զրբի բովանդակութիւն արժեքը բարձրացվի¹, եվ այս կատարված է հենց Ծ-ըզ գարում, քանի որ Մ. Խորենացին և Ղ. Փարպեցին «Ազաթանգեղոս» իբրև հատուկ անուն գիտեն: Թե սկզբնապես այդպես չի հասկացվել, այդ երևում է զրբի կրկին վերնագրերներէ, որ զեռ աւելած են, այլազգի բառով ասված «Ազաթանգեղոս» պատմութիւն վերնագրից հետո անմիջապես ավելացրած է՝ «Վարք և պատմութիւն որբոյն Գրիգորի»:

Երկրորդ աղբյուրն եղել է մի վկայաբանութիւն Գրիգոր Լուսավորչի, երրորդը՝ մի ուրիշ գեղեցիկ վկայաբանութիւն Լորիփսիմյան կույսերի. չորրորդը՝ Լուսավորչի տեսիլն է, որ բոլորովին անկախ ծագում ունի: Ս. Գրիգորի վարդապետութիւնն ամբողջապես թաղմանված կամ քաղված է հունարեն կամ ավելի ասորերեն աղբյուրից, Վերջապես կան երկրորդական աղբյուրներ՝ «Գորիս և Շմոն» վկաների մասին զրվածքը², Կորյունի «Վարք Մաշտոցի», նաև ժողովրդական գրույցներ, իսկ քաղաքական մասի՝ Խոսրովի ու Տրդատի՝ պատմութիւն համար մեր երկրորդ ժողովրդական վեպը՝ «Պարսից պատերազմը», որի մասին ներքեւում կհասվի: Դրանք բոլորն եղել են իրարուց անկախ պոծեր, որ կիրառված են «Ազաթանգեղոս» պատմութիւնը հորինելու, կամ, ինչպես գրում են, խմբագրելու:

Համար

4. Խմբագրութեանն այնպես ճարտար չի կատարված, որ զանազան աղբյուրներից քաղած պատմութիւնները դառնան իբրև մի գրչից դուրս եկած, մի ոճով գրված միապաղաղ գործ: Շատ տեղ կապակցութիւնը խիստ արվեստական է, կամ շարունակութիւնն տխուր է հաջորդում, որ իսկույն երևում է ուրիշ աղբյուրից ծագումը. նույն դեպքերի մօտին պատմութիւնը երբեմն այլ և այլ ձևերով կրկնվում է տարբեր տեղերում և այնպես, որ կարճես նոր բան է ասվում: Այդ ցույց է տալիս, որ խմբագրողը նախք զաղել է տարբեր աղբյուրներից, և չի կարողացել այնպես ի մի ձուլել, որ կրկնութիւն չլինի և առաջ չգան նույնիսկ հակասական մասեր ու ավելորդ:

¹ Բ. Ս. Մ. Ե. Ե. Ե. Ե. Ազաթանգեղոս և իր բազմապայան գաղտնիքը, Վենետիկ 1890, էջ 1 և հետո: Այստեղ «Ազաթանգեղոս» բառը բացատրված է ոչ թե իբրև ազնու, ավետարանիչ. «Ոչ թէ բարի աւետարան, այլ բարի աւետիկ կամ աւետիք», իսկ «Ազաթանգեղ» զեռ պատմութիւնը ոչ թե իբրև ազնուարեւի, ազնուաբանի, այլնքն Ս. Գրիգորի պատմութիւն, այլ «Պատմութիւն բարի աւետաց, կամ լուսն» Աւետարանի:—Այս բացատրութիւնը ընդունելի չէ:

² Զ. Տ. Մ. Ե. Ե. Ե. Ազաթանգեղոսի աղբյուրներից: «Յիշատակ դատակնէքաց Գորիս և Շմոնի վկայից որ վկայեցան յուսում», Վաղարշապատ, 1896:

դարանութը յայնչեմը, խոսքի ու պարբերութեան ընդհատումներ, որոնցով լի է այս պատմութեանը¹։ Բերենք մի օրինակ։

Ինչպե՞ս վերևում հիշվեց, Կոթուհիք էլ բազմաթիվ հատվածներ բառացի մոցրած է մեջը։ Կոթուհիք Սահակի համար դրու՞մ է։ Անուշեւը երանելոյն Սահակայ զՄամիկոնեան որեւորն ի վարժա վարդապետութեանն պարագայուցեալ, որոց առաջնոյն Վարդան տնուն էր, որ և Վարդգէսն կոչէր։ Նոյնպէս և զամենայն ոգի ջանայր յերիւրել հասուցանել ի գիտութիւն ճշմարտութեանն։ Իսկ Ազաթանգեղոսի մեջ (Հատ. 783, էջ 407) կարդում ենք. «Անոյր աշուհեանս զԱրշակունեաց տոհմի որեւորն ի վարժա վարդապետութեան պարագայուցեալ. որոց առաջնոյն Տրդատ տնուն, որ և թագաւորն իսկ էր։ ամենայն տամբ իւրով. Նոյնպէս և զամենայն ոգի ջանայր յերիւրել հասուցանել ի գիտութիւն ճշմարտութեանն։ Կոթուհի խոսքը՝ «որոց առաջնոյն Տրդատ տնուն, որ և թագաւորն իսկ էր»։ Արտադրութեանն այնպե՞ս մեխանիկորեն է կատարված, որ կարծես Տրդատն իբրեւ նոր անձնավորութեանն առաջինն տնայինն տնայինն և հարկավոր էր նրա մտքին ժանութեանն տալ, թե՛ նա թագաւորն է, Արշակունիների մեջ առաջինն է։

Ազաթանգեղոսի խմբագրութեանն աշխատանքի մեծ ու կա, ինչպե՞ս տեսնել, կատարված է զանազան աղբյուրներից, մասամբ թարգմանական, մասամբ ինքնագիր, հայերեն լեզվով։ Դրա սկզբնականը հորինված է 5-րդ դարի առաջին կեսին, բայց անփոփոխ չի մնացել, հետագայում վերադրված է։ Այդ երևում է Ազաթանգեղոսի տարական վերախալից, որի մեջ կան հատվածներ, որ աշխատանքի Ազաթանգեղոսի մեջ չկան։ Նույնպե՛ս և Մ. Խորենացին հիշում է, թե՛ Ազաթանգեղոսի մեջ կա Նուհե կույսի պատմութեանը, որ աշխատանքի գրքի մեջ չկա։ Այսպե՛ս՝ հին դարերում հայերենից կատարված հունարեն թարգմանութեան սկզբում կա մի հատված Արտավանի և Արտաշէրի մասին, որ չկա աշխատանքի Ազաթանգեղոսի մեջ, բայց սկզբնական եղել է հայերենում նաև ըստ մեր մի պատմիչի տված տեղեկութեանն²։

Ճ. Պատմական և գրական արժեքը։— Մի անգամ որ Ազաթանգեղոսի գիրքը ծագում է զանազան աղբյուրներից, քննականաբար, նայելով աղբյուրներին, տարբեր է և նրա մասերի պատմական արժեքը, Կա շատ բան իսկական պատմական, շատ բան էլ առասպելական։ Ինչ որ ծագում է վերևում հիշված առաջին աղբյուրից, որ է՝ Վարդ Ս. Գրիգորի (Ազաթանգեղոսի վերջին մասը), դրա պատմական արժեքը մեծ է՝ նկատմամբ հայոց գործի պատմության, հին Հայաստանի տեղագրության, նախաբանական կարգի, հայկական դիցաբանութեան ու պաշտամունքի վայրերի և առհասարակ ներքին կյանքի։ Պատմական պատմական արժեք ունեն Ս. Գրիգորի և Հովհաննիսյան կույսերի վկայաբանութեանները, որոնք հորինված են ընդհանուր վկայա-

¹ Ազաթանգեղոս առ Գեորգայ Ասորի եպիսկոպոսի և առաջնորդութիւն Ազաթանգեղոսի գրքը, գրեց Յակովբոս Տաշեան, Վիեննա, 1891. էջ 20, 23, 25, 28 և ուրիշներ։

² Մ. Գրիգորի Կաթողիկոսութեան Պատմութիւն Ազաթանգեղոսի թղթից, 1812, էջ 136։

բանական շարունակներ համեմատաւ Դրանցից առաջինի մեջ կան դարձաւ հայոց հեթանոսական աստվածների մասին կարեւոր տեղեկութիւններ: Իսկ Հռիփսիմյանց վկայաբանութեան մեջ դժվար թե որն է իրական պատմական բան լինի, բայց եթե այն, որ իրոք Վաղարշապատում նահատակված են եղել կուսեր, զանի որ Ծ-րդ զարուստ արդեն եղել են այնտեղ նրանց վկայարանները: Դա էապես մի զրույց է վկայաբանութեան ձևով գրված: Առանձին արժեք ունեն և խոսքովի ու Տրդատի մասին պատմվածքները:

Ազատական գեղայն Պատմութեան նշանակութիւնը, ապա այն, միայն նրա մեջ չէ. որ դա աղբյուր է հայոց պատմութեան համար, դա նաև մի կարևոր զրեկան երկ է: Արդարև, զբա խմբագրութիւնը կատարված է միամիտ ձևով, բայց առաջ է եկել մի ամբողջութիւն կազմող, պարզամիտ ընթերցողների համար բավական հետաքրքիր վիպական մի պատմվածք, իսկապես մի վիպ. Դա իր տրամաբանութիւններով, իր հոխ ու կենդանի ուժով, հաջորդաբար իրար հետ կապակցված զանազան պատմվածքներով ու զրույցներով, հրաշապատմութիւնով, թեկուզ մանրապատում ավելորդաբանութիւններով, նպատակավոր տեսլով և նույնիսկ իր երկար ու բարակ աղոթքներով ու վարդապետութեամբ շատ սիրված է եղել և շատ կարգացված, միանգամայն և շատ ազդած մեր գրականութեան և առաստաղակ մտայնութեան վրա, մինչև 19-րդ դարի կեսերը, նույնիսկ հետո: Այդ երկը լավ ծառայել է այն նպատակին, որ զբա համար դրել են սկզբնական խմբագրողն ու վերախմբագրողները:

6. Կրօնական Գաղտնիք:— Այդ գրքի մեջ շատ զգալի կերպով արվում է քրիստոնեութեան զգված ու ջատագովութիւնը հեթանոսութեան դեմ: Ս. Գրիգորի ու Հռիփսիմյանց վկայաբանութիւններ, ինչպես և վարդապետութեան մեջ մեծ ծաղրով ցույց է տրված հեթանոսական աստվածների, կուսերի ոչնչութիւնը, Հատկապես անունով հիշվում են աստվածները և եվհեմեարար մարդ համարվում. «Ձոր դուք կոչես մեծ Անահիտ տիկին՝ լեալ իցեն արդեւ մարդիկ ոք յայնժամ երեքն ժամանակի: Բանդի դիցապաշտ կախարդութեամբ զմարդիկն որ յայնժամ էին, ցնորէւք կերպս ի կերպս լինելով դիւանքն՝ հուսնեցուցին մեհեռնս շինել և պատկերս կանգնել և երկիր պագանել: Ստեղծված են հանձինս Ս. Գրիգորի և Ս. Հռիփսիմի ու Դաւանի շատ ուժեղ պատկերներ նահատակների: Ս. Գրիգորը համարձակ անարգում է աստվածներին. «Եմեծն Անահիտ, որով կեայ և զկենդանութիւն կրէ երկիր Հայոց, ասում է Տրդատը, «ընդ նմին և զմեծն և զարին Արամազդ, զարարիչն երկնի և երկրի. ընդ նմին և զայլ աստուածն կոչեցեր անշունչս և անմտունչս: Պարզ երևում է, որ այդ գիրքը հորինված է իբրև մի օրինակ անվիներ մաքառման ընդդէմ հեթանոսական կրոնի և սրտ ոչնչացման իր պաշտօնական պաշտամունքի տեղերով: Մյուս կողմից՝ Ս. Գրիգորի վարդապետութեամբ, լաւագոյն, նրա և Հռիփսիմյան կուսերի աղոթքներով, ձգտել են քրիստոնեական կրոնի սկզբունքները սովորեցնելու ընթերցողներին: Այս է եղել Ծ-րդ զարում հայ հոգեւորական դասի ձգտումն ամենից առաջ:

7. Ազգային կերպարանք:— Ազատական գեղոյի նպատակը եղել է նաև անեղծել հայոց եկեղեցու սկզբնապիւրութեան պատմութիւնն այնպիսի ձևով.

որ վեհաշուք և հիւհրաշ լինի և խոր ազդեցիկ: Սկզբում հոգը միայն հայոց եկեղեցու համար չի եղել, այլ և վրաց, աղվանից և օփթագներին, ինչպես և արաբական թարգմանութեան մեջ. բայց հետագայ իմաստասիրության ներքին ժամանակ այդ ազդեցը դուրս են ձգվել. այժմ Ազաթանդեղոսի մեջ ոչ մի խոսք չկա այդ ժողովուրդների քրիստոնեական դարձի մասին: Դուրս է ձգված և սկզբի մասը, ինչ որ Սասանյան հարստութեան սկզբնավորութեանն է վերաբերում: Այսպիսով մնացել է միայն, կարելի է տեսնել, հայոց եկեղեցու սկզբնավորութեան պատմութիւնը, իրեն մի առանձին ազգային եկեղեցու, որ իր սկիզբն ունի է հետաքրքիր եկած մի քաղաքից, և առաջին ձեռնադրութիւնն ստացել այնտեղի եպիսկոպոսից, Ուրեմն հայոց եկեղեցու սերտ հարաբերութիւն հույների հետ: Ոչ մի հիշատակութիւն չկա ասորի քաղաքիների և ասորիների մասին. միայն մի տեղ ասվում է, թե Տրդատը հրամայել է իր իշխանութեան զանազան կողմերից մանուկներ ժողովել դպրութիւն սովորեցնելու. Շմ. Կոստայեղեղուս բաժանակալ, զոմանսյասորի դպրութիւն կարգեալ, և զոմանսի հելլենոս: Բայց այս հատվածը բացառի քաղված է Կորյունից և քաղված է միխանկոսին:

Ազաթանդեղոսի աշակերտ, կարելի է տեսնել, ազգայնացումը, կամ, ավելի ճիշտ, ազգայնացական վերամշակութիւնը, կատարվել է անշուշտ ոչ վաղ, քան 7-րդ դարը, հայոց և վրաց եկեղեցիների բաժանումը: Այդ ժամանակ և, պետք է կարծել, մեջը մտքերն են Կորյունից ընդարձակ հասկացածներ, այդ պատմութիւնն ակնառանձին դորից ցույց տալու համար¹, ավելի ընդարձակելու, դեղեցկացնելու և Ս. Գրիգորի երկպարն իրեն մանակայցի ավելի բարձրացնելու համար: Եվ իսկապես, Ս. Գրիգորը, որ անպայման իրական պատմական անձ է, Ազաթանդեղոսի Պատմութեան մեջ դարձած է արդեն մի լեզունգար հոյակապ անձնավորութիւն, եւայր հրաշալիք (էջ 430). վեհազն իր պարթևական Աքշապուրի ծագումով, սքանչելի իր վկայաբանութեամբ, կրած չարչարանքներով և խոր վերադարձ տարիներ ապրելով, իր քաղաքութեամբ, վարդապետութեամբ, որ կանոնական նշանակութիւն է ստացել, հայերին քրիստոնյա դարձնելով և իր հզորութեամբ, իր տեսլով: Այս վերջինը, տեսիլը, իր սիրովիզմով անհրաժեշտ է եղել հայոց եկեղեցու սկզբնավորութեանը խորհրդավորութեան տալու համար: Երբ հայ եկեղեցին իրեն անկախ էր զգում և հույներից, և՛ ասորիներից, պետք էր ցույց տալ, որ մեր եկեղեցին հիմնված է ոչ թե 3-րդ դարի վերջում կամ

¹ Տե՛ս, ի մէջի ուղից, Վերջապահի մեջ (Հատ. 897, էջ 470), Կորյունից մեկնանիւրեան քաղած հետեւյալ կոտոր: Եւ. Երզնկացի ըստ օրինակի գրելոցս առ ի մէջի՝ ի կատարեալս զարեւոյցս, ոչ եթէ ի հին համբուլց տեղեկացեալ և ժամանազրեալ դայս կարգեաց, այլ որոց մեզէն իսկ տկանառեաց եղեալ կերպարանացն և արեւմտեկաց հազարեակն զարեւցն և յաղց յնորժողոտում վարդապետութեանն, և նոցին տրքանեակց ըստ աւետարտանկան ըստմանցն: Ոչ աւետարտումս հարաբարեալ եղեալ առ ի միջոց բռնից, այլ զլուսնադոյնսն թողեալ և ի նշանաւոր պիտակաց ցաղելով՝ զամենառան կարգեաց: Եւ ոչ մեզ միայն, ոչ թագաւոր, այլ յոյժմամ քաւաւի զմտեանց ընթանուն՝ յայտնի էն: Բանագլխ Ազաթանդեղոս հեղինակին նախնիսկ զարմիր և շնոցն ուրբանեակ ըստ աւետարտական հրաժանացն, ինչ որ Կորյունն իր համար զգում է իբրեւ հետքին, աշխնքն Սահակի և Մարտիկի քոքը զարեւակն:

4-րդ դարի սկզբում, ոչ Ս. Գրիգորի, ոչ նույնիսկ առաջալսների ձեռով, այլ հենց՝ երկնքից հատկապես իշտ Քրիստոսի իրեն ձեռով:

Արապես ուրեմն, Ագաթանգեղոսի Հայոց Պատմութիւնն եղել է հայ եկեղեցական դասի Ագաթանգեղոս արաբահայտող առաջին գրական երկերից մեկը, եթե ոչ առաջինը: Դրա մեջ փառաբանված է և՛ քրիստոնեութիւնը, և՛ հայոց եկեղեցին, և՛ հայ կաթողիկոսական աթոռը՝ Վաղարշապատում, նրա ժառանգական աթոռակալներն իրենց ծագումով: Ամեն ինչ այդ գրքի մեջ դիմում է գլխավորապես այդ նպատակին: Նույնիսկ այն, որ դրա մեջ ուսեղ կերպով գծագրված է հսկայազոր Տրդատ Թագավորի պատկերը, այդ էլ ծառայում է նույն նպատակին, եկեղեցականը փառավորելուն: Քրիստոնեութիւնը ղրբը բարձրացվում է այնու, որ Տրդատի, ինչպես և Կոստանդնուսի նման Թագավորները խոնարհվում են նրա և նրա ներկայացուցիչ կաթողիկոսի առաջ:

Յ. Վիպակամ տարրը:— Ագաթանգեղոսի սկզբի մասի պատմութիւնը համեմատելով առար աղբյուրների հաղորդածների հետ՝ այն եզրակացութիւն են եկել, որ դա «այլ-կերպեալ պատմութիւն» է: Այդ պատմվածքները «հիշտ պատմական են, բայց միայն և հարեանցի, շատ զեպքեր ի մի ձուլված. մի խոնքով՝ պատմութիւն, բայց ոչ ականատեսի և ոչ ժամանակակցի, այլ ի լրո պատմագրող հեղինակի»¹: Այդ «լուրը» միայն ժողովրդական վեպ և գրույց կարող էր լինել: Ժողովրդական վեպը կամ գրույցը միայն կարող էր այնքան և այնպես «այլ-կերպեալ» ձևով պահել իր մեջ պատմական հիշողութիւններ մոտավորապես 225—160 տարի առաջ կատարված եղելութիւնների մասին, քանի որ Ագաթանգեղոսի պատմած զեպքերն ընկնում են 225 թվից մինչև 3-րդ դարի վերջին տասնամյակը: Իսկ Ագաթանգեղոսը 5-րդ դարու կեսերին է գրված:

Անշուշտ, Ագաթանգեղոսի հեղինակն ավանդական վեպից ոգտվելիս՝ ազատ էր վեպի մասերը ցրվելու Պատմութիւն մեջ այս ու այն տեղերում, այլև Պատմութիւն մեջ պիտի յառներ այնպիսի մանրամասնութիւններ, որ նրա աչքին պատմական չէին, ինչպես են՝ առաջնակարգ հատվածներ, եթե կային այդպիսիք, ընտանեկան հարաբերութիւններ, ամուսնութիւն, խնջույք, այլ միայն պատերազմները և քաջագործութիւնները պիտի առներ, և այս ումեն իր լեզվով պիտի պատմեր,— բայց և այնպես վիպական հետքերը շատ տեղ պարզ երևում են: Սով մեր այս կրտսերապատմական և կրտսերտնտեսողական վեպն իր կենդանութիւնը նրանով է ստանում գրքի առաջին մասում, որ ամբողջապես ծագում է բուն ժողովրդական բանաստեղծութիւններից, Վաղուց նկատված է: Եր Տրդատի քաջագործութիւնների մասին պատմվածքները քաղված են ավանդական գրույցներից, որոնց մեջ նա ներկայանում է իրեն իսկական ղրբաղն: Ըստ երևույթի հեղինակն էլ նույնը հայտնում է: Երբ

¹ Յակովբոս Տաշեան, Ագաթանգեղոս և Գեորգյան Ասորի եղեկագոսին և պատմական ուսումնասիրութիւն Ագաթանգեղոսի վեպին, 1891, էջ 60, 92.

² Alfred von Gutschmid, „Agathangelos“, Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft 1877. S. 1—60, Leipzig. Նույն նաև առանձին գրքով. Agathangelos, Kleine Schriften, III B.

Տե՛ս և Մ. Արեգյան, Հայ ժողովրդական վեպը, Թիֆլիս, 1903, էջ 109—111, Արաատգոված Ագաթանգեղոսի Լուսինեից, Թիֆլիս, 1907 թ. հուլիս, էջ 49—51.

Տրդատի զովստանական նկարագիրն անհրաժեշտ է. «Վեպն ալ-սորիկ պատշաճեցան բանքս ալս ի բանս կարգի տակալաց. թէ իբրեւ զեզն Տրդատն . . . Վիպական տարր կա նաև Հոփսիմյանց վկայաբանության մեջ. բնագրատունի Տրդատի և Նազիրիկ հարժի վրա պատմածը հիմն է Հոփսիմյանց պատմության: Բայց ժողովրդական վիպական ծագում ունեն ոչ միայն դրանք, այլև Խոսրովի պատմությունը, Տրդատի փառուստը, պարսիկների դեմ վարած պատերազմները և այլն¹. Դրանց վրա պիտի ավելացնել նաև հունարեն թարգմանության սկզբի մասը Արտավանի և Արտաշատի վերաբերյալ:

Թե որչափով իրական պատմական ղեպքեր են անդրադարձված Աղաթանգեղոսի Պատմության առաջին մասի մեջ, հր պատմական ղեպքերի և անձերի հիշողություններ են պահված և ինչ ղեպքեր են ի մի ձուլված, այդ մասին ալստեղ հետևյալը միայն պետք է ասել. Խոսրով և Տրդատ անունների հետ ալդ մասի մեջ կապված են Հայոց Վաղարշ թողավորի և սրա որդի Տրդատ Բ-ի (216—252) ժամանակ և հետագայում մինչև 297 թ. կառավարված պատմական իրադեությունների հիշողություններ: Ազդած է նաև Տրդատ Ա-ի շրջանը: Մեծն Խոսրով անունով թագավորի պատմական գոյությունը չի հաստատվում, չնայելով նոր պատմաբանների և բանասերների ջանքերին: Դա ըստ երևույթին վիպական ստեղծական անձ է, որի վրա պատմվել են Վաղարշի և Տրդատ Բ-ի գործերից, Հռոմեական կողմը փախչողը Տրդատ Բ-ն է մեծ հասակում. վեպի մեջ նա փախչելիս հիշվում է իբրև մանկիկ ըստ վիպական ոգու, ինչպես և Վիպասանքի մեջ Պարսից կողմը փախչող Արտաշեսը պատկերացվում է իբրև փոքր երեխա: Տրդատ Բ. թագավորի վեպը եկեղեցականների ձեռով դարձած է քրիստոնյա Տրդատի վեպ:

Տես «Պարսից պատերազմ» հատվածը:

Տես նաև Զորքորդ հավելվածը՝ «Պարսից պատերազմ վեպի պատմականության խնդիրը»:

Փ Ա Մ Տ Ո Ս Բ ՈՒ Զ Ա Ն Դ

1. Հեղինակն ու գրությամ ժամանակը:—Այս հեղինակի աշխատությունը՝ ըստ Ղազար Փարպեցու՝ երկրորդ Հայոց Պատմությունն¹ է: Դրա հեղինակի մասին ևս ոչ մի բան չգիտենք, ինչպես և Աղաթանգեղոսի Հայոց Պատմության: Դիրքը բաժանված է զպարությունների. մեզ հասել են միայն Գ—2 զպարությունները: Հեղինակը գրած է եղել նաև Ա և Բ զպարությունները, բայց գրանք դուրս են ձգված, և որպեսզի զուր չընթան գրանք, Գ զպարության սկզբում ավելացրել են «իսկիզբն» բառը:

¹ Վերևում հիշված «Պատմադիբե Հայոց» հրատարակության 18—47 համվածները (էջ 15—20), միջից առանձ 38-ը հատվածը. Աղա նաև 123 համվածը (էջ 71 և հտ.), որ 47-ի բնական չորսնականության է. և վերջապես 161, 203 և 203 համվածների մեջ պատմածները:

² Փառաքանի Բուզանդացի Պատմություն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883.—Այս Պատմությանը ձեռագիրների բազմաթիվ զեռ չկա հրատարակված, իսկ այդ շատ անբաժան է. սղովնեռ և եռագրերների մեջ կան բազմաթիվ այլ ընթերցվածներ:

Վեցերորդ դարու թյան գլխակարգության վերջում կա հետևյալը. «Ստորոտ ամենայն պատմութեանց յազարս իմ տեղեկութեան, որք միտնդամ զմատենսն ընթեռնոյց, տուէնք տառն՝ համարական թուօք»։ Այսպեղ հեղինակը խոստանում է իր մասին տեղեկություն տալ, բայց այդ չկա գրքի վերջում։ Նույնը չի եղել նաև Ծարդ դարում, որովհետև այս հեղինակի կենսագրության մասին ոչինչ հայտնի չէ և Ծարդ դարի երկրորդ կեսին ապրող Ղ. Փարպեցուն։ Մինչդեռ սա Ազաթանդեղոսին շափաղանց գովում է, անվանելով նրան «այր քանիբուն գիտութեամբ և լի ամենայն հրահանգիւ, ստուգաբան ի կարգադրութիւն ճառից և յարմարագիր ի պատմութիւնս ստացուածի իւրոյ», նրա գիրքը համարում է «հաստատուն և անխալ կարդալութիւնք»։ «Շնչարտարանութիւն», — Բուզանդացու մասին հարգանքով չի խոսում, զրելով՝ «Փաւստոս ոմն Բուզանդացի»։ «զոմն պատմագիր, կոչեցեալ Փաւստոս Բուզանդացի», և թե «անուանեալ կոչեն զանուն գրոցն Հայոց Պատմութիւն»։ Նա նույնիսկ կասկածում է, թե այդ Պատմությունը մի բիզանդացի մարդու գործ լինի, «Եւ վասն զի կարգելոցն առ ի նմանէ ի տեղիս ուրեք կարծեցին հմտնք բանք ինչ ոչ յարմարք և դիպողք... յերկուցեալ հարկաւորին չասել զայնպիսի անպատշաճ կարգումն Բիւզանդացւոյ ուսելոյ»։ Այդա նա երկար ու բարակ խոսելով Բիզանդիոնի մասին, ասում է, թե «վտակք գիտութեան, որպէս ի թագաւորանիստ վարչի, յորդեալ բղիճն ի քաղաքէն. որպէս և յամենայն կողմանց յաշխարհէն Յունաց քաջ ուսեալն անդ փութան հանդիսանալ, և մինչև ցոյսօք առաւելեալ տարածին յամենայն կողմանս նորա իմաստութեան վտակք»։ Արդ՝ յայնպիսովն քաղաքի և ի մէջ այնչափ բազմութեանն ուսելոյ վարժեալ այրն Փաւստոս այնպիսի ինչ արդեօք անհաճոյս լսողաց բանս կարգէ՞ր ի պատմութեան իւրում։ Պէտք և մի լիցի»։ — Փարպեցին կարծում է, թե Փաւստոսը, որ Բուզանդացի է, պետք է «ուսեալ, «վարժեալ լինի։ Եվ քանի որ ինքը նրա տնունով եղած Պատմությունն ուսյալ մարդու գործ չի համարում, «Ուստի և, — ամփելացնում է, — անհաւատալի իմում տկարամտութեանս կարծեցեալ գործն՝ ասեմ, թէ դուք է այլ ոք յանդուգն և անհրաժեշտ բանիւ լրբարբ ձեռնարկեալ յիւրն՝ գրեաց զինչ պէտս ըստ կամի, և կամ զի հուրք անկարեալ դիպողս՝ այլաբանեալ փրսսեաց, և անուամբ Փաւստոսին դիւրոյ յանդունձութեանն սխալանա համարեցաւ ծածկել»։ Եւ վերջն ասում է, թե հռչաների, ամփելի ասորիներին մեջ կան տգեղ և հանդուգն մարդիկ, որոնք «գրեցին յինքեանց ճառս ընդունայնս և անպիտանարանս և խառնեալ եղին ի դիրս գիտուն լսողաց, այլ ընտրող մտաց ճանաչի յայտնապէս գիտնացն բանք և անմտացն շաղփաղփութիւնք»։ Ղ. Փարպեցու գրածից չի իմացվում, թե արդոք իրոք եղել է «ուսեալ» և «վարժեալ» մի մատենագիր Բուզանդացի Փաւստոս անունով, թէ, ինչպես երևում է, նրա և ոմանց համար բովանկան է եղել, ար Փաւստոսը Բուզանդացի է, ուրեմն և «ուսեալ» և «վարժեալ» մարդ պիտի լիներ նա։

Փաւստոսի Հայոց Պատմության երրորդ դարու թյան վերջում կա հետևյալը. «Կատարեցաւ երրորդ դարք [=գիրք?], քսան և մի պատմութեանց դարութիւնք, ժամանակագիր կանոնք փախստեայք [=Փաւստոս] Բիւզանդեայ ժամանակագիր մեծի պատմագրի, որ էր ժամանակագիր Յունաց»։

Այս շատ աղճատված չէր շատակաւորները եղբակացնաւ եւ, թե եղել է «Փառասոս Բուզանդ» անունով մի «ժամանակագիր Բունացի» Բայց ուրիշներն այդ հիշատակարանն իրովամբ համարում են հետադաշում ավելացրած, Եթե Ղ. Փարպեցու օրինակի մեջ այն լինելը, նա անպայման այդ նկատի կ'աւելանար և ոչ թե այնպես ընդհանուր և անորոշ ձևով կ'ըսեք Փ. Բուզանդացու մասին:

Փարպեցու ժամանակից ի վեր Փ. Բուզանդացու Հայոց Պատմութիւնը չի գնահատվել արժանապես: Միայն 19-րդ դարի վերջին քառասորից սկսեց բարձրանալ նրա արժեքը: Այդ ժամանակից ի վեր մօելի ևս ծավալվեց նաև նրա հեղինակի մասին հետաքրքրութիւնը. եղել էին և եղան դանազան կարծիքներ, որոնք մեծ մասամբ անարժեք են: Այսպես, օրինակ, հարց է եղել, թե հեղինակն արդյոք հուլան է եղել, թե հայ. մեկը հայ է համարել նրան, մի ուրիշը՝ հուլան, եղել են և բանասերներ, որոնք այդ Հայոց Պատմութիւնն համար իբրև հեղինակ գրել են երկու անգ. իբր գրա մի մասի հեղինակը եղել է հուլան, մյուս մասինը՝ ասորի: Եթե հեղինակը հայ է եղել արդյոք Սահառունյամբ առհմից է եղել նա, իսկ եթե հուլան է եղել, արդյոք նա այդ Հայոց Պատմութիւնն մեջ հիշված ծերունի հոգոմ եպիսկոպոս Փափատան է, որ ապրել է 4-րդ դարում: Այս դարձյալ՝ հարց է եղել, թե այդ գիրքն արդյոք հունարէն է գրված եղել, այն էլ 4-րդ դարում, և 5-րդ դարում թարգմանվել հայերեն, թե հայերեն է գրվել 5-րդ դարում մի հայից և վերագրվել Փափատոս Բուզանդ անունով մեզ անհայտ հուլան ժամանակագրի: Ասողներ էլ եղել են, թե հեղինակը 4-րդ դարում ապրող մի հայ է եղել, որ գրել է հունարեն լեզվով մի համառոտ պատմութիւն. բայց 5-րդ դարում թարգմանելիս՝ միջը շատ բաներ են ավելացրել և ընդարձակել, և վերջապես՝ մի ուրիշ հարց էլ այն է եղել, թե ինչ հարաբերութիւն կա Փափատոսի Հայոց Պատմութիւնն և հուլան պատմագիր Պրոկոպիոսի (6-րդ դարում) հիշած Հայոց Պատմութիւնն միջև, որից այդ հեղինակը բերել է մի կտոր, որ կտ նաև Փափատոսի մեջ: Այս և ուրիշ նման հարցերի պատասխանները, որոնց մասին գրվել են ոչ միայն հոգովածներ, այլև գրքեր, այժմ մեծ մասամբ արժեք չունեն Փափատոսի Հայոց Պատմութիւնն տեսակետով: Մի փոքր կ'ենք ասենք դրանց վերջինի վրա:

Որ հուլան պատմագիր Պրոկոպիոսը Հայոց Պատմութիւնն ընդհանր մասին բերել է մի կտոր, որ նման է Փափատոսի համապատասխան հետգծին, այդ ապացույց չի կարող լինել, թե Փափատոսի Հայոց Պատմութիւնը հունարեն է գրված եղել: Պրոկոպիոսը, լինելով Կեսարիայից, կարող էր հայերեն իմանալ և Փափատոսից անձամբ օգտվել, կամ թե կարող էր Փափատոսի Պատմութիւնն հիշված կտորը մեկը թարգմանած լինել նրա համար: Հենց այժմ ինքն իսկ հուլան մարզկանց ձեռով, որոնք ընտել չլիտեն հայերեն: Այդ կատարվում է միջնորդներ զգնութիւնով: Նույնը կտրելի է ընդունել և Պրոկոպիոսի համար, եթե միայն նա հայերեն չգիտեր:

Այժմ հավաստի կտրելի է ասել, որ Փափատոսի Հայոց Պատմութիւնը գրված է 5-րդ դարի երկրորդ կեսին և հայերեն լեզվով, մի յուրատեսակ հայ հայրենասիրութեամբ առդորված հայից, նրա հեղինակին ծանօթ է

Ազաթանդեղոսի գրեթե ամբողջ բովանդակութիւնը, որից հիշատակութիւններն է առնուած նա իր Պատմութեան պատկերում: Նա զգուշացն է Ս. Գրքի հայերէն թարգմանութիւնից և ուրիշ թարգմանութիւններից, նրա լեզուն հարազատ, մաքուր հայերէն է: առանց խորթ օտարաբանութիւնների, մեծ մասամբ բնիկ ժողովրդական ձևով, նախնական սովորական դարձվածներով և հատկութիւններով այն առեւտրականի, որ բնավ կարելի չէ թարգմանութիւն համարել այդ երկը:

Այս՝ միջին կան տեսլի, անհեղինակ, դուշտութեան ձևով ակնարկութիւնները Երգ դարի երկուցիւններին, և վերջապէս՝ հատկանիւր Կորյունի գրքից, թեպետ ոչ այնքան մեծ թվով, որքան Ազաթանդեղոսի մեջ, Ուրիշները մի քանի այդպիսին ցույց են տվել. բերենք այստեղ մեկը, որ Կորյունից առնված է նաև Ազաթանդեղոսի մեջ: Ուրիշները, որքան հայտնի է, այդ համարում են Ազաթանդեղոսից առնված Բուզանդի մեջ. նրանք չեն նկատած, որ և՛ Ազաթանդեղոսի, և՛ Փաղստոսի մեջ, միմյանցից անկախ, այդ հատկանիւր ծագում է Կորյունից:

Ձաւաւարանական ընթացն և զվեր-
կացութիւն եկեղեցւոյ որչա՛յ շնորհոցն
առաւելոյ առանց պակասութեան առնէր.
առաւել ևս փութայր, դուռն եղեալ յորդարե-
լով դամեանեանս առ ի բարեացն ցաշխա-
բութիւն, զցայտ և զքերէկ պահեց և ազո-
թիւք և սւժգին խնդրութեամբք և բարձր-
կալ կատարման հետաւելով մերձաւորաց
և հետաւորաց զհոգեւոր ետանդն ածէր:

Բ ա լ ա ղ ա ն զ, Գ. Ե.

Ձաւաւարանական ընթացն և զվեր-
կացութիւնն որչա՛յ եկեղեցւոյ շնորհոցն
առաւելոյ առանց պակասութեան առնէր.
և առաւել փութայր դուռն եղեալ՝ դամեանե-
անս յորդարելով առ բարեացն ցաշխութիւն:
Եւ զցայտ և զքերէկ պահեց և ազոթիւք և
սւժգին խնդրութեամբք և բարձրագոյն բար-
բառովք դատաւանագիրք պատարճութեանց
հրաժմանս ուշ առնելով... Եւ միջոցս այն-
պէս մերձաւորացն առ իւր և զհոգեւոր ե-
տանդն ածէր...

Կ ա թ իւն, հառ. ԻԾ. էջ 90.

Բացի ամբողջ կտորներից՝ կան նաև արտահայտութեան ձևեր, դարձվածներ և ուրիշ նմանութիւններ Փաղստոսի, ինչպես և Ազաթանդեղոսի մեջ, որոնք ըստ երևույթին Կորյունի հետևողութեամբ են գրված, կամ Կորյունից՝ վերամշակումով՝ մտել են այդ երկուսի երկերի մեջ: Ծվ այս բնական է: Կորյունի գրքովի լինելով առաջին ինքնագիր երկը, այն էլ գրքի գլուխ և Մաշտոցի ու Սահակի մասին, անշուշտ շատ կարգադրել է նրանց աշակերտներից և ուրիշներից, որոնք և ազդվել են նրանից: Դ. Փաղեցիին ահաբեմ, որ ավելի ուշ ժամանակ է աղբւր, գրում է իր համար, թե շատ անգամ կարդացել է այդ գիրքը. «մեր բազում անգամ կարդալով տեղեկացեալ»:

2. Պատմութիւնը:— Բուզանդի գիրքն առաջին փորձն է գրելու ամբողջական հայոց պատմութիւն, որ իր մեջ պարունակեր նաև հինը: Այդպիսի մի երկ անհրաժեշտ է եղել 5-րդ դարում, երբ պետք էր ոչ միայն եկեղեցիին ուսման համար, այլև ազգային աշխարհիկ քաղաքական ինքնագիր-տակցութիւն գարգացնել: Այս երկու ձգտման համար ևս իբրև ազդեցի-

¹ Առաւելաւորութիւն Փաղստոսի Պատմութեան, գրեթե Մեծաւոր Մալխո-
ւոյնց, Վիեննա, 1896. Այլև Մուսիսի մատագիր, 1901, № 3:

այի միջոց պիտի ծառայեր հայոց պատմութիւնը: Այս պատճառով և հենց «կղերից մեր պատմագրութիւն մեջ մտնում է երկու գիծ՝ աշխարհիկ քաղաքական և եկեղեցական, որոնք, երկուսն ևս միեւնոյն երկի մեջ զույգ ընթանում են, երբեմն զուգահեռ, երբեմն մեկը մյուսի մեջ մտնելով ու բազմաշաղկապ, երբեմն էլ մեկն ավելի մեծ չափով, քան մյուսը:

319թ

Մեզ հասած Ռուզանզի գիրքը բովանդակում է հայոց պատմութիւնը Տրդատի որդի Խոսրովից սկսած մինչև Հայաստանի բաժանումը պարսկական և հռոմեական ազդեցութեան մասերի 387 թ., մոտ հիսուն տարվա պատմութիւն — Խոսրով, Տիրան, Արշակ, Պապ, Վարազդատ և Արշակ Թագավորների օրով:

Եկեղեցական պատմութիւնն սկսվում է Ս. Գրիգորի և նրա որդի Արիստակեսի մահով, ապա խոսվում է Վրթանեսի և հայրըզ կաթողիկոսների մասին. առանձնապես ուշադրութեան են առնված Մեծն Ներսեսի կյանքն ու զործունեութիւնը: Բերված են բազմաթիվ տեղեկութիւններ և առանձին կրոնավորների վերաբերյալ: Որ Ռուզանզը խոսում է նաև մի քանի առերես կաթողիկոսների կամ կրոնավորների մասին, այդ բնավ նշան չէ նրա առարակն կողմնորոշման. ինչպես եղել են այդպես կարծողներ, նա իբրև պատմութեան հեղինակ՝ գրում է և՛ հայոց կաթողիկոսների, և՛ տառերի, և՛ հուշի կրոնավորների մասին անխտիր, և զովելով և պարսավելով ըստ կրոնական հայացքի և նայելով թե ինչպիսի զրույցներ է գտել նա նրանց վերաբերմամբ: Այս տեսակետով հենց՝ նրա երկը, թեպետ հաճախ հրաշապատում, թանկագին աղբյուր է հայոց եկեղեցական պատմութեան համար: Այնտեղ գտնում ենք եկեղեցական և աշխարհական դասերի հակամարտութիւնը, կաթողիկոսների դերն ընդհանուր կյանքի մեջ, մեծ եկեղեցական հոր՝ Ներսես կաթողիկոսի նշանավոր զործունեութիւնը, ձգտում ազգային ինքնագլուխ եկեղեցի կազմելու, այլև եկեղեցական կյանքի վերաբերյալ ուրիշ շատ նյութեր:

3. Վիպական և գրուցային տարրերը: Վիպապոեմ Փավստոս Բուզանդ: — Ձեռնարկելով գրել մի պատմութիւն, որ իրենից առաջ ուրիշները գրով չէին գրում, մեր այս մատենագիրը բնականաբար պիտի դիմեր բերանացի աւանդութիւններին և օգտվեր նրանցից իբրև պատմութեան աղբյուրներից: Եվ իսկապես, Փավստոս Ռուզանդի շնորհիվ հայոց Պատմութեան մեջ ամեն ընթերցող էլ, որ ըմբռնում է ավանդական պատմվածքի ոգին, միայն ավանդական վիպական ոճ և եզանակ կգտնէ: Այժմ այլևս կասկած չկա, որ այդ գրքի զլխավոր աղբյուրները եղել են ավանդական զրույցներ, լեզենդաներ, վեպեր և նույնիսկ երգեր: Հինգերորդ դարի երկրորդ կեսին գրող մի հայ հեղինակ, ինչպիսին է Փավստոսը, հարկավոր էր շատ հիշողութիւնները մոռովել ժողովրդի գաղափարային տեսքերի, թագավորների և զորավարների մասին, բայց ավելի շատ օգտվել է նա ավանդական վեպից ու զրույցներից,

1 Հ. Գ. 18 է. ք. Փ. Ռուզանդ, Թարգմ. Քոբայան, Վենետիկ 1896, էջ 24—26, էջ 111 և հաջ. 38 և այլն:

Ռուսաբանութիւն Սո. Մոխրաշունցի, Փ. Ռուզանդի Պատմութեան, Վենետիկ, 1896: Մ. Արեգյան, Հայ մողղաբանական վեպը, Բաբաջանի և Վազգրդանի Հանգեսի 1906—1908 թ. գրքերից, էջ 111 և հաջ. Վեպ. Հանգ. 1907 թ. հունվար, էջ 61 և հաջ.

որ այդ շրջանում, նույն Բուզանդի վկայությամբ, ինչպես կտեսնենք, մեծ թեթեւությամբ և արագությամբ կազմվում ու տարածվում էին:

Բացի այդ՝ նրա գրեթե պարզ երևում է, որ ինքը Բուզանդն էլ, այդ գրքի հեղինակը, օժտված է եղել միպատասխան շնորհքով, եղել է իսկուպես մի զբաղեստ միպասան, որ սովորած է եղել շատ զրույցներ և իմացել է բերանացի վիզել շատ պատուհներ Վարսից պատերազմին (ինչպես մի նախա Գեորգի կամ Մուկացի Հովան պատմել են Վասնա Մաքրից), և ապա իր այդ իմացածների և բերանացի պատմածների ու լսածների հիման վրա նա հորինել է իր գիրքը՝ անխափր գրելով ինչ որ գիտեր, լինի առասպել, թե իրական պատմական եղելուց յուր, առանց որևէ ըննադատության, տարբերությամբ չդնելով այդ երկուսի մեջ: Գրավոր աղբյուր, ինչ որ զբաղյաների ու վնասի բուն նյութին է վերաբերում, դժվար թե գործածած լինի նա. ուստի և ոչ մի թվական չի հիշում, այլ, ինչպես ավանդական վնասի մեջ, միայն դեպքերի հաջորդությունն է պահում, այն էլ ոչ լրովին ասույթ պատմական: Նա անցքերը պատմում է, ինչպես ժողովրդական վնասի մեջ է, «ապա, յայնմ ժամանակի, յես աշորիկն և նման բազմաթիվ կապակցելով դրանք: Ձկա դեպքերի ներքին կապակցություն, իբրև պատճառ և հետևանք ժամանակաբանական հաջորդությամբ: Կան բավական մեծ անաշխատիքներ, որոնցից պարզ երևում է, որ հեղինակը պատմած դեպքերից շատ ուշ ապրած մի անձ է եղել: Պահված է թագավորների և կաթողիկոսների հաջորդությունը, և նրանց ժամանակի համար պատմված են առանձին եղելություններ, երբեմն իրարուց անկախ առանձին էլակոգներ:

Գրվածքի քովանդակությամբ ուղղությամբ դիտելով՝ գալիս ենք հետևյալ եզրակացության. այս Պատմության մեջ կան երկու խումբ պատմվածքներ՝ եկեղեցական և աշխարհական, առաջինը քահանայապետների և ուրիշ եկեղեցականների մասին, իսկ երկրորդը՝ թագավորների ու զորավարների, թագավորների, իբրև երկրի պետեր, հարկավ, երևան են գալիս երբեմն նաև եկեղեցական զրույցների մեջ. իսկ կաթողիկոսներից ներսեքը գործող անձ է և վնասի մեջ:

Աշխարհական պատմվածքները կազմում են մի ամբողջություն, մի մեծ ավանդական վնաս, որի մասին ներքևում առանձին կխոսվի մասնամասնորեն. իսկ եկեղեցական պատմվածքներն անկախ ավանդական զրույցներ և հիշողություններ են, որոնք հեղինակի ձեռքով մասամբ հազցրած են վնասից առած նյութերի մեջ: Այդպես, այդ եկեղեցական զրույցների մեջ է երևում զլխավորապես Փավստոս հեղինակը, որ պատմում է հրաշքներ, աստիճաններ, դնում է աղոթքներ, քարոզներ, խրատներ և օգտվում է Ս. Գրքից, պատմելով սրա խոսքերով կամ բառացի կտորներ բերելով: Այդպես է, որ նա հանդես է գալիս իր գալուստով ու հանդիմանությամբ, իր հարձակումներով թագավորների վրա և իր ընդհանրապես քրիստոնեական վարդապետական ոգով ու բարեպաշտական զգացմունքով: Ասել չի ուզել, աշխարհական զրույցների մեջ ևս, թեպետ ինչ, կան հեղինակի գրչի արդյունքներ և հայացքներ, մեծ մասամբ կաթողիկոսների համար և նրանց բերանին դրած խոսքեր. ինչպես են՝ Վրթանեսի խոսքը (Գ. 11), Ներսեսի խոսքը և ուղղափառներին ազդողները, Խաչի մասին պատմածները (Գ. 5, 12), Զոհակի բնու-

բությունը (Գ. 16) և այլն, որոնք, սակայն, դարձյալ մասամբ եկեղեցական զրույցներ և հիշողություններ են։ Այդ եկեղեցական զրույցները նույնպես ծագում են ավանդությունից և պատմված են ժողովրդական ձևով։ Դրանց ղեկավարումը մեր երկրորդ Վեպից առած նյութի մեջ տայնպես պարզամիտ է արած, որ գրեթե միշտ երեւում է կարկատանի տեղը¹, ուստի և շատ հեշտությամբ աշխարհիկ ֆեոդալական վեպից անջատվում են դրանք։ Եկեղեցական զրույցներ են Գ. 2—6, 10, 12—17, 19 գլուխները. Գ. 4, 6—10, 44, 50—57 գլուխները. Ե. 21—31. Զ. 2—16 գլուխները։

Պետք է նկատի ունենալ նաև, որ Բուզանզը Վեպից օգտվելիս էլ երբեմն ձգտում է իր գրած պատմությանը տալ քրիստոնեական բնավորություն և զգույն, ինքից, Աստվածաշնչի ոճով, դարձվածներով ու պատկերներով։ Նույնիսկ փոքրիկ հատվածներից օգտվելով և, որ գլխավորն է, կրոնական գաղափարախոսությամբ։ Բայց այդ և շատ զգույն է, և հետևաբար է այդ ևս անշատել, առանց վեպի ամբողջական բովանդակութայնն առանձնապես ֆեոդալիզմ։ Մի Բուզանզի կամ մի ուրիշ միջնադարյան պատմագրի համար, որ վկայարանական գրականության համար սեր և հակում ունի, բնահատկությունը մարտիրոսություն էր, կատարվում էր աստուծու, եկեղեցու և նրա քարոզած գաղափարների համար, միջնդեռ ըստ աշխարհիկ վեպի. բնահատկությունը քաջազործություն, կտրճություն է պատերազմի մեջ երկրի և նրա թագավորի համար։

4. Իրրև պատմությանը տղրյուր։—Մի անգամ որ Փավստոսի շնորհ Պատմությունը ծագում է գլխավորապես ավանդական զրույցներից ու վեպից, դա ստանում է և՛ պատմական, և՛ պոետիկ տրճել։ Նա մեր միակ հնագույն մատենագիրն է, որի գրվածքի մեջ, որովհետև սա ծագում է ֆոլկլորից, ընդարձակ չափերով անդրադարձած է մեր ժողովրդի, առանձնապես ազնվականության ներքին կյանքի իրական պատկերը, նրա բարոյական, կրոնական ու քաղաքական հայացքն իրերի վրա, նրա բնավորության որոշ գծեր, հայրենասիրությունը, սոցիալական վիճակը, նույնիսկ մեղսությունը, կենցաղը, հավատալիքներ և այլն։ Փավստոսի պատմած ամեն մի միջոցապ ներկայացնում է այդ կյանքի շատ կողմերը միաժամանակ։ Այնտեղ տեսնում ենք աշխարհական ու եկեղեցական իշխանությունների, ազնվականների ու թագավորի հարաբերությունները, բնականական հարաբերություններ մոտիկ ազգականների միջև, թագավորի անսահմանափակ իշխանությունն ամեն բան անելու, նույնիսկ իր անմեղ մերձավորներին կոտորել տալու տառնց որևէ դատի, ամեն տեսակի ջարդություններ և նմաններ, որոնք մանրամասնորեն ուսումնասիրված են ներքևում, հաջորդ՝ Պար-

¹ Օրինակ՝ Գ. պր. 5-րդ գլխի մեջ պատմում է, թե Արշակը Ներսեսին առանձին նախարհների հետ ուղարկում է կայսեր մոտ, որը Ներսեսին աջարում է, իսկ մյուսներին Արշակունի պատանդների հետ արձակում է և խոստանում։ Ետևից դնում է ամբողջ հինգ գլուխ (6—10) Ներսեսի աջարի և զանազան եկեղեցականների մասին, և ապա 11-րդ գլխում նորից դառնում է զանապետության պատմությունը և կրկնություն մեջ բնկնում։ Ետև պարզ է, որ ապա 11-րդ գլխին անմիջապես շարունակություն է 5-րդ գլխի, և որ կրկնություններն առաջացած են մեկ տեղում հաջորդած զրույցների պատճառով, որ եկեղեցականներին են վերաբերում։

սից պատերազմա հասկածի մեջ, Միւս կողմից՝ բերված են, ըստ ժամանակի հասկացութեան, իսկական բարեպաշտական տեսաբաններ, սրբակյացների մասին հրաշալիատուներ, այլև անունով լիկ քրիստոնյա, խաբարա, ավագակ ու խնդկատակ եպիսկոպոսների մասին պատկերներ, այն էլ չափազանց ուժեղ գծերով, որոնք անգրադարձել են իրական կյանքը (Ձ, 8, 9, 10)։

Մինչդեռ ներքին կյանքի ուսումնասիրութեան համար կարելի է ազատ կերպով օգտվել Փափսոսի ընծայած բազմակողմանի հարուստ նյութերից, նույնը կարելի է ասել անձերի ու դեպքերի, եղելությունների վերաբերմամբ։ Անտարակույս, այդ երկի մեջ կան շատ պատմական անցքերի նկարագրեր, բայց այնքան և այնպես, որքան և որպես ամեն մի պատմական երգի ու վեպի մեջ, Դա մեծ մասամբ պատմությունն է, այլ բանաստեղծություն, ուստի ստեղծագործությունը մեծ տեղ ունի դրա մեջ. պատմվածքի պատմաների հիմքը միայն, այն էլ ոչ միշտ, պատմական կարող է լինել։ Հետևաբար կարելի է անվերապահորեն օգտվել նրանից, իբրև մի պատմական ստույգ աղբյուրից, ինչ որ պատմական անձերին ու եղելություններին է վերաբերում։ Ինչպես երբեմն վարվում են վերջերս, երբ Փափսոսսի արժեքը մեծացած է։

Տեսնել այս գրքի վերջում դրված նրբորդ հավելվածը՝ «Փ. Բուզանդի Հայոց Պատմութեան առաջին և երկրորդ դպրությունների խնդիրը»։

Այլև Զորորդ հավելվածը՝ «Պարսից Պատերազմ վեպի պատմականութեան խնդիրը»։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊ

«ՊԱՐՍԻՑ ՊԱՏԵՐԱԶՍ»

1. «Պարսից պատերազմը»։ — Հին հայ ժողովրդական վեպ տնվան թակ սովորաբար հայտնի է Մ. Խորենացու Հայոց Պատմութեան մեջ եղած Վիպատանությունը հնագույն ժամանակի հերոսների մասին։ Այդ, ինչպես տեսնե՞ք, մասամբ առասպելներ են, մասամբ և առասպելախառն վեպ, որի մեջ պատմական հիշողությունները հասնում են մինչև մեր թ. 2-րդ դարը։ Հայ ժողովուրդն ունեցել է իր ավանդական վեպը և հետագա դարերի մասին ևս, Դա «Պարսից պատերազմն» է։ Այսպես կոչվում ենք մեր երկրորդ հին վեպը, օրովհետև դրա մեջ բանաստեղծորեն պատմված է եղել այն մեծ ու երկարատև պատերազմը, որ զարեւր շարունակ մղել են հայերը պարսիկների դեմ իրենց անկախութեան համար։ Այդ վեպի հատվածները մնում են Ազատագրողների և Բուզանդի մեջ գտնում ենք մեր այդ վեպի ամբողջությունը, իհարկե ուրվագծով միայն և ոչ անպատճառ այն կարգով, որով պատմվել է ժողովրդի մեջ։ Խորենացին ու Սեբեոսը լրացուցիչ հատվածներ կամ պատմվածներ միայն ունեն։

2. Պատմական գործընթացը և պատմական մեթոդը։ — Մեր այս վեպն ևս Ֆեոդալիզմի բանաստեղծություն է, Դա ծագել և զարգացել է 3—5-րդ

դարերի քաղաքական ու սոցիալական պայմաններում Դրո հիմնական մասը 3-րդ և 4-րդ դարերի պատմական իրականությունն է։ Պատմական են գործող անձերը մասամբ, որոշ եղբուրթյուններ և ընդհանրապես հասարակական կյանքի ձևը։ Այն դարերում տնտեսական-հասարակական կազմակերպությունը, արտադրական հարաբերությունները Հայաստանում անհասարակ նույնն էին մնում, ինչ որ նախորդ շրջանում։ Իշխում էր համեմատաբար ավելի զարգացած ավատականությունը, որի հիմքը, ինչպես ուրիշ տեղերում, կազմում էին բնական տնտեսությունն ու խոշոր հողատիրությունը։ Երկիրը բաժանված էր մեծ ու փոքր ազնվականների միջև, որոնք իրենց կալվածներում տեր ու տնօրեն էին, բայց և ենթարկվում էին իրենցից բարձր իշխաններին։ Թագավորող հարստությունն էր Արշակունին, նույն տոհմը, որ Պարսկաստանում ևս իշխում էր մինչև 226 թ.։ Ուստի հողատերերը, սակայն, հաճախ ընդվզում էին թույլ կենտրոնական իշխանության դեմ։ Թագավորներն էլ իրենց կողմից մաքառում էին նրանց դեմ՝ ուստի կենտրոնական իշխանություն կազմելու համար։ Բայց տալ ղեկավար էր պուռն բերել Հայաստանի պես մի երկրում, որ աշխարհագրորեն կազմված էր տարբեր ու փակ մասերից և ունեւր բնական տնտեսություն։ Երկրի եզերային մասերը միշտ հակված էին դեպի դուրս և հեշտությամբ ենթակա հարևան տերություններին։

Երբ Պարսկաստանում 226 թ. տեղի է ունենում Թագավորող հարստության փոփոխություն, երկու իշխող տները, Արշակունին Հայաստանում և Սասանյանը Պարսկաստանում, անհաշտ կերպով իրար դեմ են ելնում դարավոր թշնամությամբ և պատերազմներով։ Բացի այդ՝ Հայաստանն իրենց ազդեցության կամ գերիշխանության տակ թանելու համար՝ երկաթափայտ զատերազմներ են տեսնում երկու հարևան մեծ տերությունները՝ պարսկական ու հռոմեական։

Սասանյանների օրով հայ Թագավորական տան կողմնորոշումն Արևելքից շուտ է դալիս դեպի Արևմուտք, իսկ երբ հայերը քրիստոնեություն են ընդունում, առաջ է գալիս մի նոր ուժեղ հողատեր—Եկեղեցին իր վանքերի կրոնավորներով ու գյուղական ցամաքներով, իր եպիսկոպոսներով ու կաթողիկոսով։ Եվ այսպես կազմվում են Հայաստանում միջնադարյան ֆեոդալիզմի երեք դասերը՝ ազնվականություն, եկեղեցականություն ու շինականություն։ Դրանցից եկեղեցականությունը հետզհետե ավելի զորանում է և քրիստոնյա Արևմուտքի հետ բարեկամություն պահում։

Այս ընդհանուր դրություն հետևանքով երկրի ներքում մի կողմից՝ կոիմեր էին տեղի ունենում կենտրոնական իշխանության և ապստամբ նախարարների միջև, մյուս կողմից՝ հաճախ նախարարներն էլ միմյանց դեմ կռվում էին ոչ միայն խաղաղության քննարկով, այլև երբեմն իսկական պատերազմներով։ Մի երրորդ կողմից էլ իրար դեմ էին կանգնում պարսկասերների և հուստասերների կուսակցությունները։ Այս ամենով և վերջապես հայ-պարսկական և հուստ-պարսկական անվերջ պատերազմներով.— որոնք հաճախ Հայաստանում էին տեղի ունենում և մեծ նշանակություն են ունեցել բոլոր սոցիալական խավերի համար.— այլև հյուսիսային ազգերի կրկնվող ասպատակություններով, աշխարհը ենթարկվում էր հաճախակի ցնցումների ու վալրիվերում-

ներին Եվ այս ամենը, այս ընդհանուր գրութիւնն առաջ է բերում պատմական ավանդութիւններ՝ երգեր ու գրույցներ կտտարված գեպքերի ու փոփոխութիւնների շուրջը, և կազմվում է երկրորդ հայկական Վեպը, իսկապես երկրորդ ավանդական Վեպի պատմութեան մի ցիկլ, որի էական ինդիքն է քաղաքական անկախութեան համար պայքար ընդդէմ պարսիկներին, Դրամիջ, հորկավ, ինչպես վեպերի մեջ խոստովանալ լինում է, նշանավոր պատմական տնձերի վրա տավում են նաև ստեղծական տարրեր և ընդհանուր վիպական ընամբողութիւն ունեցող մոտիվներ, բայց խորը պատմական իրականութեան փոփոխութեան վրա, Եվ ահա, ինչպես վերևում էլ նշվեցին մի քանի ցիկլներ, մեր առաջ պարզվում է ֆեոդալական գրութիւնն իր շատ փոփոխութեամբ, արտաքին հարձակումներ, ներքին խռովութիւններ, թագավորից ապստամբութիւն, նախարարների և նույնիսկ թագավորի ներքիններին, ապստամբ տոհմերի կտորած խորամանկ ու խաբեական միջոցներով և երկնազանցութեամբ, արյան վրեժի գրութիւն, նոր ազնվականութեան կորուստ թագավորական հրովարտելով՝ դուռեր և այլ կալվածներ տալով նրան ի ժառանգութիւն, ավարտութիւն և այլն, Բոլոր ֆեոդալական դարաշրջանին հատուկ իրականութիւն:

Մի հատկանիշ. որով այս երկրորդ հին վեպը տարբերվում է առաջինից, դա այն է, որ այստեղ պակասում է հրաշալին, գերբնականը, Գործող տնձերը, թեպետ հերոսական ընամբողութեամբ, բայց մարդիկ են, Ձկան հին առասպելները վիշապների մասին, Նյուքին ընդհանրապես շատ ավելի պատմական գույն ունի, մոտիկ է իրական պատմութեանը, քան Վեպաստեղի մեջ: Դրա պատճառն այն է, որ պատմագիր Բուզանդը, որից դիտենք այս Վեպը մեծ մասամբ, կատարելապես արհամարհում է հեթանոսական առասպելականը, Ուստի եթե եղել են հրաշալի պատմականներ, նա դրանք չի տեսնում իր Պատմութեան մեջ: Բայց որ գլխավորն է՝ այս պատմական Վեպի երգերն ու գրույցներն իրենց գրվելու ժամանակ՝ երկար դարեր չեն ապրած եղել այն գեպքերից ու տնձերից հետո, որոնց վրա հորինված են դրանք, Որքան Վեպի մեջ հիշված գեպքերն ու տնձերը ժամանակով, ավելի մոտենում են մեր դարին, այնքան ավելի իրական, պատմական են նրանք: Եվ այս հասկանալի է, թե ինչու Վեպի այդ մասերը պակաս ժամանակ ապրած լինելով, պակաս էլ ենթարկված են ավանդական վեպի համար սովորական փոփոխութիւններին, աճումների ու հարակցութիւնների և, այսպես ասած, առասպելականացմանը, Բայց և այնպես այդպիսի վերջին մասերն անգամ ոչ թե իրական պատմութիւն են, այլ վիպական բանահյուսութիւն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խոսքով և Տրդատ:— «Պարսից պատերազմի», ինչպես մեր Վասնու Մոսերի, սկիզբը կապված է նոր տոհմերի ծագման հետ, մի կողմից՝ Հայոց Մամիկոնյան սպարապետութեան, մյուս կողմից՝ Պարսից Սասանյան հարսապետութեան: Հայ Արշակունիներ և Սասանյաններ մեջ սկսվում է մի մեծ

կոխել, որ տեսւմ է մի քանի սերունդներ՝ Խորով Մեծ, Տրդատ, Խորով
Կոստակ կամ Փռքը, Տիրան, Արշակ, Պապ, Վարդգայտ և Արշակ, Կովի սգին
եղիլ են սպարապետները, որոնց մի քանի սերունդներ երևան են գալիս
սկսած Մամիկոնյանների ծագումից, — Մամիկ-Կոնակ, Արտավազդ, Վաչե,
(Արտավազդ և) Վասակ, Մուշեղ և Մանուել, Վեպր վերջնում է Մամի-
կոնյանների հաղթանակով և փառքով, Տեսնենք այս Վեպրի սերունդները
կամ, մեր այժմյան վեպրի բուռով, ժողովրդին առանձին-առանձին, որով և
մոտավորապես կվերականգնվի Վեպրի ընդհանուր բովանդակությունը։ Ամեն
մի ճշուշը հորինված է մի շարք գեղեցիկ դրվագներով, որոնք պատմված
են վիպական մանրամասնությամբ։

Սկզբնական գրությունն այն է, որ միևնույն պարթևական տոհմը թա-
ղավորում է և՛ Պարսկաստանում, և՛ Հայաստանում, և այդ երկուսի մեջ իշ-
խում է բարեկամությունը։ Այն ժամանակ տեղի է ունենում Մամիկ-Կոնակի
դիպվածը։ Սրբա, Կարաբլեկ, Հանակա՛ն Երանգը առնից, թագավորի ներ-
քույրի որդիք, Մամիկ և Կոնակ, գծավելով ապստամբում են շենաց թա-
ղավորից, որ իրենց համամայր եղբայրն էր, բայց հաղթվելով՝ ապստա-
նում են Պարթևաց Վաղարշի որդի Արտավան թագավորի մոտ, որ Հայոց
Վաղարշի որդի Մեծն Խորով թագավորի ազգականն էր։ Արտավանը, որ-
պեսպի իր և շենաց թագավորի մեջ խաղաղությունը չվերջովի և միանգա-
մայն իր երգոված պահած լինի, նրանց իրենց աղիով ուղարկում է Խորովի
մոտ՝ Հայաստան։

Մինչ Հայոց թագավորը (Տրդատ՝ ըստ Խորենացու պատումի)՝ պատե-
րազմում էր հյուսիսական ազգերի դեմ, այդ ժամանակ Երանից ազատմբում
են Տորոնի Ողակա՛ն ամրոյի ուրբը, Սիլուսիների Սղակ Կառապետը, և Սիմ
լեռան քնակիչները։ Թագավորը խոստանում է նրան տալ Սիլուսիների
իշխանությունը, ով իր մոտ կրեք Սիլուսիների նահապետին, Մամ-Կոնը
(ըստ Խորենացու պատումի) խաբերալությամբ սպանում է Սղակին, և թա-
ղավորը նրան է տալիս Սիլուսիների կալվածները և նախապես կարգում
նրանց։ Այսպես երկու եղբայրները հաստատվում են Տորոնում և Սիմ լե-
ռան վրա։ Նրանց ամբողջն է Ողական, նրանց սերունդը, Մամիկոնյանները
ողաւնում են մեծ ազդ, այն է՝ Հայոց ռաբարապետներն։

Վեպր՝ ախալեհան անցնում է ռաբարապետների վարած Պարսից պա-
տերազմի ծագման պատճառին, մի իսկական վիպական պատմվածքով, Վա-
ղարշի որդի Արտավանը գիշերն անկողնում ասողերին նայելով իմանում է,
որ ով ապստամբի իր ամբողջը՝ կթագավորի, և այդ մասին նա հայտնում
է իր թագուհուն, Արտաշուխտը, Մասանյան Արտաշրի սիրելին, որ իրեն
նաժիշտ նույն ննջաբանումն էր պահվում, լսելով թագավորի ասածը՝
խաղնում է Արտաշրին, և սա ապստամբում է Արտավանից, կովելով հաղ-
թում, սպանում է նրան, և տեղը թագավորում ինքը՝ Մասանյան Կարապե-
թյան հիմնադիրը։ Դրանով փոխվում է սկզբնական կացությունը։ Սկսվում
է վեպրի շարժումը, իրադարձությունները, մի կացությունից անցումը մյուսին։

Ինչպես պիտի վերաբերվի այդ փոփոխությանը և լինչ պիտի անի
Հայաստանի Արշակունի թագավորը։— Ահա մի հարց, որ արդիական մեծ
նշանակություն է ունեցել ֆեոդալական դարաշրջանում, երբ իշխող տները

ազդակցութեան առանձին կարեւորութիւնն է արվելիս եղելու— Այդ փոփոխութեան տնօրէնական հետեւանքը լինում է այն, որ հայաց քննարկը իր ազդակներն ունենէ և ուղղում, բայց չի կարողանում. և ապա երբ Արաւմանը սպանվում է, նա սկսում է իր վրեժխնդրութեան տառնալու կոնֆլիկտը: Նա Արաւմանի մահվան վրեժն տունելու համար՝ արշավում, հասնում է մինչև Տիգրոսի դռները.

Աւար առեալ զերկիրն ամենայն՝
Յապակաւութիւն վարձուցանէր
Ջրնանիսա քաղաքացն,
Եւ աւանացն ցանկալեաց.
Ջէն երկիրն ամենայն՝
Թափուր և աւերակ թողոյր:

Պարսից թագավորը չի կարողանում նրան դիմադրել և պարտվելով փախչում է.

Փախտաւայ լինէր առաջի նոցա,
Ջհետ մտեալ կոտորէին
Ջամնայն զօրսն Պարսից,
Եւ դաշտացն և ճանապարհացն՝
Յիր զիաթաւալ կացուցանէին,
Եւ չարախտավար վատնէին,
Եւ անհնարին հարուածս
Ի վերայ հասուցանէին:
Եւ թագաւորն Հայոց դառնայր ի մեծ կոտորածէն,
Մեծաւ յաղթութեամբ,
Եւ բազում աւարաւ,
Եւ ցնծալից ուրախութեամբ,
Ի կողմանսն Հայոց յԱյրարատ գաւառ,
Ի Վաղարշապատ քաղաք,
Մեծաւ ուրախութեամբ,
Եւ բարի անուամբ,
Եւ բազմեւ աւարաւ:

Ազաթ. էջ 10 և հաւն.

Նվ այսպէս տաքը տարի ստեղ ստեղ աւար առեալ աւերէին զամենայն երկիր սահմանացն, որ ընդ պարսից թագաւորութեամբ և իշխանութեամբ էր:

Պարսից թագավորը նեղն է ընկնում և կապի մեջ չկարողանալով բռնանել հայերին, խորհրդի է կանչում իր մեծամեծներին: Պարթև Անուկը դալիս է Հայաստան, դավաճանութեամբ սպանում է Խոսրովին, բայց ինքն էլ իր քորը ընտանիքով սպանվում է: Պարսից թագավորը որ լսում է Խոսրովի մահը, զգուշանալով, զուարթանալով, աօն մեծ ուրախութեան

տանէր զօրն զայն. և բազում ուխտ ատրուցանացն առնէրն: Եւ զորք է ժողովուրդ, զալիս Հայաստան, տիրում, դերում: Կռառում է հայոց թագավորական տունը:

Բայց զբանով ամեն քան չի վերջանում: Խոսքովի որդիներից Տրդատին, ժամնկիկ մի փոքրիկ, հունական կողմերն է փախցնում Արաւովազդ Մամիկոնյանը, իսկ Օտաւ Ամատունին Տրդատի քրոջը, Խոսքովի դստին, պահում է Անի ամրոցում: Ապա մի իսկական վիշապի մեջ պատմը վում է, որ Արաւովազդը դայակ լինելով մեծացնում է մանուկ Տրդատին, որը հաղթանակում հսկա զառնալով՝ ծառայում է Հիկիանոսի մոտ, շատ քաջազործութուններ է անում և անգղութուններ ունենում: Վերջը նա կայսրի փոխանակ մենամարտելով Դոթաց թագավորի հետ՝ հաղթում է նրան և հռոմայեցիների օգնութամբ զալիս, թագավորում է Հայաստանում, կովում է պարսիկների դեմ, և Քանդերը գլխն վրիժուց իւրոց հայրենացն:

Խաղաց գնաց թագաւորն ի կողմանս Հայոց.

Եւ եկն, եգիտ անդ զօրս բազումս Պարսից,

Զի զաշխարհն յինքնանս գրաւեալ էին ի Ժառայութիւն:

Զբազումս կռառէր,

Եւ զբազումս փախստականս արորեալ՝

Ի կողմանս Պարսից արկանէր.

Եւ զհայրենեաց տէրութիւնն յինքն նուաճեաց,

Սւ զօրացաւ ի վերայ սահմանաց նորս:

Ազաթ. էջ 29.

Հայաստանին տիրելուց հետո էլ նա միշտ պատերազմում է և միշտ հաղթում պարսիկներին: Ապա վեպի մեջ պատմված է եղել Տրդատի ամուսնութունը և հետո՝ նրա ու զեղեցիկ Հուսիսիմի դեպքը և վերջապես՝ Տրդատի պատերազմը հյուսիսականների ու պարսիկների դեմ և նրա զոհաբանութան երգը (Ազաթ. Հատ. 123, էջ 71 և հա.).

Իսկ թագաւորն Տրդատ՝

Զամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեանն՝

Աւերէր, քանգէր զերկիրն Պարսից թագաւորութեանն

Եւ զաշխարհն Ասորեստանի,

Աւերէր և հարկանէր ի հարուածս անհնարինո:

Վասն այսորիկ պտառաճեցան բանքս տյս

Ի բանս կարգի առականց,

Թէ՛ ժերբեւ զՄէգն Տրդատ,

Որ սիգալովն տւերեաց զթումբս գեաց,

Եւ ցամաքեցոյց իսկ ի սիգալն իւրում զյորձանս ծովուցն:

Վասն զի սէգ իսկ էր առ հանդերձս,

Եւ այլ ուժով պնդութեան, հարստութեամբ,

Բուռն ռկերօք և յաղթ մարմնով,

Քաջ և պատերազմող անհնարին.

Բարձր և լայն հասակաւ:

Որ զամենայն ժամանակս կենաց իւրոց պատերազմեալ,

Եւ առնէր մարտիցն յաղթութիւն:

Մեծ անուն պարծանաց քաջութեան անձին ստանալը,

Եւ զհոյակապ շքեղութիւն յաղթութեան

Ընդ ամենայն աշխարհ կացուցանէր:

Հարկանէր ի հարուածս զթշնամիսն,

Եւ խնդրէր զքէնս վրիժուց իւրոց հայրենեացն:

Ասոյր աւար թագուս ի կողմանցն Ասորոց,

Եւ թափէր կապուտ սաստիկ անհնարին ի նոցանէն:

Արկանէր ի սուր զգօրս Պարսից,

Եւ թափէր կողոպուտ անհնարին:

Լինէր առաջնորդ առն և ձիոյ զօրացն Յունաց,

Եւ մատնէր նոցա զբանակս նոցա:

Հանէր զգօրս Հոնաց սաստիկ յոյժ,

Եւ գերէր զկողմանս Պարսից:

Այստեղ վերջանում է վեպի առաջին մասը: Հայրն ընկալի, բայց որդին հաղթեց և վրեժն առաւ: Հերոսական պատերազմը վճռվեց հոգուտ Արշակունի տոհմին:

2. Խօսքով Կոտայի և Վաչեի Յշաղը նախորդի հետ կապվում է միայն հոր և որդու հաջորդությամբ: Պարսիկ Կոտայի օրով պարսկները երեք անգամ հարձակվում են Հայաստանի վրա և ամեն անգամ սոսկալի պարտություն կրում: Հայերը կոտորում են բոլորին:

Եւ տեսին զօրսն Պարսից,

Ձի ոչ գոյր թիւ բազմութեանն.

Ձի էին իբրև գասաեղս երկնից,

Եւ իբրեւ դաւաղ առ ամն ծովու.

Ձի եկեալ էին անթիւ փղօք և անչափ զօրօք:

Եւ սոքա [հայք] հասին անկան ի վերայ բանակին...

Հարին, սաստակեցին, կոտորեցին,

Եւ ոչ թողին ի նոցանէ և ոչ մի:

Եւ թափէին աւար բազում, զփիզսն,

Եւ զամենայն ոյժ զօրութեան նոցա:

Բուք. Գ. 8.

Թագավորը Վաչեի ձեռով տնկել է տալիս Պարսկականերտի անտառը, կոտորել է տալիս միմյանց հետ պատերազմող և երկիրը խռովող նախարարներին: Պարսկները չեն դադարում Հայոց թագավորի դեմ պատերազմելուց: Հայոց արքայի զորքն էլ միշտ զիմառնում է նրանց հենց սահմանի վրա:

Եւ հանապազ կային ի քաջութեան,

Ի մարտ պատերազմի ի սահմանս Պարսից.

Եւ ոչ տալին անխախտ արշաւել,
 Աւերել զերկիրն Հայոց, և ոչ նալել,
 Եւ կայր արքայ ի հանգստի,
 Եւ աշխարհ ի շինութեան և ի խաղաղութեան
 Ձամենայն աւուրս կենաց նոցա:

Թուգ. Գ. 8.

Վեպի մեջ դաժանաւում են Դատարեն Բզնունին և Աղմնիքի բզեղիւր,
 որոնք անցնում են պարսիկների կողմը և ֆնտսում հայերին: Բայց վերջը
 հաղթում է Թազավորն իր հավատարիմների ձեռով, առանձնապես Մամիկո-
 նյան Վաչեի, և պատժել տալիս դաժանների: Նույնպես մագըղների
 արշավանքի սկզբում անհաջողութուն է լինում. զի զորքերը ժողովված
 չէին, և Վաչե զորավարը Հայաստանում չէր: Բայց երբ նա գալիս է և հա-
 վաքում քաջ նախարարներին, այն ժամանակ մագըղների բոլորին կո-
 տորում են, նախ Ելու գլուխ լեռան վրա, հետո Այրարատյան գավառում,
 Օշականի մոտ:

Եւ հասանէր անկունէր ի վերայ բանակին...
 Եւ առ հասարակ ընդ սուր հանին զամենեսեան,
 Եւ ոչ մի ոչ ապրեցուցանէր,
 Եւ զարձուցանէր զբազմութիւն զերեացն:
 Եւ յետ այսորիկ առնոյր զաւարսն,
 Խաղայր, գնայր, երթայր իշանէր
 Ի դաշտն Այրարատեան գաւառին...
 Հասանէին, հարկանէին, սատակէին
 Ջորսն Այանացն և Մագըթացն,
 Եւ Հոնացն և զայլոց ազգացն.
 Եւ լնուին զդաշտն առապարացն
 Առ հասարակ զիակամք մեռելոց՝
 Մինչ զի իբրեւ զգետ յարուցեալ՝
 Երթայր արիւնն անհնարին,
 Եւ ոչ լինէր թիւ զօրացն մեռելոց:

Թուգ. Գ. 7.

Վերջը մարտի մեջ ընկնում է ձերուհի Վաչեն. զորավարության գործը
 հանձնվում է Մամիկոնյան տան փեսաներին՝ Արշավիր Գամարակաւին և
 Անդովկ Սյունուն, որոնք և լիազորված ազատ զարազեալ մանուկ
 Արտավազդին: Իր մահով մեռնում է Խոսրովը, և Թազավորում է որդին՝ Տի-
 բուրը:

Այս ճյուղի առանձին սյուսեանների մեջ կա պիտավորապես ժամանա-
 կական կապ. ուստի զրանք հաջորդում են այսպիսի բանաձևերով՝ «Եւ
 զայնու ժամանակաւ», «այնամ ժամանակին», «և մինչդեռ նա», «բայց յետ»

աշարիկը, ապառն և նմանները, Բայց և այնպես այս ամբողջի մեջ կա մի ընդհանուր ինդիք, Գա ոչ թե վրեժխնդրութեան պատերազմն է, այլ այս ճշուդի մեջ հայերն արդեն իրենց երկրի պաշտպանութեան և տնկախութեան վրա են մտածում: Այլքի է ընկնում իշխանների ապստամբութեանն ու դավաճանութեանը: Բայց Մամիկոնյան Վաչեհն քաջ կռւում է թշնամիների դեմ և թագավորի հովատարիմ նաւում է:

3. Տիրամիկ վեպն ինքն առանձին կազմում է մի վիպական ամբողջութեան: Հայր Մարդաբոյն, հայտնի չէ թե ինչու, կոտորել էր տալիս շատ նախաթարներ, մանավանդ Ռշտունի և Արծրունի տոհմերը: Մահենդակ Ռշտունու Տաճատ որդուն և Վաչե Արծրունու Շապատ որդուն, երկուսն ևս ստնդյա երեսաններ, բերում են թագավորի առաջ, որ հրամայում է նրանց սպանել: Բայց Տիրանի որդի Արշակի դայակները, Արտավազդն և Վասակը, ժողով էին զորավարք ամենայն զորացն Հայոց, վրա հասնելով՝ ուժով ազատում են այդ երեսաններին, և թողնելով իրենց սան Արշակին, նրանց առնում զնուս էն իրենց աշխարհը՝ Տայոց ամուսնները, ուր և մեծացնելով նրանց պսակում են իրենց դուստրների հետ: Եւ նստան անդ ամս բազումս ընտանեօք իւրեանց, և թողին զայլ տուն իւրեանց, այսինքն Տարն, և ոչ խառնէին նոքա ի խորհուրդս Հայոց մինչև ի բազում ամս (Բուդ. Գ. 18):

Այսպես երկպառակութեան է ընկնում թագավորի և իր զորավարների միջև: Շատ գեղեցիկ վիպական դրվագ է Տիրանի և Վարազ Շապուհի հարաբերութեանը: Տիրան թագավորը մի շատ մեծ ու գեղեցիկ ձի ունի, Փիսակ սենեկնակետը, երբ դեսպան է գնում Ատրպատական, այդ ձիու մասին հայտնում է այնպիսի նստող Վարազ Շապուհին: Սա խնդրում է՝ ձին տան իրեն: Թագավորը խնայում է և բոլորովին նման մի ուրիշ ձի ճարելով՝ այդ է ուղարկում Փիսակն այդ մասին հայտնում է Վարազ Շապուհին և նրան դրողում է Տիրանի դեմ: Վարազ Շապուհը թշնամեցում է և խաղաղութեան ժամանակ Հայաստան դալով իբրև բարեկամ, հյուրասիրում է թագավորին, և նրան, որ անպաշտպան էր, սաստիկ հարձակ ժամանակ, դավադրութեամբ բռնում են, կռւարցնում ու զերի են տանում Պարսկաստան: Այդ տեղի է. ունենում այն պատճառով, որ թագավորի մոտ չէին զորավարները, նախարարներն ու զորքերը:

Եւ ի ժամանակին յայնմիկ,

Այնպէս զիպեցաւ յայնմ ժամանակի,

Զօրավարքն չէին տնդ.

Այլ սարտուցեալ էին.

Եւ այլ մեծամեծք նախարարացն,

Եւ աւագ տանուտէրք, ազատանին,

Սոյնպէս և զօրքն արքունի,

Յիւրաքանչիւր տունս, յիւրաքանչիւր կայանս,

Յիւրաքանչիւր դադարս դադարեալ էին:

Եւ ոչ սք էր՝ որ անացեալ էր առ թագաւորին,

Եւ ոչ զունգ և ալրեմի.

Բայց միայն սակաւ սպասաւորք հանդերձ,

Եւ որոտցն պառականոք,
Եւ ռահիբրայ մարդկան,
Եւ խառնազանջ խորանապահ զօրուն,
Եւ ռամիկապաս զօրօքն,
Եւ Տիկնաւն հանգերձ,
Եւ արքայօրդին մանուկն Արշակ:

Բուգ. Գ. 20.

Երբ նախարարները, իշխանները և գործակալներն իմանում են թա-
գաժօրի գերվելու եղիւթյունը, ժողովվում են, պատրաստվում, ընկնում
են թշնամու ետեքից, Թեպետ չեն հաւանում նրան,

Սակայն հասանէին, առնուին
Զկողմ ի Պարսից աշխարհէն,
Առ հասարակ մարդակոտոր առնէին,
Եւ զշխարհն յայրեաց և յաւար զարձուցանէին:

Ապա Տիրանի գերության վրեժն տոնում են պարսիկներէից: Մամի-
կոնյանների փոխանակ զործում են նրանց փեսաները, Անդուկ Սյունին և
Արշավիր Կամսարականը, որոնք հռոմայեցոց կայսրին օգնության են բե-
րում, սոսկալի պարտություն հասցնում պարսիկներին:

Ապա հասեալ ի տուրնջէն ժամուն,
Անկանէին ի վերայ թագաւորին Պարսից,
Ընդ սուր զամենայն բանակն հանէին,
Եւ ոչ գմի ոչ ապրեցունցանէին:
Եւ տօին զկապուտ զաւար բանակին,
Եւ զկանայս թագաւորին և զբամբիշն,
Եւ զրանսկան ընդ նոսին,
Եւ զինչս և զտաքոցուծս նոցին,
Ընդ նմին ի գերութիւն վարէին,
Զկանայս նոցա և զգանձս,
Եւ զկանս և զկազմած նոցա:
Բայց միայն թագաւորն յործեալ մազապուր,
Պէշտապիկ մի սուրհանդակ առաջի,
Պրծեալ ելանէր փոխստական.
Հազիւ ուրեմն կաբէր
Անկանել, հասանել յաշխարհ իւր:

Բուգ. Գ. 21.

Վարազ Շապուհը պատժվում է, Տիրանն ազատվում է, և թագաժողովում
է Արշակը, Պապերազմը վճռվում է դարձյալ հօգուտ Արշակունիների:

4. Արշակի ու Պապի և Վասակի ու Մուշեղի ճյուղերը կազմված են

նույն ցիկլին պատկանող, իրենց մեջ փոքր ամբողջություններ կազմող մի քանի վեպերից: Դրանցից առաջինը կարելի է կոչել «Արշակ ու Ներսես», որի մեջ դորեզ կերպով է ներկայացված կրոնական ազդեցությունը: Արշակի առաջին գործը լինում է հաջորդել Մամիկոնյանների հետ Սրառնով նրա վեպը կառավում է Տիրանի վեպի հետ, որի սկզբում է ինչպես տեսանք, պատմվում է: Թե Մամիկոնյանները խռովում, հեռանում են արքունի բանակից, Կարգավորվում են և մյուս նախարարութայունները, և կաթողիկոս է ընտրվում Ներսեսը:

Այս Արշակը Ներսեսի գլխավորությամբ դեսպանություն է ուղարկում Վաղես կայսրի մոտ: Սա Ներսեսին արգելում, աջորդում է և նրա փախանակ արձակում է Արշակի եղբորորդիներին՝ Գնելին ու Տիրիթին: Դրա վրա բարկանում է Արշակը: Նա Վասակ գործադարի ձեռով մոտ 260,000 զորքով վեց տարի շարունակ ավերել և ավարել է տալիս հոռմանական կողմերն առանց որևէ դիմադրության:

Հարկանէր, աւար առնոյր զկողմանս Գամբաց,
Մինչև ի քաղաքն յԱնկուրացոց.
Զվեց ամ զմիմեանց զհեա՝
Աւերէր զաշխարհ սահմանացն Յունաց:
Լցան աւարաւ բազմաւ և զէսզէս մեծութեամբ:

Ռուգ. Գ. 11.

Նույն միջոցներին, Ներսեսի բացակայության ժամանակ, թագավորը շինում է Արշակավանը, Հայր Մարգարեի դրամամբ կոտորել է տալիս նախարարներին, որոնց մեջ և Կամարականներին: Այս պատմվում է: Թե ինչպես Ներսեսի անեծքով ավերվում է Արշակավանը, և Շավառ Արծրունին սպանում է Հայր Մարգարեին: Այս վերջին գլխավորում էս այս պատումը կառավում է Տիրանի ճյուղի հետ, որ սկսվում է Ռուգանդ Գ. 18. գլխով: «Յաղագս Հայր Մարգարեի, որ տայր կոտորել զազգս նախարարացն», որոնց թվում, և Արծրունիներին:

Մի առանձին պատում է «Արշակ և Փառաճման», որի մեջ պատմվել է Գնելի սպանումը, Արշակի ամուսնանալը Փառանձմանի հետ և Փառանձմանի ու իր հայր Անդրկի կատարած դերը Շապուհի և Արշակի հարաբերությունների ժամանակ:

Այս մի առանձին վեպ է, բազմաթիվ միջադեպերով, նաև նրեմատյա պատերազմը, որի հետևանքը լինում է Արշակի, Վասակի և Փառանձմանի եղբրական վախճանը և Հայաստանի ավերումը: Հետո գալիս է վրեժխնդրությամբ պատերազմը:

Հայոց թագավորության ժառանգը, Պապը, որ հույների մոտ պատանդ էր, Վասակի որդի Մուշեղի ջանքով գալիս է իր հոր երկրին թագավորելու հույների օգնությամբ: Նրկու հույն զորավար նրա հետ են՝ 600 բյուր, որ է վեց միլիոն զորքով: Մուշեղ սպարապետն ևս ժողովում է Հայոց զորքը և ինքը մենակ սպանում պարսից երկու զորավարներին, իրենց զորքերով, և

«Ժինչև ի բուն ի սահմանսն ի Գանձակ Աորպտաականի դերկերն յիւր վառ-
րեալ ունէրն: Շապուհ թագաւորն անձամբ գտլիս է հայերի վրա և բռնակ
դնում Քաւրեղոս: Մուշեղն ընկնում է նրա բռնակի վրա և կոտորում:
Շապուհը միտձի փախչում է իր բռնակն ու գանձերը և կանանց թողնելով
Մուշեղի ձեռնն, որ մեծ ազնվությամբ է վարվում գերված կանանց հետ:
Մուշեղին ամբաստանում են Հայոց թագաւորի մոտ, թե արձակեց թշնամի
թագաւորի կանանց: Պապի սրտի մեջ կասկած է ընկնում զեպի Մուշեղը:

Կրկին անգամ կալի է գալիս Շապուհ արքան: Այս անգամ Պապը չի
ուզում, որ Մուշեղը կռիվ մտնի, ասելով. Բարեկամ է Մուշեղն թագաւո-
րին Պարսից և այժմ էլ «Ե պարսկա խօսի»: Նա կասկածում է Մուշեղի
վրա, որովհետև կալի նախընթաց դիշերը Մեհրուանից, պարսից բռնակից,
պատգամաւորներ էին եկել Մուշեղին: Բայց միջնորդում է Ներսեսը, և Մու-
շեղը երգվելով՝ գնում է կռիվ, հաղթում պարսիկներին, միայն Աղվտից
Ունտայր թագաւորին, թիպես և կարող էր նրան սպանել, չի սպանում, այլ
արձակում է: Դարձյալ ամբաստանում են Մուշեղին, թե նա թշնամի թա-
գաւորին արձակում է և թե Հայոց թագաւորին սպանել է ուզում: Մու-
շեղն արդարեանում է: Նորից հարձակվում է Շապուհը. բայց Մուշեղը և
հույները դարձյալ հաղթում են, և պատերազմը դադարում է:

Այնուհետև գալիս է ապստամբ իշխանների պատիժը. սրոնք Արշակի
ժամանակ պարսից կողմն էին անցել: Ամենից առաջ պատժվում է, նույն
խնկ կռիվների ընթացքում, Հայր Մարգարէսը, որ Փառանձեմ թագուհուն
անպատվել էր. տեղը նշանակվում է Գլուխ անունով մեկը: Սա Հայոց թա-
գաւորին դաժանանել է ուզում, բայց ընկնում, նույնպես պատժվում է: Ապա
կարգով պատժվում են և մյուս ապստամբները, որոնց թվում և Աղձնիքի
ըզնշխը, որ իշխանների մեջ ամենից առաջ ապստամբողն է եղել: Եվ այս-
պես Մուշեղը փառավորված՝ վարում է իր ապարադիսությունը: Սակայն
երկար չի տևում Մուշեղի փառքը: Պապ թագաւորը դաժանությամբ սպան-
վում է հույներից. իշխանները ոչինչ չեն անում. թագաւորում է Վարդ-
դասը, որ «մանակ բանսերթուկն է: Բայտ Սահառունին, Վարդգեսի դա-
յտը, ամբաստանում է Մուշեղին նրա չղործած հին մեղքով. և դաժանա-
նությամբ ընթերցի ժամանակ սպանել տալիս Մուշեղին և ինքն աւանդ
ապարադիսությունը: Այսպես չար հատուցումն է լինում Մուշեղին «Ե վե-
րայ բողոքում վտասակացա:

5. Մտնելիք Յուդալը:— Մանուելն իր եղբոր հետ ազատվում է պարսից
գերությունից. Բառից խլում է ապարադիսությունը. կռվով հաղթում Վա-
րդգեսին, սպանում է Բատին՝ իր եղբոր վրձն առնելով: Որովհետև իր
արարքները հույներին հակառակ էին, ուստի նա սկզբում բարեկամանում
է պարսիկներին հետ, բայց հետո Մեհրուածանի քաղաքում կոտորում է պար-
սիկ Սուրենի զորքերին, որով և կռիվ է սկսվում հայերի ու պարսիկների
մեջ: Երեք անգամ հարձակվում են պարսիկները, բայց միշտ հաղթվում են:
Սպանվում է վերջապես գաժանա Մեհրուածանը, և վերջ է դրվում Պարսից
պատերազմին: Մանուելը՝ թագաւորեցնելով Պապի որդի Արշակին՝ յոթ
տարի փառքով իշխում է և խաղաղությամբ մեռնում:

1. Լացի ու կոծի երգեր:— Տեսնենք նախ, թե որոնք են այն սկզբնական տարրերը, որոնցից օգտվել են վիպասանները մեծ վեպերի համար, ինչպես են՝ «Վիպասանք», «Պորսից պատերազմ», Առաջին կարեւոր տարրը, որ ծագել է կոնկրետ դեպքերի ազդեցութեան տակ, դա «լալեաց բանաստեղծութիւնն» է, որ հորինուած և ասուած էին մեծերէրի հուզարկավորութեան կոծն տնկելու ոգրասաց կանայք: Արանք կոչվում էին ճայմաքնու, անշուշտ, մեծերի վրա հալուած համար: Հնուէն նշանավոր մարդկանց, թաղավորների ու զորավարների, թաղումը կատարվում էր մեծ բազմութեամբ և մեծ հանդեսով, Այդ ժամանակ առանձնապէս սաստիկ էին ոգրում մեծերին, կանայք ու տղամարդիկ հուզարկավորութեանը մասնակցում էին լալով, երգելով ու նվագելով և ծափ տալով, դեմ ու դեմ պարելով ու կաքովելով, Նրանք երեսներն ու բազումները ցտում, պատառում էին (Բուզ. Ե. 31), ինչպես մի 20—25 տարի տալի մեզնում մահմեդականներն անում էին իրենց հայանի կրօնական տոնի սգի հանդեսը կատարելու: Վիպական Արտաշես թագավորի թաղման ժամանակ «շուրջ զգերեղսանուն լինէին կամաւոր մահունք»: «ամբոխութիւնք մեռան ի մահուանն Արտաշեսի, սիրելի կտնայք և հարճք և մտերիմ ծառայք» (Սոք. Բ. 4), Այդ մահերը, հարկավ, «կամավոր» չեն եղել, Մենք ներսեսի օրով, 4-րդ դարում, Աշտիշատի եկեղեցական ժողովով արդելով է մեռելի կոծը, «Մի... տնայառութեամբ ի վերայ գնացելոցն ուրիշ գործիցն լալեացն կոծոյն, զանառակութիւնս աշխարին դնելոյ» (Բուզ. Դ. 4), Եվ իբր այս կաթողիկոսի օրով «Ոչ ոք իշխէր անյաւառութեամբ... լալ զմեռեալն, և ոչ կոծ ոք դնէր կամ աշխարանս մեռելոյն և ոչ ծայնս ոք արկանէր ի վերայ մեռելոյն» (Բուզ. Ե. 31), Հետո, սակայն, կոծը միշտ էլ կատարվել է:

Կոծի մասին շատ տեղեկութիւններ ունենք «Պորսից պատերազմ» վեպից, որ ընդարձակ չափերով անդրադարձել է ֆեոդալական կյանքը 3—5-րդ դարերում: Նույն կյանքի երեւոյթներից մեկն է եղել նաև մեռելների կոծն ու լալիքը, որ գալիս է շատ ազնիւի հին դարերից: Մեր այդ հերոսական վեպի բովանդակութեանից իմանում ենք, որ կոծեր են կատարել նշանավոր վիպական անձերի համար: Այդպես՝ մեծ կոծ է լինում մարտի մեջ ընկած Վաչէ զորավարի համար: Ինքը խորով թաղավորը և բոլոր զորքը («տաղաւորութեամբ բանակ նախարարակոյս զօրացն») բարդում անձկալքեաց տրամուծեամբ և արտասուակաթ ոգրովք և ծանրաթախիծ հոգով, մեծաւ կոծովք և անհնարին աշխարանօք պաշարեալք, զգնացելոցն կարիս Պապեղոսն համարեալ՝ սպայինս: «Լինէր ամենայն աշխարհին սուգ անհնարինս, Նույնպէս՝ երբ մեռնում է ճաշլաւանցն, աշխարհաշէնն խորով, թաղաւորն Հայոց Մեծաց, ժողովեալ, աշխար եղեալ, լացին ամենայն սահմանք աշխարհաց դաւառաց Հայոց Մեծաց, և տարւոն առ իւր նախնիսն յԱնին յնկեղեաց դաւառն Դարանաղեաց» (Բուզ. Գ. 11), Հասկանալի է, որ ամբողջ երկրով անցնող և օրեր տեղող այսպիսի հուզարկավորութիւնների ժամանակ՝ բանակը և ձայնարկները պիտի երգեին ու վիպելն ճաշլաւանց թագավորի կյանքից ոչ թե անպատրաստից, այլ տաշուք պատրաստված: Տի-

րան թագավորի գերմիլուս վրեժն անհեղուկ հետո՝ ժողովում էն նախարար-
ներն և իշխանները, «գործակալք և զորագլուխք. պետք և ամենայն աշխար-
հաժողովք րազմութեանն հկելոց կուտելոցն», թեպիտ և թագավորը չէր մե-
ռած, բայց «կոծ եղեալ աշխարանօք լային զիւրեանց ընակ(ան) աէրն զաբ-
քայն Հայոց» (Բուզ. Գ. 20)։ Այսպես կոծեր հիշվում են և ուրիշ հերոսներ
համար։

Որովհետև լուց ու կոծը երգով ու նվագով էին անում, հետևաբար կոծի՝
համար երգեր են հորինվել և տարածվել։ Դրանք ժամանակի միակ պատ-
մական հիշատակարաններն են եղել կամ, ճիշտ ասած, նույն դերն են կա-
տարել, ինչ որ մեր ժամանակ լրագրիները կատարում են՝ լուր տալով եղած
գեպքերի համար և մահաբան (նեկրոլոգ) գրելով նշանավոր անձերի մահվան
առիթով։ Եվ ուրիշ կերպ էլ մտածել կարելի չէ մի ժողովրդի համար, որ
զիր ու զորականութանից զուրկ էր։ Այդ ձայնարկուների երգը և նրա հետ
կապված զրույցը եղել են վեպի սկզբնական ողբյաւերները, վեպի տարերքը,
որոնցից հետագայում օգտվել են վիպասաններն իրենց ստեղծագործութայն
ժամանակ։

Թե ինչպես էին պատահած գեպքերի անմիջական ազդեցութայն տակ
կոծի միջոցին հորինվում և տարածվում այդ պատմական երգերը, այդ էլ
իմանում ենք Պարսից պատերազմն վեպից։ Այստեղ մանրամասն նկարա-
գրված է Գնեյի կոծը և նրա մասին շուրջից ընտանեկան թիւնը (Բուզ-
Գ. 15)։ Գնեյը, Արշակ թագավորի եղբորորդին, ամուսնանում է Սյունիքի
իշխանի դուստրի, գեղեցկուհի Փառանձեմի հետ։ Սրան սիրահարվում է թա-
գավորի մյուս եղբորորդի Տիրիթն ևս։ Նա, որպեսզի Փառանձեմին ինքն
առնի, քուտթումը զրգուռ է Արշակին Գնեյի դեմ, մինչև որ Արշակը սպա-
նել է տալիս Գնեյին։ Ապա վեպի մեջ նկարագրված է, թե ինչպես Արշակը
թագավորի հրամանով կատարվում է Գնեյի կոծը։

Ապա հրաման եղև յարքայէն.

«Ամենայն մարդիկն որ իցեն ի քանակին,

Մեծ և փոքր առ հասարակ,

Մի ոք իշխեսցէ չեքթալ.

Այլ ամենայն ոք առ հասարակ

Երթիցեն դիցեն աշխար կոծոց,

Եւ լացցեն զԳնեյ մեծ սեպուհն Արշակունի,

Զքաղանեալն։

Իսկ ինքն թագաւորն գնացեալ ի լալիսն,

Նստեալ լայր գեղբորորդին իւր,

Զոր ինքն եսպան։

Երթեալ նստել մօտ առ դին,

Լայր ինքն, և տայր հրաման՝

«Կոծ մեծ և աշխար դնել

Շուրջ զսպանելով դիակամբն,

Իսկ կինն սպանելայն Փառանձեմ,

Ջհանդերման պատահեալ, զգէսս արձակեալ,
Մերկաախտ ի մէջ աշխարանին կոծէր.
Ձայն արկանելով ճէճը,
Եռողս աքտասուաց յաղիողորմ վռաժի
Առ հասարակ դամբնեան լսողացանէր:

Տիրիթը, որ սիրահարված լինելով փառանձեմին, սպանել էր տվել
Գնելին, հենց այդ սաստիկ կոծի ժամանակ չի համբերում և փառանձեմին
հայտնաւ է իր սերը:

Պատգամ յղէր առ կին մեռելոյն, ասէ՝
Ձի սՄի կարի դունձն քո աշխատ ասաներ այդչափ,
Ձի այր բարի եմ ես քան զնա.
Ես սիրեցի զքեզ,
Վասն այսորիկ մատնեցի զնա ի մահ,
Ձի զքեզ առից ինձ կնութեանս:
Արդ մինչդեռ կոծ մութեան զղիակամբն ջալէին,
Ձայսպիսի պատգամս առաքէր Տիրիթն,
Բողոք բառնայր, թէ՛ ալուարուք ամենեքեան,
Ձի մահ առն իմոյ վտան իմ եղև.
Ձի որ ինձ տկն եղ՝ վասն իմ զայրն իմ ես սպանանելս:
Ջհերն փետէր, ճէճը ընդ կոծելն,
Ապա իբրև մեծ իրքն համարձակ յայտնեցան
Ի խելիս ամենեցուն,
Եւ ի ձայնարկուքն ամենայն,
Եղև նա մայր ողբոցն,
Եւ ձայնարկուքն ամենայն
Ի ձայն ողբոցն սկսան նուազել՝
Ջիբն տրվեալացն Տիրիթայ,
Ջակն դմելն, զգուքիւնն,
Ջեմարո մեռու միւրի, զսպմունւնն.
Ձայնիւքն մրմնջոցն ի վերայ սպանելոյն
Ի մէջ կոծոյն բարբառէին
Գեղգեղեալ խանդողտառութեամբ:
Ի նուաճել իւրեանց ձայնիցն՝
Իրքն յայտնեալ հաշակ հարկանէր:

Բուզ. Դ. 16.

Հետաքրքիրն այն է, որ այս հատվածից իմանում ենք, թե ինչպես
Գնելի սպանման վնասը հենց նրա հուշարկավորության կոծի ժամանակ է
հորինվում, երգվում և տարածվում: Այդ այնպիսի ժամանակ էր, որ մի սե-
րունդ էլ պետք չէր որ անցներ՝ պատմական երգեր ու դրույցներ հորինե-
լու և տարածելու համար: Վիպական պատմական երգերն, ուրեմն, մասամբ
ձագած են հենց կոծի երգերից, «լուրեաց բանաստեղծութիւնից», այն էլ
վիպած եղելություններից անմիջապես կամ քիչ հետո: Դրանք, այդ երգերն

անմիջական բանաստեղծական հիշողութիւններ են կատարված դեպքերի Գրանց հետ միաժամանակ և պատմվել են եղելութիւնները, և երբ ու զրոյց միասին են ծագել:

Գոծի համար, տնչույտ, եղել են նաև հնովանդ երգեր, ընդհանուր ընավորութեամբ, որոնք կրկնվում էին կոծերի ժամանակ: Այս ընդունելն անհրաժեշտ է, քանի որ եղել են արեւնասով ողբասաց կանայք: Նրանք, ինչպես վերհռւմ հիշվում էին՝ ձայնարկուք, այլև ժայնարկուք և կուսանք սևադեղնաց և արխարող կանայք, որոնցից մեկը լինում էր սեղերամայր: Կամ մայր ողբոց (տես նաև Խոր. Բ. 60), Գրիգոր Նարեկացին 10-րդ դարում այդ ողբասացներին կոչում է բունտհիւս [—բանաստեղծ] կանայք լայականք¹, Մեռելի լացն ու կոծը (սլալիք կոծոյ), մեռելի կենսադուրսութիւնից առնված բանահյուսութեամբ, այնքան մեծ դեր է կատարել հնունդ, որ հարատեւել է մինչև մեր օրերը: Մեր ժամանակներում անգամ լայական կանայք, հաճախ առանձին վարձատրութեամբ, հրավիրվել են մեռելատուն և մեռելի ողբն արել քայաթիներ ասելով: Նույնիսկ վարձկան զուսանները շատ տեղերում կատարել են և դեռ կատարում են ողբասացների այդ հին դերը²: Նրանք ասում էին ավանդական երգեր, հարմարեցնելով դրանք նոր մեռելի վրա, կամ թե նոր երգեր էին հորինում մեռելի կյանքից՝ անելու համար նրա զգովքն, ինչպես և կոչվում է այդ երգը:

Պեսք չէ կարծել, թե մեռելի կյանքից առած բոլոր երգերը ձայնարկուներն անպատրաստից են ասել: Այլ ինչպես կոծի հանդեսի համար առաջուց պատրաստութեան էին տեսնում, նույնպես և նրանք կարող էին նախապատրաստել իրենց լայնաց բանաստեղծութիւնը, մասնավոր նշանավոր մեռելների համար, ինչպես են թագավորներն ու զորավորները: Այդպիսի բանաստեղծութեան մեջ արդեն՝ իրական պատմութիւնն առնվում էր ոչ միշտ ճշգրիտ հարադատութեամբ, այլ դա հորինվում էր որոշ լուսաբանութեամբ, քանի որ մեռելի զգովքն էին անում, ուստի պետք է տմեն ինչ ծաղկեցներն:

Թե ինչպես են եղել այդ երգերը, մենք այդ չգիտենք: Գրանցից ոչ մեկը չի հասել մեզ: Գրիգոր Նարեկացու վկայութեամբ՝ այդ երգերը հորինվելիս են եղել հայրենի չափով: Գրանք անպայման փոքր երգեր են եղել, կես քնարական ու կես վիպական, նման մեր ժամանակի լացի երգերին, ինչպես են 19-րդ դարի լացի անտունիները³, որոնք նույն հայրենի չափով են և զայիս են մեծ մասամբ հին ժամանակներից ի վեր: Սրկատող տներով կամ բնիթերով հորինվածքն այնքան հատուկ է եղել այդ կարգի երգերին, որ բայաթիւն (—բնիթեր, տներ) բառը ստացել է նաև մեռելի ողբի երգն նշանակութեանը, մինչդեռ այդ բառով տնվանվում են աւհասարակ երկատող տներից—բնիթերից կազմված փոքր երգերը, ինչպես են մեր արդի ժողովրդական քառյակները:

¹ Մ. Արեգյան, Հին գուսանական ժողովրդական երգեր, Երևան, 1931, էջ 160 և հետև.

² Բիւրակն, 1899, էջ 808, շնորհք: Հոգիւմ Մուշեղ վարդ—ի:

³ Տես՝ Մ. Արեգյան, Գուսանական ժողովրդական երգեր, Երևան, 1940, էջ 251 և հետև. Այլ էջ 19.

2. Գոռառնները օկգրմանամ պատմական հրգեր:— Երկրորդ և ավելի կարևոր տարրը, ազգյութները վնասի համար եղև են գոռառնների վիպական երգերը, պատմական երգերը, որ տավել են ամենահին ժամանակներից ի վեր ազնվականության խնջութներ, ուրախության ժողովներ, գինար-բութների ժամանակ, Հայ ազնվականության գլխավոր պարագայունքը, երբ նա պատերազմ չի ունեցել, եղել է որսի հետ և խնջութը: Գոռառնների երգով ու նվագով կատարած ուրախությունները նույնպես մտնում են վնասի մեջ: Պապ թողալորին սպանում են խնջութի ժամանակ, երբ նա «նայեր ընդ պէս պէս ամբոխ գոռառնացն» (Բուզ. Ե. 32), խնջութի ժամանակ են սպանում և Մոռնիդ սպարապետին (Բուզ. Ե. 35), Եվ վերջապես Արշակ Թողալորին ինքնասպան է լինում, երբ Դրաստամատն «ուրախ առնէր զնա դուստն» (Բուզ. Ե. 7):

Բացի ուրախության, որ է՝ գինու և սերու երգերից, գոռառնները խնջութների ժամանակ երգել են նաև հին վիպական երգերը, հին «երգ-առասպելացն»¹. Նրանք միաժամանակ և՛ հորինել, և՛ տալ են ոչ միայն ուրախության, այլ նաև պատմական երգեր, ինչպես և ուրիշ վիպական երգեր ու վնասեր: Մեր պատմական հիշատակարանների մեջ շատ քիչ վկայություններ ենք գտնում այն մասին, որ գոռառնները պատմական երգեր հորինած լինեն կատարված դեպքերի անմիջական ազդեցությամբ, ինչպես եղել են ձայնարկուների կոծի երգերը: Այս նկատմամբ մի շատ կարևոր վկայություն ունենք Մ. Խորենացուց «Պարսից պատերազմի» գլխավոր հերոսներից մեկի, Արշակի մասին: Նա պատմելով, թե այս Թողալորը չի պատասխանում Հռոմայեցոց կայսրի թղթին, ավելացնում է. «նշկանեալ արհամարհեաց զնոսա [հռոմայեցիներին]». նա և ոչ զհեռ Շապուհ միտեցաւ ամենայն սրախ, այլ անձնահաճ եղեալ՝ պարծելով հանապաղ ի գինարբուս, և յերգս վարձակաց քաջ և արի երևեալ զան զԱրշակա, իսկ արդեամբք Թերսիտեայ նմանեալ կադի և սրագլխոյն (Խոր. Գ. 19)», «նշեմահաճ դարձած Արշակը միշտ պարծենկոտություն էր անում գինարբութների ժամանակ, և վարձակներին (կին գոռառնների) երգերի մեջ նա քաջ և արի էր հանդիսանում Արշակից ավելի, բայց իր գործերով նմանում էր կադ և սրագլուք Թերսիտին»: Գնշանակե՛ գոռառններն Արշակի վրա հորինած են եղել երգեր, որոնց մեջ Թողալորը գովվում էր իբրև քաջ և արի, որ և երգում էին գինարբութների ժամանակ Թողալորի իրեն ներկայությամբ: Այդ գոռառնները եղել են պատմական երգիչներ, որոնք անպայման հաճած և Թողալորի պատվերով են բանահյուսել: Երգիչներ ունեցել են նաև նախարարները: Տրդատ Բագրատունու վնասի մեջ (Խոր. Բ. 63) հիշվում է Սյունիքի Բակուր նահապետի նազիհինի վարձակը, որ «երգէր ձեռամբ ի պատիվ Տրդատին տրված ընթրիքի ժամանակ: Այդ պարփեսիոնալ պուլատական գու-

¹ Մանրամասնություններ տես՝ Մ. Արեգյան, Հին գոռառնական ժողովրդական երգեր, Երևան, 1931, 173 և հետ. (Արատաղթ. Գեա. Համալսարանի «Տեղեկագիր» № 2—3, 4, 6):

² Տղալորների մեջ վարձակաց բառից հետո զրված է միջակետ, որ չպիտի լինի. իսկ «գինարբուս» բառից հետո չի զրված ստորակետ, որ պիտի լինի: Տես Մ. Արեգյանի ներքևում հիշված «Վեպ. երգեր» հոդվածի մեջ՝ էջ 81 և հետ:

սանները երգել ու պատմել են ոչ միայն իրենց մեկենասներին համար, այլև երգել են հենց նրանց իրենց, նրանց գործերը, փառաբանելով նրանց իրեն ջաշարի հերոսներին: Դրա համար գուսանները ծաղկեցնում, մեծացնում էին հովանավորողների արաբքները, հարկավ, հիմնվելով զլխավորապես իրենց տեսածների ու լսածների վրա: Այդպիսի գուսանական երգերից, իրեն սկզբնական աղբյուրից, ծագում է «Պարսից պատերազմ» վեպի մի որոշ մասը, ըստ երևույթին, առանձնապես Փ. Բուզանդի «Հայոց Պատմութեան» այն բազմաթիվ մանր գլուխները, որոնց մեջ միամեման կերպով պատմվում են Արշակի ու Վասակի հաղթութեանները: Թե ինչպիսի ձևով են հորինված եղել այդ սկզբնական պատմական երգերը, մենք այդ չգիտենք: Այդ առարկան երգերից էլ բառացի ոչինչ չի մնացել, Դրանց ձևի մասին դադարօր կարելի է կազմել նույն տեսակի մի քանի ուրիշ պատմական երգերից, որոնք մնացել են հետագա դարերից, որոնց և կդառնան հետո:

Գուսանները, ինչպես վեպից տեսնում ենք, իրենց երգերի մեջ, հիմնը վելով ազմուցության ու զրույցների վրա, ներշնչվելով անպայման և հին կոծերի ու վիպական երգերից, փառաբանում էին նաև իրենց հերոսների նախնիքներին, նրանց սոսմի հին մարդկանց, Այդպես է եղել Ֆեոդալական շրջանում ամենուր: Ազնվականի պարծանքի համար մեծ նշանակություն է ունեցել իր տոհմի ազնվական ծագումը, նախնիքների զովեստով փռաավորվում էր գուսաններին հովանավորող իշխանը, «Պարսից պատերազմ» վեպի մեջ Արշակն ու Մամիկոնյանները պարծենում են իրենց ծագումով: Բացի այդ՝ իրենց տրված պատվերը լավ կատարելու համար՝ երգիչները ոչ միայն բանաստեղծորեն մշակում էին նոր եղելուծյունները, այլև շարունակ վերամշակում և հարակցելով ահեցնում էին նախորդ գուսանների երգերը և հին ավանդութեաններն ու պատմական զրույցները, և այդ ամենը մի սուսմեհակայով, որ ժողովում էր իշխանների կենցաղով և նրանց միտումներով ու շահերով: Այսպիսի վերամշակումը հարակցութեամբ երևում է մեր վիպական երգերից, որոնց կդառնանք հետո: Այսպիսով հորինվել են ավանդական վեպերը:— ինչի «Վիպասանք», Թե «Պարսից պատերազմ», իրենց բազմաթիվ պատումներով ու բազմազան դրվագներով:

Այսպիսի վեպեր հորինող, ասող ու երգող գուսաններն արդեն կոչվում էին վիպասան: Հին վիպասաններն, ուրեմն, նույն գուսաններն են, միայն վիպ ասող, հնչյանակն՝ գուսանը: Լ' ուրախութեան ու սիրու, և՛ կոծի երգիչ է, և՛ վիպասան է, այսինքն պատմութեան ասող, որով վիպասանը դառնում է պատմիչ, միայն ոչ գրավոր, այլ բերանացի, ինչ որ սկզբնապես եղել է այդ բառի նշանակությունը: Հին վիպասանը ֆեոդալական միջավայրի երգիչ-պատմիչն էր: Դրա համար և վիպասանների բանահյուսութեան մեջ լայն չափերով անդրադարձած ենք գտնում մեր ֆեոդալիզմը:

¹ Ձեռ՝ Մ. Արևիկյան, «Վիպական երգեր», ՍՍՏՄ Գիտութեանների Ակադեմիայի Հայկական Ինստիտուտի հրատարակչություն՝ Մ. Դ-Տ, Երևան, 1940, էջ 45 և հետո:

1. Երեւի գլխաւոր. դատաւարադայիմ պայտօր:— Պատմական հիշատակա-
յունները շատ սակաւ թեղեկութիւններ են տալիս մեզ հայոց պատմու-
թյան այն դարաշրջանի ներքին կյանքի մասին, երբ ստեղծվել է ապրել
է մեր այս հերոսական վեպը մինչև նրա ոգտագործումը պատմութեան հա-
մար, Բայց վեպն ինքն իբրև քանաստեղծութիւն, իբրև մի այդդիսի պատ-
մական հիշատակարան, իր մեջ պահոււմ է քաղմաթիւ գծեր այդ մասին: Նրա
մեջ բնւմ է հանված Ֆեոդալական հասարակութեան զլխավորապես մեկ
դասը, ռազմիկ ազնվականութիւնն իր պարագլուխներով, որ է որսորդու-
թիւն, խնջուք, քսութիւններ, խորագլուխներ, պատերազմ, ավարտու-
թիւն և նմանները: Ազնվականութեան հետ սակավադէպ հանդես են գալիս
եկեղեցական դասից կաթողիկոսները, իրանք հենց սկզբից, իբրև հոգևորա-
կանութեան բարձրագույն ներկայացուցիչներ, կարևոր դեր են խաղացել,
ռուսական և մեկ-մեկ մտել են Ֆեոդալական վեպի մեջ: Զպետք է մտնանալ, որ
կաթողիկոսներն իրենք քաղվական մեծ տուժից էին: Մեծն Ներսեսի մայրը,
Բամբիշ անուհով, Տիրան Քաղավորի ջուրն է եղել, և Ներսեսն ինքը, կա-
թողիկոս ընտրվելուց առաջ, թէր յմար պիտուութեան ի գործակալութեան,
սիրելի սենեկապետ արքային Արշակայ, հաւատարիմ ի վերայ ամենայն
կողմաց կենաց թագաւորութեանն ի ներքոյ և արտաքոյ: Եվ հոգևորական
ներեց այդ Ներսեսն է իսկապես, որ երևում է վեպի մեջ իբրև գործող անձ:
Ֆեոդալական հասարակութեան երրորդ դասը, աշխատավոր ռամիկը,
տնտեսապես, քաղաքականապես և իրավապես կախված է եղել կալվածա-
տերերի այս երկու անաշխատ վայելող զասերից: Նա միշտ մնացած է եղել
անուշադիր: Մեր հին պատմագիրներն էլ մուտացութեան են տվել նրան, դրի
առնելով միայն ազնվականների պատերազմներն ու հոգևորականների գոր-
ծերը: Վեպի մեջ շինականները հիշվում են միայն մեծ կոծերի ժամանակ,
ինչպես և երկրի ընդհանուր վիճակը տնտրիներու համար հալածված ժո-
ղովի մեջ, որով որոշում են պատգամավորութիւնն ուղարկել թաւ թագա-
ւորն Յուստոց, դի ի նա ձեռս տուեալ՝ ձառայեցնեն նա հնազանդութեամբ:
Շինականները, իսկապես զղասապետք շինականաց, մտնանկցում են նաև
Ներսեսի մոտ հալածված այն ժողովին, որի մեջ ուղում են դադարեցնել
երեսամայա պատերազմը (Բուզ. Գ. 21, Գ. 51): Ազնվականն էլ, որ հոգա-
տն էր, մասնակցութիւն չունէր հողագործական աշխատանքներին: Նա շի-
նականից միայն տուրք էր առնում: Նա չէր աշխատում և չէր արտադրում
և չէր էլ կազմակերպում գյուղատնտեսական աշխատանքը: Ամենայնոր
նա շրջում էր գյուղերը, իր կալվածները տեսնելու:

Այստեղ չենք տեսնում և դասակարգային պայքար, աշխատավորու-
թյան կռիվն քաղաքի վերին երկու դասերի՝ Վեպն ազնվականության քա-
նառեղծությունն է, և բնականաբար նրա քանաստեղծները չպիտի հանին
այդ Բայք և այնպես Արշակունիի դրվագի մեջ երևում է այդ կռիվի հետքը։
Բուզանդի բերած փոփոխակի մեջ, օակայն, պատմվածքն ունի ուժեղ կրո-
նական քնույթ, փառավորում են Խաչն ու Ներսեսը։

Շինեաց իւր տրքայն դաստակերտ մի
Ի հովիտն անուանեալ ի կող գաւառի...
Եւ հրամայեաց կարգել քառորդ
Ընդ ամենայն տեղիս աշխարհացն հրապարակին իւրոյ՝
Եւ ամենայն կողմանս գաւառաց իւրոց
Լի առնէր հրամանաւն տրքունի,
Ջիւ չթէ ոք ումեք ինչ պարտիցի,
Եթէ ոք ուրուք ուսանք ինչ ֆեսանալ իցէ,
Կամ ոք ումեք ինչ դատ պարտիցի,
Ամենեքեան եկեսցեն ի Դաստակերտն, շինեսցեն,
Եթէ արիւնաւան ոք իցէ,
Կամ ֆեսա ուրուք ումեք տարաւալ իցէ,
Կամ զկին ուրուք տարեալ իցէ,
Կամ պարտապան իցէ,
Կամ ոք զուրուք կարասի ունիցի,
Կամ ոք յումեքէ երկիւղած ինչ իցէ,
Եւ եկեսցէ յայն տեղի,
Դատ և իրաւունք մի լիցին,
Իսկ եթէ ոք ումեք ինչ պարտիցի,
Եւ արուս պարտիցին՝ եկեալ յայն տեղին,
Առանց դատի և իրաւանց կայցին և ի դուրս ատրցին։

Իբրև ել հրաման յարքայէն,
Ժողովեցան այնուհետև յայն տեղի՝
Ամենայն գողք և աւաղակք,
Արիւնաւանք, սպանողք, սուռք և մարդելոյդք,
Վնասակարք, գանձաւառք, զրկողք, սառչառք,
Չրախոսք, գերիւղք, յափշտակողք, ժլտաք։

Բազում ֆեսաս ֆեսաս առնէին,
Եւ անդր անկանէին,
Բազում կոնայք զարս թողունին,
Եւ անդր անկանէին,
Բազում արք զիւրեանց կանայս թողունին
Եւ զայլոյ կոնայս առեալ անդր անկանէին,
Բազում ծառայք զիւրեանց տերանց զգանձս ըմբոնեալ,
Փախուցեալք անդր անկանէին,
Բազում աւաղակողք զաւանդս լի,
Ջպահաստս բարձեալ անդ անկանէին,
Գերիւղէն, աւերէն զերկրն ամենայն,
Ջիւ թէպէտ և կարի յոյժ բողբոջաւ աղաղակն, դատ չկայր...
Եւ իրաւունք ումեք յարքունուստ ոչ ելանէին,
Վասն այսորիկ ամենայն մարդ հառաչելով վայէին,
Եւ ասէին ի հաւանել ըմբոյն իւրեանց։

Այս բանք ըստ այսմ օրինակի պաշտէին,
Աս հասարակ ամենեցուն տսելով
Թէ՛ շիրաւունք մեռան,
Եւ վասն այսորիկ ոչ գտանէին.
Այլ թէ է՛ր և կորուսեալ էին,
Ուր և էր՝ ջանալաք, խնդրէաք, գտանէաք»:

Իսկ տեղին աւանանայր, ըստաւանայր.
Մեծացան, բազմացան և ելից զհովիտն ամենայն:
Ապա տայր հրաման արքայն Արշակ
Դնել զանուն զառաակերտին,
Երբեկից անունն Արշակաւան:
Եւ շինեցին ևս անդ ապարանս արքունի:

Բուգ. Դ. 12.

Խաղը ոչ մի պայմանով եկեղեցի և օեղան չի շինում Արշակապետում,
իսկ ներսեւը հետագայում անիծում է այդ քաղաքը, և նրա անեծքից երեք
օրվա մեջ կոտորվում են բոլոր բնակիչները:

Խորհնացու պատուով, ստկայն, Արշակապետի շինությունն ուղղված
է պարզապես նախարարների շահերի դեմ. Եւս բազում անգամ բողոքեալ
նախարարացն՝ և ոչ ինչ լուսաւ նոցա Արշակ. մինչև տո Շապուհ ևս ունել
նոցա բողոքք: Երբ Շապուհի զորքերը մտնում են Հայաստան, և Արշակը
փախչում է Կովկասի կողմերը, «նախարարացն Հայոց ժողովեալ՝ գիմեցին
ի վերայ արքունական ձեռակերտին Արշակաւանի և հարին զնա օրով սու-
սերի յառնէ մինչև ցկին, բայց ի տղայոց ստնդիւսաց. քանզի դառնացեալք
էին իւրաքանչիւր ի վերայ ծառայից իւրեանց յանցաւորաց (Խոր. Գ. 27):

Որ վեպի մեջ Արշակապետի շինությունը բնորոշված է իբրև գողերի,
ավաղակների, մարդապանների ժողովարան, «ժողով մարդկան մեղաւորաց»,
այդ վերաբերմունքն ու լուսաբանությունը միայն բավական են ցույց տա-
լու, որ այդ զրույցը ծագել և այդ գույնով պատմվել է ընդդիմադիր հագե-
վորական և նախարարական շրջաններում, բայց ունեցել է իր ուրույն սոցիա-
լական իմաստը: Դա զրկվածների, նեղվածների, ստատալալների մասնաշաղկապ
ըմբոստացումն է ճշդողների դեմ. Թագավորն իր կովի մեջ ընդդեմ նախա-
րարների՝ հենվել է ճնշվածների վրա: Վրաջում ծառայք ղրբեանց սերանց
զգանձս ըմբռնեալ, անդր անկանէին. Վառանքն՝ այստեղ վտաւները
չեն, այլ աշխատավորները: Սրանց զինվորական ծառայության մասին
կանոններ քիչ հետո: Ռաթիկների մասին էլ ուրիշ հիշատակություն չկա-
վեպի մեջ. Գործող անձերը միայն Թագավորներն և իշխաններն են, և ամեն
ինչ, կարծես, միայն Թագավորն է: Երկիր, հասարակ ժողովուրդ, մասսա
չկա: Մասնա միայն հայ և ավելի ևս պարսիկ զորքի անթիվ անհամար
բազմությունն է:

Այս բանաստեղծությունը եղել է արտադրություն հազմիկ աղնվաղա-
նության. բնականաբար և լիովին բավարարություն է տվել միայն այդ
դասի, գլխավորապես նրա վերին խավի պահանջներին, անդադարաձևերով

իր մեջ նրա կենցաղն ու իդեալները, նրա դադափաբախոտությունն ու շահերը, Վիպասաններն արտահայտիչ են դարձել այն գաղափարին, որին ծառայում էին, որից և վարձատրվում էին իրենց ասած վեպի համար: Տեսնենք այդ:

2. Ազնվականություն:— Մեր այս վեպի մեջ բազմապես ուժեղ կերպով ցածագրված է ֆեոդալիստների կենցաղն ու պատկերը: Այնպեղ ամենից առաջ աչքի է ընկնում այն, որ թագավորի հետ կան բազմաթիվ ազնվական տոհմեր, որոնք ունեն հողեր, երբեմն նաւյնիսկ եպիսկոպոսներ, եպիսկոպոսներ, եպիսկոպոսներ են: Նրանց վրա է հենված թագավորի իշխանությունը, և նրանցից շատ բան է կախված: Պետական և հասարակական կազմը հենց այդ տոհմերով է:

Կարևոր դեպքում լինում է ժողով, խորհուրդ կամ թագավորի մոտ, կամ առանց նրան: Բայց զրանով չի սահմանափակվում թագավորի իշխանությունը: Այլ ընդհանրապես բոլոր տոհմերը ենթարկվում են թագավորին: Տոհմի հետապնդող լինում էր տոհմի մեջ ավագը, առիթով մեծը: Բայց, ինչպես երևում է, այդ էլ թագավորի կամքով էր լինում:

Ան կոցոյց արքայն զՎարդան զերէց եղբայրն

Ի նահապետութեանն ազգին իւրեանց.

Ան զՎասակ, զմիջինն եղբայրն, զիւր դայեակն,

Ի սպարապետութիւնն զօրավարութեան, յիւր պառնարկացն.

Սոյնպէս և զկրտսերն ի արքայն զօրացն կոցոյցանէր:

Սոյնպէս և զամենայն ազգոն զօրացն,

Մեծամեծացն նահապետացն...

Մեծամեծքն յիւրաքանչիւր գահու.

Ան գործակալքն յիւրաքանչիւր չափու...

Ան այլ յայսմ ազգաց և ի խոնարհ.

Որ գործակալս անուն,

Բարձիւք առաջի արքային,

Պատիւ ի գլուխ բազմէին.—

Թող զնահապետս մեծամեծս և զստանուտեալս,

Որք գործակալք միայն էին՝ ինն հարիւր բարձ,

Որ մտանէր ի ժամ առնորին ուրախութեանն,

Բազմակալացն կարգելոց.

Թող զտոհմայս գործակալութեանն սպասու:

Բուլ. Դ. 2.

Այս ինն հարիւր թիվն, անյուշտ, վիպական չափազանցություն է, ազնվականների թվի մեծությամբ փառավոր ցույց տալու համար բռնաբարութիւնն թագաւորութեանն Հայաստան երկրին:

Վերևում տեսանք, որ Արշակը Մամիկոնյան տոհմի նահապետ կարգում է Վարդանին: Այսպես և Վարդգէս թագավորը, Մուշեղի մահից հետո, այդ տոհմի նահապետ է կարգում Վաչին:

Եւ ազգին Մամիկոնեան տոհմին
Տանուտէր նահապետ կաջոյց թագաւորն՝
Վաչէ անուն ի նմին տոհմէ:

Բուզ. Ե. 37.

Բայց երբ Վաչիի եղբայր Մանուելը գերությունից վերադառնում է,
նահապետ դառնում է նա:

Գանգի նա էր երէց յազգին...
Եւ Վաչէն լինէր երկրորդ:

Մանուելն «առանց հրամանի թագաւորին Վարազդատոյ յինքն յափըշ-
տակեաց զգործավարութեանն զսպարապետութիւնն. զի այն ինչ որ իւրոց
նախնեացն ի բնէն կալեալ էր ի սկզբանէ, զոր արքայն Վարազդատ շնորհ
առնէր իւրում դայեկին Բասայա:

Ազնվական տոհմերի նշանավորությունը, «մեծագեաց» լինելը, ամե-
նակարեւոր բանն էր համարվում: Գահն ու բարձր կապված էր պրտ հետ, Թա-
գավորի հետ սեզանի նստելին՝ «նահապետ» մեծագեացը՝ ավելի բարձր
էին նստում: Դրանց պատիժը ավելի մեծ էր: Այդ պատճառով վեպի մեջ
շեշտվում է պահի աստիճանը: Դրաստատատի համար ասվում է.

Եւ բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն:

Բուզ. Ե. 7.

Իսկ Աղանիքի բռնչիւրի համար ասվում է.

Որ էր մի ի չորից, զահերէց,
Բարձերէց տաճարին արքունի:

Բուզ. Գ. 9.

Պատվի գաղափարն այս ֆեոդալական շրջանում կապված էր տոհմի
հնաւթյան, նշանավոր ծագման հետ: Մանուել Մամիկոնյանն ասում է Ար-
շակունի Վարազդատ թագավորին.

Նա մեք չեմք իսկ լեալ ձեր ծառայք,
Այլ ընկերք ձեր և ի վերոյ քան զձեզ.
Ձի մեր նախնիքն լեալ էին
Թագաւորք աշխարհին շինեաց:

Բուզ. Ե. 37.

Արշակունի հայ թագավորն իրեն բարձր էր դասում, քան Սասունյան-
ները: Գերի Արշակ թագավորը Հայաստանից բերել աված հող ու ջրի վրա
ասում է Շապուհին.

«Ի բաց կաց յինէն, ծառայ չարագործ,
 Տիրաքեալ տերանցն քոց.
 Այլ ոչ թողից քեզ ե որդւոց քոց
 Զվրէժ նախնեաց իմոց,
 Եւ զժահն Արտեանայ արքային:
 Զի տրտմիկ ձեր, ծառայից,
 Զմեր, անբռնց ձերոց, զբարձ կռիւել էս:

Բուզ. Դ. 54.

Ամենամեծ անպատմութիւնն էր ծագումով բարձրին ցած գահի վրա նստեցնելը: Այդպես վարվում է Շապուհը գերի Արշակի հետ:

3. Ամուսնութիւն:—Ազնվականի կյանքում կարեւոր տեղ էր բռնում նրա ամուսնանալը: Այս խնդրում ևս պահվում էր պատիվը: Անպատմութիւնն էր համարվում ավելի ցած ազնվականի հետ ամուսնանալը, բայց ազնվականները միաժամանակ պահում էին և հարճեր: Դրա համար Վիգասանքի ցիկլից մի տիպիկ դրվագ է Տրդատ Բագրատունու ամուսնութիւնը Տիրան թագավորի նրանյակ դստեր հետ: Սա ատում է իր մարդուն, որ սրտոտ և ուժեղ տղամարդ էր, բայց կարճ հասակով և դժուժ տեսքով: «Պէտեռք և պատելով հայր զօրհանապագ (նրանեակ), տաղելով զինքն, իբր թէ չքնադակերպ ընդ վատակերպոյ և քաջատոհմիկ ընդ վատթարագլոյ բնակէս: Տրդատը մի օր բարկանալով նրա վրա՝ ստատիկ ձեռնում է նրան, դեղձան մազերը կտրում է և սենյակից դուրս ձգել տալիս նրան: Այս գրույցին միացել է մի ուրիշը: Տրդատը թագավորից ազատամբելով գնում է ամուր կողմեր: Հասնում է Սյունիք: Այստեղ Բաղուր իշխանը նրան ընթերիքի է հրավիրում: Եւ յուրաքանչեւ զինով, տեսեալ Տրդատայ զկին մի, զի յո՞ժ դեղեցիկ էր և երգէր ձեռամբ, որում անուն էր նաղինիկ՝ տըրփացաւ և ասէ ցիտկուր. «Տուր ինձ զվարձակա զայս, Եւ նա ասէ, «Ո՛վ տամ, զի հաղճ իմ էս: Իսկ Տրդատայ բռնւն հարեալ ի կինն՝ յինքն քարշեալ ի բազմականն, շամբշեալ վաւաշէր ըստ օրինակի երիտասարդի անարգել տաքփաւորի: Ընդ որ խանդացեալ Բաղուր՝ յարեաւ հանել զնա ի նմանէ. Բայց յոսն կացեալ Տրդատայ, ծաղկակալ սկսեցրն իբրև զինու վարեցաւ, նա և զըտըձակիցսն ի բազմականացն ի բաց թողեցաք... Եւ այնպէս յիւր վառնս եկեալ, իսկոյն ի ձի ելեալ՝ հանդերձ հարճին ի Սպեր գնաց: (Պոր. Բ. 63),

Վեպի դարաշրջանում եղել է բազմակնութիւն: Ֆեազայներն, ինչպես ասվեց, ունեցել են հարճեր: Բացի այդ՝ վեպի մեջ գտնում ենք հին իշխողների իրենց կանանցը գեղեցիկ շաշիկի քաշելու սովորութիւնն ևս, որ մինչև մոտ մի դար առաջ բանեցնում էին նրանի խոսքերը: Ինչպես երևում է, եղել է այդ մասին մի գրույց, որ տարբեր փոփոխանելով պատմվել է մի Տրդատի վրա: Պորենացու պատումով դա կցված է Վիգասանքի ցիկլին և պատմվել է Տիրան թագավորի փեսա Տրդատ Բագրատունու վրա, որ կովով ռւբրիցի խլում է գեղեցիկ նաղինիկին: Իսկ «Պարսից պատերազմին պատուժով այդ գրույցը վերագրվել է Տիրան թագավորի պապ Տրդատին (Ապսթ.

78—112), Թագավորի համար գեղեցիկ աղջիկ են որոնում նրա մարդիկն ամեն կողմ ման գալով: Եվ ահա Վաղարշապատի հնձաններում գրանում են աղքատ կանայք և նրանց մեջ սքանչելի գեղեցիկ Հռիփսիմին: Նրա գեղեցկութան համարվել շուտով հաշակվում է բազմամբողի հրապարակներում:

Իսկ ի տեսիլ գեղոյ նորա կուտեալ,
Ոնդեալ գեղեալ խուռն կանառացն կուտեակէր.
Նաև նախարարք և մեծամեծ աւագնաւոյն
Ընթացեալք ի տեսանել՝ զմիմեամբք ելանէին:
Նաև ազատակոյտն՝ խառնաճաղանճ ամբոխիւն հանգերձ՝
Զմիմեամբք դիպանէին ի միմեանց վերայ:

Թագավորը լսելով կույսի գեղեցկութան մասին՝ հրամայում է նրան արքունիք բերել: Իսկույն սպասավորները ոսկեպատ զանավորակներ, ազնիվ ու գեղեցիկ հանդերձներ և պարզարանքներ են տանում նրան, որ զարդարվի և շքով ու պատվով մտնի քաղաքը և ներկայանա Թագավորին: Շքադիր լինելու համար զնում են նրան բերելու նաև նախարարներն ու ավագանին: Բայց նա չի ուզում զալ: Այն ժամանակ Թագավորն ասում է.

Փոխանակ դի ոչ կամեցաւ
Գալ պատուով: շքեղութեամբ, կամօք,
Բռնաբար անցեն մինչև յապարանս.
Եւ մուծցեն զնա ի սենեակ արքունի:

Սպասավորները կատարում են Թագավորի հրամանը: Տրդատն էլ դառնալիս է նույն սենյակը:

Արդ՝ իբրև եկն հմուտ նա [= Տրդատ] ի ներքս,
Առ հասարակ մարդիկն,
Ոմանք արտաքոյ ազարանիցն,
Կէսքն ի փողոցս ի ներքսագոյնսն,
Առ հասարակ երգս տուալ բարբառեցան,
Կայթիւք վազելով՝ ցուց բարձեալ մարդկանն:
Կէսքն ի բերդամիջին,
Եւ կէսք զքաղաքամէջն լցին խնճոյիւք.
Առ հասարակ համարէին
Հարսանեացն զպարսն պարել
Եւ զկաքուան յորդորել:

Մինչդեռ Տրդատի ու Նազինիկի գրույցին սկզբից միացել է նրանյակի մասը, Տրդատի ու Հռիփսիմեի գրույցին հարակցվել է աղայի և աղջկա մենամարտը: Դա մի հին վիպական գիծ է, անգրագործուած հին բարձր, որ մինչև 10-րդ դարի վերջերը դեռ իբրև գերազարդված մնում էր Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի շեռնաբնակ այլազգիների մեջ: Կարճուհին

ամուսնանում էր միայն այն կարճի հետ, որից կհաղթվեր ինքը մենամարտի մեջ, Այս միևնույն մենամարտը զտնուում ենք Մուշկի ու Վալդիկ Յուրուհի և Դավթի ու Մանդուլի համար պատմված, Նույնն է նաև Տրդատի ու Հռիփսիմի մենամարտը, Նրր Հռիփսիմին մտցնում են արքունի սենյակը, թագավորն էլ մտնում է այնտեղ. «Թուռն հարկան էր դնմանն կատարել ղկամս ցանկութեանն»։ Իսկ աղլիկը զորացած՝

Գազանաբար ոգաբեալ, առնաբար մարանչէր,
Իբրև յերեք ժամուց սկսեալ
Մարտնչել մինչև ի տաան ժամն,
Պարտեալ լինէր թագաւորն:

Մի անգամ որ մենամարտի մեջ հաղթում է աղլիկը, ամուսնությանն էլ զլուխ չի գալիս, և նա թողնում է ապարանքը՝ Նրան աղանում են իբրև թագավորի հրամանը չկատարողի:

Իսկ թագաւորն թողեալ
Զիւր տաթն կորանաց...
Եւ զայն ոչ էր եղեալ ի մոտ,
Զամթն նախատանացն,
Այլ ի տեսիլ սիրոյ նորա ջեւեալ,
Տրտմեալ ընդ մահ աղլիկանն,
Տխրացեալ սգանայր...
Վասն սքանչելոյն Հռիփսիմեայ,
Որոյ ոչ գոյր համեմատ յերկրի ի ծնունդս կանանց,
«Վասն զի սիրտ հաբեալ պհեա անհնարին,
Եւ անմտաց ի մտաց չանկանի,
Մինչ կենդանի եմ եւ Տրդատ արքայ»...
Եւ իջեալ նստէր ի վերայ գետնոյ,
Եւ լայր և ի սուղ մտանէր:

Այս վիպական պատմվածքին տրված է չափազանց կրոնական քննադատություն և առաջ է բերված մի քրիստոնեական վկայարանություն: Հռիփսիմին իբր իր կուսությունը պահելու համար՝ չի ուզում ամուսնանալ ոչ Հոմի կայսրի և ոչ Հայոց թագավորի հետ, և զրա համար նահատակվում են նաև իր ընկերները: Վաղարշապատում նստած հոռիական կայազորի հետ, անուշտ, եղել են հստայեցի կանայք, որոնց մեջ կարող էին և քրիստոնյաներ լինել: Այդ կանանցից մեկը կամ մյուսը կարող էր Յուդաբուրում նահատակված լինել քրիստոնեության համար: Այդ պատճ է ընդունել, քանի որ ճշգրտորեն սկզբներից արդեն Վաղարշապատում հայտնի են եղել նրանց վկայարանները: Այդ քրիստոնեական ավանդությանը հարակցվել է Տրդատի համար ասվող գրույթին և զարգարված է վկայաբանական ձևերով: Բայց երբ կրոնական միտումները դուրս են ձգվում, մնում է միայն մի վիպական բանահյուսություն՝ ամուսնության կամ «աղլիկ զաշխուշ մտան»:

Վեպի մեջ առհասարակ օխրված վիպական սյուժետներէց մեկն է ամուսնութեանը, աւարի դա մի քանի ուրիշ փոփոխանքներով ևս պատմված է և «Պարսից պատերազմին» մեջ: Այսպէս մի առանձին պատում է եղել Գնելի սպանվելը իր կին Փառանձեմի պատճառով, և ապա Արշակի ամուսնանալն այդ կնոջ հետ: Այս Փառանձեմի վեպի մեջ իսկական վիպական մասնութամասնութեամբ երևան են դալիս ներքին պալատական քառթղութեանը և խարդապանքները կանանց և ազգականների մեջ: Հիշվում են և, այսպէս ասած, քաղաքական ամուսնութեանը, որոնք կատարվում են արևելքադաշտական հաշվով, Շապուհն ուզում է իր դուստրը առնել Արշակին կնուցթեան, և այդ աւերթ է դառնում պալատական ինտրիգներին: Փառանձեմի հայր Անդովին, Փառանձեմի պատճառով, այնպէս է տնում, որ Արշակն իր բանակով փախչում է Շապուհի մոտից: Իսկապէս քաղաքական ամուսնութեան է եղել Արշակի առնելն Ուրմայիային, բայց վեպի մեջ դրան տրված է ներքին կանանոցային բնույթ Փառանձեմի խարդապանքով, Կանանց մատը խառն է և ուրիշ դեպքերում: Վաստկի հղբայր Վարդանի սպանման պատճառն է նաև միևնույն Փառանձեմը, որ Գնելի մահվան վրեժն է առնում նրանից:

4. Որոշորություն և ձի:—Մեծ տեղ է բռնել ազնվականի կենցաղի մեջ որսորդութեանը, որի մասին և հաճախ պատմվում է վեպի մեջ կենցաղէրէց: Մամուլն որսի ժամանակ սպանում է Սկուռնիների նահապետին և տիրանում նրա ամրոցին: Վիպասանքի մեջ Սանատրուկն սպանվում է որսի ժամանակ: Տրդատը Հոփիսիմի սպանվելուց հետո որսի է ելնում: Ուրված մոտիկ է որսի անտառ տնկելը, Վիպասանքի մեջ Սրվանդը տնկել է տալիս Մանդոց անտառը (Պար. Բ. 41), «Պարսից պատերազմին» մեջ Պարով Կոստակը՝ Պարովակներու անտառը (Բուզ. Գ. 8), և վերջապէս Նույնը դառնում ենք և Մուսա Մոնրին մեջ, նման անտառ եղել է նաև Շահապիվանի և Բագավանի մոտ: Գնելին Արշակի հրամանով գլխատում են այնտեղ, «մօտ յորմածս արգելացացն որսոյն էրիցն» (Բուզ. Գ. 15): Պարսնացու մեջ (Գ. 28) մի տարրեր փոփոխակ է պատմված Գնելի սպանման մասին, որ կապված է դարձյալ որսի սարի և որսորդութեան հետ:

Հյուսիսին որսով և խնջուքով (բաղմանքով) պատմելն ազնվականի կենցաղային գծերէց մեկն է: Տիրան թաղավորն այդպէս պատմում է իր մօտ եկող պարսիկ Վարազ Շապուհին:

Եւ մինչ չեւ նա եկեալ էր,

Պարսէր արքայն ընդ իւր ծառայսն ներքինիսն,

Ոպասաւարտն իւրում սենեկի, ասէ.

«Արժան է մեզ, այր որ դայ առ մեզ՝

Ջրօսուցանել և ուրախ առնել որսովք և բազմականօք,

Եւ ամենայն պէս պէս վայելչութեամբք:

Այլ ոչ եթէ այնչափ ինչ արժան է

Ձմեռ ինչ որսոյ տեղիս

Ի մերում երկրի աստ նմա տեսանել

Վասն չարակնութեան, յաշտղանաց, չարաբարութեան,

Նենգութեանն ազգին պարսկաց:
Այլ նմանեցուցէք տեղիս դոյզնագիւս որսաց ինչ,
Որով լով զբառուցուք զնա,
Նւ մի որսասցուք զառատ ինչ որսոց զտեղիս,
Նւ զի մի մեծ ինչ նախճիրս որսոց
Կոտորեալ առ ի ցոյցս տանելոյն:

Բազ. Գ. 20.

Որսի և պատերազմի հետ կապված էր լավ ձի և լավ զենքեր տան-
նալու փափագը: Վարսից պատերազմին մեջ տառնձնապետ երևում է ձին
իրևն պարզնի առարկա: Փովվում են Տիրան թագավորի ձիերը, որ Խորե-
նացին ըստ իր պատումի (Բ. 82) գնում է Վիպասանքի ցիկլի մեջ, հա-
մարելով Տիրանին վիպական Արտաշեսի որդին. «Որսոց և գրոսանաց պա-
րտապետ, որպէս ասես: Նւ ձիոց երկուց լեալ՝ թեթև առաւել քան զՊիպա-
սոս, երազութեամբ տնջաւ. զորս ոչ երկրակոխս, այլ սղազնացս համարէին.
յոր խնդրեալ հեծանել Գառաքէի ուրումն իշխանի Բզնսանեաց՝ պարծէր
ընչեղագոյն գոլ քան զարքայս: Վարսից պատերազմին մեջ Տիրան թագա-
վորի ձին ալապես է գովվում:

Զայնու ժամանակաւ ձի մի էր,
Որիմար արքային Տիրանայ,
Զորմէ կարի զարմանային:
Նւ էր ձին գունով ճարտուկ ճանճկէն,
Սա լի էր քաջութեամբ,
Անուանի և հոյակապ,
Մեծ և բարձր, երկայն քան զամենայն ձիս,
Նւ տեսանելով քան զայլս գեղեցիկ, զանազան,
Որ համեմատ նմա այլ ոչ գտանէր:
Զորմէ յերթուն իւրոյ դիպասութեանն՝
Սենեկապետն արքային փխտկ մատնեաց զձին Վարազայ,
Վասն զի բարեկամացեալ էր ընդ նմա:
Նւ ի նմանէն ինքն թուղթ տռեալ,
Բերեալ մատուցանէր արքային Հայոց:
Զորմէ շհաւանեալ, տալ ոչ աւետոյս յանձն,
Այլ վասն զի կասկածէր յառնէն,
Զի գոյժ խռովութիւն ինչ
Ի մէջ թագաւորացն երկոցունցն տրտացէ,
Ի խնդիր անկանէր՝ զնոյն գոյն ձի,
Զնոյն նշան, զնոյն պատկեր, բաց ի մեծութենէ,—
Զի այնպիսի ուրեք ոչ գտանէր,—
Զնոյն նման, զնոյն կերպարանս ճարտուկ ճանճկէն գտեալ,
Նւ նախքեք իրովարտակաք և պատարարաք
Ի ձեռն մոլեկան փխտակայն
Առ իշխանն յԱտրպատական, առ Վարազն տրձակէր:

Եւ միտս զնեւով խորհուրդ աւանդէր,
Զի չեմասցես, թաւէ,
Աթէ ալս ինքն է զոր խնդրեցերն.
Զի առ եւր ոչ խնայեաց ի քէնս:

Բուզ. Գ. 20.

5. Աիցկոբրեակն ծառայություն:— Ձին կարեւոր տեղ էր բռնուած, որով-
հետեւ զորքը ձիավոր էր, հեծեալագոր.

Հանդէս աւանդէր Վասակ,
Սպարապետն ամենայն զօրաց Հայոց,
Եւ դառն հեծեալագոր, ազաւաղէնք,
Կուռ վառեալք, նիզակաւորք,
Համակ վաթսուռն բիւր,
Միասիրտք, միաբան, միամիտք:

Բուզ. Գ. 21.

Ազա Մուշեղ, որդի Վասակայ,
Սարատելաւան Հայոց Մեծաց,
Ընդերեաց իւր արս ընտիրս, միամիտս, ազատս,
Ազգայինս քառասուն հազար, միաբանս, միակամս,
Եւ կազմեաց զնոսա ձիով և թռչակաւ և զինուռ:

Բուզ. Ե. 2.

Բոլոր ազնւականներն անխտիր կատարում էին զինվորական ծառայութիւն և կազմում էին երկրի զորքը: Ուստի «Մեծամեծք, նահապետք ազգաց ազգաց, տոհմաց տոհմաց, զնդից և զրօշուց տեարք, ամենայն սատրապք, նախարարք և ազատք, պեաք և իշխանք, զօրավարք և սահմանապահք, որոնք թագավորի մօտ ժողովված են խորհրդի համար, բոլորը միասին մի բառով կոչվում են «զօրք» (Բուզ. Գ. 3), Վեպի զարգացման դարաշրջանում Հայաստանում մնում էին և այլազգի զորքեր, հռոմեական կայազոր, օջանական զնդեր, ռուսի և վերեւում բերած կառորի մեջ ասված է ազգայինս: Յուրով Մեծի վեպի մեջ ևս ասվում է «նախարարք հայակոյտ զօրացն», որ է հայերից հավաքված զորքը: Հիշվում է «ազատախումբ բանակ նախարարական զօրացն» (Բուզ. Գ. 11), որ Հայկաթի հասկանալ «նախարարաներից ժողովված», այլ «նախարարների ժողոված ազատախումբ բանակը»: Ռամիկներն ևս կատարել են զինվորական ծառայութիւն: Տիրանի գերվելու դրվագի մեջ ասվում է, թե նրա մօտ չեն եղել՝ «զօրավարքն... մեծամեծք նախարարացն, և աւագ տանուէրք ազատանին, սոյնպէս և զօրքն տրուենի... և ոչ գունդ և այլեմէն: Թագավորը մնացած է եղել «սակաւ սպասաւորք հանդերձ... և խառնաղմջ խորանայան զօրում, և ռամիկ-սպաս զօրում» (Գ. 20): Դրանք՝ այդ «խառնաղմջ», այսինքն՝ «ամկական, «ռամիկական զօրքն», ռամիկներից, շինականներից են կազմված եղել:

8. Ավարառութիւն:— Էջօրքն, աշխնքն գինված ազնվականութունը, իր գինքը գործադրում էր պատերազմի մեջ տուածքին թշնամիներէ դեմ: Իսկ այդ պատերազմը լինում էր կամ հրկրի պաշտպանութան համար, կամ տվարառութիւն: Ամեն հաղթական տրշավունքից հետո ևս հիշվում է ավարի շատութիւնը: Բայց կան հատուկ ասպատակութիւնն զբնագնի ևս: Ավարառութիւնն սկզբունքը: Ըստ ժամանակի տշխարհայացքի, բացատրվում է մի զրկագի մեք, որ ուժեղ նկարագիր է հյուսիսային ազգերի հաճախակի ասպատակութիւնների հաշտտանում: Այդ բացատրութիւնն, արդարեւ, կտպւած է վրթունսի որդի Գրիգորի գրույցի հետ և Բուզանդի կոզմից ևս թանձրացրած կրօնական գուշակ է բերված, բայց զոր էսքիւնն ամբողջապէս այն ժամանակի ֆեոդալական բացատրութիւնն զորքի կյանքի իդեալն է եղել — կողոպտել ուրիշներին և զբանով հաքստանալ, հղկաւալ: Հիշալ Գրիգորը քորոզութիւնն է տնում հյուսիսային կողմերում:

Եւսա նա մինչև ի ճամբար բանակին
Արշակունւոց տրքային Մազքթաց,
Որոյ տնուն իւր Սանէսան կոչէր:
Քանզի և նոցա և Հայոց թագաւորացն
Մի ազգաւորութիւն էր առնմին ընութեան:
Եւ հրթիւալ յանդիման լինէր թագաւորին Մազքթաց,
Իշխանին բազմութեան զօրացն Հոնաց:

Նրանք սկզբում ընդունում են Գրիգորի քորոզները, բայց հետո մերժում են նրան, երբ իմանում են, որ նոր կրօնի աստուծո համար ճատելի է՝ աւարառութիւն և յափշտակութիւն, օպանութիւն, ազանութիւն, ալլաղրկութիւն, գոլլոցկերութիւն, ցանկութիւն ալլոց սատքուածոց:

Ապա այսպիսի իմն իրօք իբրև լուսն,
Ջալբացան ընդ բանս նորա և ասնն:
Էջի ոչ յափշտակեսցուք,
Ջի ոչ աւարեսցուք,
Ջի ոչ առցուք զայլոց,
Ի՞նչ կեցցուք աշխտի տնչտի զօրաց բազմութիւնքս:
Եւ թէպէա բիւրաւոր բանիւք բարեօք
Կամէր հաճել զսիրտս նոցա,
Ոչինչ կոմէին ունկնդիր լինել:
Այլ ասէին ցմիմնանս:
Ենկեալ աշտիսի բանիւք կամի
Ի քալութենէ որսոյն կենաց միւրոց խափանել զմեզ,
Իսկ եթէ սմա լուիցուք... Բ՛ւ կեցցուք,
Ջի ոչ յերիվար հեծցուք
Ըստ բնութեան օրինաց սովորութեանց միւրոց,
Այլ, ասէին, այս խորհուրդ Հայոց թագաւորին է,
Ջստ յգել առ մեզ, զի այսու համամբ խափանեսցէ

Զմեր արշաւանս տապաւառեալութեան հինի յաշխարհէն իւրմէ:
Այլ եկայք զսա պակասեցուցուք ի միջոյ,
եւ մեք ի Հայս արշաւեսցուք,
Աւարաւ զմեր աշխարհս լցցուքս:

Թուգ. Գ. 6.

Եւ ապա պատմվում է նրանց ահալութեամբ խառնելու
տանուս և չարաշար ջարդով (Գ. 7):

Տ Ե Ր Ե Վ Մ Ա Ռ Ա

1. Հավտոտրմութիւն և զտվտոտրմութիւն:— Մեր երկրորդ հին վեպն
իր վրա կրում է ֆետալական միջավայրի մի քանի ուրիշ կողմերի դրոշմ
ևս: Նրա մեջ զորեղ կերպով շեշտված է իշխող դասակարգի վերին խավի
զազափառախոսութիւնը: Ֆետալական շրջանում, ինչպես հայտնի է, թու-
գովորը տեսնւ էր, իսկ ազնվականները՝ «ծառայ»: Վերջիններս պարտավոր
էին թագավորի համար զանազան պարտքեր կատարել, առանձնապէս զին-
վորական ծառայութեան: Ամենամեծ առաքինութիւնն էր ծառաների հավա-
տարմութիւնն իրենց տիրոջը: Դավաճանութիւնը ենթակա էր անարգանքի
ու պատժի: Թագավորներն ժամն կերպ աշխատում էին այդ զազափառ
զարգացնել իրենց վաւաչների մեջ, եւ հենց սրանք իրենք էլ շահագործված
էին դրանով: Գի ազնվականութեան հիերարքիայի մեջ նրանցից էլ կախված
կային ուրիշները: Քրիստոնեական եկեղեցին էլ սրբազորեւ էր այդ դրու-
թիւնն իրեն աստվածային պատիւիւր, «ծառայից» հնազանդ կալ տերտնց
իւրեանց: Գի եկեղեցականներն էլ, նույնիսկ գյուղական քահանաները, մի-մի
աւերեք էին: Նրանք օգտվում էին դավաճանների պատժելուց: Այդպիսի-
ների հողերը, եթե արքունիք չէին պատկանում, արվում էին հավատարմի-
ների, որոնց թվում և եկեղեցու: (Թուգ. Գ. 4). Վեպի մեջ հենց սկզբից
կան հավատարմի ու դավաճան ծառաների տիպիկ արտահայտութեան շատ
դրվագներ, որոնց մեջ պատմվում են տվյալ ֆետալական շրջանի համար
հատուկ հարաբերութեաններ: Ազնվականները հավատարմութեամբ և քա-
ջութեամբ ծառայում են թագավորներին, որովհետեւ սրանք իրենց համար
աշխատողներին վարձատրում են հողերով: Այսպես, օրինակ, վերեւում հիշ-
ված Մագդոթներին ջարդող և երկիրն այդ տապաւառեալութեան ժաւրոյ
իշխաններին թագավորը տալիս է կալվածներ:

Ապա ետ հրաման թագաւորն Հայոց Խոսրով,
Տալ պարգևս արանցն քաջացն ուր վաւառակեցին Նմա,
Եւ փոխառակեցին զանձինս իւրեանց
Փոխանակ աշխարհին Հայոց Մեծաց,
Ետմէնայն ի մարտ ճակատուցն պատերազմաց:
Եւ ետ Վաչէի զօրավարի զակաւնս Զանջանակին,
Եւ զՋրաբաշխս, և զԾլու գլուխ,
Ամենայն գաւառակօքն հանդերձ:
Նայնպէս և այլոց նախարարացն մեծամեծ պարգևս:

Թուգ. Գ. 8.

Պապ Թադավորն էլ Մուշեղին է նույնպես վարձատրում իր ազգական քաջազորձությունների համար:

Բողոքում պարզեա, և պատիւս, և բողոքում գիւղեան
Չօրավարին Մուշեղի Պապն շնորհէր:

Բուզ. Ե. 4.

Երբ երեսնամյա պատերազմից հոգնած նախարարները լքում են Արշակին, խորհրդի ժամանակ Ներսեսն ասում է նրանց, որ նրանք իբրև ծառաներ հնազանդ մնան Թադավորին:

Ձի ամենքեան դուք աւաղիկ կայք և վկայէք,
Մանաւանդ զի ամենքեան դուք
Կեցեալ էք յազգէդ Արշակունոյ,
Ոճանք ի ձէնջ զաւուրտեալք լեալք ի նոցանէն,
Եւ ումնք մեծամեծք աշխարհաց,
Ոճանք աւագ աւագ աւանաց,
Գեղից և Կանձուց տեօրք լեալ էք,
Եւ պէտպէս դաստակերապան:

Բուզ. Դ. 51.

Մամիկոնյան հերոսները վեպի իդեալական անձերն են, Թադավորի և աւհաստրակ Արշակունիների հավատարիմ ծառաները: Բայց նրանց մեջ ես վիպասաններն անդրադարձել են իրական կյանքի պատկերը: Նրանք էլ Թադավորին ծառայում են իրենց շահերի համար: Թադավորները պարտական են նրանց «կեանս առնել ընդ վաստակոցն» (Բուզ. Ե. 37): Բավական է, որ հակառակ լինի, Թադավորը նրանց շահերի գեմ գնա, այն ժամանակ հզոր Մամիկոնյանը պատրաստ է հեռանալու Թադավորից և նույնիսկ Թուլլ Արշակունի Թադավորին պատերազմով դուրս քշելու երկրից: Բայց քանի որ սպարապետները վեպի իդեալական անձերն են հավատարմության նկատմամբ, այդպիսի տրաքն տրաքացվում է այսպես.

Նա դու չեմ իսկ Արշակունի,
Այլ ի պոռնկութենէ եզեալ ես որդի.
Վասն այդորիկ ոչ ծանեալ զվաստակաւորսն Արշակունեաց . . .
Այլ զի դու քանզի չես Արշակունի,
Գնա յաշխարհէս, և մի մեռանիք ի ձեռաց իմոց:
Բուզ. Ե. 37.

Այսպիսի պատգամ է ուղարկում Մանուել սպարապետը Վարադգաս Թադավորին, որ սպանել էր տվել Մանուելի եղբայր Մուշեղին: Բայց նույնիսկ այսպիսի դեպքում էլ, երբ Մամիկոնյանի շահն ընդհարվում է Թադավորի շահի հետ, նա անարգում է միայն այն անձին, որի հետ պատերազմում է: և ոչ ընդհանրապես Արշակունիներին, որոնց նա հավատարիմ ծառա է:

Եթե մի կողմից անհնում ենք, որ թագավորները վարձատրում են իրենց հավատարիմ վասալներին, մյուս կողմից՝ կան դրվագներ, որոնց մեջ պարզ երևում է Արշակունի թագավորների արտուղատիստական միտումը և ընդհանրապես ձգտումն իրենց ապահովելու՝ Վախենալով դավաճանություններից՝ Խոսրով հոտակն օրենք է դնում, որ բնածնած անազանին, նախորարքն աշխատհանգիքն, աշխատհատեարքն, որ էին բիրաւորքն և հազարաւորքն, կայցեն առ արքային, և ընդ նմա շրջիսցին, և մի ոք երթիցէ ի նոցանէ ընդ զօրս արքունիս (Բուզ. Գ. 8)։ Թագավորները գործադրում են և կտրուկ միջոցներ՝ Նրանք ապստամբներին և առհասարակ մեծերին, ամեն առթից օգտվելով, անխնա կոտորել են տալիս և նույնիսկ նրանց առհմերը բնաջինջ անում։ Եվ այդ երևում է վեպի բոլոր էություններում ևս։ Այսպես՝ վրապակա Տրդատը շենացի Մամիկոնի ձեռքով կոտորել է տալիս իրենից ապստամբած Սիկունիներին և նրանց կալվածը տալիս է իր հավատարիմ Մամիկոնին։ Նույնը մի քանի փոփոխականերով հարակցված է և Խոսրով հոտակի վեպին։

Ապստամբեաց յարքայէն Հայոց

Մի ի ծառայից նորա,

Մեծ իշխանն Աղձնեաց,

Որ անուանեալ կոչէր բղեշխն,

Որ էր մի ի չորից,

Գահերէց, բարձրէց տոճարին արքունի,

Եւ ձեռս յարքայն Պարսից,

Եւ մատենաց դարձունի տունն, որ յեց յինքն էր,

Եւ էտծ զօրս արքային Պարսից ի թիկունս իւր,

Եւ հասաւ յերկրէն յիշխանութենէն Հայոց,

Եւ տայր պատերազմ ընդ արքային Հայոց՝

Ուժով Պարսից թողաւ օրութեանն,

Եւ սաստկանայր մարտ պատերազմին։

Թագավորն ուղարկում է նրանց դեմ մի քանի իշխանների, իր հավատարիմ, վեպի բառերով՝ բարեկիր ծառաներին, որոնք հաղթում և կոտորում են բոլոր պարսիկներին։ Նրանք սպանում են և ապստամբին իր եղբայրներով ու որդիներով հանդերձ, բացի մի նորածին աղջկանից, որին թագավորը կնութայան է տալիս իր սիրելի Վաղինսկ Սյունի իշխանին, որուն տալով և Աղձնյաց տունը։

Եւ արար զնա բղեւոյի

Եւ պայազատ տուն նորուն։

Ժառանգն բազմացաւ։

Եւ հանդերձ աշխարհաւն,

Եւ ամենայն ուժովն,

Կայր բղեւոյի Վաղինսկ

Ի ծառայութեան արքային հանապազ։

Բուզ. Գ. 9.

Մի ուրիշ գրավագի մեջ (Բուզ. Գ. 8) Բզնունի իշխանը, որին թագա-
վորը զորքով ուղարկել էր պարսիկների հարձակման գեղն ամենելու, գավա-
ռանում, անցնում է թշնամու կողմը՝ նա իր զորքերը կոտորել է առիս և
պատրաստվում հարձակվելու թագավորի վրա։ Բայց սրա հավատարիմները
հաղթում են նրան և բռնում, բերում են թագավորի տաճը քարկոծում
քիբրև գայր, որ աշխարհի և զնդի և զօրաց անառն իւրոյ զավաճան լեալ
իցէն։ Կոտորում, բնաջինջ են անում և նրա տոհմը։

Երկու սոհմեր, մեծ նախարարներ, պատերազմում են միմյանց հետ
ժողովրդի իրաւանց։ Թագավորը նրանց հաշտեցնել է ուզում, բայց նրանք
անարգում են թագավորին.

Եւ անուռին տւերէին զսուռնն արքունի,
Եւ զայրացեալք խտուլթեամբ,
Հաղճեալ տային ընդ միմեանս մարա պատերազմի:
Ապա մեծ ցասմամբք և բողոս սրամտութեամբ,
Արձակաց թագաւորն ի վերայ նոցա
ԶՎաչէ որդի Արաւազդայ,
Զնահապետ Մամիկոնեան տոհմին,
Բազդէ սպարապետութեան Հայոց,
Զմեծ զօրավար զօրաց իւրոց,
Ստատկել, կորուսանել զազն երկոսեան:

Բուզ. Գ. 4.

Վաչեն երկու տոհմն էլ կոտորում է.

Եւ ոչ թողոյր զերկոցունց տոհմացն
Զործ կորիւն և ոչ զմի:

Այս միևնույն ձգտումը թագավորների կողմից՝ դանում ենք և Տիրա-
նի ու Արշակի վեպերի մեջ։ Տիրանը Հայր Մարգարեի գրգռելով, քառթյամբ,
կոտորել է տալիս Ռշտունի և Արծրունի տոհմերը, Արշակը նույնն անում է
Կամսարականների վերաբերմամբ։ Պատժ թագավորն էլ սպանել է տալիս
Հայր Մարգարեներին։

Այդ բազմաթիվ զրկազները միևնույն պատմական սյուսետի քանաս-
տեղծական զարգացումն են։ Դրանց մեջ կա այն ընդհանուրը, որ ֆեոդալը
որևէ պատճառով ոչնչացնում է իր վտակին և նրա կալվածների համար
այս կամ այն կարգադրությունն է անում։ Որ այդպիսի զրկազներ շատ
կան, դրա պատճառն այն է, որ կյանքի մեջ հաճախ կատարված են եղել,
մասնավորապես խոսքով փոքր կոչված թագավորի օրով, նման եղելություններ,
որոնց մասին և հորինված են եղել զանազան երգեր ու զրույցներ։ Դրանք և
օգտագործվել են վեպի մեջ։ Այդ փոփոխվածներից մի ճանիսը լոկ վիպական
բեկորներ են մեզ հասած։ Բայց այդպիսիների մեջ անգամ պարզվում է ֆեո-
դալիզմին հատուկ որևէ բնորոշ գիծ։ Դրանք հորինված են Արշակունի-
ների կամ այն ազնվական տոհմերի շրջանում, որոնք հավատարիմ կուսակից

էին Արշակունի թագավորներին: Դրանով պրոպագանդա էր մղվում հոգուտ թագավորներին: Այդ պատճառով և վեպի մեջ սկզբից մինչև վերջը կարևոր տեղ է բռնում թագավորի և իր հպատակ նախարարների, կամ ախրոջ և ծառայի հարաբերությունը: Վեպն սկսվում է հենց Մամիկ-Պանակի ապստամբութեամբ իրենց թագավորից: Այս ապստամբում է Այկունի Սիւնիք: Նույն կարգին պատկանում է և Արտաշրի ապստամբութեանն Արտավանից: Հիշենք նաև Մերուսանին Արշակի ժամանակ և ուրիշներին: Առաջին հին վեպի մեջ ևս, ինչպես տեսանք, հավատարիմ ծառայի տիպը գործող գերպով պատկերացրած է հանձին Արտաշեսի գլխակ Սմբատ Բագրատունու:

2. Բնակ (բնիկ) տեր և արխաղ:— Արշակունիներին բավական չէր տիրոջ ու ծառայի և տիրոջը հավատարիմ մնալու դադափարախոսութեանը միտյն: Այդ վիպական դառաջընթացում կար բարձրանալ Պարսից և թագաւորն Յունաց, այսինքն հռոմայեցոց կայսրը: Վեպի մեջ, Տիրանի գերվեալուց հետո, հայ ավագանին պատգամավորութեան են ուղարկում կայսրին:

Ձի ի նա ձեռս տուեալ՝

Ստառայեցեն նմա հնազանդութեամբ,

Եւ լինիցի նա նոցա թիկունք ոգնականութեան՝

Խնդրել վրէժս ի թշնամեաց նոցա:

Բուդ. Գ. 21.

Թշնամիները պարսիկներն էին, օրոնց հետ և կովի մեջ էին հայերը: Պարսից թագավորն էլ իր կողմից ամեն կերպ, և՛ խոստումներով, և՛ կաշառով, ջանում էր հայոց նախարարներին իր կողմը գրավել և գործնել իր ծառաները: Եվ կային այնպիսիները, որոնք ենթարկվում էին նրա հրապույրներին:

Եայնմ ժամանակի ապստամբեաց յարքայէն Հայոց

Մի ոմն ի նախարարաց մեծամեծացն,

Մերուսան անուն Արձրունի:

Եւ շոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից Շապուհ,

Եւ զնէր ընդ նմա ուխտ երգմամբ,

Ձի յաւիտեան ծառայ լիցի նմա:

Բուդ. Գ. 23.

Այսպիսի իշխոսներն էլ աշխատում էին, որ Հայոց թագավորն էլ ենթարկվի Պարսից թագավորին, այսինքն՝ ընդունի նրա ծառայութեանը: Այսպես, օրինակ, Պապ թագավորը դավաճան Մարդախո Գղակին իր մոտ քաշելու համար՝ նրան ասել է տալիս, որ շուտ դա իր մոտ, որովհետև նրան պետք է ուղարկի Պարսից թագավորի մոտ:

Ձի ես մտից նմա ի ծառայութիւն:

Բուդ. Ե. 6.

Այսպիսի դրութեան ժամանակ բավական չէր համարուիմ ծառայի գաղափարը, այլ հարկավոր էր և այն, որ ծառան համարուիմ վրեժը իր բնիկ տիրոջը, բռնակ տերունց, Արշակունեաց քաջ արանց և տան և կենաց» (Բուդ. Գ. 11),

Այս գաղափարն են տես զարգացրել վաւականները, Դա թագավորոց հարստութեան հայացքն է եղել, թայց դա միանգամայն և հոգևորականի կարծիքն էր, որ երեսւմ է վեպի մեջ, ևս այնը հոգևորականների ձեռով քարոզել է և եկեղեցիին, որի շահերն այս դեպքում համապատասխան են եղել թագավորների շահերին: Մթն չլինել բնիկ տերը, այն ժամանակ պարսկեաները պիտի տիրեին իրենց մոզական կրօնով: Այդ համաձայնքը շատ լավ պիտակցել են կաթողիկոսները ոչ միայն Երզն, այլ նաև Երզն դարում: Մի այդ հայացքն ևս մտել է վեպի մեջ, միայն Բուդանդի գրչի տակ համապատասխան ընդարձակված և թանձրացած դուրսով: «Մեքեյի զբնակ տերուն Լեւ... և օտար տերունց ծառայել», — ասում է Ներսեսը նախարարներին, — այդ նույն է, թե «և նոցին անաստուած կրօնիցն ցանկով... ծառայել անաստուածն մոզութեան անօրինացն և նոցուն պաշտօնէիցն» (Բուդ. Գ. 51, 211 և Գ. 11), Ուստի աշխարհի և աշխարհի բնիկ տիրոջ համար մեռնելը՝ նույն է և եկեղեցու համար մեռնելը, Հակոբակ վարդապետը դավանան են և ժամն անարգանքի արժանի: Ահա վիպասանն ինչպիսի լեզվով է բնորոշում իր թագավորին դավանանք փոխակերն:

Արդ ծինչ դեռ ևս յոյժ խաղաղութիւն էր
Ի մէջ թագաւորացն երկոցսունց,
Անկաւ ի տեառն խոտութիւն
Ոչինչ բանիւք, արամը միով անարգաւ,
Որ ոչինչ պակաս քան զգե էր մարտութեամբ...
Ի ձեռն մոլեկան փխակայն...
Նւ աշխարհ և աշխարհի բանիւք
Դրդէր զնա փխակն անօրէն
Ի վերայ տեսնել իւրոյ բնակի...
Ի կատաղութոս, ի շնարհական փխակայ...
Ի բերանոյ շորիկն շոգմոզն,
Տիրանենդն և տիրադրութն,
Տիրապետութն, տիրամասնիւն փխակայ,
Յայն աշխարհակորոյս յառնէ անտի:

Բուդ. Գ. 20.

Զպիսի կարծիք, թե իր տիրոջը՝ Տիրան թագավորին մտանոց սենեկապետին արված այդ պարսկականքը վեպից չի ծագում, այլ Բուդանդի հեղինակից: Վերջինս բնավ չի սիրում Տիրանին և հենց նույն դրվագի մեջ իրենից ավելացրած մասում գրում է... «Երանօրէն Տիրանայ, ծինչդեռ վիպասունի համար Տիրանը մի բռնակ տէր, մի սիրելի տնայ է. նախարարները և բաժնեայն աշխարհաժողովը բազմութեանն»

Կոծ եղեալ աշխարհոց լային
Ձիւրեանց բնակ(ան) տէրն, զարքայն Հայոց-
Սոյնպէս և զկորուստ աշխարհին,
Եւ զտնձանց տնտէրչութիւն կործանմանն,
Վարանացն, աղիոգորմ գործէին:

Բուգ. Գ. 20.

Անձանց և աշխարհի տաճ կայրուք,
Եւ զտեսնու բնակի վրէժ խնդրեացուք:

Բուգ. Գ. 21.

«Բնակ տիրոջն հետ հիշվում է և «աշխարհը», որ է Հայոց աշխարհը, բայց հայրենասիրութեան գաղափարը բնականաբար դեռ զարգացած չէ: Երևում են դրա ստղծերը միայն: Սեփական երկրի գաղափարը, սակայն, որի հետ կապված է հայրենասիրութեանը, բավական ուժեղ կերպով շեշտված է վեպի մեջ տնդուտ այն պատճառով, որ «բնակ տերերի» տերութեանը, ինչպես միշտ, պայմանավորված էր որոշ երկրով, որոշ տեքստուրիայով: Զէր կարող լինել տերութեանը—իշխանութեան տանց «տերութեանը»—իշխանութեան երկրի: «Հայրենիք» բառն ևս մի երկու տեսակով գործածված է: Տրդատ Թաղավորի համար ասված է.

Եւ հայրենեաց տերութիւնն յինքն նուաճեաց:
Եւ խնդրէր զքէն վրիժուց իւրոց հայրենեացն:

Ապաթ. էջ 29, 72.

Այդ «հայրենիք» բառը, սակայն, երկդիմի է. դա կարող է նշանակել նաև «հայրեր», «պապեր», «նախնիք»: «Հայրենեաց տերութիւն», ուրեմն «հայրենական», «հորենական տերութեանը»: Իսկ վրեժ «Բուրց հայրենեաց» կարելի է հասկանալ և «իր հայրերի» վրեժը, և իր «հայրենիքի» վրեժը, այսինքն՝ «հայրենի երկրի», «հայրենյաց տերութեանը»: Այս իմաստով՝ Հայաստանը դառնում է Արշակունիների «հայրենիքը», այսինքն՝ ժառանգաբար ստացած երկիրը, ինչպես որ նախաբաններն էլ ունենին «հայրենի երկիրներ», որ նրանց ժառանգական, տոհմային կալվածներն էին:

Հետաքրքիր է Հայաստանի «հայրենի հող ու ջրի» մասին ունեցած հավատը, որ երևում է «Պարսից պատերազմի» գեղեցիկ դրվագներից մեկում (Բուգ. Գ. 54): Իր բնիկ երկրի հող ու ջրի վրա՝ մարդ իրեն զգում է ազատ ու գործող և հպարտ: Այսպես՝ գերի Արշակն անընկճելի է Պարսկաստանում հայ հող ու ջրի վրա, որով Շապուհը փորձում է նրան: Բերենք այդ բանաստեղծորեն գրավիչ դրվագը գրեթե ամբողջ:

Յաղագս Թէ օրպէս զգիւթնն եւ զքաղեայն հարցեալ Շապուհ՝ փոր-
ձէր զմիտն Արշակայ, եւ տայր զնա յԱնուշ բերդն, եւ կամ զՎասակ սպա-
րապետն Հայոց չարամահ հրամայէր տանել:

Շապուհ տրջան Արշակին փորձելու համար աստղագետների խորհրդով Հայաստանից հող ու ջուր է բերել տալիս.—

Ապա հրաման տալը թագաւորն Շապուհ
 Զկէս յատակին իւրոյ խորանին
 Հարկանել ի բերեալ հողոյն Հայոց,
 Եւ զջուրն ցանել ի վերայ նորա.
 Եւ զկէսն ի նոյն հողն զիւրոյ բնակութեան երկրին թողուլ,
 Եւ ետ ածել զԱրշակ արքայ Հայոց զառաջեւ իւրով,
 Եւ զայլ մարդիկն ի ընթ հրամայեաց կացուցանել,
 Եւ զձեռանէ առեալ՝ շրջէր ճեմելով:
 Եւ երթեկս տսեալ ընդ խորանն, տէ ջնա,
 Յորժամ ի պարսիկ ի հողոյն ի վերայ ճեմէին՝
 Թէ «Ընդէ՛ր եղեր իմ թշնամի, Արշակ արքայ Հայոց.
 Զի ես որպէս զորդի սիրեցի դեզ,
 Եւ կամեցայ առլ զեզ դքսաւոր իմ ի կնութիւն,
 Եւ որդի ինձ առնել զքեզ.
 Իսկ դու խառացար ընդ իս:
 Եւ քովք կամօք, առանց իմոց կամաց,
 Եղեր ընդ իս թշնամի.
 Եւ այս լի երեսուսն ամ է,
 Զի պատերազմեցար ընդ իս:
 Ասէ Արշակ արքայ,
 Թէ՛ «Մեղայ զեզ և յանցեալ.
 Զի ես եկի և կոտորեցի.
 Եւ յաղթեցի թշնամեաց քոց.
 Եւ ակն ունէի ի քէն պարզ և կենաց,
 Եւ թշնամիք իմ հրապուրեցին զիս,
 Եւ արկին երկիւղուկս ի քէն,
 Եւ փախուցին ի քէն:
 Եւ երգումն իմ, զոր երգուայ զեզ,
 Յառաջ տծին զիս, և եկի աւասիկ առաջի քո:
 Եւ աւասիկ ծաւայ քո ի ձեռն քո կամ,
 Զինչ և պէտք է զեզ, տրա զիս.
 Զինչ և կամ իցէ, սպան զիս,
 Զի ես ծաւայ քո առ քեզ
 Կարի յանցաւոր եմ, մահապարտ եմ:
 Իսկ Շապուհ արքայ տեսալ զձեռանէ նորա,
 Շրջէր ճեմելով, ի չքմեղս տեսալ զնա,
 Ածէր ի հայապաշտն ի հողն հարեալ յատակն:
 Իսկ իբրև յայն տեղի հասանէր,
 Եւ զհայ զհողն կոխէր,
 Մեծամեծս ըմբոստացեալ, հպարտացեալ՝
 Այլ ձայն շրջէր, սկսանէր խօսել և ստել,
 «Ի բաց կաց յինէն,
 Մահայ չարագործ, տիրացեալ տերանցն քոց,
 Այլ ոչ թողից (զ)քեզ և որդւոց քոց

Ջրէժ նտխնեաց իմոց,

Նւ զմահն Արանանայ արքայի:

Ջի ալժիկ ձեր՝ ծառայից

Ջմեր՝ անբանց ձերոց զբարձ կալեալ է.

Բայց ոչ թողից.

Եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեացէն:

Իսկ դարձեալ առնոյր զձեռնէ,

Դարձեալ առնէր յայն հող Պարսից.

Ապա աշխարէր զասացեալն,

Խոնարհէր, բուռն հարկանէր զոտից նորա,

Մեծապէս ապաշխարելով զզմամբ զասացեալ բռնան:

Իսկ յորժամ առեալ դձեռնէ՝

Ջնա տանել ի հայ հողն,

Նա խստագոյն քան զուռաջինսն բարբառէր:

Իսկ դարձեալ միւս տնգամ հանէր յայնմ հողայն,

Բանիւք յապաշխարութիւն դառնայր:

Յայտուէ և երեկոյն այնպէս շատ փորձ փորձեաց զնա.

Ջի իրրև ի վերայ հարեալ հողոյն առնէր,

Նստացեալ ամբարտաւանէր.

Իսկ ի վերայ բուն դեռնոյն յատակին՝

Նւ կայր, ի զղջումն դառնայր:

Իսկ իրրև երեկոյ եղև,

Ժամ ընթրեաց թագաւորին Պարսից,

Դանգի սափորութիւն էր Հայոց թագաւորին

Բազմական անդէն, ընդ նմին, առ նմա,

Ի նորին տախտին արկանել բազմական,

Օրէնք էին, զի թագաւորն Պարսից և թագաւորն Հայոց

Ի միուս ամտախտի բազմէին, ի միում վահոյս:

Իսկ այն ուր նախ զտող բազմականացն,

Թագաւորացն, որ անոն էին, զամենեցունց կարգեցին.

Հուսկ յետոյ զկնի ամենեցունց, ի ներքոյ բոլորին,

ՉԱրշակայ բազմականն առնէին,

Ուր զհայ հողն յատակն հարեալ էր:

Նախ ամենեքեան իրրև բազմեցան յիւրաքանչիւր չտփու,

Յետոյ ածէին, բազմեցուցանէին վարքայն Արշակ:

Արդ եկաց բազմեալ ուռուցեալ վայր մի,

Իսկ յոսն եկաց, ասէ ցթագաւորն Շապուհ.

«Ի՛մ ալդ տեղի, ուր զուդ ես բազմեալ.

Յոսն կնի ալդի, թող Ես ալդը բազմեցայց,

Ջի տեղի ազգի մերոյ ալդ լեալ է:

Ապա եթէ յաշխարհն իմ հասից,

Մեծամեծ վրէժս խնդրեցից ի քէնն:

Ապա ապա հրաման Շապուհ արքայ Պարսից,

Բերել շղթայս և արկանել ի պարանոցն Արշակայ,

Եւ յոտս ե ի ձեռս նորա երկաթս,
 Եւ խաղացուցանել զնա ի յԱնդժըն,
 Զոր Անուշ բերդն կոչեն,
 Եւ պնդեալ զնա, մինչև անդէն մեոցի:
 Եւ եղև ի վտղիւ անդր ետ հրաման Շապուհ արքայ,
 Ածել դառաջեալ իւր զՎասակ Մամիկոնեան,
 Զգորավարն, սպարապետն Հայոց Մեծաց:
 Սկսաւ պատուհասել զնա:
 Քանդի էր Վասակ անձամբ փոքրիկ,
 Ասէ ջնա արքայն Պարսից Շապուհ.
 «Աղուէս, դժւ էիր խանդարիչ,
 Որ այսչափ աշխատ արարեր զմեզ,
 Դժւ ես այն, որ կոտորեցեր զԱրիս այսչափ տմա:
 Եւ այժմ զիմրդ կարես ապրել ի ձեռաց իմաց,
 Զմահ աղուեսու սպանից զքեզ:
 Իսկ Վասակ սուեալ պատասխանի, ասէ.
 «Այժմ քո տեսեալ զիս անձամբս փոքրիկ,
 Եւ սուրն իմ ոչ է ընդ իս,
 Ոչ տաքս զչափ մեծութեան իմոյ.
 Զի ցայժմ ես քեզ առիւծ էի և արդ աղուէս:
 Բայց մինչ ես Վասակն էի, ես ձեզ սկայ էի.
 Մի ոտնս ի միոյ լերին կայր,
 Եւ միւս ոտնս իմ ի միւսոյ լերին կայր.
 Յորժամ յաջ ոտնս յենուի,
 Զաջ լեռան ընդ գետին տանէի.
 Յորժամ ի ձախ ոտնս յենուի,
 Զձախ լեռան ընդ գետին տանէի:
 Ապա հարցանէր թագաւորն Պարսից Շապուհ և ասէ.
 «Աղէ՛, տուր ինձ զիտել,
 Ո՛վ են լերինքն այնոցիկ,
 Զորս դուն ընդ ունջ տանէիր:
 Եւ ասէ Վասակ.
 «Լերինքն երկուք, մի դժւ էիր,
 Եւ մի՛ թագաւորն Յունաց:
 Այն մինչ սուեալ էր ինձ Աստուծոյ,
 Զքեզ ընդ գետին տանէի և զթագաւորն Յունաց...
 Գիտացաք տալ քեզ խրատ,
 Մինչև մեզն աչօք բացօք անկաք ի խորխորատ:
 Արդ զինչ և կամիս՝ արժա:
 Ապա ետ հրաման թագաւորն Պարսից
 Մորթել զգօրավարն Հայոց Վասակ,
 Եւ զմորթն հանել և ընուլ խոտով:
 Եւ տանել ընդ նոյն բերդ յԸնդմըն որ Անյուշն կոչեն,
 Ուր արգելին իսկ զթագաւորն Արշակ:

Բուգ. Գ. 54.

ՆԵՐՈՍԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹՅՈՒՆ

1. Հնրօրմիբի տիբասիբաւթյունը:— Վեպի կենտրոնական գաղափարն է երկրի պաշտպանութիւնն ի դեմս բնիկ թաղավորական տոհմի: Այս է վեպի սոցիալական իմաստը: Իրենց այս քաղաքական դադափաւրը տարածելու և կռաակիցներ գրավելու համար՝ Արշակունիներին բաւական չէին բնիկ տիրոջը դժող դաւաճաններին պարսաւելու և պատժելու դժուգները: Դա բաւցաւական կողմն էր: Դրա հետ պետք էր զարգացնել նաև դրական կողմը: Եվ վեպի մեջ տիրադրումների դժուգներից ավելի շատ կան տիրաւորութիւն թյան դժուգներ և ֆեոդալական տեսակետով ինքաւական հերոսների ուժեղ գծագրված դեմքեր, որոնք չափապանց նախանձախնդիր են իրենց տիրոջ պատվի ու շահի համար:

Արշակ թագաւորը հրաժիրված է Շապուհի մոտ և նրանից մեծ պատիւներ է ստանում, բայց Պարսից թագաւորի ախուռապետը չի մեծարում Արշակին և նույնիսկ անարգում է նրան: Վասակ զորավարն այդ չի տատում և տեղն ու տեղը սպանում է Պարսից արքայի ախուռապետին:

Ապա հղև դէպ օր մի յաւուրց,
 Եկն հմուտ թագաւորն Հայոց Արշակ՝
 Շրջել գտապատանաւ միով դարձային Պարսից,
 Իսկ ախուռապետն արքային Պարսից
 Նստէր ի ի ներքս ի տան ասպատատին:
 Իբրև տեսանէր զթագաւորն,
 Ոչ ինչ աւ լուս կալեալ մեծարեաց զնա,
 Եւ ոչ ինչ շուքս զնէր նմա.
 Այլ և անարգանս ևս զնէր թշնամոնաց,
 Ասելով ի պարսկերէն լեզու,
 Թէ՝ «Այժից Հայոց արքայ,
 Եկ նիստ ի խրճան խոտոյ ի վերայն:
 Զոր բանս իբրև լսէր սպարապետն,
 Զօրավարն Հայոց Մեծաց
 Որում Վասակն կոչէր, ի Մամիկոնեան տոհմէն,
 Մեծաւ բարկութեամբ և բազում սրտմտութեամբ բարկանայլ,
 Ի վեր առեալ զսուսերն, զոր ընդ մէջն ունէր,
 Հարեալ անդէն ի տեղւոյն գախուռապետն արքային Պարսից՝
 Գլխատէր ի ներքս յասպատանի անդ:
 Զի ոչ կարաց լսել և ժոյժ ունել
 Զիւրայ թագաւորին զանարգանս.
 Զիւր մահն առաջի եղեալ լաւ հաշուէր բազում անգամ,
 Դան զտեառն իւրոյ լսել զվատթարութեան թշնամեանս,
 Իբրև ի Պարսից աշխարհի էին,
 Յայլոց ի տեղի և ի նոցուն հրապարակի,
 Աներկիւղ և անկտակած յանկարծօրէն
 Զայսպիսի զգործ կարաց պարծել:

Բազում շնորհ ունէր դորավարին Վասակայ,
Ընդ քաջատառութեանն զարմացեալ,
Նւ ընդ բազում աներկիւղութիւնն:
Նւ բազում պարգևաց և պատուոյ տրժանի առնէր,
Զքաջութիւն և զախրասիրութիւնն գովեալ:
Վասն այնր իրաց մեծաւ սիրով սիրէր զնա,
Նւ ըստ արժանի իւրում պատուէր զնա,
Մեծաբէր զամենայն աւուրս հաշուութեան
Նւ խաղաղութեանն, որ ի մէջ նոցա էր:

Բուգ. Դ. 16.

Այսպիսի տիրասիրութեան մի հուշիչ պատմվածք է Արշակի ինքնապաշտութեան զրկագիրը Դրաստամատը, Հայոց թագավորի ճանքերինն, ճշմարիտն հաւատարիմն,— որ Անդեղ տան իշխանն է, և բարձ նորա ի վերջոյն զամենայն նախարարացն,— Արշակի անկումից հետո գերի է Պարսկաստանում: Նա Գուշանների դեմ պատերազմի մեջ մեծ քաջութեամբ յունենէր գործելով՝ մահից ազատում է թագավոր Շապուհին: Երբ սա վերադառնում է պատերազմից, մեծ շնորհակալութեան է անում Դրաստամատին և ասում է նրան.

Նւ ասէր թնա Շապուհ թագաւորն Պարսից.
Ենդդրեա դու ինչ յինէն.
Զինչ և խնդրեսցես, տաց քեզ և ոչ տրգելիցս:
Նւ ասէ Դրաստամատ թագաւորն.
Ենձ ի քէն ալ ինչ ոչ պիտի,
Բայց առւր ինձ հրաման,
Զի երթայց տեսից զքնակ տէրն իմ,
ԶԱրշակ արքայ Հայոց:
Նւ առ մի օր,—
Իբրեւ ես երթայց առ նա,—
Հրաման տուր՝ արձակել զնա ի կապանացն,
Նւ ես իշխեցից լուսնալ զգլուխ նորա և օճանել,
Նւ ազուցանել նմա պատմութեան,
Նւ արկանել նմա բազմականս,
Նւ զնել առջի նորա խորաիկս.
Նւ տալ նմա գինի.
Նւ ուրախ առնել զնա արուեստականօքն,
Մի օր ճիշդ:
Նւ ասէ թագաւորն Շապուհ.
Ենիստ են խնդրուածքդ, զոր խնդրեսցեալ.
Զի յաւուրց ժամանակաց,
Յորմէ թագաւորութիւնս Պարսից կանգնեալ է,
Նւ բերդն այն Անյուշ բերդ կոչեցեալ է,

Զիք ոք մարդ եղեալ ի մարդկանէ,
 Որ իշխեցեալ է յիշեցուցանել թագաւորաց՝
 Զոր յայնմ բերդի եղեալ զոք է թագաւորաց,
 Յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի զոք եղեալ է,
 Թող թէ զնա, զայր թագաւոր և զիմ ընկեր,
 Կապեալ եղեալ յայնմ բերդի զհակառակորդն,
 Գան մինչ աշխատ արարեր զմեզ,
 - Եւ գու աւագիկ զանձն ի մահ եղիր
 Եւ յիշեցուցեր զԱնյաշն,
 Որ ոչ էին լեալ երբէք օրէնք
 Թագաւորութեանս Արեաց ի սկզբանէ.
 Բայց զի վասն՝ քո մեծ վաստակք են առ իս,
 Զոր ինչ խնդրեցերն,
 Ի՛րթ, տուեալ լիցի քեզ,
 Բայց քեզ արժան էր զօգուտ քո անձինդ խնդրել,
 Կամ աշխարհս, կամ զաւատս, կամ զանձս.
 Բայց յորժամ դու զայդ խնդրեցեր,
 Անցեալ լիցիս զօրինօք Արեաց թագաւորութեանս.
 Ե՛րթ, տուեալ լիցի քեզ՝
 Որ ինչ յինէնս խնդրեցեր զօխանակաց քոց,
 Եւ ետ նմա փաւշտիպուն մի հաւատարիմ.
 Եւ հրովարտակ՝ արքունի մատանեաւն,
 Զի գնացեալ երթիցէ նա ի բերդն յԱնդամբն,
 Եւ զիարդ և կամք իցէ նորա,
 Զոր օրինակ և խնդրեացն՝
 Արասցէ կապելսն Արշակայ,
 Որ յառաջ թագաւորեալն էր ի Հայս:
 Եւ չօգու Դրաստամատն հանդերձ փշտիպանաւն
 Եւ հրովարտակաւն արքունի յԱնուշ բերդն,
 Եւ ետես զտէքն բնակ.
 Եւ արձակեաց զԱրշակ ի կապանացն երկաթեաց,
 Ի ձեռակապացն և յաւիցն երկաթոց
 Եւ յանրոց պարանոցէն շղթայիցն սարեացն.
 Եւ լուաց զգլուխ նորա,
 Եւ լօգացոյց զանձն նորա,
 Եւ ագոյց նմա պատմեաւն ազնիւ.
 Եւ էարկ նմա բազմականս, և բազմեցոյց զնա.
 Եւ եզ տուցի նորա ընթրիս
 Ըստ օրինաց թագաւորաց.
 Եւ եզ տուցի նորա զինի,
 Որպէս օրէն էր թագաւորացն.
 Սթափեաց զնա և մեծթաւեաց,
 Եւ սւրախ առնէր զնա զուսանօք,
 Եւ ի ժամ աղանդեր մատուցանելոյ՝

Եղին տառջի նորա մերգ,
 Խնձոր և վարունգ և տախճ, դի կերիցէ.
 Եւ եղին դանակ նմա,
 Որպէս դի հառցէ և կերիցէ գիւրգ և կամեացի:
 Եւ Դրաստամատ մեծապէս ուրախ առնէր զնա.
 Կայր յօտն, և միտքարէր զնա:
 Իսկ յորժամ արբեցաւ,
 Եւ գինին եկն զակամբ նորա,
 Արբեցաւ, հպարտացաւ և առէ.
 Եվ՛ ա, ինճ, Արշակայ.
 Այս ես և տյա, և յայսմ շափու,
 Եւ այս անցք անցին ընդ իսա:
 Եւ զայս ասացեալ՝ զգտնական, զոր առնէր ի ձեռինն,
 Որով զմիրգն կամ զամիճն կամէր ուտել,
 Եւար ի սրտի իւրում.
 Եւ անդէն սատակեցաւ.
 Եւ մեծաւ անդէն ի նմին ժամուն,
 Մինչ զեւ կայր ի բազմականին:
 Իսկ յորժամ զայն ետես Դրաստամատն.
 Յարձակեցաւ, եւան ի նմանէ զնոյն գտնակ,
 Եւ եւար յիւրում կշտին.
 Եւ անդէն մեծաւ և նա ի նմին ժամուն յայնմ:

Թուգ. Ե. 7.

Բերենք մի համար ևս մի զեղեցիկ դժգոհից (Ե. 6), որի մեջ փա-
 ւարանվում է բոլոր հայ չղօրքի՝ քաջութիւնն ու տիրապիւթիւնը:
 Արշակը շղթայված, բանտարկված է Անուշ քերդում, Պապը հռոմայեցիների
 ոգնութիւնը մտել է Հայաստան, և այնտեղից քշել են պարսիկներին:
 Քայց Շապուհը նորից հարձակվում է Հայաստանի վրա: Հռոմեական և
 հայկական զորքերը պատրաստ են մարտի համար:

Եւ լինէին խառնուրդք ճակատուն.
 Ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից:
 Մանաւանդ գունդք նիզակաւորացն
 Յարձակելոյ մոլեգնեալք, քաջութեամբ,
 Զախոյեանս ի վերուստ յերկմարացն յերկիր կարծանէին
 Յանդիման թողաւորին Պարսից Շապուհ.
 Եւ ընդ բնկնունդն խախտոյս բռնեային,
 Աղագակելով ամենայն զօրքն,
 Պատերզմիկը Հայոց համակ,
 Զայս բանս ասելով, եթէ՝ «Ա՛ռ, Արշակ քաջ»,
 Զի գտնեայն ախոյեանսն,
 Զոր ի հակառակն յայն սպանանէին,

Նմա նռերէին,
Իւրեանց առաջի թագաւորին Արշակայ-
Ձի զամենայն, զոր սպանանէին, առէին.
«Արշակայ թագաւորին մերոյ զոհ լիջիր»:
Եւ յորժամ Հայոց ազատանայ տխրեանայն,
Նիզակաւորացն ոռգմարարեալ յարձակեալ,
Ձգօրոն Պարսից նիզակաւորքն տռեալ ընկննուին,
Ասէին ի խրաթուսելն. «Ա՛ռ, Արշակ քաջ»,
Իսկ յորժամ դնեալ գլխատէին զախոյեանսն,
Ասէին. «Արշակայ զոհ լիջիր»:

Շապուհը պարտվում է և փախչում: Երբ նա հասնում է իր աշխարհը,
ասում է.

«Ձարմացեալ եմ ես զոր ինչ տեսի.
Ձի իմ ի մանկութենէ իմմէ,
Համակ ի ճակատու ե ի կռիւ մտեալ եմ,
Եւ բազում ամք են, զի հասի ի թագաւորութիւն,
Եւ առանց կռույ տմ չեմ լիալ.
Բայց իմ ջերմ կռիւ զայս էր տեսեալ,
Որ այս անգամս դիպեցաւ ինձ:
Ձի յորժամ Հայոց նիզակաւորքն առաջի կորզէին,
Այապէս յարձակէին որպէս զլիստոն մի բարձր
Եւ կամ որպէս զաշտարակ մի հաստաբեատ, հզօր եւ անշարժ:
Եւ յորժամ մեք զնոսա սակաւ մի շարժէաք,
Նաքա ի լեզէոն Հոռոմոց ապաստան լինէին.
Եւ նոցա զվաճանափական բացեալ,
Զնոսա իբրեւ ի քաղաքորմ,
Պարսպաւոր, ամրացեալ, ընդունէին:
Եւ անտի սակաւիկ մի ոգի առեալ,
Դարձեալ ելեալք մարտնչէին,
Մինչեւ անմի զգօրսն Արանց տռնէին:
Եւ միւս ես՝ որ ընդ այս եմ զարմացեալ ես,
Ընդ մտերմութիւն միամտութեանն Հայաստան զնդին,
Ընդ տիրասիրութեանն:
Ձի այնչափ ամք են՝ զի տէրն նոցա Արշակ
Կորուսեալ է ի նոցանէն,
Եւ նոքա ի պատերազմին ի նա խրաթուսէին:
Եւ յորժամ զախոյեանսն ընկննուին,
Համակ ասէին, թէ՛ «Ա՛ռ, Արշակ»,
Եւ նա չէր ի մէջ նոցա:
Եւ նոքա տա գութ տիրասիրութեանն,
Ձոր տա բնակ տէրն իւրեանց ունէին,
Զամենայն ախոյեանսն, զոր սպանանէին՝

Նման նուերէին:

Եւ կամ մոլեկան գունդն Մուշեղիան,

Ձի ինչ ալսպէս թուէր, եթէ հուր, բոց,

Ի գնդէն ելանիցէր և ի նշանացն,

Իբրև ի հուր հրգեհնի

Այնպէս անցանէր ընդ գունդն,

Որպէս բոց ընդ հղէզն:

Եւ ալսպի ժամանակք են,

Ձի Արշակ տէրն նոցա ի նոցանէն կորուսեալ է,

Ձի յԱնգմըշն բերդի կայ յերկրին Խուժաստանի,

Եւ նոքա առ դռնն համարէին,

Թէ ի զլուի նոցա նա իբրև թագաւոր կայցէ.

Եւ կամ ընդ նոսա արդեւք ի մէջ գնդին կայցէ,

Ի զլուի ճակատուն պատերազմին,

Եւ նոքա առ նմա առնիցեն պաշտօն յանդիման նորա:

Այլ, ասէր, երանելի որ Հայոց գնդին տէր իցէ,

Այնպիսի տիրասէր և միաբան, միամիտ զօրացն:

Բուգ. Ե. Ծ.

Բոլոր «զօրքի» զազափարական հերոսութեան ու տիրապիւրութեան ալսպիւրի դրվագները հորինված են, անշուշտ, Արշակունիների և Մամիկոնյանների շրջաններում: Դրանցով նրանք պրոպագանդա են արել ազնվականութեան մեջ՝ զորացնելու համար նրանց հովատարմութեանն առ Արշակունի թագավորները:

2. Թագավորի ամօժի ամօժանվելիւքը և ազգային պատվոտիրութեան:—Այն զորադրվանում աչ միայն Հայաստանի թագավորները, այլև Հռոմայեցոց կայսրները շարունակ ենթակա էին թանի մահացման իրենցայինների ձեռով, Հայոց թագավորներն ավելի հաճախ իշխողների կողմից: Ուստի մի ուրիշ զազափար էլ, որ անհրաժեշտորեն զարգացրել են, է՝ թագավորի ամօժի անձեռնմխելութունը, և բացի այդ՝ նաև թագավորի անվտանգութեան համար հոգալը: Այս երկու մոտիվները, ինչպես և մյուսները, հատուկ են ընդհանրապես ուրիշ հերոսական վեպերի ևս: Թագավորի ճակատամարտի գեղեցիկ դրվագը (Բուգ. Ե. 4) հորինված է, ի միջի այլոց, այդ զազափարների ծավալման համար: Թագավորին չեն թողնում, որ ճակատամարտի, որպեսզի նա վտանգի չենթարկվի: Նա նստում է նպատ լեռան գլխին և ալսպիւրի դիրսում է ճակատամարտը:

Այդ դրվագի մեջ մի տառնձին կերպով երևան է գալիս նաև ազգային պատվոտիրութեան զազափարը, որով նույն ազգին պատկանողները նախանձախնդիր են իրենց ազգային ալսպիւր, հարկավ, բոս ազնվականի հասկացութեան: Պարսից բանակը մի կողմից, և հռոմեական ու հայկական զորքերը մյուս կողմից՝ պատերազմում են ճակատամարտելու: Ազգանից թագավոր Ուսնայրն ասում է Շապուհին.

«Կեանք լիցի ջեզ, արանց ջեզ,
 Զի և ինձ պարզ և հրաման տացես,
 Զի Հայոց զնդին Պապայ արքային
 Ես ինձէն ելից իմով զնդովս նահապետ,
 Զի Արեւոց զնդին պատեն է
 Դիպան ելանել զօրացն Յունաց,
 Իսկ ես իմով զնդուս՝ Հայոց իշխանացն ելիցն,
 Եւ Շապուհ թագաւորն հաճեցաւ,
 Եւ շնորհ կալաւ և հրամայեաց,
 Բայց Մերուսանայ Արծրունւոյ
 Պատասխանի տուեալ Ուսնայրի, ասաց.
 «Աստ արկիւր զգաղիս գիրկս.
 Բայց թէ ժողովել կարեցես, մեծ զօրմանք իցենն»

Նույնիսկ Մերուսան զվատանշուրն, Վարդգրծըն, իր հայ ազնվա-
 կանի պատիվը վիրավորված է համարում, որ այդ թագավորը Հայոց
 զնդին հավասարեցնում է աղվանական զունդը։ Դա նվաստացում էր հայ
 զորականութան համար։ Ուստի Մերուսանը ժածուկ մարդ է ուղարկում,
 Մուշեղին իմաց առլիս այդ մասին, ավելացնելով՝

«Արդ գիտես՝ զինչ զործիցես»։

Մուշեղը հազթում է հակառակորդի մեջ և վրա է հասնում Ուսնայրին.
 Պատմվածքն այնպես է առաջ տարված, որ սպասում ենք, թե նա պիտի սպա-
 ներ այդ թագավորին այն վիրավորանքի համար, որ անգամ Մերուսանը
 չէր տարել։ Բայց վիպասանի վերջնական նպատակն այդ չէ, այլ ցույց
 տալ Մուշեղի տիրապետութունը, նա պատժում է հանդուրդն թագավորին
 իր ասած խոսքի համար, բայց ահա թե ինչպես։

Եւ Մուշեղ սպարապետն Հայոց...

Ոպաս արարեալ և գիպէր զնդին Աղուանից,

Եւ առ հասարակ զամենայն զօրսն ստառկէր։

Եւ հասանէր Ուսնայրի արքային Աղաւանից ի փախտեանն

Եւ նիզակորնաւն ի կռապին մատուցեալ ծեծէր բազում,

Ասելով, թէ՝ «Այդմ շնորհս կալ,

Զի տըր թագաւոր ես, և թագ ունիս.

Ես ոչ սպանից զայր թագաւոր։

Թէ կարի նեղ հասցէ ինձ»։

Եւ ութ հեծելով թոյլ ետ նմա փախչել,

Երթալ զնալ յաշխարհն Աղուանից։

Հակառակորդի հազթությունից հետո՝ քուսնները Պապի մոտ ամրաս-
 տանում են Մուշեղին, որ նա թշնամուսն չի սպանել և իրը նույնիսկ Հայոց
 թագավորին էլ նա սպանել է ուղուս։ Թագավորը Մուշեղին հանդիմանում
 է, և նա պատասխանում է.

«Ձիւմ զընկերսն դամենհասան եւ կոտորեցին.
 Իսկ որ թագս ունէին, նոքա իմ ընկերք չէին, ալ զճ.
 Եկեացես, որպէս ես զիմսն սպանի, դու գժոյսն.
 Այլ իմ յայր թագաւոր՝
 Ոչ ձգեալ ձեռն երբէք որ թագ ունի,
 Եւ ոչ ձգեմ, եւ մի ալ ձգել յիցի,
 Եթէ կամիս սպանանել զիս,՝սպանու.
 Այլ ես, եթէ գայ ինձ ի ձեռն երբէք այր թագաւոր,
 Որպէս եկն բաղուժ տնդամ,
 Ես ոչ սպանանեմ զայր թագաւոր.
 Որ գամ մի թագ ունի,
 Եթէ ոք իսկ զիս սպանցէս:

Բազ. Ե. 4.

Ահա թե ինչ գաղափարախոսութիւնն է ցարագում միպասանը.
 Թագաւորն երբ տնձիւ անձեռնմխելիութիւն յայն գաղափարը դարգացրած է եւ
 ուրիշ գրվազներ ժեշ, Մանուէլ Մամիկոնյանն իր եղբայր Մուշեղի սպան-
 վելու վրեժն տոնում է Վարազդաւ թագաւորից, նրանց զնդերը մարտն-
 չում են միմյանց հետ: Իրար վրտ են հարձակում եւ մենամարտում նաեւ
 Վարազդատն ու Մանուէլ սպարապետը: Թագաւորը պարտվում է եւ փախ-
 չում:

Եւ անդէն Մանուէլ,
 Զուէգ նիգակին ի ձեռին կտեալ,
 Եւ նիգակաւն ի կառափն մատուցեալ,
 Մեծէր գորքայն Վարազդատ.
 Այնպէս տանէր իբրեւ ասպարէղս չորս:
 Եւ անդէն որդիքն Մանուէլի
 Թորձակեցան մէն մի նիգակ ի ձեռն,
 Հմայեակն եւ Արտաշէսն, սպանանել զարքայն:
 Ինքն իսկ Մանուէլ ազադակէր զկնի որդւոցն իւրոց,
 Եւ ասէր. «Ա՛յ, մի լինիք տիրասպանուք»:
 Եւ նոցա լուեալ զձայն հօրն,
 Վաղվազակի արագ տրագ դառնային ի նմանէ:

Բազ. Ե. 37.

Այսպէս ուրեմն, կյանքի ու մահվան կռիւ մեջ անդամ Մամիկոնյան
 սպարապետը ցարագում է տիրասպան չլինելու:

Յ. Հերոսը:— Հայատարմութիւնն ու տիրասիրութիւնն եւ տիրասպան
 չլինել, դրանք դեռ ի հերոսութիւնն չեն տանում մարտիկներին: Թագաւոր-
 ները նրանցից պահանջում են ավելին: Ահա թե ինչպէս է Պապ թագաւորի
 ձեռը բռնելով՝ երգվում Մուշեղ սպարապետը.

«Կեցիցի եւ մեռայց ի վերայ քճ.
 Որպէս նախնիքն իմ ի վերայ նախնացն քճը,

Որպէս և հայրն իմ ի վերայ հօրն քո Արշակայ,
Սոյնպէս և ես ի վերայ քոս:

Բուգ. Ծ. 4.

Պարսիկները Մերուստնի առաջնորդութեամբ հարձակվում, ամերում
են Հայաստանը:

Ապա իբրև զայս լռէին,
Թաղաւորն Հայոց Արշակ
Եւ զօրավարն նորին Վասակ,
Հանդէս տոնէին զօրացն իւրեանց,
Եւ գտան ի ժամանակին անդ,
Ընդ ձեռամբն զօրավարին Վասակայ,
Արք զորձոց իբրև վաթսուն հազար,
Ընտիրք եւ պատերազմողք.
Որ միամիտք և միտօրոք էին,
Միարանութեան զործոցն պատերազմին,
Հասանել մարտնչել
Ի վերայ որդւոց և կանանց իւրեանց,
Եւ ի վերայ աշխարհին.
Դնել զանձինս իւրեանց մինչև ի մահ
Եւ ի վերայ աշխարհին գաւառացն ընտելութեան...
Փոխանակ բնակ տերանց իւրեանց Արշակունւոց:

Բուգ. Դ. 24.

Մանուել Մամիկոնյանն այսպիսի պատգամ է հղում Վարապդատ Թա-
ղավորին.

«Փոխանակ ամենայն ազգին մերոյ վաստակոցն,
Զոր ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ
Միամտութեամբ առ ձեզ Արշակունիս վաստակեալ եմք,
Եւ եղեալ զանձինս մեր ի վերայ ձեր,
Կեցեալ և մեռեալ եմք ի վերայ ձեր,
Ամենայն նախնիքն մեր առաջինքն
Անկտն ի պատերազմունս ի վերայ ձեր,
Վաստակ հայր Մուշեղի կորեաւ
Ի վերայ Արշակայ արքայի,
Եւ մեք հանապաղ վաստակեալ և աշխատեալ եմք
Ի վերայ Թաղաւորութեան ազգիդ ձերոյ,
Եւ փոխանակ կեանս առնելոյ ընդ վաստակոցն,
Արդ որք ի թշնամեացն մեռան,
Որք մնացին՝ զայն դուք Արշակունիքդ կոտորեցիք»:

Բուգ. Ծ. 37.

Մանսէիը հիվանդանում է և, զգալով որ պիտի մեռնի, իր տերութիւնն ու սպարապետութիւնն իր որդուն տալով՝ պատվիրում է նրան.

Եւ պատուիրէր նմա՝ ճշնագոյն, հպատակ կալ
Արքային Արշակայ, և լինել միամիտ,
Ջանալ և վաստակել, և տալ պատերազմ
Փոխանակ աշխարհին Հայոց.
Ջանձն քո տալ, որպէս քաջ նախնիքն,
Ի վերայ աշխարհին մտողիւր մեռանել...
Անուն քաջութեան յերկրի թողցուք...
Եւ ամենեին ի մահուանէ մի երկնիք...
Եւ ի վերայ... աշխարհի համարձակութեամբ մեռարձւք...
Եւ ի վերայ բնակ տերանց աշխարհիս Արշակունոյ:

Բուգ. Ե. 44.

Նա հիվանդ պառկած է մահմում, նրա շուրջը ժողոված են Հայաստանի բոլոր մեծամեհները և ինքը թագաւորն ու թագուհին: Այդ ժամանակ նա իր մարմինը բաց է անում և ամենքի առաջ ջուլջո տալիս: Բայց բերենք բառացի:

Ապա եբաց Մանուէլ զամենայն զանդամս իւր
Առ հասարակ առջի ամենեցուն,
Մերկացաւ և եցոյց, զի քան զգրամ իայծ՝
Ոչ գտանէր ողջ ի մարմնի նորա,
Ձոր խոցեալ էր ի պատերազմի...
Սկսաւ լալ և ասել,
Թէ՛ ճես ի մանկութենէ
Համակ սնայ ի պատերազմունս,
Եւ մեծաւ քաջութեամբ զամենայն վէրս յանձն իմ առի.
Եւ ընդէ՛ր ոչ եհաս ինձ մեռանել ի պատերազմի,
Պան դօրէն տնասնոյ մեռելոյ եղէ,
Ձի լաւ էր ինձ, եթէ ի պատերազմի
Մեռեալ էի ի վերայ աշխարհի...
Եւ ի վերայ Արշակունեաց,
Բնիկ տէրանք աշխարհիս,
Եւ ի վերայ կանանց,
Եւ ի վերայ որդւոց մերոց,
Եւ ի վերայ աստուածապաշտ մարդկանս,
Եւ ի վերայ եղբայրութեան, ընկերութեան,
Եւ մտերիմ բարեկամութեան,
Ձի՛ էր թէ հասեալ էր ինձ մեռանել,
Թէպէտ շատ զանձնս յանգունպն վարեցի,
Չվտաթար մահս մահմացս եհաս ինձ մեռանել:

Բուգ. Ե. 44.

Ահա ֆեոդալական ժամանակի հերոսը, Վեպի հերոսական իդեալական աղաքը, վիպական արժանիքներով, Հիշենք նույնպիսի հերոսի, բայց խնջույքի ժամանակ դավադրությամբ սպանված Մուշեղի վերջին խոսքը։

«Բայց իրըն հետս ինձ մահս,
Թէ՛ր ի վերայ ձերոյ դիպեալ էր»...

Բուդ. ն. 85.

Հերոսն, ուրեմն, դարձյալ մեռնելու համար չի ցավում, այլ որ նա ձիու վրա ճակատամարտի մեջ չի մեռնում մի մահով, որ ֆեոդալական ժամանակի մարտիկի համար աղիկ և պատվովոր էր։ Թշնամիներին մարտի մեջ չվախենալ մինչև վերջը, մինչև անգամ դաժան մահն աչքի առաջ ունենալով, ինչպես Վասակը Շապուհի դիմաց,— ահա անվեհեր հերոսը։ Մաքսորդն է և մեռնել աշխարհի և բնիկ տերերի համար, ահա թե ինչ է մեր այս մեծ Վեպի կենդանական գաղափարը։ Աշխարհի և բնիկ տիրող համար մեռնելը տալիս է ռազմիկ հերոսների գաղափարականացմանը սոցիալական իմաստ, հարկավ, ավատական ժամանակի հասկացությամբ։ Դրանով Մամիկոնյան սպարապետները դառնում են վեպի գլխավոր հերոսները։ Թե իրեք մի ժամանակ տղերք են Վաչե, Վասակ, Մուշեղ ու Մանուել զորավորները, և կյանքի մեջ ինչպիսի մարդիկ են եղել նրանք, մենք այդ չգիտենք։ Թերևս այդ վիպական անձերը պատմական են։ Բայց վեպի մեջ պահվում է պատմական անձի այս կամ այն իրական գիծը միայն, և չի տրվում ամբողջական պատկերացում նրա մասին, ինչպես Արշակը, մի պատմական անձ, Վեպի մեջ կորցրել է իր իրական գծերը և կյանքի իրական եղելությունները, նույնպես և սպարապետները։ Վեպի մեջ նրանք անձերից ևս,— եթե նրանք պատմական են,— անցաւո շատ քիչ բան է մնացել, նրանք նկարված են ընդհանուր հերոսական գծերով, ընդհանուր ֆեոդալական առաքինություններով։ Նրանց վերագրված են փռատվոր սխրագործություններ, մեծազոր նախնիք և քաջարի ոգի և այլ բարեմասնություններ ըստ դարի վիպական պատկերի։ Այդպիսով այդ հերոսները մեր Վեպի, այսպես ասած, սոցիալական անձերն են և իրեն այդպիսիներ, պատմական են։ Նրանք իրականության իդեալական պատկերացումներն են և առեղծված են 3—5-րդ դարերի սոցիալական պայմաններով, որոնք հերոսական բանաստեղծություն էին պահանջում պարսիկների դեմ պատերազմները վարելու համար։ Հարկավոր էր պաշտպանել Երեմի տիրոջը, որի մեջ, ըստ այն ժամանակի հասկացության, մարմնացած էր երկրի անկախության գաղափարը և նույնիսկ աշխարհն ինքը։ Հիշենք Տիրանին մասնով և կորցրելով ավոդ Փիսակին արված ստիքանենքը և այլ մականունները հետ նաև ճաշարհակորոյս մակդիրը։ Այդ էր այն դարերի գաղափարը։

Կարդանք և այն դրվագը (Բուդ. ն. 20), որի մեջ,— ինչպես հաճախ լինում է հերոսական վեպերի մեջ հերոսների սխրագործությունների պատմվածքի վերջում,— բերված է Մուշեղի գովաբանությունը.

Այլ քաջն զգրավարն, սպարապետն Հայաց
 Լի էր քիչիւ մեծու և բազում նախանձու
 Զամենայն աւուրս կենաց իւրոց,
 Եւ միամտութեամբ և արդար վաստակով
 Ջանալր հանապազ և վաստակէր
 Ի վերայ թագաւորութեանն Հայոց աշխարհին,
 Զաւր և զգիշեր կայր յաշխատութեանն.
 Ջանալր և ճղնէր կալ ի ճակատու պատերազմին,
 Եւ ոչ թողլոր բնաւ, ամենեւին,
 Եւ ոչ քան զկորի մի զետին
 Ի սահմանաց երկրին Հայոց ուրեք վտարել.
 Ի վերայ աշխարհին կեալ և ի մեռանել,
 Ի վերայ անուանն քաջութեան,
 Ի վերայ բնակ տերանց,
 Եւ ի վերայ բնակչաց աշխարհին...
 Եւ ի Քրիստոս մկրտեալ ժողովրդաց...
 Ի վերայ քերց և եղբարց,
 Ի վերայ մերձաւորաց առնմին,
 Ի վերայ բարեկաց բարեկիր բարեկամաց,
 Հանապազ կայր զգրավարն Մուշեղ
 Ի նահատակութեան պատերազմին,
 Զանձն փոխանակ առնել աշխարհին,
 Եւ յանձն իւր տնխայէր ի մեռանել,
 Զամենայն աւուրս կենաց իւրոց
 Առաջի իւրոց բնակ տերանցն,
 Արշակունւոց վաստակէր:

Ահա իդեալական հերոսը, որ ապրում է իր տիրոջ և աշխարհի համար, և չի թողնում ամբողջ կյանքը չափ գնդին Հայոց երկրից վտարել, տախնքն ոտարացնել: Դա արդեն ֆեոդալական ժամանակի հայրենասիրությունն է, վիպական հերոսի ոգևորության ազդրուրը: Այդ և Վեպի գաղափարականացումն է ըստ բովանդակության:

4. Վիպական գաղափարակցութեամբ չափագեղեցւած և պարտաքննման արդարացումը — «Պարսից պատերազմի» մեջ հայ թագավորներն ու սպարապետները վարում են շատ ու շատ ճակատամարտեր, շարունակ մարտ ու մարտ և միշտ հաղթություն: Նրանք միշտ կոտորում են թշնամու երբեմն միլիոնների հասնող բանակները: Պատերազմական հաջողությունների տապալիքի վիպական չափազանցումով ևս առաջ է բերվում իդեալականացում: Այդ պատերազմներն արդեն տեսել ենք Մեծն Խոսրովի, Տրդատի, Փոքր Խոսրովի և Տիրանի հյուղերի մեջ: Առնենք Արշակի հյուղը, որ Վեպի կենտրոնական մասն է:

Երեսնամյա պատերազմի ընթացքում քանի քանի անգամ հայերը Վասակ սպարապետի զորավարութեամբ քաղաքում են պարսիկներին: Հենց սկզբից Շապուհն անձամբ զորքով գալիս է Արշակի վրա: Վաստակն Արշակի հրամանով վաթսուներկու (ա՛ռ 600,000) հեծելազորով զուրա է գալիս նրա դեմ:

Առ հասարակ զօրսն զամենայն
Հարկանէին ի սուր սուսերի իւրեանց.
Եւ միաձի ճողոպրեալ
Արքայն Պարսից Շապուհ փախչէր:
Սոքա հասանէին, դերէին,
Այրացաւեր առնէին առ հասարակ զերկիրն Պարսից.
Նւ ինքեանք կային ունէին զնահապառն անդի,
Այս ինքն զսահմանս Պարսից պահէին:

Բուգ. Դ. 21.

Այս առաջին հարձակումն է: Երկրորդ անգամ ավելի մեծ աւժույ է զա-
յիս Շապուհի:

Յայնմ ժամանակի թագաւորն Պարսից Շապուհ
Ժողովեաց զզօրս իւր անթիւ և տնհամար,
Իբրեւ զաւագ առ արիւն ծովու.
Նւ փրկա բազումս, զի ոչ զոյր նոցա թիւ:

Ինչքան էլ հայերն շտապում են իրենց զորքը ժողովելու, սակայն
պարսիկներն իրենց զորքը երեք մասի բաժանելով՝ երեք տեղով մտնում
են Հայոց երկիրն և ասպատակում: Հայերն էլ ժողովում են իրենց զորքը,
այնքան շատ,

Ձի ոչ զոյր համար բազմութեանն:

Միևնույն տարում միևնույն ամսի միևնույն օրը ճակատամարտ է լի-
նում երեք տարբեր տեղերում՝ Վասակի, իր եղբայր Բագրատի և Արշակի զորա-
վարութիւնը: Երեք տեղում էլ հայերը հաղթում, կոտորում են պարսիկներին:

Ի պարտութիւն մատնեցան զօրքն Պարսից,
Դարձան ի փախուստ, ջրուեցան, սփռեցան:
Հասանէր զօրավարն Վասակ,
Արկանէր զզօրսն ամենայն փախստէիցն Պարսից.
Ոչ ապրեցուցանէին և ոչ զմի,
Նւ թափեցին աւար բազում և զփիղոսն:

Շապուհի բանակի դեմ դուրս է գալիս Արշակ թագավորը:

Ապա անկանէր դիշերի արքայն Արշակ
Ի վերայ բանակին Պարսից,
Նւ անդէն ընդ սուր հանէր զամենեանս.
Բայց միայն միաձի մազապուր,
Ճողոպրէր թագաւորն Շապուհ,
Փախուցեալ անկանէր յաշխարհն Պարսից...
Նւ սոքա [հայք] ի կողմանս Պարսից ասպատակէին.

Եւ լցան զանձիւք բազմօք, և զինու, և զարդու,
Եւ բազում աւարաւ, և անչափ մեծութեամբ,
Եւ հարստացան, անցին ըստ չափի:

Բազ. Գ. 22.

Այսպես՝ պարսիկներն իրենք ոչինչ չեն կարողանում անել: Բայց ահա
գալիս է դավաճանութունը, Հայոց թագավորից ապստամբում է նախարար-
ներից մեկը — Մերուստան Արծրունին: Նա առաջնորդ է դառնում պարսիկ-
ների առաջվանից ավելի շատ զորքերին, և մինչ Հայոց թագավորն երկրի
աբնականօրէն էր գնացում, հայերի չապաստե կողմից պարսիկները մտնում
են Միջնաշխարհը:

Եւ զգորսն Պարսից պատրաստէին
Առաւել ևս քան զառաջինն,
Եւ առաջնորդ ունէին
Ջշարագործն Մերուստանն,
Ապառաակել յաշխարհն Հայոց,
Յանկարծորէն ալրացաւեր
Ջերկիրն Հայոց առնէին
Առաջնորդ Մերուստանաւ:
Ջորս տային ի կռիւսէն փղաց,
Եւ զկանայս ընդ ցից սայլից հանէին.
Առնուին, կռաորէին
Ջամնայն բնակիչսն վերնագաւառացն Հայոց:

Բայց երբ պարսիկ զորքերն իմանում են, որ Վասակ զարավորը գա-
լիս է իրենց վրա, նրանք շտապով փախչում են դեպի իրենց աշխարհը:

Ապա զհետ կըթէր Վասակ Մամիկոնեան,
Եւ երթայր հաստնէր նոցա.
Ջուէին ի սահմանս Աորպատականին:
Իսկ զորքն թագաւորին Պարսից թողին զգերին,
Եւ փախստակաւ լինէին հանդերձ Մերուստանաւ:
Եւ թափէր անչափ և տնթիւ
Ջամնայն զառեալ գերութիւնն:

Բազ. Գ. 23.

Նորից Մերուստանն առաջնորդ է դառնում, և այս անգամ Շապուհ թա-
գավորն անձամբ՝ իր զորքին զլուխ անցած՝ Հայաստանի տրեւտյան կող-
մից հարձակվում է և ավերում երկիրն այն ժամանակ, երբ Արշակն իր
զորքով Աորպատականի սահմանների վրա զգուշությամբ սպասում էր պար-
սիկներին:

Այրացաւեր առնէին, և զանթիւ մարգիկ
Արկանէին ի սուր սուսերի իւրեանց.
Եւ զկանայս և զմանկտի հանէին ընդ ցից սալից,
Զկէսս զսր ի ներքոյ կամացն արկեալ կասուին.
Եւ զարանց բազմութիւնս տային ի կոթուսն փղաց-
Եւ զառանց թուոյ զմատազ մանկտոյն,
Զայն ի գերութիւն վարէին,
Եւ զբաղում ամուսնս քանդէին,
Եւ զբերդս աւերէին զամուսնս:

Բայց դարձաւ Վասակը վրա է հասնում, կոտորում բոլորին, և միայն
Շապուհն ու Մերուժանն են ազատվում:

Բայց միայն թագաւորն միաձի
Ճողպարեալ մազապուր փախչէր...
Բայց յայնմ նուագի ևս
Ապրէր Մերուժանն չարագործն,
Փախուցեալ ընդ արքային Պարսից:

Բուգ. Դ. 24.

Այնուհետեւ հայերն իրենց երկիրը զոհապահում են Վերկոսին դուրս
ստեմանացնալ: Այս անգամ Արշակն է հարձակման գիմում հոնքերի ոգնու-
թյամբ: Շապուհն էլ իր կողմից գալիս բռնակ է գնում Թաւրիզում: Հաղ-
թում են հայերը և կոտորում ամենքին: Միայն Պարսից թագավորը դար-
ձաւ ւերաձի ճողպարեալ փախչում է:

Հաջորդ հարձակումներն այլևս Շապուհն անձամբ չի կատարում, այլ
զանազան իշխանների ձեռով: 23 անգամ մեծամեծ բանակներ է ուղարկում
Հայաստան Արշակ թագավորի վրա: Բայց ամեն անգամ էլ Վասակ սպարա-
պետը համեմատաբար սակավաձեռն ուժերով ջարդում, կոտորում է, նրանց
բոլորին թանձր անուշ: Հայոց բանակների համար հիշվում են 120 հազար,
11 հազար, 40 հազար, 70 հազար և 30 հազար թվով զորքեր, իսկ պարսիկ-
ները երեք անգամ հարձակվում են Թանթիվ լիւս յառ զորքերով, իսկ
Մնացած հարձակումները նրանք կատարում են երկու անգամ 180 հազար
զորքով, մեկ անգամ 350 հազար, հինգ անգամ 400 հազար, երկու անգամ
600 հազար, մեկ անգամ 800 հազար, հինգ անգամ 900 հազար, երկու ան-
գամ 4 միլիոն, մեկ անգամ 5 միլիոն զորքերով: Ընդամենը 26 միլիոն 210
հազար զորքերով, չհաշված երեք անգամի անորոշ բազմութիւններ, ինչպես և
առաջին հինգ հարձակումները: Իհարկե, այդ թվերը՝ «վաթսուս» բխւոյ,
չորեքհարիւր հազար, չքուսուսուս բխւոյ, շինասուս բխւոյ, չորեքհարիւր
բխւոյ, շինհարիւր հազար և այլն՝ հիշա իմաստով չեն գործածված: Վի-
պասանը դրանով ուղեցել է միայն Պարսից բանակի մեծութիւնը: Եւ այն
տալ չափազանցութեամբ, առանց, գուցէ, կարողանալու հաշվել, թե՛ ճշման
է անուշ, օրինակ, շինասուս բխւոյ թիվը: Այդպես ասվել է իբրեւ՝ անշափ,

անհամար, կամ ինչպե՞ս՝ «գումարէր գումարտակ բազում իբրև զաւագ նախն
բազմութեամբ»։ Այս բոլոր 28 հարձակումներն ժամանակ ահա, ըստ Վեպի,
հայերը կտտորու՞մ են միլիոնավոր պարսիկներին, մեծ մասամբ և նրանց
զորավարներին, և փախչում, ազատվում է Շապուհը, եթե նա գալիս է,
ինչպե՞ս և Մերուտանը, Եվ հետեանքն ինչ է լինում։

Ջերեսուն և զչորս ամս հսու՛ն պատերազմ
Երկիրս Հայոց ընդ թագաւորին Պարսից,
Եւ յետ ժոյնորիկ ձանձրացան, պարտեցան,
Լքան, աշխտեցան երկօքին կողմանքն,
Եւ սկսան սորսորել, գնալ
Ի բանակէն Հայոց թագաւորին,
Թողին զհարեանց արքայն Արշակ։

Բուգ. Դ. 50.

Եվ Վեպը մի առ մի թվում է, թե ովքեր, որ իշխանները դավաճանու-
թյամբ անցնում են պարսիկներին կողմը, մի երկուսը հեռանում են, հունա-
կան երկիրը՝ Դրանք բոլորը Հայաստանի եզերային նահանգների իշխա-
ններն են։ Մնում է միայն Միջնաշխարհը. բայց դա էլ անհնազանդ է գրո-
ւմվում։

Միջնաշխարհն, մնացեալքն յերկուացան յարքայէն,
Եւ ոչ կամէին լսել թագաւորին իւրեանց,
Ոչ մի ինչ իրս՝ զոր նա կամէր,
Եւ զձեցաւ թագաւորութիւնն մեծապէս։

Հայոց թագավորից ապստամբում և Շապուհի կողմն է անցնում նույն-
իսկ Վասակ սպարապետի հղբայրը՝ Վահան Մամիկոնյանը, «իսկ թիւն Հա-
յոց պակասեաց, յայսմ հետէ և յապա», — ասում է Պատմադիրը։ Արշակը չի
պարտված։ Բայց նախորարները չեն ուզում պատերազմել, Ահա թե ինչ են
ասում նրանք ներսեսին.

«Դու, տէր, քեզէն գիտես,
Ջի այս երեսուն ամ է թագաւորին մերոյ Արշակոյ,
Ջի ոչ մի ամ մեզ հանգիստ ոչ եղև ի պատերազմէ.
Եւ համակ արով և սուսերօք,
Եւ ի սլաքս և ի տէգս նիզակաց
Ջքատունս երեսաց մերոց ջնջեցաք,
Եւ արդ ոչ կարեմք այսմ զոռոյժ սենել,
Եւ ոչ այլ կորեմք տալ ճակատս.
Ջի լաւ է մեզ, թէ ծառայեսց մեք թագաւորին Պարսից
Որպէս ընկերքն մեր տրարին
Ջի Թողին գնա և գնացին առ թագաւորն Պարսից։

Նւ մեք սոյնպէս տոնելոց եմք,
Զի ոչ այլ ես կարեմք կոռուել,
Թէպէտ իցէ թագաւորին Արշակայ կռուել ընդ Շապուհ,
Վասակաւ և Անդուկաւ աներաւ իւրով տացէ զպտերազմ.
Այլ յայսմիկ Հայոց աշխարհէմ
Նւ ոչ մի այր ոչ ոք է երթալոց
Ի թիկունս օգնականութեան նորա:
Նմա թէ պէտ իցէ, տացէ զպտերազմ, թէ պէտ՝ մի.—
Մեր թողեալ զնա, մեզ չէ փոյթն:

Բուզ. Դ. 51.

Նրանք չեն յսում ներսեսի խրատին և աղմկելով ցրվում են իրենց տները:

Զազաղակ հարկանէին,
Քորոզ կարդացեալ՝ միմեանց ձայն տոնէին,
Շփոթէին, ամբոթէին և ասէին.
«Հօպա, դնացհւք, ասեն,
Սփռեցարուք յիւրաքանչիւր տեղիս,
Զի այդմ բանից մեք ինչ ոչ կամիմք լսել:
Սփռեցան յիւրաքանչիւր տունս իւրեանց:

Շատ էլ հերոս Արշակը, «Արշակ Քաջը», ցանկանում է պատերազմը շարունակել. բայց «զօրքը», ինչպես կոչվում էր ազնվականութիւնը, համաձայն չէ դրան: Մյուս կողմից Շապուհը նենգությամբ նվերներ ուղարկելով՝ թուղթ է գրում և սիրով խնդրում Արշակին, որ զնա նրա մոտ,

Զի յայնմ հետէ արասցեն ի մէջ իւրեանց
Սէր ե խաղաղութիւն և բարեկամութիւն մեծ:

Արշակն ստիպված համաձայնում է հաշտվելու: Շապուհը դարձյալ կանչում է նրան իր մոտ, տանով.

«Իսկ եթէ հաճ եմք ես և դու ընդ միմեանս,
Ե՛կ տեսցուք զմիմեանս.
Նւ յայսմ հետէ իրրև զհայր և զորդի լիցուք ընդ միմեանս,
Ապա թէ ոչ տեսանես դու զիս,
Քնդրես զպատերազմ ի մէջ իմ և ի մէջ քո»:

Արշակը պահանջում է նրանից հովատարիմ երդում, և Շապուհն ուղարկում է բնաւ օրինացն հաւատարիմ երդմանց թագաւորութեանն Պարսից՝ աղ, կնքել վարազ նկարագիր մատանեաւ: Այդ էլ որ տեսնում են, Հայոց երկրի բոլոր մարդիկն ստիպւում են թաղավորին գնալ Շապուհի մոտ

Յայնմ հետէ թէ կամու՝ և թէ ոչ կամու,
Յարեաւ թագաւորն Հայոց Արշակ,
Առ ընդ իւր զգորովարն,
Սպարապետն Հայոց, զգայական իւր,
Քաղաքս պնաց յերկրէն Հայոց յերկիրն Պարսից:

Բուզ. Դ. 53.

Գնում են Շապուհի մոտ և այլևս չեն վերադառնում, իսկ երկիրն առ-
դուրս մնալով՝ ավերվում է և՛ տարօրկների, և՛ դավաճանների ձեռով:

Հերոսներին դավաճանում են: Նրանք մենակ են մնում, խաբվում են
և թանգես կործանվում: Բայց և թնայեա գերության մեջ անգամ նրանք
իրենց պահում են հերոսական հպարտությամբ: Արշակը Հայաստանից բե-
րել տված հողի վրա, ինչպես տեսանք, Շապուհի հետ խոսում է իրրե իր մի
ծառայի հետ. իսկ Վասակ սպարապետը՝ ինչպես մի անվեհեր առյուծ:

Այս միևնույն հերոսական զաղափարականացումը Մամիկոնյան զորա-
վորի համար տեսնում ենք և Պապի ժամանակ, թեպետ հոռոտյեցոց
կայսրը տարօրկների դեմ ուղարկում է վեցհարյուր բոլր (—վեց միլիոն)
զորք: Բայց կովոզը միայն Մուշեղ սպարապետն է իր տասն հազար զոր-
քով: Նա իբրե տառջապահ մանում է Հայաստան և կոտորում բոլոր պար-
սիկներին իրենց պարագլուխների հետ:

Եւ ոչ մի զոք ոչ ապրեցուցանէր...

Եւ զբողոսւմ պատուաւոր տեարս,

Որ պատուականք էին տալի թագաւորին Պարսից,

Ունէր ձերբակալս Մուշեղ,

Եւ տայր մորթել և ընդ խնամի,

Եւ կանգնել ի վերայ պարսպացն:

Ընդ բողոսւմ տեղիս դայս առնէր

Ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ:

Բուզ. Ե. 1.

Շապուհը, Մերուժանի աստիճանաթիւմը, գալիս է Հայաստանի վրա:
Նրա բանակը թափրեզում է: Մուշեղը հարձակվում, կոտորում է ամենքին:
Շապուհը դարձյալ բխնալի մագաղուր... Հողապրկալ փախչէր: Նրա կա-
նաքը, բռնկանց տիկիւնն հանգերձ ալովք կանամբքն գերի են ընկնում
Մուշեղի ձեռքը: Նորից հարձակվում են պարսիկները: Այս անգամ հանա-
կան և հայկական զորքերը միասին մարտնչում են նրանց դեմ. բայց զը-
լալոր զորքը Մուշեղն է կատարում իր 90 հազարից ավելի զորքերով: Պար-
սիկները շախշախվում են: Մի վերջին անգամ էլ Շապուհը հարձակում է
գործում: Կռվում են հունական զորքերն ևս, բայց դարձյալ զլիավոր գերը
Մուշեղն է կատարում: Այնուհետև դադարում է հարձակումը պարսիկների
կողմից Պապի ժամանակ, և Մուշեղն աջողությամբ կոտորում, զոպում է

բոլոր ապատմանքներն ու դավանանքներն (Ե. 8—19), նվժերջը, բոլոր հաղթութիւններէն հետո, իբրև մի ատրուած վիպական մոտիվ, լինում է Մուշեղի զովարանութ յունը, որ տեսնուք:

Պարսից պատերազմը, սակայն, դեռ չի վերջանում: Մուշեղի եղբայր Մանուելը Հայաստան գալով՝ դառնում է սպարապետ, կոտորում է Սաւրեն մարդոցանի 10 հազար զորքը: Ապա Շապուհը չորս տնգամ նրա վրա մեծամեծ բռնակներ է սպարկում, և Մանուելը բոլորին կոտորում է:

Եւ ճեպեաց Մանուէլ և եհաս ընդգէմ զնորն.
Եւ արկանէր ի սուր զզօրսն Պարսից.
Եւ զԴուստնդ Շապուհն սպանանէր:
Եւ դարձեալ ելանէր մեծաւ յաղթութեամբ:

Բուգ. Ե. 39.

Հարկանէր և սատակէր,
Զնջէր զնոսա ի միջոյ.
Եւ գլխովին զՎարազն սպանանէր.
Թափէր զկողոստ սատակ,
Զդարդ և զգէն զօրացն,
Եւ դառնայր մեծաւ խաղաղութեամբ:

Բուգ. Ե. 40.

Եւ անգէն առ հասարակ
Ընդ սուր հանէր զամենեսեան ի զակիշ...
Եւ թափէր աւար բազում,
Եւ ոչ դմի ոչ տարեցուցանէր ի նոցանէն:

Բուգ. Ե. 41.

Վերջին տնգամ Պարսից Թագավորը գտնուեալ Մերուսանի գլխավորութեամբ զորք է ուղարկում հայերի վրա: Մերուսանն սպանվում է մարտի ժամանակ, նրա զորագուհին ամբողջ կոտորվում է:

Հարկանէին, սատակէին զնոսա.
Եւ դմի ի նոցանէն ոչ տարեցուցանէին...
Այլ իբրեւ լուսն զօրքն Պարսից,
Զոր թողեալ էր Մերուսանայ ի զաւառն Կորճէից,
Թէ սատակեցաւ Մերուսանն,
Եւ կորաւ ցունդն որ ընդ նմա,
Եւ ինքեանք ի Պարսից երկիրն փախստական գնացին:
Եւ Հայոց երկրին լինէր խաղաղութիւն բազում:

Բուգ. Ե. 43.

Եվ հայերի այս հաղթութիւնամբ վերջանում է Վարսից պատերազմը։ Ապա իբրև վերջուրան, ինչպես շատ հերոսական սխրագործութիւններից հետո լինում է, ամուսնանում են Արշակունի եղբայրներն՝ Արշակն ու Վասակը, և հարստեքի ու բախտութիւնն են տեսնում։

Եւ մեծապէս տարեալ զհարսանիսն
Ամենայն երկիրն Հայոց,
Ծնծոցեալք, խնդացեալք էին
Ընդ այն մեծ խնդութիւն ուրախութեան։

Բուգ. Ե. 44.

Այսպես՝ տեսնում ենք, որ այս հերոսական բանաստեղծութիւնն մեջ հայ մարտիկները հակառակ ժողովրդի կողմից ոչ մի անգամ չեն պարտվում։ Նույնիսկ Գուգարացիների դեմ պատերազմելիս գերի հայերը քաջութիւն հրաշքներ են գործում, ինչպես օրինակ, Դրաստամատը, որ մահից աղատում է Շապուհին։ Գուգարացիները կոտորում են Վարսից բոլոր զորքերին, բայց ազատվում են Մոնոնելն ու իր եղբայրը՝ մեծ քաջութիւններ անելով, Հայերը միշտ ջարդում են իրենցից առանապատիկ և նույնիսկ հաղթութեամբ տիրելով մեծ թվով թշնամիներին, նրանց երեքն յիշատակների հասնող մարդկանց բոլորին։ Դա հատկանշիչ է հերոսական վեպի, որի մեջ մարտը վերջանում է միշտ հերոսների հաղթութիւնով։ Դրանով, այդ չափազանցումով, լինում է հերոսի վիպական զաղափարականացումը, և արտահայտվում հայրենասիրական ոգին, մոլեռանդ, անձնուրաց, ինքնապարծ։ Հայր միշտ և ամենուրեք քաջ է և անհաղթ։ Վեպի այդ նկարագիրը, հարկով, համապատասխան չէ իրական պատմական դրութիւնը։ Թշնամիները հոռախ առջավել, մտել են Հայաստան, կոտորածներ արել, առ ու ավար տարել։ Նույնիսկ հռոմէականները ոչ սակավ անգամ ծայրե ծայր ողողել, անպատակել են Հայոց երկիրը։ Վեպի մեջ էլ գտնում ենք տղապիսի դրութիւնների ցնցող պատկերներ ու պատմութեան, բայց տղապիսի զեպքերը, վիպական հատկութիւններ, միշտ արդարացիվում են որեւէ պատմագրով։ Կամ թագավոր ու զորավար չկա, կամ դավաճանութիւն ու դավադրութիւն կա մեջանդում, կամ զորավարը բացակա է, կամ դեռ զորք չկա ժողոված, կամ սահմանապահները զեպ են, կամ թագավորն ու իր սպարապետը երկրի ուրիշ կողմում են, իսկ թշնամին դավաճանի առաջնորդութիւնով հակառակ կողմից է մտնում Հայաստան։ Բայց վերջի վերջոյ ճակատամարտերի մեջ հաղթողը հայ թագավորն ու սպարապետն են։ Եվ եթէ հերոսները՝ Արշակն ու Վասակը պարտվում են, այդ լինում է միայն այն պատճառով, որ, ինչպես տեսանք, ամենքը հոգնում են կռիւի և լքում են նրանց, եվ եթէ հերոսներն ընկնում են, նրանք ընկնում են միայն նահապետիւն ու խաբեութիւն զոհ դառնալով։ Այդպես կործանվում են խորով Մեծը, Տիրանն ու Արշակը, այլև Պապն ու Մուշեղը, որոնց սպանում են դավադրութիւնով, ուրախութիւն խնջոյքի ժամանակ։ Այլպէս նրանք անպարտելի են։

Դա վիպական զաղափարականացումն է։

Շատ հերոսական վեպերի մեջ կգտնենք ոչ միայն տղապիսի չափազանց

Յոռոքածները, այլև անհաղթ հերոսի հետ նաև մի դավաճան։ Դրանով քաղաքավուհ է հերոսի պարտությունը, և հերոսն ավելի բարձրանում է, թողնելով այն աղավորությունը, թե նա չէր հաղթվել, եթե չլիներ դավաճանությունը։ Իսկ երբ դավաճանության պատճառով սկզբում միայն անհաղթություն է լինում, դրանով հետո ավելի ևս տպավորել է դառնում հերոսի հետագա հաղթությունը, և նա ավելի ևս գաղտնիքակա՞ն է դառնում։ Եվ վերջապես երբ հերոսը թշնամու խորեռության ու նենգության գործառնալով խորատկվում է, թշնամին իր բացասական կողմով, իբրև խաբեբա ու նենգավոր, ավելի ևս նվաստացվում է, իսկ հերոսը, նրա հետ համեմատվելով, ավելի ևս բարձրանում է բարոյապես, որով և նա դարձյալ ավելի գաղտնիքակա՞ն է դառնում։

Կարևոր չէ այստեղ ինչպես ուրիշ վիպական մոտիվներին, նույնպես և դավաճանության համար զուգանժանություններ բերել ուրիշ ազգերի հերոսական վեպերից։ Այդ նենգավոր ու խաբեական վարմունքը հավասարակողմ կողմից, դա շատ տարածված մի վիպական մոտիվ է։ Անյուշտ, Արշակի ու Պապի անկման վեպերը հիմնված են իրական եղելությունների վրա։ Թերևս այստեղան հիմք կարող է ունենալ և մյուսներից սրտ կամ նրա անկման պատմվածքը։ Բայց այդ դեպքերը, ինչպես և առհասարակ պատմականորեն ամօթալի իրականությունները, արված են այնպիսի բազմաթիվ հերոսական հաջողություններից հետո, կամ թե դրանցից հետո գալիս են այնպիսի վրեժխնդրություններ, այն էլ այնպիսի մշակումով, որ հանձինս վիպական իդեալական հերոսների երևան չի գալիս պատմական անձերի — թագավորների ու զորավարների և նույնիսկ տերություն իրապես գոյություն ունեցած թուլությունը։

Ճ. Գողափառակամացման մեղադրությունը։ — Պարոնից պատերազմն վեպը ծագել ու զարգացել է ֆեոդալական շրջանի վերին հասարակական խավի մեջ, գլխավորապես Արշակունի թագավորներին ու Մամիկոնյան զորավարների միջավայրում։ Դրա անմիջական հետևանքով մեր այս էպոսը դարձել է իսկույան այն երկու տոհմերի վեպը, այս բառն իր հին նշանակությամբ առած՝ իբրև պատմություն, իբրև բանաստեղծական պատմություն կամ պատմական բանաստեղծություն։ Արդ՝ պատերազմը պարսիկների դեմ աղոթության մարտն էր համար անհրաժեշտ էր ռազմիկներին ոգևորել, իսկ դրա համար հարկավոր էր հերոսական բանաստեղծություն, պետք էին տնպարտելի քաջություն ու հաղթության երգեր, իդեալական հերոսության օրինակներ։ Նույնպես պետք էր և պարտության արդարացումը զորքին լքում և հուսաբեկություն չպատճառելու համար։ Ահա թե ինչ է եղել գուռանի նպատակը՝ պատմական երգն ու վեպը հորինելիս, և թե ինչու նա այնպես չափազանցել ու գունավորել է իրական պատմական եղելությունները։ Վիպատանի այս միտումը քաջալերվել, անպայման և թելադրվել է ֆեոդալական շրջանի ռազմիկ ազնվականության վերին խավերից, գլխավորապես Արշակունիներից ու Մամիկոնյաններից։ Սրանք իրենց նպատակների համար ստեղծել են տվել իրենց պատմությունը, իրենց գովաբանական վեպը և՛ չափազանցումներով, և՛ միտումնավոր գունավորումներով, և՛ իդեալական մոտացումներ քաջագործություններով։

Հոգևորական պատմագիր Մովսես Խորենացին, պատմական հայացքով նայելով իրերին և Արշակի վախճանը նկատի ունենալով, կտրող էր հոգևորականներին չսիրող Արշակին «ինքնահաճ և բարեբախտական համարել, ծաղրել նրան, գրելով, թե հնա պարծենում էր զինարդունքներում, և թե նա միայն «վարձակներին» երգերի մեջ էր քաջ և արի հրեւում, Բայց այդ երգերի մասին այդպես չէր կարող մտածել ինքն Արշակը։ Նա, ըստ Ամիրանյանի, իրոք լքված էր հոռմայեցիներից (և ոչ թե, ինչպես Խորենացին՝ դրում է, իբրև Արշակն ինքը «նշակահալ արհամարհեաց գնոսա»)։ Նա միշտ ժամանակ և ստիպված էր մենակ երկարամյա ծանր պատերազմ վարել իրենից շատ ու շատ ավելի զորեղ Շապուհի դեմ, որ ձգտում էր ոչնչացնելու նրան և նրա տերութիւնը։ Արշակին և նրա նախորդներին ու հաջորդներին հենց այդպիսի քաջության և արության մասին երգեր ու վեպեր էին պետք, հերոսական քանաստեղծութիւն և հերոսների զաղափարակաւացում էր հարկավոր իբրև պրոպագանդայի միջոց, Վիպասանի և առհասարակ ֆեոդալի հայացքը վեպի և պատմութիւն վրա՝ այնպիսի էր, որ նրանց համար միևնույն էր, թե երգ ու վեպի մեջ իրական, այսինքն, իսկապես կատարված եղելութիւններ և իրոք աղբյուր անձեր են հանդես գալիս, թե չէ։ Բավական էր, որ դրանք կարող էին ունենդիրներին երազել տալ նույնպիսի սխրագործութիւնների մասին։ Թագավորին ու իր սպարապետներին անհրաժեշտ էր ծանր պատերազմի ժամանակ ամրացնել իրենց դիրքը։ Իրա համար նրանց պետք էր պարծենալ իրենց զործերով, իրենց ձագուճով փառավոր նախնիքներից, նրանց հարկավոր չէր եղելութիւնների իսկական պատմութիւնը, և «վեպի նպատակը չի եղել վերաբաղել պատմութիւնը։ Գուցարն վիպում է այնպիսի պատմութիւններ և պատմական իրակութիւններն այնպես փոփոխում է և այնպես է պատմում, որ իր պատվեր տվողին հնարավոր լինի պատմութիւնն օգտագործել իր նպատակների համար։ Իսկ այդ նպատակը եղել է ազդել ունենդիրների վրա հերոսալեռնով, աշխարտելի մարտիկների սխրագործութիւններով, որպեսզի ունենդիրներն իրենք էլ ցանկանան նույնն անել։ Այդպիսի, դրա մեջ է հերոսական քանաստեղծութիւն ստեղծական նպատակը։ Այդ բանը շատ լավ գիտեն իրենք կովդները։

Ուսյալ Ղաղար Փարպեցին, անշուշտ, «ճշգրտաբանութիւն» չէր համարում և չէր էլ կարող համարել Բուզանդի բոլոր չափազանցումները, Նա, Վահան Մամիկոնյանից քաջվելով, մեղմորեն նկատում է, թե Մամիկոնյանները այդ պատմութիւն մեջ կան «ի տեղիս ուրեք... բանք ինչ ոչ յարմարք և դիպողք», «անպատշաճ կարգումն»։ Նա այդ պատմութիւնն անվանում է նույնիսկ ոչ «զգիտնոց բանք», այլ «անմտացն շաղիազիւնք»։ Այդպես չեն մտածել, սակայն, Ղաղարի ժամանակակից մտերիկներն իրենք, ինչպես, օրինակ, ըստ Փարպեցու, «Մտաւոր և քաջ այրն Վահան, տէրն Մամիկոնէից, զօրավորն Հայոց», որ շատ մարտեր էր վարել պարսիկների դեմ։ Նա «արթնամիտ խորհրդականութեամբ ուղարկեալ այսմ ամենայնի», — այսինքն Բուզանդի մասին եղած կարծիքներին, — հրամայում է Փարպեցուն՝ պատմութիւնը շարունակել Բուզանդի թողած տեղից։ Նրան պետք էր ոգեվորել ազգիկներին քաջերի ու արիների օրինակով, թեկուզ նրանց մտա-

ցածին դործերով, և դժուարացնել տնտեսներին և վտակներին դաժանանքով օրինակով՝ պարամվելով նրանց արտաքինները և պատժել տալով նրանց, Այս նպատակն է դնում վաճառող պատմութեան համար¹, նույնպես և ինքը Ղ. Փարպեցին և ընդհանրապես հին պատմագիրները, Զպտը և Կարենի, Թե այն, ինչ որ պատմագիր Ղազարն ու զորավար վահանք մասնել և դործադրել են գրավոր կերպով, նույնը չեն արել առաջ, գիր չեղած ժամանակ, ուրիշ զորավարներ ու թագավորներ և գուպանները, «Տարեգրութեաններ» և էպոսի սոցիալական միտումը միևնույնն է, Տարեգրութեանները, ինչպես և վեպը, դժուարանական են: Նրանց բովանդակութեանն էլ ընդհանրապես նույնն է. թագավորներ և իշխաններ շատերով, հաղթութեաններ, ազգաբնակչության, մահեր և ալլի, միայն վեպի մեջ այդ ամենն առանց որևէ ժամանակաբանութեան և ավելի չափազանցած և ընդհանուր վիպական մոտիվների հետ ավելի խառն:

ՎԵՊԻ ՇՈՐԻՆՎԱԾՔԸ

1. Այուսմիտոնք:— Մեր այս վեպը բավական հարուստ է զանազան սյուժետներով: Կան նաև նույն սյուժետների փոփոխականներ, որոնք վկայում են, որ Վեպը բերանացի աղբիլ և զարգացել է մինչև Ծ-րդ դարի կեսերը, Դրանից է առաջացել այն, որ մեր այս Վեպի մեջ պատմագիր Բուզանդ կամ հենց վիպասանները մոցրել են կրկին պատմվածքներ, առաջին՝ միևնույն դեպքը, փոքր ինչ փոփոխված ձևով, պատմվում է երկրորդ անգամ: Այսպիսի կրկին պատմվածքներ են անպայման հյուսիսային ազգերի արքայանքները Խոսրով Կոստան, սրա հոր՝ Տրդատի. սրա հոր՝ Մեծի Խոսրովի օրով, և եթե ավելի բարձր դնանք ըստ Խորենացու, Մեծի Խոսրովի հոր՝ Վաղարշի օրով ևս, որ թույն է վիպական Արտաշեսի, որի օրով նույնպես առաջում են հյուսիսայինները: Դա մասամբ, տնայում, անդամադրվում է կյանքի մեջ իրոք կրկնված նման եղելությունների: Կրկին պատմվածքներ են Արշակի երկու անգամ փախչելը Պարսից Շապուհի մոտից (Բուզ. Դ. 16, 20), և պարսիկների բազմաթիվ հարձակումները միևնույն թագավորի կամ զորավարի օրով, ինչպես Խոսրով Կոստան, մասնավորապես Արշակի, Վասակի ու Մուշեղի: Խորենացին, օրինակ, մի Զիրապի ճակատամարտով վերջացնում է պարսիկների դեմ կռիվը Պապի ժամանակ. իսկ Բուզանդը, որ հավատարիմ է մնում ժողովրդական պատմվածքին, երեք անգամ Շապուհին հարձակվել է առաջին հայերի վրա. իսկ Արշակի ժամանակ շատ ավելի անդամաձիգ են Աղմնյաց բղձիկի ապստամբությունը և պատժվելը մեկ՝ Խոսրովի օրով, երբ Բակուր բղձիկի որդիներից մեկն ազատվում է, մեկ էլ՝ Արշակ թագավորի օրով, երբ ամենից առաջ Աղմնյաց բղձիկն է անցնում Շապուհի կողմը, ևս պարսիկ առեձիգն ի Հայոց կուսէ, որ Զորայն կոչին, դրոնա դնէին և դատուցին գիրեանց աշխարհն ի Հայոց: Պապի ժամանակ Մուշեղը բոլոր ապստամբ իշխանների հետ, ինչպես վերևում գրեցինք, պատժում է և Աղմնյաց իշխաններին. «Ձեքուակալ արարեալ դրգեանդին Աղմնեաց,

¹ Ղազարայ Փարպեցու պատմութեան Հայոց, Թիֆլիս, 1907, էջ 18:

— նմին կոտորեցին զկանայս և զորդիս նոցա ի գերութիւն վարեցին: Յրկին պատմվածքներ կարելի է համարել իսկապես նաև այն էպիգրաֆները, որոնք կազմված են մինեռլան թեմայով, որ է՝ անհավատարիմ և անհուռ իշխաններին պատժելը: Դրանք ևս մինեռլան սյուսթետի վարիտնտներ են:

Շատ վիպական երգերի ու վեպերի մեջ տարածված մի սյուսթետ է նաև տիրոջ ու հովատարիմ ծառայի ընդհարումը: Տերը կասկածում է իր վասալի հավատարմության մասին, թշնամանում է նրան, բայց հետո բացվում է ծառայի անմեղութունը: Անարդար ամբաստանության պատճառով՝ օւնկնդրի համակրութունն ուղղվում է հերոսի կողմը, և ավելի ևս զգալի է դառնում նրա հավատարմութունն ու իղեալացումը, որովհետև հերոսն իր ամենգութունը ցույց տալու համար ավելի մեծ քաջագործութիւններ է անում: Այսպես և մեր Վեպի մեջ Մուշեղը Պապի օրով: Մերված սյուսթետներ ու մոտիֆներ են, ինչպես տեսել ենք, ամուսնութիւն, որսորդութիւն, ավարառութիւն, տիրատիրութիւն, և թագավորի անձի անձեռնմխելութիւն համար հորինված պատմվածքները, հերոսի մահը, մահվան վրեժ-խնդրութիւնը և ուրիշները:

Առաջին մեծ ու կարևոր պատմական սյուսթետը, որ նույնպես մի քանի անգամ կրկնված է, դա, ինչպես տեսել ենք, թշնամիների ժամանակավոր աջողութիւնն է: Հայ թագավորը, կամ հերոսը, խաբսակա՛ն նենգութիւն զոր հառնալով՝ ընկնում է դավաճանի ձեռով: Թշնամին կամ Պարսից թագավորը տիրում է Հայաստանին, ասպատակում է և տվերում: Ապա հայերը հույների օգնութեամբ վրեժ առնելով, կոտորում, քոյում են պարսիկներին, և թագավորում է ընկած թագավորի որդին: Այս է Խոսրով Մեծի ու Տրդատի, Տիրանի ու Արշակի, Արշակի ու Պապի վեպերի ֆարսլան սքեմատիկ ձևով: Նույնն է և Մուշեղի ու Մանուելի վեպը: Մուշեղն սպանվում է դավադրութեամբ: Մանուելն առնում է իր եղբոր վրեժը, թշնամուն քոյում է երկրից և ինքն իշխում: Այդ վեպերից յուրաքանչյուրն ընդհանուր տիպական կողմով, կարծես, մի փոփոխակ է միայն: Դրանց հետ սքեմապես նույնանում է նաև Երվանդի ու Արտաշեսի վեպը:

Համեմատելու համար զնենք այստեղ հետևյալը.

1. Արտաշեսի հորը սպանում են. նույնպես և Տրդատի հորը:
2. Թշնամին, Երվանդը, տիրում է Հայաստանին: Թշնամի Արտաշէրը տիրում է Հայաստանին:
3. Ստանուն՝ Երվանդի ձեռից ազատում է Սանատրուկի որդիներին մի երեխա, Արտաշեսին: Դայաղը նրան տանում է Պարսից կողմը, պարսից թագավորի մոտ: Նույնը պատմվում է նաև մանկիկ Տրդատի համար, որին փախցնում են Հոռմայեցոց կողմերը, զի դուռն կայսեր:
4. Արտաշեսն աշխտեղ սնվում, մեծանում է: Նրա դայաղը շատ քաջութիւններ է անում. դրա համար Պարսից թագավորն օգնական զորքեր է տալիս և Արտաշեսին ուղարկում Հայաստան իր հայրենի գահին տիրանալու: Նա հաղթում է Երվանդին և ինքը թագավոր դառնում: Նույնը պատմվում է և Տրդատի համար: Նա քաջագործութիւններ է անում և հոռմսական զորքերով գալիս, հաղթում է պարսիկներին ու թագավորում:
5. Վիշապ Երվանդից հետո՝ վիշապազն Մարերի գեմ կռիվը շարու-

նակվում է Արտավազդի ձեռով և հենց իրեն Արտաշեսի համար ասվում է զոնոսա (—զգարմա Աժդահակայ, զմարս) բազում չարչարեաց Արտաշէսա (Պար. Բ. 61), Տրդատն էլ շարունակ կռվում է պարսիկների դեմ:

6. Արտաշեսի կռիվը հյուսիսական ալանների և ուրիշ լեռնականների դեմ, Նուշյը նաև Տրդատի համար է պատմվում:

7. Նոթիսիսի դեպքի փոխանակ՝ առեանդունն Սաթիսիկի և ամուսնություն:

8. Արտաշեսի որով Ամատունիներ և ուրիշներ գալիս են Հայաստան, Տրդատի որով Մամիկոնն է գալիս Հայաստան:

Ինչից է առաջանում այդ նմանությունը— Հին վիպական սյուժետները բոլորը հիմնված են որոշ ֆեոդալական դարաշրջանի պատմության ու կենցաղի վրա: Կյանքի մեջ հաճախ նման բաներ կրկնվել են. ուստի վիպական սյուժետները նորոգվել են նոր նման եղելությունների ազդեցությամբ: Այդ դեպքում հին սյուժետների գործողությունն ընդհանրապես ավելի կոյուն է լինում, քան անունները: Ուստի հին սյուժետներին վերակցվում են նոր հերոսներ, նոր անուններ հների փոխանակ. բայց մարդկանց հարաբերություններն ու եղելություններն էական մնում են նույն հները: Այսպիսով առաջ են գալիս նոր պատումներ նույնանման նյութով, բայց տարբեր անուններով, բնականաբար նաև մանրամասնությունների և պատմվածքի մեջ մտած էպիզոդների և երկրորդական սյուժետների կամ մոտիֆների տարբերությամբ: Այս դարձյալ՝ վիպական երգերն ու գրույցներն իրենց զուգացման ընթացքում հնգվեան (նույնալով իրենց) վրձնի պատմական իրություններից՝ ստանում են ընդհանուր բնավորություն և նմանում են իրար: Այդպիսով կազմվում են վիպական սյուժետների որոշ տիպեր, սքեմաներ, որոնց և հետևում են վիպասաններն իրենց ստեղծագործության ժամանակ: Ուստի միևնույն սքեմաներով նման սյուժետներ պատմվում են տարբեր վիպական անձերի վրա:

Քանի որ մեր այս վեպի իսկական ընտղիբը չունենք, դժվար է կատարելապես ճիշտ գաղափար կազմել սյուժետների հաջորդության մասին: Բայց և այնպես Ազաթանգեղոսի և Բուզանդի պատմածներէց բավականաչափ երևում է, որ Վարսից պատերազմն վեպի մեջ ևս առանձին մեծ սյուժետներն, ինչպես և սյուժետների տարբեր, մոտիֆները, միևնույն սյուժետի մեջ դասավորված են զլիսամորսպես ժամանակի հաջորդությամբ, բայց սովորաբար ոչ առանց պատճառական կապակցության: Այդ է այս Վեպի, ինչպես և մեր մյուս ավանդական վեպերի մեջ, եղելությունների զարգացման էական սկզբունքը: Կան, հարկավ, նաև առանձին էպիզոդներ, որոնք միմյանցից անկախ են և որոնց կապակցությունն ամբողջի նկատմամբ՝ կոմանորոշ է մնում, կամ լինում է գործող անձերի նույնությունով: Բացի այդ՝ ներքին պատճառական կապը տարբեր սյուժետների մեջ՝ երբեմն թույլ է, կամ պատմվածքի մեջ ուղի է զգացվում: Այդպիսի դեպքերում սյուժետների հաջորդությունը լինում է սովորական բանականությամբ՝ այսինքն ժամանակից, ժամանակից, ժամանակից և այլն: Երբ պահված է եղելությունների բնական պատճառաբանական հաջորդությունը, այն ժամանակ առաջ են գալիս ամբողջի մեջ նորանոր կացություններ, սովորաբար գործող ան-

ձեռքի հակադիր միտումներով: Դրանով գործողությունն ապամոլան է մեջ շարժում է առաջ գալիս, որ և գրավում է ունկնդիրներին ուշադրությունը:

Վիպասանները վիպական լարումն ասածն առաջ են բերում մի սովորական եղանակով: Նրանք գործողությունը հասցնում են մի կետի, երբ, կարծես, ամեն ինչ վերջանում է, և երբ ունկնդրի կարեկցական համակրությունն ուղղվում է Հայաստանի թագավորի կամ հերոսի կողմը, որ բաց սրտով, ամիսմտությամբ, հուշերնկալում է դավադիր մարդասպանին (Պարոյ Մեծ, Տիրան), կամ ամիսմտությամբ հավատում է թշնամուն (Արշակ) և հենց դրա համար զոհ է գնում: Հետո, — հարց է տալիս ունկնդիրն այդ միջոցին՝ գործողության ընթացքով հետաքրքրված: Միթե ամեն բան վերջացավ: Բայց եհա հենց այդ ժամանակ գործողության մեջ բերվում է մի նոր հանգամանք (Տրդատի ազատվելը, Նախարարների կողմից Անդովկի և Արշավրի գիմելը հունական կայսրին, Նույնպես և Մուշեղի գիմումը): Դրանով գործողությունը նոր ընթացք է ստանում, և ունկնդիրները սպասում են վրեժխնդրության, որ և վրա է հասնում մի նոր պատումի մեջ: Վեպի գործողության այսպիսի դարձացումը, հարկավ, ահարադարձնում է այն, ինչ որ իրականության մեջ տեղի է ունեցել: Ինչպես կյանքի եղևությունների, նույնպես և Վեպի եղևությունների դարձացումն, ուրեմն, այս դեպքում նույնն է. դրանց երկուսի էլ ամեն մի հաջորդ փուլը հետևված է նախորդին: Նվ այս է հենց, որ Վեպի պատմվածքի մեջ բնականություն և հետաքրքրություն է ծնեցնում:

2. Վեպի միությունը: — Ինչպես ասվեց, մեր երկրորդ հին Վեպն էլ կազմված է մի շարք նույն ցիկլին պատկանող փոքրիկ վեպերից կամ առանձին պատումներից, որոնց կապակցությունը կատարված է շատ նախնական ու պարզ ձևով: Թե Պարսից պատերազմը վեպն իրոք կազմված է եղել տարբեր և անջատ պատումներից, ինչպես է մեր նոր ժողովրդական վեպը, այդ շատ պարզ երևում է Բուզանգի պատմվածքների մեջ: Բերենք դրանցից երկուսը:

Թե Տիրանի և Արշակի վեպերն առանձին-առանձին պատումներ են եղել, այդ տեսնում ենք այն տարբերությունից, որ կա Տիրանի վեպի վերջի և Արշակի վեպի սկզբի մեջ (Բուզ. Գ. 21. Գ. 1), Տիրանի վեպի մեջ պատմվում է, թե Պարսից թագավոր Ներսեհը խնդրում է, որ Վազես կայսրն իր, Ներսեհի, դերի կանանցն արձակի, բայց կայսրը թուղթ է գրում Պարսից թագավորին, թե ընախ դու, ասէ, դարձուցես զգերություն առեալ յերկրէն Հայոց, և զթագաւորն Տիրան ինքնին զլիւծովին, և դամենայն ինչ զոր առեալ իցէ անտի. ապա յորժամ զայդ արասցես, և ես զիմա դարձուցից զոր առեալ եմ. զի եթէ ոչ՝ նախ դու զնոցա զուտարն դարձուցես, և (ոչ) ես ապա զընդդարձուցիցն: Պարսից թագավորը կատարում է կայսրի պայմանը: Տիրանը կուրուքյան պատճառով հրաժարվում է թագավորությունից. Ներսեհը նրա փախուսակ թագավորեցնում է Արշակին և իր հոր ու կանանց հետ մեծ պատրաստությունը ուղարկում է Հայաստան: Ապա ու կայսրը ի դեսպաններին էլ ետ է օղարկում, որ դնան կայսրին պատմեն, թե ինչպես ինքը նրա պայմանը կատարել է: Այդ ժամանակ կայսրն էլ Ներսեհի գերի կանանց է արձակում: Արշակի վեպի սկզբում, սակայն, այս

պատմութիւնը տարբեր ձևով է։ Նախ կայսրն է պարսից զինքներին արձակում, ապա պարսից թագավորն արձակում է Արշակին և նրա հորը. «Եւ զարձուցանէր կայսրն Յունաց զգերութիւն արքային Պարսից, Ապա և թագաւորն Պարսից ներսեւ թագաւորեցոյց զԱրշակ որդի Տիրանայ և հարր նորին և հանդերձ կանամբք իւրեանց և ամենայն գերութեամբք հանդերձ . . . Խաղաց զնաց Արշակ արքայ Հայոց Մեծաց. թագաւորեաց յերկրին Ասորեստանեայց հանդերձ հարրն իւրով և ամենայն ընտանեօքն իւրովք. և կն հետս յերկիրն Հայոց և ժողովեաց զցըռեալս երկրին, և թագաւորեաց ի վերայ նոցա» (Բուգ. Գ. 1)։ Այս տարբերութիւնը ցույց է տալիս, որ Տիրանի և Արշակի վեպերն իրարուց անկախ պատմութիւնք են եղել։

Երբ Խոսրով Կոտակի օրով Վաչե Մամիկոնյանն բնկնում է մօրախմբի, նրա որդի «փոքրիկ մանկիկ» Արտավազդին բարձրացնում են իր հոր իշխանութիւնն ու գահը.

Եւ զգօրավարութեան զգօրծ
Եանձն ասնէին Արշաւրայ Կոմաբաւկանի,
Իշխանին Շիրակայ և Արշարունեաց դաւառին,
Եւ Անդովկայ իշխանին Սիւնեաց.
Զի նոքա փեսայք էին ասնն Մամիկոնեան տոհմին։

Բուգ. Գ. 11.

Հետագայում, Տիրանի գերութիւնն վերստին առնելու համար, Հայոց ավագանին հենց այդ երկուսին, Անդովկին, «սահապետն Սիւնեաց», և Արշավերին, «սահապետն Արշարունեաց», պատգամավոր են ուղարկում Հունաց թագավորի մօտ, և սա հենց այդ երկուսի հետ լրտեսում է պարսկապետ Բանակը. և հաջորդութեանից հետո նրանց վերականգնու է կարգում Հայաստանի վրա (Բուգ. Գ. 21)։ Ուրեմն, Անդովկն առաջուց տրդեն լավ հայտնի է։ Բայց և այնպէս Արշակի վեպի մեջ «Գնել և Փառանձեմ» մասն սկսվում է այնպէս, որ Անդովկը նոր է հանդես գալիս իբրև մի նոր անձ.

Զայնու ժամանակաւ էր դուստր մի զեղեցիկ՝
Անդովկայ ուրուհն,
Մի ի նախարարացն, նահապետին Սիւնեաց,
Որում անուն Փառանձեմ կոչէր։

Բուգ. Գ. 15.

Այստեղ «ուրուհն», «մի ի նախարարաց» որոշումները հենց ցույց են տալիս, որ մի առանձին պատում է սկսվում։ Վիպասանը նկատի չունի նախորդ մասը, որ նա կարող էր նույնիսկ իմացած չլինել, ինչպէս նույնը տեսնում ենք նաև «Սասնա Մոծորի» պատմութիւնի վերաբերմամբ։ Բուգանդն ինչպէս լսել է այդ Փառանձեմի պատումը, այնպէս և սկսել է պատմել։

Մի ընդհանուր գործողութիւն կապ անսնել «Պարսից պատերազմի» բոլոր

տարրեր պատումներն միջև՝ իբրև միության կենտրոն, իհարկե կարելի չէ։ Բայց և այնպես այդ տարրեր պատումներն իրար հետ միացած մի մեծ ամբողջություն են առաջ բերել, թեպետ ոչ զեղարկեալական և ոչ այն մտքով, թե այդ ամբողջը ծայրն ծայր մի վիպասանից պատմված լինի, Դա մի վեպ է եղել և ունի իր միության կենտրոնն այն ձևով, ինչ ձևով որ Թիր-դուաու Շահնամին ունի։ Այստեղ միությունը կազմում է Իրանի և Թուրանի կոնիվը, որ իրար հետ կապում է բազմաթիվ իրար հաջորդող սերահնչների մասին պատմված տարրեր վեպերը։ Իսկ մեր այս մեծ Վեպի միությունն է Հայոց և Պարսից պատերազմը։ Առաջին ճյուղի մեջ հենց սկզբից, ինչպես պետք էր, զբովում է այդ ընդհանուր դրույթը, թեման, որից, իբրև հիմնական պատճառից, ծագում է զործողությունը, որով և ամբողջ Վեպը միական երկ է դառնում։ Դա երկու երկրի հարստությունների հակամարտությունն է, Հայաստանում՝ Արշակունի տոհմի, որի կողքին կա պատերազմ վարող ուղարապետությունը, իսկ Պարսկաստանում՝ Սասանյան տոհմը, այդ տոհմի թագավորն իր մեծամեծների խորհրդով։ Այս երկուսն իրար հետ բախվում են իրենց տոհմային շահերով, մի բախում, որ ժամանակակից ֆեոդալների աչքին կարևոր արդիական իրականություն, քաղաքական խնդիր է եղել, իսկ Հայաստանի համար ոչ միայն ներկայի, այլև ապագայի նկատմամբ։ «Ո՛ր թողից (զ)քեզ և ոչ որդւոց քոց [չեմ ներիլ քեզ և քո որդիներին] զվրէժ նախնեաց իմոց և զմահն Արտեանայ տրքայի» (Բուչ. Դ. 54)։ Արշակ թագավորի այս խոսքը, որ նա ասում է Շապուհին, առաջնորդող գաղափար է եղել հայերի համար պատերազմի սկզբում միայն, երբ նրանք վրեժ առնել են ուզում։ Բայց շատ շուտով դրությունը փոխվում է. հայերը կոչվում են իրենց անկախության համար։ Ինչպես վերևում ասվեց, Վեպի կենտրոնական գաղափարն է երկրի պայապանությունն ի դեմս Արշակունի բնիկ թագավորական տոհմի։ Այս է հիմնական ընդհանուր գաղափարը և ընդհանուր դրությունը, որ անցնում է ամբողջ Վեպի միջով, որի մեջ և կատարվում են սերունդների հաջորդությամբ բազմաթիվ իրողություններ։ Դրանով և միանում են Վեպի առանձին մասերը։ Դա եղել է և իրականության, իրական պատմական կյանքի էական խնդիրը։ Վեպն օրեկափ իրականության ցուցացումն է։ Այս ընդհանուր դրությունը, ընդհանուր շահն ու խնդիրը, միևնույն ժողովուրդների, պարսից և հայոց դարավոր ձգտումներն իրար վերաբերմամբ, դա է Վեպի միության գլխավոր կապը, իբրև մի ընդհանուր ֆոն, որի մեջ զետեղված են առանձին հերոսների աբարքները։ Մասնա մոտերի ճյուղերից յուրաքանչյուրը նույնպես մի քանի անկախ վեպերից ու զրույցներից է կազմված, բայց և ժայպես դրանք բոլորը միասին մի վեպ են, որովհետև մի մարդու գլխի եկած բաներ են. և բոլոր սերունդների ճյուղերն ևս միասին մի ընդհանուր մեծ վեպ են, որովհետև հերոսները հայր ու որդի են, և պայքար մղում են արտաքին թշնամիների դեմ։ Մեր նոր ժողովրդական վեպի այս կենդանի օրինակը բացատրում է մեզ մեր ինչ Վեպի ընդհանուր հատկությունը. այն է՝ Մամ-Պոնից մինչև Մանուել պատմվածները, առանձին ճյուղերը, նույնպես մեկ վեպ են կազմել և աճելի ևս հեշտությամբ, քանի որ կա ոչ միայն սերունդների հաջորդություն, այլև սկզբից մինչև վերջը իշխել է մի ընդհանուր դրություն,

կա մի հիմնական դադարձար, մի ընդհանուր թեմա, որով հորինվել է առանձին գեղվածանքի մի շղթա, որի ոգակները թեպետ և մեկը մյուսից անկախ, բայց և իրար հետ կապված են եղել։ Այդ շղթայի ամեն մի առանձին ոգակը, սակայն,— որ մի անկախ վեպ կամ պատում է և մյուսներից անջատ ևս կարող է պատմված լինել,— ունեցել է իր ուրույն ընդհանուր դրսևթյունը, իր թեման, որից ծագում և լուծում է ստանում իր գործողությունը, որ և շատ առգամ ազդում է նաև հաջորդ պատումի վրա։ Ուստի և խղայիսի դեպքերում այս կամ այն մասի մեջ անկախ գրույցները կամ պատումները համեմատաբար ավելի սերտ են կապվում իրար հետ։ Ճիշտ այս վիճակն ունի նաև «Սասնա ծռերի» ամբողջությունն իր բոլոր մասերով ու գրույցներով։

Մի առ մի վերլուծել այս մեծ հին Վեպի ամեն մի սառանձին ոգակը և ցույց տալ, թե ինչ է կազմում սրա գործողության հիմունքը, այդ մեզ շատ հեռուն կտաներ։ Միայն նկատենք, որ մի քանի անկախ մասերի մեջ միմյանցից չի երևում, կամ այն պատճառով, որ պատմագիրների մեջ չի պահված, կամ որ ավանդականի մեջ ևս չի եղած, ինչպես նույնը տեսնում ենք և մեր նոր Վեպի մեջ։

Յ. Բացադրությամբ (շարադրությամբ) հղանակները։— Վեպն ասելու գրվածավոր եղանակը բնականաբար է վիպելը, թվելը, պատմելը, վիպասումը, որով ծավալվում և առաջ է ընթանում գործողությունը։ Բայց ինչպես ամեն ավանդական վեպերի մեջ, այստեղ էլ նյութի բացադրությամբ համար տեղ ունեն նաև նկարագրին ու տրամախոսությունը։ Այս վերջին երկուսից նկարագրին անմշտկ վիպական բանահյուսությունների մեջ առհասարակ, ինչպես և մեր նոր Վեպի մեջ, փոքր տեղ է բռնում։ «Պարսից պատերազմի» մեջ, անշուշտ, նաև այն պատճառով, որ պատմագիրները կարևորություն չեն տվել դրան։ Տրամախոսությունը և ավելի ևս ուղղակի խոսքն ընդհանրապես մեծ տեղ են բռնում ավանդական վեպերի մեջ, և բավականին պահված են մեր այս հին Վեպի նույնիսկ այն ձևի մեջ, որ տվել են մեզ Ագաթանգեղոսն ու Բուզանդը։ Այդ մեջ է բերվում սովորական կարճ ռասե և նման բառերով։ Դրա համար օրինակներ կարելի է տեսնել վերևում բերված հատվածների մեջ, այլև Տիրանի դրվագի (Բուզ. Գ. 20), Արշակի երկրորդ փախուստի դրվագի (Գ. 20), Մուշեղի (Ծ. 4), Մանուկի (Ծ. 37, 43) և շատ ուրիշ դրվագների մեջ, ինչպես և վերևում բերված Դրաստամատի դրվագի մեջ։

Արտաքինի՝ հաջուստի, մարմնի, դեմքի, շարժվածքի, կռվի և այլ նկարագրերն են ընդհանրապես սակավ են. բայց և այնպես մեր այս հին Վեպի մեջ աչղայիսի նկարագրները համեմատաբար շատ ավելի են, քան «Սասնա ծռերի» այս կամ այն պատումի մեջ։ Բերենք մի երկու օրինակներ։

Վասն զի սէգ իսկ էր [Տրդատ] առ հանդերձս,
Եւ այլ ուժով պնդութեան, հաստատութեամբ,
Բուռն ոսկերոց և յաղթ մարմնով,
Դաջ և պատերազմող անհնարին,
Բարձր և լայն հասակաւ։

Ագաթ. էջ 71.

Անա և Մանասելի ու իր եղբայր Գոնի (Կոմսի) նկարագիրը, երբ նրանք
Պարսկաստանից Հայաստան են գալիս.

Եւ էին հեախօտք երկոքին եղբարքն.
Եւ էին երկոքեան մեծք, ահեղեղք.
Երկոքեան անձնեայք որպէս սկայագունք,
Մինչ գեռ զային ի հանապարհի,
Ոչ կարէր Մանուէլն զնալ,
Զի ոտիւքն ցաւած էր.
Ապա Գոմս եղբայր իւր ըստանձնեալ, առեալ բառնայր,
Եւ տասն տասն խրատախ բերէր ըստ անձին
Զայնչափ տլն զանհեղեղ, զանարիճ:

Բուգ. Ե. 37.

Վարազդատի և Մանուելի մարտից.

Իրբն զայս ի վեր ամբառնայր արքայն Վարազդատ
Եւ նայէր ընդ զալն իւր,
Եւ տեսանէր զսպարաղետն Մանուէլն,
Ի մեծութենէն հասակին,
Եւ ի շքեղութենէ անձինն,
Եւ յամբակու, երկաթապատ,
Յոտիցն մինչև ցզլուխն,
Ան հասարակ յանվթար զինէն,
Ի հաստամետ յանձնէն,
Եւ ի հաստատուն երիվարէն,
Յւ յասպազէն վառելոյն,
Յանշարժ սպառազինէն՝
Համարեցաւ, կշռեաց զնա ի միտս իւր
Իրբն զլիառն մի բարձր զանմատոյց:

Բուգ. Ե. 37.

Բերենք մի համալած ևս Մարդպետ Գլակիի ապանութլան գրվագից:
Պաղ թագավորը հրամայում է ընթրիքի ժամին շտաբում հագցնել նրան:

Եւ ազուցին նմա դրատս և վարախս:
Եւ էր հանդերձն անհեղեղ մեծութեամբն.
Զի խորշ զխորշիւ իջանէր,
Մինչ զի ոչ կարէր հանդերձել զանձն իւր,
Զի պատեաց զնա մեծութիւն հանդերձոյն,
Եւ ազուցեալ զպատմութեանն մեծ,
Էած զգոտին ընդ մէջ իւր՝ զորմէ թուրն կախէր.
Եւ սուտեր ընդ մէջ անեալ.

Շւ խորշ ի գոտւոյ զբառիցն իջեալ,
 Զթաւրն և զտուսերն ծածկէր,
 Իսկ զվարտիսն զգնցեալ, և մայկս ազուցեալ,
 Եւ զնրաւնն յազգեր կապեալ,
 Եւ ի վերայ նրանին՝
 Խորշն ի վարտեացն իջեալ,
 Անկեալ ի վերայ նրանին,
 Ծածկեալ մինչև ի սրահնան,
 Եւ ոչ ինչ իմացաւ Գդակ,
 Թէ այն մեծութի հանդերձայն՝
 Զարոյ նորա իցէ այն,
 Իսկ յինն ժամ տաւրն կոչեցին զԳդակն, և ասնն,
 «Կոչեն զքեզ յընթրիս ի ներքս յաբջուսիոս»
 Իսկ յորժամ մուծին ի փաղ տանցն՝ յորում արքայն էր,
 Եւ էր փոզն ընդ երկար,
 Բազում երզս լոյսիցոյցս էր թողեալ,
 Եւ տանէին զնա ընդ այն.
 Կայր շուրջ սպարակիւրն փակեալ սակրաւորքն,
 Եւ զերզս ամենայն լուսոյն ծածկէին,
 Ապա մտեալ շուրջ զնավաւ ի անդաւջն՝
 Զգզգէին զնա սպարակիրքն,
 Իսկ նա թէպէտ տանէր ձեռն ի գէն,
 Ի խորշխորշան հանդերձիցն,
 Պատատելոցն՝ զոր էր զդեցեալ,
 Ոչ զմի գէն ոչ կտրաց գտանել,
 Ապա զի էր ինքն Գդակն
 Այր մեծ և անձնեայ, քաջ հարուստ սակերօք,
 Սակայն ասպարակիր մարդկանն պատեցին զնովաւ,
 Եւ բարձին զնա վերըմարձ.
 Եւ տանէին զնա մինչև ի դուռս ամենայն արքունի,
 Իսկ իբրև ետես թագաւորն թէ անդր ասանին,
 Ասէ. «Մի այսր, մի այսր.
 Այլ մուծէք զդա ի տուն պատմուճակացն»
 Դանդի ի փողին զօրք սպարակրացն մուծին զնա ի ներքս,
 Ի տունն պատմուճակացն՝ կողեալ ձեռս յետս,
 Այսինքն՝ ուր թագ արքունի գնէին,
 Եւ տնդէն խօսել սկսաւ Գդակն և ասէ.
 «Ասացէ՛ք ցարքայ, զոգէ՛ք,
 Ես այս մահու արժանի էի.
 Բայց քեզ արժան էր զիս ի հրապարակի օղանանել,
 Եւ ոչ ի տան թաղաց սպանանել,
 Եւ դքս թագդ արեամբ շաղախել»
 Եւ զայս միայն ժամանեաց ասել,
 Եւ անդէն ի վանսն պատմուճակացն փողոսեցին զնա

Նւ հատին զգլուխ նորոս,
Նւ հասին, հարին ի նիզակի,
Նւ կանգնեցին ի հրապարակին արքունի:

Բուդ. Ե. 6.

Տիրանի ճարտուկ ճանճկեն ձիու նկարագիրը բերված է վերևում:
4. Ի վավարուրյու մեքը:— Գործող անձերի ներքին հատկությունները նկարագիրը լինում է սովորաբար մակդիրներով: Դրանցով միաժամանակ երևում է նաև վիպասանի վերաբերմունքը դեպի գործող անձը և նրա արարքը, թե ինչպես է նա արժեքավորում գործող անձին և նրա արարքը: Այսպես՝ «չարագործն Մերուսան», «Մերուսան վատանշան», կամ Տիրանին մատնող Փիսակին արված մականունները՝ «մոխկան», «անորէն», «կատաղախոս», շնաբերան, շորիկ, շոգմոզ, տիրանենդ, տիրադրուս, տիրատալանոս, տիրամատնիչ» և այլն: «Սէդն Տրդատ», «քաջ արանցն», «շխարհաշէնն խոսրով», «Արշակ քաջ», «մանուկ բանսերթուկ»:

Նւ էր նա [Վարազդատ] մանուկ յաւուրը,
Լի արութեամբ, կորովի ձեռք,
Քաջ սրախ, ի մտաց թեթև,
Մանկաբարոյ, տղայահանձոր, մանկամիտ:

Բուդ. Ե. 34.

Գործող անձերի բնավորությունն և նրանց հոգեկան վիճակը պարզվում է զխոսվորապես նրանց արարքներով և խոսքերով: Այս նկատմամբ նրանք.— ինչպես վեպերի մեջ սովորաբար և ինչպես նյութից իրենից բխում է.— բաժանվում են երկու խմբի — հայեր և պարսիկներ, իսկապես հայ և պարսիկ ազնվականներն, որոնք իրար հակառակ են: Պարսիկները բնորոշվում են իրրև չարակն, հաշագկոտ, չարաբարո, նենդ, դառնացող, չար ազգ:

... Վասն չարակնութեան, յաչաղանաց,
Չարաբարութեան, նենգութեանն ազգին պարսկաց...
Վասն դառնացող չար ազգին,
Չարութեանն դառնացող ազգին:

Բուդ. Գ. 20.

Նրանց զորավարները, որ հորձակվում են Հայաստանի վրա կոտորելու համար, բոլորն անկամ մարդիկ են: Երևում են միայն թագավորները՝ Արտաշիր, Ներսես, Շապուհ, իսկ իշխաններից՝ Անակ, Շապուհ-Վարադ: Այդ մարդիկը բոլորը դավադիր են, սեր ու բարեկամություն ունենալի տակ աշխատում են

Հնար գտանել, մարթել ճանապարհս,
Մեքենայիւք դայթակդութիւնս դնել՝
Որսալ, ըմբռնել զարքայն Հայոցս

Յի աղպետ էլ վարվում են. Արտաշիւրն Անակի ձեռով զավտգրությամբ սպանել է տալիս խորովին. ներսերը Վարազ-Շապուհի ձեռով դերում է Տիրանին, և Շապուհն Արշակին է խաբեությամբ բռնում: Նրանք միշտ աչք են տնկել Հայաստանին, ավերելու և կողոպտելու Հայոց աշխարհը:

Հայերն, ընդհակառակն,— եթե զավտաններ չեն և պարսիկների կողմն անցնող,— միամիտ են, պարզամիտ, նույնիսկ թեթևամիտ, սրտաբաց ու հյուրընկալող են, պարսիկներից կասկածոտ, բայց և խաբվող ու փնտսվող: Նրանք օտար երկրի աչք դնող չեն, բայց և իրենց երկրի քաջ պաշտպան են: Հայ զորքը զավարտում է նույնիսկ մի փոքր երկուր մնալ օտար աշխարհում:

Զի լաւ հաշուէին զմեռաներն

Առաւել քան զյամբն յօտար աշխարհին...

Իսկ Արշակ և ամենայն զորք իւր

Տաղտապէին երթալ զհեռի ճանապարհն.

Զի ամենայն ոք յանձնիւր տուն,

Երբ արքան չիւր տեղի,

Զօրէն բարուց Հայաստան մարդկան անձկացեալ էին:

Բուզ. Գ. 20.

Հայերի կողմից որոշ դժագրված դեմքեր են Տրդատը, Արշակը, Վառանգը, Մուշեղն ու Մանուկը, Փառանձեմն և ուրիշները: Ենթանք միայն մի դիմ, որի մեջ վիպասանն ուժեղ կերպով հակադրում է հայ և պարսիկ հերոսներին: Մինչ Շապուհը կամենալով թշնամոնս առնել (=անարգանք հասցնել) ազգին աշխարհին Հայոց և թագաւորութեանն՝ անասելի կերպով անպատվում է Հայաստանի թագուհի Փառանձեմին և չափազանց անարգ կերպով է վարվում հայ ազատների կանանց հետ (Բուզ. Գ. 55, 58), Մուշեղն, ընդհակառակն, գերելով Պարսից արկանց արկնոյթ և Շապուհի բռնորդ կանանց, պատվովոր կերպով հտ է ուղարկում նրանց իրենց ամուսնուն (Բուզ. Ծ. 2), ինչ որ և հետագայում առիթ է դառնում նրա սպանվելուն:

5. ՈՅ:— Մեր երկրորդ հին Վեպի ոճի մասին լիովին ճիշտ գաղափար չենք կարող կազմել, քանի որ ամբողջական իսկական բնագիրը չունենք և չենք էլ կարող ասել, թե Ագաթանգեղոսն ու Բուզանդը որչափով բառացի են օգտված իրենց իմացած և ուրիշներից լսած գուսանական երգերից ու պատմվածքներից: Բայց ե այնպես, ինչպես երևում է, Բուզանդի «Հայոց պատմութեան» մեջ շատ բան բառացի բերված կա այնպես, ինչպես բերանացի կպատմէր ինքը գուսան-վիպասան Բուզանդը: Այս պատճառով բանահյուսական աղբյուրը, ինչ որ ոճին և ոտանավորին է վե-

քաղերուսմ, բաժնական տեղ ունեն նրա գրքի մեջ, նույնը պակաս չափով նաև Ազաթանգեղոսի վիպական մասի մեջ, Հենց սրանից է առաջանում Բուզանդի գրքի ոչ միայն բովանդակութայն, այլև ոմի առաջնորդականությունը մեր հին մատենադրութայն մեջ:

Ամեն քիչ ու շատ հմուտ ընթերցողի համար զգալի է, որ Բուզանդի լեզուն սովորական հին գրական հայերենը, զբաբարը չէ, Դա ունի «ժողովրդական ուղի»։ Թեպետ բազմաբան է, լի կուսականությունով, և հաճախ անկանոն և ավելորդաբան ու անկապ նախադասություններով, բայց բնական է, հեշտ հասկանալի, ընտանի և հարողատ, լի արդի աշխարհաբարի դարձվածներով։ «Ամենայն ինչ բնական է, առանց արվեստի և արվեստականության և հարկ է ըսել՝ հոն լուր բնությունն է խոսողը: Վերջապես լեզվովը խորին հայկաբան, ճերտկանական տրամաբանություն՝ ճշտիվ ռամիկ, ուճով՝ արևելյան»։ Ոմի այս հատկությունը ծագում է, բնականաբար, ավանդական բանահյուսությունից, որ Բուզանդի համար ծառայել է իբրև աղբյուր:

Փավստոս Բուզանդ հեղինակի կարծեցյալ օտարազգիության մի նշան՝ համարել են այն, որ նա իր գրած Պատմության մեջ իբր երբեք չի գրում «աշխարհա Հայոց»։ Նախ՝ սխալ է այդ. Բուզանդի գրքի մեջ թեպետ սակավագույն, բայց կան Պատմագրի կողմից գործածված՝ «աշխարհա Հայոց», «երկիրս Հայոց»։ Այս հայտնի է, որ ավանդական վեպը հենց՝ համարվում է ամենից ավելի օգեկտիվ կամ, ինչպես ասում են, անունն, անդամ երկ, այսինքն՝ գրա մեջ հանդես չի գալիս կամ հազվագույն է երևում վիպասանի դեմքը: Պատմվածքը չի արվում առաջին դեմքով. Ուստի եթե Բուզանդի «Հայոց պատմության» մեջ առաջին դեմքով գործածությունները սակավաթիվ են և որ այդ գրվածքի մեջ չի երևում հեղինակի դեմքը կամ շատ քիչ է երևում, այդ հենց ցույց է տալիս, որ նրա գրքի մեջ բավական հարազատությունը օգտագործված են վիպական աղբյուրները, լինին սրանք հետազոտված վեպը, թե եկեղեցական գրությունները:

Վիպական ոմի էական հատկություններից մեկն էլ այն է, որ վիպասանները պատմում են ինչպես անանասներ, հիշելով տեղերի ու մարդկանց անունները: Նրանք հաջորդաբար ստեղծում են և սիրով ու դանդաղ պատմում են մանրամասնություններ և այնպիսի հանգամանքներ, որ մեզ համար երկար ու ձիգ են, բայց վիպական ժամանակի պարզամիտ ունկրանդիքների համար գրավիչ են եղել: Այդպիսի վիպական կենդանի պատկերներով դարգավորված են այս Վեպի գրեթե բոլոր դրվագները: Այդ մանրամասնությունների մեջ մեկ մեկ նկատվում են, ինչպես ասել են, «խիստ անպարկեշտ տեսարաններ», որ նույնիսկ բնութագրվում են համարել: Այսպես է, օրինակ՝ Մերուստանի խոսքը.

Նւ լանդալից հղեալ՝ տաէր,

Պարծելով առաջի իւրոց զօրացն,

Թէ՛ «Վաղիւ յայս ժամ

Իմ կալեալ կապեալ ընկեցեալ զՄտնուէլն,

1 Ա. Այսնյան, Քննական քերականություն, Ներածություն, էջ 39, այլ էջ 68—118՝ Ժողովրդական ձևերի ու դարձվածքների մասին:

Եւ յանդիման նմին

Զկին նորա Վարդանայշ խայտառակեալ իցէն:

Բուգ. Ե. 48.

Այսպէս են նաեւ այն տեսարանները, որոնցով Շապուհէն տեսնուողում է Փառանձնաբէն և ազնվականների կանանց: Այն դարաշրջանում, երբ ապրեւ էն վիպասանները, ամեն մի՝ այժմ տնայարկեցաւ համարված բան տարած պատմութեան էին առանց դրա մեջ որևէ անթույլատրելի բան տեսնելու, ինչպէս որ այժմ էլ մեր պարզամիտ դժուարացիների մեջ, նույնիսկ կանանց մոտ, ամեն ինչ պատմվում է իր անուշով: Այսպէս և Մանուկը բազմութեան առաջ, թաղուհու ներկայութեամբ, մերկանում է և իր մարմնի սպիտակները ցույց տալիս: Շգի յառնի յանդաման աւելի քան զյիսուն սպի կայր վիրաց, և դայն տնայալ բացեալ՝ առաջի ամենեցուն ցուցանէր: (Բուգ. Ե. 48): Այսպիսի մի քանի հատվածներ կան նաեւ «Մանա Մոերի» մեջ:

Այս վիպական ոճին հասուկ են կրկնութեան և չափազանցութեանը: Վիպական կրկնութեանը կամ ակրկնութեան ոճն առանց տալի է դալիս ոչ միայն նույնաբանութեամբ, նույն կամ համանիշ բառերի կրկնութեամբ, որ երբեմն առանձին ճոռոմարան հեղինակներն էլ սիրում են կիրառել, այլ նաեւ նույն և նման հատվածների ու բանաձևերի, մտղիւրների, կամ արտահայտութեան ձևերի կուտակումով, կամ թե միևնույն միտքը հեղհեղվում է զանազան խոսքերով: «Պարսից պատերազմը», մասնավոր Քաղաքի մեջ, լի է այսպիսի օճակաւ հատկութեաններով, որ կարելի է տեսնել վերևում զգուշ կտորների մեջ: Բերենք այստեղ մի քանիսը միայն:

Եւ չգոյր թիւ բազմութեան հեծելագոր զնգացն.

Եւ ոչ համար շերտաւոր հետեակ զորուն.

Զի և ինքեանք զինքեանս,

Զիւրեանց զօրսն թուել ոչ կարէին...

Եւ ելին, լցին, ծածկեցին զամենայն երկիրն Հայոց.

Քանդեցին, գերեցին, առ հասարակ աւերեցին.

Սփռեցան, տարածեցան զսահմանօք...

Հասանէին, հարկանէին, ստտակէին...

Եւ լնուին զդաշտն առաջաբացն

Առ հասարակ դիակամք մեռելոց.

Մինչ զի իբրև զգետ յարուցեալ

Երթայր արիւնն անհնարին:

Բուգ. Գ. 7.

Վերջին տողը հմտ. «Մանա Մոեր».

Արնէ խեղեղ ելաւ, էնոնց լեշեր տարաւ:

Եւ տեսին զօրսն Պարսից,

Զի ոչ գոյր թիւ բազմութեանն.

Զի էին իբրև զաստեղս երկնից,

Եւ իբրև զաւաղ առ ափն ծովու:

Զի եկեալ էին անթիւ փղօք և անլափ զօրօք:

Բուգ. Գ. 8.

Հմմտ. «Մասնա Մուհրա».

Գանի մասադ երկինք կա,

Մարտաեկիք ընցկուռն չազըր — խեղճ անի մընչ դաշտին:

Այս համկություններով վիպական ոճը համապատասխան է ֆեոդալական ժամանակի կենցաղին ու սոցիալական հարաբերություններին, գողտփարտխոսությանն ու ճաշակին: Ինչպես տեսանք, ֆեոդալիզմի ուղղակի բանաստեղծության մեջ հերոսների գաղափարականացումը կատարվում է նրանց արարքների չափավորումով և նույնի, նույն սյուժեաների ու մոտիվների կրկնությունով: Ոճի նկատմամբ՝ դրան համապատասխան են չափավորությունը ու կրկնությունը: Վեպն արտահայտությունն է իշխող գետի: Իսկ այս դասը, անաշխատ վայելող մարդիկ, պատերազմից ու որսից ազատ օրերը, ձմեռնային երկար գիշերները, շատ ժամանակ ունեն սիրով և անձանձրությամբ ունկնդիր լինելու իրենց նախնիքների և հենց իրենց մանրամասն վեպին, թեկուզ դա լինել կրկնություններով, թեկուզ միակերպ պատմելին, թե ինչպես Վասակը կոտորում է շարունակ բոլոր պարսկական զորքերը, բայց միայն ճողողորում պրծնում է Մերուստանը վատանշան: մինչև վերջնական նա էլ սպանվում է, ինչպես և բոլոր գավառները: Այդ մարդիկ իրենց լորիմիտիվ մտածություններով չէին խորշում թե՛ բովանդակության և թե՛ ռեալական կրկնությունից ու միակերպությունից, այլ՝ ընդհանուրապես, ինչպես երեխաները, նույնիսկ սիրում էին այն: Ուստի և վերևում հիշված ռեալական հատկությունները գտնում ենք ընդհանրապես նաև ուրիշ ազգերի ֆեոդալական վեպերի մեջ իբրև մնայուն ձևեր:

գարթնում է հասնում է նրան յետո՞ւն ուրեքն աւ կապում է իբր աքմանը կանգնում նրա դիմում (չգինքն—աղքեր ընդդէմ նորա հաստատելոյ), որքն ստորագիւղով, Ամբուսկը՝ Ենա—գնդանու կայ զգլխքինն է չն կարգանունն երկնիս ե ուղեկանելն երկիքրը— Այս առաւօտելն ձեռնարկելն մեկնում է աշտոն. Երեկ զիշտապարն բուսումն, կամ կառարկալուցն զիշտապարն թիւրապուսայ, որ առին է այոյ, Թե նա սկսեց անբով մարդիկ գտնել զանելն, [առաւօտելն մեկ] Ետեւելն զմարդիկն ի պէս — արւելայն ինն, միշինն որ մարդուղը (բարձրագլխուն) աստղակոյցով նրանքն ե հուսածեցն նրան, ե նա փութաւ. Նըմըմընից յետն կըզմեքը, նրան ստորակն քշէլան՝ Նրա մարդիկը [մարդեկ] քրիվ հկան նրանքն, [Առաւօտելն մեկ] Հըսու—հեւելն Ամդուհեւելն կապում է առնում է — արւել, Այս բանին ժամանացան՝ Նրան քշողները մի քանիս որ հաղորդացում այն աղքերում։ [Առաւօտելն մեկ] Հըսողները Ենա—աղաւթն ինն Նիշումն է։ Իսկ Բյաւրապուղը մարդուղիվ իբր քրգման մարդիկը, Եանկարե զման հանունն ե ստաւակի զուսն է առնել նրանքն [Առաւօտելն մեկ] Բյաւրապուղ նշլոյզ զըսու—դեւելն գեպի բլուրն է քաջում։ Բայն բարձրագլխունը հաղթում է Բյաւրապուղին ե նա փոխառաւորն է իննում. Ետեքն համարն, սղախում են նրան ե կըսում մի քանիս մեկ զիւն [Առաւօտելն մեկ] Հըսու—դեւելն զարթնում է հասնում է Բյաւրապուղին չեւանն ալբերն — կապում է հալլել։

Նույնպես վարվում է նաև հայկական առևտրային շինարարական ընկերությունները։ Հայոց Վիպասանների բովանդակության մասին գրելիս (Բ.Պ) նա հիշում է՝
 «Են իբր սրնիմի Ստեփանյան ընդ Վիշապազունսն առևտրաբար, այս ինքն
 ընդ պարսն Աստուհական, որ ունին զամենայն դառ ստորոտոյն Մասնացա։
 Պատմադիրն այստեղ չառ որոշ գրում է, որ իբրև առևտրի պատմվում է
 Վիպասանների մեկ, Թե Սաթինիլը վիշապազուններ է սիրել։ Բայց նա ինքը,
 ինչպես բացատրական «այս ինքն» բառը դուրս է առել, Վիշապազունը
 հայկական է իսկև գտնում Աստուհականը»։

Սաթինիկի այդ արհամարհանքը կամ սերն ուրիշ տեղ (Ա. 30) դրված է Արգամանի համար: Ուստի և Արգամանը ներկայանում է իբրև վիշապազն: Թե Արգամանը Վիպասանքի մեջ հանդես է եկել իբրև վիշապազն կամ նույն իսկ իբրև վիշապ, այդ երևում է նաև նույն տեղում բերած հետևյալ կտորից. «Այլ և ճաշ տանն գործեալ Արգամանայ ի պատիւ Արտաշիսի և թարգմանակ լեալ նմին ի տաճարեմ վիշապազն: Քանի որ Արգամանի այդ տաճարը, այսինքն տապարանքը, ուր ճաշն ու խաղաղականքն է լինում, կոչվում է Ետանար վիշապազն, ապա և ինքն Արգամանն իբրև վիշապ է ներկայանում: Նույն տեղում «Թուեկեանք երգերի, որ նույնն է Վիպասանքի, բովանդակութիւնը բերելուց հետո՝ Խորենացիին ավելացնում է. «Ան ապո՛ւ՝ իջ թրգեօք թաւելի սասանօր գարմասցիս ի վերայ մերոյ ճշմարտապատմութեան, թէ՛ արդէս լայնանցեմ գամլայալ իրո վիշապեց, որք են յԱզատն ի վեր ի Մոսիս» (Ա. 30): Պատմագիրն, ուրեմն, սասել է, թե վերևում բերված պատմութիւններն իսկապես տանլայալ իրը վիշապազն են, որ ինքը

հայանում է¹, այսինքն հասկանալի է դարձնում, որո համար նա երգերի մեջ հիշված վիշապներն ու վիշապաղները դարձնում է զգարմք Աժդահակայն, կամ, ավելի ճիշտ, երգերի մեջ հիշված անուններից, ճշմարտագույնությամբ համար, նախընտրում է Աժդահակի դարմեր կոչումը: Ի՞նչ հասկանալի է, թե ինչու: Վիշապները կամ վիշապաղներն առասպելական էակներ լինելով՝ անհավատելի բաներ են: Դրիստոնյա Պատմագիրը, որ նույնիսկ աստվածներն իբրև մարդ եղած է մեկնում, չէր կարող հավատալ, որ Սաթրիսիկ թագուհին մի վիշապ կամ վիշապաղներ սիրած լինի, և կամ Արտաշես թագավորը նրանց հետ հարաբերություն ունեցած լինի: Բայց մի անգամ որ նրանք մտնում են Արտաշեսի պատմության մեջ, պետք էր այդ ճշմարտելին², իսկ ճշմարիտն այն է, որ դրանք Մարտի Աժդահակ թագավորի դարմերն են, միայն հայերեն բառով ասած, եղի Աժդահակի ի մեր լեզուս է վիշապ, ուրեմն և «վիշապաղն» նույն է, ինչ որ «Աժդահակի» դարմն:

Բերենց և Նեոսյուր, Քաղնացի (Բ. 8) Մարացան նախաբանության համար գրած. «Ոչ ասեն նախագետաց ողորն՝ Մարացան աէր, այլ Մարացացն աէր» Այստեղից եզրակացնում է նա Մարացանների մարացի լինելը, ի՞նչ էր միանգամ նրանց մարացի են, մարական ծագում ունեն, աշխատ հասարակ ծագում ունեի լուսնեմային, այլ մի իշխանից կամ թագավորից սերմած ունեի համարվելն, ինչպես չառ նախաբանական անկող, ի՞նչ ունեի համակողս, ի՞նչ ոչ զի դառնի Աժդահակայ մարաց եղևոյ թագաւորից, որի սերունդները ընդմեջ են հայաստան: Այսպես՝ մի կողմից՝ Վիշապաղների մեջ հիշված վիշապները կամ վիշապաղները նույն են, ինչ որ Աժդահակի դարմերը կամ մարերը, իսկ մյուս կողմից՝ Մարացանները կամ մարացացն ասացած ունեն մարական ծագում և են Մարաց Աժդահակ թագավորի սերնդից: Ուստի բանավարկությանը հնչողության մեջ ունեն այն և դրահայնության, թե Մարացաններն են վիշապաղներ, կամ, ընդհակառակն, երգերի մեջ հիշված վիշապաղները մարացաններ են, և վիշապ Արագածնը նույնն է Մարացան Արագածի հետ:

Պատմագիրն իր այս եզրակացության համար իբրև հաստատության գտնում է նրանց բնակության տեղի նույնությանը կամ մոտիկությանը: Նա Ա. 80, հայտնում է, որ ըստ Քաղնացի երգերից, վիշապաղները բնակվում են «Մարացն ի վեր ի Մասիս, իսկ Բ. 40, հայտնում է, որ դարմից Աժդահակայ (Մարաց=վիշապաղաւոր) ասինքն դամնայից դուռ աստուտից Մասեաց, ինչպես և երգի մեջ նույնն ասվել է (Ա. 80), իսկ Բ. 5, գլխի մեջ՝ այդ կողմերը նա գտնում է կալված Մարացանների և համակողս Մարացան Արագածի, «որ ի մնացորն Աժդահակայ (Բ. 43), և հիշում է նախնականը և ըստ հիստորից ընտրելոյ գտնեմայն գրեպ», որ է՝ Մասիսի դիմացի գյուղերը, Երասիքի գյուղը, Նույնպես Բ. 8, գրում է. «Երկրորդ թագաւորութեան լինէր ի դառնի Աժդահակայ, Մարաց եղևոյ թագաւորի, որ այժմ Մարացանդ կոչեն... Իսկ թագու ի վերայ նորս գտնեմայն չէն, որք ի դերս: Թե՛նէն Մարաց: Այսպես մի կողմից՝ հաստատելի մեջ վիշապներն կամ վիշապաղներն բնակության տեղերը կալված են Մասիսի հետ, իսկ մյուս կողմից՝ մարերն (կամ Աժդահակի դարմն) բնակության տեղերը, — նույն և Մարացաց տեղերն՝ Մարացաններից: — նույն Մասիսի հասարակարանում են և նրանից դեպի արևելք: Դրանով Պատմագիրը հաստատած է համարում իր բացատրությանը:

Նա Արագածադրի մանր պատմելին ասում է, որ Դագթան երգիչներն առաջադրաբարում են, թե Արագածադր նախանկել է հոր փառքին, ուստի և հայրն անկնել է որդուն, որ

¹ Հմմտ. Ա. 49, Բ. հավելվածի մեջ «Բերապաղի» հաստատելի մեկնությանը. «... միայն անմասնական նպատակով և զկտրի վազուց նպատակով և նպատակ անհաստատելիս աւաթիկ զարմանիս»:

² «Մարաց իշխանականութեան մեջ կարճատևութեան, և զայլաբանութեանն ճշմարտեցուց Բ. 40)»:

որքէն գնալիս ցաղիքըրը քանակ նշանն է ասոնեն այնպատն ի վեր ի Մարտի, աշտակ ձառն է լուսն յանանն Այնուհետեւ ըստ առասպելին՝ Արամազդը երկթի շղթաներով կապված է մի ալքի մէջ, երկու շուն կըծում են շղթաները, Արամազդն աղաթում է ելնել և վերջ տալ աշխարհին, ըստ զարքնիների կառնահարութեան ևս շունը կը գործնում է, Արամազդը մահվան մասին այս առասպելը, գերբնական բան աշխարհով իր մէջ, խելքի մասին ու համարեալ ինչ թայց Թորքներիցն աշխարհնաթյունն է համարում այդ Արամազդը... մահ ևս ներքին այլաբանութիւն, սեւերն է ամէլացնում է մեկնելով, ըրոյց է նշմարութեամբ առջեւ, որդին առաջաց վերադառնալ, Թեկ վերնում պատմել է բնական իրադրութեան զույն, նազ, թի Արամազդը տանցեւոյ դիմաբնում Արամազդ ցաղացի, որաւ կինն է իշմալ-բիս դիւրաց զինքն, և ամբհեւ ի ցնորքից ինչ խելագործանաց, ընդ վայր յանկով երկ-վարան, անկերն ի խոր ինչ մեծ, և խորտալ ինչ անհետին:

Առասպելն ասում է. Վիշրապաւնից զապաւն դմանակն Արամազդն է դեռ փոխ-նակ եղնին: Թայց այդ գերբնական է, խելքի մասին ինչ. սեւերն է համարում, անշուշտ, առասպելը մեկնելով, համարեցան կախարհել զստ (զԱրամազդ) կանանց զարմիցն Ամազ-նակայն, ճանի սր մամանակի ևս անհարկութեամբ կախարհելուն կարելի էր համարուել, իսկ որ մարդիկ երեկոս զգաւանն և սեւեր դե դնեն՝ այլ Սոկրատ Թորքներիցն Արամազդի կա-խարհութեան լինելուն էլ չի համարում և գրում է. «Թայց ինչ աղաբացեալ Թուր լուսն ախ, թէ է նշնակնն ևս եթ մարտիկամը լսալ, մէկն շաղիքը ևս վախճանեցաւ: Ուրեմն ըստ-ը հեռաւորին, ինչ որ իբրեւ պատմական բերում է Թորքներիցն Արամազդի մասին, ախ է՝ թէ նա խելքն ու խելագործ (մայի) մեկն է և որքէ մամանակ խելագործութեան ընկել է Մարտի-սի վերջից մեկն ու անհետացել: Մնացածն առասպելներ են, որանք, սակաւ, զգեմարտու-թիւնն իրաց աշխարհաշար յինքնան ունին Թագաւորայ: Եվ երբ մի անգամ դիտենք, թէ ինչ կառնակով Թորքներիցն առասպելներն մէջ այդ թագաւորայն համարութիւնը կամ համարութիւն մեկնելով համար է առասպելից, և այն, որ նա ինչ Պատմութեանը տեղին է գրում,— սխալութեան չենք լինի, եթե սակեց, որ Արամազդի մասին ըստ համարութիւն էլ մի մեկնութեան է միայն, որ համարում ամէլ են առասպելն մէջ պատմութեան:

Մանաւորակն իսկնն սակ ձաւոյ՝ ասոնի համարեցաւ (Բ. 38), Թայց քրիստոսայն Թորքներիցն աղաթել յառաւանցն առաջնալ՝ ամէլը դմանակն (Բ. 38), Թայց քրիստոսայն Թորքներիցն աղաթել բանին չի համարում, սեւերն է անմիջապէս մեկնում է. Թայց որչափ մեք կըգործ վերահանա՝ աղաթէն է. շուն աղաթակ ընդ խելագործին լսալ, պատմութեան մանկանն և զայնիցն:

Երվանդի մասին ասում են. «Ըստ հմայից դմանայ զու անկն հայեցաւ: Ժաման սրայ ընդ այդանալ աշխարհացն ստորութիւնն ունել աղաթութեանցն աղաթելն՝ վէտ որնաքա-րտայն ունել ընդգէմ Երաւանայ, և ի հայեցութեանցն դմանութենէ սակն աղաթելն որնաքա-րտութեան: Պատմութեան այս բանը սեւ և առասպելն է անմիջում, իբրեւ մի անմիջապէս բան, ըստ և անմիջապէս, համարել կապուցանելու համար, փոխում է այդ, մեկնելով իր մամանակի ևս անհարկութեամբ և համարութեան: Թայց այս կան եղիցի սեւ և առասպել, և կամ դիտելուն ինչ աւ իւր ունել զարաթիւն, զի աղաթել հայեցութեան անստոր ձառնեցէ զսրս կամին (Բ. 43):

Բերված օրինակներով երևում է Պատմագրի հայացքն առասպելների վրա. և թե ինչպէս նա ամեն մի առասպելական պատմութեան, սուս համա-րեով հանդերձ, աշխարհութեան է համարում և մեկնելով միջից աշխար-հաշարէն թաքուցեալ նշմարութիւնը հանում իբրեւ հավաստի, ստույգ պատմութեան: Սակայն այդ հեռաւորինն մի բարոյութիւն նոր շարագրած, իսկապէս հերյուրած պատմութեան է, որ շատ անգամ բուն առասպելի հետ նամանակութեան իսկ չունի: Այսպիսի հերյուրած, և աշխարհութեանը նշմար-տած առասպելներիցն այլևս անշուշտ մոգովի դրակուն կամ ավանդական առաս-պելն կոչել կարելի չէ, այլ միմիայն Պատմագրի կամ նրա նման մտածողնե-րի մի հորինվածք, որ թեպետ և առասպելի հիման վրա շինված, ըստ բուն առասպելի մասին ճիշտ գաղափար առել չի կարող:

Մի երբորդ ձեռով էլ օգտվում է Խորենացին առասպելներին, բերելով նրանց կարճատև ըզվանդակությունն առանց «մեկնութեան», կամ այն պատճառով, որ արհամարհում է այդ առասպելները, ինչպես՝ Հաղամակերս առևժ պատմվածքը և Տաւրթի առասպելը, կամ բովանդակմանում է միայն այնու, որ իր՝ որևէ գրավոր աղբյուրից առանց պատմութեան իբրև վկայութեան է կոչում, ինչպես Շամիրամի մահվան առասպելը:

Խորենացին ինչքան էլ առասպելներ հիշում է, չենք կարող տեսլ, թե շատ է օգտվում առասպելներից, այսինքն՝ նրա օգտագործած առասպելները բազմաթիվ չեն, թեպետ լայն, ընդարձակ չափերով, մանրամասն պատմում է նրանցից մի քանիսը, ինչպես՝ Հայկի, Արայի ու Շամիրամի, Տիրամանի ու Ամուսակի, Վրդասանքի առասպելները: Որ նա սակավաթիվ (ընդամենը ոչ ավելի, քան տասնուհին) առասպել է մեջ բերել, դրա պատճառը հենց նրա հայացքն է առասպելների վրա: Նրա ոչինչ, բայտ ժամանակի հասկացութեան, ամեն մի գրավոր հիշատակարան, թեկուզ մի անվավեր գրվածք, որովհետև իր մեջ հավատարի բան ունի, ավելի մեծ արժեք ունի, քան թե առասպելը, որը, եթե չէ մեկնված և միջի «հավաստին» առնված, նույնիսկ սուս պատմութեան է համարվում: Եվ որովհետև Խորենացին պատմութեան է գրում և ոչ թե առասպելաբանութեան, ուստի և որքան կարելի է քիչ, այն էլ երբեմն «մեկնելով» է օգտվում սակավաթիվ առասպելներից: Նա խառնափում է առասպելներից, այսինքն՝ սուս ու մուս բաներից ընդհանրապես, արդեօգի մի գուցե իր գրած պատմութեան արժեքն ընկնի առասպելներով: Այսպես, օրինակ, Բ. ՅՈ. որդի կերպով գրում է նա. «Որչափ էր հնար՝ փախած յաւելորդ և ի պաճուհեալ բանից, և որ ինչ յանհատաւորն հայէր բանն ևւ մասնութիւնն, միայն գհես երթալով ըստ կարգութեան՝ որ ինչ ալլուստ ևւ կամ ի մէջ՝ գորդարոյն ևւ զճմարտի: Զնայն և աստանօր պատարտելով՝ արգելում զընթաց բանիցս յոչ պատշաճէն և որ զանհասարակութեանն ի ներքս անել անարկէ կարեիս: Եւ զքեզ, որպէս բողոսմ անդամ, և այժմ աղաչեմ, մի յաւելորդան հարկաւորել զմեզ, և սակաւ կամ յոյով բանիւք՝ զմեծ և զհաւաստի բովանդակ աշխատութեան մեր ընդ մայր ևւ տելորդ ցուցանել գործ, զի նմանադոյնս որպէս ինձ՝ և քեզ գործէ վատնգաս:

Յ. «Հիւստւմ Պիտոյից», Պիտոյից գիրք: Ներբաղամ Մեծմ Տիգրամի:— Մեր Պատմագիրը Տիգրանի գովեստն անելիս բերում է իբրև աղբյուր ավանդական երկերը. «Զօրմէ՝ ասէին ի հինսն մեր, որք փառաւորն երգէին» (Ա. 24): Բացի այդ՝ նա Հայկագանց և Տիգրանի պատմութեան համար հիշում է մի ուրիշ աղբյուր՝ տանով, թե պիտի պատմի «ի Հիւստման պատմութեան Պիտոյից» (Ա. 19)—«Պիտոյից Հիւստման պատմութեանից»: Գիրքն ուրեմն է Հիւստման Պիտոյից: Նա դրա հեղինակի անունը չի տալիս. այլ քիչ հետո այսպես է ընտրչում նրան, տանով, թե՝ «Զհիմունս այսպիսեաց բանից [Տիգրանի մասին պատմութեան] ընթեանուլ արժանաւորեցաք ի յորս հազմերգութիւնս, գորգասաւորին ի բանս և դիմաստնոյն իսկ և ի մէջ իմաստնոց իմաստնաւորին» (Ա. 21): Այդ «արգասաւորն ի բանս» մեր Պատմագրի ժամանակ շատ հայտնի մի հեղինակ պիտի եղած լինի և հանրածանոթ, և ծանօթ նույնիսկ Սահակ Բագրատունուն, որ Պատմագիրը նրա

անուրբ չի առլիս: Ճշագնացութիւնն բաւը, որ սովորաբար նշանակում է ջերդված, վիպասանութիւնն և ջերդվածի մասերը, ցույց է տալիս, որ այդ գրվածքը եղել է մի բանահյուսութիւնն, որի համար իբրև նյութ ծառայած էր Տիգրանի պատմութիւնը: Այդ հավասարում է հետևյալով: Միջնադարյան դպրոցներում «պիտոյք», հասական չընէ բառով կոչում էին այն հարստասանական կամ բանահյուսական վարժութիւնը, որով մի իմաստովից ասացված ու խոսք, կամ որևէ անձի պատմութիւնն ու արարք ընդարձակում, աճեցնում էին այս կամ այն եղանակով ու կանոններով և կազմում էին մի ընդարձակ հառ կամ բանն: Այդ հարստասանական վարժութիւններն իրենց կանոններով նույնիսկ մեր գրականութիւնն սկիզբներում աշխատել են մտցնել մեր մեջ թարգմանիչները: Հայտնի է Խորենացուն վերագրված «Պիտոյից գիրքը», որի մեջ բացի կանոնների բացատրութիւններից կան նաև օրինակներ հերահանգիցն աղագու առ մանկունն: Այդ գրքում¹ ի միջի այլոց գտնում ենք Մանան ներքողինի, որի հետևած իբրև օրինակ գրված է Ներքողեան Մոսեսին: Ներքողեան է բաժն արտադրակա եղելով արեւաց... Ներքողեյի է գլխիս (անձնավորութիւն) և զիրս և զժամանակս և դեպիս... Ջղխմ որպէս զԴմոսթենէս, կամ զՊղատոն: Ջիրս որպէս զարդարութիւն, կամ զողջախոհութիւն... Այնուհետև բերված է եղած, այսինքն պատմական անձնավորութիւններ գովելու կանոնները, մասերի բաժանելով ներբողյանը:

Եթե փոքր ինչ ուշագրութիւն գործենք Խորենացու Հայկազունց թագավորների պատմութիւնը, կտեսնենք, որ Տիգրանի վրա գրված այսպիսի մի մերքողեյի բնավորութիւնն ունի այդ ամբողջ պատմութիւնը մինչև Վահագն: Դրան համոզվելու համար՝ բավական է միայն, որ այդ պատմութիւնը բաղդասկանք Պիտոյից գրքի ներքողյանի կանոնների հետ: Ահա այդ կանոններն իրենց կարգով ու բաղդատութիւնը:

1. «Նւ ի գովելն պարսն և արժան է նախաշախիդ առնել ըստ անգլոյ պատճառին: Այսինքն նախ նյութը, եթե որևէ անձ է, ուրեմն անձը գովել ընդհանրապես: Եվ Խորենացին իր Հայկազունց և Տիգրանի պատմութիւնն սկսում է ընդհանուր գովեստով (Ա. 21—24):

2. «Ապա զնկն զտգգն, և զնոյն բաժանել ի գաւառս և ի մալաձմեղս և ի Երաս: Տիգրանի ներբողյանից Խորենացին կարիք չուներ հզովառի, այսինքն Տիգրանի հայրենիքի, Հայաստանի զովքը մտցնելու իր Պատմութիւնն մեջ: Իսկ Տիգրանի նախածնող Հայկին և նրա մերձավոր հայրերին՝ Պարուլից սկսած՝ գովելով հիշատակում է Տիգրանի պատմութիւնից առաջ:

3. «Ապա զսնունդն, և բաժանել յօսուցն և ի վարժս և յօրէնս: Այս մասի մեջ պիտի պատմվեր ներքողեյի անձի ծնունդը, սնվելը, կրթութիւնը, մանկական կյանքն ու վարմունքը (Հմմտ. «Մովսեսի ներքողեանի» մեջ համապատասխան հատվածները՝ Ե. Թ. էջ 415—417): Ըստ ինքյան հասկանալի է, որ այս մասն, իբրև պատմութիւն համար թոյլ կարևորն բան, պիտի կրճատեր Խորենացին: Սակայն և այնպես ծննդյան, ինչպես և նախընթացում հիշված «գովառի», հայրենիքի մասին գտնում ենք Աժդահակի երազի մեջ:

¹ Մասնագրութիւնը Մովսեսի Խորենացու, Վնենիկ, 1885, էջ 415.

4. Եւ ապա զմեծ գլուխ մերբողիճին դնել զգործսն. և զնոյն բաժանել յամսն և ի մարմին և ի դիպումսն:

ա. «Ջանձն յիմտոտութիւն և յողջութեանքիւն, յարութիւն և յարդարութիւն: Տեսնենք, ինչպէս է գովում խորենացին Տիգրանի տանձըն (հոգին, ներքինը)։ «Արանց կացեալ զլուս և արութիւն ցուցեալս, «պարկեշտն, օրինաւոր, ... ի ցամկութիւնս մարմնոյն չափաւոր, մեծիմաստն. արդարապէս և նավաստարտեք կշիսս անկողնոյ և ալն: Ուրեմն ոչ մի գիծ պակաս չէ:

բ. «Ջամարմին՝ ի գեղեցկութիւն և ի զօրութիւն և յերագութիւն: Խորենացի. «Խարտեայո ալս և աղբբեկ ծայրիւ հերաց, «երեսօք դունեան և մեղուակն, անձնեայն և թիկնաւէտն, առագաւորմն և գեղեցկոտն: «Կատարեալս ի դիւցադանց հասակաւ և քնութեամբ: «Արեւոյ իմն աւացեալ թեովք... սքանչելի դիւցազն: «Բայց գովմն զքաջ նախատակն իմ և զնիգակաւորն և զամենեկն բոլոր անգամովք համեմտն և ի գեղեցկութիւն հասակի աւարտեալ, քանզի առոյգ, ամենայնիւ, ըստ իրեարօ պատշտեալ, և ուժով ոչ զոք ունելով իւր զոյգ:— Ուրեմն դարձալ ոչ մի գիծ պակաս չէ:

գ. «Ջիգայուածս՝ ի նոյնութիւն և յըմջեղութիւն և ի սիրելիւն: Այսինքն գոված անձի կատարած մեծ դեպքը պետք է ճշտութեամբ և ընդհանրութեամբ պատճառն և սիրելի դարձն նրան: Տիգրանի մեծ զիպուածն է Աժդահակի հետ կովելն ու նրան հաղթելը, որ այսպէս է վերջացում Խորենացին. «Եւ ալսպիսի դիպուածս ի բարեբախտութիւն յաւելեալ, փառս յաճախէր Տիգրանայ: Ավելորդ է արտադրել-այստեղ մեր թագաւորի «ճշտութեան և ընդհանրութեան մանրամասն նկարագիրը (Ա. 24)։ Իսկ «սիրելիք լինելու համար քերէնք միայն. «Ամենեցունց որ առ իւրովքն էին ժամանակօք՝ նախանձելի, և զկենացս ըղձալի ինքն և ժամանակ իւր: Ուրեմն դարձալ ոչ մի գիծ պակաս չէ:

Ը. «Եւ ի վերայ ալսոցիկ գնել զբաղատութիւնն յարողութեամբ ներքողեցելուսն զմեծագոյնսն ընդունել: Այսինքն ուրիշ նշանավոր անձերի հետ բաղդատել գոված անձին և նրան ավելի մեծ համարել: Այդ բաղդատութեանն ևս գտնում ենք Խորենացու մեջ Տիգրանի պատմութեան վերջում (Ա. 31)։

Թ. «Եւ ապա գի վերայ բանին ի կատարման ըստ պտտեառի: Այսինքն՝ ինչպէս ընդհանուր գովեստով սկսված էր. այդպէս և ներքողելի անձի վրա աւրած գովեստն ամփոփել և վերջացնել: Այսպէս էլ տնում է Խորենացին: Ա. գլուխը, որ Տիգրանի պատմութեան վերջութանն է, սկսում է Տիգրանին գովելով և, ինչպէս «Պիտոյից կանոնները պահանջում են, վերջում բաղդատութեանն է տնում շատ Տիգրաններէ մեջ և գտնում, որ Մի է և միայնակ սա ի Հոյակազանցս:

Տիգրանի պատմութեան մեջ պահված են «Պիտոյից գրքի» ներքողանի ճարտասանական կանոնները, այն էլ մեծ մասամբ նույն կարգով, որ «Պիտոյից գրքն» է պահանջում: Եվ այդպէս էլ պետք է լինել, քանի որ մեր Պատմագիրը Ա. 19. գլխի մեջ պարզապէս հայանում է, թե Հոյակազանց և Տիգրանի պատմութեանը պիտի առնեն «ի Հիւսման պատմութենէ «Պիտոյից»։ Վնշանակե, եղել է մի «Պիտոյից գրք», որի մեջ հյուսված են եղել զառապան բանահայտական կամ ճարտասանական օրինակներ,

որոնց թվում և մի ընդամենը ներքողյան հայոց թագավոր Տիգրանի մասին՝
 Նկատենք և հետևյալը՝ Թե Տիգրանի մասին երգեր եղել են թի հինան
 մեր, այդ պարզապես հայտնում է Պորենացին, Արգ՝ մեր հին ժողովրդական
 երգերը Պորենացու հաշվով բանոն՝ ու փոփոխ են եղել, Բացառությամբ
 չեն կազմել նույնիսկ թուրքերից ևս մեծագույնը ևս ստիպված է եղել ճշմարտելու, ճշմար-
 տություն դարձնելու, Դրանք բոլորն առասպել են, Մեր ավանդական բա-
 նահյալության բոլոր նյութերից՝ Տիգրանի մասին եղածներին առասպել
 կոչումը չի տալիս Պորենացին, Այս բացառությամբ հասկանալի է, Ըստ
 Պորենացու՝ Տիգրանի մասին եղածներն առասպել չեն, որովհետև Տիգրանի
 մասին նա ձեռք տակ ունեցել է ավանդական երգերի, ըստ իրեն Պորենա-
 ցու հաշվի, գրական մշակութային կրածը, մի զարգացում և ճշմար-
 տություն պատճառաւ շարադրած ապամոլություն, որ նա տալիս առասպել
 կոչել չէր կարող, Այդ մի պատմություն էր, որ ոչ թե առասպելի պես
 ճշմարտություն չի իրացն այլաբանաբար յինքնուրույն ունէր թագուցեալը, այլ
 ամբողջ տեղին ճշմարտութեամբ, ճշմարտ պատմութեամբ, առասպելական մոտ
 դուրս ձգված և ճշմարտություն դարձրած, Ուրիշ խոսքով, դա ճշմարտ
 բանաւոր էր, մի հարստացնական բնավորություն ունեցող պատմական
 գրավոր բանահյալություն, Եվ այդ է պատճառը, որ երբ մեր Պատմագիրը,
 որ ոչ փոփոխ աղբյուրների մեծ պակասություն ունեւր, երբ իր ձեռքի տակ
 ունենում է Տիգրանի պատմության համար՝ հաշվով գրված մի պատմա-
 կան աղբյուր, այն ժամանակ բառ չի դառնում դրա հայտնի հեղինակին դու-
 վելու համար. Պորենացին ինքն էլ անշուշտ վերամշակել է նույնը, իր
 կողմից էլ ոգտվելով երգերից և հորինել է մի զեղեցիկ վեպ՝

Վերջում պետք է ասել և այս, Հիշատակված կա Դավթի վերագրված
 մի հին վիպասանություն՝ «Պատերազմի Հայոց և Մարացի», Հավաստյալ
 Մեծն Տիգրանի վրա է եղած այդ վիպասանությունը, որի տողերից են.

Էն արդ ներգործող ի միտս երևիւր առ խորհուրդս փողոսին
 «Մեծողւոյ Տիգրանայ գեղանին Տիգրանուհին,
 Է՛ւր ներգործեալ զվողաբազն, նաև ողջամիտ աշխարհածուհին»

9. Խորհնացու հայացքը հայոց պատմության շրջանների վրա՝— Մեր
 նախնական պատմություն մասին շատ տեղեկություններ չունենք, Մարաց

Պորենացու Ա. խմբի մեծագրերի մեջ փոխանակ թի Հիւստիս պատմութենէ Գի-
 առիցս գտնում ենք թի Հիւստիս պատմութենէ՝ բանից, որ է՝ թի պատմութենէ Հիւստիս
 բանից, Արգ՝ ճշմարտութեամբ բանից մի բանով է՝ բանահիւստութենէ—բանաստեղծութենէ,
 Որ ճշմարտութեամբ թուրքերից է հայտնութեամբ բանից (—плестенне слов, ինչպես առ-
 վում է առաջ հին գրականության մեջ), կնշանակէ՝ թուրքամարդ գրեալ Պորենացու գրածի
 բուն իմաստը, որ այնպէս է թարգմանել, որ ճշմարտութեամբ աղբյուրը գրածն է մի
 բանահիւստութենէ, բանաստեղծական աղբյուր

Մարտականքը ասո՝ Մ. Արգյանի ճշմարտական առասպելները, էջ 410—
 445. ճշմարտութեամբ ասո՝ Գ. Գրգիսի. Գրգիսի ճշմարտականութեամբ:

Բարձրագույնը 1850, հիւստ, էջ 310:

Տես և Մ. Արգյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 597:

Վ. Արգ, էջ 428 և հետ.

տիրապետութեան ժամանակաշրջանում համայնորեն հայերն առանձին թաղավորներ պիտի ունեցած լինին: Եյուրոսի ժամանակակից մի Տիգրան թագավորի մասին հիշում է Քսենոփոնը, և կարելի է կարծել, որ պատմական անձ լինի նա: Պարսից Դարեհ թագավորն, ըստ սեպագրութեան, մեծ կախիճներ է մղում հայերի դեմ, և այնուհետև մեր ժողովուրդը ենթարկվում է Պարսից, ապա Մակեդոնացոց և Սելևկիացոց իշխանութիւններին: Վերջիններեա, սելևկիացիներ, ժամանակ, ինչպէս հաղորդում են, երկիրը կառավարել են երբեմն բնիկ իշխաններ, Նրանք ձգտել են անկախութեան, մինչև որ 189 թ. մ. թ. ա., ինչպէս տեսել ենք, Արտաշես Ա. և Ջառեհ, թերևս հին հայ թագավորների ցեղից, հիմնում են երկու անկախ տերութիւն: Արտաշեսի բնիկ ցեղը դարձնում է և տիրում է երկրին մինչև մեր թվականութեան սկիզբները: Այդ միջոցից սկսած՝ մի առժամանակ իշխում են զանազան ազգերից խոտն թաղավորներ, և երկիրը մեկի ձեռք մյուսին է անցնում, մինչև վերջապես 66 թ. մ. թ. Պարթևների Վաղարշ Ա. թագավորի եղբայր Տրդատ Ա. բարձրանում է հայոց զաւր, և պարթևական Արշակունի ցեղը հաստատվում է Հայաստանում և, այսպէս կամ այնպէս, հարատևում մինչև 428 թ. մ. թ.:

Այս է Հայաստանում իշխող տոհմերի ընդհանուր համառոտ տեսութիւնն ըստ օտար աղբյուրների.

1. Հին բնիկ հայ իշխանութիւն կամ թագավորութիւն.
2. Օտարների, Պարսից և Սելևկիացոց տիրապետութիւն, բայց կան հայ իշխաններ իբրև կուսակալներ, զոնե Սելևկիացիների ժամանակ.
3. Դարձյալ բնիկների հայ թագավորութիւն Արտաշես Ա.-ից սկսած.
4. Սրանց անկումից հետո՝ իշխողների ստեպ փոփոխութիւն.
5. Օտար Արշակունի ցեղի թագավորութիւն:

Մ. Խորենացին Հայաստանի տիրապետողների մասին գիտե նույնպէս հինգ շրջան.

1. Հին բնիկ իշխանութիւն Հայկի սերնդից.
2. Օտարների (Ասորեստանցոց) տիրապետութիւն, որի ժամանակ սակայն շարունակվում է հին ցեղն իբրև կուսակալութիւն.
3. Բնիկների այդ ցեղը թագավորութիւն է հաստատում.
4. Սրա անկումից հետո՝ «չփոթ իմե ամբոթից լեալ՝ այր դարամբ ելանէին տիրել աշխարհս».
5. Օտար Արշակունի ցեղի թագավորութիւն:

Համեմատութիւնից պարզ երևում է, որ Խորենացու դրած իշխանական տոհմերի կարգը նույնն է, ինչ որ օտար աղբյուրներից դիտենք: Նրա Պատմութեան մեջ պահված է Հայաստանի հին քաղաքական պատմութեան, իշխող տոհմերի հիշողութիւն, բայց մի խոշոր ժամանակագրական սխալով: Այն միջոցին, երբ, ըստ օտար աղբյուրների, Հայաստանում թագավորում էր Արտաշեսից սերված բնիկ հարստութիւնը, Խորենացին դրել է Արշակունի հարստութեան սկիզբը (2-րդ դարում մ. թ. ա.), Բնականաբար ըստ այնմ և մյուս իշխանական տոհմերի հիշողութիւններն էլ իրենց կողմից

մեկը մյուսից ավելի առաջ են ընկել: Այս սխալ ժամանակաբանությունը ձագեր է նրանից, որ Մ. Խորենացին հայ ազգի ծագումը, ըստ ժամանակի հասկացության, կապել է Աստվածաշնչի մեջ պատմված Բաբելոնի աշաարակաշինության հետ, երբ, ըստ Ս. Գրքի, եղել է լեզուների խառնակում և ազգերի ու լեզուների ծագումը: Նա հայ ազգի նախնի Հայկին դրել է այն ժամանակ, և նրա հակառակորդ Բելին, մեկնությամբ, նույնացրել Ս. Գրքի Նեբրովթի հետ, որ Նոյի Քամ որդու թոռն է: Բուշի որդին Վեա եպս սկիզբն թաղաւորութեան նորա Բաբելոնի (Մհուռք, Ժ. ԺԱ): Խորենացին այդպես է վարվել իր մեկնության մեջ նաև պարսից ազգի սկզբնավորության և Բյուրասպի մասին խոսելիս. «Ասացեալն ի նոցանէ Բիւրասպի Աժգահակ՝ առ Նեբրովթու նախնի նոցա: Քանզի ի քաժանել լեզուացն ընդ ամենայն երկիր... զխաւորք և ցեղապետք որոշեալք զիրեւոքանչիւր սահմանս ժառանգեցին... Սա [Բիւրասպ] ... զցեղապետութիւն ազգին իւրոյ ունէր հնազանդեալ Նեբրովթոյ» (Ա. գրքի Բ. հավելված):

10. Պատմության աստղիկն զրԷի Այսքը:— Պատմության առաջին դիրքը, որ կոչել է «Մհուռքանութիւն Հայոց Մեծաց»,— Մեծ Հայաստանի [Եդեսիայի] ծննդաբանությունը, բովանդակում է վերնում գրված աստղիկն շորս շրջանը:

1. Հայկի և Արամի ժողովրդական առասպելները նա հանճարեղ կերպով մտածելով դրել է Պատմության սկզբում, այդ հերոսների աշունով կոչվել են հայերը: Դա ընթիվ Հայկազանց իշխանությունն է:

2. Օտար տիրապետության սկզբում գրել է Շամիրամի և Արա Գեղեցկի ժողովրդական առասպելը և ապա Ասորեստանի իշխանությունը և մի շարք Հայկազն կուսակալների աշուններ:

3. Երրորդ շրջանում գրել է Հայկազանց բնիկ առնմի մի շարք թագավորների աշուններ, ապա Մեծն Տիգրանի վեպը և հետո Վահագնի մասին ժողովրդական երգից մի հատված, և վերջը մի քանի աշուններ:

4. Զորորդ շրջանի մասին գրում է. «ոչ ինչ ճշմարտագոյն ունիմ պատմել քեզ. քանզի շփոթ իմն ամբոխից լիալ՝ այր դարամբ ելանէին տիրել աշխարհիս» (Ա. 31):

Այս բոլոր ընդարձակ ժամանակի պատմությունն ուրիշ բան չէ, բայց եթե Հայկի, Արամի, Արա Գեղեցկի, Տիգրանի ու Վահագնի հին առասպելները, որ նա պատմել է իբրև իրական եղելություններ, իսկ նրանց պարապմիջոցները լցրել է սոսկ աշունների շարքերով: Այս նկատմամբ հետաքրքիր է Ա. 19. գլուխը, որի մեջ հեղինակը հայտնում է, թե ինքը հարմարեցնելով կարգել է ամենը («Յաւրմարեալ զամենայն կարգեցից»), առնելով գրքերից և տեղյակ անձերից, որոնցից ինքը հավաքել է հնագրություններ, ինքը ոչ մի կամամոտածական, ինքնահանար բան չի հորինել, իսկ ինչ որ աղբյուրներին է վերաբերում, դրանց ստուգությունն աստօնն է հայտնի. «Մեք այնոցիկ ոտար և ի բոց կոցեալ»,— ասում է Պատմագիրը:

Նվ աշպակս առասպելները դասավորելով՝ նա հորինել է հնագույն ժամանակի հայոց պատմությունը, այն, որ անհնաբին էր, բայց ինքը, ինչպես ասում է, հնաբանոր է դարձրել Սահակ Բագրատունու սիրուն, կամ, ինչպես ինքն ասում է իր առաջին գրքի համար, «ի վերայ այլոց անհնա-

բիցն, հնարաւոր վասն թո աբարեւոց մեր, կատարեմք և գոյս (Ա. զրգի Բ. հազնելմած)։

11. Արշակունիի հետադարձութիւնն դարձաւ զայն։— Երկրորդ գիրքը, որ կոչել է Քան միջակ պատմութեան մերոց նախնեաց, սկսվում է Ալեքսանդր Մակեդոնացուց, անցնում է Պարթևների տիրապետութեանը և ապա պատմում է Հայաստանի Արշակունի տոհմի առաջին երկու թագավորներին՝ Վաղարշակի ու Արշակի մասին։ Իբրև աղբյուր հիշում է Մար Արաա, այլև անորոշ ձևով՝ ասոն, ասիւ Վաղարշակի մասին գրել է և առաջին գրքի մեջ։ Այստեղ նա Հայաստանի գրութեանն ապաստ է նկարագրում. «Ո՛չ կարգք ինչ աստ լեալ յայտնի, և ոչ մեհենից պաշտամունք. և ի՞նչ իշխանութեան առաջինն յայտնի է, և ոչ վերջինն, և ոչ այլ ինչ օրինակութեան ի խոսն ամենայն և վայրենիք (Ա. 9)։ Եվ ահա առաջին Արշակունի թագավորին վերագրվում է Յօրինուած թագաւորութեանն, նախարարական տոհմերի կարգումն ու պաշտոնները, և ազնվապետական տերութեան կազմակերպութեանը։

Զի պարզված, թե Վաղարշակ թագավորը ճիշտ պատմական անձի հիշողութեան է, նրա հաջորդ Արշակն, անշուշտ, պատմական հիշողութեան է։ Իսկ հաջորդ Արտաշես, Տիգրան և Արտավազդ թագավորները դրանք են Մեծն Տիգրանը, իբնախնի Արտաշեսը, թագավորութեան հիմնադիրը, և իր որդի Արտավազդը, որոնք մտել են Արշակունի հարստութեան մեջ։ Ինչպես երևում է, 5-րդ դարում պատմական ավանդութեանը Մեծն Տիգրանին, հետևաբար և մյուսներին, կապած է եղել Արշակունի տոհմի հետ։ Փ. Բուզանդը (Գ. 55) Հայոց մեծ թագավոր Տիգրանին անվանում է Արշակունի. «... Զոր անհայն էր զերի Տիգրանայ աբալի Արշակունայ։ Խորենացին այս պատմութեանների համար իբրև աղբյուրներ հիշում է (Բ. 10) Վաղարշակունու ժամանակագիր, որում վկայ է Յովսէփոս և Հիսպոլիտայ և այլք բազումք ի Յունաց և այլն։ Հետո մի շարք գլուխների մեջ (Բ. 23—33) դրված են ասորական Արգարի մասին պատմութեաններ, աղբյուրը Արտաշես։ Ապա (Բ. 34) համառոտ բովանդակութեամբ բերում է Թադեոս առաքյալի և Սանգուստ կույսի վկայաբանութեանը և ավելացնում. «Այս ամենայն... յայլոց պատմեալ յառաջագոյն քան զմեզ՝ ոչ ինչ կորեորացոյն համարեցաք ռնով երկրորդել։ Դրանից հետո սլատմում է Սանաաթրուկի, Երվանդի, Արտաշեսի, Արտավազդի, Տիգրանի ու Տիգրանի և Վաղարշի մասին։ Այդ բոլոր պատմութեանները ժողովրդական վիպական ծագում ունեն, որ և Պատմագիրը հիշում է հաճախ Դա եղել է Վիպասանք, Հայոց երգք վիպասանք, Վերգք Առասպելաց։ Բ. 48. դրում է. «Եւ գոյս մեզ ստուգապէս պատմէ Ողիմպոս քաւրմ Հանայ, զորոք մեհենական պատմութեանց, և զայլ բազում գործն՝ զոր ասել կայ մեզ առաջի, որում և Պարսից մատեանքն վկայեն և Հայոց երգք վիպասանաց։ Վերջում (Բ. 68) հիշում է Բարդամեանի գրած պատմութեանը։ Ապա գալիս է Արտաշեսի պատմութեանը և Տրոսովի ու Տրոսի մասին, միջին նաև երբեմն ուրիշ աղբյուրներից և ժողովրդական վիպի հատվածներից։ Հիշում է աղբյուրներ՝ Աղաթանգեղոս, Վահագնիկների առասպելներին համար՝ Խառնրուս (Բ. 70), Խոսրովի մահից հետո միջին Տրոսի անիշխանութեան

ժամանակի համար՝ Փերմելիանոս եպիսկոպոս (թ. 75)։ Տրդատի թագավորութեան ժամանակի և հետագայի պատմութեան համար, բացի Աղաթանգեղոսից, հիշում է աղբյուրների համար այսպես. «Որ ինչ ի թագաւորութեանն Տրդատայ և յետ նորա, ոչ հեղձութեամբ և անզգուշարար վրիպեալ, և ոչ կամաւոր սիրովանօք ի սմա յարմարեալ քան, այլ որ ինչ ի յիշատակաց դիւանագիր մատենիցն Յաւնաց։ Իսկ ըստ նմանեացն ապա և որ ինչ ի համբաւաց տրանց իմաստնոց և հնախօս սիրաբանից ստուգապէս տեղեկեացեալ, արդարաբար ընդ զրուցեցաք» (թ. 75)։ Այս վերաբերում է հաջորդ գրքին։

Երկրորդ գիրքը՝ «Աւարտաբանութիւն մերոց հայրենեաց»՝ բովանդակում է Տրդատի մահից մինչև Մեսրոպի մահը։ Քննութիւնը ցույց է տվել, որ օգտվել է Փ. Բուզանդից, առանց նրա անունը տալու. բայց նաև ուրիշ աղբյուրներից։

Հայաստանի երկուսի բաժանվելուց հետո կատարված ջաղաքական դեպքերի պատմութեան համար Մ. Խորենացու Պատմութեանն անպիտան աղբյուրն է։ Մեսրոպ Մաշտոցի և գրքի գյուտի պատմութեանն ընդհանրապես նույն է Կորյունի պատմածի հետ։ Կորյունի անունն ևս չի հիշվում։ Արևում է, որ Խորենացին այդ պատմութեանը լսել է նաև երկրորդ, երրորդ բերանից. ուստի մասամբ տարբերվում է Կորյունից, առանձնապես 53 գլխի պատմութեանը՝ «Յազակոս Մեսրոպեան նշանագրացն, ի վերնոյն տուելոց շնորհաց»։ Այստեղ գրքերի գյուտը մի տեսակ կիսահրաշք եղանակով է լինում։ Ժողովրդական համբավը 5-րդ դարում էլ արդեն կարող էր գործած լինել։

Ստատաւ լայաքի անունը, ինչպէս է հարաւնի մեջ, դարձած է «Ստատոս», որ հասկացվում է Ստատոս կղզին՝ Փաշը Առիտի արևմտյան կողմում։ Բայց Ստատոս անունը պարզապէս աղետալան է Ստատոս անվանի Քանի որ ծովով այնտեղ զնայու համար՝ Սեդոսիայէ՝ Փինիկէ ևն գնում, դրա համար, և սկզբնական բնագիրը՝ «Աւ անցեալ ընդ Ափրաս» ի Ստատոս գիւմէ՝ դարձել է՝ «Աւ անցեալ ընդ Փինիկէ» ի Ստատոս գիւմէ։ Ինչ այստեղ աղետալան և փոփոխում կա, այդ երևում է նրանից, որ 87-րդ գլխում Սահակի թղթի մեջ գրում է, թէ Մեսրոպը բերել է մեր նշանագիրները բարգաւա անդամ ևզեալ դարս յԱւարոց աշխարհին, նախապես Թեոդոսի թղթի մեջ գրում է. «Աւ ասաւել յայտ մեզագիր եմք, զի արեւմտեանս զհարաւորացս, որ ի մերում ջաղաքին» յԱսորեց ամանց խղրեցիր զիմաստից դիւս... բայց զի յետոյ պատմեաց մեզ Մեսրոպ, եթէ կատարուած տրուեալեք ի շնորհաց վերնայն եղև... Դարձյալ Ատակկասի թղթի մեջ. «Զիմար թագեր պոգրիւրն եկեղեցւոյ, զհայրն մեր սուրբ Յովհաննէս... Ոսկեքիւս... կամեցայ ի օտարեակուն ջրաց զփոփայ ծարաւոյ յաղեցուցանել, մինչև ամենախալին տեսեալ զանաթ աշխատութիւն՝ զիմեաց ի ձեզ զշնորհս ևզգուշան Պարզ է, որ, ըստ Խորենացու, գրքերի գյուտն եղել է Ասորիքում։ Եթէ Մ. Խորենացին գրում լինել, թէ գրքերի գյուտն եղել է հուստեան Ստատոս կղզում, նա իր շարադրած համակնիքի մեջ այդպես չէր գրել։ Հայտնի է՝ Մ. Խորենացու Պատմութեանն ուրիշ մասերում էլ աղետալան է հաղապատեցրել, փոփոխութեաներով և ընդմիջելով։ Քննելով Ստատոս անունն ու «Փինիկէ»։

12. Պատմակց արժեքը հնումն և նորում։— Մ. Խորենացին, ինչպես ինքն ասում է, անհնարինը հնարավոր է դարձրել։ Զեղած տեղից ստեղծել է մի Հայոց Պատմութեան, որ 1400 տարի, մինչև 1890-ական թվականներն, իշխել է իբրև հին իրականութեան անդրադարձում։ Սոսկ անուններն անգամ նրա ծննդաբանական ցանկերի մեջ՝ համարվել են իբրև մի

ժամանակ ապրած հայ նախնի իշխողներն՝ նահապետների ու թագավորների տնունները Հայոց պատմութիւնն ուսանում էին ըստ Մ. Խորենացու և Նույնիսկ այն սոսկ տնուններն անդիւր տնում շաքճով։ Խնչք մեջ է եղել նրա ազգեցութեան հիմքը։

Նրանից առաջ Կորյունը գրել է Մուշտոցի վարքը, մի համապատիւ և ճշմարիտ պատմութիւն, որ շատ սիրելի է եղել հայոցը սերունդներին, բայց դա մի կարճ շրջանի որոշ եղելութեան պատմութիւնն է։ Կար և Ալգաթանգեղայ Պատմութիւնը, Նույնպէս սիրված և ազգեցութիւն թողած, բայց քրիստոնեական դարձի պատմութիւնն է միայն։ Վերջուպէս հայտնի է եղել և Փ. Բուզանդի Հայոց Պատմութիւնը, բայց դա էլ համարեմ Ծ-րդ դարուց արդեն չունի առաջին և երկրորդ գորութիւնները և միայն մի քառասուն տարւոյ պատմութիւն էր, այն էլ մի այնպիսի պատմութիւն, որ քննով բավարարութիւն չէր կարող տալ ոչ հայ ազնվականութեանն ընդհանրապէս, — ցանկի որ դրա մեջ փառաբանված էին թագավորների հետ Մամիկանյանները, — ոչ էլ ժամեղանգ համակրն ուսում տալու մարդկանց շրջանին։ Այդ պատմութիւնը խիստ սամկական էր, առանց ժամանակաբանութեան, հսկայական չափազանցութիւններով և չէր ըստ ճշտելի հուշական ուսում ստացածներին, Կար և չորս հազներգութեամբ բանահայտութիւնը (շէնուսեմ Պիտոցից—Բանից), որ իր ձևով և բովանդակութեամբ կատարելապէս համապատասխան էր ժամանակի ոգուն։ Բայց դա էլ միայն Մեծ Տիգրանի վեպն էր իր մեջ ամփոփում, ժամանակի ազգային ինքնուրույնական ձգտումի հետեանքով պահանջ կար մի ամբողջական մշակված հայոց պատմութեան։ Այդ պահանջին բավարարութիւն տալու համար ահա երևան է եկել Խորենացու Հայոց Պատմութիւնը։

Այսպէս հայոց պատմութեանն սկզբն էր հայ ազգի ծագման ժամանակից, կապված Մ. Գրքի ավանդութիւններին հետ, և առաջ էր ընթանում ժամանակին հայտնի հին պատմական աղբիւրի պատմութեան հետ — Բաբելոնի, Ասորեստանի, Մարաց ու Պարսից, Մակեդոնացոց ու Պարթևների, Հռոմայեցոց ու Սասանյանների, Երբեմն հայ իշխանները ոչ միայն ժամանակակից էին այլազգի իշխաններին, այլև իրր մասնակից էին նրանց կատարած գործերին, նույնիսկ իշխական պատերազմին։ Մեր Զարմար ի ժառանգութեան Ասորեստանեայց սակառուք ընդ Եթովպացի դորուն օգնական Պոթամու, և անդ ի քաջացն Հելլենացոց վիրաւորեալ մեռանի. այլ կամ ի յԱքիլեայ, և մի յայմէ ումեքէ ի քաջացն (Ա. 32), բացառադանում է Խորենացին այն սին պատմութեան վերջում սին պարծանքով։ Այդ Պատմութիւնը, սակայն, մի վկայական էր հայ ազգի հնութեան և հազարավոր տարիների պատմական կյանքի, որով շոյված էր ազգային զգացումն ընդհանրապէս։ Մինչև անգամ դեռ 19-րդ դարի վերջին քառորդին՝ Հայի նահապետին համարում էին իրապէս ազգած մի անն և պարեմում էին հայ ազգի խորին հնութեամբ։

Պա բավարարութիւն էր տալիս նաև եկեղեցականներին և անանավոր ազնվական տոհմերին։ Այդտեղ տառամկած էր նախարարութիւններին ծագման մասին, Հայկազն և Արշակունի իշխող տոհմերի համար զգորդի ի հորէ ծննդաբանելով... զբովանդակն. իսկ զՀայաստանեայց նախարարութիւնս,

նելով, ավելի ևս ուղարկութիւն գործնել, քանի որ Պատմութիւնը գրել է մի Բազրատունի իշխանի խնդիրքով: Հիշենք միայն, թե Ղ. Փարպեցու ճշայն Պատմութիւնն մեջ որքան շատ տեղ է աված Մամիկոնյաններին, խորենացու գիրքը հնումն, ընդհակառակն, վոստեհութիւն է ներշնչել հենց «արժանահամարութիւն» նկատմամբ նաև այնու, որ Պատմագիրը ոչինչ չի թաքցնում իր ընթերցողներից, ի դեմս Սահակ Բազրատունու՝ միշտ գրուցում է իր ընթերցողների հետ, իր կարծիքները հայտնում է հենց սկզբից խոսում է և շարունակ կրկնում իր աղբյուրների մասին. ասում է, թե «հարմարելով» կարգում է շատ բան, բայց ոչ կամամտածական, այլ քաղելով ուրիշներից, «ճշուհեցում»՝ որքան է կտրողութիւն, որպէս դուք զհաւաստին ի հնոց պատմութեանց, մերոց մասամբ ամենևին անսուտ: Արդարև, նա բավարար աղբյուրներ չի ունեցել, դիմել է ամեն մի վավերական և անվավեր աղբյուրի՝ մի բան գտնելու հայոց պատմութիւն համար, շատ անգամ ինքը եղբակցութիւններ է տրել. բայց և այնպես նա հաճախ քննադատում էլ է իր աղբյուրները, և նոր ընդունում կամ մերժում, կամ թե իր ընթերցողին է թողնում ստույգ կամ անստույգ համարելը և պնդում է, թե ճշմարտութիւնն է միայն ուղղում գրել: Եվ այս հանգամանքը բնականաբար ազդել է ոչ շատ խստապահանջ հայրերների վրա, որոնք նրա Պատմութիւնն ընդունել են հավաստի: Նրանք, և նույնիսկ ինքը խորենացին, ստուգութիւն մի ապացույց են համարել միամտաբար անգամ այն, որ հարմարեցրած ճշուղագրութիւն մեջ Սեմի, Քամի ու Հարեթի իրար հաջորդող սերունդների թիվը հավասար է. թիսկ դու, ով ուղիմ ընթերցասէրդ, հայինց աստանօր ընդ հաւասարութիւն կարկի երկից ազդացող մինչև ցԱբրահամ, ցնինոս և ցԱբրամ) և գտրմացիր» (Ա. 5):

Պատմութիւնն արժանահամարութիւն մի մեծ ազդացույց համարվել է և այն, որ խորենացին սկզբից մինչև վերջը դնում է հայ իշխողների ժամանակաբանութիւնը Պարսից կամ Հոմմայեցոց թագավորների իշխանութիւնն տարիներով: Նա իբրև պատմագիր շատ լավ գիտե և հայտնում էլ է. «Ո՛ր է պատմութիւն ճշմարիտ տօնաց ժամանակագրութեան» (Բ. 82): Հայոց թագավորների ժամանակը որոշելու համար՝ նա բավական շատ աշխատանք է թափել կամ, ինչպես ինքն ասում է, «մանրախեղիւ» քննութիւն է արել Տրդատի թագավորելու տարին գտնելու համար: Այսպես և մյուսները: Բայց, հարկավ, հաճախ չի կարողացել ճիշտ ժամանակագրութիւն ասանալ, կամ իր պատմած իրողութիւնների ստուգութիւնն հասնել, և այլապես էլ չէր կարող լինել այն ժամանակ և նրա բանեցրած աղբյուրներով: Նա կատարել է այն, ինչ որ հնարավոր է եղել իր համար:

Եվ վերջապես, հետնորդների վրա ազդել է և այն հանգամանքը, որ նա ժողովրդական բանահյուսութիւնն այլաբանութիւն համարելով՝ մեկնել է: Այդպիսի մեկնութիւնը միշտագարյան դրագմաների սիրած բանն էր, և զրա արդունքները համարվում էին ստույգ իրականութիւն: Ազդել է, հարկավ, և նրա մեծ գրական արժանիքը, և՛ իղեուգիան, որ կտեսնենք քիչ հետո:

Նրա երկի այս և ուրիշ հատկութիւնները պատճառ են դարձած, որ նրա Հայոց Պատմութիւնը եղել է միակ աղբյուրը սկզբից մինչև 440 թվա-

կանը ժամանակագրիկ նկատմամբ համար, Հայաստանի պատմությունները հետևել են նրան և նրանից քաղվածները արել են պատմության համար, կատարյալ վստահության տեղում առնալ:

Նրա Հայոց Պատմությանը շատ կարգացված և սերված է եղել, ավելի քան մեր մյուս բոլոր պատմագիրներին: Դա շատ էլ արտագրված է, բայց և այնպես այդ գրքի օրինակները բավարարության չեն ավել առհասարակ, գրքի պակասության է զգացվել, և այդ համարվել է առհասարակ անբերելի (անտեսելի աղետ) 17-րդ դարում: Եվ ահա թո՛ւմա Նուրիջանյան Կարապետը, ի վաղուց քաղաք է վանանդու: Գողթնացո, իր քննու որդի Մատթեոսին ուղարկել է Ամասիոյում առ ի յօրինել և հոգալ գրուն գործին տպագրության, հետո ինքն էլ գնացել է այնտեղ և 1693 թ. տպագրել է իր աշխատությանը ու ծախելով զգալի քանակությամբ բաղադրանքներ առ Մասիսի Գրքարանոցին: Դա Հայոց Պատմության անգրանիկ տպագրության է, որ և մեր հին, 17-րդ դարից առաջ տպագրված, պատմագիրների տպագրության անգրանիկն է:

Այս ամենն էլ պատճառով, որ երբ կատարվեցին նրա Պատմության տպագրությունները և Պատմության ինքը, մանավանդ երբ արա հեղինակին տեղահան անելով՝ սկսեցին դնել 6-րդ, 7-րդ, 8-րդ կամ 9-րդ դարերում, այդ մի տեսակից ավտոմատիկ նրանց, ովքեր կատարյալ վստահության էին նայում մեր այս Պատմագիրին: Ժամանակի տեղափոխության համար բերված փաստերն ընդհանրապես համոզիչ չեն: Ինչ վերաբերում է Պատմության ընդհանրապես ինքնին, բնականաբար այժմ դա քաղաքական դեպքերի նկատմամբ այլևս այն արժեքը չունի, ինչ որ առաջ, Այլևս ոչ ոք չի կարող միամտաբար ընդունել, թե Մ. Պատմագիրը Պատմության մեջ հիշված անձերը բոլորն իրական գոյություն են ունեցել, և կամ նա իր գրվածքի մեջ միշտ պատմել է իրոք կատարված դեպքերի մասին: Իսկ բաներ, որ մտադրված են անստույգ են, հետևանք սխալ ընդհանրություն, կամ անվավեր աղբյուրների: Այսպես, օրինակ, Արդարի մասը Հայոց պատմության հետ կապ չունի: Մի թյուրիմացության արդյունք է Արտաշեսի Երեմյանի կառուցման մասին պատմածները (Բ. 11—13), և ուրիշները: Բայց այսուամենայնիվ Հայոց Պատմությանը չի կորցնում իր նշանակությունը, այլ վերադարձավ նախկին մասերին տարբեր կերպով է արժեքավորվում: Որ պատմվածքների աղբյուրներն արդեն հայտնի են, բնականաբար այժմ դիմում ենք այն աղբյուրներին, որ գործածել է Պատմագիրը: Բայց այդպիսի գիտելիքով էլ իմ համար տարբերվում է իմ աղբյուրներից, և կարելի չէ նկատի չափնել աղբյուրի տարբերությունները: Զանի որ, ինչպես ասած է, ժամանակագիրներն իրենց պատմած զրույցներն օրից չեն առնում, առավել ևս Մ. Պատմագիրը նման մի պատմագիր: Շատ այնպիսի բան, որ կատարվել է կատարված է, և անհայտ է իրականությունը: Իսկ համարժեքներ էլ, որոնց համար իրենց անհայտությունը աղբյուր է: Ինչպես 4-րդ դարի վերջերի և 5-րդ դարի համար: Իսկ հետագայն ավանդական բանահյուսության համար Պատմագիրն միակ աղբյուրն է: Անշուշտ, նրա մեկնություններն այդ մասին արժեք չունեն. կամ այնքանով միայն աղիտեն են, որ դրանցով կարելի է լրիվ վերականգնել առասպելը, կամ

տեսնել հեղինակի իրեն սրամտությունը: Շատ պատմվածքների համար այժմ արդեն դիմում ենք արտաքին աղբյուրներին, որոնք ավելի շատ և համեմատաբար ավելի ստույգ տեղեկություններ են պահել Հայաստանի քաղաքական պատմության համար: Համենայն դեպս՝ տարջի հայոց պատմությունը մինչև 5-րդ դարը՝ այժմ պիտի նոր հորինվի, ինչ որ քաղաքական դեպքերին է վերաբերում, արտաքին աղբյուրներին հիման վրա, իսկ խորհնացու Պատմությունը մեջ կտրող է դալ իբր հրկրորդական, երրորդական և չորրորդ, այն էլ այն ժամանակ, երբ համապատասխան է արտաքին աղբյուրներին:

Այս ամենը, սակայն, վերաբերում է անձերին ու կատարված դեպքերին: Բայց բացի դրանցից՝ կա նաև ներքին կյանքը: Եթե այս կամ այն եղելություն նկատմամբ սխալաշատ է խորհնացու Պատմությունը, դա հարուստ է այնպիսի տեղեկություններով, որ կապում են բուն պատմությունը և ինչպիսի ուսումնասիրություններ էլ որ տեսնու լինեն Հայաստանի ներքին կյանքի պատմության վերաբերյալ: միշտ դիմում են և պիտի դիմեն նրա Պատմությանը:

13. Գերդղոսեայքը և Սրա «Հայոց Պատմություն»-ն իբրև գրական նրկ: — Մ. խորհնացու «Հայոց Պատմությունը շատ բարդ, իր բոլոր ապացուցված անվավեր մասերով հանգեծ՝ շատ ճարտար, իր ժամանակի համեմատ՝ վերապետուն կազմած մի երկասիրություն է: Դա «մեզ համար ամենից առաջ մի դրական հիշատակարան է՝: Իբրև այնպիսին դա ամենից առաջ իր գաղափարախոսությամբ բազմակողմանի արտահայտություն է իր ժամանակի: Ինչպես վերևում ասվեց, այս Պատմությունը ծագած է գաբի պահանջից, այն քաղաքական դրությունից, որով առաջ էր եկել 5-րդ դարի մտավոր շարժումը, որ և ավելի վատացած կերպով իշխում էր դեռ այդ դարի 2-րդ կեսին: Քաղաքական անկումն առաջացրել էր բնականաբար վնասություն, միաժամանակ և ձգտում նորից հին անկախությունը ձեռք բերելու: Պետք էր այս գաղափարը դարձացնել, հուսադրել: Ահա հիմնական խնդիրը, որ զբաղեցնում էր հասկացող մտքերին: Դա ազգային շահերի պաշտպանությունն էր: Դրա համար հարկավոր էր անցյալից ստեղծել օրինակելի քաղաքական տիպարներ, գովերգել անցյալի հերոսներին: Այդ նպատակից էին թելադրված փ. Բուզանդի, մասամբ և Աղաթանգըթեղոսի հերոսական պատկերները ժողովրդական բանաստեղծության հիման վրա: Նույն նպատակի համար «Արդառաւորն ի բանս», դարձյալ ժողովրդական երգերից ազդված, անցյալի խավարից առաջ էր կոչել և կենդանացրել հայոց ամենամեծ թագավոր կերպարն իր չէրա հագնեցություններին մեջ, որով հիացած էր մեր Պատմագիրը: Նույնն տեսնում է և ինքը Մ. խորհնացին: Նրա ժամանակ դեռ կենդանի էր հին հունական արվեստն ու դարձությունը, դեռ կար հեթանոսությունը, ուստի նրան, այդ կրոնավորին, չէր տատամեցնում այն, որ իր փոռարանած հերոսները քրիստոնյա չին եղել, որ նա

¹ «Մ. խորհնացի ըստ պր.-ֆ. Ն. Մառի, «Հանդէս Ամսօրեայ», 1895 թ., էջ 18, 84, 108, 195, 307. Թարգ. Ն. Լաւրանի. H. Марр, О начальной истории Армении Аноним. К вопросу об источниках истории Моисея Хоренского. По поводу критических статей проф. A. Carrière's, «Византийский Временник», 1894, II.

հայրենասիրական հաղաթուրթյամբ հիշում է հին հեթանոս վիպական հե-
րոսներին, որի ու ջաջ ազամարդկանց, որ նա տրամադատիչ էր դառնում
աշխարհիկ իդեոլոգիայի:

Ոչ թե Բաղրատունիներին հռչակելու, այլ այս քաղաքական միտումն
է, հուսադրությունը, ջերմ հայրենասիրությունը, որ սկզբից մինչև վերջն
անց է կացրած Խորենացու Պատմության մեջ: Սեր ծնեցնել դեպի հայրե-
նիքը, սեր դեպի ազատությունը, դեպի հայրենիքի բարգավաճումն արվեստ-
ներով, գիտությամբ, քննաքննությամբ: Այս հաղաթուրթն են ծառայում նրա
մշակած կերպարները, և Հայկը, և Արամը, և Տիգրանը, և մյուսները:
Մեկը հիմնում է Հայաստան երկիրը. մյուսին վերադարձում է լքված
դահման՝ Հայոց յամենայն կողմանց, նա ջախջախում է այն սահմանա-
կից ցեղերին, որոնք թուլանալու էին սմբակակոխ տրաքումը զուհման
Հայոց (Ա. 13): Վեա այր աշխատատեղի և հայրենատեղի եղեալ,— գրում է
Քերդոզն Արամի համար,— լաւ համարէր զմեռանելն ի վերայ հայրենեացն,
քան թէ տեսանել զորդիս օտարածնաց կոխելով զսահմանս հայրենեացն և
եւորակտից արեան նորա սիրելի արանց օտարաց: Անա թե ինչ գաղափու-
րով է ողնարված մեր Քերդոզի հերոսը, որ նաև հերաման տայ բնակչաց
աշխարհին՝ ուսանել զօսոս և զյեղուս հայկական: Այդ, թեպետ ուրիշ պա-
րագաների համար ասված, բայց եղել է ցավերից մեկը նրա ժամանակի,
երբ օտարամուտները նույնիսկ իրենց լեզուն էին թողնում:

Անա թե ինչ է գրում նա, երբ պատմում է Հայկական տոհմի թագա-
վորների մասին. «Ինձ յայսքիկ տրք ի մերոց թագաւորաց են սիրելիք. որ-
պէս ընդէ և իմոյ արեան տուրք և հաւաստի հարազատք: Եւ սիրելի էք
ինձ՝ յամեամ զալ Փրկչին և զիս գնել, և առ նոցօք յաշխարհ զմուտն իմ
լինել, և նոցա տերութեամբն խրախոսանալ, և յարգեացս ապրել վտանգիցս:
Այլ վաղ ուրեմն փախեալ ի մէնջ պատահումն այն, թէ արդօք և վաճակ
Բայց արդ ես առ օտարաց թագաւորութեամբն կացեալ...» (Ա. 22): Ո՛ր-
քան ճշդում է նրան, այդ հայրենասերի վշտահար հոգուն, օտարների իշ-
խանությունը. «Թագաւորք տիրեալք խիստք և շարաշարք, բռնին բառ-
նալով ծանուն և դժուարակիրս, հրամանս տալով անտանելիս»,— գրում է
նա իր վերջին Ոլբի մեջ և մեծ դառնությամբ շարունակում գծել իր ժա-
մանակի ամբողջ երկրի ողբալի գրությունն իր օրով օտարների թագա-
վորության ժամանակ,— վտանգներով լի մի գրություն, որից կարելի էր
ազատվել ըստ Պատմագրին, եթե լիներ Հայկականց թագավորների նման
սիրելի բնիկ թագավորների իշխանությունը, մի բնիկ արքա վիպական
Մեծն Տիգրանի նման, որի գեմքն այնպիսի վառ գույներով երկնադիր է
նա Պատմության մեջ: Վժիռիլի, որպէս ինձ պատմողին ի մէջ իմոց բանից որ
ինչ յաղաքս Երուսղեանս Տիգրանայ բանք՝ եղիցի և քեզ ընթերցողիդ, որ-
պէս այրն և գործք, այսպէս և զնմանէ բանք: Վասն որոյ սիրեմ կոչել այսպէս
ըստ քաջութեան—Հայկ, Արամ, Տիգրան. քանզի ըստ քաջացն՝ ազգք քաջք»
(Ա. 31): Եվ զայն ու երկրի շինարարության համար մտածող են նրա պատ-
մական անձերից շատերը, ոչ միայն վիպականները, այլև մյուսները: Նրանք
պիտի սիրելի լինեին ընթերցողին հայրենիքի թշվառության ժամանակում:
Նրանց պատմությամբ պիտի ոգևորվեին: Երբորդ քրքի սկզբում գրում է,

Թե Պատմությունը հորինում է «հասարակաց խօսիւք», շորպէս զի մի ոք երեսնացի ի պերճարանութիւնս զբաւեալ առ փափազ, այլ ճշմարտութեան բանից մերոց կարօտեալ ստէպ ստէպ և անյագ առնիցեն զընթերցումս պատմութեանց մերոց հայրենեաց:

Այս է եղել Մ. Պորենացու միտումն ու նպատակը, գաղափարն ու ձգտումը: Եվ նա հասել է իր նպատակին: Դարեր շարունակ կարգացել են նրա գիրքը, ոգևորվել նրա անկեղծ հայրենասիրութեամբ:

Այս նպատակին հասնելու համար՝ պետք էր ոչ լուկ պատմություն հորինել, այլ բանաստեղծորեն գրել, կամ հորինել բանաստեղծական պատմություն, ասեղծել հայրենասիրական կերպարներ, եվ իրոք, Մ. Պորենացու Պատմութեան մեջ կան մի շարք հատվածներ, որոնք իսկական փոքրիկ բանաստեղծական պատմակերպ են, և ամբողջ երկն էլ ընդհանրապես գեղարվեստորեն է հորինված:

Առնենք աչառիկ սկզբի զրույցը Հայկի մասին: Ինչպես որ այս հերոսի անվան հետ կապված է հայ ազգի կոչումը, նույնպես և նրա զրույցի մեջ գեղարվեստորեն բյուրեղացած է հայ ժողովրդի պատմութեան էական կողմը, նրա ինքնապայտպանական դարավոր մաքառումն ընդդէմ դրսից հարձակվող թշնամիներին: Հայկի պատումը, դա նախատիպն է մեր ուրիշ ժողովրդական վեպերի և շատ բանաստեղծութունների մինչև տասրվան օրս. դրանց թեման բուն գաղափարն է՝ օտար բռնակալին զիմադրել, պայտպանել հայրենի երկիրը, եվ Մ. Պորենացին մեծ ճարտարութեամբ այս է դրել Հայոց պատմութեան և ազգի սկիզբ, մի շատ հարմար նյութ ոչ միայն նրա համար, որ այդ առասպելի մեջ, ինչպես սեփական, երևում է մեր պատմութեան հնագույն շրջանի հիշողությունը, այլև հենց իր այս իդեալի տեսանկետով:

Թե ինչպիսի է եղել Պորենացու աղբյուրի մեջ այս առասպելը, մենք այդ չգիտենք: Հավանորեն մի փոքրիկ, պարզ պատմվածք, ինչպես սովորաբար են ժողովրդական զրույցներն և առասպելները: Պորենացու գրչի սակ զա զարձած է ճոխ ու գեղարվեստական ձևով մի բանաստեղծութուն, մի զարդարուն «ոճով» հոյակապ պատմվածք, պարզ, բայց ուժեղ գործողութեամբ, ամբողջը հեթանոսաբար ստեղծագործված: Դործող անձերը պատկերացված են կամ վատ կամ լավ կողմից. բնականաբար թշնամի հսկան, Բելը, նկարագրված է վատ կողմից: Նա մի ամբարտապան բռնակալ է, անհեզ ու վիթխարի մի հսկա, որին հաջողվել է բռնութեամբ ափրել երկրին և ստրկացնել իրեն բազմաթիվ անհոռն խոլ և ուժավոր հսկաներ, երկայնագեղ հասակ ունեցող կովոդներ: Նա չի կարողանում տանել, որ մեկն իր իշխանութեանը չհնազանդվի: Թեպետ և իր հետ ունի ընտիր և զինված հսկա կովոդներ, բայց և այնպես նա վախկոտ է և մարտի դաշտից փախչում է, չուզելով դեմ առ դեմ հանդիպել թշնամուն, այլ հույսը դնում է միայն իր զորքի բազմութեան վրա: Հայկն, ընդհակառակն, մի անվանի և կորովաձիգ զինազն է, գեղապատշաճ և անձնյա, պատկերացվում է իբրև քաջութեան և պատասիրութեան մի կատարելատիպ: Նա զիմադրում է այն ամենքին, որք ամբարանային զձեռն՝ միտպետի ի վերայ ամենայն սկալիցն և զիւցազանց. դեմ է կանգնում բռնակալ Բելին: Վերջը չկամենալով ենթարկվել նրան՝ սովելի լավ է համարում հեռանալ և ջուրտ կողմերում

ապրել, քան ուրիշներին պես ռաբլանալ նրան: Նա չնայելով իր մարդկանց սակավութեանը՝ անվախ դուրս է գալիս Բելի դեմ. զի լավ է համարում մեռնել, քան հպատակվել բռնակալին: Եկամ մեքուք, — ասում է նա, — և աղի մեր ի ծառայութիւն Բելայ կացցէ: Կամ զաջողութիւն մատանց մերոց ի նոցուցեալ՝ ցրուեալքի ամբողին, և մեք եղիցուք յաղթութիւն ստացեալքս (Ա. 11): Այսպէս մի կողմում հարձակվող, բայց վախճուս բռնակալն է իր ասնկալող հրոսակին, ամբոխի բազմութեամբ, մյուս կողմում պաշտպանվող անվահներ հայր դիցապն՝ իր սակավութիւմ որդիներով: Եվ ազդեցավոր Հայկը «յառաջ վարէ զինքն, մօտ հասանէ յարբայն, լի քարշէ զլայնալիճն, զիպեցաւ քանէ զերեքթեանն կրճից տախտակին, և շնոր ընդ մէջ թիկանցն թոփանցիկ լեալ յերկիր հարստի սլաքն. և այսպէս ճոխացեալն Տիտանեան կըրծանի յերկիր քարկուցեալ, և փշէ զոգին: Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի անաղին գործ քաջութեան՝ փախեան իւրաքանչիւր զէպ երեսեաց իւրեանցս: Հիշենք մեր նոր վեպից՝ հարձակվող Մարմալիքին իր զորքի բազմութեամբ ու պաշտպանվող մենամարտիկ Դավթին:

Հայկի վեպը, ծագած լինելով զսուսակալանից, բնականաբար այս կամ այն տարրերն ունի ավանդական բռնաշրջառութեանից: Այսպէս՝ զրա սուսակալն իր էակուն կողմով մի աշխարհի պատմվածք է. որ, ինչպէս տեսել ենք, շատ տարածված է Դրա ընդհանուր վիպական գույնն ևս, անշուշտ, մասամբ ծագում է սկզբնական աղբյուրից. բայց շատ բան պարզապէս Խորհրդացու մշակածն է, և այդ մշակումը կատարված է մեծ հմտութեամբ և արվեստով թէ զործողութեան ընդհանուր պարզացման և թե մասերի մեջ, Սկզբից մինչև վերջը պատմվածքը տարած է ավանդական բռնաշրջառութեան հաւանք, մասամբ և սրանից ծագող վիպական մանրամասնութեաններով, մանրապատում հանգամանքներով ու ձևերով, ինչպէս են՝ Բելի դեսպան ուղարկելը Հայկին, որ սա իրեն հնազանդի, Հայկի խիստ պատասխանը, հսկաների կռվի ժամանակ երկրի զըզալը, հատուկ անուններ ժողովրդական ստուգաբանութեանները, հերոսների նկարագիրները, Բելի զինավորութեանը, բազմաթիւ մակդիրները, որոնք մեծ մասամբ վերաբերում են, ինչպէս սովորաբար վեպերի մեջ, հերոսների արտաքինին, նրանց մարմնական հատկութեաններին, ինչպէս են՝ կորովածիճ, հաստաղեղն, տնձնեայ, հոստաբաղուկ, խոյտակն, գեղապատշաճ, քաջագոյնգուր, անարի (նիզակ), երեքթեան (նետ), լայնալիճ (տղեղ), անհուկ խոլ, յաւերժ քաջ, երկայնադէղ Կառնի, բազմակոյտ (հսկայք), Կան և հոգեկան կողմի համար մոկլ-դիրներ, ինչպէս են՝ ուշիմ և խոհեմ (հսկայ):

Հայկի առասպելի այս զեղարվեստական մշակումը միայն, որ կատարված է մեղմից դարեր ասած, բավական էր նրա հեղինակին փառաբանելու իբրև առաջին ճերգող, ճերգողահայր: Բայց այսպիսի գեղեցիկ յատմվածքներ և նկարագիրներ շատ շատ են Խորհրդացու Հայոց Պատմութեան մեջ: Առանձնապէս տեղի են ընկնում հայկական առասպելներից ու Վիպասանքից առած պատուհանների մշակուհիները, ինչպէս են՝ Արա Գեղեցիկի, Մեծն Տիգ-

¹ Մ. Արեղյան, Հայ ժողովրդական առասպելները, էջ 191—247. Հայկի առասպելի վեպականութեան խնդիրը, և այլն:

բանի, Երվանդի, Արատշեսի վեպերը, որ արդեն տեսել ենք: Բոլորի մեջ էլ իշխում է նաև խորհնացյալն ոգին և ազնիվ արվեստը, նույն շնորհքը ավանդական բանականության պարզ նյութը գեղեցիկ ու ճշիլ պատմելու, կենդանացնելու և հետաքրքիր դարձնելու, հարկավ, ազդելով ժողովրդական պատմաճեղքի:

Եւս յաւ կատարման խորիցն՝ կամեցեալ կոչել զնստ Սիւնեաց աւերն, զորս և յաւուրն յայնմիկ աղաչեաց զսարբան՝ ճաշել ընդ նմա յօթեանին: Եւ յառաջեալ սուկա մի ննդաւարին Վասակայ ի նոցանէ՝ ձայն զգին եղեալ սրբայն Ղեւոնդի՝ կոչէր զնա պատասխան տնաւոր մեծանայն. «Սիւնեաց աւեր, Սիւնեաց աւեր, Եւ նորս յոմարապէս պատասխանի արարեալ. «Տեսե՛ք, զի՞նչ տալէս: Եւ որքոյն ասացեալ. «Ջովանայն ինչ մեր ասացեալ ընդ ցեղ՝ զդիտայն և զտաւել սգաակարսն մասացեց հարցանել, թէ մեր երթաւ: Եւ ննդաւարին Վասակայ լուեալ զայս և ի մեծ արժամութիւն ընկզմեալ՝ աւեր զարմացմամբ. «Աս աւերն իմ երթամ, գտանել ի նմանէ ըստ արժանի մեծ վասակացն պատաւարն մեծն: Եւ որքոյն Ղեւոնդի պատասխանի տուեալ տալ. «Կարծեցուցանէ զցեղ զեզ, որ պարտեալ սողրեաց զցեղ ննդել սուրբ Անկատարեանի ուխտի, թէ սրբ միշտ թագաւորութեամբ տիրութեան շայն կարեն Արքեպ տալ ձեզ ըստ արժանի վասակաց ցոյ զստաւարաւն. այլ և ոչ մի ինչ է որ կարեն տալ ցեղ փոխարէն. բայց թէ արգարեք զաւ կնիզանութեամբ զգլուխդ ի զերտ յաւազդ ի շայտ ասնիս՝ ապա ընդ իս տեսան Աստուծայ չէ խոսեցեալ: Եւ զայս լուեալ ննդաւար իշխանին Վասակայ՝ վրասեալ իւղեցաւ ամենայն սնտի յայն իւր, և տեղէն ծանեալ զբնիկ հրեան իւրոյ, որ մերն ընդ մերն հասանից լու ի զերտ շարա: Գտնել ոչ վրեղելը բան որքոյն, միշտն կատարել ամենայն (էջ 280 և հետ):

Այսի է ընկնում և Այրարատայն զայտելնկարագիրը, որի մեջ ընթում են այդ դաշտի կնիզանական, բուսական և այլ հարստութիւնները: Հիշում է և բնակիչներին կնիցապի մասին: Գնդեցիկ է և պատեղապի մեջ աղանդման ու բանաստեղծութեան նախորդներին կանոնաց զգլուխ (էջ 280), որ նման է Նիդերլանդ Քերեմեք և Երբորդ գրուագի սկզբի համարը:

Ա՛ւրս՝ զարմեանց անդրէն յաւանքն զուսուցն՝ զբնայն ու կարգի: Իսկ յամեն կնից և առանհրորդի Յաղկերտի արքային իշխանն Վրաց Այուշայն աղանդը զուսուց գրուան արքանի, բազում և անմար կարտի ծախեալ իւրաքանչիւր ուժեք, և մանաւանդ առաւել անորէն հապարտեալին Միւրնեքանին. զոր մեծաւ փառիւ և աստիկ տիրատութեամբ հասանցուցեալ՝ ապա տակ թթաղարէն Յաղկերա, զի զնարեացէ նմա զարգիւ երանելոյ նստապիկն շնայեկայ, ի ստմէն Մամիկանէից, զոր տակալ էր ննդաւար իշխանին Սիւնեաց Վասակայ ի զայնկեաց՝ որդէս զարգիս մանապարտան, և արարել էր ի զուսուցի, զի մեացին. որք էին յոյժ աղալս: Եւ մարդասիրէն Աստուծայ, բարեխոսութեամբ սրբայ արեան հարց նոցա, հասանցուցեալ զմիտա թագաւորին՝ պարկեանց Այուշային, որդէս կարի տան սիրելոյ և վաստակաւորի՝ զանուառալի ամենեցուն զմեծ նարա խնդրն: Եւ Այուշային տեսեալ զայն և ընկալեալ ի թագաւորէն զմեծ պարգի՝ յարեցեալ ի խորանին աստիկ ամենեցուն տնկեալ յերկիր հարկըր տար և անց, և ապա հարկաւորը զղլու ի զմեկնն. այսուէն կատարել զերկարապիկն Սիւնեան Եւ տեսեալ զայս թագաւորին և ամենեցուն որ ի խորանին էին, և զարմացեալք մեծապէս, թէ զի՞նչ արար այլն, հարցանէր ցնա թագաւորն, թէ Վրաց բոցիւն, զի՞նչ է այն նոր ի՞նչ գործ, զոր ցուցեր զաւ մեզ այսորս: Եւ պատասխանի տուեալ Այուշային՝ ասաց, թէ «Բարեբաւ արքայ, զուց ինձ նոր պարգի շնորհեցէ: Զոր այլ իմ ընկերաց ծառայի ի ձեկն չէր գտեալ. և ինձ արժան է նոր երկրպագութեամբ երկիր պարտնել ձեզ, զոր ձեր յայլ զաւանքի երկրպագութիւն երբեք չէր տեսնար: Եւ լուեալ զայս զարգի բռնա թագաւորին Այուշային և ամենայն բազմութեան ասագուստին՝ յոյժ զոգեցին զայրն և մեծապէս զարմացան:

ՎԿԱՅԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թաղեօս առաջնայի և Ստեղծութիւն կալոյն:—Այս տիպի գրական երկերն իսկապէս գիտարկեցողական պատուիրակներ են, որոնք ինչպէս էլ ընդհանուր շարունական գծեր ունենան, էապէս տարբերվում են միմյանցից իրենց առանձնահատկութիւններով: Ընդ ընդհանրական վկայականութիւնները, ցավով, դեռ չեն ի մի համալսելով ու խմբագրելով, ուստի այժմ դժուար է դրանց մասին խոսել ընդհանրապէս: Ունենք Ս. Գրիգորի և Հովհաննիսյան կուսակցի վկայարանութիւններն Ազաթանգեղոսի Հայոց Պատմութեան մեջ: Ունենք նաև Թաղեօս առաքյալի և Սանդուխտ կուսի վկայարանութիւնները:

Տարգմտիկ կենսերից և նուրիակ ավելի վաղ սկսվում են պատմիարքայական թեմաների գերադասութեան, նրանց հնութեան կամ ծագման վերաբերյալ փառասիրական վեճերը: Բնականաբար հայ աթոռակալներն էլ, կամ հայ եկեղեցականները, ձգտել են Հայոց եկեղեցու ծագումն ավելի հնացնել և կապել որևէ առաքյալի կամ առաքյալների անվան հետ: Ասորիների մեջ արդեն Յարգ դարում առաջ էր եկել Եղիսայի Արքայի թագավորի ավանդութեանը, որ դրված կա Հաբուրեա հեղինակի անունով: Դա ծանոթ է եղել Եմբեթիոս Կեսարացուն, Ըստ այդ ավանդութեան՝ Եղիսայի եկեղեցու հնութիւնը հասցրած է մինչև տասնին զորի կենսերը, և նրա հիմնադիրն է Քրիստոսի աշակերաններից մեկը՝ Աղգե անունով, ըստ Եմբեթիոսի՝ Թաղեօսը, Լաբուրեայի գերբը թարգմանվել է հայերեն, զո հայտնի է Վերուրեայի Պատմութիւն անունով. փոխանակ Վերուրեայի» [Բն տառի փոխանակ ձեռագրական շփոթութեամբ անցել է ԲԵՆ¹], Թարգմանութեան մեջ կատարված է մի կտրուկ փոփոխութիւն. այն է՝ մինչդեռ ասորական բնագրի մեջ Աղգե առաքյալը, Եղիսայի բնակիչներին քրիստոնյա դարձնելուց և եկեղեցիներ շինելուց հետո՝ իրեն հաջորդ եպիսկոպոս է ձեռնադրում Աղգեօս անունով մեկին և տշնտեղ էլ միառում է, հայերենի մեջ նա եպիսկոպոս ձեռնադրելով Աղգեին [փոխանակ Աղգեօսի, «գ» և «դ» տառերի շփոթութեամբ], ինքը գնում է «ընդ տրևելս քարոզել քաւասարանն Քրիստոսի»: Թարգմանիչն արել է այս փոփոխութիւնը, դի նրան ծանոթ է եղել ըստ վկայական ավանդութիւնը Թաղեօս առաքյալի մասին: Այս առաքյալը, հայկական վկայարանութեամբ, պալին է Հայաստան, զորոգում է Սանսարուկ թագավորին. քրիստոնյա են դասնում և քաւասար, նաև թագավորի դուստրը, Սանդուխտ, զոր էր ի տիրոջ տղայ, գեղեցիկ տեսլեամբ և վայելուչ երեսօք, որ ոչ գտանէր համեմատ նմա ի վերայ երկրի: Սանսարուկի հրամանով նահատակում են քրիստոնյաներին, Թաղեօս առաքյալին և Սանդուխտ կուսին: Բայց քրիստոնեութեանը չի վերջանում Հայաստա-

¹ Վերուրեա Եղիսայի, Թարգմ. Արքայի. Թագաւորի Հայոց և քարոզութիւն քրքրել Թագէի առաքյալին, Երուսաղեմ, 1888.

Լաբուրեայ, Գեղեցիկը դպր. Եղիսայի, Թարգմ. Արքայի, յղեալ յառաջադի, Լաւա-քանեայ, Վեճեակ, 1888.

նում, Հին ժամանակներից արդեն կազմվել է այս ավանդույթը, որ գրավոր հնույն է մի քանի խմբագրություններով, այլև մի պատմություն թագետ առաքյալի և Սանդուխտ կույսի նշխարների գլուխի՝ Փ. Բուզանդի ու Մ. Խորենացիի հիշում են դրանք։

Որ փալատում գրում է, թե ուրիշները գրել են Հայոց միջին պատմությունը,—«ի քարոզութենէն թողէոսի առաքելոյ և նորուն յելից և ի մարտիրոսութենէն մինչև ի կատարումն վարդապետութեանն Գրիգորի և իւրոյ հանգստեանն և յառաքելութեան Սանատրուկոյ արքային և մինչև յաւամայ հնազանդելն հաւատոցն և ի նորուն հանգստեան արքային Տրդատայ»,—այդ վերաբերում է պարզապէս նախ՝ թողետոս առաքյալի քարոզությանն ու նահատակութեանը Հայաստանում, ապա Ազաթանգեղոսի Պատմությունը, Կնչանակի՝ այդ ժամանակ արդեն եղել է թաղետոսի վկայաբանության հիշատակարանը, ըստ որի Հայոց եկեղեցու հիմնադիր է թաղետոս առաքյալը։

Առաջ է եկել և Բարդուղիմեոս առաքյալի ավանդությունն ու վկայաբանությունը, ինչպէս նաև թաղետոս առաքյալի հետ կապված Ոսկյանց և Սուքիասյանց ավանդությունն ու նահատակությունը Գրանք, այդ վկայաբանությունները բոլորը մի նպատակ են ունեցել—հնացնել Հայոց եկեղեցու սկզբնավորությունը, հասցնելով այն մինչև առաջին դարը և կապելով առաքյալների անվան հետ։ Բուզանդն արդեն Հայոց կաթողիկոսական աթոռն անվանում է «աթոռն թաղէոսի առաքելոյ» (Դ. 3), մեծն Ներսէսի համար գրում է. «Արժանի եղև սա աթոռոյն հայրապետաց և տեղւոյ հարցն իւրոց առաջնոց, զաթոռն թաղէոսի առաքելոյ, և ժառանգութիւն հօրն մարմնապէս ի նոյն հոգևորին Գրիգորի»։

Սխալ է այս ավանդությունների ծագումը կապել 5-րդ դարում առարակած կողմնորոշման հետ իբրև մի ասորական հակադրություն հունասերների, շիրքն գրական իդեական մրցութեան հետևանք, միայն նրա համար, որ թաղետոս առաքյալը նախ լեզեսիտյում է քարոզել և որ Հարությանի գիրքը թարգմանել են հայերեն։ Ոչ ոք չի կարող Մ. Խորենացուն համարել ոչ թե հունական, այլ ասորական կողմնորոշման մարդ, բայց նա էլ Հայոց հայրապետական աթոռն անվանում է «աթոռ սրբոյ առաքելոյն թաղէոսի» (Գ. 91) և այդ ավանդություններն, իսկապես վկայաբանությունների բովանդակությունը, մեծ սիրով բերում է հենց նա (Բ. 34)։ Ապա՝ Բարդուղիմեոսը, ըստ իր վկայաբանության, Հայաստան դալիս է ոչ Ողեսայից, այլ Հնգկաց, Պարթևաց, Մարաց, Սղիմացոց կողմերում քարոզելուց հետո։ Ուստի և անհիմն է գրել, թե նրա և թաղետոսի վկայաբանությունները, շորոնք սկիզբն

1 Սփեքը Հայկական, Է. վկայաբանութիւն և վիճա նշխարաց ս. թաղէի առաքելոյ և Սանդխտոյ կույսի, Վենետիկ 1808.

ա) Վկայաբանութիւն թաղէոսի առաքելոյն քարոզութեանն և դաւառեան ի Հայո և կատարման որ ի Թրիստոս, էջ 9—56.

բ) Պատմութիւն թաղէոսի առաքելոյն և Սանդխտոյ կույսի, էջ 60—75.

գ) Վկայաբանութիւն սրբոյն Սանդխտոյ գոտերն Սանատրուկոյ արքայի, էջ 77—88.

դ) Գիւտ նշխարաց, էջ 89—97.

են ասեալ Ստորիքից՝ նպատակ ունենալ նսեմացնելու Գեասարացի քարոզիչ Գրիգորին, նրա տեղը զենելով երկու նահատակված առաքյալ՝ Անգամ Փավլասոս Բուզպեղը, որ Հայոց կաթողիկոսական աթոռն անվանում է բաթոռն Թադէոսի առաքելոյ, իբրեւ չի նսեմացնում Ս. Գրիգորին և Գեասարացի աթոռը, որի աթոռակալի համար նա գրում է կաթողիկոսաց կաթողիկոսն Ուսեբիոսը, «կաթողիկոսն կաթողիկոսաց» (Գ. 4)։ Այդ վկայաբանությունները նպատակն եղել է լուր Հայոց եկեղեցու սկզբնավորութեան հետեւումը, իսկ պատմական հիմքն այն է, որ Գրիգորի քարոզությունն իր առջ, ինչպես հայտնի է, քրիստոնեութունը որոշ չափով տարածված է եղել Հայաստանում։

ՇՈՒՇԱՆԻԿ ՎԱՐԴԵՆԻ

1. Էմելամ կողմը։— Ունենեւ երեւ հայկական վկայունիները պատուաներ, որոնք երեքն էլ քրիստոնեական գաղափարներն են քարոզում ընդհանրապես, բայց զանազանվում են իրենց արժարժան խնդիրներով և նահատակունիների վիճակներով։ Սանգուխտը մի մասնադասու գեղեցիկ աղջիկ է, որ հեշտութեամբ տարվում, թովում է Թադէոս առաքյալի «հոգևոր» սիրով և ճակատագրորեն մղվում է դեպի նահատակութեան։ Ի դեմս Հռիփսիմելի հանդես է բերված մի գեղեցիկ ուխտալ կույս, թեպետ և երիտասարդ, բայց սկզբից արդեն աշխարհն ուրացած մի միանձնուհի, որ մեծում է կայսրի հետ և թագավորի առաջարկն ամուսնութեան համար, նրան չի հրապուրում ոչ մի աշխարհային մեծութուն։

Շուշանիկի բնավորութեան ամենի բարդ ու հարուստ է։ Նա ամուսնավոր կին է, երեւ որդու և մի դուստրի մայր, սկզբում նա կապված է աշխարհային կյանքի հետ։ Վկայաբանական հերոսներն առնասարակ զորեղ կամքի տեր են։ Իբրեւ այդպիսի պատկերացված է և Շուշանիկը։ Այդ կամքը հաճախ ուրիշ բան չէ, բայց եթե ֆանատիզմ — մոլեռանդութուն, կատարյալ ենթարկումն կրոնական գաղափարին, որի համար հերոսները, ինչպես Հռիփսիմեն, պատրաստ են ամեն շարժարաններ կրելու և մեռնելու։ Շուշանիկի մեջ, սակայն, չկա այդպիսի ֆանատիզմ։ Արդարեւ նա մանկությունից մեծացած է քրիստոնեական կրոնով և սիրում է այն, բայց ոչ այն աստիճանի, որ տարվի նրանով և հոգեպես որամաղիւր լինի նահատակութեան։ Նա միայն կրոնասեր է։ Նրա կրոնասիրութեանը, սակայն, զորանում է մի ուրիշ պարագայով։ Ինչպես հին ազնվական տոհմերի սերունդները պարծենում էին իրենց ծագումով և ձգտում իրենց հայրերի արժանի զավակը լինելու և պահելու իրենց տան պատիվը, նույնպիսի զգացում ու ձգտում ունի և Շուշանիկը։ Նրա հայրն է Վարդան Մամիկոնյանը, նա թոռն է Սահակ Պարթևի դուստրի, սերված է քրիստոնեական կրոնի նահատակներից և Հայոց լուսավորիչներին։ Նա շարունակ մտածում է արժանի լինել իր նախնիներին և հիշում է, որ ինքը նրանց զորն է, դրանով զորանում է իր ներքին համոզումը — չզավաճանել իր հայրերին։ Գա և մի երրորդ պարագա — զավակների մասին հոգացողութեանը, որով ընդարձակվում է այս վկայունու հոգեկան վիճակը։ Բայց դրանից ավելի կարևոր է

այն, որ նա առնակին է, նրա դեմ կազմողը ոչ թե մի անծանօթ օտար թագավոր է, ինչպես Հռիփսիմի վկայարանության մեջ, այլ իր ամուսինը, որի հետ ապրել է երկու տարիներ, եվ վերագրին իր երկի մեջ զորդացրել է գլխավորապես հարաբերությունը երկու ամուսինների, որոնք բնավորությամբ, հակամեերով ու զառափարներով զանազանվում են միմյանցից՝ Առն (մարդու) և կնոջ միջև անդի է ունենում մի զորեղ ընտանեկան ընդթախում կրոնական հոգի վրա. այբը պարսկական կրոն է ընդունում կամավոր կերպով և ոչ ստիպմամբ (զի կամաց և ոչ ի հարկ է և ի ընտնութենէ) իր դուստրի հետ իբրև ամուսին կենակցելու համար. առնում է նաև մի պարսիկ կին, Քաղափորին խօստանում է, որ իր ռոտլին կնոջը, Շուշանիկին էլ դարձնի մոգական կրոնին, օւստի գլխավորապես այդ պատճառով նա ամեն կերպ աշխատում է, որ Շուշանիկը մնա իր կինը, և կարծում է, թե նրան առնվելով հետևի իր նպատակին, Բայց կինը սկսում է օտել ամուսնուն, զգվում նրանից իբրև պառնիկից, մնում է անհողողող, կտրվում է նուշիոկ որդիներից, չի կամենում այլևս կենակցել իր մարդու հետ և շարժարկելով քաժանվում է նրանից, Այս է ահա Շուշանիկի վկայարանության էական կողմը:

2. Պատմական հիմքը:— Այս պատմածքի նյութն երևակայական բան չէ, այլ առնված է իրական կյանքից: Դրա պատմական հիմքը վերաբերում է Ծ-րդ գարի երկրորդ կեսին, պարսկական տիրապետության այն շրջանին, երբ Մոսսանյան արքաների տնրարոյացնող քաղաքականութամբ բազմացել էին հավատաւորները Հայաստանում, և կային այնպիսիները, որ ամեն անկարգություններ առնում էին Պարսից արքային հաճոյանալու համար, ինչպես ուրացող Մախազ Դադիշո իշխանը, Վր զօրագլուխն և քաջայերիչն էր ամենայն ամբողջելոցն դասուռ (Ղ. Փարպ. 247), Նույն դրությունն այդ ժամանակ իշխել է և Վրաստանում: Այնտեղ կար ուրացյալ բզեշխ Վազգենը, որին 484 թ. սպանում է Վախթանգը: Նա որդին էր հայանի Առուշա բզեշխի, որ Վարդան Մամիկոնյանի եղբայր Հմայակի ցնեակալն էր: Նրա տանը մեծացել էին Վահան Մամիկոնյանն իր եղբայրների հետ, որոնց հետ և Ղ. Փարպեցին: Այդ Վազգենի կինն էր Շուշանիկը, որ Վարդան Մամիկոնյանի գուտորն էր, և մեծացել էր այն տառքին՝ այրենքի շրջանում, որոնց պատկերն ախպես ցալաուն կերպով նանկ են նկերեն և Փարպեցին: Հանգես է գայի և Մամուկի կայսերոջը, որին հիշում է Կոբյունը իբրև Մաշտոցի աշակերտներից մեկը Վրաստանում: Շուշանիկի վկայարանության նյութը պատկանում է ահա այս սոցիալական և ընտանեկան միջավայրին:

Թե երբ է գրվել այդ պատմածք և ով է գրա հեղինակը, այդ հարցին չէ: Հորինված է Աղաթանգեղոսի Պատմությունից հետո. որովհետև կրում է արա ազդեցությունը ոչ միայն Հռիփսիմի հիշատակությամբ, այլև ոճական և այլ նմանողությամբ: Այստեղ այս ժամանակաշրջանում է գրվում այս վկայարանությունը պայմանորեն ըստ իր բովանդակության պատմականության: Կա այդ վկայարանության և համառոտը¹, որի մեջ օգտված է նաև Մ. Խորենացուց:

¹ Սեփեք Հախանց, Թ. Շուշանիկ. վկայարանություն արքայ Շուշանիկի դասեր

3. Գործադրութիւնը:— Այս միակի վործողութիւնը շատ փոքր է, պատմվածքն էլ շատ հասարակ և ռազմական է հորինված, բայց դա իր ընդունակութիւնով շատ դրամատիկ-ոգրեթէական հոգի է: Իրրէ նախաբան հայտնվում է մի պատմական տեղեկութիւն, թէ Առաջա բղնիքի որդին էր ուրախյալ Վազգենը: Նրա կրնն էր Սահակ Գարթեի թոռն, Հայոց սպա- ռապետ Վարդան Մամիկոնյանի գետտը, որին ծնողներն անվանում էին Վարդենի (համառտի մեջ՝ Վարդանի), բայց հետո նա անվանվեց Շուշանիկ, Վազգենը յիշտի և անսուղ վարքի տեղ էր, ասվում է պատմվածքի սկզբում, իսկ Շուշանիկն իր մանկութիւնից սկսած՝ մի քաղաքացի և աստ- վածական կրնն: Նա աղաչում էր հավատացյալներին, որ աղոթեն աստու- ծուն իր մարգու համար, թեքս մարդը նրանց աղոթքով զգաստանար:

Այսպէս հնչեց սկզբից մի հակադրութիւն է դրված առն և կնոջ, մարդ աւ կնկա, ընտանեկութիւններին մեջ, և մենք գտնում ենք, որ կրնն բախտա- վոր չէ իր ընտանեկան կյանքով: Եվ այդ վիճակն է, որ զարգացրած է պատմվածքի ընթացքում: Բայց այդ կրնն սկզբում դեռ մի կերպ հայտնված է իր վիճակի հետ և հույս ունի, թէ իր ամուսինը մի օր կզգաստանա, Խնչպէս պատմվածքի ընթացքից երևում է, նա դեռ միայն իր չորս զավակ- ների կրթութիւնով է զբաղված, որպէսզի նրանք ապրեն ի հաւատարմ ուղիղ և ի գործն բարիս, զգաստութեամբ և արդարութեամբ և աստուածաշարուն- թեամբ: Նրա կյանքի մեջ, բանառակ ժամանակ պատճառով կա արդեն դառնութիւն, բայց ընտանեկան խաղաղութիւնը դեռ չի վրդովված: Ահա գալիս է պատճառն ընտանիքի քայքայման: Վազգենը գնում է արքունի գուշակ: Այդպէս իր անվանում էր, որ Շուշանիկը մտահոգութիւն և կոսկրոյի մեջ ընկնելով՝ վախենալով, թէ նա կուրանա քրիստոնեւորութիւնը, նա ճանա- չում էր իր մարդուն:

Եւ հոգար և կասկածէր [Շուշանիկ], յորժամ ի դուռն արքունի չո- գաւ [Վազգէն], թէ ուրանայ դժբախտաց: Այդ էլ իսկապէս արեց այն ամ- պարիշտը, — շարունակում է վիպագիրը, — ուրաքա՛վ ճշմարիտ աստուծուն, Երկրպագեց կրակին, և պարսիկ կրնն ուղեց թագավորից: Եւ էլ նրան կրնն տվա՛լ իր կնոջ մօրը: Բացի այդ՝ նա հանձն առա՛ւ, որ իր առաջին կնոջը՝ Շուշանիկին՝ իր զավակների հետ դարձնի մօզութիւն հայտնի: Եվ եւմ- պարաւորութիւնով վերադառնում էր իր աշխարհը, և առաջուց մարդ ուղար- կեց իր աշխարհը՝ հայտնելու իր վերադառնալը: Եւ իր լրտեսը, կանգնեց տիկին Շուշանիկի առաջ և ողջունեց նրան իր ամուսնու կողմից:

Գորդը մի խնդիր է դրած, թէ իր ամուսնու ուրաքութիւնից հետո՝ ինչ հոգեկան վիճակ պիտի ունենա, ինչպէս պիտի վարվի այդ ջերմեանդ կրնն, այդ բուռն, մաքուր, անարատ, մեղսաւորաց կրնն, որ իր մանկու- թիւնից ատել և անարգել է մեղքը, որ իր բարեպաշտ հայրերի հիշա- տակը շարունակ իր մտքում ունի և ուրախ է, որ ինքը նրանց գործն է: Նա որ իր նախնի սուրբ Սահակի մի փոքրիկ ավետարանն ունէր, այն իր հետ էր պահում և նրանով աղոթում: Առաջին հարցը, որ նա տալիս է լրա- բերին՝ այն է.

Մենի՛ն Վարդանայ, Վենեիկ 1863. Համառաւ. Վիպագրութիւն որդւոյ Շուշանիկայ, անգլ. էջ 40—45.

— Արդարև *Աղջիկ* է հոգւով— *—* որդայք *Նա*, *ամառեմք*։ *Քղջիկ* է հոգով—
Եվ երգիւնքը *Նա* լրատուին, որ ամեն բան հայտնի իրեն։ Լրաբերն էլ
ասաց արտասովելով։

— Այն քո *ուրացաւ* *գնչաւորութիւնն* և *երկիր* *եղազ* *առողջանացն*
և *եղև* *ընդ* *պարսկական* *օրինօքն*։

Եվ *տիկիւնն* *յերկիր* *կործանեցաւ*, — *շարունակում է վիպագիրը*, —
լայր *դառնալէս* *և* *եղև* *դայրն* *դուրացեալ* *յաստուծոյ* *ասէր*, *և* *աւաղ* *աղ-
գիտն* *վարկանէր*։ — և *տիկիւնը* *գետին* *կործանվեց*, *լալիս* էր *դառնալէս*,
վայ էր *աւաղիս* *ուրացող* *ամուսնուն* *և* *իր* *որդիներին* *ավաղում*, *խղճում*։

Այս *անարգված կնոջ* *առաջին* *հոգան*, *ուրեմի*, *դեռ* *իր* *համար* *չէ*, *այլ*
միտն *ընկնում է* *խակոյն* *ամուսինը*, *որ* *եղկելի*, *ողորմելի* է *դարձել* *իր*
ուրացումը *ամբ*, *և* *իր* *զավակները*, *որոնց* *ստիպմամբ* *պետք է* *ուրանալ*
տային *իրենց* *հավատը*, *մանավանդ* *իր* *դուստրը*, *որ* *բռնի* *ամուսնութեամբ*
պիտի *կենակցեր* *իր* *հոր* *հետ*։ *Այնպէս* է *նրա* *տառապանքը*։

Երկար *ողջում* *և* *արտասովում է*, *և* *ուրեք* *հնար* *չունի* *որդիներին*
ուրացումը *ունից* *միկելու*, *բայց* *եթե*, *իբրև* *հավատացող* *կին*, *զավակներին*
հետ *գնալ* *եկեղեցի* *և* *աղթել*, *նրա* *հոգան* *այժմ* *միայն* *իր* *զավակներն են*,
որոնց *ինքն* *աւրացումը* *ամբ* *սնուցել է* *իր* *բաղակներին* *վրա*։ *Նրանց*
համեմում է *աստուծու* *խնամքին*, *որ* *ամպարաշտութեամբ* *լի* *ուրացալը*
չկարողանա *որսալ* *նրանց* *եթէ* *միհա* *կորստեան*։ Իսկ *իր* *վերաբերմամբ* *աղ-
թելիս* *արդեն* *պարզ* *որոշում է* *անում* *այդ* *անարգված* *կինը*, *պատրաստ*
եմ *ես*, — *ասում է* *նա*, — *չարձարել* *և* *մեռանել*... *և* *ոչ* *հաւասարել* *կամաց*
ուրացողին *և* *պիղծ* *անկողնակցին*։ — *Նրա* *վիճակը* *վճռված է* *արդեն*, *նա*
այլևս *պիղծ* *անկողնակցին* *կինը* *չի* *ուզում* *լինել*, *Դրանով* *կուճկի* *իր*
անարգանքը։

Երեկոյան *ժամերգութիւնը* *կատարում են*, *ամենքը* *սգակից* *են* *նրան*,
բայց *չեն* *համարձակվում* *բան* *խոսել* *նրա* *հետ*։ *Նա* *գուր* է *զալիս*, *մտնում*
եկեղեցու *մօտ* *մի* *փոքրիկ* *տնիկ* *և* *զարձալ* *ամբողջ* *գիշերը* *լալով* *ողբալով*
աղթում է *անդադար*, *սրտի* *դառնութիւնից* *ոչինչ* *չի* *ճաշակում*։ *Մերձա-*
վորներին *ոչ* *ոք* *չի* *համարձակվում* *մի* *բան* *խոսել* *նրա* *հետ*։ *Սպիտակագոտն*
այն *ժամանակ* *բացակա էր* *Բրեյլի* *տնից*, *Տիկիւնը* *դառն* *երեցը* *միայն* *հա-*
մարձակվում է *միկիւնը* *նրան* *այս* *անասելի* *վտանգի* *համար* *և* *շատ* *խոս-*
քերով *ճաշալիքել* *և* *հուսադրել*։ *Մերձավորները* *վերջապես* *ասում են*, *որ*
մի *փոքր* *կերակուր* *և* *ըմպելի* *ընդունին* *նա*։ *Տիկիւնը* *լսում է* *նրանց* *և* *փոքր*
ինչ *կերակուր* *և* *ըմպելի* *ընդունում*, *և* *ապա* *ամբողջ* *գիշերը* *դարձալ* *տնց*
է *կողնում* *աղթքով*, *սաղմոսերգութեամբ* *և* *գիրք* (*—* *Ս. Գիրք*) *կարդալով*։
Եւ *փոքր* *ինչ* *մըրկեալ* *սիրտն* *և* *ստորակուսեալ* *և* *խռովեալ* *կաղզուրէք*
յուստի *աստուծոյ*։

Առավոտյան *ժամն* *ասում են*, *պրծնում*։ Այդ *ժամանակ* *դոտն* *ճահա-*
նան *զարձալ* *մտնում է*, *տիկիւնը* *ասում*։

— *Ձիւն* *եղիր* *ի* *մաի* *և* *զիւն* *ունիս* *առնել*, *որ* *յարուցեալ* *ի* *վերայ*
քո *պատերազմ* *յուրացողէն*, *յաղագս* *միտերութեան* *իւրոյ* *վասն* *դատերն*,
որ *ըստ* *Պարսկաց* *օրինին* *հանգերձեալ* էր *առնուլ* *իւր* *ի* *կնութիւն*... —
Ի՞նչ *ես* *մտածում*, *ի՞նչ* *պիտի* *անես*, *ուրացողը* *քո* *դեմ* *պատերազմելու* է։

որպեսզի միավորվի իր դաստրի հետ, որին պատրաստվել էր կնուխյան առնելու քստ պարսկական օրենքին...

Այսպես լուսնալուսն հիշեցնում է Շուշանիկին, ինչ որ ամենից սոսկալին էր. հայրը պատրաստվում էր կնուխյան առնել իր հարազատ դաստրի և ինչպես համարում վկայարանության մեջ ասված է, այդ առաջինը զվարճանքն իւրոյ եմուտ ընդ զարգացողական օրինոց մոգութեան: Եվ տեղիքը պատասխանում է քաղաքին:

— Այդ է հենց ներդաշնակում ալ վիշտ պատճառում ինձ, իմ որդիներն և դաստրի հոգն ու ցավը. որովհետև դիտեմ իմ մարդու ամպարը ընդառնալով, դրա համար էլ քաղաքն երկար սուգ եմ տնում և արտասուք թափում:

Եվ սկսում է նա ողբալ. — Ո՞վ կտա իմ դիտին ջուր և իմ աչքերին արտասուքի աղբյուրներ և օթեան անապատում, որպեսզի լայն ճամբարիտ աստուծուն ուրացող իմ ամպարիշտ ամուսնուս ամբողջելի վերքերի համար և իմ ծնունդների տարակուսանքի համար... Ո՞վ այսքան կորստի համարով լսի և չողբա. Թր լսելիքը կդիմանա այս կորստի լուրին, որ ոչ մի միտքիս չունի ինչպես ինչպիսիք կդիմանա այս կորստի լուրին, որ ոչ մի մարդու մարդու տեսք... Ո՞վ է այն համարեցնում և իմաստունը, որ կարողանա այս գեղքի լուծումը գտնել, տեսցնել, իմ մարդիկ... Կորեմ հավատա, հույսս կտրվեց երկրից և մարդկանցից. հույսս թաք միայն ամենակալ աստուծու վրա, որ փրկի ինձ: Եվ երանի տմր նա ինձ ազատելու թեև, որ թաքեմ, հասնեմ, դադարեմ անապատում և մի փոքր սթափվեմ իմ այս մարդկանց արտանգությունից ու վնասությունից... Ես պատրաստ եմ ինձ բանտի ու կապանքի և ամեն տեսակ կատանքի մատնելու, որով կնեղի ինձ ուրացողը. որպեսզի աստուծու վարկի և չթողնեմ իմ հայրերի, շատյոց լուսավորչների ավանդությունը... Անշարժ և անդրդվելի հաստատ կմնամ տիրոջ զորությունը և շնորհիվ և ուրացողի հետ չեմ միավորվել և պղծվել...»

Ընթերցողը կամ ունկնդիրը, — որովհետև վկայարանությունները կարգավորվում էին եկեղեցում ժամավորի համար, — հետաքրքրվում է արդեն, թե ինչ էլք պիտի ունենա երկու ամուսնիների վերաբերմունքը դեպի միմյանց — մեկն ուժեղ, բազմ, հենված պարսկական թագավորի իշխանության վրա, մյուսը թույլ և անուշ մի կին, որին տանջում է ոչ միայն իր անարգված վիճակը, այլ ավելի ևս իր զավակներին և ամենից շատ իր դաստրին:

Այն ժամանակ աւարացած Բեշիկը վերադարձավ, եկավ Վրաստան իր տունը, — պատմում է վիպագիրը: — Նա կանչեց իր եպիսկոպոսին և քահանաներին, խոսեց նրանց հետ ողորդանքով, խոստացավ պարգևներ տալ նրանց և ավելի լավ վարվել նրանց հետ, «Միայն թե, — ասում էր, — մի խորհրդ է իմ տերութունից: Նրանց միջոցով լուր ուղարկեց Շուշանիկին, որ ես դառնա իր մտքից և համաձայնի իր ամուսնու կամքը կատարելու և աղաթի փառքն ավելի վայելելու, քան առաջ, Նրանք, հետևեցին և Բեշիկի հրապարակ Ջոշիկ, գնացին տիկնոջ մոտ, ամենքն էլ արտասովորով դժվարանում էին ասել նրան ուրացողի պատգամները: Վերջապես շատ ողբալուց և հատուկ լուր հետո՝ եպիսկոպոսն ու Ջոշիկը հայտնեցին նրան Բեշիկի ասածները:

Շուշանիկը խիստ խոսքերով պատասխանեց եպիսկոպոսին:

— Դեռ էլ այդ ես հրամայում ինձ, որ միաբանեմ ամպարիցս և աստ-
վածութեանց մարդու հետ. դեռ էլ ես այդպիսի բան թելադրում ինձ և ուզում
ես խաբել ինձ: Ավանդ իմ թշմուռութեանս, որ ոչ մի հորդորիչ չեղավ ինձ:
Իմացե՛ք այն ամպարչափ նենգութունը, որ ձեր միջոցով ուղղւում է կորստի
վիհը ձեզ ինձ... «Հեռացե՛ք, և պիղծեցին մի մոտենաք, ասում է տերը.
զի ո՞վ որ պոռնիկին մոտենա, նա մի մարմին է պոռնիկի հետ. իսկ ո՞վ որ
տիրոջը մերձենա՝ մի հողի է նրա հետ, և ուր որ տիրոջ հոգին է՝ ազատու-
թյուն է մեղքից: Եվ որովհետև մենք այս ազատութեանն ունենք, իմ վե-
րակացունքը և սիրելիներ, ձվ կարող է ինձ բաժանել նրանից, որ փրկելու
է ինձ հավիտենական հրից և ուրացողի հետ հաղորդութեանից [—ամուս-
նական՝ կենսակցութեանից]:

Եպիսկոպոսն ասաց.

— Ծշմարիտ են ասածներդ, բայց այս էլ պիտի մտածել՝ որ եթե չգաս,
կարող է ավելի բարկանալ, տաքանալ, զրգովել և չարիք չարիքի վրա կհասցնի
վերակացունքին [=եկեղեցու պաշտոնյաներին] և ժողովուրդներին: Բայց
եթե վեր կենաս գաս, Թերևս մի փոքր իջնի անօրենի բարկութեանը:

Այսպես ուրեմն, եպիսկոպոսը ենթարկվում է իշխանին և այդ պատճա-
ռաբանում է ընդհանուր շահով: Միշտ այդպես է եղել: Այդպես է դատում
և Սեանտ Մուրիշ մեջ՝ Վարդապետիկա եպիսկոպոսը, որ ավելի լավ է հա-
մարում մի կին դուրսբերվի, քան ժողովուրդը մեծավի: Ել ուրիշ գեր չունի
այդ եպիսկոպոսը վկայաբանութեան մեջ, բայց եթե այն, որ հանդիսադիր
լինի Շուշանիկի թաղմանը, Բայց մենք դառնանք բովանդակութեանը:

Նույնպես և Բղեշիի եղբայրն աղաչում էր:— շարունակում է վիպա-
գիրը:— ամենքն էլ ստիպում, թախանձում էին նրան, Շուշանիկին, որ
Բղեշիի կամքը կատարի, Վերջը տիկինն ընդունեց նրանց ասածը կատարել:

— Ձեր կամքը կկատարեմ:— ասաց նա,—բայց ես դիտեմ, որ չարչա-
րելու է ինձ: Դուք կգնաք յուրաքանչյուրդ ձեր տեղը և ինձ մենակ կթող-
նեք: Բայց ես մենակ չեմ. զի ինձ հետ է տերը, որի վրա եմ դրել հույսս.
տերն է իմ օգնականը, և ես չեմ վախենալ: Ինձ թի՛չ պիտի անի այն չարը:

Շուշանիկը վեր կացավ, գնաց նրանց հետ: Բայց ապարանքը մտնե-
լուց հետո՝ չուզեց գնալ իր սենյակը, այլ փակվեց մի խցիկի մեջ և աղո-
թում էր՝ խնդրելով աստուծուց, որ համբերութեան տա իրեն, որպեսզի
երբ ուրացողն իր վրա կբարկանա, ինքն իրեն պահի սրբութեամբ, անտու-
տութեամբ: «Դու ինքդ դիտես, տեր իմ,—ասում էր նա դիմելով աստու-
ծուն,—որ իմ մտնկութեանից սկսած ասել եմ մեղքը... Հիշիր ճո ծառաներին,
իմ հայրերին, որոնց զարմե եմ ես, որոնք սիրեցին քեզ. ձվ ճշմարիտ աստ-
ված, և նրանց բարեխոսութեամբ օգնիր ինձ այս առաջիկա պատերազմի
մեջ: Ես ոչ մի օգնական չունեմ, ոչ հայր և ոչ եղբայր, և ոչ ուրիշ մեկը
մերձավորներից, որ ընտանեբար հոգաք ինձ համար: Դու, տեր աստված,
... զորութեան տուր ինձ... նմանելու իմ հայրերին... Հույսս քեզ վրա եմ
դրել. գու, որ սուրբ Հոփսիմեան փրկեցիր թագավորի բարկութեանից, ինձ,
անարժան ազախնիս էլ փրկիր ուրացողի բարկութեանից»:

Նա երեք օր մնաց խցիկի մեջ առանց ուտելու և խմելու: Երբորդ օրը,
երբ ընթերիք նստեցին, Բղեշեան իր եղբայր Ջոշիկին ուղարկեց տիկ-

նոյն ընթերցի կանչելու, նա, Շուշանիկը, չէր ուզում գնալ, բայց երբ շատ խնդրեց, աղաչեց տեղը, գնաց լուրով ու տրամաթյամբ, բայց ոչինչ չկերպով. այլ լուռ նստած էր արտավերով, վերջը վեր կացավ, գնաց իր թղթիկը, Բղեշյուր ստատիկ հուզվեց, բարկացավ, և երբ ամենքն ժողովում էին, մարդ ուղարկեց՝ կանչել նրան: Բայց նա չուզեց գնալ, Այն ժամանակ Բղեշյան ինքը վեր կացավ, գնաց նրա մոտ գազանացած, և ծառաների հետ ջարդ էր ապրիս նրան իր տեղը: Իսկ նա աղաղակում և ասում էր. «Ցեր Հիսուս, օգնի՛ր ինձ, նվ խիստ սատիկ բրածոն էր տնում նրան. և ոք չէր կարողանում նրա բարկութունն իջեցնել: Այն ժամանակ իմաց տվին եղբորը՝ Ջոջիկին. եկավ, բայց նա էլ չկարողացավ նրա բարկութունն իջեցնել. նրան էլ արհամարհանքով քչեց դուրս: Եվ խիստ ու շատով կերպով սաստկացրեց հարվածները, մինչև որ նրա վրա ոչ մի ողջ տեղ չմնաց բրածոն տնից: Եվ ընկած մնացել էր ինչպես մեռել. իսկ Բղեշյան տվելի ևս զայրացած՝ հայհույում էր սաստեծում և նրա հայրերին: Եվ երբ շատ հարվածներով հետ՝ թուլացած ուշագնաց եղավ երանելին, հրամայեց, որ նրան հա ջարեն իր տեղը: Կարծում էր թե մեռել է:»

Մյուս առավոտյան Բղեշյան վեր կացավ գնաց Շուշանիկին տեսնելու: Երբ տեսավ, որ դեռ կենդանի է, պահապաններ կարգեց, որ ոչ ոք չթողնեն՝ նրա մոտ մտնի, ոչ ազատարդու, ոչ կինժարդու, որպեսզի նույն չարչարանքով մեռնի: Հրամայեց, որ միայն գործի հող ու ջուր տան, և ինքը գնաց աշխարհի դուրին: Իսկ երանելին ամենևին չվախեցավ. այլ գոհ էր, որ չարչարանքի արժանացավ իր հավատքի համար և իր ուզածը եղավ՝ ազատվեց ուրացողի հետ հաղորդութունը (=ամուսնական հարաբերութուն) ունենալուց:

Այսպես ուրեմն, ամեն ինչ վերջացած էր այդ երկուսի մեջ, Հաղթեց թույլ ու անօգնական կինը, որ ոչ ոք չուներ իր մոտ հայրական ընտանիքի մերձավորներից, որ պառպաններ, զոհե մեթթարեր նրան: Միայն նրա տեղը, Ջոջիկը կար բարի սրտով, բայց նա էլ անդուր էր իր «գազանացած» եղբոր առաջ: Այսպիսի պարագաներում հին երկերի մեջ քահանան է հանգես գալիս իբրև սփոփելի:

Եկավ դարձյալ Բղեշյանի դասն քահանան—չարունակում է վիպագիրը.— աղաչում էր պահապաններին, որ թողնեն իրեն տեսնել տիկնոջը, Եվ ի՞նչ տեսավ նա: Կնոջ ամբողջ մարմինն ուռած էր, արյունը կտած նրա շուրջը, և դրոշմից նա չէր կարողանում կանգնել: Քահանան լալիս էր դառնապես Շուշանիկին ասաց.

— Մի լար իմ վրա, որովհետև... այս չարչարանքով սրբվեցի թմալարիտ մարդու պիղծ տնկողնից, և ես ուրախ եմ իմ այս չարչարանքի համար, որովհետև սրտով կհանդիպեմ իմ հայրերի բարի ժառանգությանը...

Քահանան աղաչում էր նրան, որ մի բան ուտի. նա թեպետ ուզում էր ուտել, բայց սաստիկ ցավերից չէր կարողանում: Ապա մի քիչ ճաշակեց գործի հացից ու ջրից, և դարձյալ գիշեր ցերեկ անդադար աղթեց էր անում այնտեղ. ուր փակել էին նրան:

Այն ժամանակներում ահ եղավ մի տեղից: Շուշանիկի որդիներին տանում էին մի ամբողջ. Կուր գետից անցնելու ժամանակ որդիներից մեկը

խնդրվեց՝ Բդեշխն ու ամբողջ աշխարհը օուզ էին անուժ նրա համար, իսկ երանելի տիկինը գահաձուլ էր աստուծուց՝ ասելով թեպետ և մարմնով մեռավ, բայց հոգով ազատվեց իր ուրացող հոր որոգայթներինց։ Մարգարանն ու վրաց նախարարները եկան Բդեշխի մոտ՝ նրան միտիթարելու և սգահան անելու։ Նա մարդ ուղարկեց Շուշանիկին պատվիրելու, որ վեր կենա, բանտից զնա ելակոչողոսի աղաբանքը, որ եկեղեցու մոտ էր, և մի խցիկի մեջ մնա պահապաններով, մինչև որ մարգարանն ու նախարարները վերադառնան իրենց տեղերը։ Շուշանիկն ուրախությամբ կատարեց նրա հրամանը։ Գնաց պատվիրած տեղը, հազով կրոնավորական զգեստ, և պահեցով ու ազդեցությամբ և արտասուքով հզնուժ էր այնպիսի եռանդով, որ ամենքը վարմանում էին։

Երբ մեծամեծները ետ դարձան իրենց տեղերը, այն ժամանակ Բդեշխը մարդ ուղարկեց որոգական խոսքերով ասելու Շուշանիկին, որ ետ կանգնի իր այնպիսի մաքից և իրեն՝ Բդեշխի կամքը կատարի։ Նա խոստանում էր ասելովանից ավելի մեծ պարգևներ և պատիճներ տալ նրան, եթե այդպես վարվի։ Բայց տիկինը հանձն չտաավ նորից տալին աստվածուհուցի հետ։ Նա իր զարդերն ու պատվական հանդերձները առնել տվավ Բդեշխին և այսպիսի պատասխան ուղարկեց նրան. «Ի՞նչ գործ ունի հավատացյալն անհավատի հետ, թե՛ հաղորդություն ունի լուսար խավարի հետ. և թե՛ միաբանություն կարող են ունենալ աստուծու տաճարն ու պոռնիկը։ Սա այն չարչարանքներով, որ իմ գլխիս բերի՝ քո բարկությանը, սրվեցի նաև առաջվա միավորություններին։ Ես ինձ ընծայել եմ Փրկստոսին. այլևս ինձ պետք չեն հչ փառք, հչ պատիվ, հչ հարստություն, հչ մարդկային որևէ բան, փափկություն ու հեշտություն... Այսպես զիտի կենում մնամ... Ինչ որ անելու եմ՝ արեմ, պատրաստ եմ մեռնելու, քան թե իմ հայրերի ավանդությունները թողնելու։

Շուշանիկի զարդերն ու հանդերձները որ տարան Բդեշխին և նրա ասածները հայտնեցին նրան, նա ստատիկ բարկացավ և ապառնաց նոր չարչարանքներ տալ տիկնոջը։ Բարկությունից էլ չհամբերեց, վեր կացավ, հեռու շատ ծառաներ առած զնաց, զտավ նրան եկեղեցուձ, էլ չապասեց, մտավ ներս, զավազանով ծծեց նրան և մազերից քռած՝ քարշ տվավ եկեղեցուց դուրս։ Ոչ ոք չհամարձակվեց մոտենալ և խեղճ գառն աղատել գայլի ձեռից։ Միայն քահանաներից մեկն ասաց. «Ի՞նչ ես այդպես անողորմ չարչարումս։ Այն ժամանակ բարկությունը թափեց քահանայի գլխին և խիստ սաստիկ հարվածեց նրան։ Բուր ժողովաբողբ բարձրաձայն ճչալով լաց էին լինում առհասարակ այր ու կին. և նա վրա ընկավ, սկսեց հարվածել ամենքին, ինչպես մի չար և վայրենի գազան։ Եվ երանելիին քարշ էր տալիս գետին երեսին փշերի ու քարերի վրայով։ Ապա հրամայեց աղաբանքը տանել նրան։ Նրա ամբողջ մարմինը պատառ պատառ եղավ, որովհետև գետինը փշոտ էր. արյունը հոսում էր նրանից և գետինը կարմիր ներկում։

Աղաբանք որ հասան, դարձյալ առաջվանից ավելի շատ ծծեց նրան։ Բայց Շուշանիկը ոչ մի ձայն չէր հանում, դիմանում էր մեծ ուժով. բանի տեղ չէր զնում քարշին ու բրածեծը։ Նրա վրայի ու գլխի հանդերձիկը քարշ տալուց ազնվել, պատռվել էր, և նա մերկ գլխով էր, և պատռտված զգես-

ստով ծածկուեւ էր իր մարմինը... Իսկ ամպարիշտը չէր աւանդում և չէր խեղ-
ձոււմ. այլ չարի ազդեւորից ինչպէս սաստիկ հեղեղատ վարարած՝ կարծում էր,
թե կարող էր ողողել, դերել-գերգիւն երանելիի լուսավոր վարքն ու սրբու-
թյունը, և ասում էր. «Յող ոգնի քեզ Քրիստոսը և քո հայրերի աղոթքը,
որի վրա դրել ես հուսդ»:

Նա Շուշանիկի ոտներն ու ձեռները երկաթի կապանքներով կապել և
բանա ձգել ամպի նրան. վզին էլ շղթաներ անց կացնել ամպի, հրամայեց
երկաթի ցից խփեն պատին և շղթաները ցցից կապեն, ապա կապանքներն
ու շղթաները կ'ընցնէր Պառապաններ կարգեց, հրամայեց, որ մեծ ահով և
զգուշութեամբ պահեն, ոչ ոքի ամենևին ներս չթողնեն և միայն դարի հաց
ջուր տան, նվազ ապա դարձավ, ասաց նրան.

— Դե հիմա ուրախացիր այդ շարժեալների ու կապանքի համար, որով
քեզ պիտի տանջեն մինչև ի մահ— Տիկինը պատասխանեց.

— Ուրախ եմ այս շարժեալների համար, որովհետև դրանով արժանա-
ցա իմ սուրբ հայրերի ժառանգութեանը, որոնց դու հայհոյում ես...

Ամպարիշտը ոչինչ չպատասխանեց, այլ միայն զարմանում էր նրա
համբերութեամբ վրա, և այնպէս կապած թողնելով նրան՝ դուրս եկավ, գնաց
աշխարհու, Տիկինը մնաց մենակ:

Երեք օրից հետո եկավ դարձյալ քահանան: Այս անգամ նա պահա-
պաններին մի բան տալուց հետո միայն մտավ ներս: Նրան տեսավ կա-
պանքներով, բայց ուրախ զվարթ և անդադոր սաղմոս երգելիս: Քահանան
համբուրում էր նրա կապանքները, և ասաց.

— Երանելի ես դու կանանց մեջ, արդարեւ բարի արժանի բարի շա-
ռավիդ հանդիսացաւ... և Ս. Հովհաննիսն իման արժանի պիտի լինես պսակի:
Տիկինը պատասխանեց.

— Ես արժանի չեմ երանութեան և ոչ էլ այն սրբերի պսակներին և
ուրախութեանը, որոնք մերձավորութեան չեն ունեցել ամպարիշտ մարդու
հետ. իսկ ես ապրել եմ ամպարիշտի հետ և որդիներ եմ ծնել՝ ի կորուստ
և ապականութեան ամպարիշտի ձեռով: Քեպետ և ամպարիշտ շնորհքով վե-
րածնվել են և արդարութեամբ սնուցել եմ նրանց... բայց արժանի
չեն՝ ժանդի սերմը բարի բույս չի լինիլ: Միայն մի բան կա, որ շարժա-
րանքներով ու երկաթի կապանքներով ես սրբվեցի ուրացողի հետ մերձա-
վորութեանից...

Նվազանաւ շատ ուրախանալով տիկնոջ համբերութեան վրա՝ ետ
դարձավ իր օթխանը: Նվազանաւ նա ամեն օր ծածուկ ծառայում էր նրա
կապանքներին:

Բղշխի եղբայրը՝ Զոյիկն այնտեղ չէր Շուշանիկի երկրորդ շարժա-
րանքի և դժնդակ կապանքի ժամանակ: Այդ որ լսեց՝ շատ տրտմեց: Նրբ
եկավ, գնաց եղբոր մոտ, աղաչում էր նրան, որ Շուշանիկի կապանքներն
արձակի, շատ օրեր անցան, մինչև որ նա կարողացավ Վազգենին համոզել
այն էլ միայն վզի շղթաներն արձակելու, իսկ ոտների համար ամպարիշտը
երդմեց, թե չի արձակիլ մինչև իր մահվան օրը:

Դրանից հետո Բղշխը հեռացավ շուրջ կողմերը, իսկ Շուշանիկը նույն
կապանքներով և տառապանքով, քաղցած ծարավ և նեղութեամբ վեց տարի

մնում էր բռնադատւում. շարունակ ճգնում էր պահճավ և աղոթքով, արճնությամբ և արտասուք թափելով, դիշեր ցերեկ սաղմոսերով, գարի հացով ու ջրով բովակահանալով... Նրա առաքելների համբավի վրա՝ շատ արք և կանայք և աշխարհական ուխտավորներ զայլա էին տեսնելու նրան: Նա խրատում էր ամենքին, իր աղոթքներով օգնում շատերին, բժշկություններ անում... (Մանրամասն պատմվում է, թե ինչպես մի պարսիկ կին՝ անվանի մոզերից՝ նրա շնորհիվ բժշկվում է բորոտությունից և քրիստոնյա դառնում):

Այս ամենը կոտորվում էր Բղեշի բացակայության ժամանակ. երբ նա այդ լսում էր, դարմանում էր: Զորս տարի հետո նա վերադարձավ հեռավոր ճանապարհից, և իսկույն սկսեց մեծ հարվածներով ու տանջանքով նեղել սրբին: Սոստիկ բարկացավ պահապաններին վրա. «Զէ՛» որ ձեզ պատվիրեցի զգուշ լինել,—ասում էր,— և մարդ ներս չթողնել: Եվ նրանց ախջան ծեծեց, որ ծեծից մեռան: Հրամացեց՝ Շաւշանիկին ավելի ևս նեղել բանտի կապանքներով:

Այս բոլորից հետո այդ ամպարիշտը զարձալ չկարողացավ հասնել իր նպատակին: Այն ժամանակ նա մի ուրիշ հնարք մտածեց. գաավ մի կախարհ կին և ջանաց այժմ նրա միջոցով Շուշանիկին հանել իր գեղեցիկ կրոնավորական կյանքից: Կախարհ կինը հանձն առավ այդ գլուխ բերել: Բղեշը մի տարի էլ այսպիսի դիվական ցնորքներով էր կավում նրա գեմ, բայց զարձալ չկարողացավ մի բան տեսել: Դրա մեջ էլ նա ամթով մնաց, բայց և ախպես ետ չկանգնեց իր զուր մտադրությունից, թեպետ և ինչպես մեքենան ամուր պարսպից՝ նա ետ էր դառնում առաքելի կնոջից: Բայց նա իր որդիներին արդեն ուրացրել էր, որպեսզի հաճոյանա պարսից թագավորին և ավելի պատիվ ընդունի նրանից: Իսկ տիկնոջ մասին իմաց տվավ արքային, թե «նա դուստրն է այն վարդանի, որ ընդգրկեցավ Պարսից թագավորին: Դրա համար էլ,—ասում էր,— մինչև մահը պիտի չարչաբեմ ու տանջեմ նրան, որ չուզեց պաշտել արքայի տաղավածներին, ինչպես իր աշխարհավեր հայրը»:

Բայց էլ ի՞նչ պետք է ասել նրա չար բարքի մասին.— շարունակում է վիպագիրը,— նա ամեն բանի մեջ էլ մեղք էր գործում. որովհետև թեպետ և վեց տարի շատ աշխատեց, բայց բնավ չկարողացավ հաղթել նրան...

Եվ Շուշանիկի հանդերձն էր մերկ մարմնի վրա քուրձ, վրայից պարեգոտ, և մի փոքրիկ մաշկե բարձիկ սնարքին, և մի փոքրիկ աղոթանոց առաջին, ոտներն էլ բորելի, ուտելիքը գարի հաց, խմելիքը ջուր: Եվ ամեն բարի կտրգերի մեջ առաջագնաց:

Յոթներորդ տարվա սկզբում երանելին հիվանդացավ իր կրած սոստիկ նեղություններից ու տանջանքից: Բղեշի եղբայր Ջոշիկը եկավ, երկըրպագեց տիկնոջ առաջ եղած սուրբ նշանին, իր կնոջ հետ ընկավ Գրիստոսի սուրբ աղախնի առաջ, որպեսզի օրհնություն ստանա նրանից. ողբալով և արտասվելով խոստովանեց իր շատ մեղքերը: Շուշանիկն էլ շատ հորդորական խոսքերով խրատում էր նրան՝ հեռանալ չար գործերից, առել չարք և սիրել բարին ու արդարությունը: Եկան և Սամուել եպիսկոպոսապետն ու Հովհանն եպիսկոպոսը քահանաների ու սարկավազների հետ, որոնք երանելիի քաջութիւններն ու նեղության ընկերներն էին, որպեսզի հուղարկեն

նրան իր մեծ նեղութիւնից դեպի նախահանգիստ Քրիստոսը, Եկան նույն-
պես և Վրաց աշխարհի նախարարները, ազատներն ու տիկիները, այլև
սեպուհները, որոնցից մասնակից լինեն նրա հուղարկման օրհնութիւնը
Ամենքն էլ նրա երկաթի կապանքներից մի կտոր ուզում էին ի հիշատակ,
իսկ նա ասում էր.

— Ես արժանի չեմ դրան. բայց աստուծու կամքը թող լինի. արեք,
ինչպես կամենում եք. Ապա նա օրհնեց ամենքին, շնորհակալութիւն հաշտ-
նեց եպիսկոպոսին, իբրև իր դայակին կամ հօրը՝ «Ո՛վ աշխպա ամենքին
հրաժեշտ տալով և օրհնելով՝ աղաչում էր, որ իրեն, ի՞նչ արժանի կհամա-
րեն, գնեն այն տեղում, որտեղից առաջին անգամ ջարդ տվին իրեն»:

Սվ աղոթելով ավանդեց հողին. Ամենքն էլ լալիս էին. Եպիսկոպոսն
ու բոլոր ժողովուրդը ամփոփեցին նրա մարմինը. պարկեշտ կանանց ձեռով
անուշահոտ յուշերով ու խնկերով լվանալ տվին այն և ինչ որ պետք էր՝
անելով ու մաքուր կտափներով պատելով՝ դրին իր պատվիրած տեղում
Ամբողջ գիշերը ժամ ասացին, հետո պատարագ արին, և սրբի հանգստյան
օրը, ջաղոց ամսի 17-ին, մեծ տոն արին, տարեցտարի կատարելով այն
ի փառս աստուծու. Սվ ասոված ոչ սակավ բժշկութիւն էր անում սուրբ
տիկնոջ բարեխոսութիւնը:

Այստեղ բերվեց Շուշանիկի վկայարանութիւնը բովանդակութիւնը
գրեթէ ամբողջ, սակաւ կը ըրնառնենք. մեծ մասամբ բառացի, որովհետեւ
այդ տիպի երկերն ընդհանրապես անծանոթ են մեզ. մեր գրագետներին,
իսկ դրանք մեր հին գրականութիւնը վեպերն են, գեղեցիկ արվեստով հո-
րինված: Շուշանիկի պատումի մեջ էլ կտն, հարկավ, վկայարանական ընդ-
հանուր մտաւիճակ, ինչպես են՝ աղոթքներ, հերոսի նշանավոր ծագում, ման-
կական ուսում և բարեկրթութիւնը, չարչարանք, բժշկութիւններ, հանդի-
սավոր թաղում և այլն: Բայց դրանց մեջ չէ այս պատումի բուն տրեքը,
այլ իր թեմայի և արվեստի մեջ:

Կարելի չկա այստեղ մանրամասն ընորոշելու Վաղգենին. Շուշանիկի
այդ հակասիւթին, — անառակ, ամպարիշտ մի մարդ, որ փառքի և իշխանու-
թիւն համար ստրկացած էր Պարսից թագավորին և գազանաբար ստրկաց-
նում էր ամենքին, որի իշխանութիւնը, սակայն, ոչ մի հնար չգտավ Շու-
շանիկին վերադարձնելու իր գիրկը: Նրա այլանդակ ընտելութիւնը գծերն
այնքան պարզ են վիպական պատմվածքի մեջ, որ էլ հարկավոր չէ դրանց
վրա կանգ առնել: Կարելի չկա նաև վերլուծութիւնն անելու գործողութիւնը,
որ այնպես ճիշտ և մեկին դարձացրած է հուզեցանքներ: Դառնալով
այս պատումի գլխավոր դեպքին.

Շուշանիկն, այդ համեստ կինը, մեռնելիս միայն մի իղձ է ունենում —
այն, որ իրեն թաղեն այն տեղում, ուր իրեն ջարդ տվին եկեղեցում բազ-
մութիւն անող: Նրա իղձը կատարում են: Ի՞նչ է նշանակում այդ, որ իս-
կապես վիպակի վերջաբանն է: — Այդ նշանակում է, որ աղոթողներն ամեն
անգամ, երբ կտեսնեն նրա գերեզմանը, պիտի ասեն՝ Այստեղ հանգչում է
այն առաքելի կինը, որին իր գազան մարդն այնքան տանջելով տանջեց,
որպեսզի իր կամքը կատարի. բայց նա, կինը, հաստատ մնաց իր որոշմանը,
անվերջ չարչարվեց և բաժանվեց իր պիղծ մարդուց:

Այսպէս ուրեմն, այս պատուէն էապէս մի ընտանեկան դրամա է, սըր-տանկիկ, միանգամայն և սարսափի նկարագիր այն դաժանություններէ, որոնց ենթակա են հզել թույլ և անզնական կանայքն իրենց բռնակալ ամուսինների ձեռին, որոնք կատաղում, զազանանում էին նրա համար, որ իրենց կանայքը չէին լսում իրենց և անկախ էին մտածում, հաստատ մնալով իրենց համոզմունքին, իրենց իդեալին: Բայց դա միաժամանակ և դուրեկ բողոք է այն ստրկական դառն վիճակի դեմ, որ կանայք ունեցել են նույնիսկ քարձր ազնվական տներում: Այս վկայարանությունն իսկապէս առաջին և զեղեցիկ վիպակն է կնոջ ազատագրման մասին հայոց գրական-նության մեջ:

ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՔԱՐԻ ՍԿԵԶԸ

1. Մտաւում քաղկեղոսեանուքյամ ղեւն — Արդեն Ծ-ըդ զարի կեանն բոր-րոքվում են միաբնակության և երկարեակության վեճերը, որոնք սուր կեր-պարանք են ստանում Քաղկեղոսի ժողովի ժամանակ (451 թ.) և հետո Արդարեւ այդ շրջանում արեւելյան հայերն զբաղված էին քրիստոնէութեան ընդդէմ մոգության և պարսից թագավորների պաշտպանելով, բայց սխալ է ասել, թէ մինչև Ե-ըդ զարի 80-ական թվականները հայերը չէին կարող ափսոսելն դավանանքի տարբերութեանների մասին մտածել: Զէ՛ որ այդ շրջանում զործել են և մտավոր ու դրական աշխատանքով պարապողները, որոնք թարգմանութեաններ են տրել: Կար ապաքին նաև տրեմոյան հայութեանը, «կէս ազգին հայոց» թէ Մեծ Հայաստանի արևմտյան մասում և թէ Փոքր Հայքում, ուր ոչ թէ քրիստոնյա մնալու համար պիտի հոգային, այլ նույն-չափ պիտի հետաքրքրվին դավանաբանական վեճերով, որչափ և կայսրու-թյան մեջ հույներն և այլ ազգերը: Չենոն կայսրի «Հենոտիկոն» կոչված հրովարտակի ժամանակ (482 թ.) այդ վեճերը չափազանց սրված էին և Չենոնի հրովարտակով նրա և հաջորդ Անատոսոս կայսրի (491—518 թ.) օրով մի առժամանակ լուծվել էին՝ հետո ավելի ևս բորբոքվելու համար: Այդ հրովարտակով՝ «Երեսթյունների մասին վիճելն արգելվում էր, որովհետեւ երեւ թեքեբերական ժողովների ուսուցած դավանութեանը միա՛հ-ուսդաբարոս ճանաչվում: Հենոտիկոնը խուսափում էր այնպիսի նախադասութեան-ներէ, որոնք վեճի առարկա էին, շեշտում էր առանձնապէս յոյրեւելի քրիստոսաբանական վարդապետութեանը և լուեյայն մերժում Թողկեղոսի որոշումները»:

Չենոն կայսրը 484 թ. փակել է տալիս Նոստիայի դպրոցը, հալածում այնտեղ եղած նեստորականներին, որոնք անցնում են Պարսից տերու-

¹ Երվ. Տէր-Միշեան, Ընդհանուր եկեղեցական պատմութեան, էջմիածին, 1908, էջ 254.

թյան կողմը և հաստատվում Մծերինում, Պերոզ թաղավորը (459—484 թ.) քաղաքական նպատակներով պաշտպանություն է ցույց տալիս նեստորական վարդապետության հետևողներին, որոնք հալածվում էին հռոմեական տերութայունից իբրև հերետիկոսներ, և նպաստում է, որ իր քրիստոնյա հպատակները հարեն այդ աղանդին, Պարսից տերութայուն էին քրիստոնեական եկեղեցին 483-ին կամ 484-ին Բեթ Լապատի ժողովում ընդունում Ը նեստորական հավատաձևը և դրանով քաժանվում հռոմեական քրիստոնյաներից մի մեծ անդունդով, ուստի և տերութայուն համար սակավ վտանգավոր դառնում։¹ Դրանով այդ եկեղեցին անջատվում է և հայոց եկեղեցուց, որ մերժում է նեստորականությունը։

Այդ ժամանակներում հենց (484 թ.) Պարսից բաժնի Հայաստանում ապստամբում և հետո մարդպան է կարգվում Վահան Մամիկոնյանը, և ժամանակի կաթողիկոս Հովհան Մանգակունին շատ որոշ դիրք է բռնում ժամանակակից դավանաբանական վեճերի վերաբերմամբ. նա հանգես է գալիս ընդդեմ երկաթնակութայնի, Ընդհանուր եկեղեցու մեջ դավանաբանական պառակտում էր ընկած և հայոց եկեղեցին չէր կարող անուշադիր թողնել այդ։ Մկվում է պայքար երկաթնակութայն և քաղկեդոնականության դեմ և այդ պայքարի գրավանությունը։

2. Տիվոքիոս Կուրի «Հակաճառությունը»։—Այդ գրականության սկիզբն է դրվում մի խիստ հուներան թարգմանական գործով, որ է՝ «Տիմոթեոսի եպիսկոպոսի Աղեքսանդրիայ Հակաճառությունն առ սահմանեալուն ի ժողովոյն Քաղկեդոնի»։ Այս գրքի հեղինակը, Տիմոթեոս էլուերոս կամ Կուր, եղել է եգիպտական միաբնակութայն պարագլուխ, մեծ դեր է կատարել ընդդեմ երկաթնակների և Քաղկեդոնի ժողովն ընդունողների, դասվել է ամենանշանավոր միաբնակ հայրերի մեջ թե իր գործունեությամբ և թե իր պրվածքներով, աջասրվել է Գոնզրա, ապա Խերսոն, 476 թ. վերադարձել է աթոռից և վախճանվել 477 թ. հուլիսի 31-ին², Տիմոթեոս Կուրը մեծ հարգանք է վայելել նաև հայ վարդապետներից և գրողներից, որովհետև նրա այդ դիրքը «ամենալավ զենքերն էր մատակարարում հայ եկեղեցականներին նեստորականության և քաղկեդոնականության դեմ մաքառելու համար»։

Դա մեծ նշանակություն է ունեցել ոչ միայն իր բովանդակության տեսակետով, այլև իր ոճի ու լեզվի։ «Հակաճառությունը» սահմանված

¹ Թ. Ն. և ուղեքն, Պատմության Սոսանյան տերություն, Թարգմ. Ն. Քաբաժյան, Վաղարշապատ, 1896, էջ 46։

² Տես «Շոդոպեթ», Գ. Տ.—Միլոյանյանի հոդվածը, էջ 136. «Հայ ժառանգությունն հնագույն թվականները» և առանձնապես Նորադեմ եպիսկոպոսի հոդվածը՝ նույն տեղում էջ 85—94, «Հովհան Մանգակունի և Հովհան Մայրապատեցի»։

³ Իրոյն ընծայեալ աշխատությունները Վարդան Ժ. Եպիսկոպոսի և Նրուանդ վարդապետի. Ե. Էյմիսի, 1908։

⁴ Տես «Հակաճառությունն հրատարակիչները Առաջաբանը, էջ VI և հաջ. այլև Երվանդ վ. Յեր.—Միլոյանյանի «Ընդհանուր եկեղեցական պատմություն», հատոր Ա, էջմիս-ձին, էջ 338 և հաջ.

ինելով քաղկեզոնականների դեմ վեճերի համար՝ Թարգմանիչն աշխատել է ըստ ամենայնի բառացի ճշտությամբ և բնագրին մոտ Թարգմանել, որպեսզի վիճաբանությունների ժամանակ ոչ մի տեղիք չլինի Թյուրիմացության։ Այդպիսով ստեղծվել է մի խիստ հուշաբան հայերեն, և դավանաբանական խնդիրների համար մի նոր, առանձին տեսակի ոճ, արտահայտություն հասուել ձևեր ու բանաձևեր, որոնցից հետո օգտվում են ուրիշները դավանական և այլ երկերի մեջ։

Թե ձևով հետով և ուր է Թարգմանվել Տիմոթեոս Կուզի «Հակաճառությունը», այդ հայտնի չէ։ Բայց Թարգմանված է դավանաբանական վեճերի սաստկացած միջոցին, երբ Քաղկեզենի ժողովի որոշումները զորեղ ընդդիմության էին հանդիպում արևելյան քրիստոնյաների կողմից, և հեղափոխական կառավարությունը ստիպված էր դրանք գործադրել տալու համար՝ զենքի դիմել և մեծ արյունահեղություններ անել, մինչև որ, ինչպես ասվեց, հրատարակվեց Ջենոնի «Հենոտիկոն» հրովարտակիր 482-ին։ Հայ եպիսկոպոսներն այդ բոլոր հուղումների կողքով չեն անցել անտարբեր։ Ահա հենց այդ ժամանակներում, 480—484 թվականի միջոցին, երբ Պարսկաստանի քրիստոնյաները բաժանվում են հռոմեական քրիստոնյաներից, Թարգմանվել է Տիմոթեոս Կուզի «Հակաճառությունը», որով ընդգծվեց քաղկեզոնականության պաշտպանվում էր Արևելքում ընդունված դավանությունը։

«Հակաճառության» Թարգմանության թվականը հիմնված է տոմարագրական հուշիքների վրա։ Այդ գրքի մեջ հիշված է Դիոսկորոս Աղեքսանդրացու ժամկան ամսաթիվն (առանց տարեթիվը հիշելու) եգիպտական և հռոմեական ամիսներով՝ «Թովթ Ե. սեպտեմբեր Բ. 3. Թարգմանիչը» (կամ գուցե հայերեն Թարգմանության արտագրողը) ավելացրել է իր ժամանակի համապատասխան հայկական ամսաթիվը՝ «Հոռի Զ. 3. Արդ՝ «Թովթ Ծ» սեպտեմբեր 2 = Հոռի 6 զուգավորությունը (այսինքն՝ զուգավորությունը) հնարավոր է միմիայն 480 փետր. 29—484 փետր. 28 թվականում։ Ուրեմն և Տիմոթեոս Կուզի հայ Թարգմանությունը չէ կարող այս թվականից ուշ լինել»։

Տես՝ Հինգերորդ հավելված՝ «Տիմոթեոս Կուզի Հակաճառության» Թարգմանվելու ժամանակը։

3. Քերգզպետայր Մովսես Խորենացու դավաբանական գրությունը։— «Դիրք Թղթոց ժողովանուի մեջ Մահակի ու Մաշտոցի և Մելիտրիների Ակակ եպիսկոպոսի Թղթերից հետո, Հովհան Մանդակունու գրությունից առաջ կա մի Թուղթ այսպիսի վերնագրով՝ «Երանելի մեծի քերդողահալըն Մովսեսի Խորենացի՝ եպիսկոպոսի»։ Դրությունը վերաբերում է միաբնա-

¹ «Շուրակ-թ», Վաղարշապատ, 1913, էջ 167 և հա. 3.-Միլաշյանի վերնում հիշված հոգիածը. այլևս Աբարատ, 1908, էջ 564—589. Գ. Տեր-Միլաշյանի հոգիածը՝ «Տիմոթեոս Կուզի Հակաճառության հայ Թարգմանության ժամանակը»։

² Մովսեսի ձևով ոչնչաց է լինել՝ «Մովսեսի Խորենացու» եպիսկոպոսի։ ԽՈՐԵՆԱՅԻՆ ԱՅԻՆ ԿՈՒՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ղեկավար հեռագրով՝ զուգընթաց լինել, Մուրադի մեջ վերջի ի տարբերակները Դ ղեկի համարելին և այդպես գրելին։ Նույնը ապագրված է նաև Արշակ Տեր-Միլաշյանի ձեռագրի «Մովսեսի Անցնու» համաձայն ի դրոշմ պատ-

գնության և երկարնակության խնդրին: Այդ գրության հունարան չեղուն քիչ մուծն է, մասամբ աղետալիկ պատճառով, բայց ընդհանրապես հասկանալի է: Փերդոդահայրն առանց Քաղկեդոնի անունը հիշելու՝ գրում է երկարնակության դեմ և պաշարպանում է միաբնակությունը փոխոսկայորեն, պարզ սրամատենությամբ: Թուղթն սկսվում է այսպես. «Յաղագս [թէ] ի յոլովիցն կատարեալ կենդանի ընդէ՛ր մի՛ բնութիւնս,—այն մասին, թե ինչու շատեցիք կազմած կենդանին մեկ բնություն ունի: Եվ անմիջապես կցում է. «Այլ միայն կենդանոյն՝ հարկ է և բնութիւն մի՛ լինել, — որովհետև մեկ կենդանին պետք է և մեկ բնություն ունենաւ: Եւ այդ ապացուցում է նաև հունական իմաստասիրությամբ մարդու օրինակով. «Զմարդ ի չորից նիւթոց բնաւորեցին, ի հողոյ, և ի ջրոյ, և յաւդոյ, և ի հրոյ. յաղագս ջերմութիւն և ցրտութիւն և խոնաւութիւն և ցամաքութիւն ի նմա համեմատելով. և զամսն իստմամբ...¹: Զի այսքանեացս կատարելութիւն մարդոյն, ընդէ՛ր սաի մի բնութիւն... Քանզի մարմին իսկ չէ հոգի, և ոչ անձն մարմին. և կիրք ալ և այլ երկաքանչիւրոցն, և անգանգ և անշփոթ է կցորդութիւնն... Այսպիսի ուրեմն զաղափարաւ և արարչական Բանին իմանի անաւրէնութիւնն... դժուարին ընդունելով պատկեր՝ ոչ չնշլով կամ սղառելով ի բաց բարձութեամբ միոյն դմիւն, այլ անմեկնելի հաղորդութեամբն: Վասն որոյ և ի գէպ և յոժ ճանդագոյն թուի խոստովանողաց մի բնութիւն ասելով... Ապիթէ հակառակ ինչ վարկանիցին ո՞ւմա՞ք՝ զպատասխանալի անկարելի համարելով, որպէս թէ երկուս բնութիւնս պատշաճիցէ առիւ, գիտաւորն, գի զնոյն գտնմարութիւն և ի մարդուն, գո՛յ նկատելով մանաչի ոչ միայն ի փոխոսկայական ստորոգութիւնս, այլ և սուրբ գիրք աստուածաշունչը,—Մարդս չորս նյութից է կազմած՝ հողից, ջրից, օդից և հրից, համասարապես ունենալով իր մեջ ջերմություն ու ցրտություն և խոնավություն ու ցամաքություն, նաև եռգիմ հաստատու է... Որ այսքան բանից է հորինված մարդը, հապա ինչ՞եւ մեկ բնություն է ասվում... Որովհետև իսկապես մարմինը հոգի չէ, և ոչ հոգին՝ մարմին, և երկուսի էլ կիրքերը զանազան են, և կցորդությունը՝ անգանգ և անշփոթ: Այսպիսի մի կերպ էլ հասկացվում է արարչական Բանի անօրենությունը... Մասնալի այսինքն՝ մարդու Մ. Ա.] պատկերն ընդունել է նա ոչ փոխվելով կամ մեկը մյուսին սպառելով, վերացնելով, ալ անմեկնելի հաղորդակցությամբ: Ուստի ի դեպ և պատշաճ է թվում, որ խոստովանողները [=ճարտարությունը զավանդողները] մի բնություն են ասում, իսկ եթե ումանք հակա-

մազբայց գրքի մեջ, Վաղարշապատ, 1803, էջ 255 և հանա Արտեղ վերնագրի մեջ չկա «Խորենացի անունը»:

¹ «ԱՅՏԻՆ ԲԱՆԻ ԱՅՈՒՆԻՆ ԶՆՊԱՆԱԿՈՒՄ Է ՎՆՈՂԻՆ, ԻՆՉԿԵՆ ՈՐ ԶԻՉ ՆԵՐՔԻՆՈՒ ՆՈՒՆԸ զՈՐՃԱՆՎԱԾ Է ԻՔՐԻ ՀԱՄԱՆԻՉ ԵՆՈՂԻՆ ԲԱՆԻ. ԱՅՏԻՆ ԵՌՈՒՄԱՆԻ ՆՊԱՆԱԿՈՒՄ Է ԵՐԵՃ ՄՈՍԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՀՈՂԻ. ԱՅՈՒ ՀԱՍԿԱՆԱԿՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱ. ՎՅԱՆՈՒՄԱՊԱՏՈՒՄԻՆ (ԷՋ Զ) ՀԵՄԱԿՈՒ ԿՈՐԵ. «ՈՐՊԵՆ ՄԻ Է ԱՐԵ և լՈՒՆ և ջԵՐՄԱՆՔԻՆ ԻՔՐ և մԻ ԱՐԵ ԱՐԻ և ոչ ԵՐԵՃ ԱՐԵ... և ՈՐՊԵՆ ՀՈՂԻ, մԻՔԱՆ և ըՄԱ՝ մԻ ՀՈՂԻ ԱՐԻ և ոչ ԵՐԵՃ ԵՆՈՂԻ. ԱՅՈՒ ՀՈՂԻ ԱՐԻ ԿԵՆՉԱՆԱԿՔԻՆՈՒ, և մԻՔԱՆ ԱՐԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՂՆՈՒ, և ըՄԱՆ ԱՐԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄՈՒՄ՝ մԻՈՒ ՀՈՂԱՅԻՆ: ՈՒՐԵՄՆ ՀՈՂԻՆ ՈՒՆԻ ԿԵՆՉԱՆԱԿՔԻՆՈՒ, մԻՔԱՆ և բԱՆԱԿԱՆԱԿՔԻՆՈՒ, ԲԱՅԵՂ զՐՈՄԵՐՈՒ մԻ ԱՆՃԸ, մԻ ՀՈՂԻՆ ԵՐԵՃ չԻ զՈՒՆՈՒՄ, ԱՅՈՒ ՊՈՒՄ Է ԻՔՐԻ մԵԿ»:

սակը կարծեն¹ մեր այդ պատասխանն անկարելի համարելով, որպես թե պատշաճ է երկու բնությաւն տանել, թող այդպիսիներն իմանան, որ նուէյն անհնարությունը [=երկու բնությաւն ընդունելու] և մարդու համար կա, և այս նկատվում, իմացվում է ոչ միայն փիլիսոփայական ստորոգու-թյուններով, այլև աստվածաշունչ սուրբ գրքով:

Այստեղ, հարկավ, կարևոր է բերել Քերդղահանը այդ գրության ամբողջ բովանդակությունը, որով ընդունվում է մի բնությունը և հերք-վում երկու բնությունը: Միայն այս նկատենք, որ հեղինակը վերջաբանի մեջ գրում է. «Ձայս քիզ փոքր ի շատե պատճառյանդիմանութեան յաղագս բաժանեալ ուսման ալլանդակացն, գի ծանիցես, և՛ ամստուծոսեք, յոմանց փախչել և բաղձալ անսասանելի և անշուշտ հաւատոյ դուանութեան...» — Այս քիզ [գրեցի] իբրև մի փոքր ի շատե հիմք՝ ալլանդակների բաժանած ուսումը հերքելու, որպեսզի գիտենաս, և՛ ամստուծոսեք, մի բանիսից փախչել և բաղձալ հավատքի անսասան և ստույգ գովանությանը: — «Բա-ժանած ուսումն» կոչվում էր երկաթնակների դավանությունը, որով Քրիս-տոսի մեկ բնությունը բաժանում էին՝ երկուսի:

Վերջաբանից կարծում են, թե Քերդղահանյր Մովսեսն իր թուղթն ուղղել է Հովհան Մանդակունուն:

Տես Վեցերորդ Հավելված՝ «Քերդղահանյր Մովսեսն Խորենացի եպիսկո-պոսի թղթի վավերականությունը»:

4. Հովհան Մանդակունի:—Այս անվանի անձը Սահակ-Մեսրոպյան դպրոցի վերջին ներկայացուցիչներից է, Վահան Մամիկոնյանի ապստամ-բության ժամանակ հայոց կաթողիկոս է եղել և եռանդուն մասնակից ապստամբության գործին, նույնիսկ մարտի դաշտ գնալով: Ղազար Փար-պեցին, ինչպես տեսանք, միշտ առանձին հարգանքով է հիշատակում նրան: Նա իբրև կաթողիկոս հոգ է տարել եկեղեցու բարեկարգության. նրա անունով փնում են կանոններ, նա սահմանել է եկեղեցու ծխական կար-գերը, կարգավորել է ծիսարանը, որ կոչվում է «Մայաոց», անշուշտ, Մես-րոպ Մաշտոցի անունով, որ, երևի, սկզբնական կազմողն է այդ գրքի: Հովհան Մանդակունին ընդարձակել է և «Ժամագիրքը», որի, ինչպես և ծիսարանի, երգերից և աղոթքներից շատերի հեղինակն է նա: Դրանցից է, օրինակ, գիշերային ժամերգության «Ձարթուցեալքս» նշանավոր քարոզը: Նա գործել է և իբրև թարգմանիչ. հունարենից թարգմանել է, օրինակ, երեկոյան ժամերգության հռչակավոր «Լոյս դուարթ» օրհնեղությունը: Նա հորինել է նաև մեկնություն, ճառեր, Նրան մի ժամանակ վերադրում էին նաև «Խրատ վարուց» գրվածքին պատկանող ճառերը¹, որի հեղինակ այժմ Հովհան Մայրապոսեցուն են ընդունում²:

«Գիրք թղթոց» ժողովածուի մեջ Քերդղահանյր Մովսեսն Խորենացի եպիսկոպոսի գրությունից հետո դրված է՝ «Երանելոյն Ուովհաննու Հայոց

¹ Տեսան Յովհաննու Մանդակունու ճառք, Վենետիկ, 1886. Երկրորդ ապագր. Վենե-տիկ, 1880.

² «Շաղկաթ», էջ 100 և հաև. հազված Կարապետ եպիսկ. Տ.-Մկրտչյանի. Հովհան Մանդակունի և Հովհան Մայրապոսեցին:

եղիսկոպոստպետի Աղաքոյց յերկուց քնութեանց ասել զփրկիչն և կամ մի բնութիւն: Դա Հովհան Մանդակունին է: Եփեսոս հաւատոյ՝ ժողովածուի մեջ նույնի մասին կա տպագր. Եմբանելոյն Յովհաննու Մանդակունույ Հայոց կաթողիկոսի՝ ի Հակոբանութենէն Քաղկեդոնի ժողովոյն, որ ասի Աղաքոյց: Մանդակունին ևս ոգտվել է Տիմոթեոս Կուզի Հակաճառությունից, իսկ նա ազդվել է նաև Քերգողանայր Մովսեսի վերոհիշյալ գրությունից: Այդ գրությունից շատ պարզ երևում է, որ Հայոց կաթողիկոս Հովհան Մանդակունին արդեն որոշ դիրք է բռնել ժմաբնակության և երկաբնակության՝ վեհի վերաբերմամբ: Նա ընդունում է ժմ բնութիւն՝ կամ յերկուց բնութեանց մի՝ դավանությունն ըստ Կյուրեղ Աղեքսանդրացու: Եվ այլապես էլ չէր կարող լինել, քանի որ այդ ժամանակներում, ինչպես ասվեց վերևում, ժմ բնության՝ վարդապետությունն իշխող դավանությունն էր ոչ միայն Արևելքում, այլև բիզանդական կայսրության բոլոր սահմաններում:

Տես՝ Յոթներորդ Հավելված՝ «Հայոց եկեղեցու դիրքը քաղկեդոնության վերաբերմամբ Ե-րդ դարի երկրորդ կեսին»:

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՎԵՐԵԼՔ

1. Դավմաթամակոմ պոյժրի օսոսկիցում և կուլտուրակոմ վերեի:—

Քրիստոսական կայսրության մեջ քաղաքական շրջաններում դավանաբանական նրբությունները հետզհետե արդեն կորցնում են իրենց կարևորությունը կրոնական տեսակետից: Դրանք ծառայում են ազդային պետական շահերի համար: Անաստաս կայսրի (491—518 թ.) մահից հետո քաղկեդոնականությունը պաշտոնապես ընդունվում է և պարտադիր է դառնում բիզանդական կայսրության մեջ. կայսրներն ու պատրիարքները ձգտում էին մի ընդհանուր պետական դավանությամբ կայսրության միությունը պաշտպանելու: Հայերի համար էլ դավանության խնդիրն ստանում է ազդային քաղաքական նշանակություն: Հոռոմեների ազդեցությունից զերծ մնալու և ազգային միությունը պահպանելու համար՝ պետք էր դավանապես դատվել նրանցից: Այդ էր պահանջում հայերի, ինչպես նաև պարսից պետական ժողաքականությունը: Այլապես ի հակադրությունից պայքարը հետզհետե ավելի ևս սրվում է: Դա, իսկապես ասած, միայն մի փոխակերպում էր այն մաքուր, որ Ե-րդ դարի սկզբից ի վեր հայերը վարում էին ընդդեմ հույների՝ իրենց ազդային ինքնուրույնությունն Արևմուտքում պահելու համար: Արևելյան և արևմտյան հայության միջև արդեն գլուխ էր հկել եկեղեցական միությունն ընդհանուր եկեղեցական լիզվով, այժմ հոգում էին ազդային ինքնազուլու իկեղեցու մասին: Շահերի այսպիսի հակասության պատճառով քաղկեդոնականության վերաբերյալ վեհերը, կոմի-

¹ Կնիք Հաւատոյ, Եմբանել, 1914, էջ 180. Թեո Դույն Թեոփոս Եղիսկոպոսի Նախաբանը, էջ LIX: Այլև Ենդակոթ, էջ 92 և Թ. Դույն Եկեղեցական Ենդված հոգվածը՝ Էնդվ. Մանդ. և Էնդ. Մանդ. Այլև էջ 188 և Թ. Դույն Տեր-Միքայայնի հոգվածը՝ Էնդ. Ժամանակներից հնագույն թվականները:

ները և նույնիսկ հայածանցները քաղկեդոնականների կողմից,— որովհետև նրանք ավելի զորեղ են եղել քաղաքականապես,— իրար հաջորդում են անհատաբար շարքով, քանի զոյաթյուն է ունեցել բիզանդական կայսրությունը, Դա առաջ է բերել ընդարձակ ղափմամբարմակամ գրականությունում հայերի մեջ:

Յոստանգնապոլսում 553 թ. դամարվում է հինգերորդ տիեզերական համարվող ժողովը: Հավանորեն դա որոշումների կապակցությամբ հաջորդ 554 թ. Ներսես Բ. կոթողիկոսի օրով գումարվում է Դվինում Հայոց եկեղեցական ժողով, որի որոշումով Հայոց եկեղեցին բացարձակ կերպով բաժանվում է քաղկեդոնականից¹: Դա հետևանքով հետզհետե պակասում է հունական կուլտուրայի ազդեցությունը հայերի վրա: Արդարև արևելյան հայերը 6-րդ և 7-րդ դարերում չէին կարող բուրրովին կտրվել հույներից, քանի որ կային դրացիական հարաբերությունները, մանավանդ որ երբեմն էլ բիզանդական կայսրներն աշխատում էին տիրել նաև Արևելյան Հայաստանին: Բայց և այնպես հայոց գրականություն վրա հունական ազդեցությունն այլևս մեծ չափով չի լինում: Հայերը դավանությամբ, ինչպես և հունական կողմից զործ գրված բունությունների պատճառով ոչ միայն սառն էին վերաբերում դեպի հույները, այլև խորում էին նրանցից, միևնույն ժամանակ հայերը հույների մոտ այլևս չէին գտնի հունական հին կուլտուրան և արվեստը: Հուստինիանոս կայսրը 529 թ. արդեն փակել էր սովել Աթենքի դպրոցը: Քնում էր միայն Կ. Պոլսի դպրոցը, որը ղեկավարում էին եկեղեցականները: Իսկ սրանք հետաքրքրվում էին գլխավորապես դավանաբանական և այլ կրոնական խնդիրներով, չէին հունական գրականություն և արվեստը մոռացություն էին տրվում, սկսվում էր միջնադարը:

Բայց չպիտի կարծել, թե կանգ էր առնում հայկական մտավոր շարժումը: Պարսիկների կողմից, հակառակ հույների, տակավ առ տակավ թալանում էր կրոնական ճշգրտումը. կրոնի պատճառով հարուցած նեղություններն այդ շրջանում մեղմացել ա պակասել էին: Պարսից վերին իշխանությունը նույնիսկ հովանավորել է Հայոց եկեղեցուն հակառակ բիզանդական քաղաքականության: Ճորձով Անուշըրովան թաղավորի (531—579 թ.) օրով վարդան Մամիկոնյանի ապստամբությունը (561 թ.), ինչպես և հունապարսկական պատերազմները և արաբական արշավանքները դանդաղացրել են, բայց չեն դադարեցրել հայ կուլտուրայի առաջադիմական ընթացքը: Արաբացիների տիրապետության առաջին շրջանում, մինչև 6-րդ դարի սկիզբները, նրանց վերաբերմունքը դեպի հայերը եղել է համեմատաբար մեղմ: հայերն ունեցել են որոշ ինքնավարական արտոնություններ և խաղաղ կյանք: Պարսկական և արաբական ալապիսի քաղաքականություն հետևանքով հայկական ազգային կուլտուրական ու գրական գործը շարունակելով զարգանալ՝ 6-րդ դարի երկրորդ կեսին և 7-րդ դարում ունեցել է

¹ Ե. Տ. Ե. Միլոսայցի, Հայոց եկեղեցու հարաբերություններն Ասորց եկեղեցիների հետ, Եվթիմիան, 1908, էջ 123 և հա. Տիմոթեոս Կուրի կապալանություն, Եվթիմիան, 1908, Առաջաբան, էջ XIV և հա. Յնից Հայաստան, Նախբան, էջ LXXII և հա.

նուշինիակ վերելք, իբրև հետևանք, հարկավ, նաև երկրի տնտեսական բար-
դավաճման:

Արդարև, եղել են հուլյն լեզուն իմացողներ, որոնք թարգմանություն-
ներ էլ են արել. բայց աղբյուրիններ թիվը հետզհետե պակասել է: Ուսումը
կատարելագործելու համար այլևս ուսանողներ չէին ուղարկում: Բիզան-
դիոն. սակավաթիվ անհատներ միայն իրենց ներքին դպրոցում և անձնա-
կան հանգստանոցներով կամ նախաձեռնություններ դիմում էին երկրից դուրս
գրիտություններ ձեռք բերելու: Ուսումն ամփոփվում էր գլխավորա-
պես հայկական դպրոցներում կամ, ինչպես այն ժամանակ անվանում էին,
վարդապետարաններում: Հայտնի են դառնում մի քանի դպրոցներ, ինչ-
պես Սյունյաց վարդապետարանը: Արշարունյաց վարդապետարանը Նրաս-
խաձորում, որ կրթվում էին ճառարք և գիտունք Հայոց: Այդտեղ
ուսումնասիրում էին Ս. Գիրքը և եկեղեցական հայերի գործերի, ինչպես
և փիլիսոփայական և այլ երկերի թարգմանությունները: Սովորում էին
հետադարձություն, քերթողություն ու փիլիսոփայություն: Հռչակվում են իրենց
գրիտությամբ Հայաստանում ուսած վարդապետներ, որոնք քերթող կամ
փիլիսոփա մականունն են կրում: Կային նաև տոմարագետներ, ծնվում է
նաև ձգտում թվաբանություն ու տիեզերագրություն սովորելու: Խիստ
սիրված է եղել հոգևոր պերճախոսությունը, որի նպատակն է եղել քրիս-
տոնական բարոյախոսությունը քարոզել, այլև սովորեցնել կրոնի սկզբունք-
ները: Այս տեսակի վրա առանձին ուղղություն էին զարմնում վանա-
կան դպրոցներում, ուր առանձին վարժություններով սովորեցնում էին
աշակերտներին ճառեր հորինել և արտասանել:

Բարձր կրոնական ոգին ստեղծել է նաև իր զեղարվեստը, առանձնա-
պես փայլուն ճարտարապետական արվեստը: Կառուցվում էին հյուսկապ
տաճարներ, որոնք իբրև խոսուն վկաներ այն ժամանակների տնտեսական
ու կուլտուրական վերելքի՝ ավերակ, կիսավեր, կամ կանգուն գրություններ
դեռ մնում են 6-րդ և ավելի 7-րդ դարերից մինչև օրս, ինչպես են Հոփփո-
մեի, Գայանեի, Ավանի, Մրենի, Խորվիրապի, Զվարթնոցի, Արուսի (Թալի-
շի) և այլ պանծալի ճարտարապետական հուշարձանները: Նրկիրը զարդա-
րում էին գեղաճանգակ խաչքարերով:

Ուկեղեցական ճարտարապետության ու քանդակագործության հետ
միաժամանակ ծաղկում էր նաև նկարչությունն ու երաժշտությունը, բայց
հասկանալի պատճառով այժմ չունենք զրանց մնացորդները: Կրոնական
լուսնաստեղծությունից, սակայն, որ շատ դարդացած է եղել առանձնապես
7-րդ դարում,—պահված են բազմաթիվ հոգևոր երգեր, որոնք անհրաժեշտ
էին փառավոր ու շքեղ պաշտամունքի համար մեծաշեն եկեղեցիների մեջ:
Հարատևել են նաև պատմագրությունը, ժողովրդական վեպն ու գուսանա-
կան երգը: Այդ վերելքի ծնունդն է նաև Անանիա Շիրակացին իր երկերով:

2. Գիրք քրքոց:—Գրանի որ գրականությունը եկեղեցականների
ձեռքն էր, և նրանք մեծ ուղղորդություն էին զարմնում դավանաբանական
վեճերին, բնականաբար հորինվում են մեծ թվով գրություններ քաղկեդոնա-
կանության ու նետորականության դեմ, կամ այլ կրոնական խնդիրների
վերաբերյալ: Կազմվում են ժողովածուներ՝ վիճաբանությունների համար

պատրաստի մեռնարկներ ունենալու նպատակով Այգալիսիներին է «Գիրք թղթաց»¹ կոչված նշանավոր ժողովածուն, որը հիշատակելու առիթ եղավ մի քանի անգամ, թե երբ և ում մեռավ է կազմվել այդ գիրքը՝ հայտնի չէ։ Հավանորեն դա մի պաշտոնական խմբագրություն է, 7-րդ դարի մեջ կազմված, քանի որ 5—7-րդ դարերի թղթակցությունները դասավորված են առանձին խնամքով և միմյանց հաջորդում են ժամանակագրական կարգով, իսկ շարունակության մեջ գրությունները պատահականորեն ժողովված և խառնիթուռն մեջ բերված²։ Բովանդակությունը հասնում է մինչև 18-րդ դարը։ Ընդամենը 98 թուղթ կա։ Պրոկոպիոս Ալեկսիսկայիսիոսների և Սահակիոս Մաշտոցի միջև փոխանակված հինգ թղթերից հետո՝ վեցերորդն է Քերզոդահայր Մովսեսի վերևում հիշված գրությունը, ապա Հովհան Մանգակունունը, հետո Բարդղեն կաթողիկոսի և ուրիշների Այդ թղթերը գրական տեսակետով ընդհանրապես անկարևոր են, զի գրանք մեջ սովորաբար պահպանվում է ղեկցելի արվեստը, բայց մեծ արժեք ունեն իբրև պատմության տողնակարգ աղբյուրներ, քանի որ գրված են իրական եղելությաններին առթիվ։ Դրանց մեջ տեսնում ենք հեղինակների հմտությունը դավանաբանական և այլ խնդիրների նկատմամբ, նրանց ձգտումն ամեն եռանդով պաշտպանելու հայաց եկեղեցու զավանությունը, անկախությունն ու միությունը։ Չանքերը, որ վրաց և աղվանից եկեղեցիները չանջատվեն հայոց եկեղեցուց, և այլն։

3. «ԿՅԻԲ ԽԱՇԱՄԱՅ», ՀԱՎԻՄԱՄ ՄԱՅՐԱԳՈՒՄԵԿԻ, ՎՊՐԱՄԵՆՈ ՔԵՐԵՈԳ և ԹԽՈՂԱՐՈՍ ՔԱՔԻՄԱՎՈՐ։—Երկրորդ կարևոր ժողովածուն է «Կնիք հաւատոյս կոչված գիրքը»³։ Սրա մեջ Կոմիտաս կաթողիկոսի (615—628 թ.) օրով համահավաքված են եկեղեցու ուղղափառ հայրերի գրվածքներից կտորներ, իբրև առձեռն պատրաստ նյութեր՝ վիճարանությունների ժամանակ սուրբ հայրերի խոսքերով հայոց եկեղեցու զավանությունը հիմնավորելու և պաշտպանելու համար։ Այս ժողովածուն, որ կազմված է Տիմոթեոս Կուլիսի «Հակաճառության» հետևողությամբ, Շուշան գրությամբ չի Կնացել, ինչպես խմբագրված պիտի լիներ Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ, այլ փոփոխության է ենթարկվել, և նոր նյութեր են ավելացել վրանս։

Հովհան Մաշտոցունի նշանավոր վարդապետին են համարում այդ ժողովածուի կազմող։ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ պատմագիրը նրա մասին գրում է. «Այ ի սորա [Կոմիտաս կաթողիկոսի] ժամանակս փայլէր վարդապետութեամբ Յովհան Մաշտոցունցի, որում զկաթողիկոսութիւնն հաւատացեալ էր Կոմիտաս։ Սա [Յովհան Մաշտոցունցի] զբեռաց երիս գիրս, և զանուն իւր ոչ վերագրեալ ի նոսա, վրանս չընդունելոյ ժողովրդեանն. անուն միոյն՝ Խրատ վարուց, և անուն միւսոյն՝ Հաւատարմաւ, և անուն

¹ «Գիրք թղթաց», Թիֆլիս, 1901. Գեա. Մատենադարանում կան մի քանի թղթաց գրքեր տարբեր բովանդակությամբ։ Ցես «Կնիք հաւատոյս», էջ XXV։

² Ն. ԱՆՔԵՆՆԱՆ, Նիւրբերգ կաթողիկոս Վրաց, Վիեննա, 1910, էջ 89. «Շուղակութ», էջ 98։

³ «Կնիք հաւատոյս ընդհանուր տարբ» եկեղեցւոյ յազգափառ և Ե. Հագենկեր հոբոն մեքոց գաւառութեանց, յաւառո Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքեալ, հրատարակութիւն Կաթողեոս Եղեկապետի, ընդարձակ նախաբանով, էջմիածին, 1914։

միևնույն՝ նոյնմեակն։ Նրա «Նորատ վարուց» գիրքը Հովհան Մանուկունու անունով հրատարակված ճառերն են, իսկ հիշված «Հաւատարմատ» աշխատութիւնը, որ կոչվել է նաև «Աւրմատ հաւատոյ», նույնացում է «Կնիք հաւատոյ» ժողովածուի հետ։ Սրա մեջ նա բերած է եղել հատվածներ նաև իր զրվածներէից՝ առանց իր անունը հիշելու։ արտագրողներն ավելացրել են նրա անունը։ Հետագայում Հովհան Մայրազումեցու այդ տշխատութիւնն հետևողութիւնը կազմել են ուրիշ ժողովածու «Աւրմատ հաւատոյ» անունով։

Այդ ակնանկութիւնը վարդապետը, որ պաշտպանել է հայոց եկեղեցու պաշտոնական դավանութիւնը, եղել է ժամանակի անկախ մտածողներից մեկը։ «Մեծի հեղինակութիւնը անթարկվելու և ընդհանուր տրամադրութիւնը համակերպելու ոգով ստորված մի միջավայրում... իր ինքնուրուշութիւնը է հանդես եկել և առանց քաշվելու արտահայտել իր համոզմունքը։ Ջանալով հաստատել բանապակն մարդկութիւն» ուսումը մեր-ժեւ է Ղուկասի ավետարանի իւր. 43—44 տների վավերականութիւնը։ Դրա համար և նա հալածանքի է ենթարկվել։ Նա մինչև վերջը մնացել է հակաքղեկական տեսակետին։

Երբ նոր կաթողիկոսը, Հերակ կայսրի ճշմարիտ և շատ հայտնի Մարտարոս վարդապետն աղանդի թեւաբանութիւններից ազդելով, քղեկականների հետ միաբանելուց հետո վերադառնում է Դվին, Մայրապետեցին, որ Դվինի Ս. Գրէգոր եկեղեցու փակույտն էր, չի ներկայանում նրան։ Երբ այդ վարդապետին օտարմար մտնում են կաթողիկոսի մոտ, նա ասում է. «Դու յիշուի կաթողիկոսը, դի յնքը հանուլ արեւելիքը զհայտատանայտ, քաղեւլ զուհմոն հաւատոյ կորցնա։ Այս քաղաքը աշուհեան երկու տարում է կրկնվելով իրեն նշան առաքանքի։ Անա թե մինչև սւր էր համար զքղեկականութեւն տեսութիւնը հին հայ դարգանքի մեջ։

Մովսէս կաթողիկոսը (574—604 թ.) նույնիսկ հրաման է հանում՝ բամբակներն ոչ հաղորդել ընդ հոռոմս հնազանդեալս Քաղեկոնեական ժողովոյն... մի գիրս, մի պատկերս և մի նշխարս ի նոցանէ ընդունել։ Այդ հրամանն առիթ է դառնում, որ ազգայնների մեջ քարոզն սրբոց պատկերները խոտել։ Առաջ է դալիս պատկերամարտութիւն։ Հովհան Մայրազումեցին պատկերամարտների մասին գրած մի գրութիւն մեջ սխալ է համարում պատկերներ խոտելը։

Վրթոմնո Քերքազը, հմուտ հռչարենի և եկեղեցական գրականութիւն խնդիրների, ռալալ մի անձ, որ Մովսէսից հետո եղել է կաթողիկոսական տեղապահ (604—607 թ.), գրել է «Ընդդէմ պատկերամարտից» մի գիրք։ Կնշանակէ՝ «8-րդ և 9-րդ դարերում ամբողջ Բիզանդական կայսրութիւնը սակնուլիա անող պատկերամարտութիւն շարժումն իր առաջնութեան է ունեցել հայերի մեջ դեռ 7-րդ դարի սկիզբներին», և Հովհան Մայրազումեցու և Վրթոմնո Քերթոզի գրութիւններն առաջիններն են պատկերամարտութիւն պատմութիւն մեջ։

Հովհան Մայրազումեցին իր կյանքի վերջում քաշվել է իր առաջվա վանքը՝ Մայրազում՝ Բջնիի մոտ, այնտեղից էլ Գարգամանի գավառը։ Հովհանն իրր առաջ կոչվելիս է եղել «Մայրավանքի», և իրր նոր կաթողի-

¹ «Շահագործ», էջ 109 և «Հանդէս Ամբարեայ», Վեհնա, 1910,

կուսը, նրան անարգելու համար, նրան անվանել է «Մայրագոմեցի»։ Բայց «Մայրագոմեցի» անունն ավելի հին է, և հետագայում այդ նշանավոր վարդապետին հարգողները «Մայրագոմեցին» փախել են ի «Մայրավանեցի»։ «Մայրագոմեցուց» հետո երկուր ժամանակ հայոց վարդապետների մեջ եղել են երկու կուսակցություններ՝ հետևող նրան և խրոյանն։

Հովհան Մայրագոմեցու առաջին հակառակորդն է հանդիսացել վերնավում հիշված Թեոփորոսը, Քաթեմավոր կամ ձգնավոր ժականունով, Արագածոտնի Ս. Աստվածածին վանքի վանահայրը, մի խորագրահղկաստ թորթկրոն, առաքինի մորդ, հայտնի իր հայկական և հունական ուսուցումով, Նա պահում էր դպրոց, որի աշակերտներից նշանավոր հանդիսացան իրեն հեղինակ և կաթողիկոս Հովհան Իմաստասեր Օձնեցին և Սահակ Զորավորեցին։ Թեոփորոսը հովհանոս կաթողիկոսի եղբորորդին էր։ Կաթողիկոսն իր առհմիկի դաստիարակությամբ հանձնած էր Մաքսուդի վարդապետին, որ Սյունյաց վարդապետարանից էր, հետո Սյունյաց եպիսկոպոս։ Հետո Ստեփանոս Օրբելյանի՝ Մաթուսաղան եղել է մեծ ջերթող և անյաղթ փլիխափայլ... ուսնալ զճերթողութիւն և վարժեալ հարստասանակառան, հմտացեալ փլիխափայլական արուեստից, լի ամենայն իմաստութեամբ և կատարեալ գիտութեամբ։ Այս Մաթուսաղա ճերթողի աշակերտ Թեոփորոսն ահա գրում է ընդդէմ Մայրագոմեցուն։ Նա ունի նաև ուրիշ գրվածքներ¹, որոնց մեջ կան գեղեցիկ լեզվով և ազդու արվեստով հորինված մասեր, բայց կան նաև այնպիսի կտորներ, որոնք, իբր ժամանակի հունական ճառախոսների հետևողությամբ, վերամբարձր ճոճվ են, ճոճում և խրթնարան են, մեծ մեծ, հաճախ ինքնաստեղծ բարդ բառերով ու երկուր խոսքերով, Բերեք իբրև օրինակ՝ «Ընդդէմ Մայրագոմեցոյն» ճառի սկիզբը։ «Ահա այժմ նորահրատ սոչորեցու ըսց, և զըզդմութեբ տունկս բանակու զրախտին, հշմարտողոք աւետարտին համբակ» համարացուցանել հարակի, և զքաջուղեշ և զյիսպտտար հուստոյն խոյրիս քառամեցուցանել նկրտի, Զեղ ասեմ, որդիք լուսոյ, մի տարփոյք խաւարի, և մի գարտուղիք յորքայական պողոտայէն, և մի ստունգանէք չորեքտառնան աւետարանականաւդ փողոցն՝ որք յերկնակառոյցն վերակոչեն զաղաք զձեզ, և վաստաժիտ յաւութեամբ վերջանայք ի քաջամարտիկ անխահարցն արգարանահանգ հետնանաց։ Բանկի ահա վերայայտեցտն այժմ ի տանս Թորգոմաց նորածին դառնութեան գործք, օցտողք հշմարտութեանն, որք կաթարուք արտաքուստ երևին զուտենին զգետօք, և խալակիր մարմնաւիրութեամբ, և ներկերպին զազանդէմք, իրթնազդեստք, խուճապողք, տգիտախողիողք, քննարանք զաղտապատիրք, գողարքաբորքառք, ապաժուժոթախորհք, դժողանք։

¹ Թէոփորոսի Քոթեմավորի երեք շեմք, ազագրված է՝ «Ենկանու Իմաստասերի Աձնեցույ մատենադրութիւնք, Վննակի 1653» զբքի ետեւում էջ 147—168՝ «Ընդդէմ Մայրագոմեցոյն», էջ 169—171՝ «Երեք խոյն», էջ 172—189՝ «Գովեստ ի սուրբ Առաւանակին»։

ԿՈՄԻՏԱՍ ԿԱՅՈՂՒԿՈՍ

1. Կեցածըրկամ:—Ինչպե՞ս վերևում ասվեց, Թ-ը և Դ-ը դարերում հայկական կուլտուրական վերելքի ժամանակ ծագվում է և հարտադարձաբանությունը: Սերեոս Եպիսկոպոսը¹ պատմում է, որ Կոմիտաս կոթողիկոսը Խոսրով Ապրուհի թագավորի (590—628 թ.) 28-րդ տարում, ուրեմն 618 թվին, քանգում է Հոփսիմի մատուռը Վաղարշապատ քաղաքում, եղի կարի ցած և միին էր շինուածն, որ շինեալ էր սրբոյն Սահակայ... որդւոյ սրբոյն Ներսիսայ: Այդ ժամանակ քաղվում է բարձրական մարդարիտն, այսինքն... մարմին սրբոյ արկնոյն Հոփսիմէի, հավանորեն դադար, որ կնքված էր Ս. Գրիգորի և Սահակի մատանիներով, եզոր նա ոչ համարձակեցաւ բանալ: Եւ կնքեալ իւրով ևս մատանեաւ, որ արժանի իսկ էր կնքել գայսպիսի մարգարիտ երկից հաւատարմաց երբորդ մատանեաւք: Ապա տնայնական զգացված քաղաքանում է Պատմիչը. «Ո՛վ մարգարիտ, որ ոչ ծովածին, այլ մարգարիտ, որ ծնեալ ի թագաւորական ազգէ, և սնեալ ի գիրկս սրբութեամ և Եռիքեալ Աստուծոյ, որում ցանկացեալ էին տեսանել զքեզ արդարաւ, և խմղակաբ էր ի սէր քոյ երամկիմ Կոմիտաս»: Կաթողիկոսը, շարունակում է Սերեոսը,—«շինեաց զկնքեցին» (որ Զում է մինչև այժմ, պատի վրա ունենալով իրեն՝ Կոմիտասի արձանագրութունը): «Եւ զդրոյեալ ամենայն կողմն հիւսիսայ դայր յերկրագործութիւն»:—Այս իրականութեան արգասիքն է Հոփսիմյանց «Անձինք նուիրեալք օրհնեղութունը, որ առանց որեւէ անտանման Կոմիտասին են դնում հիշատակարանները: Թեպետ Սերեոսն այդ չի հաղորդում, բայց նրա դրածից պարզ երևում է, որ նրան ծանոթ է եղել Կոմիտասի քերթվածը, որից և այդ Պատմիչին ազդվել է իր գրվածքի մեջ: Այդ ցույց են տալիս վերևի ընդգծումները. Կոմիտասի երգի մեջ ևս Հոփսիմին անվանվում է «պատուական մարգարիտ», ի վերջում սրբութեան աճած, «նուիրեալ սիրոյն Գրիստոսի: Եվ վերջապես՝ երբ Պատմիչը գրում է՝ «խանդակով էր ի սէր քոյ երանելին Կոմիտաս», նա զբանով անկարգում է Կոմիտասի բանաստեղծական ոգևորութեանը Հոփսիմեով:

2. Փերթվածը:—Մեր հոգևոր երգերի մեջ, որոնց մասին առանձին կխոսվի, Կոմիտասի այս գործն ընտիրներից մեկն է թե իր իմաստով և թե մեկ զեղեցիկութեամբ: Այստեղ հնչում է քնարերգութունը. նույնիսկ Հոփսիմյանց երկնավոր նահատակութեան, այսինքն քաջամարտության պատմութեան մեջ, որի տգրություն է Ազաթանդեղոսը: Բայց Կոմիտասը հարասութուն չի անում, ոչ էլ ամբողջական պատմություն, այլ նոր ստեղծագործում է, այն էլ կազմելով հաս հատ զեղեցիկ պատկերներ ի շրջում, որի բոլոր ոգևորների վրա իշխում է մի տոնական ցնձազին հանդիսավորութուն: Եվ կույսերի շքեղ տոնականատրութեան համար էլ հորինված է այս ներդրական երգը, որի մեջ մի քանի անգամ ասվում է՝ «Տոնես»

¹ Սերեոս Եպիսկոպ, Պատմ., Երեսն, 1930, էջ 89.

ցնւք ըստուգութեամբ ի հնձանըս նոցունցն, շնորհութեամբ տօնեացուք
դիրշատեկս նոցունցն: Այսպես և առաջին տան մեջ:

Անձինք նուիրեալըք սիրոյն Պրիստոսի,
Երկնաւոր նահատակք և կուսանք իմաստունք,
Ի պարձանըս ձեր բարձրացեալ տօնէ՝
Մայր Սիմֆն դստերօ ըն իւրովք:

Ինչպես այս առաջին տնից հենց կտրելի է տեսնել, բանաստեղծը
Հռիփսիմյաններին առնում է երկու կողմից, իրեն Պրիստոսի սիրուն
նմիրժած իմաստուն կույսեր և իրեն երկնավոր դիմվորներ, որոնք քաջու-
թյամբ կռւում են իրենց հալատի համար: Այդ երկու կողմի միացումով
առաջ է բերված զարեղութիւնը մի ընդհանուր ընդարձակ տեսարանի
մեջ, երկնեան է քրիստոնեական հոգեւորութիւնը, որից ծագում է և որի
շուրջը պտտում է ամբողջը:

Մերժեցին ըզկարիս մարմնակաւս կենցաղոյս,
Զի ծանեան՝ եթէ երազ է և սուտ պաշտօնաւոր.
Ո՛չ հեղացան ի զըզման փափկութեան.
Իմացան՝ եթէ սնոտի է անցաւոր մեծութիւնս:

Մի անգամ որ կույսերն ըմբռնել են աշխարհի ունեւորութիւնը,
այնուհետեւ նրանք այլևս փափազող չեն երկրավոր հարսանեկտն պտ-
կի, այլ միայն երկնավոր պսակի:

Յանդաստանս հոգեւորս աղօթից և պահոց
Վասնականալք յուսով զամենայն ժամանակս,
Ժուժկալեալք փորձութեանց և պէսպէս լլկանաց.
Ան եղևոյք ժառանգորդք անթաւամ պսակին:

Սակայն նրանց տրված չի եղել կուսաստանի միայնության մեջ
հզնելով հասնել իրենց նպատակին: Աշխարհն իր բռնությամբ ստիպում
է նրանց ընդունել երկրավոր փառքի ամուսնութիւնը: Նրանց, մանա-
կանդ Հռիփսիմի մարմնակաւս զեղեցկութիւնն, թախան մեծ է, որ հրապու-
րում է ամենքին:

Գեղեցկութիւնք մարմնաւորս պայծառութեան ձերոյ
Երմարեցոյց զթագաւորն և պսակեան հեթանոսք.
Ի զեղ սքանչելի աստուածատուր՝ կուսանացն՝
Տարկացեալ պուարթունք ընդ մարդկան տօնհոյն:

Այստեղ Քերթալը բանեցնում է գեղեցկության նկարագրի համար
ամենալավ եղանակը—գեղեցկության մեծութիւնը ցույց տալ՝ թողած ազդե-
ցության հետեւն ընդ: Եթե ուրիշ բանաստեղծներ երկտառաբանների հետ
ծերերին էլ աղիված են դնում գեղեցկութիւնից, հոգիտաւոր, Դուք դարի
համար անսպասելի կերպով, մարդկանց հետ հրեշտակներին էլ սիրահարեց-
նում է մարմնավոր գեղեցկութիւնը: Բայց շարունակենք տեսնել, թե
գեղեցկության գովքն է՛լ ինչպես է հորինում մեր այս գերթողը:

ի վերայ մի՞նչ պատուական մարգարտի
Խաղացին ցընծալով ամենայն հեթանոսը.
Արևմուտք յարևելս ընթացեալք հասին,
Գարդեղ յայտնադէս գլխանդ տեսութիւնս
Լուսն թագաւորք և լցան խնդուքեամբ,
Որսալ յանձն առին ըզգաղանք մեծութիւն.
Պարզեալ իրերանց խոստանային բանիւք,
Եւ ծածակ հնարելք զոգանալ ի միմեանց:

Են՝ ահա այդ գեղեցկութեան հաստը ոկովում է կռիւլը կույսի և
թագաւորի միջև, կռիւ կրկնէի և երկրի: Դա մի նոր տեսակի կռիւի տես-
արան է: Կույսերը միասին, իրրե ջտղամարտիկներ, միաբան դիմում են
ուսղմանակատ և կանգնում թշնամու դիմաց: Նրանց գեներն է միտն հա-
վատը: Դա մի կողմն է, գեաւտի կույսեր, սկիւր կանայք, Մյուս կողմում
են զորեղ ու մարտիկ աղամարդիկ, մեծ բազմութիւն: Մի չտեսնված չլուս-
ված ճակատամարտ, որի վրա զարմանում են ոչ միայն մարդիկ ու հրեշ-
տակները, այլև ինքն առաված, որ խոնարհում է վերնից մտիկ տալու
այդ կռիւին: Են՝ սրժան գեղեցիկ է աբտահալսում Գոմիտան այդ ամենը:

Է՛ր զարմացումն և ի վեր քան զհրաշ
Խորհրդոց և բանից հրեշտակաց և մարդկան.
Գանդի է՛նն աստուած ամենազօր զօրութեամբն
Խոնարհեալ տեսանէր ըզհանդէս կուսանացն:
Ընկերք միամիտք մարմնական կենցաղոյս,
Նահատակք հաւասարք և հոգեով միացեալք,
Միաբան ընթացեալք ի տեղի ճակատուն,
Զինեցուն հաւատով և կացին յանդիման:

Են՝ այդ անհավասար ճակատամարտի մեջ հաղթում են տկար կու-
նայքը:

Թուլացան կորովիք հաստեմիդ աղեղանց,
Եւ տկար կանայքն վառեցան զինու.
Թագաւորն պերճացեալ զօրութեամբ և փառօք՝
Ի մանուկ ի կուսէն պարտեալ ամայէր:
Ժողովեալ բազմութեան աղքատց և աղանց
Ո՛չ զօրէին աւ մի նահատակ...

Այդ հաղթութեան հետեանքն այն է լինում, որ կույսերն արժանա-
նում են երկնավոր պսակին: Սեղան Դերթողի համար ավելի կարեւորն
այն է, որ նրանք դառնում են չզոհք փրկութեան, բառնալով դիւաւոր
դիւապաշտ մոլորութեանց յաշխարհէն, որ նրանք զիարատեցին դիւաւոր
դիւապաշտ մոլորութեանց, և ևզեն փրկանք անձանօթ աշխարհին: Հայոց,
այսինքն՝ դարձան պատճառ քրիստոնեութեան մոտաքին ի Հայաստան,
կամ, ինչպես ասում է բանաստեղծը.

Ծնան կուսանք անգղբա բաղումս
Եւ մարդք մանկունք զհրապարակս ձերոց.
Ի գիրկս սրբութեան աղօթից և պահոց
Անեցին հաւատով զարգարեալք ի Քրիստոս:

Յի այդ ձնունդն է քրիստոնյա հայ ժողովուրդը: Բանաստեղծը դրա համար լցված է երախտագիտութեան զգացմունքով առ կույսերն և հրճվածությամբ հորինում է նրանց գովաբանութեան երգը, նորանոր բազմազան գեղեցիկ պատկերներով ու նմանություններով զարդարելով այն, ինչպես՝

Բարբառք երկնաւորքք լրին գերկէր,
Պանդի հոտ անուշից բուրեցւոյք ի Քրիստոս,
Ողջակէ՛ղք բանաւորք ե զօհք փրկութեան,
Եւ սրճջք անարատք ընծայեալք տատուծոյ:

Հրեշտակները նրանց ողջակիւման հօտի վրա ցած են իջնում, մարդիկ էլ խառնվում հրեշտակներին.

Վասն ձեր, երանեալ նահատակք,
Զօրք հրեշտակաց անմարմին զուարթնոց ի յերկնից
Ի յերկիր հեղան, և մարգիկք խաւանցան
Ի գունդըս գինուորաց Քրիստոսի տատուծոյ:

Կամ հետեւյալ տունը իր պատկերով ե բովանդակութեամբ.

Ղեկավարք ճարտարք հոգևոր հմտութեամբ,
Թեթեալեալն մարմնով և մտքք սլացեալ
Ընդ երկայն ասպարէզս ծովածուփ կենցաղոյս
Անձնաս նաւեցիք և հասիք առ Քրիստոս:

Քերեմք և նահայտները.

Ճշմարիտ օրթոյն Քրիստոսի շառաւիղք,
Եւ ողոյզքք ճըմլեալք երկնաւոր մըշակին,
Կոխեցոյք ճըղճութեամբ ի հնձաւըս ձեր,
Զի ուրախ լինիջիք անմահական բաժակաւն:
Շինուածք երկնաւորք ի յերկրի հաստատեալք,
Եւ տրձանք լուսեղէնք ի յերկինս կանգնեալք...

Այսպես և ուրիշները: Գուցե այդ նմանությունները մոտամբ ազգոված են այլ գրողներից, օրինակ՝ Թերես վերնաւմ դրված տան առաջին տողերի մեջ (աթուղացան կորովիք հաստաձիգ տղեղանց, Եւ տկար կտանյքն վտոցեան գինուս) մի նմանողություն տեսնվի հետեւյալի՝ «Աղեղունք հոգւոյս տկարացան, և տկարք զգեցան զօրութեամբ» (Աղօթք Աննայի՝ մօրն Սամուէլի, Ա. Թագ. Բ. 4): Բայց այդ տրձեք չունի, Բանաստեղծն ամեն ինչ ինքը նորից ստեղծում է սրտագին զգացումով: Այդ քերթվածը նման չէ մեր մյուս հոգևոր երգերին: Չնայելով այբբենական կարգով սկսված

բազմաթիվ քառասուն տներին՝ Գերթոլդը կարողացել է հմտութամբ լցնել այդ մեծ ծավալը, անելով սակավաթիվ կրկնութուններ միայն, որոնք շատ զգալի չեն, որովհետև ցրված են ամբողջ մեծ երգի մեջ:

Եւրոպական սկզբում Կոմիտասին ընծայված են «Մերոց Հոփփոս-մեանց կանոնի» ուրիշ շտրակներն էլ: Ըսյց դրանք Կոմիտասի գործը չեն տուգելի: Թե այս քերթունքն ուրիշ երգեր էլ հորինած է եղել, թե չէ՝ այդ հայտնի չէ: Բայց նա իրավացի պիտի զասվի ի շտա մեր լավագույն հին բանաստեղծներին, այնքան նրա այդ մեկ երկը, «Հոփփոսմեանց Ան-ձինքը», ոչքի է ընկնում ուրիշներին մեջ իր արվեստով: Ընդհանրապես, նաև մասնավորապես իր ոտանավորի չափով, Դա անապատյան ազատ քառատանի (քառատակ) ոտանավոր է: յուրաքանչյուր տողի մեջ կան չորս չեղեր (կամ չորս ոտքեր), որոնցից երկուսը (առաջինը և երրորդը, կամ երկրորդը և չորրորդը) ավելի ուժեղ են: Մեր այս չափը, որ հայտնի է 7-րդ դարի սկզբից, համապատասխան է հնագույն գերմանական ոտանավորի չափին, որ գործածված է եղել մինչև 9-րդ դարի վերջը:

Այս շրջանում հորինված մեր հազար երգերը միայն Կոմիտասի այս մեկ քերթվածով չեն սպառվում, ունենք բազմաթիվ ուրիշ երգեր էլ: Բայց նրանց հեղինակները ստույգ հայտնի չեն, և նրանց մասին խոսված է հետո՝ «Հոգևոր երգ» հատվածի մեջ:

ԳԱՎԹԱԿ ԲԵՐԹՈՂ

1. Կենսագրեկամ:—Կոմիտասից ժամանակով շատ հետո չէ այս Դավթակ քերթողը, որ ժամանակակից է Սահակ Զորագործիցուն և Անանիոս Երրակացուն: Նա էլ ծնունդ է 7-րդ դարի այն կուլտուրական վերելքի, որի ներկայացուցիչներն են այդ հեղինակներն և ուրիշները: Նրանից ճիշտ է միայն մի «Ողբը ի մահն Զեանշերի մեծի իշխանին», որ կա Մովսես Կաղանկատուացու Աղվանից Պատմության մեջ: Աղվանից իշխան Զեանշերը, որ, ըստ Կաղանկատուացու, մեծ փառքով իշխել է 637—670 թ., զավթողությամբ սպանվում է իր բարերար յալներից մեկի ձեռով իր իսկ պարտեզում: Ամենքը սաստիկ ողբում են նրա մահը, ասում է Պատմիչը, «Յայնժամ ճարտասան ոմն ի մէջ անցնալ, որ տեղեակ էր արհեստական իմաստից, Դավթակ տնուն կոչեցնալ, հնարագիւսակաւ վարժիւք յաջողակ, և վերժանալան քերթութեամբ յառաջադէմ: Որ և առատաբեր ի բանիցն պաճուճանս ճարտարութեամբ էր քաջապէս հրատարակող՝ լեզու ունելով մամս երազագիր գրչի: Սա յօլովուք առևարք ժամանեալ յամէր ի դրան տըրուհի: Արդ՝ իբրև հասանէր օրհասական շուկն ի վերայ արևելից աշխարհիս սուկս յանկարծահաս սպանման մեծի զօրավորին»:

¹ Մանրամասնութիւնները տեսնել Մ. Արեղյանի «Հայոց լեզվի տաղանթութիւն» (ժողովրդայն, Երևան 1933, էջ 320—340):

² Ամբողջը աղված է միայն այդ դրքի առաջին հրատարակութան մեջ: «Պատմութիւն Աղուանից-բարեալ Մովսէսի Կաղանկատուացու», ի լոյս ընծայեաց Յ. Վ. Շահան-զաբեան, Փարիզ 1880, Ա. հատար, էջ 354 և հետո:

յայնժամ սխառ նա երգել ըստ արժանիեաց զլիակարգութեանց զորքս զայս ի վերայ բարեացապարտն Զեանշէրի, և առէ այսպէս...: Բերված է հետո Ողորդն:

Մովսէս Կաղանկատուացու աղբյուրը Զեանշերին ժամանակակից է, և, ըստ այդ վկայութեան, Դավթակ քաղաքը և շատ օրեր ժամանակավորապես մնալիս է եղել մեծ իշխանի պալատում: Պատմիչը մեծ գովեստներ տալով հանդերձ՝ ցավով է հայտնել ուրիշ մանրամասնութիւններ այդ ճերթոցի վերաբերյալ: Բայց որ նա երկար օրեր հյուր-տիրիւ է մեծ իշխանի մոտ, դրանից պետք է հետևցնել, որ նա հայտնի ոմն է եղել:

2. Ողորդն:—Նրա այս դամբանական Ողորդն՝ արժանի է ատենձին ուշադրութեան: Դա մի ապացույց է, որ կարելի չէ ասել, թե մեր բոլոր հին ճերթողներն իրենց արվեստը դարձ գրած լինին միմիայն կրոնական բովանդակութեամբ ոտանավորներ—հոգևոր երգեր հորինելու: Արդարև կենդեցական խնդիրներն առաջնակարգ կարևորութիւն են ունեցել նրանց համար, բայց կենդանի մարդիկ չէին կարող տնտարբեր մնալ դեպի կյանքի այլ կողմերն ու գեպքերը: Նրանցից մեկը կամ մյուսն իր զրիչը նվիրել է, հարկով, նաև ժամանակակից աշխարհիկ նյութերի: Բայց որովհետև արապ-ղրադներն եղել են կրօնավոր և իշխոյն եղել է կրոնական օգին, ուստի նման բովանդակութեամբ ճերթվածները չեն պահվել: Դավթակի Ողորդն ժիակ այդպիսի հնադույն չափանքն բանաստեղծութեանն է, որ հասել է մեզ, —մի կողմ թողած ժողովրդական ավանդական վեպերի միացորդները: Իր դարի համար շատ բնական է, որ մեր այս բանաստեղծի ճերթվածը նույնպէս անգործիւ լինի կրոնական իդեոլոգիայով ու Ս. Գրքով և հորինված լինի հոգևոր երգի ձևով: Բայց ինչպես էլ լինի, դա կրոնական երգ չէ: Ողորդից երեւում է նրա հեղինակի, Դավթակի հմտութիւնը: Նա ձանթ է հունական արվեստին, գուցե իմացել է նաև հունարեն լեզուն: Այդ դարում դեռ չէին պահպանում հունարեն գիտցողները: Նա մեծ գործավորն Զեանշերի համար գրում է.

Ներկէր ի ժամբին, այլ հոգւոյն արթնութեամբ

Վարէր զկնաս զԱրևսի ի յճ աստեղացն՝

Գաջութեամբ բերելով գուշիմութեան ծաղիկն:

Արեւը (Մարս) պատերազմի աստված էր. նա պատկերացվում էր ոտքից զուլիս գինված. ոտքի տակ ունենալով մի աքաղաղ իբրև սիմբոլ

1 Ժամանակաշրջանը ցույց է տալիս ուրիշ տեղից եկած լինելը: Իսկ այստեղ ըստ յ, որ նշանակում է Եւրասիայ, համարն զարծածիւմ է սերկար միայն իմաստով, առանձնապէս երբ մեկը գնում է մի տեղ վերադառնալու մօտով, բայց երկար մնում է այնտեղ. որինով՝ Վարդ Հարանց, Ա. 203, 303, 401. Արա Մարտիոսն ասում է Սերապիոնին, որ եկել էր նրա մոտ. «Փաթով երթիցես ի խաղաղութիւն և մի յամենցես առաջ: Հիմա եղբայրն և յամենաց անգը: Այլ՝ զրգից է օրինակներ բերվում, արովհետև այժմ այդ ունիմ ձեռք տակ: Բայց հուշիւ հարելի է գանել և յառ տեղ, օրինակ՝ Փ. Բուզանդ. Գ. 20. Արևի թագավորը Եւր զորքով գնում է Հայաստանից զուրո օգնելու պարսիկներին. հայերը համենում են շուտով վերադառնալ հայրենիք. «Զի լաւ հաշուէին դեռանելն առուել քան զյամելն յառար աշխարհին»:

արքայազն և կոպի եռանդի։ Անշուշտ, Դավթակին ծանօթ է եղել այդ պատկերացումը։ Բայց նա այդ դիցաբանական տեղեկությունը կարող էր և հայ թարգմանություններից առնել, և չունակած արվեստն իրեն զգալ է տալիս քերթվածի ամբողջ ընթացքում։ Այստեղ դառնում ենք նյութի բաշխումն, մասերի դասավորություն ու մշակումը ըստ ճարտասանական արվեստի։ Բավական է միայն այդ համեմատել թեկուզ Ազոնցի «Ճարտասանականության մեջ բերված կանոնների հետ», և կերևա Դավթակ ճարտասանի արվեստը, և կիմացվի, որ իսկուպես նա «տեղեկ է տրհատական իմաստից» և «հնարագիւտակ վարժիւք յաջողակէ։ Հին հունական դիցազնեցությունների սկզբում բանաստեղծները դիմում էին մասային, որ երգի։ «Ձաքիւլիւայ Պելեստինն, աստուածուհի զքէնն երգեա...», նույնպես վարվում է և մեր այս քերթողը, բայց ոչ մեքենայաբար դիմելով մուսային։

Աստուածային բանին արուեստաւոր հագի,
Յօրինեա իմաստիւ զտխրական երգմունս,
Ջի սպալի ձայնիւ անպաղար ողբասցունք
Ի վերայ դժնդակ կորստեանս մերումս

Հունական մուսային փոխանակել է, ուրեմն, աստուածային բանին արուեստաւոր հոգին։ Հունական ձևն առնված է ըրիստոնեական բովանդակությամբ։ Շարունակության մեջ անմիջապես բերում է տխուր երգի պատճառը։

Բեկումն մեծ, որ եղև արևելից աշխարհիս,
Եւ աղաղակ կործանման հնչեաց ընդ երկիր.
Ազգք և ազինք լուիցեն դառաբոս իմ,
Եւ երկրածինքս ամենայն ողբասցեն ընդ իս.
Դարեցաւ վէմն կենդանի և հօր,
Եւ պարիսպն ամրութեան խորտակեցաւ.
Աշտարակն բանաւոր տապալեցաւ.
Եւ ցանկն շինութեան խրամատեալ քակեցաւ.
Դարձաւ ի դառնութիւն խաղաղութիւն մեր,
Եւ դուռնք հինից տեղասցին ի մեզ.
Ջի մեծասքանչ աէրութիւնն կործանեցաւ.
Եւ հրաշալի պետութեան շիջաւ ճառագայթս։

Հետաքրքիր է այն, որ Ջիվանդերի մահվան հետևանքը պիտի լիներ աշխարհի խաղաղության վերացում և հենքերի հարձակումը։ մի ավնարկ հոնքերի ասպատակության, որ նույն դարում հաճախ տեղի էր ունենում Աղվանից աշխարհի վրա։ Վերջում ևս հիշատակում է նույնը. «սառ ոչ երևելդ տապարաւ Հոնաց զկոտորումն նոսնենաց առնեն»։ Որպեսզի իր ողբն ազգի, ինչպես դամբանական հորինելու արվեստը պահանջում է, նա սպանվածի գովքն է տալու և անպատճառ եղբորական եղբուցությունը։

¹ Ճարտասանության բովանդակաւ ի հինգ զերք, ի Հ. Ստեփաննոս : վաթսուհեա վաթսուհեա Ազոնց, Վահեմիկ 1775:

էր նստեալ որպէս առիւծ ի մորուջ,
Եւ լսեալ՝ ի նմանէն սարսէին թշնամիք.
Տեօրք տոհմից և իշխանք տմենայն
Երկիւղիւ և սիրով հնազանդէին նմա:

Նա զորէղ է և իմաստուն, նրա համբավը տարածվել է ամբողջ աշխարհը... Առանձնապէս աչքի է ընկնում զերթվածի այն մասը, որ ճարտաստնները կոչում են «կրից տեղի», որով ձգտում են «կիրք», այսինքն զգածմունք տառջացնել ունկնդիրներին մեջ, Այդ «կիրքն» է բարկությունն և տեսլությունն չարիք գործողի համար: Քերթողը լցված է վրեժխնդրության հուզումով, ցանկունում է մարդասպանին հառուցանել իր արժանին, բայց նա փախել է: Եվ ահա նա անհծ է որ. թափում է այդ եղեռնազորի զլիւն: Այդ անհծն, աստվածայնչյան եղանակով ողված, մի զորեղ հատված է, որի նմանը մեր հին բանաստեղծության մեջ ունի միայն Ներսես Շնորհալին.

Ծնունդ չմը որ մեղաւ նմա,
Որդի անօրէնութեան որ չարչարեաց զնա,
Անիծիւք պարուրեալ զնապէ՛ ընդ երկիր,
Եւ հայենի երերմամբն վարանեալ շրջեսցի:
Կարկեսցին շաւիղք փախստեան նորա,
Եւ թաւունք երկնից ճախրեսցեն ի վերայ Կորա.
Ազաւք ձորոց սլասցին ի նմա,
Եւ գազանք վայրի սպասեսցեն նմա:
Հօւրն Հերովդէի տաքեսցի նմա,
Եւ ծնցին ի նմա որդունք և մկունք.
Աղեկէջ տոյորմունք բորբոքեալ ի նմա՝
Կերիցեն առ ժամայն զտիրասպան մարմին նորա:
Ձեռն որ ձգեցաւ ի սպանանել զտէրն,
Եւ ոտք որ կռեցին զհրաշալի պատկերն,
Ուրկածին ախտիւն եռացմամբ դօսացեալ՝
Յարեսցին ի նա ցեցք չարակեղ խոցոտմամբ:
Ղօդեալ հանդիցէ՛ ընդ հովանեաւ դժնկի,
Եւ կորիւնք իժից մեղիցն նմա՝
Թոյնք քարբից հեղցին գնովաւ,
Եւ սաստկագոյն ուռուցմամբ հերծցեն զնա:

Բանաստեղծն իրավունք է համարում այսպիսի անհծներ տալու. դի տերադործը մի սոսկ իշխան չի սպանել, այլև մի առաքինի մարդ: Եվ նա զօպելով իր բռնկումը՝ սկսում է մեղմ ցավով գովեցակի Ձեռնշերի բարեմասնությունները, ապա նկարագրում է մեռելից հետո մնացողներին — ժողովրդի անմեղք արարածները.

Միբով քո այրին սիրելիք քոյին,
Եւ զսէ՛ր քո անմոռաց ի մտի ունին.

Ո՛ր թէ խուսնկ անժշուութեան
Բաւրեալ լինէաք զո գերեզմանին,
Վերացաւ մեր թագ, վերացաւ թագ,
Եւ փառք վայելութեան ընդ քեզ թողցեալ

Ամբողջ Ողբի եղբակացութիւնն է, թե աշխարհի փառքն ունայն է.

Դե զսնտութիւն նորին [=փառքի] նոր ուսեալ,
Թէ չունի երբէք ումեք սոստ մեալ
Դժոյցր էր զայլս տակ, ևս և միշտ հեծել,
Բայց քաղցրապոյն ևս ընդ քեզ մեռանել:

Դավթակի տալ «Ողբքն» իբրև բանաստեղծութիւն տգիտ է իր խոր և անկեղծ զգացմունքով, իր մտքի գլուսերով և ընտրական տխուր, անհեղինակ մեջ՝ բուն գեղումով: Բանաստեղծն ուշադրութիւն է դարձրել ոչ միայն բովանդակութեան, այլև ձևին, թե՛ պատկերավոր կենդանի ոճի ու պարզ կտրուկ դարձվածներէ և թե՛ վերջին տողերի մեջ հանգեւ երևան բերող ոտանավորի նկատմամբ: Վերջինս նույն տեսակի է, ինչ որ Կոմիտասի «Անձինքի»ն: միայն Դավթակի «Ողբքն» մեջ վերջում բոլոր տները քառատող չեն և «իթմ» արտացոլած է: Բացի ոտանավորից՝ այս «Ողբն» իր ներքին հասկութեաններով էլ կրում է նույնպիսի դրոշմ, որ ունի Կոմիտասի քերթվածը, Ինչպէս ժամանակի ոգին պահանջում էր, նարտասան Դերթողը, որ անշուշտ ուսած և վարժված է եղել եկեղեցական դպրոցում, աշխարհիկ նյութի մասին երգել՝ է քրիստոնեական հայացքով ու Մ. Դրբի ազդեցութեամբ և նույնիսկ մարդասերական դուշակութեամբ բացատրելով ժամանակակից եղելութիւնը: Եվ ինչ որ էականն է՝ Կոմիտասը երգում է, թե սնտոտի է անցաւոր մեծութիւն», նույնպէս և Դավթակի «Ողբքն» մեջ եղբակացութեմ է սնտոտութիւնն այս աշխարհի փառքի, որ երբեք չի մնալու ոչ ոքի: Այդպէս էլ պետք է լինել, քանի որ այդ ժամանակ քրիստոնեական հոգեւորութեամբ տոգորված էին աւանսարակ:

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

1. Ինքնակենսագրութեանը և կենսագրութեանը:— Դավթակեանական խնդիրներէ բոլորը շրջանում իբրև մի բացասութիւն բոլորովին ուրույն կերպարանքով հանդես է եկել Անանիա Շիրակացիին: Նրա բազմաթիւ երկերն տոնածին գրական արժեք չունին, բայց շատ նշանակալից են կույտութեան պատմական տեսակետով: Նա առաջին հայ բանագիրն է: Եւ առաջին տիեզերագետն ու հայտնի տոմարագետը: Շնորհիվ այն հանգամանքի, որ նա հետեւելով, անշուշտ, Մ. Խորենացուն, թողել է մի փոքր ինքնակենսագրութիւն՝ իր ուսանելու մասին, մենք ծանոթ ենք նրա կյանքի առաջին

¹ Անանիայի Շիրակեանայ Մնացորդ բանքը, ի լոյս էած * Գ. Ս. Պետերբուրգ 1877, էջ 1. և Ա. Անանիայի Շիրակեանայ, երկը երանելի վարդապետի, Վասն ուղիւս-թեան կենսան, Ուրիշ ձեռագրի մեջ՝ «Անանիայի Շիրակեանայ երկը երանելի վարդա-

յըջանին: Նա իրեն կոչում է իր ինքնակենսագրության մեջ. «Անանիա Շիրակվանցին կամ Շիրակացին»։ Իսկ «Ի Զատիկն» ասացվածքի վերջում տնվանում է իրեն «Անանիա որդի Յովհաննիսի Շիրակայւոյ»։ Այսպես է և մի քանի ուրիշ աշխատությունների վերնագրերների մեջ¹։ Ուրիշ հրկերի վերնագրերների մեջ է. «Անանիայի Շիրակուհւոյ», «Անանիայի Շիրակուհւոյն»², Սովորաբար, սովական, նա հայանի է Շիրակացին անունով։

Նա ծնվել է Շիրակի՝ կամ Շիրակավան կամ Անեից գյուղում, հավանորեն 7-րդ դարի երկրորդ տասնամյակի մեջ, Ավարտելով «գրաբուսթիւն մերոյ» ազգիս Հայաստանեաց և հմտանալով Ասովածաշնչին, նա ցանկացել է ավելի մեծ գիտություն ձեռք բերել։ Մտածելով, թե թիֆլս է մոտր ամենայն իմաստիրոհութեան առանց թուոյ, առանձնապէս շատ փափաղել է նա «համարողական տրուեստին», (որ է հունարեն՝ տրիթեստիկոն տեխնիկոն, — համարելու արվեստ, թվերի ուսում, այժմ ասում ենք՝ թվաբանություն)։ Եւ ի Հայս ոչ գորի մարդ որ գիտակ էր իմաստասիրութեան և ոչ գիրք տրուեստից գորի յաշտարհան, — ասում է նա։ Ուստի նա գիմում է Հունաց աշխարհը։ Թեոդուպուսում (Կարին քաղաքում) եկեղեցական գրականությանը հմուտ մի մարդ, անունը Նիդիպար, հայտնում է նրան, թե Զորորդ Հայքում կա Փրիստոստոս որ անունով մի «համարող», այսինքն՝ արիթմետիկոս։ Անանիան գնում, նրա մոտ մնում է վեց ամիս, բոլոր տեսնում է, որ նա ընդ ունէր զբովանդակ արուեստն, այլ աստի և անտի ծայրաքաղս։ Նա գիմում է Կոստանդնուպոլիս։ Այստեղ պատահում են նրան իր ծանոթներից մի քանիսը և ասում են, թե ինչու է նա այնքան ճանապարհի նեղությունը կրել, քանի որ, — ասում են, — մեզ մոտիկ Պոստոսի ծովեկերում, Տրապիզոնում է Բիզանդիայի ուսուցիչ Տրուքիոսը, որ լի է իմաստությամբ և գիտակ է հայերեն գրաբությանը։ Երբ Շիրակացին նրանց հարցնում է, թե որտեղից գիտեն այդ, նրանք պատասխանում են. «Եւստ ճանապարհարդներ տեսանք, որ նրա մոտ էին եկել նրա մեծ գիտության համար։ Այժմ էլ մեզ նավակից եղավ Կոստանդնուպոլսի Հայրապետի սարկավազ Փիլագոր, նա շատ մանուկներ էր տանում նրա մոտ՝ ի աշակերտություն»։

Անանիան գնում է Տրապիզոն և գտնում այդ ուսուցչին սուրը նվազինեի վկայարանում, ու պատմում է նրան իր նրա մոտ գնալու նպատակը։ Նա սիրով ընդունում է Անանիային և ուրախանում է, որ իր միջոցով այն արվեստը պիտի տրվի սուրբ Գրիգորի վիճակին, Հայոց աշխարհին. «արով-

պետի, Վասն արդեութեան կենաց իւրոց. եւ Անանիա Շիրակացի ի յԱնանիայ գեղջէ որ բաւարարեցի զգրութիւն մերոյ ազգիս Հայաստանեայց Տեա՛ 9. Տ. Մ. Կ. Բ. 11. — Անանիա Շիրակացի, Վաղարշապատ 1896, էջ 11. Արտատպ. Նույն թվի «Արարատից», համար 4 կենսագրութեան մի ուրիշ վերադրում է, փոքր ինչ ավելի ընդարձակ։ Տեա՛ 2. Տ. Բ. 11. Կ. 1. Վիեննայի Միլիթ. Ձեռ. ցուցակ։

¹ Անգ. էջ 20. Կ. 15, 1.

² Անանիա Շիրակացի, Տեղեկագրերու թիւն և ամար, աշխատութեամբ Այ. Ար. Բաւմայանի, Երևան 1940, էջ XI, 1.

հետեւ,—ասում է նա,—ես իմ երիտասարդության ժամանակ շատ եմ կացել Հայաստանում, և ագիտություն էր տանտեղս:

Տյուքիկոսը սիրում է Անանիային, ինչպես իր որդուն, սովորեցնում է նրան իր բոլոր իմացածները: «Եւ ուսայ լիով զորուեստ համարողութեանս: Ութ տարի Անանիան մնում է նրա մօտ, սովորում, հմտանում է՝ կարողով շատ գրքեր, «որք չէին թարգմանեալ ի մեր լեզուս,—ասում է նա:—Զի կայր առ նա անչափ գրեօնք, զազանիք և յայտնիք, (եկեղեցականք) և արտաքինք, արուեստականք և պատմագիրք, բժշկականք և ժամանակագիրք: Եւ ի լ'նչ մեկ մեկ անվանեմ,—ավելացնում է նա,—որովհետեւ ոչ մի գիրք չկար, որ նրա մօտ չգտնվեր: Եւ նա թարգմանության աշակերտի շնորք ունեւ: Երբ կամենում էր հունարեն գրվածները հայերեն թարգմանել, կանգ չէր առնում, ինչպես ուրիշ թարգմանիչները, այլ հայերեն լեզվով կարգում էր ինչպես հայերեն գրվածները: Եւ նա պատմեց ինձ, թե ինչպես է հմտացել հայ լեզվին և այս գիտությանը: Առաջ թե՛ Ես երիտասարդ ժամանակ Տրասիլոն քաղաքում կենում էի Հովհաննես գորավաւրի դռանը, գինձոր էի դարձել Հայաստանում և երկուր ժամանակ, մինչև Մորիկ թագավորը, մեռլով այնտեղ՝ սովորել եմ հայ լեզուն և գարությունը: Իսկ երբ պարսկները հարձակվեցին հույների վրա, վերավերվեցի պատերազմում. փախա Աստիոք, և բոլոր ստացվածքներս ավարի ժանվեցին: Այն ժամանակ ես Աստուծոց խնդրեցի վերադառնալ բժշկություն և ուխտեցի ասելով. Եթե ինձ կյանք շնորհես, ժողովուրդ գանձեր չեմ ժողովիլ, այլ կհետեմ գիտության գանձերին... Ողջանալով՝ գնացի Երուսաղեմ քաղաքը, այնտեղից Աղեքսանդրիա, և այնտեղից Հռոմ. և մի ժամանակ մնալով այնտեղ, դարձա Կոստանդնուպոլիս և գտա իմաստասերների քաղաքի ուսուցիչ Աթենասին, մի երևելի մարդու, և նրա մօտ ուսման մեացի ոչ սովակով տարինեւ: Եւ կտառայալ իմաստությամբ դարձա այս տեղս: Եւ սկսեցի վարդապետել և սովորեցնել:

«Սակավ տարիներից հետո,—շարունակում է Անանիան,—վախճանվեց վարդապետը. և նրա աշակերտներէջ ոչ ոքի նմանը չգտնելով՝ թողալիս ու իշխանների հրամանով հրավիրակներ ուղարկվեցին, որպեսպի նա (Տյուքիկոսը) գնա նստի իր ուսուցչի աթոռին, բայց նա հանձն չառավ ասելով թե՛ Ես ուխտել եմ երկնավոր թագավորին, որ չհեռանամ այս տեղիցս: Եւ այնուհետեւ այնտեղից (= Կոստանդնուպոլիսից) ու բոլոր աշխարհներից, նրա ծովածավալ գիտության համար, նրա մօտ էին գալիս ուսանել:

«Եւ ես տրուպս հայերից,—շարունակում է Անանիան,—նրանից ուսա այս գորավոր արվեստը, որ թագավորներին է ցանկալի, և մեր աշխարհը բերեցի առանց որևէ մեկի ոգնության, միայն իմ ցանքով, աստուծու ոգնությամբ և սուրբ Լուսավորչի աղոթքով. թեպետ և ոչ ոք շնորհակալ չեղավ իմ աշխատութեան համար, և մեր հայերը չեն սիրում իմաստություն կամ գիտություն, այլ ծռւյլ ու ձանձրացող են: Որովհետեւ երբ Հայաստան եկա, շատերն եկան ինձ մօտ ուսանելու, բայց մի քիչ զլիւի ընկնելուց հետո՝ չմնացին, որ այս արվեստն ավարածն, այլ ինձ թողին ու մի կողմ քաշվեցին, և սկսեցին սովորեցնել՝ ինչ որ չգիտեին և չէին հասկացել:

Գեղձավորներն ու սնահաւաններն սկսեցին գիտնական ձևանալ (գիտություն ձևացնել) և մարդկանցից աւրբի (—վարդապետ, ուսուցիչ) կոչվել: Իմ վրա էլ իրենց սարքած պարսավանջներ են առում: Իսկ ես նրանց պես չարություն չունեի սովորեցնելու և ուսուցանելու վերաբերմամբ, այլ մտաբերում եմ անբուժական խոսքը, որ ասում է՝ Ի՞նչ է վերսկսողությունը, և ես կգամ սովորանեցրով կպահանջեմ: Ապա ուրեմն ես չեմ արգելի ոչ ոքի, որ սովորել է ուղղում: Եվ ես այս՝ տնտես հիշատակ եմ թողնում ձեզ, վարդապետներ, մի արգելե՛ք ուսումնասիրներին և փափագողներին, և հատուցում կառնե՛ք Քրիստոսից, որ ձեր շնորհատու է:

Գրեթե ամբողջ բերվեց այստեղ Անանիայի ինքնակենսագրությունը, զի դա մի հետաքրքիր գրական հիշատակարան է ոչ միայն այդ լուսավորել Անանիայի իրեն համար, այլև այնու, որ պարզ ու հասարակ, բայց անկեղծ լեզվով բաց է անում մեր առաջ Հայաստանի մտավոր վիճակն այն ժամանակին: «Տգիտութիւն էր ի նմա», այսինքն Հայաստանում, ասում է Տյուքրիկոսը Մորիկ կայսրի (582—602 թ.) ժամանակի համար: Դա իր ամբողջ ծավալով վերաբերում է միայն համարողական արվեստին, որի մասին է խոսքը, և որի համար Անանիան ոչ մի գիրք չի գտել Հայաստանում այդ ժամանակ: Անշուշտ, տոմարագիտությանը բոլորովին անծանոթ չեն եղել: 584 թվականին Դվինում հայ տոմարագետները կարգավորել են հայկական տոմարը, և հաստատել Հայոց թվականը 552 թվականից սկսած: Բայց համարողությանն ուսում է չի ավանդվել վարդապետարաններում: Անանիան 7-րդ դարի առաջին երեսնամյակին առել է միայն ուսումնա Ս. Գրքի և հայկական գաղության, վերջինիս մեջ նաև հայերեն թարգմանված զբոսքերի: Նա չի գտել Հայաստանում նաև իմաստասիրությանը մեծ հմտություն ունեցող գիտակ անձեր: Եվ հասկանալի է այդ: Թեպետև եղել են թարգմանություններ, բայց այնպիսի հունաբան լեզվով, որ մեր փիլիսոփաներին հնչու չէր միշտ դրանց վրա իմաստասիրությանը գիտակ, հմուտ դառնալ: Բայց Շիրակացու երևան դալն ինքը մի ապացույց է այն կուլտուրական շարժման, որ հայ կյանքն անեցել է 6-րդ դարի վերջին քառադրից ի վեր: Դրան ապացույց է և այն, որ եղել է ձգտում սովորելու նույնիսկ համարողություն: Այդ պարզ երևում է Անանիայի խոսքից, որ ասում է. «Իբրև եկի ի Հայս, բազումք եկին առ իս յուսումն»: Նա նեղանում է, որ իր աշակերտները երկար չեն մնացել իր մոտ, որպեսզի իր արվեստն ավարտեն, այլ հեռացել են և թերուս կերպով սկսել են իրենք էլ սովորեցնել: Որ Հայաստանում չի եղել համարողական արուեստին ուսում, այդ գործառնալի չէ, Հույների մեջ անգամ այդ ժամանակ դժվար է եղել գտնել այդ գիտությանը և ընդհանրապես գիտությունները հմուտ անձեր: Այդ շատ պարզ տեսնում ենք հենց Անանիայի ինքնակենսագրությունից. նա երկար որոնումներից հետո՝ միայն մեկին, Տյուքրիկոսին գտնում է Տրապիզոնում: Նույնը շատ լավ երևում է այդ Տյուքրիկոսի կյանքից. ուսանելու համար նա գնում է Երուսաղեմ, այնտեղից՝ Ալեքսանդրիա, այնտեղից՝ Հռոմ, ապա Կոստանդնուպոլիս, ուր գտնում է վերջապես իր ցանկացած ուսուցի-

չը՛ր Սրա վախճանվելուց հետո՝ Կոստանդնուպոլսում ուրիշ հմուտը չի գտնւ-
վում:

Անանիան, ցաւօք, թվականներ չի հայանում իր մասին: Հեազա
դարերի պատմագիրները հաղորդում են, որ Անաստաս կաթողիկոսը
(682—688 թ.)¹ և նախնարարել է Անանիա Երևակացուն (որին անվանում
են նաև՝ Անեցի կամ Բլանչից գեղջէ)՝ կորզավորել Հայոց տոմարը, Հայոց
քաղաքական տարեհաշիվը շարժական էր, այսինքն՝ բոլոր տարիները
բաղկանում էին հավասարադաս 365 օրերից, նահանջ տարի չկար: Կաթողի-
կոսը կամեցել է Անանիայի ձեռով այնպես կարգավորել հայոց քաղաքա-
կան տոմարը, որ տեղաբաժնի տարեկանը կազմվի, ըստ հռոմեականի: Անանիան
այդ աշխատանքը կատարել է: Կաթողիկոսը կամեցել է այդ փոփոխու-
թյունը ժողովով ընդունել և հաստատել տալ: բայց նա, դեռ ժողովը չդու-
մարած, վախճանվել է, և Անանիայի աշխատանքը մնացել է առանց գոր-
ծադրվելու:

Երկրորդ թվականը, որ իմացվում է Անանիայի մոտին, հետեյում է:
Նրա անունով մնում է մի ժամանակագրություն, որ Աղամից օկաած՝
հասնում է մինչև ՃԼԴ=134+551=685 թվականը: Դրանից պետք է եզրա-
կացնել, որ այդ թվականին դեռ կենդանի է եղել Երևակացին: Այդ աշխա-
տության վերնագիրն է՝ «Մովսէս Խորենացւոյ և Անդէասի, բայց
Ճաւընտրի ծայրին, ցանկի մեջ նշանակած է այսպես. «Նորին Անանիայի
պատմադրականք: Մ. Խորենացին և Անդրեսսը հիշված են իբրև աղբյուր-
ներ, և՛ իսկապես սկզբի մասը բառացի առնված է Մովսէս Խորենացւոց,
երկրորդ մասը՝ Նոյի որդիներից սկսած մինչև Աքեմենյան հարստությունը,
բերված է Անդրեսսից, իսկ շարունակությունը Երևակացու գործն է»:

Մ. Խորենացու Հայոց Պատմությունը, ինչպես հրնում է, Անանիայի
սիրած զերքն է եղել: Թվում է, թե Խորենացու ազդեցությունն է երևում
նրա զանգատների մեջ. թվաբանության արվեստը սովորեցի և քերի
յաշխարհս մեր... միայն ջանի... թէպէտև ոչ ոք հղկ շնորհակալ իմոց աշ-
խատութեանս (Հմմտ. Մ. Խոր. Ա. 3. «սկսայց, թէպէտ և ջանիւ, միայն
թէ շնորհակալ ոք մերոցս գտանիցի լեալ աշխատութեանցս»): «Ոչ սիրեն
Հայքս իմաստ կամ գիտութիւնս (Հմմտ. Մ. Խոր. Ա. 3. «Որպէս այժմ՝ և
սա հիննս Հայաստանեայցս լեալ անսիրելութիւն իմաստութեանս»): Անա-
նիա Երևակացու զանգատն իր բծոյ և ձանձրացողս, թմբուս աշակերտ-
ներից, որոնք ուսումը շարունակելու փոխանակ՝ իրենք են սկսում ուսու-
ցանել, հիշեցնում է Մ. Խորենացու խոսքը՝ «Աշակերտք հեղզք աւ ուսուցն
և փոյթք առ ի վարդապետելս (Դ. 68): Իսկ պարսաւանքի ու ծաղրի
նկատմամբ՝ բախտակից են եղել ոչ միայն Մ. Խորենացին և Ա. Երևակա-
ցին, այլ սրանց հետ նաև ուրիշները:

¹ Յեղեկագիր ՍՍՍՄ Գիտությանների Ակադեմիայի Հայկական ֆիլիյայի 1961, № 1
(6), էջ 71՝ «Ժամանակագրական գիտություններ», Բ. Առաքելյանի: Այս և մի քանի ուրիշ
տարեթվեր էլ բերվում են ըստ այս աշխատության:

² Հեղեղ՝ ամսօրեայ 1903, էջ 30, 32. Ձեռք, Կենիքերի հաղվածք՝ «Մ. Խորենացու
Պատմության ժամանակին մասին»: Անանիայի այս աշխատությունը Կենիքերն արգեն
համարել է Առաքելի աղբյուր: Տես նաև Մ. Մ. Բախտակից, «Խորենացու առեղծվածի
յուրմուկ», Երևան, 1940, էջ 106 և հաջ.

Ի՞ր աշխատանքը թշուառներից երևում է, որ Անանիան եղել է մի բեղմնավոր լուսամիտ հեղինակ, սիրող ճշմարտության, ասեցող բռնության, ձգտող բնությունն ուսումնասիրելու, և մտածողականության զարգացման ընդունելով հանդերձ մեծ մասածողների և Ս. Գրքի հեղինակությանը՝ նա կուրորեն չի հետևում հեղինակավորներին։ Նա խռակապ հիմք է. ունի իր համոզումները, բերելով ուղիների կարծիքները, երբեմն նույն խնդրի մասին մի քանիսինը, ինքը քննադատելով մերժում կամ ընդունում է մեկը կամ մյուսը։ Այսպես, օրինակ, նա չի ընդունում ուրիշների կարծիքը, թե բարի փրկականները երբորդության խորհուրդն էլ իմացել են, նա այդ հերքում է։ Երբեմն նույնիսկ Առավածաշնչի ասածն էլ չի ընդունում նա։ Այսպիսի գեղեցիկում, ինչպես միշտ, օգնության է հասնում մեկնում։ Թյուր, Այսպես, օրինակ, վերաբերմամբ բերորդ երկնքի, որ հիշում է առաքյալ Պողոսը՝ «Եւ վասն երբորդ երկնի արտաքինքն ոչ հաւանին, և ոչ քնապիր ինչ մեզ յայտնեաց, Բայց վասն ի Պողոսէ կոչելոյ՝ ես այսպէս հաւանիմ, եթէ զերկրէս ասիցէ, զի ուր աստուած է՝ նա երկին կոչի։ Եւ փրկչին մերոյ Քրիստոսի ասաւածոյ ի վերայ երկրի շրջելով՝ երկին տեսմ կոչի ի Պողոսէ...»¹։ Բերելով մի շարք կարծիքներ արտաքիններից, թե ինչպես կամ ինչի վրա երկիրը տեղում մնում է, հիշում է և Սաղմոսի խոսքը, թե՛ «ի վերայ ծովու հիմունս արկ նմա [երկրի]»,—Առաված ծովի վրա է ձգել երկրի հիմքը։ Անանիան այդ չի ընդունում, բացատրելով այսպես. «Կարծեմ թէ վասն զի խառն ընդ ասնդարամեաս է ջուրն՝ զայնմէ ասիցէ. զի ջրոց ի վեր ունել զերկիր՝ տարակուսին միտքս, թէ զիմքդ ի վերայ այնչափ բնութեան ջուրցն կայցէ անչափ ծանրութիւն երկրիս և ոչ ընկզմի, և այլ զերձեալ փրծանի յամենայն կողմանց սորեալ և ընկզմեալ ի ջուրս»²։ Կնշանակի՝ Անանիան որոշ չափով ազատախոհ է. նա բոլորովին չի կաշկանդված Ս. Գրքով։

Նա հետևում է եկեղեցու առաջին հայրերին ու վարդապետներին, որոնք հին իմաստասերներից շատ բան առել են եկեղեցու մեջ (բնկալեալ յեկեղեցի առին), «մեր հոգևոր հարանցն աւաջնոցն ընկալեալ ի նոցանէ գորտմադիր ասացեալսն», և այդ «վարդապետք եկեղեցւոյ, ուսումնասիրութեան դանձինս իւրեանց տուեալ՝ անցին ընդ ամենայն ճշմութիւնս, պահելով զատուտեանս հաւատս՝ մկրտեցան ի խորս գիտութեան. քանզի և գրիվ օրէնքս ոչ ընդգէմ են ընտկան իմաստութեան» (վարիանս՝ «քանզի գրաւոր օրէնք ոչ ընդգիմանան ընտկան գիտութեանն»)՝, «Այստեղի միաբանութիւն է, զաստիարակ եղեն մեզ առաջին իմաստասէրքն»,—եկեղեցու վարդապետներն իրենց նվիրելով ուսումնասիրության՝ ամեն ջանք թողնելին, և աստուծու հովտաքը պահելով հանդերձ՝ միջամուկ եղան գիտության խորքը. որովհետեւ գրավոր օրենքը զեւ չի բնական գիտելիքն։ Այս ուրեմն եթե այդ երկուսն այդպես միաբան են միմյանց հետ, մեզ համար դատարարակ են դարձել առաջին իմաստասերները,— եզրակացնում է Անա-

¹ Ան. Երբ. Տիեզ. և ասմբ. էջ 8 և հո. Մեջաբարք Ընեքք, էջ 37

² Անդ. էջ 11 և հո. և Անդ. 38 և հո.

³ Անդ. էջ 20, 42.

նիսան և ավելացնում է. «Պահելով դատաւածային հաւատան, պարզով ծայրին առցնելով և հաստատուն աւրամտովն միշտ դաւարաբերք պարզութեք գտցուք ի գիտութեանսն, — աստվածային հովատը պահելով՝ ծայրի պարզով [իմաստասերներն ուսուցնով] առցնելով և աւրամտովը [— հավատելով] հաստատուն մտելով՝ միշտ դաւարելով պարզութեք կլինենք զիտութեան մեջ, — Ան աւանդուն գիտութեամբ պարտապաշտ գիտնականի սկզբունքը, որ թաղաւ կերպով արտահայտել է Անանիա Շիրակացիին՝ սրված դավանարանական վեհերի դարձում, Այսու հանդերձ՝ նա բնականաբար իր գարի որդին է, հավատարիմ ժամանակակից քրիստոնեական հայացքներին և մասնավորապէս Հայոց եկեղեցուն, բերենք աշտոյց նրա երկերից մի կտոր:

Աստիճաբար զբնակութիւնս կենդանեաց յերկրի աստի և անտի. և թէ զոն ի ներքոյ երկրի մարդիկ և այլ կենդանիք, որք ընդդիմառանց են մեզ, Որպէս ճանճ զԽնձորով պատեալք, նոյնպէս և մարդիկ զերկրու, և յամառեալ պնդին ասելով՝ եթէ ոչ էին մեզ ընդդիմառանց ներքոյաբնակք, ճամ արգիւնք արեգակնոց տայր լոյս զկէս առաւր, յորժամ ստուերաւն դմեզ գիշերացուցանէ. զի յանոցուստ արեգական ծախել զընթաց անհնար է տեսիլ Անտութիւն մեծ և առաւել սխալունք թուին ինձ առ ի նոցանէ ասացեալքս. զի թողում ասել զյանդիմառութիւն որ յաստուածային գրոց, Բայց յորժամ մարդկային իմաստիւք հայեացիս, յայտնապէս երեւի անմտութիւն ճոռից նոցա: Զի թէ ասանէ իսկ յաշխարհի բողոքում այն է՝ որ անբնական և անկենդանեաց տայ արեգակն լոյս քան որ քնաւորքս են տեղիք և յորում վոն կենդանիք, Որպէս հիւսիսայինն ի սառնամանեացն է անկենդանիս, Եւ կամ հարաւային երկիրն ի յաւելորդ շերմութենէն՝ զոր այրեցողութեան զօրին կոչեն, համ անապատն արեւելից յորում և ի զեռնոց անգամ ոչ երևին, Բայց պարտ է մեզ զերկրայանալ խորհրդոցս իմոց պատմել ձեզ, որ ինչ յաղագս տար եղև:

Եթէ պէտք և լսէի ի մարդարէից և յամենայն աստուածային գրոց, ի վարդապետաց եկեղեցոյ, եթէ ոչ զոն այլ ներքոյաբնակ կենդանիք, սակայն ես հաւանեալ էի ընդդիմառուն մեզ լինել, Եւ ըստ իմոց խորհրդոցս զոցս զաստուածային բանսն ձեռնալ համարէի. Եւ այդ մի զիս եղերէք, սիրելիք, գիտէ ծածկազէտն, զի ոչ ստեմ: Մինչդեռ էի յաղոթս առ առաւուսուն ի վկայարանի սրբոյն Եղիշեայ, և միտք իմ յայս խորհուրդս ծնէին, քուսն էառ գիտ, Եւ տեսանէի որպէս թէ արեգակն ի ծագելն խոնարհեալ յերկիր իջանէր, Եւ ես յառաջն ընթանայի և ի գիրկն ընդունէի զնա. և նա էր պատանի ամուսնուս, ոսկեզիտակ և շրթունք բերանոյ նարտ որպէս թէ ոսկեզ լինէր ոծեալ. և ինքն սպիտակ և փայլունս զգեցեալ հանգերմս, և լոյս սասանիկ ելանէր ի բերանոյն: Եւ ես ասացի ցնա, եթէ՝ Ի վաղնջուց ցտնկացեալ էի ի ջէն լսել բան. արդ՝ աղէ՝ պատմեա ինձ, եթէ յորժամ ի մէջ ծածկիս մեւ տաս լոյս. զմն այլ կենդանիք ի ներքոյ երկրի՝ եթէ ոչ, Եւ նա ասէ՝ Ոչ, այլ լերանց և ափափայից ձորոց և անձաւաց անկենդանեաց տամ լոյս: Եւ իմ պատմեալ զայս վարդապետին իմում, և նա ասէ ցիս՝ Ընդէ՛ որ ոչ հարցանէիք զայդ, Եւ նա եցոյց ինձ զհառա երանելոյն Ամփիլաքիոսի, որ մեկնէր զգիրս Եսայայ, և ի խոսսե տեառն որ ասէ այսպէս. «ԶԹ՛՛՛՛ վայրք իցեն ուր ծածկեմ ես զարեգակն ի

գիշերի յերեսաց ամենայն կենդանեաց: Արդ՝ պարտի՞ք հաւատալ մեծի վարդապետին և նորուն նմանեաց արանցն աստուածայնոց. և ոչ արտաք-նոցն:

Այս հաավածը մի գեղեցիկ օրինակ է Անանիայի մտածելու եղանակի, միաժամանակ և նրա զբաղման սեփ, թե ինչպես է նա շարադրում: Միամիտ է, բայց այդ միամտութունն իր դարինն է. թե չէ՝ Անանիան երկար խորհող է նույն նյութի մասին, այնպես որ մինչև անգամ երազ է տեսնում: Զգիտի մոռանալ, որ այն ժամանակ երկրագնդի մասին ծանոթությունը շատ նեղ ու սահմանափակ էր. մարդիկ Հնդկաստանի անունը լսել էին, սակավներն էին մուտք գործել այնտեղ, և Միջերկրական ծովից շատ դժուր չէին համարձակվում անցնել:

2. Ծրկերը:—Անանիա Շիրակացուց՝ բացի վերևում հիշված ժամանակագրությունը՝ մնացել են մի շարք ուրիշ աշխատություններ ևս, որոնք արևել ասնյություն ունին համարողության, կամ ամբարագիտության և տիեզերագիտության հետ: Նրա երկերը, սակայն, մինչև այժմ դեռ բոլորը չեն երևում հանված և կարգի բերված: Դրանք հաճախ փոքր մասերով են մնացել և ոչ ամբողջական ձևով: Պարզված չէ, թե արդյոք Շիրակացիի թեքն է այդպես մաս-մաս հորինել, թե հետագայում ըզրվածորեն արտագրություններ են արված: Նրա երկերից այստեղ հիշենք արդեն ազգա-գրվածները:

Ա) Անտեփայի Շիրակայեցու չափաբազի տոացիալ ի յայտնաբերեց տեսնե և փրկչիմ մերոյ: Սա մի ասացված կամ ճառ է, որի մեջ հաշիվ-ներով և պատմական տեղեկություններով ապացուցվում է, որ Մենդյան տոնը պետք է կատարել ոչ թե գեղեցիկների 25-ին, ինչպես վարվում են հույները, այլ հունվարի 6-ին, միևրության տոնի հետ միաժամանակ, ինչպես անում են հայերը, պահելով հին սովորությունը: Այս հառը ծագել է ժամանակի գործնական պահանջից: Հայերի վրա իշխող հույները ոչ միայն զավտարանական խնդիրներ էին հանում, այլև ամենակատարու-թյան օրերի համար նեղություններ էին պատճառում հայերին: Դա մի պատասխան է ուղղված այդպիսի հույներին: «Յայսմ կացցուք հաստատուն անխառնելի,—բացականչում է Անանիան,—և քան և մի լիցի մեզ յերկուս քաժանել. այլ ի միում աւուր արասցուք զմեռնողն և զմիւրաութիւնն. հետեհացուք սրբոց աւագելոցն և երանելիաց հարցն, որ ի նիկիա, և մերոց վարդապետոցն... Յունաց զայս արասցուք պատասխանի... Առ ձեզ այլ ոչինչ ունիմք պատասխանիս, զի ոչ երամայե՞ գործ մշտերտուրեամ, այլ միշտ իշխանաբեռն, քանաբեռն և անարտաբեռն»:

Բ) Անտեփայի Շիրակայեցու չափաբազի տեսնեալ ի գտնիկն տեսնեմ: Պակաս դժվարություն չէր պատճառում այս գտնիկ տոնը, որ կատարված էր զաբանամանի գիշերահավասարի. սրանից հետո եկող առաջին լուսնալուրի ու սրան հաջորդող կիրակի օրվա հետ, կախված էր, ուրեմն, թե լուսնական և թե արեգակնային շրջաններից: Իսկ դրանց հաշիվներն անել հեշտ չէր:

¹ Ա. Շիրակ, «Մանգրդո քանից», էջ 4.

² Ա. Շիրակ, էջ 18.

Անանիան այս ճառի մեջ տեսնում է Զատիկի տոնի պատմությունը, թե թուաթի կամ յուզման, խոսելով և տոմարի մասին, ինչպես և Ալեքսանդրիայում էստ՝ Ալեքսանդրացու նախագահությանը կազմված 582 տարիների շնորհիվ կոչված շրջանի, այլև Ռիդանգիայում իրոն Ռիդանգացու նախագահությանը¹ էստայան շրջանի մեջ մտցրած միտոխոսությունների մասին։ Հայերը 584 թվի ժողովով ընդունել են ոչ թե հունական Վերինյան պատկերը, այլ Ալեքսանդրիայի «էտայանը», որոնք որոշ թվով տարիներից հետո միաժամանակ չէին ընկնում (և ուսումնասիրել էր թեպետիկն ասածը, որ պատճառ էր դառնում մեծ աղմուկների հայերի և հույների միջև)։ Անանիան այս հաշիվների ու խնդիրների մասին խոսելուց հետո՝ ասում է․ «Եվ զի՞նչ պարտ է մեզ զիբրոնին պատմել և կամ ընդդիմանել մեզ, այլ զմարայն ի մարայն քաղցու՞մ տակերտ և հաւտանալու, և մեզ անհասցուք... դճմարիտն»։ Մինչդեռ հույները բռնություն էին գործադրում, Անանիան, սխալ համարելով հանգիստ իրոնի գործը, չի հակառակում, որ հույները դրան հետևեն։

Անանիա Շիրակացու այս երկու աշխատությունները, թեպետ ոչ գումարանապահան բովանդակությամբ, բայց հակադիմադրական, իսկապես հակադիմադրական պայքարի գրականություն մի կարևոր ողակն են կազմում։ Այդ տոնակատարությունների խնդիրը մինչև վերջը հուզումներ է առաջ բերել հայերի և հունադավանների միջև։

Գ) «Ամամիայի Շիրակայնոյ Համարագի յազատ կշռաց և շափուց»²։ Այս գրվածքի մեջ հեղինակը հիշում է գտնադառն ազգերի մեջ գործածված կշիռներն ու չափերն իրենց անուններով ու միմյանց համապատասխանությամբ։

Դ) «Յազատ հարցման և յուզման», թվաբանական խնդիրների մի ժողովածու է ասա Ուրիշ ֆեռագիների մեջ վերնագիրն է։ «Անանիայի Շիրակունայ»՝ յազատ կատարման համարողութեան և կերպից հարցման։ Այս վերնագրից հետո գալիս է մի առաջաբան։ Դրանից երևում է, որ, ինչպես ճիշտ կուհել են³, Շիրակացին խնդիրներից առաջ գրել է թվաբանական չորս գործողությունների մասին, որ նա անվանում է՝ ընդունելություն (— գումարում), բացառություն (— հանում), բազմապատկից և բաժանում։ Վերջերս հայտարարված է և նրա այդ դասագիրքը, տեսական մասը, միայն առաջին երեք գործողությունները⁴, գործնական վարժություն համար հրված օրինակների շարքերով։ Բազմապատկության օրինակը հասցրած է մինչև 80.000.000, Շիրակացու այս խնդիրների ժողովածուն, որ, ինչպես երևում է, ամբողջությամբ չէ, շատ հետաքրքիր մի գործ է թե իբրև առաջինն այդ տիպի աշխատությունը մեր գրականության

¹ Անդ, էջ 27.

² Գումարում հեր—Միւրաշյան, Անանիա Շիրակացի, Վարդապետ 1898, էջ 11։ Արտասպ. նույն թվի «Արտաբան»։

³ Տպված Երևանի Գեո. Համալսարանի Գիտական աշխատությունների մեջ, XI հատոր, 1939 թ., էջ 245 և հետ. Ա. Մ. Արտաշատյան, «7-րդ դարի հայ գիտական Անանիա Շիրակացու թվաբանության գոտիքը», վերջից զբաղված են նաև թվ. խնդիրները և վեց ճիշտմանը, որ խնդիրների առանձին տեսակ է։

մեջ և թե իր բովանդակութեամբ: Շիրակացին խնդիրներին նյութն տուել է իր ժամանակի կյանքից. ռուսի և այդ ժողովածուի մեջ կան բովանդակման շատ տեղեկություններ պատմութեան, սովորութեանների և տեղագրութեան վերաբերյալ, ինչպես են՝ որսորդութեան, վաճառականութեան, գինվորական կյանք, այլև եկեղեցու մասին: Շատ բան պատուել է համադրականների և համադրական պատմական տեղերի շուրջ, 24 խնդիրներից 6-ի մեջ հիշատակվում են այդ տոմարի մարդիկը: Բերենք այստեղ իբրև օրինակ տոմարիին խնդիրը:

«Ա. Հաբյուս. Այսպէս լուսայ ի հաւրէն իմմէ, եթէ ի ժամանակի պատերազմացն Հայոց ընդ Պարսս սաստիկ քաջութիւնք լինէին ի համարականէն Զաւրակայ, որպէս թէ ամառեայ աւուրքք երիցս յարձակեալ ի վերայ դաւառն Պարսից՝ և հարկանէր յառաջնունն զկէս դաւրուն. և ի հետ մտեալ հարկանէր երկրորդունն զչորրորդ մասն դաւրուն. և յերրորդունն զմաստասներորդն: Եւ քաջեալքն անկանէին փախստեայ ի Նախճաւան, թուով ՄՁ. [=280]:

«Այդ պարտիք և մեք իմանալ քնացելովքս, եթէ յառաջ քան զկոտորունն մըշակի էինն:

Խնդիրների վերջում գրված են պատասխանները: Առաջին խնդրի պատասխանն է. «Լուծումն՝ Ա. հաբյուսն. Թուով քան զկոտորածն էին ԲԶԿ [=1760] հեծեալս:

Կան և ավելի բարդ խնդիրներ: Հետաքրքիր է այն, որ, ըստ երևույթի, «Անանիայի ժամանակ չէին ըմբռնում և չէին կարող գրել այնպիսի... կոտորակ, որի համարիչը մեկից ավելի է: Պետք է անպատճառ կոտորակն ունենալ միավոր համարիչ: Այսպես ուրեմն՝ նրանք ասում էին՝ համարակ, երևոր, չորեոր, այսինքն է՝ կեռ, մի երրորդ, մի չորրորդ, բայց չէին ասում՝ երեք քառորդ (3/4): Երեք քառորդի գաղափարը տալու համար սահմանված էին դիմել միավոր համարիչ ունեցող կոտորակների և ասել կես և մե քառորդ և այս երկու թիվը չէին կարող գումարել: Այսպես և, օրինակ, ինք առանձնակերորդ (1/11) կոտորակը պիտի առատհայտեին մի շարք կոտորակներով, որոնց համարիչը լիներ մեկից ոչ ավելի և գումարը հավասար ինք առանձնակերորդի:

Ե) Ա. Անտիոքի Շիրակաւոյ Համարոյի առ յստացեալն: Այս աշխատութեանը, որ բաժանված է Ա—ՁԴ մեծ ու փոքրիկ գլուխների, իսկապես կազմված է երկու մասից. ԺԱ—ՁԴ գլուխները կամ գլխիկները տոմար են, կամ տոմարի վերաբերյալ դիտելիքներ, առանց աղյուսի վերնագրի: Շիրակացին, անուշա, առումար էլ անվանել է այդ: «Հայտնութեան հասի միջ (Ան. Շիր. Մնաց. բանից, էջ 14) գրում է. «Յայտնութիւն ըստ Հայոց փոփոխմամբ է՝ ըստ չորից չորից ամաց, և եթէ զիմըդ դիտելի է. և կամ ընդէ՞ր որ աւելայացեալ ըստ այլոց ազգաց, յիւրում տեղւոյ պատմեցից ըստ կարգի տալարիմ: Իսկ Ա—Ժ գլուխները՝ տիեզերագրութեան է, տիե-

¹ Գ ու ռ ո ս ս Ց հ ր — Մ կ բ ա չ յ ա ն, Անանիա Շիրակացի Արատագ. 1898 թ. «Արատագրութեան» և «պիտի համարներից». Վարդապետ 1896, էջ 10—39:

² Անանիա Շիրակացի, «Ցիւկերագրութեան» և «տոմար», Երևան 1940 թ.:

պերքի նկարագրի ըստ ժամանակի հասկացութեան—կտրճառոտ տեղեկություններ աստղաբաշխութեան, օգերևութեամբաբանութեան (մետեորոլոգիա) և ֆիզիկական աշխարհագրութեան մասին: Այդ մասն ևս չունի վերնագիր. և խոստացեալսն՝ վերաբերում է Ա. Վլինին: Գտ մի անաշխարհ է, որի սկզբը ըստ ասում է, թե կատարում է իր խոստացածը, ապա խոսում է իր աղբյուրների մասին, որոնք են՝ եկեղեցական և արտաքին: Շարազրութեան ընթացքում հիշում է՝ «Հայաստանեայց վարդապետ Սուրբ Գրիգորիոսն, երանելին Բարսեղի «Վեցօրեայք» (այլև Բասիլիոս), և Փիլոն»:

Արտաքին աղբյուրները նա բաժանում է երկու խմբի: Առաջին խմբին պատկանում են «հեթանոսական խելագորութեամբն բանազուգեալ իմաստաւնք, որք զաստուած ոչ կամեցան ճանաչել. և պատճառս լինելութեան ցհիւղէ ասացին և նիւթ գոլիցս եղելոց»:

Անանիան չի ուզում նրանց ասածները կրկնել և հերքել, բաժական համարելով սուրբ հայրերի «կշտամբութիւնը», այսինքն «յանդիմանութիւնը»: Հայոց եկեղեցու համար այդ սուրբ հայրերից մեկն էր արքեպիսկոպոս Նզարի կաղապքին, որ, ինչպես տեսնել ենք, մասնաժաման ցրել է ընդդէմ «հիւղէն ընդունողներին»:

Բայց և այնպէս Անանիան բողոքով չի արհամարհում այդ «զանապառարկեցն բարբաջսն», այլ նրանց կարծիքներն էլ մեկ մեկ մեջ է բերում, որպեսզի զրանով «քաջաւառութիւն վեհագունիցն առաւել զեղեցկապէս երեւցի», կամ «մասն ճոխացուցանելոյ զլուսցն՝ վաթարացն յիշատակաւ»: «Վաթարներին» նա շարազրութեան ընթացքում կոչում է «չար փիլիսոփայք», իսկ «լազերին»՝ «բարի փիլիսոփայք»: Այս վերջիններն «աստուածածնոն իմաստուններն» են, որոնք քրիստոնյա չլինելով հանդերձ՝ «զմի աստուածութիւն խոստովանեցին՝ առնել և ամենակատար, պատճառս ամենայն եղելոց՝ երեւելաց և իմանալեաց», «արարիչն ամենայնի»: Նրանք քաղաքել են «զործով մաքուր լինել յառիտից և յամենայն ցանկութեանց, և ի զրադմանց աշխարհականաց աղտաւալ առանց ամուսնութեան միամտու»: Զմիայնաւորութեան կախալ զվարս, որք զորովայնս դաստիարակեցին պարկեշտութեամբ: Բանդի ոչ միս և ոչ ձուկն ուտէին և ասէին. Մի արասցուք զորովայնս մեր դերեզման ալոց կենդանեաց: Այլ միայն բանջարու և ուտողով ծառաց կերակրէին. նոքա միշտ զհետ բարեաց զործոց երթային. պարապէին զանազան իմաստեից՝ ջննել և ճառել»:

Այսպէս ուրեմն, Անանիա Շիրակացու համար էլ սովորաբար առաջին անաւարակելի տեղը բռնում է Մ. Գիրքը. ապա կարեւորութեան ունեն եկեղեցու հայրերը և ապա՝ բարի փիլիսոփաները: Վերջիններս նրա համար, որ իրենց ընդունած և՛ աստվածութեան, և՛ կենցաղավարութեան վերաբերյալ սկզբունքներով՝ հանդուժեալ են եղել քրիստոնյաներին: «Յնորոց (այսինքն՝ բարի փիլիսոփաներից) և մեր առեալ նիւթ ի մերումս շարագրեացուք բռնի,—զրուս է Անանիան Առաջաբանի վերջում,—սկսեալ յերկնէ և եկեալ յերկիր. և դարձեալ անդէն ի յերկին համարձեալ՝ խորհրդով զարդում հրճեցացոյց, յառաջ խողացուցեալ զբանս՝ ճառ ճառից ելեալ արարից: Առաջաբանի այս աստվածի մեջ ճշտութեամբ բերված է Ա—Ժ ճառերի բովանդակութեանը, որից պարզ երևում է, որ Առաջաբանը վերա-

ընդհանուր է միայն տիեզերագրական մասին, Անանիայի բառով՝ «զարդին»,
և որ սոսմարը հետո է կցված դրան:

2) «Աշխարհացոյց»: Այս անունով քննում է հնուց մի աշխարհագրու-
թյուն, մի շատ կարևոր գործ, որի երկու խմբագրություններ կան—ըն-
դարձակ և համառոտ: Այս երկուսն էլ, ինչպես կարծում են, մեկը մյուսից
անկախ համառոտված են մի նախնական բնագրից¹, Կան հեղինակներ,
որոնք «Աշխարհացոյցը» վերագրում են Մովսես Խորենացուն, ինչպես է և
այդ երկի նորագույն ձևագիրներին մեջ. մինչդեռ հնագույն ձևագիրներն
անանուն ունին այդ գործը: Բայց քննադատ բանասերների մի մասն այն
կարծիքին է, թե «Աշխարհացոյցը» 7-րդ դարի երկ է, և հեղինակն է Անա-
նիա Շիրակացին:

3. Անանիայի տիեզերագրական տեսությունը:—Անանիան սովորաբար
ուրիշների գնահատան կարծիքներ է բերում նույն նյութի մասին, բայց քանի
որ նա դրանցից մեկն ու մեկն է ընդունում, կամ իր սեփական կարծիքը հայտ-
նում, կամ վերջի առնգիտելիս համարում, ուստի նրա աշխատությունը մեջ
երևան է գալիս նրա աշխարհայացքը, որ բոլորովին ինքնուրույն չէ, նա
հետևում է Բարսեղ Կեսարացուն, Փիլոնին, Արիստոտելին և ուրիշներին,
տեղ տեղ նույնիսկ թարգմանաբար: Նրա աշխարհայացքին չպիտի մոտե-
նալ, հարկավ, մեր ժամանակի, տեսակետով, և կամ նշել, թե նրա աշխատու-
թյուններից ի՞նչ ոգուտ կա մեր հասարակության համար. այլ թե նա ի՞նչ
առաջդրյալներ է քաշել իր ժամանակին մի ամբողջական տեսու-
թյամբ մանրամասն և ընդարձակ խոսելով տիեզերքի կազմության և բնա-
կան երևույթների մասին, թե ինչպես նրա երկերի մեջ իրենց գիտական
բացաժողովյալը գտնում են՝ երկինք, երկիր, աստղեր, արեգակ ու լուսին
և նրանց շարժումները, ապա՝ ձյուն, անձրև, կարկուտ, որոտմունք և այլն:

Այստեղ կարևոր չէ նրա տեսությունը բացադրել: Այսքան միայն
ասենք, որ նա խոսում է՝ երկնքի կազմության, երկրի, երկրաշարժի, ձո-
վի, երկնային զարդի (այսինքն՝ արեգակի ու լուսնի և աստղերի), լուսա-
տուներին համակարգության, նրանց շարժումների, դարմանագործի ճանա-
պարհի, բնեության տասուղերի, լուսնի լույսի, լուսնի ու արեգակի խավար-
ման, լույսի ու խավարի մասին և այլն: Այստեղ կանգ չենք առնիլ Անա-
նիայի օգերևութաբանական տեսությունից մասին ևս, որով նա բացատրում է
բնական երևույթները², Այս ասենք միայն, որ նա առանձնապես խոսում

¹ «Զարգ բառ բացայթ թարգմանություն է հունարեն «կոսմոս» բառի, որ նշանա-
կում է նախ՝ «զարգ», «պո»՝ և կազմվածություն, կարգ, տիեզերքի կազմությունը
կամ կարգավորյալ համակարգ, տիեզերք, առանձնապես աստղադարձ երկինքը, «երկնային»
զարգը: Այս երկրորդ նշանակությամբ այդ բառը գործածել է ինչպես կարծում են,
առաջին անգամ Պիթագորաս փիլիսոփան, և դրա այդ իմաստով կազմված են կոսմոգրա-
ֆիա—տիեզերագրություն, և կոսմոլոգիա—տիեզերաբանություն:

² Տղադրված է 1) «Մովսես Խորենացու Մատենագրութիւնը, Վննետիկ 1843» (այլև
1885 թ.) հրատարակության շնորհիվ, էջ 588 և հաջ. 2) «Ընդարձակը»՝ Փրոմոսերեն թարգ-
մանությունը հանդերձ Արսեն Սուքրի: «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացու, յաշխար-
հայց նախնաց, Վննետիկ 1881:

³ Տ.Մ. Կ. բ. շ. 2, «Անանիա Շիրակացի», Վաղարշապատ 1886, էջ 8 և հաջ.,
80 և հաջ., 38 և հաջ. այլև «Անան. Շիր. Մնաց. բանից», էջ 43, 65 և հաջ. «Անան. Շիր.
Տիեզ. և սոսմար», էջ 80:

է նաեւ ընդդէմ աստղագիտութեան, որ ըստ Անանիայի է բաժնի թաղա-
նաքն: Քանհամ պատմութեանն: Նա գործող լեզվով քննադատելով այդ խո-
րեական աստղագիտութեանը՝ իր ոչնչացնող խօսքն է ասում այդ մասին,
ինչպէս երբեմն Եզնիկ հոգեւոցին: Դրա փոխանակ նա գնում է իր տեսութե-
անքը, այն՝ որ չորս տարբերութիւններով—արեգակնային շերտութեան (հրի) ու
լուսնի, այդ նոսր և անոսր տարրերի ֆիզիկական ազդեցությամբ, ինչ-
պէս և օդի ու ջրի օգնությամբ կենդանածնվում է երկիրը—բույսեր, կեն-
դանիներ և այլն: Դրանցով է ամեն կյանքի, իսկապէս ամեն երևույթի
էլիքները: Երևումն և ապակտնութեանն, այսինքն դառնալութեանն՝ ու մա-
հացումը և այնպէս և Զի լինելութիւնն իցէ սկիզբն ապակտնութեան, և ապա-
կանութիւն դարձնալ անգրէն իցէ սկիզբն ապակտնութեան, և ապա-
փառ հակառակութենէ՝ աշխարհ ամբէ զանողութեան (էջ 31): Ահա Զի
ինչպէս է աշխարհս հարասե շարժման մեջ փոփոխվում և կենդանի
մնում ըստ Շիրակացու:

4. Անտիպոյի երկրի գրեկտն և կոլտուրեկտն արժեքը: Դժվար է
խոսել գեղարվեստական տեսակետից գրեկտն արժեքի մասին այնպիսի
երկրի, որոնց բովանդակութեանը թվաբանութեանն է, տամարական սառն
գիտելիքներ կամ աստղաբանականն ու օդերևութաբանական տեղեկութեան-
ներ: Բայց և այնպէս պէտք է ասել, որ Անանիան բոլորովին զուրկ չէ
շարագրեկտն արժեքներից: Նա, կարծես, իբրև մի ուսուցիչ, ձգտում է այնպիսի
եղանակով հորինել, որ այդ նոր նյութերը պարզ հասկանալի լինին ան-
վարժներին: Դրա համար նա երբեմն կրկնութեաններ է անում և նյութը
բացատրելիս սովորաբար գեղեցիկ ու հարմար օրինակներ է բերում, նույն-
իսկ երկու-երեքը: Այդ նրա շարադրութեան առավելութեանն է: Եթե մեկ-մեկ
գծվում է հակասեցում, այդ առաջանում է ավելի բնագրի աղհատումից,
կամ նյութի նուստութեանից և անծանօթութեանից, այլև մեզ անծանօթ
նոր բառերի օգտագործումներից, կամ բաների այլիմաստ կիրառութեան-
ներից: Երբեմն նույնիսկ թվաբանական խնդիրների չոր ու ցամաք լեզուն
նրա զրչի տակ հաճելի է դառնում իր բովանդակութեան մտնորմասնու-
թեամբ: Նա գիտե գեղեցիկ ու գրավիչ պատմել: Այդպիսի կտորներից մեկն
արդեն մենք տեսանք սկզբում, զա նրա երազն է շրջագիտութեանն կամ
հակառակութեան մասին: Տեսնելով արեգակնային մեջ էլ կան մի քանի այնպիսի
կտորներ, որոնց մեջ Անանիայի գրվածքն իր կենդանութեամբ ստանում է
գրեկտն արժեք: Այսպէս է, օրինակ: Նրա նկարագրի, թե ինչպէս արե-
գակի ընթացքի հետ առաջանում են տարվա չորս եղանակները (էջ 51,
տող 9 և հտն.), այլև արեգակի մեծութեանը ցույց տալու համար գրված հատ-
վածք (էջ 55 և հտն.):

Այսպիսի կտորների մեջ Անանիան մեջ բերած օրինակներով ոչ
միայն համոզել է ձգտում, այլև աշխատում է իրրև հարուստ ազգել:
Բայց նրա վաստակի մեծ արժեքը դրա մեջ չէ, այլ ավելի նրա բազմա-
թիվ ճիշտ բացատրութեանների մեջ հետադայի համար:

Ինչպէս էլ Անանիայից առաջ եղել է հայերի մեջ սոմարի ծանոթու-

¹ Էլիքները—դառնալութեան (становление, «das Werden»):

Թյուն, բայց և այնպես մեր այս համարողն իր բաղձաթիվ գրվածքներով ուսմիրա է հանդիսացել սոմարագիտության, տիեզերագրական և օդերևութաբանական գիտելիքների համար, չնայած սոմարագիտները Հովհաննես Սարկավազ, Վանական, Կոզեռն և ուրիշները՝ օգտվել են Անանիայից՝ նրա գրվածքներն ուրիշներին ծանայել են նույն նյութերի համար իբրև հեղինակավոր աղբյուրներ, որոնցից փոխառություններ են արել, երբեմն նոր ձևով, ըստ իրենց հասկացության խմբագրելով այն¹։ Այդ պատճառով և սկսել են նրա հրկերից քաղվածքներ տնել և հասվածներ մացնել ժողովածուներ մեջ, Դրա հետևանքն եղել է այն, որ Շիրակացու գրվածքները ենթարկել են փոփոխությունների—կրճատել են, իրենց կարծիքի հակառակ կատարները դուրս ձգելով, մասերի տեղերը խախտել են, նոր բառեր են ավելացրել մեջը, նյութի նոր դասավորության են տալիս բերել։ Մինչև այժմ հրևան չեն եկել Շիրակացու հրկերն իրենց հարազատ ու հաստատուն ամբողջությամբ։ Ըստ հրևանների նույնիսկ ճիշդագրագիտության և Տոմար վերատառությանը տպագրված աշխատությունները գերծ չէ այդ վիճակից։ Անանիայի հրկերն ավելի մեծ արժեք են ստացել հայկական վերածնության շրջանում։ Գրիգոր Մագիստրոսի մի նամակից², որ նա գրել է Պետրոս կաթողիկոսին, երևում է, որ զրանք ավելի բազմազան բովանդակություն են ունեցել, քան մինչև այժմ հայտնի են։

Ինչպես էլ նրա տեսակետները հաճախ այժմ այլևս ընդունելի չեն, բայց այդ չի պակասեցնում նրա կուլտուրական գործի մեծ նշանակությունը, այն՝ որ նա նոր գիտություններ է մտցրել հայերի մեջ, և եղել է պայքարող ընդդեմ ամեն տեսակ տգիտության և մանավանդ նախնական ժամանակների խավոր դարերում ստեղծված այն առասպելների դեմ, որոնցով ձգտել են բացատրել բնության երևույթները, նա այդ առասպելները քիչ անգամ բերում է, կամ մի նախադասությամբ հիտյան ակնարկում է դրանց։ Օրինակ՝ արեգակի խավորումը բնական ձևով և ճիշտ բացատրելուց հետո՝ ասում է. «Եւ զայս տեսանելով և բազումք յանուսումնութենէ արեգական կորուստ կարծեն»։ Հայտնի է, որ մինչև մեր օրերը տգիտ ամբողջ հավատում էր, թե արեգակի խավորման ժամանակ մեծ վիշապը քարծրաձևում է արեգակին կուլ տալու, ուստի և ամեն սնապաղատական ծեսեր էին կատարում այդ վիշապին փախցնելու համար, եթե Անանիան չի էլ հիշում բնության երևույթների առասպելական բացատրությունները, նա դրանք նկատի ունի հաճախ իր բացատրությունների ժամանակ։ Օրինակ՝ նա (էջ 54) ժամբաման, օրինակներով բացատրում է սովերն աւ մութը, որպեսզի հասկացնի այս թեզիսը, թե «ստուգեք երկրի՝ պատճառ է գիշերոյ»։ Մինչդեռ դեռ մեր օրերում անգամ գիշերի պատճառը սնահավատ մարդիկ համարում էին, զուցե և դեռ համարում են, բերանի

¹ Այսպես, օրինակ, Վերջին նշանավոր տաճարագետներից մեկի՝ Յակով Լեբեդևու մի ավելի համոզել, որ կարելի է ասել, Վերջին շրջագայութեան երկնից) Երկրորդության մի նոր խմբագրությունն է։ Գ. Յ. Միլոշայան, Վերջին Շիրակացի, էջ 36.

² Նամակի համարը. ամս և 9. Տ. Միլոշայան, Ան. Շիր., էջ 13. Ավելի նամակը՝ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, ի լույս ընծայեց Ե. Պետրոսյանը, Սեբաստիոպոլիս 1910, Երկրորդ (Բ.) թագից, էջ 4—10. Շիրակացու մոտին՝ էջ 4, 8, 9.

շուռհն ինչ որ պատավ էր ոգինների, գոյներվան մայրերին, որոնք իբր պատում են արեգակի ետևից, հալածելով նրան, բայց չեն հասնում նրան. և երբ երեկոյան մեկ բերան փչում են, մութն արարած աշխարհ բռնում է: Այսպես և գրեթե ըստր դեպքերում Անանիան իրական, բնական ձևով, ըստ ժամանակի հայացքի, բացատրում է արեգիկազգրական և ոգերեղծաբանական երևույթները: Նա զբաղվում արդեն սխալմամբ մաքսոսում է անտիպապատմութանների դեմ:

Մնահավաքին դեմ արդեն զորեղ կռիվ էր մղել, ինչպես տեսանք, և Նդինիկ Կողբացին։ Նա ի միջի ալլոց ավել էր և բացատրություն մի զանի՝ ոգերեւույթներէ, ինչպես՝ արշալույսի կարմրության, ցոյի, լուսնի բակի։ Նա փորձել էր նուրիսկ աստղաբաշխական տեսություն կազմել, թե երկինքն անշարժ է, չի շրջում, այլ երկնքի լուսավարներն—արեգակն, լուսին ու աստղերն են շրջում։ Նդինիկն ծանօթ են մի զանի արատքին՝ արեգեւա-գրական տեսություններն ու բացատրությունները, որ բերում է Անանիան. սակայն նա, իբրև մեկնաբան, ավելի է կաշկանդւած Ս. Գրքի խոսքերով, զան Անանիան, և մեծ մասամբ հերքում է արտաքին տեսությունները¹։ Բայց և այնպես Նդինիկի և Անանիայի երկերով արդեն հաստատ-վում է մեր գրականության մեջ միջնադարյան քրիստոնեական աշխարհայեցութեան Աստուծու և արեգերքի մասին։

ԴԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՍԵՐԵՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

1. Կենսաազդեցիկ:— Դադար ֆորպեցուց հետո երևան չեն գալիս պատմիչները, դրա համար և ճարգ դարը մեկն անվանել է ամուր, մյաւար, ճաթին և անորոշ: Հայ պատմագրությունը միշտ կախում է ունեցել զլուսավորածպան ազգական գործերից: Այդ շրջանում Հայաստանում չեն կատարվել ըստ ժամանակի հայացքի ամպիսի իրողություններ, որ իշխողներն արժանի համարեն մատենագրել տալու, և չեն էլ եղել Հայաստանում հայտնի հայ իշխողներ: Երկիրը կառավարել են միանման միմյանց հաջորդող պարսիկ մարզպաններ: Պարսկ-բիղ-նդական պատերազմները տեղի են ունեցել մեծ մասամբ Հայաստանից դուրս, Միջագետքում, և հայ ազնվականները միայն զորքով կողմնակի մասնակցություն են ւնեցել դրանց: Թերևս այս պատճառով չունինք ճարգ դարի պատմիչ, — թե միայն եղել է և չի պահվել: Կարծում են, թե ճարգ դարի առաջին կեսին ապրող Պետրոս Սյունեցին դրած է եղել պատմություն, որ չի մնացել: Նա ունեցել է ուրիշ գրվածքներ, որոնց մեջ կդառնանք, բայց շատ կասկածելի է նրա պատմագրությունը: Միակ պատմագիրն է ճարգ դարի հեղինակ Սեբեոս եպիսկոպոսը:

[illegible]

² Մերձախի եպիսկոպոսի Պատմութիւն, քաղաքաւթեամբ Լեւոնքաց, հանգիստ առ-

Իր գրքերից (գլուխ Գ.) իմանում ենք, որ Սերեոսն եղել է Պարսից արքա Խոսրովի (անշուշտ՝ Խոսրով Ապրուսի, 590—628 թ.) արքունի դառնը, ուր և Չինաստանից եկած դեսպաններից լսել է, ինչ որ գուստանները պատմում են նրանց աշխարհում Մամիկի ու Կոնակի մասին, նա եղել է և Միջագետքում, Հիշում է Վարարա փիլիսոփա Մեուրնացու, մատենան՝ իբրև աղբյուր և Տրգատ Թագավորի հրամանով գրված ինչ որ արձանագրություն, որ բացվել է Մեթրինում, Վճոր իմ գտնելի Միջագետքի նորին աշակերտացն՝ կամեցայ ձեզ գրուցադրեմ, գրում է նա, Հայոց Կանոնագրերից իմացվում է, որ Ներսես Գ. կաթողիկոսի օրով, 646 թ., Դվինի ժողովին մասնակցել է և իբրև ութերորդ անգամ ստորագրել է Վճեր Սերեոս եպիսկոպոս Բագրատունեաց, Ընդունում են, որ դա Սերեոս պատմագիրն է, Վերջին դեպքը, որ հիշվում է նրա գրած Պատմության մեջ, է արաբացի Մամիկանի (661—680 թ.) միահեծան զահակալությունը, Հավանորեն նա իր Պատմությունն էլ գրած վերջացրած կլինի այդ 661 թվականից ոչ շատ ուշ, Պատմության սկզբի նախաբանից, որ աղճատված է, իմացվում է, որ նա իր Պատմությունն ինքնաբերաբար չի գրել (եղի ի կամայական պիտոյից վարժ խուզակիւ), բայց հայտնի չէ, թե ում պատվերով, Իբրև հայոց եպիսկոպոս՝ նա պատկանում է այն կուսակցությանը, որ հավատարիմ է ՎՍ. Գրիգորի էջմեթի հավատքին, հակառակ է Քաղկեդոնի ժողովին և Լևոնի տուժարին, Բայց և այնպես նա իր ճաղաքական հայացքով կողմակից և համակրող է քրիստոնյա հույներին, քան սասանյաններին և արաբներին, որոնց ատում է նա, մոռանալով Վասանական հէն Ապրուէզ Խոսրովին, Վարժանիչ և ավերող Խոսրովին, Աստուծուց՝ անխնայածին։

2. Պատմությունը—Սերեոսի աշխատությանը մի տեսակ ամբողջական հայացք պատմության է սկզբից մինչև 661 թվականը, Սկզբում նա պատմում է Հայկի ու Բելի առաջիկը և Հայկի սերնդի մասին, Այդ պատմությունը՝ Մ. Սերենացու Մարտության պատմվածքին նման լինելով հանդերձ՝ բովանդակաբարբոս է նրանից, Այստեղում է Պարթևների ապստամբությունը Սելևկիացիներից, Հայաստանի առաջին Արշակունի թագավորի՝ Արշակի մահը, վերջը գնում է Պարթևացի և Հայոց թագավորների ցուցական իրենց տարիներով, Հայոցը Արշակ Փառքից սկսած մինչև Արշակի որդի Պապ թագավորը, հաջորդ գլխի մեջ նույնը երկրորդում է Եի պատմագրացն Մովսիսի Սերենացույ և Սահմանի Տարաւնացւոյ, հաւաստի և էջմեթի մատենագրաց, Սահմանու Տարաւնացին, դա 11-րդ դարի պատմագիր Առաղկեք չէ, այլ մի հին հեղինակ, Համաժամանակյան ցանկը հասցնում է մինչև Հայոց Արշակունի թագավորության քանդումը, Վերջը գնում է մի նույնպիսի համաժամանակյան ցանկ Պարսից և Լուսաք թագավորների մինչև Պարսից Սոսանյան թագավորության քանդումը, Այդ ցանկերի մեջ Սերեոսը մեկ մեկ գրում է և իրադրությունների մասին։

Հաջորդ Ե. գլխի մեջ համառոտ խոսում է Հայոց Արշակունի թագավորությունից հետո եղած դեպքերի, Վճարի մի Վարդանի պատերազմի մասին, իսկապես ինչպիսի Պատմություն բովանդակությանը, վերջն աղկալանով, Թե այն ամենայն ի մեռն այլոց գրեցու, որպէս ցուցանէ նոյն իսկ Պատմութիւնն, Այս բերում է իր գրելիքի մանրամասն բովանդակությանը—Պարսից ժամանակից մինչև արաբացիներին տերապետությունը։

Զարանի և Ժանթաթեմբը, ի մեռն Սո. Մալխասեանց. Յերևան 1930. ավելի ճշակիւնի վերնագիրը գնել Վրաստանի Հայոց, և ոչ թե իսկ Վրաստանի, Հին աղագրություններին վերնագիր գրել են Վրաստանի ի ներկային։

եղալոյ ամենայն կամեցոյ ի ձեռն զըսոյ տառերիկ կ'ըմբռնուա ձեզ զիշտասաներ—հարուս է նա: Պատմելով Վստան Մամիկոնյանի տղատամբութեան մասին Պերպղիք՝ Սերեոսը զրուս է Գերանա դաշտում Վստանի ավաժ մի ճակատամարտի մասին, որ չունի Ղազար Փարպեցին Սերեոս է: որ նա ժողովրդական գրույցներէն ունելով է հաղորդում այդ նրան ձեռն յէ Ղ. Փարպեցեան Պատմութեանը: Պերպղի (488—484) հաջորդ զնում է նա Կալաման (488—531) և ալ թե Վաղարշին (484—488), Վստանից հետո կ'առնուան իշխում է նրա եղբայրը՝ Վարդ Պատրիկ, որի մահից հետո զալին հն, ասում է, մարդպետ Պարսիկներ, Պարսիկ Անուշ-բովան (531—579) թագավորի 41-րդ տարում (571—578 թ.) նայեբը, Վարդան Մամիկոնյանի աստիճանագրութեամբ, սպառնալով են պարսիկներէն, Պարսից թագավորն անմարդ գալին և Վարդանի վրա, բայց չարաշար պարտվում է: Այդ մի առ մի հիշատակում է Հայաստանն եկող մարդպետներին:

Պատմութեան երկրորդ մասը, որ շատ բնդարձակ և մանրամասն է, նա համարում է ժամանակակից պատմութեան: Այդ սկսում է այսպիսի բանաստեղծական նախաբանով. «Մատեան ժամանակեան, պատմութիւն թագաւորական, վէպ արիական, վանուեմ ասիական, հէն Սասանական՝ յԱպրուելզն խորովեան, որ հրդեհեալ բոցացոյց զառ ի ներքոյս ամենայն, զԿորդեանս գծով և զցամաք, զարթուցանել զկործանումն ի վերոյս ամենայն երկրիս, և այնն Այդ ժամանակակից պատմութեան սկսվում է Որմիդ թագավորից (579—591): Նախարարներն սպանում են նրան և թագավորեանում նրա որդի մանուկ խորովին, որին ապստամբ իշխան Վահրամի ձեռնից փախցնում են Հուսեպ կոզմիրը: Նա Մորիկ կայսրից (582—602 թ.) օգնութեան գտնելով՝ հաղթում է ասպատակներին: Հայաստանի մեծ մասն անցնում է Բիզանդիային: խորովը հույներին է տալիս իրեն արած օգնութեան համար՝ զգրկիրն Հայոց, որ ընդ իւրով իշխանութեամբն էր, զտունն Տանուտերական մինչև ցղետն Հուրազդան, և զգաւառն Կոտից մինչև ցաւանն Գառնի և ցհար ձովուն Բզնունեաց, և ցԱռաստաւան և Կոտ-գոյիս գաւառ մինչև ցՀաղին և ցՄակուս: Պատմագիրը մանրամասն պատմում է առանձնապէս և այն երկարամյա պատերազմը, որ Մորիկ կայսրի սպանվելուց հետո՝ խորով Ապրուեղը հաղթանակներով վարում է հույների դեմ: Պարսից զորքերը հասնում են Կոստանդնուպոլսի մոտ, մինչև որ թագավորում է Հերակլը (610—641 թ.) և կռիվն արեւելք տեղափոխելով՝ հաղթում է պարսիկներին, ասնում է նրանց մայրաքաղաքը՝ Տիգրանն, ապա հաշտութեան դաշն են հաստատում:

Պատմութեան վերջին մասի մեջ Սերեոսը պատմում է թե ինչպէս արարներն ասպարեզ են ելնում, կարճ ժամանակում հաղթում են երկու մեծ տերութեաններին, կործանում են Սասանյան իշխանութեանը, տիրում են Պարսկաստանին, Միջագետքին, Պարսպատինին, Առքիքին ու Հայաստանին: Նրանց զորքերը հասնում են մինչև Գաղկեդոն, բայց հաղթվում են հույներին, և վերջապես՝ թե արարական բանակի մեջ երկպառակութեան է ընկնում, վերը հաղթում է ամենքին Մովսիսը և թագավորում իրազարու-թեամբ:

3. Պատմագրիւր. եղանակը:—Սերեոսը հորինում է հասարակ ու թեթեւ ոճով, երբեմն աշխուստ ու եռանդուն: Իր պատմելու եղանակով նա ընդհան-բապէս ցած է նախորդ պատմագիրներէն: Ս. Գիրքն, ինչպէս առհասարակ

միջնադարյան պատմագիրներին համար,—և ոչ միայն մեր,—նույնպես և Մերեոսի համար կարևոր տեղ է ընդունում։ Աստվածաշնչի պատմելու եղանակը, բառերը, դարձվածներն ու ոճն օրինակվում են ամենցից, Մերեոսի երկի մեջ արդեն բավական զգալի երևան են գալիս հայ պատմագրության և ուրիշ էական հատկութիւնները։ Մեր պատմիչները գրում են միակողմանի կերպով հայոց պատմութիւնը։ Բայց որովհետև հայերն ժնջատուած չեն եղել ուրիշներից, ընդհակոռակն, հաճախ ենթարկված են եղել տալազգիներին, ուստի մեր պատմութիւն մասին գրելիս՝ նրանք բնականաբար խոսում են և պարսիկների, բիզանդացիների ու արաբների մասին,—այսպես Մերեոսը,—հետագայում և ուրիշները—նաև սելջուկյան թուրքերի, թաթարների, խաչակիրների, այլև նոր պարսիկների, օսմանյան թուրքերի և ուրիշների մասին։ Այդպիսով հայ պատմագիրները, որոնց թվում է Մերեոսը, մեծ արժեք են ստանում և ընդհանուր պատմութիւն տեսակետով։

Մերեոսը, ինչպես և մեր մյուս պատմագիրները, ուշադրութիւն է դարձնում գլխավորապես քաղաքական զիջվածներին—նկարագրում է պատերազմներ, արշավանքներ։ Բայց նա, իբրև հոգևորական, հետաքրքրվում է նաև եկեղեցական խնդիրներով։ Այսպես՝ պատերազմների պատմութիւն մեջ չի մոռանում հիշատակելու կաթողիկոսներին և նրանց գործերն ու շինարարութիւնները, ինչպես՝ Յուդաթի վերջում Ավան դառնում Հովհան կաթողիկոսի շինած եկեղեցին (որ վերջերս վերանորոգվեց, և բացվեց կաթողիկոսի արձանագրութիւնը), Զորդ դարում Հոփսիմէի տաճարի, Դվինի Ս. Գրիգոր եկեղեցու, Վաղարշապատի Զվարթնոց տաճարի շինութիւնը։ Նա մեջ է բերում նաև Քաղկեդոնի ժողովի պատահաւով հալուցված վեճերը, կրօնական հալածանքները, մի քանի կարևոր թղթերի պատճեններ։ Այսպես վերջում են սովորաբար և մեր ուրիշ պատմագիրները։ Դրանով մասամբ վերանում է նրանց գրվածքների բովանդակութիւն միակողմանութիւնը։

Դեպքերի ուսումնասիրութիւն Մերեոսը չի անում և բացատրութիւններ չի տալիս։ Նա չի քննադատում պատմական երևույթները՝ նրանց մեջ եղած բնական կապը գտնելու և պատճառներով բացատրելու համար դրանք, այլ սովորաբար պարզապես պատմում է անցքերը, մեկ մեկ էլ հրաշալի դեպքեր մեջ բերելով (Գլ. ԺԲ. էջ 48)։ Նա, ինչպես և հայոց պատմագիրները, սահմանափակված է կրօնական աշխարհայացքով այն աստիճանի, որ արդեն աստուծոյ բարկութիւնը կամ նույնիսկ հրեական մարգարեութիւնը է բացատրում իր ժամանակի դեպքերը, ինչպես, օրինակ, ժողովների հարձակումը հույների ու պարսիկների վրա։ Նրբեմն նա նույնիսկ միջքն է համարում պատճառ ժամանակակից իրողութիւնների։ Այդ նշան է, որ արդեն սկսել էր իշխել միջնադարյան աշխարհայացքութիւնը։

Ութներորդ դարից առաջ կառարկած դեպքերի համար՝ Մերեոսը սովորաբար թվականներ չի հիշատակում։ Բայց Յուդաթի վերջերից սկսած նշանակում է թվականներ, երբեմն հայտնում է նույնիսկ ամսաթվերն ու օրերը կամ տարվա եղանակը։ Այս հանդամանքն ապացույց է, որ նա ժամանակակից պատմութիւն համար իբրև աղբյուր ունեցել է մեծ մասամբ ականատեսների պատմածները, մի տեղ, օրինակ, նա գրում է. «Ջայա լուսաք

յառանց գերելոց ի Խուժաստան Տաճկաստանէ, որոց ինքեանք իսկ ակա-
նառեալ եղեալ պատմիցին մեզ գայս բանն (Գլ. Խ. էջ 111), Շաա բան,
հարկավ, անձաբ մեան է։ Այս պատճառով և Սերեոսի գիրքն իր ժամա-
նակի պատմութեան համար առաջնակարգ աղբյուր է իր սատուութեամբ։

4. Հայաստանի վիճակը։—Սերեոսի քրկն առանձնապէս կարևոր է
հայոց պատմութեան համար։ Սերեոս մեծ պատմութեաններ յաշտահալելու
պատերազմների և հարաբերութեանների հետ՝ մենք նրա Պատմութեան մեջ
տեսնում ենք Հայաստանի վիճակը, հայ իշխանների ու զորքի խաղաղած
գերը Պարսից և Հունաց, վերջում Հունաց և Արաքսոց տերութեանների
մեջ, և որոնց վերաբերմունքը գիտի հայերը, Հունաց Մորիկ կայսրը (582—
602 թ.) ուղարկել է Պարսից Թագավորին զգիր ամրաստան վասն իշխա-
նացն ամենայն Հայաստանեաց և զաւրաց իւրեանց, զՍեղ մի խոսոր և
անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պատրեան, Բայց եկ, ասէ, ես
գիտմ ժողովմ և ի Թրակէ դումարեմ. և զու գլոյց ժողովէ՝ և հրամայէ՝
յԱրեւելս տանել, Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն՝
զթշնամիս սպանանեն. և մեք կեցցուք խաղաղութեամբ, Զի եթէ դոքա-
յերկրի իւրեանց լինիցին՝ մեզ հանգչել ոչ լինիս (ԺԳ. էջ 40)։ Եվ ահա
այս նենգ թագաւորականութեան հետեւեալով սկսվում է հայ ազնւականների
և զորքերի եղբրական վիճակը։ Նրանց շարունակ հեռացում են իրենց հայ-
րենի երկրից, Հայ իշխանները մնում են անել զորութեան մեջ, նրանք եր-
բեմն մի կողմից մյուս կողմն են անցնում, և կամ երբեմն էլ փորձում են
ապստամբել և կամ անկախ հայ իշխանութեան հետապնդել, բայց անհաջող,
Հայաստանից հայ զորքի հետեւում երկուստեք կրկնվում է և երեքնվում է,
մինչև ավարտվում է հայկական ռազմական զորութեանը, և հետո եր-
կուստայս պատերազմներից ջայթալվում, ավերվում է երկիրը, և անբարո-
յացվում են երկրի իշխողները, Հաճախում են միմյանց գետն նենգութեան,
գտնութեան, Իշխում է երկպառակութեանն ու մարդազավութեանը, Պա-
կասում է հայկական դիմադրական ուժը, որ անհրաժեշտ պիտի լիներ մի
քանի տասնյակ տարի հետո։

Այդ բավական չէր, Հունական կայսրները, կրօնական խնդրի նկատ-
մամբ օրինակ չեն առնում մազդայական Խոսրով Թագավորից, որ որոշ չա-
փով կրօնի ազատութեան էր տալիս (ԺԱ. էջ 47), և նույնիսկ անվանաւոր-
ում Հայոց եկեղեցուն (ԽԳ. էջ 122 և հտն.)։ Նրանք, կայսրները, հոստանդ-
նուպոյի հոգևորականների ձեռին խաղաղիք դարձած, շարունակ խնդրի
են հարուցում Քաղկեդոնի ժողովոյ ստիպմամբ բնաջնել տալու հայերին։
Մորիկը հունաց բաժնի համար նշանակում է առանձին հակաթոռ կաթողի-
կոս՝ Հոհան անուռով՝ որ նստում է Պարսից սահմանին մոտիկ Ավան
գյուղում, ոչ հեռու Դվինից, ուր նստում էին Հայոց կաթողիկոսները։ Ան-
գամ այն ժամանակ, երբ արարական զորքերն ավերել էին Այրարատյան
աշխարհը, հասել մինչև Տայք, Վերք և Աղվանք, կանգնել էին Գ. Պոլսի գի-
մաց, ես դարձել, և սպառնում էին նորից արշավել, անգամ այն ժամանակ
Հունաց իշխողները, փոխանակ երկրի դիմադրական ուժը զօրացնելու, նոր
ի նորո Քաղկեդոնի ժողովի խնդիրն էին հարուցում, հոստանդ կայսրը
(643—668) մեծ բանակով մանում է Հայաստան, և կարծեա ուրիշ բան չի

գանում անկու, բայց եթե դորձյալ Գաղկեղոնի խնդիրը հանել, ներսես կաթողիկոսն ու եպիսկոպոսները, որոնք առաջ թղթով մերժել էին կայսրի առաջարկը, ստիպված ընդունում են Գաղկեղոնի ժողովը, Գվինի մայր եկեղեցում քարոզվում է այդ ժողովը, Վե մասեառ պատարագ հռոմեերէն ի հոռոմ երկցաւէ, և հաղորդեցաւ թագաւորն և կաթողիկոսն և ամէն եպիսկոպոսաւնքն, որ կամաւ և որ ակամայ, իւր առաջն շարժեաց կաթողիկոսն զճշմարիտ հաւատաւ սրբոյն Գրիգորի, զի կալեալ էր ամենայն կաթողիկոսացն հաստատուն հիմնադրութեամբ ի սրբոյ յեկեղեցոյն ի սրբոյն Գրիգորի միջև ցոյցաւր» (Քէ. էջ 144)։ Վերջին «մինչև ցայսպէս» բառից երևում է, որ Սեբեոսն այդ պատմութիւնը գրել է հենց այդ իրողութեան կատարված օրը։ Եվ այնուհետև մանրամասն պատմում է, թե մի եպիսկոպոս չի հաղորդվում կաթողիկոսի հետ. բայց հետո թագավորից ստիպված՝ կատարում է նրա կամքը։ Այդ եպիսկոպոսը, որի անունը չի տալիս, ամենայն հավանականութեամբ Սեբեոսն ինքն է։

Ե. Խնագործու Ռշտունի—Գեղեցիկ է այս իշխանի պատկերը, Երկրի ավերումն ու քայքայումը մեն էր։ Մի կողմից արաբները, մյուս կողմից հույները, մի երրորդ կողմից հենց միմյանց հետ կռիւ իշխանները կողոպտում, կոտորում, ավերում էին։ Յուրա ձուռն-ձմեռ է։ Արաբները չեն դիմանում ցրտին, քաղվում են Ասորեստանի կողմերը։ Եթե իշխանքն Հայոց որ ի Ռունաց և որ ի Տաճկաց կողմանէ, Համազասպ և Մուշեղ, և այլն ամենայն եկեալ ի մի վայր միարանեցան և արարին ընդ միմեանս հաշտութիւն, զի մի եղիցի ի մէջ նոցա սուր և արեւնհեղութիւն, և անցուցին [= անցուսցին] խաղաղութեամբ՝ զաւուրս ձմերայնոյն, զի և զշնմեղանսն ասպնցումսն։ Հայ իշխանները հողում են շինականների մօտին, և ինչպես Քառնդի Ռշտունեաց տէրն անկաւ յախաս հիւանդութեան, և չգտաւ անկաւ յԱղթամար կղզի։ Եւ ոչ գոյր նմա լինել կարողութիւն ելանել արտաքս կամ խորհել ինչ։ Եւ բաժանեցին զերկիրն ըստ թուոյ իւրաքանչիւր հեծելոց, և կարգեցին հարկապահանջս օսկոյ և արաբոյն։ Ահա թե ինչպիսի էին ուղում նրանք, շինականներն էլ ապրեն։ Թշվառութիւնը չափ չուներ։ Վե աստ էր տեսանել զազէտս տաքակուտի,—չարունակում է Պատմագիրը.—զուրէն հիւանդաց, յորժամ տազնապիսցի ցաւն, և հատալիցի ի խաւսից՝ այնպիսի ինչ եղեն. զի ոչ գոյր մարդկան տեղի փախստի և թաղստեան, և ոչ խնայել ի ներքուստ, այլ որպէս ոք զի անկցի ի ծով՝ և ելս ոչ կարիցէ դառնել։ Այնպէս ասվին. ով պիտի սիրկեր նրան։ Եթե իբրև զայն ետես Ռշտունեաց տէրն՝ ինդրեաց իւր զաւուրս յիմաստեւորացւոյն, զի հարցէ զՀայն և հալածեալան արասցէ, և զվիրս սատակեացէ ի սուր սուսերի» (Քէ. էջ 149 և հա.)։

Գա թողորոս Ռշտունին էր, ժամանակի ամենանշանավոր, քաջ և իմաստուն իշխանը, աննդակից Սմբատ Բագրատունու որդի Վարազդիւրոցին, որ և Ապետ, սրի հետ և մեծացել էր նա ի զրաւն Խոսրովայ արքային Պարսից» (Քէ. էջ 126)։ Վարազդիւրոցի մարզպանութեան օրով արդեն նա ազգեցիկ մարդ էր ամբողջ երկրում։ Արաքսացիների Հայաստան մտնելուց քիչ առաջ՝ հայերը հալածում են իրենց զորավար Դավիթ Սահառունուն և բանմիտքան լեալ ամենայն աղաւթացն,—գրում է Սեբեոս (ՂԹ. էջ 104).—կորուսին

գերկիրս Հայոց, Բայց միայն առաւելանալէր և քաջ իշխանն Ռշտունեաց գաւառին Թեոդորոս կազմէր զգաւրս իւրոյ կողմանն հանապազ և զգաւա- նայր զսիւս և զգիշեր ըստ իւրոյ քաջ իմաստութեանն, ոչ սակաւ տւէրս գործէր ի Թշնամեացն, եւ շինեալ զԱղթամար կղզի՝ անդ ապրեցուցանէր զրազովս գաւառոս, Այս պատրաստութեան հետեանքն այն է լինում, որ երբ տրբարացիները հունաց կողմից անպաշտպան երկիրն ավերում ու դերում են, Թեոդորոսն է միայն կարողանում անպատակութեաններէ առաջն առ- նել, Ուստի և նա ունեաց կայսրից Հայոց զորավար է կարգվում և պատրո- կություն ստանում, ապա և Հայոց աշխարհի իշխան դառնում, Այնուհետև, չնայելով տեղական հռչակների հանած ամեն տեսակ տրգելքներին, նա Հա- յաստանում ժամանակի միակ կառավարիչն է մնում և հաղթութեաններ տանելով տրբարացիների վրա՝ շատ գերիներ և ավարներ է ազատում:

Բայց վերջիվերջո Թեոդորոսը տեսնում է, որ Կ. Պալատն ներքին խռու- վութեանները չեն պակասում, որ հռչակները մեր երկիրն անպաշտպան են թողնում և միայն կրփնական հալածանքներ հանում հայերի ու հայ եկեղե- ցու դեմ, և որ, վերջապես, Սասանյան պետութեանն ընկնում է արաբա- ցիների աճող զորութեան տակ, այդ ժամանակ նա, երբ տրբարացիները նորից հարձակվում են հայերի վրա, իր հետ միաբանեցնում է բոլոր հայ իշխաններին ու ենթարկվում արաբներին՝ շատ ձեռնառւ պայմաններով գաշինք կնքելով Մավիասի հետ 652 թ., Հայաստանն այդ զաշինքով պա- հում է իր ինքնուրուշնութեանը, և նախարարներն ստանում են մեծ արտո- նութեաններ (էջ 140 և հտ.), Բերենք այդ դաշինքը:

«Արդ՝ խառնէր ընդ նոսա իշխանն Իսմայելի և տէր. «Այս լիցի ուխտ հաշտութեան իմոյ ընդ իս և ընդ ձեզ՝ որչափ ամաց և դուք կամիջիք. և ոչ առնում ի ձէնց սակ զերեսմ մի. ապա յայնժամ տաջիք երգմամբ, որչափ և դուք կամիջիք, եւ հեծեալ կալէք յաշխարհիդ ժն [= 15] հազար, և հաց յաշխարհէն տուք, և ես ի սակն արքունի տնդաբնմ, և զհեծեալսն յԱսորիս ոչ խնդրեմ. բայց այլ ուր և հրամայեմ՝ պատրաստ լիցին ի դործ. և ոչ արձա- կեմ ի բերդորայն ամիրտայս, և ոչ տաճիկ սպայ՝ ի բազմաց մինչև ցմի հեծեալ, Թշնամի մի մտցէ ի Հայս. և եթէ դա Հոռոմ ի վերայ ձեք՝ արձա- կեմ ձեզ գաւրս յաւգնականութիւն՝ որչափ և դուք կամիցիք, եւ երդնում ի մեծն Աստուած՝ եթէ ոչ ստեմ»:

Հռչակները զայրանում են, և անձամբ զալիս է Կոստանդ կայսրը հա- յոյսը հազարանոց բանակով՝ պատժելու Թեոդորոսին և հայ իշխաններին: Վերջիններս բոլորը հպատակում են նրան. զորավար կոմ զիշխան հեծելոց՝ կարգվում է Մուշեղ Մամիկոնյան, Ներսես կաթողիկոսն ու Եպիսկոպոս- ները, ինչպես վերևում ասվեց, ստիպված ընդունում են Քաղկեդոնի ժո- ղովը: Բայց Թեոդորոսն իր փեսաների հետ հաստատ է մնում իր որոշմանը. նա իր մի փեսա՝ Մամիկոնեից տեր Համազասպի հետ ամրանում է իր կղզում ու զաւթուում. իսկ նրա մյուս փեսա Գրիգորը՝ իր հայր Թեոդորոս Վանաճեռու հետ ամրանում է Արփա բերդում, Կայսրը բան տեսել չի կարո- դանում և միայն կրփնական վեճ ու խնդիր հանելով և Թեոդորոս Ռշտու- նուն նզովք կարգադրվ՝ ետ է դառնում: Իսկ Թեոդորոսն արաբացիների օգ- նութեամբ երկրից հալածում է հռչակներին և ապա դնալով Դամասկոս՝ Մա-

վիտաի մոտ, իշխան է կարգվում Հայաստանի, Վրաստանի, Ադվանքի և Սյունիքի վրա մինչև Կապկաս լեռն ու շորտ պտհակը, և ստանալով մեծ ընծաներ ճանդերմ ոսկեղենս և ոսկեթելս և վառ մի նորին օրինակուք, վերադառնում է:

Այս ժողովրդասեր և ժողովրդի պաշտպան, քաջ և իմաստուն անձը բնականաբար վայելում է մեծ ժողովրդականություն, այն աստիճանի, որ նրա հիշատակն ապրում է զրույցների մեջ, որոնք և մտնում են մեր Վասնա Մոերք վեպի մեջ և հարատևում մինչև մեր օրերը իբրև Բեռի Թորոս և Թևաթորոս:

6. Ամբատ Բազբատունի:—Սերեոսի Պատմությունը, ինչպես նման հիշատակությաններն ընդհանրապես, յուրի սպեցիֆիկ զրական նշանակությունը, որովհետև դա չի հորինված գեղարվեստորեն: Բայց զրա մեջ կան վիպականեր, զրույցներ, որոնք ծագում են բերանացի բանաստեղծական ավանդություններից, զրա համար և պատմված են մասամբ կենդանի ձևով: Այդպիսի հատվածների մեջ Սերեոսի աշխատությունը զրական նշանակություն էլ է ասանում, գրանցից մեկն է Մանուելի որդի Սմբատ Բազբատունու զրույցը (ԺԼ. էջ 55 և հտ.):

Մորիկ կայսրը կրկին անգամ դուք է ուզում Հայաստանից՝ Թրակիա ուղարկելու: Ջորադուխն է Սմբատը. հանապարհին զորքը չի ուզում գնալ այնտեղ: Մեծ խոստումներով և երգումներով, սակայն, կարողանում են զորքը տանել և ուղարկել Թրակիա, իսկ Սմբատը վերադառնում է Հայաստան:

«Ապա դարձեալ սկսան միտքանել մնացեալ նախորդքն Հայոց, և խնդրէին ի բաց կալ ի ծառայութենէն Յուշաց Թագաւորին և նասուցանել իւրեանց Թագաւոր, զի մի և նոցա հասցէ միտանել ի կողմանս Թրակացւոց, ալ ի կեալ և մեռանել ի վերայ աշխարհին իւրեանց: Եւ բռնք խորհրդոց նոցա ոչ ունէր զմիտքանութիւն իրին յինքեանս հաստատեալ, ալ ոմանք ի նոցանէ յոգմոցութեամբ հասուցին զրանս խորհրդեանն յունէն Թագաւորին, և ինքեանք այսր և անոր սորսորեալ խուսափէին:

«Ենչն ժամանակի հասանէին դեռպանք արքունակունք հրովորտակաք, և կախալ զՍմբատ հոնդերմ ալովք ոմամք եւթն արամք և տարան յանդիման Թագաւորին: Եւ քննեալ զնոսա ի մէջ բազմամբօ իրապարակին՝ հաստա վճիռ ի վերայ նոցա՝ մերկացուցանել և ընկենուլ ի կիւնիկն:

«Եւ էր սա այր տնհեղեղ անձամբ և գեղեցիկ տեսիւմբ, և բարձր և լայն հասակաւ, և բուռն և ցամաք մարմնով: Ենչն ժամ հաւալ և պատերազմող, որ ի բազում պատերազմունս ցուցեալ էր զիւր քաջութիւնն և զբունութիւն: Այս է դաւալութիւն նորա. քանզի անցեալ սա ի ներքոյ տնտոսախիտ մայրեաց և գաւառաւոր ծառոց, ի վերայ յաղթանգամ և հաւալ երիվարին, և յորձակեալ զոստով ծառայն՝ բուռն հարկանէր, և կեկեալ ուժգին երանաւքն և ոտիւք զմէջ երիվարին՝ վերացուցանէր երանաւքն ի գետնոյն: մինչ զի ամենայն դաւաղցն տեսեալ ահաբեկ լինէին ի զորմացմանէ:

«Եւ արդ՝ մերկացուցեալ զնա և ազուցեալ տնդրավարտիս և ընկեցեալ ի կիւնիկն, զի կուր լիցի զազանաց:

«Եւ արձակեալ ի վերայ նորա արջ, եւ եղև իբրև գիմնաց ի վերայ

նորա արջն՝ նա ազգադակեաց մեծածախն և ընթացաւ ի վերայ արջոյն, և զարկեալ ըսամբ իւրով զհաւկաւորն, և անդէն ստատուէր զնա ի տեղւոյն:

«Երկրորդ անգամ արձակեցին ի վերայ նորա ցաւը: Իսկ նորա բուռն հարեալ զեղջերացն ցլուռ... և զազդաղակ հզաւրին... և յաւաքեալ ցուլն ի մարտին՝ զելոյր զպարտանցն և խորտակէր զերկոսին եղջիւրսն ի վերայ գլխոյն: Թուլանայր ցուլն և յետոյ գնալով ի փախուստ զսանայր: Իսկ նորա զհետ ընթացեալ բուռն հարկանէր յազին և ի հզդակն ազդեր միոյ ոտին նորա, և թափեալ զհեղախն՝ մնայր ի ձեւին նորա: Եւ ցուլն զնայր ի նմանէ՝ փոխատկան, միով ոտամբն բոկ:

«Դարձեալ երրորդ անգամ արձակեցին ի վերայ նորա առեւծ: Եւ եղև՝ ի վերայ նորա յարձակել ասեւծուն՝ տյնալէս իմն յողեալ նմա ի տեւունէ, բուռն հարեալ յականջ՝ տոբեծուն՝ հեծաւ ի վերայ նորա: Եւ թնդէն բուռն հարեալ զխաչափողիցն՝ խեղդէր զառեւծն և սպանանէր: Անդ ազգաղակ բազում ամբոխին զերկիրն լնուին, և խնդրէին ի վերայ նորա ողորմութիւն ի թագաւորէն:

«Եւ նա վաստակեալ ի մարտին՝ նստէր ի վերայ ասեւծուն մեռելոյ, զի փոքր մի անաղիցէ: Անդ և կին թագաւորին անկեալ թա ոտս նորա՝ խնդրէր ի վերայ նորա առնել ողորմութիւն. վասն զի սիրելի էր յառաջն տարն այն թագաւորին և կնոջ նորա, և թնուանեալ էր զնա իւր յորդեգիրս: Եւ նա զորժացեալ ընդ զաւրութիւն և ընդ այնքութիւն ասուն և լուեալ պողոտանոց կնոջն և ամենայն պաղտոյն՝ հրամայեաց ասնել ի վերայ նորա ողորմութիւն:

«Թայնժամ տարան զնա ի լուսցումն ի բաղանիս. լուսցին զնա և զգեցուցին, և կուցցին զնա յընթերս արքունի, զարմանցին զնա կերակրովք: Եւ զկնի սառ ինչ թնցելոց, մանաւանդ եթէ ոչ ի շար ինչ կամաց թագաւորին, այլ ի նախաձորդաց շարախոսութենէ, հրամայէ հանել զնոսա ի նաւ և աքսորել ի կղզիս հեռաւորս. և թա աստի հրամայէ անցուցանել յԱփրիկէ, և առնել նոցա թնդ ի մէջ դաւրացն, որ էին անդ՝ տրիրունս:

Շատ շուտով զրանից հետո, ինչպէս պատմում է Սեբեոսը, 600 թ., ուրեմն Մորիկի մահից երկու տարի ժամշ, Պարսից Խոսրով Թագաւորը Սմատ Բագրատունուն, մեծամեծ պատիւներ տալով, կարգում է Վրկանի մարզպան: Ամենայն հազանականությամբ այս նշանավոր անձը վերեւում հիշված Սմատ Բագրատունին է, որ Հունաց կողմից անցել է Պարսից կողմը: Նա մեծ գործեր է կատարում Վրկանում. 608 թ. վերադառնում է Հայաստան, ուր հոգում է հեկեղեցու համար, շինել է տալիս Դվինում և Գրիգորի եկեղեցին: Սեբեոսը մանրամասն պատմում է նրա վարած մարտերը: Բերենք հետևյալը (էջ 67 և հտ.):

«Թայնժամ Սմատ մոզովէ զգաւրն և վերստին սպառազինէ, զովարէ և այլ զաւրս բազումս յաւաքութիւն իւր, և զիմեալ զնայր ի վերայ ազդին Քուշանաց և արքային Հեփթաղեայ: Եւ նա աստի մեծաւ կազմութեամբ ընդդէմ ելանէ նորա. եկին հասին ի տեղի մարտին և ճակտոնցան դէմ յանդիման միմեանց: Արդ՝ պառգամ յղէ թա Սմատ արքայն Քուշանաց և ասէ. «Զի՞նչ աւազուտ է այսպէս խառնամբոխ մտանել ի պատերազմ՝ սպառել զաւրս մեր: Եւ կամ ի՞նչ ծանիցի իմ և քո քաջութիւնդ, Բայց Եկ, ես և զու միայն

մարտիցուք, ելեալ եւ աստի ախոյեան, ե զու՝ աշտի. զի այսաւք ծանխցի քեզ քաջութիւն իմա: Իսկ նորա ձեռն յամեն հարեալ՝ ասէ. «Ահա, ասիկ պատրաստ եմ ի մեռանելու: Եւ յարձակեալք աստի եւ անտի մեծաւ տաղնապաւ ի միմեանս հասանէին. ե ի մէջ երկուց նախատուցն ժարտ եղեալ ընդ միմեանս կռուէին. ե ոչ կտրէին վաղվազակի զմիմեանս յաղթեալեալ, զի արքակայաւք էին երկուքնն եւ կռու սպառազինեալք: Ապա ի վերուստ իմն հասեալ աւզնութիւն՝ պատառի վերա եւ ամուր քաշիկի եւ կռու զրուհին ամուրութիւն արքային Քուշանաց ի նիղակէն Սմրատայ. զի հարեալ զնա զաւրութեամբ դիմեալ յերկիր կործանէր: Եւ դուքն նորա իբրեւ տեսին զարքայն իւրեանց՝ զարհուրեցան եւ զարձան զնացին փախստական. ե արքա զնա արշաւալ նսին սաղատակու մինչ ի Բաշ շահաստն Բուշանաց, ե աւար հարեալ զերկիրն ամենայն, զՀար ե զՎաստագէս. զՏոթորոսաւս յամենայն ե զՃագական: Եւ զարքա զարքուն ե զնախ քանդեալ աւերէր, ե զառնայր յաղթութեամբ մեծաւ ե քաղուժ աւարաւ, ե երթեալ բնակէր ի Մարգ ե ի Մարգառտ գաւառի:

«Յայնժամ հրեշտակք աւետաւորք փութով հասանէին առ արքայն Խոսրով լիով զեղեալսն պատմէին քաջութիւն: Իսկ արքայն Խոսրով զուարեանայր զաւրթանայր մեծաւ խնդութեամբ, ե հրամայէր զարգարել փիչ մի մեծ եւ ածել ի դահլիճն. հրամայէ եւ հանել ի վեր զորդի նորա զՎաստագորոց, որ անունեալ կոչէր յարքայէ Զափիտեան Խոսրով: Եւ հրամայէ գտնմս ցանել ամբոխին. ե զրէր առ նա հրովարտակ մեծապէս զոհութեամբ. ե կոչէր զնա ի դուռն մեծաւ պատուով ե շքեղութեամբ:

Այս զրույցն իր բովանդակութեամբ ե էական զծերով շատ նման է Հայկի ու Բելի, ավելի Տրդատի ու Գոթաց թագավորի միանմանութիւն: Այդ նմանութիւնը կանանց է այն քանի, որ նոր կատարված իրողությունները ե անցքերը պատմությանը ժողովրդի մարդկանց բերանին ստանում է հին զրույցների կերպարանքը՝

7. Մուշեղի վեպը:—Ժողովրդական զրույցի ձևով ավելի եւ կենդանի պատմված է Սեբեոսի մէջ Խոսրովի ե Մուշեղի պատուժը, որ առատորեն հագեցված է ժողովրդական վեպին հատուկ տարրերով: Այստեղ կան վիպական մանրամասներ, նկարագրներ, միմյանց ուղարկած նամակ ու պատգամներ, արամախոսութիւններ, խորհրդակցութիւններ: Իսկական մի վիպական պատմված է զա, որ ընդարձակ լինելով՝ հնարավոր չէ բառաբերել բերել այստեղ (գլուխ Ը, Թ, Ժ. էջ 33—46): Վասրամ Մերեմանդակ (—Վահրամ Զօրին) ապստամբում է Սասանյան տունը: Որմիզդ թագավորից (579—590 թ.), աշխատելով վերացնել Սասանյան տունը: Որմիզդն սպանվում է, ե տեղը թագավորեցնում են որդուն, «մանուկ տղա» Խոսրովին (590—628 թ.), որին քեթիները փախցնում են Հույների մոտ: Վահրամը թագավորում է ամբողջ Պարսկաստանում: Խոսրովը Հուշաց Մորիկ կայսրի կողմից օգնութիւն է գտնում. երկու հաւյն զորավարներ դալիս են զորքով կռուվելու Վահրամի դեմ ե Խոսրովին իր հոր գահի վրա նստեցնելու: Խոս-

¹ Մ. Ա. և Ղ. Ե. Հայ ժողովրդական առասպելները, էջ 217 ե հտ. 326 ե հտ.

² Ձերգուսու Մեանտմէն մէջ տա պատմված է քրեաստեղծական զարգացմանը:

ըովին օգնելու գալիս են և Հայոց զորքերը, որոնց զուխն է Մուշեղ Մամիկոնյանը, Ե՛ւ զպաւս աշխարհին Հայոց ընդունէին զուստեւ: որք ի ժամուն առ ձեռն գտեալ. և անցեալք ի հանգիսի իրրև հազարք հնգետասանը, իւրաքանչիւր զունդք նախարարաց՝ ըստ հարեւրաւորաց, ըստ հազարաւորաց, ըստ գնդից, ըստ դրաւշուց իւրեանց, Ամենքեան սոքա սպառազէնք, ընտրեք պատերազմողք, վառեալք քաջութեամբ՝ իրրև զուր, որ հշ զանգիտեն և ոչ զթիկունս զարձուցանէին: Դէմք աւիճու դէմք նոցա, թեթևութիւն ոտից իբրև զթեթևութիւն տշեմանց երազութեամբ ի վերայ դաշտաց, Մտադրութեամբ և ամենայն հնազանդութեամբ շու յուղի անկեալ զնացիւն (Թ. էջ 38):

Պատերազմը խմբովւմ է Ասորպատականում, Վահրամը կովից առաջ րանագնացութեամբ փորձում է Մուշեղին իր կողմը գրավել խոտուտներով, բայց չի հաջողւում, և սաստիկ պարտություն կրելով փախչում է:

Խոտուտն ուրախ է, բայց նրա ուրախությունը թերի է. զգիւպընցաւ տիրատեացն այն [Վահրամ] և զնացա: Մոտի մարդիկը պատասխանում են. «Ջախրատեացն զայն նոքա [հայք] զերծեցին, քանզի մերով այլաւ իսկ տեսար: զի կալաւ զեւ Մուշեղն այն Մամիկոնեան, և եւ նմա երբմոր և զէն, և արձանկեացա: Խոտուտը հավատում է և ուզում է Մուշեղին նենգութեամբ իր մոտ հրավիրել և սպանել: Բայց չի հաջողւում: Ապա Խոտուտի բարեկամ Մորիկը Մուշեղին կանչում է պալատը, «և այլ ոչ ետես զերկիրն», ավելացնում է Պատմադիրը: Նրան ազդեկում են Թաւկու: ուր թշուաժները բռնում են նրան և մի քանիք ծառից կապելով սպանում (ԺԹ. էջ 53 և հա.):

Այս իսկ վիպական պատմվածքը, որ Սեբեոսի մեջ շատ տեղ բուն ժողովրդական զուլն ունի, որի հիմքը, սակայն, անպայման պատմական է, իր ձևով Բուզանդի Մուշեղի վեպի մի նորոգված պատմվածք է: Նույնությունն անհնայտնի է: Այդ երկուսի միակ էական տարբերությունն այն է, որ Հուստոստանից հունաց զորքերով իր սպանված հոր դա՛նը ժառանգելու համար եկող Թագավորը ոչ թե Հայոց Պապն է, այլ Սասանյան Խոսրովը: Նմանութեան մեջ առանձնապես աչքի է ընկնում այն, որ երկուսի մեջ ևս Մուշեղը թշնամի բանակի հետ հաղորդակցություն ունի և մեղադրվում է, թե կարող էր թշնամի Թագավորին սպանել, բայց չի սպանում. և հոր դա՛նը ժառանգող Թագավորը թշնամանում է Մուշեղին և սպանել ուզում նրան: Բուզանդի մեջ Մուշեղի վեպը, իբրև Ծ-րդ դարու, ունի իր ժամանակի զբոյժը, իսկ Սեբեոսի մեջ՝ իր դարինը: 7-րդ դարում հայ Թագավոր չկար: արարներից առաջ հայ զորքը ծառայում էր Պարսից և Հունաց թա-

և բուն պատկան չափազանցութեանը, ինչպես մի վեպ, թե ինչպես բանակցութեանը են եղել կայսրի ու Թագավորի միջև, թե կայսրն առաջներին է նայել: Մանրամասն նկարագրված են նաև արքայազներն ու ճակատամարտերը, և զիս կայսրը Խոսրովի հետ կռուի գոշինցը հառաժուր զարմեւելու համար՝ իր Մարիամ դուստրը կնութեան է ավել նշանաւ մշջկան հորուստ ամբողջ հասեական օժանդակ բանակի հետ Թագավորին են ընրում: Կայսրը դուստրն այնուհետև Թագավորին ընկերանում է նրա արշավանքների ժամանակ, և այն: Այս պատմութեանը սոսկ առաջել է համարվում:—Քրիզանգիան և Պարսկաստան, գրեց Ե. Գիւլեքը, գերմ. Թարգմ. Հ. Համբարյան, Վիեննա 1911, էջ 66 և հա:

դավաճաններին, և այսպես երկու հարյուր տարուց ի վեր, Բնակաւնաբար Մուշեղի վեպն ևս իր նոր ձևի մեջ, հին էությունը պահելով, կրել է ժամանակի կնիքը: Մուշեղը զարձայով հայ զորքի գլուխն անցած կամում է հաւանական զորքի հետ միասին զարսիկների գեմ, բայց ոչ Հայոց թագավորի որդուն իր հոր գահի վրա հաստատելու համար և ոչ տպաւորում հայ իշխանների գեմ, այլ Պարսից, Նվ նա իր վախճանը գտնում է ոչ թե ընթերցի ժամանակ, այլ Թրակիայում, ինչպես ժամանակի շատ հայ իշխաններ:

ՎԻՊԱԿԱՆ ԲԱՆԱՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ԶՐՈՒՅՑՆԵՐ «ՊԱՐՍԻՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ԶԻԿԼԻՑ՝

1. Պետրոս Քերթալ:— Հին երգերն ու զրույցները հեշտությամբ չեն մտացվում: Մի վեպ, ինչպիսին է «Պարսից պատերազմը», բոլորովին անհետ կորչել չէր կարող: Դրանից այս կամ այն միջադեպը, այս և այն հերոսի անունն ու արարքը երկու դարեր ապրել են գուսանների և նույնիսկ ժողովրդի բերանին, իհարկե կրելով դարերի ազդեցությունը և կերպարանափոխ լինելով: Ասել չի ուզիլ, այդ հին վեպի միջադեպերից մեկը կամ մյուսը հարատեւել են ավելի այն կողմերում, որանց վերաբերում են. որի նակ՝ Սյունիքում զոհվել են Սյունյաց իշխանների մասին զրույցները, Տարոնի և Սասնա կողմերում՝ Մամիկոնյանների վերաբերյալ: Բայց մեր զրականության մեջ գտնում ենք մեր այդ հին վեպից ոչ շատ հտաւածներ: Եւր զարուց հետո: Եթե քիչ է: պատճառն այն չէ, որ շատ բան մնացած չի եղել, այլ մենք շատ մոտենալիքներ չենք ունեցել: որ հին վեպի մնացորդների վրա ուշադրություն դարձնելին: Այդ նկատմամբ՝ Մովսես Խորենացուց հետո, առաջինն է Պետրոս Քերթալը:

Այս հեղինակի մասին կենսագրական տեղեկություններ հաղորդում է Ստեփանոս Օրբելյան պատմագիրը: Բայց սա շփոթ ու խառն պատմություններ է ասում, հակասական թվականներով, այնպես որ նրա տված տեղեկությունները ոչ բոլորը կարելի է վավերական համարել: Բայց հավաստի է, որ նա, Պետրոսը, եղել է Սյունիքի եպիսկոպոս, հորինել է ճառեր: Աշտարակացի Ներսես Բ. կաթողիկոսի ժամանակ մասնակցել է Դվինի ժողովին 554 թ.: Նրա ստորագրությունն էլ կա այդ կաթողիկոսի երեք թղթերի մեջ. նա կենդանի է եղել 555—556 թվականներին և մոռել է հավանորեն 558 թվականին՝ նա համարվում է աշտակերտ Մովսես Քերթալահոր՝, եթե ստույգ է այս վերջին տեղեկությունը,—որի մասին կասկածելու

1 Մ. Ա. Ե. Ղ. Կ. Ն., Հայ ժողովրդական վեպը, «Ազգագրական Հանգես», XVI գիրք, էջ 80—96. այլև առանձին գրքով, էջ 134—150.

2 Տե՛ս՝ 1) «Գեղք թղթ», Թիֆլիս 1901, էջ 73, 76: 3) «Աբու-բուս» 1903, էջ 80—87՝ «Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս», Գալուստ Տեք-Մկրտչյանի: 3) Նույն առանձին գրքով, 4) «Հանգիստ ամառեայ», 1903, էջ 230 և հտն., 1904, էջ 20 և հտ. Ն. Ա. «Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց».

3 Գամաթիւն Նզդանգին Սիւնեան, արքայի Ստեփաննոսի Օրբելյան արքայի-կողմից՝ Սիւնեաց, Թիֆլիս 1910, էջ 68, 80, 454. Նույնը Մոսկվա, 1861.

ոչ մի հիմք չկալ,—այսպէս Քերթոզ Պետրոսը պատահանի հասակում է աշակերտել Մովսէսին, որ վախճանված է Եւրոպայի վերջերին:

«Բնագծերը ինչն է անհամեմատան ի մարգկանն է Պետրոս՝ աշակերտ Քերթոզանօրն, քով հետորն է անյազգի փխխոփոյն, լի իմաստութեամբ և կատարեալ առաքինութեամբ, նախաթու վարդապետաց Հայոց, Քերթոզ և թարգմանիչ, որ արար բազում թարգմանութիւնս. և խոսեաց ճառս իմաստայեղց ի ծնունդն Քրիստոսի և ընդդէմ քաղկեդոնականացն և այլս յորովս. և մեկնեաց զերթին և զգծաւարիմաց բանս հին և նոր կտակարանաց... Սա հարցեալ ի Վախագանայ՝ Աղուանից թագաւորէ, բանս բազումս ուժեղս և դորաւորս, և ընկալեալ զպատասխանին յոյժ ի ճան և ուղիղ լսածմամբ:՝ Շատ պարզ է, որ Պետրոս Քերթոզը մեծ գրական գործունեութիւնն է ունեցել Թուրք դարի առաջին կեսին և մեծ համբավ է վայելել թե՛ Ժամանակակիցներէրից մեկն և թե՛ հետագայում. նրա գիտելիս ի սուրբ Աստուծոյ ձեռքինն»¹ ճառն իր տեսակներէ մեկն գեղեցիկներէրից մեկն է և ազդել է մեր հոգեւոր երգերի վրայ: Այս հեղինակի երկերը մեծ մասամբ, ցաւով, դեռ չեն երևան բերված և հրատարակված: Այստեղ կանգ կառնենք այդպիսիներից մեկի վրայ:

Սա. Օրբելյանն իր Պատմութեան մէջ (էջ 10) խոսելով իր ազգայուհիների մասին՝ ասում է, թե առել է շնան սակաւ ինչ ի Պետրոսի՝ Միւնեաց եպիսկոպոսի ճառիցն, որ վասն Բարկայ՝ Միւնեաց տեառն: Հետո թ. զլիսի վերնագրի մէջ գրելով գլխի բովանդակութեան մասին՝ հիշում է դարձյալ Պետրոսին. «Վասն Անդուկայ՝ Միւնեաց իշխանի... յասացուածոց սրբոյն Պետրոսի՝ Միւնեաց եպիսկոպոսի»²:

Պետրոս Քերթոզի այս ճառից, որ և ասացուած կամ ներքոգ է կոչվում, ուղարկել է Ստ. Օրբելյանից ասալ և մեր մի ուրիշ պատմագիրը՝ Մովսէս Կադանկատուացին³: Սա Պետրոսի անունը չի տալիս, այլ միայն գրում է սկզբում. «Որքան պայծառ է երկինք աստեղօք և երկիրս՝ բուսով, տշնալէս է և ջանք աշխարհագիր պատմողի՝ յայլոց նիւթոց պարագաւորի: Կընդունակի՞ Մ. Կադանկատուացին, ինչպե՛ս ինքն ասում է, գրույցն առել է ուրիշ հեղինակից, իսկ այդ ուրիշն է Պետրոս Քերթոզը, քանի որ նրա, Մ. Կադանկատուացու, և Ստ. Օրբելյանի պատմվածքները գրեթե բաւական նոյնն են, ինչ որ նշան է, որ նրանք երկուսն էլ գրեթե բաւաքի քաղել են Պետրոսի ներքոգից, սակավաթիւ փոփոխութիւններով:

¹ Անդ, էջ 89.

² Տպւած է Վարդապետ 1908, էջ 89 և հաւ. այլև առանձին գրքով. «Ներսէսյան Պետրոսի Միւնեաց եպիսկոպոսի Գովառ ի սուրբ Աստուծոյ ձեռքին և ի միջո կայսն Մարիամ բոս յորջոյժման նորին, և ի սուրբ գրոց լուծմունցն նոցին, հազար իմաստութեան: Նույն տեղում, էջ 188 և հաւ. «Վարդապետ յաղագս մարմատարութեանն տեսան դարձադնը՝ Վախագանի Աղուանից իշխանի ընդ Պետրոսի Միւնեաց եպիսկոպոսի և իմաստասիրի»:

³ Նույնպէս և հաջորդ Ժ. զլիսի վերնագրի մէջ. «Վասն զայլս Բարկայ... ի նոյն ճառիցն տեսան Պետրոսին: Իսկ պատմվածքի ընթացքում (էջ 338) գրում է. «Որպէս զհայոց մեզ ի ներքոգմանն իւրում երանելին Պետրոս՝ Միւնեաց եպիսկոպոս, Քերթոզանցն Մովսէսի աշակերտն: Գարձայլ քիչ կես»՝ «Որպէս վերագոյնն ասացայ, երանելւոյն Պետրոսի՝ Միւնեաց եպիսկոպոսի ի ներքոգմանն ասաց, գոր աբարն ի վե՛ն Բարկայ»:

⁴ Մովսէսի Կադանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քիֆլիս 1912, էջ 110—125, Բ. հատոր, Գր. Ա. Նույնը Մոսկով, 1890:

կա դանկատուացին իր վերնում բերված տուջարանից հետո՝ այսպես է գրոււմ. «Գտանին զրոյցք արեւելից կողմանց [հասկանալի է՝ Հայոց աշխարհի], որք աչ են անկեալ ի գիրս հնագիր պատմագրաց, զորս պատշաճ վարկաք մակագրել ի տառս առդաշտփութեան մերումն: Այս երկրորդ առաջարանից երևում է, որ զրույցը ժողովրդական ծագում ունի և առաջին անգամ է գրի առնված: Բայց գրի առնողը ոչ թէ Մ. Կաղանկատուացին է, այլ Պետրոս Քերթովը, որից առել է նա: Երկրորդ տառարանը և գրա դեմքը Պետրոսինն են: Կաղանկատուացին ուրիշ դեպքերում էլ մեքենայորեն արտագրում է իր աղբյուրներից, պահելով աղբյուրների դեմքը: Պետրոս Քերթովը, ուրեմն, գրի է առել Հայաստանի արեւելյան կողմերում, Սյունիքում, մի ժողովրդական գրույց և դարձրել իր մի ներքոյի կամ առդաշտփության (աստղագիտի, ճառի) նյութ: Ուրիշ խոսքով՝ նա այդ զրույցը մշակել է քերթովաբար, այսինքն՝ նա հետեւ է իր ուսուցիչ Մովսես Քերթովահորը, այլև Մեծն Տիգրանի վեպը մշակողին (տարգմատորին ի բանս), ինչպես և Ազաթանգեղոսին ու Բուզանդին: Նրա այդ գրական երկը, ցավոք, չի հայտարարվել, և մենք պիտի բովանդակենք Մ. Կաղանկատուացու և Սա. Օրբելյանի քաղվածքներով:

2. Անդուկի և Բաքիկի ցրույցը:— Սյունյաց Անդուկը, Փառանձեմ Թագուհու հայրը, որ Մամիկոնյան տան փեսան էր, Տիրանի և Արշակի վեպի մեջ դուրս է գալիս իբրև կարևոր գործող անձն: Արշակի գերությունից հետո Պարսից Շապուհն առանձնապես ավերում է Սյունյաց աշխարհը. «Եւ զազգի Սիւնեաց ժողովն զամենայն զայր ի չափ հասեալ կոտորեցին, և զկենայս սպանին և դամենայն մանր մանկտիսն ներքինիս հրամայէր առնել, և խաղացուցանել յերկիրն Պարսից, Եւ առնէր դայս ամենայն վասն վրիժուցն Անդուկայ, որ եղև պատերազմ ընդ ներսնի արքայ Պարսից» (Բուզ. Գ. 58): Մտնուելի ժամանակ Սյունյաց տան Անցորդներից առաջ են գալիս Բաքիկ, Սոմ և Վաղինակ. Բաքիկը դառնում է Սյունյաց նահապետ և Մանուելի նիդակակիցն է կախիկների մեջ: Սյունյաց աշխարհի այս ավերման զրույցն ահա ուրիշ ձևով պատմվել է Սյունիքում և մշակվել Պետրոս Քերթովից:

Հայոց ուրիշ նախարարների հետ միշտ Պարսից արքունի դառն էր լինում նաև Անդուկը, որ ճոխ և փռաավոր էր հայ իշխանների մեջ, Մի որ Շապուհն Թագավորն ուրախություն անել է ուզում: Ընային հրավիրված են զարսից բոլոր առնմերի ազնվականները, որոնց ըստ իրենց գահի պատվում է արժան: Եվ նա խորհրդակցելով իր մեծամեծների հետ՝ ստում է հայ նախարարներին. «Եզ Պարսից և զՊարթևաց զընակա՛ն Պարկաւիկս և զազատագունդս զազատ արտոնց զԱրեւացս աշխարհի նախամեծար զասպատու քաջ գիտեմք զորպիսութիւն. բայց զԱրմենու զազատատունմ և զնոցին նախապատու, զնախադատ նախագահութիւնս ոչ կարացաք դիտել ոչ ի նախնեաց մերոց հորցն հարանց Թագաւորաց և ոչ այլ ուստեք յամենիմաստ մատենագրաց: Եւ արդ՝ մի յերկուց առաջի կայ ձեզ նախարարացն Հայոց ազատ

1 Մ. Արեւիկայ, Հայ ժողովրդական վեպը, Վեպագրական Լեռնիք, ԹԶ գիրք, էջ 80 և հա.: Այլև առանձին գրքով, էջ 124 և հա.:

արանց կատարել գինդիրս մերոց Արեաքո աշխարհաժողով՝ ազատագործ
կուսակալաց. ցուցանել ձեզ գնախնական գիր ըստ իւրաքանչիւրումն ըստ
տանց ազատագործն եկացն ձերոց գնախնաստիճանն և գնախնիստ պա-
տիւն. և դորձեալ մեծազոյնն ունել շքեղազուք մեծաւորն ևս քան զեւ, Եւ
եթէ ոչ կարէք ահն ի յայտ Արեաքո գնդի ժողովոյ ցուցանել զգիր նա-
խագահութեան՝ զպատիւ և զտուն, զհոգ և զջուր և զստացուած ձեր Արեաքո
աշխարհի ազատ արանց շնորհեսցուք. և զձեզ ապաշնորհ և ունայնա ար-
ձակեսցուք, Եւ ստացուածք գիրդից և ապարանից ձերոց Արեաքո ազատ
արանց ի ձառայութիւն լինին:

Հայ իշխանները խորհուրդ անելով՝ ներկայացնում են Թագավորին
Աղաթանգեղոսի գիրքը: Նա կարգով և պարսկերեն Թարգմանել է տալիս.
շատ ուրախանում է, որ զրա մեջ պատմությունն սկսվում է իր նախնի
Արտաշէրից. և հրամայում է հայ իշխանների բարձերն հարգաբեր, ինչպես այդ
գրքի մեջ էր: Տասնևյոթսերորդ քառն է հասնում Սյունյաց տեղ Անդո-
կին: Եւ նա հպարտութեամբ խոխտացեալ՝ ոչինչ հաշուեաց յայնմ ուրա-
խարար արքունական ընդունելութենէն: Եւ զգացուցեալ սպասաւորացն
տըքունի՝ Թագաւորին՝ զարիւնշտութիւն խոզովութեան երեսացն Անդոկոյ՝
Սիւնեաց տեսուն: Եւ Շապուհ Պարսկց արքային ոչ ինչ փոյթ զայնման է
լինէրն:

Այդ ժամանակ հենց լուր է հասնում, թե խաղիրները բազմամարտ
գնդերով անցել են Զոդա դռնով. հարձակվել են Պարսից աշխարհի վրա:
Եւ ժողով անթիւ արարեալ Շապուհ՝ Ասորոց, Խորասանի, Խորազմոյ, ևս
սուսել ջաջացն Պարսից Աւարաթական նահանգին, Հայոց, Վրաց, Աղուա-
նից և երկուսուսան լեզուաց խուժադուժ ազգաց լերինն Կաւկասոս, գնում
է խաղիրների գնմ: Անդոկը, սակայն, իր 1700 ձիավորներով դաժճանա-
բար մի կողմ է մնում. ապա քնում է Տիգրոն, սակավաթիվ մարդկանցով
մտնում է քաղաք, խաբուսթյամբ հայտնում է, թե իբր Շապուհին օգնելու
համար է եկել, Բաղաբացիները մեծ առաքիլներ են տալիս նրան: Առավոտյան,
երբ քաղաքի դռները բացվում են, նա իր զորքերը քաղաք է մտցնում, կռ-
ղոպտում են քուր մեծամեծների տները, այլ և Թագավորական տունը, առ-
նում են բոլոր Թանկագին բաները և բերում են Սյունիք, Բաղաբերդ: Ապա
բոլոր դավաճներից առնելով աշարհեղեն մեծ ջանակությամբ հավաքում են
այդ բերդը. մնացածը հրումայում են այրել: Եկեղեցական Թանկագին ա-
նոթներն էլ ժողովում են Շապախի եկեղեցին, որ և թաղում են հողով և
կազմում մի հողաբուր: Ժողովուրդը փախչում է դաժնազան կողմեր:

Շապուհը խաղիրների առաքելագով վերջացնելուց հետո՝ հրամայում է
եկանել ի Սիւնիս և դերել զիստան և զանասունն: Դալիս են Սյունիք,
բուն չեն գտնում, եկեղեցիները ջառնում, այրում են: Կազմում են Բաղաբերդի
դեմ, բայց բուն անել չեն կարողանում: Շապուհը մի քանի անգամ նորա-
նոր գնդեր է ուղարկում Անդոկի վրա, բայց պարսիկներն առնելով անգամ
էլ պարտվում են: Վերջապես Թագավորն իր իշխանների խնդրով դադա-
րեցնում է կռիվը: Նա մոխրով լիբը մի զոյնի սանդ է դնել տալիս իր պալատի
դռանը, որ ով գա՝ կոփի և ասի. «Սիւնեաց տէրութիւն ընդ այս մոխիր ի

վայր լիցին: Անդուր հարմար ժամանակ գանհելով՝ անցնում է Հռոմայեցի-
ների կողմը: Սյունյաց երկիրը քսան և հինգ ասորի ավեր է մնում:

Անդուրի մահից հետո նրա որդի Բարեկը կորուսում է իր բնիկ աշ-
խարհին և որպեսզի իր հայրենական տերութիւնը ձեռք բերի՝ անցնում է
Պարսից աշխարհը, ծառայում է բանակում, մեծ քաջութիւններ է անում:
Ոչ օք չէր ճանաչում նրան, թե ով է: Սգլ ժամանակներում, ելեւալ Հոնն
ի Հոնաց Հոնազուր անունն՝ ավարում է Պարսից աշխարհը, մարդ է ուղար-
կում Շապուհ թագավորին, թե՛ «Զլ» է հեղուկն արեան և վառնում: զորաց
բազմութեան. հէկ և մենամարտեսցուք ես և դու միով միակաւ:

«Ան վառաւ Հոնն... յեաննիւթեայ գրահին զաննարին բարձր և զտախ հռոմէն
և երկ-թաղամ և բնեաղինդ սաղաւարտին զանդակեալ զուրիս և զմտաւն աղանձայ և
առեառակամ յորինուածով ամբողջացանէր, և զանհեղ զգարացն գրուին ի բարձր-ամայր
փայտից, և զսուսերն բացանշան և զարեւանեալ յարիւնէր ի յինքեան՝ աւարեկեալ զամենայն
զգորս Մարաց և Պարսից և Արեաց աշխարհին, — արդէս զհէլայց միջ ի ներքովման իւրում
երանելին Պարսոս՝ Սիննեայ եղբակաւս, քերթողեալն Մովսիսի աշակերտ — Ան զարեւան՝
զհէլացունն արքայիցն արքային Պարսից վառն Բարձր թէ՛ «Շայ այր մի ի գրառ ճում,
որ գրեծ զառեւրովորդ նովա զմտերն: Ան արքայիցն արքայի կոնքեալ զԲարեկն, և
թաղաւորութեան պատուի վճիւ կնքեալ վարդապէր մտանեաւ և առէ. «Եթէ վրիժուց
նախանձս ճինուս առարկի յանգաւն արեացն»՝ մեծամեծ խորամանկս առաջելոցն հառցեալ:
Ան նորս ձեւն յանձին հարեալ առ արքային առ ի կտարել՝ զհրամանն արքունի:

«Ան նայն ժամայն աղաւթնեալ ի վերին ողնութիւն և առեալ զիւրայ զորսութեան
զգէնն յորինէր ինքեան: Ան ճանաչուաւ և մարդաբանապաշտ զհրահիւս՝ արքանական զգո-
յելայն հասակ (զարգաբեր): և վարդապետեալն սաղաւարտաւն՝ զհեղեղին դուրս. և զսու-
սերն սեաւ ազգ-գոմիկ զսէզն միջով, և զվառնն զանկիտեալ և զվառնեալ ի յանակն
ի յուսն ընկեցեալ: Ան զգեղարպէն՝ զուսն քաջութիւն ի յալ ընդունի առեալ՝ հռոմէականեալ
առանակէր ի սեան քաջ երկիրար: Ախարայր ընդզէմ թշնամայն Յարանկէին ի մի-
մեանս ի աւեր և յառ զգարգացն հայթիւն սրտաման երանէր յառաւորէ մինչ իցնն
ժամ: Անդ զառապարեալ լինէր աննարին հսկայն Հոնազուր, յաղթողայր քաջն Բարեկ-
առապարէր ի սուրն միտալորի, քրոջ անգէն սառակէր զմարդախոյս և զվիշտապաշտ զս-
ղանն: Թագավորը կանչում է հալթալ Բարեկին, մեծ ուրախութամբ ցանկանում է իր
խառնումը կտաւորեր

Շարունակութիւնը բերենք Մ. Կաղանկատուացուց:

«Ան նորս բան խնդրեալ առէ. «Բարեկցի սանգն աղանձի ի դիւսնէ ճումէն: Ան սանգն
էր լի միտքով հոգի. և սրբ զայրն ի սեղին յայն, կոփէին ի նմա և առէին. «Միւսնեաց
աւերութիւն ընդ տախ մտիւր ի վայր լիցի, և նոցա կեանքն և խորուրդն: Ան արքայն
մեծաւ զորամքմամբ հրամայեաց բռնեալ զառնգն ի սեղանին: Ան ապա խնդրէր Բարեկ
զընական աշխարհն իւր ի նա հրաժուցանել: Ան յարեալն նմա արքային՝ մեծաւ պատուով
առաջէր զնա յիւր աշխարհն և առնող նմա զառիւ ընդ Բաղրատունին և ընդ Մամիկե-
անան համապատուելի:

Բարեկը գալիս է Սյունիք: Նա Երուսի դեռի փէին, արահիցն անցել էր, յինում է մի
պառլ՝ նախորդ (Սա. Օրբելյան՝ Նախիդգան)՝ առնալով, «այնիցն է՝ առաջին կորգեալ ի
հայրենեացն: Ան անբարձրաւ սառնում արալ երեսով շրջում է իր երկիրը՝ Հառնե-
լով Շապուհ, ելնում է մի բլուր, արտեղով փախչում է մի եղջերու. բարձրանում է եկեղեցի-
բլուրը. միւս սաները խրվում են բլրի մեջ. Ապա փորում ու բռնում են եկեղեցիքն

Այս գրույցն իր բոլոր կողմերով ունի ժողովրդական վեպի բնավորու-
թիւն: Կապակածելի է միայն Ազաթանգեղոսի գրքի մեջ գալիս ժողովրդական
ազգայնորի մեջ կլինեն, անշուշտ, անորոշ կերպով մի գիրք, որ Պարսոս Բեր-

թաղը դարձրել է Ազաթանգեղոս։ Այժմ այս գրքի ազդեցութիւնն էլ երևում է Բաբելի գրույցի մեջ¹։

Բաբելի և Հոնապուրի մենամարտը, ինչպես տեսել ենք, ունի իր բազմաթիւ նմանները։ Բայց դա նման է ավելի Տրդատի և Գոթաց թագաւորի մենամարտին։ Ինչպես Տրդատն իր հաղթութեամբ ձեռք է բերում իր հայրենական երկիրը—Հայաստանի թագաւորութիւնը, նույնպես Բաբելը՝ իր հայրենական Սյունյաց տերութիւնը։ Բայց վեպի ընդհանուր գաղափարը դրա վրէժէ։ Դա միայն եկրորդ մասի գաղափարն է—ցանկաւ բնիկ աշխարհը, ունի հանդուրժել տրտաքոյ բնիկ տերութեան իւրոյ փափագեալ սաստիկ կարողութեամբ յաշխարհ իւր, արովհեալ էլիք ումեք քաղցրագոյն քան զճնոգս, և ոչ քան զգաւառ իւրոյ։ Ամբողջ վեպի մեջ իշխում է նախաբարական առհմերի ճախագահութեան խնդիրը, որ շատ մեծ տեղ է բռնել Ֆեոդալական կենցաղի մեջ։ Հաւարտ սյունի իշխանը, վերաւորովելով, որ իր բարձր ցած աստիճանում է դրվել, ապաստարում է նույնիսկ հզոր Դաւիթի որքայից, որ իր հորձակուհեւրով բուն տնեւ չի կարողանում նրան, մինչև որ վերջն անարգանքի սանձն է դնել տալիս։ Ապա աղատամբի որդին իր քաղցրութեամբ ապացուցում է, որ Սյունյաց տոհմն արժանի է ավելի բարձր գահի, և զառնում է ճախագահ և ընդ Բաղրատունայ և ընդ Մամիկոնէի համապատիւ։ Այս է ահա գաղափարն այդ Ֆեոդալական գրույցի, որի մեջ ազնւական տերն իր փառասիրութեան համար միայն ավերում է իր երկիրը։

Այդ գեղեցիկ գրույցը քերթողարար մշակել է Սյունյաց եպիսկոպոս Պետրոսը։ Ծիշա է, բնագիրը չունենք, բայց Ստ. Օրբելյանի և Մ. Կաղանկատուացու քաղվածքներից բաժարար հսկայացութիւն ենք կազմում նրա արվեստի մասին։ Երևում է, որ գրույցի պատմվածքի ընթացքը նույն ժողովրդական է պոպոկ, մշակումը կատարվել է գլխավորապես արտահայտութեան ձևերի նկատմամբ։ Պատմվածքին տրված է քերթողական ճոխ ոճ, ինչպես կարելի է տեսնել բերված հատվածներին։

3. Ձեռքը Գլուխ և Հովիտն Մամիկոնյան։—Այս երկու անուններով կա մի երկ՝ «Պատմութիւն Տարոնոյ»։ Ըստ երևույթին դրանց տակ ծածկված է միևնույն անձը, որ իր գրած «Պատմութեան» հին մասը վերագրել է Ձեռքը Գլուխ անունով մեկին, իսկ վերջին մասը՝ մի Հովիտն Մամիկոնյան եպիսկոպոսի։ Այդպես վարվելու նպատակն եղել է իր հորինած «Պատմութեան» ընթացիկ իրեն ժամանակակիցների գործ, ուստի և վավերական ու հավաստի։

Ասորի Ձեռքը Գլուխ եպիսկոպոսին, ըստ այդ «Պատմութեան», Ս. Գրիգորը Կեսարիայից վերադառնալիս հետը բերել է Հայաստան և Տարոնում իր հաստատած Խնակնայան կամ ս. Կարապետի վանքում առաջնորդ և վանահայր կարգելու նա Ս. Գրիգորի հրամանով գրել է «Տարոնի պատմութեան»։

¹ Ահա՛ Վոյ ալը մի է դրան քան, որ զորն պատերազմիչ հովու զճարին (Ստ. Օրբելյ.)։ «Գործիչ այդ հովու զճարին» (Մ. Կաղանկ.)։ «Գոյ առաջ մի է դրան քան, զի իրից այդ հովու զճարին» (Ազաթանգեղոս)։

² Պատմութիւն Տարոնոյ, զոր թարգմանեայ Ձեռքը Գլուխ Ասորի (Ձեռքայ Գլուխ) եպիսկոպոսի Պատմութիւն Տարոնոյ, Վենետիկ, 1832.

Յովհաննու Մամիկոնեի եպիսկոպոսի Պատմութիւն Տարոնոյ, Վենետիկ, 1832.

որի սկզբում դրել է չորս թղթերի պատճեններ, ապա երկու թղթի մեջ հորինել Ս. Գրիգորի պատմությունը, սկզբից մինչև մեհյանների կործանումը Տարոնում, քրմերի պատերազմն ընդդեմ քրիստոնյաների, Տրդատի քաջագործությունները և այլն: Զենոբ Գլսկի այս գործն առանձին պատմական արժեք չունի. որովհետև՝ 8-րդ դարից ոչ վաղ պնագան աղբյուրներից քաջածած սարքած մի պատմություն է: Աղբյուրների մեջ ավելի տեղ պիտի տալու ավագին եկեղեցական հետին ավանդություններին և, որ զլիավորն է՝ աղբյուրների մեջ պիտի ժողովել նաև ժողովրդական ավանդությունները: Այսպիսի ավանդություններից ենք համարում Գիսանն և Դեմեաթ աստվածների մասին պատմածները և Տրդատի կախվել Տարոնում: Կարծում ենք, ժողովրդական ծագում ունի և քրմերի պատերազմը, որ անում են Գիսանի և Դեմեսարի ծառայողները՝ մասնակցությամբ Աշտիշատի քրմերի:

Ոչ մի հիմք չկա կասկածի, թե Զենոբի ժողովրդական պատմությունը Դեմեսարի և Գիսանի մասին բարձր է մշակելով և Եկեղեցական-փոխելով: Աղաթանգեղոսի պատմածը Աշտիշատի վանկաշան մեհյանի մասին և իբր թե Զենոբը Եկեղեցական Կախվածը Աշտիշատը, Եկեղեցական Կախված և Կախված Աշտիշատի աստվածների մասին և իբր թե Կախված աստվածների փոխարեն Աշտիշատում դնում է Դեմեսարի և Դեմեսարի կուսակցությունները: Զենոբի Աշտիշատի մեհյանների մասին եկեղեցական Կախվածը խոսում է միայն Դեմեսարի և Գիսանի մեհյանի մասին, որ կարծանելով Ս. Գրիգորը՝ տեղը եկեղեցի է շինում, ու Կարապետ Նյխաթի մի ժամ աշտի ցնելով (էջ 53, 56 և հո.) Դո ու Կարապետի վաճառ է, Կախված տեղի, Զենոբի համար Աշտիշատի կուսակցի և Դեմեսարի ու Գիսանի կուսակցի շատ ուրիշ և առերեք են, և երկուսն ևս ինչում է նա:

Վատմունքային շարահարությունը վերագրված է մի ձովհան Մամիկոնյանի, որ ապրել է իբր 7-րդ դարում: Բայց դա կեղծ է: Այդ երևում է գրքի Վերջապահարանից, որի մեջ հեղինակն անում է կեղծած գրքերի համար մի սովորական դրույթի պատմություն: Այսպես նա ասում է, թե իբր գիրքը գրել է ժամանակա թագաւորութեան Լեւոնի (610—641 թ.), և ի մահուն խորագրում (590—628 թ.), հրամանաւ Ներսիսի Լայոց կաթողիկոսի (կաթողիկոսացած ոչ վաղ քան 641 թ., վախճանված 662 թ.) և իշխանութեան Մամիկոնեան Վահանայ, զոր մայրենեօք Կամարական կոչեն: Այս Մամիկոնյան Վահան Կամարականը, սակայն, մի տեղ (էջ 56 և հո.) արդեն մեռած է և իբր որդի Տիրանն է իշխում այսուհի քան զքնայն Լեւոնի ի պարսկան և երբ Երևան է Լեւոնի և սպանան է զխորագրում (590—628 թ.): Ուրիշ տարի հետո, ուրեմն 636 թվին, սպանվում է նույն իսկ Վահանի որդի Տիրանը՝ Մամիկոնի քեռորդի Աղաթանգի դեմ կախված: Մի ուրիշ տեղ, սակայն (էջ 56), թե թուականութեան հայոց հարիւր և երեսուն (190+551=641 թվին) դեռ իշխում է նույն Վահան Կամարականը՝ Ներսես կաթողիկոսի հետ, որն այդ ժամանակ մեռած էր: Այսպես թիւ ապրած ժամանակի համար շփոթ տեղեկություն ունի գրողը, և շատ պարզ

¹ Գր. Խաչատուր. Զենոբ Գլսկ. Վիեննա, 1893, էջ 53 և հոն:

² Մատմունքայինների մեջ՝ Աղաթանգի Եկա ժողովրդական վեպը, Աղաթանգի Կախված Գրքը, 1907, էջ 84 և հոն. Վեպիկոն Մամիկոնեան: Այլևս առանձին գրքով, էջ 128 և հոն:

է, որ նա կարող է ապրած լինել ամենավաղը, Զ-ըդ գործի սկիզբներում Այդ երևում է և նրա զբոսի նյութից:

Ք Դա իր հեղշուկ լեզվով, ուրաղ ու հասարակ ռնով և բավանդակությամբ խակապես ժողովրդական գրույցների մի ժողովածու է: Եւ իբրեւան պատմութեան հետ գործ չունի, և ընդհանրապէս՝ ունի ժողովրդական գրույցների ամենայն հատկութիւն: Միամիտ ընթերցաւն էլ դժվար թե հավատա այդ պատմութեանքների եղելութեանը. նույն ինքն հեղինակն ալ դժացել է, որ վերջի «Երջապատկարանի» մեջ գրել է. «Աղաչեմ զմանկունս եկեղեցւոյ Աստուծոյ, զի յորժամ զարարդութիւնս զայս ընդորինակէք, մի ինչ թուեացի ծագը ումեք, ալ և զիմ պատեհանն անպակաս և յի դրով դրոշմեցիք զհետ գրելեացդ»:

Հովհան Մամիկոնյանի «Պատմութեան» մեջ սկզբում գրված է ս. Կաթողեոսի վանքի փոխաւորի շարակութեանը՝ «սկսած Զնորքից՝ սակավութիւլ տեղեկութեաններով: Ապա պատմված է մի եկեղեցական գեղեցիկ գրույց, թե կանանց արգելված է եղել մտնել ս. Կաթողեոսի վանքի եկեղեցին և համարել այդ սրբի գերեզմանը. որովհետեւ ս. Կաթողեոսի գլխատման պատճառը մի կէն է եղել, Բայց՝ Արքեպիսկոպոս Մարիամ տիկինը վարկում է հակառակ այդ արդեւքին և վերադարձի ճանապարհին պատժվում է սպանվելով հանկարծ: Վերջը մանրամասն վիպած է «Պատեհազմ Տարոնոյ»: Այս ամբողջ երկը, և՛ Զնորք Գլխի, և՛ Հովհան Մամիկոնյանի մասերը, հորինված է Տարոնն ու Մամիկոնյաններին զովերգելու և ասանձնապէս ս. Կաթողեոսի վանքի փառքը բարձրացնելու համար:

Տեսնենք Զնորք Գլխի «Պատմութեան» մեջ եղած ժողովրդական գրույցները:

4. Դիմեալ և Գիտեմք=Մամիկ և Կանակ:—Դեմեալն և Գիտեմքն ցեղով հնդկ իշխաններ էին և եղբայրներ: Նրանք դավադրութեան են սարքում իրենց արքայի դեմ, որն իմանալով այդ՝ զորք է ուղարկում նրանց սպանելու կամ երկրից հալածելու: Նրանք փախչում, ապաստանում են Հայոց Վաղարշակ Թագավորի մօտ, որ և նրանց ապրիս է «գերկիրն Տարոնոյ իշխանութեամբ»: Այստեղ նրանք շինում են Վիշապ քաղաքը, Աշտիշատում էլ կանգնում են աշտեղի կուռքերը: Տառնուհինգ տարի հետո Թագավորը սպանում է այդ երկու եղբորը, բայց իշխանութեանը ապրիս է նրանց երեք որդիներին, որոնք շինում են Կուռաս, Մեղտի և Հոռեան ավաններն իրենց անուններով կոչելով դրանք:—Այս պատմութեան մեջ պարզ երևում է Մամիկոնյան նախնիքների՝ Մամիկոնի (Մամիկ-Կուռակի) գրույցի մի միջնացած արձագանք հետին դարերի:

Ճիշտ է, այստեղ տուեմները մարբեր են, բայց այդ նշանակութեան չունի: Վերջական գրույցների մեջ ակազն տնւնի և մտելի միջև շատ թույլ է. տնւնները հետեւի փոխվում են, մտելներն ավելի կոյում են: Անունների աղաղակ փոփոխութեան տեսում ենք և մեր նոր վեպի մեջ: Մամիկոնյանների ծագումն ըստ Բաղանդի, Խորենացու և Սեբեոսի՝ չիճական է, բայց այստեղ երկու եղբայրները Հնդկաստանից են: Սրբու գեղացում էլ այդ պետք է տեսնել աշխական իմաստով: Հնդկաստանն ու Զննաստանն իբրեւ արեւ-վելլան հեռավոր երկրներ միշտ իբրեւ տեղ դուրս են գալիս մեր հնգյաթնների մեջ: Մեր նոր վեպի մեջ հենց, արեւոկ, երկու եղբայրները՝ Սահասար և Բաղդասար (այլ Աբուսահ-լիթ, Աւիսահլիթ) կամ մի կապալա թագավորի արեւքն են, կամ Բաղդասար իստիֆուլի:

կամ Հնդկաց Մեկիճի որդիքը և հաշվում են Սպարը Պերիմ և Սինամ-Պերիմ, Թև Ձե-
նորի պատմածը Մամիկոնյան նախնիների մասին է, երևում է Նրանից, որ նա Տաքսոս
երկիրը այս երկու եղբոր սերունդների կալված է գնում իշխանաթյամբ, միմամանակ և
հաշում է երկիրը Մամիկոնից, ՎՄամիկոնից սուհն (էջ 8, 9, 13, 15, 37):

Կուստ. Մեղադու և Հոռեան եղբայրները, — շարունակում է այնուհետև
Ձենորը, — երևում են Քարքե լիւրը և այնանդ երկուս կուսք են կանգնում,
մեկը Դիսանների անունով, մյուսը՝ Դեմետրի, և նրանց սպասազորության
են ասլիս իրենց ազգը, ՎԳիսանն էր գիտաւոր էր, և վասն այնորիկ նորա
պաշտոնեայքն զէսք էին թողնալը, ՎԱյլ յոյժ դարմանալի էր տեսիլ նոցա-
քանդի սեք էին և զիսաւորք և զազրատեսակք, զի ցեղով ի Հնդկաց էինն:
Քրիստոնյա դաւանալուց հետո էլ, — ավելացնում է Ձենոր, — որպեսզի իրենց հին
հավատը հիշեն՝ հնարեցան ծամ միայն թողուլ ի գլուխ մանկանցն: Դե-
մետրի ու Գիսանների այդ հեթանոսական սրբավայրում շինված է քրիստո-
նեության ժամանակ ս. Կարապետի վանքը, ՎԳիսանն սկզբնապես հավա-
նորին եղել է հին Դեմետր կամ Սանտարամիտ աստվածուհու մականունը,
որ առասպելաբանության մթնած դարերում ըմբռնված է իբրեւ ջուկ անձ և
աստվածություն:

Ի՞նչ են այս անունները:

Գիսանն, Գիսանն, անպայման զգեստ, պիսան բռնեքից է, միայն հունական վեր-
ջադարձյալն աղած, որպեսզի առի՛ն առնու երևան նույն ինքը Ձենորն այդ անունը կա-
ղում է * զ Ե ռ ա թ հ հետ: ՎԳիսաննայ տեղից, այննակնեան տեղիցն Գիսաննայ կոչոյն
էջ 15 և հ.ս. 33, 36) Քարքե օտրի վրա է, ուր և ս. Կարապետն է: Արդ, ինչպե՛ս մեր օրերն
ևս այդ յեւը, որի վրա շինված է ս. Կարապետը՝ կալվում է Մշտ ծամ, որ նույն է զէսն:
Պարզ է, որ տեղիցն Գիսաննայ լեռան անունն է, թերեւս պաշտելի լեռան: Իսկ Դեմետր
անունը պարզապես հունական դիցուհու, մայր երկիր Դեմետրի անունն է, որ երկրագոր-
ծաւթյան, մշակութան աստվածուհի է, և վերջոյ լծած կուսք է նստում: Որտ դուսար Պեր-
սեփանն, որի պաշտամունքը նույնն է, ինչ որ իր մորը, կին է Հոգեւի, որ աստերեկայքն
կամ Սանդարամեացի աստվածն է, միանգամայն նշանակում է և մեզ: Ինքը Դեմետր աս-
տվածուհին հայերի մեջ թարգմանված է Սանդարապետ, Սանդարամեասպետ կամ Սանդա-
րամեան: Պարենապետ մեջ կա Վերջելի հրաման պատասխանայ ի օնդարամեասպետն
(կամ Սանդարամեան)՝ Պարզեթապետ, ուր այս բառը զործանված է Եղիպատաց Սերա-
պետ աստուծու համար, որ դժեմքի, օտարեկերպայքի աստվածն էր, և որին պատկերացնում
էին օձերով շրջապատված: Սանդարամեան բառը բովանդակում էր ծանոթանում է և նշանակում է՝
երկիր, խորք երկրի, դժեմք. զործ է անվում և սանդարամեաց անդրոցոյ: Արդ Դեմետր-
նյան տեղիքը, ուր Գիսանն—Դեմետրի կուսքերն են եղել, կալվում է Վարսան Զ զ Ե ռ -
Խ Ե Յ Ն, Վ Զ Ե Լ Ե Յ մ Ե Լ Ե Լ: Վարսանի ընդ դրանա քաղաքի զորք բազում մասնեան
նայնպէս և այս անգին դուռն էր դիւտաց. զի այնպիսի էին զեքն ի տեղալը Գիսանն,
որ չափ ի սանդարամեան և սանդանդան (էջ 16, 33): Այս ի նկատի առնելայով
իշխան և այն, որ մեր Դեմետրի հետ ևս կապված գտնում ենք օձ ալ վերջոյ, ոչն, որ նա
շինում է Օձ կամ Վերջոյ քաղաքը:—Կարծում ենք, որ Դեմետրիան տեղերում եղել է Սան-
դարամեան—Դեմետր աստվածության պաշտամունքը, և որ այդ տեղը համարվել է Սան-
դարամետի դուռն Չղեպք է մասնայն, որ մեր հին աստվածները, ոչ միայն մասնադիր-
ներն, այլև ինքն ժողովրդի մեջ հունական նույն կամ մասիկ աստվածների անուններով
են կալվել: Այդպես և Սանդարամեասպետ կամ Սանդարամեան անվան տեղ զործ է անվել
և Դեմետր: Իսկ Գիսանն, Գիսաննայ անունը, կործում ենք, Դեմետրի մի մակդիր եղած
պիտի լինի Դեմետրի, միմամանակ Վանդն աստուծու: Կաջորդ Ե. Կարապետն ևս իբրեւ

1 Տե՛ս՝ Նոր Բապղիքը Հայկազանի լեզուի, ուր բերած է վկայության նաև Վճար-
ընծայութեան արքայի Գիւրգի Նրուսեղեմացոյն թարգմանությանից:

աղիւստութեան և երեսման Սոյ Ժողովարանը հետո ըմբռնվել է իբրեւ ինքնակշիռ տեղի կամ Մշակութային տնտեսական և վերջը իբրեւ առանձին տնտեսագիտութեան և եզրային Գիտութիւն:

Այս հին տնտեսագիտութեան կամ տնտեսագիտութեաններու տնտեսները փոխանակել են Մատիկոնայան նախնիներէ տնտեսներին: Սրկու տարրեր տնտեսները շփոթվել են միմյանց հետ, և Գիտական-Գիտութիւն տնտեսով պատմվել է Մամ-Կոնի դրուսը:

Ս, Հիւսիսային ազգերի դիմ կոնի:—Հին վեպից Ձեռքերի մեջ գտնուած են և Տրդատի կոնի Նոստիսային ազգերի դիմ, որը, սակայն, կրած է դրական ազդեցութեան:

Գա Նալին կոնի է, որ Խորհրդային (Ռ. 83, 85) Ազգայնութեան և դիմ: Ձեռքերի մեջ այդ կոնի լինում է Վրաստանում, որ կոնի են միայն Տրդատի զորքերը, և Տարնում: Այստեղ կոնի վարդն է ինքը Տրդատը Համից վերադառնալուց հետո: Բուլղանդի մեջ Տարնում էր Նոստիսային ազգերի դիմ մի կոնի կամ հիշված՝ միայն Տրդատի որդի Խորհրդի որդի: Մանեանի զորքերը տարածվում են մարդիկ երկրը, և նրանց մի մասը բռնակ է դնում ի Երեւանի որ կոնի Յուլի: Վաշի զարգացումը, որ այդ ժամանակ դնացել էր Երեւանի ճանապարհ ի կողման Յուլի, վերադառնում, գալիս, հարձակվում է Նոստիսայիններէ դիմ և տնտեսի կոնի: Այս կոնի տեղը, Յուլի գալիս, որ թողալու էր բաշխում է Վաշին իբրեւ քաղաքային պարզ (Բուլ. Գ. 7, 8), Նալին է ինչ որ աւելի տեղ (Գ. 13) հիշված Բալ լեռը, որ է Տարնի Տաճար լեռը: Կնիսանի՝ Բուլղանդի մեջ Նոստիսայիններէ դիմ կոնի կոնի: Տարնում, Հաւաստանի (Հոստի) հետագայ ճանապարհից դարձող Վաշի ձեռք, իսկ Խորհրդային և Ձեռքերի մեջ Նալին կոնի Նալին հանգամանքներով պատմվում է Տրդատի համար: Ըստ Խորհրդային կոնի լինում է Ազգայնութեան, իսկ ըստ Ձեռքերի՝ Տարնում, Գրանց ժողովրդական վեպի Նալին միջոցակցի արձագանքներն են՝ տարբեր ենթակայ պատմված: Ձեռքերի մեջ գտնուած են Նալինի կոնի վեպի մի դիմ այս կոնի մեջ, այն է՝ Աշխարհ իշխանի դաժանութիւն իր թագավորին և պաշտօնը:

Տրդատ թագավորը համապարհ է ընկնում Վալին ի դուռն կայսեր վտան դնելու դայինս խաղաղութեան ի միջի իւրեանցը: Նա գալիս, հասնում է Աղանուկի գաւառի Մանիկերտ քաղաքագեղը: Այդ ժամանակները տարածայն հիւսիսային զորքով հարձակվել էր Վրաց իշխանի վրա, նրան փախցրել մինչև Կարնո քաղաքը, իսկ նրա երկիրը գերեվարութեան մատնել: Վրաց իշխանը Տրդատից օգնութեան է խնդրում: Նա Աղանուկի իշխանի ձեռով երեսուն հազար մարդով օգնում է վրացիներին: Հայ զորքերը գնում են Վրաստան, մի ամիս մնալով այնտեղ, գերիներին ետ են դարձնում, երեք իշխան և չորս հարյուր մարդ բռնում, բերում են Թագավորի մոտ: Սա հրամայում է գերիներին դնել Աղանուկում և ինքը գնում է Հոստի:

Հայ զորքերը Վրաստանից վերադառնալու ժամանակ՝ Տիստեղ կողմնապահ էին թողել Աղանուկի իշխանին չորս հազար մարդով: Բայց սա կաշառվում է Հյուսիսի թագավորից և նրան բերում է Հայաստանի վրա: Մինչ այդ՝ Տրդատը վերադառնում է և անտեղյակ լինելով իրերի դրութեանը, պաշարվում է Կուսաստան Հյուսիսականների թագավորի նպատակն էր բռնել Տրդատին: Երանդի Տրդատ բազում դաւաճու և քաղաք էր գնացա ջանքիւ և վաթսու հազար արս ի գերութիւն իջուցեալ ի Դուրին: Բայց Տրդատն առանց շփոթվելու՝ դասավորում է իր զորքերը և առավոտյան իրեն պաշարողներին, վեց հազար հոգու, բոլորն ի թակարթ արկեալ, սուր ի վերայ եղեալ կոտորեցին, և տնուանցեալ տեղին այն թակարթն, Կոտորում են և գյուղի վրա հարձակվողներին:

Իսկ թագաւորն Հիւսիսոյ առեալ զգորսն իւր,
 Գնաց ի Հաշտենից տափարակն:
 Եւ առաքեաց թուղթ առ Տրդատ,
 Թէ՛ «Եկ ի վաղիւն առցուք պատերազմ,
 Եւ եղիցի օր յաւիտենական ի մէջ երկոցունցս.
 Կամ առցես զիշխանսն իմ յիս,
 Եւ հարկս հնգեաստան տարույ.
 Ապա թէ ոչ՝ քանզեմ զերկիրդ քո,
 Սրով և դերութեամբ և մահուամբ,
 Որպէս զի խնիցես զգէմս խոզութեան քո,
 Որ եղեր առաջի գորաց քոց:
 Արդ ըստ այդմ որա զպատասխանիսդ»:

Հայոց թագաւորը պատասխան չի տալիս, այլ իր զորքերով գնում է հյուսիսականների վրա: Մարտն սկսվում է:

Ձայն բարձեալ արքայն Հիւսիսոյ առէր.
 «Աբգայ Հայոց, ինձ մատիրս,
 Եւ իբրեւ եկին ընդդէմ իրեբաց,
 Սկսան իբրեւ զմրճաւորս քառհասաց,
 Կամ իբրեւ զուռնաւորս որք պատեն զշանթս հրայրեացս,
 Մինն առնոյր և միւսն իջուցանէր:
 Քանզի արքայն Հիւսիսոյ մեծահասակ էր
 Եւ կորովի իբրեւ զՏրդատ:
 Եւ բազում կռփեալ միմեանց, օչինչ եղի:
 Բայց սկաւ պակասիլ արքայն Հիւսիսոյ.
 Եւ գիտացեալ Եթէ՛ Ֆրասկիոց եմ,
 Եւ քանզի ճապանաւոր էր՝
 Աճապարեաց և ձգեաց զճապանն,
 Եւ արգել զաջ թեկն ընդ պարանոցն.
 Եւ փութանակի դարձաւ և կղթեաց զճապանն,
 Մինչ զի և չկարաց բնաւ շարժել զձեռն Տրդատ:
 Եւ մտաղկեալ զհուշտ երիվարին՝
 Ձկնի Գեղաեհունին այնպէս փութացեալ,
 Մինչ զի ոչ ետ քայլել նմա առաջի իւր տասն քայլ:
 Իբրեւ էհաս նմա, աւէ.
 «Կատաղի շուռն, խառնեցիր զկնի քո ջլացդ»:

Տրդատն սպանում է հյուսիսականների թագաւոր Գեղաեհունին: Եվ այնուհետև վիպական մանրամասնութեամբ ուսումնվում է: Թե ինչպե՞ս այս և այն իշխանները մարտնչում ու հաղթում են հյուսիսականներին: Նրանց մատուցողները միայն հազիվ հասնում են իրենց երկիրը: Վերջը բռնում են Աղձնիքի իշխանին և բերում են թագաւորի առաջ: Նա ուզում է «ծայրատել զոռս և զձեռս նորա», բայց Ս. Գրիգորն արգելք է լինում, և միայն «ի պատուոյն մերժել հրամայեաց, և վարել ի գաւառէն Հայաց» (էջ 46 և հաւն.):

1. Բովանդակությունը:—Հովհան Մամիկոնյանի մասի մեջ հին վեպից մնում է Մուշեղի պոռնությունը, որ ընդարձակված է Գոյլ Վահանի և հաշտության գրություններով իբրեւ Պատերազմ Տառնոյս: Բովանդակությունը հետևյալն է: Նիխորեանը սպանում է Պարսից Որմիզդ թագավորին. սրա որդին՝ Ջամբ Պոսրովը փախչում է Հունական երկիրը և Մորիկ կայսրից զորք առնելով՝ գալիս է նվաճելու իր երկիրը, Մշո ու Պաթա անք և Տարոն ու Սասունի իշխան Մամիկոնյան Մուշեղին Դվինում Հայոց մարզպան է կարգում Պոսրովը և ինքը հունական զորքերով գնում դեպի Բաշ Ծառաստան: Հունները հաղթողությամբ չեն ուղում Հայոց զորքի հետ մի տեղ մնալ, այլ մի օրվա ճանապարհ հեռու են լքում: Այն ժամանակ Նիխորեան թագավորը ութսուն հազար զորքով հարձակվում է Մուշեղի երեսուն հազար զորքի վրա: Մուշեղը քաջակերելով իր զորքին և ս. Կարապետին ոգնակա՛ն կանչելով՝ հաղթում է Նիխորեանին և նրա գլուխը մուրճով ջարդելուց հետո՝ կարում, ձգում իր մաղախը: Կոտորում են նրա բանակի մարդկանց, միայն քառասուն և ութ իշխան ու հազար մարդ կենդանի թաքնում են: Պոսրովը ուրախ է և ուղում է պարգև տալ հայերին, բայց հույներն ամբողջ մնալով, որ հաղթությունը հայերն են տարել, նախանձում են Մուշեղին, և Մորիկն ուղարկում է Պոսրովին ասելու. «Դիմի՛ս դու զայդ, որ արքայի մահու սպառնալ Մուշեղն: Պոսրովը մտածում է դարան մահու գործել Մուշեղին, կանչելով նրան իր մոտ. բայց Պոսրովի ճուշդն իմանալով եղոր նենգությունը՝ իմաց է տալիս Մուշեղին, և սա քառասուն իշխանի հետ գլխոված ու ձի նստած գալիս է թագավորի վրանի դուռը, և ամենայն խստութեամբ տուժելով պատասխանի, և ի լոյս ածելով զմահու դարանն, թքակեղեցին գնա... Իբրև լուաւ զայն թաղաւորն՝ երկեալ, քանզի մահուկ էր: Եւ ինչ իշխանն Մուշեղ արևակեաց տա Յունաց զօրավարն և ասէ. «Կամեցայք դուք սպանանել զիս նենգութեամբ. արդ մի զարթուցանէք զառիւծ՝ որ ի քուն է և մի զգայլ՝ զիւր բարսն մտառեալ է. ապա թէ ոչ, այն որ զութսուն հազարսն յաղթահարեաց, կարող է և զեթանասուն հազարսն ստատելել: Եւ ինքն թողեալ զզօրսն ի Դուին, ի բաց եկաց ի մարզպանութենէն. և առեալ զզօրս իւր, որ ի Մամիկոնեան տանէն էին, եկն ի գաւառ իւրս:

Մինչև այստեղ Մուշեղի այս վեպը միևնույն պոռնություն է, ինչ որ Սեբեոսի պատմածը, միայն թավելի մանրամասն է, և վելի ժողովրդական վիպական ձևով, նույնպիսի ժողովրդա-վիպական բնավորություն ունի և շարունակությունը, որ չկայ Սեբեոսի մեջ: Սպառնում է Մորիկը, և Պոսրովը գնում է նրա մահվան վրեժն առնելու: Նա մարդ է ուղարկում Մուշեղին, որ իր հետ գա. բայց Մուշեղը պատասխան չի տալիս: Պոսրովը վերադարձին իր քեռրդի Միհրանին երեսուն հազար զորքով ուղարկում է Տարոն Մուշեղի վրա՝ հրամայելով թաքնել նրան և Պարսկաստան տանել, և զգեղին, յորս նա հրաւատան ունէր, կործանել և զկրօնաւորսն սպանանել: Ս. Կարապետի կրօնավորները փախչում են Ողտկան, ուր ամրանում է և Մուշեղը: Պարսիկները գալիս են

յութն խոտաճարակներին կոտորում Մուշեղ իշխանը, որ հարյուր քսան տարեկան ծերունի է, այդ լսելով՝ զգալու էր իրեն զմեռելու զնէր անխոսք: Զորքը նրան խնդրում է Միհրանին ճանապարհ դնել, և նա կանչում է յուր մոտ Վահանին, որին Տարոնի իշխան էր կարգել, երբ ինքը Դիլինում Հայոց մարզպան էր, և նրան ուղարկում է Միհրանի դեմ:

Վահանը, որ նույնպես ծեր է, ութսունութ տարեկան, խորամանկությամբ դարաններ դնելով, կոտորում է Միհրանի բոլոր զորքերին Օձ քաղաքում և ուրիշ տեղերում, սկսանում է Միհրանին և քառասուն հոգի միայն զրուցատար թողնում Պարսից թագավորի համար: Իր երկրում խաղաղությամբ մեռնում է Մուշեղը, և նրա տեղը Մամիկոնյան տան իշխան նստում է Վահանը:

Խոսրովը երկրորդ անգամ Վահանի վրա ուղարկում է Միհրանի հորեղբայր Վախտանգին երեսուն հազար զորքով: Վահանից հորն և հնազանդություն են պահանջում, բայց նա մերժում է, և դարձյալ հաղթում են պարսիկներին: Նույն տարին մեռնում է Վահանը, և տեղն անցնում իր որդին՝ Սմբատը, որ կովի մեջ օգնական էր իր հորը:

Մյուս տարին Վախտանգը դարձյալ հավաքում է քսան հազար զորք և դալիս Սմբատի վրա, հարկ և հնազանդություն ուղիւն: Բայց Սմբատը հաղթում է Վախտանգին և մինչև անգամ նրա կնոջն ու որդուն զերում է և Արից բերդը դնում: Վախտանգի եղբայրը՝ Սուրեն՝ ինն հազար մարդով գալիս է դնելու իր եղբոր կնոջն ու որդուն, բայց սրան էլ Սմբատը ճանապարհ է դնում: Խոսրովը դարձյալ ուղարկում է Տիգրան անունով մեկին քսան հազարով, որ պահանջում է Մուշեղի և Գալլ Վահանի ոսկորները: Սմբատը սրան էլ հաղթում է և ապա մեռնում է, և տեղն անցնում որդին՝ Վախան Կամոթարեղին, որ հոր օգնականն էր նրա կռիվների մեջ:

Տասնութ տարի հետո Խոսրովը հիսուն հազար զորք է ուղարկում: Տարոն Վարդգեսին անունով մեկի ձեռով, բայց Վահան համառակտան իր որդի Տիրանի հետ հաղթում է պարսիկներին և վերջանում է Տարոնի պատերազմը: Եվհար եղև պատերազմին Տարոնոյ:

Հովհան Մամիկոնյանն այս բոլոր պատերազմներն, ամենայն մասնաժողովություններով պատմում է իրեն Տարոնում կատարված իրողություններ, որոնց մասին ոչ մի հիշատակություն չի անում Սեբեոս պատմագիրը:

2. Ժողովրդավաճ ծագումն ու խմբագրումը:—Այս վեպն իսկական ժողովրդական մի պատմվածք է, իսկապես պատմվածքներ, որոնք գրեթե ամբողջապես ավանդական բնահյուսությունից են ծագում, ուստի և ունին իրենց մեջ ժողովրդական վիպական օճի հատկություններն ու մոտիվները:

Ժողովրդական զրույցն ու երգն իրեն աղբյուր հիշվում է մութը կերպով պատմվածքներից մեկի համար: Դա է Սմբատի կռիվը պարսիկ Սուրենի զորքերի հետ (էջ 37—42): Սմբատի նիզակակիցն է այդ մարտի մեջ Վարազ Պալունի իշխանը, զորն այնչափ հզոր էր, որ մարդոյն քան զմիմեզն ալ ոչ կըկնէր:» Երկուսն էլ քաջ մարտնչում են: Կովից հետո Սմբատը հրամայում է պարսից զինվորներն իրար վրա կուտել մարտի տեղում բլրի վրա, որ և Վարազի արած կոտորածի համար կոչվում է Վարազ բլուր: Ապա իրենք զալիս

ի խնամում են Եկնաց Վարդը կոչված գյուղում։ Այդ ժամանակ գրուղացիները
երգ ու պարով դիմավորում են հաղթական մարտիկներին։

Եւ իբրեւ մտին ի դիւղն,
Ընդ տուջ եղեն նոցա պարուտորքն,
Եւ երգս ատեալ բողում ինչ իրաց՝ գովէին։
Որ և յետոյ ի հոտել զիականցն և յորդնել,
Շէր հանեալ ասէին,
«Կերան զսպանք զմարմինս զիականցն Վարազայ,
Եւ գիրացան։
Գուպ կերեալ՝ ուսաւ որդէս զարջ։
Եւ աղուէս հպարտ եղեւ քան զտոբեծ.
Գայլ, քանզի շտտակեր էր, պայթեաց,
Եւ արջ, քանզի զոր ուտեն՝ չմնայ առ ինքն,
Ի սովոյ մեռաւ։
Անգեղք, քանզի ագահք էին,
Նստան և ալ ոչ կարացին վերանալ։
Մկենք, քանզի շատ կրեցին ի ծակսն,
Ոտքն մաշեցան։
Ջայս ամենայն ասացին,
Եւ ի դէպ էր վասն իրացն.
Որ և կոչեցաւ տնուն զեղջն Շիրականիս։

էջ 42.

Մի կողմ թողնելով Վարդ Պատրիկի կնոջ՝ Մարիամի մասին պատմածը
և վերջին երկու հատվածները՝ Միծառնա խաչի և Տիրանի մասին, որոնք
առանձին գրույցներ են, մնացածն, ինչ որ պատմում է Հովհան Մոսկոնյանն
իրրև Շարունի պատերազմն, կամ երկրորդ հին վիպի մնացորդներն են, կամ
անգական զրույցներ, որոնք խմբված են եղել «Պարսից պատերազմին» շուրջը
և կապված են եղել այդ պատերազմը վարող հերոսներից որևէ մեկի անվան
հետ։ Անշուշտ, որոշ տեղերում երևում են նաև խմբագրողի հավելումները,
ինչպես են՝ խոտանաբակների աղոթքը (էջ 16), գլուխների վերջում (էջ 28,
29, 43, 44) տրված տեղեկությունները ս. Կարապետի վանքի մասին, վանա-
հայրերի հաջորդությունը, այլև շատ տեղերում ավելացրած կրոնական բովան-
դակութային կտորներ։ Բայց ամբողջն ընդհանրապես ժողովրդական է։

Առանձնապես այլքի է ընկնում այն, որ Տարունի ընակիչների մեջ
եղել են բազմաթիվ զրույցներ, որոնցով բացատրված են եղել տեղանուն-
ները։ Այդ ժողովրդական ստուգաբանության գրույցներն ևս հարած են
եղել «Պարսից պատերազմին»։ Եվ այդ բնական է։ Այդ միևնույնը գտնում
ենք և մեր նոր վիպի մեջ, Դավթին մահացու վերք է հասցնում իր զարմի-
սի աղջիկ։ Դավիթը բռնում է նրան։

Ձուտք դրեց վրը մեկ սովուն։

Ու քաշեց թըվտեց, թախեց սաբուս աղու զեղ։

Ու զըզ գեղի անուն դրեց ձըվտիս-ձապիհիս։

Ու էդ դեղ էլ հար հըմկա՛
Հանդ է Զըզուբա բերան,
Ու անուռ ըն՝ ծաղկիտ՝:

Այդպիսի գրույցները, սակայն, «Տարանի» պատերազմին մեջ այնքան չառ են, մասնավաճ վեպի վերջի մասում, և մի քանիսն այնպես անկապ են մեջ բերված, որ դժվար է կարծել, թե ժողովրդի մեջ հենց այդպես պատմված լինեին բոլորը՝ Որդեցորդի հաջորդությանը (Մուշեղ, Գայլ Վահան, Սմբատ, Վահան Կամսարական և Տիրան), ինչպես տեսել ենք, հասուկ է մեր հին ու նոր ավանդական վեպերին: Բայց ընդհանուր խորագրությանը, երևում է, կատարված է Հովհան Մամիկոնյանի ձեռով, այն էլ բազմական պարզամիտ կերպով, առանց ուշ դարձնելու մշակությանը: Ուստի կան մեջք նաև անհար բաներ: Այսպես, օրինակ, Սմբատը պատանի է (էջ 33) և կարճ ժամանակից հետո նա արգեն ձերուհի է (էջ 41, 47): Այդ տարբերությանը ծագում է, անշուշտ, տարբեր պատմամեթոդից կամ ձեռագրական աղանդականությունից:

3. Պատմական:— Կարելի չէ ասել, թե այդ բոլոր գրույցները միայն Մամիկոնյանների վրա են պատմված եղել: Գայլ Վահանի թոռ Վահան Կամսարականը հովաստյով մասամբ նույն Գայլ Վահանն է, կրկին պատմված: Բայց նրա Կամսարական ժականունը ցույց է տալիս, որ նա Մամիկոնյան չէ եղել, ինչքան էլ խմբագրողը բացատրեր, թե նա «մայրենեօք» այդպես է կոչվել: Վահանի որդի Սմբատի անունը հիշեցնում է վեպական Սմբատ Բագրատունուն, նրա վրա էլ պատմված կա (էջ 44) Սմբատ Բագրատունու Մեհրուհյանին պատկերող պատմությունը: Նման մի բան: Պարսից զորավարը մարգ է ուղարկում Սմբատին՝ խոստանալով մեծություն, միայն թե նա Մուշեղի և Գայլ Վահանի ռազմաբարձր տո իրեն: Եթե նրա կախալ զոհապահություն, հրոցոյց շամփուր մի երկաթի, և եղ պսակ շուրջ զանաւորութիւն և ասէ. Կաց տեսանեմ, թէ վտանք չի զինչ պարզապէս դայց է ինձ, որ ես քեզ պսակ եղչի: Այս Սմբատի անունը հին վեպի Սմբատի մի արձագանք է լոկ, ինչպես և Մուշեղը հին վեպի Մուշեղն է:

Իսկ իր պատմական անձի հիշողությանն են Գայլ Վահանն և Վահան Կամսարականը, որոնց վրա դալիս են պարսից զորավարները, և որոնց անդ կապասեինք, որ հին վեպի Մանուել Մամիկոնյանը դուրս գալու:— Գայլ Վահանի անունը, կտրվում ենք, փոխանակած է Մանուելին՝ Տ-րդ զորուհեթոն Վահան Մամիկոնյանի պարսիկների դեմ վարած կռիվների ազդեցությամբ: Իսկ Վահան Կամսարականի անվան մեջ նույն է հիշողությանը: Արշավիր Կամսարականի օրդինների՝ Վահանի, որոնք զորեակից էին Վահան Մամիկոնյանին և սրա վարած կռիվներում ընդդեմ պարսից Սուրեն, Մին-

¹ Սրվանձաթանց Գ., Գրոց ա. Բրոց, Կ. Պարս. 1874 թ., էջ 170:

² Զեյթուն Պարսիս, Պարսիս, Գրգուս անունների համար զբանքները, այդպեղ գտնում ենք և նույնալ անուններն ու զանազ գրույցները. Արինչ (էջ 32), Մահաւ ագարակ, Թիւ (էջ 34), Մահաւ լուս (38), Սրեմանուր, Գագոց աղբուր (39), Ժողով (40), Թմբուշար Վարդապետ, Շիրակապետ (42), Հանգեկեց (47), Մագուց զբեղման (45), Հանգեկեան (47), Յեռան (48), Վար Անկեր, Պագուկ, Փանդիկ (52), Հարկեր (53):

րան և ուրիշ գորավորների, թե Վահան Մամիկոնյանի մասին գրույցներ են նդել, երեւում է Սեբեոսից, որին ծանօթ չէ Ղազար Փարպեցու Պատմությունը, որ և հազմաստիվ ժողովրդական ավանդություններից առնելով՝ Փարպեցուց տարբեր պատմում է Վահանի ապստամբությունը, պարսիկներին հալածելը և Գերանա դաշտում պարսիկներին հաղթելը։ Արդ, Սեբեոսը պատմում է նաև, թե ինչպես Վարդան Մամիկոնյանն ապստամբում է Խոսրով Անուշ Ըստան թագավորից, սպանում է Սուրեն Մարզպանին, թագավորն ուղարկում է Վարդանի վրա Միրան անունով մեկին, ջստն հազար զորքով, ապա և ուրիշներին, և նույնիսկ ինքը թագավորն է գալիս Վարդանի վրա, բայց նա էլ հաղթվում է և իր կնոջը գերի թողնելով հայերի ձեռին՝ գալիս է։ Այս Մամիկոնյան Վահանի ու Վարդանի հիշողություններն են, անշուշտ, որ մնացել են «Տարոնի պատերազմի» մեջ, միայն Վահան ու Սմբատ անունների հետ կապված։ Այս Վարդան Մամիկոնյանի մասին շատ բան չգիտենք, իսկ պատմական Վահան Մամիկոնյանի բնավորությունը հայտնի է Փարպեցուց, որը շատ լավ բնորոշում է Վահանին Վազարշ թագավորի բերանով։ «Եթ գուցէ,—ասում է Վազարշը,—յոյնալ ջո առ Վահան, և նա պատճառանօք քաղցր խոսելով ընդ քեզ՝ խաբիցէ գեղդ և ֆուս ինչ առնիցէ։ Վասն զի այրն ինքն քաջ է և բազմամիտ և, քանզի և ցայժմ ոչ այնքան զայնպիսի գործեան վճարեաց նա և որք ընդ նմա էին՝ լոկ քաջութեամբա։ Եվ այդ բնավորությունը երևում է Վահանի բոլոր արարքների մեջ, երբ նա կոտորում է պարսիկներին, նույնպիսի բնավորությունը գտնում ենք և «Տարոնի պատերազմի» մեջ Գայլ Վահանի համար։ «Յիրաւի է ինձ անունդ [Գայլ], ասում է ինքը հեքոսը. քանզի գամ կոտորեմ, երթում և այլ գամ» (էջ 33)։ Բայց այդ գայլի նման կոտորող Վահանը ոչ այնքան քաջությամբ, հակառակ առ հակառակ կովելով է հաղթում թշնամիներին, որքան խաբեությամբ ու խորամանկությամբ, նա «խմաստությամբ» որսում է պարսիկներին և թակարդի մեջ ձգելով ջարդում է նրանց։ Ժողովուրդը սովորաբար, և ոչ միայն մեր մեջ, խորամանկությունը խելք է համարում, իսկ ուղիղական խորամանկությունը՝ «խմաստություն», ինչպես է և մեր «Տարոնի պատերազմի» մեջ։

4. Վիպակամ մոտիվներ և գաղափարակազմացում չափազանցումով։— «Տարոնի պատերազմի» մեջ ընդհանրապես նույն վիպական ոգին է երևան գալիս, ինչ որ «Պարսից պատերազմի» մեջ. բայց կան և նոր մոտիվներ։ Ամենից առաջ հենց այդ ուղիղական խորամանկությունը։ Մինչ հայ իշխանները, զլիսավորապես Գայլ Վահանը, այնպես «խմաստուն» են հանդիսանում, պարսիկներն, ընդհակառակն, անմիտ ու միամիտ են և խաբվում են։ Շատ պարզ երևում է, որ այդ գրույցների մի մասը պատմվել են ոչ միայն Մամիկոնյան իշխանների և նրանց զինակիցների քաջությունը գովելու համար, այլև պարսիկներին հաղթելու։ Հակառակորդների այդ խաբվածությամբ էլ բարձրանում են Մամիկոնյանները։ Զվարճալի է նույնիսկ այն երգը, որ հարկնված է Վարդաբուրի վրա, որ և բերված է վերևում։ Հարկվածների մազըը գրույցների մեջ,—ի՞նչ հարեան գրույցների կամ գովածների, թե հարեան ազգերի,—մի սովորական երևույթ է ավանդական բանահյուսության մեջ։

Երեւում է, թե ինչպե՞ս միամտաբար զվարճացել են այդ վեպի ունկընդիւնները լսելով, թե ինչպե՞ս Գոյլ Վահանը, Մուշեղից ասպետածը ձեանալով, գնում է Պարսից գորտվար Միհրանի մոտ և, իբրեւ այս վերջինիս հավատարմը, չորս-հինգ անգամ խտրում է նրան, նրա զորքերը մաս-մաս անելով կտորում և վերջն անազորութիւն կերպով սպանում նրան։ Նա շարունակ խտրում է և նրա բազմաթիւ իշխոսներին ու յուրիւն մեկ-մեկ կոտորում և նույնիսկ մերկացնելով ու ծաղրելով, նրանց կենդանի-կենդանի տալիս տարա-խուժյա՛ն ժամանակ։ Միհրանի երեսուն հազարանոց բանակից տգասովում են միայն քառասուն մարդ, այն էլ ինչի՞ համար։

Եւ հրամայեաց արս քառասուն թողաւ
Զբուցատարս Պարսից արքային։
Եւ ետ տանել զգլուխն Միհրանայ
Առ թագաւորն Պարսից, ասելով.
«Այս մարգպանս Հայոց յորժամ եկն յերկիրս մեր,
Եւ զօրս հակառակեալ ընդ իրեարս՝
Գունգ խնդրեցին և ոչ կարացին դառնել։
Եւ Յոյնք մեր թշնամիք էին,
Ի նոսա ոչ իշխեցաք զնալ։
Եւ ձեզ ընդ ակամբ էաք.
Եւ ձեր զօրացն գունդ ոչ կայր.
Ապա կտրեցաք զգլուխդ զայդ, և խաղացաք
Այլ լուաք, եթէ ի Շահաստանէ
Ելեալ էք ի Բոսոր քաղաք,
Երկիր տափարակ և զաշտան,
Եւ գիտեմ, որ պնդի խողաք.
Առէ՛ք զգլուխ քառորդայդ ձերոյ,
Եւ եզիցի պա ձեր գունդ ազգոց յազգան։
Եւ իբրև գնացին արքն քառասուն,
Եւ տարան զգլուխն Միհրանայ առ արքայն Խոսրով,
Եւ նա խոտվեցաւ, պղտորեցաւ,
Ամոչեաց զամօթն յաւիտենից։
Էջ 28.

Վեպի մեջ չտփազանց մեծ տեղ է բռնում մարտը, որ ֆեոդալի կենսադի մեջ էլ կտրե՛ր դեր է կատարում։ Փոխադարձ ծաղրը, անարգանքն և տրհամարհանքը մարտի ժամանակ սովորական է այս վեպի մեջ ևս։ Վահանը ջարդում է իր վրա եկած արսկական զորքերը, Վախտանգ զորա-վարը սաստիկ բարկանում է նրա վրա։

Աւաքեաց զարձեալ զԱսուր ի վերայ ութ հազարաւ
Որք եկեալ բանակեցան յերբո Մեղտայ,
Եւ արձակեցին առ Վահան այսպէս.
«Ա՛յ չարաբարոյ Գոյլ Վահան,

Մինչ զիտես, եթէ ծառայելոց ես Արեւոց արքային,
 Ընդէ՞ր աղաչէս յանդիմանել տնտեսութիս:
 Արդ արի եկ առ մեզ, և լին հարկատու:
 Ապա թէ ոչ, մեռանիս որդէս գոռնն:
 Եւ նորա լուեալ զայն, առեալ վեցհազար այր՝
 Գնաց ի վերայ նոցա ինքն և որդին իւր Սմբատ:
 Իբրև կացին հանդէպ իրերաց,
 Սկսուա Ասուր թշնամեալ զՎահան,
 Էւ Գայլ կոչէր նմա:
 Եւ նա ասէ. Յերաւել է տնունդ ինձ.
 Քանզի զտմ կոտորեմ, երթում և այլ գումն:
 Էւ սկսան մարտնչել ընդ միմեանս:
 Իբրև խմբեցաւ պատերազմն,
 Ակն կալուա Սմբատ որդին Վահանայ՝
 Ի վերայ Ասուրայ, և պատահեցաւ նմա:
 Իսկ Ասուր տեսեալ, եթէ պտտանի է,
 Քամահեաց զնա և ասէ.
 Քարապետա հարճորդի, ի բոց կոց,
 Զի ի պտտերգմո՞ղ արսն ելանեմ անցանեմս:
 Եւ նա ասէ. Որդի սատանայի,
 Յերաւել է տնուն քո Ասուր,
 Զի սուր քո չէ ինչ,
 Եւ ի մարտնչել ընդ կարճին՝
 Մանիցես զպարտութիւն քոս:

Էջ 33.

Սմբատն ու Պարսից զորավար Վախտանգը հակառակարտի մեջ մե-
 ռաւարտուաւ են,

Եւ յամենայն կողմանց ի վերայ յարձակեցան,
 Եւ ի մէջ առին զզորսն Պարսից.
 Եւ խորեցաւ պատերազմն ընդ իրարս,
 Մինչ զի ոչ գոյր հնար ճանաչել զմիմեանս,
 Բայց միայն ի ձայն փառօցն և ի տեսս դրոշացն:
 Իբրև ի դիմի հարան Վախտանգ և Սմբատ,
 Ասէ Վախտանգ. Քեանց, հարճորդի,
 Թէպէտ և քրազուսմ ջնջեցեր,
 Սակայն այսօր չարձնուա ի ձեռաց քոյ՝ առնուցս,
 Որ գէշ գէշ պտտառեն զձեզ սուսերք մերս:

Էջ 35.

Երկուսով հարվածուաւ են միմյանց, Հաղթուաւ է Սմբատը:

Եւ հանեալ զսուրն՝
 Կարեաց զգլուխ նորա,

Եւ ոչ կարաց ունել.
 Զի գրազում մարգկաւն
 Վազեաց զլուխն Վախտանդայ,
 Իսկ մի ռա ի ծառայիցն նորա
 Էտա զգլուխն նորա և փախեաւ:
 Եւ հասեալ Սմբատայ՝
 Եհար մրաֆն ի վերայ դադաթանն,
 Եւ գոգեաց զսողաւարոն,
 Եւ զլիսյն ոսկրն փոսեալ:
 Տեղի տայր սաղաւարոն մրճին Սմբատայ,
 Եւ հաղիւ կարաց հանել:
 Եւ նորա հանեալ ընկէց զգլուխն, և ինքն մեղաւ:
 Եւ մեւա ալ ծառայի տեհալ զգլուխն՝ փախեաւ:
 Եւ Սմբատ զհետ մտեալ՝ ասէ.
 «Պարսիկք, մի անմտանայք.
 Զի մինչև յայս անկու Վախտանդ,
 Որ արապաւ ծառայեզ զգլուխդ տեհալ փախիք:
 Ապա գիտասցիք, թէ ձեզ այգալէս պարտ է լինել:
 Եւ ձեզալ ծառային զգլուխն ի կուրծսն Սմբատայ,
 Եւ ասէ. «Տեսր խորովեա և կեր զգա.
 Վայ ձեզ, որ այլ վաղ ոչ տղանէք:
 Եւ Սմբատայ տեսալ զգլուխն,
 Եւ զհետ մտեալ ծառային, ասէ.
 «Այ տիրառեաց պարսիկ,
 Զգլուխդ քո ընդէ՞ր ոչ փոխանակեցեր տեսոն քո:
 Արդ որովհետև տիրատեաց էք.
 Ես բառնամ զգլուխ քո ի քէնս:
 Եւ եհար զնա տիգաւն ի տիրոն,
 Եւ անցոյց գաւէզն յայնկոյս,
 Եւ ընկեցեալ յերկվարէն,
 Կարեաց զգլուխ նորա:
 Եւ գտրձաւ մեծաւ յաղթութեամբ ի քուրն...
 Եւ իբրև վճարեցաւ պատերազմս,
 Հրամայեաց ծանկել զնոսա ի ձորս և ի հեղեղատաւ:
 Եւ կոչեցաւ բլուրն այն Մահու բլուր,
 Եւ 35 և հա.

Երբ Սմբատը Վախտանդի ամբողջ բանակը ոչնչացնում է, նրա որդուն ու կնոջն առնում, տանում են Այծից բերդը:

Եւ յգեալ առ Պարսից թագաւորն Խոսրով, և ասէ.
 «Տուր ինձ երկրտասան տարւոյ հարկ,
 Որ զօրքդ քո զիմ երկրիս ղխտան և զհացն կերան,
 Եւ զփայտսն ալրեցին.

Եւ զջրոյ՝ զոր արբիւն՝ զգինն.
 Եւ զտանաբացն զգինս,
 Զոր՝ իմ հայրն ալբեաց վասն քո, Գայլ Վահան.
 Եւ դարձեալ զսապոնի գինսն,
 Վաթսուն հազար գահեկան,
 Որ զքո զօրացն զգիշահոտ հալաւն
 Եւ զարիւնաթաթախ հանդերձոն
 Լուսնալ առաք և ազաք,
 Ապա թէ ոչ, դամ հարեւր մարդով ի վերայ քո,
 Եւ զամենայն պարսիկս դիքեալ՝ ի Տարոն ածեմ,
 Եւ ի քո աստուածքդ շուէն խառնեմ,
 Որ փոխանակ դոցա հաջին ի ձեզ.
 Արդ փռւթով, զոր ինչ ասացի քեզ, արձակեալ,
 Ապա թէ ոչ, տեսունես,
 Թէ զինչ անցք անցանեն ընդ ձեզս.
Էջ 36 և հա.

Ահա թե ինչ պատգամ է ուղարկում Տարոնի, Խուլթի, Դատախի ու Սասունի տեր Մամիկոնյան իշխանը Իրանի աշխարհակալ Խոսրով թագաւորին՝ Ֆեռդաուսի անապարծ հերոսական զոհաբերականացումն է այդ, որով լի է այս վեպը, Լավ է, որ վիպասանն ավելացնում է, թե թագաւորն այդ լուրերով, ծաղր առնէր զՍմբատ. և ոչ դրեաց պատասխանի թղթոցն Սմրառայա, Նույն ոգին երևում է ամեն միջոգեպերի մեջ, Ահա փրկանքի մասին պատմված սյուսեանքը,

Բայց եղբայրն Վախտանգայ Սուրէն,
 Առեալ հարեւր հազար գահեկան,
 Եւ ինն հազար ալբ, եկն ի Տարոն,
 Դնել զգինն և զորդին Վախտանգայ,

Սմբատը դիմաւորելով նրանց՝ ընդունում է սիրով ու բերում Մուշ, Տասն օրից հետո Սուրենն ուղղում է իմանալ, թե ուր է իր եղբորորդին,

Իսկ նաքա ցուցին գրերդն (Այծից),
 Թէ անդ է, Եւ նա առէ.
 «Անդ այժարած է, Թէ՞ դիւարածս,
 Եւ ձիծաղեալ Սմրառայ՝
 Ընդ աղի բանսն Սուրենայ,
 Առաքեաց և ետ բերել
 Զկինն և զարդին առաջի իւր,
 Եւ իբրեւ ածին, ասէ Սուրէն.
 «Իշխան հզոր ի վերայ աշխարհիս Հայոց,
 Տմա զսոսա Պարսից արքային տուրս,
 Իշխանն ասէ. «Պարսից արքային
 Եւ մեռեալ շուէն մի ոչ տամ,

Որ ճաշ ասի տառնք զնայ, թող թէ պատահ
 Բայց զու զնիկ թէ կամիս: քաջ տամ:
 Ապա թէ ոչ, զնացէք դուք երեքեանդ՝
 յԱրժբունիս այժ արածեցէք,
 Եւ բերդին ծառայութիւն արարէք,
 Եւ դիմ հացս կերայք աներախտիս:
 Իսկ Սուրէն քանզի իմաստուն այր էր, տաւ:
 «Ո՛վ բարեպաշտ և հօր իշխան,
 Թէ և զչուն դարպասիդ քո բարածել տայիր,
 Դեռ պարծանս է մեզ՝ որ ի դրան քում կայաք,
 Թող թէ այժ արածելու
 Բայց թէ լսէք մեզ:
 Առէ՛ք ի մէնջ հարեւր հազար դահեկան,
 Եւ երկու հազար ուղտ,
 Եւ վեց [հազար] պարսիկ ձի,
 Եւ մեզ տուր տաք զայս կինս և զմանուկս:
 Իշխանն տաւ: «Զայդ որ բերեալ ես, այդ մէր է:
 Զի զքո գլուխդ կտրեմ,
 Եւ դոր ունիս՝ յիս առնում:
 Բայց թէ ի՞նչու քեզ պիտոյ են,
 Դու քրիստոնեայ լեր ե կնքեաց,
 Եւ դիս սոս և ի պարսիկս գնա, և դոքա քեզ:
 Ապա թէ ոչ, ձեզ անլ հնար իմացէք»:

Սուրենը բերում է, փրկանքները ներկայացնում է Մամիկոնյանին.

Իսկ նա տաւ: «Հաւանիմ տրոցդ,
 Բայց հարեւր և ութսուն հազար՝
 Փայտ են տա՛րեալ ի Քարքէոյ:
 Եւ չորեք հարեւր հազար դահեկանի՝
 Խոտ են կերեալ ի դաշտէդ:
 Եւ վաթսուն հազար դահեկանի՝
 Որ զնին և զեղջերու և զնապաստակ երկրիս
 Որսացեալ են և կերեալ:
 Զլըոյ ե հնացի գինն թողում,
 Բայց զանոյշ գինին Ասորոց և Սալմանայ և զՄոխրայ
 Այս երկու տարի է՝ որ յինէն կտրեալ էին:
 Եւ ինքեանք արբին, դայն թող տան:
 Եւ զվեց պաւառին հարկն, զոր առեալ են,
 Եւ զքաղաքին մուտսն, զոր կերեալ են,
 Զորեք հարեւր [հազար] դահեկան,
 Զայդ ամենայն թող բերեն,
 Եւ դու քրիստոնեայ լեր,
 Եւ դիս ի պարսիկս տար, և դոքա քեզ»:

Էջ 37 և հտ.

Ապա պատմվում է, թե ինչպես Մաքսիմ Գորբին ասիտի է տանում իր վանքը, ճանապարհին նենգությամբ սպանում են նրան ու պարսիկ իշխաններին և հետո մարտնչելով նրա զորքի հետ, կոտորում են նրանց։ Սակավաթիվ մարդկանց միայն ազատում են։

Իսկ զարան ուր ի Մեղտի տարան,
Բժշկեալ ի ցաւոց վիրացն,
Եւ հա նոցա գանձս և երիվարս և զէնս.
Եւ յղեաց զնոսա ի պարսիկս։

Էջ 42.

Մամիկոնյանները, ինչպես «Պարսից պատերազմին» մեջ, միշտ հաղթող են։ Այս երրորդ վեպի մեջ նրանք նույնիսկ ժամանակավոր անհաջողություններ չեն ունենում։ Այստեղ նրանք կոտորում են Տարոնի վրա հարձակվող բոլոր պարսիկներին, իսկ իրենցից ոչ ոք չի սպանվում։ Բացի մի քանի անդեն ու ծեր կրոնավորներից։ Ձկան այն դավաճաններն անգամ, որոնք երևան են գալիս մեր երկրորդ հին վեպի մեջ, Հայ իշխանները բոլորը՝ ոչ միայն քաջ կավող են, այլև միշտ իրար պահում են և նեղության ժամանակ օգնության հասնում։ Մի մի մասնիչ՝ Քաղաքացիներն էլ մասնակցում են կռվին։ Քաղաքացիականացում, ուրիշ, կատարյալ է և մինչև վերջը տարած, ավելի ևս պարզամիտ կերպով, քան «Պարսից պատերազմին» մեջ։

Մինչ «Պարսից պատերազմին» մեջ կան բազմաթիվ ճակատամարտեր, որոնց համար չունենք մարտական մասի նկարագրիչներ, — անշուշտ եղել են, բայց Բուզանդը համոզուեց է այստեղ — «Տարոնի պատերազմին» մեջ միշտ սիրով արված են նկարագրիչները, հաճախ հերոսների տրամախոսություններով, հիշված են մարտի վայրերը — ժողովներ, քաղաքներ, մորեր, տվաններ, տնցքեր, լեռներ, գետեր, գավառներ, գյուղեր, վանք, բլուր, դաշտ, մայրի, ձոր, քարազուլե և այլն։ Միշտ սիրով պատմված են մարտական մանրամասնություններ, ինչպես դարանակալություններ, թշնամիներ ձիերը քշել հեռացնելը և պարսիկների կռիվը ձիազորների հետ, հսկա Տրդատի պես դետն անցնելը և նմանները։ Մարտի մեջ մենամարտերը սովորական են և տյո՛ւնում են իրար ծագրելով, Հաղթողները սովորաբար կտրում են հաղթված թշնամիների գլուխներն ու պահում։

Եւ հասեալ ի դաշան, ուր ի վերայ Մատրավանիցն,
Եւ բալորեալ ուղմ կանգնեցին։
Եւ եկեալ առ միմեանս Վարդուհրի,
Եւ Տիրան՝ որդին Վահանայ,
Ասէ Վարդուհրի. «Ես խաբարուեալք,
Դուք ի կախարդան էք պանծացեալ,
Եւ կախարդութեամբ կամիք հաղթել Պարսից քաջացն։
Ասէ Տիրան. «Եթէ՛ կախարդ եմք, զու՛ վայր մի անսա,
Ձի ես զքո ձիոյ ագիդ քեզ տեսանել տամ։
Եւ տնապարեալ ի բաց ձգեաց
Ձաջոյ ոտնն սանապանօքն հանդերձ։

Եւ նորա հովեալ յայնկոյս՝ անկաւ:
 Ասէ Տիրան. «Վարդուհրի, մի մեղադրեք,
 Գլուխդ հակեաց և ընկեց զքեզ.
 Արդ ուղղեմ զբռնդ»:
 Եւ ապա բռնայ,
 Եւ կտրեալ զգլուխն՝ ետ ցծառոյ մի և ասէ.
 «Պահեա զգա, որ իջանեմք ի Մարտավանս
 Եւ զնդի թաղամբ առաջի Սուրբ Կարոպետին»:
Էջ 51 և հա.

Երբեքն նկարագրին ու պատմվածքը շատ ընդարձակված են, ինչպես
 հետևյալի մեջ Սմբատի որդի Վահանի մասին.

Իսկ Վահանայ լլեալ իմաստութեամբ,
 Առեալ երկերեւր կաշիայ ասպար,
 Եւ արկ զհարեւր ջորեօք ամենեօք,
 Երկաթ մի յայս կոյս ասպարին, և երկաթ մի յայն.
 Եւ զնաց մերձ ի բանակն Հոնին,
 Որ փոխանակ էր Տիգրանայ,
 Եւ ունէր ընդ ձեռամբ իւրով ութ հազար այր,
 Եւ բանակեալ էր մերձ ի Քարազլուխ,
 Որ հայի հանդէպ Տարսնոյ լերինն:
 Եւ էր առ զատակաց յայլոց բանակացն:
 Արդ առեալ Վահանայ զհարեւր ամենի ջորիսն,
 Եւ տարաւ զնոսա՝ յեզր բանակին.
 Եւ ի տասն ջորիսն այր մի՝ որ զհեա երթայր,
 Եւ իբրեւ խթցին զջորիսն սրով,
 Եւ արկին ի բանակն,
 Եւ ինքեանք զհեա մտեալ
 Զփոզ պատերազմին հնչեցուցին,
 Եւ առ ձեռն սկսան կոտորել.
 Եւ կանչեալ զարհուրեցան,
 Ժպրհեցան և աղմկեցան յոյժ:
 Քանզի և ջորիքն ընդ ձայն ասպարացն
 Եւ ընդ զթրացն աղմկել,
 Եւ ընդ փողոցն բախելն խրտուցեալ,
 Յամենայն կողմանց լով արշաւէին ի բանակն:
 Եւ զօրքն կարծէին, եթէ հեծեալ է,
 Եւ ձայն սուսերացն ի կոտորելոցն է.
 Իւրաքանչիւր ոք լով վայ ճչէին,
 Ոչ գիտելով զհեառ անձանց.
 Քանզի տէր պատերազմէր ընդ նոսա:
 Արդ քանզի ալլ զօրքն ոչ կարէին անցանել,
 Զի էր մռթն, և մեր զօրքն լով սատակելով նեղէին,
 Եւ զՔարազլուխ բնաւ չկարացին յիշել:

Զի յիմարեցոյց զնոստ տէր:
 Ապա թողեալ զկարասին,
 Դէմ փախստի ի Քարազլուխն արարին:
 Եւ սկսան ի վայր հոսել
 Ահաւոր վիմացն ընդ բարձրութեան:
 Եւ ոչ ոք կարաց զխտել զիրան,
 Մինչև պակասեցաւ ճիչ աղաղակին:
 Եւ ապա զխտացին զօրքն Հայոց,
 Թէ ընկղմեցան պարսիկքն.
 Դարձան ինքեանք ի բանակեաղ,
 Եւ զկարասին և զգանձն ժողովեցին,
 Եւ զերբվարսն և զուղտսն,
 Եւ արձակեցին ի գաւառն Պալուսեաց:
 Եւ ընդ ձի և ընդ ջրբի և ընդ ուղտ և ընդ էջ՝
 Դատաւ ութ և տասն հազար,
 Որ ծածկէր զերեսս զաւառին:
 Էջ 45 և հա.

Հետո Սմբատը հարձակվում է մյուս բանակի վրա և դարձնակաների
 օգնութեամբ մեծ կորուստ են ապրանքաւորութեան պարսիկներին.

Եւ չորեք հազար գլուխ համարով
 Ընկեցին ընդ քաբն, որ կոչեցաւ Հոնընկէց:

«Պարսից պատերազմի» մեջ կին ու երեխայի սպանութիւնն չկաւ:
 Ընդհանրապէս, Մուշեղը Շապուհի կտնանցը պատվազոր կերպով ետ է
 ուղարկում: Ապա ժմասնա Մոսորի մեջ Դավիթը, մենակ մի մարդ, չի ու-
 զում հանկարծակի հարձակվել թշնամիներէ բաժնակի վրա, որպէսզի «Ձա-
 սեն» Դավիթ գող եկավ, գող զնացաւ: Այստեղ հակառակն է: Այդպիսի վե-
 հանձնութիւնն չկաւ: Կոտորելը՝ որքան կարող ես և ինչպես կուզես: Պարա-
 վաճ պարսիկներէ մնացորդները փախչում, ժողովվում են մի տեղ և իջ-
 նում, ճաշում են: Այդ ժամանակ Ողակաւնից երկու հարյուր հիսուն տղ-
 դուրս են դալիս որս անելու: Երբ նրանք տեսնում են՝

Զի յանհոգս էին իջեալ պարսիկքն,
 Դողարար յարձակեցան ի վերայ,
 Եւ ոչ ոք կարաց երկվարն ելանել.
 Այլ ի շուրջ եկեալ և ի սեղան անդը՝
 Սպանին հինգ հարեւր և ութ տըր:
 Եւ վառն որ անգ ժողովեալ սպանին,
 Կոչեցաւ անուն տեղւոյն Ժողովս:
 Էջ 40.

Ե. Կրօնական տարրը:—«Տարոնի պատերազմի» մեջ տեսնանալու
 աչքի է ընկնում ս. Կարապետի գերը: Ճիշտ է, խմբագրողն իր կզգից

այնպէս եւ բարձրացնել տեղական կրօնական սրբավայրի նշանակութիւնը, բայց նրա ավելացրածն ու ժողովրդականը տարբերվում են՝ Վեպի ու զբրույցների մէջ հենց ս. Կարապետը մեծ տեղ է բռնել, Թշնամիների հարձակման նպատակն է սկզբում՝ ապստամբ Մուշեղին բռնել, տանել Պարակաստան, նրա ճակատի տեղերը կործանել ու կրօնավորներին սպանել (էջ 15)։ Մուշեղին նրանք բռնել չեն կարողանում։ Բայց հետագայում պահանջում են նրա և Գոյլ Վահանի ռազմերը և ավերում են իշխանների գերեզմանները։

Բայց խնդրէ զնշխարս Մուշեղայ իշխանին
Եւ զքո հօրն՝ Վահանայ։

էջ 43, 45.

Եւ կամէին տնցանել ի վանսն Գլակայ,
Ձի հանցեն զոսկերս թշնամեացն։

էջ 49.

Նույնն անում են պարսիկները և «Պարսից պատերազմ» վեպի մեջ՝ նրանք քանդում են Արշակունի թագավորների գերեզմանները։

Ձի տէին ըստ իւրեանց... ըստ օրինացն,
Թէ վասն այսորիկ բարձեալ տանեմք
Ձուկերս թագաւորացն և յայոց յաշխարհն մեր,
Ձի փառք թագաւորացն և բախաքն,
Եւ քաջութիւն աշխարհիս,
Ետ յաւարն մեր եկեացն։

Բուզ. Գ. 24.

«Պարսից պատերազմի» մեջ կրօնական կոիվը երևան է գալիս Արշակի անկումից հետո, առանձնապէս Վահան Մամիկոնյանի և Մեքուտան Արծրունու ձեռով, որոնք ավերում են հիւնդեցիները և մարդկանց ստիպում են թի պաշտօնն դառնալ Մազդեզդանցն։ Նույնիսկ նախարարների կանանց սպանել են առախս, երբ նրանք հանձն չեն առնում ուրանալ քրորիստոնեութիւնը. ատրուշաններ են շինում շատ տեղերում։ Բայց հետո՝ «Մուշեղ զօրավարն Հայաստանեաց շրջէր ընդ երկիրն և աւերէր գատրուշանսն Մազդեզանցն։ Իսկ զՄազդեզունսն, որ մի անգամ ի բուռն արևին, դամբնեաւան տայր հրտման սպարապետն Մուշեղ ունել և հրով խորովել։ Այս միևնուէյն կրօնական կոիվը, ինչպէս ասացինք, երևում է և «Տարոնի պատերազմի» մեջ, Վահանը Միհրանի գլուխը կտխելով երդից՝ ասում է տան մեջ գտնված պարսիկներին. «Այս այն գլուխն է, որ խորհէր զՄուշեղ Կարապետն հիմն ի վեր առնել և զկրօնաւորսն հրով տարել (էջ 26)։ Վախտանգ զորավարը շփոթէ գատրուշանն ի գուռն Կաթուղիկէին» (էջ 30)։ Պարսիկներն սպառնում են զտեղիսն յօրս նա [Մուշեղ] զհաւատս ունէր՝ կործանել։

Ապա թէ ոչ, դո՞ւք ի տեղին,
Ասէ՛, ուր հաւատք ձեր են.
Ձայն բրե՛ծ և աւերե՛ծ,
Եւ կրակաւորեն առնեմ գեղեղեցիս ձեր,
Եւ գձեզ ի դուռն արքունի թաղացուցանեմ:

Էջ 44.

Եթե նրանք այս ապաւնալիքները չեն կատարում, որովհետեւ չեն կարողանում: Ահա թե ինչ է տաւմ Գայլ Վահանը պարսիկներին հաղթելուց հետո.

Վաշի՛ր, Ղի՛նչ եղի՛ք ի մտի,
Ի պարսիկ հաւատ կամէ՛իք
Գարձուցանել զերկիրս Հայոց,
Էջ 27.

Պարսիկները կրօնավորներին կոտորում են, բայց միայն ձերերին, որովհետեւ մյուսներին չեն կարողանում: Նրանք կամ փախչում, ամբանում են Ողական ամրոցում, կամ իրենք էլ մասնակցում են մարտին, բայց իրենց կրօնավորական ձեռով.

Եւ գնացին ի պատերազմ.
Եւ արձակեցին առ հայրն՝ Գրիգոր...
Եւ տարան ի պատերազմ
Երեք հարեւր ութսուն և հինգ կրօնաւոր կնկղով:
Իբրեւ թմբեցաւ պատերազմի
Յնդերս Արածանոյ, առ անտառոցն,
Որ կոչի Կաղամախեաց բլուր,
Կրօնաւորքն սեղադեհաւք էին,
Մողեղինօք և կնկղաւարք,
Եւ ընդ տասն տանն ժամահար՝ մի,
Եւ ընդ երկուսն խաչադրոշ բարձրաբուն:
Եւ ճակատեցան նոքա ընդդէմ իրերոց ի պատերազմ,
Յայնկոյս գետոյն, որ ի դաշտին.
Ջոր տեսեալ թշնամիքն դարմանային:
Եւ Վարդուհրի՞ ոչ եմուտ ի պատերազմ,
Այլ, «տեսիցա, ասէ՛ զթէ նոքա զինչ գործենա:

Եվ Բնչ պիտի անեին այդ կրօնավորները: Զայիտի կարծեմ, թե նրանք արյուն պիտի թափեին: Նոր վեպի՝ «Սուսնա Մոեբի» մեջ էլ կրօնավորը, իսկապէս ճգնավոր դարձած իշխանը, թշնամիներին դեմ կռւին մասնակցում է, բայց առանց արյունի. այլ նա թշնամիներին հաժարում, բերում է Գավ-

¹ Հայր—ժամահար.

² Ժամահար— կռնակ, մամ կռնչելու առիւթը, որ զարնում էին:

³ Պարսից գործաւորը:

Թի տուջ, և սա կոտորում է նրանց, Իսկ այստեղ, «Տարոնի պատերազմի» մեջ, կրոնավարներն, ըստ միջնադարյան գաղափարախոսության, տվելի մեծ բան են անում:

Առ իբրև խմբեցաւ պատերազմ ընդ իրարս,
Առ կամէին փախել Վահանեանքն,
Թայնժամ նոցա ծունը կրկնեալ,
Միարեան աղաղակեցին առ աստուած՝
Աղօթիւք և լի արտասուօք,
«Ո՛վ անէր, հմր դմեր պատերազմն,
Ո՛վ կարապետ, դարթիր ի ձայն պաշտօնէիցսս,
Առ դայա ասացեալ միարան՝ յոտն կոցին,
Առ զնշան խաչին գործուցանէին ի վերայ թշնամեացն,
Առ հարին զժամակարան յանդուգն,
Առ հայեցեալ Վահանայ ի գունդ կրօնաւորացն,
Ստեալ յաջ թեա նոցա երիտասարդ մի՝ ահագին տեսլամբ,
Առ թագ ծիրանի ի գլուխ նորա, և խաչ,
Առ ի հանդերձ նորա հուր փայլատեւեալ՝

Էջ 50 և հտ.

Թշնամիներն էլ այդ տեսնում են, խելքները թոցնում են, լցվում գետը, սկսում են փախել, Վահանյանները հալածում ու կոտորում են նրանց:

Ուրիշ անգամ էլ ս. Կարապետն օգնության է հասնում Մամիկոնյան իշխաններին: Պարսիկները կրկնապատիկ թվով զալիս են, գիշերով շրջապատում են Սմբատին: Սա, վստահելով ս. Կարապետին, գիշերով դուրս է գալիս թշնամիների դեմ:

Առ ել ջահիւք ի վերայ զօրացն Պարսից,
Առ յանկարծակի տեսին տար մի դիսաւոր,
Որ լոյս փայլէր ի հերաց նորա,
Առ զաչս թշնամեացն հուրացուցանէր:

Էջ 34.

Թշնամիներն սկսում են միմյանց գետ կռվել և իրար կոտորել, հայերն էլ մյուս կողմից են ջարդում:

Առ տյնչափ կոտորեցին զնոսա,
Մինչև հեղեղապք տրեանց ելանէին:

Էջ 34.

Այսպես և մի ուրիշ անգամ: Պարսիկները, թվով բազմամարդ լինելով, հետապնդում են հայոց զորքերին:

Առ տուեալ գետոյն՝ նեղէին զնոսա...
Ջի ասաի թշնամիքն, և տնտի գետն:

Բայց Սմբատն ու իր մարդիկը դարձյալ հաղթում են.

Նւ կնքեալ դանձինս իւրեանց,
Դիմեցին ի վերայ Պարսիցն:
Նւ երեւեցաւ նոցա ի պատերազմին
Այր մի անեղ և լուսաւոր,
Նւ հեր նորա լոյս փայլատակէր:

Էջ 47 և հա.

Հայերն այդ տեսնելով իմանում են, որ ու. Կարապետն է. ուրախա-
նում են և հարձակվելով թշնամիների վրա՝ ջարդում նրանց:

Այդ զրույցները, թեպետ կրոնական և կրոնավորներից հորինված,
բայց ժողովրդականացած են: Ս. Կարապետն, ինչպես ուրիշ դեպքերում
այստեղ էլ փոխանակած է հին Վանաձնին, որ ամպրոպի, որոտ ու կայծա-
կի աստվածն է: Մարիամ Արծրունու զրույցի մեջ ս. Կարապետը երևում է
այդ կնոջն իրեն շայր մի գիսաւոր ընդ ամպս որոտացեալ (էջ 11): Ժո-
ղովրդական է նաև կովից առաջ ուխտ գնալը ս. Կարապետի վանքը, որ
Մամիկոնյանների աւայրեանական տունն է, նրանց վանքը, որ իրենք են
շինել (էջ 31, 38): Ժողովրդական է և այն, որ կրոնավորներին աղուչում
են, որ աղոթք անեն, պատարագ անեն, որպեսզի նրանց աղոթքի գորու-
թյամբ կարողանան հաղթել թշնամիներին (էջ 44): Այս միևնույն մոտիվ-
ները գտնում ենք և նոր ժողովրդական վեպի՝ «Սոսնա Սոսերի» մեջ, Դա
միջնադարյան կրոնական աշխարհայեցողության արտահայտությունն է:
Իրր ձեռունի Սմբատը մենակ է մնում և թշնամիներից շրջապատված նեղն
է ընկնում,

Ձայնարկեալ ի Ս. Կարապետն, ասէր.
«Ահա ժամ, ճվ Մկրտիչ Կարապետ...
Ու՞ր են իմ սուրբ կրօնաւորացն աղօթքն»:

Նույն կրոնական ոգու արդյունք է և այն, որ Սմբատը ս. Կարա-
պետի վանքում աղոթում է, և ապա

Նո քերել երկոտասան թուր,
Նւ դնել առջի բեմին,
Մինչև պատարագ մատուցանէին:
Նւ ապա առեալ տեւ. «Տէ՛ր, հաւատամք ի քեզ,
Թէ և այս սուրջս եղիցին խմբ ալ սուսերոց,
Նւ հրամանաւ քով յաղթեսցուք նոցա»:
Էջ 44.

Դա քննդաւական կյանքի մի գիծ է. որ միայն մեր մեջ չի կատար-
վել: «Պարսից պատերազմի» մեջ էլ Մուշեղի համար ասվում է, թե նա
«զիւր նշանն և զզէնն մատուցանէր առ Ներսէս, զի օրհնեսցէ» (Բազմ. Ն. 4):

Յ. Ընդիմեմուր բնավորությունը:—Խնչքան էլ կրոնական աւարը բու-
ժականի շնչոված է այս վեպի մեջ, բայց և այնպես էականը ոչ թե այդ

է, այլ քաղաքական ու անտեսական կողմը և պատերազմը դրա համար։ Եվ այլապես էլ չէր կարող լինել, քանի որ դա մեր երկրորդ հին վեպի մի մնացորդն է, որ ձևափոխված է հետագա դարերի պատմական ազդեցութեամբ։ Հայ թագավոր չկա։ Ֆեոդալական հերարխիայի—դասակարգութեան մեջ գերիշխան տեղը ոչ թե հայ Արշակունին է, այլ Պարսից թագավորը։ Մուշեղը կոչում է պարսկական զահէր ժառանգի համար, և Պարսից թագավորն է նրա դեմ նենգություն անոււմ։ Մյուս կողմից՝ հին ընդարձակ վեպը, «Պարսից պատերազմը», սրա մեջ կորցրել է իր ընդհանուր ազգային բնավարութեանը և դարձել է Տառնի տեղական վեպ, Տառնի տեղական ֆեոդալների հերոսական պատմութեան։ Այստեղ իշխող ևն Մամիկոնյանները, որոնց ենթարկվում են տեղական երկրորդական հողատեր իշխանները՝ «Հաշտենից, Պալուենաց, Արշուր, Եղնուտայ, Մամիկոնյանները Տառնի տերն են, բայց նրանց իշխանութեան տակ են նաև՝ Խուլթ, Շատախ ու Սասուն, այլև Հարք, Հաշտայանք և Ապահունիք զավառները։ Սասունցիներն աղդեն, իբրև Վանասարի ցեղ», մասնակից են կռիվներին. «Երկու հարեւր այր աշտենաւորս ի Սանասարայ ցեղէն թողոյր [Վահան] ի Ծըծմակն»։

Գերիշխան տեղը, ինչպես ասվեց, Պարսից թագավորն է, նրանից ապստամբում են Մամիկոնյանները և պարսիկների դեմ պատերազմում են ոչ թե, ինչպես «Պարսից պատերազմին» մեջ է, Հայաստանի անկախութեան և Արշակունի թագավորների իրենց «տերերին» համար, այլ հենց իրենց տեղական անկախութեան համար։ Նրանց Վրա զալիս են պարսկական բանակները, տեղի են ունենում բազմաթիվ մարտեր ու մենամարտեր, բայց պատերազմները չեն կարողանում ենթարկել նրանց։ Մամիկոնյանները նույնիսկ խըրոխտուով են խոսում Սասունյան հզոր արքայի և նրա զորավարների հետ։ Նրանք ոչ մի կերպ չեն համաձայնում հնազանդվել պարսիկներին։ Հնազանդութեան պայմանն է հորկատվութեան։ Վախտանգը զորքով զաւում Ապահունիք։

Արձակէր հարկապահանջս ի Հարք

Եւ ի Հաշտեանք և ի Տառն.

Աս որ դրեն դաւառապետքն.

«Եթէ՛ Վահան տայ, և մեք.

Ապա թէ՛ սչ, ունայն գնայք ի մէնջ».

էջ 30.

Հետո նա Վահանին է դրում սիրով. «Դու արի եկ առ իս, և երդուի՛ր տալ զհարկ արքունի և կալ հնազանդ, և յառաջին պատիւն ձեր մնալս։ Վահանը նրան չափազանց վիրավորական պատասխան է տալիս (էջ 31)։ Վահանի մահից հետո՝ նա նույնը Սմբատին է ասում.

Եւ առաքեաց առ Սմբատ,

Եթէ՛ «համ եկ որ պատերազմիմք,

Եւ կամ հնազանդեաց և տուր հարկս».

էջ 34.

Սմբատը նուշինով ապտտախաւն չի տալիս: Իշխաններէ դժտաւթյունը պարսիկներէ հետ և նրանց ապստամբությունը պարսիկներին՝ պատճառ ունենր սկզբում աչն, որ Խոսրովը, հին վիպական մոտիվով, ուզում էր դավա-դրութեամբ սպանել Մուշեղին: Բայց հետո վեպի ընթացքում գլխավոր խըն-դիրը լինում է հաղաթովությունը և հարկի պատճառով ապստամբելն ու չննթարկվելը պարսիկներին: Այսպես ուրեմն, այս վեպի մեջ պարսիկներէ կողմից գլխավոր ձգտումն է հպտակեցնել Մամիկոնյաններին և հարկի տակ դնել նրանց՝ քանդելով նրանց կրօնական սրբավայրը: Բայց հայերը միշտ հաղթող են դուրս գալիս, ուսով և քառաբանվում են Մամիկոնյան հերոսները: Կնշանակի՝ վեպն իր դարձացման այս ձևի մեջ, ըստ էական խնդրի ևս նուշն ֆեոդալական զաւարախոսութեան արտահայտութեանն է կրում իր մեջ, ինչ որ Վարսից պատերազմը: Եվ այսպես էլ պետք է լի-նենր: Այս աղնվական վեպը, թեպետ Հովհան Մամիկոնյանի ժամանակ տն-ցած է եղել տեղական աշխատավոր ժողովրդին, բայց դեռ չի աղղված նրա կյանքից: Իշխաններն արդարև, ունին շնորհներ, որոնք նրանց համար սպասարկութեան են անում տանը և մարտի ժամանակ, և անպայման հասարակ ժողովրդից են, բայց վեպի մեջ նրանք շատ աննշան գեղ են կատարում: Նուշնակն և քաղաքացիները:

Տարոնի պատերազմին ընդհանուր ընտելութեանը, որ և Հովհան վեպինը և Վարսից պատերազմինն է, այնուհետև էական գծերով ձևում է նոր վեպի, «Սասնա Մաւրի» մեջ. միայն այստեղ ժողովրդական տարբը, ռամիկ ժողովրդի կենցաղն ու գաղափարները կտրուր տեղ են ընում: Բացի այդ, վեպը կերպարանափոխված է նաև նոր պատմական դեպքերի ու անձերի աղեղնութեան տակ. այն է՝ Մուշեղի ու Վահանի տեղ անցել է Դավիթը, պարսիկների տեղ անցել են արաբացիները և ապա՝ Սուրա մելիքները: Տարոնի տեղ՝ նրա կից Սասունը, որ հետագա դարերում ավի-լի նշանավոր դեր է խաղացել, քան Տարոնը: Բայց և Մուշեղի զրույցն եւս այս ներքին կոթիւ պարսիկների դեմ Տարոնում, դեռ միշտ վերջիս Մուշեղի անունով պատմվում էր Տարոնի և Սասունի գաղափարների մեջ իբրև անկախ վեպ:

ՄԱՐԿԱՌԻՍ ԱՐԱԲԱԿԱՆ ԲՈՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍ

ՂԵՎՈՆԴ ՊԱՏՄԱԳԻՐ

1. Ազատագրական կռիւներ:—Հայ ժողովրդի վրնակն եղել է գրեթե շարունակ պայքար մղել օտոր տերութեաններէ դեմ իր գոյութեան և իր հողերը կշանքի պաշտպանութեան համար: Եվ մեր պատմութեան ներքին իմաստը գլխավորապես այդ պայքարի մեջ է. զրա արտահայտութեանն է եղել ընդհանրապես և մեր գրականութեանը: Հազիվ պարսկական ճշգրտները թուլացած էին, և հայկական կուլուրտն սկսել էր բարձրանալ, որ հանգես է գալիս մի նոր թշնամի: Արաբիայի ցեղերը՝ կրօնով ու քաղաքականորեն խալիֆաների ձեռի տակ միացած՝ Մահմեդի մահից (622 թ.) կտրե ժամա-նակ հետո՝ արագ տիրում են արևելյան աշխարհին. 640-ական թվական-

ներին նրանք մտնում են և Հռայաստան։ Իշխանությունն անցնում է Խուս-
մին։ Մոտ երեք դար այդ բանապետությունը, առանձնապես 8-րդ դարի
սկիզբներին ի վեր, ծանր կերպով նստում է մեր ժողովրդի վրա։ Հռայերի
կողմին սկսվում է դժու դեմ ոչ միայն կուլտուրական պայքար, այլև գին-
ված ազատամբություն, մինչև կարողանում են թափափել տարազան լուծը։

Հռայական բանաստեղծությունը, հոգևոր երգի մեջ ամփափած, չի դառ-
նում արտահայտիչ այս երկարատև շրջանի։ Դարձյալ հին դարձացած գրա-
կան տեսակը—առամագրությունն է, որ տալիս է մեզ ընդարձակ պատկերը
արարական կեղեցումների և ազատասեր ժողովրդի ընդլայնների։ Դրան է
վերաբերում, ինչպես տեսանք, Սեբեոսի Պատմության վերջին մասը. նրան
հետևել են հաջորդ դարերում ուրիշները։

2. Ղևաճդ պատմագիրը¹—Հին շրջանում անհատն առանձին աբժեք
չուներ, գրագետ եկեղեցականները կրթվում էին ճշմարտական ոգով, ար-
համարանք տաճերով դեպի իրենց սեփական անձը։ Իր մասին խոսելն իր
գրքի մեջ՝ կհամարվեր ընդհանրապես խոնարհության հակառակ մի գործ։
Դրա համար մենք, բացի սակավաթիվ բացառություններից ու տեղեկու-
թյուններից, յատ բան չգիտենք գրեթե մեր բոլոր հին հեղինակների,
նույնպես և այս պատմագրի վերաբերմամբ։ Միայն այսօր կտրելի է
ասել, որ Ղևոնդը եղել է եկեղեցական. ամենք նրան վարդապետ են կոչում,
ուրիշները՝ իրենց։ Իր գրքի վերջում գրված հիշատակարանից իմացվում է,
որ իր աշխատությունը նա գրել է Քի հրաման է տեսն Շապուհ Բագրա-
տունւոյ, Թե ինչ մտադ է եղել այդ գրասեր իշխանը՝ հայտնի չէ։ Պատ-
մությունը հասնում է մինչև 788 թվականը. Պատմության վերջին մա-
սերը հորինում է նա իբրև ժամանակակից։

Ճշագրիներին մեջ Ղևոնդի Պատմությունն ունի այսպիսի մի վեր-
նագիր. «Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց որ յադագս
երեկոյ Մահմետի և զինի նորին, թէ որպէս և կոմ որով օրինակաւ տի-
րեցին տիեզերաց, ևս առաւել ազգիս Հայոց», բայց Պատմությունն սկսվում
է Մահմետի մահից, Առաջին երեք գլուխների մեջ նա պատմում է, թե ինչ-
պես արարացիներն առաջին երեք խալիֆաների օրով աիրում են Պաղես-
տինին, Ասորիքին ու Պարսկաստանին և երեք անգամ զանազան կողմերից
մտնելով Հռայաստան՝ ավար և գերի են առնում, ավերում երկիրը և Դվին
մայրաքաղաքը։ Հունական իշխանությունը, որ երկրի տերն էր, չի կարո-
ղանում դիմադրություն ցույց տալ, միայն հայ գործը Թեոդորոս Ռյտունու
զորավարությամբ հարձակումներ է գործում արարացի ասպատակավորների
վրա և աջողում է գերիներն ու ավարը ետ խլել։ Այնուհետև Ղևոնդը՝ սկը-
սած Մուավրայից (661—680 թ.) մինչև Հաբուս-էլ-Ռաշիդի (Ահարոն
որդի Մահմետի, 786—809 թ.) երկրորդ տարին մի առ մի հիշատակում է
ամիրապետներին իրենց իշխանության տարիներով հանդերձ, տեղեկու-
թյուններ տալիս նրանց մասին։ Մեջմեջ նա գրում է նաև Հայաստանի
կառավարիչներին—հրամանատարների, և հայ իշխանների արարքները, նկա-
րագրում է այն ավերումները, որ Հայաստանը կրել է մերթ արարներից ու

¹ Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887։

հոյակերթից, մերթ հոյակասային աղգերից—Պաղիւններից, և թե ինչպես աւարաբները ծանր հարկահանութեաններ էին տնոււմ, աշխատում էին ոչնչացնել հայ ազնվականներին, սրանք էլ դիմագրում էին, առաջ էին դալիս ժողովրդական ապստամբութեաններ։ Բացի այդ ամեն ից՝ նա բերում է նաև Օմար խալիֆայի և Լեոն Գ. կայսրի հետաքրքիր թղթակցութեանը։ Այս է ահա Ղեոնդի ժամանակագրութեան կարճատև բովանդակութեանը։

Իր գրած նյութը նա պատմում է մերթ համառոտ, մերթ ընդարձակ մանրամասնութեաններով. ամենը շատ պարզ ու թեթև ոճով, երբեմն կրտսրուկ։ Կրում է, ինչպես ուրիշները, Ս. Գրքի աղգերցութեանը. իր կրօնական ոգով սա էլ երբեմն դեպքերը միգլժով է բացատրում։ Բայց անսարբեր չի մնում դեպի իր պատմածը, սովորաբար նաև դեպի պատմական շնորհքը։ Կուստուրական շինարարական գործ ընդամենը երկու եկեղեցու կառուցում է հիշում նա, այն էլ 7-րդ դարի վերջին քառորդում, երբ արքայական իշխանութեանը դեռ մեղմ էր դեպի հայերը։ Հայաստանի իշխան Գրիգոր Մամիկոնյանն Արագածոտն դավառի Արուստակունի (արդի Քալիֆ գյուղում) շինում է մի եկեղեցի. Նրան հաջորդում է 690-ական թվականների սկիզբներում Բագրատունի Աշոտ պատրիկը, «այս երևելի և նախամեծար ի մէջ նախարարացն Հայոց... ճոխ և պերճ յիշատակեալն, և յամենայն վարս երկրայինս զգաստ և առաքինասէր, և ազնուական քան զամենեանսն, և ծանօթ երկնային աստուծոյ, և հազարարձու ամենայն բարեգործութեան, փոյթ յաւտեալսիրութեան. և զարդարէր զեկեղեցիս աստուծոյ վարդապետական տրուեստիւք և պաշտօնէից խմբաւորութեամբ, պատուէր և երևելի սպասուք յիւրոց գտնելոց։ Եւ շինէր զեկեղեցին Դարիւնից յիւրում օստանին» (Ն. 16)։ — Ստակով մարզկանց է այսպես ներբողում մեր այս պատմադիրը։ Նրա երկի մեջ քիչ կան զեղարկանքներ տարբեր։

Ընդարձակ պատմական հայացք չունի Ղեոնդը։ Նա արարացոց գործողութեաններ համար երկու հիմնական զրգապատճառ գիտն։ Դրանցից առաջինը հենց սկզբում բնորոշում է այսպես. «Ապառուէր օրինադրին իւրեանց ձենէին օժանդակ, զոր պատուիրեացն որոմանցն սերմանողի, թէ՛ Նիէ ք ի վերայ աշխարհաց, նուաճեցէ ք զնոսա ընդ ձեռամբ ձերով. զի մեզ, առէ, տուեալ է ի վայելս զպարտաւթիւն երկրի. կերպք զմիս ընտրելոց երկրի և արքէ՛ք զօրին զօրաւորաց» (Ա. 4)։ Սա իսլամի առաջնորդ ընդհանուր սկզբունքն էր։ Երկրորդ զրգապատճառ վերաբերում է հայ ազնվականութեանը։ Գա մի քաղաքական ծրագիր էր, որ զործագրում են 8-րդ դարի սկզբից։ Վրթ (Վալիդ Ա. 705—715 թ.) խալիֆայի համար գրում է Ղեոնդը. «Սա յառաջնում ամի իշխանութեան իւրոյ խորհեցաւ բաճնալ յաշխարհէս Հայոց գտում նախարարաց նոցին... զի ասէր եթէ միշտ խոչ և դոյթակղութիւն լինելոց են իշխանութեանս մերոյս։ Նույնք մասնում են և նախորդ ամիրապետի օրով։ Այդ ծրագիրն աշխատում են զործագրել ամենայն դաժանութեամբ։

3. Գագաւուքյուններ և կիզեւումներ։—Նախնական կողմերի հրամանատարն իր մոտ է կանչում նախարարներին իրենց հեծյալներով, իրեն թեթէ անցուցանել ի համարու արքունի և առնուլ հոգ և դառնալ, Եւ նոքա,—չարունակում է Ղեոնդը,—ըստ օրինի պարգումութեան իւրեանց՝

հաւատարիմ համարեալ զնննգութիւն վաղատարոյ որսողացն՝ վաղվաղակի անդր հասանէին: Նիւոնց երկու մասի են բաժանում, մի մասին ողջ ողջ ալրում նախնապանի հեղեղեցում, մյուսին՝ Խրամ քաղաքի Ուրիշներին էլ քանտարկում են և նրանց՝ ամեն հարստութիւնը հափշտակելուց հետո՝ կոտորում են, և շաւառաւոր տանէին զաշխարհս ի նախարարաց—գրում է Պատմագիրը և շարունակում—Յայնմ ժամանակի թափուր եղեալ աշխարհս Հայոց ի տունէ նախարարաց՝ մատնէին որպէս զոչխարս ի մէջ գալոց: Եւ թշնամեացն ամենօրինակ չարեօք յարձակեալ ի վերայ՝ յանհուն աղէտս վառնդի պահէին զքնակիչս աշխարհիս Հայոցն (ժ. 31 և հետ.):

Պատմագիրը բնականաբար միշտ էլ լի է զայրույթով գեղի այդպիսի դադանութիւններ կատարողները և սովորաբար կարողանում է նրանց դժժըր նկարելու համար պատշաճ ուժեղ արտահայտութիւն գտնել: Ահա թե նա ինչպե՞ս է զժողովրդ մի տարի միայն իշխող (785—786 թ.) Մուսե ամիրտպետին և նրա նշանակած ոստիկանին. « Եւ էր [Մուսէ] այր ժանտ և ապարասան և այսակիր, որ յանչով շարժող այսոյն ուր ի նմա՝ ի դրօսանել իւրում ի խղիւս անարժան բարուցն՝ դժարդիկ կանգնէր փոխանակ մղլակի՝ նետաձիգս անել ի նոսա ի վարժակն անձին իւրոյ, զոր առժամայն հաբեալ սատակէր ի կենաց: Եւ իբրեւ հաստատեաց զիշխանութիւնն իւր՝ առաջէ ի վերայ երկրիս Հայոց փոխանակ Ռոհայ զձեռք ձմե, որ արդարեւ ըստ տնտեսան իւրոյ խաղձարար և պոխտէ: Որ իբրեւ երես ի քաղաքն Դուրն՝ ընդ առաջ եղեն նմա ամենայն նախարարք Հայոց՝ ընդ առաջ լինէին նմա և իշխանք տանն Արծրունեաց՝ Համազասպ և Սահակ և Մհերուն: Իսկ բարեառեաց թշնամին տեսեալ զգեղազէշ վայելչութիւն փառաց նոցա և զբարեգարգութիւն ազատախումբ զնդին որ ընդ նոսա՝ վաղվաղակի ըմբռնեալ զնոսա՝ տայր ի պահեստ բանտի գանձինս զօրավարաց նախամարտկաց և քաջաց: Ապա մանրամասն նկարագրում է. թե ինչպե՞ս չարաշար տանջելով սպանում են այդ անմեղ մարդկանց, որոնք չեն ուրախում իրենց հաջողութիւնը:

Սրտի կոկիճով պատմում է Ղևոնդը ծանր Խորհրդի մասին առանձնապէս Արքայստան տունի իշխանութիւն ժամանակը Հեղձ (Հալիւ, 734—745) ամիրտպետին իր առաջին տարում աշխարհագիր է անել տալիս Հայաստանում զմասն ծանրացուցանելով զտնուր լծոյ ծառայութեան հարկատուութեան ազդի ազդի չարեօք: Արաքսիներին ներքին խռովութիւններին միջոցին հայերն ապստամբում են և հարկ չեն վճարում, բայց երբ իշխում է Արղլա ամիրապետը (Արուլ-Արքայ, 750—754 թ.), նա իր եղբոր ձեռով ամեն նեղութիւն տալով պահանջում է հարկերը, սկսելով նախ Հայաստանից, « Եւ իւր յաշխարհս Հայոց՝ բազում վշտօք և նեղութեամբ վառնդէր զամենեւին և հառուցանէր ի յաւառքութիւն տնտեսութեան, մինչև պահանջել հարկս ի մեկելոցն: Եւ զամենայն բազմութիւն որոց և տրեաց չարալուկ տառապեցուցանէր. վառնդէր զգահանայս և զպաշտօնեայս տառաւոր խորանին խոյտանգանօք և քքօք այգտնութեան և գանիւք՝ ի յայտ անել գահունսն վախճանելոցն և զքնառնիս նոցա: Խոշտանգէր և զքնակիչս աշխարհիս՝ բանագոյն և գտան հարկապահանջութեամբ, առնուլ ըստ գլխոյ բազում զուգէս արծաթոյ, և գնել կնիք կապարեայ յամենեցուն պարտնոցս:

Իսկ առեմ հարձակումը որ կամուս և որ յանձնայ յանձնելն տուչ ըն-
ծայս ձիւց, ջրուոց և հանդերձից պատուականաց և զայլ մթերս ոսկւոյ
և առծաթոյ, ողջէսզի կորսացեն լնուլ զերբան վիշապին որ յարձակեալ էր
ապականել զերկիրս: Վերջուս Պատմագիրը հայտնում է, թէ այսյմհետեւ
հատու առեւ առծաթոյն, որ դայր ամի ամի յարճունուստ դորացն Հայոց,
եւ զհամար հնձելոցն պահանջէին յիշխանացն. և հարկ լինէր ի տանց իւրեանց
հանդերձել զըտուսդ զորացն և զընթացս զրազատակ աշխատութեանցն ողջ
պահելն: Դրա համար և Հայոց աշխարհի իշխանը, Իստակ Բաղրատունին,
— զորում է Ղևոնդը, — առաջնորդէր զորաց իւրոց ակամայութեամբ կռիւն
զտաշխատութիւն մարտիցն ուր և առաքէր (ԻԸ. 187 և հտն.):

Ծանր հարկապահանջութեան մի անուշի վիճակ է պատկերացնում ըն-
թերցողի առաջ Ղևոնդն իր Պատմութեան 19 (էջ 136 և հտ.) գլխի մեջ:
Հասարակ, անպահույճ լիզվով մի պատմվածք է դա, բայց իր բովանդա-
կութեամբ միայն՝ քսաննեցնող է: Նույն դժնդակ վիճակը շարունակվում է
ոչ պակաս նաև «ազան և առծաթասէր» Հարուն էլ-Ռաշիդի օրով, երբ «ոչ
ոգ էր տէր ընչից իւրոց», «թափուրք ի ստացուածոց մեային, մերկք, և
բոկք, և սովամահք» (ԽԱ. ԽԲ. 166 և հտն.):

4. Դիմադրություն և ժողտնայնություն:— Արաբական բռնապետները
8-րդ դարի սկզբում արդեն, ինչպես ասվեց վերևում, մտածում են քառույղ զա-
վատախումբ տունն յաշխարհէս Հայոց հանդերձ նոցին հնձելովք: Նախարար-
ները հայտնված են: Վասպուրականի իշխանները հասնում են Ալուսի. նրանց
հետապնդում են ԱՐՄԵ-ից ավելի արաբներ և զհամբիւն կենդանւոյն կրտսել զնո-
ստու: Հայերն անցնում են Ուրտախի ձախ կողմը և բանակում են Վարդանա-
կերա ավանում, և զպատգամ յոգեալ առ դորսն Տանկաց՝ «Ընդէ՛ր, տսէ, ողըն-
գեալ դայք զկին մեր. զինչ ինչ մնդաք ձեզ. ահաւաղիկ երկիրդ մեր առաջի մեր
է: ձեզ տուեալ զընակութիւնս մեր, զայգիս մեր և զանտասա, և զտնդատանս
մեր. արդ ընդէ՛ր և զանձինս մեր խնդրէք: Թոյլ տուք մեզ գնալ ի ստնմոնաց
մերոց: Արաբները մերժում են: Հայերը, Թեպետ և Խժով 2000-ից պակաս
էին, սփռակի ջարդ են տալիս արաբներին, որոնցից մոտ 300 հոգի միայն
փախչում, ապավինում են «առ տիկինն Շուշան»: Հայերն ուզում են զը-
րանց էլ կոտորել, բայց զընդ առաջ իւեալ տիկինն Շուշան՝ բողբում աղեր-
ասանք և զայամբք թափել զնոստ մերկս և բոխ և հետեակ և վիրաւորու:
զորոց առեալ պատէր զվէրս և ողջացուցանէր և զգեցուցանէր հանդերձիւք:
Տայց և զըտատս յիւրոց երամակաց և առաքէր առ իշխանն Իսմայելին: Թե
ով է եղել այդ ողորմած՝ տիկին Շուշանը, Պատմագիրը լսում է այդ մա-
տին: Բայց այդ պատմական զրույցի մեջ պտնում ենք ավելի քան հին վի-
պական վեհանձնութեան ոգին, Մուշեղ Մամիկոնյանը Շապուհ արքայի
գերի ընկած կանանց է պատվով ճոնապարհ դնում դեպի իրենց ամուսինը,
որ հայ կանանց շարաշար անպտովել էր, իսկ սա, այս տիկին Շուշանն
ավերող ու կոտորող մարտիկներին, որոնց ընկերները հենց նույն ժամա-
նակում հինարոր հարձակվում են Վասպուրականի Ռշնիքում, բայց դար-
ձյալ պարտվում և ոչնչացվում են (Ը. 23 և հտն.): Ղևոնդն այս ամբողջ
պատմել է վիպական ձևով ու մանրամասնութեամբ շարունակելով, որպես ժողովուրդ,
թուլաններով, որ լացողութեան մեջ մտնում են բանաստեղծական կեն-

դանությունս։ Այս ոճական հատկությունը մերթ մերթ երեւում է նրա ուրիշ պատմվածքներին մինչ ևս, որոնցից մի քանիսն իսկապես վիպական գրույցներ են ժողովրդական բնավորությամբ։

Երբ Աբրահայանների իշխանությունը հաստատվում է, անասելի կերպով նեղում են հայերին հարկերով և այլ բռնություններով։ 774 թ. ապրիլ-տամբությունը ծագում և ծավալվում է տարերային կերպով։ Ղևոնդը մանրամասն պատմում է այդ (ԼԴ. 137—152)։ Նա այդ էլ, հետևանքից դատելով, տնվածում է բանմիտ խորհուրդ, բայց նրա բոլոր համակրությունը կազմողների կողմն է։ Վթանցի իբրև տեսին նախարարը Հայոց զվտանդ տարակուսանացն հասեալ ի վերայ ինքեանց՝ եղին զողի ի ձեռն իւրեանց և ձեռնամուխ եղեն յիրս, զոր ոչ կարէին վճարել, վասն զի նուազունք էին։ Այլ սակայն լաւ համարեալ զմահ քայլութեամբ քան զկեանս վտանգաւոր՝ ձեռնամուխ եղեն յիրս տպտամբութեան, և ի բաց կացին ի հնազանդութենէն իսմայելիս։ Ապատամբությունն սկսում են Արտավազդ ու Մուշեղ Մամիկոնյանները՝ սպանելով հարկի հրամանատարներին և հարկահաններին։ Նրանց միանում են և ուրիշ իշխաններ, բացի Բագրատունի Աշոտից, որ ոչ թե չէր ուզում, որ հայերն ազատվեն արաբական բռնապետությունից, այլ չէր հավատում գործի աջողությանը՝ նկատի ունենալով թշնամու մեծ ուժը։ Սեւ ժողովեալ ամենայն նախարարք Հայոց ի մի վայր՝ տունէին տոսիմեանս երդմունս և դաշինս ուխտէ՝ կեալ և մեռանել ընդ միմեանս։ Նրանց միանում են և աշխատավորները։ Քրազումք ի բամիկ ժողով[րդ]—ոց եկեալ խառնէին ի գունդն նոցա, ժողովէին առ Նա [Մուշեղ] ամենայն վշտառեալ և վտանգեալք հողւովս, —գրում է Ղևոնդը։ Չեն պակասում և հոգևորականները։ Ամենքը կարծում էին, —ասում է Պատմագիրը, —թե արարների իշխանության վերջն է, բմանաւանդ պատերալք տաւել ի կարծիս առն միոյ մոնոպոնի, որ մարտութեան հոգւոյն շարժեալ մարգարէանայր սնտոխ և ընդունայն ասելով։ Եւհա մերձեալ է ժամանակ փրկութեան ձերոյ։ զի այժմ ընդ հուպ դարձցի գաւազան թագաւորութեան միւս անգամ ի տուն Թորգոմայ, առնուլ ձեռք զվրէժ յաղզնէն իսմայելի եւ դուք մի զանգիտէք յերեսաց նոցա, թէ նուազունք իցէք, զի մի այր ի ձէնջ հալածեացէ զհազարսն, և երկուքն զբիւրսն. զի պատուերագն ձեր տէր պատերազմեցի—զորացարձք, մի զանգիտէք, Սեւ այսպէս տեսիլ սուս և ըղձանս ի ստից օր ըստ օրէ պատմէր նոցա, որում առհասարակ հաւատացեալ տեսանող զնա կոչէին, իսկ ինքը Ղևոնդը այդ՝ ազատության համար ոգևորող մենակյացին կոչում է բմոյեկան մոնոպոն, անշուշտ, միայն այն պատճառով, որ ապստամբության գործն աջողությամբ չի վերջացել և ազետավոր վախճան է ունեցել։ Բայց և այնպես նա սիրով պատմում է ամբողջը, և վերջին էպիզոդը, Արճեղ ավանում 775 թ. տեղի ունեցած ճակատամարտը նկարում է իբրև մի հերոսական գործ, մի բնազդանանց պատերազմ, երեմն նույնիսկ ոճական նմանողությամբ Նիդիին։ Կոճիվ լինում է ոչ լուկ կրոնի. այլ ավելի ևս ազգի ազատության համար, բնական քաջադիմ նահատակքն [—արտիկները] թէպէտ և նուազունք էին ի մէջ չարացուք որսողացն՝ սակայն ոչ զանգիտեցին ի դառնալուն ուրհասէն, այլ մինչ ի սպառ գումարեալք ողւով չափ՝ մարգէին զմիմեանս

բանիւք ստեղծով. Վժայտմամբ մեղացի է վերայ ուղիարհին մեր և ի վերայ
 արդիւն. և մի անգին աչք մեր հոգւան ստեղծեալ զգեալից արունց դորա-
 բանս մերս (էջ 249), նվ սակաւաթիւ մարտիկ ներսներն անգամ մար-
 տընչում են երեսուն հազար թշնամիների դեմ. Վէր արդեւ ուսած է նոյն
 ինքն ի թշնամացն, — դրամ է Պատմագիրը, — ունէին, սակ. ընդ ինքեանս
 մարտակիցս զհրեշտակական բազմաթիւնս, որ մարտական տեսլամբ երե-
 վէին թշնամացն. զի տեսանէին երկցանս և պապաստ [= զտեսանեմբ]
 տեսարանս և ժամկերնս և խնկոց տալիի նոյս երթալով՝ գործուցա-
 նէին զնոսանս Դրոնք, հարկով, եղև են նոյնորականներ, որոնք ուրիշ գնդ-
 քերում էլ ժողովակցել են այգակի մարտերին. Մոտոխազայս թշնամիներն
 այլապես չէին կարող բացատրել խիզախ քաջերի գործը, որոնք անհրա-
 կաւորում են թշնամիներին, մինչև նկարը նշանում են զնոյնի ծանրա-
 թշուրից, կամ զրկվում են զնոյնից և ընկնում են քաջի մահով, Վերայ
 դորապէս անուանքն են յայտընդ ի տանէն Բազրատունեաց սպարապետն
 Սմոտս, և Ուժի՝ Բարձակից և Նիզակահիւ նորին, ի տանէն Մամիկոնեանց
 Մուշեղ դորապար և Մամուէլ տէր Մամիկոնէլից, որ էր արդի մատաղ և
 առոյց գեղեցիկութեամբ, տներ սպարապետին մեծի. և ի տանէն Գնակեաց
 Վահանն դաշնակ, նւ այլ բազումք ի նորաբարաց և յամաց զորս ոչ
 բունմ մի ըստ միջիլ թակել, որք անկանէին իրեն արք Պէն [= երեք տա-
 դար], Վն յայնմամ ստապապէս յառախէին սգոր և ուղիարանք ուղիարին
 հայրը, վան զի տալիսարգ մեծք և գորապարտք պատասխանեց բարձան ի միջի
 ի միում վայրկեանի մամուս, և երկիրս առ հասարակ ի խոր տխրութեան ըս-
 քանեալ՝ կոծէին կոծ մեծ և աւաղէին զվախանս նախամարտական հորաց
 և քաջաց, Վն ևս զմնակ նեղութիւն էր, զի և ոչ տէղի անգամ զոյր
 լալոյ և ողորց համարակապէս զնշնեցեալս, ի ոչ հաց սոյ թեկանել ի
 տունս խորանց, և ոչ տալ զերեզմանի զվախանեալսն, Այսպես է վերջաց-
 նում Ղևոնդն այդ զյայտագնեցութեան արժանի սխրագործութեան պատմու-
 թիւնը.

ՇՈՎՀԱՆՆԵՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԴՐԱՍԻԱՆԱԿԵՐՏՅԻ

1. Կեանագրութիւնը:— Այս պատմագրի կյանքի ու զործունեութեան
 մասին մենք չունենանք թանկութիւններ ունենք, ավելի շատ, քան մեր արեւ այլ
 հին նկարներ ժամին. Լինելով կաթողիկոս և մասնակից իր մամանակի քա-
 ղաքանական գործերին՝ ես առանց քաջվելու, զրեւ է իր մասին. իրեն կոթո-
 յիկութիւն եւս իր Վերայ կաթողիկոսաց աշխատութեան մեջ նայում է, որ
 մշտնոց կաթողիկոսի մահից հետո ընտրվել է ինքն, որ էր Վաղարշապատ-
 թեան նորին սրբոյն Մաշտոցի, այլ և որքան հարապատասխան մերժու-
 սմին զոյով և հայրենեօց ի մեծ պատասխանէն Դրախտակերտէ. և ընկու-
 լայ զաթոռ նորին ի յիւղ [= 346+551=897] թուականութեանս Հայոցս.
 Իր Հայոց Պատմութեան մեջ էլ գրում է. Վէրի [Մաշտոցի] ապա հէջս ես

Վաղարշի կաթողիկոսի Դրախտակերտայ Պատմութեան Հայոց Թիֆլիս 1868.

և թշուառական և պապեցեալս ընդ հոգևոր տրտուցման, խրատու Յովհաննէս որ զսոյն զայս գրեցի զիրս՝ ոչ ըստ աբժանեաց անայ յաթոռ սրբութեան, թերևս ոչ կարացեալ դիմել զոչ հրամանի արքայն և կտմ ալոց ևս նախարարական ռազմութեանն: Զի թէպէտ և յաշակերտութենէ առն սրբոյն Մաշտոցի ի մանկութենէ իմէ, ալ և ազգակից հարողապետութեան նորա ըստ մարմնոյ, սակայն կուրացեալ զերանով մեղաց իմոց՝ ոչ քաւական զանձն փարկայ դնել ի նշմարել զշիջ յակտն եղբորն: Ժամանակակից թովմա Աբծրուէնին՝ զրուս է. զնա փոխանակ նորա [Մաշտոցի] ժառանգէ զաթոռ հայրապետական երանելին տէր Յովհաննէս, որ տնեալ և ունեալ առոտս սրբոյն Մաշտոցի. նորին հրահանգեալ կրթարանի ուսումնասիրութեանն վարժիք տոգտցեալ, այր քաղցքաբարոյ և հեզահայեաց, հասարակաբար առնաբարակ զինքն վարկանելով, արտաքոյ ամբարտաւանական բարձրայոնութեանն՝ կալով յաշտիւման հեղոցն, գրուատեալ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ: Թե ինչ են եղել Մաշտոցի զկրթարանի ուսումնասիրութեանն վարժութեանն երբէք՝ այդ մասին ոչինչ չի հաղորդում ոչ ինքը, ոչ էլ թովման, Սևանի ճգնազգայաց Մաշտոցից նա, անշուշտ, ստացել է խիստ կրոնական կրթութեան, քաջ ծանոթացել Ս. Գրքին ու հայ մատենագրութեանը, վարժվելով միտնպամայն և հոգևորական արվեստին: Ստեփանոս Ասողկեը նրան ճանաչատեսն է անվանում: Երբ Գառնեցի Գեորգ կաթողիկոսն Ասորքապետականի Ափշին ոստիկանից բանտարկվում է, Հովհաննէսը, որ այդ ժամանակ կաթողիկոսական ճգեսն եպիսկոպոս էր, փրկանքի համար պահանջված դրամը ժողովելով՝ կաթողիկոսին ազատում է բանտից: Այլևս ուրիշ բան չի հայտնում նա իր մասին՝ նախքան իր կաթողիկոսութեանը:

Կաթողիկոսական շրջանում նա շատ անգամ խաղաղութեան միջնորդ է հանդիսանում իրար հետ կսվող իշխանների, կամ թագավորների և իշխանների միջև, ինչպես նաև Հայոց թագավորի և Ասորքապետականի ոստիկանների միջև: Երբ երկրորդ անգամ հաշտութեան համար բազմաթիվ ընծաներով գնում է Ասորքապետականի ոստիկան Յուսուփի մոտ, բռնվում է նրանից, բանտի ու կապանքների մեջ անասելի նեղութեաններ է կրում երկար ժամանակ, մինչև որ հաջողում է փախչելով ազատվել: Բայց արաբացիների տհից չի կարողանում Հայաստանում մնալ, քաղաք քաղաք փախչելով գնում է Աղվանից երկիրը, ուր մեծ հյուրասիրություն է գրանւում. ապա անցնում է Վրաստան, Ատրնեքսին թագավորի մոտ: Այստեղ նա Կ. Պոլսի Նիկողայոս պատրիարքից մի ցավակցական թուղթ է ստանում Հայաստանի ավերմունքների համար, վերադառնում է Հայաստան, Տարոն գավառը: Սմբատ թագավորի մահից հետո մի թաւղթ է գրում Բիզանդիայի Կոստանտին կայսրին՝ խնդրելով նրան ոգնել հայերին ընդդէմ արաբների: Կայսրը մարդ է ուղարկում իր մոտ հրավիրելու կաթողիկոսին և արքայորդի Աշոտին: Սա գնում է Կ. Պոլիս, քսկ կաթողիկոսը հրաժարվում է գնալուց, որպեսզի տկարածիւններին դալթազդութեան չպատճառի, թե հարակցում է քաղկեդոնականներին: Տարոնից նա անցնում է Դերջան,

¹ Թովմայի վարդապետ Աբծրուէայ Գառնեցի անուն Աբծրուէաց, Ս. Պետրքուք 1887, էջ 243:

ապա դնում է Մանյա տյրը, այցելում է Սեպուհ լեռան ճգնավորներին, որոնց հետ աղբուսում է ինն ամիս և դժկամակությամբ թողնելով ճգնավորական կյանքը՝ վերադառնում է արևելյան Հայաստան, երբ նրան հո են կանչում, Նա ցամաքում է, որ վերադարձել է, որովհետև կարծես արաբացիներին դորժած ավերածնունդը բավական չէին, հայ իշխաններն և թագավորներն էլ ապիրատությամբ միմյանց դեմ են զինվում և ինքը նրանց հաշտեցնելու համար՝ նորից մեծ նեղություններ է կրում Իր միջնորդությունը Սմբատի որդի Աշոտ թագավորի և Յուսուփի ձեռով թագավորած Աշոտ սպարապետի միջև, որոնք իրար հետ կամում էին՝ պատմելուց հետո՝ գրում է նա. «Եւ տապէս գերկեամ մի ելուզակօրէն զկնի իրերաց դոյթն տալին, իսկ ես աւանդ եղկելի տնձին իմոյ կարգայի, զի բազում անգամ բռնակեաց տնձն իմ ընդ այնոսիկ ոյք ատէին զողջոյն, վասն զի ես էի խաղաղարար և յորժամ խօսէի՝ նոքա մարտնչէին ընդ իս» (էջ 299)։ Մերում թյան օրերում, երբ Նաըր հստիկանը զարքով գալիս է Դվին, կաթողիկոսն ստիպված է լինում հաղթական փառհերու Գեղա լեռան ծործորները, ապա Սեանա կղզին, այստեղից էլ «ի ձեռակերտ ամրոցիկն իմ Բիւրական» — տալում է նա, — «զոր օտացեալն էր իմ գունձի դնոյ, ուր և շինեալ յարդաբեալ իսկ էի եկեղեցի հաստահեղոյս կոճածոյ քաղաքը ղերճապառնոյն զճնոգութեամբ և նկարակերտ յօրինուածով, և վասն կուսակրօն միանձուցեոյց զնա հաստատեալ»։ [Եկեղեցին մնում է ցայսօր]։ Այստեղ էլ, սակայն, նա չի կորողանում երկար ժամանակ հանգիստ մնալ արաբացիներին ձեռից, որոնք գալիս, պաշարում, առնում են այդ ամրոցիկը և միջի մարդկանց կոտորում։ Գաթողիկոսը, սակայն, դրանից քիչ առաջ փախչում է Բագարան, Աշոտ թագավորի մոտ՝ «իսկ ես, — գրում է նա, — որ նախ չուզայի ի թագաւորացոյց բողբոջն Աշոտն՝ առ նմին կացեալ մնայի մինչև ամառայինն յաշտուն յեղանակեալ յեղափոխէր, բազմաբար բարեաց մտաց բարութիւն և լրութիւն սիրոյ առ ի նմանէն ընկալեալ առատաձեռնութեամբ ի բարբ մասունս պիտառութեանց, եւ ապա առ ի նմանէն յղարկեալ չոգայ առ թագաւորն Հայոց Գագիկ, ըստ միջոն հրաւիրման ի կոչման նորա. վասն զի հայրապետանոց առնն հանդերձ գիւյօք և զերգոստանք առ հասարակ ընդ ձեռամբ նուաճեալ էր Նաբայն, և մեք անքնակ իմի վայրակացեալ, և տչ ոք էք այն՝ որ զուն ի վերայ դորձէր օգուով չափ սակա նորոգման մայրաքաղաք եկեղեցւոյն, և հոգեւոր մշակութեամբ հանգիստնայր առ ի դարձուցանել զգերութիւն նոր Սիօնի. զի յոյժ պակասումն և լքումն լինէր ամենայն պատեբազմոյ ձեռին»։ Վասպուրականի Գագիկ թագավորն և իր եղբայր Գուրգենն էլ նրան մեծ պատվով հյուրամենաբարում ու հուսադրում են։ Նա մեռնում է խորին ծերության հասած՝ 926 և 930 թվականներին մեջ, ճիշտ տարին չի պարզված։

2. Պատմաբերիմ Հայոցը։— Հովհաննես կաթողիկոսից մնում են երկու աշխատություն, մեկ՝ վերնում հիշած «Նարք կաթողիկոսացն Հայոց», որ մի ցանկ է հայոց կաթողիկոսների՝ սկսած Գրիգոր Լուսավորչից մինչև 10-րդ դարը՝ համառոտ կենսագրական տեղեկություններով, մեկ էլ՝ «Պատմութիւն Հայոց», որ գրել է ծերության հասակում և վերջացրել է մահից մի քանի տարի առաջ, Սկզբում դրած ունի մի «Բնառջաբան Պատմու-

թեանն, որի մեջ բերում է իր գրեկիքի համառոտ ծրագիրն և հայտնում է այսպես. «Եւ արդ մի ևս ինձ այլ յիրս յառաջարանութեան եղիցի ծախել զժամանակս. վասն զի ծնրութիւն ցաւագին՝ մահ տո դուրս պատրաստ ունի, և տագնապ տարակուսիցս հապճեպ տայ պատմել զանցս անցից տղետիցս և տնհնարին խոռովութեանց հասկից կալելոց զմեզ. Արդ այսուհետև յարահետ և յաղաթարից խոսքէ մտացս յառաջ ձգեցից բռն երազագիր զգրի գրչութեամբս: Ինչքան էլ նա ինքն տեսէ է, թե արագ և շտտպով պիտի գրի, Պատմության մեջ էլ թե՛ «շտտպ տագնապի տարակուսանացս ոչ ներէ ինձ ծախել զժամանակս ի ներքողութեան սորա [—Մեծն Տիգրանի] քան թէ փութալ յայլ ինչ որ առաջիկայն, և իսկպէս շտտպով էլ գրում է: Բայց և այնպես չի կարելի ասել, թե այդ մեծ գործը նա կարճ ժամանակում շարունակաբար, անընդհատ, մի շնչով զբաւ լինի. Այդ երեւում է, օրինակ, նրա վերաբերմունքի փոփոխությունից, Երբ Գաղիկ Արծրունին օրովաճանկով իր թապավորին՝ Յուստէփ ոստիկանից ստանում է թագ արքայականն, Պատմագիրը նրան անվանում է թագակերպեալ իշխանն Գագիկն, Բայց հետո մեծ գովեստով է խոսում նրա մասին և նույնիսկ անվանում է նրան թագաւորն Հայոց Գագիկն:

Առաջագանից (էջ 4) երևում է, որ նրանից խնդրողներ են եղել գրել Պատմությունը «...գտա ի յինէն խնդրողացն»: Վերջարանի մեջ էլ հայտնում է, որ նա յառապով գրել է «ի հրամանէ թագաւորացն, հավանորեն Աշոտ Բ. և Գագիկ Արծրունի թագավորների, նրանց մոտ հյուրասիրված ժամանակ. Բայց Պատմության ընթացքում հաճախ գիմում է եղակի ձևով՝ «քեզ ով ընթերցասէրդ» (էջ 12, 16, 23, 60, 111, 131, 141, 166, 228):

Հովհաննեսի այդ մեծ երկը, առանց գլուխների ու մասերի բաժանման, մի ամբողջական հայոց պատմություն է, ջրհեղեղից սկսած,—ինչպես հնուքն վարվում էին,—մինչև 929—924 թ., Հին մասը նա բնականաբար քաղում է նախորդ պատմագիրներից. Այս մասի մեջ ևս, սակայն, կան այնպիսի տեղեկութայններ, առավելապես կաթողիկոսների համար, որ ուրիշ աղբյուրներից հայտնի չեն: 8-րդ դարի վերջերի և 9-րդի առաջին կեսի համար գրեթե միայն կաթողիկոսների մասին է գրում Հովհաննեսը, և այդ նա, 8-րդ դարի վերջին տասնամյակի մասին գրելիս, բացատրում է այսպես. «Եւ վասն զի սպառնապուտ Հաղարացիքն տիրեցին կաբան զՀայաստանեայս և մեծամեծ աշխարհիս նուազեցան, և Մնացեալք զօղեալ դադարեալ կային ընդ լծով ծառայութեան նոցա սակս աշտրիկ իսկ յայսմ վայրի պակասեաց ի Պատմութենէ աստի զըոյցք իշխանաց մերոց. Բայց եթէ գուցէ գտցի ինչ՝ բաւական քեզ բերցի նախ քան զմեզ պատմեալն ի Շապուհոյ պատմագրէ» (էջ 111): Յնշանակի՝ արաբները հասել էին իրենց քաղաքական նպատակին. հայ նախարարութեան անկումն էր, ոչ, հարկավ, կատարյալ ոչնչացումը:

Պատմությունն առանձնապես հետաքրքիր և կարևոր է պահում 850-ական թվականներից սկսած, երբ Տավրոս լեռան բնակիչները, սասունցիները, սպանում են Ապուսեթ ոստիկանին Տարոնում, և բռնավոր Բուդան ի վրեժխնդրություն ավերմունքներ է գործում և գերում նախարարներին: Համեմատաբար շատ համառոտ է խոսում Աշոտ Բագրատունու

իշխանութեան և թագաւորութեան շրջանի համար՝ հայտնելով, թե Շապուհ Քաղաւորունի պատմագիրը մանրամասն գրել է այդ մասին: Շաա ընդարձակ տեղեկութեաններով սկսում է պատմագրել Սմբատ թագաւորի (891—915 թ.) և սրա որդի Աշոտի ժամանակը, և հանդիսանում է այդ շրջանի հայոց պատմութեան ամենազբաւոյր աղբյուրը, ոչ միայն ժամանակակից, այլև իր պատմած շատ զեպքերի ականատես և մասնակից լինելով իրեն կաթողիկոս:

3. Իմֆնակեմնագրութեան և գրական գործ:—Հովհաննէս կաթողիկոսի այդ երկն իր մի խոշոր մասով ոչ թե սոսկ պատմութեան է այս բառի սովորական իմաստով, այլ ինքնակենսագրութեան կամ հիշողութեաններ, և իրեն աղագիրն՝ կյանքի ամօրհական կենդանի կոչկրեալ. արտահայտութեան է: Իր ձեռով էլ դա աչքի է ընկնում: Թեպետ ծերութեան ժամանակ զրի առնված, բայց սկզբի մասը մի կողմ թողած, մեծ թափով ստեղծված մի իսկական գրական գործ է դա, որ վկայում է հեղինակի մասաւոր կարողութեանը: Ուրեքն Պատմութեան հին մասը, որ ուրիշներից է առնում, արագ ու հապճեպ, համառոտելով, սեղմ բովանդակութեամբ է առաջ տանում, այնքան ավելի ծավալուն ոճով և իրական կյանքի գծերով է առաջ բերում իր ժամանակակից պատմութեանը: Ամեն հատվածներն այդ երկի լի են հեղինակի ապրումներով, հաճախ նրա կրած նեղութեաններով, նրա ցավագին վշտահարութեամբ ժամանակի ակտուր ու թշուառ կացութեան համար: Գարգալիս շարունակ տեսնում և զգում ենք հեղինակին, որ շատ զգայուն է զեպի ուրիշների տառապանքները: Իրա համար և նա ազգում է, երբեմն նրա խոսքը նույնիսկ հուզիչ է իր մանրամասնութեաններով, մանր բանների պատմվածքներով, որոնք տեղ են գտնում սովորաբար ինքնակենսագրութեանների ու հուշիկների մեջ: Նրա սրտից անպակաս է նաև ատելութեանը դեպի երկրի ավերիչներն ու զավաճանները: Մերթ այնքան սաստիկ է նրա ցավը զեպի անմեղ ֆրասկաները, որ նա ոչ միայն վշտալի սրտով պատմում է դառն դիպվածները, այլև ընդհատելով պատմվածքը՝ մտադրական և զանազան, նաև մարդարեւների խոսքերով, քնարական դեղումներով ողբում է երկրի ավերումը, հայ ազգի անկումն ու թշվառութեանը:

Իրեն քերթողական արվեստին վարժված գրող՝ Հովհաննէսը ջանում է ըստ ամենայնի ճարտասանորեն ու գեղեցիկ պատմել և իր ոճով էլ ազդել: Մեկ մեկ գովում է կամ ընդթափում է իր սիրելի անձերին, հաճախ առանձին մեղիկներով, ինչպես, օրինակ՝ «Իմաստունն Գաղիկ», «Մեծ և խոհեմ և հանճարեղ իշխանն Հայոց Գրիգոր», «հեղահամարյուն [Սմբատ]», «հոյակապ իշխանն մեծ Սահակ», «ամենահարուստ և քաղաքահանա թագաւորն»: Միտում է որեւէ զիպուկ անականով որոշել առարկաները, գործողութեանները, Հորինում է ընդհանրապես զարգացումն զարգացնելով, ճշիւ, պատկերավոր արտահայտութեաններով, նմանութեաններով, ճարտասանական ձևերով. «Հէնք Իսմայէլեան տապաւակացն՝ իրեն հրդեհս յանառա և ի շտմբ վառեալ, այսպէս սփռեալ տարածեցին զճարակս բոցոյ ի մէջ փղովրդոց մերոց. և գտաւ ամենայն գլուխ ի ցաւս և ամենայն սիրտ ի տրտմութիւն» (էջ 232): Հաճախ, սակայն, ընկնում է ճշգրտութեանը,

ավելորդ պաճուռանքները և բազմաթիւութեան մեջ, կամ համարձեցեալ ավելորդ կուտակութեաններ է տեսնուի. եւս կարացեալ տեսել, ժուժալ, տանել և համբերել պատերազմին (էջ 125): Եւս յայնմհետէ ապա նիւթ հրաբորբոք դառնութեան մտաց պտեալ (տատիկան Յուսուի) զոյնպիսի յաղթութիւն՝ հրակիզութիւնս բազումս սփռեալ տարածանէ ընդ ոլորտս երկրի մերոյ: Եւ ի միջօրէի իբրև ի գիշերի մութ և մէջ և մտաախուզ և խաւար աղջիւնաղջիկս պատեալ պայտէր զԱլքանագեանս ազգ և ի լծակս կշռոց եղեալ զերկունս տաղնաղ տարակուսանաց՝ հակամիտեալ կուտեալ զտանէին ի վերայ մեր ծանրատաղտուկ անուր Հազարու առաւել քան զքարինս ձորոյն Նաւով-րայ... Բանգի տրմատ դառնութեան, զոր երբեմն խելալ Տէր ի տանէս Թոր-գոմայ՝ կրկին շառախդեալ տնկեցաւ յիմանալի անդաստանս մեր՝ ի փշա-հեղձ մացառս վերընծիւզեալ յեղծութեան և յապականութիւն: Եւ այնուհետև անս նիւս իմ տանջեալ տաղնապի տարակուսանոց և հաշեալ մաշի փոր իմ ի լալոյ, դի. յանօրէնութեանց մերոց այցելութիւն Տեսան տնտես արար զմեզ, և ի սևաթոյր տխրութենէ զործոց մերոց խեթի հալեցաւ ի մեզ արե-գակն ճշմարիտ. և մատնեցաւ ի ձեռս ծանրատրտի երկրորդն փարաւանի և դառն գործավարաց նորա. որք առաւել ևս քան զանուր կաւախաղաղ աղիւ-սագործութեանն վէրս ի վերայ եղեալ՝ կործանեցին զմեզ անհնաւին հա-րուածովք ի վերայ հարուածոց: Վասն զի իբրև դմբիկ հոգոյ շնչաւ ի մեզ մահաւիթ իսմայէլեան օդն դառնալունչ և ըստ նմանութեան փոշոյ պտուտաբար ցնդեալ ի բաց զմեզ տարազեաց ի մեր բնականութենէ. և ըստ ժառանգութեան ուղիւից յորձանաց հեղեղեալ ողորկեալ՝ արբոյց գոգի յիմա-րութեան առնաւարակ՝ իբրև զոյլաւար ի սպանդ զմեզ վարատեալս (էջ 219 և հետ.): Բայց նա միշտ այսպիսի ոճով չի գրուի, այլ հաճախ ավելի թեթև ու պարզ ձևով:

4. Նմանողակեան օմ. Բնթողակեան արվեստ և «գեղջուկ բռն»։—Հովհաննէսն իր Պատմութեան առաջին մասը պատմում է իր ազգայւորների արտահայտութեան ձևերով ու խոսքերով, երբեմն յուրացնելով նրանց նույնիսկ մտածելու և հորինելու եղանակը, դատողութիւններն ու կարծիքները, ժամանակակից նյութի մեջ ևս նա շատ անգամ ինքնուրույնութիւն չի ցույց տալիս: Ս. Գրքից ոչ միայն բազմաթիւ նմանութիւններ և վկայութիւններ է մեջ բերում, այլև շատ խոսքեր այնպես անկատարի պարծանում է իր գրվածքի մեջ, որ թվում է, թե իր մտածածները, իր սեփական դարձ-վածներն են: Նույն ձևով նա օգտվում է նաև Ազաթանգեղոսից և ուրիշ-ներից, մասնավանդ Ս. Խորենացուց և Եղիշից:

Հովհաննէս Պատմագրի ոճի այս նմանողական հատկութիւնը, որ երե-վում է արդեն Ղևոնդ Պատմագրի մեջ, և մեծ չափերով նաև Հովհաննէսի ժամանակակից թովմա Արծրունու Պատմութեան մեջ, գլխավորապես նրանից է առաջանում, որ այդ դարում գրաբարն արդեն սովորովի դպրոցական լեզու է եղել: Առօրյա խոսակցութեան ժամանակ ուրիշ լեզու են բանեցրել, գրելիս՝ ուրիշ, թեպետև այդ երկուսը, հարկավ, դեռ քիչ են տարբերվել միմյանցից: Գնահանի խոսակցական լեզուն, գեղջուկ բռնը, արդեն այն-քան զորացած է եղել, որ արժանացել է նույնիսկ գրական դառնալու: Շուտուհի պատմագիրը գեղջուկ բռնիւ է գրել իր ժամանակի մանրամասն

պատմութիւնը, չեղձի տալ երկուութիւնը ընդհանրաւոր ազդել է նաև ոճի վրա, և միմյանցից փոխելի ևս հեռացել են ըստ ոճի երկու տեսակ գրութիւնները, որ, ըստ Մ. Խորենացու, «որինում էին մեկը պերճախոսութեամբ, մյուսը հեռաբազկաց խօսիւք», որ և Հովհաննէսն անվանում է, ըստ զեղջկաց անարուեստից: Երկրորդ տեսակի երկերն ինչպես իրենց լեզվով սովորական ու պարզ էին, նույնպես և գրութիւնն եղանակով. չէր պահանջվում հաճախել հոճատրական ձևեր ու պատկերավոր արտահայտութիւններ, Ուստի գրողները կարիք չունեին ճարտասանական վարժութիւններին: Քերթողաբար հորինելու համար, ընդհակառակն, հարկավոր էին առանձին հրահանգներ՝ թէ լեզվի և թէ քերթողական ոճի վերաբերյալ: Այդ զերթողական արվեստն ահա սովորում էին զգորցներում հին մատենագիրների վրա հրահանգվելով, որով և մեր հին մատենագրութիւնը դառնում էր նմանողութիւն և նույնիսկ ընդօրինակութիւն առարկա: Նմանում էին ոչ միայն նախորդների լեզվին, այլև նրանց ոճին, գործածում էին նրանց դարձվածները, խոսքերը, մատենութիւնն ձևերը, պատկերները և այլն, երբեմն նույնիսկ չափազանց, Հովհաննէսն, օրինակ, Աշոտ Ա.-ին նկարագրում է ինչպես Մ. Խորենացին Մեծն Տիրգրանին և Սմբատ Բագրատունուն, իսկ Եղիշեց առնում է կանանց նկարագիրն իր ժամանակի կանանց համար: Նրա գրչի տակ այդ ըստ զերթողաց արուեստին ճշռում նմանողական ոճն այն աստիճանի չի հասնում, որ խրթնարանութիւն դառնա, մասնավորապէս որ նրա երկի մեջ կան շատ հատվածներ, որոնք, ինչպես ասվեց վերևում, համեմատաբար պարզ ու բնական ոճով են, իր սեփական պատկերներով: Բայց և այնպես Հովհաննէսը չի օրրում շատ պարզութիւնը և բարձրից նայելով Շապուհի գեղջուկ գրվածքին՝ աշխատում է գրել քերթողաբար. «Այլ ըստ զեղջկաց անարուեստից եկրորդեալ զայն ինչ զոր նախ քան զմեզ քաջ է բանաստեղծ արդոյակապք և դարձանայիք զարժանի բան պատմութեան... արձանագրեցին... զի մի աղայաբար ինչ յանդգնեալ զմիանգամ գրեալսն եկրորդեցից և զքերթողացն արուեստ տապալեցից, և զայն վերժանողացն ծիծաղելիս կացուցից» (էջ 4 և հա.): Ժամանակակիցների ճաշակով այդպիսի ոճն է համարվել գեղեցիկ, Այս մասին տեսնել նաև Գրիգոր Նարեկացի, պար. 11. «Հետտրական խրթին ոճ»:

5. Հայտատեմի վիճակը:—Հովհաննէսի այդ գրական երկը մեր առաջ բաց է առնում իր ապրանք ժամանակի, մի 30—35 տարիների, ուժեղ գծազրկած ընդարձակ պատկերը: Դրտ մեջ անդրադարձած են մի կողմից՝ Հայաստանի իրական ներքին դրութիւնը, մյուս կողմից՝ արաբական բռնութիւնները, որոնք ծայր աստիճանի են հասնում այդ շրջանում, ապա նաև իշխանների կոռիւք արաբների դեմ: Այստեղ մենք տեսնում ենք, որ սկզբում քաղաքական մեծ հաջողութիւններ է ունենում Հայոց Սմբատ Թագավորը: Եւ այսպէս ձգտեալ աճեցուցանէր [Սմբատ] զյաւելի տէրութեանն իւրոյ յարմարից հիւսիսոյ մինչև ցիւրնոյ քաղաք, և անդր ևս քան զհարջն՝ քերեալ մինչև առ փոքն ծովուն մեծի, և մինչև ցահմանս նգերացուց և մինչև ցատորոտ մեծի լեռինս Կովկասու, գիւղաքաղաքիս և զՄանարս մինչև ց Դուռն Ալանաց, առեալ ևս յինքն և զամբողջ գրան պահակի նոցա և առաի

ի հարաւակողմն կոյս զկուր զհասով մինչև ի քաղաքն Տփլիս. և զՈւտի զաւառ մինչև ի քաղաքն Հոռաբակերա և մինչև ի Տուա և ի Եամաքոբ: Նրա իշխանության մեջ էին Մեծ Հայաստանի Մնացած կողմերն ես՝ բացի Աղձնիքից: Նա հաջողում է անմիջապէս կապվել ամիրապետի հետ և ոչ Աւարպատականի ոստիկանի միջոցով: Սա վախենում է նրա զինվորական ուժից՝ բարեկամ ձեռնալ ուժերուն: Վրաց Ատրնեբահէ արքան, որին Սմբատն ինքն էր թագաւորեցրել Վրաստանի վրա, գալիս է թագաւորի մօտ այցելության՝ Ձատիկը միտին տոնախմբելու համար: Իսկ Յուսուփ ոստիկանը քաղում էր ի վարս սրաւարս սոսս և ահիպարանոցս պատրաստեալ՝ բազմազան լճնալորմար դարձուք և գինուք, ոսկեասանձ, ոսկեկար պահուճանօք, այլ և թաղ ևս յոսկւոյ Սոփերայ կազմեալ, և ի նմա յելուզեալ յեռեալ վաքսակալ մարգարտատող տաղաբարդութիւնս, և այլ ևս տկանս պատուականս և բազում և երեսելի զգեստաւ արքունականս՝ ոսկեհամուկս և զդարչատեւն հրաշանկարօ միանգամայն՝ առաքէ ի պատիւ մեծարանաց արքային Սմբատայ: Նույնպիսի ընծաներ տալիս է նա և արքայորդի Աշոտին՝ շրայց և ես, որ գայս գրեցի, — շարունակում է Պատմագիրը, — պատուեցայ զառաւարտար յատրկանէն գլխաւոր ըստ նրին կարգի: և յորի զանաւարտ ոսկեզն զարդաք առաջի ժառանգանելով ինձ: Թագաւորն էլ իր կողմից պակաս նվիրեց չի տալիս Սուսուփին և ժամապար զնում նրան զեղի Աւարպատական:

Ետևումենք տեսնել, թե ինչպէս է նկարագրում Պատմագիրը կաթողիկոսն երկրի ծաղկումն այդ զեռ խաղաղության շրջանում: Երկն աշխարհիս Հայաստանեայց յաւուրն յախտիկ այց արդեալ Տեառն և զպատգարեալ և յաջողեալ ի բոլոր բարութիւնս՝ բնականաց իւրաքանչիւր ոք ի ժառանգութիւնս իւրեանց. և սեպհականեալ զերկր՝ տնկեցին այգիս և արմատացուցին բուքաստանս ձիթենեաց և պարտիզաց. հերկեցին հերկս արտաքոյ փոքր և կթեցին պտուղս հարիւրաւորս. զկան շահմարանք ցարենայ ի մամանակի լրութեան հնձոց. լցան գուրք գինւոյ ի կութս այգեստանեայց և յերկնք ցնեութիւն զգեցան, զի բազմացան ի նմա արտականք անգեայք արշաւոց և հաւք ոչխարաց: Աւ գլխաւոր նախարարք մեր յապաւովացեալք և հանգստեալք ի կրնից տաղատակաց՝ լինէին եկեղեցիս վիճարդ հաստահեղալս ձախեալ կրօ՝ ի միաստանս և յաւանս և յազարակս... Աւ աշուղն վիճակ ցանկալի՝ յի պտղատեւոյ արգասեւք պարարտութեամբ՝ առնասարակ ամենեցուն տուա իրի նորին շարեղն Առաւելայ... բոլոր տարիս բարեաց (էջ 198 և հան.):

Այսպէս ծաղկում էր Հայաստան աշխարհը: Բայց արդեն սկսել էին ծայր տոնել նախարարների ստանդալթյուններն արքայի դեմ և Աւարպատականի ոստիկանի նենգությունները: Արժունի իշխանների զավաճանության պատճառով Սմբատը պարտւում է Աղձնիքի ոստիկանից, և զա սկիզբն է դառնում Հայաստանի դժբախտություններին (էջ 179 և հան.): Եվ մենք Պատմագրի մանրամասն և բազմազան տեղեկություններով հարուստ պատմովմեքների մեջ տեսնում ենք, թե ինչպէս Սմբատ թագաւորն աշխատում է հաստատ պահել իր տերությունը՝ աշխատելով անկախ մնալու Աւարպատականի ոստիկանից և բարեկամական հարաբերություն պահելով ըրդան-

դաժան կայսրութեան հետ, իսկ հայ իշխանները, այդ մասը բռնազաւորելով, դուրս եկան քաղաքէն հասկացութեան, ամեն տեսակ արգելքներ են հանում արքայի դէմ։ Նրանք ձգտելով անկախ իշխանութեաններ կազմելու՝ դաժաւորութեաններ են սարքում և՛ թագաւորի, և՛ միմյանց դէմ, կոզում են իրար հետ, մեկմեկու ձեռքից հափշտակում են կալվածները, բերդերը, իրար ներկիւր ավերում, հռենիւ տըրում, բռնում շղթայում, բանաւորում մեկը մյուսին, սպանում կամ քիթը կտրում, կամ կուրացնում։ Թագաւորին քսութեամբ զրոգում սրա նրա դէմ, դաժաւանում են արքային, տապաւնում են նրանից, նույնիսկ թշնամիներին կողմն անցնում էթագաւորը՝ տիտղոսն ստանալու համար, թշնամիներին տռաջնորդում Հայաստան, ուզում են սպանել արքային, սրա սիրելիներն անպատ անցնում են օտարի կողմը։ Եվ այսպէս երկիրն ապրում է մի եղբարկան վիճակ ընդհանուր շահերի ըմբռնութեանց զուրկ այդ անձնասեր ֆեոդալների ձեռքից։ Եվ այսպէս վարվում են նրանք այն ժամանակ, երբ հարավից Միջագետքի ոստիկանները մուտք են գործում Հայաստան, մյուս կողմից նաև Ասորացատկանի այն ոստիկանը, որ մի ժամանակ վախենալով Հայոց թագաւորից՝ բարեկամ էր ձևանում, հենց նույն Յուսուպը, որ վերելում հիշվեց, տարիներ շարունակ ապերում է Հայաստանը, ամեն տեսակ անգթութեաններ գործելով։ Պատի որ Հայոց թագաւորի դիմադրական ուժը պակասել էր՝ նա ստիպւած է լինում նույնիսկ կրկնակի հարկ տալու, բայց ոչինչ չի օգնում այդ տրոշնարբու արարի արտը ողորդելու, նա խաբենական միջոցներով գերեզմարում է իշխաններին, նրանց ընտանիքի անդամներին ու նրանց արձակելու համար մեծ զոհանքներ պահանջում, աշխատում է բռնել, ոչնչացնել և ոչնչացնում է բոլոր աշխի ընկնողներին։ Նա տարագրեն ձերբակալում է նաև թագաւորին ու տանջալից մահով սպանում նրան։ Արքայորդի Աշոտը ստակալի կերպով վրեժխնդիր է լինում իր հոր համար։ Եվ այս բոլորը և շատ այսպիսիները պատմում է Հովհաննեսը մանրամասնորեն, իրրև իրար հաջորդող իրողութեաններ։

Եւսկ քաղաքաւորներն այն և այդպէս ի հրահանգս կրթութեան վարժից մարտի Այսո, որդի արքայի Սմբատայ, բազում ընթացութեան և հաւատարմութեան քաջութեանց ստեղծակ մրցութեամբ ցուցանել ի ժամանակի հայտնանացն, և անցանէր զանցանէր զամենեւորք արիւրար հանդիսի, որք կենց և ուրբք զուգահաւասար նմա էին։ Սա նախ քան զպատարաւն վկայութեան վախճանի հօր իւրոյ՝ գրեթէ իբրև զարծուի սուսանութի սլացեալ ընդ օդո, այնպէս արմարեալ խոյանայր զկնի դիշտեալ տալազեացն, որք տաղտառի օգոհալ տարեհեալ էին ընդ երեսո երկրի մերում, և նախ քան զամենայն ինչ ի փոքր մի վայրկեան ժամանակի յինցն առ հառարակ գրուեալ նուաճէր զբոլոր իսկ ամբողջ տէրութեան հօր իւրոյ, զոր տակալ կուեալ էր օտարիկներն։ Եւ զորո միանգամ պահակս տեղ ի Սոսոկիւնեացն զտանէր՝ ի սուր սուսերի մաշէր, և պատարագ և պահակագ և քաղաւ սակոց զամառսն ամբողջեալ՝ և ինքն զհետ թշնամեաց կրթէր, որք տաղտառից իսկ հինից իմայնչեականացն զտանէին։ Եւ ամենայնիւ յամենայնիւ աներկիւ գորաւ արեւ գրեթէ զնդիւրեալ պատերազմն զարգալէր ընդդէմ հակառակամարտիցն հանդերձ հարազատ եղբորդին իւրով Արտուս։ Եւ արդ կոտորվար կուեալ զմիտս իւր՝ առ Աստուած հայեր, և հասնել ի վերայ իմայնչեան գորուն, որ նուաճէր իսկ ի Քաղաքաւոր զուտոսի՝ որոյ հարակ զամենեւեան զնախն առայր, և զգլխաւոր երէցս նոցա ձերբակալ արարեալ՝ հրամայէր տեղ ձեռքաւորանել և կուեալ զպարագայց ամբողջսն առ ի տեալ և յաւորելութեան քաղաք։ Եւ ինքն արդ չուեալ զնախն ի Շիրակ զուտոս, և ի վերայ հասնալ գորուն, որ ի նմա արջա-

«Ան մերկայաւ սուրն զաղակուար ի պտենիցն, զոր տեսնող ողմբն յառնէ: զոյն աղանայեալ աղբայր մարգարէն: Սուր ծառուի տրեամբ՝ զարթնալ ի մեզ ազգն Իսմայիլի, ընդ չորեանսն հոգման երկրի զոչնալ տեսնալոր: Կո՛մ էրբե չարեցին հաղմագ բախելով զծով, զաշխարհիս մեծութիւնս: Որ տրդուց թէ և առ Դորայէլ լինէր մարգարէութիւն, զոյն և առ մերս առնալ ձայնն: Մանաւանդ Սրուստիմ մինչև ի հիմն քակեալ լինէր, և մեր՝ բոլոր տախտըն ցոկեալ տեսնեցաւ: Զվայելութիւն երկրիս՝ առաքողից հալած: և ազատութիւն և տէրութիւն և իշխանութիւն նախարարացն՝ առաքութեամբ յերկիր կոթանցեցաւ: Անգ մտնկունց աղայց զցորի հորեայց: և մերցս՝ առնապարակ ձնադջ և մանկունց ի զհրութիւն: Արդ օրդէս յայնժամ, նայեալս և այժմ մեզ՝ ճանապարհն Սիւփնի սղան՝ զի աղակոտեալ բարձաւ լոյս պայծառազարդութեան սուրբ աղառուց և զարգաց նկնդեցեաց: սարխութիւն հոգեզարդ սոնից և ցնծութիւն առաւելային հաղկարակաւ երգաց, քանտայից և պղծակէից: և ժխեղճմայն իսկ սահաբակ զվայելութիւն տախարհիս: Վտան զի ժրբիկ առաքութեանի տիրութիւն զնկեալ ազնիւ հարուստ, բարս զառաքուսան փափկութեան... և յայնեցաւ թիւ: թիւն թանձրութեան կառույն: Խաւարողսն թանձրութիւն անհնարին սեւութեանս: զգին, որ անելոց էր զամենայն տախտըն Հայաստան երկրիս...»:

Ողբից հետո պատմվում է, որ արարական բանականները զգորս և զգորսգլուխս, զպետոս և զիշխանս, զաղատատուհմս և զնախորարարաղուսս

¹ Տես՝ Սոփերեց Հայկականք, ԺԲ. Վենետիկ 1884, էջ 61—80, «Վկայաբանութիւն որոնց իշխանացն Համագասպայ և Սահակայ նախարարացն Հայոց ի տանէ Արծրունեաց»:

² Սոփերեց Հայկականք, ԺԳ. Ողբ զմասն չարեացն տախարհիս Հայոց և վկայաբանութիւն որոնցն Վահանայ Գողթնացուն, Վենետիկ 1884, երկրորդ խմբագրութիւնը՝ առաջ, էջ 61—62. «Պատմութիւն անցից ի հարաւային ազգէն ի վերայ Հայոց և վկայաբանութիւն որոնցն Վահանայ օրդայ Խաւարդի Գողթնան տեսնան»:

բնաջինջ կորստեամբ բառնալով՝ սրափոզոտ խողիտղմամբ սպառեինք։ Նրանք աղապես վաբվում են, որովհետև զբաղում են անգամ՝ վատթարեալ լինելին ի նոցանէն բազումք՝ ի սակաւ, քոջմոմութիկ և ցատուակուն նախորտացնա։ Շատ զգածոված և մանրամասն նկարագրվում է նախարարներ ի ողջ ողջ հրկիզումբ նախիջկանի և Խրամի (Քրոմի) եկեղեցիներում։ Ինչ որ Ղևոնդն էլ պատմում է։ Արդևիքի հրամանով, Կասմ անունով մեկի միջոցով, որ Հայաստանի հրամանատարն էր, այդ նորագործները դավադիր լինելով՝ նախարարներին խաբուելով մոռցվում են եկեղեցիներին մեջ. դաները փակում, աղյուսով շարում, և զգիւրապարկն քակեալ՝ լուցին հրով, և քան զբաբելոյնին ի վեր բարձրացուցին այրեցակուն նիւթովքն։ Անդ բռնութեան թագաւորին երկեւղ, և աստ լեզէոն այսոց ի մարդիկ մտեալ՝ մոռնցնցուցանելով, շուրջ ընթացուցանելով և դուռն փայլեցուցանէին։ Անդ ապա հոր՝ զգեծնաց զուրկ աղբն ալքէր. և ի վերուստ ի եղաւանէն անկանէր կրակն. և մոռնկանցն ի հոնգերման վառէր հուրն. հարքն ի բաց կտրէին, զի առ նոցա ողորմածութիւնն՝ դիւրեանցն ոչ յիշէին. և զոյգ այրէին առհասարակ ամենեքեան։ Արդ ողբաւ և զմերս, սուրբ պատուածոյ... Սկզ առ, երկիր. ողբաւ, երկին, յոգուց հոնէք առհասարակ, զհիշ բարձէք ընդ մարգարէին. զի հառ մէջ և մոռնիւող ի ձեզ տարածեցաւ։ Արտառուօք բազմաց մի հոգար, Երեմիա, որ զայն աղբիւրս խնդրէր. ի մեր աշխարհս իսկ ծովացաւ արտառուօք աղբիւրքը։—Փայտակերտն ալքում է, ամենքը նիւսում խեղդվում են. վերջը շնայնպէս և տմենայն երեկի մարտիկ զորացն սրով զլեռանալ՝ զփայտէ կախեցան։ Եվ այդ համարում էին համաշխարհային քաջութիւնն՝ առիւղբաւաւաւս առնելով դիւրեանց քաջութիւնն,—իրենց քաջութիւնն համբալ աւրոյջ տոնելով դիւրեանց քաջութիւնն, իսկ զմոռնացն ի ճանապարհի ոչ դիտեմ. եթէ ընկուած զնոսա զերեզման, և եթէ Տրպէս ընկեցեալ եղին ի տեղիս։

2. Պատումը։—Արաքսեայի հայերէն բուն դարձնում էին մահմեդական և նույնիսկ այդիսիներէն խիստ արգելում էին ետ դառնալ իրենց առաջվա հովանին—քրիստոնեութիւնը։ Այս պատմութիւն սլուծեալ պատմում է առաջապիսի կրոնափոխութիւն շուրջ և զրանով բազմակողմանի կերպով պարզված է այդ խնդիրը ոչ միայն կրոնական, այլ և հասարակական տեսակետներով։

Վահան Գողթնացին, Գողթան տեղ Խոսրով իշխանի որդին, մեկն է այն երեխաներից, որոնք, ինչպէս նախաբանի մեջ պատմված է, գերի են տարվում արաքսեայի ձեռով։ Նրան մոտ շուրս տարեկան հասակում դարձնում են մահմեդական և անսուն էլ փոխում Վահան, Երեմիան ընդունակ է

յինքում, բարեգնորհ. լավ աւսում է առնում, լավ տեղեկանում նրանց ուսմանն ու կրանին, վարդապետութեանը. քաջ և կորովի խոսքի տեր է լինում, և բարձրանալով դառնում է արքունի դիվանադպիր:

Իշխում է Օմարը. նա հրամայում է ժողովել գերի հայերին և ամենքին արձակում է: Վահան-Վահապն իմացել էր, որ ինքը գերված հայերից է. նա էլ ուզում է վերադառնալ Հայաստան: Օմարը դժվարանում է թույլ տալ նրան, որ հեռանա, որովհետև նա հարկավոր մարդ էր. մեկ էլ չէր հավատում, թե նա գերված հայ է: Հայերի վկայութունը նա չի ընդունում: Միջադեպում գտնվում են տասնուհինգ տարե գիտնականներ, որոնք ծանոթ էին Վահանին և լավ տեղյակ էին նրա տնցյալին. նրանք վկայում են: Այն ժամանակ Օմարը, չուզելով բռնություն գործ դնել՝ որպեսզի նրան պահի, խոստովանեց է անում նրան ավելի ևս մեծացնելու և պատիճներ տալու: Բայց ոչինչ չի ազդում Վահանին, որ վերջն ասում է Օմարին. «Արձակեցէ՛ք, որ տեսնեմ զորչափութիւն աւերածոյ երկրին իմոյ հայրենեաց, և ձեր հրամանաւ գործակալ արբեալ առ մեզ հասանեմ»: Դալիս է Գողթն, ամիրապետի հրովարտակով վերակացուներ է կարգում. լսում է. թե Օմարը մեռավ, ուրեմն այլևս չկար նրան տված խոսքը, թե կվերադառնա, և նա այլևս կտրիք չի տեսնում վերադառնալու: Սկըսում է ապաշխարել, ողբալ իր մանկական տարիքում ունեցած ուրացութունը. նա իրեն քրիստոնյա է համարում և կամենում է քրիստոնյա մնալ: Երբ այդ տեսնում են յուրայիները, ստիպում են նրան ամուսնանալ, որպեսզի նրանից իշխանութեան ժառանգ մնա Գողթնում: Ամուսնանում է Սյունիքի տերերի ազգականներից մեկի հետ: Բայց քանի դնում է, նրա մեջ զորանում է քրիստոնեական բարեպաշտութեան եռանդը—պահք, աշտթք, սքնություն, արատաւք: Եվ որովհետև ուսումնական մարդ էր, նա համոզմունքով գիտակցաբար պառնում է իր հայրենակոն հավատին:

Սկսվում է նրա արագիկական վիճակը. նա բարոյապես ճնշվում է և տանջվում, որ ինքը ծածուկ քրիստոնյա է, և ուրացութեան անունը դեռ մնում է իր վրա: Եվ վերջապես վճռում է թողնել ամեն բան, և առնելով ճանապարհի ծախք և քսոն ձիավոր՝ ճանապարհ է ընկնում, որ դնա Հռոմաց աշխարհը: Երբ հասնում է Վայոց ձորը, կինը թախանձում է նրան, որ հայանի, թե ուր է գնալու: Նա միաքը հայտնում է կնոջը, սա էլ իմաց է տալիս իր եղբայրներին. հավաքվում են, կանայք լալիս արտառուք են թափում՝ ասելով. «Ե՛տ, որ ամիրապետի իշխանութեամբ տուել ես հայրենական երկիրդ՝ մեզ համար էլ մեծ հույս էիր: այժմ այդ դիտավորութունը որ ունիս՝ մենք օտար կդառնանք, դու մեզ համար ոչ կենդանի կլինիս, ոչ մեռած: Նրա շուրջը նստած արտասովելով և նրան ողորելով, ասում էին. «Նայիր, տես մեր կյանքի խիստ դժվարութունը, զուցե քեզ պահանջեն մեզանից. քեզ հետ՝ կառնք օտար երկրում ապրելու և մեռնելու: Բայց և այնպեւ նա կնոյր թողնում է իր աներոջ մոտ և անցնում է Վրաստան, որպեսզի աշտեղ ունեցած իր մերձավորների օգնութեամբ կարողանա հանապարհը շարունակել:

Մի տարուց հետո նա ետ է դառնում դալիս Հայաստան, Արագածոտն գավառը: Խորհուրդ են անում, թե ինչպես նրան ուղարկեն «թագավորա-

բնակ քաղաքը, այսինքն Կոստանդնուպոլիս։ Նրա հետ եղած ձևավորները թողնում են նրան։ Մինչ այդ՝ լուրը տարածվում է, որ նա թողել է մահա մեղականությունը, և նա ստիպված է «այսր անդր աներևութաբար ջրջել Գրիստոսի ատելիների երկյուղից, որոնք աշխատում էին որսալ նրան»։ Վա- հանը դառնում է հալածակա՛ն. ոչ ոք չի համարձակվում նրան իր մոտ ըն- դուենել, Նրա բոլոր ունեցածը վատնվում է։ Իր հետ եղողները հեռանում են նրանից և նրան մենակ են թողնում, և նա աղքատի ձևով ալյուկերպ- ված մահ է գալիս։ Ամենքը վախենում են և առում. «Եթեթիցե՛՝ զնաոցե՛՝ ի բոց, զի մի և մեղ և անձին կորուստ լինիցի»։

Վահանը Վաղարշապատ քաղաքում հանդիպում է կաթողիկոսին, հաշտ- նում է նրան իր գլխին եկած փորձանքը, Կաթողիկոսն առում է. «Գնա անապատ, որպեսզի ուրիշներին քնա չտես»։ Նա գնում է մի մենաստան Շիրակ գավառում. վեց ամիս մնում է այնտեղ և իր կրոնավորությամբ դարձանցնում է ամենքին։ Բայց կրոնավորներն իմանալով նրա ով լինելը՝ սկսում են հիպոկրիսի, հայտնում են գավառի տիկնոջը, իշխանակնոջը, որ առում է. «Թող հեռանա, որ մի գուցե մեր և մեր գլխին մի պատիժ լինի- թագավորից»։ Նա էլ գնում է մի առհայտ ու սակավամարդ ա՛նապատ. և այնտեղ ալելի ևս ճգնում է մեկ հանդերձով և բորիկ հոգեբով, շարունակ զիրք կարգալով։

Վերջապես՝ նա զնոում է գնալ ամիրապետից խնդրել, որ թույլ տա, որ ինքը հայտնի քրիստոնյա լինի. «Զի ես ոչ կատարեալ մտոք զնոցայն ընկալալ, ասէր սուրբն, ալ ի տղայութեան հասակի... Զի թէ իւրեանց բռնութիւնն զիս տանջէ և յիմն ոչ հային իրաւունս, և ես ոչ տրամբմալ։ Ոմանք նրան խորհուրդ են տալիս թողնել այդ միտքը, բայց նա իրեն պատ- րաստ է համարում չարչարվելու և սպանվելու։ Կային և նրան քաջախե- րողներ, նա գնում է Մաքենոց վանքը, ապա Երաշխավորք կոչված անա- պատն Արձկնում, որի առաջնորդը՝ Արտավազդ անունով՝ սիրով ընդունում է նրան, և գնալու ժամանակ տալիս է նրան ինչ որ պետք էր ճանա- պարհի ճամբար։ Եվ նա գնում է։ Հասնում է Ուռհա, ապա վերջապես հաս- նում է Ռուժափ, ուր բնակվում էր Շամ (—Հեջմ)՝ խալիֆան։ Մեծ դժվա- րություններով կորոզանում է ամիրապետին հայտնել իր միտքը։ Ազիտա- անում են նրան ամեն խոստումներով ետ կանգնեցնել իր մտքին. նա հաս- տատ է մնում իր որոշմանը և սպանվում 787 թ.։ Նրա այս կյանքը պատ- մրված է. հարկով, ամեն վկայարանական մոտիվներով ու վիզյական մտե- րամասնություններով. որ չբերվեցին աշատեղ։

Այս է եղել տիտեւ ղառեկերը Հայաստանի իրական զրության առա- քակոն իշխանության դարերում։ Ուսայլ, պիտանի, իմաստուն բամենայն խորհրդակցացն վերագոյնս, բամենայն խորհրդոց հմուտ և սիրելի,՝ բազմ բարձիս տեր մարդը թշվառանում և ոչնչացվում է միայն նրա համար, որ կամենում է հետևել իր խղճին, իր համոզմունքին։ Նրան առում են՝ մի ան- զամ որ քեզ քո անգետ ժամանակ զրել են մեր կրոնին, — հնուքն ամեն մտա- վոր բան կապված էր կրոնի հետ, — դու ալլիս իրավունք չունես քո սեփա- կան ժառանգն ու համոզմունքն ունենալու և ալլիլի ես հայտնելու ալլի։ Այսպես են եղել միշտ բռնակալները, որոնք պետական կրոնը, և նույնիսկ դավանությունը, հովանավորել են բռնութամբ։

Մտքի այդ ճնշվածութիւնը, մտավոր ստրկութիւնն արդեն ծանր էր Վահանի նման մեկի համար: Նրա այդ հոգեկան դառն վիճակը, սակայն, ավելի էս ծանրանում է իր կնոջ, իրայինների մասին հոգալու պահանջից: Նրա մեջ հաղթող է դարձնում գաղափարը, և ոչ ընտանիքն ու մերձավորները: Նա լքում է նրանց, Բայց դարձյալ նա դժբախտ է. այդ գոհալիցութիւնը էլ չի կարողանում հասնել իր նպատակին—ազատ և հայտնի հետեւել իր խղճին ու համոզմունքին: Նա ստիպւած է նորից շարունակել թաքցնել այդ, Նա այդպէս պարտավոր էր վարվել մեկ՝ իր մերձավորների համար, մեկ էլ՝ հենց իր տնէի համար, որովհետեւ ընտանակներից հալածվում էին այդպիսիները: Սակայն այդ լավ մարդու թշուառութիւնը միայն այդքանը չէր: Շրջապատողները, ամբողջ ստրկացած հասարակութիւնը, և՛ քրիստոնյաների վերակացուները, և՛ իր օգնականներն ու ընկերները, և՛ կրօնավորները, և՛ նույնիսկ տնայտ ու սակավամտը տեղում ապրող անապատականները, ամենքը, երկյուղից, գուցե և ակամա, խորշում, խուսափում են նրանից, այնքան ճնշող է արարական բռնութիւնը: Ասում էին. «Թող հեռանա մեզնից, որ մենք չհիասթափե՛ք: Եւ տայառ առաւել ևս պայրացուցանէին զոտերն,—ասում է վիպագիրը,— և ապա յամենայնէ մերկացեալ լինէր յիւր օգնականացն և ի թողակէն: Նրա հետ մնում է միայն մի մարդ իր սիրողներից. — բայց վերջը նրան էլ զանց չարեց զիւր, ասում է վիպագիրը: Այդ մարդն ասաց. «Ես էլ կգնամ իմ ընկերների հետեւից. տո՛ւր ինձ ձեզ ու սուսերդ, որ ես քեզ չմտանեմ քաւրայուն ուղղութիւնների մեջը: Նա, Վահան, էլ տեսալ այդ մարդու խորամանկութիւնը, ավալ նրան նրա ուղածը և սիրով ճանապարհ դրեց նրան: Այսպե՛ս՝ նա հալածվում է և՛ իր խղճից, և՛ արարացող տերութիւնից, և՛ հայ հասարակութիւնից: Նա ուզում է ապրել, մարդավարի ապրել իր հայրենիքում իր սեփական համոզմունքով, բայց չի կարողանում: Այնքան տանջվում է նա հոգեպես, որ վերջապէ՛ս՝ այլեւ չի դիմանում. հուսաւատութիւնից լավ է համարում դիմել ամիրապետին իր այդ վիճակից ազատվելու համար, կամ ազատ ապրելու թույլտվութիւնը, կամ թեկուզ մահով:

Ահա թե ինչպէս ուժեղ պարզված է մեր առաջ այդ նահատակի հոգին, որ ձգտում է խղճի ու համոզմունքի ազատութեան: Իրական կյանքի պատկերով, հերոսի հոգեբանական ճշտութիւնը և բնականութիւնը այս փոքրիկ պատմվածքը շատ գրավիչ և ազդու է: Այստեղ, ինչպէս ժողովրդական վեպի մեջ, ամեն ինչ հասարակ ռեով պարզվում է միայն սյուժետով ու գործողութիւնը, որ ծավալվում է մեր առաջ:

3. Լեզիվակը:—Այս վկայաբանութեան համար բազմաթիւ օրինակներ կան ձեռագիրների մեջ. դրանք երբեմն տարբեր մշակումների են ենթարկված: Պետական Մատենադարանի № 934 Ճեմարանի 399 էջի վրա հիշված է այս պատումի հեղինակը տապեա. «Ձոր գրեաց հայրն Արտաւազդ Երան՝ խաւորի վանացն ճշգրտին պամենայն և կարգեալ նշանակեաց տաւնախրմբն: Կյիլիսառակ սրբոյն Վահանայ ի նոյն առաք կատարման իւրոյ: Դա նույն Երանշաւորի վանքի առաջնորդ կամ կրօնավորահայր Արտավազդն է: որ սիրով ընդունում է Վահանին իր վանքում: Ապա վկայաբանութեան վերջաբանի մեջ (էջ 55 և հտն.) պատմվում է առաջին դիմքով, որ Վահան

Գողթնացու սպանվելուց յոթը տարի հետո Երաշխավորի վանքի կրօնավոր-
բանայր Արաավազդը, որ և Արքահամ, մի քանի «եղբայրներ» հետն
առած, դնում, զտնում է սրբի գերեզմանը. անդի եպիսկոպոսի ձեռով
«հոռոժ գրով» ստանում է Վահանի վկայության պատմությունը, վերա-
դարձին Ուստյուլում այդ թարգմանել է տալիս հայերեն, Հետո հրը Հայաս-
տան է հասնում, գրում է վկայաբանությունը. «Եւ արա սկստյ ուստմա-
զրել,—ասում է նա,— սկիզբն առնելով անտի ուստի արժան իսկ էր»:
Այսպես՝ ուրեմն, այս վկայաբանության հեղինակը ոչ միայն ժամանակա-
կից է Վահան Գողթնացուն, այլև ծանոթ նրան: Եվ ինչքան էլ հետազո-
յում վերամշակումներին ենթարկված լինի այդ երկը, պատմվածքի սրտա-
ռուչ ձևից և մանրամասնություններինց անկասկած է բուն հեղինակի ժո-
մանակակից լինելն իր պատմած և ողբացած անձերին ու ավետալի դեպ-
քերին:

Վահան Գողթնացու համար հորինված կան նաև տաղեր և շարական
(էջ 93 և հան.):

ՎԻՊԱԿԱՆ ԲԱՆԱՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ

1. ԱՅՈՒՄԱՅ ԶՐՈՒՅՏՈՐ:—Էջմիածնում 1921 թ. հրատարակվեց մի նո-
րագրուտ անտնուն ձեռագիր¹. Մի ընդարձակ «Թոռաշարան» մեջ ջանաց-
ված է աղացուցել, թե դա 9-րդ դարի հեղինակ Շապուհ Բագրատունու
կրած Պատմությունն է: Բայց այդ եզրակացությունն ընդունելի չէ: Այդ
ձրկի բովանդակությունն այնպես, ինչպես կա այդ ձեռագրի մեջ, չի համա-
պատասխանում պատմագիր Հովհաննես կաթողիկոսի հաղորդած մանրա-
մասն անդեկություններին Շապուհ Բագրատունու Պատմության մասին:
Բացի այդ՝ կա նաև հետևյալ հանգամանքը. Շապուհ Բագրատունին ժամա-
նակակից է եղել Հովհաննես կաթողիկոսին ու Թովմա Ածրունուն և դրել
է իշխանաց իշխան (թագավոր) Աշոտ Բագրատունու և նրա ժամանակաշրջ-
անի պատմությունը: Նա հավանորեն այդ Աշոտ թագավորի որդի Շապուհ
Բագրատունին է: Եթե այդ անտնուն ձեռագիրը պատմագիր Շապուհի
Պատմությունը լինել, դա չէր կարող իր բովանդակությամբ այնքան շատ
աւարելիվ ժամանակակից Հովհաննեսի և Թովմայի պատմածներից 9-րդ
դարի երկրորդ կեսին և 10-րդ դարի սկիզբներին կատարված դեպքերի վե-
րաբերյալ: Եթե այդ նորագրուտ ձեռագրի սկզբի և վերջի մասերը մնացած
լինեին, թերևս այնտեղ էիջված լինեին գրվածքի վերնագիրն ու գրողի
անունը. բայց քանի որ այդ չկա, երկը մնում է անտնուն, և ըստ դրա բո-
վանդակության՝ դրա հեղինակը պայմանաբան կոչում ենք Անտնուն Զրու-
ցադիր:

Հայ ժողովուրդն երբեք անսարքեր չի մնացել դեպի իր կյանքի պատ-

¹ Պատմութիւն Շապուհ Բագրատունու, ի տպ. տեղն Գ. Տէր-Մկրտչեան և Մեսրոպ
Ճալալյան, էջմիածին, 1921:

մական իրողութիւնները, որ նա անդրադարձրել է իր վիպական բանաստեղծութիւն մէջ, լինի սա պատմական գրույց, թե ժողովրդական վեպ (էպոս) Այդպիսի բանաստեղծութեան համար առատ նյութ է ափել նաև արտաքին տիրապետութեան շրջանի պատմութիւնը, առաջացել են բազմաթիւ ժողովրդական գրույցներ և վեպեր, Հաճանորեն մի ոչ եկեղեցական գրաքննադատ, որ փոքր ուսումնական պատրաստութիւն է ունեցել, զրի է տնել մի շարք այդ պատմական գրույցներից և պատմավեպերից այն լեզվով, որ նա լսել է, զուցե և ինքը պատմել է, և անշատ գրույցներն իր հասկացած ձևով դասավորել է ժամանակարանական կարգով մի գրքի մէջ։ Նրա այդ գրվածքն է ահա, որ հասել է մեզ։ Միակ հիշված թվականն է 913. բայց դա չի կարող 10-րդ դարի վերջերից վաղ գրված լինել, որովհետև այդ ժողովրդական եպոսիտական գրույցները, նույնիսկ 913 թվականով գրվածը, մեծ մասամբ շատ դարգացած են և ժամանակակիցների թողած իրական պատմութիւնից բավականին հեռացած են։ Այս գրանք չեն կարող ավելի ուշ գրված լինել, քան 11-րդ դարի առաջին տասնամյակները, քանի որ գրանց պատմական իմքը, 9-րդ դարի վերջին և 10-րդ դարի առաջին տասնամյակներին վերաբերելու, դեռ բոլորովին չի մթնած։

Զրույցներն սկսվում են Մաննգով, որ շինում է Պաղատոյ քաղաքը։ Այս պատմված է Մորիկ կայսրի, Հացունաց Խաչի, Սահակ կաթողիկոսի մասին ծանոթ գրույցները, և մի երկու ուրիշները։ Դրանք կան նաև տարբեր աղբյուրների մէջ, որոնցից կարող է աղբված, զուցե և օգտված լինել Անանուն Զրուցագիրը։ Այդ գրույցների լեզուն ևս այնպես ռամկական չի, ինչպես հաջորդ պատմիչների, որ գրքի երեք քառորդ մասն են կազմում (էջ 29—84)։ Երանք վերաբերում են Վասպուրականի իշխողներին և ամենամեծ մասով՝ Արծրունիներին։ Դրանցից առաջինները խոսում են Թեոդորոս Ռշտուհու և նրա որդի Վարդ Պատրիկի մասին։ Վերջինս ապրում է 80 տարի։ Նրա որդին, Մուշեղ, — ասվում է, — եղ էր ի նմանութիւն հօրն իւրոյ։ Այս հակառակութիւն եղև տանն Հայոց, զի ոչ կամեցան զտէրութիւն տան Մաննի [= Մաննիկի, Ռշտունեաց] և բաժանեցին զաշխարհ Հայոց ի մէջ Բաքրատունեաց և ի մէջ Արծրունեաց, և կալան ի բաժին զաշխարհն Հայոց՝ զհիւսիսոյ զեհն տուն Բաքրատունեաց, որ էր տունն նորա Բաքրատ, զՎասպուրականի զեհն տունն Արծրունեաց (էջ 37)։

Արծրունիների համար հետ անմիջապէս հիշվում են մի քանի սերունդներ՝ 1. Գաղիկ և Սմպատ եղբայրներ, 2. Աշոտ, Գրիգոր և Համպատկ եղբայրներ, 3. Աշոտ, 4. որս որդիները՝ Կաղիկ և Սահակ, որա կինը՝ Սմպատուհի, Աշոտ Բագրատունու զուստը, 5. Սահակ և Սմպատուհու որդին՝ Գրիգոր Դեբեհն, որա կինը՝ զուստ Միւնեաց իշխանին, 6. որանց որդին՝ Աշոտ, 7. որա որդիները՝ Գրիգոր Դեբեհն, Կաղիկ և Համպատկ-Գրիգոր Դեբեհի կինը՝ Սափի, զուստ Բագրատայ կապուլտի, 8. որանց որդին՝ Աշոտ, 9. որա որդիները՝ Համպատկ և Դեբեհն, որա կինը՝ Հրանուշ, զուստ Աշոտ Բագրատունու, 10. որանց որդիները՝ Աշոտ, Գրիգոր, և Կաղիկ։ Հաջորդ սերունդները չկան, զուցե այն պատճառով, որ գրքի վերջը պակասում է ինչպես կարելի է տեսնել, Անանուն Զրուցագրի աշխատութիւն երկրորդ մասը (էջ 37—88) մի պատմութիւն է որդեցորդի իրադրութեան Արծրունի իշխանների, որանց մասամբ պատմական անձեր են։ Նրանց առաջին շարքը (1—4) և 6-րդը լով անուններ են։

Թովմա Արծրունու ծանոթ չեն Զրուցագրի 1—7 սերունդները։ Առաջին Արծ-

բանի իշխանները, որ Քաջման հիշում է 9-րդ դարի երկրորդ կեսի սկզբում, են մԱլառ և եղբորք իւր Գուրգէն և Գրիգոր (էջ 107, 109), որոնց իրենց զորքով գնում են աղանդու Տարանի իշխան Բազրառ Բազրառունուն ընդդէմ հարկահաւ Մուսեի Աշտի կիներ և Լորանուշ, իսկ որդին՝ Գրիգոր (էջ 129), որ և հետեւի Գերենիկ կամ Գերանիկ է կոչւում. որս երկրորդ կիներ (առաջինի ժողովուրդը հետո) և իշխանաց իշխան (ապա՝ Թաղավոր) Աշտ Բազրառունու գուտարը՝ Սփի (էջ 207, 219, նաև ըստ Անանուս Արծրունու՝ էջ 266 և հետո)։ Գրիգոր Գերենիկի որդիներն են՝ Աշտ (կիներ՝ Սեղա), Գաղիկ և Գուրգէն։ Քաջմա Արծրունիի գրում է, ինչպես տեսանք, Գրիգոր Գերենիկի, ապա Նրա որդի Գաղիկ իշխանի (հետո՝ Թաղավոր) հրամանով, նա չէր կորույ յիմանալ և սխալ գրել Գրիգոր Գերենիկի հարն ու մօր անունները, Նրա կնոջ անունն ու ծագումը, այլև Գերենիկի որդի Աշտի կնոջ անունը։ Արդ՝ կանանց անունները փոխադների մեկ պնելով՝ ունենում ենք, ըստ Քաջմա Արծրունու՝ Աշտ (Լորանուշ) — Գրիգոր Գերենիկ (Սփի, գուտար Աշտ Բազրառունի Թաղավորի) — Աշտ (Սեղա, որ, ըստ Լովհ. կաթիլի, գուտար է Գաղիկ Աղուսթմանի), Գաղիկ, Գուրգէն։

Անանուս Արուստայի ենի երկու խումբ՝ Ա. Գ. 7. 2. Աշտ — Գրիգոր Գերեն (Սփի, գուտար Բազրառառայ կապույտայի) — Աշտ. Բ. 8. 6. 10. Աշտ — Գերեն (Լորանուշ, գուտար Աշտի Բազրառառայի) — Աշտ (Սեղա, գուտար Աղուսթմանի), Գաղիկ, Գուրգէն. Որ Անանուս Արուստայի այս շարքերը նույնն են թէ իրար հետ և թէ Քաջմա Արծրունու գրածի հետ՝ այդ պարզ է։ Տարբերութիւնը միայն կանանց անունների մեջ է։ Արուստայի երեք Գերենները նույն անուն են։ Ըստ եղևույթին՝ Արուստայի լսել է գրույցներ Արծրունի Գերենի մասին և տարբեր անձեր կործնելով՝ իր կողման աղաքանության մեջ դրել է երեք անգամ Գերեն, որդին՝ Աշտ (8—10 անունները)։ Այդ հանգամանքը, ինչպես և ախ, որ Նրա մաս կանանց անունները ստույգ չեն, ցույց է տալիս, որ Անանուս Արուստայի մոտիկ ծանոթություն չուրի Արծրունի տաճի պատմութիւնը։ Այդ համոզմամբ է և ուրիշ կողմերից, Ըստ Արուստայի՝ երկրորդ Գերենի որդի Աշտի Աղուսթմանը հապել է դրել և Եկան ամբողջում, որ և նա մեռել է. Աղուսթմանի ապանել են Սմբատ Թաղավորի թերազրութեամբ և Նրանից հետո իշխել է Գաղիկը 913 թ. Բայց Քաջմա Արծրունին, ինչպես և Լովհաննես կաթողիկոսը (էջ 177), պատմում է, որ Աղուսթմանի ապուղիւյց հետո՝ Կապուսթմանում իշխում է Գերենիկի որդի Աշտը, որ հիմապանալով մեռնում է 908 թ. Նախիկանս ցաղարան։ Այդ Նրա մահից հետո, ուրեմն 908 թ., Կապուսթմանում իշխում է Գաղիկը. իմ գերլուծութիւնը՝ բերեն և հետևյալը՝ Ըստ Անանուս Արուստայի՝ Գրիգոր Գերենիկին ապանում են Սմբատ Թաղավորի թերազրութեամբ իր ցրով՝ անարգանքի վրեժը լուծելու համար. ըստ Քաջմա Արծրունու՝ այդ իշխանը ապանվում է իշխանաց իշխան Աշտի որով և Կապուսթման Նրա թերազրութեամբ (տե՛ս էջ 266 և հետո), և ապա նույն Աշտն, աղանի իրեն Թաղավոր, գնում է միթիթարիւ Նրա կնոջը՝ Սփիին, որ իր գուտարն էր։ Այսպես և ուրիշ տարբեր հանգամանքներ, որ չէր կորույ յիմանալ պատմագիր Ծաղուէ Բազրառունին։

2. Արուստայի Գրիգոր Գերենի մասին։— Այս իշխանը և Նրա հայրն, Աշտ Արծրունին, Նշանավոր դեր են խաղացել 9-րդ դարի երկրորդ կեսին. Նրանցով նորոգվել է Արծրունիների մեծ իշխանութիւնը Վասպուրականում Նրանց մասին մանրամասն պատմում են Թովմա Արծրունին և Անանուս Արծրունին. բովանդակի հիշատակութիւն է անում և Լովհաննես կաթողիկոսը. Բայց յիս վախճանիւյ Աշտոյ մեծի և հաշակաւորի իշխանի տաճն Արծրունույ... պայապատէր զիշխանական պետութիւնն զայն Գրիգոր որդի Նորա ընդ Նորա, որ Գերենիկի անունիւր, և ընդ նա այր սէգ և զգաւտ և սու ի գնացս ոտից, և գորտար արդեամբք և բանիւ, և տնօրինելը միշտ յամենայն բարեմեծութիւնս բերիլ (Յովհ. 135)։ Այս իշխանի մասին են ահա պատմվիլ մողովդական գրույցներ։

Առաջին գրույցով՝ ծնողները զաւակ չունեն. մայրն ամուսնուց խոնդ-

բուժմ է, որ թույլ տա իրեն զնալ Այոյ (Այատայ) անապատն ուխտ, որպես-
զի աստված մի զավակ տա իրենց, «և մեք մամք զնա փոխ տեսնա»,—
կցուժ է նա, այսինքն նվիրենք աստուծուն, որ կրոնավոր դառնա: Մարդ
ու կին գնում են, տանելով շեղինա սպիտակ և զառինս սպիտակ սըբու-
թեան եկեղեցեացն: Վանահայր Գրիգորն և իր վանականներն ամբողջ
գիշերը հսկում են անուժ նրանց համար: Նրանք ունենում են մի արու
զավակ, մի րոտել են տալիս նույն վանքում: անվանում են Գրիգոր, Երբ
ժամանակը հասնում է, տանում են նրան վանք, «և ի հետ իւրեանց ըն-
ծայա բողոժս, և ամենայն կրոնաւորացն զգեստս և հողաթոփս: Մայրը
որդուն տալիս է վանքին «փոխ տեսնա զամենայն աւուրս կենաց իւրոց»,
և հայրը «կոչեաց մանկան անունն Դերէն, որ կոչի որդի վանաց:—Անա-
նուն Արծրունին (էջ 280) այսպես է բացատրում այդ անունը. «Քաջն և
յաղթողն մեծանուն իշխանն Գրիգոր, անուանեալն Դերանիկ, որ թարգմա-
նի՝ ուխտիւք խնդրեալ ի տեսնէս:

Մանուկը մեծանում է վանքում, ուսում ասնում, զեղեցիկ էլ ձայն
ունի: Վանահայրը հազցնում է նրան կրոնավորական զգեստ, և երբ նա
արդեն լավ սովորել էր բոլոր կարգերը, ուզում էր նրան քահանայության
կարգ տալ: Բայց ուրիշ բան է պատահում: Վանքում կար մի զեղեցիկ
աղջիկ, շատ քաղաքավոր, հօրն Գրիգորին, որին հազցել էին հավատավորի,
այսինքն՝ կուսանի զգեստ, ուրեմն պիտի կույս գանար: Մի քի վանքի
վերահում ոսպ էին քաղում երկուսով, մանուկ Դերենը և հավատավոր աղ-
ջիկը: Եւ ի շատորաց ցանկացել էր Գերէն աղջկանն. և անկարծակի կա-
լաւ զնա և բռնադատեաց և արար կամաց իւրոց:

Վանահայրն այդ իմանում է և հայտնում է աղայի հօրը, «Տեսան՞ես՝
զինչ զործեաց մանուկս այս. և ոչ կարէ բնակել ի վանք. զի ոչ կարեն
հանդուրժել զառինք եկեղեցեաց կորեանք տիրւծոց. վասն զի ապականեաց
զորոջն եկեղեցեաց, զոր բազում աշխատութեամբ սնուցիս: Գրիգոր Դերենի
կրոնավորութիւնը վերջանում է. հայրը նրան տուն է բերում և տմուսնաց-
նում Սյունյաց իշխանի դուստրի հետ:

3. Երկրորդ գրույցով՝ Գրիգոր Դերենն ունի երկու եղբայր, անուն-
ները Գագիկ և Համադաստ: Ավագ եղբայրը Գրիգորն է: Եղբայրները բա-
ժանում են Վասպուրականի երկիրը: Վան քաղաքը բաժին է ընկնում Գրի-
գոր Դերենին: Այս գրույցը նրա համար ասում է. «էր այր առատ և
զուարթ, որ ոչ նման էր նմա այլ մարդ ի վերայ յերկրի, ոչ ի մեծաց և
ոչ ի փոքունց: Եւ էր նորա ծառայ մի ի տանէն Գնունեաց, և անունն նո-
րա Գորգ Զաֆրտն: Եւ նա էր արքունիսն ի Վան, և յորժամ լինէր ի ժամ
ճաշոյն՝ իջանէր ի մոյտան Վանայ և շող նստէր ի սեղան, և արք որ ան-
ցանէին ճանապարհորդաց՝ կոչել տայր և նստուցանէր՝ ուտէր և ըմպէր,
նոյնպէս և քաղաքացիսն զլաւ և զվատ: Սովոր էին գալ և նստել ի սե-
ղանն տմնայն ոք, և ոչ կայր չափ ուտել և ըմպելոյս:

Դերենն սկսում է չքավորել: վերջանում են նրա բոլոր ստացվածքները,
որ ամբարել էր հայրը. պրծնում են և նրա երամակներն ու խաշները: Եղ-
բայրները ծաղրում են նրան: Նա իր երկիրը, իր բերդերն ու գույքերը
վաճառում է եղբայրներին, դրանց գնով շարունակում է ուրախութիւնը:

անել. «Ուտէր և ըմպէր, և ոչ եթող զսովորական բնութիւն իւր»։ Մնում է միայն իր վնաս քաղաքը։ Նրա Դադիկ հղբայրն ալիք ջաղաքն էլ գնում է։ տալով նրան «գանձ» և հանդերձս պայծառ և զձիւս և զՂորիս»։ Նրա ապարանքներէն ոչ մեկն էլ չի թողնում նրան, որ նա նստեր միջին։ Բայց և այնպէս՝ ամեն առավոտ «Գայի» սովորականըն՝ փողահարըն և գնահարըն և տուեղահարըն, և խաղաարարըն կաջաւէին տուջի նորա։ Եւ ոչ կայր նմա ցնորումն և կամ հոգս աւագութեան որպէս հարցն իւրոց, բայց միայն ուտէր և ըմպէր։ Նրա ազատները (ազնվականները) խմբերը թողնում են նրան. մի մասը գնում են Դադիկին, մի մասն էլ Համազասպին։ Ուր որ նրա աղածը լսում են՝ ծաղրում են նրան։ Նրա ազատներէն՝ մտին Յնում է միայն նրա Գնուհի Զաֆրան ծառան։ Եվ այսպէս չքավորում է նա. Յնում են միայն երկու ձի, մեկն իրենը, մեկն էլ Զաֆրան ծառայինը։

Առավոտյան, կիբակի, Դերենն տուում է Գորգ Զաֆրանին. «Այսօր ոչ մի բան չուենք վայելիլու. ինչ պիտի տենեք»։ Մտան, որ տիրոջ համառութիւն ընկերն էր, պատասխանում է. «Այ այսօր ձին իմ և գնահարըն իմ և զգրեհն իմ և զսաղաւարտս իմ և վաճառեալ այսօր, և մի պակասեցուցաներ զսովորական սեղան քո. իսկ ի վաղիւն զինչ պատրաստէ առուուած՝ զայն տանեմք»։ «Եւ այն օրն պատրաստեցին զճաշն ըստ սովորութեան իւրեանց և ռարխ հղին մինչև իրիկունն, և գնաց ամենայն մարդ ի տուն իւր, և Յնաց Դերէն մէն և Զաֆրան ծառայ նորա, և նվիրակ մի և մատըրավակ մի, և այլ ոչ ոք»։

Նստել են վրանում Դերենն ու Զաֆրան ծառան և մտածում են. թե մյուս օրը ծախեն Դերենի ձին ու հանդերձները և ճաշ պատրաստեն։ Այդ ժամանակ մի ճանապարհորդ, անսնելով մոմեղենների լույսը, գալիս նստում է վրանի դռանը։ Դերենը ձայն է տալիս նրան. «Ո՞վ ես, և ինչու ես եկել»։ Բայց այն մարդը խոսել չի կարողանում, որովհետև տանիկ (արած) էր։ Այն ժամանակ Զաֆրանը նրան բռնում, վրանն է ներս տանում Դերենի մոտ։ Դերենը նրա հետ տանկի լեզվով է խոսում, որովհետև նա տանկերէն սովորել էր։ Հարցնում է նրան.

— Ո՞րտեղից ես գալիս։ Նա պատասխանում է.

— Ասորեստանից եմ գալիս. խոսել չեմ կարողանում, որովհետև իմ շատ տեղս վիրավորել են։ Եթե ճար ունեք՝ դեղ արեք իմ վերքերիս։

«Յայնժամ Դերէն էրաց զխոցուած գլխայ նորա և ձեռք նորա և եղիր զեղ խոցերուն. զի էր հմուտ բժշկական արուեստիցն, և ոչ էնաց տալի կամ պակաս։ Եղիր առաջի նորա սեղանն և բաժակ, և յոյժ մեծաբնաց զնա, մինչև զարմացաւ այլն ընդ բարիմտութեան նորա, զի եղիր բաժակն ի ձեռն նորա։ Եւ Դերէնն էտ զքնարն ի ձեռն և ուրախացէր զնա, և անչափ սիրեաց զնա, զի Դերէնն այլ զուարթ էր և սիրուն և բարեխորհ և ազնկաւանակ։ Եւ յորժամ առաւօտ եղև, յարուցեալ առէ այլն ալլազդի»։

— Ո՞վ բարի այլ դու, այդչափ բարեխորհ ես դու. զի չեմ տեսել զայլ ոք ի մարդկանէ։ Զի ոչ հարցեր ընդ իս, թէ ուսով դաս, կամ ի երթաս։

Այն ժամանակ այլազգիս պատմում է, որ ինքը Բաղդադի թագաւորն է. Արաբկեր կոչված թշնամիները հարձակվել են Բաղդադի վրա, իր զորքը դաժանեցնել է նրան։ Նա ուղեցել է զնալ ճորտստն, որի թագաւորի կինն

է իր քույրը: Բայց ճանապարհին ծառաները թողել են նրան, և նա գիմել եկել է Դերենի մոտ, որովհետև պատմել են նրան Դերենիկի «առատության» համար:

— Իսկ առ նա գիմել եկի,— շարունակում է ալլազգին,— միթէ (—գուցէ) տացէ ինձ ձի և մարդ և առաջնորդեսցէ ինձ յարևելք, զի գնացից առ փեսայն իմ և առից ի նմանէ զօրք և գանձս բազումս, և երթամ պատերազմիմ ընդ թշնամիքն իմ և թափեմ զքաղաքն իմ զբողոքս: Եւ աղաչեմ զքեզ, իմ բարի այր դու, տա՛ր զիս առաջի Դերենիկին, որ հոգայ զճանապարհն իմ, և քեզ բարի լինիցի աստուծոյն քո զոր պաշտես:

Հայէր Դերենն առ Ջաֆրան և ձիադէր: Եւ նա (ալլազգին) արտմել ասէր.

— Ի՞նչ ձիադեր, աղաչեմ զքեզ. տա՛ր զիս առ նա:— Այնժամ ասէ Դերենն.

— Չէ՛ աստ Դերենն, այլ ես հոգամ զքեզ ուր և կամիս:— Եւ նա ասէ.

— Մի ստեր, ես լվել եմ, որ տաս է:— Եւ նա ասէ.

— Չէ՛ աստ:

Այնժամ կալեալ զձեռանէ նորա՝ համբուրեաց զնա և ասէ.

— Երգվիր, թէ չէ աստ Դերենն: Եւ նա ասէ.

— Զի՞ երգեսում, ես եմ Դերենն զոր դու խնդրես:

Եւ նա զորմացաւ և ասէ.

— Ապա է՞ր է զի նստիս ընդ դրուց քաղաքին, բաստ է. այս քաղաքս քո է և այս բարձր աշտարակս: Զի՞ է քեզ, աստ ինձ:

Եւ նա պատմեաց նմա զամենայն զոր արարեալ էր: Եւ զարմացաւ Եւ ասէ Դերենն.

— Ո՞վ մեծ արքայ Բաբելոնոց, երկիկ օրն զիմ ծառային ձին վաճառեցաք և վախելեցաք, և այսօր զիմս կամէաք վաճառել: Եւ արդ արի՛ հեծիր զիմ ձիս, և զիմ հանգերձս հազիր, և ճա զիմ թուրս զհետ քո:

Եւ կոչեաց զմարդն մի, որ զիտէր զճանապարհն առնել ի Պարսիկս, և տվեալ նմա վարձ զահեկանս, և յգարկեց զհետ նորա մինչև ի Խորասան:

Երբ այլազգին գնում է, Դերենն ասում է Ջաֆրանին. «Էլ մենք չպիտի մնանք այս քաղաքում, ուր մեզ ծաղրում ու կատակում են: Արի գնանք Ասորեստան, որպեսզի անծանոթ լինենք տեղացիներին և կարողանանք ծառայել մեկին և ապրել: Գնում են Մոսլ քաղաքը. Եվ ահա երեք մարդ նստել են քաղաքի դռներին. հարբած էին, բայց է՛լ իմում էին: Իրիկնոցեմ էր, և Դերենը հոգնած էր՝ ճանապարհից: Եկավ ինքն ու Ջաֆրանը, և նստեցին նրանց մոտ: Նրանցից մեկը հարցրեց.

— Ուստի՞ գայք դուք:— Նրանք պատասխանեցին.

— Ի հեռաւոր աշխարհէն Հայոց, ի Վանէ:

Իբրև լվան ասեն.

— Զի՞ժուգ կոյ բարիանուն իշխանն, որոյ Դերենն ասեն: Եւ նա ասէ.

— Աղէկ:

— Եւ նոքա տվել նոցա երգումն և ասէ.

— Ասա, իրձա է զինչ ասեն զնմանէ:

— Զի՞նչ ասեն,— հարցնում է Դերենը:— Եւ ասեն արքն Մոսլցիք.

— Գրան վաճառականքն մեր և տսեն, թէ Դերէնն այն սովորութիւն ունի, զվրտան իւր հարել է ի վերայ ճանապարհին, որ պողոտայն է քաղաքին, և տեղ անեալ զքեզանն իւր առաւօտէ օրն, և նստուցտնէ զամենայն ճանապարհորդս, զլաւ և զվատ, և Դենակիչք քաղաքին ամենայն աւուր: Եւ ըստ զուստնէ քեզեցիկք և զուստնէ հնչեցուցտենն զձայնս իւրեանց մինչև երեկոյն. չկայ հարակ մարդոյ երթալ ի տուն իւր: Եւ այսպես սովորութիւն նորա:

Վերջն այդ մարդիկն իմանում են, որ հենց Դերենի հետ են խոսում, Այդ երեք մարդք քաղաքի պատվավորներից էին: Նրանց սովորությունն էր օրը իրենցից մեկի տանը ճաշել: Ընդից հետո տան տներն իր հյուրերին տալիս էր նվերներ: Դերենին էլ հրավիրում են և երեք օր պատվում են նրան, մեծ ընծաներ տալիս: Դերենն ընծաները կապում, կնքում է իր մատանիով և թողնում տան տներին մոտ:

Գնում են Բաղդատ: Թագավորը, որ Խորասանից եկել, տիրել է քաղաքին, հրապարակում շրջելիս՝ տեսնում է Դերենին Եւ Զաֆրանին, ճանաչում է նրանց, պատվիրում է, որ նրանց բազանիք տանեն. ուղարկում է Դերենին զհանդերձ պատուական ոսկեհուռն. և սարք էր. մեծամեծներից մեկին էլ ուղարկում է նրա ետևից. բերում են պալատ: Ութ օր շարունակ մեծ հրավերք է անում թագավորը. ամենամեծ պատիճներն է տալիս Դերենին, և հետո մանրամասն պատմելով հայտնում, թէ ինչու է այդպես վարվում: Ապա պատվով ու զօրքով ճանապարհ են դնում Դերենին դեպի իր հայրենիքը: Նա գալիս տիրում է Վասպուրականին և ամուսնանում:

Վերջը պատմվում է, որ մեռնում է Բաղդատի թագաւորը, որ տիրում էր Դերենին, նրան փոխանորդում է Մանեղ, ըմբռն մի պիղծ և չար: Նա հորձակվում է Հայաստանի վրա, առնում է Դիկն քաղաքը և գալիս դեպի Վասպուրական: Դերենը նրան ուղարկում է զգանձառակոյ և օրնաթոյ. ձիւ և ջորիս և առնում, որ իր երկիրը չավերի: Բայց թագավորը չի լսում և անվայել խոսքերով տնարգում է Դերենի դեսպանին և ասում. «Դու շատ գանձ ես տանել ի տունէն Բաղդատայ, և ևս ևս զքեզ յաշխարհէդ Վասպուրականի և տոմ զգա Տոհատայ Անձնացոյ, զի նա օրէէ գիտա:

Դերենը զօրքով գնում է նրա վրա, վասպուրականցիները ջորդում են տրաքներ ըստ ժողովրդուն. թագավորը փախչում է. Դերենը մեծ ուղի-մուղար է ձեռք բերում:

Եւ այսպէս կացել բազում ժամանակ ձերացեալ և նստուց զԱշուտ արդին իւր տէր Վասպուրականի: Եւ մեռաւ Դերէն և տարան Թաղեցիք զնա ի Վարաք: Եւ եղև աւուրսն Աշուտայ շինութիւն և խաղաղութիւն ի աշխարհին Վասպուրականի:

4. Նորոգել գրուցը Դերենի մտքի:—Դերենն ընդարձակում է Վասպուրականի իշխանության կալվածները: Դրա մեջ էին մինչև Աղի ծովը Սալամաստ, Հեր, Ճահուկ և այլն: Աշուտ թագավորի մահից հետո Սմբատը նույնպես ընդարձակում է իր տերության սահմանները: Եւ էր նա այդ դուռն և պատերազմող և առաւելաւոր: Երբ նա աշխուրդուններ ունեցավ, ամենամեծաւ և անուանեաց զինքն Սմբատ տիրեցրական:

«Եւ էր Դերէնն այն կնկատէր»,—այսպէս է սկսվում զրուայցի զոր-
ժողովթաւնը: «Եւ էր մարդ մի և անուն նորա Ապուսմար, և նա տիրեաց
Հերայ և Մարտնդուն և Մազնագանի, Եւ վասն բռնակալութեան օրէր զԴե-
րէնն: Եւ բազում ծախս հանէր Դերէն այն մարդոյն, զի ունէր դուստր մի
զեղեցիկ յոյժ, և սիրեաց զնա Դերէն, և համարձակեցաւ Դերէնն երթալ ի
տունն Ապուսմարայ և կենայր բազում աւուրս և ապա դոռնայր ի աշխարհն
իւր ի Վասպուրական: Եւ բերէր զԱպուսմար զհետ իւր ի Վան և բազում
աւաւրս ուրախութեամբ պահէր և տուրս բազումս տայր և դարձուցանէր ի
Հեր, Եւ այսպէս ասնէր ժամանակս բազումս, և զկին իւր ի բաց թողեալ՝
ոչ սիրէր զնա...»

Երայժամ Հրանուշ քոյր իւր [Սմբատ Թագաւորի] ուղարկել տո Սըմ-
պատ եղբայրն իւր և ասէ, թէ ճի՛մ այլս Դերէնն թողել է զիս և զայլազ-
գի կին մի կուսիւրէ ի Հերայ՝ զդուստրն Ապուսմարայ, և անչափ անդգնել է
և ամառել յայլազգիին, որ զհասարակ տարին զնայ ի հոն, կենայ և զամե-
նայն բարիք տառն Վասպուրականի անդ տառնի և պատրաստէ նոցա կերա-
կուր, այլ և զհանդերձս, զգանձս, զձիս և ջորիս տառնի անդ ի կնոջն այլազ-
գոյ, և անչափ լըրութեամբ սիրէ զնա, և զորզիս առ ոչինչ համարի և ան-
տես առնէ: Եւ զու տիեզերակալ եղբայր իմ, յարմէ սարսնի ամենայն թա-
ղաւորք և իշխանք և մեծամեծք յերկրի, մի տալ զիս արհամարհել զի քոյր
քհ եմ և ոչ զոք ունիմ այլ տէրս:

Եւ իրրև զայս լուաւ Թագաւորն Սմբատ՝ արտմեցու յոյժ, Ուղարկեաց
առ Դերէնն և ասէ. «Զի՛ առնես զայդ ապիրատութիւնդ, զոր չէ պատեհ.
զքոյրս Հրանուշ, քր ոչ այդպիսի դեղ և ի կանայս, համեստ և զեղեցիկ,
դու զայդ թողու ու այլազգին երթաս. չերկնչիս աստուծոյ: Եթէ վասն
պոռնկութեան այլ իրք ի պէտք են քեզ՝ կան բազում կտնայք աշխար-
հիդ Վասպուրականի: Եւ այլ լսեմ թէ զամենայն կտնայք ազատաց քոց
ապականել ես: Յերկիր աստուծոյ. զի չէ քեզ բարի տոյ ձայնդ զոր լսեմս
զքէնս:

Ապա երբ լսեց Դերէն զթուղտն Սմպատայ՝ ասաց ընդ մարդն, որ
դեսպանն էր. «Ի՞նչ կարի յանձնահաճել ես ի քս մեծութեանդ որ աջողե-
ցաւ, դու թնչ ես որ զայդ ընդ իս ասես: Իմ տառն տէր եմ ու իմ կամացս.
զոր սիրեմ՝ զայն առնեմ. թէ չես հաճիլ դու՝ ուղարկէ՛ ու առ զքոյրն
եթէ ոչ՝ ես ուղարկեմ առ քեզ:»

Եւ յորժամ լուաւ զայս Թագաւորն Հայոց Սմբատ՝ հրամայեց զրել
հրովարտակ ի Հեր առ որդիքն Ապուսմարայ: Եւ էին նոքա եղբարք չորք,
նա զրել առ նոսա այսպէս. Քի Սմպատայ ի Հայոց և ի Վրաց Թագաւորէ
և ի տիեզերակալէ առ օրգիք Ապուսմարայ. որ այժմ ունիք գտէրութիւնդ
Զարեանդ գուսառի և դաւանդ՝ շաղաքն Հերայ, զգլուխդ Պարսից, Լսեմ թէ
Դերեանիկտ, որ իմ փեսայ է, զԳուլիսար քոյրն ձեր սիրէր. չամոյնէ՞ք զուք
զայդ տալ առնել: Ամենայն հաւատի ճաշք էք: Եթէ քոյրդ ձեր առ նա
զերի էր՝ պարտ է քեզ ձայն Խորասան ընկնուլ և առ իս և քոյրն ձեր ի
զերութենէ թափել:»

Իսկ նոքա զրեցին նմա պատասխանի, և ասեն. «Ո՛վ արքայից ար-
քայ, մեք երկնչիմք ի յանէ քումէ և ոչ իշխեմք ձեռն արկանել ի Դերէն»

զի գիտեմք որ փեսայ է քու Ա՛մ, եթէ մեզ ոչ բարկանաս՝ մեք չտամք նա
գալ առ մեզ և մեք չենք կամացն չարապատշաճ գործոյ նորա առ մեզ։

Եւ յորժամ լուաւ արքայն Սմգտա պթուղան նոցա՝ և հրամայեաց
գրել՝ առ նոսա այսպէս. «Եի Սմգտա թագաւորն Հայոց և Վրաց և բազում
դաւառաց ինքնակալի առ Ալի և Մահմէտ որդիքդ Ապումսրայ. իւրաջ զգիր,
որ հրովարտակի մեր, զոր գրել էիք զի երկնյիք յինէն և ոչ ի յիշէք չար
առնել Դերենայ իշխանին Վասպուրականին. հա՛ ետ երդուել եմ յաստուածն
իմ զոր՝ «պաշտեմ՝ անահ էք յինէն զուք. Առաջագոյն ուղարկեցէք առ նա,
թէ՛ Մի գալ այլ առ մեզ, և եթէ նա անզգնի զալ՝ ի լուռ կացէք. և յոր-
ժամ գոյ՝ սպանէք զնա, և անպարտ էք յարեանէ նորա։ Ապա եթէ անտես
առնէք զհրամանս իմ և ոչ սպանէք զնա՝ վկայ է աստուած, որ զՀերն ի
հիմանէ քակեմ և զմեզ ի սուր սուսերի մաշեմ։

Եւ յորժամ տարան զհրամանն թագաւորին առ որդիքն Ապումսրայ՝ և
նոքա ուղարկեցին առ Դերենն և ասեն, թէ՛ «Այլ մի գալ զու առ մեզ
վասն մեր քվերո, զի բազումք կան և ծիծաղեն զմեզ և հայհոյեն։ Եւ ծի-
ծաղեցաւ Դերենն։

Եւ ասէ Ապումսրայն խոր զուսոր Սեսային Դերենն առել էր իր
անդրանիկ որդի Աշոտին կնության]. «Լուր, իշխանաց իշխան, չէ պարտ
այլ ի Հեր երթալ, զի շան բնութիւն են որդիք Ապումսրայ։ Եւ նա ասէ.
«Լուա կաց, Ապումսրայն, չեն նոքա ինձ գիմակաց, և եթէ կամեմ՝ այսօր
քակեմ պարիսպ Հերայ և զերկիրն աւար հարկանեմ։

Եկաց զամռան աւուրքն ի աշխարհն իւր ի Վասպուրական, և յորժամ
հասան աւուրքն աշնան՝ աշոգեցաւ զնալն ի քաղաքն ի Հեր, որպէս սովո-
բութիւն էր իւր։ Եւ ամենայն ազատքն իւր լսէին զայն, որ յղարկել էր
Սմգտա թագաւորն առ որդիքն Ապումսրայ և ոչ իշխէր մարդ ասել ընդ
Դերենն, զի այլ խիստ էր և բարկացող։ Եւ ապա հրաման կա ծառայից
իւրոց և բարձան հաց և գինի և խաշինք և ոչխարք գէրք պտուրաք և
զամենայն բարութիւն որ աշխարհին Վասպուրականի։ Եւ յղարկեաց զմի
ոմն որոյ անուն էր Մլիհ շախաժանեցի, «Ա՛ռ զայս ամենայն բարութիւնդ
և զնա ի Հեր և աստ ընդ Ալի և ընդ Մահմէդ որդիքն Ապումսրայ, թէ
կամիմ։ Գալ մնեալ առ մեզ, զի որս բազում լինի ի Մարանդայ լերինքդ և
ի Մանդաղանի դաշտներդ։ Եւ ինքն առեալ զօրքն և զազատքն իւր զնաց
ի շահուկն գաւառ։

Ապա Դերենը բռնել և բանտարկել է տալիս Ապումսրային, սա բան-
տից էլ զգուշացնում է նրան, որ չգնա Հեր, Դերենն անարգում է նրան և
գիմում է զնալի Հեր։ Ապումսրայի որդիքը շատ զորքով նրա գնմն են զուրս
գալիս։ Դերենին զգուշացնում են, որ այդ օրը չգնա Հեր, բայց նա չի
լսում։ Եվ ապա պատմվում է, թե ինչպիսի տեղում և ինչպես սպանում են
նրան։ Նրա զին իր սիրական Կուլինարը գնում է և ուղարկում իր աշ-
խարհը։

Կան նաև ուրիշ հետաքրքիր դրույցներ, ինչպես են՝ Յուսուփի, Տա-
ճատ Անձեացու, Խութ ու Սասունի և այլ զրույցները։ Վերջիններս «Ստանա
Մանրի» նախնական պատմութենքն են։

Ե. ԶրույցՈՅՐԻ քննադատութիւնը։—Այստեղ բերվեցին Անանուն Զրու-

ցազրի գրքի երկրորդ մասի զրույցներին երեքը, մեծ մասամբ շատ սեղմ և կարճառատ։ Դրանք, ինչպես և մյուսներն, իսկական բանհյուսական երկեր են, գեղեցիկ թեթև պատումներ, որոնք շատ հաճելի են թե իրենց ըովանդակությամբ և թե ավելի ևս իրենց ձևով։ Մեր պատմագիրներին կարգադրած մեծ ավերակների և կրոնական միտումներ քարոզող գրական նսեթյունին հետո՝ երբ մարդ կարդում է այդ հասարակ զրույցները, մի փոքր հանգստանում է։ Դրանք բոլորն ունեն մի ընդհանուր հատկություն. պատմված են պարզամտությամբ, ընտանեկան կամ, ինչպես ասում է ինչ, ուսմական, այսինքն ժողովրդական լեզվով։ Մի առանձին համով ու հոտով, որ միայն Բուզանդի որոշ պատումների մեջ ենք գտնում։ Ձկա քերթողական սովորովի արվեստականությունը, ամեն ինչ գեղջկական է, լի անսեթեթեք բնականությամբ, թե մանրամասն պատմվածքը և թե, երբեմն նույնիսկ հեղուկությամբ ասված, տրամախոսությունները, որոնցով հագեցված է պատմվածքը։ Ձկա հեղինակի ձգտումը զարգարելու և գեղեցկացնելու իր գրական երկը, և նա նույնիսկ չի մոտժուլ, թե պատմելու ժամանակ գրական երկ է ստեղծում, և դրա մեջ է հենց այդ զրույցների հրապույրը։ Զրուցաբանը ոչ զվարճացնել է ուզում, ոչ էլ խրատել, սովորեցնել. այլ նա այնպես պատմում է միամտությամբ, որ ունկնդիրը հավատում է, թե ինքը կատարված եղելություն մասին է լսում, ինչպես որ իրոք այդպես է մասամբ, քանի որ այդ զրույցների հիմքը պատմական է։ Ունկնդիրը հետաքրքրվում է զրույցի գործողությամբ։ Ամեն զրույց ունի իր թեման, որ ոչ թե հեղինակի մոտժուլով է գրվում, այլ անգգալի կերպով բխում է գործողությունից։ Այդ գեղեցիկն էլ այդ է, դա է ժողովրդական պատմվածքի բնականությունը ու կենդանության բուն աղբյուրը։

Առնենք Դերենի զրույցները։ Դրանցից առաջինի մեջ հանված է միջնադարյան լուրերից մեկը. ամուլ կանանց ուխտի գնալը զավակ ունենալու համար՝ զավակը կուսակրոն դարձնելու խոստումով։ Դա եկեղեցու ձրգառումն էր— քարոզել և զարգացնել կուսակրոնություն։ Բայց բնությունն առնում է իրենը, և զրույցի մեջ ծաղրված է կուսակրոնությունը, լինի տղամարդկանց թե կանանց։ Վերածնության շունչ է զգացվում այս զրույցի մեջ այն ժամանակ հենց, երբ Հայաստանում, ինչպես կոեսենենք, զարգանում էր վանականության ու նքնավորության ոգին, բայց և մյուս կողմից լինում էր կյանքի և աշխարհայեցողության փոփոխություն։

Երկրորդ զրույցի մեջ ևս զգում ենք նույն շունչը. գա էլ ուղղված է մարմինը պահելով և ապաշխարությունը ճշնորդների գեմի Սյոտեղ փառաբանված է անզուսպ կերտվումով։ Գուսաններով և երգեցիկներով ու երգեցողներով, պարով ու կաջավով ուրախությունը, որ իրապականացրած է խիստ չափազանցումով։ Ուսմիկ զրուցաբանը համակրում է ոչ թե Դերենի եղբայրներին, որոնք գնում են իրեն եղբոր կայքը, այլ այդ տնվերջ ուրախացողին, որ առատամեծ է, բացսիրտ ու բարեսիրտ, խորություն չի դնում քաղաքացիների մեջ։ Նրա ցանկալի հյուրերն են «և՛ լավը, և՛ վատը, և՛ ծանոթն, և՛ անծանոթը, Դրա համար էլ նա, ինչքան էլ վատնում է իր ունեցածը, միշտ ուրախություն է գտնում նաև օտար տեղերում, և՛ Մոսկույում, և՛ Բաղդատում, և իր բարեսրտության համար վարձատրվելով՝ իր վատնածից

ազելին է ձեռք բերում Այս պատումն ապրում է մինչև մեր օրերն իբրև ժողովրդական զրույց, թե շքեֆ անողին քեֆ չի պակսիւ, այն տարբերությամբ, որ ուրախացողը, ըստ մեր օրերի զրույցի, իր ամենօրյա աշխատանքով է ուրախանում, իսկ Անանուն Զրուցագրի միջնագարյան ազնվական Դերենը զվարճանում է վատնելով իր հայրենական ժառանգությունը:

Դերենի երրորդ զրույցի մեջ երևում է բերված տան և կնոջ ներքին ընտանեկան հարաբերությունը. ամուսնու անհավատարմությունն առ իր կինը, և սրա հոգացությունն իր պատվի և իր գավակների համար: Գլխավոր խնդիրն է ընտանեկան սրբության պահպանումը: Քրոջ անարգանքի համար վրեժխնդիր է լինում եղբայրը՝ սպանել տալով զկնկասերն, այսինքն ուրիշ կանանց սիրող մարդուն: Մի երկու կողմից միայն, բայց ուժեղ գնադրված են և՛ ամուսինները, Հրտնուշն ու Դերենը, և՛ Հրտնուշի ու Կուլինարի եղբայրները, և՛ ինքը Կուլինարը, Դերենի սիրական այլազգուհին, որ մի վայրկյան է միայն հանդես գալիս, չմոռանալով. որ Դերենը սիրել է իրեն. թեև դերենն առին այլազգիքն, — ասում է զրուցագիրը. — և տարտն սպանած ի քողանք Հերայ, և քոյր նորա Կուլինար գնեց զմարմինն նորա և յղարկեաց ի աշխարհն Հայոց, և տարան թաղեցին ի վանքն Ճրպա, ուր նշան սուրբ խաչին էրս:

Դժվար թե պատմական լինի Գրիգոր Դերենի սպանումի ընտանեկան պատճառը. այդպիսի բան չեն ակնարկում ժամանակակից պատմագիրները: Դա եղել է մի քաղաքական սպանություն, որին զրույցի մեջ արված է ընտանեկան բնույթ: Ըստ Անանուն Արժրունու՝ Դերենիկի կինը՝ Սոփին, ինչպես տեսանք, չափազանց սիրել էր իր ամուսնուն և ողբացել նրա մահը: Բայց որ գերությունից վերադարձած իշխանները, որոնց մեջ էին և Դերենիկն ու իր հայրը, ապրել են չվարս բերելով անառակութեամբ և արբեցութեամբ, խառն անկողնօք և պղծութեամբ, այդ մասին հայտնում է Խոման (էջ 216): Անշուշտ այդ բարքերի արձագանքն է այս զրույցի նյութը:

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳ

ՍԿԻՋՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1. Հոգևոր երգի ծագումն և ընդհանուր բնույթը:¹ — Մեր գրականության, իմն գրավոր դպրության, սկզբում հայ մտքի ազգային ստեղծագործությունն ամենից ավելի բանաստեղծութան մեջ պիտի երևան գալ: Բայց այստեղ հենց՝ ամենից պակաս է երևում ինքնուրույնություն և հայկական կյանք: Հին Վիպասանությունն և Նրգե Առասպելաց չեն արժանացել բանաստեղծական, զրական-գեղարվեստական մշակության. նրանցից, իբրև պատմական աղբյուրներից, ինչպես տեսանք, օգտվել են միայն պատմագիրները:

¹ Տես՝ «Արարտա» մատյակը 1919, ՊՄ 7—8, 9, 10—11, 12. Մ. Արեղյանի «Ուրվագծեր Հայոց գրականության պատմության», «Շաքալանների մասին», «Ս. Գրքի և կանոնի ազդեցությունը շարականների վրա», «Դավանաբանության և մեկնաբանության ազդեցությունը շարականների վրա»:

եղել են և մի երկու ճարտասանական մշակութայիններ, Ավելի ևս տխուր բախտ է ունեցել հայկական հին քնարերգութայինը—գուսանների ուրախութան երգը, որի մեջ փառաբանվում էր սերն ու կյանքի զվարթ տախարհայեցութայինը, այլև նույնիսկ բառապաշարայինը, որ նույնպես կապված էր իրական կյանքի հետ: Այս երգերից և ոչ մեկը զրի տոնված անգամ չունինք մեր գրականության այս շրջանում: Աշխարհաբացութային ձգտումով բռնված հին եկեղեցական բանաստեղծը շատ չէր կարող ազդել հին հավատալիքներից ու գաղափարներից, կամ իր ռուս-բուլղարական աղբյուր ունենալ հայկական իրականութայինն իր բազմազան կողմերով, և ոչ էլ կյանքի ուրախութայինն ու վայելչութայինը: Նրան գրադեցնողը գլխավորապես Ս. Գրիգորն էր, ինչպես և հավատքի վերաբերյալ այս կամ այն խնդիրը: Այս պատճառով և այս շրջանում գրեթե միայն հոգևոր երգ ենք գտնում: Սա էլ իր նյութով, ձևով և ստվար քանակով միայն մի փայլուն ու ճիշտ արտահայտություն է մեր նախնիքների կրոնական զգացմունքների, և ամենապայծառ կերպով ցույց է տալիս այն բաժանումը, որ ըստ գաղափարախոսութային առաջ էր բերել քրիստոնեությանը հայ եկեղեցականության և աշխարհականության միջև, ի բաց առած, հարկավ, ընդդեմ աշխարհիկների մաքառման քաղաքականությանը, որ ընդհանուր էր երկուսի համար ևս: Հոգևոր երգն էլ, սակայն, վերջին հաշվով նույն մաքառման միջոցներից մեկն էր: Նա ժողովրդի մեջ զորեղնում էր քրիստոնեությանը՝ ոչ հավատացող աշխարհիկների հանդեպ:

Եկեղեցական բանաստեղծությունն ամենից առաջ օրհներգություն է, որ ընդհանուր եկեղեցու մեջ ծնված և զարգացած է քրիստոնեական աստվածաբանությանը հանդիսավորություն տալու համար: Առաջին քրիստոնյաները եկեղեցում հրեական սովորություններ աստվածուն փառաբանում էին երգերով սաղմոսներ և Ս. Գրքի մի քանի օրհներգությունները, որոնք հետագայում ևս մնում են ժամերգության մեջ: Հասարակ ժամավորն աստվածապաշտությանը մասնակից էր լինում միայն կրկնելով Ս. Գրքի երգերից բնորոշ բառեր ու խոսքեր, կամ ցնծությանը ասելով՝ «ալելուիա, ամեն», շնորհեա Տէր, Յիսուս Գրիստոս Տէր մեր, կեցո՛ Տէր, կեցո՛ և ողորմեա, Տէր ողորմեա, Քեզ Տեսանդ յանձն եղիցուք, Աստուծոյ յանձն, առաջի Գո Տէրս և այլն: Ժողովրդի այս ձևի մասնակցությունը, ըստ 10-րդ դարի հեղինակ և նշանավոր եպիսկոպոս Խոսրով Անձևացու¹, երկար ժամանակ մնացել է Հայոց եկեղեցում, հիրոնական երանգը, սակայն, ընդմիջաբաժանություն չէր կարող ստանալ միայն հին երգերով և բացազանյություններով. ուստի հորինվել են նոր երգեր, որոնք 4-րդ, հավանորեն և 5-րդ դարերում եղել են դեռ մեծ մասամբ փոքրիկ կտորներ և իբրև հավելված ասվել են սաղ-

¹ Մեկնութիւն ժամկերպութեան, Երաբեալ երանելոյն Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի և կարգադրեալն Մովսէսի զԿապան վարդապետի, Յոթմարտի, 1840, էջ 6, 7, 18 և այլն: «Ջեռայն և ժողովուրդքն առեն՝ շնչեա Տէրս: Եւ առեն ժողովուրդքն միաբան՝ ոչ թէ՛ տաւր. այլ եթէ՛ շնորհեա աւել: Եւ այս ևայն ոգարմագին պաշտամանաց և ժողովուրդքն զտոյնուածն միաբանեն առելով՝ առնաբարակ՝ Տէր ողորմեա: Եւ և երկիր պաշտանելով առնեցան, անշէն առ Պարզեւտան առեն՝ Առաջի ցա աւել: Եւ ապա առեն ժողովուրդքն՝ Տէր ողորմեա: և այլն:

մասներէից կամ Ս. Գրքի օրհնութիւններէից հետո: Այս նոր երգերն իրենց նյութն առնուած են Աստվածաշնչից, և սաղմոսների ու մարգարետեկան օրհնութիւնների քնարական ատարը որոշուած է նրանց ոգին: Դրանք հորինւում են նույնիմէ Ս. Գրքի բառերով, Այդպէս է եղել հոգևոր երգի ծագումն ու վիճակն ընդհանուր եկեղեցու մէջ այն ժամանակ, երբ լինում է հայոց գրերի գլուտը և հիմք է դրվում մեր գրականութիւնը:

Գծրութեամբ մեր հոգևոր երգերի հեղինակները մեծ մասամբ անհայտ են, մենք չգիտենք, թե մեր ինչ երգն ունից և երբ է գրված: Դրանք անտեսն են:

Սակավաթիվ ծանօթութիւններն այդ ժամին կամ 13-րդ դարից են գալիս, կամ երգերի մտգովածակների Ետրակնացիների մէջ: զբմած անգնկութիւններն են, որոնք նույնպէս շատ լինէ չեն, որովհետեւ շարժվեցի շատ ինչ անապիւր լուսինք: Այս ծանօթութիւններն էլ սակայն, ընդ բան են տալիս, որովհետեւ համար աստանգում են, միևնույն երգը մի անգ մեկին է վերագրւում, մի ուրիշ անգ՝ մի ուրիշին: Ամենգութիւն աստանգում լինելու գեղեցում էլ շատ բան չէ, որ իմանում ենք. որովհետեւ, ճիշտ ասած, այս կամ այն հայտնի անին անգում հեռ կազմած են մի շարք երգեր, որոնք բարբ ան հարազ մի կեղեցակի գրած լինել: Օրինակ՝ Սահակ Գարթնին վերագրւում են Ավագ շարժի ակնանները, ինչ Մեհարդիս՝ Եկաշխարհաբան կարգը, բայց այդ կանաններէից այ մեկը և ոչ միայն չեն կարող ամբողջապէս մի ժողովուրդ ասած լինել: Երանք երգերի մէջ մեծ աստ-բարութիւն կո է մեկ, և՛ բանաստեղծական ըմբանման, բայց ուր զլիապիւրն հայերի մէջ անգամ կանանները պատկանում են եկեղեցական բանաստեղծութիւնը զարգացման ամեն ինչ ընդունել: Ենթանակ՝ այդ կանաններ թողած թիվ երգեր հետզհետեւ են հորինուած և հետագայում, երբ կազմված են կանանները, վերագրված են մի անգին, Սահակին կամ Մեհարդին: Անշուշտ ամենգութիւններն, ինչպէս էլ ուր ժամանակին լինին, կարող են նաև որոշ պատմական հիմք ունենայ, և կարելի է, հարկով, մասամբ պարզել, թե ինչ է այդ ամենգութիւններ ինչպէս և որը կարելի է համանակին կամ ընդունելի համարել, կամ մերթիւ ուրիշ ինչպիսի մասամբ որոշել մեր ինչ հոգևոր երգերի հեղինակները, բայց այդ գեղեցակի և այժմ հայ մեկ չէ անել:

Մի անգամ որ մեր հոգևոր երգերի հեղինակներն անհայտ են կամ հավասարի հայտնի չեն, ասել չի ուղիւ, որ այժմ այդպիսի վիճակի մէջ անհնար է մեր այդ բանաստեղծութիւնը զարգացման ընթացքը ճշտութեամբ ըմբանել և ժամանակաբանական կարգով բացատրել: այլ այդ կարելի է միայն ընդհանուր և էական գծերով որոշել: Մեր բանաստեղծութիւնը այս անգամին ինքնարուել չի հղել մեր մեջ. այլ ինչպէս քրիստոնեութիւնը:

1 Ետրակն հոգևոր երգը, ինքնածին, 1861, էջ 11—7,

Հեղինակների, ինչպէս և աստեղծի երգերի մութ կարծիքի քաղաքութիւն ժամին նաև՝ Գարթնի Ավագութիւնի Եկաշխարհաբան շարժանքը, Վահագնի, 1816:

2 Նախքան այդ՝ հարկով մի հրատարակել մի շարժանքը, որ պիտանի լինի գիտական գործածութիւն համար (մինչև այժմ եղածները եկեղեցու, մամուրութիւն համար են միայն աստեղծութիւն), որի մէջ ամբողջին քաղաք երգերն այլ ընթերցմաներով և իրենց մէջ ունեցած ծանօթութիւններով: Այս անգամինով մի կարծիք մտգոված և հետևաբար, չէին և նոր պարզահան կամ անգամներ շարժանքներ, լուսն ընթացիկ Սահակ վարդ. Ամատանի, Վարդապետ, 1911:

դքսից է եկել, նույնպես և նրա բանաստեղծութունը, որ ազդվելով հրեական քնարերգութունից՝ միշտ հետևել է գլխավորապես հունաց օրհներգության զարգացմանը, եվ այս հասկանալի է. Ծ-րդ և նույնիսկ Ծ-րդ դարերում միևնույն վաճառքում երբեմն հույն և հայ միասին ապրում էին, և ամեն մեկն իրենց լեզուններով փառաբանում աստուծուն, ինչպես վանապետ Ս. Թևոդոսի (+ 519 թ.) Բեթղեհեմում հիմնված վանքում¹։ Բնականորեն այսպիսի դեպքում այն նոր երգերը, որ հույները երգում էին, հայերեն ևս պիտի երգեին հայերեն թարգմանելով, կամ թե իրենք ևս նոր երգեր պիտի հորինեին նմանելով հունական երգերին, Հետագայում ևս հայերի և հույների հարաբերությունը բոլորովին չի խզվում, շնայելով քաղկեդոնական վեհերին։

Թե որքան է ազդել հունաց օրհներգութունը մեր եկեղեցական բանաստեղծության վրա, ցավոք, դեռ պարզ հայտնի չէ. որովհետև այս ուղղությամբ ուսումնասիրություններ դեռ չեն եղած։ Շարահայանների բազմաթիվությունը հունաց օրհներգության հետ՝ անշուշտ շատ բան կպարզեր, Հունաց հոգևոր քնարերգության և երաժշտության ազդեցությանը վկայում են մեր եկեղեցական երգ ու երաժշտությունը ցույց տվող բառերը՝ սաղմոս, մեսեդի, ստողոգի, մեդեդի, կանոն, տաղ և այլն։ Ինչպես հետո կտեսնենք, կանոնների շարքն ևս հետևում է հունականին։

2. Հոգևոր երգի օկիզմ և Որ երգերի ազատ մատեր եկեղեցու ժամերգություն մեք։—Ինչքան էլ Շարահայանների ու մյուս հիշատակությունները չեն ստուգված, բայց և այնպես դրանք զուրկ չպիտի համարվին պատմական հիմունքից, Այդ վկայությունները մեր հոգևոր երգի սկիզբը գնում են Ծ-րդ դարում, ընտել սուրբն Իսահակ և սուրբն Մեսրոպ ասացին զուրկ եղանակաւոր ձայնս և զերկու ձայն ստեղծիս, Ապա սուրբն Իսահակ՝ զՂազարուն և զԿարգն Աւագ շարաթուն, և սուրբն Մեսրոպ՝ զկարգն Ապաշխարութեան։ Ըստինքյան անհավանական չէ, որ այդ դարում,—երբ եկեղեցու պաշտամունքի լեզուն հայանում էր և Ս. Գրքի ստղմունքներն ու օրհնությունները հայերեն չին թարգմանում ժամերգության ժամանակ երգելու համար, և երբ մի քանի զրական տեսակների հիմն էին գնում,—թարգմանեին նաև ընդհանուր եկեղեցու մեջ ընդունված նոր հոգևոր երգերը և մինչև իսկ ինքնուրույն կամ նմանողական նոր երգեր ևս Կորինթին։ Բացի նրանցից՝ որոշ երգերի հեղիակ են՝ Մովսես Քերթոզ, Ստեփաննոս Սիւնեցի առաջինն՝ որ յաշակեբոսաց տնտի սրբոց թարգմանչաց, [երգեաց] զեօթն ձայնս Աւագ օրհնութեանց։ Թահան Մանդակունին՝ զԱնուկիզրն բանն Աստուած՝ և զՀամբարձին, զոր ոմանք Օձնեցոյն տան։ Այս նշանավոր կոթողիկոս և հեղինակ Հովհան Օձնեցու (717—728 թ.) վկայությամբ՝ Սահակ Գարթն է հեղինակ գիշերային ժամի չորս քարոզների,

¹ K. Krumbacher, Geschichte der Byzantinischen Literatur, 1897, էջ 663.

² Բազմանու Իմաստասիր Օձնեցու մասնագրութիւն, Վնեմբի, 1883, էջ 29, 31 և այլն. նաև Վնեմբի, 1884 թ. լուսիններն թարգմանությամբ Կանգեր, Նրկեր ևն՝ Առնաբանութիւն.— Կանոնք.— Հնդդէմ Գուշկեանց,—Հնդդէմ երեսթաղանաց. Յազգա կարգոց եկեղեցւոյ.— Վառն մեծի աւար միաշարաթիւն.— Սահա գիշերային ժամու, և ուրիշ—

Հովհան Մանգուկունին է հորինել նշանավոր Զարթուցեալքս քարոզը և նրան հաջորդող աղօթքը: Եթե իրոք նրանք մասնակից են եղել մեր մասնակարգութեան կազմութեանը, հետեւեալ կարելի չէ անտես անել հետագա դարերի վկայութեանը, որով Սահակն ու Մեսրոպը և Հովհան Մանգուկունին գրվում են իբրև առաջին հոգևոր երգիչներ: Իհարկե, այժմ, ինչպես վերևում նկատվեց, չենք կարող հաստատ ասել, թե նրանք որ երգերն են հորինել: Բայց կարելի է այն գոնե ընդունել, որ մեր հոգևոր գրականութեան հետ սկիզբն է առել նաև մեր հոգևոր երգը:

Մեր հոգևոր երգի սկիզբը Ճւրդ դարում գնելով հանդերձ՝ անհավանական է կարծել, թե այդ դարում մեծ օրհներգութուններ գրված լինին: հուշներին մեջ անգամ այդպիսի երգերը թաղվում են առանձնապես Ճւրդ և 7-րդ դարերում: Բայց կարող ենք ասել, որ 6-րդ դարի վերջերում մեր եկեղեցական քնարերգութեանը պիտի բավական զորեղացան լինել, քանի որ 7-րդ դարի առաջին քառորդում Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» երգի մեջ մեր հոգևոր երգը բավական մեծ կառարելութեան է հասած իր ձևով: ուստի պետք է ընդունել, որ մեր եկեղեցական բանաստեղծութեան ծաղկման մի նախապատրաստական շրջան եղած պիտի լինել և տերուական տոների համար արդեն երգեր հորինված պիտի լինեին նախ քան Հռիփսիմյանց «Անձինքի» նման մի մեծ քերթվածի երևան գալը: Այս քերթվածն էլ, հարկավ, մենակ չպիտի լինել իր տեսակի մեջ: Բայց ոչ բոլոր այդպիսի օրհներգութունները հասել են մեզ:

Մի ուրիշ, թեպետ դժբալ, հետագա դարերի, վկայութեանից էլ երևում է, որ այդ երգերն առանձնապես բազմացած են լինում 7-րդ դարում, մինչ որ իբր անհրաժեշտութեան է ասել՝ զայն նրանց խճաղգրութեամբ զարդալու: Ներկա Գանձակեցին գրում է, թե ներսես Շիրակի ժամանակ այնքան բազմացել էին երգը շարականաց յեկեղեցին Հայոց, մինչ ոչ գիտել միայն դառնալ երգեցող՝ գմիւսոյաւ: Եվ նա պատմում է, թե մի անգամ այդ կաթողիկոսը Վարդավաթի ասին այնպիսի ժողովութեամբ բազմութեամբ Բաղվանում է լինում, և բառացին շարական Վարդավաթի հարցին, և միևս դասն ոչ կարաց փոխել զնա, և փոխեցին բազում շարական, և ոչ զայն ևս գիտէին: Ապա հայրապետն ներսէս հաւանութեամբ ամենայն ժողովոյն ընտրեցին զգիւտեմին և զգառակարն, զի յամենայն յեկեղեցի յամենայն ուսուր մի պաշտօն լիցի ըստ աւուրն խորհրդոյ: և ընտրեցին արս խոսասուհո, զի շրջեցին ընդ ամենայն այնպիսի Հայոց և հնոյն կարգաւարութիւնս հաստատեցեն, որ է մինչև ցայսօր: նուայն պատմում է համառոտ և Վարդան Արեւելցին, ափսոցնելով, թե ընտրութեանը լինում է քի ձեռն արքայն Բարսղի՝ ժականուն ձոն կոչեցելոյ, որ էր աստճարգ ուրքը ուխտին, որ Վարդանից կոչի ի գաւառին Անայ... վասն որոյ ձանդառել շարականն, որ այժմ պաշտի յեկեղեցիս Հայոցս: Վարդանի ու Ներսէսի այս պատմութեանը մի վկայութեան է միայն նրա համար, որ մեր հոգևոր բանաստեղծութեան ծաղկելուն հաջորդել է առանձնապես այն, որ դարեւ շարական մեր եկեղեցիներում միտասեակ ժամերգութեան և կոնսեպտոյ զարդալի երգեր չեն եղել, և թե փոքր են եղել շարականների մեջ ընտրութեան անելու ու միտասեակութեան վերածելու ժամերգութեան այդ նկատմամբ: Որ Վարդանի ու Ներսէսի ժամայնակ այդ միտասեակութեան

1 Գառմաթիւն Հայոց, արբերու Ներսէսի վարդապետի Գանձակեցւոյ, Թեֆլիս, 1900, էջ 69:

2 Մեծին Վարդանայ Գառմաթիւն արեգեակուն, Մոսկվա, 1861, էջ 98:

արդէն հաստատման է եղել, այդ պարզ է. բայց որ ճշմանը մեր շարժանքը՝ 7-րդ դարում կազմման լինի, այդ կարելի չէ բնականել¹:

Նոր հոգևոր երգերի մուտքը ժամերգութեան մեջ՝ հետագա դարերում էլ զեռ ազատ է մնացել և եկեղեցիներում միևնույն երգերը չեն երգել: Այս ազատութեան մի մեծ վկայութեան ունինք Հովհան Օմեկեցու (կաթողիկոս 718—728), Նա հազում է ոչ թե նոր երգերի միատեսակութեան համար, այլ Ս. Գրքի սողմունքների ու օրհնութեանների:

Նա իր նշանավոր Աստուածաբանութեան երկերը համարել մեջ, որի վերնագրերն է՝ «Աստուածաբանի» զնոցան, որք այսպիսով է ոչ միով օրհնակա հասարակ զհանուն և զհրահան և զպարգևով զպատմական, գրում է. «Փառելի տեսնենք ի յարգության և ի ծանոթ իրաւանքութեան ըստման», ոչ միայն ի մարգարէական, այլ առաւել յաւանք մանկան և յառաջնորդս եկեղեցեաց: Որք միև ինչու ի ձեռն միայն քարոզի ի մի ելաք ճշմարտութեան հանապարհ, և արդ ըստմանեք և ըստմանաւից եղաք, յանշարժաբար և զանազան և այլանկան ասելոյ՝ թէ զմարտ և եթէ զփառաբանութեանն որ առ Աստուած, Մինչ զըթէ զհայն կրել զՔրիստոս բաւ հայ պատմութեանն՝ պատեղազմել մեզ այլ բնոյ կարոր, և այլ բնոյ բնկերի, քաղաք բնոյ քաղաքի և օրհնոյ բնոյ օրհնոյ: Երկարական զբառանքն և զանառանքն տարեառաբանութեան խոսակցեց և հայտակցեց ի բերաց լինելով, և առ խաղաղութեանն Աստուած մարգարէութիւնն ինչպիսի՝ խոսողութեան և խոսվութեան: Եւ իբրեւ այլապէս՝ առնիմք և բերեմք զմիմեանս, լինելով առ նմա խոսել և այլք այլք զսուս (էլ մ և հան), Յովն, այս Աստուածաբանութեան Թ. զիւրի վերջը և ԹԱ. ԹԲ. ԹԴ. գլխաւն երեւն և ԹԴ. զիւրի սկիզբը պահանջում են. ըստ եղանակ պարզ երևում է, թե ինչ խաղաղութեանն Աստուած է ինչպիսիս եղել նրա օրով նորոց եկեղեցիներում առաջնապաշտութեան ժամանակ: Ուրիշ տեղ էլ, Պանաների մեջ (էլ 28), գրում է, թե «Արժան է գառաւառներն (առաքյալն աղթքը) ամենեցուն նման միմեանց և զհայն և բաւ նմին կարգի կատարել. զի աշուէն վայել է քրիստոսոսերաց, որ նորին լիցաւոյ և ազգի են, միաբանութեամբ փառաւորել զԱստուած և յարինել զմարտ ազգիս... Եւ Հովհան իմաստասեր կաթողիկոս ըստ լուսնի այն է, որ մի քանի եկեղեցական ծեսերի ու ժամերգութեան մեջ միասնապաշտութեան հաստատվել: Ինչպես երևում է, նրա Պանաները հասնում են իրենց նպատակին, ինչ որ ժամերգութեանն են վերաբերում, արժեանքն այնտեղ զբնութեան առաջնաները, օրհնութեանները, կցութեանները, քաղաքները, աղթքներն ու մարգարէները գտնում ենք Պատրիկ Աննեան: վերևում հիշված ժամերգութեան միևնույն ժամը, ըստ իր և նույն կարգով. փոփոխութեանը եղել է միայն բնագործակցով:

Օմեկեցին, սակայն, որ այնքան հազում է ժամերգութեան միակերպութեան համար, ոչ իր Աստուածաբանութեան, ոչ Պանաների և «Ազգայն կարգաց եկեղեցւոյ զբնութեան մեջ չի խոսում նոր երգերի կարգավորութեան և միակերպութեան մասին, այլ միայն Ս. Գրքից առանձնեք և ընդհանուր եկեղեցւոց բնագործակցների, ինչպես և քաղաքների էլն համար: Որ նա նոր երգերի մասին չի խոսում, գրանից կարելի չէ երգականները, ինչպես վարդիլ են, թե իբր նրա օրով չեն եղել հոգևոր երգեր կամ առաքյալների նմանապատիւների և իբր նրան այլապէս ծանոթ չեն եղել: Նա այդ երգերի մասին չի խոսում, օրովհետեւ զբանք երգեցութեան թիւնն ազատ է եղել և նա միայն չի ունեցել պարզ կարգավորել, այլ աղթքները, քաղաքներն ու կնի հոգևոր երգերը: Հենց նրա և օրհնների վկայութեամբ զիտենք, որ աղթարի երգեր եղել են 8-րդ դարից ի վեր:

¹ Հովհաննիսն է կարծել, որ Պանաներն ու Պարգաներ, որոնց երկի-եւ երկուսն առաջին առաջին ման մեկ է, մի պատմական շփոթութեան են բովանդակում. դեպքը երեի 18-րդ դարից, ներքին Շարաւաղն և իր ժամանակակից, բանականներին և բանականներին Բարեկ զարգացմանը (+1163 թ.) փոխվում է 7-րդ դարը Ներսէս Շնորհի ժամանակը:

² N. Ter-Mikaelian, Das Armenische Hymnarium, Leipzig 1905, էջ 61 և հա.

3. Կցուրդներ:—Հովհան (Յովհան) Օձնեցի Ստենաբոնության մեջ (էջ 12 և հտ.) խոսում է այն մասին, թե թեպետ և մենք հայերս Քրիստոսի Մենգեան՝ և Աստվածահայտնության տոները միասին միևնույն օրն ենք կատարում, բայց ոմանք աստվածպաշտության ժամանակ միայն Մենդյան տոնն են սիրում կատարել, իսկ յայտնութեան խորհրդոյ՝ և ոչ միով իւրք կամին հառա ի մէջ բերել: Իմաստասեր կաթողիկոսն այդպէս վարվողների դեմ ի միջի այլոց հետևյալ առարկությունն է բերում. եթե այդպէս լիներ, առում է նա, այն ժամանակ շէր աղաքաւ և կցուրդս գեղեցկանուպա զմկրտութեանն բանից յօրինեցին երանելիքն մեր վարդապետք: Օձնեցին չի հայտնում, թե ով են այդ երանելի վարդապետները. նրանք, անշուշտ, ոչ ժամանակակիցներ են եղել և ոչ մոտիկ ժամանակներում ապրածներ, քանի որ նրանց հեղինակութիւնը պարտավոր էին ընդունել նաև Օձնեցու պես չմտածողները, որոնք չէին ուզում մկրտության տոնի հիշատակութիւնն անել և ջրօրհնեք կատարել. հակառակ նախնական վաղնջուց սովորութեան. Այլ դոր ասեմա, այս նախնական սովորութիւն ի վաղնջուց հետէ նախահաւալ և միայն առ մեզ հասեալ... Օրհնէին զՍուրն, ձէթ արկանելով ի նա:

Այդ երանելի վարդապետներն, որ զմկրտութեանն բանից, որ են Ավետարանի մեջ մկրտության վերաբերյալ խոսքերը,—գեղեցկանվազ կցուրդներ էին հորինած, հարկով, Ավետարանի խոսքերի հարասութեամբ, ինչպէս են բոլոր հին հոգևոր երգերը,—անշուշտ, միայն այդ արած չէին լինել. նրանք կցուրդներ հորինած պիտի լինեին նաև Մենդյան և մյուս տեղուական տոների համար: Թեոդորոս Քաթենավորի, իրեն Հովհան Իմաստասերի ուսուցչի, ճառերից՝ իմանում ենք, որ երգեր եղել են և Աստվածածնի վրա: Նա Քրիստոսի Մենդյան օրն Աստվածածնի զովստան անելով ասում է. «Զմարիամ կոյս Աստուածածին համարուրապատկեալ հաւատով արդ Նրբօրդութեանն, ընդհանրական տառքիալէն եկեղեցիք Քրիստոսի, փառաբարդական երգարանալիսի հազեղուարձ Յաւագարեմո՛ւ՝ վերագոյնեցուք ի սերկեան աւուրս դասալմբութեամբ. վասն զի յայսմ աւուր ընկալան մանարդի աւետիքն բոլորաբնակ տիեզերք: Քանզի Հօր հաւատարմ բանն Աստուած... ձեռա այսօր ի Բէթղէմն: Եթէ չլինեին Աստվածածնի վրա երգեր, նա իր ունկնդիրներին չէր հրավիրել Վերաբանութեամբ, անուագալանօք: Քառավորելու նրան Նվ ինքն իսկ Քերթաղն իր Գովհասի մեջ շարականի նման մի ներբող է հորինում Քրիստոսի ծննդյան վրա.

Այսօր ցնծան բերկրական կցդիւմ

Եւ գեղազտեակ պարախնդութեամբ

Երկնայինք եւ երկրայինք...

Պալատեամր Որդւոյն Աստուծոյ,

... Այսօր ամպք աստուածայինք

Եւ ցօղք հոգէգուարճք,

Վերաբերեալ բուսովք

Ստորացողին ի մարդիկ

Պալատեամր Որդւոյն Աստուծոյ, Նվ այլն:

¹ Տգոված է Հովհան Օձնեցու Մտանադրութեան հատւմ, Վնեմեի, 1823.

Մենք ճառերի հարաքերությանը շարականների հետ՝ հետո կտեսնենք։ Այսպես թեոդորոսի այս երգաբանության առաջին տան հետ բաղդատելու համար՝ դնենք միայն Աստվածածնի Մանդյան կանոնի մի շարականի առաջին տունը։

Այսօր ցնծան երկնայինքն
Եւ պար տուաւ ի բարձունս
Նրբեն զերզս եղևորս
Յաւուր ծննդեան Սրբուհւոյն։

Ինչ որ Հ. Օձնեցու «Աստնաբանության» և թեոդորոսի «Գովեստի» մեջ կցուրդ է կոչվում, նույնը շարականի մեջ, ինչպես վերևի վկայություններից կարելի է տեսնել, ասվում է եղևոր երգ, որ մեր մատենապարտիքյան մեջ հաճախ հիշվում է սաղմոսների և օրհնությունների հետ։ «Էղևոր երգ» կոչվում, հարկավ, ընդհանուր նշանակությամբ ունի, թե՛ հին, Ս. Գրքի երգերին կհարմարվի և թե՛ նոր եկեղեցական երգերին. իսկ «Էղևոր» կոչվել են տուածնապետ նոր հոգևոր երգերը, նույնիսկ Եւրդ դասում։

Թե կցուրդ բառը երգ է նշանակում և հնումն այդպես, և ոչ շարական բառով, կոչվել են նոր եկեղեցական, ոչ Ս. Գրքի, երգերը, այլ երևում է չափանկարից, Բացի վերնվում գրածներից կարելի է և ուրիշ վկայություններ ևս բերել։ Լավան Իմաստասերն, արևնակ, Նանանների մեջ, էջ 27. Ժե. գրում է. «Ամբան է շարաթն որ երկուսն մարտիրոսաց պայտեյ... և զհրազացն ուրհնութիւն տակ»։ Լայն զուարթ աւերբա։ Իսկ Աստնաբանության մեջ (էջ 28) Ժն. գլխի մեջ, որի վերնագրերն է՝ «Թէ զինչ խորհուրդ և յերեկոյնի պաշտամանն գտանիցի ի սաղմոսս և ի կցուրդս և յաղաթս և ի նոցին կարգադրութիւնս», ավելի մտքամտան խոսելով գրում է. «Թե սաղմոսներից հետո (որեք են)՝ Ծննդաբանութիւնն. տես էջ 20. Ինչ)՝ «զհրազացն նուպ են զկցուրդս, որ է նույն շարա զուարթս երգը»։ Ուրեմն այս նոր եկեղեցական հանկավոր երգը, որ Աստնաբանչի երգ չէ, մի առջ օրհնություն է կոչվում, մի ուրիշ տեղ՝ կցուրդ։ Ծանոթ է. «Աստնաբան սաղմոսի մասին, Օձնեցին հաճախ հիշեցնում է՝ «զերեցարեանն երգել զփառաբանութիւն իսկաներս որոյ Աստնածածնին կցրդդիւն»։ «Զսուրբ Աստնածն՝ հանգերս որոյ Աստնածածնին կցրդդիւն ի վերջն տնցուցանել» (էջ 20 և հա.)։ Իսկ այդ կցուրդն է «Փառաւորեալ և օրհնեալ միշտ Ս. Գուրգը»։

«Կցուրդ» բառի մի ուրիշ ձևն է «կցորդ»։ Լայկապետն Բաղդաբի մեջ այս ձևով վկայություն է բերած Ոսկեբերանից՝ «Յօրինեալ բարբառովք՝ ազգի ազգի կցորդիւք (յուսն. տաղիւք կամ մեղեդիօք)»։ Նույնն ունի և Ղ. Փարպեցին։ Սա Սահակի ձեռով Աստվածայնչի թարգմանության և դպրոցների բացման պատմությունն անելուց հետո՝ գրում է, «Թե մարդկանց բաղմությունը գիտում էին եկեղեցի և բնութանային խնդայիցք... ի տունս, միտամեծք և սղայք սաղմոսելով և կցորդս տակելով ընդ ամենայն տեղիս»։ Գարեկի չէ Փարպեցու «Կցորդս տակելը հառկանալ «Կցորդ սաղմոս» տակելու համար. քանի որ սաղմոսել բառի հետ է գրված. իսկ կցորդ սաղմոս տակելն ևս սաղմոսել է. Դա նոր երգերի համար է գործածված։ Հետևաբար առաջին թարգմանիչները հեծց՝ հարկովի հծ մար հագևոր երգեր։ Դա-

1 Լաւորայ Փարպեցու Գաղափարին Հայոց, Թիֆլիս 1907, էջ 26.

դար Փարպեցիին (էջ 32) գրում է Սահակի համար, թե նա այոյժ առլցեալ անցուցանէր վարժիւք զրազում գիտնովքն Յունաց, եղեալ կառարելապէս հմուտ երգողական տառիցն և հոնտորակտն յարգասաց յայտնաբանութեան, ևս առաւել տեղեկացեալ փիլիսոփայական արուեստիցն ցուցանիւրաւ։ Որ Սահակը կատարելապէս հմուտ է եղել «երգողական տառիցն», կնշանակի՝ իրական հիմք ունի Շարակնացի հաղորդումը, թե «նախ սուրբն Սահակ և սուրբն Մեսրոպ աստցիին գութն եղանակաւոր ձայնն», հաժանորեն և այն, որ նշանք հեղինակ են եղել կցութիւնների։

Նոր երգերն այսպէս կցութիւն կապող կոչվել են այն պարզ պատճառով, որ դրանք, ինչպէս վերեւում հիշատակվեց, սկզբում եղել են փոքրիկ երգեր և իբրև հավելված ասվել կոչվել են Ս. Գրքի սաղմոսներից կամ օրհնութիւններից հետո։ Սկզբնական շրջանում և հետո էլ երկար դարեր ժամերգութիւն մեջ ինդոցն եղել է Ս. Գրքի սաղմոսն ու օրհնութիւնները, մինչդեռ կցութիւններն անկախ բնավորութիւնով երգեր չեն եղել, այլ Ս. Գրքի երգերի մի լոկ հարասութիւն, կամ հարասութիւն օրվա տոնի խորհրդի հիշատակութիւն։ Այս հարասական երգերի մասին, որոնք ունին հնութիւնն զորոյմ, հետո առանձին կետսենք։ Այստեղ հարկավոր է նկատել, որ կցութիւն, հետագայում կցորդ ձեռով, կոչվել են նաև սաղմոսներից կազմված հատվածները, ոչ ամբողջական սաղմոսները, այլ սաղմոսներից առած որոշ թվով տներ, կամ, ինչպէս Բաղդրքում բացատրված է՝ «տուն մի սաղմոսի ի խորհուրդ աւուրն», որում կցի և սկզբն չորին զկնիւն։ Բայց այս դեպքում կցութիւնը բաժն աշխարհ է գործածվում, որ սաղմոսի կցութիւն է հասկացվում։ Այսպէս կոչվել են այդ սաղմոսները, որովհետև դրանք էլ մի անասն Նոր կազմված երգեր են եղել, սաղմոսից աներ միայն, երբեմն տան կեսն առած, և աները հետ ու առաջ շուտ տված, և դորձալ իբրև հավելված ասվել են ուրիշ երգերից հետո։

Այս կցութիւն սաղմոսների և մյուս կցութիւնների, աշխիւքն Նոր հոգևոր երգերի տարբերութիւնն սկզբնապէս մեծ չէ եղել։ Երկուսն էլ սկզբնապէս նույնն են, ուստի նախ անունով և կոչվել են։ Կցութիւն սաղմոսները Նոր հոգևոր երգերի առաջին սաղմոսն են միայն։ Այն ժամանակ, երբ եկեղեցում Ս. Գրքի սաղմոսներն ու օրհնութիւններն էին միայն երգում և ոչ Նոր երգեր, Նոր երգերի պահանջին բավականութիւն է արվել միայն կցութիւն սաղմոսներով. աղթորդ երկրպագութիւնով վերաբերելով Ս. Գրքի բնագրին՝ իրենից ոչ մի բան չավելացնելով սաղմոսի բնագրի մեջ, բավականացել է միայն նրանով, որ տների մեջ ընտրութիւն է արել և առել այնպիսի տներ և նույնիսկ առն այնպիսի հատվածներ, որոնց բովանդակութիւնը համար է համարել օրվա խորհրդին և տոնի բնավորութիւնը։

Կցութիւն սաղմոսների մի երկրորդ, ավելի բարձր աստիճանն են միայն այն կցութիւնները, որոնք հորինված են գրեթե ամբողջապէս Ս. Գրքի այն հոգևոր երգերի բառերով, որոնց ետևից կից երգվում են, բայց ոչ անփոփոխ պահելով Ս. Գրքի երգի բնագիրը, այլ Նորից խմբագրելով այն։

1-Այսպէս՝ Հովհանն Օճեցիին, էջ 18՝ «սաղմոս կցութիւն առելով»։ Էջ 121՝ «սաղմոսներ կցութիւն»։—էջ 125՝ «պատգմոս կցութիւն»։ Տէր Գրեցիւն։ Էջ 28՝ «զկցութիւնն զոր առեալ է ի սաղմոսաբնէ կնի Տանգրայցի մեջ Նորի»։ Հովհանն էլ կցութիւն սաղմոս. առն էջ 311, 305, 316, 326, 416 և ինչ

Օրինակ՝ հետևյալը.

1. Ինչ օգնութիւն ի Տեառնէ Աստուծոյ Իսրայէլէն եկեացէ:

2. Եւ որ զսոսն զԻսրայէլ շնորհ իւրով.

Ինչ օգնութիւն ի Տեառնէ Աստուծոյ Իսրայէլէն եկեացէ:

3. Զի նա է տէր տերանց եւ Աստուած յաւիտենից,

Ինչ օգնութիւն ի Տեառնէ Աստուծոյ Իսրայէլէն եկեացէ:

Աղայեալութիւն կարգի այլ շարականք, որ առկա է երկնայան՝ շնորհքով զայն ի յերկնս, առաքի եկեացէ ինչ օգնութիւն: Օգնութիւն ինչ ի Տեառնէ եկեացէ՝ եւս առգամայից հետո, զարգացան նախ առգամի հարստութիւնն էւ թայց այս երգը մեծակ չէ. մեր շարականքի մէջ շատ շատերն աղայի ի հարստութեամբ են հարկնովմ:

Սրանցից զարծյալ մի աստիճան միայն հեռանում են այն երգերը, որոնց հեղինակները մի փոքր ազատ են շարժվում: Նրանք պահելով Ս. Գրքի օրհնութիւնն կամ սաղմոսի մի տող կամ մի խոսք իբրեւ կրկնակ՝ ֆուգան իրենցից են հորինում, միայն տեղ տեղ զարծյալ հարստութիւնն անելով Ս. Գրքի այն երգին. որի կցուրդն է նոր երգը: Եվ վերջապես՝ կցուրդ սաղմոսների հակառակ ծայրում, աստիճանաբար հեռանալով նրանցից, կանգնած են այն երգերը, որոնք Ս. Գրքի հոգեւոր երգից անկախ հորինվածք ունին, թեպետ զարծյալ միջոց Ս. Գրքի ասացվածքներով ու պատկերներով մտածված, Բայց այս տեսակի շարականքներն արդեն հորինված են ոչ իբրեւ Ս. Գրքի երգի կցուրդ, այլ իբրեւ բոլորովին անկախ առնական երգեր, ինչպես է, օրինակ, Հովսեփմիայնից «Անձիւնք», որի հեղինակը երգի մեջ հենց հրավիրում է. «Տօնեցողութեամբ ստուգութեամբ ի հնձանս նոցունց... Բնծութեամբ տօնեցողութեամբ զյիշատակս նոցունց»:

Թվում է, թե աղայի մեծ առնական երգերը կոչվել են կ-ց-ւ-ր-դ, որ է՝ սաղմոս, հնչունական նմանութեան պատճառով, չգտնվել է կցուրդ բառի հետ և գործածվել նրա տեղ՝ «կ-ց-ւ-ր-դ» բառը Բազմաբան բացատրված է նախ՝ իբրեւ «հանգստեան բառ», համարելով, որ «կ-ց-ւ-ր-դ» առնականութիւնն: Այդ հանի գործածված է հանաքանկան ինչ թարգմանութիւնների մէջ, հանաքանի պատկերներն բառի փոխանակապէս՝ «երգն ի կցուրդ», «այնչն»՝ «հանգստեան» բառն է: Այդպէս, ի միջի այլոց, 18-րդ դարում, Սարգիս վարդապետի, Ներսէս Երեւոյեւ զատկցի, զգովածներում՝ «տօնախմբութեամբ և հանգստեամբ կացողից», նախնական և Գրքից Անտիպոքիցու Թայմա-լուրցում՝ «երգեաց կացուրդ» Մնական Քրիստոսի ցաղցրամայն եղանակաւ. «երգեաց Յէրուսական տօն կացուրդ» հազարն էլ: Այլն աղայաբանների ու զանաքանների մէջ՝ «կ-ց-ւ-ր-դ» Յովհաննէս. Կարապետ, «կ-ց-ւ-ր-դ» արդոց ցաղցրամայն, «կացուրդ» Ղազարու յարու-թեան, Էլն:

4. Կառնն, կարգ: Մարտկամնք: — Ինչպէս տեսանք, մինչև 8-րդ դարը, այլն հետադարձում դեռ երկար ժամանակ, նոր երգերի մուտքն եկեղեցու մեջ՝ ազատ է եղել: Այս աղատութիւնն իր կողմից մեծ շարժառիթ է եղել նորանոր կցուրդներ հորինելուն. որովհետև հոգեւոր երգը հորինվում էր մի գործնական նպատակի համար, այն է՝ երգիչը կարող էր ինքն եկեղեցում երգել իր հորինած երգը, այլն հույս ունենալ, որ իր երգն ընդունելութիւն կգտնի եկեղեցուց: Բայց ինչպէս էլ երգերը բազմանային, մինչև 8-րդ դարը հույներ, ինչպէս և հայերի մեջ, ոչ բոլոր տոներն ունեին իրենց հատուկ երգերը և ոչ Ս. Գրքի երգերի ամեն մեկից հետո անպատ-

Հաստատու է նոր երգեր ասելին միշտ: Այս դարից սկսած ժամերգության մեջ մի մեծ փոփոխութիւն է մտնում. դա Վանոններին գլուխն է, որ իր կողմից նպաստում է հոգեւոր երգերի բազմաւառում: Աշխատում են, որ ասմեն տուն ունենա իր առանձին նոր երգը, որ պիտի երգվեր տոնի օրը, այն էլ ոչ թե մի երգ, այլ մի շարք երգեր. որով և առաջանում է ամենօրյա ժամերգության մեջ նոր երգերի շարքը, կարգը, կանոնը:

Հունաց եկեղեցական բանաստեղծութան մեջ կանոններին հնարողը համարվում է Կրեոնի արքայիսկուպոս Անդրեաս (մոտ. 650—720 թ.), իսկ զարգացումն եղել է 8-րդ դարում Հովհաննես Դաւթանկացու ձեռքով: Երանելի կազմվում են 8 կամ 9 տարբեր երգերից. որոնցից յուրաքանչյուրն իր առանձին կազմութիւնն ունի և բաղկացած է եղել սկզբնապես ավելի, հետագայում մեծ մասամբ 3 կամ 4 տնից: Երգերի իննյակ թիվը համապատասխան է հայտնապես Հին Կտակարանի 9 երգերին, որ քրիստոնյաները հնազույն ժամանակներից ի վեր երգում էին սովորաբար: Կանոնների այս մեքենայական շնչը գտնում ենք նաև մեր Շարականցի մեջ: Ամեն կանոն ունի մի շարք երգեր իրենց ուրույն կազմութեամբ:

Դրանք կոչվում են՝

1. Օրհնութիւն, որ սովոր է գիշերային ժամերգությանը Մովսէս ժողովրդի Օրհնեցուց զՏէր, զի փառք է փառաւորեալն օրհնութեանից հետո իբրեւ կցուրդ:

2. Հաբը, որ սովոր է իբրեւ կցուրդ Երեց Մանկանց Օրհնեալն, Տէր Աստուած հաբն մերոցն օրհնութեան:

3. Գարեջ կամ Գարեաւաւն, որ նախորդ օրհնութեան՝ Օրհնեցէք, ամենայն գործք Տեառն, զՏէրն ժողովրդի կցուրդն է:

4. Մեհացուց է, որ սովոր է իբրեւ կցուրդ Ս. Աստուածնի փառաբանութեան՝ «Մեհացուցէ անձն իմ զՏէրն»:

5. Ոգորմեա, կցուրդ «Ոգորմեա ինձ, Աստուածս ապառախ»:

6. Տէր յաբկնից, կցուրդ Օրհնեցէ՛ք զՏէր յերկնիցն ապառախ:

Այս վեց երգերն ստավորաբար ժամերգութեան կազմում են:

7. Մարգարէ, որ գտնաւորն ապառախների կցուրդ է և սովոր է ճշմարտ ժամերգութեանն ժամանակ:

8. Հաբարբէ, որ կցուրդ է երեկոյան ժամերգութեան Հաբարբէի գոյն իմ յերկնս ապառախ:

Երգերի այս շարքը սովորաբար կոչվում է հունարեն կաթմոն բառով, հաճախ նաև հայերեն կարգ բառով, ինչպես՝ կարգ ավագ շարաթիւն, կարգ ծննդեան, կարգ ապաշխարութեան: Որտեղ դարձվածով միայն գործածվում է սարք բառը. մի երգ լիւր սարքն ասել՝ Նշանակում է, օրինակ, մի օրհնութիւն կամ հաբը նույն կարգին պատկանող մյուս տեսակի երգերով միասին ասել: Կանոնի ամեն մի երգն առանձին առած կոչվում է շարակաթմ, իսկ երգերի ժողովածուն ըստ կանոնների ասվում է Շարակաթմոն:

Շարակաթմ բառը փոքրէկ են գտնաւորն ձեռք բացառել՝ դարձել են կամ տարբեր են բառերից. եւ կարծւում եմ՝ զա հայերենում կազմած բառ է, մի անոնցում կանոն ու

¹ Krumbacher. Gesch. d. Byz. Litt. էջ 695 և հաւ.

բազմաշն և խրթին բանիցն լուծուան բան առ բան. Թարգման է և զգիրսն քաղցրաբան՝ Գրիգորի Նիսասացոյ զբնութեան և կազմութեանն: Այլա գնում է Հռոմ, և աշխտեղից հետն առնելով մի քանի պրքեր՝ վերադառնում է Դվին: Այստեղ նա պարապում է գրական գործով՝ գրելով պատասխան Գերմանոս պատրիարքի թղթին: «Մեկնեաց և գրեանս բազումս»՝ զԱբաբոնքն, զԹորն, զԵղեկիէլն և այլ բազումս... արար և ճառաւ. ժմեկնեաց և զԽորհուրդ գիշերային պաշտամունք: Ձեռնադրվում է Սյունիքի եպիսկոպոս և մեկ (բնա ուրիշներ՝ ութ) տարի հետո թի ձորն Եղեգեաց [= Դարա Ալագեագ] յաւանն Մոզան բացօթյա քնած ժամանակ 735 թ. օպանվում է մի պոռնիկ կնոջից, որին սաստիկ հանդիմանել էր եպիսկոպոսը:

Ինչպիսի Ստ. Սյունեցու այս կենսագրությունից կարելի է տեսնել, իբրև գրականագետ նա գրել է ճառեր, պարապել է զխիստորապես մեկնություններով և զանազան թարգմանություններով, սրունք մեռւմ են: Նա ունի և ճերտկանական մեկնությունն, որի համար և կոչվել է Քերթոյ:

Բերենք և հետևյալը նրա կենսագրից: «Էյր սորա քոյր մի,—գրում է Օրբելյանը,— ի մանկութենէ ստացեալ զվարս կուսութեան և առանձնացեալ ի ձորակէին Գառնեայ յայրի միով, և անտանիյի վարս ճգնութեան կրէր յանձին. որոյ անուն Սահակուռնա: Սա յոյժ հմուտ էր երաժշտական արհեստին, որ և ի ներքոյ վարազուրի նստեալ ուսուցանէր զբազմումս: Եւ արար կցուրդս և մեղեդիս քաղցրեղանակս, յորոց մին՝ Սրբուհին Մարիամ, որ իւրով անուամբն է յորինեալ: Եւ անդէն ի նմին վախճանեալ զնի ի հանգստի: Իր եղբորն արժանավոր այս կէնք մեր առաջին բանաստեղծուհին ու երաժշտուհին է, որ հիշվում է գրականության մեջ: Եվ ինքը Ստեփանոս Խմաստասերը նույնպես եղել է երաժիշտ և հոգևոր երգերի հեղինակ:

Նրա համար կիրակոս Գանձակեցին¹ գրում է. «Արար երգս հոգևորս քաղցր եղանակաւ՝ շարականս, կցորդս և երգս: Ստեփանոս Օրբելյանը նույնն ավելի որոշ է գնում. «Բաժանեաց և գոնթ ձայնս և կարգեաց՝ շարեաց շարականս՝ դարութեան օրհնութիւնսն. երգեաց և կցուրդս քաղցրաճամս, յարմարեաց և զստողոգին յինանցն եոթն եղանակօք յոյժ խորհրդաւոր և զպահոցն որ յաղուհացն երգին: Օրբելյանի այս հաղորդածից որոշ իմացվում է, որ Ստեփանոս Սյունեցին Յինանց ստողոգիները, որ և ստողոգիական սաղմոսներ, «յարմարել է եոթն եղանակով», այսինքն կազ-

տակաբանների: Ստեփանոս Սյունեցուց, Տեա՛ Գառ. Զորբ. Մասենդարան Հայկական Թարգմանութեանց Նախնեաց, Վեհաթիկ 1889, էջ 281 և հմ.:

¹ Գրիգոր Նիսասացի. «Թողազ բնութեան մարդոյ». Տեա՛ Զորբ. Մասենդարան Թարգմանութեանց Նախնեաց, էջ 271: Տեա անգ Նուս էջ 629—632. «Նեմեխոս. Այս Թարգմանությունը աղագրված է. «Նեմեխոսի փրիսոփայի Նմեսացայ՝ Թողազ բնութեան մարդոյ», Վեհաթիկ 1889, կազմված է 45 գլուխներից, որոնցից երկուսը են երբորդը վերաբերվել են Գրիգոր Նիսասացուին:

² «Աբուսեա Դիւնիսեայ Քերթակնի և հայ մեկնութեանց Նախնի՝ Դաւթի փրիսոփայի, Անանուս մեկնիչի, Մովսէսի Քերզազի, Ստեփաննոսի Միւնեցույի ևլն. ի լոյս ետե և ի ճնէն արէ ին. Ազանց. Պետերբ. 1910.

³ Գառնութիւն Հայոց արարեալ Կերթակի վարդապետի Գանձակեցուց, Թիֆլիս 1900, էջ 68.

մել և հղանակ է գրել. այստեղ նա ստեղծող է իսկապես միայն եղանակի. ապա նա երգել է քաղցրահամ կցուրդներն:

Շարականների մեջ շարականների հեղինակների համար գործ են տն-վում բացի աննի բառից՝ նաև ասել, երգել, ոգել բառերը, ինչպես՝ «Անհոյն ի հաւրէ, իմաստուն կուսանքն, Որ յաթոռ փոռաց րազմեալ... Տէր Ներսէս հլայեցին հայոց կաթողիկոսն է երգել»։ «Զաւագ շարաթին Մեծացուսեղէն Վարդանայ է ասացեալ»։ «Զյարութեանն Անանիա Շիրակացին է ոգեալ»։ «Եւ հարց մի այլ ի խաչին կարգն... Տէր Ներսէս հլայեցին... է երգել»։ «Որք զծորանս հոգւոյն արբին և ընդ ժամանակս ժամանակս երգեցին զեղանակաւոր երգս շարականացն»։ Երգել հորինելու նշանակութեամբ բնա-կան է այս հին քնարերգուների համար, որովհետև նրանք երգի թէ բա-ռերն էին հորինում, թէ եղանակը և թէ իրենք էլ երգում էին, եղանակէ՝ Սյունյաց եպիսկոպոս Ստեփանոսն՝ ըստ հիւրակոսի և Օրբելյանի՝ հորինել է կցուրդներ, թէ բառերը և թէ նրանց եղանակները. և շարականների մեջ նա համարվում է հեղինակ Մարտիրոսաց շարականների։ Բայց այս զեպ-քում այդ չէ կարևորը Օրբելյանի հաղորդածի մեջ, այլ այն, որ նույն եպիսկոպոսը բառաւոր է ութ ձայները և կարգել, շարել է շարականներ՝ հարութեան օրհնութեանները։ Այստեղ նա ոչ երգի բառերի հորինող է հանդես գալիս և ոչ եղանակի. նա միայն «կարգող, շարող» է։

Յարութեան օրհնութիւններին ուսումնասիրութեանից՝ պարզվել է, որ դրանք սկզբնապես եղել են կցուրդներ տասն մարգարեական օրհնու-թյուններին և հետագայում իրոք մեքենայաբար «կարգվել շարվել են» իբրև կանոնի օրհնութիւնն։ Այս գործը, զք կապված է ժամերգութեան կանոնի հետ, կատարել է Ստեփանոս Սյունեցին. Դրանով նա կանոնը մայրել է Հայոց եկեղեցու ժամերգութեան մեջ. նվ այս հասկանալի է. Նա պարտաւել է ժամերգութեամբ և զրել է ժամակարգութեան մեկնութեան. Ապա՝ նա, ինչպես տեսանք, երկար ապրել է հույների մեջ այն ժամանակ, երբ սկսել էին զարգանալ ժամերգութեան կանոնները, Հունաստանում ծա-նոթանալով կանոններին և հայրենիք վերադառնալուց հետո պարտաւելով ժամերգութեան խնդրով շատ բնական է, որ նա փորձեր մեր մեջ ևս հույ-ների մեջ տեսած կանոնները մտցնել. և այնպես մեքենայորեն կարգեր, շարեր տասը մարգարեական օրհնութեանների կցուրդներն իբրև Հարութեան օրհնութեաններ. Հարութեան կանոնի մնացած սարքի համար (հարց, մե-ծացուսեղէն ևն.) երգեր չէին պակասիլ. որովհետև ժամերգութեան մեջ Ս. Դր. քի այդ օրհնութեանները կային արդեն. և իսկապես, մեր Շարականցի մեջ Զատկից մինչև Հոգեգալուստ «Յինանց» ըստ օրերի համար կան առան-

1 Հին և նոր պարականոն կամ տնվ. շարակ. էջ 98, 99, 124.

2 Հեղինակների մասին Յոսաֆատի ծանոթութիւն էջ 116-117 և 1861 թ. ապ. Շա-րականի, էջ Ա.

3 Հին և նոր պարականոն կամ տնվ. շարակ. էջ 176. Իսկ էջ 116-117 և 1861 թ. ապ. Շարականցի մեջ որո համար տնվում է՝ «Ստեփանոս Սիւնեցի երկրորդն» (երգեաց) զՍըր-բութիւն Սրբաց Խաչին, զոր սմանք Ստեփանոս Մեծաց եպիսկոպոսի ասն, որ Ապարան-ցի ևս կոչի»։

4 «Աբարտա» 1918 սեպտեմբ. Պ 9, էջ 835—836, Մ. Արեղյանի «Շարականների մասին»։

ձին «հարցերն իրենց սարքով. իսկ «օրհնություններն միայն այդ հարության օրհնություններն են: Գանձանների ընդհանրացած շրջանում միայն ներսն է ամբարտաճար, երևի տեսնելով, որ այդ օրհնություններն իրենց բովանդակությամբ շատ էլ հարմար չեն, դրել է երեք կանոն՝ «Այսօր յարեաւա, ժնորհգնա՛կողիք» և «Համբարձաւ Տէրն մեր», որոնք սովորւում են Զատիկին, Նոր կտրականիկին և Համբարձատնը, փոխանակ հարության օրհնությունների:

Սահփանոս Սյունեցին մտցնելով կանոնը, կարող էր ուրիշ կանոնների շարականներ ևս կարգել. բայց այդ չգիտեմք, իսկ որ նա ամենից առաջ Հարության օրհնություններ իրենց սարքով պիտի կարգեր, այդ հասկանալի է այն պատճառով, որ Հարության կարգն անհրաժեշտ էր ոչ միայն «Յինանց» համար, այլև սովորական կիրակի օրերի համար: Դա ամենօրյա ժամերգության մեջ բնուում էր ամենից կարեւոր տեղը, ուստի կանոնը դրանից էլ պիտի սկսվեր:

Որ ասում ենք, թե Սահփանոս Սյունեցին մտցրել է կանոնը մեր ժամերգության մեջ, այնպես չպետք է կարծել, թե կանոնները մի ունգամից ընդունելություն են գտած հայոց եկեղեցիների մեջ և տարածված: Վերևում մենք տեսնումք, որ նույն ժամանակներում միատեսակ ժամերգություն չի եղել, և Հովհան Օմեցին աշխատում է միակերպություն մտցնել գոնե Ս. Գրքի երգերի և աղոթքների ու քարոզների մեջ. բայց նրա պատվիրած ժամակարգությունն ևս հետագայում անփոփոխ չի մնում, այլ ընդարձակվում և փոխվում է: Ժամերգության այսպիսի ազատ միջոցին Սահփանոս Սյունեցին կարող էր իր կողմից ևս ազատորեն փոփոխության ենթարկել այն՝ մտցնելով կանոնը: Բայց նրա այս նորաձևությունը երկար ժամանակ դեռ տեղակոն բնավորություն պիտի ունենար, մինչև որ, քանի հուլյների մեջ կանոնները հետզհետե ընդհանրանում էին, մեր մեջ ևս զորանային 8-րդ և 10-րդ դարերի մեջ: Խոսքով Անձնացու օրով, ուրեմն 10-րդ դարի կեսերին, արդեն ընդունելություն է գտած եղել այս կանոնը:

Մի անգամ որ կանոնը մտնում է մեր ժամերգության մեջ, բնականաբար պիտի աշխատեին հետզհետե հին կցուրդներից ու կացուրդներից զանազան տոների համար կանոնի պահանջած թվով երգերի շարքեր կազմել: Կցուրդ երգերն, ուրեմն, վերածվում են շարականն երգերի, և առօրյա գործածության մեջ հին կցուրդ բառը ետ է ձգվում, մնալով միայն կցուրդ սաղմոսի նշանակությամբ, և առաջ է գալիս «շարական» բառը: Նոր հոգեւոր երգերը, կանոնի շրջանում հորինվում են արդեն իբրև կանոնի շարքի երգեր, և դրանք, թեև Ս. Գրքի օրհնություններից ու սաղմոսներից հետո էին ասվում, բայց սրանցից ավել անկախ բնավորություն ունեին, քան առաջ: Վերջի վերջո ժամերգության մեջ առաջնակարգ տեղը տրվում է նոր երգերին, իսկ Ս. Գրքի երգերը մնում են միայն իբրև «սկսումքներ», այսինքն՝ «Օրհնութիւնից» առաջ միայն՝ «Օրհնացուք զՏէր, զի փառք է փառաւորեալ», «Մանկունքից» առաջ միայն՝ «Օրհնեցէ՛ք մանկունք, զՏէր և օրհնեցէ՛ք զանուն Տեառն: Այսպես և մյուսները:

6. Հոգևոր երգի երկրորդ ծագումը: Մարտկոմնիքի գորգացմամբ դադարումը:—Ինչքան էլ հին կցուրդները շատ լինեին, դրանք չէին կարող

բաժանական լինելի պահանջան առնների համար. որովհետև ամեն տոնի կանոնի համար մի շարք երգեր էին հարկավոր, մանավանդ որ հետզհետե նոր աս-
ներ էին հաստատվում, կամ տոները ոչ թե օրվա հանգանով էին վերջա-
նում, այլ մի քանի օր էին տևում: Այս պատճառով պետք էր սպասել, որ
կանոնի շրջանում մեր հոգևոր քնարերգությունը նոր ուժով դարգանար.
սակայն Ստեփանոս Սյունեցուց հետո 9-րդ և 10-րդ դարերում չեն հիշա-
տակվում հոգևոր երգերի հեղինակներ: Եվ այդ, կարծում եմ, անհիմն չէ:
Այն դարերում արդարև կանոնները հետզհետե ընդունելություն են գտել,
բայց չեն եղել անհրաժեշտ պարապադիր. ուստի և չեն ազդել հոգևոր երգի
զարգացման վրա: Կանոն կաղմոզներն, ժնշուշտ, ավելի շատ հին երգերից
են կանոնի մասերը լրացրել, քան նորերը գրել: Իսկ հաջորդ 11-րդ, 12-րդ և
13-րդ դարերում, երբ կանոնն արդեն ժամերգության անհրաժեշտ կարգ է եղել,
մեր հոգևոր երգը նորից սկսել է ծաղկել, և հիշատակվում են երգիչների
անուններ: Այս ժամանակներում նորանոր երգերով, և նույնիսկ ամբող-
ջական կանոններով, ընդարձակվում է մեր Շարակնոցը և, ինչպես երևում
է, ընդհանրապես մեծ փոփոխության է ենթարկվում մեր ժամերգությունը:
Հին մեծ երգերը, գրվելով իբրև կանոնի մասեր, երբեմն կրճատվում են,
որովհետև կանոնի ամեն շարական, ինչպես հույների մեջ, մեր մեջ ևս, սա-
կավ բացառությամբ, կազմվում է երեք տնից: Այնտեղ են տերունա-
կան տոների պատկերներ, այսինքն տոնի հաջորդ օրերի կարգեր, և սրբոց
տոների կանոններ կազմել, կամ կանոնի պակաս՝ երգերը լրացնել նորե-
րով: Բայց չնայելով դրան՝ մինչև վերջն էլ մեր Շարակնոցի մեջ պակասում
է այս կամ այն կանոնի համար շարքի այս կամ այն մասը. որովհետև
հեշտ չէր աղքատ մեծ թվով երգեր հարկնել: Այդպիսի պակասորդները ժա-
մերգության ժամանակ լրացնում են ուրիշ կանոնների մասերից:

Շարակնոցի այս խմբագրությունն ընթացել է բնական ձևով, հետը-
հետե և պահպան մարդկանց ձեռով. պաշտոնական խմբագրություն հայո-
նի չէ: Բացի Վարդանի և Կիրակոսի հաղորդածից, որ հավանորեն 12-րդ
դարին է վերաբերում: Բայց չնայելով դրան՝ մեր շարականների զարգա-
ցումը գրեթե մի անգամից դադարում է 13-րդ դարում: Այստեղ ևս մեր
հոգևոր երգը հետևում է հունական օրհներգությանը, որի ծագումը վեր-
ջանում է 11-րդ և 12-րդ դարերի մեջ: Դրա պատճառն այն է, որ ժամա-
կարգությունը փակվում է, և նոր երգերն այլևս չեն ընդունվում ամենօրյա
ժամերգության կանոնի մեջ, Եկեղեցական քանաստեղծությունը, ուրեմն,
ինչ որ շարականների տեսակին է վերաբերում, կորցնում է իր գործնա-
կան նպատակը և բնականաբար դադարում է դարգանալուց: Բանաստեղծ-
ները հույս չունենալով, թե իրենց երգերը կընդունեն կանոնի մեջ, այլ-
ևս չեն գրում նոր շարականներ, որով և շարականի տեսակը գրեթե 14-րդ
դարուց արդեն մեռնում է: Նույն շրջանում խմբագրվում է Շարակնոցը,
որի մեջ որոշ կարգով դասավորված են մեծ թվով երգեր: Շատ բան չի
առնված այդ պաշտոնական ժողովածուի մեջ և կորած է անհետ: Ձեռագիր
Շարակնոցների մեջ, սակայն, կան և պարականոն շարականներ: Նոր
հոգևոր երգի պահանջը, սակայն, այնուհետև բավարարություն է ստանում
հոգևոր ասորերով, որոնց երգեցողությունը եկեղեցում երկար դարեր ղեռ
աղտոտ է մնում:

1. Միտոսեակությունի—Շարականների արվեստն ու հասկությունները բխում են նրանց ծագման և զարգացման պատմությունից: Հոգևոր երգն ստեղծված լինելով եկեղեցու պետքի համար՝ ամենից առաջ եղել է մի հարմար միջոց ժողովրդի մեջ բարեպաշտությունը դրոցնելու և քրիստոնեական ուսումը տարածելու: Դա մի կողմից՝ կամ օրհներգություն է, կամ ապաշխարության երգ, ունի, ուրեմն, կամ հառաբանական, կամ ազատական բնավորություն. մյուս կողմից՝ դիդակտիկական—ուսուցական բանաստեղծություն է: Ուստի թեպետև մեր շարականների մեջ կան այնպիսիները, որոնք ունին զգացմունքի քննություն ու զազափարների վստեություն, և արտահայտված են մեծ ուժով, բայց նրանց մեջ ընդհանրապես չպիտի որոնել քնարերգության բարձր թափերը և փայլուն ու բազմազան արտահայտություններ: Հաճախ դրանք աչքի են ընկնում և վերին աստիճանի պարզության կամ հեռավոր բաներ են: Զգեստը է մոռանալ մի հանգամանք ևս: Այդ բանաստեղծությունը չի հորինված կարգացվելու համար, այլ եկեղեցու մոլորություններից երգվելու: Հետևապես այս զրուկան տեսակը գնահատելու համար՝ միշտ պիտի նկատի ունենալ նաև եղանակը, որ բանաստեղծությունը տալիս է իր գույնը:

Շարականների արվեստի մեջ ամենից առաջ աչքի է ընկնում ձևի միակերպությունը: Դրա գլխավոր պատճառը նյութի միատեսակությունն է: Հարկնված լինելով քրիստոնեական վարդապետությունը սովորեցնելու համար՝ այս երգերը բովանդակում են կարճ, ամփոփ ռաամվածքներ Ավետարանից կամ սրբերի կյանքից՝ հարմարեցրած տեղանական կամ սրբերի սոներին: Բայց ինչպես էլ տեղանական սոները տարբեր լինին, դրանք զազափարով շատ մոտ են իրարու և միևնույն խորհրդի համար են հաստատված: Իսկ զանազան սրբերն ու մարտիրոսները, թեպետ անուններով տարբեր, իսկապես զարձալ նույն բնավորությունն ունին և նույն ունեան բանի համար են սրբացած: Այդ երգերի մեջ իշխող զազափարն է, ուրեմն, ըստ քրիստոնեական դավանանքի, Պրիստոսի մարդեղության խորհուրդը մարգելային ազգի փրկության համար քի Պրիստոսի սիրուն նվիրվածությունը, որին միանում է և օրհնաբանությունը, ապաշխարությունն ու խնդրվածքը: Այս միատեսակ նյութը բնականորեն միատեսակ ձևով էլ պիտի արտահայտվեր, որովհետև զգվար է նույն և նման բաների մասին նորանոր ձևերով երգել: Նույնիսկ եթե բանաստեղծները տարբեր են, Հասկանալի է, որ նրանք այդ բազմաթիվ երգերի մեջ նույն նյութն ու զազափարներն անվերջ կերպով պիտի հեղհեղեն:

Միատեսակությունն առաջանում է և ուրիշ հանգամանքներից: Հոգևոր բանաստեղծությունը ծագած և զարգացած լինելով Ս. Գրքի օրհնությունների ազդեցության տակ ու նրանց նմանողությամբ՝ բանաստեղծական պատկերները, զարթվածներն ու արտահայտություններն եղանակներն ընդհանրապես Ս. Գրքի բանաստեղծությունից են առնված, և նույնիսկ պատմությունը, որպես կտրելի է: Ավետարանի մասիկ և նրա բառերով է արվում, կամ թե հարասություն են անում: Բանաստեղծները բարեպաշտա-

կան երկյուղածությամբ չէին համարձակվում շատ հետաճալ Աստվածաշնչի բնադրից: Եվ իբր այս հատկանիշը, որ նույնպես ձևի միատեսակութուն է առաջ բերում, մինչև վերջին էլ ավելի կամ պակաս չափով պահում են մեր լաբորանտները:

Հոգևոր երգի ծագման պատմության հետ կապված է մեր շարակաճաններին հորինվածքի մի ուրիշ հատկութունը ևս, զուրո՞ր, որից մեծ մասամբ կախված է շարակաճանների բնորոշ ոգին և քնարականութունը: Դարձը կամ կրկնակը այն տողերը կամ բառերն են, որոնց դառնում են, կամ որ կրկնվում են յուրաքանչյուր տուն վերջում և որոնց մեջ է երևան դալիս երգչի զգացումը: Դարձերը սովորաբար շատ նման են իրար և կազմված են հաճախ Ս. Գրքի օրհնությունների կամ սաղմոսների խոսքերից: Դրանք շարակաճանների հնազույն տարրն են: Սկզբնապես ժամերգության ժամանակ կրկնել են բացառապես թաղերը: Դրանց կամ սաղմոսներից որոշ բառեր ու խոսքեր, որոնք և պատճառ են դարձած նոր երգեր հորինելուն: Այդ կրկնություններն այնուհետև կամ դարձել են առանձին երգերի առաջին տունը, կամ առնված են նոր երգերի մեջ իբրև դորձ, Հնազույն երգերը, սակայն, բացի դրանից՝ հորինված են նաև հարստությամբ Ս. Գրքի օրհնությունների ու սաղմոսների: Բայց այս հատկությունը, դարձն ու հարստությունը, չպիտի մոլորության մեջ ձգի. ամեն երգ, որ ունի այդպիսի առաջին տուն կամ դարձ և հորինված է հարստությամբ՝ դեռ անպատճառ հին էլ չէ. որովհետև մի անգամ որ տուրքին հոգևոր երգերն այդպես են հորինված, հետագայում դա սովորություն է դարձել, և նոր երգերն ևս հաճախ հնների նման են հորինել: Այդպիսով ստեղծվել է երգերի մի երեք-չորս ընդհանուր ձև, շարուն, որ բանեցնում էին բանաստեղծները: Կանոնների շրջանում այս ընդհանուր ձևերը նույնիսկ հաստատուն են դառնում. կանոնի ամեն մի մասն իր առանձին կերպարանքն է ստանում, որին պիտի հարմարվեր ամեն նոր երգ: Այսպես, օրինակ, շատ երգերի մեջ շարունական ձևով կրկնվում է Ս. Գրքից առնված Վատուռ շարքն մերոց:

1. Այսօր ցնծան
Երկինք և երկիր
Թաղութեամբ քո, Տէր,
Աստուած հարցըն մերոց:
2. Այսօր նորոգեցան
Տիեզերք ամենայն
Թաղութեամբ քո, Տէր,
Աստուած հարցըն մերոց:
3. Այսօր հրեշտակապետն
Աւետարանէր
Ջյարութիւն քո, Տէր,
Աստուած հարցըն մերոց:

էջ 370.

1. Բրիստոս յարեաւ ի մեռելոց,
2. Ընդ արշալոյսն առաւօտուն
Կանխեալ կանանցն ի գերեզմանն ասելով՝
Բրիստոս յարեաւ ի մեռելոց,
3. Եւ առ նոստ ասէր հրեշտակն՝
ՁԲ խնդրէք ըզկենդանին ընդ մեռեալս.
4. Փութացարուք, հվ սուրբ կանայք,
Եւ պատմեցէք աշակերտացն ասելով՝
Բրիստոս յարեաւ ի մեռելոց.

Էջ 325.

2. Մեսրոպ Մաշտոցիմ վերագրւում են Աղաշխարհության կարգին բազմաթիւ երգերը: Առնենք Վեպրմեայի շարականները: Դրանք սկզբնապես կցուրդ են եղել Վեպրմեայ ինձ, Աստուածն սաղմոսի, ուստի և հարասություն են այդ սաղմոսի և իրենց բնավորությամբ արդեն աղաշխարհական են: Այս կարգի շարականները սրտահույզ ողբեր են և ամենից գեղեցիկներն են: Բանաստեղծը (ավելի հիշա՝ բանաստեղծները) ճշմույթով, նեղվում է իր բազում մեղքի ծանրության տակ. զգում է, որ մոլորված է, վերավորված ընկած է թշնամուց: Նա կորցրել է իր սրտի հանգիստը, ներքին խաղաղությունը, հավասարակշռությունը. հնգով հիվանդ է և մոտ է ընկզմվելու չարիքի անդունդի մեջ: Զարհուրելով իր այս վիճակից՝ նա դողում է: շարունակ արտասվում է ու հառաչում, խորին խոնարհությամբ զղջալով՝ իր սիրաւ բաց է անում աստուածո առաջ և իր հույսը միայն նրա վրա է դնում, ապրաւնքով, սրտանույզ ողբերով աղաչում է նրան, որ իր մեծ գթությամբ քաղի իր հանցանքը, ողորմի ու փրկի իրեն՝ անագին հրից: Այս է տե՛ս այս շարականների բովանդակությունը: Այս կարգի հնազույն երգերը գրեթե բառացի հարասություն են սաղմոսի, և կամ առաջին տունն ամբողջ սաղմոսից է կազմված:

1. Ողորմեա ինձ, Աստուած,
Ձի քեզ միայնոյ մեղայ,
2. Առաւել լուս. գիս
Ի աղմոյ յանցանաց,
Աղբւր բժշկութեան,
Եւ ողորմեա:
3. Յարենէ փրկեա գիս,
Որ հոգւոց և մարմնոց
Ունիս իշխանութիւն,
Եւ ողորմեա:

Էջ 168.

1. Ողորմեան ինձ, Աստուած,
2. Ի լսել զձայն փողոյն յահագին առերն,
Թորժամ հարկանէ հրեշտակապետն
Եւ կոչէ ի դատաստան,
Ողորմեան ինձ, Աստուած:
3. Ի նստիլ քո յառննի, դատաւոր անեղ,
Թորժամ առնես հրափորձութեամբ
Ջրնութիւն որդւոց մարդկան,
Ողորմեան ինձ, Աստուած:

էջ 124.

Սաղմոսին կապուած մնալով հանդերձ՝ Աղաշխարհութեան այս երգերը, առկայն, ավելի ինքնուրուշնութեան ունին, քան շատ ուրիշ շարականներ: Բանաստեղծներն ավելի ազատ են շարժվում, սաղմոսից առնելով միայն ընդհանուր դժգոհան ոգին և դարձերը, որ են սովորաբար «Ողորմեան ինձ, Աստուած», երբեմն նաև նույն նշանակութեամբ, դարձյալ սաղմոսից ազդված, ուրիշ դարձերով՝ «Մեղայ քեզ, տէր, քաւեան զիս», «Արդ անկեալ աղաչեմ, թող ինձ, տէր», «Մնայեա ի մեզուցեալ ծառայած, «Մնայեա ի մեզ, տէր, սղորմութեամբ»։ «Մի անտես առներ, Հայր, զաղաչանս իմ», և այլն:

1. Անկանիմ առաջի քո
Եւ խնդրեմ զթողութիւն
Յանցանաց իմաց.
Մի անտես առներ, Հայր, զաղաչանս իմ:
2. Աղաղակեմ, որպէս մաքսաւորն,
Եւ հեղում զարտասուս իմ
Առաջի քո, որպէս պոռնիկն.
Մի անտես առներ, Հայր, զաղաչանս իմ:
3. Յաներեոյթ թշնամւոյն պարտեցայ
Եւ ի զաղանի նեւից
Բանարկութիւն վիրատորեցայ.
Մի անտես առներ, Հայր, զաղաչանս իմ:

էջ 192.

1. Ջրջման իմոյ զարտասուս
Արկանեմ առաջի քո, Գրիստոս,
Թող ինձ զմեզս իմ,
Որպէս երբեմն ըզպոռնկին,
Որ միայնդ ես բազմազութ:
2. Անկանիմ առաջի քո, Գրիստոս,
Որ հովիւդ ես բանաւոր հօտի.
Խընդրեա և զիս զմոլորեալս,
Որ միայնդ ես բազմազութ:
3. Ըզմեզս իմ ցուցից քեզ, Գրիստոս,

Որ բժիշկդ ես հոգւոց և տէր կենաց,
Բժշկեմ և զիմ զհիւանդութիւնս,
Որ միայնդ ես բազմադուք:

Էջ 182.

1. Մաքսաւորն հառաջանօք ի տաճարին
Հետ ըզքաւութիւնս
Նովին ձայնիւն և ես գոչեմ՝
Ողորմեմ ինձ, Աստուած:
2. Աւազակն աղաչէր ի խոչին՝
Յիշեմ զիս, տէր.
Նովին ձայնիւն և ես գոչեմ՝
Ողորմեմ ինձ, Աստուած:
3. Անտուկ որդին աղերսանօք աղաչէր զքեզ՝
Հայր, մեղայ յերկինս և տաաջի քո.
Նովին ձայնիւն և ես գոչեմ՝
Ողորմեմ ինձ, Աստուած:

Էջ 174.

1. Թոյս իմ ես դու, Տէ՛ր,
Քաւիչ յանցանաց իմոց.
Մի անտես առնեմ
Ձրբդ խուճի արտասուաց իմոց.
Ողորմեմ ինձ, Աստուած:
2. Առ քեզ ապաւինեցայ
Որպէս զանառակ որդին.
Հայր, մեղայ յերկինս
Նւ առաջի քո.
Ողորմեմ ինձ, Աստուած:
3. Փրկեմ զիս, Աստուած.
Ի բազում մեղաց իմոց,
Արեւ տրմանի
Քոյին սուրբ արքայութեանդ,
Ողորմեմ ինձ, Աստուած:

Էջ 163.

Ապաշխարութեան կարգի մեջ, սակայն, կան մի քանի բողոքականներ, որոնք ոչ միայն հարասական չեն, այլև չունին սովորական դարձերը. բայց և այնպես զբանք ես կրում եմ նույն զղջական բնավորութիւնը.

1. Այիք յանցանաց զիս այեկոծեն,
Նւ մեղք իմ բազում զիս յանդիմանեն:
2. Արդ զի՞նչ արարից մեղուցեալ անձամբս,
Որ չեմ ապրելոց յահագին հըրոյն:

3. Մեղոյ ջեզ, Գրիստոս, որդի Աստուծոյ,
Շնորհեա զթողութիւն բազում յանցանաց իմոց,
էջ 218.

1. Մով կենցաղոյս հանապազ դիս ալեկոծէ.
Մրրկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ.
Նուապետ բարի, լէր տնձին իմոյ ապաւէն,
էջ 182.

1. Մեղք իմ բազում են յոյժ,
Մանր են քան զուռաք ծովու.
Քանզի ջեզ միայնճյ մեղոյ,
Ողորմեա ինձ, Աստուած:
2. Բաց. տէ՛ր, ըզդուռն ողորմութեան,
Որ ողբալով կարգում առ ջեզ,
Քանզի, ջեզ միայնճյ մեղոյ,
Ողորմեա ինձ, Աստուած:
3. Հեզ յիս ըզգթութիւնըդ ջո,
Բազումողբում և մարդասէր.
Քանզի ջեզ միայնճյ մեղոյ,
Ողորմեա ինձ, Աստուած:

էջ 164.

3. Ստեան Պարքեիմ վերաբերման երգերից մի առանձին տեսակ են կազմում այն շարականները, որոնք աչքի են ընկնում իրենց վերին աստիճանի պարզությամբ: Դրանք նույնպէս հարասական երգեր են, քայքայեցողութեամբ կանոնի ազդեցութեանը, այլ Ավետարանի պատմութեան ամփոփումն են, սովորաբար Ավետարանի իրեն բառերով: Երգիչը միայն մի պարզ նպատակ ունի՝ երգի միջոցով սովորեցնել Ավետարանի պատմութեանը: Այս խմբի երգերը, եթե կարելի է այսպէս ասել, մեր շարականների մեջ վիպական երգեր են: Բերենք մի օրինակ: «Աւագ շաբաթու կարգիս մեջ կան չորս երգեր (Այսօր կանգնեցաւ, էջ 261. Արձաթասիրութեամբ, էջ 254. Ի գիշերին, յորում, էջ 254. Ո՛վ սքանչելի, էջ 266), որոնք իրենց միանման պարզութեամբ, զգացմունքի խորութեամբ և վիպականութեամբ մի երգչի զործ են երևում և կազմում են մի ամբողջութիւն: Դրանք հորինված են ժամերգութեան այն մասի համար, որ ամենաճիշտ ժամանակներից զրափել է քրիստոնյա ժողովրդի սիրտն ու հոգին: Դա Ավագ հինգշաբթի լույս Ավագ ուրբաթ գիշերային ժամն է, Հիսուսի վերջին օրերը՝ ոտնալվալից մինչև թաղումը: Այդ ժամանակ կատարվում էր Հիսուսի մահվան սգածեսը, մեռնող և հարութիւն առնող աստուծու մահվան սուգը, որ դալիս էր նախաքրիստոնեական հին զարեւրից: Մեծի ուրբաթի այդ հակման տոնին ավետարան կարդալու սովորութեանը հին է. չորս Ավետարանիչները ամեն մի ընթերցվածից հետո՝ ժամավորներն իրենց ըզգացմունքն են հայտնել, երգելով այդ երգերը և մի քանի կարճ տներ մեջ

կրկնելով կարգացած ավետարանի բովանդակությունը։ Այս պատճառով շարականներէ ոհն ու բովանդակությունը շատ պարզ է։ Պատմվում է, թե ինչպես տերը լվանում է աշակերտների ոտները՝ հայանելով, թե նրանցից մեկն իրեն պիտի մահու մատնի։ Աշակերտները խիստ սրտմում են ու խոտվում և ուզում են իմանալ, թե ով է մատնողը։ Դա Հուդան է, որ, մինչ Հիսուս Զիթենյաց լեռան վրա ազոթում է, շտապում է քահանաների մոտ իր պայտանը կապելու։ քահանաները կշռում են նրա համար երեսուն արծաթ և տիրոջն առնում, տանում են Պիղատոսի մոտ։— Այս պարզ պատմվածքի մեջ բանաստեղծը լցված է մեծ սիրով առ տերը, որ մարդկային ազգի մեղքի թողության համար է աշխատում։ Երգիչը նրա և նրա աշակերտների հետ հուզվում ու խռովում է։ մյուս կողմից՝ նա զայրանում է «անօրէն» և ապերառ աշակերտի վրա, որ արծաթասիրությամբ մատնում է իր տիրոջն, այն էլ՝ համբույրի միջոցով։

Ո՛վ համբույր նենգութեան,
Նշան և ասիթ մահու,—

ըստգանչում է նա՝ ընդհատելով վիպամբը։ Եվ ապա նկարագրում է Հուդային.

Մերկացած յինքենէ
Ջաստուածային սուրբ հոգին,
Եւ զգեցաւ զսատանայ,
Որպէս հանդերձ արկաւ գիւրեաւ։

Երբ հրեաներն զի խաչ հանն են կանչում, նա ալիւս չի կարողանում հանգարտ պատմվածքը շարունակել, այլ հանկարծ տեսնում է իր առաջ խաչելությունը՝ տերը խաչի վրա, «սքանչելի և ահաւոր» պատկերով։

Ո՛վ սքանչելի,
Եւ տեսիլ ահաւոր.
Ձուարինն երկնի և երկրի
Այսօր տեսաք ի խաչին՝
Տեսեալ զաւերն ի խաչին՝
Քաւարեցաւ արեգակն,
Եւ վաբազայր Տաճարին
Ցերայր վերուստ մինչ ի վայր։
Անարգարտ խաչեցաւ
Տէրն ի մէջ ի յանօրինաց.
Զի լըցցի գիրն օր ասէ,
Թէ ընդ անօրէնսն համարեցաւ,
Ի՞նչ 256.

Պետք է երևակայել մոմերը հանգցրած ժութ եկեղեցին, լի արտասովոր ժողովրդով, կես գիշերային ժամին, որ հասկացվի, թե ինչ սարսուռ էր անցնում հովատացյալ աղթավորի հոգով, երբ այս սրտածմելի ազգուհրդն էր հնչում։

4. Դավանաբանութիւնն ազգեցութիւնը շարեւեմների վրա:—Բացի Ալիստարանի պատմութիւնն ուսումից՝ հոգևոր երգը հաճախ միաժամանակ ծառայել է ժողովրդին նաև դավանաբանական ուսում տալու: Մարդիկ հետաքրքրվում է ապրում էին դավանաբանական և նույնիսկ մեկնաբանական խնդիրներով, որոնց համար ամբիոնները նույնիսկ կոթիւներ էին մղում: Բնական է, որ հոգևոր երգն իր մեջ անդրադարձներ եկեղեցական կյանքի այդ կողմը: Այդպիսի դավանաբանական շարականների ամենապարզ և հին տեսակն իր մեջ ամփոփում է սովորաբար Քրիստոսի աստուածութեան ընդհանուր ստորոգելիները: Հետագա դարերում, սակայն, մուսուլման գործել և այնպիսի դավանաբանական խնդիրներ, որոնք եկեղեցու մեջ վեճի ու պառակտման առարկա են դարձան: Այս վերջին տեսակի շարականներն առանձնապես աչքի են ընկնում իրենց սառն ու վերացական, հետևակ բնավորութեամբ: Արդարև շատ չեն այն երգերը, որոնք ամբողջապես հատուկ դավանաբանութեան համար հորինված լինին. բայց չափազանց մեծ է այն երգերի թիվը, որոնց այս կամ այն առդի մեջ դիտարկույալ կերպով սահեցրած է որևէ դավանութիւն: Բերենք իբրև օրինակ՝ Մանգյան «Խորհուրդ մեծ» նշանավոր օրհնութիւնը «Մանգեան կարգի», որ վերագրվում է Մովսէս Գեորգիանի:

Խորհուրդ մեծ և սքանչելի,
Որ յայսմ աւուր յայտնեցաւ.
Հավիւքն երգեն ընդ Դեշտակս,
Տան աւետիս աշխարհի:
Ծնաւ նոր շրջայ
Ի Բեթղեհէմ քաղաքի.
Որդիք մարդկան, օրհնեցէ՛ք,
Ձի վառըն մեր մարմնացաւ:
Անբաւելին երկնի և երկրի
Ի խանձարուրս պատեցաւ.
Ոչ մեկնելով ի հօրե՝
Ի սուրբ տըրին բազմեցաւ:
Էջ 23.

Թվում է, թե բանաստեղծը բնականորեն, անգիտակցաբար գրել է վերջին տան ընդգծված տողը՝ «ոչ մեկնելով ի հօրէ», բայց դա հատուկ դիտարկութեամբ կատարված բան է: Դավանաբանութեան այդ խնդիրը շատ է զբաղեցրել «Մանգեան կարգի» երգիչներին. ուստի և բազմաթիվ երգերի մեջ զանազան ձևերով երևում է այդ:

Այս դավանաբանական շարականներին իրենց բնավորութեամբ մոտենում են այն երգերը, որոնց հորինողը, ուսուցանելու նպատակով, պարզապես հիշեցնում է Քրիստոսի աստվածային ընդհանուր հատկութիւնները, առանց որևէ դավանաբանական խնդրի հավակնութիւնն ցույց տա-

1 «Սուրբն Մովսէս Գեորգի (Երզնաց)՝ զճաղատուցի Ուրախեցիքն, զկարգ Մանգեանն և զԱնթուրան, զՏեառնընդհանրին, զՅարութեան հարցան, զԿարգավառին, և ուրիշ երգեր:

լուսւ Եվ այս լինում է հաճախ առանձին արվեստով: Բանաստեղծն առնում է մի աստվածային հատկութիւն, ապա պատմում է Լիսուսի կյանքից մի արարը իբրև հետևանք նրա հիշված աստվածային հատկութեան: Այսպես, օրինակ, Ղազարոսի հարուստի կանոնի մեջ, որ ընծայվում է Սահակ Պարթևին, Քրիստոս նկայանում է իբրև կենդանարար: աղքատը կյանքի և անմահութիւն: Նրա գիմացն է մահ, գերեզման, և նա իր ամենագոր հրամանով սարսեցնում է դժոխքը և մեռելին հարուստիւն տալիս: Ամենասուղորական ձևն է, սակայն, աստվածային և մարդկային հատկութիւններ հակադրութիւնը: Առնենք զրա համար Ավագ շարաթի թաղման կանոնը: Սրա առաջին երգը, որը շէր սարօք ընծայում են շարակնոցները Սահակ Պարթևին, ինչպես երեսւմ է, հորինված է աստակաւ հանդեսի, թափարի համար: զա սկզբից մինչև վերջը հյուսված է դիտավորյալ, որոշ նպատակով կազմված հակադրութիւններից: Բանաստեղծն ամեն առաջին տողի մեջ գնում է աստվածային հատկութիւնները և ապա հաջորդ տողի մեջ ճարտարութեամբ հիշեցնում է թաղման պատմութիւնը մի այնպիսի վայրկյան, որ առաջին տողերի մեջ հիշված աստվածային հատկութեան հետ մեծ հակադրութեան է կազմում: որով և այս բանաստեղծութիւնը զարնում է լսողի ոչ այնքան զգայարաններին, որքան մտքին: Այս ձևով, սակայն, կարողանում է երգիչն արտահայտել իր սքանչացումը և մի բովանդակ վեհ ու վսեմ բանաստեղծութիւն հորինել:

Պարզեասուն ամենեցուն

Այսօր խնդրի պարզես ի Պիղանոսէ.

Եւ արկողն զայս որպէս դթոց՝

Հաւանի պտտիլ ի Յովսէփայ:

Կենդանասուն ամենեցուն

Այսօր գնի ի նոր գերեզմանի

Եւ պանծն անմահութեան

Կնքի մատանեաւ քահանայից:

Էջ 274.

Այս կանոնի ամբողջ շարքի մեջ սույնպիսի հակադրութիւններով, երբեք նույնութեան հասնող կրկնութիւններով, շարունակ հեղեղվում են նույն զաղափարներն ու նույն գեպքերը: Այս կրկնութիւնները, որ ձանձրալի միտաւեսութիւն են մտցնում ոչ միայն այս, այլև ուրիշ կանոնների մեջ, մեր աշխարհն ճաշակով բանաստեղծութեան պոետիկութիւնն են կազմում: Բայց մի ժամանակ զրանք համարվել են հոգևոր երգի արժանիքը: Կրկնութիւնը, եթէ ամբողջ կանոնի հորինողը մեկ բանաստեղծ է, առաջանում է մի գլխավոր պատճառից: Ինչքան էլ բանաստեղծն ընդունակ լինի, ինչպես ասվեց վերևում, նա չի կարող ութ-ինը երգ գրել նույն նյութի մասին և ամեն անգամ նոր զաղափարներ ու նոր ձևեր ստեղծել: Նա ստիպված է ճաղաղել իր ասելիքը և մի երկար ու ձիգ կանոնի մեջ նույն միտքը նույն ձևով զարգացնել շարունակ: Իսկ եթէ կանոնի տարբեր մասերը տարբեր բանաստեղծների գրած են, այդ ժամանակ կրկնութիւնը ծագում է այն ընդհանուր երևույթից, որ գտնւմ ենք միշտ բոլոր գրական տե-

սակներին մեջ, Մտքի և ձեռի սկզբնական ճարտար գոյությունը մի նաստատուուն կերպարանք են տալիս բանաստեղծության որոշ տեսակների, ստեղծվում է որոշ կազմավոր, որից դուրս գալ չեն կարողանում հաջորդ բանաստեղծները։ Այս դեպքում նմանողությունը նախորդներին՝ տնտեսաբանի է։ Այսպես մեր միջնադարյան աշխարհիկ երգիչները նման և նույն ձևերով գովում են զեղեցկությունը, վարդ ու զարուհ, կրանական օրհներգության մեջ, սակայն, այս նմանողությունը երբեմն բառացի կրկնության է հասնում, որովհետև, ինչպես հավատքի համար որոշ, հաստատուուն դավանանքներ են ստեղծվում, նույնպես այդ արտահայտելու համար որոշ բառեր, դարձվածներ ու բանաձևեր են առաջ գալիս։ Եվ այս երկուսը, եկեղեցու ընդունած դավանանքն ու նրա արտահայտության պատրաստի կանխահավան ձևը, պարտավոր էր բանեցնել ամեն երգիչ։ Ուստի և նույն նյութի մասին գրող բանաստեղծները բնականաբար հաճախ նույն դավանաբանական խնդիրներն են շոշափում, նույն ստորագիծներն են ասում նման հակադրություններով, ախի՛նքն բաղդատություն են դնում Քրիստոսի աստվածային և մարդկային հատկանիշների մեջ, եվ այս հակադրությունները կազմում են մեր տերականական տոների շարականներից շատի էությունը, որովհետև ծննդյան տոն լինի թե թաղման, հարության տոն լինի թե համբարձման, միշտ նույն մարդկություն տնօրինական խորհուրդն է, որով Քրիստոս և՛ Աստված, և՛ մարդ է։ Այսպիսի հակադրությունների մեջ բանաստեղծների անձնական գույտը միայն այն է, թե՛ որ աստվածային ստորոգելին, որ ընդունված է դավանաբանության մեջ կամ հայտնված է Ս. Գրքում, Քրիստոսի որ մարդկային հատկության կամ արարքի հետ կկապեն։ Եթե բանաստեղծը շնորհքով է, այս տեսակետից, հարկավ, մի նոր բան անում է, թե՛ չէ՛՝ նա կրկնում է իր նմանողության աղբյուրը։ Դրա մի լավ օրինակն է Մեծի շարաթու նույն թաղման կանոնը։ Այստեղ ամբողջ կանոնի մեջ մի քանի անգամ պատմվում է նույն բանը, թե ինչպես Հովսեփը Քրիստոսի մարմինը խնդրում է Պիղատոսից, պատահում է, գնում նոր գերեզմանի մեջ, թե ինչպես նրա գերեզմանը կնքում են, և զինվորները պահպանում։ Այս պատմությունը ամբողջ կա արդեն առաջին շարանաթան մեջ՝ Պարզևատուն ամենեցուն, որ հին երգ է և, ինչպես ասվեց, վերագրվում է Սահակ Պարթևին։ Նույնը կրկնվում է և մյուս երկու շարանաթաններին մեջ, որ ներսես Ենօրհալուն են վերագրում, և կանոնի մյուս մասերի մեջ, որ դարձյալ Սահակ Պարթևին են վերագրում, բայց տարբեր ձևերով։

Թե երբ է մեր հոգևոր երգի մեջ մտել աստվածային և մարդկային հատկություններից այսպիսի հակադրություններ կազմելու արվեստը, այդ հայտնի չէ։ Դա հատուկ հայաց հոգևոր երգի մի ձև չէ, և իր ընավորությամբ այնպիսի է, որ ամենավաղ ժամանակներում ևս կարող էր գործադրվել եկեղեցական բանաստեղծության մեջ։ Մեր շարականների ավանդությամբ Ս. Սահակ Պարթևին վերագրված երգերի մեջ արդեն գտնում ենք այդ ձևը շափազանց պրծածով։ Այսպիսի բաղդատությունների տեսակների թիվը բավական

1 Մանրամասները՝ ՎՊՊՊՊՊՊ 1918, № 18, էջ 1146 և հան. Մ. Աբեղյանի հոդվածը։

շատ է. բայց ինչքան էլ դրանք բազմազան լինին, որովհետեւ նույնը հաճախ կրկնվում է ոչ միայն նույն, այլև տարբեր կանոնների մեջ, ուստի և մեր հոգևոր երգը տաղակալի միակերպությանն է ստանում: Բանաստեղծների երեւմտկայութունն ազատ չի գործում, նրանք կաշկանդված են մեռած մի անգամ արդեն ստեղծված ձևի մեջ և մեքենայորեն նույնը կրկնելով են հորինում իրենց նոր երգերը:

5. Մեկնաբանությամբ ազդեցություններ:—Բացի գաղափարաբանական ուսումների՝ շարականների նյութի և արվեստի վրա մեծապես ազդել է նաև մեկնաբանությունը, որով Ս. Գրքի պարզ իրողություններին ու իրերին արված է խորհրդավոր, սիմբոլիկ նշանակություն, և Ավետարանի այս կամ այն դեպքի հետ կապված է Հին Կտակարանի որևէ դեպք: Այս սքոլաստիկական բացատրությունները զարգանում էին մեկնությունների ու ճառերի մեջ. բայց որոշ մեկնություններ և նմանություններ ընդհանրացած լինելով՝ ժամեցից ընդունելի էին դառնում, և հոգևոր բանաստեղծը պարտավոր էր հաշվի առնել այդ: Ուստի և մեր հոգևոր երգն իր ձևով ու պատկերներով հաճախ կախված է սքոլաստիկական մեկնություններից:

Այս տեսակի շարականների գեղեցիկ օրինակ են Ս. Խաչի կանոնները, որոնցից Վերացման Խաչինը վերագրվում է Սահակ Ջորափորեցի նշանավոր կաթողիկոսին (678—703 թ.)¹, որ Թեոդորոս Գոթենավորի աշակերտն է, մի ժողովրդական մեծ հռչակ վայելող անձ: Հայտնի է նրա մահվան մասին ժողովրդական գրույցը, որ պատմում են մեր պատմագիրները: Խաչի պաշտամունքը 7-րդ դարում շատ զորացած էր Հիսուսի թնայափայտի գերվելու և աղափսելու կապակցությամբ, ուստի անհավանական չէ, որ Սահակ Ջորափորեցին Խաչի համար երգեր հորինած լինի: Դրանց մեջ Խաչի բոլոր նկարագրերն ու համեմատություններն առնված են մեկնություններից և ճառերից: Այդ երգերն իրենց առանձին տների բովանդակությամբ ու պատկերներով գրեթե չեն տարբերվում, օրինակ, Դավիթ Անհաղթի մի մեկնությունից և շեքերոզեանից ի ս. Խաչն՝ Կան նմանություններ նաև Սահակ Ջորափորեցու ուսուցիչ Թեոդորոս Գոթենավորի շեքերոզեան ի ս. Խաչն՝ ճառին:

«Ս. Խաչը՝ հաճախ երգվում է իբրև շնչան յաղթութեան թշնամիների դեմ, եզրապահ զօրութեան հավատացյալների համար: Ըստ ինքյան այս նմանությունն առհաջող չէ, բայց դա ոչ թե բանաստեղծի մաքր ու երևակայության ձնալու է, այլ լավ ներառիտ մեկնաբանի, կամ ճշտորեն ճանաչողի: Խաչի այդ օրինակի նշանակությունն իբրև զօրության գաղափար՝ ծագել է Մովսես Մարգարեի գաղափարի մեկնությունից իբրև խաչի նշանակ: Այսպես ս. Խաչն է և «մորենին վառեալ, որ ոչ այրիւր: Շարականների մեջ, սակայն, ոչ միայն Խաչը, այլև Աստվածածինը նույնպես կոչվում է «մորենի տնկիդիւն: և այս երկուսի համար և՛ զա Մովսեսի ժողո-

¹ «Սուրբ Իսահակ Ջորափորոս՝ որ Գնաց ընդդէմ առէկոց՝ զԽաչին, զնեկեղեցւոյ, Զկնհաճաղիւր տնաբան, և զՅէր յերկնիցն՝ որ զարդարեաց» (Շարականք առաջաբանում):

² Գրեւն վարդապետի, Մամբրէ Վերձառնդի և Դաւթի Անյաղթի Մասնազգրութիւնք, Վնեմակ 1823, էջ 205 և հետ:

նուև նմանութունն է, որ ծագում է մեկնաբանից, ԵՍՐԻՆԵԱՅ ևս, փայտ սուրբ, որ վերագոյն մօրենեոյն առ Կոյսն բնութեցար սքանչելեօք։ գրում է Դավիթ Անհաղթը (էջ 115) և ապա աշխատում է ապացուցել, որ խաչի մօրենին բարձրագոյն գոյ հրաշիցն։ Մովսեսի մօրենու չվառվիրը թերևս այնքան զարմանալի չէ, որովհետև հալալարագոյն զորութիւն թփոյն առ հուր աննիւթ տեսկանութեան՝ թերևս խորյի ի զարմանքն, մինչդեռ խաչի փայտը յոյժ դիւրակէզ և ցամաքն լինելով հանդերձ՝ եղանցեալ առկէզն, չնայելով որ նրա վրա էր տառնածային ճշուրքն (Քրիստոս) և նրանից շրջիկ եռանդուն յիմանալի քրայէ՝ արտաշիկագոյն առու հրախառն սուրբ արեանն հոսմամբ ի վերայ իջեալ։ Դավիթ Անհաղթը Մարգարեից մեջ մի տեղ հիշված է մանուկի կառքը, որ և ճշտապէս կառքն, այլս բարգամանն, մեկնաբանում է խաչի համար, և ահա բանաստեղծը երգում է.

Անապատուած կառք.

Անքննելի խորհրդոյն ընդունարան,

Ո՛վ սուրբ քառաթեւ,

Ի սուտունաթեւից յարաթեւոց սրովբէից

Անտեսարար անհաղատուեալ

էջ 498.

Այսպես և ս. Խաչը, թէ ըստ մեկնաբանին և թէ ըստ երգչին, մարգարիտի տեսած յոթնաշաբաթի ոսկի տշտանակն է, Սարեկա ծառը, Մովսեսի անապատում բարձրացրած օձը, սրբութեան սեղան, աթոռ տերունայան, արքայութեան բռնալին, անապատի մեջ Իսրայելացոց առաջնորդող լուստ ամպը ևլն, ևլն. Բերնէք ս. Խաչի երգերից մեկի այս տունը՝ Վճռաբան լուսածին, գերապանն նիշ, կառուցող կենացն ամենից, միշտ բազկատարած առ քեզ է՛նն։ Այս միկնուշնը կա նաև Սահակ Զորափորեցու ռաւոցիչ Թեոդորոս Բաթնապարի ս. Խաչի ճառի մեջ։

Մի անգամ որ բանաստեղծն այսպես կաշկանդված է միջնադարյան աքոյաստիկական մեկնութեամբ՝ նա այլևս չէր կարող ազատ մտածութեան ու թռիչք ունենալ, նոր ինքնուրույն գաղափարներ դնել իր երգի մեջ. անհրաժեշտորեն պետք է զգացմունքի շերտութեանը փոխանակելը ցամաք ու սառն դատողութեանը։ Նա իր նյութը մշակում է մեքենայաբար. չի կարողանում մեկնաբանների ընդունած պատկերների շրջանակից դուրս գալ և իր համար արտահայտութեան նոր, կենդանի զգացած ձևեր ստեղծել։ Նրա զօրծածած նմանութեաններն ու փոխաբերութեանները շինծու են, մութ ու անբնական։ Ավ այս ամենի հետևանքն այն է լինում, որ մեկնաբանական շարակունքների մեծ մասը բանաստեղծական ոչ մի աբսթեղ չունին. դրանք Խաչի գրույցների կցկառու պատմվածքներ են երգի ձևով։ Մակայն, թեև բանաստեղծների հաշակն այսպես փլցած է աքոյաստիկական մեկնաբանութեանից, դարձյալ Խաչի երգերի մեջ կան մի քանի այնպիսիները, որոնք գեղեցիկ են իրենց խրախուսական աշխուժով. Խաչի

1 Ավետիքյան Գ. — Բացառ. չարականաց, էջ 531.

համատար շատ ջերմ է եղել, մեծավանդ 7-րդ և 8-րդ դարերում, երբ Հայոց երկիրը զարգարում էին խաչարձաններով: Ուստի բանաստեղծի սրբափայլ թաշու մեծ առ խաչը սգևորութեան խոսքեր, որոնք լին են հափշտակիչ քնարականութեամբ:

Ջորութիւն սուրբ խաչի ճո, Քրիստոս,
Որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի,
Սմ պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ:
Էջ 488.

1. Գաւազան զօրութեան
Զխաչ քո ետուր մեզ, Քրիստոս.
Եւ սովաւ յաղթեսցուք անօրէն թշնամւոյն:
2. Սմ է գէն յաղթութեան՝
Սրեալ արեամբ որդւոյն աստուծոյ.
Եւ սովաւ յաղթեսցուք անօրէն թշնամւոյն:
Էջ 491.

Դավանաբանությունն և մեծավանդ մեկնաբանութեանն առանձնապէս ազդել են նաև Աստուածածնի երգերի վրա, որոնք բաղական մեծ տեղ են բռնում մեր Շարակնացի մեջ: Այստեղ ևս գրեթե բոլոր պատկերներն ու նմանութիւններն ասկած են մեկնաբաններից: Սուրբ Կուսան է՝ երկին վեհագոյն, քերովբէ հոգեղէն, սիւն հրեղէն, լուսոյն աշարակ, սափոր ոսկի երկնային հացին, ամպ թեթև, գեղմ իմանալի. «Ձգեզ, երկնային դռան, զոր ետեսն ծղկելէլ, և ասըն, զոր ծառնեալ Գեղէն, սերովբէ հոգեղէն վեհագոյն քերովբէից, օրհնութեամբ զգեզ. Աստուածածին, մեծացուցանեմք: Ուրիշ երգերի մեջ նա է խորան լուսոյ, անապական տաճար, մոբնի անկիգելի ևլն, ևլն. բոլորը մեկնաբանների հորինած բացատրութիւններ և ոչ թե բանաստեղծների երևակայութեան արդյունք: Դրանց մեջ առանձին տեղ է բռնում լոբսո պատկերը:

6. Միերի կրօնի ազգեցաւթյունը:—Քրիստոնեութեան առաջին չորս դարերում Պարսից արեգակն և լուսո աստուած Միթրայի (Միհրի) կրօնը, որ շնորհիվ իր գրավիչ միատերիւնների տարածման էր նաև հռոմեական լայնածավալ կայսրութեան մեջ, ազդում է քրիստոնեական դավանանքի կազմակերպութեան վրա: Նիկիական համաժողովի մեջ Քրիստոս կոչվում է «Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Քրիստոսյաները, լուսո պաշտամունքի ազգեցաւթյամբ, աղօթքի ժամանակ երեսները դարձնում էին դեպի արևելք (աղօթարանը), լուսո միատերիւն աշխարհը, որտեղից ծագում է արեգակը, որի հետ նույնատեղ է Քրիստոս՝ «արդարութեան արեգակը»: Նույն ձևով արեմուտքը սիմբոլաբար համարվում է խավարի, ուրիմն և սատանայի բնակարան: Մկրտութեան ժամանակ մկրտվողն ամենից առաջ պետք է երեսը դեպի արեմուտք դարձնած՝ հրաժարվեր խավարի իշխանից, հեթանոսութիւնից («Հրաժարիմք ի սատանայէ»): Եսպաղաճալով դեպի արևելք, նա խոստանում էր Քրիստոսի, արդարութեան

արեգակի, ծառա դառնալ, Եվ ալպիսով՝ լույս, արեգակ, տիվ, հուր, կյանք
և անուպականութուն, ցնծութուն, և հակառակը՝ դժխտք, մեղ ու գիշեր,
արտմութուն, խավար, մահ ու ապականութուն՝ առանձին տեղ են բըռ-
նում քրիստոնեական հավատքի մեջ։ Նորոգվում է քրիստոնեական հավա-
տությունից մեջ լուսո և խավարի հին կռիվը՝ օրմարտար իբրև իմանալի կամ
գիտության լուսո կռիվ ընդդեմ ռեգիտության կամ կուսակաշտության խա-
վարի։

Հոգևոր երգը, լինելով արտահայտություն եկեղեցու ընդունած դա-
վանության, այստեղ ևս յուր մեջ անդրադարձնում է իմանալի լուսո այս
պաշտամունքը. մեր շարականների մտախնայի մի մեծ մասը, առանձնա-
պես Աստվածածնի, մասամբ և տերունական շարականների, կազմված են
այս լուսո հավատությունից վրա։ Անշուշտ, այս ամենը հեթանոսական կրոնի
ազդեցության տակ է ծագած, բայց առանձնապես հայկական չէ։ Մեր հա-
գևոր երգերի այս կողմը միայն թերևս նրա համար ավելի զարգացած է,
որ ավելի համապատասխան է եղել մեր հին հավատություններին, ինչպես որ
նույնը գտնում ենք մեր արդի ժողովրդական հավատքի մեջ ևս։ Դա կազ-
մում է քրիստոնեական դավանաբանության մի մասը, որ գեղեցիկ արտա-
հայտված ենք գտնում Ներորդությանը նվիրված մի դավանաբանական
շարականի, «արևագլուխ» երգի մեջ, որ ասվում է այն ժամանակ երբ ծա-
գում է առավոտյան լույսը։ Նրդիչը հոգով վերանալով լուսո միտակական
աշխարհը և գիմելով լուսո Արարչին՝ խնդրում է, որ իր հոգու մեջ ծագե
իմանալի լույսը։

Լույս, արարիչ լուսոյ, առաջին լույս,
Բնակեալք ի լույս անմատոյց հայր երկնաւոր,
Ի դասուլց լուսեղիկնացն օրհնեալ,
Ի ծագել լուսոյ առաւօտուս՝
Մագեակ ի հոգիս մեր զլոյս քո իմանալի։

Էջ 506.

Ըստ այսմ Քրիստոս է լուսոյ ծագումն, արեգակն արգարձ,
իմանալի լույս, արեգակն լույս, աղքատը լուսո և հառապաթ անշիջա-
նելի լույս։ Նա է «արևոդն զլոյս որպէս զօթոց»։ Նա իր ծննդով իբրև ա-
րեգակ ծագում է հերքելու ռեգիտության խավարը և լուսավորելու ու կյանք
տալու արարածներին։ Այսպես, օրինակ, Մովսէս Քերթոզին վերագրված
երգերի մեջ.

Ի Հօրէ՛ ծագեցար
Լուսաւորել զարարածս,
Արգարութեան արեգակն.
Տէ՛ր, փառք քեզ։

Էջ 34.

Լոյս ի լուսոյ, ծագեալ ի հորէ,
Եւ լուսաւորեաց զտիեզերս...

Էջ 27.

Քրիստոս է թիշխան մահու և կենաց: Նրա ամենագոր հրամանից գողում է մահը, գծոյցը սարսափում ու պարտվում է, ապականությունը լուծվում, և խափանվում մահու իշխանութունը: Նա ոչ միայն լույս և կյանք է, այլև հեռւն Աստուած, որ իր աստվածային կրակը տարածում է ռահասարակ բոլոր տիեզերքի մեջ, բարկությամբ գոռալով իջնում է թի ստորին կողմն երկրի, գծոյցը, այդ մահու խավարային բանտը, և տարում է նրա դռները, Նա ինչպես մի պատերազմող հաղթական թագավոր իր հզոր կորոյությամբ քաջությամբ կռիւմ է բռնակալ վիշապի հետ, ջարդում է նրա գլուխը, և կամ կապում, գերում է այդ հզորին, հրդեհելով ու ավերելով նրա ամբոթյունները և տյնտեղ փակվածներին ու կապվածներին արձակում և ազատութուն է շնորհում: Դա արգեն հին արեգակի և վիշապի, լուսո և խավարի կռիւն է, որ խմանալի կերպով փոխադրված է քրիստոսնության մեջ:

Մի անգամ որ Քրիստոս ներկայանում է իբրև լույս և արեգակ, բնականաբար Ս. Կույսն ևս գովաբանվում է իբրև «մայր լուսոյ»:

Այսօր աստեղջ հւ լուսին

Ընդ արեւու հրճուելով՝

Գովեն զլոյսն ի հորէ

Յաւուր ծննդեան լուսոյ մօրն:

Էջ 5.

Նրա պատկերը, օտկայն, ավելի թանձրանում է, և նա դառնում է իսկապես լույս, երկին վեհագոյն, լուսաւոր երկնակամար, աստոր լուսոյ, աստուած խաղաղութեան և արուսեակ զուարթարոր, յոյժաւ երկինք և ամպ լուսեղէն, արեւելք, որից ինչպես մի արշալույսից ծագում է արեգակը և լուսավորում, ինչպես որ նույնը գտնում ենք մեր ժողովրդական ազոթքներ ի մեջ:

Պորանայարկ, կամարանման

Թորինեցաք սուրբ կոյս Աստուածածին...

Աստուածածին, խորան լուսոյ

Անվայրափակ արփոյն կենաց.

Որ եղեր արեւելք

Արեգականն արդարութեան...

Էջ 469, 17.

Աստվածածինը համեմատվելով ամպի հետ՝ իր մեջ բնագոյնում է հին հավատալիքների ուրիշ կողմեր ևս. «Ամպ թեթև և լուսաւոր, որ զտնձրներ կենաց ի քեզ հեղեալ ի յերկնային ծովէն, հոսեցեր ի յերկիր Երաւաւոր»:

Պատկերները երբեմն ասնվում են ծառ ու ծաղկից՝ Աստուածատունի խնդարեւ ծառ յանուշահոտ բուքաստանէն, որ ի դնացս հոգւոյն վտակաց անկեցար և զանմահութեան պտուղն ի ժամու ետուր մեղծ:

Ո՛վ զերահրաշ ծաղիկ, բուրհալ յեզեմայ,
Հոտ անմահութեան ծննդաց՝ Եւայի...

Էջ 58.

Ինքն Աստուածածինը պատկերացվում է անձամբ իբրև մի ժամրգար-տափայլ, ծիրանագեղաց բերկրեալ սուրբ կոյս, քան զերկինս քարձրագոյն և քան զտերեզակն պայծառագոյն, տմբողջ լույս, որի շուրջը փառում է համատարած լույսը, որ վրան հագած ունի արեգակը զւրիշ ոտիւք լուսին աստղատեսակն, և որին զազգը և ազինք անդադար երգով մեծացուցանում են:

Ջգեզ, ամենօրէնեալ Աստուածածին,

Մեյրդ լուսոյ և առադաստ Աստուծոյ բանին,

Մեծացուցանեմք:

Ջգեզ, պայծառ երկինք և ամպ լուսեղէն,

Մնող արարչին և մորենի անկիպելի,

Մեծացուցանեմք:

Էջ 59.

Թեպետ և հին հավատալիքների տրճագանքներն աշխարհ մեկ մեկ լսելի են լինում մեր հոգևոր երգերի մեջ, բայց և այնպես դաւեր շարունակ ամենայն օր և օրը մի քանի ժամ երգվելով՝ այդ երգերը վերջիվերջո հասնում են իրենց նպատակին: Դրանք, միացած եկեղեցական գրականութեան մյուս տեսակների հետ, ոչ միայն քրիստոնեութեանը պաշտպանում են Զրադաշտի և Մոհամեդի կրոններին դեմ, ոչ միայն Ս. Պրքի, հատկապես Ավետարանի պատմութեանները ժողովրդականացնում են և նույնիսկ դավանութեան սովորեցնում, այլև կրոնական եռանդը մեծացնում են մերթ ուրախ երգերով, սքանչացման ցնծալից փառաբանութեաններով, և հաճախ տիտեր ողբերով, լուրհառաշ պաղատանքներով:

7. Հոգևոր երգերի ուտնավորը:— Որքան միակերպ են հոգևոր երգերի բովանդակութեանն և արտահայտութեան ձևերն ընդհանրապես, այնքան ավելի բազմազան են դրանց մեջ գործածված ոտանավորի չափերը: Այստեղ զանուկ ենք արձակին մոտեցող կտորներից մինչև մեր ամենաբարձր աբախանական ոտանավորները: Այս վերջինները վերաբերում են մեր գրականութեան համար շրջանին, երբ սկսում են շարականները համար կիրառել աշխարհիկ բանաստեղծութեան չափերը: Մեր հոգևոր երգերի, ինչպես և մեր բանաստեղծութեան ամեն տեսակի ոտանավորները, լեզվի առողջանութեան տեսակետից, մանրամասն ուսումնասիրված են սրտ հեղինակի մի ուրիշ աշխատութեան մեջ¹: Այստեղ հարկավոր է առնել միայն հետևյալը:

¹ Հայոց լեզվի ուղղակի-առաջադաս (մեթոդիկ), Խաչատուրեանի ղեկավար. Մ. Արեգյան, Երևան 1933. հոգևոր երգերի համար՝ էջ 320—340; 353, 357—360, 390—395.

Մի ժամանակ կարծում էին, թե մեր յարականներն արձակ հորինվածք ունին. որովհետև աշխատում էին դրանց մեջ գտնել 11-րդ դարից ի վեր գործածական դարձած մեր չափերը, և չէին գտնում: Նույն կարծիքը երկար ժամանակ եղել է նաև հունական հոգևոր երգերի վերաբերմամբ: Շարականների տաղաչափության հիմունքը նույնպես վանկերի թիվն և ռիթմական շեշտերն են կազմում, միայն ավելի մեծ ազատությամբ, քան մեր սովորական ոտանավորների մեջ: Բանաստեղծությունը բաժանվում է, ինչպես հունականում՝ ռոններին (ὁῦζοῦς=տուն), որոնց մեջ տղերքի թիվն առհասարակ որոշ է, որովհետև աները երգվում են միևնույն ընդհանուր եղանակով: Տոգերի մեջ, սակայն, ռիթմական ոտքերի, կամ թե անդամների թիվը, ինչպես և սրանց վանկերի թիվը, թառամնվում է հաճախ: Այսպիսով կազմվում են սովորաբար ազատ ոտանավորներ: Օրինակ՝ յամբական պարզոտնյա ազատ ոտանավորներ են հետևյալները.

Ուրախ լեր, սուրբ հկե՛ղեցի,	=4	ոտք, 8	վանկ
Քանզի Գրիստոս արքայն երկնից	=4	» 8	»
Այսօր պակեանց ըզքեզ խոչիւն իւրով	=5	» 10	»
Եւ զա՛րդարեաց զամուրբս քո	=4	» 8	»
Սքա՛նչելի փառօ՛ք իւրովք,	=4	» 7	»

էջ 462.

Այսպես և այս երգի շարունակության մեջ.

Մեկ վանկը երկարելով կարող է անցնել երկու վանկի տեղ, ինչպես, օրինակ, հետևյալ եռատուն բանաստեղծության մեջ.

1. Հա՛յր,	⁶	=1	ոտք, 1	վանկ
Բազումօղորմ,		=2	» 4	»
Խոստո՛վանիմ առ քեզ		=3	» 6	»
Որպէ՛ս զամա՛ռա՛լ որդի՛ն		=4	» 7	»
Թա՛ղ ինձ ք՛զմեզս իմ,		=3	» 5	»
Եւ ո՛ղորմեա՛ւ,		=2	» 4	»

2. Տե՛ր,		=1	» 1	»
Որ գր՛թացար		=2	» 4	»
Ի կի՛նն քանա՛նացի,		=3	» 6	»
Գրթա՛ և յիս,		=2	» 4	»
Ի մե՛ղաւորս		=2	» 4	»
Եւ ո՛ղորմեա՛ւ.		=2	» 4	»

3. Տե՛ր,		=1	» 1	»
Որ դա՛րձուցէր ըզմա՛քսաւորն		=4	» 8	»
Ի զի՛տութիւն ճըմա՛րտութեան		=4	» 8	»
Դարձո՛ և զիս,		=2	» 4	»
Ըզմո՛լորեանս,		=2	» 4	»
Եւ ո՛ղորմեա՛ւ.		=2	» 4	»

էջ 118.

Կան և ուրիշ ձևեր անապետական ուղեքրով և անգամավոր կազմու-
թյամբ: Ինչպես կարելի է տեսնել, տոգերի մեջ ուղեքրի ու վանկերի թիվը
հավասար չէ. ուստի դրանք կորոշ չեն կատարելապես նույն եղանակի
կրկնությունը երգվել: այլ բանաստեղծ-երգիչը հնարավորություն ունի
ազատ շարժվելու՝ հետևելով իր երաժշտական զգացումին: Կան բազմաթիվ
շարահաններ ևս, որոնց աների տոգերը կազմված են հավասարաթիվ սիթ-
մական ուղեքրից, կամ թե անգամներից: Բայց սրանց մեջ էլ վանկերի թի-
վը հավասար չէ: Եվ այդ անհավասարությունը կազմում է շարահանների
ոտանավորների առանձնահատուկ զեղեկությունը բազմազանությունը:
Այդպիսով մեր այդ հոգևոր երգերի մեջ աները մերթ հավասար երկար տո-
գերով են ընթանում, ծանր ու լուրջ, մերթ կարճ ու փոքրիկ տոգերով,
արագ ու թեթև սլանում: Եվ այդ է հենց այդպիսի ոտանավորների ութ-
մական հրապույրը, մանավանդ երբ այդ շարժումն խաղաղքը համապատաս-
խանում է բովանդակությանը: Ինչպես սկզբում ասվեց, այդ ոտանավոր-
ները հորինված են ոչ թե կարգալու համար, այլ հմուտ ճարտարապետու-
թյամբ կերտված հոյակապ տաճարների կամարների տակ, աղոթավոր բազ-
մություն առաջ, երգելու համար: Այդ ժամանակ այդ երգերը զորեղ ու
զեղչություն էին գոցում, քանի որ իրար միանում էին եկեղեցական ճար-
տարապետություն, կրոնական բանաստեղծություն ու երաժշտություն և
հավասարաչափների արտաբերի օրհնաբազմություն կամ լալազին ազոթը հա-
ռաչանքով ու հեծություն: Բայց լավագույն հոգևոր երգերի ընթերցումը,
էլ, նույնիսկ այժմ, ազդում է, թեպետ և դրանց գույն ու թափը տվողը
եղանակն էր:

Գրականության պատմության մեջ պետք էր որոշել շարահանների
բովանդակության և ձևի, այս դեպքում չափաձույթյան, միասնաբար
կրած փոփոխությունները կամ զորացումը: Բայց այդ կատարել հնարա-
վոր չէ այժմ, որովհետև հոգևոր երգերի ոտանավորների տեսակների զոր-
գացման ընթացքը կապված է այդ բանաստեղծության պատմության հետ,
իսկ այս հին շրջանում հորինված մեր հոգևոր երգերի ոչ հեղինակները և
ոչ դրանց հորինման ժամանակը գեթ պարզված չեն: Այսօր մի հին բանա-
ստեղծություն, ինչպիսին է մերը, որ շարունակ հազարակից է հեղել այլ
ազգերի բանաստեղծություններին, բնականաբար պետք է ընդունեն ուրիշ-
ներից և զորեղանքը զանազան չափեր: Այս խոդերն ևս, որ կարևոր է
պատմության համար, դեռ չի պարզաբանված: Եվ վերջապես՝ ինչ որ ավելի
ևս կարևոր է՝ մեր հոգևոր երգերը հորինված են, ինչպես ասվեց, ոչ թե
կարգալու համար, այլ երգելու և ամենայն հավանականությամբ երգվելով
են հորինված: Ուստի դրանց ոտանավորների կազմության և զարգացման
ընթացքի համար՝ գերակշիռ նշանակություն է ունեցել երգի եղանակը՝
Յավուդ, դեռ բողոքովին անծանոթ է մեր հին երաժշտությունը: Շարահանոցնե-
րում բառերի վրա դրված բազմաթիվ խաղերի ուսումնասիրությունը դեռ
մեզն է անելու և հին հայկական հոգևոր եղանակները հայտաբերելու:
Այս պայմաններում կարելի չէ այս պատմության մեջ պարզել, թե ինչ-
պես, ինչպիսի ժամանակաշրջանությամբ և ո՞ր բանաստեղծների ձեռով առաջ
են եկել և զարգացել մեր հոգևոր երգերի մեջ զորեղանակ չափերը: Կոմի-

թյուններին և հափշտակություններին համար, բայց դրանք չուտով եւ են մզվել: Երկիրը բաժանված էր մի շարք ինքնազուրկ հայկական իշխանությունների միջև, որոնց մի քանիսը թագավոր անունն էին կրում— Բագրատունի, Արծրունի, Սյունի թագավորներ, Բագրատունիները՝ Նույնիսկ Անու, Կարսի և Տաշիրքի թագավորներ, մի ժամանակ նաև եռյակ Արծրունի թագավորներ, և ուրիշները, Կային նաև մանկական բանակալներ: Արեւմուտքում տիրակալ էին բիզանդական կայսրները: Այդ մասը իշխանությունները երբեմն գտնվում էին միմյանց հետ և նույնիսկ զենքի էին դիմում, բայց ընդհանրապես հաշտ էին մնում, և հայ իշխանները մրցակցում էին երկրի շինարարության և մշակույթի զարգացման համար: Երկրում կրթական հալածանք չկար մանկականների կողմից, բայց Արեւմուտքում, կայսրության պատկանող մասում, հույների կողմից լինում էին ստիպմունքներ, որ քաղկեդոնականութեան ընդունեն հայերը: Դրա հետևանքով շատ հայ վանականներ Արեւմուտքից տեղափոխվում են հայկական իշխանություններ և հիմնում են նոր վանքեր Երևակում, Սյունիքում և այլուր: Հարյուրամյակը չլրացած՝ սելջուկյան թուրքերն արշավում են երկրի հարավային մարզերի վրա, մյուս կողմից՝ բիզանդական կայսրներն արեւմուտքից, հարավից ու հյուսիսից զբաղվում են անում: Այնուամենայնիվ խաղաղությունն ընդհանրապես զեւ չի վերջովում Հայաստանի միջնաշխարհում և արեւելյան կողմերում, և երկիրը շարունակում է բարգավաճել առնուհետեւ ու կուլտուրապես:

2. Կենտրոնացված տեղեկություններ Ստ. Տարեմեցու մասին և ճիշտ գրած Պատմությունը:—10-րդ դարի խաղաղ շինարարության յոթնամյակներից տարիների պատմիչն է Ստեփանոս Տարեմեցին, որ կոչվում է Ասողիկ (երբեմն նաև՝ Ասողիկ): Այդ մականունը, ինչպես կարծում են, նա ստացած պիտի լինի լավ երաժիշտ, երգիչ (երգ ասող)՝ եղած լինելու համար, բայց հավանական է՝ լավ բանասեր լինելու համար: Նա ապրել է 10-րդ դարի երկրորդ կեսին և 11-րդի առաջին կեսին: Անանիա Մոկացի կաթողիկոսի (943—963 թ.) ժամանակ ծաղկած վանքերի և նշանավոր վարդապետների մասին գրելիս՝ նա ասում է. «Ջուման ի սոցան է ի ծերութեան իւրեանց՝ ի աղայութեան մերում տեսաք այօք մերովք, հաշակելով ի քաղցր հաշակաց բանից նոցա» (էջ 178): Նա իր «Տեղեկության պատմությունը» գրել է Սարգիս կաթողիկոսի (992—1019) հրամանով, միտմամանակ և այդ կաթողիկոսի կարգադրությամբ զբաղված է հղել վանքերը շրջագայելով և եկեղեցու հոգսերով: «Յարածուփ յՂանք և հանապազորդեան հոգք եկեղեցւոյ, որ ըստ հրամանի ձեր,—գրում է նա իր գրքի վերջում (էջ 285), խոսքն ուղղելով կաթողիկոսին.— ոչ թողացուցանէին մտաց իմոց զետեղել ի պառլաւ հորինուած բանիւ, զոր կրեմ գիտաւ և զանարգանա, զգովութիւն և զպարտաւան ի ծանրութիւն և ի խտապարանոց ազդէս մերմէ, ի բարեխոհ և ի բղջախոհ մարդկանէ: Պատմութեանը գրել վերջացրել է 1004 թվականին. «Այս ամ երեքտասուն է հայրապետութեան Տեսան Սարգսի,— գրում է նա այդ թվականի համար,— տեղեկութիւն և մեծօշնորհ հովուապետի, զորոյ գնդամանն ընկալեալ՝ ի վեր քան զկար իմ՝ զնապատեղութեան արկեսն կատարելով՝ աղքատիմաց բանիւք՝ դրանս յիշատակիս գրեցի» (էջ 285): Նա մե-

ուել է անարդարօրէն ծերութեան առջիջում՝ ըստ Գրիգոր Մազիսարոսի հա-
ղորդածին:

Ստեփանոս Ասողկէն եղել է իր ժամանակի քանիբուն վարդապետ-
ներէից մեկը: Նա լավ տեղյակ է Ա. Գրքին, հմուտ է տոտվածաբանական
խնդիրներին, որոնցով սիրում է զբաղվել. հակառակորդ է քաղկեդոնական-
ներին, որոնք սկսել էին ոտնձգութեաններ և հալածանքներ անել հայե-
րի դէմ Արեւմտեայում: Նա սիրող է վանական կյանքի և նույնիսկ ճշնա-
վորութեան: Կիրակոս գիտնականի համար գրում է, թե բնակվում էր Նիզ
գամատի Թեղենիս կաթմոս անապատում. «առ հօր Երեմիայի ճգնաւորին
Քրիստոսի և ընկերակցին իմոյ» (էջ 186): Խնչպես վերնում բերված հաս-
վածից երևում է, Ասողկէն ունեցել է իրեն զովոյ բարեկամներ և անար-
դողներ ու պարսավողներ. վերջիններից շատ զօգու է եղել Պատմիչը,
բայց չի հայտնում, թե ինչից է առաջացել այդ անարգանքն ու պարսավը:
Դալով նրա երկին, պետք է տեսլ, որ նա հետևող է պարզ ոճին, չի սիրում
խրթնութեան և զարդարուն պերճաբանութեան, չի խնդում իր գրութեա-
նը բազմաբանութեամբ և ճոճութեամբ, շատ ճիշտ բնորոշելով ինքն իրեն
ըստ իր ժամանակի հայացքի, թե հորինել է «աղքատիմաց բանիւք»:

Ասողկի «Տիեզերական պատմութեանը բաժանված է երեք հանգեսի:
Առաջինի նյութը մի համառոտ պատմութեան է, հաճախ լուր ժամանակաբա-
նական մի ցանկ Իսրայելացոց, Պարսից, Պողոմյան, Հռոմայեցոց, Ասորես-
տացոց, Մարաց, Պարթեաց և Հայոց թագավորների: Երկրորդ հանգեսը
պարունակում է Հայոց կտրնաւոր պատմութեան ճրգատից մինչև Աղոտ
Ա., միաժամանակ և նա գրում է կաթողիկոսների մասին սկզբից մինչև
Գառնեցի Գեորգ կաթողիկոսը: Բացի այդ՝ նա համառոտակի խոսում է նաև
Պարսից Սասանյան թագավորների, Արաբացոց մահմեդեանների և Հունաց
կայսրների մասին՝ զննելով նրանց անունների ցանկը: Այս երկու հանգեսի
նյութն Ասողկը քաղում է, հաճախ բառացի, առանց քննութեան, «ի պատ-
մագրական առաւիցք», նախորդ պատմագիրներից: Որոնց անունները և հի-
շատակում է զբովածքի սկզբում: Նա երբեմն միեւնոյն դեպքը երկու անգամ
մեջ է բերում տարբեր կերպով, նայելով իր աղբյուրներին:

Երրորդ հանգեսը, որ հեղինակը կոչել է «Պատմութեան ժամանակաց
ինքնախոսութեան», պարունակում է 117 առով պատմութեան Աղոտ Ա.-ից
մինչև Գագիկ Ա. թագավորի ժամանակները: Օրա առաջին գլուխների պատ-
մութեանն ևս, որ վերաբերում են առաջին երեք Բագրատունի թագավոր-
ներին, նույնպես քաղված է նախորդ պատմագիրներից: Ստ. Տարոնեցու
իսկական «Ինքնախոսութեան» սկսվում է Արաւ թագավորի ժամանակից
(929 թ.) և հասնում է մինչև 1004 թվականը Գագիկ Ա.-ի տաանունհիշակե-
րորդ տարին: Այստեղ նա ինչպես մի ժամանակագրութեան կամ տարե-
գրութեան է հորինում, Առանց որևէ ներքին կապակցութեան, հաճախ մի-

¹ Օրինակ՝ էջ 74 պատմում է զբերի գյուտի մասին ըստ Կարյունի և ըստ Ղ. Փար-
պեցու և սրանց անուններն էլ հիշում է. հետո՝ էջ 139 և հա. ուրիշ աղբյուրից առնելով
գրում է. «Յժառարս որոտ [Սահակայ] զգրութեան Հայոց լեզուիս իՅ զիր ի Դանիելէ ժե-
լիտիայէ Ասորւոց կորգեցաւ, իսկ զհօթն զբոցն պակասութեան Մեարդը երանելի Տար-
նեցի խնդրուածսք յԱստուծոյ տանուս:

մանուշյն գլխի մեջ, խառն, իրար ետևից տարիններէ կարգով և տարինները հիշատակելով, մեջ է բերում ամեն տեսակի դիպվածներ Հայոց թագաւոր-նեի ու կաթողիկոսների և արաքացոց ու մանավանդ ըրգանդական իշխող-ների, Երբեմն բովական մոնրամոսն և ընդարձակ պատմում է իրեն հա-մար կարևոր երևացող դեպքերը: Ասողիկի Պատմութիւնն այս մասն առանձ-նապես հետաքրքիր է Հայաստանում կառարված շինարարութիւնն նկատ-մամբ: Նա բովականի տեղեկութիւններ է տալիս վանքերի, նրանց վանա-հայրերի ու նշանավոր վարդապետների մասին, նկարագրում է վանական կյանքն և կարգ ու կանոնը, հիշատակում է, թե այդ շրջանում որ վան-քերն են հիմնվել և որոնց մեջ ծաղկել է ուսումը: Շատ քան և շատերին նա անձամբ տեսել է: Խլաձորի վանականների մասին գրելուց հետո՝ նա ավելացնում է. «Առ որս եղեալ իմ յառաջս սուրբ քառասորդացն՝ գրեցի զքանս յիշատակիս այսորիկ սակաւուք, և զչափ ժամանակացս թուեցի ըստ կարիճ (էջ 175): Ասողիկի այս հաղորդումները, որոնք ծագում են վան-քերին մոտիկ ծանոթ պատմիչից, շատ կարևոր են պարզելու համար այդ դարի կուլտուրական վիճակն ու ոգին, որի մասին կլոսովի քիչ հետո՝ Նախ այստեղ գնենք երկու հաւոված տեղերու համար, թե ինչպես է նա հո-մինում:

«Եւ զհին Աբառայ թագաւորեացն Արտ արդի Նարա, որ և Շահանշահ կոչուի՝ ամս ԺԾ: Եւ Մուշեղ կոչուի Նարա առ Նախա թագաւորեաց ի Կարա: Այս Արտ թագաւորէր բա-րուք կտրեալ զարաբէն Հայոց՝ խնարհաւթեամբ և զարմաւթեամբ զանոցոց զամենե-ցումք. վասն զի զզնշաքեալսն և զկաղան և զկարսն հաւաքէր առ ինքն, բարձակից ին-քեան տանելով ի խրեմեանաւթիւնսն. զամեն ի Նաղանէ իշխանս և իշխանաց իշխանս և կիւրաղագոսս տնաւանէր և զբոնայր Նաղա. և զգոսն կարծիք և զվերս նոցա առաջի ա-յաց իւրոց փախանակ զարգուք և անանց փայլեաց համարէր: Այլ և զբարձն իւր թագա-ւորական բաղնիքոց մասաւոցանէր Նաղա, և յարժամ թարսի վերաց Նաղա խառնէր ընդ զին-ւայն՝ յայնժամ զմտացարգս Նաղա առեալ ինքն հաղկէր: Եւ այնքան առաւաճանաւթեամբ բոլրէր կարեակոյց՝ մինչև ի մահուսն իւրոյ աչ լինել զբամ մի ի գանձառան Նարա: Եւ ի զկաղանս զարգուցն և զբարձականացն և արժաց առաջ կարեակոյց: Եւ քաւանց զմեզո իւր սգորմաւթեամբ և զթով անանկաց (էջ 180 և հա):

Բերենք և հետևյալ գլուխը: «Եւ զարգս շար զարեոցն Մարառայ, և մահ Նարին: Եւ յարժամ յաջողեաց զարե թագաւորին Հայոց Մարառայ ի Ներքնաց և յարաւանոց, և մեծա-ցու յայժ ի յգլխաթիւն հաղի և ի լիւսթիւն զինւայ՝ անորեկեցու: Նա. բարձրացաւ սիրտ Նարա, և բարձրացաւ առաւել քան զինքն: Գարեկաց Նա երկու շարս զմեւարինս առ ի առ-սել և արժանի արտաւուց:

«Առաջին՝ զի այրեաց Նա հրով զայր սեռ անմեղ յայդդիս պատճառաւ եր նորա համ-բարեաց խառի և օրանի ի քաղաքն Անայ ի բազում ամաց կուտեալ, և լուցին զնա հրով: Եւ այր սեռ ի քաղաքին ցնաւեալ ի խելաց մաղապիթ զլուով՝ և աղօթէր Նա յառաւուռա-նալ ժաման յեկեղեցւոյն ընդ մաղապիթեանն. և ելեալ բաւանայր զբով հրակին, որով զինւանն բուրեցւոցանէին: Եւ ասին մարդիկ. «Ձիւն է այդ. և Նա առէ. «Երթամ այրել զմարա-րանոցս թագաւորին: Եւ կկեալ պատմեցին թագաւորին, և Նա հրամայեց՝ Նախ զայն փառել և աղա ձգով և եղբայր պատել և հրոյ հարակ տար Եւ արարեալ այնպէս՝ ընկեցին արաքայ քաղաքին: Եւ անաղաւաւար կրնուարաց ամենց ի քաղաքին հանդիպեալ՝ զլուրն լուսն և յողորմելի անտաթիւնն ժամանեցին. կամեցան հողոյ առ զգրեթուանէին մարմին, և թաղեցին ըստ օրինի քրիստոսնէից: Իսկ թագաւորն լուսնով ցոսմամբ մեծաւ քարկացաւ, հրամայէ ի դիւերի հանել և շտեղ ընկնեալ զգրեթուանէի մարմինն զխանձաղեալ: Եւ կրնու-արացն յառաւուռաւանս աւուրն կամեցեալ ելանել ընդ գուռն քաղաքին՝ երթալ ի բնակաւ-թիւնս իւրեանց, և ասեալ զնա զէշ դանց եղեալ՝ և մայնս բարձեալ՝ լային ի վերայ սպա-

մելի տեսութեանն. բարբառեցան և թագուարին անէծա ցաւագինս, և առ դարձեալ սըը-
տիցն՝ ուսացին. Վնայէս և նորա սոկեւոցն ելանել ի գեղեցմանէնս: Ար և կատարեցաւ իսկ,
«Եւ երկրորդն ի յարեացան՝ զի սահաց նա երգմանն, զոր հաստատեալ էր նա առ
ամբիբայն Գողթան, զոր նա ըստ հեթանոսական դէնի՛ն՝ պահաց, և առ ջրհոտոտական օրի-
նաց՝ ոչ պահաց. ալլ ռիխադարս՝ եղեալ՝ առ զգորտն Հայոց սգնական Սալարին՝ ամի-
բայացեալնէն զնա, որ մերժեալն էր յԱստուծոյ. եթէ ոչ էր խափեանալ ի կտակածնաց
նենգայ եղբոր իւրոյ Գողթայ:

Եւս երբեք չարն առեալքի իս է՝ զի զգուար ցուեքն իւրոյ էտտ խառնակութեամբ.
Դեւ ալսուս ամենայն չարեաց բարկացոյց նա զանբարկանալին Առաւած. և անգէն
հար Առաւածն ցաւամբ մեծաւ նախ զկինն զայն և հաստակեաց. և թագուարին կոծ մեծ
արարեալ ի յերայ նորա՝ Կարու և ինքն բարբառմամբ առաջ՝ բոցակէզ ցլաւաց. և մեծաւ
անգէն և թագեցաւ ի նմին ցաղաքի ի Նէլ Թուականին:

Եւս առա իկն օռն ի ցաղաքէն երազ պատմէր գաւուրս բազմամ, թէ ռժաղաւարն
թմբբանն զգողք զի ի գերեզմանի, և կենդանի է, և երեկցաւ ինձս, եւ համբաւն զգըր-
դէր զքեզացն ամենայն՝ մինչ եղբայր նորա Գողթի հրամայէ նայն առն, որ զգի տարեկաւ,
մեծերոյն հեան՝ երթալ, Կանել և անուանել, և պատմել ցաղաքէն և գորացն՝ եթէ ահա մե-
սեալ է: Եւ ալսպէս յայլմէ ալլ պատճառով զբան կրօնաւարացն կատարեաց Տէր, վասն
զի արգարապատ է՝ զմտնուարն առա՝ և զբովանդակն առ հանդիմեալսն հասուցանելով
մենեցուն: (Էջ 263 և հաւն.):

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ

1. Հասարակակեան-գաղափարային միջովայրը:—Գրիգոր Նարեկացու
բանաստեղծութիւնը լավ հասկանալու համար՝ պետք է նախ ծանօթանալ
այն հասարակական-գաղափարային մթնոլորտին, որի մեջ սնվել և ապրել
է նա, և որի արտահայտութիւնն է նրա ստեղծագործութիւնը: Գրոնական
էր այն դարի իշխող ոգին և ուղղութիւնը ոչ միայն մեր մեջ, այլև ընդհա-
նուր աշխարհում: Նրա գործացմանը մեղնում նպաստել էին եկեղեցու հայրերն
ու վարդապետներն իրենց քարոզներով ու կենդանի օրինակներով, իրենց
բովանդակեալական վեհերով ու կոնֆեսորով: Այդ պատրաստել էր նաև նախորդ
դարերի գրականութիւնն իր ամբողջութեամբ, երբ եկեղեցին իր ձեռքի
տակ ունեցած միջոցներով ձգտում էր ամբողջ քրիստոնեականութիւնը մի ա-
պաշխարող, աշխարհաւրաց դրութեան մեջ դնելու: Գրականագիտութեան, ապա
և մտեմբականութեան դեմ վարած կոնֆեսորի բովով անցնելով՝ հայ ժողո-
ղուրդն իր առաջավոր մասով յաւաքել էր արդեն քրիստոնեական գաղա-
փարները: Հարմար ժամանակ էր միայն հարկավոր, որ այս կրօնական
օգին իր բոլոր թափով երևան գար հայկական կյանքի մեջ և առաջ բերեր
իր փայլուն գեղարվեստն ու գրականութիւնը: Եվ այդ լինում է Անուս Եր-
կաթի մահից հետո, խաղաղութեան դարում, երբ հալածման էր կազմում
բոլոր հոգիների էութիւնը: Երբ արդեն ընդհանրապես իշխում էր քրիս-
տոնեական աշխարհայեցողութիւնն Աստուծու և Ստատանայի, մեղքի և քա-
ղութեան, դրախտի և դժոխքի, այս աշխարհի և այն աշխարհի մասին. երբ
թագավորում էր աշխարհի ու կյանքի ունայնութեան գաղափարը, իրական
աշխարհը երազ էին համարում, կամ, ժամանակակից Պատմագրի խոսքով,

¹ Մ. Արեգյան, ՎՊ. Գրիգոր Նարեկացու, Վեպագրական Հանգես, ԽՊ գրքը:
Թիֆլիս 1927, էջ 83—135:

աստուեր զկենսա աշխարհիս համարեալն: Իսկական աշխարհն ու կյանքը և մարդուս բուն հայրենիքն, ըստ այդ հայացքի, հանդերձյալ հավիտենականն էր, դրախտային աշխարհն ու կյանքը մահից հետո: Իսկ դրան արդեւ էր լինում մարմինը. դրան հասնել կտրելի էր միայն մեռնելուց հետո: Աւերմն պետք էր «հանապազումեռիկ կյանքով» մեռնել մարմինը, կենդանի մեռնել, տանջանքների ենթարկելով իրեն: Եվ մարդ որքան ավելի ապաշխարեր, տանջեր իրեն քաղցով ու ծարավով և այլ միջոցներով, այնքան ավելի լավ՝ հոգու համար:

Հոգու այս կտիվը մարմնի դեմ և մարմնի ոչնչացումն իր գործնական արտահայտությունը գտնում էր ամենից առաջ վանական և ճգնափորակուն կյանքի խառնակեցության մեջ. նախորդ դարերում էլ շինված էին շատ վանքեր, բայց վանքերի թիվը խիստ բազմանում է, և վանականությունը դորանում է առանձնապես 10-րդ դարում: Առաջ Երկաթի եղբայրը՝ Արտաթագավորը (929—953 թ.), ինչպես ասվեց վերևում, ըստ Ստեփանոս Ծարոնեցու, մեր աշխարհի համար շինության և խաղաղության պատճառ է դառնում: «Ենայն ժամանակի ծաղկեալ պայծառանայր կարգ կրօնաւորական հոնդիսից յաշխարհիս Հայոցն: Շատ տեղերում շինվում են եղբայրանոցներ, և համախմբվում են մեծ բազմությամբ միաբաններ. այսպես՝ Կամրջաձորի վանքն Արշարունիքում, Հոռոմոսի վանքն ու Դպրեվանքը Շիրակում, Խլաձորի վանքը Դերջանում, Հնձուց վանքը Կարինում, Մովսիսի վանքը Կարբերդում, Թախաց քարի վանքը Վայոց Ձորում, Նարեկի վանքը Ռշտունիքում: Նույն կրօնավորական-շինարարական գործն ավելի մեծ եռանդով շարունակվում է և Աբասի հանրադի, նրա որդի Առաջ Գ-ի օրով (953—978 թ.): «Ենաւորս սորա շինեցան կրօնաւորանոցք, ճգնաւորականաց տեղիք Անաւորդեաց աշխարհին... որոց երկոցունց տեղեացն անուանք Հաղրատ և Սանահին... միտկրօնք ի տան Աստուծոյ՝ արանց հինգ հօրիւրոցն: Շինվում են և ուրիշ վանքեր, կամ հները նորոգվում, ինչպես՝ Վարագա ուխտը, Ձորո վանքը Վանի մոտ, Ապարանից վանքը Մոկսում, Շողագոյի վանքը Գեղամա գավառում, Մարմաշենի վանքը Կումայրիի մոտ, Սևանա վանքը: Ավելի վաղ Աղթամարի Սուրբ Խաչը հիմքից վերաշինում է Վասպուրականի թագավոր Գագիկը և մեծ շքեղությամբ, քանդակներով ու պատկերներով զարդարում ներսից ու դրսից: Նույնը կատարվում է և ուրիշ կողմերում: Սյունիքում, օրինակ, նորոգում կամ նոր շինում են բազմաթիվ վանքեր, ինչպես. օրինակ, 906 թ. Տաթևի վանքը, որի համար Ստեփանոս Օրբելյանը՝ գրում է. «Երևելի էր ի մէջ ամենայնի ոչ միայն շինուածովք. այլ և պայծառանայր քահանայական և կրօնաւորական դասուք ի չափ հինգհարիւր եղբայր. լի էր և ծովամատոյց փխստփայլեք երամշտական երգոց, ճոխ էր և վարժարանն վարդապետական կրթութեամբն. նաև արհեստաւորք նկարչացն և զրուդաց անհամեմատք: Այս վանքի եկեղեցին հետագայում ևս՝ 930 թ., նկարագարվում է. Այսպես ծաղկում էր վանական ճարտարապետությունը՝ քանդակագործության, նկարչության ու երաժշտության հետ:

Ս. Օրբելյան, Պատմութիւն Նախնային Սիսական, Թիֆլիս 1910, էջ 226.

Բացի վանքերից իրենց տաճարներով՝ շինվում և զարդարվում էին բազմաթիվ հույակապ եկեղեցիներ քաղաքներում ու գյուղերում, ինչպես՝ Կարսի եկեղեցին, Անի քաղաքի Կաթողիկեն և Ս. Գրիգորի եկեղեցին Զվարթնոց եկեղեցու ձևով, Արգիշայի եկեղեցին և կաթողիկոսարանը, ուր և կազմված էր մասենադարան, և ուրիշները, Կառուցվում էին և բնակավայրային գեղեցիկ շենքեր, քաղաքներն ամրացվում հզոր պարիսպներով և ալյն, բայց գլխավոր ուշադրությունը դարձնում էին եկեղեցական, կրոնավարական շենքերին, Կաթողիկոսները, նրանց ազդեցությամբ և իշխանները, հովանավորում էին կրոնավարությունը, Այդ համարվում էր մի բարի գործ սոցուփրկության համար, Այսպես, օրինակ, Կարսի Արամ Թագավորի համար (984—990 թ.) Ստեփանոս Առողիկը (էջ 197) գրում է. «Եւ ապա խորհուրդ բարի կալեալ յանձին՝ շինել վանս ի փրկանս տնձին իւրոյ և ի յիշատակ հոգւոյ յաւիտենական։ Եւ ընտրեաց տեղի ընտրանաւ ի գլուխս Արշարունեաց գաւառին, որում Շիրիմն կոչիւր. և ընդարձակադոյն պարսպեալ որձաքար վիմօք, չորեքկուսի ձևով, յիւրոց գանձուցն մեծածախ աշխատութեամբ յարեալ գամենայն շինուածսն պիտոյից ի բնակութիւն կրոնաւորացն, Նույնպես վարվում էին և իշխանահայերը, Այսպիսի հովանավորությամբ բազմանում և ամեն տեսակ նվերներով ու կալվածներով հարստանում էին վանքերը, Այդ անհրաժեշտ էր հոգևորական դասի համար, մանավանդ կաթողիկոսների ու եպիսկոպոսների, որոնց իշխանության հենարանն էր կրոնավորությունը. դրանով նրանք քաղաքական մեծ ազդեցություն էին ձեռք բերում, իշխում էին Թագավորների ու մյուս փոքրիկ տերերի մաքի վրա, Ուստի վանքերը լցվում էին հարյուրավոր աղամարդկանցով, որոնք կարվում էին աշխարհից և իրենց նվիրում էին բարեպաշտության գործին, Կուսանոցներ չեն հիշվում, բայց վերոհիշյալ Արամի մոր համար գրում է Առողիկը, «Իսկ մայր Թագաւորին Արասոյ, բարեպաշտուհի ի բարեպաշտ ծնողաց, որ էր քոյր Թագաւորացն Փառիսոսոյ Անեքեքրիմայ և Գրիգորի, ի բաց ընկեցեալ գերկրաւոր պսակն և յոչինչ համարեալ զփառս տնցաւորս՝ ընթանայր զհետ երկնայւորին. զվարս կրոնաւորութեան յանձն տռեալ՝ երթեալ բնակէ ի տեղին, որ Թրին վանք կոչի (զի են եկեղեցիք փորածոյ ի սպիտակ քարի ընդդէմ հարաւոյ)». և ազօթից և գործոց բարեաց պարսպեալ և հոգևոր առաքելութեան։

Վանակոսներն ապրում էին միաբանական կյանքով. հետևելով Ս. Բարսեղի սահմանադրությանը՝ ոչ մի սեփականություն չունէին. «Էր նոցա ամենայն ինչ հաստրակացն, հաւասարակեացք, միաբանականքն, իրենք իրենց ենթարկում էին ամեն տեսակ զրկանքների ու նեղությունների, Երբեմն հազնում էին աղքատի ղեկ գծուծ զրգյակներ, մարմինները տանջում էին քրձով ու խորդով, մասն էին գալիս բորիկ ոտներով, ճգնազգեստ խոնարհազարդ վայելչութեամբ զարդարեալք ի ճաշակս անճաշակ, մի անգամ միայն յաւուր ճաշակեալ և զովացեալ ջրով ի շաբաթու և ի կիւրաակէի արքմամբ յաւուրս սուրբ քառասնորդացն, Ոչ ոք հասարակաց սեղանից զուրս բերանը բան չէր գնում, ոչ միրգ և ոչ նուշխակ դալար խոտ. «Ոչ ստանալ մարդոյ ինքեան և ոչ խերեկչ մի. ոչ ճաշակել ուրուք քան զհասարակաց սեղանն, ոչ ի մրգաց և ոչ ի դալար խոտոյն, Այսպես իրենց անձը

չափազանց պահեցողությամբ ճնշելով՝ իրենց զրկում էին և քնից, Ամբողջ գիշերներ տքնությամբ և հոկումով էին լուսացնում, որովհետև ցերեկը գործում էին ձեռքով, միաժամանակ և աղոթում, իսկ գիշերը մինչև լույս սաղմոսում։ Գործել և ՂԴաթեան նուազան հնչեցուցանել ի գիշերի և ի տունջեան, կամ ինչպես ուրիշ տեղ մեկի մասին գրում է Ասողիկը. «Ի տուն է և ի գիշերի աշխատէր ի մշակութիւն տեան, գործել ձեռք և սաղմոսել բերանով ցայգաւորած բազկատարածութեամբ, արաւորիջոյց ողորովը լցեալ զաւուրս»։—«Եւ սոցա ժյա սործ նահատակութեան»,—ուխացնում է Պատմագիրը վանականների նկարագրի վերջում։ Սովորաբար այսպիսի ողբագին տխուր կյանքով էին ապրում վանականները, նրանց թույլատրվում էր զվարթանալ միայն որոշ տերունական տոներին, ինչպես՝ Քրիստոսի Մշնդաւն, Հարության և Վարդավառի։ Անշուշտ, ոչ ամենքն այդպիսի խոտակեցությամբ էին՝ օրերն անց կացնում։ Բայց և այնպես՝ այս մարդիկն ընդհանրապես ամեն ինքնասիրական և մարմնական հոգսերից ազատ լինելով՝ միայն մի հոգս ունեին. որքան կարելի է, շատ տանջել իրենց և, որքան հնարավոր է, շատ «զարդարիլ» ողորմածության զարկերով։ Որովհետև հավատում էին, թե ամեն արած ողորմության համար վարձ պիտի ստանան այն աշխարհում (ուստի և վարձք բառը ստացել է «ողորմություն» բառի նշանակությունը)։ Այդ պատճառով և նրանք աշխատում էին, իրենց ձեռով անձամբ մշակում էին վանական ընդարձակ կալվածները, պահում վաճառանքի առարկաները, բայց իրենց աշխատածն իրենք չէին ամբողջապես վաճելում, այլ մասամբ բաշխում էին ուրիշների։ Լինում էին և այնպիսիները, որ երբ ազատների էին հանդիպում, համում էին իրենց հագի զգեստներն և նրանց հագցնում։ Հոնգստյան տեղ և սնունդ էին տալիս ամեն անցորդի ու ճանապարհորդի և օտարականի, որոնք կարող էին վաճարում օթեանի ինչպես իրենց տանը։ Այս դեպքում «վաճը» ծառայում էր իր սկզբնական նշանակությամբ իբրև օթեան, «խլեան»։

Շատերն այսպիսի միտքանական ճգնությամբ չէին զոհանում, քաղվում էին ամառի լեռներն ու անտառները, անապատները, միայնում քարանձավների ու խոռոչների մեջ, ուր անավազությամբ ապրում էին օրերով, «մոռեալ ի կենդանութեան և ի սահու զկեանս քարոզեալ»,—գրում է Ասողիկը։ Այսպիսիներն իսկապես գիշեր ցերեկ միայն աղոթելով էին պարապում «վերնական» ներքին խոսակից լինելով, ըստ Գրիգոր Նարեկացու Դա աղան միստիցիզմ էր կրոնական ֆանազիայի բնագավառն իր տեսիլներով ու հափըդտակությամբ, երբ մենակացներն ու վանականներն իրենց խուցերում բոլորովին երկակայությամբ հավատում էին, թե հաղորդություն, հաղորդակցություն են ունենում հրեշտակների, նույնիսկ աստուծու հետ. տեսնում են նրանց, խոսում նրանց հետ և լսում նրանց ձայնը։

Այս բոլորի հետ միասին՝ այդ մարդիկը հոգեպես էլ հանգիստ չէին, այլ շարունակ տանջվում էին իրենց երկակայության ստեղծած սարսափներով, սատանայի փորձանքներով։ Զկար գիտություն, որ խոհականությամբ զրուպեւ նրանց հիվանդագին երկակայությունը և հովաստակչություն մտքներ նրանց կյանքի մեջ։ Արդարև վանահայրերը հաճախ լինում էին օւսեալ մարդիկ, հիշվում ենք և նշանավոր գիտնական վարդապետներ, բայց

նրանք իրենք ենթակա էին միատիկական հավատալիքներին, նրանց ուսումն ու գիտությունը սահմանափակված է եղել հոգևորով. նրանք հրմտություն են սննդել միայն Ս. Գրքի և առհասարակ կրոնական գրականության, և նրանց գործն է եղել մի կողմից՝ խոսքով ուսուցանել կրոնական գիտելիքները, քարոզել աստուծո պատգամները, մյուս կողմից՝ ավելի մեծ խտանկեցություն բարի օրինակ դառնալ եղբայրներին իրենց ճշգնություն մեջ:

Եւրին և վարդապետք վարժեալք վարդապետութեամբ Տեառն և ուսուցիչք ճշմարտութեան,—գրում է Ասողիկը (էջ 178).—Բաւրիւոս ձերուներն, քաջակորովի ի խօսս ե քաջաքարոզն ի պատմել զօրէնս Տեառն. և Գրիգոր քահանայ յամուսնացելոց, յորդախօսն և առատաբանն ի պատգամս Տեառն. և Ստեփանոս, աշակերտ Բարդղի, որ Հոգևորն կոչեցաւ, առաքելաշնորհ բանիւ և գործով. ընդ սմա և մեծանունն ի գիտութեան և յառաքինութեան Մովսէս, որ քառասուն աւուրքք ձգտեցուցանէր քանսուաղութիւնն: Եւ Դաւիթ աղքատակերպ և գծածաւէր գիտնականն, որում տնուն Մաշկոտն կսչի. և Պետրոս, հաւաստի մեկնիչ Գրոց սրբոց...: Այսպես և Կաթնաձորի վանքի վանահայրը՝ Բիմաստակն Ստմուէլ, բազմաշնորհն ի գիտութիւնս Գրոց սրբոց և յերգս երաժշտութեանց: Մի ուրիշի. Խլածորի վանքի վանահայր Բարսեղի համար գրում է Պատմագիրը, թե լցնում էր զգամենեցուն զպապականութիւն կամ զվերականգնութիւն գիտնական և իմաստնական հանճարով: Նույնպես և Կարբերգի Մովսիսավանքը հայտնի է եղել զբազմապայժառ և բանական իմաստնովք: Նույնպես և Դպրեվանքը, Խաչիկ կաթողիկոսի օրով հայտնի են եղել մի քանի վարդապետներ՝ «Յովհաննէս՝ խաչակիրն Գրիստոսի, որ տկար բանիւ և մեծ գիտութեամբ բացայայտէր զգիտութիւն Գրոց սրբոց... Հանգոյն նմին և առատ գիտութեամբ գերաժառքաւ հայրն Յովսէփ, առաջնորդ ուխտին, որ Հնձուցն անուանի վանք, ի Կարին գաւառի: Եւ Կիրակոս գծածակերպ գիտնականն... որ բնակէր յուղակի յանապատին, որ Թեղեմիսն կոչի; ի Նիգ գաւառի... Եւ վայելաբանն Սարգիս յաշխարհէն Աղուանից, որ ի մանկութենէ զԳիրս սուրբս ի բերտն առեալ, և ձերացեալ աղոյ: Եւս և Յովհաննէս քահանայ յամուսնացելոց» (էջ 185 և հտ.): «Եւ առաջնորդ Ստաննի՝ Յովհաննէս գիտնական ալրն Աստուծոյ:

Այս զգիտնական վարդապետներին (ուսուցիչներին) մօտ ժողովվում էին երկրի զանազան կողմերից բազմաթիվ ուսումնասիրող երիտասարդներ, որոնք ամենայն սիրով ու ջանքով, տանելով ամենայն զրկանքներ, աշխատում էին ուսում ձեռք բերել, և ձեռք բերածները լինում էր ծանօթություն ս. Գրքերի, սքոլաստիկական նրբամիտ մեկնություններ ու դավանաբանական վեճերի մասին տեղեկություններ: Նրանց մի մասը Յնում էր հենց վանքերում՝ նվիրվելով ճգնական խտանկեցությանը. իսկ ուրիշները վերադառնում էին աշխարհային կյանքին, կամ դառնում էին քահանա, և իրենց ամբողջ կյանքում շարունակում էին ոլորտալ իրենց ձեռք բերած ուսումը և տարածել աշխարհում, ու միշտ երանի էին տալիս իրենց երիտասարդական վանական կյանքին:

Եվ ահա այսպիսով եկեղեցու բժմից քարոզով և վանական կրթություն ստացած աշխարհականների միջոցով ճգնավորական աշխարհայացքը թա-

փանցում էր նաև Թեոդայական հասարակության մյուս երկու գասերի—աշխարհականության մեջ, Միաթամանակ զարգանում էր և մի նոր դասակարգ՝ առևտրով հարստացած քաղաքացուքյունը, իմ եթե ազնվականն ու փարթամ քաղաքացին մի կողմից՝ սանձարձակ ազատություն էին տալիս իրենց անասնական կրքերին՝ զրկում ու կեղեքում էին, գանձի ու հարստության, զվարճության, շվայտ կերուխումի ետևից էին ընկնում, ասում էին կամ լուծում գուսաններին ուրախության ու սիրո երգեր, մյուս կողմից՝ սակայն, նրանք անձնատուր էին լինում նաև կրոնական բարեպաշտական գործերի՝ վանքեր շինել, եկեղեցուն նվերներ տալ, աղոթել, եկեղեցի հաճախել, աղքատներին խնամել և նույնիսկ, ինչպես բերվեց վերևում, Աշոտ Գ. ի պես սղորմածության գործերով զբաղվել, Հնարությամբ մի ծայրահեղությունից մյուսին էին անցնում, Մի ծայրահեղությունը ժողովրդաբարբերում էին կոպիտ, բարբարոսական բարքերի շրջանից, իսկ մյուսն արդյունք էր եկեղեցու վանական-ճգնավորական ազդեցության, իմ այս ազդեցությունը ոչ միայն բարձր դասակարգի՝ թագավորների և ազնվականների վրա էր երևան գալիս, այլև քաղաքացու և ուսմկի, և ազնվական ու ուսմկի հավասար պատկառում ու վախենում էին կրոնավորներից, որոնք և՛ սուրբ, և՛ հրաշագործ էին համարվում։

Ժամանակի սնուտի պաշտական ոգին ճգնավորներին ու վանականներին զարդարում էր հրաշալի պատմություններով, Մեկը, Կարմիր Հայր, մի ավերակ եկեղեցու մեջ տղթքով սատկեցնում է մի վիշապ, որ շրջակա բնակիչներին համար սարսափ էր դարձած. մի ուրիշը, Վարդիկ Հայր, հնազանդեցնում է առյուծին, որ բերում է նրան եղջերուների կաշի և իր երկու կույր կորյուներին նրա տաշին է ձգում. սուրբը ձեռք վրան զնեղով բժշկում է նրանց կույր աչքերը, Այսպիսի կրոնավորների աղթքն եթե հրաշագործ էր համարվում, զարհուրելի էր անեծքը, որ հավատում էին, թե անպայման պիտի կատարվի, նրանք գրանով իշխում էին ուսմկի և ամենքի մտքի ու երևակայության վրա, Այդ անեծքն է, որ, ինչպես բերվեց վերևում, գրգռում է բազմամարդ Անի քաղաքի ամբոխին և ստիպում Գաղիկ թագավորին գերեզմանից հանելու իր նոր թաղած եղբոր՝ Սմբատ թագավորի գին։

Վանքերում ուսածները մեկ մեկ նաև զբաղանում էին պարուպում, Այդպիսիներից մեկն էր Ստեփանոս Տարոնեցին. մեկ ուրիշը՝ Մեսրոպ երեց¹, որ ծագվաքաղ անելով հորինել է Մեծն Ներսես կաթողիկոսի պատմությունը։

Այս հեղինակն ինքը հիշատակարան է մեջ գրում է. «Ի ՆԺՁ [1067] Թուականիս Հայոց և ի վերադարձութեանն տեսան Վանանայ Հայոց կաթողիկոսի, և յամա Աշտոյ Բագրատունայ Հայոց Թագուսի ի սանէն Երեմկայ, ևս Մեսրոպ Նուստ քահանայ ի Վայոյ Զորոյ ի գեղջէ Հոգեցմանց, ուստի Յովսէփ էր երանելի Նահատակն յաւուրս սրբոյն Վարդանայ. մեծ ցանկութեամբ ծագվաքաղ արքի գգիբքս զայս ի Հայոց Թագորդաց, յԱրեւելից գրոց. զյաղթութիւն և զվաթարութիւն Թագաւորացն Հայոց և Վրաց, և զուսածիւնութիւն և զգեանելիս հայրապետաց առհմից սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և գետնի

¹ Պատմութիւն սրբոյն Ներսիսի Գարթի Հայոց հայրապետի, «Սոփեբք Հայկականք», հատոր Զ. Վենետիկ, 1833.

և զկտակ սրբայն ներսեան, և զյազթուգիւն և զքաջութիւն արեւմտեան ազգին Մամիկոնէից... Եւ արդ զայս նանեալ յԱրեւիկէն գրող ի Հայոց Թաղաքապետն պատմութեանց, և ետաւ սրգիսցեալ իմյաւ սուրբ աւագանին ժնչգեմամբն՝ Վանաւոյ Մամիկոնեանայ, ի զիւրն որ կան զի Վարժիւն:

Հիշված րազմաթիւ վանքերից ու վարդապետներից առանձին ուշադրութեամբ և զբաւոյն Նարեկեայ վանքի և զբաւ վանահայր Ամեմիտ Նարեկեայի, որի համար գրում է Ասողկը. «Անանիա, փիլիսոփայն մեծ, որ և վանական Նարեկի, Սորա և զիրա է առաջեայ ընդդէմ աղանդայն Թոնդրակաց և այլոց հերձուածոցն: Այդ վանքը, ինչպէս և շատ ուրիշները, շինվել է Անանիոս Մոկացի նշանավոր կաթողիկոսի օրով (941—965 թ.)»։ «Այսպէս և յայսմ ժամանակիս շինեցաւ Նարեկ ի Ռշտունեաց գաւառին նոյն կարգաւորութեամբ, բազմապարզ պաշտօնապայծառ երգեցողովք և գրեկեան գիտողօք: Անանիա Նարեկացին, ուրեմն, հոգ է տարել իր վանքում, իր աշակերտներին մեջ զարգացնելու պարականագիտութեանն ու՝ «երգեցողութեանն»։ Ինքն Անանիան էլ պարապել է գրականութեամբ, հորինել է մեկնութեաններ, հառեր, «շաւատարմատ որ ընդդէմ երկարնականն»։ Նրանից մտում է և «Գիր խոստովանութեան»։ Նրա զարդի աշակերտն է Գրիգոր Նարեկացին: Անանիա Նարեկացեաւ աշակերտն է և Ուխտմեմն եպիսկոպոսը, որ կոչվում է «Եպիսկոպոս Սերաստացեաց»։ Նրա զբքի երրորդ համովածը պակասում է ձեռագրի մեջ, իսկ երկրորդը թերի է: Սա պաշտօնական գրութեանների մի ժողովածու է՝ «Գիրք թղթոցիք» տեսած:

Գրքի վերնագրէն է՝ «Քառամութիւն յերէն հասուած, զոր առաջեայ է տեսն Ուխտանիս Սե [բառացեաց] եպիսկոպոսի՝ ի ինչորդ հարն Անանիայի Նարեկավանաց առաջնորդի և նախաւոր վարդապետի, հասուածն առաջին՝ յաղագս թագաւորաց և հայրապետաց մերցի, և երկրորդ՝ վասն բաժանման Վրաց, և երրորդն՝ յաղագս մկրտութեան ազգին այնմիկ Ստգն կոչեցեալ: Առաջին համովածն առաջին զյիւր վերնագրէն է՝ «Գառաւորանի թղթոյն Անանիայի և խառաւի կառարել զհացուածն նորան (էջ 118): Այս ընդարձակ և իր անուակի մեջ առանձնահատուկ նամակից իմացվում է, որ Ուխտանեայց եպիսկոպոսն Անանիա Նարեկացեաւ աշակերտը՝ «զոյ յետին և արուպ աշակերտս, կամ թէ որդիս, թէ ախորժելի է քում պատմութիւնութեանց, և կամ թէ ինչ համարեալիցի՝ անուանեալս Ուխտանեայց (էջ 10): Նա աշակերտական անհամութեամբ իմացեալն զամբում է Անանիային, անվանելով նրան «կատարեալ և աստուածային շնորհի պայծառացեալ, և երկուց օտար հոգւոյն աւրդեալ զխառութեամբ, և հոգեւորական երգով զհեղձում և զգեղում և զեր ի վերայ քան զամենեւն, և ամենայն պատմութեանց աստուծոյ հասեալ և հաստատեալ քան զբազմոս, ով աստուծոյց որդի է վանական տէր իմ տէր, և արեւելեական վարդապետ, իբր ծառ իմ բազմապատկառ և բարեւ ի մէջ վայելեալ և աստուածատուին զբարեւոր նարեկայ կոչեցեալ ուխտի, սողաբիմ տեսալ և վարդապետայ վարուց առաջնեանութեամբ, և ծաղկեալ ի տես տեսանք, և այլն (էջ 8): Անանիան, ինչպէս երեւում է այդ հետաքրքիր նամակից, ընդարձակ է իր աշակերտներին գրականութեամբ պարագլուխ: Նա նախ բերանացի հարգարել է Ուխտանեայց պատմութեան գրեւոր. «Այդ քանզի ի ժամանակն յայնմիկ, յարժամ եկիք առ աստուծոս պատմութեան և սուրբ հայրապետան մեր Թաշիկ՝ բերելով նմա ընծան և պատարագ հոգեւոր զգիւրն Հաւատարմատ սր ընդդէմ երկարնականն, զոր է ինչնայն խօսեալ ի խորհուրդ հաւատոյն»։ և բերան ի բերան խօսեցար ընդ իս յաղագս պատմութեան...: Եվ Ուխտանեայց մի առ մի հիշեցնեալ է որն ու ժամը և տեղը—Ախուրյան գետի եզրին նստած—երբ Անանիան ուղեցել է, որ նա պատմութեան գրի (էջ 11 և հա.)։ Հետո էլ նա Ուխտանեայց նամակով հիշեցրել է այդ մասին:

1 Ուխտանեայց եպիսկոպոս, հասուած առաջին, Գառաւորան Հայոց, Վարդապետ, 1871: Հասուած երկրորդ, Գառաւորան բաժանման Վրաց ի Հայոց, Վարդապետ, 1871:

կրօնավորական ոգին առաջ է բերել նաև իր պեղեցիկ արտահայտութ-
յունն արվեստի միջոցով: Եղել են, ինչպես տեսանք, երգեցողներ, որոնք
անպայման հորինել են տաղեր, եղանակ դրել, և անձամբ երգել: Բայց
այդ տաղերը պոքերի մեջ շարտադրվելով, մեծ մասամբ չեն պահվել, Մնում
են միայն այդ դարաշրջանի եկեղեցական ճարտարապետության ու քան-
դակագործության ճանաչողները, որ այժմ հիացում են պատճառում մաս-
նագետներին և մեր հին մշակույթի պարծանքներն են: Ապագայի ուսում-
նասիրությամբ պիտի ցույց տրվի այն սերնդն, որ եղել է ժամանա-
կի կրօնական ոգու և իր այդ քարեղեն արտահայտության մեջ, նույն գա-
րում ծաղկել են նամանակաս և նկարչությունն ու երաժշտությունը, բայց
ժամանակը երաժիշտների ու նկարիչների անունները չի պահել:

Էլիզավետ է միայն նշանավոր ստորադաս Տրդատի տունը: Առաջինը գրում է. «Ար-
հան է [Թագաւորն Մժրտա] հիմն և մեծաշէն եկեղեցւոյն ի նոյն քաղաքին Անայ ի ձեռն
ճարտարագետին Տրդատայ: Եր զկաթողիկոսութեանն եկեղեցիքն շինեաց յԱրքիւնայ» (էջ 187):
Այս նա պատմում է, թե 980 թ. մեծ երկըշարժից Կ. Պոլսում կոթածում են շատ
եկեղեցիներ, հայն ինքն Սոփիայն, որ կաթողիկէն է՝ հերանիւր պատամամբ վերստա
ի վալը: Վառն որոյ բազում ջան եղև արհեստաւոր քարտաքցն Յունաց առ ի վերո-
ւին նորագործ Այլ անդ պիտեալ ճարտարագետին Հայոց Տրդատայ քարագործի՝ առ յարե-
նակ շինուածսն, ի ժառանգն հանձնարով պարտաւորաւ զկազաղաքս կազմածսն և սկզբը-
նաւորեալ զշինելն: Եր և զեկեղեցւոյն շինեցաւ պայծառ քան զառաջինն» (էջ 260 և հալ):

Շատ ավելի բախտավոր չի եղել և բանաստեղծությունը, որից Յու-
ցել են միայն Գրիգոր Նարեկացու մի քանի տաղերն և Ողբերգությունը՝
Բայց այդ քիչ մեջ էլ արդեն տեսնում ենք, որ մինչ շարականները զուրկ
են ինքնուրույնությունից և իրական կյանքից ու բնությունից, այժմ մի
խակառիկ քնարերգություն է առաջ գալիս, որ մի կողմից՝ երգչի իրեն
սիրտն է բաց անում մեր առաջ, մյուս կողմից՝ հետևելով կյանքի իրա-
կանությանը, իր մեջ անդրադարձնում է հենց այն կրօնավորական ոգին
և ճգնավորական միտախի աղյուսահայեցությունը, որ ունեցել են նրա դասի
մարդիկը—հազարավորներ ու բյուրավորներ:

Գրիգոր Նարեկացին մեր առաջին մեծ բանաստեղծն է:

2. Կեմտագրությունը:—Գրիգոր Նարեկացու կյանքի մասին շատ քիչ
տեղեկություն ունինք: Նա եղել է կրօնավոր Նարեկա վանքի, որ, ինչպես
տեսանք, նշանավոր է եղել քաղաքագրի պաշտօնապայծառ երգեցողությամբ և
զրական դիտողությամբ: Երգիչ և գրագետ Գրիգորի անունը, սակայն, չի հի-
շատակում ժամանակակից Պատմագիրը, որովհետև այն միջոցին, երբ Ասո-
ղիկն իր Տիեզերական Պատմությունը վերջացնում էր, Գրիգորը դեռ նոր
էր հորինել և հրատարակել իր Ողբերգութիւնը, որով իսկապես հաշվե-
վել է նա:

Նրա հայրն էր Խոսրով Անձևացեաց կաթողիկոսը՝ ժամանակի նշա-
նավոր անձերից մեկը, հմուտ եկեղեցական գրքերի, գիտուն մի մարդ,
որից Մուսմ են «Մեկնութիւն ժամակարգութեան» և «Մեկնութիւն

1 Տե՛ս՝ Երգաց Երգի մեկնության հիշատակարանը, Գրիգորի Նարեկացու Մասնահա-
ղութիւնը, Վննակի, 1840, էջ 287:

Քննարկողը սրբոյ պատարագին: Վերջինիս հիշատակարանի մեջ ինքը Գրիգորն ալսպես է գրում իր հոր մասին: «Շնորհին Աստուծոյ եղև մեկնուած ինն ալսմ գրոց ի ձեռն Խոսրովայ Անձևացեաց եպիսկոպոսի, յոյժ հետևողի պատուիրանացն Աստուծոյ: զոր մեզ և զովել անճառ է, զի մի դայթակցեցիք ի նոյն՝ վասն գրոյն նորին հայր իմ ըստ մարմոյ: որոյ չեմ արժանի կոչիլ որդի և ոչ վարձկան ըստ գրեցելուսն... Այլ յոյժ ամաչեցեալ և տորակայ գտանիմ ես Գրիգոր պարտուոր պատուիրանաց սուրբ Գրոց: Արդ առաջին սուրբ Գրոցս ալսորիկ գծագրութիւն եղև ձեռամբ Սահակայ որդւայ տեառն Խոսրովու, ալս գրոցս մեկնողի 87թ թղականութեանս Հայոցն (մեր թվ. 950 թ.):

Չամչյանը Գրիգորի ծննդյան թվականը դնում է մոտավորապես 951 թվին. թի թուին Հայոց իբր ն, ալսինքն յամի Տեառն 951: Այս ենթադրական տարին ուրիշներն ալնուհետև բանեցրել են իբրև հաստատուն թվական Գրիգորի ծննդյան համար: Բայց որովհետև, ինչպես վերևում գրված հիշատակարանից երևում է, նրա հայրն 950 թ., պատարագի խորհրդի մեկնության տարում, եպիսկոպոս է եղել, ուստի և Գրիգորը պետք է ծնված լինի այդ թվից առաջ, քանի որ բանահար է 10-րդ դարում կանամբի եպիսկոպոս ենթագրելի Հայաստանում: Ցավոք, կարելի չէ որոշել, թե 950 թվից որքան առաջ ծնված պիտի լինի նա: Նրա հայրն Անձևացյաց եպիսկոպոս է դառնում 941 թվից ոչ առաջ, որովհետև նա այդ վիճակն ստանում է Անահիտ Մոկացի կաթողիկոսից (941—965 թ. ենթագրելով, որ Գրիգորը մի տարեկան մատուցել երեխա է եղել հոր ձեռնագրության ժամանակ և որ հայրը ձեռնագրվել է Անահիտ Մոկացի կաթողիկոսի առաջին տարում, ըստ այսմ Գրիգորը ծնված կարող է լինել 940 թվին, իսկ ամենից ուշ՝ 949 թվին. որովհետև հայրը 950-ին արդեն եպիսկոպոս է հիշվում: 940 թվից շատ առաջ չի կարելի դնել Գրիգորի ծնունդը, որովհետև նա իր Ողբերգության Մատանի մեջ ինքն իրեն 1001—1003 թվականներին, թեպետ հասակն առած, բայց ծեր չի համարում: Այսպես՝ 83-րդ բանի մեջ գրում է. «Ահա բարեցան, կուտեցան շրջանակե տմացս ընդունալնութեան, յորմէ հետէ յայտնեցեալ ցուցայ՝ յոչպէսս երեսալ ի յարգանդէ մօրն իմոյ սենեկի փուշս զժնկի մեղաց շառաւիղի: Բայց 87-րդ բանի մեջ գրում է. «Եթէ հասից յամս ծերութեան քն առաջնորդեալ արժանիս մահու, մի թողցես գտկարութիւնս, մի անարդէր զալիսն, մի կորացուցես զկործանեալն, մի զիջուացես զկեանքին: Ենթագրելով, որ նա ամենից ուշը 949 է ամենավաղը 940 թ. ծնված լինի, այս խնդրվածքն անելիս (Ողբերգության այդ բանը գրված է 1001—1003 թվին) նա պետք է լիներ 53--62 տարեկան: Եթե 62 տարեկանն արդեն ծեր պիտի համարվի, 53—55 տարեկան հասակին կարող էր նա իր համար գրել «Եթէ հասից յամս ծերութեան... Այսպես՝ նա ծնված պիտի լինի 940-ական թվականներին, ավելի շուտ այդ թվականների երկրորդ հնգամյակին:

Գրիգորը մեծացել է Նաբեկա վանքում. «Մենեալ և վարժեալ սրբու-

¹ «Արարատ», 1897, էջ 93. «Անանիա Մակ-ճիւ, հոգւած Գ. Յ.-Միքայելի:

² Նույն, էջ 91:

թեամբ և իմաստութեամբ առ ոտս Անանիայ վարդապետի, առաջնորդի Նա-
րեկայ վանից և Ռշտունիս¹։ Այս տեկնկություններից երևում է, որ հայրը
եղիսկոպոս գառնալով՝ իր որդուն փոքր հասակից արգեն հանձնել է Անա-
նիա Նարեկացուն, որի եղբոր դստեր որդին էր Գրիգորը, ինչպես հիշում է
ինքը Ապարանից Խաչի և Աստվածածնի Ներսողների վերջում (էջ 422)։
«Սո Գրիգոր՝ յետին վարժապետաց և կրտսեր բանասիրաց, որդի դստեր եղ-
բոր Հօր Անանիայի հոգեգարդ և մտավարժ փխխսոփայի և ըստ վարուց
մաքուրթեան կրօնից գովելոյ և հաշակելոյ»։

Գրիգորի հետ հուշյն վանքում կրօնավորել է և իր ազգ եղբայրը՝
Հովհաննես, որի համար նա մեծ գովեստով է խոսում իր գրվածքների հի-
շատակարաններում։ «Յիշատակեսցես... զիս և զեղբայրն իմ անգրանիկ
զՅովհաննէս ցտնկալի անուն ի միում կարգի, որ զիտնականն է և հան-
ճարեղ իմաստապէր, ցան զիս առաւել յամենայնիս (Յիշատակարան Ներ-
սողի Ապարանից Խաչի)։ Իսկ Ողբերգության Մտալանի վերջում գրում է։
«Սո Գրիգոր կրօնաւոր քանանայ, յետին բամբախաւաց և կրտսեր վարժա-
պետաց, գործակցութեամբ եղբօր իմոյ ընտրելոյ Յովհաննէս կոչեցելոյ՝
Նարեկայ մեծափառ և բարձրապատիւ ուխտի վանականի, որք իբրեւ զմի
մարմին բանական ի յերկուց առ մի կերպարան շինելոյ դիմաց կենցաղա-
վարելով, ոչ միայն հարազատք, այլ և միաշունչք, միակրօնք, համապա-
տիւք զուգահեռաւորք, ի քաւից աչաց առ միննոյն շահղ խորհրդոց տե-
սեալք» (էջ 268)։

Այս սերտ սիրով կապված եղբայրների ուսուցիչը, Անանիա Նարե-
կացին, որ տպրել է մինչև Խաչիկ կաթողիկոսի (972—991 թ.) ժամանակ-
ները², եղել է իր ժամանակի համբավավոր և գիտուն, միաժամանակ և մեծ
կրօնավորներից։ Ստ. Տարոնեցին (էջ 178) նրա համար, ինչպես վերևում
տեսանք, գրում է. «Փխխսոփայն մեծ... Սորա և դիրս է ասացեալ ընդդէմ
աղանդոյն Թոնդրակաց և այլոց հերձուածոց»։ Նա եղել է քաջ մեկնիչ Ս.
Գրքի, գրել է մեկնություններ և ճառեր՝ «Վասն աղօթից, պահոց և ար-
տասուաց», «Վասն զղջման և արտասուաց և աղօթից», և մի ուրիշը՝ «Ճրատ
հոգևոր թէ սրպէս կարասցէ մարդ որոշել զմիտս յերկրաւորաց և զայս
կեանս արհամարհել և Աստուծոյ միայն ցտնկալ և արքայութեան նորաս»։

Գրիգորը փոքր հասակից մեծանալով այսպիսի մարդու ձեռք տակ, որ
խոսքով ու գործով քաւրգում էր ուրախալ աշխարհը, հաղթել աշխարհին և
«ոչ ըմբռնել ի կենցաղոյս պատրանս», բնականաբար պիտի կարվեր դրսի
աշխարհից՝ նա կորված էր ընտանեկան կյանքից. մոր երես, տնոջւտ,
տեսած չէր, կամ շատ փոքր հասակում տեսած. իսկ հայրն իր մոտ չէր
աղբում, Եվ եթե մեկ մեկ նա հանդիպում էր հորը, նրա մոտ էլ հուշյն էր
տեսնում ու լսում, ինչ որ վանքում,— ժամագիրք, սաղմոս ու հոգևոր երգ,
և զղջում, լաց ու արտասուք, նա արտաքին աշխարհին ծանոթանալու

¹ Յայմատարք, Կ. Գուլիս, 1834, էջ 88։

² Ուխտանէս, էջմաբէն, 1874, էջ 12։

³ Այս գրվածքը «Ճրատ սքեչան, թէ սրպէս կարասցէ մարդ զմիտս սրոշել յերկրա-
ւորաց և զերհոգրով ձեռագիրների մեջ կոչում Անանիա Մանանեցու անունով. Տես
«Արարտա», էջմաբէն 1901, էջ 374։

առանձին հնարավորութունն չունենք, բացի ուխտերից և բացառիկ այցելութուններից, ընտելանաբար նրա ուշն ու ժխտքը պիտի ուղղվեր միայն մի բանի—հետևել և սիրել այն, ինչ որ իր շուրջը տեսնում էր վանքի կրոնավորների մեջ, նվ նա մեծանալով մնում է նույն վանքում, ուր կրթվել էր. կրոնավորում է և ձեռնադրվում քահանա. Հայոց Նիջ—մեր թվական 977 թվին նա ինքն իրեն արդեն քահանա է հիշում նրանց նրդի մեկ—նության հիշատակարանի մեջ, Մնալով վանքում՝ նա ճգնարանի նաչյն խստութիւններին է ենթարկում իրեն, ինչ ուրիշները. ցերեկը գործել մշտաժողով աղոթքներով, գիշերը տքնել դարձյալ աղոթելով. տանջել իրեն քաղցով ու ձարավով, ծունրադրությամբ երկրպագութիւններ անելով. «ձայն հառաչանաց», «աչք կողկողաղինք», արտառուօք ողորոց, «ծնկովքն հաստատութեամբ իրը դարապարտ ոտին վառել»,—անա թե ինչով էր զբաղվում նա իր կյանքում:

Սուկայն Գր. Նաթիկացու հայրն ու վարդապետը միայն սոսկ կրոնավորներ չէին. նրանք իրենց ժամանակի նշանավոր գիտնականներն ու զբաղեցնեին էին. և Գրիգորի պես ընդունակ մեկը մոռուկ հասակից արդեն, աչքի առաջ ունենալով նրանց օրինակը, սիրում է սչ միայն կարգալ ուսման ու իմաստութեան հետևից լինել, այլև շարադրելու նվ իսկապես, Գրիգորը խորը հմտացած է ժամանակի գիտութեանը, ընդարձակ ծանօթութիւններ ունի ոչ միայն Ս. Գրքի, այլև եկեղեցական գրվածքների. նա այդ հմտութիւնը ձեռք է բերել սովորն ընթերցանութեամբ. Սովաք Ստեփանոս եղիսկոպոսին գիտելով՝ նա ասում է. «Եւ ինձ տառաղելոյս ոգնեմ աղօթիւք, որ յարժամ զեգերիմ յընթեռնուին» (էջ 423):

Այդ ճգնավորութեան և գիտնականութեան համար է, անշուշտ, որ նա կարգվում է, ըստ Վեպամուռերէի, Նարեկա վանքում «վարժապետ միանձանց ի սուրբ վարս և յաստուածային գիտութիւնս»: Նա ինքն իրեն անվանում է «յետին վարժապետաց և կրտսեր վարժապետաց» (էջ 422), «յետին բանասիրաց և կրտսեր վարժապետաց» (էջ 268): «Ջայս խրատեմ և ես ինքն անփորձ եմ, միշտ ուսանիմ և երբէք ի ճշմարտութիւն գիտութեան ոչ հասանեմ», ասում է նա համեստութեամբ (Ողբ. բան ՀԱ. էջ 182): Ահա մի կյանք, որ անցել է ամբողջ աղօթելով, հարժամ կարգալով և միշտ ուսանելով և ուսուցանելով ու խրատելով ուրիշներին, միաժամանակ և բանահյուսելով:

Այսպիսի մի կրոնավորը չէր կարող վարդապետութեան աստիճան ստացած չլինել, Ողբերգութեան ՀԱ. բանի մեջ, էջ 186, նա գրում է իր համար՝ «թվելով իր կոչումները. «Պետ վարժից հոյեցեայ յանձինս դատաւագ. արքի եպրքի անուանեցայ և զգովեստն առ Աստուած եղծի. քարի տառցայ առ եղևութեանն ժողանդութիւն. օտրք վկայեցայ ի մարգկանէ, որ եմ անմաքուր առաջի Աստուծոյ. արգար դաւանեցայ ամենայն իրօք ամբարիշտս. հնչտացայ ի գովեստ մարգկան, զի ծագր եղէց յատենին Բրիստոսի. յաւազանէ հոյեցեայ արքուն, և ես ի քուն մոռու ննջեցի. ի փրկութեանն աւար եղեղ յորջորջեցայ, բայց զզգաստութեանն այս կափուցի»: Այս վկայութիւնից իմացվում է, որ Գրիգոր (=Արթուր) եղել է նրա մկրտութեան անունը, որ նա վարդապետ (=արքի) է եղել, և բացի վար-

ժապետ (կամ պետ վարժից) կոչումից՝ յորշորջվել է նաև հսկող, անշուշտ, գիշերային աքնութաշուներին համար. նա ինքն իրեն հսկող է կոչում նաև Ողբերգութեան ամեն մի բանի վերնագրի մեջ, Բացի այդ, ժարդիկ գովել են նրան ինչպես մի բարի, սուրբ և արդար ժարդու. նա այդ գովեստը իրոք ստացել է ժարդկանցից, որոնց խիստ հաճելի է եղել իր վարքով, և նրան իր կենդանութեան ժամանակ նույնիսկ երանի են տվել. «Առ պարտաւոր գերիս ողջամիտ կամօք աննարկեն, որպէս թէ ի մասանցդ քո կեցողաց ի պահպանարան հոգեոյս ծածկութի լիով ունիցիմ... Եւ որպէս շուք իմի վաշեյակաւ գնել տխորժեն ինձ անաբժանիս սիրելիքն քո վասն քո՝ նախեցեալ ի կրօնս զգեսառու բարեկերպութեան, չգիտելով զրիժս դադանեացն՝ երջանիկ կարգան եղկելույս» (Բան 29. էջ 233).

Սակայն նարեկացին ունեցել է նաև թշնամիներ ու բամբասողներ ևս: Յայտնաւորքը՝ գրում է, թէ «Որովհետեւ նա ամենայն փութով աշխատում էր ուղղել եկեղեցու խանդարված կարգավորութիւնը, ուստի մի քանի հաշտողիւտներ չտարախոսեցին նրա մասին եպիսկոպոսների և իշխանների մոտ, և այդ ճշմարտութեան վարդապետին կոչում էին ծայթ և հերձվածող»: Եվ ապա պատմում է նարեկացու մասին տարածված գրույցը, թէ ինչպես իշխաններն ու եպիսկոպոսները, հավաքվելով՝ ուզում են նրան դատի մատնել. հրավիրակներ են ուղարկում սրբի մոտ, որ նրան առնեն, դատարան տանեն. նա հեղութեամբ ընդունում է եկողներին և ճանապարհ ընկնելուց առաջ հացի հրավիրելով՝ նրանց՝ առաջները գնում է երկու խորոված աղափի: Օրն ուրբաթ պաւ է. հրավիրակները հիշեցնում են այդ մասին նարեկացուն: Սուրբը ներողութիւն է խնդրում, որ մոռացել է, թէ օրը պաւ է, և ասում է, որ իր հյուրերը հրաման տան աղափիներին թռչելու: Հյուրերն, իհարկե, այսպիսի բան անել չէին կարող. բայց ինքը նարեկացին հրամայում է, և աղափիները կենդանաւորով թէ են աւելում, թռչում: Բնականաբար առաւարտում են եկողները, իրենց աչքով տեսնելով նարեկացու սրբութիւնը, և ամբաստանութիւնն ի գերեւելում:

Թե իրոք նա թշնամիներ էլ է ունեցել, այդ երևում է Ողբերգութեանից. նույն 29. բանի մեջ նա բարկամեներից առաջ հիշատակում է թշնամիներին. «Երբեք յայսմ Ողբերգութեան մասենի բանիս խոստովանութեան և գոր ի մարդկային ազնի թշնամիս մեր՝ ի բարի... Մի բարկացիս նոցա վասն իմ, Տէր, իբրեւ դաւերս բամբասողաց՝ առ յաճախ սիրոյդ որ յիս, այլ որպէս գնարս կշտամրողաց և իրաւամբ նախատողաց՝ ներեւ յանցանաց նոցա: Եւ արդ մատուցեալ երկաքանչիւրոցս առաջի քո, Արդարադատ, ոմանք առ մեզ փառակարգոյնք սակաւութեւ, թերեւ և յիրաւի բամբասելոցս... մի սատակեսցիս զիման խաժնողսն» (էջ 261): Թե ինչու են թշնամացել և բամբասել նրան, այդ չի իմացվում նրա մատյա-

1 Որ գրույցը մեք օրով եւ իբրեւ ժողովրդական երգ ազգում էր նարեկացու վրա ուրիշ երգերի և գրույցների հետ, որոնց բոլորի մեջ փառաբանվում է սուրբն իր հրաշագործութիւններով: Տես՝ Գաբելիս ու Հովսեփյանի «Փշարաներ», Թիֆլիս 1893, էջ 16 և հետև.

ներք. անհամաձայնական չէ «Յայտմաւորքի» հազորդունը, թե նրան ամբաստանում էին իբրև հերձվածողի։ Նրա հայրը, Պոսարով Անձնացոյց եպիսկոպոսը, իր ծերունւթյան հասակում բանադրվում է իրեն ձեռնադրող Անանիա Մոկացի կաթողիկոսից իբրև հերձվածող, Նրա ուսուցիչ Անանիա Նաբեկացին, ինչպես իր Պոսարովանության Գրից հերում է, «մերձ ի մահ վիճակում, ոչ ինքնաբերաբար, այլ կաատրելով կաթողիկոսի հրամանը՝ անիծել է թոնդրակեցիներին», ամենայն հավանականութամբ այն պատճառով, որ Պոսարով եպիսկոպոսի և կաթողիկոսի միջև տեղի ունեցած վեճերից հետո՝ «կարող էր կասկած ծագել և Անանիա Նաբեկացու ուղղափառության մասին, քանի որ խնամիական կապեր կային սրա և Պոսարովի միջև և Անանիա Նաբեկացուն էր աշակերտում Պոսարովի որդին՝ պատանի Գրիգորը»¹։ Շատ հավանական է, որ նույն կասկածն եղել է և Գրիգոր Նաբեկացու մասին, քանի որ սա էլ գրած ունի թուղթ ընդդեմ թոնդրակեցի ազանդավորների²։

Գր. Նաբեկացու կենսագրությունից էլ ուրիշ հավաստի բան չգիտենք, և հավանորեն շատ բան էլ չի պակասում, Նրա կյանքն անցել է շատ միատեսակ. աղոթել, կարդալ, գրել, դաս տալ, խրատել, և ապա գործելով աղոթելի ի խորոց սրտի։ Շատ միակերպ մի կյանք, որ թվում է, թե ձանձրալի պիտի լիներ մի մարդու համար, որ վերին աստիճանի զգայուն սրտի տեր է, գիտե հոգովել ամեն մի չնչին բանից, որ ամբողջապես հոտանդ ու գործունեություն է շնչում, և որի վառ երեւկայությունը մի վայրկյանում տոնում է նրան զանազան կողմեր իր ճգնարանի պատերից դուրս։ Բայց մանկությունից միայն մի աշխարհ է ճանաչում—իր ներքինը, իր սիրտն ու միտքը, իր հոգին ու հայեցողական կյանքը, որով և նա շարունակ զբաղված է, և այդ՝ բավականություն է տալիս նրան։ Եվ եթե մեկ մեկ ձանձրանում էր նա, բավական է, որ աղոթեր աստուծուն, և ահա նոր ուժ ստացած, նոր հոտանդով կարող էր շարունակել իր մենավոր և վարդապետական կյանքը. «Եթէ ի տխրանաց ինչ ձանձրութենէ ոք նուազեսցի, կանգնեսցի վերստին հաստարանու այս հառաչանաց ի քեզ յուսացեալ» (Ողբ. Բան Գ. էջ 9)։

Գր. Նաբեկացու մահվան տարին նույնպես հայտնի չէ։ Զամյանը նրան (ըստ «Յայտմաւորքի») մնում է դնում մոտ 50 կամ 52 տարեկան հասակում՝ Հայոց ՆՄԲ թվականի փետրվարի 27-ին, մեր թվ. 1003 թվին. իսկ Զարբանալյանը նրան մոտ 60 տարեկան է մեռած համարում, հասցրելով նրա կյանքն, ուրեմն, մոտավորապես մինչև 1011 թվականը, քանի որ նա նրան ծնված դնում է 951 թվականին։ Փետրվարի 27-ն առնված է «Յայտմաւորքից», իսկ թե որտեղից են առնված նրա տարիքն ու մահվան ենթադրական թվականները, այդ հայտնի չէ, Նա թաղվում է նույն Նաբեկա վանքում, Սանդուխտ կույսի եկեղեցու մոտ՝ ըստ «Յայտմաւորքի»։

¹ Ամբարում, 1897, էջ 94. Տես և Մ. Օրմանյան, «Հայապատմութեան», Կ. Պոլիս, 1912 էջ 1144 և հմ.։

² Հրատարակված է «Մատմանկութեան» 1893 թ., Տես և Մ. Օրմ. «Հայապատմութեան», էջ 2181 և հմ.։ Իբրև աղբյուր հիշված է «Գրք. Քաթոլիկ», 1901, էջ 495, 498—503.

Նույն տեղում մինչև վերջերս ցույց էին տալիս նրա դերերումները, որ ուխտատեղի էր: Ժողովուրդը մինչև այժմ պատմում է և երգում է նրա հրաշագործությունների մասին: Այսպես՝ պատմում են, թե նա մի օր տունն՝ նանում է մի քարայրի մեջ աղոթելու և այլևս դուրս չի գալիս: Երկար ապաստելուց և որոնելուց հետո, երբ մանում են նույն քարայրը, այնտեղ մարդ չեն գտնում: Այն ժամանակ պահեցով և աղոթքով խնդրում են աստուծուն, որ նրա տեղը ցույց տա, և հերշտուկն իջնելով հայտնում է, թե սուրբն աստուծու մոտ է բարձրացած: Ժողովրդի հայացքով այդպիսի մեծ սուրբը չէր կարող մեռնել: Գր. Նաբեկացու սրբաթյան մասին գրույցներն իր ժամանակից են հենց գալիս: և այդ գրույցները՝ ծագած են նրա սրբակյաց վարքի համար, բայց հետագայում այդ եղել է ավելի նրա դրական մեծ վաստակի և մանավանդ Ողբերգության Մատյանի համար, որ ժամանակակիցների և հետնորդների աչքին իբրև մի հրաշալիք է երևացել:

3. Երկերը:—Մենք մինչև այժմ դժբախտաբար չենք կարող ստել, թե նրանից որքան երկեր են մնացել: Հայաստանը հետևյալներն են՝¹ 1. Գանձեր (թվով երեք), 2. Տաղեր ու մեղեդիներ (քսանից ավելի), 3. Մի թուղթ թոնդրակեցիների դեմ, 4. «Մեկնութիւն երգոց Երզնայն, որ գրված է Վազգուսի կանոնի Գուրգեն թագավորի հրամանով Հայոց ՆիՋմեթ թվ. 977 թվին, 5. «Պատմութիւն Ապարանից խաչին, և ներբող Ս. Խաչի և ներբող Ս. Աստուածածնի, որոնք գրված են Մովսէս Էպիսկոպոս Ստեփանոսի խնդրով 989 թվից հետո և Ողբերգությունից առաջ, 6. «Ներբող Առաքելոյ, որ գրված է Ողբերգությունից առաջ, 7. «Ներբող Ս. Յակոբայ ՄԺՏնայ Հայրապետին, 8. «Մատենի Ողբերգութեան, որ մեր բանաստեղծի ամենամեծ երկն է:

Ողբերգության վերջում կա հետևյալ հիշատակարանը. «... Ի յաւարտումս կատարման իննեբնակ յորելիսին, ի սկիզբն պսակելոյ մոռ տասնեկին յարեթական տունիս տունարի, յետ երից ամաց անցելոց, որ զկնի գալտեան ի կայս և ի կոյս կողմանց հիւրիսոյ դիմաց արևելից՝ յաղթող և մեծ կայսերն Հոռոմոց Բասիլ, յորժամ ընդարձակ և մակազուէթ կանոնաւ սփիռ տարածէր... անթարթափ վերաօւլացեալ ի յաջ և յահեպի՝ սեպհակունել յաւելելու բաժինս մասանց վիճակաց խմբից աշխարհաց ի ծոց իւր, արդ ի յայնմ անդորրութեան միջոցի, յորում եղբերալ ընդոտնեցաւ թշնամիք եկեղեցւոյ, ստացեալ հիմնեցի, կոռուցի... զբաղմաստեղնեան գրուադս գրութեան այսմ սոփերի արգաստուորի, ես Գրիգոր... Իններորդ հոբեյանի վերջը հայոց 460 թվականն է, իսկ առանկորդ հոբեյանի սկիզբը՝ 451 թվականը, որ սովորական հաշվով անում են մեր թվ. 1001 և 1002 թվականները: Անդուշտ, բանաստեղծն իր այս մեծ երկը չէր կորոզ կարճ ժամանակում գրել: Նա գրում է. «Յետ երից ամաց անցելոց, որ զկնի գալուտեան... կայսերն Հոռոմոց Բասիլ: Արդ, Ստ. Տարոնեցին՝ զգալն Վասիլ թագաւորին Յունաց յաշխարհն արևելից՝ գնում է հայոց 449 թվին, որ է մեր թվ. 1000 թվականը: Այս թվականի Ջատկի օրը մեռնում է Դավիթ

¹ Սրբայ հորն մերոյ Գրիգորի Նաբեկայ Վանից վանականի ժամանագրութիւնը, Վանեթի 1840.

Կյուրապապոստը, որ իր աշխարհը թողել էր Վասիլ կայսրին, և կայսրը Կիլիկիայի ճարսոն քաղաքում լսելով այդ՝ շտապով դալիս է տիրելու Կյուրապոստի երկրներին: Եվ ահա թագաւորն ընդ Լանձիթ և ընդ Բալու՝ Ելուն է ի լիսան Կոհերայ, — յաւաւր Վարզավառի տունին, — որ ընդ մէջ Լաշունից, Մոփաց և Խորձենոյն: Ապա նա գալիս, բռնակ է դնում Վաղարշակեայ քաղաքի մաս: Բոլոր մանր թագավորներն ու իշխանները սարսափած ջնդւմ են նրա բանակը, բացի Լաշոց Գազիկ Բագրատունի թագավորից: Գնում են նուշնպես երկու Արթուրնի եղբայր թագավորները, Սենեքերիմ և Գուրգեն: Եվ աշքունատուր ընծայիւք պատուեալք ի նմանէ, — գրում է Ասողիկը, — աւաստանն ոսկւով և արծաթով. և հրովարտել առքեալ առ մերձաւոր ամիրայսն Տաճկաց, զի մի մեղիցեն աշխարհին Վասպուրականի՝ դադարեցոյց զառ և զգերութիւն և զհարկապահանջ բանուս թիւնն: Կնշանակն՝ Վասպուրականի թագավորները նեղվելիս են եղել ստամանակից մանկեղականներից, և նրանց նեղութունը դադարել է: և երկիրը խաղաղել է միայն կայսրի ահից: Այդ անդորրության միջոցին առ Գր. Լուրկեացին 1001—1002 թ. սկսում է զրել իր Ողբերգությունը և վերջացնում է կայսեր գալուց երեք տարի հետո՝ 1003 թ., որովհետև կայսրը 1000 թ. տմառն է եկել, երեք տարի հետո լինում է, ուրեմն, 1003 թ. տմառվանից հետո՝:

Դրիզոր Կարեկացու գրական երկերը, բացի Ողբերգությանից և տաղերից, նյութով և ձևով նույնն են նախորդ դարերում և իր ժամանակ. զարգացած գրականության հետ. մեկնություն, ներբողյան և հոգեւոր երգ: Երգոց Երգի մեկնության մէջ, օրինակ, նա առանձնապես չի տարբերվում նախորդներից, բայց եթե իր համեմատաբար պոյծառ ու գեղեցիկ մատուցութեամբ, Նուշն է և ներբողյանների մէջ: Ս. Խաչի ներբողյանն, օրինակ, սկզբում խաչի զորութեան մի սքոլաստիկական սովորական մեկնություն է, ձևերն ու նյութը մեծ մասամբ նախորդներից մշակված: Հին ճառերի ու ներբողյանների երկարաբան արվեստակցաւ լիզուն ու ճոռոտ արտահայտութեանը զստում ենք և Կարեկացու մեջ: Ներբողյանների մէջ կտր և քնարական մաս, որի մեջ կես բանաստեղծական և կես ճարտասանական ձևով զովորանվում էր ներբողելի անձը. այստեղ արգեն մեր բանաստեղծն ազատ է զգում իրեն, և նրա ներբողյաններն այս մասի մէջ զառնում են երբեմն օրհնաբանական բանաստեղծութեաններ, նուշնիսկ ոտանավորով հորինված: Բայց ինչպես էլ լինի, զրանք իսկական բանաստեղծական ներշնչման արդյունք չեն, այլ հորինված են ուղեղական նպատակով:

Նրա գանձերը, թվով երեք, որոնց տների զլխազրերը կազմում են

¹ Սեփանսի Տարոնեցոյ Առդեան Պատմ. Տիեզ. Պետերբուրգ, 1885, էջ 276:

² Վասիլ կայսր 449 թ.—1000 թ. Լայառառ գաւառ հետս՝ վերագտնում է Կ. Պալիս և Կոշոբ ամրին, 460 թ.—1001 թ., նորից է գլխու: Այս երկբող գաւառյանն է Կ. Պալիսում Կարեկացին գրելով Կանթարթով ի նոյն վերապաշտելու Արիստակես Լուսին վերաբն Վասիլի գլուք գնում է նրա թագավորութեան (976—1025 թ.) 25-րդ տարում, ուրեմն 976+25=1001 թ.: Երեք տարի հետո լինում է 1004 թ.: Ըստ այսմ, ուրեմն, Կարեկացին իր մեծ երկր վերջացած պիտի լինի 1004 թվականին:—Արիստ. Լուսա, Պատմ. զլուսի Ա. Եւնքը ընդ այլաբան Լայոց:

«Գորիզորի երգչ գլխաւորը (ակրոստիխ)», սկսվում են «զանձն բառով, իսկական գտնձ (փող, հարստութիւն) բառի նշանակութեամբ, Գրանք առնի որով հասուկ մաղթանքներ են՝ ուղղված Ս. Հոգվույն, եկեղեցուն ու Ս. Խաչին, ավելի դավանաբանական բովանդակութեամբ, որոնց մեջ առանձնապէս խնդրվածքներ են լինում քահանայապետի և եկեղեցական դասի համար, նույնպէս և վարժապետների ու թագավորի համար իր զորապետներով ու զարքերով: Առանձին շնորհ չի երևում նաև այս զանձների մեջ որոնք հետքեր են միայն իբրև մեր ամենահին հասուկ մաղթանքները: Իսկական բանաստեղծ Նարեկացին երևում է Ողբերգութեան և միայն մի քանի տողերի մեջ. բայց նախ հետևյալի մասին:

4. Բնօրինակից անփոփոխ արվեստի տեսությունը:—Այն ժամանակ, երբ ծագում էր ճարտարապետութիւնն իր համապատասխան և ներքին ուժեղ արտահայտութեամբ, բանաստեղծութիւնը չէր կարող մնալ անարվեստ վիճակի մեջ, առանց որևէ տեսութեան: Եվ իսկապէս, Նարեկացու երկերի մեջ ոչ միայն որոշ, երբեմն շատ նուրբ արվեստ ենք գտնում, այլ առանձնապէս նաև նրա հայացքը բանաստեղծութեան թե բովանդակութեան և թե ձևի մասին:

Ամենից առաջ նա չի խորշում բնութիւնին, ունի բնութեան զգացում: Ինչ որ Անանիոս Շիրակացին ըստ իր ժամանակի գիտութեան գրել է իրրև աղբյուր կյանքի ու կենդանածնութեան, ամեն ինչի լինելութեան, այն է՝ արդիւն—արեւակը ջերմութեամբ ու լուսով, որ տարածվում են երկրի վրա, այլև օդն ու ջուրը, նույնը Գորիզոր Նարեկացին երգում է բանաստեղծարեն: Նա բնութիւնն զգում է իբրև մի շարժվող, ապրող, կենդանի միութիւն, որ ունի իր վսեմ խորհրդավորութիւնը, ինչպէս իմանում ենք նրա՝ «Վարդավառի տաղից», որի վերլուծութիւնը վերջում էլ կտեսնենք, ամեն կենդանութեան սկիզբն է արդիւն—արեւակը վեհ վարսերով: Նա է, որ զուսնավառում է ամեն ինչ. նա քաշում է ամպը, որից ցողն է շաղում և մարգարտազարդում թուփ ու կանաչ: Բայց արեւակն իր համատարած ծովի մեջ, նրանից վառ առնող ու փոփոխ վարքը, գույնզգույն ծաղիկները, շողողուն ու խուռն տերևների մեջ սնվող պտուղը, հովառում շողով լցված շուշանը, որ արեւակի դեմ շողջողովով հովհարվում է հյուսիսային հովից և հարավային լեռան քաղցր օդից, և վերջապէս՝ գիշերային երկնակամարը լուսնի դեմ գունդ գունդ բոլորած աստղերով,—այս ամենը կազմում են ոչ միայն մի մեծ ներդաշնակ ամբողջութիւն, այլև նույնիսկ մի աստվածային երաժշտութիւն: Ի. Զարգարյանի «Մենավոր ծառի» մեջ գտնում ենք հետևյալ տողերը. «Երգե, ով ծառ, որ կը մնաս իբրև լուրված արամադրելի քնար, բնութեան արձակ հովերուն, արձակ բանաստեղծութեան առջև. երգե անփութօրէն վշտակոծ կամ ցնծալից եղանակները, երգե ինչպէս որ տուն կուտա հյուսիսի քամին կամ մեղմաթև հովիկը. ի՞նչ հոգ, բավական է որ անկեղծ ըլլան բոլոր ձայներն ու առնոց հաղորդված հուզումները, որ քու սաղարթներուդ, տերևներուդ մեջն կանցնին ու կը շշուշեն»: Այս միևնույնը Նարեկացին արտահայտել է շատ կարճ. «Տերևն»

1 Գառաւիթն առը Նուրպէս Կնի «Գորիզորի է երգս այս գլխաւորը:

տաւիդ Տոռոզին, Զոր երգէր Դաւիթ հրաշալիքն: Հովից սոսափող տերեր: ռւրեմն, հնչուն բնությունն առհասարակ, դա աստուծու քնարն է. որ նվազում է նաև սփոթոսերգու բանաստեղծը: Բանաստեղծն ինքն էլ, սակայն, աստուծու քնարն է. ՎՍուր Երբորդաթեանդ արժանոցուք լինել քնար միշտ հոգևոր հնչմանց (Տաղ Համբարձման, էջ 478): Կնշանակե, մեր նա-րեկացու հայացքով, բանաստեղծն էլ նույնն է անուս, ինչ որ բնությունը: Նա երգելով բնությունը՝ նվագում է աստվածային քնարի վրա: Արհա-մարհիված և անտես արված, նույնիսկ մեղսական համարված բնությունն, ուրեմն, կենդանաւում, ստանում է իր իրավունքը: Բնությունն երգելն տը-ղեն համարվում է մի աստվածային փառաբանության գործ կատարել, որովհետև բնությունն ինքը փառաբանում է աստուծուն. Վերկինք պատ-մեն դիպաս Աստուծոյ: Այս անհրաժեշտ էր բանաստեղծության համար, քանի որ առանց բնության, — լինի արտաքին բնությունը, թե մարդու հոգեկան ներքինը, ներքին բնությունը, — չկա ոչ մի գործը քնարերգու-թյուն: Արտաքին բնությունից, սակայն, նա դեռ բանաստեղծական պատ-կերներ է առնում նմանութիւնների, գեղեցիկ ձևի համար, կամ այն գոր-ծառնում է տղաբանության համար, բացի մի առիթից, որի մեջ բնությունն է գովերգում դարձյալ կրօնական նպատակով: Բայց բնության այսպիսի ձևական կիրառութիւնն էլ ո՞րի համար՝ իսկապես բնությունն երգել էլ Իսկ-մարդու ներքին բնությունը նա նյութ է դորձնում բանաստեղծության:

Մյուս կողմից՝ բնությունից չխորշող այս բանաստեղծը դիտե, թե աստվածային ներշնչումն ունի իր մեջ. նա զգում է, թե իր խոսքի շնորհքն աստուծուց է. նրա մեջ աստվածային ձայնն է խոսում:

Նղիցի հոգի քո խառնեալ ի սա,
Շաւնչ գորութեան Մեծիդ միասցի
Ի քե ինձ շնորհեալ ստեղծաբանութիւնս:

Այսպես է դիմում նա աստուծուն Ողբերգության սկիզբներում (Բան Գ, էջ 40): Մի ուրիշ տեղ (Բան ՀԴ, էջ 191) ասում է. «Եի Դէն ազդեցաւ գրեւ ինձ զսոսինս»:

Մի անգամ որ բանաստեղծության համար գիտակցական պահանջ է ներշնչումը, այսպիսի գիտակցութիւնից բանաստեղծութիւնը գաւառում է արդեն կենդանի շունչ, ինքնաբուխ արտահայտութիւն անհատական զգոց-մունքի ու սոցալորութիւն: Քնարերգության մեջ մտնում են մարդկային հոգին ու բնութիւնը, ապա՝ բանաստեղծութիւնը ձևով էլ կերպարանա-փոխվում է: Քերթվածը հորինվում է ոչ թե մեքենայաբար, կաշկանդված սովորական ու խփոնդական ձևերով ու նյութով: Դա այլևս նմանողա-կան չէ: Ինչպես էր ընդհանրապես շարականների մեջ, այլ ստեղծվում է մի նոր բան և բաղդի թելադրութիւն համեմատ: Ինչպես և ինչ որ աստված կամ նրա տալիք բնութիւնը կիսով բանաստեղծի սրտում, այնպես էլ նա կերպի և կերպի անկեղծ, իր ամբողջ էութեամբ, լինի նրա երգը աստուծու փառաբանութիւն, ինչպես նրա տաղերն են, թե սրտի խորքերից բխած մաղթանք ու աղբրս, մի անարբուն զոհաբերութիւն աստուծուն, միան-գամայն և օրհնեղութիւն, ինչպես է՝ նրա Ողբերգութիւնը:

Ձայն հառաչունաց հեծութեան օրտի՝ ողորց տղաղակի
Քեզ վերընծայեմ, Տեսողդ գաղտնեաց,
Եւ մատուցեալ եղեալ ի հուր թախտութեան տնձին տոչորման՝
Ձգառու ըզձից ճենճերոյ սասանեալ մտացս՝
Բուրվառաւ կամացս առաքել տռ Քեդ...
Ելցէ՛ ի խորոց աստի զգոյութեանց խորհրդակիր սենեկիս՝
Վաղվաղակի ժամանել առ Քեզ՝
Կամաւորակուն նուէր բանական զոհիս,
Ողջակիզեալ զօրութեամբ ճարպոյ՝
Որ յիսն է պարարտութիւն:

Այսպիսի անձնական քնարերգութիւնը միայն,—որ մի կողմից՝ խոսում է սեփական ներքին ապրումներից, մյուս կողմից՝ չի խորշում բնութիւնից,—պիտի դառնար իսկական բանաստեղծութիւն: Բայց այդ դեռ քիչ է. դրա համար հարկավոր էր նաև երկու ուրիշ բան՝ հարուստ նյութ կամ բովանդակութիւն և արվեստավորութիւն: Ինչքան էլ բանաստեղծական երկի մեջ հեղինակի իրեն ապրումները, իր անձնական զգացումներն ու խոհերը պիտի լինին կերպացած, բայց և այնպես դրանք պիտի ունենան ընդհանուր արժեքավոր բնավորութիւն: Զուտ անձնական քնարերգութիւն անելով հանգերձ՝ բանաստեղծը, այսպես ասած, իր սրտի մեջ պիտի զգա իր ժամանակի եթե ոչ բոլոր մարդկանց, դոնե իր հասարակության, իր դասի հոգին և ոչ միայն իր սրտի բաբախումները դնի իր երկի մեջ. այլև ուրիշներին: Եվ մեր Գրիգոր Նարեկացին գիտակցում է արվեստի այս տեսութիւնը. նա իր Ողբերգության համար պարզապես հայտնում է, թե ամենայն դասի և հասակի, իր ժամանակի բոլոր քրիստոնյաների հոգին է ներկայացնում Քնուաւանդալ յիւրում պատկերին:

Եւ քանզի առ ամենայն հասակ
Տնկեցեալ յերկրի ազգ բանականաց՝
Այս պատուէր՝ նկարագրական
Նորոգ մասանի ողորց նուագի,
Որ զամենեցունց ունի զկրից պատահմանց
Նշաւակեալ յիւրում պատկերին,
Իր կցոյդ մեծգիտական կարեաց համայնից,
Առ բոլոր գումարըս բազմահոյով
Տիեզերակոյս քրիստոնէից...
(Բան Գ. էջ 7 և հտ.)

Ուրիշների զգացումներն և ապրումներն իր տնձի վրա արտահայտելով, սակայն, նա առարկայական բանաստեղծութիւն չի հորինում, մի լոկ քերթողական ձևով չի բանեցնում իր ետը. այլ միաժամանակ իսկական անձնական քնարերգութիւն է անում, որովհետև խորը կերպով զգում է, որ այն ամենը, ինչ որ ուրիշներն ունին և ինքն արտահայտում է, նաև իրենն է, իր սեփականն է (Ողբերգ. Բան ԶԲ. էջ 186):

Ոչ ոք մեղաւոր իբրև զիս,
Ոչ ոք անօրէն, ոչ ոք ամբարշտ,
Ոչ ոք անիրաւ, ոչ ոք չարագործ,
Ոչ ոք վրիպեալ, ոչ ոք սխալեալ,
Ոչ ոք մոլեղեալ, ոչ ոք խաբարեալ,
Ոչ ոք շահախեալ, ոչ ոք ամաչեցեալ, ոչ ոք դատաւարեալ.
Ն'ս միայն և այլ ոչ ոք.
Ն'ս ամենայն և յի'ս ամենեցուն:

Թե անձնականութիւնը որքան մեծ տեղ է բռնում, այդ երեւում է հետեւյալից: Բանաստեղծն իր Ողբերգութիւնը գրել է իբրև ազոթից մասայան այն նպատակով, որ մարդիկ այդ գրքի վրա ազոթելով փրկութիւն ստանան. բայց այս դեպքում էլ նա հոգում է նաև իր համար. նա ապաւինում է, թե քանի որ այս ազոթներն իր հոգւոյ են բխել, ուստի երբ ուրիշներն իր այդ գրքի վրա ազոթեն, այդ միեւնոյն է, թե ինքն է ազոթում:

Եղիցի բղիւսմն արտասուեաց սոսաւ վարժելոցն,
Եւ պարգեւեալ տացի ի ձեռն սորին ապագաւ ըզձից.—
Շնորհեացի, Տէ՛ր, և քնձ ընդ նոսին
Առ ի քէ՛ն գղջուսն կամաց...

Նուիրեացի վասն իմ այսու մտանդիւ պաշտանք նոցին,
Եւ բանիւս այսու հեծութիւնք նոցին ընդ իմ խնկեցիքն...
Եթէ ելցեն քնձ բարեպարիշաք ընծայիլ սովաւ,
Լնկաւ կենդանեօքն վասն քո, դթած, և զիս ընդ նոսին:
Բան Գ. էջ 8.

Նման վերլուծեալ, բանաստեղծութիւնը, ասացինք, պետք է հորինված լինի որոշ արվեստով. այսինքն ձեռով գեղեցիկ պիտի լինի: Իսկ դրա համար հիմնական պայման է, որ գեղարվեստական երկը բաղմամբութիւն մեղ միութիւն պիտի ունենա, որ է՝ մի հիմնական գաղափար, մի գործողութիւն և, եթէ քնարերգութիւն է, նաև մի ընդհանուր եղանակ, տոն: Մեր Ողբերգութեան հեղինակը վերջաբանի մեղ այսպես է բնորոշում իր երկը. «Առաջեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի, զիզի, բարդեցի, ցուցի հաստատելով ի երաշխեւրուսիւս միաբայ իրի գրադասութեանս քրուագս քրուսեանս այսմ սոփերի արդասաւարիս: Ուրեմն իր երկը նա ըմբռնում է իբրև բազմաբնույթ գրվածքներով հարաշխեւրութիւն միաբայ իրի, մի բանի. այսինքն՝ ստեղծագործութեան նյութն է մի ընդհանուր մտայուն գաղափար, մի խնդիր, որ կազմում է երկի էութիւնը, խնցնելով՝ ամբողջ երկի միջով: Դա միութիւնն է, մնացածներն այդ մեկ նյութի բաղմամբան դարգացումներն են միայն, որ էական գաղափարի շուրջը ճշուգումովում են զանազան ձևերով: Էթիկեալ գեղանակ բանիս [=խոսքի դարձվածք], այլ ոչ գեղկութիւն աղետիս», ասում է նա (Բան ԻԵ., էջ 58). այսինքն՝ բանաստեղծութեան ոչ միայն նյութը մեկ միութիւն ունի, այլև տոնը նույնն է մնում նույն երկի համար:

Անն մի ամբողջ տեսութիւն բանաստեղծական արժեանքի մասին, որի տարերքը գտնուած ենք, նրա երկերի մէջ: Բանաստեղծութիւնն ուշադրի բերանումս արգասիքն է այն, որ Աղբերգութեան Մատաւորի մէջ, որ խաղաղի մեր առաջին մեծ բանաստեղծական երկն է, մի նոր արժեւորութեամբ մի մի նոր շնչով թափանչուած են են ստացել ոչ միայն հրեշմուծի անհաստեղծութեան ու գառային, այլև ընդհանուր մարդկային հովիտեանկան գաղափարներ ու զգացումներ, ապրումներ ու անբխանքներ, և այլ՝ 13-րդ գլուխ սկզբում, այն ժամանակ, երբ եղբորական նոր ուղիքը այնքան կամ գրեթէ այնքան շանկերու նարեկային մեր հոգեւոր բանաստեղծութեանն այդ նրկով և մի քանի տողերով մի անգամայն բարձրացրել է իր հանճարով, ամփոփելով այն ամենը, ինչ որ նախորդ դարերում մեր հոգեւոր շնարհագրութեան մէջ կար արտահայտուած, մի այնպիսի ինքնանաւասակ կեանք, որին նմանել չեն կարողացել:

5. «Մտտեմ Աղբերգութեան»: Միտակի մեծանկարը, միտսիցիզմ և քնն-րնրգութեամբ աղբուրը:— Ի՞նչ է նշանակն և էութիւնը Աղբերգութեան Մատաւորի, որ է ի խնդրոյ հայցմանց հարց միանձանց և բազմաց անապատականաց առաջնայն:— Ինքը անգնական անփոփոխ կրկնվող վերնուղի-րներով, որ գնում է ամեն մի բանին այդինքն՝ մասերի համար, շատ լավ բացատրում է այդ: «Էներգիան յաներում կրկին հեծութեան նախն հեղուկ առ նախ ուղիւ մագլանաց բոնի է խորաց որոնց խոսք ընդ Աստուծոյ: Մտի խորքում կուտակվում է մեղքը, աստված մի անայտու գառմուր է: բայց և ներք ու զթան հայր: Հեղուկ խոսքն աստուծու հետ հեծութեանն ու զգնում է աղբութեան. իսկ նպատակն է փրկութիւնը: Այս է կազմում այդ եղբորական Աղբերգութեան էութեանը, միութեանը եւ այլ՝ ժամանակի քրիստոնեական միտսիցիզմն է, որ ցայտուն արտահայտութեան է դառն նարեկացու մէջ:

Նրա երկի մանրամասնութիւնների մէջ մենք տեսնում ենք ընդհան-րապես երեք քրիստոնեային և մասնավորապես մենակյացի եղբորական վի-տակն իր ամբողջ պատկերով և այլաբնայեցութեամբ: Տիեզերքը շանի նրա, ինչպես և ուրիշների համար այն մեծութեանը, ինչ որ հիմա մեզ համար: Նա կազմում էր մի երեք նարեկանի՝ «Էն շնն»՝ երկինք, երկիր և զմայն կամ ամպարամեծք անշնչոյ:— աստուծու, հրեշմուծների ու արցա-րների քնակարանը, մարդկանց ժամանակավոր՝ կացարանը և աստուծանների տանջարանը: Այստեղ, ինչպես մի ընդարձակ բնի վրա, ինչպես զեզեցիկ արտահայտել է մի փրանիստի քանոնը, այլաբնի սկզբին է վեր կա-տարվում էր մի մեծ գործնութեան, որի վախճանն աստուծուց հայտնի էր:

Երբեք ամբողջ վերնուղի է «Էնութեան» յայնպիսին բոնի պատկերաց, աղ-բութեան, հոգեւոր խորաց, անկի տպումաց գլխիւնաց, կանանց կենաց, կամար-թեանց յանճարութեանց, անբխ-թիւ յայնպիսին: Ժպտաց յառաժանութեանց, յուզումաց գալանաց, տարածուած ծակեցեցոյ: Երբեմն «Էնութեան» խորաց, ան-գանից գառուց վերջ տնդիկանաց, զնն պարզանց զուր անանական: Եւ-րաբարութեանց զոգնումանն: Երկուց վառնի: Ե զմայն կորեց աննից ժաման-քանից արտասուց, պատկաց արթնի: Ե ինչպէս նայմանց նայ միանանց և բոլոր անպատկանաց առաջն: Մտածն Աղբերգութեան նրկայի նարեկաց հանից վառնի:

որ լինելու էր վերջին դատաստանը: Մարդն արարածների մեջ աստուծու ամենից սիրելին էր: Ինչպես նշանիկ հողորացու երկրի ուսումնասիրության ժամանակ տեսա՞նք, ամեն բան ամենակարգի աստվածը ստեղծել է միայն մարդու համար, նույնիսկ հրեշտակներն ու սատանաները, և նրա հոգացողություն միակ առարկան մարդն էր: Աստված, սուլայն, անմիջապես չի խոսնում մարդկանց զործերին. որովհետև ստեղծելով մարդուն՝ ավել է նրան ինքնշխանություն, ազատ կամք, կամ գործել բարին և գնալ երանություն դրախտ, կամ թե չար գործել և գնալ դժոխք, հավիտենական տանջանքի տեղը: Թեպետ և մարդն իր գործերով անարժան էր, բայց աստված բարեբար էր, միշտ խնամում էր նրան. նա հայանի էր առ մարդն ունեցած բարեբարություններով, կամենում էր, որ մարդը փրկվի, և նույնիսկ աստուծու արդին մարդացել է դրա համար: Եվ մարդը կարող էր փրկվել, որովհետև ոչ մի մեղք չկար, որ անկեղծ ապաշխարություն բերեր: Այս է ահա Գրիգոր Նարեկացու, նրա հետ և նրա նման ուրիշների աշխարհայացքը:

Տիեզերքի, մեծիկան ու այն աշխարհի ստեղծվածն, ուրեմն, որ քնարերգության վսեմ նյութն է կազմում, որոշ էր հին քրիստոնյայի համար, և նա չպիտի այդ գաղտնիքի անհայտության առաջ իր նեղքին հռչակումներն ունենար: Եվ թվում է, թե այն ժամանակ չպիտի առաջ պար մտքուր և զորեղ քնարերգություն. որովհետև եկեղեցին արդեն հոգացել էր ամեն բանի համար, ամեն մետաֆիզիկական խնդիր արդեն որոշված էր, և բանասիրանքի ապառնալիքով ոչ ոք չթույլ չէր տրվում եկեղեցուց դուրս և եկեղեցուց տարբեր մտածել և զգալ. ուրեմն և փակված էր անձնականությանը. քնարերգության աղբյուրը: Բայց այն ժամանակ ահա Գրիգոր Նարեկացու հանճարով մեր կրոնական երգը դառնում է անտահայտություն անհատական երազանքների, կրոնական զորեղ անհանգստությունների, այլև այն աշխարհի և աստուծու, մեծիկան և հավիտենականության խնդիրների:

Ինչ՞եւ այսպես:—Որովհետև հոգացված էր միայն սոսկական մարդու համար: Եր հանգիստ ապրում էր, զի նա աշխատեց գիտել, թե ի՞նչ էր, որ ինքը մեռնելուց առաջ խոստովանվի և հաղորդվի, և կմեռնի՝ հավատալով թե կարգարանա, դառնա կերթա: Իսկ խոհուն և զորեղ ոգիները հենց այդ աշխարհայացքության մեջ գտնում էին հոգեկան անանջանքների աղբյուր: Սոսկական մարդու մեղք՝ նրանց համար՝ անմահություն չէր, այլ մեռելություն, մի չար մահ: Դա մինչև անգամ անասունի մահ էր.

Իբր զանգագայ պաճարս անասնոց
Մեռանիմք և ոչ զարհուրիմք,
Կորնչիմք և ոչ հիւանամք,
Թաղեցեալ լինիմք և ոչ խոնարհիմք,
Տարագրիմք և ոչ տաղնապիմք,
Նզձանիմք և ոչ զղջանամք,
Մոշիմք և ոչ մտառեմք,
Պակասիմք և ոչ պատրաստիմք,
Գնանք և ոչ զգուշանամք,
Գերբիմք և ոչ նա զդամք:

Բան ՄԱ. էջ 140,

Մարդու վախճանը չպիտի լիներ միայն արդարանալ, այլև անք բե-
րել բարձրագույն բարիքը, այն է՝ անբաժանելի միասնորով առավանդու-
թյան հետ, որ ամենայն կատարելության լուսատիպն է, ստանալ մի առ-
վածային անզորութան։ Այս էր ան իսկական փրկությունը, որին
ձգտում էին զորեղ ոգիները և որ խորը ցնցում է մեր բանաստեղծի ամբողջ
էությանը, և նա ուրիշ հազարավորների հետ անմաստ է լինում նըզ-
նության և միաստիցիզմի։

Իսկ ես ոչ թիայն կարգում,
Այլ նախ հաւատում մեծութեան Նորին.
Ոչ եթէ վառն պարզեաց Նորւ՝
Մատուցեալ յողոթ դեզերիմ,
Այլ երբ զկենդանութիւն իսկապէս,
Եւ զնշոյ տուրեառութիւն հաւաստի,
Առանց որոյ ոչ է շարժողութիւն կամ ընթացութիւն.
Ջի ոչ այնքան յուսոյն հանգուցիւ,
Որքան սիրոյն կապանօք բերիմ:
Ոչ ի տուրան, այլ ի առահն յաւէա կարօտիմ.
Ոչ փառքն են ինձ անձկալի,
Այլ փառաւորեալն է հովքուրի.
Ոչ կենացն փափագանօք,
Այլ կենաբարձն յիշատակաւ միշտ ճենճերիմ.
Ո՞չ վաշխիցն աւարփանօք հեծեմ,
Այլ հանդերձողիւն տենչանօք
Եւրկամանց աստի կականիմ.
Ոչ զհանդիսան խնդրեմ,
Այլ զհանգուցիւն դերեաւ աղաչեմ.
Ոչ հարանարանին խնճոյիւք,
Այլ փեսայիւն անձկութեամբ մաշիմ...
Աներկմիտ յուսով հաւատում՝
Ի կարողիւն ձեռն ապաստանեալ՝
Ոչ քաւութեան միայն հասանել,
Այլ զնայն ինքն տեսանել՝
Յողորմութիւն և ի գթութիւն
Եւ յերկնիցն ժառանգութիւն,
Թէպէտ ե յոյժ եմ տարազրեւի:
Բան ԺԲ. էջ 27 և հա.

Ջօրեղն ինքնութեամբ զիս, Հոր ընծայեալ,
Անդէն առ նմին, նովիմք միշտ ի Բեղ
Շնչոյս ողջութիւ կապեալ ընդ շնորհիդ՝
Ի Բեղ միանալ անբաժանելի:
Բան ԻԴ. էջ 57.

Ի Բեղ. Տէ՛ր, անկայց՝
Միացեալ իւզառ անբաժանելի,
Բան 2Ե. էջ 226.

Նդիցի արորմութիւն Ստեղծողիդ ընդ իս,
Նւ շահնչ հզաւոյ իմ ընդ Գեղ
Անբաժանօրէն կապաւ միացեալ ի մի:
Բան Դ. էջ 235.

Պրիստոնեական միաբնակիցը թէ տեսականորեն և թէ գործնական կա-
տարյալ արտահայտութիւնն է գտել մեր բանաստեղծի մէջ, Մարգրիտ անձ-
նագրութեանը, միանալով աստուծոյ հետ, բոլորովին չի կորցնում իր
տանտնայնութեանը և յի ոչնչանում լուծելով աստվածութեան մեջ. այլ
նրա հետ և նրան հաճաար ունենում է անճառելի լաւոյի մեջ՝ աշխարհի
սփառք վախճութեան, բանգորութիւն կենաց հանգստեան. մարդն տա-
րուծու մեջ և աստված ինքը մարդու մեջ.

Նոր հաստատեցի գոյութիւնն ընդ թեանս
Մարմնեղէն յարկի անդամոցս,
Յորում հանգստեցեալ անլքանելի՝
Բնակեացես բազմեալ ախորժ տնայնօք՝
Միութեամբ հոգւոյս իմ ընդ Գեղ:
Բան ԶԸ. էջ 209.

Այս փրկութիւնը լինում է միայն աստուծոյ շնորհքով, որ նա իբրեւ
ձրի տարբ Բաշխում է մարդկանց, բայց ոչ ամենքին. Երաւիք, Յէր-
զաւրիկի քաղցրութեամբ ի խնամս գթութեան ձրի և ամենաուստ արգրեց
սիրոյ՝ միեկթարել յաւիտ գործածելու համարելով աստուծոյ տալիս
տաշտման անբժկականքն (Բան ԶԸ. էջ 189): Բայց մարդն ինքն էլ պիտի
պիտտի այդ շնորհքին արժանանալ: Նրա համար նա պիտի ունենա ամե-
նից աստի կամոտ, հոյս և ժանախանց սեր. աստեց զբանց՝ ուժգնաբար
զղջումը, ինչպէս և մեղանչելը, միապէս կորստան և մասնում հաճատով
կտրելի է ամենայն բան տնի: և հաճատով է միայն, որ աստիկարող կանգ-
նած է գգում իրեն: Հաշար ասեալ է գեղի տուրքը, փառքը, կյանքը,
վախելութիւնն ու հանգիստը, մի խոսքով՝ արդարացումը: Իսկ սերն է
միայն, որ փրկութիւնն է բերում, որովհետեւ սերն ու աստված կորստում
է աստուծուն իրեն տեսնելու և նրա հետ միանալու: Մի անգամ որ մի-
տիկն ունի փրկութեան համար անհրաժեշտ հաճաւը, հուշան զ սերը,
այնուհետեւ մտում է նրան դարձադրել փրկութեան միակ միջոցը. նա պետք
է ամբողջովին նվիրվի աստուծուն, ուրանա իր տնի՝ միայն աստուծով
և աստուծու մէջ ապրելու համար: Նա պետք է խորասուզվի իր հոգու մեջ,
որ աստուծու պատկերն է. շարունակ դիտի, քրքրի ու վերլուծի ամբ, որ
միևնույն է. Թե հոգու տեղը յառաջ կեանքի գլխին՝, շարունակ աստու-
ծուն դիտի. նա պիտի է շարունակ աշխատի աստվածի ու կրքերից, մարդիկ
աշխարհից, մարդիկ կարիքներից ու կրքերից, մարդիկ արտաքին բանե-
րից: Իսկ զբո իմար էլ պետք է միշտ թուլացնի, ճնդի մարմինը, ինքն

¹ Ո՞ր յառաջի գովն հզաւոյ ի գլուխն իմ կենաց Գրիտուս (Բան ԶԸ. էջ 183):

իօնն նվաստացնի, մեղադրի, աղոթի և աստուծոյ պարտաթյունն ու զթաւ-
րյունն հալթի, մինչև որ վերջիվերջս կտրուեալ միանայ աստուծոյն և
կատարայ աշտորրությամբ երջանկանալ՝ դառնալով աստվածանման:

Բայց հնարավոր է արդո՞ւք ուրանալ մարմինն ու աշխարհը մէյս ան-
հնարությունն ահա դառնում է ներքին հուզումների աղբյուր, ֆիզիկական
էջ նրան զինդեղում է: Բայց դու դառնում է միանգամայն և իսկական զո-
րեղ քնարերգության աղբյուր, մի փոքր բանասերէ-թյան, որով ապաշ-
խարհը պատկերանում է իր հագեկան ձգտումներով ու սարսուռներով:

6. Հոգւո և մարմնի հակառակություն: Ունայնություն երգը Գրիստո-
նեական եռանդանություն: Մօրզն լինելով անդերէ աստուծո ասեղծա-
գործության կենտրոնը, իսկապես մի թույլ էակ է, կազմված երկու հակա-
ռակ մասերից՝ մարմնից և հոգւոյ: Փրկության ձգտելով՝ նա բարձունք
ներքին պայքարի մեջ է և չլիտե, ին որք կտմբը կտտարի, մարմնի, թե
հոգւո: Այս երկուությունն է ահա, որ դառնում է նրա համար տանջանքի
պատճառ: Գիտէք էր մեռցնել մարմինն և ուրանալ աշխարհը և ամեն ինչ
նյութական, որովհետև հին քրիստոնեական հայացքով մարմին և հոգի, աշ-
խարհի կյանք և հանգերձյալ կյանք իբրև երկու հակառակ և անհաշտ բա-
նեք կանգնած էին դեմ ու դեմ: Մարմինը զորանաւ, հոգին էր թուլանում,
և օնդակառակն: Մեկը, երկիրն, ունայնություն էր ու աստուպանք, մյուսը,
երկինքը, իսկական բարեք և անզորություն: Եթե ահա ծնվում է միւր բա-
նասահղծության մեջ զորեղ քնարերգությունն աշխարհի ունայնությամբ,
իբական կյանքի ոչնչությամբ և, մարդու քուլություն մտգին:

Տարբ ժամանակիս յանէից,

Անցեալն աշայա և ազաւնին կործողական,

Ե՛ս անհամբեր և բնութիւն թերահաւատ,

Ուր անհաստատք և միտք ցնդեալք:

Կիրք հարկաւորք և բարք անժուժկալք,

Մարմին մեղաւմակարդ

Եւ յօժարութիւն երկրասէր,

Դիմամարտութիւն անկակից

Եւ խառնութիւն ներհակական,

Բնականութիւն կաւեղէն

Եւ անձրեք ուժգնակիք:

Կարիք անթուելիք և պատահարք ամենազրաւք:

Միտք չարախնամք և տենչմունք բարխատեացք:

Կեանք առօրեայք և զմբաղք սակաւաւորք:

Քարմունք յիմարութեան և խաղալիք աղայականք:

Ողխատութիւնք ընդունայնք

¹ Երանդի -բղէն ոչ է՝ աստից Գրիստոսի Աստուծոյ՝ հոգւոյ փրկութիւն, և ոչ աստից
տեման աշտ՝ առ լոյս զաւարճութիւն, և կամ աստից արտակին նշանից արեւն երբեք
թողջութիւն:—Բարդէն և ոչ աստից խառնվածութեան ծանկութիւն և ապաւանց անձն
գուպութիւն (Բան Ծ. էջ 180):

Ըն զայն անկէ իրազարկանք:

Համբարժ ոչ Յից և ցառիստի հոգմոց,

Նմա մուրիւմի ոտու: Իրաց

Եւ կիրպարամի ծիծաղելիք:

Բան Ծն. էջ 141.

Ահա թե թնչ է իրական կյանքը և մարդը: Բայց այդ չէ միայն. մարդ-
կային կյանքը և զգվելի ու դարչելի է և շունի ոչ մի լավ բան իր մէջ.
«Ընտանիք թշնամիք, հարազատք հակառակք, և որդիք դավաճանողք» են:

Սիրտս նանրախորհուրդ, բերանս չարախօս.

Ակնս յայրատառես, տկունջս վրիպալուր.

Ձեռնս մահաձիգ, երկկամուռնքս անփորձ.

Ոտնս մոլորաշաւիղ, ընթացքս աներկիւղ.

Հետք խոտորնակ, շունչք ձխախոռն, գնացք խաւարային.

Գոյութիւն լերդի վիմական,

Խորհուրդ ծորիալ, կամք անկայուն,

Չոր անփոփոխ, բարեմասնութիւն սաստնեալ.

Անձն տարապիր, աւանդ վաճառեալ:

Գազան վիրաւար, թռչուն նետահար.

Փախստական քարավէժ,

Ըմբռնեցեալ մըստապարտ, աւազակ ծովակուր:

Ջինուար նենգաւոր, մարտիկ անպատրաստ,

Սպառազէն անժուժկալ, մշակ հեղցեցեալ:

Աղօթական անխրախոյս, բեմական ստորնաքարշ.

Քահանայ անկնդրուկ, օրինական աննուէր:

Դպիր կշտամբեալ, իմաստակ խելագար:

Ճարտասան աննունի:

Կերպ անպառկաւ, յդմք անամօթ,

Երեսք լարրոշեալ, գոյն անհամբոյր.

Տիպ տմարդի, դեզ ծանակեալ:

Խորտիկ խանգարեալ, ճաշակ գորշեցեալ:

Այգի դադանաւոր, սրթ որդնահար.

Պարօնգ փշաբեր, հասկ ուտնահար.

Մեղր ի մկանց ճարակեալ, անպտտապար անկեալ:

Մնապարծ յուսահատ.

Անամոռելի նոզով, անհաշտական բաժանեալ.

Ունայնաբան շաղակրատ,

Պանաքամիտ զոռոզ, անասնօրէն ապիրատ.

Դժոխային տգահ, աներասան յանդուգն.

Մոլեգնութիւն անտատուած,

Ձեռնաձգութիւն սպանող:

Տառառկացան երկրագործ.

Երջանկութիւն եղկելի:

Վայելչութիւն անշքեալ,
 Կարգութիւն ակարացեալ,
 Բարձրութիւն խոնարհեալ,
 Փառաւորութիւն ընդտանեալ,
 Պատուիրանազանցութիւն յարակալ,
 Սխալանք ինքնակամ,
 Մատակարար կամակոր,
 Խորհրդակից նենգաւոր,
 Բարեկամ հառաւածեալ,
 Հաղարապետ զոդամիտ,
 Բերձաւոր կծծի, բաշխող ժլատ,
 Վերտանալէ կարկամ, ոգի անախտակիր,
 Իդձք անսէր, բարք ասեցող,
 Աղիք անգթականք, դնոցք անխոհմ,
 Աներեոյթք ֆրասեալք,
 Մածուկք անիծեալք, գիպուածք թշնամանեալք,
 Վաճառական վաւերիչ, շահարար շռայտեալ,
 Պաշտօնեայ արբեցող,
 Գանձուց ռաւիկան երկմիտ,
 Պատգամաւոր բանասերկու,
 Դոնապան քնէած,
 Աղքատ հպարտ, մեծատուն ժխտող,
 Դիւանապետ տնօրէն, պահապան մտանիչ, բնականից չարախօս,
 Սաւրանդակ անժաման, թղթաբեր պարտաւոր,
 Առաքեալ խոսվարար, միջնորդ անիմաստ,
 Արքայ արտայած, թագաւոր թաւաւար,
 Կայսր ոգէկործան, իշխան տիրադատ,
 Զօրավար զրկող,
 Դատաւոր ակնաւոր, ռամիկ ինքնազարծ,
 Նախատողի ծաղր, սիրելւոյ տշխար,
 Բանազրի դաբով,
 Յանդիմանչի դատախազութիւն:

Բան ԾԶ. էջ 142 և հտ.

Եվ այսպես՝ ավելի ու ավելի վատթար են տանք բան և ամենքը, տմեն պարտաւորութիւն և տմեն դատակարգի մտքդիկ: Աշխտորի հոռետեսութիւնը սոսկալի է, ոչ մի լավ բան չի տեսնում նա կյանքի մեջ: Ռայց սարսալին այն է. որ թեպետ աշխարհն ու կյանքն այսպիսի են, բայց մարդս կազմված լինելով մարմնից, ինչքան էլ ճիշդ է թափում, չի կարող տնոււմ ուրանալ այդ աշխարհն ու մարմինը և միանալ աստուծուն:

Եւ արդ, վասն դի ի ձեռն մեծիդ
 Եւ ամենունար Արուեստաւորիդ,
 Իմս եղանութեան Տեառն և Աստուծոյ,

Իբր ի քրայս ընտրութեան փութոյ քոյ սիրոյ՝
 Հանապազ ետամ և ոչ երբէք պարգիմ,
 Միշտ խանձիմ գուգիչ և ոչ ևս միանամ,
 Ահա դուք, Արծաթագործդ երկնաւոր իմ ճարտարապետ,
 Ի սնոտիս վաստակեալ առ իս աշխատիս...
 Եւ չարութիւնս իմ ոչ հաւեցաւ.
 Ձոր ինձէն մոյնալ չարահար՝
 Իբր գիւնյազար գիւտարեալ իմն ողորմելի՝
 Յանդգնեալ անկարգս խոսիմ
 Ձիւս պարտախոս անեցուցանել,
 Քան հաշտութեան հնարս ինձ այսու կազմել,
 Բան Եթ. էջ 177.

7. Մեղքը և օտտանացումը:—Որ ապաշխարողը չի կարողանում հեշտությամբ հասնել իր նպատակին, դրա պատճառն այն է, որ մարդը հոգուց և մարմնից կազմված լինելով հանդերձ՝ միաժամանակ խաղալիք է երկու ներհակ ուժերի մեջ. ստոված և հրեշտակները ձգտում են նրան բարձրացնել, իսկ սատանան իր լեզուհոններով նրան հետ է քաշում Աշխարհում և մարմնի վրա իշխում է սատանան, որ ամենայն հրապույրներ ստեղծելով մարդուս մեղքի փորձության մեջ է ձգում շարունակ, եվ մարդն ահա իր անձնիշխանությամբ գտնվում է մի արագիկական, միշտ հուզալից վիճակի մեջ. նա ցանկանում է աստուծու կամքը կատարել, որպեսզի բարձրանա ու վեր խոյանա. բայց ծնված ընդհինգ ժառանգաբար արդեն բերում է իր հետ մեղքը. բացի այդ՝ նրա ազատ կամքը թույլ է, ամեն վայրկյան սատանան դրդում է նրան մեղանչել, և նա մեղանչում է ու զլորվում ցած:

Արդարեւ, շատ դժվար է որոշել, թե նաբեկոյցին ունենալու մեղք տանլով ինչ է հասկանում. նա իսկուպես չգիտե, թե ինչ է մեղքը, անձնական մեղքը, որի մասին և սովորաբար տարածված, անտրոյ բառերով է անցնում: Բայց նա ամենից առաջ միասին կրոնավոր է, ուրեմն աշխարհի կյանքից հրաժարված մարդ. ոռատի նրա համար ամենայն ինչ աշխարհային՝ մեղք է: Աշխարհային ամենակաշունչ կյանքը, սակայն, մի պատրողական գիտն է, որ զրոյում, հիմարացում է քերկրածին մարդուն, և մարդը, խելագարված, չի կարողանում շտապել, չգրավել գրանցի:

Մոլորեցող անտուկ ընթացիւք ի միտս վայրենիս.
 Մանգղանցայ յըթամբ խաից ի բան հրկրաւոր:
 Ձակտոնցոյ անկասելի ի պատկառելիացն դարձող...
 Գիրկս անի կենցաղոյս սիրոյ,
 Եւ ի Քեզ թիկունս փոխանակ գիմաց դարձուցի.
 Ի թոխյս մտաց ընդ խաւար խորհրդոց սլացոյ.
 Ձանաբատ հոգիւ մարմնոյս փափկութեամբ յաւէտ վտանցի...
 Յաղոթարանն վայրի ընդ պատաղմունս ալսի կենցաղոյս շրջանակեցոյ.
 Ոչ կացուցի յառին գերիվար մտացս երեսանու բանին:

Բան Ի. էջ 47.

Այսպէս ամենամեծ իրական մեղքն այն է, որ նա չի կարողանում աշխարհից իր միտքը կտրել և իր մարմինը ոչնչացնել. «Յեգիպտոս միշտ ունիս զսրտիդ զդարձն» (Բան Բ.):

Մի անգամ որ այդ մեղքը կա՝ Թեացած ամենը երկրորդական է: Որովհետեւ, իսկապէս, Թնչ հարկավոր է, թե նա ինչ մեղք ռենի իր սրտի վրա ծանրացած. բավական է, որ նա այդ մեղքը սրտի ըստը խորութեամբ ըզգում է, և այդ մեղքը նրա վրա լիւնացած է և երկնային բարձրութեանից միշտ ցած է զլորում նրան, և ինքը ճնշվում է նրա բեռան տակ: Ուստի բռնուն աստուկութեամբ նկարագրում է նա ավելի մեղքի զգացումը, մեղավոր մարդուն, քան մեղքը: Նա տառապում է մեղքի հետեւանքներով, ինչպիսի մեղք էլ լինի, նա քննի իր ոչնչութեան, անկյալ դրութեան զգացումը, զգում է իրեն հողով ջախջախված, ինչպէս մի խորտակված նավ կյանքի ծովում: Եվ այն գիտակցութեամբ, թե իր ամեն մի քայլը մեղք է և թե ի կորուստ Թանգ մեղքերն անչափ բազմազան են և ավելի քան ծովափի ավազը:—այդ է ահա, որ փառազուրկ է նրան և ձգում, մըրկում է: Նրա էութեանը:

Ձի թէպէտ և յոյժ բազում են մանուկնքն

Ի յափունս ջրոյն համահաւաքեալք:

Այլ ուրոյնք և տառնալականք

Ի ծննդոց աճելութենէ.

Իսկ մեղանք իմոյս յանցանոց անթիւք:

Ջորս անհնար է առնուլ ի միտ:

Ոմն և ծնունդք իւր, ոմն և շառաւիղք իւր.

Ոմն և բիծք իւր, ոմն և արկածք իւր.

Ոմն և փռոյք իւր, ոմն և արմատք իւր.

Ոմն և հասարակածք իւր.

Ոմն և պտուղք իւր.

Ոմն և նշխարք իւր, ոմն և ճիւղք իւր.

Ոմն և ոստք իւր, ոմն և արմկունք իւր.

Ոմն և ճիւղանք իւր, ոմն և մատունք իւր.

Ոմն և խրամունք իւր, ոմն և զօրութիւնք իւր...

Բան Զ. էջ 16—16.

Մեղքի հետեւանքների այս սոսկումն իսկապէս խորտակում, ջախջախում է նրան: Այդ մեծ թվաբնութեանը հենց, որի մի փոքր մասը միայն բերվեց վերևում, ըստինքյան խորտակող է և սարսուռից. մտքը շնչառապած է լինում կարգալիս, կարծես, մեղքերի ճնշումից: Նրանք անչափ և անսահման են և նրանց ծնունդն և հետեւանքն ավելի ևս զարհուրելի: Նրա երևակայութեանն ստեղծում է միշտ նորանոր մեղանշաններ անարկուս դրութեաններ, որոնք հալածում են նրան:

Իր միատրկական ձգտման մեջ նա մի բոլոր հոգու անդորրութեան շունչի, միշտ առնորդում է խռովահույզ վիճակով, որովհետեւ միշտ զգում է և նույնիսկ տեսնում է, որ ստատան, հեշտածին մեղքի ստեղծողն, իր բոլոր-

բավոր լեզուներով, անհրկույթ կանգնած է միշտ նրա մոտ։ Բանասերուն
իր ձեռքին ունի նեւա ու արձաններ։ Երեսցով գողտնի վերավորում ու խո-
ցում է նրան. կամ իրրև ընդգիմարտ կավող վրա դիմելով՝ պատերազմ է
հանում։ կամ նստակծան ու մահու կապով փակում է։ կամ ձգում աղժոսիկ
դրի մեջ, վհի ու զնդանի մեջ, մեղքի երկաթներով շղթայելով։ Որքան նա՝
իբրև խաղող՝ հաճութուններ է բերում ու մեղքի մուրհակներ տոնում մար-
դուց և բեժժանօք յուսթից՝ կախարդել խորամանկում։ կամ բռնաստեղծի
շուրջը մատակոտողով պատում, որի մեջ նա դեպի կորուսան է ընթանում։
կամ գիվական տենդ ու ջերմ բերում մարդուս, մահացու թույն լցնում նրա
մեջ։ Նա մերթ մարդուս հաժար հաղթ ու որսգայթ է պատրաստում իրրև որ-
սող և պատրելով վհի մեջ ձգում նրան. մերթ մարդու վրա լուծ է գնում և
սայլի լծում նրան, կամ իրրև խածոտող զազան՝ ժանիք է ցույց տալիս։
Երբեք էլ աղվական խածմունք ազդում հողուն, աշխնքն հեշտասիրական
պրդիտ հարուցանելով՝ կործանում է մարդուն, մոխրի ու աղմի մեջ թավա-
լեցնում, իսկ ինքը հեռու կանգնած քրքրում է նրա վրա։

Սատանայի ահն, ինչպես և մեր այժմյան սնապաշտական հավատա-
լիքների մեջ, ավելի մեծ է գիշերը, երբ թանձրամած խավարը բռնում է
աշխարհը և մեր Հակոպե գիշերային հսկումից հետո, վաստակած բազմածուկ
այխաստանքից, կտրծ ժամանակով պետք է իր խշտակը մտնի։ Սատանայի
գործունեությունն երանդուն է խավարի մեջ, որ նրա խշտանությունն է,
և ունի իր տառնիկն արհավիրքները։ Նա իր գնդերով պաշարում է աղո-
թողին, որ վատնգավոր դրուսթյան մեջ է և անքերելի ծանրութեամբ
զարհուրում է գի ցնորից եկամուտ պարտութեանց, թի տիրական անը-
ջոց։ Նա բազմատիկուր տարտամություն մեջ վախենում է, որ մի գուցե չարը
մի նոր գյուտու անի և իր ջնած տեղը, իր ճեռոթիկից գաղաթման ժամա-
նակ, մի նոր փորձանքի մեջ ձգի իրեն՝ առնելով ժամանակեամբ, բա-
րելի կրքով,՝ պատկուտելի գիվածներով, — այսինքն հին Դրուսայի գիշե-
րախաղությունը։ Այլ բանաստեղծն ամենամեծ հոգացողությունը խնդում է
սատուծուն, որ պտի իրեն այդ վտանգից, որ աստված իր խոսքով սրբի
նրա պատապարանը։ հրեշտակները գնդերով, մարգարեները կատակաբանով,
առաջայններն ավետարանով պահապան կանգնեն իրեն։ Իբրև չարակալած
է ամենից առաջ խաչը, որ պիտի պահի նրան, լինի նրա երդերի պահա-
նարան, գրվի տան շեմքին, որ ստատանտ չկարողանա ներս մտնել։ Սենյա-
կի մուտքն ու շեմքը, երգը, տառաստղը, իր անկողինը, իր անձն ու սիր-
տը, զգայարանները, բոլորն առանձին առանձին հոգացողություն են պա-
հանջում։ Աստված պիտի ուղարկի իր զվարթունների գնդերը, որոնք պի-
տի կովեն ընդհան գնելի դասերին, որպեսզի ինքը, բանաստեղծը, ինչպես
անփնտա պահում է ճնիւտ, — այնպես էլ անփնտա դարձնի։ Այս աղոթքները
սատանայի դեմ (տես առանձնագետ Բաշա ԺԲ, էջ 28, ՂԱ. 237) ունին մի
տեսակ նկատելի աղոթքների բնավորություն, որ ցարդ տարածված են մեր
ժողովրդի մեջ. երկուսի մեջ էլ չարանալած միջոցներն են՝ խաչը, երկաթ,
քաջախ և այլն։ Անպայման դրանք մասամբ ժողովրդական հավատալիքից են
ծագում, բայց իրենք ևս չառավելի ազդել են մեր ժողովրդական ստանալատքի
վրա։ Բերենք այստեղ ԺԲ բանի վերջի մասը։ Եր չառ սիրված է եղել,

Մաղթանի գործերի արեւարաց գիշերայնայ:

Ընկնել քաղցրութեամբ, տէր աստուած հօր,
 Զյաւանցողիս զազայանս.
 Մասիք զթաւթեամբ
 Առ պառկածեալս գիւնը.
 Փարտեա, ամենապարզէ՛,
 Զամօթական շարունթիւնս.
 Բարձ յինէն, ողորմանի
 Զանբերելի ծանրութիւնս.
 Անյրպեաեա, հնարաւոր.
 Զմահացու կրթութիւնս.
 Աւարեա, միշտ յաղթող,
 Զխաբողին հանութիւնս.
 Բացադբեա, վերնային,
 Զմոլելոյն մառախուղ.
 Կնքեա, կեցուցիչ,
 Զկորուշին ընթացմունս.
 Յրուեա, ծածկաւունս,
 Զքմբունդին չար պամունս.
 Խորտակեա, անքնին,
 Զմարտողին դիմեցմունս:
 Անտեսպրեա ըս անամբոյ
 Զլուսանցոյց երգ յարկիս.
 Պարփակեա ըս ինամբոյ
 Զառաստող տաճարիս.
 Գեղարեա ըս արեամբոյ
 Զմուտ սեմոց սենեկիս.
 Կերպոցն զքո նշանդ
 Ի հեաւ ելից մողթողիս.
 Ամբացո քո աջովդ
 Զանգատեանքս խշտին.
 Մաքրեցես ի հաղբից
 Զծածկաբան անկողնոյս.
 Պահեսցես քո կամօքդ
 Զտառապեալ անձն ողորոյս.
 Անխարդախ արասցես
 Զքո շնորհեալ շունչ մարմնոյս.
 Կացուսցես շրջափակ
 Զպար զօրուղ երկնայնոյ.
 Կարգեսցես ի դիմի
 Ընդդէմ գիւացն դասու.
 Տուր հանգիստ բերկրութեան
 Մահահանգոյնս նիւնման
 Ի խորութեան գիշերոյ...

8. Աստված և մարգտ: Ապաշխարագի իմ ֆնտմագիւումը: — Ինչպես պարհու-
րանքով զգում է բանաստեղծը սառանայի ներկայութիւնն իր կողքին,
նույնպես նրա համար զգուշ է և ներկայութիւնը առտուծու: Որի ողոր-
մութեան նշույլները ծագելիս ամեն ինչ գիշակաւ ոչնչանում է: Բայց մինչ
սառանան դարձում է, առաված անձնիշխան է թողնում նրան, իր պատվի-
րանները միայն աված լինելով մարդուն, թե ինչպես կարող է նա փրկվել,
Բանաստեղծը, սակայն, գիտակցում է իր թուլութիւնն ու ոչնչութիւնը
և կցանկանար նույնիսկ անձնիշխան չլինել, միայն թե չմեղանչեր: և իր ու
առտուծու տարբերութիւնն այնպես անհունապես մեծ չլիներ. որովհետեւ
որքան աստված մեծ է, կորույ, բարձր ու մոլոր, այնքան ինքը չնչին,
թույլ, ստոր, տղամտիկ ու աղիղ, նա երբեմն նույնիսկ մի տեսակ նախան-
ձով է երգում առտուծու հիացքը, որովհետեւ ինքը չունի այդ:

Ինչ արդարութիւն հանգերձեցեր, բարեբար,
Եւ ինձ՝ ամթ և պատկաստնս պատրաստեցեր.
Ինչ փառս վայելչականս,
Եւ ինձ՝ նախաախնս յարմարաւորս.
Ինչ քողցրութեան յիշտակ,
Եւ ինձ՝ մազձ քողախաւ ի կտորաբաժի.
Ինչ բարեբանութիւն անլոյսի,
Եւ ինձ՝ մայնս ողորց աղօղակի.
Ինչ օրհնութիւնս երգաց խնկելի,
Եւ ինձ՝ մերժումն տարագրութեան.
Ինչ իրաւունս բազմաբժանիս,
Եւ ինձ՝ պատասխանատուութիւնս աննաւարանս.
Ինչ բարձրութիւնս անճառ գովեալից,
Եւ ինձ՝ գաճիւն լիզելոյ պատիժ մաղանաց:
Բան Ի. էջ 46.

Դու լոյս ես և յոյս,
Եւ ես՝ խաւար և յիմար,
Դու իսկութեամբ բարի գովելի,
Եւ ես՝ համայնիւն չար ապիկար.
Դու քէր սուրբից և երկնից.
Եւ ես՝ անիշխան շնչոյս և հոգւոյս.
Դու բարձրելի ի կարեաց դառնալ.
Եւ ես՝ ամբաստան և վտանգաւոր.
Դու ի վեր քան զկիրոյ երկրիս,
Եւ ես՝ կաւ անարգութեամբ գարշութեան.
Դու... մնաս յաւիտեամ յանրաւ բարձրութեան,
Եւ ես՝ միշտ կորնչիմ...
Ի քեզ ոչ է մթութիւն կամ նենգութիւն,
Եւ ես բովանդակն իօկ իցեմ,
Որ գաւառդ իմ ոչ պահիցեմ:

Բան 29. էջ 221.

Աստուծու և մարդու այս տարբերութեան պատճառն ինքը մարդն է իր ազատ կամքով, թե չէ՝ աստված միայն էութեամբ րարի է և մարդուս միայն լավ է ստեղծել, և ինքը մարդն է՝ իր ազատ կամքով ընկել (Բան ԽՁ. 515)։ Մարդուն մեռւմ է՝ ընկած դրութեանից բարձրանալու համար՝ ապաշխարել և հույսը դնել աստուծու բարութեան ու գթութեան և ամենա-կարողութեան վրա։

Աստուծոյ բարեբար, հոգի, տհաւոր,
Հայրդ բարի ողորմութեանդ շնորհի,
Որոյ անունդ իսկ Մեծիդ
Ձգթութիւն և զընտանութիւն աւետարանէ...
Թէպէտ և քո իցին պարգեք և ք՝ ողորմութիւնք,
Այլ ոչ ի պարգևսն ես այնքան հոչակեալ,
Որքան յողորմութեանն...

Բան ԺԳ. էջ 20.

Հան դիւ ի բանտէս, արձակեա ի կապանացս.
Ջերծ ի շղթայիցս, փրկեա ի խեղճմանէս.
Աղտոնեա ի տապնապէս, քակտեա ի յերկաթիցս.
Հոյծ ի պաշարմանցս, արտաքսեա յերկմտութեանցս.
Սփոփեա ի տխրութեանցս, հանգձ ի նեղութեանցս.
Փարտաւեա ի վշտացս, հանգարտեա ի խռովութեանցս.
Ապաքինեա ք լալոյս, մերժեա ի հեծութեանցս.
Հեռաց ի յողորցս, կազդուրեա ի կակամանցս.
Աստուծոյ ողորմութեան,
Եւ պարգևատու քաղցրութեան,
Մի գգրաւելոյս տրեամբ հօրիդ՝
Անտես արարեալ ընդ վայր կորուսաներ.
Կանգնեա զհասեալս յափն մահու
Ի բազմավտանդ հիւանդութենէս։

Բան ԶԳ. էջ 221 և հա.

Բայց զարհուրեցին այն է, որ այդ բարեբար, ողորմած աստվածն ապաշխարողի բազմատեսակ և բոլորովոր աղերսանքների և հարցումների դիմաց մի անտարբեր ու խոր բռնութեան է պահում և երբեք չի հայանում, թե նա արդյոք այս հեծեծանքներից հետո պիտի փրկվի, թե ոչ։ Սրբեք չի բացվում «այն աշխարհին» թանձր վարագույրը։ Բանաստեղծն այս անորոշութեան տուալ տանջվում է, նրա սիրտը նվաղում է՝ ցանկանալով իմանալ, թե արդյոք աստված պիտի հիշե իր բարեբարութեանը.

«Անտեսնացես զգթասիրելդ, խնամեղ.
Այլայլեսցես զմարդասիրելդ. անփոփոխ.
Նահանջեսցես զկենսագրծելդ, անվախճան...»

Գանի որ աստված ոչինչ չի պատասխանում, բանաստեղծին մեռւմ է միայն եղբակացութեանն հանել աստուծու արարքներից ու ստորոգելի-

ներից և նրա հետ մի աղերսախոսող զառ վարել, թե անպատճառ պիտի իրենի իրեն:

Այս ևս զմից, սակայն, բռնաստեղծը սոսկումի մեջ է աստուծու առաջ. որովհետև նա ինչքան բարի հայր է, նույնքան և արդար դատավոր է: Ուստի կտրող է պատահել, որ բանաստեղծը ոչ միայն աստուծու հետ չմիանա, այլ նույնիսկ մեղավոր լինի, քանի որ ամենայն բոլոր կարող է գտնվել վերջին դատաստանը, որ ինչքան էլ հեռու լինի մարդկությանից, անհատի համար ամեն վարկյան դալիս է մահով: Այս պատճառով տալով, իսկապես Պրիստոս, ամենից առաջ և ավելի հաճախ ներկայանում է բռնաստեղծին իբրև եզրադրեցների տեսնող դատավոր, որի ահավոր ձայնը շարունակ աժգիւն հնչում է արդեն նրա ականջին: Նրա սիրտը դրանից ամբողջում է, միտքը սասանում. ներքում սկսվում է մի զորեղ կռիվ չար ու բարի հեղձուքների, որոնք երկու ներհակ բանակի բաժանված՝ միմյանց հետ միշտ ընդհարվում են,—որովհետև դատաստանի սարսափը միշտ կա նրա առաջ,— և նրան ձգում են ամենավարան տարակուսանքի մեջ: Նա շարունակ զգում է իրեն ինչպես մի հանցավոր՝ կանգնած դատավորի առաջ. ինչպես մի եղեռնագործ, որ առաջից գիտե, թե իրեն սոսկալի պատիժներ պիտի տան: Եվ վերջապես տեսնում է իրեն ինչպես մի դատապարտված. «Ահ, գուր և որոգայթ անճողոպրելի... առաջնապետ մեծաւ առ գուրս ինչ հասեալ՝ զամսթն մշտնջնաւոր տատեն զծագրելս: Ազատվելու ոչ մի միջոց չկա, բայց եթե դարձաւ հուսալով տատուծու շնորհքին՝ բանալ իր վիրավոր սրտի խորքը, նկատագրել իր հոգին, խոստովանելով տարածել իր մեղքերը, միաժամանակ և գիտակցելով իր ոչնչությանը՝ փոռաբաժնել աստուծու մեծությունն ու բարությունը:

Դրա համար է հենց, որ նրա խռովահոգ սրտից բխում է նրա խռռքը աստուծու հետ ինչպես մի «հառաչանքի ձայն, սրտի հեծություն, ողորու աղաղակ, որից նրա անձը տոչորվում, ճննհերվում ու հալվում է ողջակիզվելով:

Այս է ահա ամբողջ Ողբերգության միագույն իրի հրաշակներաթիւնը: Ամեն բան, ինչպես կոչում է հեղինակն իր այս քնարերգության զուլուները, այդ «միագույն իրեն բարդումը, կուսակումն է, ներքին հուզման ու շարժումների մի մի կողմերի պատկերացումը, ահ ու սարսափի ցուցումը, զեանաքարը ու աղբիւրը պաղատանքը, սրտի գաղտնարանի բացատրությունը, անձի քստմնութիւնը մեղքի առաջ ու տենչանքը վեր խոյանալ, հասնել յուլսիք աղբյուրին: Ամեն ինչ թանձր գույներով նկարած և մարգլիային հոգու և նույնիսկ մարմնի բոլոր ուժով զգացած: Շարունակ խորասուզվելով ինքն իր մեջ՝ վերելուծում է նա իր մեղավոր հոգին, շարունակ մտածելով աստուծու վրա՝ ճգնում է կորովել զգալի աշխարհից և չկարողանալով դրան հասնել՝ մեղագրում է իրեն:

Եվ այս ապաշխարությունն ու կոծը, ինքնանվաստացումն ու ձաղկումը, անձնապարսափն ու քարկոծումը, ինքն իրենից զզվանքն ու վայտալը, նույնիսկ սեփական մարմնի տառապանքները չափ ու սահման չունին: Նա մեծ հոճույքով տնում է այդ ամենը, որովհետև որքան շատ Դարդի իրեն, այնքան ազատ կլինի կորստից. որքան շատ պաղատի, այնքան շուտ

նա պետք է ապաշխարի և միշտ ապաշխարի, իրեն նվաստացնի ու պարսպվի:

9. Երևակայությունը, ձևը, տեսիլներ:— Բանաստեղծի մեծ եռակայուն-
թյանը, որ Ողբերգության մեջ հովան է ափսիսի գեղի բնության և զյանքի
մասը տեսարանները, ափսիսի ու ափսիսի տանջողին վիճակով ճնշում է նրան,
սեղծելով մեզ: Նորաբանը զարեւարիչի պատկերներ: Նրա երևակայությունն
ուներ իայն էական հատկանիշը, որ տրոպիկական պատկերներ է բնագրկում
նա բանաստեղծ է. տեսիլը մեծ տեղ է բռնում նրա եզրու մեջ, մի կողմ
համար նրա աչքին երևում է ոչ միայն սաստան զանազան կերպարներ
ներսով ու որոգայթներով, այլև վերջին դասաստան, որ մեծ է
կին: Մի նա տեսնում է տոգորաբար ոչ թե հեռվից, ընդհանուր և էական
սահմաններով, այլ մասեր, պատկերի մանրամասնությամբ և բոլոր պայ-
ծանությանը վերջնականությունը, ինչի մարմնի թե եզրու, սեղծողները
թե դարձողության, նրա երևակայության ու մասնության կարեւոր գիտն է.
և գրանով է նա ազդում: Շատ սրտասուց է նրա տեսիլը իր մեծացում, մեծած
և նույնիսկ թաղված ու փոշիացած լինելու:

Ողորմեա, Տէ՛ր, մահու մեղադարտիս

Յաւուր արձակման շնչոյս կենդանութեան,

Մինչ աշացս ողորմագին հայեցուտես

Ի բարձունս կողկողիցի,

Զբաղմարկածեան ուղւոյն զանգերն ընթացիցն

Զանժախչելին հանապարհ յաշա բերելով,

Մտացս տեսմամբ ամենայնիս վասնզեալ,

Սէ ի յերդ բնակութեան յարկիս նկատեալ յելիցն յաւիթ,

Թշուաւացեալ կինամեռութեամբ.

Դիմեց աշխարհութեան, տատանմամբ մատանց,

Կարկամ հառաւմամբ, նուազ հեծութեամբ,

Նրբական ձայնիս, յողի թախտութեան

Յոգնամասնեայ տարակուսանաց՝

Ի խորոցս աներևութից

Զգործեցելոցս ողբալով հառայեմ,

Կարող ես, բարեգութ, և անդ հրաշագործել,

Յաւեա զօրութեամբ տանով,

Թէ՛ Ողջ եղիչիւր յողւոյդ խորտակմանէ . . .

Կամ թէ՛ Երբ ի խաղաղութիւն սրբեալ ի մեղաց:

Սէ զոր յայնմ ժամու ոչ ժամանեցից պաշտակի,

Այսօր բնկալիս մարգասիբաղէս.

Ո՛վ երկայնամիտ, բազմաշնորհ, ամենակեցոյց:

Տեսարանը փոխվում է. նա արդեն մեռած է:

Որքամ, որ այժմս բանապահոյճ

Խորխառնայն, սիգացող, բարձրապտուտոց՝

Անկեալ զնրմ գի մեկնեղան,

Կարկեալ ի խոտից, կռչկանդեալ ձեռք,
 Լքեալ անդամօք, խփեալ շրթամբք,
 Կափուցեալ աչքք, տախտակ անշարժուն,
 Կոճղն կիսայրեաց, արձան անզգայ,
 Պատկեր անբարբառ, գոյութիւն անշունչ,
 Ողորմելի տեսիլ, աշխարելի կերպարան,
 Ողբալի օրինակ, եղկելի դէմք,
 Արտասուելի նմանութիւն, լսեցեալ լեզու,
 Յամաքեալ խոտ, թոթափեալ ծաղիկ,
 Մարեալ գեղ, շիջեալ դամբար,
 Դատարկ կոկորդ, խոպանացեալ սիրտ,
 Աղխեալ ազգաբան, սպառեալ աղբիւր,
 Թալկացեալ մարմին, ժողխեալ որովայն, քակտեալ տաղուար,
 Կոսորեալ ռսաք, բաժանեալ յօգք,
 Հռտեալ ծառ, սղոցեալ արմատ,
 Թողեալ տուն, հնձեալ արտ, հոորախուզեալ բոյս,
 Օտարացեալ բարեկամ, մոռացեալ ազնիստ,
 Թաղեալ գարշութիւն, մերժեալ ասելի,
 Բարձեալ խէթ, անարգեալ կմախք,
 Եւ իբր զանաղիաւն առ ոսն կոխեալ,
 Կարտեալ ալլօց մաթանաց,
 Որք զհաւատոց թշուառիս՝ ձայնիւ նուազեալ՝
 Աղերս հառաջման, ցօղով արտասուածց,
 Բարեկարգի գթութեան ի բարձունս տաքածանեն,
 Զաւ քեզ զարձն յեղանակեն արգահատելով ...
 Արդ լքաւ, մերժեցաւ, բարձաւ, տրոհեցաւ,
 Փախաւ, սրացաւ, տեղի ետ
 Կցորգութիւն զուգութեան կենցաղոյս կենդանութեան,
 Եւ յոյսդ որ ի քէն պարզե՛
 Մնացեալան և անցնչական յիշատակարան պահեցաւ,
Բուն ՀԳ. էջ 188 և հա.

Այսպիսի մանրամասն նկարագիր սեփական մտքման և մեռած գրու-
 թյան՝ միայն նարեկացիին կարող էր տեսնել, նոր բանաստեղծներից Դու-
 րյանն էլ ունի լիմ մահը, բայց որքան տարբերություն երկսի մեջ, Մեկն
 իր հիշատակով է անմահ Սուրբ, նրան ցավ է պատճառում, որ իր հիշատակը
 կարող է մեռնել, Իսկ մյուսը գիտե, որ ինքն անմահ է, բայց սարսառած է,
 թե մի գուցե աստուծու հետ միանալու փախանակ՝ բաժանվի նրանից, և
 ցավում է միայն, որ փրկվելու համար ինքն ալլա չպիտի կորոզանա
 ապաշխարել, աղոթել և պիտի կորոտի ուրիշների աղոթքին՝ աստուծուց
 գթություն ստանալու համար, Բայց այստեղ ես նա հուսահատ չէ՝ իր փա-
 խանակ նա աղոթող ունի իր Ողբերգությունը, Շատ բանաստեղծներ գրել
 են իրենց «Հուշարձանը»։ Գր. Նարեկացին՝ նսւյնպես։

Իսկ ինձ եղիցի պատգամս այս բունի
 Արման փորագրեալ ամեններն թանկանայի,
 Որ փոխանակ իմոյ եղկելոյս թնձին մահացուի՝
 Անգաղար հնչմամբ հեծութեան լալոյ
 Ասանց լալոյ միշտ աղաղակէ:
 Լիցի և ոսկերաց՝ քակեցելոց՝
 Ի հողապատեան շիրիմ վերակուին՝
 Անմահունչ ձայնիւ զայս խոստովանել:
 Հասցէ և մարմնոյս ի հող լուծելոյ՝
 Բարբառով իմն անաղելեաւ:
 Ծածկատեսիլդ զսոյն պապատել:

Բուն ԿԶ. էջ 168.

Նրա լարձան՝ Պղբերգությունն, ուրեմն, երկրավոր հիշատակի անմահու-
 թյան համար չէ, այլ զարձայլ փրկության մի մաղթանք մշտամահունչ, Նրա
 քակտված ոսկորներն ու լուծված մարմինն էլ ձգտում են ախճերական
 ոգուն միանալու համար պաղատանք անել իր բարձանով:

Վերջի՞ն ղատատուտի՞ համար Նարեկացին հաճելի հիշատակում է, թե
 հեռվից տեսնում է մաքով այդ երապետական ընտանիքի մահու ուրջ:

Ուշիւ մառցս տեսեալ ի հետեւսս
 Զհանգերձելոցն հանգէս ահաւորափայլ:
 Բուն Խ. էջ 104.

Վերջին դատաստանի նկարագիրը, որ մեծ տեղ է բռնում նրա երկի
 մեջ, համեմատ է քրիստոնեական հովատալիքին, բայց և շատ բան աճեց-
 րած է: Երկինքը ալալայելով գալարվում է և դղրդալով զիպչում երկրիս
 հատակին, իսկ լալնապարած թանձր գետինն իր հիմքերից առանձնվում,
 աստանվում է. ուժգնակի բախման հետ թնդում են ներքին խորքերը,
 հարթվում են լեռները. ցորերը և քուր տարերքները հողհեղում, հալվում
 և, ինչպես ծովի խռվեհույզ ալիքները, կուտակվում են, որպես թե փախ-
 չելով: Փոխվում են բոլոր արարածները՝ նոր կերպարանք ընդունելով:

Ծածկութիւնք պորձոցս հրապարակին,
 Եւ թնկերոյթք կրից մեր յայանին.
 Վարք կրօնից մեր ներդրանքելոց
 Ի մարմինս մեր նկարին:

Ինչպես մեր ժողովրդական անահավատքով՝ հոգին այդ միջոցին
 գուրան է լինում, մարմինը՝ ներսը. հոգին, ուրեմն, պարզ տեսնվում է իր
 կիրքերով, Վերժամ գաղութինք հրաշիցն զարմանալեաց... յիւրաքան-
 չիւր մարմինս անպակաս գրութեամբ իսկոյն երևին, և խորութիւնք ան-
 հաւիցն կնքելոց յիմաստից աստեաց առաջի ալաց միտք կերպարանին
 (Բան ՀԹ. էջ 210 և հաւն.): Այդ ժամանակ երկնքի թաղավորն, անկաշու և
 անխաբի, նստում է վերջին ահավոր դատաստանին, հատուցման վճիռն

իր ձեռքին: Եվ մեղապարտ բանաստեղծն ամբողջ էությամբ սոսկում է և միայն անբավ թվով վայ տալիս իրեն. «Բանդի սաստիկ է յիշատակն իսկ յառաջեալ քան պնդիպումն: Նա չգիտե, թե ինչ անե: Փախչել է՝ աւագում հապճեպ տագնապով, բայց փախուստն անգերծ է.

Ոչ արագմամբ ոտից փախչելի,
Ոչ թիկանց դարձուցանելի,
Ոչ գիմաց ընդ երկիր մոծուցանելի,
Ոչ բերանով ընդ հող հաստելի.
Ոչ ի խորս երկրի ղողելի:

Բան Դ. էջ 10. ԿԸ. էջ 175 և հտ. և այլն:

Այդ ժամանակ պահապան հրեշտակը, որ մարդուս կենտկից հղոր ոստիկանն է, ամբաստանում է, և Հատուցանողն անավոր հանդիմանում է: Նրա օպասավորներն առանց խնայելու խուճապում են, ոմանց կյանքի հրավիրում, ուրիշներին ամոթի դատապարտում:

Կիսաց դէմս լրեալս ծաղու ցուցանեն,
Եւ ինձ ահարկուս և քամեցելիս երևեցուցանեն.
Ոմանց պսակս լուսապատճառ մատուցանեն,
Եւ այլոց կորուստ մահու բողոքեն.
Արդարոցն ձայն աւետիաց,
Եւ ինձ գոյժ տնվախնան վշտաց:
Թորժամ առ բարին՝ մահու յաղթութիւն իսպառ մեռանի,
Եւ ինձ՝ չարադարձիս կրկին յարակայի.
Ուր դրանն բախել ոչ ինչ ազգիցէ,
Վճար եղեալ գթութեանն առ իս:

Բան ԼԹ. էջ 211.

Ողբն ու արտասուքը, որ մեանելուց առաջ գրավում են երկինքը, այն ժամանակ իրրև ապաժաման ընդունայնություն արժամարկում են: Բանաստեղծը սոսկում է, որ մի գոցե մեռնելուց առաջ բավականաչափ հեծու-թյուն ու հառաչանք ունեցած չլինի.

Ջտանջարանսն քաղմապատիկս
Անձամբ անձին տասէն իսկ պատրաստեցի,
Ջիւղդ միթիթարեցայց համառտեալս յուսոյ,
Ջի եթէ զօրքն լուսոյ՝ դասուք արդարոցն,
Որ փառաւորեալքն են երանութեամբ, սարսեն դողալով,
Ոչ բուեն բերել զահաւոր տեսիլ
Երեսաց մեծ դատաստանին,
Ես՝ եղկելիս, աւանդակորոյս,
Ստատկման օրդիս, ճւր երեհցայց,
Որ ոչ միայն չեմ պսակելոց,
Այլ և պատուհասն իմ անտանելի,
Եւ կորուստն անսպառելի:

Բան ԼԹ. էջ 111 և հտ.

Են Նա տեսնում է դժոխքը, կորստյան խորխորատը, ուր «հրեղէն են
դեմքն, անանցանելի վտակքն, թանձրամած խաւարն, և արտաքոյ ալցեղու-
թեան անախիւսդ. ապակամեթեան է դուրն, և մշտնջենաւով է տաքնապն.
ամենագրաւ տարտարոսն, և անգերծ սառնամանիքն», — անտանելի պատու-
հասների, մի գառն, դժնդակ օթեանի տեղ մեղավորներին համար, որդներով
ու գարշահոտությամբ լի մի անել տրգելարան, մի անփութելի որոգայթ,
Այնտեղ պատիժները համեմատ են գործած մեղքերին.

Ձի ոչ ջերմն սիրով առ ընկերին կարիս մատուցայ՝
Երբաւի ի նախնունն վտանգին տաքնապեալ սառնումս,
Եւ զի ոչ զցանկականն խորխորտակամութիւն սանձեցի՝
Բարժանի կրեմ եղկելիս զանդովանալի զկիզումն,
Եւ քանզի ոչ սիրեցի զուսույռ աւետիս,
Արդար հատուցմամբ ի մթութիւն ըմբոնողական
Միգին կորստեան վրիպեալ գանգալեմ,
Եւ զի ոչ խորեցի զմանունս փոքունցն յանցանաց,
Իբր անփութեամբք վարկանելով,
Պատկանապէս ի խանոնողականացն
Ջագերն գեռնաց խթեալ խոցոտիմ
Եւ պի ոչ ձեռն կարկառի
Աւ կիրս վտանգաւորին՝ ալց առնել նմին,
Ի գէղ խակ ըստ գծագրութեան ալսր օրինակի
Ապականութեանն զբոյ նռիրեալ մատնիմ,
Բան ԺԹ. էջ 44.

Բանաստեղծին, որ իրեն դատապարտված է տեսնում և դժոխքի դըռ-
ներին, ուրիշ բան չի մտում, քայց եթե խնդրել աստուծուն, որ բաժնակն
համարի այս տեսլից կրտս տանջանքը և շտապի ազատիլ իրեն:

Այլ տրտեմ, ամենապարզն զօրութիւն անճատ,
Ձեռն փրկութեան՝ ի կորուստ գերելոյս.
Ձի օգնեալ ի Դէն, դարձայց միւս անգամ ի դրանց դժոխոց...
Եւ մի մամնեցայց կարեանցն ասիւծուց,
Որք խնդրեն ի Դէն պիս ի կերակուր՝
Մտիել տաամամբքն գազանութեան.
Ձի զորովոյն մահուն լլուցեալ՝
Ջասատուստ պարտերալս անդ ձգեալ հալեն,
Ուր անապու պահի մնացուած մթերիցն
Ի ծախումն յաւիտենից:
Բան ՀԹ. էջ 212.

Ինչպես սատանայի դիմաց՝ առգույն է աստուծու պատկերն, որ հա-
ւախ վերապական ընդհանուր սագրողելիներով է որոշվում, նույնպես և
դժոխքի նկարագրի մոտ թույլ ու տարտած է դրախտի կամ արքայալքյան
պատկերը: Բանաստեղծը դրախտի տեսիլ չունի, մինչ ընդհանրապես նա

աւժեց է հասակապես սատարանայի ու զօժիքի տեսարաններով և քառանկի
երևույթներ ցուցադրելու։ Իսկ ինչ որ իր սանձազին վիճակին, իր նվա-
տացմանն է վերաբերում, նրա երևակայութեան անսահման մեծ և
բազմազգի մի։ Համախ նա առկաւմ է խորը պատկերներ։ Իրենց բոլոր
մանրամասնութեամբ, որոնք արդեն լոկ նմանութեաններ չեն։ Եւ անկախ
ստեղծարարներ ու նկարազերներ։ Այսպէս Բան Ին. էջ 58 և հա. խորատկւած
նաւի բնութարան տեսարանն, և կամ Բան ՄԴ. էջ 138 խնդրողի պատկերն
ավելի կարճ. բայց զորեղ (ՍԵ քանդի ի ծուփս բազմալուսնաւ տխրանջ
հողմոյ . . . ք)։

10. Ուրիշ ևս կաւեծ Խատկաւքումնաբեր խոսքի գլուտների և պատկերների
առատութեամբ։—Որակաւայութեան մեծութեանից ու բազմազգի վիճակաց է
առաջանում և նրա լեզվական գլուտների հորդութեանը, որով նա միևնույն
իմաստն արտահայտում է բազմազան ձևերով, երբեմն համանիշ խոսքերով
ու բառերով, որոնք նրա մոտի մեջ ծնվում են միաժամանակ, ինչպէս,
օրինակ, հետևյալ շատ սիրված բանին մէջ.

Որդի Աստուծոյ կենդանւոյ, . . .
Որ ոկարանայ առ ի քէն և ոչինչ.
Որ ի ծագել անստուեր նշուից
Ողորմութեան քոյ փառաց՝
Հալին մեղք, հալածին դէւք.
Ջնջին յանցանք, խղին կապանք, խորատկին շղթայք,
Կենդանածին մահացեալք,
Բժշկին հարուածք, ողջանան զէ՛րք,
Բառնին աղակաւութիւնք,
Տեղի տան տխրութիւնք,
Նաւանջին հեծաւթիւնք,
Փախնու խաւարն, մեկնի մէ՛զն,
Մերժի մոռախնդն, փաբտի մաւյլն,
Սպառի աղջամհւղն, վերանայ մեւթն,
Գնայ զիշերն, տարագրի տաքնաւն,
Չքանան չարիքն,
Հալածին յաւատաւութիւնքն,—
Եւ թաղաւորէ՛ ձեռն քո ամենակար,
Բաւիշդ ամենայնի . . .
Բան ԽԱ. էջ 106.

Շատ անգամ մի կամ երկու պատկեր բազմակն կլինեն իր մոտ-
մունքն ու զգացմունքը լրիվ և զորեղ արտահայտելու համար, բայց նա
բազմաթիւ գլուտեր, մեկը մյուսից զորեղ և գեղեցիկ, շարուն է ետեւ
ետեւ անխափր, ջճի ոչ երբէք հարթ ընթանայ երկվար առանց սանձակաւի
և ոչ նաւ համբաւնայ հանգէտ առանց ուղղչի, և ոչ արօր կշիռ ինչ զորեղ
առանց մանակալի, և ոչ երկուորեակը լծոցն ի ճաւ հեծեացին առանց երոզի
ոչ ամալ վերաշուէ առանց հողմոյ, ոչ աստեղք ցնդին և կամ գլուտարի
առանց մոմանակին, ոչ արեգակն փոխաբերեալ շուրջանակի՝ առանց

աւարական օգոյ, և ոչ Բո նոքօք հանդերձ առանց բարեգործիչ հրամանաց
ազնաբերութեան (Բան ՄԴ. էջ 188.)։ Բան ՀԱ էջ 182 և հա. մոտ ութսուն
միանասն իմաստով պատկերավոր խոսքեր հաջորդում են միմյանց։

Պատկերների այս հորդութիւնից հաճախ լեզուն կորցնում է պարզու-
թյանը, և երկը ծանր ու դժգոյս հասկանալի է դառնում, մոտամբ նուշխակ
նոստոսթյան մեջ՝ ընկնում։ Եվ այս է նրա արվեստի ամենաթույլ կողմը։
որովհետև բանաստեղծութան տեխնիկային համառ գրողը թույլ չի տալ որ
երեւակաթյունը բռնանա իր վրա և առանց ընտրութան գրի տանել ա-
ամեն ինչ, որ իր մօտում ծնվում է։ Նա իր երեւակայած պատկերներից
կընտրի մի երկու լավագոյնը միայն։ Այդ, Ողբերգութան ամեն մի բառը
սովորաբար երեւ-չորս գրութիւնից է կազմված։ հաճախ երգն սկսվում է
առատեճու գովեստով, նրա ստորոգելիներն ու արարքները թվելով։ ապա բա-
նաստեղծն ինքն իրեն մեղադրում է և վերջը գրութիւնն հայցում։ Բայց
այսքանը նա ճապաղում է երկու-երեք և ավելի էջերի վրա և երբեմն
նուշխակ շատախոսութան մեջ է ընկնում։ Ընթերցողը միշտ պծաք է իր
միայքը լարված պահի, որպեսզի իրար վրա կուտակվող հախուռն կրկնու-
թյունների մեջ չմոռանա ամբողջ բանին ընդհանուր իմաստը, որ վերջը
պիտի կապվի մի հապաղող նոր իմաստի հետ։

Զգիտի մոռանալ։ որ այս ոճը, նուշխիմաստ խոսքերի կուտակութիւնը
բոլորովին համապատասխան է եղել մենակյացների հոգեբանութանը։
Նրանք ամեն օր, ամեն ժամ, միակերպ կրկնությամբ ապշալուրել են և
չեն ձանձրացել։ Այստեղ, այս ձևի մեջ էլ Գր. Նարեկացին, ուրեմն, անգոր-
դարձեւ և արձանացրել է ճշման կանաչ գործողների իրականութիւնը։ Այդ
կրկնութիւնները նուշխակ ցանկալի են եղել նրանց համար։ Բայց այժմ
էլ մի անգամ որ ընթերցողը մօտի լարումը հանձն է տանում, նա վարժ-
վում է բանաստեղծի մտածութան եղանակին, և այնուհետեւ այդ պատկեր-
ների ու կրկնութիւնների տարափր թողնում է իր առանձին ազդեցու-
թիւնը։ Ընթերցողն ընկնում է բանաստեղծի խոսքի առատութեւն հաճաքի
մեջ, նրա սիրտն ևս լցվում է նուշխ հորդությամբ։ Եր գեղվում է բանա-
ստեղծի հուզված սրտից, և նա բանաստեղծի հետ միում է գզգզմանքի նուշխ
հորձանքների մեջ։ Նա ևս հուզվում է ու տարվում է մտքի ու քրտի լեռ-
նացած կռակներից, որոնք անդադար ձգտում են երկինք, ընկնում փշր-
վում են ու չորից ուռչում են, և անվերջ, նման պատկերների կուտակութիւնը,
կնշանակե, այժմ մեզ համար էլ թերության հետ ունի նաև առաջնութիւն,
մտնալմանը որ դրանք հաճախ օռիկ կրկնութիւն չեն, այլ նուշխ հոգեկան կամ
ֆիզիկական վիճակի նուշխ նկարագիրներ տարբեր տարբեր կողմերից։ Նա այդ
ձեով քրքրում։ վերլուծում է ներքին վիճակը, կամ ավելի կենդանի դարձ-
նում արտաքինը (տես էջ 174—175, Բան ԿԸ. էջ 62—63, Բան ԻԶ. էջ 72—73,
Բան ԻԴ). Եւհա այս կերպարանք ճշգրտագոյնք դարձաւ։ Երկու
մասութեան, տիրու զէն, քաղեալ ճաճանչ, ցամաքեալ խոնաւութիւն, երի-
թացեալ շուրթն, անշքեալ ախ, արտմեցեալ ոգի, այլայլեալ ձայն, կրկնեալ
պարանոց։ Եւ զի Թէ ոք զիսկութիւնն իսկ նշանակեսցէ, ոչ անօրինէ. տնամ-
բաբաւան միտ. անհպարտ սիրտ, անխնդրող պարզելի թշուառ, անաղեր-
սալի պասքեալ, ինքնակշտամբելի զեզերեալ, իրաւամիտք սովեալ, արդա-

բաւրուկ քաղցեալ, պատշաճագաս հարուածեալ, ինքնավկայ մահապարտեալ,
աբժանապէս հանեալ, անձնանէժ հղկելիս:

Ինչպէս պատկերների թվի մեջ չգիտե, նույնպէս և նրանց տե-
սակի մեջ ընտրության անել չունի: Երբեմն, ինչպէս հատուկ է ամբողջ
միջին դարին և ռամկին, ամենանուրբ և վեհ մտածությունից հանկարեակի
անցնում է անճշտակ, կոպիտ ու խիստ արտահայտության, և մի անգամ
նույնիսկ (Բան ԿՔ. էջ 177 և հտ.) Աստվածային Արծաթագործի զուարթի
մեջ հաւուս վեհ պատկերից հետո անցնում է հանկարծ բորտաների, որո-
վայնի և աղիքների որգերի ու միջատների, նույնպիսի սիրով կատարած
նկարագրին: Բայց և այնպէս լվերի մանրամասն շատ իրական նկարագիրը,
որ իր տեսակի մեջ տառիչն է, գեղեցիկ է: Բերենք այստեղ այդ:

Ասպատակք այլոց վայրենեաց,

Ըստ նմանութեան դիւտց գիշեր-մարտից,

Եւ մեկնազէն բարբարոս գնդից խաւարտօբաց,

Եւ դադանութեամբ քանասար զայլոց արարացւոց,

Կորակոր գնացիւքն, արջնաթռչն դունսն,

Գրկնապարոյր կռածազ կացան,

Որ զօրէն ունի խայթացաց կարճի,

Ժբբ դմնիկ փշովք խոցստեալ ձենն,

Ձգեն դարեանն խանաւութիւն,

Նւ յանկողինս մահնաց հանգստեանն

Վաստակս կրից ցուցանեն:

Եւ կարկոտեալ ուրուք ձեռն՝

Հասուցանել զհասուցումն նոցա նոցին,

Վաղվազակի զգան զփռս վատնդին՝ զօր աղղին մարդոյն,

Նւ անդէն իսկոյն լերկամարմին փռք հասակուն,

Իբբ թեւք իմն թռիչս արձակեն,

Նւ ըստ մարախի ձեռն ոստոստեալ՝

Այբր անդր տարարներն.

Նւ ըստ բազմապատիւր նենգութեան

Բարայից դաւազ ազաւեսուց՝

Խորամանկեալ խաւափեն ի պատուածս բազում ելից,

Ձի յերկիւղէ մահուն աղբսոցին:

Եւ այնքան չքառի և անքառ անձամբքն

Ոչ միայն զառմիկան և զխաւնիճաղանձս,

Այլ և զթագաւորս հաբոս և անդինս

Փախուցանեն, հանեն, տարադրեն

Ի դատիկան յարկի ապարանիցն բարձրութեան,

Նւ կամ ի բացի բնակեցուցանեն:

Փռլք արանց արեաց,—

Որք իշխեցին ամբախից,

Եւ արեցին մոզովբոց,

Նւ առին զքաղաքս ազգաց,—

Ջալարտուօթիւն իւրեանց զօրաւօր ձեռինն ինքեանք վկայեն,
Թէ՛ յՔանգի ոչ կարացաք
Ի դիմի հարկանել վեհիցն բոնութեան,
Վասն տշնորիկ խոյս տուեալ հասաք յայս տեղիս:
Բան ԿԹ. էջ 177 և հտ.

Այսպիսի չքոտիներէ պատկերներով կամ ստոր, գարշ առաքկաների
նմանություններով հաճախ նա միայն իր մեղավոր վիճակի զգվիթությունն
է ուզում ցույց տալ (էջ 3, 51, 103. Բան Բ. ԻԲ. 1Թ. և այլն):

Մեռեալ պատկերիս մի՛ ռխս պահեսցես,
Ընդ անշուշն կերպարանիս մի՛ ք զառ ջննութեան մտցես,
Մահու տանջեցելոյս մի՛ հարուածս յաւելցես . . .
Կործանեալ շինուածոյս մի՛ պատուհաս մտաուոցես,
Շանս սպանելոյ մի՛ քարինս արձակեսցես . . .
Լուսոյ ջախջախելոյ մի՛ սաստիկս որոտացես . . .
Ի յոտս քո տնկանիմ և զգարշապարիդ հետս համբուրեմ,
Ջալարտուօթիւնս խոստովանիմ և զմեղանս հրապարակեմ,
Կշտամբոնաց քարամբք կոծիմ և հառաչանօք սրտիս տապանամ...
Բան ԿԶ. էջ 168. և հտ.

Հենց այսպիսի նվաստ իրերով ու գրություններով է, որ բանաստեղծը
խիստ օժեղ կերպով գեմ ու դեմ է դնում աստուծու մեծությունք և իր
չնչնությունը, նրա բարեբար գթությունն և իր քնկած գրությունն, իր
անհարակությունն ու սրտի բոցը, և վերջապես իր ռոտրաքորշ աղիոգորմ
աղաչանքն աստուծուն, որ գթա իրեն:

Ամպարտաւանեցայ փոյիս շնչաւոր,
Ամպարհաւանեցայ կռս ձայնաւոր,
Հալարտացայ հոգս տնորգութեան,
Ի վեր ամբարձայ մոխիրս մերժելի,
Բազուկ կոռուցի բաժակս մանրելի.
Տարածեցայ առաւել իբր վեհ,
Սւ դարձեալ իբր զհրքեալ՝
Առ իս ինքնամփոփեցայ,
Բարկութեանն բոցով ցուացայ տիղաս բանաւոր.
Իբր զանմեռ օք մեծամտեցի՝
Որ ընդ քաբոտանեաց մահու եմ փակեալ:
Բան Ի. էջ 47.

Անկեալ կամ չարեօք ի մահի՞նս ախտից ընկողնոց մեղաց՝
Դի կենդանի ե յօսուին մեռեալ.
Կարեկցեալ իմումս թշուառութեան՝
Ողբականօք քրուանաց ձայնից,
Մի՛ վ բարեբար որդի Առաւօտոյ,

Որհնաբանեալ աշացող ցողով
Վերականգնեսցես ի կենդանութիւն,
Իբր զսիրելիս ի յանշնչական մեռելութենէ,
Ստոյգ դառնացողս ի գրի մեղաց կամ տառակուսեալ,
Ձեռն մատուցեալ Արև՝ անասուեր, Որդի Բարձրելոյ,
Հանցես զիս ի լոյս քումդ նշույից . . .

Բան ԺԸ. էջ 41 և հա.

Հապարաժոր, մեկը մյուսից քորեղ ու գունավոր տրտահայտութեան
կույտերի մեջ՝ նա դեռ իր գրիչը գտնում է թույլ և չզիտե, թե ինչպես իր
անարժան անձը ներկայացնի: Այդ ժամանակ նա գիմում է չափազանցու-
թյան ձեռն:

Ձի եթէ զլին մի ծովուց
Ի յարակութիւն դեղոյ յեղեղեցից,
Եւ զգալոս աստղաբիւսք ըստմանեալ՝
Ի տառածուծն յայնութեան քարտենի չափեցից,
Եւ զպուրակս յոգունց անտառաց շամբից հղեղունց
Ի հառուածս գոյութեան գրչոց կազմեցից,—
Եւ ոչ զթիւ մի ի բարձրեցն անօրէնութեանց
Ջօրեցից ընդ գրով սահմանի գրաւել,
Նա՛ զի թէ զմայրբոս լիրանանու
Ի մի լուս կշռոց զագեցից,
Եւ կամ զլեռանն Աբարատեան
Ի կէտ ամբարձման նժարի միոյ
Արդարութեան միջնորդ կացուցից,—
Ոչ հաւատարէ այնր հարթութեամբ համագուգակեցի:
Բան Թ. էջ 20.

Չափազանցութեանների համար ան և Բան ԳԸ. էջ 174. Դրախտի
յորս ցեղերի հոսանքներն իրրե իր աչքերից բխող արտասուքներ, Բան
ԺԵ. 34. Ջրհեղեղի ջրերի գառակությունից էլ վեր են իր մեղքերի շեղչերը:

11. Հեծտաբաղան խրքիմ ան: — Այսպիսի մեծ նրապայտութեան ունեցող
բանաստեղծին բնականաբար բաժանակցութեան չափերի տար մեր լեզուն,
որ դարգացած էր պատմութեան, ներքողյանի ու մեկնաբանութեան համար
և արդեն տեղայն ու վերացական էր գարեալ: Այս դասականը և նա
ստեղծում է մի նոր, ինքնատիպ լեզու, հարուստ ինքնանաբ գարեժանե-
րով և բառերի հաճախ նուրբ ու բազմիմաստ կիրառութեամբ: Եվ որ պլուտ-
վորն է՝ նա վերացական դարձած ու ճարտասանական լեզուն դարձնում է
թանձրացած ու գաճաճող նկարեն, ցանի ու նա տան ինչ մասնում և
զգում է պատկերներով:

Սակայն ճարտասանությունը, այն էլ զարոցական ճարտասանությունը,
դեռ նրա երկի մեջ բաժանի տեղ է բռնում: Նա առաջաբանների մեջ
երբեմն նույնիսկ հայտնում էլ է այդ, թե աշխատում է զանազան ճարտա-

սանակաւն ձեւեր գործածել, օրպեսզի ոճին բազմազանութիւն տա: Այդ հին չափադասութիւնն արդեն հասուի էր համանշի բռնների և արտահայտութիւնների կառավարութիւն, ինքնաստեղծ բռնների ու երկար պարբերութիւնների տեր, անկանոն ու բարդ, արտասովոր ու նորաձեւ բացատրութիւն հակուեմ, որ նախկինացու երկի մեջ ևս տանուեմ է գեղի մթնութիւնն և երկարաբանութիւնը:

Գրիգոր Նարեկացու տաղերի մէջ եւս երևում է իր դարի քերթողութիւն մաս ազգեցութիւնը: Նրա արվեստն այդ երգերի մէջ հաճախ հետեակ և վերացական է, ինչքան էլ դրանց ստանալորներն իբրև խնայիսիք գեղեցիկ են: Զորս-հինգ բնաիր տաղերի մէջ անգամ երբեմն հարինվածքը շատ մութն է ինքնահնար կամ անգործածական բռներով, կամ թե ժամանակի ճաշակի համեմատ խրթնաբանութիւնը, արվեստական կնեւտ ու խորհրդավոր արտահայտութիւններով: Շատ բաներ և նույնիսկ խոսքեր այդպիսի տաղերի մէջ գեւ բացատրված չեն, ինչպես՝ շարվարժենի, նէճէմ թէ՛ նէճէմ, ասիճազ պտտիճազ և այլն: Պակաս չեն և մանկական բառախաղութիւնները, մեծ մասամբ՝ կրկնութիւնը, օրոնք իր ժամանակի ամենաշակ ճաշակիւն արդունք են, ինչպես՝ շէին աշոյ աշոյ ձեռին Աշոյ իւր աշ ընդ աշմէ հո՛ր, Հօր ընդ աշմէ լուսոյն փառացի, — ուղում է ասել՝ շէին աշոյ ձեռն է ընդ աշմէ հօր լուսոյն փառացի: Այսպիսի բառերով ու կրկնութիւններով խրթնանում ու թուլանում են նույնիսկ նրա՝ Մննդաւն և մյուս մի քանի տաղերը, օրոնք սակայն և խնայեա՝ սիրուն բանաստեղծութիւններ են. օրովհետև ինչքան էլ մթին լինին, իրենց ամբողջութիւնը հասկանալի են մնում, և մենք կարողանում ենք վայելել նրանց գեղեցկութիւնը:

Այսպիսի ոճը բացառիկ մեր լեզվի մեջ ստեղծված չէր. և մեր լեզվի մէջ համարում են այդ իբրև հետեւում արարական ազգեցութիւն: Բայց 6-րդ դարից արդեն հույների մեջ, հին քերթողների և հետադրների լեզվի ազգեցութիւնը, առաջ էր եկել մի այդպիսի արվեստական շինծաւ պերճ լեզու, իսկապես մի սեթեթ ոճ, որի մէջ ճարտասանական ձեւերը, պատկերավոր արտահայտութիւններն ու փոխաբերութիւններն ալելի գերազաս էին համարվում, քան սովորական պարզ ու բնական բացատրութիւնները: Այս հետադրական ոճին 7-րդ դարում արդեն նմանում էին և մեր քերթողները, ինչպես Թեոփորոս Պաթենավորը, օրոնք բացի իրենց ինքնահնար բառերից ու դարձվածներից՝ ենթաբեկվում էին երբեմն նաև հունարանութիւն: Նրանք արդեն այն ժամանակ, երբ դժվար է ենթադրել արարական ազգեցութիւն, գրում էին յափաղանց ծանր, խճաղած, զարդարուն ու վերամբարձ ոճով: Այս հետադրական լեզուն այնուհետև շարունակվում է դարգանալ մինչև 10-րդ դարը: 9-րդ դարում, Հովհաննես կաթողիկոսի օրով արդեն, ինչպես աեսանք, հաստատված էր գրութիւն երկու տեսակ կամ եզանակ — պարզ և հետադրական կամ, ինչպես հետագայում կոչվում է ներսես Շնորհալին, «մեկին բանն և ճշմտիկ ճառ»: Միեւնույն հեղինակը գրում է երբեմն մեկին, նույնիսկ ժողովրդական պարզ ձևով, երբեմն նաև մթին եղանակով, որ շատ դժվար է հասկանալ, ինչպես են երբեմն Նարեկացու տաղերի մեջ տաղեր ու բառեր:

Ունեւորէն այս երեսօյթը կա, և ավելի ևս, նաև ստորին դարերի աստ-
րական գրականութեան մեջ. աստուածային արարական լիզվի հարստութեան
վրա՝ ուղղուած են ցոյց տալ, թե աստուծոյնը եւ յի մնալ իրենց ուսման
լիզվից: Որոշուած են ընդ պատահող կամ արգիւտական արտաւայտութեան-
ներ, որոնցով, իբր հետաքննութեան երկու, կարծում էին թե բանաստեղծա-
կան պատկերներն ավելի ցայտուն են դառնում: Եւ զայնով ձեռք զորոշուած
էին ընդ գործածող բաներ, համարեւ ինքնապատկերներն ու դարձվածք-
ներ, բնական արտաւայտութեանը շուտ էին տալիս և դարձնում մի հանե-
լուկ. որի բանալին պետք էր օժանդակ հասկանալու համար:—Մեր լիզվի
մեջ ունի այս աստիճանի մթնոլորտի հասկէ է 11-րդ դարու Գրիգոր Մա-
գիստրոսի մի ջանի երկերի մեջ, բայց և Գր. Նարեկացու տաղերի մեջ ևս,
ինչպէս ասվեց: Կան մի ջանի մուկ հասկանալի: Թի արարական լիզուն
մեր ընդմիջներին այս ունի վրա ազդեցութեան ունեցել է թե չէ և ինչպէս,
այդ լիզվիքը դեռ պարզված չէ:

12. Ուտեմալօրը:—Համարաբար արարական բանաստեղծութեան լիզ
անցել հայերենին և հոմերոս, որի գործածութեանը լիզ մեր հոգեւոր երգերի
մեջ, Նարեկացու Ողբերգութեան լիզ իմանում ենք, որ 10-րդ դարու արդեն
հանգի գործածութեանը եղել է մեր աշխարհիկ բանաստեղծութեան մեջ, եւ
այս հասկանալի է. արարական բանաստեղծութեան ավելի շուտ մեր աշ-
խարհիկ երգերի վրա պիտի ազդէր, քան եկեղեցական երգերի, Լաւրաց
բանաստեղծութեան հորինող ողբասացները,—բնա ձայնի կողմնակցանաց
և զբանիցն յարմարութեան հանդերձն, ի նոյն դիր բերեալ գաւարտունս
տանցն, որովք՝ աստուծոյ սասանիկ մորմուքեալ ճմեղեցուցանին զազեւս կտրե-
ացն սրաին ընդից առ արտասուացն ընդմուտնս (էջ 61, Բան ի Զ.), եւ ապա
ինքն բանաստեղծն այս ամբողջ Թանը հորինում է հայերենի չափով և
եւ ի հանգով. ուրեմն, ինչպէս արարական կասեցայի մեջ, հանգը Ծույն է
մի շարք երկատող տներին մեջ:

Պարտուցն ժխտեալ տաղանգացն՝ | Հեղով մեծաւ ի տուտի,
Եւ ապիկար մատնեալ | անտրման գործովքս յիրուի,
Վառնիչ արքունի դանձուց | կրկնագատ և անթափելի,
Պատասխանատու մեծին | ըմբռնեալ անհրաժարելի,
Բիւր քանքարոյ խնդիր՝ | ես շունիմ կշիռ մի օւնկի:

Եւ այսպէս մինչև ամբողջ բանին մերջը, Մուշեղ Երանց, ինչպէս
և ուրիշ հանգեր, նա բանեցնում է Ողբերգութեան մեջ նաև ուրիշ տեղե-
րում Հիշենք և նույն տողերի մեջ հանգեր կազմելը կամ տողամիջի հան-
գերը, ինչպէս՝ Եթաւ լոյս եւ և յոյս, եւ ես խաւար և յիմար ...: Եւ արտա-
կութեանը բերված է վերևում § 8:

Տաղերն անհանգ աստեղծութեան են. հանգերն այստեղ պատահական են:
Սակայն տաղերի, ինչպէս երբեմն նաև Ողբերգութեան մեջ, նա աշխա-
տում է տաղապարտութեան աստիճանի բերել բողոքայիններին հանգիտութեամբ. այս
կողմից խիստ աչքի է ընկնում, օրինակ, Վարդապետի տաղը, որ բերված
է ներքևում. Նարեկացու մի ջանի տաղերի մեջ գտնում ենք պատաս-

խանիւն կոչված ձեւը, որ կա երբայակաւ բանաստեղծութեան մեջ և ճշգրտացւած արդէն գործածական է եղել ասորական եկեղեցական բանաստեղծութեան մեջ. այն է՝ հաջորդ տողը կամ տունը սկսվում է նախորդ տուն կամ տողի վերջին բառով, կամ նրա մի մասով, կամ մի նման բառով, և կամ թե տողի սկզբում զրկում է նախորդ տնից կամ տողից մի բառ կամ միաք. այսպես են, օրինակ, տաղերն «ի յարութիւն Ղազարուն» (էջ 469—472), Համբարձման (էջ 477—478), Գնեանք աշտուղ մի կտոր Վարութեան տաղիցը (էջ 474 և հտ.), որ հորինված է հայրենի չափով:

Ոս ձայն գառիւծուն ասեմ,
Որ գոչէր ի քառաթևին.
Ի քառաթևին գոչէր,
Ձայն առնէր ի սանդարամեասն:
Սանդարամեստն այն ի դող եղեալ,
Սասանէր ի ձայնէն ահեղ,
Ահեղ ձայնս որ ես լուալ,
Սա քակէ զամուրս որ ունիմ.
Ձամուրս իմ քակել կամի,
Գեղեցիցն առնել գերէգարձ...

Կրկնութեան այս արվեստը հավանորեն ասորերենից անցած պիտի լինի հայերենին տվելի վաղ քան 10-րդ դարը:

Ողբերգութեան Մատայանի մեջ կիրառված է առհասարակ չխառն ոտանավոր իշխող հնգավանկ անդամներով, միայն երբեմն (ավելի տղերքի սկզբում) հինգվանկանի անդամին փոխանակում են 3—4, կամ նույնիսկ 6: Կամ 7-վանկանի անդամներ, Դա աշատ անդամներով մի հորինվածք է, որ բազմական մոտենում է արևել խոթերին, բայց և շատ նուրբ ոտանավոր է և շատ հարմարվում է բովանդակությանը և այդ Ողբերգության արտառնութեանը, երբ ազոթողներն իրենց մենավոր խցերում, ինչպես դեռ պրքիս հեղինակի մանկութեան օրերում, այդ ոտանավորի ամեն առաջին անգամի հետ գլուխներն իջեցնում էին դանդաղ և ազա ամեն երկրորդի հետ բարձրացնում Դրանով, կարծես, որոշվում էր այդ երկի չափը: Ընթե Ողբերգութեան չափածո լինելն ընդհանրապես չեն հասկացել և չեն ընդունել, պատճառն այն մոլորութիւնն է, որով մեր սովորական տաղաչափական ձևերից մեկն են ուղեցել տեսնել դրա մեջ, ինչը հեղինակն իր այդ երկը ոչ միայն բանաստեղծութուն է տնվանել, այլև երգ, նվագ և նույնիսկ չափաբերական ջջ, այսինքն օտանավոր: Այդպես հորինված են և մեր մի շարք հոգեվոր ու ժողովրդական երգերը: Մանրամասնութիւններ այդ չափի մասին՝ կարելի է գտնել սրա հեղինակի մի ուրիշ աշխատութեան մեջ՝ իսկ այստեղ այսքանս միայն պիտի տեսնել: Տողի մեջ երկավանկ կամ եռավանկ տաքը ամիսնալով թե նախորդ և թե հաջորդ տաքերի հետ՝ կազմում է հնգավանկ

¹ Հայաց լեզվի տաղաչափութիւն (մեաքիկ), Լուսա Պատիկեց պրոֆ. դ-ր Մ. Արեգյան, Երևան 1933, էջ 350 և հտ.:

անդամներն. ապա՝ առդասկզբի կարճ անդամները՝ սովորաբար զորեղ շնչա-
վերով՝ երկարում են և մոտենում են հինգվանկանի անդամներին. Բացի այդ՝
այս Թիպի ոտանավորների հետ մեկ մեկ զորածնված կան և այլ տեսակի
կազմության տողեր, որոնցով և բազմազանության է մտնում ռիթմի մեջ:
Կան, հարկավ, և շրժակ կոորներ, Բերենք վերևում հիշված զրբից հետևյալ
հատվածը՝.

Այս ձևի աղառ ստանավորներով, որոնց մեջ իշխող է հնգավանկ
անդամը, հարինված են նաև Գրիգոր Նարեկացու «Գոնձերը», «Ներբողները»
(մասամբ) ինչպես և նրա «Ողբերգութեան Մատենա»-ի քնարական հառ-
վածները մեծ մասամբ, բացի այն տեղերից, որոնց մեջ բանաստեղծը միա-
նման կերպով թվում է ասուհեռ ստորոգելները, կամ միեռնայն միաբը
հեղհեղում է տարբեր արտահայտության ձևերով. բայց նման կազմության
խոսքերով. Այս մասերի մեջ էլ, սակայն, հաճախ նա դիմում է իր սիրած
ռիթմին և կազմում է հեզամետրի անդամներով, երբեմն և ուրիշ տեսակի
ոտանավորներ. Այս Ոտերկյառն աստեղծվորը հազևոր երգերի նախն տեսակի
ոտանավորից աչ մի ուրիշ տարբերություն չունի, բայց եթև այն, որ հո-
գևոր երգերը մեծ մասամբ համաթիվ տողեր ունեցող փաքը օմերով են
հարինված, խոսքերը համեմատաբար կարճ են, և ջիշ անգամ նույն խոսքի
մասերը զրվում են երկու-երեք տողի մեջ,—մինչդեռ Գր. Նարեկացու բա-
նահարուստ «Ողբերգության» մեջ սառցվածներն ընդարձակվելով ծավալվում
են, անցնելով մի շարք համեմատաբար ավելի երկար տողերի մեջ, մինչև
որ մտքի մի զորեղ հատվածով միանալով մի ամբողջություն են կազմում,
ստանց որևէ կանոնավորության, առանց ձգտման՝ այդ հատվածները նույ-
նաթիվ տողերից կամ մոտավորապես հավասարաչափ կազմելու. Կան, սա-
կայն, հատվածներ, որոնց մեջ նարեկյան խոսքը վերածվում է շարահյուս-
ական փաքը անդամների, որոնց յուրաքանչյուրը կազմում է մի առանձին
տեսակի ոտանավոր. Այսպիսի կտորներն իսկապես աղառ ռիթմական կամ
գեղարվեստական պրոզա են. Բայց կան բազմաթիվ հատվածներ ևս, որոնց
մեջ կա զորեղ ռիթմ հնգավանկ աղառ ստանավորի, մանավանդ երբ կարճ
անդամներն՝ ըստ իմաստի ուժեղ են արտասանվում: Անշուշտ, այնպես, ինչ-
պես աղաղորված են իբրև արձակ գրվածքներ, աչ Նարեկացու հիշված եր-
կերը և աչ էլ մեր հոգևոր երգերից շատերը, կարդալիս անմիջապես չեն
թողնում հաճախ ոտանավորի աղավորություն: Հարկավոր է նախ՝ այդ
բանաստեղծությունները տողատեսիլ ապա՝ քաշել, թե ո՞ր բառերի վրա են
խոսքի և զգածական շնչաբերը, և հետո նոր կարդալ, և այնուհետև նոր
կզգացվի մեծ թափով հարինված այդ բանաստեղծության ռիթմը, Հուսալով,
որ աղագույն կապագրվի մեր այս հին բանաստեղծությունների ընդգրչն,
ինչպես պետք է, հարկավ, օգտվելով նաև ձեռագիրների տարբեր ընթերց-
վածներից, ներքևում բերում ենք միայն մի քանի հատվածներ Գր. Նարե-
կացու «Ողբերգություն»-ից. ստանց այլևս մանկու թե՛ այդ երկի և թե՛
մեր հին երգերի ոտանավորների ուրիշ մոտերմասնությունների մեջ: Այդ
հատվածները մասամբ բերված են վերևում, այսպեղ գնում ենք հետևյալները:

Ի խէ՛թ խորհիս խոցոտիս,
Եւ բոցով | շընչոյս | ճենճերիմ,
Աղի ցողով | արտասուեացս տյրիմ,
Եւ երկամտեցս ազդամբ կիզանիմ,
Յուսակըստը օգով ցտամաքիմ,
Եւ դռնաշունչ հոգով շիջեանիմ, °
Թախտեճանաց բանիւս երբերիմ,
Եւ կողկողազին հեծութեամբ դողամ:
(ԿՁ Բանի վերջին մասից)

Մեղան | մեծիդ | բարերարութեան,
Անտրգըս մեղայ.
Մեղան | ձեզմոն | ըդ հառազայթից,
Խուարըս մեղայ.
Մեղան | շնորհացդ | անբու երախտեաց,
Արգարե մեղայ.
Մեղան | սիրոյդ | վերնում գթութեան,
Յայանապէս մեղայ:

(Իէ. Բանից)

Վերջացնելով՝ մի անգամ էլ պիտի կրկնել, որ Գր. Նարեկացու Ողբերգության Մատյանը,—որ ժողովրդականացած է ճեսարեկ ազօթից, կամ ճեսարեկ անունով,—իր բուռն զեղուկներով, իր բազմադիմի երևակայությամբ և ջերմ հավատի անկեղծ արտահայտությամբ, մեր բանաստեղծության առջին մեծ հրաշակերտությունը լինելով՝ ոչ միայն հրաշալիք է երևացել մեր ժողովրդի աչքին, այլև մի սրբություն հրաշագործ գորությամբ: Դռեր շարունակ ժողովրդի հավատքով, նա իր բուռն զորություն է ունեցել և բուռն է եղել ոչ միայն հոգևոր, այլև մարմնավոր ցավերի, նվ որ դարձանալին է, ինքը հեղինակը գուշակել է, որ իր գիրքն այդ դերը պիտի հասարթի:

Եթէ համարաւորեն վստահութեան մեղօք յատակի,
Այսու արձանօք պատկանեցելովք
Այնով քո պաշտպան՝ դորձեալ կառուցի:
Եթէ յուսոյն ձգարան սուսերն յանցանաց հատեալ կարեսցի,
Կցեսցի դորձեալ միւս անգամ կամօք
Ամենակալիդ բարեք պատուաբեալ:
Եթէ վառնդ մահու անձնակտն ցաւոյ դոք պաշարեսցէ,
Դացէ փրկութիւն սովաւ առ ի յոյս
Կենաց՝ յաղութիւն առ քեզ, կեցուցիչ:
Եթէ տաքնապաւ ոք տարակուսի ի սիրտ խոցիցի,
Դաղցրութեամբ քո՝ սովաւ ապրեալ ողջասցի ...
Եթէ սարսուռ դեւացն ջերման՝ դողութեամբ ինչ զոք խաղկեսցէ,
Սթափեսցի ի սոյն յայս նշան ...

Բան Գ. էջ 9 և հտ.

13. Տաղերը:—Այսպէս շատերը կոչվում են ոչ միայն կրօնական, այլև աշխարհիկ բովանդակութեամբ երգերը—տաղ սիրոյ և ուրախութեան, նրոնական տաղերը տարբերվում են մյուս հոգևոր երգերից այնու, որ դրանք չեն հորինվել իրրև կրօնից Ս. Գրքի երգերի, ուստի և չեն սովել վերջիններէցս հետ իրրև շարական երգեր: Տաղերը թերուական և սրբերի տոների վերաբերյալ հասուկ երգեր են: Արդարև եղել են տոնախմբութեաների համար ոգիւթ և ուրիշ երգեր: Ընչպէս Հովսիսիմանց Քննիչնք նուիրեալքս մեծ քերթվածը, բայց մինչ սրանք մտել են կանոնի երգերի շարքի մէջ և դարձել են շարական, տաղերը, գուցէ սակաւ բացառութեամբ, անկախ են մնացել հոգևոր երգերի հաստատուն կարգից: Տաղերի երգեցողութեան և ստամոտցութեան ժամանակ ազատ է եղել, կարող էին դրանք երգվել կամ չերգվել, այդ մինչև 20-րդ դարն էլ կախած է եղել եպիսկոպոսի կամ ժամարարի կամքից: Բացի այդ՝ շարականների իմբացողութեանից հետո հոբինված նոր տաղերն ևս կարող էին երգվել եկեղեցում: Ուստի նույնիսկ դեռ 19-րդ դարում հորինվել են բազմաթիւ նորերը: Հոգևոր տաղերի այսպիսի ծագման և կատարման իրրև հետևանք տառաջացել են այդ երգերի հասկումութեաները:

Տաղերի համար պարտադիր չեն եղել շարականների, հին հոգևոր երգերի մէջ գործածված տաղաչափական ձևերը: Թեպետ մեծ դժվարութեամբ, և թունգ բարեպաշտների կողմից մեծ տհաճութեամբ,—հոգևոր տաղերգուները գործածել են նաև աշխարհիկ տաղերի չափերն և արտահայտութեան ձևերը: Եվ Գրիգոր Նարեկացու արժանիքներից մեկն էլ այդ է. նա համարձակվել է, ոչ միայն տաղերի, այլև հանգերի նկատմամբ մեկ մեկ նաև Ողբերգութեան մէջ հետեւել աշխարհիկ երգասացներին, չնայելով որ այդ խտտելի էր համարվում նույնիսկ դեռ 12-րդ դարում: Ներսէս Շնորհալին միայն՝ իր մեծ ազդեցութեամբ ընդունելի է դարձրել այն: Գր. Նարեկացին իր տաղերի մէջ կիրառել է բացի ազատ ոտանավորներից նաև աշխարհիկ չափերից 4—4, 3—4 | 44, 5—4—4, 2—3—2 | 3—2, 3, 2—3—3—3 և այլ տարր կամ բարդ ուղերով (տեղաձևերով) կազմված ռիթմիկ ոտանավորները:

Տաղերն ևս արգիւնք են նույն իրականութեանը, ինչ որ Ողբերգութեանը, բայց մինչ վերջինիս մէջ բանաստեղծը ցավագին ու մոռալ է, տաղերի մէջ, առանձնապէս դրանց մի քանիսի, նա երեւում է համեմատաբար թեթեւ ու զվարթ ոգով: Դա առաջանում էր այդ երկու տիպի բանաստեղծութեանների նկատմամբ ու նպատակի տարբերութեանից: Վանական կրօնավորական կյանքի միակ ուրախ ժամանակը եղել է տերունական տոների պոթառ պոթամունքը, երբ մի կարճ միջոցով գտնել թույլատրվում էր թողնել ողբը և ուրախանալ Բրիտանոսի մենդյան և հարութեան, համարձակման ու պոթառակերպութեան տոնի օրերը: Հետագայ գաղթերում այդպիսի տոներին նույնիսկ շարականից տարբերութեամբ էր լինում, այսինքն՝ աղբերակներն ազատութեան էր շնորհվում ուրախանալու ամբողջ օրը: Նույնիսկ շարականների մէջ երեւում է այս տոնական զվարթութեանը, և կան շարականներ, որ ունին մինչև անգամ ցնծագին փառաբանական ընտելութեան, օրինակ՝ հետևյալը:

Այսօր ցնծան էրկինք ի վերուստ
 Մեծապաշտօն աւետեւք,
 Եւ արարածք ամենայն
 Զգեցան զհանդերձ փրկութեան:
 Այսօր ցնծան մանկունք առաքաւսի,
 Գանգի Գրիստոս յարուցեալ
 Փարասեաց ըզսուգ և զորդամութիւն,
 Եւ լուսաւորեաց զաշխարհս:

Այսպիսի ուրախ տոնակատարության ժամանակ ասվելու համար հոգինված առաքելներն էլ, որ կանոնից դուրս երգվելով՝ պիտի առանձին լուրջ տային հանգստին, բնականաբար ունեցել են զվարժ քնավորութիւն: Եւ Գր. Նարեկացիին իր առաքելով իսկապէս այս կարգի շարականների տեսակն է պարզացրել. այնինչ նոր Ողբերգութիւնն, ընդհակառակն, աղաշխարհության երգ է և զարգացումն է աղաշխարհության հոգեւոր երգերի և ընդհանրապէս Քրիստոսեան կոչված շարականների: Դա էլ իբրեւ այն տիպեր ու լայնահասակ հոգեւոր երգերի կատարելատիպն է. միայն ինքնահաստիակ ձևով: Այս բանաստեղծի առումով երևան եկած առաքելի մեծ մասը, սակայն, առանձին գրական արժեք չունին:

14. Վերածնունդայն յաւիյր:—Գր. Նարեկացու մի քանի առաքելի մեջ առաջին անգամ գտնոււմ ենք մեր գրականության մի բանաստեղծական տեսակը, որի մեջ հեղինակը սիրւ և բնության, դարնան և կանացի գեղեցկության երգն է երգում, միայն թե այդ սերը չուներ ոչինչ նյութական, ֆիզիկական. դա երկնային սերն է, ուղղված առ Աստվածածինը: Բայց նա այնպէս այս հոգեւոր բանաստեղծութիւնն իր ձևով արգեն խիստ տարբերվում է շարականների տեսակից: Ս. Գրքի նմանողութիւնն և մեկնաբանական առաջնորդականակա՞ն աղբիւրն է արգեն եւս են մղված: Բանաստեղծն, ընդհակառակն, ոչ միայն տաղաշափության, այլև արտահայտության ձևերով աղղվում է աշխարհիկ ուրախության և սիրտ առաքելից, որոնք այդ ժամանակ շատ զարգացած են եղել մեր ֆեոդալների և քաղաքացիների մեջ: Բանաստեղծութիւնն այլևս ստան ու անկենսա՞ն հզացում է սովորական ձևերով, այլ դարձել է անհատական ներշնչում: Որհանրագութիւնը դարձյալ հորինվում է Գրիստոսի կամ սրբերի ու եկեղեցու փառաբանության համար, բայց չունի այլևս գիպակախական նպատակ: Այս պատճառով, հակառակ շարականների բանաստեղծության, տաղասացը ձգտում է իգեալական պատկերներ առաջ բերել, չբաժանելանալով Ս. Գրքի հարասությամբ և կործիններ միայն արտահայտելով: Վերացական բանական և զովանաբանության անխորհրդ բառեր այլևս չկան. ալ զբոս փոխանակ խոսում է ինքը բնութիւնը, որից, ինչպէս Ողբերգութիւնն մեջ, այստեղ էլ կենդանի զգացած պատկերներ և առնում բանաստեղծը:

Ծննդան տաղի մեջ բանաստեղծի երեակայնութիւնն ազատ շարժելով՝ խաղում է, հակառակ ճգնաժամական մտայն ոգուն, բնության մեղմ գեղեցկութիւնների մեջ, առավոտյան արևածագից թաշտում է թուփ ու տերեւին, որոնց վրա իջնում է առավոտյան ցոլիկը, որ երբ արևն իր ծայրը

ցույց է տալիս, վառ ի վառյալ փայլում է. կամ նա գիտում է ցողաքին տակը և ոգի մեջ շողոված անձրևի կաթիլները, և մայից անցնում է լուսավոր լիալուսին, որի հսկից բարկ աստղերով ճեմում է գիշերավար արուսյակը: Դա դարձան գեղեցիկ հարսանիքն է, որ ներդաշնակությամբ նրանապարզված՝ գեղեցիկում է իր երգը: Բայց դա ալլաբաններն միտմամանակ և հսկեր դարձան, նոր հոգեւոր կյանքի սիմբոլիկ պատկերն է, — և ոչ միայն մեր բանաստեղծության մեջ, — որ թացվում է «Սիրոյս, այսինքն Քրիստոսի ծնունդով իբրև «փառաց լուսոյ» «ձագունն յարիսոյն», որ, ըստ ջրիստոսնեական հավատքի, մարդկային ազգի սիրո համար եկել, ծնվել է ինչպես երկնքից իջնող մի ցողաքեր ամպ, կամ ինչպես մի գործնան ձգիկ Ս. Կույսի ծոցից:

Զուէր իւր ի մեզ քաղցրիկ ցողեալ. . .

Ի սիրոյ սէր ձանուցեալ,

Սիր-բողոքի տարփամբ լցեալ,

Սիրով ընդ սէր միաբանեալ:

Գարնան այս ընդհանուր երգին խառնում է բանաստեղծը և իր երգը.

Մ'ըզ դարմանալի, երգ շարժվարմանի,

Տեղի եղեր բարեկերտին.

Խորհուրդ, խորհուրդ,

Համերամ զարդ, երամից զարդ,

այսպես բացակայում է նա՝ գիմելով Ս. Կույսին, բարեկերտին մարդ, որ ներկայանում է նրան մի գաղափարական կնոջ պատկերով, այնպես նկարագրված, ինչպես մի աշխարհական երգչի իր կոնացի գեղեցկության իդեալը կնկարագրեր: Նա մարդկային մի ազգուհի է, նու՛նի սեռաբանի հասակով. այդ նրան նրանի ի մի կից կամար՝ կարծես «միջօրէի ժամն» է Զարեհ:

Այլքն ձով ի ձով ծիծաղախիտ

Մաւալանայր յառաւոտուն,

Երկու փայլկնաձև արեգական նման.

Շողոք ի ժմին իջեալ յառաւոտէ լոյս:

Նրա նուննի այսերը, կամարակապ ձեռները և մարդկային պատկերացումն են կենդանի և ուժեղ.

Բերանն երկթերթի. վարդն ի շրթանցն կաթեր.

Լեզուին շարժողին քաղցր երգանայր տաւիդն. . .

Վարսիցն երամից զարգ ուրա են առեալ,

Խառնիւսակն բուրբալ այտիւք.

Մօցըն լուսափայլ, կարճիւր վարդով լցեալ.

Մղիքն ձիւրանի մանուշակի հոյլք,

Խնկեալ ի կնիքէ բուրբալ

Հրով առաւոտայնով լցեալ,

Ձայն քաղցրանումը որ ի նմանէ հնչէր:

Զի մոռացվում նույնիսկ գեղեցիկ կապույտ, ձիթանի բեհեզյա պատ-
մուհանը, սակեշող, արծաթափայլ ռակետուուն գտաին, գարդարված թան-
կագին քարերով, և նույնիսկ քայլվածքը, ձայնը.

Գուսին արծաթափայլ, սակետուուն,
կամարակապ, յակունց շափիւղայ,
Մանրամասին յօրինուածով պննեալ,
Անձինն ի շարժել մարգարտափայլ գեղով,
Ոտիցն ի գնալ՝ շողն ի կաթել առնոյր:

Դա մի գեղեցիկ պատկեր է, մի քանչեյի տեսիլ, որ

Հանդարտիկ խաղայր, թիկնէթեկին ճեմէր,

այսինքն՝ կոտորակովս, ուսերը շարժելով հանդարտ ճեմում էր.

Որոյ սիւնն ի որտին նուախայօրէն
Կարկաշայր սաթըրերունի սէր:

Մարդ ակամա հիշում է Պեշիկթաշլլանի ճեմը մ'լետոն հակայինն,
որի մեջ բանաստեղծը հրապուրվում է գեղեցկություններովը բնության,
որի ամենամեծ գորգն է երգող կույսը: Բայց չ'առանանք, որ նարեկացու
քնությունը, պարունը,—ինչպես ընդհանրապես միջնադարյան, և ոչ միայն
հայ, և կեղեցական երգիչների համար,—մի ալլարաբություն, մի սիմբոլ է
միայն Գրիտտոսի ծննդյան համար, իսկ նկարագրած գեղեցիկ կինը Ս. Կույսն
է, մայրը նորածին Փրկչի Վարեկերտին, ինչպես կոչվում է մանուկ Հի-
սուսը և ոչ միայն մեր բանաստեղծության մեջ, Ուստի բանաստեղծը վեր-
ջացում է իր տաղն այսպես.

Այն Թագաւորին, այն նորածին Փրկչին,
Ջընգ տօնկողն փառք յաւիտեանս:

Դա իսկապես ջերմ սրտից բխած մի օրհնեղություն է միայն, ուղղո-
ված առ Ս. Կույսը, որ ոչինչ ալլարաբական չունի իր մեջ, իր սեփական
սիրո առարկան ի գեմս Սրբուհու երգած: Բայց այդ օրհնեղությունն
ամբողջապես թարմություն է, այնպես զգացված է և մարդկորեն նկարված
ամեն ինչ, որ տնայայտն իրական կյանքի մեջ տեսածից ու զգացածից է
առնված: Մյուս կողմից, սակայն, այն սերը, որ զովում է բանաստեղծը,
մի աննյութական սեր է. որովհետև երգված կույսն ինքն աննյութ է.

Սերովբէանման, քերովբէաթոռ,
Հուպ երբեկին լոյս գերագանց,
Հասայն արփի վեհինաճեմ:

Նա, ինչպես Աստվածածնի ներբողի մեջ (էջ 414 և հտ.), գրում է.

Ի մարդկային գորմէ հրեշտակ երկնային,
Յեղծականաց սեփից տնժառ սերովբէ.

Ի հողային նիւթոյ ոսկի Սոփերայ,
 Ի ծովային բերմանց շնորհալոյս մարգարիտ,
 Ի Յեսսեանն ռուսոյ քաղցրապտուղ ծաղիկ...
 Յողոյն հանդարտիկ ամպ տնձրեաձիւր,
 Արեւն ծագման ակն արփիափայլ,
 Մերկացելոյ տյգոյն տատղ առաւօտին,
 Գիշերային մթոյն խօսնակ բերկրանաց...
 Վեհիկն պատկեր կերպիւ կշորրդեալ
 Թեթե պարզութիւն հիւթիւ բաղկացեալ...

Նա մի անհասանելի աստվածային պաշտելի էակ է, երկնքի իսկուհին, զմեծ, երջանիկ, անտրատ դշտոյն, մի լուսեղեն պատկեր, որի բարեխոսութեանն է գիտում հաճախ բանաստեղծը խոնարհ, զետեքաբոյ աղօթքներով, որոնց մեջ զգայական սիրո հետք անգամ չի նշմարվում:

Այլ բնկեալ սրտիւ, մատանց տատանմամբ, յոյս տուեալ դարձի՝
 Զդէմս ի յերկիր եղեալ՝ պողատիւ մօրգ Յիսուսի.
 Բարեխօսեա, մաղթեա քաւութիւն ինձ մեղաւորի,
 Դու զօրաւոր փրկանակ կենաց, Իսկուհի երկնի,
 Դեզ օրհնութիւնք ձայնից և բուրմունք խնկոց ի յերկրի,
 Եւ անուշից իւղոց մատուցումըն յամենայնի:
 (Ողբ. Բան ԻԶ. էջ 62)

Մի ուրիշ տեղ գրում է.

Աղաչեմ զքեզ, սուրբ Աստուածածին,
 Հրեշտակ ի մարդկանէ, մարմնատեսիլ քերովրէ,
 Երկնաւոր արքայունի,
 Անխառն իբրև զօղ, մաքուր օրպէս յոյս,
 Անշաղախ ըստ նմանութեան
 Պատկերի տրուսեկին բարձրութեան,
 Գերազանց քան զբնակութիւն
 Անկախելին արբութեանց...

Այսպես հենց սկզբից մեր բանաստեղծութեան մեջ, եվրոպացիներից շատ առաջ, կնոջ պատկերը դրվում է մի միասնական խորհրդավորութեան մեջ, որին մոտենում է բանաստեղծը մի խորին անկասածութեամբ ու հոգեոր հիացումով. Բանաստեղծն արդարև գուսանակա՞ն երգչի մեջ փառաբանված երկրավար սիրո շքեղ պատկերներով է նկարագրում,—և այլտպես էլ չէր կարող,—բայց նա այդ բոլորը ծառայեցնում է միայն իր հոգեվոր հիացմունքի առարկան զգալի դարձնելու համար: Եվ որքան նուրբ, ազնիվ ու մաքուր կերպով, միաժամանակ և վառ արտահայտութեաններով է նա այդ տնում և պայծառ գծագրում մի կնոջ իդեալական պատկեր, որ այնու-

հետև իշխում է մեր հին բանաստեղծության, մեր սիրո երգի մեջ¹։ Այս արդեն նշան էր, որ բանաստեղծությունը փոխվում էր։

Ա. Կույսի նկարագրից հետո անցնում է «մանկան» կամ փեսայի գովեստին նմանություններ երգող երգի (որ իսկապես մի սիրո երգ է, այլաբանությամբ մեկնաբանված Քրիստոսի և հեղեցու վրա)։ Ընդ վերջապես «Յայտնութեան» տաղի մեջ, որ «Մենդեան» տաղի շարունակությունն է, ավետիս է տալիս տիեզերքին Քրիստոսի ծննդյան և միջնորդության համար։ Բնություն սիրահար բանաստեղծը չի մոռանում իսկական ժողովրդական ձևով ավետիս տալ նաև ծառերին ու ծաղիկներին, ջրերին ու լեռներին, և տեսեք, թե ինչպես մի քանի բառերով մտերամասն նկարել գիտե բույսերի ու ջրերի շարժումը։

Աւետիս ծառոց ծաղկանց,
Բողբոջախա խրատաւարթ,
Գոյն գեղեցիկ, պտղինաւէտ
Ակնահաճոյ, համ քաղցրունտկ,
Հոռ քաւազուարթ, փունջ խուռներամ,
Մայրից վարդից փթթինազուրդ,
Թերթ տարածեալ ոսկէհաճանջ,
Տերևախա կանաչացետլ—
Աւետիս տայր Յովհաննէս
Յորդ աղբերաց, հայլ վառկաց,
Ջուր մանուածոյ ձիծաղ ծաւալ,
Կարկաջահոս ուխինահոս,
Մայթինտսէր մանուածաւալ
Շրջանապտոյտ մանր աւազին.
Հոլով խորոց մէա մէա զուգին,
Վայր, վեր, անէջ, վեր, վայր ի վեր՝
Փութան ի ջուբսն Յորդանանու։

Տաղերի մեջ ևս երևում է բանաստեղծի երևակայության էական կողմը, որ խիստ զարգացած է Ողբերգության մեջ. նա նկարչի նման տեսնում է ամբողջական պատկերներ։ Այսպես «Յայտնութեան» տաղերից մեկի մեջ տեսնում ենք Հիսուսին քառաթևի վրա՝ ինչպես մի առյուծ անդ ձայնով դռնիկիս դեպի Սանդարամետը, որ զողալով սարսուռ է. առյուծն Հիսուս քանդում է Սանդարամետի ամբողջները և այնտեղ գերվածներին ավար առնելով՝ ազատում է տանջանքներից և անանց պատկերով զարդարում է նրանց։

Ավելի գեղեցիկ է նրա «Յարութեան» տաղը. սալլի պատկերով, որ մի այլաբանություն է և որի մեկնությունը հենց ինքը հեղինակը հորինել է։

¹ Յէս Մ. Արքայանի շէնի գումանական ժողովրդական երգեր, Երևան 1931, էջ 123—140. «Կնաջ արտաքինի» խորհրդի երգերի մեջ, սկսած Գր. Նաբեկացուց՝ մինչև Սայաթ-ն-ձա, այլև ժողովրդական երգերի մեջ։

Առանց այդ մեկնաւթյան՝ այդ երգը գրեթէ լոկ հակադրութիւն է մի սալի, միայն այլաբանության պատճառով, դուցիւ և աղավաղված լինելով, հորինվածքի գաղափարը միման է։ Այստեղ տեսնում ենք Մասիսից (Սինս-յից) իշնոզ մի արքայական սալը, դարգարված բնիկներով և փրանիներով, վրան գրված է սակի գահոյք, որի վրա նստած է արքայորդին։ Նրա աջ ու ձախ կողմերից կանգնած են սերովրեք ու ջերովրեք, տոյնում գեղեցիկ մանուկներ, գրկերին տերունական խաչը, ձեռքերին սաղմոսաբան ու ջնար, և երգում ու թաղում են՝ ՎՓնաք Գրիստոսի ամենազոր յարութեան։ Բայց

Անհալ են անեալ

Ջսալիկն անեալ են կացուցեալ.

Եւ անա չյարժէ՛ր սալիկն ւայն,

Եւ անա չխաղայր անիւն ւայն։

Սալն ունի ամեն պատրաստութիւն ու դորդարանք. ունի հարյուր բարդ խորձան, մի բարդ կորնկան, մեկն էլ մանուշակ լեռնագիշտայն։ Նրա սամիքն արծաթի են, լուծը ոսկի, սամոտիքը ապրճի, բիւկեր շարած, շարունման, հոյլ մարգարիտ։ Նրա ցրող ճորտը ճոճ է և ճապուկ, ուռածիջակ, հաստաբաղուկ, լայնաթիկունք, խաւրիշագեղ, որ տնիզագոյ ձայն է տալիս եղնամոլին, կանչում է արքունիկն,—բայց և այնպես սալը Մասիսի աջ կողմում անշարժ կանգնած է ճեղք։ Սակայն երբ լծում են եղները—սաթ ու սպիտակ, ծաղկաբայտուցը, արագաքայլը, ընթացականք, եղջիւրն ամեն խաչանման, և մազն ամեն հոյլ մարգարիտ,—այդ ժամանակ անա տեղից շարժվում է սալը, Բի յանեղէն անեալ շարժում կուրծն սալինն։ Ընդար ձայն է տալիս եղնամոլին, և սալը զլզլալով ու ճոճալով գնում, մտնում է իրաւագեղն, և Սինի որդիքը երգելով թաղում են՝ ՎՓնաք Գրիստոսի ամենազոր յարութեան։

Ի՞նչ է այս, եթե ոչ թագավորական հանդիսավոր գնացքը սալով։ Անպայման այսպիսի գնացքներ Արծրունյաց թագավորներին՝ տեսել է Նարեկացին և Հենց այդ վրի տեսել Բայց այս տաղի արժեքն այնքան իր նշանակաւոր մանրամասնության, իրականության ճշգրիտ պատկերի մեջ չէ, որքան արտահայտութիւն ձեռք մեջ։ Բանաստեղծը լեզվին իշխող արվեստավոր է։ Նրա այս տաղը մեր խառն ազատ ոտանավորների մի շատ ընտիր օրինակ է, որի մեջ ոտանավորն իր բազմազան ձևերի ու իթմով ըստ մեկնային հարմարվում է ըզմանդակության փոփոխութեանը՝ թաղով միանգամայն և ընդհանրապես շատ ութմիկ։

Դ Քն Գր. Նարեկացու երգերից այս կամ այն առնված է մեր շարահանքի մեջ, ընչէ, այդ միջին երգի հայտնի չէ։ Այս սեռութեան առաջի վերջում կան Այսօր արձակեցաք բառերը, որոնք չեն կապում ամբողջ առաջի հետ և թույլ են իրենց համար անկախ։ Այս երգու բառը բնութեան Տէր յերկնից կոչված շարահանքերից մեկի երբորդ տան առաջին բառերն են։ (Տես՝ Շարահան հոգեւոր երգեր, իթմութիւն 1801, էջ 378)։ Այդ շարահանի առաջին և երկրորդ տեղն են։

Նաւյնպէսի հմտաւ արժեատուլ, միայն ճշտութենիս կոչւած չափով (2—3—23—2—3)¹, հորինված է և նրա վարդապետի տաղը, որ բերվում է այստեղ մօրօղջապետ:

Վարդապետիմ (տաղ)

Գոհւալ վարդըն վառ առեալ
ի վեհեց վարսիցն արժենից՝
ի վեր ի վերայ վարսից
Մաւալէր ծաղիկ ծաղային:
ի համատարած ծովէն
Գլղպըջէ՛ր զոյնըն այն ծաղկին.
Երփին երփնունակ ծաղկին
Շողշողէ՛ր պլտոռւղն ի ճղկին
Գրբքում վակաւոր պլտոռւղն
Սընանէր խուռն տերեւով.
Տերեւըն տաւիղ Տոռղին,
Ջոր երդէր Դաւիթ հրաշ-իին:
ի փռնի խառնեւում վարդից
Գոյնըզոյն ծաղկունց ծաղկեցան.
Այդ սօս ու տօսաթ ծառերդ
Վարդապայն ոստա արձակեցին:
Այդ նո՛ն ու բողբոջ արաւսդ²
Ջորդ առեալ վարդըն շաշանին
Շաշանըն շողէր յովին,
Շողշողէ՛ր դէմ արեգականն:

Փառք Քրիստոսի մանազոր յարութեանն.
Քրիստոսի մանազոր յարութեանն
Ծրկըղպեն սերովբէցն,
Եւ վեցթեան քերովբէցն,
Հազարապետ հնչմամբ երգեն տակով՝
Փառք Քրիստոսի մանազոր յարութեանն:

Այս շարականի կրկնակը, որ նույնն է «Յարութեան» առդի կրկնակի հետ (Փառք Քրիստոսի...), շարականի բաժանազանութիւնն ու փոփոխութեան բնավորութիւնը, սերովբաների ու քերովբաների երկան զալը, «Այսոր աւանակեցա՛ք բոսերդ, և վերջապէս աղաւստանա՛քը երկունի մէջ էլ»—այս ամենը ցոյց են տալիս, որ այդ «Յարութեան» շարականն եղել է Նարեկ-ցոյ. «Յարութեան» առդի շարական-կապանն իբրեւ Սիսիւի սրգիներէ երգ, որ պետք է լինէր առդի վերջում և զոհատում է: Որովհետեւ շարականը շատ ծանօթ է եղել, առդն աբաղքազոր բաժանազան է առդի վերջում գնել շարականի երգաբաժնի սկզբի երգու բոսերը միայն՝ «Այսոր աւանակեցա՛ք, քրտնով հիշեցնելով, թե ինչ է առդի ժողովը»:

¹ Այս հայերենի չափի մասին տես՝ Մ. Արեղյանի «Հայոց լեզուի առաջնափոխութիւնը», էջ 267—276.

² Տղգված է ըստ ձեռագրին «աւրաւագ», սկզբում եմ «աւրաւագ»—աբոգ: «Աբոգ» կոչվում է «աւրաւի» ձայնը, որն ձայնի պարզութիւնն է ինքը ձայնը:

Այն հիւսիսային հաւէն
 Հով հարեալ գոհւոք շուշանին.
 Յայն հարաւային լեռնէն,
 Քաղցր օդով ցողէր շուշանին,
 Շուշանըն շաղով լըցեալ,
 Շող շաղով և շաղ մարգարտով.
 Մազկուշեղ տմեն շաղ ասին.
 Շաղն յամղէն, ամպն յարեգակնէն,
 Ատակըզ տմէն շուրջ տուն,
 Դէմ լուսնին գունդ գունդ բոլորին.
 Գունդ գունդ խաշմէն գնդակ,
 Յօրինուած իրենից շուրջանակ
 Փառք հօր և որդւոյն, յաւէտ,
 Սուրբ եղգւոյն տշմ և յաւիտեանս:

Այս ատղը՝ բացի վերնագրից ու վերջին երկու տողից՝ ոչինչ կրօնական չունի իր մեջ. «Վարդավառ» անունն էլ իսկապէս քրիստոնեական չէ: Այսպէս կոչվել է ջրի դիցուելի Աստղիկի անունը. որովհետեւ նրան նմիրեակն է եղել վարդը, Մեծ հանդեսներով կատարել են այդ տոները, դիցուելու վարդեր ձանելով. շուր արակելով և այլն: Քրիստոնեութեան ժամանակ այդ հեթանոսական տոնի փոխանակ կատարել են Հիսուսի պայծառակերպութեան տոներ. բայց անունը և հանդեսները պահել են հեթանոսականը: Մեր հին հեղինակները հիշում են այդ տոնի ծագումը հեթանոսականից՝: Այդ իմացել է, անշուշտ, և Գրիգոր Նարեկացին: Նա աղգվելով «Վարդավառ» անունից՝ նկարագրել է ամառվա կանաչավառ բնութեանը—բոլորովորդ ու պողոզ և ոստեր արծակող ծառեր, փթթող վարդ ու շուշան, ծլող ու թուրող ծաղիկներ, շաղ ու շող, լեռնային քաղցր օդ ու փշոդ հով, լուսին, աստղազարդ երկինք: Ամբողջապէս լուսով ու գունջով և շարժումով հեղեղված, անուշահոտ բուքմունքով լի մի թորմութեան:

Բանասանդին այստեղ ոչ միայն բնութեան զգացում ունի, այլ գիտե՞ նաեւ գիտել բնութեանը և սքա գեղեցկութեանից աղավաղվելով՝ անդրադարձնել. «ալ այդ մեզ մի հրաշքերէյ արվեստով, առանց որեւ մթնութեան, ուրիշիկ-երաժշտական ռաքերով ու բազանայնների հանդիտութեամբ շոյելով մեր անկանջը, միտածամանակ և խաղուն դարձնելով սառնավորը: Եվ որ զլիաժպրն է՝ նա մի քանի կարճ խոսքերով հանում է բնութեանը ընդարձակ նկարեն մի պտակեր, մեծ վարդահալութեամբ թելադրելով ընթերցողին լրացնել պակասը: Եվ այդ լուսավառ պտակերը ոչ թե սառած, մնաած մի վայրկյան է, այլ—ինչպէս վերահաս.՝ նրա բնականագիտական արվեստի անսթիւյան մեջ (§ 4) բացատրվեց, —է՛ շարժվող կենդանի միութեան, մի ներդաշնակ ամբողջութեան գաւառալութեան վիճակի մեջ: Այս արդեն մի նոր արվեստ է և՛ մեզ, և՛ բովանդակութեամբ: Բնութեանը ոչ

1 Գրաք. Գ-բ. Մ. Արեղյան, «Վերականգնող կոչված հեթանոսական իրեր Աստղիկ-Դերգիւսի դիցունու արձաններ, Երևան 1941, էջ 76 և հաւ.:

միայն ծառայում է իբրև տղայուհի բանաստեղծական նմանութունների, ռե-
կան պատկերների համար.—ինչպես Ողբերգության մեջ,—այլ ինքը բնու-
թյունը դառնում է երգի նյութ։ Բանաստեղծը երգում է բնությունը, թե-
պես դարձյալ կրոնական նպատակով։

Նաբեկացու աղպիսի երգի մեջ, սակայն, արդեն զգացվում է վերա-
ծնության շունչը։

Քաղաղ շինարարության դարն ունեցել է իր խորին ազդեցությունը
կյանքի վրա։ Եկեղեցական դասի կրոնական ոգին՝ հասնելով իր գագաթ-
նակետին և կատարելագործելով իր հոգեոր երգերը՝ արտագրել է գրական-
նության մեջ Ողբերգության Մատյանը, ամենամեծը՝ ինչ որ կարող էր։
Սկսել է բարձրանալ մի նոր դասակարգ—քաղաքացությունն իր պահանջ-
ներով։ Բանաստեղծությունը հետևելով իրական կյանքին՝ պիտի անհրաժեշ-
տորեն շուռ գար իր հակադրությանը—գրականության աշխարհականացմանը։
10-րդ և 11-րդ դարերն ստեղծել էին դրա համար պայմաններ։ Գոսամա-
կան ուսմանության բերանացի երգերը, որ այդ դարերում շատ սիրված են
եղել աշխարհականներից—ազնվականներից ու հարուստ քաղաքացիներից,
հանդիսացել են հայկական վերածնության նախակարգվածներ։ Բայց այդ
շրջանի համար ցավոք չունենք զրի առնված գոսամական երգեր, ոչ էլ
ընդարձակ վիպական բանահյուսություն, կամ թե գուցե մինչև այժմ
այդպիսիներ երևան չեն եկել։ Բացի Վատմական գրույցներից, որ արդեն
տեսել ենք, և որոնց մեջ արդեն զգացվում է վերածնության ոգին, Ուստի և
մենք տակավին չենք կարող պարզել խաղաղ շինարարության դարի հայ
գրականության հարյուրամյա դարաշրջանի լիակատար պատկերը, որ տնդ-
քաղաքներում լինեի մամանակի իրականությունն ամբողջովին՝ իբրև արտա-
հայտություն ֆիզոլոգիական հասարակարգի երեք դասերի և բարձրացող
քաղաքացության։ Ինչպես էլ լինի, վերածնության կարապետ է արդեն
Գրիգոր Նաբեկացին, մեր հին մեծ բանաստեղծը։ Սակայն նա իր էությունը
պատկանում է դեռ նախորդ շրջանին։ Նրա Ողբերգությունն ու տաղերը—
մի կողմ թողած նրա մյուս գրական երկերը,—ըստ բովանդակության
արտահայտիչ են այ թե ազնվականության ու քաղաքացության աշխար-
հիկ ոգու, այլ այն դարի եկեղեցական դասի կրոնական ազգ, որով տո-
գորված էին և աշխարհականները։ Բայց և այնպես նրա մի լավագույն
ստեղծությունների մեջ շնչում է արդեն վերածնությունը։ Սկսվում է հա-
յոց հին գրականության մի նոր շրջան—վերածնության գրականությունը¹։

¹ Հայոց հին գրականության այս երրորդ շրջանի պատմության համառոտագրու-
թյունը ազգագրված է ՍՍԲՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի Վեպե-
կացի մեջ, № 5—8 (10—11), նրան 1961, էջ 86—108. Պրոֆ. Գ. Մ. Արեգյան,
«Վերածննդի» հայոց հին գրականության մեջ։ Այլ տառերի արտադրություն։

ԱՌԱՋԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ

ՎԻՊԱՍԱՆՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԸ

1. Ժողովրդական վեպերի պատմականօրոյրում մասին ընդհանրապես:—
Վերջերս ժողովրդական վեպի (էպոսի) մասին՝ բանահյուսութեան տղոյ
հյուղով չաւրապած մարդիկ առաջ քաշեցին մի սխալ տեսակեա, թե ժո-
ղովրդական վեպն իրր մագում և կազմվում է դարերի պատմութեան ընդ-
հանուր ազդեցութեան տակ՝ առանց մեկ որոշ կոնկրետ եղելութեան: Ար-
դարև ժողովրդական վեպը կրում է իր մեջ մի որոշ պատմական դարաշրո-
ջանի ազդեցութեանն ու ողին, նույնիսկ հիշողութեաններ մի ամբողջ՝
դարաշրջանից, բայց վեպի գործողութեանը, ինչպես և գործող տնձերը,
ֆանտաստիկ ստեղծագործութեան չէ, այլ ծագում է, առաջ է գալիս մի
որոշ, կոնկրետ պատմական դեպքի, եղելութեան հետեանքով: Վեպը որոշ
կոնկրետ եղելութեան բանաստեղծական պատմվածքն է, հարկավ, մի առ-
գամ հորինվելուց հետո՝ գա իր մեջ առնում է նաև ուրիշ գտնադտն, և
վեպ և հւշ ժամանակների պատմական տնձերի մասին երգերից ու դրույց-
ներից տարրեր, և այդպիսով առաջանում են հարակցութեան և առա-
ջընդմեքեր: Բայց դարձյալ դրանց բարբի հիմքը որոշ կոնկրետ տնձեր ու
եղելութեաններն են: Խնդիրն այստեղ վեպի գործողութեան և գործող տն-
ձերի մասին է լուկ: Տես և Վերապատման, § 2:

Մի առգամ որ այսպես է վեպի մագումն ու դարգացումը, բնականա-
բար վեպի ուսումնասիրութեան կարևոր խնդիրներից մեկն այն է, որ որոշ-
վի վեպի պատմականութեանը, այսինքն թե որնք են այն պատմական
կոնկրետ, հատուկ եղելութեանները, որ առաջադրված են այս կամ այն
վեպի մեջ: Այդ միևնույն է, թե որնք են այն պատմական եղելութեան-
ները, որոնցով աղբի է ժողովուրդը, կամ սրն է տվյալ վեպի իրականա-
թեանը թե ըստ դարաշրջանի և թե ըստ հատուկ, կոնկրետ պատմական
տնձերի և եղելութեանների:

2. Վիպապատմի պատմական Յյուրքը:—Մեր այս հին վեպի պատմակա-
նութեանն ավելի պարզելու համար հարկավոր ենք համարում, բացի Վի-
պապատմի մասին հատվածի մեջ դրվածից՝ նաև հետևյալ պատմական տե-
սութեանը: Վեպի գլխավոր հերոսներից մեկն է Արտաշեսը: Այս վիպա-

1 Մ. Արևելյան, Հայ ժողովրդական առաջադեպեր, էջ 388—389, 312—325, 395.
և հոն:

կան անձի մեջ հարակցման են հիշողություններ մի քանի պատմական անձների մասին։ Վերականգնողական Արտաշեսը լինում է Արտաշատ քաղաքը, Դա հիշողություն է ամենից առաջ Արտաշես Ա.-ի, Հայոց թագավորության հիմնադրի, որ շինել է Արտաշատ մայրաքաղաքը (180 թ. մ. թ. ա.)։ Արտաշատի, Հայաստանի քաղաքական կյանքի հնագույն կենտրոնի մասին երգը, որ մտել է վեպի մեջ, ազդել է նաև քան իսկ հիմնադրի, Արտաշես Ա.-ի վրա։

Արտաշես Ա.-ից հետո վիպասանների վրա խորին ազդեցություն թողել է Արտաշեսի սերունդ Մեծն Տիգրանի երկարատև և աշխարհակալ իշխանությունը։ Այնուհետև առանձին կերպով հույն է երգիչներին Մեծն Տիգրանի որդու, Արտավազդի և այս Արտավազդի որդի Արտաշեսի (Բ.) պատմությունը, որով սկսվել է վեպի երկրորդ մասը դառնալ մի ամբողջական պատմվածք։ Այս թագավորի պատմությունը, որ գուցե շատերին ծանոթ չէ, մենք այժմ կարգում անցնում ենք, և իր համառոտությունը մեզ վրա թերևս ոչ մի առանձին ապավորություն չէ թողնում։ Գուցե նույնիսկ շատ չնչին բան երևի երգի կամ վեպի նյութ գառնալու համար։ Բայց այդ միայն մեզ համար և այժմ։ Պետք է երևակայել Հայաստանի վերակեն 1-ին դարում մեր թ. ա. երբ հայերն Արտաշես Ա.-ի ձեռով անկախություն էին ձեռք բերել։ Մեծն Տիգրանը միություն էր մտքել թագաձեռների մեջ և միացրած ուժով հայերին աշխարհակալություն ճանապարհով տարել, տիրելով շրջակա երկիրներին և կործանելով Աելևկյան պետությունը։ Ազգային պատկերասրահը նոր դարձնում և ազգային հաղթանակները մեծացած էր։ Բայց որքան մեծի ճոխացած էր այդ հաղթանակներն, այնքան ավելի խսրը պիտի լիներ և Մեծն Տիգրանի որդի Արտավազդի ուսումնական Արտաշեսի ցավովի վերակեն թագած տալավորությունը։ Արտավազդի օրով Մեծն Տիգրանի, արքայից արքայի տերությունն ընկնում է, Համասյեցի Անտոնիոսը գաղնակցելով հայերին թշնամի Մարաց թագավորի հետ՝ զորքով մանում է Հայաստան, Հայոց արքան, Արտավազդը խաբվելով՝ իր կնոջ և որդիների հետ գերի է ընկնում Անտոնիոսի ձեռք և շղթաված տարվում է Նզիդոս։ Արքան սպանվում է այնտեղ։ Նրա որդիները գերություն մեջ կորած են։ Աղետով է միայն արքայորդին Արտաշես, Հայերից բերդականներ պաշտպանում են Արտաշեսին։ Նա իր կյանքն ազատելու համար ստիպված է Պարթևների մոտ փախչելու։ Իսկ Անտոնիոսը, շանկուցեալ զոմանս կամաւ, զոմանս բռնութեամբ՝ լինէր տէր համորէն աշխարհին Հայոցը։ Հայաստանը հազթված է, և Անտոնիոսի գլուխը հայ խույրով պսակված։ Իշխում է Մարաց թագավորը, որի խնամակալությանն է որդու հանձնել Անտոնիոսը իր որդուն, կարգելով սրան Հայաստանի թագավոր։ Մեծն Տիգրանի, արքայից արքայի տերությունն այլևս չկար։ Զկար և սիրելի Արտաշեսի հին, բնիկ ցեղը, որ հարյուր հիսուն տարուց ի վեր փառքով թագավորում էր։ Բայց ահա պարթևների մոտ ապստամբած արքայորդին՝ Արտաշեսը պարթևական զորքով և օգնությամբ գալիս է և մարերի դեմ կռվելով հաջրում է նրանց ու հաւ ստանում իր հոր դահլը, տիրում նույնիսկ Մարաստանին։ Նա զարթնող և ինքնաճանաչության եկող մարդկանց համար թիւ տվելի արժեք երգել, քան այս անցքը։ Վի-

բաժնեմասնակցի հաշվառութիւնը բաժնեկանութիւն էր ստացած. բնիկ թագավորական ցեղն իր զանի վրա էր նորից, այն էլ մեծ կատասարօֆից հետո: Իսկ կատասարօֆները, ինչպէս և հազթական փառքերը վիպական շրջանում, ահա երևակայութիւնը ցնցող պատմական իրողութիւնները: Եվ մեր Վիպասանքի սովորագրի մարզն պատրաստ է Արտաշէս Ա.-ի և այս Արտաշէսի պատմութիւնից: Հայոց թագավորը (Սահաւորուկ) սպանվում է. կինն ու որդիքը ոչնչանում են. իշխում է օտար ցեղի թագավոր (Երվանդ), որ բարեկամ է հռոմայեցիներին ու մօրերին և բարձրացնում է մարդաց տեր Արզամէն, տալով նրան թագավորութեան երկրորդական գահը (Բ. 44): Հայոց թագավորական տնից ազատվում է հովասարիճների ձեռով Արտաշէս արքայորդին միայն, որ փախչում է պարսիկների մոտ. պարսիկների թագավորը զորքով ուղևորւում է նրան, և նա զայիս է իր հոր կորած գահը ձեռք բերում: Նա քաղուկ չարչարում է և Մարտի ազգը (Բ. 61): Նա բարեկամ է պարսիկներին. արհամարհում է հռոմայեցիներին, բայց երբ սրանք զորքով զայիս են նրա վրա, հարկատու դառնալով հնազանդում է նրանց:—Ահա վիպական Արտաշէսի պատմութիւնը, բայց ահա Արտաշէսի դրան Արտաշէսի իսկական պատմութիւնը: Ալիւլացիք վրան և հիշողութիւններ Սելևկյան շրջանի Նովոնիցների մասին, այլև Արտաշատի շինութեան հին զրույցն ու երգը, որ Արտաշէս Ա.-ի տնունով պատմվում կամ երգվում էր արդեն, և մենք կուենանք Արտաշէսի վեպի առաջին մասն ամբողջ, նրկա տարբեր Արտաշէսների մասին երգվածներն ու պատմվածքները վիպասաններից մի մարդու վրա պատմված, մի Արտաշէսի տնունով:

Այս Արտաշէսյան վեպը՝ նորոգող ու կերպարանափոխող տարբեր բնորոշել է յառ մոտիկ ժամանակում կառարված այլ նշանավոր գեպքերից հաւ-Միհրդատ (35—37 թ. և 41—45 թ.), Հրադամիզդ (46—52 թ.) և Տրդատ Ա. թագավորների անցքերից: Միացման համար իբրև հանգույց ծառայել է պատմական գեպքերի նմանութեամբ Արտաշէսյան վեպի հետ: Վրաց Փարսիան թագավորի որդին՝ Հրադամիզդ (ըստ վեպի՝ Նրուանդ), սպանում է հայոց Միհրդատ թագավորին (ըստ վեպի՝ Սահաւորուկ) կանանցով և որդիներով հանգերծ և իր հոր օգնութեամբ թագավորում է Հայաստանում (46—52 թ.), ծառայելով Հռոմի շահերին: Նա բռնանում է հայերի վրա և տանելի դաժնում նախարարներին: Բայց այդ ժամանակները Պարթևների Վաղարշ Ա. թագավորը հարձուր է համարում Հայաստանը նվաճել: Նա իր կրտսեր եղբորը, Տրդատին (ըստ վեպի՝ Արտաշէս) պարթևական զորքով ուղարկում է Հայաստան թագավորելու (51 թ.): Հայերն առեկով օտար և բռնակալ Հրադամիզդին՝ սիրով բնորոշում են նրան և անցնում են Պարթևների կողմը: Հրադամիզդը փախչում է, և Տրդատը բնակութիւն է հաստատում Արտաշատում: Փոփոխութիւնը հռոմայեցիների հանութեամբ չէր եղել. ուստի նրանք ուղարկում են Դամասիոս հորբուլոն զորապետին, որ արշավելով Հայաստան՝ առնում է Արտաշատն և այրում (58 թ.): Տեղի են ունենում բազմաթիւ պատերազմներ: Բայց վերջը Պարթևները հաղթող են հանդիսանում, և Տրդատը մնում է Հայոց թագավոր, որից և սկսվում է Արշակունի հարստութիւնը Հայաստանում (66 թ. մ. թ.): Տրդատ Ա.-ը նորոգում է, իսկուպես նորից շինում է Արտաշատ մայրաքաղաքը Հռոմից

բերած արվեստագետների ձեռով, Նրա օրով ալանները 72 (կամ 75) թվին հասարկ անցքով տրջավում, ասպատակում են Մարաստան և ապա անցնում են Հայաստան: Հայոց թագավորը, ինչպես պատմում է Հովսեփոսը, նրանց դեմ է դուրս գալիս կովով, «և փոքր մի ևս՝ և անկանէր ի ձեռս նոցա. քանզի մի ոմն ի նոցանէ ընկնց պարսն ի պարանոց նորո, և քաղցէր զնա՝ եթէ չէր նորա անպարեալ հառանել զայն որով: Ալաններն ափերելով աշխարհը՝ քաղվում են իրենց երկիրը: Ալանները 135 թ. դարձյալ, Նախապես համաձայնելով վրաց թագավորի հետ, որ բաց է անում նրանց առաջ հովկասյան կիրճը (Ալանաց դառը, Դարեալի կիրճը), նորից իրենց ափերից հարձակուեցն են դրածու Աղվանքի, Մարաստանի և Հայաստանի վրա, և հասնելով մինչև համեմական հապաղովկիս, ասպատակում, ետ են դառնում:

Պեպքերի նմանությունը մեծ է, և վիպասաններն Արտաշեսյան վեպի վրա ավելացրել են տարրեր և այս նոր կաաարված դեպքերից: Խորենացու վիպական պատմությունը,—մեկզի դրած անունների տարբերությունն առ դեպքերի շփոթությունը,—նույն է, ինչ որ Հրադամիզի և Տրդատ Ա.-ի պատմությունը: Արտաշեսի և Երվանդի վեպի մեջ վրացիներն օգնում են Երվանդին (=Հրադամիզի), և նրանց Փարսման թագավորն անձամբ դալիս է կովկոս Արտաշեսի դեմ. «Եւ զօրքն Վրաց, հանդերձ արքայիւն իւրեանց Փարսմանաւ, թէպէտ և յանգուզն յարձակամար յառաջեալ բախէին, արագապէս դառնային ի միւս կողմն փախուցեալա (Բ. 46): Առասպելի մեջ երգվել է, թէ հոռմայեցիների կողմից Դոմես ոմն եկել է կովկոս Արտաշեսի դեմ (Բ. 54): Դա, անշուշտ, Տրդատի դեմ կովկոս Դոմեաիոս հորբուլոնի հիշողությունն է: Վիպասանքի մեջ Արտաշեսը հիմնում է Արաաշատը: Տրդատ Ա.-ի օրով Արտաշատը հիմնովին կործանվում է նորից շինվում է Հոռմից բերել աված ճարտարապետների ձեռով: Այդպիսի դեպքում Արտաշատի հիմնվելու հին երգը, ինչպես լինում է սովորաբար, ավելի ևս մեծ ուժով կարող էր կենդանանալ այդ քաղաքի վերայինության պատեռուով, և հին թագավորի գովեստը նոր թագավորի համար երգվել, նորի համար ևս պահելով սիրելի ու ժողովրդական Արաաշես անունը: Արտաշատ քաղաքի շինությունն, ուրեմն, որ երգվում էր Վիպասանքի մեջ Արտաշես Ա.-ի անունով, և Տրդատի մյուս զօրների նմանությունը Վիպասանքի ուրիշ միջադեպերին՝ եղել են վիպական խմորման կենտրոն: Եվ այնուհետև Արտաշեսի մասին երգն և Վիպասանքի առաջին մասն իրենց են քաշել և Տրդատ Ա.-ի մյուս արարքների գովեստն ու պատմությունը: Ալանների ասպատակությունը վրացիների հետ. «Միաբանեալ Ալանք լեռնականօցն ամենայնիւ, յինքեանս արկանելով և զկէս Վրաց աշխարհինն (Խոր. Բ. 50), Տրդատի կռիվը նրանց դեմ. Դոմեաիոս հորբուլոնի դուրուստը Հայաստան, և շատ կենցաղական գծեր, և վերջապէս՝ բուն միջակայն շնամբորտություն ունեցող առասպելներ:

Այսպես ուրեմն՝ Վիպասանքի ներսն Արտաշեսը հիշողություն է՝ պատմական Արտաշես Ա., Արտաշես Բ. (և Արտաշես Գ.) և Տրդատ Ա. թագավորների, իսկ վիպական Երվանդը հիշողություն է Արտաշես Ա.-ի նախորդի, Հայաստանի վերջին կառավարչի Սելևկյան տիրապետության ժամանակ,

այլի ուրիշ նախորդ ներկանդներին, Իսկ վիդական շղթայով՝ Արամավազը, դա հիշողություն է Մեծն Տիգրանի որդու, Արամաշես Բ.-ի հօր, Հայոց Արամավազ Թագավորին, որ Վիդականների մեջ դարձել է վիդական Արամաշեսի որդին՝ Սանատրուկ Թագավորը, որ երևան է գալիս վեպի սկզբում իբրև Արամաշեսի հայր, նույնպես պատմական անձի հիշողությունն է:

Տրդատ Ա.-ից սկսած՝ հարյուր ասարկ՝ ընթացքում Հայաստանի քաղաքական վիճակն ընդհանրապես նույնն է մնում մինչև 161 թվականը, երբ Հայաստանում դարձյալ սկսվում է համառ պատերազմ երկու հարևան մեծ տերությունների միջև, Հոսմայեցիները 163 թ. մարտով տունում, կողոպտում է հիմնովին ավերում են Արամաշատ մայրաքաղաքը (որ, սակայն, հետո դարձյալ վերականգնվում է), Նրանք Այրարատյան դաշտում շինում են մի քաղաք, որ կոչվում է Նոր քաղաք: Հայերն Արամաշատի ավերման պատճառով դրդովում են և սկսում են մարտնչել հոսմայեցիների դեմ: Բայց սրանք զոպում են չբռնկված անգլային ապստամբությունը և հաջորդ տարին, 164 թ., Նոր քաղաքը հայտարարում են մայրաքաղաք: Պատերազմն այնուհետև շարունակվում է Հայաստանից դուրս մինչև 166 թ.: Նոր քաղաքում հոսմայեցիները պահում էին օւժեղ կայազոր, այդ պատճառով Սանատրուկ Թագավորը (190—196 թ.) չի կամենում այդտեղ նստել: Նա իր նիստը փոխադրում է Միջագետքի Մծրին քաղաքը, որ վաղուց ի վեր պատկանում էր Հայաստանին: Այս Սանատրուկ Թագավորն անա, որ հայանի է եղել իր շինարարությունների և իր այլ բարեմասնությունների, մոդովորդականության ժայռն է վայելի, արժանացել է երկ ու դուրսից և անաքթանիզմով դարձել է վիդական Արամաշեսի հայրը: Նա ըստ վեպի էլ սպանվում է, բայց որսի ժամանակ:

Գարթններն սկսում են հոսմայեցիների դեմ ուղղված զործադություններ: Սանատրուկի որդի Վաղարշը, հոսմայեցիներից դժգոհ լինելով Մծրինի գրավման պատճառով, միանում է պարթևներին: Նրանք պաշտպանում են Մծրինը (197 թ.): Մեղախմ Սեվեր կայսրն Արևմուտքը խաղաղեցնելով՝ վերադառնում է Արևելք պարթևների դեմ: Բայց պատերազմն սկսելուց առաջ՝ նա հաշտվում է Հայաստանի Թագավոր Վաղարշի հետ, տալով նրան Մծրինի փոխարեն կալվածներ: Կապույտվելուց հետո, Բագի այդ՝ նա Հայաստանից հեռացնում է հոսմական օկուպացիոն զորքերը և Հայաստանի սեփական բանակը զորացնելու համար՝ հռոմեական պետական գնահատանից հատուկ գնահատանք է նշանակում իբրև մշտական նպաստ: Սյս հաշտությունից հետո հռոմեական կայսրորդը հեռանում է Նոր քաղաքից, և Վաղարշը նստում է այնտեղ:

Վիդական անձ է դարձել և Սանատրուկի որդին, այս Վաղարշը: Նրա անջողությունները, ինչպես և այն, որ նրա օրով Հայաստանի քաղաքական կենտրոնը ետ է փոխադրվում Մծրինից Այրարատ, առաջ են բերել զրույցներ, կապված Նոր քաղաքի ու իրեն՝ Վաղարշի անվան հետ: Խորհուրդներ (Բ. 85) գրում է այս Թագավորի համար. «Թե՛ լուկ և այլքն կեցին, բայց ասեմ զսա և յեռ մահուանն կեալ, յաղագ բարի անուանն շուն զթուլագոյնո ի Թագաւորացն: Վասն զի ի օրոք աւուրս միաբանեալ մարտիւթիւն հիւսիսականաց, զմեղրաց ասեմ և զԹաւրաց, աբաւաք քան զդաւուն ձորայ

նրանք, առաջնորդ և թագաւոր սենեկով ինքեանց զՎնասեղ ո՞նք Սուրհապ.
որք անցեալ վտարին այսր զԿուր զետով: Որոց պատահեալ Վազարշ տա-
րախա մեծաւ. և արամբք մարտիւք՝ ցիր դիւթաւալ կացացանէ զամբոխն
ընդ երեսս դաշտին, և ձիգ զհետ հղեալ՝ անցանէ ընդ կտպանն ճորայ:
Ուր միւսանգամ միտարանեալ թշնամեացն՝ յօրինեցին հակառ. զորս թէպէտ
և վանեալ ջաջացն Հայոց՝ փախտականս առնէին, սակոյն Վազարշ մեաւնի
ի ձեռաց կորովեաց ազնշուորաց: Պատմական Վազարշի մահն այսպես
չի եղել: Եթէ ճիշտ է Սանատրուկի սպանվելն Ալանների գեմ կալի մեջ,
այն ժամանակ պարզ է, որ հոր մահվան եղելութունը պատմված է նրա
որդու, Վազարշի վրա: Զրույցները պատմել են նաև Վազարշի ծննդյան և
շինարարությունների մասին: Սեւ շինէ աւան մեծ գետի ճնշողեան իւրոյ:
Դա Վազարշավան է Մուրցի և Երասխի գետախոռոչունու ճագ: Ավելի կա-
րեոր է նրա մյուս գործը. Սեւ պատեաց պարսպաւ և զհզօր աւանն Վարդ-
գետի, որ ի վերայ Քասախ գետոյ ... պատեաց պարսպաւ և հզօր պատուա-
րու՝ և անուանեաց Վազարշապատ, որ և նոր քաղաքն:

ԵՐԿՐՈՐԿ ՇԱՎԵԼՎԱՅ

ԱՄՇՏՈՑԻ ԳՈՐԾԸ ԵՂԵՍԻԱՅՈՒՄ ԵՎ ԱՄՍՈՍԱՏՈՒՄ

1. Եզնիսո քաղաքի մտքիմ:—Ո՞ր քաղաքում է Մաշտոցը վերջնական
եղբակացութեան հասել հայերենի նշանագրերի մասին և հորինել իր այր-
բնորոշումը:—Կորյունի երկրի մեջ, ըստ մեր ձեռքի տակ ունեցած բնագրին,
չկա այդ քաղաքի անուանը, Ինչպես կասեանք, եղել է այդ, բայց դուրս է
ընկել: Դրա համար բացվել է զանազան ենթադրությունների դուռ: Կո-
րյունը հիշում է երեք քաղաք—Եզնիսո, Ամիդ, Սամասա: Տարբերակ կեր-
պով եղել են ասպներ, թե նշանագրերի գյուղար Սամոսատական քաղաքին
մեջ կառարկած էր: Մարկուարտն այդ ցույց տալու համար՝ Կորյունի
պատմածը Մեհարոյան նշանագրերին գյուղի մասին՝ համարում է երկու
տարբեր տարյուրներից ծագած: Նա ժամանակնդ դի և նշանագիրքն իսկ յայ-
լոց զարուբեանց թաղեալը և յարուցեալը դիպեցան խոսքից հետո իբրև
շարունակություն համարում է՝ Անտի ի Սամոսատական քաղաքն գումա-
լէքն մինչև Սեւ անդ վաղվադակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ, յո-
րինէր սիգորտյիւր և կաղօք: Հետո իբրև շարունակություն, ապա յետ
այնորիկ ասույր թուղթս յեղիակոպոսէ քաղաքին: ... և այսպես մինչև
վերջը: Այսպիսով, Կորյունի պատմածի միջից երկու ամբողջ հասկած հա-
նելուց հետո, բանտի բառի տակ թելագրում է հասկանալ Հայաստան կամ
Վաղարշապատ, որտեղից Մաշտոցը գնում է Սամոսատ, և այստեղ լինում
է զերբի գյուղը, և այստեղից անմիջապես վերագտնում Հայաստան: Այդ
հանած անկախացրած հասկանքը, որ իբր երկրորդ աղբյուրից է ծագած
համարում Մարկուարտը, են հետևյալները. մեկը՝ ճեմ այնորիկ դարձեալ

1 Dr. Jos. Marquart, „Über das armenische Alphabet in Verbindung mit der Bio-
graphie des hl. Meschizot, աղագրում է շեմիզէ Ամարտյո, Վիեննա 1911, ՄՄ 1, 4, 11,
12, գերմաներենի հետ նաև հայերեն թարգմանութունը:

կրկին անգամ ի նոյն հոգս գտանային՝ խոսքից սկսած մինչև եզոմանս յասորի զգրութիւնն կարգէր և զոմանս յունական զպրութիւնն խոսքը ներառալ: Մյուսը՝ իբրև դրոշմ շարունակութեայն. և ինչ ապա հրաժարեալ յեկիսկոպոսացն որոց, օգնականօք իւրովք իշնէր ի քաղաքն Սամոսատացոցն... և ապա շարունակաբար մինչև հանգերձ ուսուցանելով մանկունս գրիշա նմին զպրութեանն ներառալ: Այս իբր կրկնող զգրութից ծագած հասկածով Մաշտոցը գնում է նոյնիս և Ամիգ քաղաքները, աշակերտներին երկու խմբի բաժանում (ասորական և հունական), թև որտեղ չկա, ապա նա գնում է Սամոսատ, ուր և գտնում է Հոսփանոսին, լինում է գրերի գյուտը, թարգմանութեան են անում և այգտեղից վերագտնում են Հայաստան: Երկու դեպքում էլ, ըստ այսմ՝ գրերի գյուտը լինում է Սամոսատում, միայն տարբեր ձևով պատմված, և իբր Կորյունն իր տարբեր զգրութեանց իմացածները շարել է մեքենայաբար, որով գրերի գյուտը երկու անգամ է պատմված:

Նախ՝ Կորյունն այդպես մեքենայաբար շարող հեղինակ չէ՞ Ապա՝ Կորյունի բնագրի այդպիսի մեխանիկական կորստամբ, որտեղ է Մարկուստը, բոլորովին անհիմն է և ծագած է բնագիրը չհասկանալուց: Գրերի գյուտը երկու անգամ չի պատմված: Մաշտոցը Սամոսատում, Հոսփանոսի օգնութեամբ, ինչպես հաջող հասկածի մեջ ցույց կտրվի, բոլորովին ուրիշ բան է անում: Նա Հոսփանոսի ձեռով հարգարում է իր արդեն գտած տառերի զեղազրութեանը, իսկ տառերի գյուտը Մաշտոցն արել է, ինչպես պարզ և որոշ պատմել է Կորյունը, Սամոսատ գնալուց առաջ, մի ուրիշ քաղաքում, որտեղից և հետո Սամոսատ է գնացել նա:

Բերեմ Կորյունից այն հատվածը, որի մեջ պատմվում է գրերի գյուտը, որի մեջ և պիտի լինեն քաղաքի անունը, բայց չկա: Մաշտոցը գնում է ասորական նոյնիս և Ամիգ քաղաքները, ժողովել լինէր սուրբ եկիսկոպոսացն, որոց ասաջնոյն Բաբելոն անուն և երկրորդին՝ Ակակիոս. հանգերձ կղերականօքն և իշխանօքն քաղաքաց (Վ. քաղաքին) պատահեալ և բազում մեծարանս ցուցեալ հասելոցն, ընդունելին հոգաբարձութեամբ ըստ Թրիստոսի անուանելոցն կարգի: Իսկ աշակերտասէրն վարդապետին զտարնալսն ընդ իւր իրկուս բաժանեալ՝ զոմանս յասորի զպրութիւնն կարգէր և զոմանս [ի]՝ յունական զգրութիւնն՝ ամսի ի Սամոսատական քաղաքն գտնարէր: Իսկ նորա իւրովք հասարօք զսովորականն առաջի եղեալ զաղօթա... և և այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վտան իւրոյ աղգին բարեաց ինչ օճան գտանելոյ: Որում պարզեւէր իսկ վիճակ յամենայնորոգէն Աստուծոյ. հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի՝ սուրբ աշոփ իւրով, նշանադիրս հայերէն լեզուին: և անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ, յորինէր սիրտբայեք—կապը: և և ապա

¹ Եւս նախորդը չկա. տեքստ է ավելացնել:

² Գրումարեւոյ բայը հանաք նշանակում է նաեւ տուգանել: Կորյունն ինքն էլ քիչ հետո երկրորդ անգամ զործածում է այդ բառն՝ տուգանել: Իմաստով: Վարդապետութեան իրենց աշակերտներին ուսում տալուց հետո՝ Սահակն ալ Մեծորդը նշանց ուղարկում են զանգաւ կազմեր, մկրտն իսկ ինչքն եկեղեցւոյ... դռն ա բ բ... ի տեղիս տեղիս Հայաստան ազգին դաս դաս զաշակերտեալսն նշմարութեանս:

հրամարիալ յեպիսկոպոսէն¹ որոյ հանդերձ օգնականք իւրովք իջանէր թ ջաղաքն Սամոսատացոցն²։

Թարգմանությունը. «ներկայացաւ սուրբ եպիսկոպոսներին [հասկանալի է՝ Եղեւթաւ և Ամիգ քաղաքներէ։ Մ. Ա.], որոնց առաջինի անունը Բարիլառ էր և երկրորդինը՝ Ակակիոս. [նշանք] կղերականների և քաղաքների [հասկանալի է՝ յաւրաքանչյաւն իր քաղաքի] իշխոսներէ հետ գիմաւորներն և շատ մեծաբաններ զուլլոյ տալով համադրեցին՝ ընդունեցին՝ հոգ տանելով քրիստոնյաների կարգի համաձայն։ Իսկ աշակերտաւոր ուսուցիչն իր հետ տարածներին երկու [խմբի] բաժանելով՝ ոմանց ասորական դպրութեան կարգեց, և ոմանց հունական դպրութեան [կարգելով]՝ աշխտեղիք՝ ուղարկեց Սամոսատ քաղաքը։ Եւ նա իր ընկերների հետ սկսեց սովորական աղոթքները... Եւ աշխատեալ նա շատ նեղութեաններ քաջեց իր ազգի մի բարի օգնութիւն գտնելու համար։ [Եւ] ժամեր քան շնորհող աստուծոց իսկապես պարգեւեց նրան [այդ] բախտը։ Նա իր սուրբ աջով հայրաւոր ծնեց նոր և սքանչելի ծնունդներ— հայերն լեզվի նշանադրեր։ Եւ այնտեղ շուտով նշանակեց. անվանեց ու դասավորեց. հորինեց սիղորայնելով— կապելով։ Եւ ապա հրաժեշտ տալով սուրբ եպիսկոպոսին՝ իր օգնականների հետ միասին իջավ Սամոսատ քաղաքը»։

Ով որ բնազդական ցննութեամբ— տեսարի կրիտիկայով պարզեցէ է, կամ հենց ամեն ուղղորդ կարգացող էլ կնկատի, որ բերված հատվածի մեջ պակասում է մի քաջաբառ անուն, որից իրենց կոնկրետ նշանակութեանը ստանում են ամսի և ամի գերանվանական մակրայները։ Որովհետեւ երբ կարդում ենք, թե Մաշտոցն զիր հետ տարածներին երկու խմբի բաժանելով՝ ոմանց ասորական դպրութեան կարգեց, և ոմանց հունական դպրութեան կարգելով՝ ամսի (աշխտեղից) ուղարկեց Սամոսատ քաղաքը, իսկույն հարց ենք տալիս, թե ի՞նչ անուն պետք է հասկանալ «անսի» մակրայական գերանվան տակ։ Նույնը նույնպես նաև քիչ հետո գործածված «անդ» բառի նկատմամբ։ Շատ պարզ է, որ ամսի բառից քիչ առաջ անհրաժեշտորեն պիտի լինի մի քաղաքի անուն, որ դուրս է ընկել։ Այդ անունն է «Եղեւթա», ինչպես քիչ հետո կտեսնենք։ Ազնավատ բնագիրը պետք է վերականգնել ոչ թե կամայորեն կտրատուներ տանելով, ինչպես վարվել է Մարկուսարտը, այլ պակասած անունն ավելացնելով, հատկապես «կարգէր» բառից հետո, այսպես։

Իսկ աշակերտասէրն վարդապետին դատարանն ընդ իւր յերկուս բաժանանալ՝ դոման յասորի դպրութիւնն կարգէր [ի քաղաքին Եղեւթացոց], և դոման [ի] յունական դպրութիւնն՝ անսի ի Սամուսատական քաղաքն զուգարէր, —... Ըստման ասորական դպրութեան կարգեց [Եղեւթա քաղաքում], և ոմանց հունական դպրութեան [կարգելով]՝ աշխտեղից Սամոսատ քաղաքն ուղարկեց³։ Այսպիսով վերանում է բնագրի մթնութիւնը և ամսի

¹ Տպված է՝ յեպիսկոպոսն որոնց. պետք է ուղղել՝ յեպիսկոպոսն որոյ։

² Տպված է՝ Սամոսատաց. գետք է ուղղել՝ Սամոսատաց։

³ Նույնը Բիւզանդացիէն [Եղեւթա քաղաքում և Թարգմանութիւնը նորին, Տփլիս 1900, էջ 17] մի ծանոթութեամբ հիշելով իր մի ուրիշ միտաբանութեանը՝ «Եղեւթա, որով

ու ամէլ բաւերի տակ հասկացվում է Եղեւիտ, Հեռեւարար և զրերի գյուղացի
եղել է Եղեւիտ քաղաքում, որտեղից և Մաշտոցը, զրերի գյուղացի հետ,
գնացել է Սամոսատ: Ուրեմն այս քաղաքում չի եղել զրերի գյուղացի ըստ
Կորյունի:

Հիմա հարց է, թե ինչու «անտի» բառից առաջ պակասած տնունը
Եղեւիտ արեւելիկն է, և ոչ թե Ամիգ: Այդ պարզվում է հետևյալ հանգամանք-
ներով: Մաշտոցը, տեսանք, Սամոսատ գնալուց առաջ լինում է Ամիգ և
Եղեւիտ քաղաքներում: Նախ՝ մեկում, հետո՝ մյուսում: Նա զրերի գյուղացի
անում է այդ իրկու քաղաքներից մեկն ու մեկուսին և այնտեղից գնում եր-
րորդ քաղաքը՝ Սամոսատ: Արդ, այդ երկու քաղաքներից որը երկրորդն է
ըստ Մաշտոցի ուղևորութեան ճանապարհի, այնտեղ էլ տեղի է ունեցել զը-
րերի գյուղացի: Եթե նա առաջ Եղեւիտ է գնացել, հետո՝ Ամիգ և այնտեղից՝
Սամոսատ, կնշտակենք՝ Ամիգն է երկրորդ քաղաքը, և զրերի գյուղացի եղել է
Ամիգում: Իսկ եթե, ընդհանրապես, նա առաջ Ամիգ է գնացել, հետո՝ Եղե-
ւիտ, կնշտակենք՝ Եղեւիտն է երկրորդ քաղաքն ըստ Մաշտոցի ուղևորու-
թեան ճանապարհի, և զրերի գյուղացի եղել է Եղեւիտում, և այնտեղից նա
գնացել է Սամոսատ:

Մերն է այդ երկրորդ քաղաքն ըստ Մաշտոցի ուղևորութեան ճանա-
պարհի: Այդ որոշելու համար թերևս մի հիմք համարվի այն, որ Կորյունը
Մաշտոցի ուղևորութեան մասին պատմելիս հիշում է առաջ Եղեւիտն, հե-
տո՝ Ամիգը, հետևաբար կկարծվի, թե Մաշտոցն առաջ Եղեւիտ է գնացել,
հետո՝ Ամիգ: Սակայն Կորյունի զրքի մեջ «առաջին» և «երկրորդ» բառերը
մի քանի անգամ փոխանակված կան ըստ նախապատկերյալի. «Արամբք եր-
կուք, աշակերտքն իւրովք, որոց առաջնոյն Յոննան անուն կոչէին, յնկե-
ղեաց գտաւեն, և երկրորդին Յովսէփ անուն, ի Պաղտանկան տանէն» (էջ
15): «Եղբարս երկուս յաշակերտացն յուղարկել... զՅովսէփ, զոր ի վերոյ
յիշեցաք, և երկրորդ Յոննիկ անուն» (էջ 30): «Որ և Ղեւոնդէս առաջնոյն
անունն էր, և երկրորդին՝ Կորիւնս» (էջ 31): «Եւ անուանք... են այս.
առաջնում Յովսէփ, զոր և ի սկզբան քրեցաք, երկրորդին՝ Քաղիկ» (էջ 40):
«Առաջնումն Վահան անուն յազգէն Ամատունեաց, որ էր հազարապետ Հա-
յոց Մեծաց, և երկրորդին՝ Հմոյեակ» (էջ 40): «Որոց առաջինն Յովսէփ,
զվստուր ժողովոյն, և երկրորդն Յոննան անուն» (էջ 41): Այսպես և Եղե-
ւիտ քաղաքն ու իր եպիսկոպոսն առաջին են կոչվել ըստ նախապատկեր-

Ա. 15, ի մէջի ալլոց տուած է, թե Վնիգ 15, զբաժ եմ, թէ ի Քարգմանչաց սմանք յԵղեւիտ
գտաւեցան յառաջն առաքելներ, և թէ յԵղեւիտ ի Սամոսատ յեղեւիտ այլն, որպէսզի
յուսարեն ուսանին. այժմ զորաւոր պատճառս ունիմ կարծելոյ թէ առաջինքն յԱմիգ գե-
տաւեցաւ են և թէ յԱմիգայ ի Սամոսատ յուղարկեալ են երկրորդքն.— Յովսէփ, եւ յԿոր-
դացս մեծք բերել հեղինակի հիշած աշխատութեանը, որպէսզի սեւեհի, թե որպէս իս-
պէս կերպ հիմնավորաւ է իր կարծեք Եղեւիտի մասին. թէ յուր հայտարարել է: Այստեղ էլ
նա չի հայտնել այն զգուշութիւնը պատճառներէ, որոնց հիման վրա նա փոխել է իր կար-
ծեքը և Ամիգ քաղաքում է զրել տարերեւն ուղևորներին և այնտեղից Սամոսատ ուղար-
կել մյուսներին հաւանքներ համար:

թյան և ոչ ըստ ուղեորության ճանապարհի: Ե՛ր քաղաքս երկուս Ասորոց, որոց առաջինն Եղեսիս կոչի, և երկրորդն՝ Ամիդ անունս: Ե՛մօրսկողոսացն, որոց առաջնոյն Բաբելոս անուն և երկրորդին՝ Ակակիոսն:

Կաթող էր արդոց Եղեսիան ըստ ուղեորության ճանապարհի լինել առաջին քաղաքը, այսինքն Մաշտոցը նախ Եղեսիս գնար, հետո՝ Ամիդ և այստեղից՝ Սամոսատ:—Գ. Տ.—Մկրտչյանը շատ ճիշտ գրում է. «Մաշտոցը... աշխարհագրական դիրքից դասելով՝ անշուշտ անոց հետևում է Ամիդ, այժմյան Դիարբեքի, և հետո՝ Եղեսիս—Ուրհա, որ շատ ավելի հեռու է: Քիչ հետո, Ե՛րքը Մաշտոցը դեռ Եղեսիայումն է. և ե՛րա այդ քաղաքումն է տեղի սենեկում Մեսրոպյան զբերի գլխավորը: Այս կարծիքը, ինչքան էլ անշուշտ քառով ասված, ըստ իս բավարար չափով չի հիմնավորված: Մարզիկ երբեմն ստիպված երկայն ճանապարհով են գնում: Ստիպված էր արդոց Մաշտոցը երկայն ճանապարհ բռնելու: Ամիդ քաղաքից առաջ Եղեսիս գնացած լինելու համար՝ Մաշտոցը պետք է Վաղարշապատից գնար Ասորպատական, ախտեղից անցնել Միջագետք և մեծ ճանապարհ կտրելով հասնել Եղեսիս, եղած գնար Ամիդ և այստեղից՝ Սամոսատ, և հետո նորից վերադառնար նույն գետով՝ Սամոսատից Ամիդ, Եղեսիս, Միջագետքից Ասորպատական և այստեղից՝ Վաղարշապատ: Իսկապես շատ երկայն ճանապարհ: Այսպիսի երկայն ճանապարհ կրճենել Մաշտոցը, եթե այն ժամանակ քաղաքական արգելափակումներ կրճենել Մաշտոցը, ինչպես կարճ ճանապարհով գնալու համար: Արդ, Մաշտոցի ժամանակ՝ Վանանյ, Բասեն, Բաղրիմանդ, Աղանուհիք, Բզնուհիք, Մաննիկերտ, Տարսն և արանցից արևելք գտնվում էին արևելյան Հայաստանում հայոց թագավորության մեջ՝ Վաղարշապատի իշխանության ներքո, արքայից արքայի զբերիչանություն տակ, ուստի ոչ մի քաղաքական արգելք չկար, որ Մաշտոցը Վաղարշապատից կարճ ճանապարհով անցնել Տարսն և այստեղից Ամիդ, հետո՝ Եղեսիս և Սամոսատ:

Այդ՝ մի հանգամանք էլ կա, որ պետք է ուշադրության առնել. Եթե Մաշտոցն առաջ Եղեսիս հասած լինել, այս ասորական կենտրոնում հենց՝ իր աշակերտներին երկու խմբի կառավարներ և հունարեն ուղեորողներին այստեղից կուղարկել Սամոսատ, որ Եղեսիայից շատ ավելի մոտ է, քան Ամիդից, և ոչ Եղեսիան կթողնել, կգնար Ամիդ և նոր այստեղից Սամոսատ կուղարկել նրանց:

Այս դարձյալ՝ Ամիդը հիշվում է միայն Մաշտոցի ուղեորության ժամանակ, մինչդեռ հետագայում, ինչպես պատմում է Կորյունը, Մաշտոցն ու Սահակն իրենց աշակերտներին ուղարկում են Ե՛ր կողմանս Ասորոց, ի քաղաքն Եղեսիս... զի յասորական բարբառոյն՝ զնոցին հորցն օրոց զաւանդութիւնս հայերէն գրեալս դարձուացենա: Կնշանակե՛լ ավելի կարևորություն տրվում էր Եղեսիային իբրև ասորական դպրոցական կենտրոնի:

Այս հանգամանքները նկատի ունենալով՝ այն հետևությունը պետք է անել, որ Մաշտոցն իր աշակերտների հետ Ամիդի վրայով Եղեսիս է գնացել: Այս երկրորդ քաղաքում նա աշակերտների մի մասը թողել է ասորական դպրոցական օգնություն, մյուս մասն՝ աւանտր—այստեղից ուղարկել է Մա—

1 Անթարոս ամսագիր, 1913 թվական—հունիս, № 5—6, էջ 508 և հ. Գ. Տ.—Մկրտչյան, «Հայ զբերի 1500-ամյակի աթիվ»:

մոտաւ հոգնաբէնի համար, ինքը ֆետցել է նդեսիայում և գրերը բանդա—
այնտեղ վերջնական ձեռնի հորինելուց հետո՝ ինքն էլ նդեսիայից գնացել է
Սամոսատ:

2. Ի՞նչ է արել Մաշտոցն նգեսիայում:—1) Կորյունը պարզապէս ստոււմ
է, թե Մաշտոցը շինեալ ծնունդա Սորոգ և սքանչելի՝ սուրբ աջոյն իւրով—
նշանագրեա հայերէն լեզուին, —Իր մէկ ձեռքով մենց . Սորոգ և սքանչելի
ծնունդներ—հայերենի նշանագրերն, այսինքն՝ Յոր նշանագրեր ստեղծեց.
գրեց իր աջով: Այս շատ պարզ է: Բայց չնայելով դրան՝ ստոււմ են, թե
Մաշտոցի գործը սկսւում է Դանիել եղիսկոպոսի դործածած արժարեւոյ
որէն բարեփոխութեան մեջն: Կորյունի գրածից կարելի չէ եզրակացնել ոչ
այդ շարժմանութեանը և ոչ այդ բարեփոխութեանը: Ուրիշ մեկն էլ
վերջերս այսպէս է դատել. «Ըստ ինքան ճիշտ չէ այն, թե իբր միայնա—
կայց Մաշտոցը 5-րդ դարում հորինել է հայկական նշանագրութեանը: Հիմ
եայկական տղայութեանը խոսում են ոչ թե հնարման մասին, այլ առաջուց
գոյութեան ունեցող հայկական արժարեւոյ լրացման մասին:—Հիմնական
սխալ է այս պնդումը. ոչ թե հիմ հայկական տղայութեանը վրա պիտի հիմնը—
վել, այլ հիմնական տղայութեանը վրա պիտի հիմնը: Փարպե—
ցին հղում է Կորյունի մոտ, իբրև հաւատարմութեան, ճշմարտագէտ պատմա—
դի, իսկ ինքը ոչինչ չի պատմում Մեսրոպյան գրերի մասին: Ապա Մ. Խո—
րենացին (Գ. 53) պարզապէս գրում է, թե Մեսրոպը բնական զննարա—
գիրն էր: Հնագույն տղայութեանը այդ երեքն են: Ստեփանոս Տարոնեցի
Ասողկը՝ (10—11-րդ դարում) ասելով «ի պատմագրական տառից» (գրը—
քերից) գրերի գոյութի մասին նախ պատմում է ըստ Կորյունի և Ղ. Փար—
պեցու, ապա երկրորդ տնգամ, ուրիշներից քաղելով, հիշում է այսպէս գրե—
լով «...Սահակ յորայ աւուրս դպրութիւն հայոց լեզուին իբ գիր ի Դանիել—
ի փիլիսոփայէ Ասորւոց կարգեցաւ, իսկ զԵօթն գրոցն պակասութիւն Մես—
րոպը երանելի Տարոնեցի խնդրութեամբ յաստուծոյ առնուա: Այդ յօթը գիրն,
անշուշտ, յօթը ձայնավորներն են, որոնք շատ ուշ, Միկիթայանների ձե—
ռով, մի ձեռագրի լուսանցքի ծանօթագրութեանց առնվելով, ընդմիջարկ—
վել են և Մ. Խորենացու. «Հայոց պատմութեան տառագրութեան մեջ, «Ոս—
կեփորիկ» կամ «Հարգանագիրք» կոչված ձեռագրի մեջ (13-րդ դար), այլև
զանաւորանների ոտանավոր գրութեանների մեջ և ուրիշ տեղեր նույնպէս
խոսում են Մաշտոցի հորինած տառերի մասին, և նրան վերագրում են
կամ 14 գիր, կամ 12, կամ 11, կամ 10 գիր և այլն: Դրանք բոլորն ուշ

¹ Այսպէս, իբ քիչ առաջ հիշված հոգնաբէնի մեջ Մարկուսեան, որ հայ գրի պատմու—
թեան համար միակ վառանդի տղայութիւն՝ Կորյունի գրածն է ընդունում:

² Գրեթ. Ս. Չառնայե, մի հոգնաբէնի մեջ, «Известия», 11 հուլիսի 1940, № 188:

³ Ստեփանոսի Տարոնեցու Ասողկան Պատմութեան փոխգրական. Ս. Գեորգիւրով, 1883, Բ. գրութեան, առաջին գլուխ, էջ 74, Գ. դպր. առաջին գլուխ, էջ 156: Ասողկի
երկրորդ տնգամ, տարբեր ձեռն պատմութեան տղայութիւն է, ըստ Յիւլի. Կոնիքերի, Անտիո
Շիրակացու պատմական երկը: Տե՛ս՝ «Հանգիս Ամսօրեայ» 1903, էջ 30, 33. «Մ. Խորենացու
Պատմութեան մատենակի մտքն»:

դարերի լուկ ենթադրութիւններն են և ծագել են քննականաբար իբրև պատասխան այս հարցի: Եթե Դանիելյան նշանագրերը բաժանական չեն եղել հայերենի համար, աբգյոք քանի՞ տառ են պակաս եղել, ուրեմն և Մաշտոցը քանի՞ տառ պետք է հորիներ, հետևաբար և հորինել է: Բայց որը «գիրական» կոմբինացիաներն են, որոնք այժմ արժեք չունեն: Գրերի գլուխը պատմութեան հիմքը իմացույթ գրողի ժամանակակից և հնագույն աշակերտ Կոբշունի գիրքն է, որի մէջ ոչ մի խոսք չկա Դանիելյան այբաբանի լրացման մասին: Խնդիրն այսպէս, հարկավ, այն մասին չէ, որ Մաշտոցը, ինչպիսի և ամեն ուրիշ ոք, անգիր լեզվի համար այբբեն հորինելիս՝ նկատի կունենար իր ձանձօլ լեզուները՝ ասորերենի, պարսկերենի, այլ և Դանիելյան նշանագրերը, և կօգտվեր նրանցից: Խնդիրն այն մասին է, որ հնագույն հայկական աղբյուրները Դանիելյան նշանագրերի բարեփոխութեան և կամ առաջնուց գոյութեան ունեցող հայկական ալֆաբետին՝ «լրացման» մասին չեն խոսում: Շարունակենք տեսնել, թե էլ Բնչ է գրում Կորյունը:

2) Ե՛ւս անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ: Ուրեմն Մաշտոցն ինքը կարգավորել, այսինքն՝ դասավորել է իր ստեղծած նոր նշանագրերը: Արդ՝ երբ մեր այբբենաւորանի մեջ տառերի կարգը հասկնալով ենք հռենական ալֆաբետի տառերի դասավորութեան հետ, երկուսի մեջ ևս նույն կարգն ենք գտնում, միայն հայերենին հասուել ավելի հնչյունների համար տեղ տեղ առանձին գրեր կան նույն շարքի մեջ: Բացի այդ՝ հայերենի ՈՒ հնչյունի համար մեր այբբենաւորանի մեջ չկա հասուել նշանագիր: Գոյութեան մեջ այդ պարզ ձայնավորը Մաշտոցն արտահայտել է ՈՒ երկատառով՝ հետևողութեամբ հուշարենի օՆ երկատառին, որ սկզբնապես արտահայտիչ է եղել երկարարտօսի և Մաշտոցի շրջանում դարձած ՈՒ ձայնավորի նշան, վերագրվածներից պարզ է, որ Մաշտոցը հետևել է հուսական ալֆաբետին, որին ինքը վերած է եղել մանկութեանց: Դրա հետևանքով հայերեն տառերը գրվում են ճշիւնով և հատ հատ:

3) Մաշտոցն ինքն տնկումն է տառերը՝ ալբ, բեն, գիմ, դա, և այլն: Թե ինչ ծագում ունեն այդ անունները, աբգյոք օրէն նշանակութեան ունեցող են, այդ դեռ պարզված չէ:

4) Մաշտոցն ինքը ճշմանակ է տառերը: Այդ վերաբերում է տառերի արտաքին ձևին, գծագրութեանը: Քիչ վերհուշ նույն արտահայտված է այս խոսքով, թե նա «իբր սուրբ աշով հայրաբար ծնեց նոր և օքանչելի ծնունդներ»—հայերեն լեզվի նշանագրերը, այսինքն իր աշով գրեց, նշանակեց: Մեր տառերի ձևերն ևս ըստ այսմ Մաշտոցին են: Այդ ձևերը հետագայում շատ փոխութեան են կրել. Մետրոպոլիսի տառերի ձևին մօտ կլինի անշուշտ հին երկատառերը:

5) Կորյունն այդ նշանագրերը օգտելի է բառով է բնորոշում: Այդ վերաբերում է ոչ թէ տառերի արտաքին ձևին, այլ ալֆաբետի կատարելութեանը: Մաշտոցի ժամանակի այբբեններից և ոչ մեկը և ոչ նույնիսկ հուսարենը, բաժանական չէր հայոց լեզվի բոլոր հնչյունական հարստութեան արտահայտելու համար: Դանիելյան նշանագրերը նախնայեա թերի էին դուրս եկել, մինչդեռ Մաշտոցի այբբենը կատարելագոյն հարմարեցրած է հայերենի հնչյունական սխառեմին: Դառնով անհամեմատ ավելի հնչապատ

է եղել հայերէն գրել-կարդալու դարձը. որովհետեւ Վեստրոպյան նշանագրերը» (այսպէս անվանել է Մովսէս Խորենացին) հիմնված են կատարյալ հնչյուն-նական սկզբունքի վրա, որ է՝ ամեն հնչյուն իր առանձին առաջ արտաբերուածն է, և ամեն առաջ մեկ հնչյունի արտահայտիչը արտաբերուած լինելու Մարգարէ Ուր Ժամավորը, ինչպէս ասվեց, Ուր երկտառով է նշանակված, բայց այդ երկտառը միշտ և ամեն դեպքում միևնույն ձայնավորն է արտահայտել՝ զուարթ—զուարթ, և վանկային Ուր ձայնավորը միշտ և ամեն դեպքում այդ երկտառով է արտահայտված եղել. Հետագայ դարերում միայն, լեզվի դարգացման հետևանքով, Ուր ձայնավորը բաժանւորի և ձայնավորի միջև դարձել է Վ. զուարթ—զվարթ. Մաշտոցի արժեքներով այս կապարելութունը հետևանք է նրա հեղինակի՝ իր ժամանակի, նույնիսկ մեր ժամանակի համար դարձանալի խորին ծանոթութեան հայերէնի հնչյունական գրութեանը, մեր լեզվի բազմաթիւ հնչյունների նույն առարկութեան հետևանքով, որ և ամբար նա. որ լեզվաբանական պատճառներով ունեցած չի եղել, պետք է երկու ժամանակի դիտողութեան հետևանք անել կենդանի արտասանութեան վրա. լսած բաները վերածել իրենց վանկերին ու հնչյուններին և փորձել անել գրելու, որ և նա արել է բազում աշխատութեանց համարելով վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օժանդատներէլ, —զուրէ է հորդունը. Պետք է ընդունել, որ հնչյունների նկատմամբ նա հետեւել է մայրաքաղաքի արտասանութեանը:

Իմ վերջապէս՝ Ե) Յորինէր սիղոբայիւք—կապօք—հորինեց սիղոբանքով—կապերով: Ինչ է նշանակում այս խոսքը:

Հունարէն συλλαβῶν բայը նշանակում է լաւիններն colligo, գերմաներն zusammenfassen, vereinigen, zusammenbinden, verbinden, միացնել, իրար կապել, Դրանից է սլլաբի բառը, որ նշանակում է՝ իրար միացում, կապում, այլ և՛ իրար միացրածը, կապածը, կապ, առանձնապէս խոսելիս, ուստի և վաղ: Դրանից է և սլլաբիլիւ, որ նշանակում է գրերը կամ վանկերն իրար հետ աւտաստել, buchstabieren, լատ. syllabas connecto, վանկեր կապել, գերմ. verbinden, verknüpfen, անց, ինչ որ հայերէն տալով ենք՝ դիւր կապել, գերկապ կարդալ, կամ մեկ բառով՝ հագել, որ է՝ վանկ կապել:

Կորյունի վերևում գրած խոսքի մեջ «կապ» բառն ըստ այսմ թարգմանութեան է հունարենի բախարեա (սիղոբա) բառի. ուստի այդ երկուսի մեջ էն շարկապը չլիտի լինի. նույնպէս նաև Դանիելյան նշանագրերի մասին գրածի մեջ՝ «գաւաղաբայս և զկապս» Դարբարում սովորական կիրառութեան է օտար բառերի ետևից գնել նաև հայերէն թարգմանութեանը. որինքն՝ հենց նույն Կորյունի գրքի մեջ կա «պիտեպայսս տեսուչս եկեղեցւոյն Սիւնեաց»:

Կորյունը պատմւում է, թէ Մաշտոցը նոր նշանագրերը նշանակելուց,

Դ Հունարենի սիլլաբայ բառը Դանիելյանի ցերեկանութեան մեջ թարգմանված է հունարեն հայերէնով՝ «գաւաղաբ», ավելի՛ «գաւաղաբիւն» և «վանկ» բառերով: Կորյունի ձայնը չէն այս բառը: Նա պարզապէս թարգմանում է «կապ»: «Գաւաղաբիւն» բառը բառացի թարգմանութեան է հունարենի:

անմահելուց և դասավորելուց հետո, այդ նշանագրերը հերիհնում է սիդո-
րաներով—կապերով: Այդ նշանակում է, որ Մաշտոցն առանձին նշանա-
գրերի գործը վերջացնելուց հետո՝ անմիջապես նույն նշանագրերը հորինել
է ակապերով, վանկերով: Ուրիշ խոսքով՝ Մաշտոցը հորինել է կարգալ
սովորեցնելու դասապիքը: Նա հայոց լեզվի առաջին ուսուցիչն էր և ընա-
կանաբար նա էլ առաջինը պիտի հորիներ առաջին տալերեստանը՝ իր նշա-
նագրերը ակապերով և կարգալու, կամ ևզիրկապ և կարգալու համար:

Այդ աիդի տալերեստանը, որով դարգացումով, հարասել էր մինչև մեր
օրերը: Տոգրեմ գրողը հենց այդպիսի տալերեստանի վրա է օգտել կարգալ սովորեր Տասերն
իւնց անանհրով՝ այդ, բեն, դիմ, դ— և այլն: Կարգով սովորելուց և լավ պարանոսյն
լինելուց հետո,—այնիցն՝ երբ ամեն մի առաի նշանը տեսնում էինք, կարգանում էինք
խնկալն անունը առլ, սկսում էինք զգիւ կապել, ապա և զգիւկապ և կարգալ: Դրա համար
նախ ևկապում է կամ զգիւկապ էինք անում: Կարգ զանկերը՝ բարգալ—մայնալ կամ
ընկալ—առալ: Եւ այնպէս՝ բարգալ—բա, բեն—ել—բմ (մեր օրով բարանանում էին՝ բեն—ել—
բմ), բեն—է—բէ, բեն—ը—բը (մեր օրով բարանանում էին՝ բեն—ը—բը), բեն—ինք—բք,
բեն—ւ—բւ (մեր օրով բարանանում էին՝ բեն—ւ—բւ), բեն—իւն—բւն (մեր օրով՝ բեն—
իւն—բւն): Այսպիսի և ըստ—ով և ըստ զանկերը՝ աբ, էբ, իբ և այլն կապում կամ հե-
զում էինք այդ—բեն—աբ և այլն:

Նույն եղանակով կապելով կարգում էինք բառերը, նախ՝ միավանկերը, հետո՝ երկա-
վանկները և այսպիսի մինչև շատ երկալս բառերը: Օրինակ, բար և բար կապելով կարգում
էինք՝ բեն—այդ—բա, բէ—ինք—բք, բա—բէ, Թ ա բ գ մ ա ն ի չ բառը հեզում էինք այսպիսի՝ Թա-
այդ—բէ—թմ—թմբ, մեն—այդ—մա, Թաբ—թա, նա—ինք—նմ—նք, Թաբ—թա—նք, Երկալս
բառերը առաջինը, որքան հիշում եմ, արված էր ինչ մայրապետականաց, և ինքնորդ՝ բա-
բենանանականաց: Դրանցից անալիսի զգիւ կապում էինք այսպիսի՝ այդ—ւն—ւն, ին—այդ—
իւն, աշ—իւն, աիւն—ա առ, աշ—իւն—ա առ, առ—այդ—առ, աշ—իւն—ա առ, և ինք—այդ—իւն, աշ-
իւն—առ—իւն, նա—այդ—նա, աշ—իւն—առ—իւն—նա: Այս ամենը կառավարում էր
այդ եղանակով—բա, Թամբ, ինքսելով և երկալս: Այնքան կրկնում էինք այդպիսի կապելը,
որ երբ տեսնում էինք, օրինակ, զբա զբա—թա—նք, առանց զգիւկապի, առում էինք բա:

Այս էր կարգալ սովորելու հին մեթոդը, որ հնարավոր չէր հայերե-
նում անողոթնամբ գործադրել տառերի, — լինեն մայրապետների թե բաղա-
մայնների, — թերի գրութայմբ, ինչպիսի էին Դանիելյան նշանագրերը, որոնք,
ինչպիսի Կորյունը գրում է, բարավան չէին հայերեն լեզվի սիդոթաները—
կապերն ամբողջութայմբ արտահայտելու համար: Միարդյան նշանագրերն
այդ նկատմամբ անթերի էին. դրանք արտահայտում էին հայերենի բոլոր
հնչյունները, բարալարի էին ըստ Կորյունի:

Բայց, ցավով, այդպիսի չէ բառերի գրութայնը և մայրապետների նկատ-
մամբ: Մաշտոցը հնարել և այդ հնչյունի համար առանձին տառ, բայց
գրութայն ժամանակ այդ տառը բառերի և միայն մի շարք բառերի
սկզբում, ինչպիսի՝ ընդ, ընթանալ, ըմպել, ըզնալ, ընկեր, ըստ և այլն: Բա-
ռերի մեջ այդ մայրապետը չի գրել. մտանեմ, դասանեմ, թեանեմ, կծանեմ,
կլանեմ, նույնպիսի և մտաւոր, զուր և համար բառերի սկզբի երկու բաղա-
մայնի միջև արտահայտել է և մայրապետը, ինչպիսի և աշմ, մրաւանեմ,
թըքանեմ, կըծանեմ և այլն, բայց գրված են առանց և տառի:

Թե այս կարգի բառերի սկզբի երկու բաղաձայնի միջև հնուստ ար-

քրծոց (կրտոս), ԿՇԻՊՈՐ (կտէ'տոր), ԼՄՆ (ձնա), ԼՆԱՏՈՍ (պլնատոս), ԼՆԵՄԱՃ (պնեմա), ԼՐԱՏԱՄՆ (պրատմիկոս), ԼՐԱՏԱՏՐԱ (ստրատեգիա), և այլն։ Նույնպես և հատուկ տնունները՝ Պտղիմէոս, Պլատոն, Թրակիա և այլն։ Դրանց հետեւողութեամբ հայերենում են գրել են քղեաշխ, գլուխ, գնամ, դրեմ, կրակ, կտավ, ձնամ, ստրուկ և նմանները, թեպէս և հայերեն բառերն արտասանվել են բրդեաշխ, գլուխ, գրնամ և այլն։ Բայց մի կտորոք է տեսել, թե Մաշպցը հունարեն բառերը հայերենի պես Ը-ով չէր արտասանում, ինչպես որ այժմ օտար լեզուներին, որինակ՝ ռուսերենի բառերն արտասանում են՝ ДВА—գրվա, ДНО—գրնո, ГЛАВА—գլուգա, КНИГА—կընիգա, МНОГО—մընոգո։ Մի անգամ որ հունարեն բառերը գլուստ/գնաթոս և այլն հայերենի պես արտասանեին՝ գլուստ, գրնաթոս և այլն, հայերենի գլուխ, գնալ և նման բառերն էլ հեշտութեամբ հունարենի պես կգրեին և Ը-ով վարտասանեին՝ գլուխ, գրնամ։ Կա մի ուրիշ հանգամանք ևս։ Մեր այս Ը ձայնավորը, որ ըստինքյան էլ կարե է, հաճախ այնպես սղգում է, որ կարելի չէ գրութեան մեջ առանձին առողով արտահայտել։ Նույնը հաճախորեն եղել է և Մաշտոցի ժամանակ, և երևի այդ ևս իր կողմից սղգած պիտի լինի, սր մաշտոցյան դրութեամբ բառերի մեջ այդ ձայնավորը չի նշանակվում։

Մեր գրութեան այս թերութեանը ճշգրտորէն զորից ի վեր շարունակվում է. Մի ժամանակ ոտանավորների մեջ գրում էին չսղգած և ձայնավորը վերջին տասնամյակներում այդ իպուր թողել են՝ և կարծես այժմ արամատ-դրութեան կա նույնիսկ տողադարձի ժամանակ ևս Ը չգրելու։ Այդ ոխալ երևույթ է՝

3. ԽՕՅ և տխլ Մաշտոցը Սամոստում։—Կորյունը գրում է. «Եւ անգէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Լոոփանոս անուն գտեալ. որով զամենայն ընտրութիւնս նշանագրացն [վոր. նշանագրոյն] զերբագոյնն և զյայնագոյնն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն [վարիանտ՝ զկրկնայարն] յորինեալ և յանկուցեալ, — և հենց այնտեղ նույն քաղաքում գտավ հելլենական դպրութեան մի գրագիր՝ Լոոփանոս անունով, որի ձեռով նշանագրերի բոլոր զանազանութիւնները՝ բարակն

1 Թաւրաքի չէ տնդետնալ մեր այս Ը ձայնավորի գոյութեանը և մեր բառերն ու հատուկ տնունները, հետեւեալ մեր թերի գրութեանը, բողոքայինների կուսակցութեամբ գրել օտար լեզուների մեջ, ինչպես վարվում են նույնիսկ մեր գերաւորականները, որինակ՝ Мертвая, գերմաներեն Märtischjau, Тречка, Чкаваор, Пиджасар («Коммунист» 1940, հունիսի 18), Пигни («Коммунист» 1940, հուլիսի 9, № 157), Пидзиз ցար (Նուբ, ազոս-առի 9, № 183) միայն չոր համար, որ հայերենում գրվում են՝ Միկոյան, Քչկան, Ճգնավոր, Փնջաւոր, Պոլնի, Պոլնի, Պոլնի, ըսյց հայերենում այդպիսի տնուններն արտասանվում են և կարող են գրվել՝ Մըկըրեյան Քըկան, Ճըգնավոր, Փընջաւոր, Պըրընի, Պըրընի և նույնիսկ կան Քըկըկան, Մըկըրեյան արտասանողներ։ Ուրիշ լեզուներով գրելու այդպիսի դեպքերում անպայման պետք է գնել համապատասխան ձայնավորը և եթե այդպիսին չկա, մի ուրիշ մոտիկ ձայնավոր. առաւելեւում, որինակ, 11 և ափելի ևս (ինչպէս աղբըձաներենում, Թ-Թարերենում և այլն. այժմ առեւտական նշանագրերով գրելով վարվում են) 12 ձայնավորը, որ ափելի մոտ է մեր Ը ձայնավորին։ Ուրեմն Միկոյան Микоян, Микоян, Микиртичян, Микиртичян, Пиджасар և այլն։

ու հաստը (նուրբն ու լայնը)։ Կարճն ու երկայնը, առանձինն ու կրկնա-
վորը (վարիանտ՝ կրկնահարը) ամբողջապես հորինեց ու վերջացրեց։

Ահա մի հատված, որ սխալ մեկնությունների ենթակա է եղել։ Նախ
նկատեմ, որ այդ կտորն ևս տպագրված ընագրի մեջ աղճատված է։ Եւ այն-
տեղ չկա՝ «և զլայնագոյնն»։ Որ Մաշտոցը Սամսամուսի գիմուս է հելլենա-
կան դպրութեան մի գրագրի օգնութեամբ, այդ ցույց է տալիս, որ նա բա-
վարար չի համարել իր գտած տառերի արտաքին ձևը, զգազրութեամբ
նա հարկ է տեսել, որ իր նշանագրերը հարմար լինեն նաև գրութեան,
գեղարվեստն նկատմամբ։ Եւ էլ հունական տառերի հետեւողութեամբ,
ձախից գեղի աջ գրութեամբ։ Դրա համար նա իրեն անհնազանդ համարելով,
դիմել է մի հույն գրագրի (որ երեի իր ժամանակին հայտնի գրագիր է
եղել)։ Ե ոչ թե նքատաշուստ ասորական դպրութեան մի ասորի գրագրի։

ա) Մաշտոցն այն հույն գրագրի օգնութեամբ վերջնապես հորինել է
սերբազույնն ու լայնագոյնը։ Նշանագրերի նուրբ ու լայն, բարակ ու
հաստ մասերը, կողմերը, այսինքն՝ թե տառերի ձր կողմերը, ձր մասերը հաստ
կամ բարակ պիտի լինեին, որպեսզի և գեղեցիկ, և հարմար լինեին գրելու։

բ) Մեսրոպյան նշանագրերի մեջ, մեր հին երկաթագրից զատելով,
չկան «կարճ ու երկայն նշանագրեր», բոլորն էլ միահավասար են։ Բայց
կան առանձին նշանագրերի մեջ ինչպես հաստ ու բարակ, նույնպես և
կարճ ու երկայն մասեր։ Ուստի Կոնյուսի գրածը, թե Մաշտոցը հույն
գրագրի ձեռով հորինել է կարճն ու երկայնը, կարելի չէ հասկանալ։ «Կարճ
ու երկայն նշանագրեր»։ Բոլորովին անհիմն և անընդունելի է այն կար-
ծիքը, թե «կարճ և երկայն նշանագրերով պետք է իմանանք անշուշտ
ձայնավոր նշանագրերը» (Մարկուսը)։ Այն էլ «անշուշտ» բառով ասված
Ինչ հիման վրա։ Ոչ մի առանձին զործ չէր կարող ունենալ մի հույն
գրագիր հայերենի «կարճ ու երկայն ձայնավորներ» նկատմամբ, եթե
միայն հայերենում այն ժամանակ կային այդպիսիները, — մի բան, որ մեր-
ժիլի է։ Բացի գուցե և և է տառերի համապատասխան հնչյուններից, Հույն
գրագիրն այն խորհուրդը միայն կարող էր տալ, թե առանձին նշանագրերի
կարճ ու երկայն մասերը գեղագրական տեսակետով ինչպես պիտի գոտ-
վորվեն տառի բուն մասի վերաբերմամբ, կարճ մասը երկայն մասի միջ, թե
ձախ կողմում, վերեւում, թե ներքեւում։

գ) Մաշտոցը հույն գրագրի օգնութեամբ հորինել, վերջացրել է «գո-
տանձինն և զկրկնաւորն» (վար, «զկրկնաւորն»)։ Այս բառերն էլ սխալ
մեկնությունների տեղիք են տալիս, ինչպես Մարկուսը այս կարծիքը-
«Առանձինն և կրկնավոր նշանագրերով ... պետք է հասկանալ կրկին» և Է-
նիքը, ինչպես նաև Ի և Վ, որոնցմե Ռ և Վ միայն սկզբնատառ կկազմեն»¹։
Նախ՝ «կրկին» և Է մասերով Մարկուսը հասկանում է մեր Բ և Ռ, Լ և
Ղ տառերը, որոնցից վերջինը Լ հնչյունին մոտիկ մի հնչյունի նշանագիր
է եղել։ Այստեղ թեպէ և տեսի, թե «Է» և Վ միայն սկզբնատառ կկազմեն
Սկզբնատառ չեն այդ գրերը առնել, բայց, ծով և հաղարավոր ուրիշ բառե-
րի մեջ։

¹ Մարկուսը, «Հանգեւ Սմարտայ 1919, էջ 83։

Ապա դարձաւ՝ նա ի տառն առնում է իբրև Վ-հնչյուն, ինչպես 18-րդ դարում արտասանվել է ձայնավորների մեջ, Բայց ոչ մի հիմք չունենք ասելու թե, օրինակ, քաղաքաւ, աւանիք բառերը Մաշտոցն արտասանել է ինչպես այժմ՝ քաղաքավ, ավանիք, և ոչ թե աւ մասն իբրև երկրորդաւ, ինչպես գերմաներեն au, Auc, Eau, bauen բառերի մեջ au, Որ ի տառը եղել է կիսաձայն ՈՒ ձայնավորի նշանագիր և ուրիշ ձայնավորների հետ միասին կազմել է երկրորդաւներ՝ Այ, Եյ, Իյ, այդ պարզ է, Բայց որ Մաշտոցը միևնույն Վ հնչյունի համար բռնեցներ մեկ Վ տառը, մեկ էլ կիսաձայնի՝ նշանագիր ի տառը,—այդ անընդունելի է։ Մի անգամ որ նա հնարել էր Վ տառը, սրանով էլ կգրեր այդ տառին հատուկ հնչյունը, եթե չի դրած՝ ավետիք, ավար, այլ գրած է աւետիք, աւար, կնշանակի՝ այդպիսի բառերի մեջ ի տառը Վ չի արտաբանվել, ինչքան էլ այդ կարգի բառերի մի մասը փոխառութիւն լինեն և գրանց մեջ ի հավասար դրվի օտար լեզուներէ՝ Վ հնչյունին։ Օտար լեզուներից փոխառած այդպիսի բառերի մեջ Վ տառը հայերենում կարող էր վերածված լինել ի կիսաձայնի, դրա համար ունենց օրինակներ։ Այս ի տառը հետադարձում է որոշ զեղքերով դարձել Վ հնչյունի նշան։ Մնում են, ուրեմն, Բ, Ռ և Լ, Դ։

Եթե Մաշտոցն ինքն անձամբ վերլուծել և զանազանել է մեր Ա, Ս, Ժ, Ծ, և մեր Բ, Պ, Փ, Գ, Կ, Ք, Գ, Տ, Թ, Զ, Ն, Զ, Ծ, Ծ տառերի արտաբանումը հնչյուններն իրենց նուրբ տարբերութիւններով և նրանց համար հատուկ նշանագրեր է հորինել, նա պիտի կարողանար անշուշտ նույնն անել նաև Բ օւ Ռ և Լ ու Դ տառերի նկատմամբ։ Մի հույն գրագիր նույն իսկ դժվար կկարողանար մեր այդ բազմաթիվ բաղաձայնների նուրբ տարբերութիւններն ըմբռնել, օրինակ՝ մեր Բ և Ռ տառերի հնչյունները ջոկել միմյանցից։ Մաշտոցն այդ տառերի զբոսթան նկատմամբ այնքան պիտի գիմեր մի հույն գրագրի, որքան և մյուսների, ճիշդնաւորը ասածն այդ Բ, Ս, և Լ, Դ տառերը չեն։

Ինչ է արտահայտված այդ բառնախնայ և զերկնաւորը կամ զերկնաւորը բառերով։—Շատ պարզ բան։ Մեարդպան նշանագրութիւն բոլոր 36 տառերն էլ առանձին են, այսինքն ջոկ, մենակ, զատ-զատ են, իրենց հաւասար մեկ առանձին հնչյունով, մեկ տառ մեկ հնչյունը արտահայտութիւն կամ մեկ առանձին հնչյուն մեկ առանձին տառով արտահայտված, Բայց կա նաև ՈՒ հնչյունը, օր չունի իր առանձին նշանագիրը. դա արտահայտված է երկու առաի միացումով, Դա, այդ կրկնաւորը, զերկնաւոր է, կամ զերկնաւորը (ինչպես կա իբրև վարիանտ), այսինքն՝ երկու տառի բառում, կցում, միացում, Մաշտոցը Սամոսատում հույն գրագրի ձեռով հորինել, վերջացրել է առանձին նշանագրերի գծագրութիւնը, նրանց հաստ ու բարակ, կարճ ու երկայն մասերը, և առանձին տառերի ձևն ընդհանրապես, գուցե և շատ րան փոխելով նշանաւորում իր՝ շնչանակած, նախագծած ձևերից։ Քանի որ ըստ Կորյունի՝ նա զերկնաւորը կամ զերկնաւորըն էլ հորինել, վերջացրել է այն գրագրի ձեռով, կնշանակի՝ նրա ազդեցութիւնը եղել է նաև նկատմամբ ՈՒ ձայնավորի զերկնաւորը կամ զերկնաւորը, այսինքն երկառ գրութիւն, որ, ինչպես վերևում ասվեց, կատարվել է հուսարենի ՕՎ երկառի հետեղութիւնով։ Նվ այդ հասկանալի.

է: Մի հուշն գրագիր, որ վարժված է եղել հունարենի գրութեան, ըստ վարժութեան հենց պիտի ձգտեր պահել տալ հունական գրութեան ձևերը: Եվ Ուի կրկնավորի նկատմամբ հաջողել է նա, մասնավանդ որ Մաշտոցն ինքն էլ հեղինական դպրութեանն էր վարժված մանկութեան ժամանակ:

Թե հանկրեւտ ինչ է եղել տոմանին տառերի գծագրութեան նկատմամբ այս գրիչն Հռոփանոսի ազդեցութեանը, այդ մասին ոչինչ չենք կարող իմանալ: Ոչինչ որոշ չէ նաև այն մասին, թե հայերեն նշանագրերի ձևերը ազդված են արդյոք Դանիելյան նշանագրերից, կամ թր ազդերի ալֆաբետներին կարող են մասամբ փոխ առնված կամ ազդված լինել, կամ գուցե գծագրված են ինքնուրույն ձևով: Այդ մասին կան բացատրութեաններ ու ենթադրութեաններ, բայց ես կարևոր չեմ համարում այդ բերել այստեղ: Այս ամբողջը հորինողն, անշուշտ, պիտի ոգտվեր իրեն ձանթ նշանագրերից:

Մի կարևոր խնդիր, սակայն, ուշագրութեան չի առնվում մեր նշանագրերի արտաքին ձևերի նկատմամբ: Այդ այն է, թե Մաշտոցը, որ հետեւել է հունարենի ալֆաբետին, ինչ՞ե ուղղակի չի փոխ տեղ այդ ալֆաբետը՝ վրան ավելացնելով նշանագրեր այն հնչյունների համար, որոնք չկան հունարենում, կամ թե ինչպե՞ս չի առել ասորական գրութեանը՝ նույնպես վարժելով դրա հետ: Դրա պատասխանը պարզ է: Ինչպես վերևում հիշվեց, Հայաստանն այն ժամանակ բաժանված էր երկու մասի: Արևմտյանը հռոմեական կայսրութեանն էր հպատակվում, այնտեղ՝ պաշտոնական լեզուն էր հունարենը: Իսկ արևելյանը Պարսկաստանին էր ենթակա. այստեղ էլ պարսկերենի հետ ընդունված էր ասորերենը: Արդ, եթե Մաշտոցը հունարեն ալֆաբետն ընդուներ, Արևելքում չէր թույլատրվի այդ նույնպես և ասորերենն Արևմտքում չէր անցնի: Դրա համար և Մաշտոցը հայկական այբերնը նոր ձևերով է կազմել, որպեսզի այդ արգելափակ հանգամանքները վերանային, և հնարավոր լիներ ամեն տեղ հայերի մեջ մտցնել հայերեն լեզվով դպրութեանը:

ԵՐՐՈՐԴ ՀԱՎԵԼՎԱԾ

Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԴՊՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Այս խնդրը, որով գրագվել են շատերը¹, գրական նշանակութեան չունի, բայց դա զեւ չի կորցրել իր բանասիրական հետաքրքրութեանը: Ինչպես իր տեղում ասվեց, Բուզանդն իր գրքի մասերը կոչել է զգարութիւն: Արդ՝ այդ գրքի մեջ կան միայն երրորդ, չորրորդ, հինգերորդ և վե-

1 Ն. Բիւզանդացի, Փառաոս Բիւզանդ և իւր Պատմութիւն Հայոց, ԵՐՆԱՍԵՐ, Բ. 1887.

Պատմութեան, Փառաոս Բիւզանդ, Ղիկենա, 1890.

Բ. Գաբաշեան, Բիւզանդ Պատմութիւն Հայոց, Քիշինյա, 1906, հատ. Գ. գլ. Գ. Ե. Մ. Մաշտոց: Առումնաբերութեան Փառաոս Բիւզանդի Պատմութեան, Ղիկենա, 1890.

Դարեմաց Հայոց Ժամանակագրութեան պատմութեան, Սա. Մալխասյանցի դասախոսութեանը, Կիլիկիէ Բույսովութեան, Վիմաթա, Քիշինյա, 1899.

ցերրորդ գաղութայինները, նույնպես և ցանկերի վերնագրերի մեջ, որոնք են՝ «Խոստումները», «Զորքերի գաղութային Բուզանդիայ», «Հինգերորդ գաղութային Բուզանդիայ», իսկ վեցերորդը՝ լուի «Բուզանդիայ»։ Գրքի ըսկըրում կա մի առաջաբան և խոստումներին վերնագրով։ Այդ սկզբում է առաջինը. «Այս ինչ է ի դարձիքում երբեք պատմութեանցս. ժամանակագիր կանոնը մատենից, և առ միմի դարձիքում երբեք, այսինքն են սոքա լորի մատենից և չորեքին միոյ իրաց յիշատակումն են»։ Այս առաջաբանը, ինչպես բովանդակութայինից երեւում է, վերաբերում է մեզ հասած չորս գաղութայիններին։

Մանի որ առաջաբանները գրվում են գրքերի սկզբում, և Բուզանդի գրքի սկզբում եղած առաջաբանը վերաբերում է Գ—Ձ գաղութայիններին, ապա ուրեմն չի հղել նրա երրորդ գաղութայինից առաջ գրված բան, հետեւաբար և Բուզանդի Հայոց Պատմութայինն ամբողջապես հասել է մեզ։ Այսպես են գտնել որոշ բանասերներ։ Բայց նրանց այդ կարծիքն անընդունելի է հետևյալ հիմունքով։

Ոչ ոք չի կարող լրջութամբ պնդել, թե Բուզանդը չէր կարող իր Պատմութային միջում սրա երկրորդ մասի համար գրել մի առանձին առաջաբան, որի մեջ բերեր այնտեղ գրելիքի բովանդակութայինը։ Դրա համար բավականի օրինակներ կան մեր պատմագրութային։ Ահա մասիկ Մովսես Խորենացու Հայոց Պատմութայինը, որի երեք գրքերն էլ ունին իրենց առանձին առաջաբանները, երրորդ գրքին՝ ամբողջ Ա. գլուխը. ...«Երրորդ առանձին գիրս, որ ինչ յետ սրբոյն Տրդատայ»։

Առաջին և երկրորդ գաղութայինների գեմ բերում են հետևյալ առաբակութայինը։ Դադար Փարպեցին հիշելով ներստի անեծքը՝ ավելացնում է. «Ըստ գրելոցն ի պատմութեան երկրորդում»։ Ի՛հապիւն հնգիստատանեաբար (Փարպ. ԺԵ)։ Այդ անեծքը գտնվում է Բուզանդի Զորքերի գաղութայինն առանձին հիշագրերի գլխի մեջ։ Այստեղից պարզ. Ստ. Մաթաթայանցը եզրակացնում է, թե մեր ունեցած Զորքերի գաղութայինը «Փարպեցին ճանաչում էր իբրև երկրորդ գաղութային. ուրեմն և մեր Գ. գաղութայինը նրա ժամանակ համարվում էր առաջին գաղութայինը։ Այնպես որ այս վկայութամբ հաստատ ապացուցը ունինք, թե 5-րդ դարի վերջերում Փավստոսի Պատմութայինը նույն սկիզբն է ունեցել, ինչ որ ունի մեր ձեռքը հասած ձեռագիրներում. ուրեմն և կրթած Ա. և Բ. գաղութայինների մասին խոսք չի կարող լինել»։ Այս իբր հաստատ ապացույցը գրողի ուշադրութայինից փախչում է երկու բան։ Նախ՝ այն, որ Փարպեցին չի գրում ի դարձիքում երկրորդում, այլ ի պատմութեան երկրորդում։ Նա իբր գրքի սկզբում հենց՝ Պարպեցու Պատմութայինն անվանում է «Առաջին գիրք Պատմութեանն Հայոց», Բուզանդինը՝ «Երկրորդ գիրքը կամ Պատմութեան երկրորդ գրոց», իսկ իրենը՝ «Երրորդ պատմութեանն»։ Կնշմանկի՝ երբ Փարպեցին գրում է իր Պատմութեան երկրորդում, այդպես նա կոչում է ունում Բուզանդի Պատմութայինը և ոչ թե նրա երկրորդ գաղութայինը։ Ապա՝ Թուրքաթուրքի չէ «Պատմութեան» բառն ըստ հաճույս դարձնելով «Գաղութային», եզրակացնել, թե Փարպեցին իբր առանց հիշելու գրքի անունը, Բուզանդի Հայոց Պատմութայինը, ուղղակի սրա «Երկրորդ գաղութայինն» է հիշել, կոչում անողը

հեղինակի ու գրքի անունն է հիշու՞մ և Փառապետքին հիշել էլ իսկ որ նրա կոչումի մեջ հիշված է գլուխը (նառ), առանց հիշելու պարտութունը, այս վերջինը կարող է հետազոտում գուրա ընկած լինել, կամ հենց Փառապետքին մոտացած լինել հիշելուս Սույնը կարելի չէ տեսլ Բուշանդ հեղինակի և իր երկի համար, քանի որ այդ հիշված է իրեն տերկրորդ պատմութունը:

Այս դարձյալ՝ ընդունելի չէ այն ենթադրութիւնը, թե հետազոտում որևէ մեկի խելքին փչել է՝ առաջին պարտութիւնը դարձնել երրորդ, երկրորդը՝ չորրորդ, երրորդը՝ հինգերորդ, չորրորդը՝ վեցերորդ, և այսպես ըզգուշությամբ փոխել ոչ միայն բնագրի, այլև ցանկերի վերնագիրներին մեջ, Պարզ է, որ այդպիսի աննպատակ և անմիտ փոփոխութիւն չի կատարուել, Բայց որ Լ. Փառապետք ածողին եղած օրինակի մեջ արդեն Ա. և Բ. պարտութիւնները չեն եղել (կամ գուցե եղել են, բայց նա դրանց մասին չի խոսում), այդ ոչ թե «երկրորդ պատմութիւնը» «երկրորդ պարտութիւնը» դարձնելով պետք է եղածակցանել, այլ Փառապետք գրածից, նա բերում է Բուշանդի Պատմութիւնը բովանդակութիւնը, որ համապատասխան է Գ.—Զ. պարտութիւններին:

Եվ վերջապես, դարձանալի կերպով անուշադրութիւն է մատնվում Փ. Բուշանդի իրեն գրած առաջաբանը («նոստաթանութիւն նախադիտելի»), որի սկզբի մասին մի կտոր բերվեց վերևում Այստեղ տեսլ է ինքը հեղինակը. «Այս ինչ է ի պարտութիւնս երրորդ՝ պատմութեանցս» — Այս բանն է պատմութիւններին այս երրորդ պարտութիւն մեջ... և նրա հետ (առ նմին = առ երրորդ պարտութեանն) երեքը և այլն: Պարզ է, որ հեղինակը մեզ հասած չորս զգարութիւններինց առաջինը կոչել է «երրորդ պարտութիւն», որի հետ միասին հաջորդ երեքը արել են չորս. «այսինքն են սուք չորս մատեանքս, և այլն»:

Այսպես ուրեմն, Բուշանդը գրած է եղել իր Հայոց Պատմութիւն նաև առաջին և երկրորդ պարտութիւնները: Եվ մենք հեղինակից իրենից՝ գիտենք, թե ինչ է եղել այդ երկու պարտութիւններին բովանդակութիւնը, նա երրորդ պարտութիւն առաջին գլխի մեջ գրում է բառացի թարգմանությամբ այսպես. «Թաղեոս առաքյալի քարոզութիւնից և նրա վախճանից ու մարտիրոսութիւնից մինչև Գրիգորի վարդապետութիւն վերջանալն ու իր հանգիստը և առաքելական Սանատրուկ արքայից մինչև Տրդատ Թագավորի ակամա հնազանդվելը հովաքին և նրա հանգիստը... Այդ ամենն ուրիշների ձեռով գրվեց, Բայց մենք էլ մեր այս պատմութիւն կարգի մեջ փոքր ի շատեղդինք, չթողինք դանց անելով, իրերի պատշաճ կտրդի համար: Վասն զի մեր պատմութիւնը՝ կա բան՝ որ առաջին է, ե կա բան՝ որ վերջին է. իսկ ինչ որ միջին եղավ, այն ուրիշների ձեռով գրվեց, Բայց որպեսզի մեր պատմութիւն մեջ ընդհատում չերևա, մի փոքր՝ նշանակեցինք, ինչպես պատի շինվածքի մեջ ամբողջի ավարտման համար զրված մի աղյուս: Այդ բանը, ինչ որ սրանից հետո է գալիս (կարգվում), պատմվում է հենց այստեղ սրա մօտին: Այս վերջին խոսքերը վերաբերում են հաջորդ գլխին. «Թագապա որ ինչ վասն մեծի քահանայապետին Գրիգորի և նոցանց շիրմանցն», որից հետո սկսվում է Տրդատի որդի Մուրադի և ուրիշների

¹ Բուշանդը՝ «հաւ մի» — իսկ մի — մի փոքր: Տպւած է՝ «երեկոցի» հաւ մի, նշանակեցած. «ստորահարդի» ցանկ հաւ մի բանից առաջ:

պատմութիւնը, ինչպէս հայտնել է սկզբի առաջարկին մեջ, ներքոյ դրա-
քութիւնն այս առաջին զլխից տեսնուի ենք, որ Փ. Բուզանդը Պատմու-
թիւնը բաժանել է երեք մագերի, որ կոչվում է՝ առաջին, միջին և վեր-
ջին: Միջին պատմութիւնն,—ասում է նա,—ուրիշների ձեռով գրված է-
զա է թագեոս առաքյալի քարոզութիւնից մինչև Գրիգորի հանդիսը, և
Սանատրուկ թագավորից մինչև Տրդատի հանգիստը: Առաջին պատմու-
թիւնը քնակաւորաբար ընկնում է թագեոս առաքյալից և Սանատրուկից
առաջ, իսկ վերջին պատմութիւնն է, ինչ որ խոստանում է գրել, Տրդա-
տի որդի Խոսրովից սկսածը: Վերջին պատմութիւնը մեր ունեցած Գ—Ձ
գրքութիւններն են: Միջին պատմութիւնը քանի որ ուրիշները գրել են,
նա չի գրել, բացի մի «աղյուսից» իսկ առաջին պատմութիւնը, որ նախ-
նական պատմութիւնն է, նա պետք է գրած լինի առաջին երկու գրքու-
թիւններով:

ՅՈՐՈՐՈՐԴ ՇԱԿԵԼՎԱՄ

«ՊԱՐՄԻՅ ՊԱՏԵՐՍՁԱՄ» ՎԵՊԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

1. Մեր պատմաբանների քննաքննումը:— Ազաթանգեղոսի և Բուզան-
դի Պատմութիւնների մեջ եղած վիպական տարրերի պատմականու-
թիւնը որոշելու համար ուրիշ միջոց չունենք, բայց եթէ այդպիսի պատ-
մելածքները համեմատել իրական պատմական տվյալների հետ: Արդ՝ հայոց
հին պատմութիւնն աղբյուրները հույն-հռոմեական գրողների սակավութիւնով
կցկտուել հիշատակութիւններն են, այն էլ սովորաբար Հայաստանում կամ
Հայաստանի հետ ունեցած պատերազմների ու քաղաքական հարաբերու-
թիւնների մասին: Ուստի հնարավոր չէ «Պարսից պատերազմ» վեպի մեջ
հիշված բոլոր անձնանուններն ու զեպքերը համեմատելով նրանց հաղորդած-
ների հետ՝ որոշել, թե ինչն է պատմական, և թե վեպն ինչպէս է օգտը-
վել եզելութիւններից, Բանը գծվարտնում է և հետևյալ հանգամանքնե-
րով, թեպետ և արդեն բավական թվով հեղինակներ, և՛ պատմաբաններ, և
բանասերներ, ուսումնասիրել են Հայաստանի հին պատմութիւնը հույն ու
հռոմեական աղբյուրների հիման վրա և գրել են հին շրջանի Հայոց պատ-
մութիւնը, բայց և այնպէս դեռ չի պարզված Հայաստանի նույնիսկ հին
քաղաքական պատմութիւնը և անգամ Հայոց թագավորների հաջորդու-
թիւնն կարգը: Այդ հեղինակները ոչ սակավ անգամ չափազանց հակասում
են իրար, թեպետ և նրանք օգտվում են նույն աղբյուրներից: Մյուս կող-
մից՝ մեր բանասերներն ու պատմութիւն գրողները երբորդ և չորբորդ
գրքերի Հայոց պատմութիւնն համար օտար աղբյուրների հետ, այն էլ ոչ
ներքին կյանքի համար, իբրև աղբյուր բանեցնում են նաև Ազաթանգեղո-
սի ու Բուզանդի վիպական պատուհանները: Այսպիսով պատմագետ ու գրա-
կանագետ նույնացվում են, և առաջ է դալիս մի չիտթ գրութիւն: Գը-
բականագետները պատմութիւնն օգնութիւնով պիտի պարզեն վեպի պատ-
մականութիւնը, նրա դարաշրջանը, նրա մեջ եղած անձերն ու դիպած-
ները, ընդհանրապէս, պատմագետներն իրենք պատմութիւնն են գրում՝ վե-
պից քաղելով այն: Շեշտում եմ, խնդիրը ներքին կյանքի մասին չէ:

Մի անգամ որ պարզ է, որ Ազաթանգեղոսի ու Բուզանդի պատմու-

կան երկերի մեջ մեծ տեղ է բռնում վիպական տարրը, ապա կարելի է նրանցից, առանց վերադահության, օգտվել քաղաքական պատմության համար, Մոսկովում է կամ անգիտացվում՝ է, որ վեպը երբեք պատմություն չէ, այս բառի այժմյան նշանակությամբ, Արդարև վեպն ընդհանուր գեներով իր մեջ պահում է իր դարաշրջանի սոցիալական բնույթն ու ոգին, բայց դա չնորոգում էր վերաբնակչություն պատմական հղելությունները ոչ անձերի, ոչ ժամանակի, ոչ տեղերի և ոչ էլ նույնիսկ իրողությունների վերաբերմամբ, իսկ ռուսաց զրանց պատմաբանի համար չկա պատմական իրականություն:

Վեպը բանաստեղծություն է, պատմական բանաստեղծություն, որի նախահիմն է միայն պատմական: Որքան էլ որ դա առատ նյութ է տալիս մի որոշ դարաշրջանի ներքին կյանքի ուսումնասիրության համար, բայց և այնպես մեծ է ալլադիոզման պատմությունը: Դրա մեջ չկա ժամանակաբանություն, չան անաքոնիզմներ, անձերի և հղելությունների շփոթումներ: Ավելացրեք վրան և այլ փոփոխությունները, որ հասուկ են ավանդական բանաստեղծությանը, — իրական հղելությունների հետ թառնուրդը չեղած, չկատարված բաժանանքների, ընդհանուր վիպական մոտիվների և այլն, և այն, որ տարբեր հղելությունները կորցնելով իրենց մանրամասնությունները՝ մի ընդհանուր գույն ու ձև են ստանում:

2. Վազարը և Տրդատ Բ. Ներսիսի պարտությունը 297 թվիմ. Տրդատ Գ.:—Մեր երկրորդ հին վեպի պատմական նյութն սկսվում է Հայաստանի Վաղարշ Թագավորի ժամանակից, այս նշանավոր անձի հերոսական վախճանից: Անտոնիոս (Կարակալյա 211—217) կայսրը, որ նորոգում է պատերազմը պարթևների հետ, Արևելք դառնալով՝ նենգությամբ իր մոտ է կանչում Հոռմի ըստեղծ Վաղարշ Թագավորին և շղթայում նրան: Հայերը զենքի են դիմում հռոմեացիների դեմ, Վաղարշի որդի Տրդատը Թագավոր է հռչակվում (215 թ.), Կարակալյան նրա վրա զորք է ուղարկում, բայց լճակներից զոր առաքելը նա զորք է վերադառնում՝ մատնելը չարաշուր ի պարտությունը: Տրդատն ապաստելով, որ պատերազմը պիտի շարունակվի, զենք է պարթևների մոտ՝ նրանցից օգնություն խնդրելու: Եվ իսկապես, Անտոնիոս կայսրը հետևյալ տարին, պատերազմական մեծամեծ ուժերի զուգույն, նորից գալիս է Արևելք, որպեսզի հայերին նվաճե, և եթե հարկ լինի, նաև պարթևներին: Երբ նա երկրորդ անգամ պահանջում է, որ պարթևները հայերին չօգնեն և Տրդատին իրեն հանձնեն, ապա պարթևների Թագավորը համաձայնում է դրան: Բայց Տրդատին աջողվում է Հայաստան մտնել և շարունակել թշնամական գործողություններն ընդդեմ հռոմեացիների (216 թ.): Հաջորդ տարին Կարակալյան սպանվում է նրա հաջորդը՝ Մակրինոս (217—218), պարտվելով պարթևներից: հաջորդություն է կնքում նրանց հետ: Նա հաջողվում է և Հայաստանի հետ: Եվ

¹ Գ - Բ - Գ - Զ - Ե - Կ - Ա. Մ. Փննական պատմություն Հայոց, Բ, Թիֆլիս, 1898, էջ 294. Նույն տեղում՝ Գիտն չի. 13, 21.

² Հայոց նախնական պատմությունը ըստ Մովսեսի, Վաղարշագատ, 1904, էջ 83.

որովհետև այդ ժամանակ գերության մեջ մնալ էր Հայաստանի թագավորը՝ Վաղարշ կայսրը թագ է ուղարկում նրա որդի Տրդատ Բ-ին, որ արդեն թագավոր էր փաստորեն¹։ Կայսրը Հռոմից ետ է դարձնում և Տրդատի մօրը, որ տասնութ տարեկան ամիս բանտարկված էր։ Բացի այդ՝ նա Տրդատին վերադարձնում է Հայաստանից տարած ավարը և նրա հայրուհան կալվածները հապաղովկիտյում, որ հարակալան արքունիք էր գրավել։ Քիչ հետո, 226 թ., Գարսկաստանում տեղի է ունենում քաղաքական մեծ իրողությունը։ Արտաշիս Սասանյանը, հաղթելով իր հակառակորդ վերջին պարթև թագավոր Արտավան Ե-ին, զաւր քաղաքացիական պետութեան գլուխ կանգնում են Սասանյան արքաները, որոնք Կյուրոսի և Քսերքսեսի սերունդ էին համարում իրենց և ձգտում էին աշխարհակալութեան։ Արտաշիսը (226—241 թ.) իր իշխանութեան սկզբում հենց՝ հարձակվում է Հայաստանի վրա, առաջ ևս Արշակունի իշխանութեանը վերջ տալու համար։ Բայց նա բավական զվանդեալ ի բնական երկրին և ի ժառանգ ունի և յորդոցն Արտաշանայ, ելանէր փոխառեալ քաղէս տան ռմանք, կամ որպէս այլք ասեն, դռնայր յետս՝ գումարել մեծ ևս քաղաւթիւն զօրացա՞, 228 թ.։ Հետո նա 230 թ. հարձակվում է հռոմեական երկրներին, այն է՝ Միջագետքին, Ասորիքին և Կապադովկիայի վրա։ Երկու տարի հետո՝ Ալեքսանդր Մեծը (222—235) կայսրը սկսում է իր արշավանքը պարսիկներին դեմ։ Նրա հյուսիսային բանակը Հայաստանի վրայով շարժվում է զեսլի Մարաստան², ուր հռոմայեցիները, հայերի օգնութեամբ, աստիճանիկ նեղում են պարսիկներին։ Հայերը, որոնք պահում են իրենց տնկալութունը, Մաքսիմի (235—238) կայսրի ժամանակ, 236 թ., իբրև Հռոմի դաշնակիցներ, օգնական զորք են ուղարկում գերմանների դեմ պատերազմի ժամանակ։

Գարսիկները 241 թ., Արտաշիսի հաջորդ Շապուհ Ա-ի (241—272) օրով, տիրում են Միջագետքին, հավանորեն մտնում են և Հայաստան։ Գորդիանոս կայսրը (238—244) ստիպված է լինում 242 թ. պատերազմ սկսել պարսիկներին դեմ։ Նա ետ է առնում Արտաշատը, ապա Անտիոքը։ Մծրին և այլն³, Բայց նա սպանվում է և նրա հաջորդ Փիլիպպոսի ժամանակ հայտնություն է կնքվում 244 թ.։ Երբ հռոմայեցիները ձեռնադրեցին Հայաստանից, Բայց Շապուհն իսկույն չի մտնում Հայաստան։ Սկսութեանից ազգերը հարձակվում են Պոնտոսի, Կապադովկիայի և Ենիքառապետ Փոքր Ասիայի վրա։ Նրանց խմբերը երևում են Հայաստանի Բազեն գավառում։ Այդ ժամանակ միայն, 252 կամ 253 թ., Շապուհը գրավում է Հայաստանը։ Տրդատ քաղաքը փախչում է եռամսյակների մեջ, իսկ Որա որդիները պարսիկների կողմն են անցնում։ Նրանք իշխում է Արտաշատի թագավորը, պար-

¹ Անդ., էջ 54.

² Պարսկաստան, Քենդակա պատմութիւն, Բ. 268. Նախ անգամ Դիոն, իբր. 3—3։ Տես նաև՝ Հայոց նախն. պատմ., քառ. Մովսէսի, էջ 54.

³ Asdourian, Die polit. Bez. zw. Armenien und Rom, էջ 124 և հետ.

⁴ Պարսկաստան, Քեն. պատմ., Հայոց, Բ. 1893, Թիֆլիս, էջ 273.

⁵ Ան. ազգայ. (Գաղղեաւ—Գայուս, 251—253 թ.) սկսած իշխանի պարսիկք աբ հասնի գրուեցին զՀայաստան, ուստի փախեալ արքայն [Հայոց] Տրդատ, այլ քաղիք չորա տնկան առ Գարսիկաւ, 2 և 3 ար. Տարեգրք, ԺԲ. 21. Տաշաւ, Աղաթան-գեղաւ, էջ 109.

սից դաշնակիցը, որի մի նստակը մնում է 260 թվից, Ավրելյան կայսրի ժամանակ (270—275) Հայաստանը համարվում է անկախ երկիր և ոչ հռոմեական, Ավրելիոս Կարոս (282—284) կայսրը վերսկսում է պատերազմը, Նա 282 թ. մտնում է Հայաստան և այնտեղ վերականգնում է նախկին կտրգերը, Նրա հաջորդների օրով ևս Հայաստանը մնում է հռոմեացիների ազդեցության տակ և խաղաղություն է լինում մինչև 293 թ.¹ Թե ով է եղել Հայաստանի թագավորը՝ այդ հայտնի չէ:

Պարսից Ներսես թագավորը (293—303) վերսկսում է պատերազմը Հռոմի հետ: Նա նախ հարձակվում է Հայաստանի վրա: Դիոկլետիանոս կայսրը (284—305) գլխավորում է նրան պատերազմով: Պալեիրոս Մաքսիմոս կեսառը, որ զորավարն էր, սկզբում, 296 թ. ուղարկության է կրում Միջագետքում: Բայց հետո նա պատերազմը տեղափոխում է Հայաստան, ուր բնակիչներն օգնում են հռոմեացիներին: Կովից առաջ Գալերիոսն անձամբ, երկու (երեք) ձիավորի հետ, լրտեսում է թշնամու բանակը, Արյունահեղ ճակատամարտի մեջ Ներսեսը, շնայելով իր զորքի բազմությանը, կատարյալ պարտության է կրում և ինքը վիրավորված փախչում է: Նրա ամբողջ ճամբարը, քանձը, ընտանիքը, թագուհին, օրդիներն ու ղուսարները և բազմաթիվ նշանավոր պարսիկներ գերի են ընկնում հռոմեացիների ձեռքը (297 թ.): Թշնամիները նրա կանանց ու ղուսարներին պահում են պատվով, Հաշտությանից հետո գերիները վերադարձվում են: Այդ ժամանակից սկսած՝ Հայաստանը մնում է Հռոմի գերիշխանության տակ, և Հայոց երկրին ավելանում է Առաքատականը կամ նրա հյուսիս-արևելյան մասը: Խաղաղության է լինում ամբողջ քառասուն տարի մինչև Կոստանդինոս կայսրի մահը, 337 թ.: Թե ով է եղել Հայաստանի թագավորը՝ այդ հայտնի չէ:

Հիշենք: և հետևյալը: Եվսեբիոս Կեսարացին (270—338) հայերին քրիստոնյա է դնում 4-րդ դարի սկզբում և գրում է, թե հայերը կրոնի համար նույնիսկ պատերազմ են տվել Մաքսիմիոս Դալայի (307—313) դեմ, Վրդգեռեցու պատերազմի բռնաւորէ անտի ընդ Հայոց, որ ի սկզբանէ բարեկամք և նիզակակիցք էին հռոմէական ժողովրդեան: Ա. Նոքին ևս քրիստոնեայք էին և ջերմագոյնք ի բարեպաշտութեան... Զանաքու աւստուածատեացն բռնաւոր՝ բռնութեամբ անել զնոսա ի պաշտոն կոոց և դիւաց և յայն սակս զբարեկամսն յատելիս, զդաշնաւորսն ի թշնամիս դարձոյց... այլ ինքն ի պատերազմի անդ հանդերձ զօրու իւրով գունակ գունակ նեղեալ վտանգեցաւ յարաշարձ, Եվսեբիոսը չի հիշում Հայոց թագավորի անունը, Միայն Սողոմոնոսը, եկեղեցական պատմիչ 5-րդ դարում (ծնված 5-րդ դարի սկզբում), հիշում է Հայոց Տրդատ թագավորին, որի օրով հայերը քրիստոնեության են ընդունել: Բայց այդ ժամանակ կար երկն հայ գրականության, ըստ որի նույնպես 3-րդ դարի վերջում և 4-րդի սկզբներում թագավոր է եղել Տրդատ (Գ):

¹ Հայոց նախն. պատմ. ըստ Մամիկոնի, էջ 86 և հետև. նախ՝ Դ. Խալատյան. Очерки ист. Арм., էջ 345 և հետև.

² Եւսեբ., Եկեղեց. պատմութիւն. Թ. Գլ. Ը. Գալուստ., Պնն. պատմ., Գ. Թիթմ., 1883, էջ 61

Հիմա տեսնենք՝ ինչ են գրում մեր պատմաբաններն ու բանասեր-ները:

3. Խոսքով Մեծ:—Ըստ վեպի (Ազաթանգեղոսի և Մ. Խորենացու պատումների), Սասանյան Արտաշրի իշխանության սկզբում, ուրեմն 226 թ., Հայաստանում թագավոր է և նրա դեմ տաս տարի քաջությամբ պատե-րազ է մղում (ըստ Մ. Խորենացու՝ Վազարշի որդի) Արշակունի Խոսրովը: Նրան դավաճանի ձեռով սպանել տալուց հետո՝ Պարսից թագավորը տիրում է Հայաստանին: Խոսրովի որդիներից մեկի կնիքը մի փոքրիկ է: Տրդատ անու-նով, փախչում են դաշակները Հույների (Հոռմայեցիների) կողմերը: Այն-տեղ նա մեծանում է և Գոթաց թագավորին մեծամարտությամբ հաղթելուց հետո՝ հոռմայեցիների ոգնությամբ գալիս թագավորում է Հայաստանում՝ իր ամբողջ կյանքում կռվելով պարսիկների դեմ: Վերևում ըստ օտար աղբյու-րների բերված պատմությանից՝ այսքանն է միայն ըստ Ազաթանգեղոսի: Դա մի չափազանց ալլափոխված պատմության է և շատ քիչ նմանու-թյուն ունի 3-րդ դարի հայոց պատմությանն ըստ արամեյի հեղինակների:

Հիմա հարց է. արդյոք պատմական է այս Խոսրով անունով թագա-վորը: Մեր բանասերներն ու պատմաբանները մեծ մասամբ ընդունել են այս Մեծն Խոսրով թագավորի իրական գոյությունը և մինչև անգամ նրա ասորիներն են որոշել: Բայց այդ գիտնականների կարծիքներն ընդունելի չեն, որովհետև, չնայելով նրանց հիգեբերին՝ ոչ մի կերպ չի ապացուցված, թե 3-րդ դարում եղել է Հայոց թագավոր Խոսրով անունով և թե նա է պատերազմել Արտաշրի դեմ:

Առնենք նրանցից յոթը.

1. Խալաթյանի: Տրդատ Բ.-ից հետո, որ մեռնում է ամորդի, Հայաս-տանում թագավորում է Արտավան Ե.-ի եղբայրն Արշակ Բ., 222—236 թ. Գուլյը կոչվում է Խոսրով: Մրա որդին Տրդատ Գ. թագավորում է 238 թը-վից և 252—253 թ. (ուրեմն ոչ մեծիկ մի փոքրիկ) փախչում է հոռմայե-ցիների մոտ. 207 թ. թագավորում է դարձյալ մի Տրդատ, թե արդյոք դա Տրդատ Գ.-ն է, թե Տրդատ Դ., այդ անորոշ է թողնվում:

2. Ստեղալյանի: Վազարշ, Սանատրուկի որդի 104—210 թ.:

Տրդատ Բ. (Վազարշի որդին) 218—222 թ.:

Արշակ Ա.—Խոսրով Ա., Արտավան Դ.-ի եղբայրը, մոտ 223—250 թ.:

Տրդատ Գ. (Խոսրովի որդին), տաջին անգամ թագավորում է մոտ. 250 թ., նա պարսիկներից փախչում է:

Արտավազ Ե. 252 թ.:

Տրդատ Գ. երկրորդ անգամ 207—մոտ. 323 թ.:

3. Անատոլյանի: Տրդատ Բ.-ից հետո Խոսրով մոտ. 222—250 թ. թե

1 Очерки ист. Армении, т. I, 226 և 228, 238, 239, 240, 241, 242, 243, 244, 245, 246, 247, 248, 249, 250, 251, 252, 253, 254, 255, 256, 257, 258, 259, 260, 261, 262, 263, 264, 265, 266, 267, 268, 269, 270, 271, 272, 273, 274, 275, 276, 277, 278, 279, 280, 281, 282, 283, 284, 285, 286, 287, 288, 289, 290, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 300, 301, 302, 303, 304, 305, 306, 307, 308, 309, 310, 311, 312, 313, 314, 315, 316, 317, 318, 319, 320, 321, 322, 323, 324, 325, 326, 327, 328, 329, 330, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 345, 346, 347, 348, 349, 350, 351, 352, 353, 354, 355, 356, 357, 358, 359, 360, 361, 362, 363, 364, 365, 366, 367, 368, 369, 370, 371, 372, 373, 374, 375, 376, 377, 378, 379, 380, 381, 382, 383, 384, 385, 386, 387, 388, 389, 390, 391, 392, 393, 394, 395, 396, 397, 398, 399, 400, 401, 402, 403, 404, 405, 406, 407, 408, 409, 410, 411, 412, 413, 414, 415, 416, 417, 418, 419, 420, 421, 422, 423, 424, 425, 426, 427, 428, 429, 430, 431, 432, 433, 434, 435, 436, 437, 438, 439, 440, 441, 442, 443, 444, 445, 446, 447, 448, 449, 450, 451, 452, 453, 454, 455, 456, 457, 458, 459, 460, 461, 462, 463, 464, 465, 466, 467, 468, 469, 470, 471, 472, 473, 474, 475, 476, 477, 478, 479, 480, 481, 482, 483, 484, 485, 486, 487, 488, 489, 490, 491, 492, 493, 494, 495, 496, 497, 498, 499, 500, 501, 502, 503, 504, 505, 506, 507, 508, 509, 510, 511, 512, 513, 514, 515, 516, 517, 518, 519, 520, 521, 522, 523, 524, 525, 526, 527, 528, 529, 530, 531, 532, 533, 534, 535, 536, 537, 538, 539, 540, 541, 542, 543, 544, 545, 546, 547, 548, 549, 550, 551, 552, 553, 554, 555, 556, 557, 558, 559, 560, 561, 562, 563, 564, 565, 566, 567, 568, 569, 570, 571, 572, 573, 574, 575, 576, 577, 578, 579, 580, 581, 582, 583, 584, 585, 586, 587, 588, 589, 590, 591, 592, 593, 594, 595, 596, 597, 598, 599, 600, 601, 602, 603, 604, 605, 606, 607, 608, 609, 610, 611, 612, 613, 614, 615, 616, 617, 618, 619, 620, 621, 622, 623, 624, 625, 626, 627, 628, 629, 630, 631, 632, 633, 634, 635, 636, 637, 638, 639, 640, 641, 642, 643, 644, 645, 646, 647, 648, 649, 650, 651, 652, 653, 654, 655, 656, 657, 658, 659, 660, 661, 662, 663, 664, 665, 666, 667, 668, 669, 670, 671, 672, 673, 674, 675, 676, 677, 678, 679, 680, 681, 682, 683, 684, 685, 686, 687, 688, 689, 690, 691, 692, 693, 694, 695, 696, 697, 698, 699, 700, 701, 702, 703, 704, 705, 706, 707, 708, 709, 710, 711, 712, 713, 714, 715, 716, 717, 718, 719, 720, 721, 722, 723, 724, 725, 726, 727, 728, 729, 730, 731, 732, 733, 734, 735, 736, 737, 738, 739, 740, 741, 742, 743, 744, 745, 746, 747, 748, 749, 750, 751, 752, 753, 754, 755, 756, 757, 758, 759, 760, 761, 762, 763, 764, 765, 766, 767, 768, 769, 770, 771, 772, 773, 774, 775, 776, 777, 778, 779, 780, 781, 782, 783, 784, 785, 786, 787, 788, 789, 790, 791, 792, 793, 794, 795, 796, 797, 798, 799, 800, 801, 802, 803, 804, 805, 806, 807, 808, 809, 810, 811, 812, 813, 814, 815, 816, 817, 818, 819, 820, 821, 822, 823, 824, 825, 826, 827, 828, 829, 830, 831, 832, 833, 834, 835, 836, 837, 838, 839, 840, 841, 842, 843, 844, 845, 846, 847, 848, 849, 850, 851, 852, 853, 854, 855, 856, 857, 858, 859, 860, 861, 862, 863, 864, 865, 866, 867, 868, 869, 870, 871, 872, 873, 874, 875, 876, 877, 878, 879, 880, 881, 882, 883, 884, 885, 886, 887, 888, 889, 890, 891, 892, 893, 894, 895, 896, 897, 898, 899, 900, 901, 902, 903, 904, 905, 906, 907, 908, 909, 910, 911, 912, 913, 914, 915, 916, 917, 918, 919, 920, 921, 922, 923, 924, 925, 926, 927, 928, 929, 930, 931, 932, 933, 934, 935, 936, 937, 938, 939, 940, 941, 942, 943, 944, 945, 946, 947, 948, 949, 950, 951, 952, 953, 954, 955, 956, 957, 958, 959, 960, 961, 962, 963, 964, 965, 966, 967, 968, 969, 970, 971, 972, 973, 974, 975, 976, 977, 978, 979, 980, 981, 982, 983, 984, 985, 986, 987, 988, 989, 990, 991, 992, 993, 994, 995, 996, 997, 998, 999, 1000.

2 Sandaljian, Histoire documentaire de l'Arménie, t. II, Rome, 1917, էջ 260 և հա-սորդ և հա. 260.

3 Die polit. Bez. zw. A. u. R., էջ 191, 197.

առ Արտավանի հարազատ եղբայրն է եղել՝ մենք այդ չգիտենք, նույն տեղում ծանոթության մեջ. «Միայն Ազաթանգեղոսի հաշտարեն թարգմանությունը Խոսրովին անվանում է Արտավանի եղբայր (անշուշտ այդ պատճառով Պրեկոպը նույնպես անվանում է նրան [Արշակին] Պարթևաց թագավորի եղբայր»):

Տրդատ Գ. մոտ. 267—336, հրեխայեթյան ժամանակ 252 թ. փախել է հոռոմայեցոց երկիրը:

Ա. Յառյաթի: Տրդատ Բ. մեռել է 221 թ. հետո Խոսրով, որի սպանվելը 253 թվից առաջ. Տրդատ Գ. թագավորել է 253-ից առաջ մանկական հասակում և այդ հասակում էլ փախել է 253 թ.: — Ապա Տաշյանը բերում է Տրդատ Գ.-ի թագավորելու մասին զանազան կարծիքներ և հավանական է համարում, թե նա թագավորել է 266—267 թ., երբ եղել է Գոթերի տրշավանքն ի Փոքր Ասիա. «Լիդիա, Փոնդիա, Գադաուրիա, նաև Գամբրեզ ողողված էին»: Տրդատ Գ.-ը երկրորդ, իսկապես երրորդ անգամ թագավորել է 287 թ.:

Առաջին երկու հեղինակները, Խալաթյան և Սանգալճյան (համարներ 1 և 2), Խոսրովին համարում են Պարթևների թագավոր վերջին Արտավանի եղբայրը՝ Արշակ, Յուլյն և Խոսրով ամուսնով. միայն առաջինը նրան զնուծ է 222—238 թ., իսկ երկրորդը՝ մոտ. 222—250 թ.: Նրանց այս տեղեկությունները ծագում են Պրեկոպիոսի հետևյալ խոսքերից, որ այստեղ բերում եմ Տաշյանի թարգմանությամբ. «Թագաւոր էր երբեմն Հայոց անգոստին ի նոցունց ազգէ, որպէս վկայէ հնոցն պատմութիւն: Բռնդի իբրև կործանէր Աղեքսանդր Մակեդոնացի պթագաւորն Պարսից, կացին մնացին Պարսք ընդ լծով: Այլ Պարթևք ապստամբեալք ի Մակեդոնացւոց՝ տարան զյաղթութիւնն և վտարեցին զնոսա ի բաց և հասին կալան մինչև ցգետն Տիգրիս: Հանդարտեցին Պարսիկք ընդ իշխանութեամբ սոցա ամս հինգ հարիւր, մինչև ցժամանակն՝ յորում Աղեքսանդր որդի Մամեայ թագաւոր եկաց Հոռոմայեցւոց: Եւ յայնժամ մի ում թագաւորացն Պարթևաց զեղբայր իւր զԱրշակ կարգէր արքայ Հայոց, որպէս առէ իսկ Պատմութիւնն Հայոց: Ձի մի ոք կարծիցէ զԱրշակունիս ի Հայոց սերեալ, որք (Արշակունիք) զամս հինգ հարիւր մնացին խաղաղութեամբ եղբայրութեան ազգատոհմին: Արքայն Հայոց ի Մեծ Հայս նստէր, և անգոստին ի կանուխ ժամանակաց հնազանդ էր ինքնակալին Հոռոմայեցւոց և այլն»:

«Աղեքսանդր որդի Մամեայ է Աղեքսանդր Սեվեր (222—235): Պարթևների տերությունը տևել է մինչև 226 թ., ուրեմն մինչև այս կայսրի ժամանակը: Պրեկոպիոսի այդ հատվածի մեջ ընդգծած խոսքն այնպես են հասկացել, թե Աղեքսանդր Սեվերի առաջին տարում («յայնժամ»), ուրիմն 222 թ., Պարթևների թագավորն իր եղբայր Արշակին կարգել է Հայոց թագավոր: Եվ որովհետև այդ ժամանակ Պարթևների թագավորն էր Վաղարշի

1 Տ ա շ ի ա ն Յ., Ազաթանգեղոս, Վիեննա, 1801, էջ 96, 106 և հա. 109, 120, 128 և այլն:

2 Տ ա շ ի ա ն, Ազաթանգեղոս, էջ 108 և հա. Պրեկոպիոս, Վասն շինուածոց Յաւաթիսիանու, գիրք Գ. 1:

որդի Արամյան Ե. (կամ Դ.), ուստի և Արշակը նրա եղբայրն էր: Եվ որովհետև, ըստ Ագաթանգեղոսի, այդ ժամանակ Հայոց թագավորը Խոսրով էր կոչվում, ուստի Արշակը մեկ խոսքով է կոչվել: Հետևաբար Ագաթանգեղոսի հիշած Խոսրովը թագավորել է 222 թ.: Կնյանակի՝ այդ ժամանակ մեռած պիտի լիներ նախորդ թագավորը Տրդատ Բ.: Այս թագավորն, ըստ Խաթանի, նույնիսկ «անորդի» է մեռել, երևի, բացատրելու համար, թե ինչու Տրդատ Բ.-ի որդին չի թագավորել, այլ Արտավանի եղբայրը: Գրան իբրև ապացույց՝ համարում են այն, որ Ագաթանգեղոսի հուշարեն թարգմանությունը Խոսրովին տնվանում է Արամյանի եղբայր՝ Բայց այդ ամենը սխալ հասկացման հետևանք է:

«Եղբայր», «եղբայրություն» բառերը Ագաթանգեղոսի և Բուզանդի մեջ Գործական թագավորական տոհմի համար գործածվում է «ազգակից», «ազգատուն» բառերի նշանակությամբ: Այսպես, օրինակ, Ագաթանգեղոսի մեջ հենց՝ Խոսրովի համար գրված է. «Թէպէտ և էր ի մեծի տրտմութեան վասն բնութեան եղբայրութեան ազգատունիմ, զի հնազանդեցան թագաւորութեան Ստահրացւոյն... և ուտեալ էին ի տէրութիւն Արտաշէի, քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատունիւն և եղբայրութեամբ: Այստեղ «եղբայրություն» և «ազգատուն» համարն էլ են, և «եղբայրություն»-ը վերաբերում է քիչ ներքևում հիշվածներին, որ են՝ «տունայինքն», «տունքն և ազգապետքն և նախարարքն և նահապետքն Գործեաց, որոնք ենթարկվել էին Արտաշէին, Այսպես և Բուզանդը (Գ. Ե.). Մազաթների թագավորի համար, որ պարթևական տոհմից էր, գրում է. «Ենաս նա [Գրիգորի] մինչև ի ճամբար քանակին Արշակունւոյ տրքային Մազթաց... Քանզի և նոցա և Հայոց թագաւորացն մի ազգաւորութիւն էր տունին բնութեան» (Բուզ. Գ. Թ): «Թագաւորն Մազթաց Սանհասանհարին նիւթեաց զարամտութիւն ռնութեան ընդ իւրում ազգակցիմ Խոսրովու տրքային Հայոց»: «Եւ խոյս ետ թագաւորն Հայոց Խոսրով յիւրմէ եղբարցն, նոյն ի Սանհասանայ յարքայէն Մազթաց: Դարձայ՝ երբ Սանհասանի զուխը բերում են Խոսրովին, սա իբրև հաս լալ սկսաւ. ասէ. Եղբայր իմ էր, ազգաւ Արշակունիւ: Այսպես ուրեմն, «եղբայր» բառը գործածվում է Արշակունիների համար ոչ իսկական իմաստով, այլ իբրև «ազգակից»: Այս խնդրն սպառնում է համարելով՝ անցնենք Պրոկոպիոսի հատվածին:

Տաշյանն արդեն նկատում է. «Պրոկոպիոսի խոսքերը՝ թեև միմյանք՝ բոլորովին այլապէս ալ կրնան հասկացվիլ. այսինքն սույն խոսքական մասն Արշակա՝ Արշակունցից Երմեդդրիմ վրա առնելով: «Հոս» բայն ժամանակագրական կապակցութեան համար խոսքերը: Ոչ թե օղակաւ ալ կրնան հասկացվիլ, այլ հենց այդպէս միայն կտրելի է և պիտի հասկանալ: Պրոկոպիոսը խոսում է Հայոց երկու թագավորական տոհմերի ծագման մասին. մեկը, հինը, — գրում է նա, — հայերից է սերված, մյուսը, Արշակունիին, ոչ թե հայերից, այլ Գործական տոհմից: Արշակունիների ծագումը բացատրելու համար՝ նա խոսում է նախ Գորակաստանի Գործի իշխողների մաս-

սին, — որոնք թագավորել են այնտեղ հինգ հարյուր տարի մինչև Ալեքսանդր Սելևրի ժամանակը, — և ապա ավելացնում է. «և այն ժամանակ [այսինքն Պարթևական թագավորության սկիզբներում] Պարթևաց թագավորներին մեկն իր եղբայր Արշակին նորոգեց Հայաստանի թագավորը, նվաճեց և նա, ինչպես շարունակությունից իմանում ենք, շարունակելու ոչ ոք չկարձի, թե հայերից են սերված Արշակունիները, որոնք եթե քանիսի տարի խաղաղ ապրել են (Պարսկաստանում իշխող) ազատտեմի հետ» և այլն։ Որ Գրոհոպիոսը Հայաստանի երկու թագավորական տոհմերի ծագման մասին է խոսում, և որ նա ասում է, թե Արշակունիները հինգ հարյուր տարի խաղաղ ապրել են (Պարսկաստանում իշխող) իրենց ազատտեմի հետ, — այսինքն՝ այնքան տարի, որքան Պարթևներն, ըստ Գրոհոպիոսի, իշխել են Պարսկաստանում, — այդ ցույց է տալիս, որ նա հայ Արշակունիների ծագումը դնում է ոչ թե 222 թ., Ալեքսանդր Սելևրի ժամանակի մի Արշակից, Պարթևների վերջին թագավոր Արտավանի եղբորից, այլ Պարթևական իշխանության հենց սկիզբներից։

Գրոհոպիոսը վերևի մեջբերումի մեջ ընդգծված խոսքն առնում է Հայոց պատմության մի գրքից, քանի որ նա անմիջապես ավելացնում է՝ «որպես ասե իսկ Պատմութիւնն Հայոց»։ Նվ, իսկապես, մեր պատմական գրվածքներում եղել է այդ ավանդությանը, թե Պարթևական տերության սկիզբներում նրանց թագավոր Արշակ Մեծը թագավորեցրել է Հայաստանի վրա իր ողորդ Արշակին, որից և սերվել են հայ Արշակունիները։ Այդ ավանդությանը դանում ենք Սերեոսի Պատմության սկզբի մասում. «Եթայն ժամանակի թագաւորեցոյց Արշակ զորդի իւր զԱրշակ Փոքր կոչեցեալ ի վերայ աշխարհիս Հայոց ի Մծբին քաղաքիս, և այլն, «Արք» թագաւորէ Արշակն Փոքր կոչեցեալ՝ յամի հարիւրերորդի քսան և իններորդի թագաւորութեանն Արշակայ հաւր իւրոյ՝ ի վերայ Հայաստան երկրի՝ ի Մծբին քաղաքի, եղբարբ իւրով Վաղարշակաւ։ և այլն՝, նույնը նաև Մովսես Խորենացու Հայոց Պատմության մեջ (Ա. 9. և այլն), միայն «Արշակն անվան փոխանակ՝ Վաղարշակ, և Արշակ մեծ, արքայ Պարսից և Պարթևաց... սա թագաւորեցոյցանէ զեղբոր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց, և այլն. Թերևս այդ միևնույն ավանդությանն եղել է նաև Բուզանդի Հայոց Պատմության սկզբի մասի մեջ, որ չի մնացել, և սրանից է այդ ծանոթ եղել Գրոհոպիոսին, քանի որ կարծում են, թե այդ հեղինակն ուրիշ զեպքում ոգտըվել է Բուզանդից։

Այսպես ուրեմն, մեթոդից վերաբնում և Արտավանի եղբայր Արշակի, Յուլի և Խոսրով քաղապորի գոյությունը, որ սխալ հասկացման արդյունք է՝ Հեռաբար նույն սխալի հետևանքով է նաև Արշակի, նույն և Խոսրով թագավորի իշխանության սկզբի տարին դնել 222 թվականը, ուրեմն և մինչ այդ մեռած համարել Տրդատ Բ.-ին։

Այդ կարծեցյալ Արշակի, նույն և Խոսրովի սպանման 238 թվականը, որ ունին Խալաթյանը և Մորգանը, ուրիշ բան չէ, եթե ոչ Արտավանի ըսպանման թվականի, 228-ի վրա ավելացրած 12 թիվը։ Իսկ այս 12 թիվը

1 Պատմ. Սերեոսի եպի-կոպոսի ի Հերակլոս, Թեֆլիս 1913, էջ 13, 15.

կազմել են ալապես՝ Խոսրովի, ըստ Ազաթանգեղոսի, Աբաթանի մահից հետո առաջին տարին (ուրեմն մեկ տարի) բան չի կարողանումանել. ապա տասը տարի արշավանքներ է զործնում և վերջին արշավանքից հետո՝ մահում, ուրեմն մեկ տարի, անցկացնելով՝ զարնանը պատրաստվում է նորից արշավելու Գարեհատանի վրա, բայց սպանվում է։ Ուրեմն անում է $1 + 10 + 1 = 12$ տարի Աբաթանի մահից հետո։

Այժմ տեսնենք, թե ինչ են տեսում երկրորդ երկու հեղինակները։

Տաշյանը (համար 4), չնայելով իր ճիշտ բացատրությունը կործնեցաւ Արշակի մասին, դարձյալ տառնց որեւէ հիմքի, Տրդատ Բ.-ին մեռած է դնում մոտ 221 թվականին. սրպեսզի հետո թագավորեցնեն Խոսրովին։ Նույնպես վարվում է և Աստուրյանը (վերեի համար 3), Խոսրովի առաջին տարին դնելով 222 թվականը։ Այս երկուսը, ուրեմն, պարզապես ընդունում են Խոսրով քաղալորի գոյությունն այդ շինծու թվականով. իսկ նրա սպանման տարին դնում են դարձյալ մոտ 250 թվականին։ Այս երկրորդ թվականը հարմարեցրած է 252 կամ 253 թվին, երբ Տրդատ թագավորը, ինչպես վերևում տեսանք, փախել է։ Միայն ըստ արտաքին աղբյուրի, այդ պահից Տրդատն արդեն տարիքով տարիքավոր է, զավակներ ունի. իսկ սրանց մոտ 60 երեխա է, ինչպես Ազաթանգեղոսի մեջ, Բացի այդ՝ սրովհետև արտաքին աղբյուրով այդ փախչող Տրդատն արդեն թագավոր է հիշվում, ուստի որբանք էլ նրա հորը մեռցնել են առաջին 252 թվականից առաջ՝ այդ երեխային թագավորեցնում են մոտ 250-ին և նոր փախցնում։ Ուրեմն իրենց ուզածն ունի, իբրեւ ինքնակամ, ենթադրությամբ, մի բան Ազաթանգեղոսից են տեսնում, մի բան էլ այլ աղբյուրից և իրենցից մի մար պատմությունն են հարմարեցնում։

Այս բանը շատ լավ զգում է Տաշյանը։ Նա բերելով Ջոնարի վերևում (ժանաթուխյան մեջ) գրված հաավածը, գրում է. «Արդ՝ թե Ջոնար ճիշտ պատմած է հոս՝ այս Տրդատը նույն չէ Ազաթանգեղոս Տրդատա հետ. վասըն դի այն մանուկ փախած կըվի, իսկ այս այդ կատարյալ է, որդի(ք) ունի։ Բայց եթե այս ալապես՝ ապա ուրեմն 253-ին կար բուրրովին ուրիշ թագավոր մը Հայոց. և որովհետև 217-ին ալ ուրիշ Տրդատ մը գտանք, կրնա հետևել թե մույն անգամ ե իրկու տեղն ալ հիշվածք։ Ասով բովանդակ Խոսրովու անձին վրա պատմածներն այս անձին վրա պետք կըլլա տեսուլ, և ըսել թե կամ Խոսրով անուն քաղալոր մը չկա և կամ բուրրովին ուրիշ գրից և ժամանակի մեջ է. նաև մեզի ծանոթ Տրդատա պատմությունը շատ ալակերով կըլլա, և այլ նման ենթադրություններ պետք կըլլա կուտել։ Եվ որպեսզի Տրդատա պատմությունը շատ ալակերով չլինի, նա ձգտում է ապացուցելու Խոսրով անունով թագավորի գոյությունն ունեցած լինելը. Որքնք են այդ ապացույցները։

ա) Այն, որ Նիդիքի մեջ կու. «նախնին մեր Տրդատա... ի աղայութեան փախուցեալ... սնաւ յերկրից մուսաց», այլև թե Տրդատ փախավ է ի հայրազանք մարտախոշոր իօրեղարք» (բնագծումները Տ-ինն են)։ Բայց այդտեղ Խոսրով անուն չկա, և այդ ամբողջը համապատասխան է Ազաթան-

զեղոսին և ոչ թե բոլոր մասին հակառակ: Ազաթանգեղոսի մեջ էլ Տրդատը փախած ժամանակ երեխա է եղել: այնտեղ էլ նրան սպանողները, իբրև Պարթևական տոհմի մարդիկ, Տրդատի հորթերայրերը կարող էին կոչվել: Ինչպես տեսանք վերևում սեղբայրը, սեղբայրութիւնն բաւերի գործառնության մասին:

բ) Եւայ Արշակունի թագավորաց մեջ կը գտնենք սովորություն մ'որով թոռան վրա կը կրկնվի հաժուհի (= պապի) անունը: Գիտենք Տրդատա որդիուն անունը՝ Խոսրով, և այս երաշխավոր է թե Տրդատա հայրն ալ նույնպէս կանգնանք, որուն վկա է՝ անկախ ՀԱՅԱԹԱՆԳԵՂԱ՝ նաև Բուզանդա, Նախ՝ որ և՛ Ազաթանգեղոսի, և՛ Բուզանդի մեջ Տրդատի հայրը Խոսրով է կոչվում, այդ հասկանալի է, որովհետեւ երկուսն էլ ծագում են նույն վիպական ավանդութիւնից, և բացի այդ՝ Բուզանդը Ազաթանգեղոսից անկախ չէ, նրան ծանոթ է Ազաթանգեղոսը, թեպէտ անունը չի տալիս, և նա միշտ նկատի ունի Ազաթանգեղոսի Պատմութիւնը: Բայց որ պապի անունը թոռան վրա են գնում, այդ անկրօմեղտորեն միշտ չի գործադրվել: Ուստի՝ որ Տրդատի որդին Խոսրով է կոչվել, դրանից կարելի չէ անհրաժեշտորեն եզրակացնել, թե Տրդատի հայրն էլ իրոք Խոսրով է կոչվել, ուրեմն և այդ վիպական Խոսրով անունով թագավորն իրոք գոյութիւն է ունեցել:

գ) Եթեքի տրքունի շիրմաց արձանագրութեան մեջ... կը հիշվի նաև (բերված է հունարենը և հայերենը)՝ «Խոսրով հայ՝ տեսեալ զարմացոյա: Տաշտը տեսա թառից հետա ավելացնում է ռազմաւ, որ չկա տեսարենում: Այս տաղը մեր խնդո տակ գտնվող Խոսրովի վրա առավ իջգրոն, որուն համաձիւն է և հուշմիտ, որ կը կարծես, թե «Խոսրով յուր Վազարը հորմեն Սեպախմուս Սեվերոսի քով պատանդ ուղարկված էր, և անոր հետ 202-ին Ն. Ք. ալցելութեան ելավ Մեծնոնի սյուն և Թերեի ալ հնաթյանց և այս տօթիվ գրված ըլլա այս արձանագրութիւնը»:

Այս ամենը լսել ենթադրութիւն է առանց որեւէ նիւթի: Զիջած արձանագրութիւնը ցույց է տալիս այն միայն, որ Խոսրով անունով մի հայ տղեկ է Թերեի հնութիւնները: Բայց որ նա պատանդ է եղել և այն, այդ լսել խոտեր են: Այդտեղ չենք չէ, որ Զորք դարի սկզբում պարթեւ վագն արքայազնին իրեն այդպէս պարզ կերպով տեսա կայիր և ոչ թե «Պարթև» կամ «Արշակունի»: Ազաթանգեղոսի մեջ անգամ այդ թագավորական տոմը զիտ միայն աշայեւ է անվանվում: Այսպէս, որքանով Տրդատը Հորթաթիւի համար պարտիտ տուած է, «Զի գիտնաց աշխարհն և զհոռմաց քաջ գիտեմ, և զմեր Պարթեաց կողմանն, վասն զի բնութեամբ իսկ է մերս: Անակի համար ասվում է. «Պատասխանի ետ Պարթևն». «Էլազմեցաւ Պարթևն. «Իբրև զայն լսէր Պարթևն. «Երդի Անակայ Պարթևի, նույնպէս Տրդատի հրովարտակի մեջ. «Նէ ի մեր գիւցախաւն Պարթեաց հասցէ այցելութիւնն. «Յեառառնեկ և Յեառառնեք մեր Արշակունեաց, Այսպէս և Բուզանդի մեջ:

Այսպէս ուրեմն, ոչ մի կերպ չի ապացուցված Խոսրով անունով թագավորի գոյութիւնը 3-րդ դարում: Բայց չնայելով դրան՝ գտնում ենք և հետևյալն այդ Խոսրովի մասին:

Է. ԱՆՈՒՄՆԻ՝ *Տրդատ Բ. (218—263)։ Սա Պարսկներից փախչում է Հռոմայեցոց երկիրը։ Ապա թագավորում հավանորեն 261 — մոտ. 267 թ. Խոսրովը, Տրդատ Բ.-ի կրտսեր եղբայրը, որ պահված էր հռոմեական երկրում։ Աղբյուրը չի հիշված։ Վեղալին աղբյուրները նրան, այսինքն՝ Սասանիդին, դարձնում են Արտաշիր ժամանակակից՝ շփոթելով սրան իր եղբայր Տրդատի հետ։ Շապուհի խաղաղամեջով սպանվում է Սոսրովը, ազատվում է որդին՝ Տրդատ, որին, ազգային ավանդությամբ, փախցնում են հռոմեական երկիրը։ Նա թագավորում է քսմ տարեկամ հասակում 267 թ.։ Ներսեսի հարձակման ժամանակ 295 թ. փախչում է հռոմեական երկիրը և ապա նորից թագավորում է 297 թ. Գալերիոսի հաղթություներից հետո։*

Ահա մի պատմություն, որի մեջ ամեն ինչ կոկված է։ Վիպական Սոսրով Մեծը նույնացրած է Տրդատ Բ.-ի եղբայր մի Սոսրով թագավորի հետ, որի գոյությունը հայտնի չէ ոչ մի տեղից։ Աղբյուրն չեն մտածում ոչ միայն նախորդ, այլև հետևյալ հեղինակները։

Զ. ՄՈՐԳԱՆ՝ *Տրդատ Բ., որ կոչվում է Սաև Խոսրով Ա. Մեծ, 217—238. Տրդատ Գ. 250—330.*

Նվ վերջապես՝

Դ. ԳՄԻՐԱԳՈՅԱՆ՝ *ՎՏԻՂԱՏԻ. ըստ Հայոց Սոսրով, որդի Վաղարշուհ, թագավորել է մինչև 250-ական թվականները, իսկ Տրդատ Գ. 297—337, Ինչպես վերևում բացառությամբ կարելի է տեսնել, հիշված յոթ հեղինակները յոթը տեսակ պատմություն են գրել, նախ՝ այն պատճառով, որ իրենց չհիմնավորված ենթադրությունները համարում են պատմություն, ապա՝ աշխատում են պատմությունը հարմարեցնել վիպական ավանդությունը։ Վեպի մեջ, անշուշտ, կա պատմականություն, բայց կարելի չէ գրանից պատմություն հանել, — այստեղ խոսքը պատմական տոմարի և դեպքերի ու թվականների մասին է, — այս կամ այն ենթադրություններն անելով, ինչքան էլ արտաքին աղբյուրների օգնությունը լինի։ Տրդատ Բ.-ին վաղ մեղցնելու ոչ մի հիմք չկա։ Արտաքին աղբյուրով՝ 253 թվին փախչում է Տրդատ թագավորը, իսկ նրա որդիներն անցնում են պարսիկների կողմը։ Կնդանակի՝ այդ փախչող թագավորը երեխա չի եղել։ Կարելի չէ այդ թվականը նկատի ունենալով՝ առնել 250 կամ մոտ 250 թվականը. այդ ժամանակ ըստ կամ մեղսել մի թագավոր, վեպին հետևելով՝ նրա անունը Սոսրով կոչել, և՛ այս կամ այն կերպ բացատրելով՝ այդ փախչող թագավորին երեխա դարձնել, որպեսզի դուռնա Տրդատ Գ. և հարմար դա Աղաթանգեղոսի պատմությանը, թե Սոսրովի որդի Տրդատին երեխա ժամանակ փախցնում են հռոմեական երկիրը։ Բայց երբ ըստ Աղաթանգեղոսի Պատմության՝ հաշիվներ են անում, Սոսրովն սպանված է լինում 238 թ., ուրեմն և նրա որդի երեխա Տրդատին այդ ժամանակ են փախցրած։ Բայց զը-*

¹ *Revue Asiat. Etudes historiques sur le peuple arménien*, Paris, 1928, էջ 132-135, 138 և հետո։

² *Jacques de Morgan, Histoire du peuple arménien*, Paris, MCMXIX, էջ 96 և հետո, 102.

³ Փն. Գամ. Հայ. Գ. էջ 303, 306, Բ. 268.

բան ուշադրութեամբ չեն դարձնում: Եվ այդ բաժանան չէ, այս փախուցումը
երևալիս մոտ 250 թ. արդեն թագավորած են գնում, որովհետև արտա-
քին աղբյուրի մեջ փախուցողը թագավոր է: Դանի հակառակն ապացուցող
աղբյուր երևան չի եկել, այդ 253 թ. փախուցող թագավորը պետք է համարել ոչ
թե Տրդատ Գ.-ը, այլ Տրդատ Բ.-ը, որ թագավորած է, ուրեմն, 216-ից մին-
չև 251—252 կամ 253 թ.:

Կարող է Տրդատ Բ.-ը նաև Խոսրով կոչված լինել, թե չէ, և կամ
արդյոք նա ունեցել է Խոսրով անունով մի եղբայր, որ թագավորել է նրա-
նից հետո ու սպանվել է և այդ Խոսրովի որդի մանուկ Տրդատին փախցրել
են, — մենք այդ ասելու համար և ոչ մի հիմք չունենք: Եթե այդ հավաստի
լիներ, ապա վիպական Խոսրով անվան պատմականությունը, թեպետ
անաքրոնիզմով, շատ պարզ կլիներ: Բայց այդ ստեղծված է միմիայն վեպի
հիման վրա: Մենք այն միայն կարող ենք ասել, որ Արտաշեսի (226—241 թ.)
ժամանակ, ըստ Ազարթանգեղյան վեպի, Հայաստանում թագավոր է Խոս-
րով անունով մեկը: Իսկ վեպը պատմություն չէ որդի իմաստով:

Հիմա հարց է, եթե Մեծն Խոսրովը հավաստի պատմական չէ, ապա
Թնչպես պետք է բացատրել, որ Ազարթանգեղոսի մեջ Արտաշեսի ժամանակ
կա Խոսրով անունով թագավորը — Վեպի մեջ (Փ. Բուզանդի մեջ) կա նաև
Խոսրով Կոտակ (Փոքր), վիպական Մեծն Խոսրովի թուր, նրա անունն ևս
հայտնի չէ արտաքին աղբյուրներից, Բայց նա կապված է կաթողիկոս-
կան առհմի եկեղեցական անձերի — Արիստակեսի, Վրթմանի մասին եղած
գրությունների հետ և մոտ հարյուր տարով մոտ է Բուզանդին: Ուստի և
պատմական հիշողությունն այս թագավորի անվան մասին թե վեպի և թե
պատմականության մեջ կարող էր կենդանի պահված լինել և ան-
հրաժեշտորեն պետք է ընդունել, որ պատմական է եղել այդ մեկ Խոսրովը,
Տրդատ Գ.-ի որդին: Իսկ վիպական առաջին Խոսրովը, Մեծ Խոսրովը, լսել
մի ստեղծված գործող անձ է: Վեպերի մեջ պատահում է, որ մեկ գոր-
ծող անձը երկուսի է բաժանվում: Դրա համար օրինակներ կան նաև մեր
«Սասնա Շուքրի»-ի մեջ, Այստեղ մի շարք վարիանտների մեջ ունենք
երեք սերունդ՝ Սասնասար — Դավիթ — Մհեր: Բայց կան մի շարք վարիանտ-
ներ ևս, որոնց մեջ Մհերի համար ստեղծվել է մի պապ, Մեծ Մհեր կամ
Առյուծաձև Մհեր անունով, իբրև Սասնասարի որդի, և այնուհետև Մհերն
ինքը կոչվում է Փոքր Մհեր, և այսպիսով կազմվել է չորս սերունդի հա-
ջորդություն՝ Սասնասար — Մեծ Մհեր — Դավիթ — Փոքր Մհեր: Դրա համար
իբրև պատճառ ծառայում է սովորաբար այն, որ մեկ մեկ երեխաների վրա
պապի անունն են գնում: Բավական է, որ վիպասաններից մեկն ասի՝
երեխի անունը դրին պապի անունով Մհեր, — և Սասնա Մհերի համար
կան պատճառներ, որոնց մեջ Փոքր Մհերը հենց այդպես պապի անունով է
կոչվել, — և հաճախ ստեղծվում է, — և Սասնա Մհերի մեջ ստեղծվել է, — մի
նոր գործող անձ — վիպական Մեծ Մհերը, եվ ոչ այդ միայն, Մի երկու
պատճառի մեջ՝ Մեծ Մհերին մի որդի է լինում, վիպասանն ասում է. «Ա-
սուն գրին Դավիթ, պապի անվան վրա» — և հաճախ ստեղծվել է մի երկ-
րորդ Դավիթ, Թլուր Դավիթ պապը, որի որդին է Մեծ Մհեր, թուր Դա-
վիթ, սրա որդին Փոքր Մհեր, և այսպիսով առաջ է եկել հինգ սերունդ՝

Մանասար—Դավիթ—Մեծ Մհեր—Թլոր Դավիթ—Փոքր Մհեր, Պանի որ
Մեծն Խոսրովի պատմականությանը չի հաստատված որևէ հավաստի պատ-
մական աղբյուրից, պետք է կարծել, որ այդպիսի մի ձևով ծագել է և ձեռ-
քով Մեծն իբրև պառ, Պատմական Խոսրովի իր փոքր ժամանակի, կարճ հասակի
պատմական¹ կոչված է եղել Խոսրով Կոտակ (=Փոքր), ըստ Խորենացու
(Գ. 81)² «Փոքր Խոսրով», իսկ աշխուհեմ համապատասխան ձևով ստեղծ-
վել է պառ Խոսրովի իր Մեծն ժակդիրով, նվ աղբյուրով սկզբնական երեք
վիպական սերունդները՝ Վաղարշ—Տրդատ—Խոսրով զարմել են չորս՝ Վա-
ղարշ—Խոսրով Մեծն—Տրդատ—Խոսրով Կոտակ (Փոքր)։

Երբ մեկ վիպական դրեմոյ անձը երկուսի է բաժանվում, պառ և
Թոռ (կամ հայր և որդի), նոր ծագած անվանը սովորաբար վերագրվում են
մյուս հերոսներից մեկի կամ մյուսի այս կամ այն դեպքերը, հասկանալի
է, տարբեր պատումների մեջ հաճախ նաև տարբեր ձևերով և տարբեր դեպ-
քեր, Այսպես, օրինակ, «Սասնա Մարտի» մեջ Մեծ Մհերի վրա պատմում
են Սասնաբեր վեպից դիպվածներ, ինչպես են՝ Սասնաբեր (կամ իր եղ-
բոր)՝ կենսակցությունը Մարտ Մելիքի կնիջ հետ և նրանից Մարտելիքի
ծնվելը, իր որդիներին՝ Դավիթին և մյուսներին հանձնելը Մարտելիքին,
որ սա պահի նրանց, նման ձևով և այս ստեղծական Խոսրով Մեծի վրա
պատմված են աշխարհի դեպքեր, որոնք պատմական Վաղարշին ու իր
որդի Տրդատ Բ.-ին են, կամ ապում են նաև վիպական Վաղարշի (ըստ
Մ. Խորենացու պատմության) ու վիպական Տրդատի վրա ես Այստեղ էլ կրկն-
վում է, ուրեմն, միևնույն վիպական երևույթը, ինչ որ ուրիշ դեպքերում
Այս կամ այն վիպական հերոսին վերագրվում են ուրիշ վիպական հերոսի
կամ պատմական անձի մասին պատմածները, որովհետև «կապն անունի և
մոտիվի միջև շատ թույլ է. անունները հաճախ փոխվում են, մոտիվներն
ավելի կայուն են»³, Մոտիվն այս դեպքում պատմականորեն այն է, որ պատ-
մական Տրդատ Բ.-ն առնում է մեկ՝ իր հայր Վաղարշի վրեժը, մեկ էլ իր
ազգակից Արտավանի վրեժը, Հիմա այս մոտիվներից վիպական Մեծն Խոս-
րովին, նայելով պատումներին, վերագրվել է կամ հոր, Վաղարշի, կամ որ-
դու, Տրդատի դերը, որովհետև նա, մասնավոր Վաղարշ—Տրդատ հաջորդությամբ
մեջ, թե մի կողմից դարձել է Վաղարշի որդին, ուրեմն Տրդատի փոխանակը
և Վաղարշի վրեժ առնողը, մյուս կողմից դարձել է Տրդատի հայրը, ուրեմն
Վաղարշի փոխանակը, սղանվողը, որի վրեժն առնում է Տրդատը, Այսպես՝
ըստ Խորենացու պատմության (Բ. 65)⁴ Խոսրովը (փոխանակ պատմական Տրդ-
ատ Բ.-ի) առնում է Վաղարշի վրեժը, իսկ ըստ Աղաթանգեղոսի պատմության՝
Խոսրովը (փոխանակ պատմական Տրդատ Բ.-ի) առնում է Արտավանի վրե-
ժը, բայց փոխանակ և նա դարձել է Տրդատի հայրը (փոխանակ Վաղարշի)
և նրա վրեժն առնում է որդին Տրդատը։ Նվ վերջապես՝ ըստ Սերեբուի պա-
տման՝ այդ Մեծն Խոսրովի օրով են Հայաստան դալիս Մամիկ-Նանիկը,
իսկ ըստ Խորենացու պատմության՝ Մամիկն Տրդատի ժամանակ է գալիս։ Այս-
պես ուրեմն, ինչ որ Խոսրովի համար պատմվում է՝ վեպի մի կամ մյուս
փոփոխակի մեջ կա նաև կամ Վաղարշի, կամ Տրդատ Բ.-ի համար պատմված

¹ „Сердский вое“, под. ред. Н. Крыцова, Academia, էջ 119.

4. Տրդատի վեպը:—Այս վեպը կազմված է հետևյալ մասերից.

ա) Հորը, Խոսրովին, դավադրությանը սպանում են:

բ) Թշնամին, Պարսից թագավոր Արտաշիսը, տիրում է Հայաստանին. «Անգ ուն պրծեալ ապրեցաւ տէր ի հինէ անտի յորդոցն Խոսրովու թա- դաւորին Հայոց մանկիկ մի փոքրիկն: Դայակները Տրդատին փախցնում են Հույների (—Հռոմայեցոց) կողմերը, կայսեր պալատը (շէ դուռն կայսերն):

գ) Տրդատն այնտեղ անվում, մեծանում է, քաջություններ է գործում, և երբ նա կայսրի փոխտնակ մինամարտում, հաղթում է Գոթերի թագա- վորին, այն ժամանակ Հռոմայեցոց թագավորը թագադրում է նրան և օչ- նական գործ տալով, ուղարկում է Հայոց աշխարհը, Այստեղից նա կազմվ քյում է պարսիկ գործերը և ինքն իշխում իր հայրենական տերությանը:

դ) Նա իր ժամը չէ կյանքում շարունակում է կռվել պարսիկների դմ. «Ջամնայն ժամանակս իւրոյ թագաւորութեան աւերէր, քանզէր զերկիրն Պարսից... զժամանակս կենաց իւրոց պատերազմեալ և առնէր մարտից յաղթութիւն... և խնդրէր զքէնս վրիժուց իւրոց հայրենեացն»:

ե) Նրա և Հռիփսիմի գեպքը:

զ) Ըստ Խորենացու պատումի՝ նա կազմում է հյուսիսային ազգերի դմ, նվ վերջնապես՝

է) Նրա որով Մամիկոնյանների նախնին, ըստ Սեբեոսի՝ Մամիկ-Կո- նակ, ըստ Խորենացու՝ Մամկոն գալիս է Հայաստան:

Ի՞նչ գեպքերի հիման վրա է առաջ եկել այս վեպը, Այստեղ գտնում ենք երեք պատմական Տրդատների հիշողություն հարակցված ի մի: Մի- ջուկը կազմում է Տրդատ Բ.-ը:

ա) Տրդատ Բ.-ի հորը, Վաղարշին, դավադրությանը, ինչպես տեսանք, իր կնոջ հետ դնում են բանտ, ուր և մեռնում է նա:

բ) Աղատվում է Վաղարշի որդին, Տրդատ Բ.-ը, որ հետագայում պոր- սիկներից փախչում է հռոմեական երկիրը, և Հայաստանը ենթարկվում է պարսիկներին:

Տրդատ Բ.-ի երկու թշնամիները վեպի մեջ վերածվել են մեկի: Քանի որ նա հռոմայեցիների հետ շատ շուտով հաշտվում է ձեռնառու պայման- ներով, և այնուհետև հռոմայեցիները բարեկամ են մնում հայերին, իսկ պարսիկները թշնամեական հարաբերության մեջ, ուստի վեպը, ըստ Ագա- թանգեղոսի պատումի, պահել է Տրդատի և իր հոր համար մեկ թշնամի— պարսիկները: Բացի այդ՝ ինչպես որ Վիպասանքի մեջ Մենն Տիգրանի թոռ Արտաշեսը գործել է մի երեխա, որին փախցնում են պարսիկների մոտ, նույնպես և այս վեպի մեջ ճոռմայեցիների մոտ՝ փախչող Տրդատը զարնել է երեխա: Դա վիպական գիծ է. իդեալական հերոսը չի կորույ մեծ հասա- կում փախչել. նա մասնով հասակում է փախչում օտար երկիր: Շարունա- կենք համեմատությունը:

զ) Հռոմայեցիների օգնությամբ իշխել են Հայաստանում մի քանի Տրդատ անունով թագավորներ: Այսպես՝ Տրդատ Ա.-ը Հռոմում է թա- դադրվել: Նույնիսկ Տրդատ Բ.-ին հռոմայեցիներն օգնել են Շապուհ Ա.-ի դմ, որ մտել էր Հայաստան. և վերջնապես՝ Տրդատ Գ.-ը, որ պատմական անձ է, թագավորել է վերջնապես 297 թվականին օգնությամբ հռոմայեցի-

ների, որոնք պարսկներին երկար ժամանակով դուրս են քշել Հայաստանից Պարսից Ներսէն թագավորի վրա տարած հաղթութեամբ:

դ) Որ վիդական Տրդատն իր ամբողջ կյանքում ազամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեանն պատերազմում է պարսկների դեմ և ավերում նրանց երկիրը. դա հիշողութուն է անպայման Տրդատ Բ.-ի պատերազմների ընդդէմ հռոմայեցիների և պարսկների՝ մինչև իր փոխելը: Վրան կարող են ավելացան լինել նաև Տրդատ Գ.-ի ժամանակ մինչև 297 թվականը պարսկների դեմ տրված պատերազմների հիշողութունները: Բայց այս թագավորը չի կարող լինել վեպի պատմական հերոսը, քանի որ նրա թագավորութեան ժամանակ՝ սկսած 297 թվից խաղաղութուն է եղել: Հետագայում հոգևորականութեան ավանդութեամբ վիպական Տրդատի գեղեցիկը համարվել են այդ քրիստոնյա թագավորի արարքների հիշողութուն:

ե) Տրդատի և Հռիփսիմեի գեղջը, որ ամուսնութեան մի թոփառական վիպական մոտիվ է, Տրդատ Բագրատունու և Նաղենիկի մասին պատմված գրույթի մի փոփոխակը, մտել է Տրդատի վեպի մեջ:

զ) Հյուսիսականների արշավանք և ապստամբութուն եղել է և՛ Տրդատ Բ.-ի, և՛ Տրդատ Ա.-ի ժամանակ: Ինչպես հայտնի է, այս վերջին թագավորի օրով արևմտեան արշավում, ասպատակում են Մարաստան և ապա անցնում Հայաստան: Տրդատ Ա.-ը նրանց դեմ է դուրս գալիս կովով, Մարտի ժամանակ նա թև փռելով մի ևս՝ և անկանէր ի ձեռս նոցա. քանզի մի ոմն ի նոցանէ ընկեց պճրառն ի պարանոց նորա, և քարէր զնա՝ եթէ չէր նորա աճապարեալ հատանել զայն սրով: Նման բան պատմված է և վիպական Տրդատի մասին: Հյուսիսականների դեմ կովի մեջ Բասիլների թագավորը չէր եղել յապագային գնդգետ, քանի որ պարսն, և կարգութեամբ ձգեալ յետուստ կողմանէ, ճարպ դիպեցուցանէ յուս ձախակողմանն և յանութ տշկակովանն. զի էր վերացուցեալ զձեռն անել ումեք առեւորդաւ և ինքն վառեալ վերս պաղպաղեալ, ուր ոչ գնէին նեղք: Այս քանզի ոչ կարաց շարժել ձեռամբ զհակառիկ, զլաւնիք առ երկմարին: և ոչ տխլափ ինչ յաթափեաց մարակել զերկմարն, քան թէ անհակ ձեռամբն ի ներգեայն աճապարեալ սկսային, և սաստկութեամբ ուժոյն զլերեաւ ցանցեալ, ի ճաւ դիպեցուցանէր զերկսայրին, և ընդ մէջ կտէր զայրն և ընդ զոյգ պարանոցին զլուրի երկմարին: Իսկ զարացն ամենայն տեսեալ զթագաւորն իւրեանց և զզօրաւորն միջակտուր յայնպիսի ահաւոր բողկէ լեալ, ի փախուստ գաւնային. զորոց զեւտ մահալ Տրդատ, վարէ մինչև յայիտուն Հռոմացի: Տրդատ Ա.-ի կոխվը հյուսիսականների դեմ, որ մտել է վիպասանքի մեջ և պատմվել Արտաշեսի վրա, բնականորեն ավելի մոտրամասն երգվել ու պատմվել է և իրեն Տրդատի անվան վրա:

է) Վիպական Տրդատի օրով Մամիկոնյանների նախնու գալը Հայաստան՝ գովար է սխեմ պատմական Տրդատի նա կապել. այդ մասին հայտնի չեն պատմական տեղեկութուններ:

Այսպես ուրեմն, պատմական Վաղարշի որդի Տրդատ Բ.-ի օրով կա-

¹ Պարսկական, Մեծ Պատմ. Հայոց, Բ., էջ 243. անվամբ է Բագրատունի:

² Մ. Պարսկացի Բ. 85:

առարկած զեղաբերից, — ազգվելով, — նաև մյուս Տրդատների նման զծերից, — կազմվել է Տրդատի վեպը, այն էլ բուրբուրի նման Արտաշեսի վեպին, ինչ որ արդեն տեսել ենք «վեպի հորինվածքի» մասին խոսելիս:

Ե. Խոսքով Կոտակ:—Այս Թագավորի, ինչպես և սրա հաջորդ Տիրանի տնունը հայտնի չէ արտաքին ազդյուններից. բայց կարելի չէ ասել, թե դրանք ստեղծական տնեք են: Ինչ որ վիպվում է այս Խոսքովի մասին, ընդհանուր առմամբ պատմական է: Կոստանդինոս Մեծի մահից (337 թ.) հետո, երբ Պարսից Շապուհ Բ. Թագավորը (310—379) Միջագետքում պատերազմ է սկսում Հռոմի դեմ (338 թ.), այդ ժամանակ Հայաստանում ներքին խռովություններ և պատմաբուխություններ են տնում: Պարսիկների կողմն անցածները ասպատակություններ են տնում նույնիսկ հոմեական օսհմանային երկրներում: Թագավորն (տնունը հայտնի չէ) ստիպված է լինում փախչել պարսկասերների ձեռից: Բայց Կոստանդ կայսրը (337—361) շատով, 339 թ., մտնում է Հայաստան և երկիրը խաղաղեցնում ու կարգավորում է հռոմեական գերիշխանությունները: Այնուհետև մինչև 359 թ. հայերը Հռոմի կողմն են և 351 թ. Կոստանդ կայսրին հեծելազորով օգնում են Արևմուտքում նրա վարած պատերազմի մեջ:

Խոսքով Կոտակի վեպի մեջ Վաչե զորավորի համար ասվում է, թե «երթնալ էր նա ի ժամանակին յայնիկ գերվայն ճանապարհս ի կղզմանս Թուրքաց, թե ինչու, այդ հայտնի չէ: Դա, տնունը, մի հիշողություն է կայսրին Արևմուտքում հեծելազորով օգնելուն: Հիշվում են նաև ներքին խռովությունները Հայաստանում և պարսկասեր զավաճանները: Թագավորը փախչում է, բայց ոչ պարսիկների կողմն անցածների ձեռից, այլ Մագաթների արշավանքի ժամանակ: Այս ամենով հանգերձ՝ ըստ վեպի էլ երկիրը ներսում ընդհանրապես խաղաղ է մնում: «Խաղաղութիւն և շինութիւն, մարդաշատութիւն և առողջութիւն, պաղպաղութիւն և ստացուածաշատութիւն և յահեկանութիւն ... յամս յաւուրս սոցա տնալ բազմացան (Թուրքաց Գ. 3), «են կայր արքայի հանգստի, և աշխարհ ի շինութեան և ի խաղաղութեան զամենայն աւուրս կենաց նոցա» (Գ. 3):

Զ. Տիրամի վեպը:—Այս Թագավորի մասին ոչինչ հայտնի չէ արտաքին ազդյուններից: Որ Տիրանը, Հայր Մարգարեի գրգռելով, կոտորել է տվել Արծրունիներին և Ռշտունիներին (Բուզ. Գ. 18), դրա պատմականությունը որոշելը նախադրել է, իսկ նրա գերվելու և հուրացվելու պատմությունը (Բուզ. Գ. 20) իսկական վիպական պատմվածք է: Տիրան Թագավորի ձեռք հիշվում են և Վրդասանքի մեջ (Խորեն. Թ. 62): Վրպական է և Տիրանի գերեզմանությունը պատմաբանի պատերազմը Հռոմի և պարսիկների միջև: Արդարև այդ պատերազմն ունի պատմական հիմք, բայց դա այլափոխ հիշողություն է Պարսից Ներսեհ Թագավորի և Գալսերիոսի ճակատամարտի, որ, ինչպես տեսանք վերևում, կատարվել է Հայաստանում 297 թ.: Վրպական տնաքոռնիզմով այդ պատմվում է Ներսեհ Թագավորի (294—303) և Վազես կայսրի (304—378) համար, որոնց համաձայնությունը և Թագավորել է

¹ Գ = բազմաշնան, Գնն. Գոմմ. Հայց, Գ. Թիֆլիս, էջ 9 և հմն. ըստ Հուլիանոսի հետ: Գ = Թ Բ. Տիգ. Գոմմ. հմ. Բ., 463, Ժան. 1.

Տիրանի որդի Արշակը, Այս անաքսոնիզմը հենց՝ պարզ ցույց է առօրին աղքատ մեծքի վիպական ծագումը: Թե և Վեպի մեջ Ներսէի և Գալերիոսի պատմական ճակատամարտն է պատմված, այդ շատ պարզ երևում է մասնաժամանակների նույնութունը, Ըստ Վեպի՝ Վազես կայսրն անձամբ իր բանակի գլուխ անցած մտնում է Հայաստան ընդդէմ Պարսից թագավոր Ներսէի: ճակատամարտից առաջ նա երկու մարդով, ծախված, մտնում է պարսից բանակը, լրտեսում: Ներսէի ահազին բանակը պարտութուն է կրում, նա ինքը մինակ փախչում է, նրա բոլոր ճամբարը, գանձը, բամբիջը, կանայքը բոլոր սառցվածքով ու ծառայողներով գերի են ընկնում հույների (հռոմայեցիների) ձեռքը: Այս հայտնությունից հետո՝ Վազես կայսրը Ներսէի կանանցն արձակում է մեծ պատվով, և բոլոր գերիներին եւ է դարձնում: Այս ամենը պարզապես վիպական հիշողություն է Գալերիոսի և Ներսէի ճակատամարտի, որ տեսնել վերհում, Եթե նույնիսկ մի կողմ թողնենք անաքսոնիզմը, չէր կարող պատահել, որ Վազեսի օրով էլ Հայաստանում աղապիսի մեծ ճակատամարտ կատարված լինեք պարսիկների ու հռոմայեցիների միջև, և աղապիսի ամբողջ պարտություն կրեին պարսիկները, ու դրա մասին չհիշեին արաբներն հեղինակները: Ձգտալիս մոռանալ և այն, որ Բուզանդը միայն երկու տունն դիտե Պարսից թագավորներին— Ներսէի և Շապուհի, և վերջինս տալիս անգամ երևում է միայն Արշակի օրով (Գ. 16): Այս առանձնապես նկատելի պիտի ընկնայ, որ Բուզանդի պատմածը (Գ. 20, 21) իր ամբողջությամբ պարզապես մի վիպական պատմվածք է Թե իր ձևով և թե իր բովանդակությամբ:

7. Արշակի քաղաքը:—Վեպի այս մասի մեջ կան մի քանի պատմական հիշողություններ: Պատմական է Արշակի ամուսնությունը Ողոմպիի հետ (Բուզ. Գ. 15): Կոստանդ կայսրը, Արշակին իր կողմը գրավելու համար, նրան ամուսին է տալիս իր մեռած եղբայր Կոստասի (337—340) նշանած Ողոմպիին: Այս ամուսնությունը հիշվում է 357 թ., ուրեմն կատարվել է 350 և 357 թվերի միջև, խաղաղության ժամանակ: Պարսից զորավարները 355 թ. սկսում են ներգրավուն պատճառել Միջագետքին և Հայաստանին: Բայց խաղաղությունը չի խանգարվում: Պատերազմն սկսվում է 359 թ., Կոստանդ կայսրը 360 թ. մեծ բանակով գալիս է Կեսարիա, կանչում է իր մոտ Արշակին, որ խոստանում է համատարիմ մնալ հռոմայեցիներին և մեծ ընծաներով վերադառնում է Հայաստան: Եվ նա համատարիմ է մնում Կոստանդ կայսրին, ինչպես և հետո Հուլիանոսին (361—363): Այս մասին հիշատակություն չկա վեպի մեջ: Ընդհակառակն, տյառեղ (Բուզ. Գ. 16, 18) պատմված է, թե Շապուհի հրավերով Արշակը գնացել է նրա մոտ, մեծ պատերազմի օտարել նրանից, երգվել է համատարիմ մնալ նրան, բայց հետո փախել է նրա մոտից և այլն, և այլն: Այս ամենը, հարկավ, պատմական չէ, լուրի վիպական պատմվածք է իր բոլոր մանրամասնություններով:

Գուցե պատմական հիմք ունեցած լինին ներքին միջադեպերը, որ են՝ Արշակավանի շինությունը, Հայր Մարգարիտի սպանվելը (Բուզ. Գ. 12, 14), Գնելի սպանությունը և այլն, բայց այդ հնարավոր չէ համաստել: Պատմական կարող է եղած լինել նաև Վազեսին ուղարկած պատգամավարությունը բարեկամության համար (ինչպես որ Արշակը Հուլիանոսին էլ պատ-

գամավորներ է ուղարկել սրտ թագաւորելու ժամանակ)։ Բայց որ Արշակը, Վաղնախ վրա բարկացած լինելով, վեց տարի շարունակ ավերել աված լինի հռոմեական հրկիրները մինչև Անկյուրիա (Գ. 11), այդ չի եղել և հիշողութուն է թերևս Մաքսիմինի դեմ վտրած պատերազմի, որ բերում է Եվսեբոսը։ Նույնպէս պատմական իրողութիւնն չէ և այն. թե 359—363 թվերին տեղի ունեցած պատերազմի ժամանակ Արշակը Շապուհին օգնելու համար՝ ջարդած լինեի հռոմեական բանակը Միջագետքում՝ Մծբինի մոտ՝ Վասակ զորավորի ձեռով (Բուդ. Գ. 20)։

Իսկ զօրքն Յունաց հասնալք,
Մածնալք բունակեալք էին
Իբրև գաւաղ առ ափն ծովու բազմութեամբք։

Պարսից զորքերը դեռ տեղ չեն հասել, Վասակն Այրարատյան գնդով հարձակվում է հռոմեական բանակի վրա, և

Առհասարակ ընդ սուր հանեալ կոտորէին,
Այնպէս զի ոչ ապրեցոցանէին ի նոցանէ և ոչ գմի,
Եւ առնուին զկապուտ.
Զաւար յունական զօրուցն,
Զի ոչ գոյր չափ կամ թիւ,
Որչափ լցան գոնծիւք և տնհամար կտրասեաւ,
Մեծաւ աւարաւն յղփուցան։

Շապուհը զրա համար մեծ պատիժներ էր ուզում անել և մինչև անգամ իր դուստրը կնութիւն տալ նրան, բայց Արշակը խաղալիք է գտնում արարատական խարդավանքի և նորից փախչում Շապուհի մոտից։ Այս ամենը պատմական չէ։ Ամմիանը, որ այդ պատերազմներին մասնակից է եղել և Ամիդի առման կոտորածից անգամ աված, ոչ միայն այդպիսի բան չի հիշում, այլ, ընդհակառակն, Արշակին անվտանգ է հռոմայեցիների մշտական և հաճախորդ բարեկամ։ Այդ վիպական պատուաւ ալլաւիսի հիշողութիւն է տնայական Միջագետքում Վաղարշի որդի Տրդատ Բ.-ի ընդդէմ հռոմայեցիների վարած աջող պատերազմների, որ երգվել է Արշակի վրա։

Չնայելով Արշակը հաճախորդ դաշնակից էր հռոմայեցիներին՝ Հուլիանոսի սպանվելուց հետո Հորթանոսը (363—364 թ.) Շապուհի հետ հաշտվելիս ընդունում է այն պայմանը, որով հռոմայեցիները հայերին չպիտի օգնեն, երբ պարսիկները հարձակվեն Հայաստանի վրա։ Այսպիսի մի կետ հիշվում է և Վեպի մեջ (Բուդ. Գ. 21), եւ պարսիկները 364 թ. սկսում են իրենց հարձակումները Հայաստանի վրա։ Արշակն և իր ժողովուրդն, ըստ Ամմիանի, չորս տարի շարունակ հերոսական դիմադրութիւն են ցույց տալիս իրենցից շատ ավելի մեծ ուժերով եկող պարսիկներին։ Այս պատերազմը, որ Վեպի մեջ պատմվում է չափազանց մանրամասնութիւններով, ըստ Վեպի՝ տևում է ամս աւելի քան զերեսուն (Գ. 20). «Զերսուն և զչորս ամս ետուն պատերազմ երկիրս Հայոց ընդ թագաւորին Պարսից» (Գ. 50). Վախճանը լինում է երկրի քայքայում և Արշակի կորուստը։

Այնուհետև վիպվում է: Թե ինչպես Շապուհը փորձում է Արշակին և Անուշ բերդի մեջ բանտարկել տալիս նրան, և վերջն Արշակը ինքնասպան է լինում: Ամբողջը վիպական գեղեցիկ պատմվածքներ են: Պարսիկներն ավերում և գերեզմարութուն են անում, առնում Արտագեթը և գերում ու չարամահ անում Փառանձեմ թագուհուն, հետո ինքը Շապուհն էլ դալիս է Հայաստան և ավերում լեռները գործում, այլև նույնն անում են Մերուստան Արժրուշին և Վահան Մամիկոնյանը (Բուգ. Գ. 54—59): Այս վիպական պատմվածքն իր հիմքում նույնն է, ինչ որ ժամանակակից Ամիրանի հաղորդածը: Սրա տակելով՝ Շապուհն Արշակի աչքերը հանել է տալիս: Արդյոք այս չէ՞ վիպի մեջ պատմվել Արշակի հայր Տիրանի վրա:

8. Պապ քաղաքը:—Սրա վեպն իր հիմքում պատմական է: Պարսիկների և Հռոմի միջև պատերազմը տեղի է ունենում 371 թ. գարնանը, և պարսիկները պարտվում են: Էտպես այս է պատմված, միայն վիպական ձևով, և կրկին պատմվածքներով (Բուգ. Ե. 1, 2, 4, 5, 8): Պատմական է նաև Պապի սպանվելը դավադրությամբ: Այս եղևնազործությունը Տրայանոսի, ըստ Բուգանդի՝ Տերենտի ձեռով տեղի է ունեցել 374 թ. ամռանը: Հաջորդ թագավոր Վարադգատի, ինչպես և երկրի կառավարիչ Մանուելի մասին ոչինչ հայտնի չէ արքայքին տղայունությունից: Հավանորեն զրանք ևս իրենց հիմքում պատմական են:

9. Պատմական եղիլաթյուն և վիպական բովանդակություն:—Երբ ասվում է, թե այսինչ վիպական դեպքն իր հիմքում պատմական է, կամ էսպես պատմական է, այդ չպետք է հասկանալ այն մտքով, թե վեպի մեջ հարազատ ճշտությամբ պատմված է պատմական եղիլաթյունը: Նույնիսկ պատմական համարված մասերի մեջ էլ վեպը պատմական է լուր այն չափով, որ դա հիմնված է մի կատարված իրողության վրա: Հաճախ մի երկու դիմն են միայն իրական եղիլաթյունից, ֆուսցածը բանաստեղծական մշակություներն է պատահած գեպերի, վիպասանների մտքի և երևակայության արդյունքը, ոչ միայն վիպական մանրամասնությունների, այլև գաղափարախոսության նկատմամբ: Վիպասանները հորինում են ամեն ինչ ժամանակի պահանջի համեմատ: Զենք կարող ասել, թե իրական պատմական երկեր են անգամ Արշակի և Պապի մասին այն պատմվածքները, որոնց պատմական ծագումը հավաստի է: Բավական է միայն այդպիսի մի հատված համեմատել ժամանակակից Ամիրանի պատմածի հետ, և իսկույն կերևա տարբերությունը և հասկանալի կլինի հատվածի պատմականությունը: Այստեղ կրեքնեք մեկը միայն համառոտ բովանդակությամբ:

Արշակի բանվեպուց հետո՝ Շապուհը Կյուղակ ներքինուն և Արտավազ զորավորին պատվիրում է առնել Արտագեթը, ուր ամբացած էր Փառանձեմը Պապի հետ: Կյուղակն Արտավազի հետ մոտենում է պարսպին. նրանց, իբրև պատգամավորների, թողնում են ներս մտնել: Նրանք օկզբում փորձում են վախեցնել թագուհուն, որպեսզի նա անձնատուր լինի, բայց հետո զգացվելով թագուհու վիճակից՝ անցնում են նրա կողմը, և ամեն կերպ

¹ Ամիրանների հաղթանակ այդ մասին տես՝ Գաղազեհուն, Ժնն. Գառմ. Գ., էջ 183—187.

համառարմուլթյամբ օգնում են թաղուհուն և Պապին: Նրանք կոտորել են տալիս պաշարող պարսկական զորքերը: Արքայադի Պապն իր մեր խրատով— բերդից գաղտնի ելնելով փախչում է Վազես կայսեր մոտ: Կյուղական ու Արսավանք պատգամավորներ են ուղարկում Վազեսի մոտ, խնդրելով, որ նա թողնվորեն Պապին և օգնական զորքեր տա: Պապը վերադառնում է Հայաստան և ենթակա է լինում Շապուհի հալածանքին: Կյուղական ու Արսավանք Պապի հետ են լինում, մինչև սա Շապուհի խորտամեկ թելադրանքով սպանել է տալիս նրանց: Մինչ այդ՝ պարսիկները երկտր պաշարումից հետո՝ իրենց բոլոր ուժով ընկնում են Արտազեհի վրա և, երկուստեք ճակատամարտերից հետո, սպառնելով բերդագործի ուժը՝ առնում են այդ բերդը, և Փառանձեմը բերդի բոլոր գանձերով՝ ընկնում է նրանց ձեռք: Վեպի մեջ գտնում ենք այս բոլորը պատմված, բայց տարբեր ձևով և ղիպական մանրամասնություններով (Բուզ. Դ. 55): Պարսից թագավորն իր իշխաններից հրկուսին՝ մեկի անունը Զիկ, մյուսինը Կարեն, հինգ հարյուր բյուր (—հինգ միլիոն) զորքով ուղարկում է Հայաստանն ավերելու: Փառանձեմն ամրանում է Արտազեհում: Պարսիկներն այդ բերդը պաշարում են տասներեք ամիս: Պապը, հակառակ Ամմիանի պատմածի, հենց պաշարման սկզբից Արտազեհեսում չէ:

Իսկ Պապ, որդին Արշակայ,
Ոչ դիպեցաւ անդ ի Հայոց աշխարհին.
Զի առ թագաւորն Յունաց դիպեցաւ:
Բուզ. Դ. 55.

Այդպես էլ պետք է լիներ ըստ վեպի, քանի որ վեպի մեջ առաջ պատմված էր Պապի մասին, թե նա պատանդ էր տրված կայսրին:

Բայց ծնաւ ապա Փառանձեմ
Թագաւորին ուսար մի,
Նւ կոչեցին զանուն նորա Պապ.
Նւ անուցին զնա, և ի չափ հասուցին:
Նւ իբրև ջրթափեաց, և եղև հուժկու,
Ետուն ըզնա պանդանդ
Ի դուռն կայսերն յերկիրն Յունաց:
Բուզ. Դ. 15.

Կյուղական և Արտավանի ու նրանց կատարած դերի մասին ոչ մի խոսք: Հանդես է գալիս Վասակ սպարապետի որդի Մուշեղը, որ ժողովում է զգամենայն ազատադունդ մարդկանն և նրանց հետ գնում է կայսրից խնդրելու, որ թագավորենք Պապին և օգնի իրենց (Բուզ. Դ. 1, ն. 55): Մինչ բանակցություն էին վարում կայսրի հետ, նրանք և Պապն ամեն շարաթ դեսպաններ են ուղարկում Փառանձեմին, որ գիմանա, անձնատուր չլինի պարսիկներին: Բայց պաշարման տասնուչորսերորդ ամսից հետո մահտարածում է ընկնում բերդնորդների մեջ և կոտորվում են բոլորը, մոտ տասնմեկհազար տղամարդ և մոտ վեց հազար կանայք: Նվ բերդում մնում է

միայն փառանձեմ տիկիներ երկու նաթիշտներով: Այժմ ահա երևան է գալիս Մարդակերը:

Ապա եկն հմուտ գողա ի ներս ի բերդն
Հայր Մարդակետ ներքինին
Եւ թշնամանաց զտիկինն մեծապէս իրրեկ զբող մի:
Սկսաւ դնել թշնամանս ազգին Արշակունեաց,
Ջի վատախորհուրդք են, վատանշանք, կորուսին զաշխարհս նս.
Երբուի աւնց ընդ ձեզ ալդ, և այլ զի աւցցէ՞ս:
Ել զաղտուկ և փախեալ:

Բուդ. Գ. 55.

/

Այսքանը միայն: Այնուհետեւ տիկիներ տեսնելով, որ ինքը մեն մենակ է մնացել, բերդի դուռը բռնում է, պարսիկները բռնում են նրան և իջեցնում բերդից: Ինն օր և ինն գիշեր կրում, իջեցնում են Հայոց թագավորի դանձերը և թագուհուհւ հետ քշում դեպի Պարսկաստան:

Մի կողմ թողնելով վիպական մանրամասնութիւնները, տեսնում ենք, որ վեպի մեջ Մամիկոնյաններին մեծ դեր է ունենում, Արապգեղաթառումը պատմված է իրրեկ հետևանք ոչ թէ հայերի պարտութիւն, երկուստեք ճակատամարտից հետո, այլ աստվածային պատուհասի, և այն էլ ինչ մեծ չափազանցումով. եվ վերջապէս ուշադրութեամբ պիտի ժողովն միայն ներքինի Հայր Մարդակետի գաղտնի կերպով բերդը մտնելն ու թագուհուն թշնամանելը (= անարգել, նախատել): Դա մի չափազանց փոխված հիշողութիւն է Կյուղակի և Արտավազնի Արտագերս մտնելուն:

Պապն, ինչպէս Ամմիանը պատմում է, Շապուհէի խորամանկ թշնամողութեամբ սպանել է աւլիս իր հավատարիմ Կյուղակին և Արտավազնին: Այդ երկու սպանութիւնն էլ կա վեպի մեջ պատմված ամենայն վիպական մանրամասնութիւններով: Պապին, երբ նա արգեն թագավորում էր, պատմում են Հայր Մարդակետի վերահիշյալ արարքը, որ նա թշնամանել, այսինքն անարգել, նախատել էր թագուհուն: Նա Մուշեղին հրաման է գրում չարամահ անել Մարդակետին: Եվ Մուշեղը կատարում է թագավորի հրամանը: Նա Մարդակետին դավով իր մօտ է կանչում, իբր նրան մեծարելու համար.

Եւ էին աւուրը ձմերայնոյ,
Եւ սաստկացեալ, կցեալ էր գետն: Երբեք:
Ապա կսչեալ եղև առ նա Հայր Մարդակետն
Իրրեկ ի պատիւ մեծարանաց.
Եկն հմուտ Մարդակետն ի բերդն յՈղական:
Եւ հրաման զօրավարն Մուշեղ զօրակառնացն՝
Ունել զնա և մերկանալ իրրեկ ի մօրէ:
Եւ կապել զմեռս նորա ի ներքոյ ծնկաց նորա,
Եւ իշուցանել զնա ի գետն,
Եւ դնել ի վերայ սառինն կցեալ գետոյն.
Եւ սատակեցաւ առդէն:

Եւ եղև ի վաղիւ անդր չոգան, տեսին,
Զի ուղիդ գլխոյն ի ցրտոյն վայրեալ,
Ի բաց իջեալ, թափեալ էր ընդ ջրթա նորա:
Բուգ. Ե. 3.

Նրա տեղը Հայր Մարգարեա է կարգվում Գղակ անունով մեկը: Դա Ամմիանի հիշած Գյուղակ ներքինին է: Գղակին էլ Պապ թագավորը սպանել է տալիս: Երբ հայ և հռոմեական զորքերը Շապուհին վերջնապես ջարդում են, Տերենտ և Մուշեղ զորավարները Գղակին երեսուն հազար զորքով ստեմանապահ են թողնում Հայաստանի և Պարսկաստանի սահմանի վրա: Նա կաշառվելով՝ դավաճանություն և խոստանում է Շապուհին նրա ձեռք մատնել Պապ թագավորին և Մուշեղ զորավարին: Բայց հավատարիմ նախարարներն այդ իմաց են տալիս թագավորին: Սա իր մոտ է կանչում Գղակին, նրան Պարսից թագավորի մոտ դեսպան ուղարկելու պատրվակով, և սպանել տալիս նրան: Սպանություն մահաբաժանությունները բերված են առաջ:

Եւ հատին զգլուխ նորա,
Եւ հանին հարին ի նիզակի:
Եւ կանգնեցին ի հրապարակին արքունի:
Բուգ. Ե. 6.

Այս երկու մահապատիժները, որ կատարել է տալիս Պապը, նույնն են, ինչ որ գտնում ենք Ամմիանի մոտ: Բայց վերջինիս պատմածի և Վեպի պատմվածքի մեջ նախապես մեծ տարբերություն կա, մի կողմ թողած վիպական մոտիվներն ու մանրամասնությունները, ինչից է առաջանում այդ տարբերությունը:—Ամմիկց առաջ նրանից, որ վիպասանը պատմադիր չէ, այլ բանաստեղծ, ֆեոդալական բանաստեղծ: Նրա նպատակը չէ կատարված եղելությունը նշույթաբար վերարտադրել, ընդ խնդիրն է հարկավոր ձևով լուսարանել պատմությունը կամ ստեղծել այնպիսի պատմություն, որ բավարարում է ֆեոդալի պատմական պատկերացումներին, չՎեպը երգում է այն պատմության մասին, որ հարկավոր է ֆեոդալին, համապատասխան է նրա պահանջներին ու հայացքներին: Այդ պատճառով նա պատմությունից չի առնում ամբողջը, այլ միայն նրա մեկ մասը: Բացի այդ՝ նա պատմությունը փոփոխության է ենթարկում և տալիս է կատարված իրականությանն իր ժամանակի պահանջի համեմատ սոցիալական արժեքավորում, որոշ սոցիալական իմաստ: Կնշանակի՝ վիպասանը պատմությունից ստեղծում է այն, ինչ որ ուզում է ինքը, իր պատվեր տվող իշխանավորը, ֆեոդալը, իր ունեկնդիրը: Պապ թագավորը դեռ չթագավորած՝ Շապուհի թելադրանքով սպանել է տալիս իր երկու հավատարիմ վասալներին: Վիպասանը չէր կարող նրանց մահապատիժ ներկայացնել Ամմիանոսի պատմածի համեմատ, թե մահուկ թագավորն իր բարեկամներին սպանել է տալիս խաբվելով խորամանկ Շապուհից: Նա այդ սպանությունները պատճառաբանում է ալլ կերպ: Թագավորը պատժում է նրանցից մեկին իբրև իր մորն անարգողի, իսկ մյուսին՝ իբրև մի դավաճանի: Ուս-

րեմն վիպասանը պատմութիւնն աշխատեալ է լուսարանում, որ բաժարարում է իշխողի պահանջներին ու շահերին: Բնականաբար այդ ժամանակ պատմութիւնը նախ՝ ամբողջական չի առնվում, և ապա՝ ըստ վիպասանի լուսարանութիւնը, կրում է փոփոխութիւն և հագեցվում է վիպական մանրամասներով ու մոտիվներով: Իրական պատմութիւնն այս փոփոխութիւնն սկսվում է նույնիսկ ձայնարկունքի և գուսանների աշխերգերից, որոնք, ինչպես տեսել ենք, ծագել են կոնկրետ դեպքերի անմիջական ապավորութիւն տակ:

ՇԻՆՊԵՐՈՐԴ ՀԱՎԵԼՎԱՍԹ

ՏԻՄՈՔԵՈՍ ԿՈՒԶԻ «ՀԱՎԱՃԱՌՈՒԹՅԱՆ» ԹԱՐԳՄԱՆՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Այս խիստ հունարան թարգմանութիւն տարեթիվը որոշելը կարևոր է հունարան դպրոցի և դավանաբանական պայքարի գրականութիւն սկզբնավորութիւն ժամանակը ճշտելու տեսակետից, այլև Մովսէս Գեղադոհնոր ապրտի ժամանակի, ինչպես և Գիրք Թղթոց ժողովածուի մեջ նրա և Հովհան Մանգակունու անունով պահած թղթերի ոչ կեղծ լինելու նկատմամբ: Հակաճառութիւնն մասին գրելիս տեսանք, որ դրա ի լույս բնաշարներն իրենց առաջարանի մեջ այդ գրքի հայ թարգմանութիւն ժամանակը դնում են 6-րդ դարի կեսերին, հիմնվելով Հայոց Ջաջարիա կաթողիկոսին Փոս պատրիարքի (9-րդ դարի երկրորդ կեսին) գրած թղթի մի կտորի վրա, ըստ որի Տիմոթեոսի հակաճառութիւնն թարգմանութիւնը կատարվել է իբր ներսես Բ. (548; 549—556; 557 թ.) կաթողիկոսի օրով, Դվինի ժողովի ժամանակ: Գ. Տեր-Մկրտչյանն այդ գրքի մեջ հիշված, ժամաթվերի վրա հիմնված՝ տոմարական հաշիվներով ցույց տված, որ հակաճառութիւնն հայ թարգմանութիւնը կատարվել է 480 փետր. 29—484 փետր. 28 քառամյակում, նույն ժամանակներում Փոսի թղթի այդ կտորի համար աղբյուր համարվեց մի Անանունի De rebus Armeniae գրութիւնն մի հատվածը¹, որի մեջ Տիմոթեոսի դրվածքի թարգմանութիւն ժամանակը գրվում է 6-րդ դարի կեսերին, Դվինի ժողովի ժամանակ, ուրեմն 554 թ. Գ. Տեր-Մկրտչյանը երկրորդ անգամ հանդես գալով՝ պնդեց իր որոշած 480—484 թվականի վրա, և վերջն այդ Անանունի տված, տեղեկութիւնների նկատմամբ առարկեց, թե այդ թղթերը գաբում և հետո շատ բնական է, որ հակաքաղեկոսական ամեն գրութիւն պիտի կապերին վեցերորդ դարու երկրորդ կեսում գտնաբանական վեճերի բռնկման հետ, երբ հայ եկեղեցին պաշտոնապես բաժանվեց Արևմուտքից: Եվ իսկուպես, հետագա դարերից եկած այդ արտաքին տեղեկութիւնները չեն կարող վստահել լինել և բնականաբար չեն անունի ցուցումները... անգոր են բուն Տիմոթեոսի թարգմանութիւնն մեջ պահված թվականի դեմ, եթե այս վերջինում սխալ կամ թյուրիմացութիւն չկա:

¹ Եւրոպոս ամառգիր, Վաղարշապատ, 1908, էջ 554—555.

² Ն. Ակիւրյան, Տիմոթեոս Կուչ հայ մատենագրութիւնն մեջ, Վիեննա, 1908. նույնը նաև շահեկան Ամստերդամ, 1908.

Ապա նա պարզեց և հետևյալ հանգամանքը: Գիրքը Թղթոցն ժողովա-
 խուի մեջ հիշված Մովսես Քերգողանյալը: ամենայն հավանականությամբ
 Ղազար Փարպեցու հիշած Մովսես փիլիսոփան, իր մի թղթի մեջ (որ կա
 Գիրքը Թղթոցն ժողովածուի մեջ Սահակ կաթողիկոսի և իր թղթակիցների
 ղրություններից հետո իբրև վեցերորդ թուղթ) օգտվել է «Հակաճանաթյան»
 թարգմանությանից, իսկ Մովսեսի այդ թղթից, ինչպես հետո երևաց, նաև
 «Հակաճանաթյունից», օգտվել է Հովհան Մանգակունին իր մի գրության
 մեջ, որ հիշված ժողովածուի մեջ դրված է Մովսեսի թղթից հետո: Դրա-
 նով նույնպես հաստատվեց, որ Ծ-րդ դարի 80-ական թվականների սկզբին
 արդեն թարգմանված է եղել «Հակաճանաթյունը»: Սրա ի լույս ընծայող-
 ներից մեկը, հարապետ եղ. Տեր-Մկրտչյանը, հետո փոխեց իր կարծիքն,
 ընդունելով 480—484 քառամյակը¹, Հետագայում, պրոֆ., այժմ ավագ. Հակոբ
 Մանանդյանը, սակայն, որդեգրեց «Հակաճանաթյան» ի լույս ընծայողների
 Առաջորդունում դրած կարծիքը: Տեսնենք, թե նա ինչպես է հիմնավորում
 այդ²:

«Որքան և ուղիղ է տոմարական այս հայիվը,—գրում է նա,—սակայն
 թարգմանության այդ թվականը թվում է (ընդգծումներն իմն են. Մ. Ա.)
 կասկածելի ու անհավանական դանդաղ տեսակետներով:

ա. Այդ եզրակացությունը հակասում է Փոտի և Անանունի գրական
 ու որոշ վկայություններին:—Տեսնենք:

հարող ենք ասել, որ Փոտի թղթի մեջ այդ կտորն ամենևին չգրական
 ու որոշ, կամ, ինչպես քիչ վերևում նա գրում է, «սլաք ու որոշ մի վկա-
 յություն» է: Դա մի մութ կտոր է, և Տիմոթեոսի «Հակաճանաթյան» ի
 լույս ընծայողներն էլ իրենց Առաջարանի մեջ (էջ XXIV) այդ համարել
 են մութ՝ այսպես գրելով՝ «Իսկ Փոտ պատրիարքի հիշատակությունը Տի-
 մոթեոսի գրվածքի թարգմանության մասին այնքան մութն է, որ...»: Այդ
 կտորից ընտել որոշ կերպով չի երևում, թե «Հակաճանաթյունը» թարգմա-
 նված լինի Դվինի ժողովի ժամանակ, այլ այդտեղ ուրիշների հետ և Տիմո-
 թեոս հուզին հիշելուց հետո՝ անմիջապես ավելացրած է թարգմանության
 մասին. «... և զԻմոթէոս Աղէքսանդրացին, օրում հուզն կոչին. որ զգրե-
 անա թարգմանեցին ի Հայս»՝ որ կոչն յետին թարգմանիչն³: Այսպես կա-
 րելի է գրել և Ծ-րդ դարի կեսից շատ տասնյակ տարիներ առաջ կատար-
 ված մի թարգմանության համար: Եվ ի՞նչ են այդ «յետին թարգմանիչն»
 կոչվածները. արդյոք առաջին թարգմանիչներից հետո զործող՝ Ծ-րդ դարի
 սկզբում կոչված թարգմանիչները: Համենայն դեպս, այդ կտորը մութն է:

¹ Տես՝ վերևում հիշված «Շողակաթ», Վաղ. 1913, էջ 167 և հալ.

² «Շողակաթ», էջ 80 և հալ.: Ավելի մանրամասն և լրացումներով՝ տես «Ինչից հաս-
 տալ ընդհանուր ազդեցության», հրատ. Կարգան եպիսկոպոսի, Էջմիածին, 1914,
 ներածություն, էջ LVII և հալ.:

³ Հունարեն գրաբեյը և նրա զորագրման ջրվանները, քննական ուսումնասիրություն,
 գրեց Հակոբ Մանանդյան, պրոֆ. Հայաստանի Գեղարվեստի Համալսարանի, Վիեննա, 1928,
 էջ 28, էջ 95—103.

⁴ Տիմոթեոս այստեղ բերվում է «Հակաճանաթյան» թարգմանության «Յոթաշար-
 նից», էջ XVII:

Մնում է միայն Անանուհը, Եվ Գ. Տեր-Մկրտչյանն արդեն գրել էր. «Այս ընդորի դեմ թնչ ունենց ռուսերկելու Միայն Անանուհի [De rebus Armeni-ae] տեղեկությունները (որից տոնում է Փոստ)»։ Անանուհի ցուցումները, սակայն,—ինչպես ասվեց վերևում,—անգոր են ըստ Տիմոթեոսի թարգմանության մեջ պահված թվականի դեմ»։ Էստմարական ուղիղ հաշվին դեմ։ Մի հանգամանք էս։ Պրոֆ. Հակոբ Մանանդյանի ուղարկությունից վերջիլ է այն, որ հոբ 480—484 թվականն իրեն բթվում է կասկածելի ու անհավանական նրա համար, որ դա տակառում է Փոստի ու Անանուհի [Փոստի աղբյուրն Անանուհն է, Մ. Ա.] «վկայություններին», ապաքնն այս վերջին վկայություններն էլ (իսկապես մեկ վկայությունը) իրենց կողմից բթվում են կասկածելի ու անհավաստի, որովհետև հակասում են հենց շեպտանուհիայն մեջ պահված իսկապես զբաղան ու որոշ թվականին—Անցնենք նրա երկրորդ հիմունքին։

Նրան 480—484 թվականը բթվում է կասկածելի ու անհավանական, որովհետև դա

եր. հիմնովին հեղաշրջում է հայ եկեղեցու կրոնա-դավանաբանական պատմության վերաբերյալ ժամանակագրությունը, որ արդյունք է քանտա-սիրական նորագույն ուսումնասիրությունների»։

Դա օրեկտիվ պատճառաբանությունն էլ։ Դա նշանակում է, թե սրով-հետև ակադ. Մանանդյանը չի ցանկանում իր ուղած ժամանակագրության հեղաշրջումը, ուստի նրան 480—484 թվականը բթվում է կասկածելի ու ան-հավանական։ Դիտական խնդիրներ համար այդպես չպիտի մտածել, այլ միայն օրեկտիվ իրականությունը պետք է որոնել, թեկուզ ընդունված ժամանակագրությունը խախտվի։ Թե թնչ պրոնա-դավանաբանական պատմության վերաբերյալ ժամանակագրությունն է հեղաշրջվում, և թնչ ընդարգույն սուսումնասիրություններն են, այդ մասին և ոչ մի տեղեկություն հայտնի է, այդ 480—484 թվականով հեղաշրջվում է քաղեկոնական-ներին, — լինեն սրանք այլազգի թե հայազգի, — ոչ թե ընդարգույն, այլ այն հին մաշված հաղորդումը, թե հայերը իբր մինչև Դվինի ժողովը, Ներ-սես Բ., եղել են քաղեկոնական, երկարակ, Այսպես հենց Փոստ պատրի-արքն իր վերևում հիշված թղթի մեջ գրում է. «Նա հայք վտանգեալք ի հինից պարսից, ոչ զօրեցին և պարապեցան դալ ի ժողովն. վասն այնորիկ չ հնաս պատճառ ժողովոյն ի հայք հաւաստեալ. բայց հակառակութիւն ինչ վասն ժողովոյն [Բաղկեղունի] ոչ գոյր, այլ տմենեքեան ընդունէին զժողովն [Բաղկեղունի] մինչև ի ժողովն Դվնայ»¹։ Դա հին քաղեկոնական-ներին տեսակետն է, որ պատմագիր Մ. Զամչյանի և առհասարակ Միխիթա-րյան վարդապետների ազդեցությամբ ընդհանրացած է եղել մի ժամանակ։ Նրանց հարկավոր էր դավանաբանական վեճերի ժամանակ ասել, թե իրենք են պահել հայկական հին դավանանքը, և ոչ թե հայոց եկեղեցին։ Նորա-գույն հեռագրություններն, ընդհակառակն, ցույց են տալիս, որ օտար-ների այդ տեսակետը սխալ է. հայոց կաթողիկոսները, նույնիսկ 5-րդ դա-

¹ Տիմոթեոս Գուգի Հակառուսութիւն, էջ XVI: Այստեղից եմ բերում ցիտատը, քա-ղեկերի մեջ, պարգության համար, ավելացնելով բաղկեղունի բառը։

բից սկսած, երկաթնակուծութան հակասակ դիրք են բռնել, և հայոց եկեղեցու դավանութիւնը եղել է առաջին երեք տասնամիլիոնական ժողովուրդներին:

Անցնենք նրա երրորդ հիմքին:

«Գ. Այդ թարգմանութեան և ոչ մի հետք չէ հաջողվում գտնել կրօնադավանաբանական հայ գրվածքներում յոթներորդ դարի երկրորդ կեսից առաջ»:

Այսպիսի առարկութիւն չպիտի մեջ բերվեր. որովհետեւ եթե դա որևէ արժեք ունի 480—484 թվականների թարգմանութեան հավաստի կամ անհավաստի լինելու նկատմամբ, ապա նույնպիսի արժեք պիտի ունենար նաև 554 թվականին կատարված թարգմանութեան համար: Դարձյալ՝ տարօրինակ է երևակայել, թե հին հայ եկրօնա-դավանաբանական գրականութեան մեջ ամեն տեղեկութիւն կամ «հետք» պիտի հաջողվի գտնել, այն էլ ուղած ժամանակին, այս կամ այն գրքի կամ դրա թարգմանութեան ժամանակի մասին, իսկ եթե մեկին կամ մյուսին այդ չի հաջողվել մի գրքի մասին, ուրեմն այդ գիրքը կամ դրա թարգմանութիւնը գրքի մեջ հիշված թվականին չի եղել: Այսպես դատելով ինչ՞որ չի կարելի ասել և հետաքննել մերժել: Եվ վերջապես՝ չէ՞ որ Տիմոթեոսի Հակաճառութեան «հետք» գտնված է Ծ-րդ դարի հեղինակների Մովսէս Գերգորգանոր և Հովհան Ման-դակունու թղթերի մեջ:

Նա իր երրորդ տեսակետիցն հետո անմիջապէս գրում է.

«Ինչ քովում է, որ բոլոր այս հակասութիւններն ու առարկութիւնները հեշտութեամբ վերանում են. Դիոսկորոսի մահվան հայ ամսաթիւի մի շատ պարզ ու քննարկի սրբագրութեամբ: Ի՞նչ է այդ սրբագրութիւնը? — ձեռագիրների մեջ է «Թովթ Լ. սեպտեմբեր Բ. հոսի 2. 3. 1. Նա սրբագրում է այսպէս՝ Թովթ Լ. սեպտեմբեր Դ, հոսի ԻԶ, այսինքն՝ Ծ-ը դարձնում է 7, 2-ը դարձնում է 4, և Ծ-ը դարձնում է 28 և ավելացնում. «Այս դեպքում Թովթ Լ. = սեպտեմբեր Դ = հոսի ԻԶ դուգալորութեան հանդէպ կունենանք 552—556 թվականները: Այդ նշանակում է, որ նա ձեռագիրների մեջ եղած ամսաթիւերը փոխում է այնպէս, որ իր ցանկացած տարեթիւը դուրս գաւ Բայց այդպիսի կամայական փոփոխութիւններով, եթե ցանկացվի, շատ ու շատ ուրիշ տարեթիւեր էլ կարելի է հանել, և նա ինքն հետո ուրիշ թվականներ էլ է հանում:

¹ Այդ ամսաթիւերը հայտնի են չորս տարբեր աղբյուրներից, որոնց մասին կարելի է աշտեղ խոսել (Մանրամասներ՝ «Շեղակութ», էջ 158): Դրանց չորսի մեջ էլ է՝ սեպտեմբեր Բ, հոսի 2, 2-րդից մեկի մեջ կա նաև Թովթ Ե, այսինքն Թովթ Ծ, որ համապատասխան է սեպտեմբեր 2-ին. միևնույն երեքի մեջ է՝ «Թաղթ Ե-քզ» (ս.թ.ներսդ): Սա աղետավոր է Ե և է տառերի չփոխութեամբ, սր շատ ավերական է ձեռագիրների մեջ. թե այստեղ Ե. տառի աղբյուրի աղետաման հետ գործ ունենք, այդ շատ պարզ երևում է նրանից, որ նախորդ երեք բառն էլ աղետավոր են. «յա քո ր ի ց», ուր դ արշաւաւնն [= զընթացն] կառարկաց ի Գրիտոս Թովթ Ե-քզ մեջ չի քարաց, ուր զընթացնաւ նւթնե-րոց): Արտագրողն իր այլի տառն ունեցել է մաշված կամ կիտա ջնջված չորս բառեր և չի կարողացել ճշտութեամբ վերականգնել: Այս շատ պարզ է ամենքի համար, որ ըստ ամ-թիվ հայկական ձեռագիրների հետ գործ են ունեցել: «Կնաւանի» «Թաղթ Ե» գրութիւնն էլ սղարմապես եղել է «Թովթ Ե», ինչպէս է՝ մեկի մեջ:

Մի անգամ որ ձեռագրական ցուցումներն այս են՝ «Թովթ Ե. սեպտեմբեր 11. հոգի 23, կարելի չի, առանց զբաղան հիմնավորման, լոկ թիւն թվում է» քառերով այնպիսի սուրբագրություններն անել, իսկապես փոփոխությունների ենթարկել ձեռագրիչների ունեցած երեք ամսութիւնը, ինչ է թե ուղած 552—556 քառամյակը հանվի։ Ինչպես երևում է, նա ինքն էլ այդ մասանել է. ուստի քիչ հետո՝ այլևս չգիտելով «Թովթ Ե. սեպտեմբեր Բ.3 ամսութիւնին՝ երկրորդ անգամ նա փախում է միայն հոգի 23 ամսութիւնը և զրում է. «Թիւ Թովթ Ե—սեպտեմբեր Բ—հոգի 12 զուգավորություն հանդիպ, 480—484 քառամյակի փոխարեն, կունենանք 580—584 թվականները»։ Եվ ապա շարունակում է. «Ուրիշ» առաջարկած սուրբագրությամբ Տիմոթեոսի Հակոնառության հայերեն թարգմանության ժամանակը որոշվում է 552—584 թվականների ժամանակամիջոցում՝ միամիտմամբ համապատասխան Փետր Կատրիքի և Առաքելի վերաբերյալ վիճաբանումների։ Տեսնենք, նախ՝ նա չի նկատում, որ երկրորդ անգամ հասնած իր 580—584 տարեթիւնով ընդհանրումն ոչնչացնում է սուրբագրությունն Անանունի (որից և Փետի) հաղորդած տեղեկության, ըստ որի, ինչպես հասկացել են ուրիշները և ինքը ակադ. Մանանդյանը, — Հակոնառությունը պիտի թարգմանված լինի իբր Դվինի ժողովի ժամանակ, ուրիշ 554 թ., Ներսես Բ. կաթողիկոսի օրով. որովհետև եթե Հակոնառությունը կարող է թարգմանված լինել 580—584 քառամյակի ժամանակամիջոցում (երբ ներսես Բ. կաթողիկոսն արդեն վախճանված էր), կնշանակե տուրյալ չէ Փետի հաղորդումը, թե թարգմանվում է 554 թ.։ Կամ մեկ քառամյակը (552—556) պիտի լինի, կամ մյուսը (580—584). չի կարող միաժամանակ և այս լինել և այն։ Եվ այդ քաղական չէ, նա միացնում է այդ երկու քառամյակների տարեթիւնը, հետևելը լոկայան միացնում է նաև զրանց միջի քառամյակը 556—580, և ըստանում 552—584 թվականները։ Ուրիշ 12 տարիների մի միջոց, իբր Եմիանդամայն համապատասխան Փետի... վկայությանը։ Բայց Փետր մեկ շատ օրով տարեթիւ, 554 թվականն է հայտնել Դվինի ժողովի համար, բիզանդական կայսրների և Պարսիք թագավորի տարիների հաշիվներով, օկսան Գաղկեկոնի ժողովից¹, և ոչ թե ամբողջ երեք քառամյակ։

Ապա՝ նա (ակադ. Մանանդյան) կարծում է, թե իր իբր ճշգրտանիլ սուրբագրությամբ, իսկապես երկու տեսակ սուրբագրություններով, զուրկ հակասություններն ու առարկությունները հեշտությամբ վերանում են։ Ամենևին ոչ. նա չի նկատում, որ Հակոնառության տված ամսաթիւներով, թեկուզ սուրբագրածն ձեռով, միայն մեկ քառամյակ կարելի է հանել, և ոչ թե միաժամանակ երեք միացյալ քառամյակ՝ 552—584 թ.։

Ապա դարձյալ, որ վարձանալին է, այսպիսի ձևերով և թիւն թվում է, «թվում է», «կարծում է» մասերով ասած խոսքերից հետո, արդեն առանց «թվում է», «կարծում է» բառերի, նա հայտարարում է. «Թե Տիմոթեոսի Հակոնառության թարգմանության ժամանակը ճշտվում է։ Ստացվում է ժամանակագրական հետադարձում մի թիւ, որի վրա հենվելով՝ կա-

¹ Փետի տված ցուցումներով Դվինի երկրորդ ժողովը տեղի է ունեցել 554 թվականին, Տես՝ Տիմոթ. հուլի Հակոնառության Առաքելի, էջ XVII,

բելի է լուսաբանել հուսարան գլխորդի վերաբերյալ մի շարք ուրիշ խնդիրներն: Դա որո՞ւմաբանական կոպիտ սխալ է: Չիշտ և հաստատուն եղբայրացու թյան համար ճիշտ և հաստատուն նախադրյալներ պետք էր ունենալ և ոչ թե թվում է, և կարծում եմ բառերով ասած բաներ և վերահիշյալ եղանակներով հանած թվականներ:

Եվ այդպես թավական չէ, նա իր այդ իրը բնաված, իրը բնատուտուն թվականների վրա հիմնվելով՝ մերժում է Քերդոզանյալ Մովսեսի, ինչպես և Հովհան Մանդակունու գրությունների վավերականությունը, այսպես դատելով: «Ճիժթեոսի Հակաճառությունը թարգմանված է... 552—564 թվականների ժամանակամիջոցում: Պարզ է ուրեմն, որ... Մովսես Քերդոզանյալ և Հովհաննու եղբայրացուսականի թղթերը, եթե նրանք ոգովել են Հակաճառության թարգմանությունից, չեն կարող ետ տարվել ոչ հինգերորդ դար, ոչ էլ անգամ վեցերորդ դարի կեսը: Այո նշանակում է նապաստելով, նապաստելով թվականով, մերժել իրականությունը: Այդպիսի պատմական հիշատակարանների վավերականությունն ու անվավերականությունը մեր ճշգրիտ կամ մեր կազմած տեսություններով չի որոշվում, այլ միայն պատմական ավանդություն: Իսկ պատմական ստույգ ավանդան է, որ Հակաճառությունն, ըստ իր մեջ պահված ամսաթվերի, թարգմանվել է սեպտեմբեր 2-ին, հուլի 6-ին, որ է 480—484 թվականների միջոցին, քաղկեդոնական վեցերի ամենասուր բորբոքման ժամանակ, ինչ որ մենք տրոհեն տեսել ենք իր տեղում:

ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՎԵԼՎԱՍ

ՔԵՐԴՈԶԱՆՅԱԼ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԹՂԹԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վերջերս պրոֆ. Ստ. Մալխասյանցը մի նոր տեսություն քարոզեց Մովսես Խորենացու մասին. մեր այս հռչակավոր պատմագիրն իրը բնել է քաղկեդոնական (երկարակ)՝ Վերջ թղթից ժողովածուի մեջ եղած գրությունը Մովսես Քերդոզանյալ՝ ուղղված է ընդդեմ երկարակության. քանի որ Խորենացին եղել է երկարակ, հետևաբար այդ թուղթը, գրությունը, կեղծ է,—այսպես է մտածում Ստ. Մալխասյանցը. կամ թե՛ որպեսզի Խորենացին քաղկեդոնական լինի, այդ թուղթը գրիտի կեղծ լինի: Ապացույց դրա կեղծությունն նա բերում է այդ. «Այդ ճառն ընդհանրապես ճանաչված էր կեղծիք: Ենթա կեղծությունն ընդունում են Օրմանյանը, Ակինյանը և Ն. Մանանդյանը: Վերջինս նաև գրության ժամանակը որոշում է 6-րդ դարի վերջերում կամ 7-րդ դարի սկիզբներում: Տեսնենք, Հ. Մանանդյանի կարծիքները և սրանց գնահատությունը մենք տեսանք վերևում: Եթե այս նոր տեսության հեղինակը, Ստ. Մալխասյանցը, կետ առ կետ հասնած լիներ Հ. Մանանդյանի պատճառաբանություններին, նա,

¹ Ստ. Մալխասյանց, Խորենացու անհղծվածի չուրջը, Երևան, 1940, էջ 120 և հաջ.

² Ահա, էջ 103, 143.

պեռք է կտրծել, Մանանդյանի գրածի մասին կարտահայտվեալ նույնպէս, ինչպէս նաեւ, Մանանդյանի, մի ուրիշ կարծիքի համար նա գրել է. «Տրամաբանորեն սխալ է ապացուցելին ընդունել իբրեւ ապացույց՝ մի ուրիշ բան ապացուցելու համար»¹։ Ապա եթէ նա մտադրված չլինէր Մ. Խորենացուն անպատեհ առդկեղոնական դարձնել, նա չէր բովականանալ փակագծերի մէջ միայն գրելով՝ «Թուղթը վավերական են համարել, իբրեւ Մովսէս Խորենացու գործը 5-րդ դարում»²։ Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միտարան) և Կարապետ Եպիսկոպոսը, և ցույց տալով դարձյալ Հ. Մանանդյանի գրքի էջը՝ նա այսպէս չէր գրել՝ «Որ այս Թուղթը կեղծ է՝ հայտնի է նրանից, որ պարունակում է մի հատված և հասուկ բառեր ու դարձվածքներ Տիմոթեոս Կուդի Հակաճառութեան հայերեն թարգմանութեանից»։ Այլ նա կըրեր Գ. Տ.-Մկրտչյանի ապացույցը, որ հիշված թարգմանութեանը կառարկած է 480—484 թվականների մէջ, ուրիշ և Պերդրդահայր Մովսէսը կարող էր օգտվել դրանից, Բայց այդ չի աբել նա, պրոֆ. Ստ. Մալխասյանցը, որովհետև նրան հարկավոր էր, որ Պերդրդահայր Մովսէսի հիշյալ գրութեանը կեղծ լինի, ապա թէ ոչ՝ այդ Մովսէսը երկտեղակ չէր դուրս գալ։ Այդ անհուս փոխանակ՝ նա կուրում է տեսում Օրմանյանին և Ալեքսյանին։ Վերջինիս գրածի վերնագրերն և էջը չի հիշել նա և ես ձեռի տակ չունեմ Ալեքսյանի առածը. իսկ Օրմանյանը գրում է՝ «Գիրքը Թղթոցին մէջ հռոմ մը կա՝ Երամեյի մեծի քերթողանքը Մովսէսի Խորենացի Եպիսկոպոսի, սրուն մէջ երկու քննարկում բացատրութեանը կեղծվի (Թղթ. 22), իրավ տառաց Պաղկեղոնի հիշատակութեան, սակայն համարանկանազուն է հետին ժամանակներու մէջ տարբեր Մովսէսի մը գործ կարծել»։ Այսքան միայն, լոկ խոսքով, ապացույց և ոչ մի բան։

Ստ. Մալխասյանցի երկրորդ կարծեցյալ ապացույցը հետևյալն է. նա գրում է. «Թ-րդ դարում մի վրացի հեղինակ, նրանց նշանավոր Արսեն Ստեփանցի կաթողիկոսը, պատմելով այն մասին, թէ Կոմիտաս կաթողիկոսը, Հովհան Մայրապետեցու հետ ինչ միջոցներով էին կալում Պաղկեղոնի ժողովի կողմնակիցների դեմ՝ ի միջի տալու տեսում է՝. [Կոմիտասը] «Մեկնաբանեց՝ հերձվածողական գրութեաններն Տիմոթեոս Աղեքսանդրացու, որ Կալ կոչվեց, և Պետրոս Թափնիչին, որը Գալլ կոչվեց, և Սեմեդուսի և այլ հերձվածողների, և [այս գրութեանները] մահապարհ [տանգի], իբրեւ թէ ուղղափառ վարդապետներին՝ սուրբ Սահակի ու Մովսէսի ճառերն են, և այսպիսի կեղծիքով հովատարեց տարոջ երկրին Հայոց»։ Արսեն կաթողիկոսի գրածն ըստ բերված թարգմանութեան ուրիշ կերպ կարելի չէ հասկանալ, բայց եթէ Կոմիտասը Տիմոթեոսի և մյուսների «հերձվածողական գրութեանները» «մեկնաբանելով», այսինքն մեկնելով, մահապարհ է, այսինքն վերնագրի դնելով վերագրել է Սահակին ու Մովսէսին։ Բայց պրոֆ.

¹ Անդ, էջ 68։

² Աղապատում, գրքից Մալխասյան արքեպիսկոպոս Օրմանյան, Կոմիտասի աղակալ, 1913, էջ 801, § 388։

³ Խոր. Թաղթի մեծի չուրջը, էջ 104 և հու Տիմոթեոսի համար հիշված է ՄԵԼԵԹ և ԹԻԲ և Կ. Վրաց տարյուրները Հայաստանի և հայերի մասին, էջ 73—74։

⁴ Երեկ ուղում է տան լեզունիցս։

Ստ. Մալխասյանցն այնպես է բերում այդ ցիտառի բովանդակությունը, իբր թե Արսեն կաթողիկոսն ասած լիներ, թե Կոմիտաս կաթողիկոսը կեղծեց հերժվածադական (այսինքն հակաքաղկեդոնական) զրվածքներ ու վերագրեց ուղղափառ վարդապետներին, սուրբ Սահակին ու Մովսեսին, իբր թե սրանք են դրել¹ Ապա՝ նա առանց որևէ հիմքի, լոկ խոսքով, հայտարարում ու կրկնում է, թե Արսեն կաթողիկոսի հիշածը, Մովսեսին վերագրածը, Վերջը Թղթոցն ժողովածուի մեջ տպված Բերթողահայր Մովսեսի թուղթն է²։ Ապա դարձյալ՝ նա շուտ տալով ասում է, թե այդ թուղթն իբր Վոմիաս կաթողիկոսն է Հովհան Մայրապոմեցին³։ Երբինքն են համարել ասել նաև, թե կարևոր են համարել Վեհգծ ճառ հորինել հայ ժողովրդին խաբելու համար։ Նա ազատ է գրելու նաև, թե կեղծողներն այդ արել են Վերկու Նպաստակով Նախ՝ Մովսեսի վրայից երկարնակութեան... արտաք վերացնել... և երկրորդ՝ նրա բարձր հեղինակությամբ, նրա անունը կրող կեղծ թղթով կռվել երկարնակների դեմ։ Նրանք հաշվում էին, որ Մովսեսի մահից հետո, 120—130 տարվա ընթացքում, հազիվ մնացած լինի հիշողություն նրա քաղկեդոնականության մասին⁴։ Կոմիտաս կաթողիկոսն է Հովհան Մայրապոմեցին կենդանի չեն, որ այդ բաներն ասողին դատարան քաշ տան։ Իսկ մենք միայն իրավունք ունենք հայրենելու⁵։

Կոմիտասը կաթողիկոս է եղել 616—628 թ.։ Նա ապրել է գործել է, ուրեմն, 6-րդ դարի երկրորդ կեսին և 7-րդ դարի առաջին քառորդին։ Դերագրված Մովսեսի մահից շուրջ մի դար հետո։ Նույնպես և նրա ժամանակներից Հովհան Մայրապոմեցին։ Այդ թնչդիս կտրուկացնում ենք կեղծիք ասել և Վեհգծացնել ամբողջ երկրն Հայոց⁶։ Ենայ ժողովրդին խաբել, այնպես, որ իր ժամանակակիցները, զոհն Մայրապոմեցուն հակառակորդները, չիմացան, իսկ 9-րդ դարում մի վրացի կաթողիկոս իմացավ այդ Բայց շարունակենք⁷։

9-րդ դարում վրացի կաթողիկոսը կարող էր չիմանալ, բայց պրոֆ. Ստ. Մալխասյանցը գիտեր, որ Բերդուղանայր Մովսեսի թուղթը Վեհգծացնել ենք չէ ոչ Տիմոթեոս Կուզի և ոչ ուրիշ ոքի դրվածքի։ Ապա, Արսեն կաթողիկոսը կարող էր չիմանալ, բայց պրոֆ. Ստ. Մալխասյանցը գիտեր, որ Տիմոթեոս Կուզի անունը չէին կարող ջնջել 7-րդ դարում, նրա Հակաճառության հայերեն թարգմանությունը հենց իրեն հեղինակել, Տիմոթեոսի անունով է հայտնի եղել և մնացել մինչև մեր օրերը։ Ապա՝ դարձյալ Արսեն կաթողիկոսը կարող էր չիմանալ, բայց պրոֆ. Ստ. Մալխասյանցը գիտեր, որ եղել է և մինչև մեր օրերը մնացել է Վեհգծ հաւատոյն կռված գիրքը, դավանաբանության կարևոր կտորների մի ընդարձակ ժողովածու, Երեսուրս Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքեալ (համահավաքողի համար ենթադրում են, թե Հովհան Մայրապոմեցին է եղել)։ Որի մեջ կան վկա-

¹ Անգ, էջ 149.

² Անգ, էջ 103, 143 և այլն.

³ Անգ, էջ 149.

⁴ Անգ, էջ 143 և հ.

յություններ, բերված նաև Տիմոթեոս Կուզից և հենց սրա անունով Այս նախաձեռնողները ցույց են տալիս, որ Տիմոթեոս Կուզի անունը փոխելու հիմք չկար, դրանք բավական են ցույց տալու համար նաև այն, որ Արսեն կաթողիկոսը վայրիվներն ձանթոթյուն բռնեց իր զրաժի մասին: Բայց մեք շարունակենք:

Ստ. Մալխասյանցն երկրորդ անգամ էլ՝ խոսում է վրաց Արսեն կաթողիկոսի հաղորդածի մասին, այսպես գրելով. «Եթե մի քաղկեդոնական կաթողիկոս ուղղափառ վարդապետ (ընդգծումը հեղինակինն է:—Մ. Ա.) է կոչում Մովսես խորհնացուն... պարզ է, որ նա Մովսեսին ևս ճանաչում է իրեն նման, այսինքն փաղկեղումակամ (ընդգծումն իմն է:—Մ. Ա.) Ոչ մի կասկած չկա, որ այս վկայութունը ճիշտ է:—Նախ՝ նկատեմ, որ Արսեն կաթողիկոսն առաջադրեց վարդապետներին մեջ զնում է և Սահակին, գրելով՝ «Իրեն թե ուղղափառ վարդապետներ՝ Ուրբ Սահակի և Մովսեսի ճանաչում են: Եվ ինքը պրոֆ. Մալխասյանցն էլ քիչ առաջ, մի երեք տող վերև վրում, գրում է, թե Կոմիտասը «վերագրեց ուղղափառ վարդապետներին, Ուրբ Սահակին և Մովսեսին: Որ այդպես է, ինչև նա մի երեք տող ներքևում հանում է Սահակի անունը և չի գրում. «Եթե մի քաղկեդոնական կաթողիկոս ուղղափառ վարդապետներ է կոչում Սահակին և Մովսես խորհնացուն... պարզ է, որ նա Սահակին ու Մովսեսին ևս ճանաչում է իրեն նման, այսինքն՝ քաղկեդոնական: Ինչև է նա հանում Սահակի անունը: Եստ պարզ է, թե ինչու: Եթե հայկական անցյալի մասին վայրիվներն ձանթոթյուն բռնեցող մի վրացի կաթողիկոս 9-րդ դարում չէր կարող իմանալ, որ Հայոց Սահակ կաթողիկոսը վախճանվել է 439 թվականին, Քաղկեդոնի ժողովից տասներկու տարի առաջ և կարող էր նրան քաղկեդոնական դարձնել, Ստ. Մալխասյանցն այդ լավ դիտեր և չէր կարող Սահակ կաթողիկոսին քաղկեդոնական համարել: Ուստի նա հանել է Սահակի անունը: Այս կետը միայն, որ Արսեն կաթողիկոսն իրեն նման առաջադրեց, այսինքն քաղկեդոնական է համարում Սահակ կաթողիկոսին, այդ միայն ցույց է տալիս, որ նրա վկայութունը ստույգ չէ: Բայց այս և նախորդ կետերը ցույց են տալիս նաև, որ ուղիղ չէ պրոֆ. Ստ. Մալխասյանցի բռնեցրած մեթոդն իր տեսությունների ապացուցելու համար: Բերենք և հետևյալը:

Նա մի ուրիշ անգ՝ բերում է մեր նշանավոր հեղինակ Հովհան Օձնեցուց Մովսեսի մասին մի կտոր. «Զերկոսին զնոսա ասեմ սուրբս՝ զՍահակ և զՄուշոս, և դամենեան զընտրեալուն զարբանական ուղղուն և զգործակիցս, զնիցնակ և զայսն, և կամ որ ըստ նոցանէ և ոչ հետի ի նոցանէ զմեծն իմաստասիրաց և զհաշակեալն ընդ տիեզերս դոէր Մովսէս, որք էին միանգամայն արուեստասուրբ, թարգմանիչ և ուղղափառ: Մեջ բերելով այս կրտորդ՝ նա ապա շարունակում է. «Ուրեմն Հովհան Օձնեցի կաթողիկոսը (վախճանված 727-ին) ամենամեծ գովեստներով հիշատակում է մեծ իմաստասեր, հայկավոր Մովսեսին, ժամանակով ոչ հետև Սահակից, Մեսրոպից, Եղնիկից (ընդգծումն իրենն է:—Մ. Ա.), իրեն արվեստավոր (բերթողական

1 Անդ. էջ 142 և հա.

2 Անդ. էջ 106:

արվեստի հմուտ) և թարգմանիչն: Ինչու և Աս. Մալխասյանցն ալսանդ էլ, իբրացատրության մեջ, դուրս է թողել տուղափառն բառը: Եթե նա հավատում է Հովհան Օձնեցու մի քանի վկայություններին և դրանց մի մասը նույնիսկ ընդգծում է, ինչու չի ընդունում և դուրս է թողնում նրա գրած վերջին տուղափառն բառը, որով Մովսես Խորենացին երևան է դալիս ոչ իբրև քաղկեդոնական: Այդ ձեռնատու չէր նրա անության համար... Այդ մասում նա չի հավատում նաև 7-րդ դարի երկրորդ կեսին և 8-րդ դարի առաջին քառորդին ապրած Հովհան Օձնեցուն: Բայց դրա փոխանակ նա առանց տառանվերու գրում է. «Ոչ մի կասկած չկա, որ այս վկայությունը [այն, որ Արսեն կաթողիկոսը Մովսեսին ճանաչում է քաղկեդոնական Մ. Ա.] ճիշտ է. անկարելի է ենթադրել, որ [քաղկեդոնական Մ. Ա.] Արսեն կաթողիկոսը մի շարափառ (հակաքաղկեդոնական) վարդապետի [—Մ. Խորենացուն, Մ. Ա.] կեղծելով ուղղափառ [—քաղկեդոնական Մ. Ա.] դարձներ: Այն, բանկարելի է ենթադրել...», «կեղծելու և «խաբելու» շնորհքը արված է եղել միայն հայերին. քաղկեդոնականները դուրս են եղել այդ շնորհքից... Բայց այդ Արսեն կաթողիկոսը և Սահակին էլ քաղկեդոնական է դարձրել...»

Կարձղ էր արդյոք Արսեն կաթողիկոսը կամ նրա աղբյուրը քաղկեդոնական իմանալ Մովսեսին:— Անշուշտ, բայց ոչ հասկապես միայն Մովսեսին: Մենք վերևում (հինգերորդ Հավելված) արդեն տեսանք, որ քաղկեդոնականները բոլոր հայերին քաղկեդոնական են համարում մինչև 554 թ., Դվինի ժողովը: Բիզանդիայի Փոտ պատրիարքը նույն 9-րդ դարում (857 թվից նա պատրիարք է) նույնիսկ գրում է, թե հայերն «ամենեքեան ընդունէին զժողովն [Պաղկեդոնի] մինչև ի ժողովն Դվնայ, Բայց քաղկեդոնականների այս խոսքերը դեռ ապացույց չեն, թե 554 թ. Դվինի ժողովում հայերն ուրաքել են իրենց հայրերի դավանությունը և ետ կանգնել Քաղկեդոնից: Այս մասին կտեսնենք հետո:

Այսպես՝ Ստ. Մալխասյանցն առանց որևէ ապացույցի, ուրիշների և իր լոկ խոսքերով հայտարարում է, թե Քերդադաշտը Մովսեսի հիշյալ Թուղթը կեղծ է: Ոչ մի կերպ այդ չի ապացուցված: Լոկ խոսք է և նրա գրածը, թե այդ Թուղթը «լեզվով ու ոճով բոլորովին ասար է Խորենացու լեզվին ու ոճին», ուղու է, երևի. ասել՝ Խորենացու Հայոց Պատմության լեզվին ու ոճին: Ամենևին «ասար» չէ, Հայոց Պատմությունը գրված է ավելի հարազատ հայերենով, որովհետև դրա հորինման ձևը, նյութն ու նպատակը բոլորովին տարբեր են Թղթի ձևից, նպատակից ու նյութից: Սա պատմություն չէ, այլ դավանաբանական-փիլիսոփայական մի գրվածք, բնականաբար և բառերով ու ձևով, ոճով պիտի տարբեր լիներ Պատմությունից, և ավելի ևս հուշարան պիտի լիներ, ինչպես են այդպիսի բովանդակություն ունեցող գրվածքները: Բայց, ինչպես հայտնի է, Մովսես Խորենացին Հայոց Պատմության մեջ էլ մեկ մեկ դործածում է հունարենություններ, Եթե սրանք հավաքենք և իրար ետևից շարենք, կտեսնենք, որ Թղթի լեզուն ու ոճը ավելի հուշարան չէ, քան Պատմության մեջ գործածածները:

Մի անգամ որ Մովսես Քերդադաշտը հիշված Թղթի կեղծությունը չի ապացուցված, այդ Թղթով հաստատվում է նրա ոչ քաղկեդոնական լինելը.

քանի որ դա իր բովանդակությամբ ուղղված է երկարամտությամբ դեմ:
Մենք մեզ տեսնել, թե ուրգյոք մա. Մայրաքաղաքի ուղղափառի է ուրիշ
փոփոխում մեր, Մովսես Քերզազանը քաղվեցանականությամբ:

ՅՈՐՆԵՐՈՐԴ ՀԱՎԵԼՎԱՄ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՍԻ ԵՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

1. «Հայոց աշխարհի ազատը, մեզ մեռնալուց և ուրիշ ազատներ:—
Մեր հոգևոր պատմագիր խորհնացին քաղկեդոնական եղած լինի, թե
աչ՝ այդ աշխարհի ժամանակում ոչ մի նշանակություն չունի, Միայն որ
նրան քաղկեդոնական է հայտարարել ոչ աննշան մեկը, այլ պրոֆ. Մա.
Մալխասյանցը, դրամով, ցավով, նոր առաջադեմ է ստեղծվում մեր Պատմահար
և առհասարակ մեր գրականության պատմության մասին: Այդ նորանշան
տեսություններն ուրեք ապացույցի գլխիվայր շուտ է արվում Երդ դարի
թարգմանիչների և նրանց հակառակորդների հարաբերության հիմքը, Ուս-
տի մենք ստիպված ենք դրողվել այդ խնդրով:

Նրա երակնտն են խորհնացու Ողբի հետեյալ կտորները, որ նա ընդգը-
ծում է. «Վերջովնցալ արդարապես իմ, կայկայեցալ սղխառքեամբ չարա-
փառութիւնս. «այժմ մարտի ի մերժութս... և մարտի ի երծուածողացս. «ո՛վ
կարկեսցէ դասողոնութիւն ըմդդեմ առաջ վարդապետութեամ հակառակ
յարուցելոցմս. ...սեմծածածարի գլխուս օտարածայնս. «և ոչ գլխուս չարս
և գտգիտութիւնս... սեմծածածարեցեմ:—Նախ՝ ասեմ, որ մասամբ ճիշտ չի
բերված խորհնացու բնագիրը, որի մեջ է. «Վերջովնցալ խաղաղութիւն, ար-
մատացալ ամկարգութիւն. քրդութեալ ուղղափառութիւն, կայկայեցալ սղխ-
առքեամբ չարափառութիւն»:

Մ. խորհնացին, բնականաբար, իրեն ուղղափառ է համարել և ոչ թե
չարափառ, հերձվածող: Ուրեմն եթե պարզվի, թե ովքեր են եղել ուղղա-
փառներն ու չարափառները, հերձվածողները, կործանի և խորհնացու դա-
վանությունը: Այսպես է մտածում հեղինակը, և իբր պարզում է այդ, բայց
ոչ թե պատմական սովորներով, այլ արդունենտացիայով: Նրա սկզբնական
դրույթներն են.

1. «Երդ դարի երկրորդ կեսում ամբողջ քրիստոնյա աշխարհն զբաղ-
ված էր քաղկեդոնական վեճերով, —ուրիշ ազատների հիշատակությամբ չլի:
Նվ Հայաստանում էլ այս ժամանակները չէ հիշվում որևէ ալլ ազանդ, որ
կարողարար սասանեցեմի կրկնել, վրդովեր ուղղափառությունը, հիմնադրու-
վեր երկրում և պատերազմեր ուղղափառներին դեմս:

2. «Ուրիշ կերպ անկարելի է հասկանալ վերոհիշյալ խոսքերը (խո-
րհնացու—Մ. Ա.), քան եթե վերագրելով քաղկեդոնական—հակաքաղկեդո-
նական պայքարին: «Ոչ մի կասկած չէ կարող լինել, որ այստեղ խոսքը
վերաբերում է միայն քաղկեդոնական վեճերին, քաղկեդոնականներին ու
հակաքաղկեդոնականներին»:

Նախ՝ նկատեմ, որ Մ. խորհնացուց մեջ բերված այդ խոսքերից կարելի

չէ եզրակացնել, թե Հայաստանում ճիշդ աղանդի կողմից իրոք պատե-
րազմել ենա ուղղափառների դեմ և սասանեցրել երկիրը: Բռոնքն ունեն
իրենց նշանակութունը:

Ապա՝ հակապատմական է ասել, թե բոլորի աղանդների հիշատակու-
թյուն չկա, և իբր բնականաբանում էլ այդ ժամանակները չի հիշվում որն է
այլ աղանդ: Ուրիշ երկիրները թողնենք, տոնենք միայն մեր աշխարհի
աղանդները. որոնք գոյութիւն են ունեցել և ուրիշների մէջ:

Մեր գրականութիւնը գրերի գլուխից հետո՝ իր սկզբի շրջանում,
ինչպես ասածք, գործնական ընտելութիւն ունի. նշանիկն իր «Եղգի-
մակներին» մէջ երբորդ տեղում դնում է քրիստոնեական աղանդավորներին
և մանրամասնորեն հերքում է Մարկիոնի աղանդը, նրա հետ մեկ մեկ դնե-
լով և ուրիշներին. «Մարկիոնն և Մանի և Մծղնեայք», «Մարկիոնի և
Մանեայ և ալլոցն նոյնպիսեաց և ալլն: Եւ այստեղ չպիտի խոսեմ այն
մասին, թե ուր և ինչ մի՞նչ դեր են խաղացել երկար ժամանակ Մարկիոնի
և Մանի աղանդները (մանեքեութիւնը)»: միայն այսքանը պիտի շնչոմ,
որ եթե Հայաստանում վտանգավոր չլինեին այդ աղանդները և «Երոնք փրի-
ստայից» ուղղափառութիւնն համար, ինչպես և պարսից կրօնը քրիստո-
նեութիւն համար, ապա նշանիկը որոնք չէր հերքել, կար և նստորակա-
նութիւնը: Միամիտ պիտի լինել կարծելու համար, թե Հայաստանն ազատ
է եղել այդ աղանդից, որ տարածված է եղել Արեւելքում և հովանավորվել
պարսկական կառավարութիւն կողմից, Դեռ Սահակի և Մաշտոցի օրով,
ինչպես պատմում է Կորյունը, Հայաստան մուտք են գործել նստորակա-
նութիւն սկզբնաւոր՝ Նստորի ուսուցիչ Թեոփորոս Մոպսուեստացու գրե-
վածքները:

Մի փոքր ավելի խոսենք այստեղ նշանիկի հիշած «մծղնեայք» անու-
նով աղանդավորների մասին: Դրանք Մեսայաններ (= աղթողներ) կոչ-
ված տոբական աղանդավորներն են, որոնք Ե-րդ դարում մուտք են գոր-
ծել Հայաստան և շատ վտանգավոր են եղել ուղղափառութիւն համար: Շա-
հապիվանի եկեղեցական ժողովը, որ կայացել է միաբանութեամբ աւագաց
Հայոց եւթներորդ ամի վախճանելոյն ս. Սահակայ, շուրջ 446/447 թվին,
ուրեմն Մ. Խորենացու օրով, Սահակի ու Մաշտոցի աշակերտ Հովսեփի նա-
խագահութեամբ, առանձնապես զբաղվել է և մծղնյաներով, Ժողովի կա-
նոնների նախաբանի մէջ կարդում ենք. «Բազմանային, որք յաճախէին ի
ի գործն արձուքեամ... և տարածեալ օր ըստ օր և լիմեր յաճախումն մծղ-
նեից և այլոց չարեաց... յաշխարհիս Հայոց», Կանոնները վերաբերում են
մեծ մասամբ պղծութիւն կամ պոնկութիւն, շնութիւն, կնատներին
և այլն:

Տեսնենք՝ ինչպես են բնորոշվում կանոնների մէջ այդ աղանդավոր-
ները: Ժ. Կանոնը պատկերում է. «Եպիսկոպոս ոք կամ երէց կամ սար-
կաւագ կամ ով և իցէ ոք ի պաշտօնէից կամ յաւատէ, տանտիկին զոք մի
իշխեսցէ ունել, որպէս օղորտութիւն և մծղնեից. ապա թէ ոք ունիցի և
վկայութեամբ յայտնեսցին, ի կարգէն յորում և իցէ՝ մերժեսցի ի բաց և

համարեալ հղիցի որպէս ամբարիշտ և որպէս մաքսաւոր, զի սուրբ խորհուրդն աւերակեալ քանարաւ ընդունի, զի արատաւորք ի ձեռս անարատից փրկեացին։ — Մեղնյա հոգևորականներն, ուրիմ, սովորութիւն են ունեցել շտապակիքն անունով սիրականներ պահել, Այդ համարվում է ամբարտաւորութիւն, արատաւորութիւն։ Սահակ կաթողիկոսի օրով երկու շնորհիմափառ Թորոսեանցիք՝ Բրքիշ և Շամուշ տարիներէ համար նույնը պատմում է Մ. Խորենացին (Գ. 64, 66)։ Բրքիշն իր հետ բերել է ևս կանայս անկալույս։ ապրել է քանժուժարար և այլն։

Մեղնեութիւնը համարու է դատվում պղծութիւն, պղծագործութեան հետ։ Այսպէս, օրինակ, ի. կանոնի մեջ մի քանի անգամ խոսվում է պղծութեան մասին. վերջին հատվածի մեջ ասվում է. «Ապա եթէ յառիկանի տան ցտցի պղծութիւն կամ ինքն և ընտանիքն, որպէս ասացաք, զընտանիս կշտամբեացեն ըստ օրինի պատուհասի գոր և դաք. ասպա եթէ ինքն ևս ընդ ընտանիսն ի մեղքութիւն զտցի, կալցեն միտքամ պղծագործ ընտանեօք հանդերձ և ի հրապարակ անցնեն, և այլն։ Այդ ըստ օրինի պատուհասը որոշված է ԺԹ. կանոնի մեջ. «Եթէ ոք ի մեղքնեութեան ցտցի կամ երէց կամ օտարկաւոր կամ արեգոյ, քանանայութիւնն լուծցի, աղուէսդըռմ ի ճակատն դիցի և ի տեղիս ճգնաւորաց յապաշխարհութիւն տացեն։ Ապա եթէ գարձեալ ի նմին ցտցի, զլիդան երկոսին կտրեացեն և ի զոդենոց տացեն... դոյն պատուհաս և արեգային։ Ապա եթէ արք կանամբք և որդւովք ցտցին յաղաճիլի, դարանց և զկանանց և զիրազէտ մանկանց զլիդան կտրեացեն, աղուէսդըռմ ի ճակատն դիցեն և ի ցտցենոց տարցին յապաշխարհութիւն. և մանկունք, որք չիցեն դիտացեալ զպղծութիւն, կալցին և տարցին ի ձեռս սուրբ պաշտօնէից Աստուծոյ, որք անուսպեն և ուսուսպեն զնոսա ի հաւատա ճշմարիտս և յերկիր զ տեսնեն։

Այս մեղքաւ — մտաւայան կոչված աղանդի մեղքաւ և ուսմունքի մասին որոշ ծանոթութիւններ չկան. դրա հետևողքը Երանութիւնից հրաժարվում էր և անխորհր հաղորդակցութիւն էր պահանջում աղամարդոց և կանանց մեղք, ինչպէս ընդունում են, այս միևնույնն է եղել Հայաստանի բարբառքիստոս, իսկապէս բարբարոսիստոս (— աղմուսեր, աղտոտ) աղանդը, որին պատկանողներին Մաշտոցը, Թեոդոս կոյսրի հրամանով հալածել է և կորսունն այդ աղանդավորներին անվանում է ժամնադործ, որ նշանակում է ազոսնիկ, ինչպէս որ պոսնիկ Բահարին ևս նա ժամնադործ է անվանում¹։

Սիսիստի տեղեկութեան ժողովն արդեն նշողիկ էր մեղնյա աղանդավորներին, և երբ Շահապիվանի ժողովն այնպիսի խիստ պատուհասներ է սահմանում մեղնյաների համար, — լինին՝ սրանք հոգևորական թե տախարհական, ասմիկ թե ազնվական, — այդ ցույց է տալիս, որ այդ աղանդը տարածված է եղել Հայաստանում, նույնիսկ ամբողջ ընտանիքներով հարած են եղել այդ աղանդին։ Ընդհանրապէս այս պատիժների խտնութիւնն էր երևում է, որ աղանդի տարածումը մեծ երկյուղ էր ազդում, և այն հանգամանքը, որ նրա հետևողների թվում աղամարդոց և կանանց հետ հիշվում են նաև մանուկներ, որ պատիժներ են սահմանվում նրան հարող

¹ Գ ո Ր Յ Ո Ւ Ն, Վարդ Մաշտոցի, Երևան, 1941, էջ 26, 66 և հան։

իշխանների, նախարարների, օստիկանների և նրանց ընտանիքի համար՝ պարզ նշան է, թե որչափ ընդարձակութուն էր գտել նա¹։

Շահապիվանի ժողովի սահմանած խիստ պատիժներով այդ աղանդը չէր կարող վերջանալ և չի վերջացել, Հովհան Իմաստասեր Օձնեցին իր «Լնդդէմ Պաշկեանցն ճառի» մեջ գրում է. «Նախկին մծղնէութեան պայ-դակենութեան խեղբանք, որք խրատեալք, և ոչ իմաստնացեալք, ի ներսինսէ կաթողիկոսէ [երեկո՝ Ներսես Գ.-ն է։—Մ. Ա.], զկնի նորուն մահուան խուստալք չօգան դօղեցին յուրտա ուրեք աշխարհիս մերոյ։ Եւ ի նոստ հատուածեալք եկին յարեցան կշտամբեալքն ի կաթողիկոսացն Աղուանից պատկերամարտք ոմանք. զի սիրէ առ համանմանիսն իւր հասանել զրիպեալն ի հշմարտութենէն։ Հիշված պատկերամարտերն առաջ են եկել 7-րդ դարում. հետևաբար մծղնէութունը Հայաստանում եղել է մինչև այդ ժամանակները։ Իսկ Ծ-րդ դարում, Վարդանանց պատերազմից հետո, Հայոց աշխարհի ներքին քաղաքական և կրոնական չլիթ վիճակը նպաստավոր է եղել դրա համար։ Նախար ֓արպեցուն, ինչպես նրա Թղթից իմանում ենք, մեղադրել են, թե «Ղաղար ասէ, թէ պոռնկութիւն միղժ չեն, զսոյն և մարդպանին սաղրէ։ Այա դարձյալ ասում են, թե Ղաղարն շաղանդաւոր է։ Աղանդի անունը չի տալիս նա, այլ գրում է. «Որ և զանուն անգամ աղանդոյն, որով բամբասէին յանգնեալքն՝ կարի յոյժ համարիմ աղանդի՝ նշանակել գրով։ Այլ նկատուեմ հայհոյանացն զնոցունց իսկ գլխաւջազրելոցն բերէ գնմանս,—քրքես և չնչիմս համարել գլխաւջազրելոցն գգրծս։ Քիչ հետո Ղաղարը գրում է. «Իսկ Հայոց աշխարհի աղանդ զար ասեն՝ անանուն է ըստ վարդապետի և անդիր ըստ բանի։ Ի հաւատոյ և յուսմանէ տգետի երևին, և ի գործս ծոյլք և անժոյժք. յորոց, ըստ անգիտութեանն, որ է ի նոստ, և տնկարդ ըստ վարուց՝ այդպիսի իսկ արդարև աղանդոց վայել էր բւսանել, ըստ յօդուածոյ առասպելաբանութեանն, թէ՛ Ըստ խոզի հարսնացիոյ՝ կոյաջուր բաղանիք։—Շատ պարզ է, որ այդ «Հայոց աշխարհի աղանդը» պոռնկութունը մեղք չի համարել, և խուսքը մծղնէության մասին է։ Մեաւլյանների աղանդի մասին ևս հայտնի է, որ դա ժողով աղանդապետի անուն չի կրում, ինչպես արիստականութունը, նեստորականութունը և այլ քրիստոնեական աղանդներ. չունի իր որոշ վարդապետութունը և այդ վարդապետութունը պարունակող գրվածներ²։ Այսպես և «Հայոց աշխարհի աղանդն» ըստ Փարպեցու։

Շահապիվանի ժողովի «ԺԹ. կանոնն ուրիշ ծանր պատիժների շարքում սահմանում է հասակավոր մծղնների ուրիշ ջղերը կտրել և դողնոց տանել, իսկ ախպես պատժելու պատճառն այն էր հավանորեն, որ մծղնները, կրոնական ոգևորութուն առաջ բերելու համար՝ դերվիշների, հին սեմական նարինների, կամ այժմյան ողուս սլերիզունների նման մոլեկան

¹ Կարգուեմ Ծ. վարդապետ [Յեր-Մկրտչյան], Հայոց եկեղեցու պատմութուն, Մոսկ. Ա., Վաղարշապատ, 1908, էջ 123—126։

² Ուղեանու իմբատարի Աձնեցոյ մասնագրութիւնք, Վենետիկ, 1832, էջ 10։

³ Կարգուեմ Ծ. վ. [Յեր-Մկրտչյան] Հայոց եկեղեցու պատմութուն, Մոսկ. Ա., Վաղարշապատ, 1908, էջ 123։

սրտերը էին պարսեմո՛ւ, Որ Հովհան Ոսկեցիին մեղսեության համար, ինչպես
վերևում տեսանք, իբրև համանիշ գործածում է պապականությունն ըստ,
դրանից պետք է եղբայրացնել, թերևս, որ մեղսյաներն իրենց ազոթքներն
ու այդպիսի պարերը կատարելուց հետո՝ մութը տեղերում կույրդուրայն
խառնակվում էին պոռնիկությամբ, ինչպես վարվում էին որոշ աղանդա-
վաբներ։ Հայկազնյան լեզվի Առնեան Բառարանի մեջ ըստ երևույթին ճիշտ
բացատրված է այդ պապականութիւնն ըստ՝ իրրև գեղջ աղանդ՝ մթու-
թիւն սիրող, կուրուութիւնն՝ Ահա ճայաց աշխարհի աղանդը, վերջին նկա-
րագիրը վերապահությամբ առած։

Թողնենք Հայաստանում եղած մյուս աղանդները, խորենացու համար
ճշտաց աշխարհի աղանդը, նիկեոսի տիեզերական ժողովում նդովված
մեղսությունը, որ այդպես շատ տարածված է եղել, անշուշտ չարափառու-
թյուն է հղել։ Իբր նա դուռ է. Բարձրագույն Եկեղեցու... կայկայե-
ցու տղիտուքեամբ չարափառութիւնն, մթթի ալիւի բան է ասում, քան
ինչ որ Փարպեցին գրել է այդ չարափառ աղանդի հետևողների համար՝ ան-
վանելով նրանց Երուսմանէ տգետն և Եմկիտը քսա վարուցն։ Իսկ թե թնչ
է ուղղափառությունը Փարպեցու և խորենացու համար, մենք այդ քիչ հե-
տո կտեսնենք։

Այսպես ուրեմն, Հայաստանում եղել են աղանդներ մ-րդ դարի երկ-
րորդ կեսին։ Պրոֆ. Մալխասյանցը, սակայն, այդ աղանդներն անգիտացել
է, որպեսզի Բնան միայն քաղկեդոնականներ և հակաքաղկեդոնականներ, և
ապա ինքը հակաքաղկեդոնականներին չարափառ դարձնի։ Իսկ քաղկեդո-
նականներին՝ ուղղափառ։ Բայց մի անգամ որ նրա հիմնական սկզբնական
դրույթը, ինչպես տեսնենք, հակապատմական սխալ է, ապա թխալ է և նրա
բանավարժության շարունակությունն ու վերջնական եղբայրացությունը, որ
նա հանում է մի քանի նույնպիսի դրույթներով և հակաբարձարան դա-
տողությամբ։

2. Ամբողջովի կարծիքներ և ամենիմ դատողություններ։—Պրոֆ. Մալ-
խասյանցի հիմնական դրույթի հակապատմական սխալ լինելը ցույց տա-
լուց հետո՝ այլևս իսկապես կարիք չկար նրա հոգվածի մյուս կետերի վրա
կանգ առնելու։ Բայց և այնպես տեսնենք դրանցից մի քանիսը։ Սա սկզբում,
իմ սովորությամբ, մտնումս անորեն վերլուծել էի նրա կարծիքները, բայց
կրբրեմ կարճատև։ Նախ՝ ոչ մի կերպ չի հիմնավորված, որիննալի նրա
խոսքը, թե Հայաստանում վաղուց մրցում էին ասորական և հունական
եկրոնական հոսանքները, թե «կրճմակամ հողի վրա մրցություն է եղել

¹ Անդ. էջ 198.

² «Պապականութիւնը ըստ կաթոլիկ և պրոթէստէնտ շնորհաւոր պապականութեան
բանի, իմ պաշտօնի, ոչից պապականութեան համարում է՝ պրոթէստէնտական կաթոլիկ
(Առնեան Բառ.) կամ աշխի մթնից, չարամ, կաթոլիկ (Առն. Արմատական Բառ.)
միայնական անուց, կաթոլիկ, մեղսյանի անկարգ վարքի արժան մի մեղսյան-
գութն կոչում և Եկեղեցի չի Արմատիկ Արմատական Բառացիի բացատրությունը։
Թե պապականութիւնը ըստ պատմական մարդ կաթոլիկ և Պապական պապականութեան
